ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՅՈՎՍԷՓԵԱՆ

ԽԱՂԲԱԿԵԱՆՔ ԿԱՄ ՊՌՈՇԵԱՆՔ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ

413

CALOUSTE GULBENKIAN FOUNDATION ARMENIAN LIBRARY
ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՏԵՆԱՇԱՐ ԳԱԼՈՒՍՏ ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ

ԽԱՂԲԱԿԵԱՆՔ ԿԱՄ ՊՌՕՇԵԱՆՔ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ

ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՅՈՎՍԷՓԵԱՆ

ԽԱՂԲԱԿԵԱՆՔ ԿԱՄ ՊՌՈՇԵԱՆՔ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ



ԶԱՔԱՐԷ ԵՒ ԻՒԱՆԷ ԵՂԲԱՅՐՆԵՐԸ

Բ. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

1969
ԱՆԹԻԼԻԱՍ — ԼԻԲԱՆԱՆ

A III / 3455

ՏՊԱՐԱՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

Printed in Lebanon
The Armenian Catholicosate of Cilicia — Antelias



ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՅՈՎՍԷՓԵԱՆ
1867 — 1952

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Ինչպէս ծանուցած էինք 26 փետրուար, 1968 թուակիր մեր զեկոյցով, Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութիւնը որոշած է երջանկայիշատակ Գարեգին կաթողիկոս Յովսէփեանի ծննդեան հարիւրամեակին առթիւ՝ մեծանուն հայ հոգեւորականին յիշատակը անմահացնելու եւ հայկական ուսմանց մնայուն նպաստ մը բերելու համար հրատարակել, առանձին հատորներով, իր Ամբողջական Երկերը, որոնք պիտի բովանդակեն իր պատմական, բանասիրական, մատենագրական, ինչպէս նաեւ արուեստի պատմութեան եւ հնագրութեան նուիրուած ուսումնասիրութիւնները, որոնք մեծ մասամբ լոյս տեսած են գրքոյկներով եւ պարբերաթերթերու մէջ հրատարակուած յօդուածներով եւ այսօր դժուարամատչելի են գիտական աշխարհին։

Ամբողջական Երկերուն առաջին հատորը, որ լոյս կը տեսնէ, կը պարունակէ հետեւեալ աշխատութիւնները·

Ա· ԽԱՂԲԱԿԵԱՆՔ ԿԱՄ ՊՌՈՇԵԱՆՔ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ, որ հրատարակուած է երեք քառածալ հատորներով, որոնց ենթատիտղոսներն են

ա· Պատմա–հնագիտական ուսումնասիրութիւն։ Վաղարշապատ, 1928։ Երկսիւն 304 էջ։ (Այս հատորին ուղղագրութիւնը վերածուած է յաջորդ պրակներուն ուղղագրութեան, միօրինակութիւնը ապահովելու համար)։

բ· Հոգեւոր կեդրոններ եւ Գլաձորի բարձր դպրոցը Պռոշեանց իշխանութեան մէջ։ Երուսաղէմ, 1944։ Երկսիւն 212 էջ։

գ· Յաւելուած· Ա) Արձանագրութիւններ, Բ) Յիշատակարաններ, Գ) Մատենագրական հատուածներ։ Նիւ Եորք 1942—3։ Երկսիւն 247 էջ։

Բ· ԽԱՂԲԱԿԵԱՆՔի այս շարքին իբրեւ յաւելուած նոյն հատորին մէջ հրատարակուած են իբրեւ համանման նիւթեր հետեւեալ երկու ուսումնասիրութիւնները·

ա· ԱՋԻԲԷԿԵՆՔ ԵՒ ՆՐԱՆՑ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԸ, (*Բանբեր Հայաստանի Գիտական Ինստիտուտի*։ Գիրք Ա· եւ Բ·։ Վաղարշապատ, 1921—22։ էջ 177—206)։

բ· ՏԱՐՍԱՅԻՃ ՕՐԲԷԼԵԱՆԻ ԵՒ ՄԻՆԱ ԽԱԹՈՒՆԻ ՍԵՐՈՒՆԴԸ:

(Այս ուսումնասիրութիւնը առաջին անգամ լոյս տեսած է ռուսերէն լեզուով *Խրիսթիանսքի Վոսթոք* — Քրիստոնէական Արեւելք — պարբերաթերթին մէջ, 1913, էջ 216—252, եւ հեղինակին կողմէ հայերէնի թարգմանուած է *Հասկ Հայագիտական Տարեգիրքին* առաջին հատորին մէջ, 1948, էջ 1—28):

Դժբախտաբար, հանգուցեալ կաթողիկոսին թղօնին մէջ չեն գտնուած ԽԱՂԲԱԿԵԱՆՔի եւ Յաւելուածներուն մէջ հրատարակուած պատկերներուն բոլոր լուսանկարները եւ քլիշէները, որով հարկ եղած է նախապէս հրատարակուած քլիշէները վերարտադրել:

Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութիւնը իր խորին շնորհակալիքը կը յայտնէ Գերաշնորհ Տ· Գարեգին Եպիսկոպոս Սարգիսեանին՝ որ սիրայօժար եւ նուիրումով ստանձնեց Ամբողջական Երկերուն պատրաստութեան բազմապահանջ եւ պատասխանատու հոգը, ինչպէս նաեւ Հոգեշնորհ Տ· Զարեհ վարդապետ Ազնաւորեանին՝ որ պատրաստեց անձնանուններու եւ տեղանուններու ցանկերը:

ԳԱԼՈՒՍՏ ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆ

Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ ԽԱՂԲԱԿԵԱՆՑ ԾԱԳՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Բագրատունեաց թագաւորութեան անկմամբ եւ Սելջուկեան արշաւանքներով ցիր ու ցան եղան կամ ոչնչացան հայ իշխանական տոհմերը: ԺԱ· դարու կէսերից սկսած մինչեւ ԺԲ·ի վերջին քառորդը համարեա ոչինչ նշանաւոր բան չենք լսում նրանց մասին բուն Հայաստանում: Բագրատունեաց, Արծրունեաց եւ Սիւնեաց մնացորդներն այնքան աննշան էին, որ քաղաքական կարեւոր դեր կատարել չէին կարող: Չյիշենք աւելի երկրորդական տոհմերը, որոնք իրենց գոյութիւնը միայն պահում էին Արցախի եւ Գուգարաց լեռներում եւ Մամիկոնեանց մնացորդները Սասնոյ փոքրիկ իշխանութեան մէջ: Կային եւ Պահլաւունեաց մնացորդներ Շիրակում կամ Անիում:

Բայց Սելջուկեան միահեծան պետութեան տեւողութիւնն էլ երկար չտեւեց: ԺԲ· դարու առաջին քառորդից արդէն սկսւում է նրա քայքայման շրջանը: Ներքին երկպառակութիւններն ու պատերազմները թուլացնում են այս ահարկու պետութեան հիմքերը: Բարքիարուքի (Բեկի—Արուխ), Մուհամմեդի[1]) եւ նրա եղբօր Սինջարի պայքարները նրանով վերջացան, որ 1104 թ· Մուհամմեդին բաժին ընկաւ բացի Ատրպատականից եւ արեւելեան Հայաստանից, որ իւրն էր արդէն, նաեւ Ասորիքն ու Միջագետքը եւ արեւմտեան Իրանը: Նա վերջին զօրեղ սուլթանն էր, որի մահուանից յետոյ (†1118 թ·) ներքին երկպառակութիւններն աւելի զօրեղ կերպով գլուխ բարձրացրին նրա երեք որդոց ժամանակ, երբ էմիրները անկախ կամ կիսանկախ իշխանութիւններ դարձան ի վնաս կեդրոնական իշխանութեան[2]): Հայաստանում դեռ եւս Մուհամմեդի փոխարքայ եղած ժամանակ Գանձակը դարձել էր Առանի, ինչպէս կոչում էին այդ ժամանակ Աղուանից աշխարհը, կեդրոնական քաղաքը եւ կարեւոր դեր էր կատարում հետագայում եւս իւր արքայազուն իշխաններով: Բայց միւս քաղաքներն ու գաւառներն էլ ունէին իրենց էմիրները, ինչպէս Անին, Դուինը, Կարսը, Խլաթը, Կարինը եւլն· մէկը միւսից անկախ եւ շատ յաճախ իրար հետ մրցող իշխանութիւններ, ինչպէս եւ երբեմն երկրի բնիկ տէրերն էին: Յիշատակելի են յատկապէս Անիի Մանուչեանք (1072–1199), Ատրպատականի աթաբէկներն (1136–1225) ու Խլաթի Շահիարմէնները (1100–1206/7), որոնք մի մի դարու չափ իշխեցին իրենց երկիրներում որդոց որդի[3]) եւ Հայաստանի բաղդի վերայ իրենց ազդեցութիւնն ունեցան· 1207 թ· յետոյ Խլաթը Սուլթանի յաջորդների ձեռքից անցնում է էյուբեաններին:

Սելջուկների հարուածը համեմատաբար աւելի թոյլ էր եղած Վրաստանում, ուստի եւ այստեղ աւելի վաղ պիտի զարթնէր անկոչ հիւրերից երկիրն ազատելու ձգտումը: Ընդհարման առիթը տուաւ Գանձակի Խաղի կամ Ելխաղի ամիրան, որ 1121 թուին յարձակուեց Վրաստանի վերայ: Դաւիթ Ա· ոչ միայն ետ մղեց այս յարձակումը, այլ եւ Տփխիսի սահմաններում մեծ ջարդ տուեց Մելիք Սուլթանին, որ եկել էր Խաղի ամիրայի վրէժն առնելու: Սկիզբն էր այս մի շարք յաջողութեանց· ազատուած էր ոչ միայն Տփխիսը, որ երկար դարեր հեծել էր մահմեդական լծի տակ, այլ եւ դրացի Հայաստանի մի քանի գաւառները Անի մայրաքաղաքով, ուր կուսակալ նշանակուեց Օրբէլեան ցեղից Աբուլէթը Իւանէ որդու հետ[4]): Անիի առման մեծ չափով օժանդակ հանդիսացան հայ բնակիչները: Հայ իշխանական տոհմերի մնացորդներն էլ խմբուեցան Դաւթի եւ նորա որդի Դեմետրէի շուրջը, որ ըստ Ուռհայեցու հայ կնոջ զաւակ էր: Թէպէտ Փատլունը կրկին ետ ստացաւ Անին, բայց Սելջուկեան զէնքի թափն արդէն կոտրուած էր, եւ նոքա ստիպուած էին աւելի մեղմ վարուել բնակիչների հետ: Դեմետրէի որդին Գէորգի Գ· 1161/2 թուին Փատլունի եւ յատ–

---

[1]) Ուռհայեցին (Վաղարշապատ· 1898, եր· 298, 330, 341) եւ Վարդան (Մոսկուա· 1861, եր· 149, 155) Տափար են անուանում Մուհամմեդին:

[2]) A. Müller. Der Islam in Morgen und Abendland. II. 120. А. Мюллер, Исторія Ислама. СП. 1896. Т. III. եր· 127–147: Ժամանակը լաւ բնորոշում է Օրբէլեան· Ղուկասեան հրատ· (Թիֆլիս, 1910) եր· 319, 333:

[3]) Ուռհ· եր· 341/2· 348, 359, 365· Ուռհայեցի — Գրիգոր Երէց· 425· — Սամուէլ Անեցի (Վաղարշապատ, 1883) եր· 118, 132, 125· — Գանձակեցի (Թիֆլիս, 1909) եր· 169, 171, 154. 155/6· Վարդ· 145, 156, 161/2· Օրբ· 393· Ալիշան· Շիրակ· 98· —Стэнли Лен—Пуль. Мусульманскія Династіи. перев. Бартольда, СП. 1899 եր· 143—144· Brosset. Histoire de la Géorgie. I. S. Pétersbourg. 1849, p. 367, 370.

[4]) Ուռհ· 348–350, 356, 359· Սամ· Անեցի· 125, Վարդ· 156:

կապէս Խլաթի Շահիարմէնի վերայ տարած յաղթութեամբ խլեց Անին թուրքերի ձեռքից, կուսակալ նշանակելով նախ Սադուն (Արծրունի) եւ ապա Սարգիս Զաքարեան իշխաններին: Առնում է նա եւ Դուինը, ըստ Այրիվանեցու՝ ՈԺԱ. (=1162) եւ ըստ Վարդանի՝ «ի վեց հարիւր երկոտասան թուին», թէեւ ժամանակաւոր կերպով միայն[1]: Գէորգին երկրորդ անգամ Անին առնում է 1174 թուին, եւ վերակացու է նշանակում Իւանէ Օրբէլեանին, իսկ ամիրա՝ Ապիրատ Պահլաւունուն Տէր Բարսեղ Եպիսկոպոսի միջնորդութեամբ. Վրաց պատմագիրը հաստատելով Իւանէ Օրբէլեանի վերակացութիւնը, նորան օգնական է ընդունում Սարգիս Զաքարեանին՝ հակառակ Վարդանի, որ հաւանօրէն շփոթութիւն է երկու դէպքերի եւ ժամանակների[2]: Բայց մահմեդական իշխանութիւնները կատարելապէս ետ մղուեցան Թամար թագուհու եւ նորա որդու Գէորգի Լաշայի ժամանակ, որոնց գործակից հանդիսացան Զաքարէ եւ Իւանէ եղբայրները, իրենց հօրեղբօր որդոց եւ միւս հայ իշխանների հետ: Իրաւամբ Բրոսէն Թամարի թագաւորութեան պատմութիւնը նոյնացնում է Մխարգրձելիների հերոսական գործունէութեան հետ, իսկ վրացի գիտնական С. К-зе իւր Грузинская Царица Тамара Великая յօդուածում Իւանէ Աթաբէկին անուանում է „фактическим правителем царства" [3].

Զաքարեանների ծագման աղբիւրները մութ են եւ հակասական: Ըստ Վարդանի, Գանձակեցու եւ Զաքարիա Սարկաւագի՝ նոքա քրդական ծագումն ունին եւ եկուորներ են: Ըստ արձանագրութիւնների՝ Բագրատունեաց թագաւորական ցեղից, իսկ ըստ Վրաց պատմագրի՝ Պարսից Արտաքսերս թագաւորից, որ առասպել է[4]: Աղբիւրների այսպիսի հակասութեան պատճառով՝ վերջին ժամանակի երկու հայ բանասէր բոլորովին տարբեր եզրակացութեան հասան այս խնդրի վերաբերմամբ. մէկը նեստորական քաղդէացիներ համարելով նրանց եւ ԺԱ. դարու կէսերին Հայաստան եկած ու հաստատուած Զորագետում, միւսը իրական՝ արձանագրութիւնների տուած տեղեկութիւնը Բագրատունի ծագման մասին[5]: Մեր խնդրից դուրս է մտնել Զաքարեանների ծագման պատմութեան մանրամասնութիւնների մէջ. մեզ համար կարեւորն այն է, որ նոքա ԺԲ. դարու վերջին քառորդից սկսած առաջնակարգ դեր են սկսում կատարել Վրաց եւ Հայոց պատմութեան մէջ, հաստատուելով Զորագետում եւ գրաւելով առաջնութեան պատիւը բոլոր հայ եւ վրացի իշխանների մէջ:

Առաջին անգամ Զաքարեանները երեւան են գալիս պատմութեան մէջ Զաքարէի եւ Իւանէի հօր՝ Սարգիս Մեծի ժամանակ: Զաքարեանց պապերի անուան յիշատակութիւնն ունինք միայն, առանց տեղեկութիւն ունենալու նրանց գործերի մասին[6]: Տեսանք արդէն, որ Սարգիս Մեծ 1161 թուին Գէորգի Գ.ի կողմից Անիի կառավարիչ էր նշանակուած, բայց դորանից էլ առաջ մի կարեւոր յիշատակութիւն ունինք Հաղարծնի 1155 թուի մի արձանագրութեան մէջ, ուր ոմն «մեծ իշխան Սարգիս» «ամիր սպասալար» Գէորգի Գ.ի հետ վանքի վերայ իրաւասութիւն ունի[7]: Այդ Սարգիսը կարող է մի միայն Զաքարէի եւ Իւանէի հայրը լինել, որովհետեւ վերջինիս մի արձանագրութեան համեմատ այդ վանքը Զաքարեանց ժառանգութիւն էր[8]: Սովորաբար ամիր սպասալարութեան տիտղոսը Զաքարեաններին շնորհուած է համարւում Թամարի ձեռքով. այս դէպքում 1155 թուի արձանագրութիւնը մեզ շփոթել կարող է վերոյիշեալ միտքը հաստատելու համար. բայց կարող է փորագրուած լինել այն յետին թուով, երբ Սարգիսն արդէն «ամիր սպասալար» էր, կամ պատահական մի իրողութիւն է, որի հաստատութեան համար ուրիշ աղբիւրներ չունինք: Այս երկրորդ մտքին կռուան կարող է լինել մի երկրորդ արձանագրութիւն 1181 թուից, ուր Սարգիսը «ամիր սպասալար» տիտղոս ունի դարձեալ[9]. միայն 1187 թուի մի արձանագրութեան մէջ «ամիր սպասալար Հայոց եւ Վրաց» է կոչւում[10], որ արդարեւ նորութիւն էր այդպիսի ընդարձակ հասկացողութեամբ Զաքարեան տան համար, ինչպէս եւ Օրբէլեանների կալուածների տիրապետութիւնը, որ չնորհուեցաւ Զաքարէին եւ Իւանէին ըստ Վրաց պատմագրի աւելի ուշ՝ 1193 թուից յետոյ, որպէս հետեւանք նրանց աջակցութեան Գէորգի Գ.ին՝ ընդդէմ Օրբէլեանների ապստամբութեան:

---

[1] Գրիգոր Երէց. 426.— Վարդ. 165/6. Յայսմաւուրք. «Ստորագրութի պատմութե. բազմերջանիկ որ եւ փառաւորեալ հրպին Ստեփանոսի Սիւնեաց եպսի յաւրինեալ ի տր. Մխիթար վրդպտէ յեպէ որ. ուխտին Այրավանից»: Պատմական-մատենագրական արժէք ունեցող այս վկայաբանութեան ծանօթութիւնը պարտական եմ Աշոտ Յովհաննիսեանի սիրալիրութեան. նրա մօտ եղած ձեռագրից էլ արել եմ հարկաւոր քաղուածքները այս եւ ուրիշ տեղերում:

[2] Վարդ. 169/70. Brosset, Hist. de la Géorgie 287.— Գրիգոր Երէց 429. Այրիվանեցի, (Մոսկուա 1863), եր. 63:

[3] Brosset. Additions et éclaircissements à l'Histoire de la Géorgie. St. Petersb. 1851 թ. 266. —Кавказское Слово. 1916 № 99:

[4] Վարդ. 181. Գանձ. 154. Brosset. Hist. եր. 474: Զաքարիա սարկաւագի Պատմութիւն, (Վաղարշապատ. 1870). III. եր. 1:

[5] Ա. Շահնազարեան. Շողակաթ. Գիրք Ա. Վաղարշապատ. 1913. Կարապետ Եպիսկոպոս, Դոփեանք եւ Մելիք Շահնազարեանք, Ս. Էջմ. 1914:

[6] Ջալալեան Ա. 63. 28.— Երզնկեանց. Հնախօսական Տեղագրութիւն Հաղբատայ (Վաղարշապատ. 1886).. եր. 32. Ստուգուած մեր կողմից՝ Հաղբատում եւ Սանահնում.

[7] Ջալալեան. Ճանապ. ի մեծն Հայաստան. (Տփխիս. 1841). Ա. 135.— Մակար եպս. Բարխուդարեան. Արցախ. (Բագու. 1895). եր. 366:

[8] Բարխ. Արցախ. չունի «հայրենի» 366. Ջալ. Ա. 131. Շահխաթունեան. Ստորագրութիւն կաթուղիկէ Էջմիածնի եւ հինգ գաւառացն Այրարատայ. (Էջմիածին. 1842). Բ. եր. 370:

[9] Ջալ. Ա. 31. Ազգագրական Հանդէս. Իսահակ Յարութիւնեան Գիրք. Գ. 286. Կ. Կոստանեան. Վիմական Տարեգիր. 33: Ստուգուած մեր կողմից.

[10] Ջալ. 28. Ազգ. Հանդ. 1898. Գ. Գիրք. 304. կամ VII. VIII. 391. Կոստանեան. Վիմական Տարեգիր. 36: Ստուգուած մեր կողմից:

Իւանէ Լիպարիտ Օրբէլեանների ապստամբութիւնը Գէորգի Գ.ի դէմ ըստ Ստեփանոս Օրբէլեանի կատարուել է Հայոց 626 թուին: Վարդան համառօտաբար պատմում է դէպքը առանց ժամանակը որոշելու՝ Հայոց 623 եւ 626 թուականների մէջ1): Ժամանակակից ոմն Դաւիթ, որ Քորայրեցին ենք համարում, մի յիշատակարանի մէջ Օրբէլեանի յիշած Հայոց թուականի հետ տալիս է համապատասխան փրկչականը՝ 1178: Ապստամբութեան պատճառը ըստ պատմիչ Օրբէլեանի որպէս թէ Դեմնայի՝ Գէորգի Գ.ի եղբօր Դաւթի որդու՝ իրաւունքների պաշտպանելն էր, բայց անաչառ չէ այստեղ Օրբէլեանը: Վարդան Դեմնայի պաշտպանութիւնը մի պատրուակ է ընդունում Իւանէի կողմից, որ կամենում էր սպանել թագաւորին: Իսկ աւելի պարզ բացատրում է Դաւիթ, թէ «զապըստամբութիւն խռովային տ! մեծամեծքն Վրաց աշխարհին ի թագաւորէ անտի· զոր ի վաղուց հետէ երկնէին, եւ գտեալ դիպող ժամ իւրեանցն հնացեալ չարախոհութեան, առնուն հրապուրանաւք առ ինքեանս զեղբաւրորդի նորին թագաւորի անուանեալքն Ուրբէլք, Իւանէ սպասալար եւ Լիպարիտ եղբայր իւր որդովք եւ ազգականաւք իւրեանց եւ բերեալ յԱգարակ դղեակ, թագաւորեցուցանեն...»2): Գոշ Մխիթարը հակառակ Օրբէլեանի նոյն իսկ Դեմնայի հօր Դաւթի մահը Վրաց իշխանների եւ Օրբէլեանց դաւադրութեան հետ է կապում· «դեղ մահու արբուցեալ սպանին զթագաւորն Դաւիթ (իշխանքն Վրաց եւ մանաւանդ Օրբէլեանքն կոչեցեալ ազգ)»3): Այստեղից պարզ է, որ այդ ապստամբութիւնը հետեւանք էր Օրբէլեանների գլխաւորութեամբ Վրաց իշխանների առաջուց որոշուած դաւադրութեան: С. К-зе իր վերոյիշեալ յօդուածի մէջ բացատրում է, որ այդ մի շարժում էր վրացի Փէոդալ ազնուականութեան կողմից թագաւորական իշխանութեան զօրանալու դէմ, որ կրկնւում է նաեւ Թամարի թագաւորութեան առաջին տարիները: Ապստամբների հետ էր միացած սկզբում նաեւ Սարգիս Զաքարեանը· այս մասին զարմանալի կերպով լռում են հայ պատմիչները· յիշատակութիւն ունինք միայն Վրաց պատմագրի մէջ4): Թագաւորը ստիպուած էր փախչել Տփխիս, եւ իւր շուրջը հաւաքելով միայն 5000 հոգի, արշաւում է չկազմակերպուած ապստամբների վրայ, որոնցից ոմանք սկսում են հեռանալ Օրբէլեաններից եւ միանալ Գէորգիի հետ: Հեռացողներից նշանաւոր է Սարգիս Զաքարեանը «իւր որդոց եւ եղբօրորդիների հետ»: Գէորգին սրանց եւ միւսներին սիրով է ընդունում, «եւ զամենայն հայրենիս եւ փարթամութիւնս Օրբէլեանց խոստանայր տալ նոցա»: Սարգիս պէտք է կարեւոր դեր կատարած լինէր Գէորգիի յաջողութեան համար, որպէս զի Օրբէլեանների յաղթուելուց յետոյ՝ նրանց ժառանգութեան եւ իշխանութեան մեծագոյն բաժինն ստանար: Օրբէլեանը շատ խուլ ակնարկութիւն ունի միայն այս մասին5): Սարգիս Զաքարեանի դարձի վերայ զուգէ ազդել է նորա աներձագ Քուրդ իշխանը, որ Տփխիսի ամիրապետ էր, Կայենոյ եւ Մահկանաբերդի տէրը: Սա հէնց սկզբից Գէորգիի հաւատարիմներից մէկն էր, որ նորա հրամանով նախայարձակ եղաւ ապստամբների վրայ եւ փախցրեց նրանց Մահկանաբերդի սահմաններում6): Ապստամբութիւնը վերջացաւ Օրբէլեանների կատարեալ պարտութեամբ: Ելտկուզի որդի Ադիլ ամիրայի եւ Շահիարմէնի կողմից սպասուած օգնութիւնը չիրականացաւ: Դեմետրէն գիշերանց փախաւ Լոռի բերդից՝ ապաւինելով իւր հօրեղբօր գթութեան. Նոյնն ստիպուեցաւ անել եւ Իւանէն: Գէորգին սկզբում սիրով ընդունեց նրանց: Ըստ Վրաց պատմագրի մինչեւ իսկ ներեց ապստամբներին եւ ոմանց միայն աքսորեց7): Բայց աւելի ճիշդ է Վարդանի եւ Օրբէլեանի տեղեկութիւնը, թէ դրժելով իւր երդումը, հանեց Դեմնայի եւ Իւանէի աչքերը, բնաջինջ արաւ Օրբէլեանց ցեղը եւ մնացորդներին զրկեց հայրենի ժառանգութիւնից:

Սակայն այս ամէնը Իւանէ Օրբէլեանի պարտութիւնից անմիջապէս յետոյ չկատարուեցաւ: Սանահնի մի արձանագրութեան համեմատ, Իւանէն դեռ եւս 1183 թուին սպասալարի տիտղոս ունէր եւ իրաւատէր էր հայրենի ժառանգութեան8): Վրէժխնդրութեան այս գործողութիւնը կատարուեց 1183/4 թ. թ., իսկ Զաքարեանց կատարեալ հատուցումը Թամարի ժամանակ: Ըստ Օրբէլեանի, սպասալարութեան պատիւն ստացաւ նախ «Խփչաղ ոմն Խուպասար»9), որ Գէորգիի առա-

---

(1) Օրբ· 389· Վարդ· 170:

(2) Ձեռագիր էջմ· Նոր Ցուցակ· № 913:

(3) Ալիշան· Հայապատում· 389:

(4) Brosset. Histoire. p. 398· Ա· Տահնազարեան հետեւելով վրացերէն բնագրին, սրբագրում է Բրոսսէի խօսքերը avec ses fils et ceux de ses frères եզակի մտքով· այսինքն «իւր որդոց եւ եղբօրորդու հետ»: Շողակաթ· Գիրք Ա· եր· 81:

(5) Օրբ· 391:

6) Գանձ· 197· Ձեռ· № 913· Նոր Ցուցակ· Դաւթի (Յաւելուած Բ· 1) յիշատակարան: Մահկանաբերդի եւ Կայենոյ գաւառները ընկնում են Աղստեւ գետի միջին հոսանքում: Կայենն ստացել էր Քուրդը բերդի շինող Հասան Կայանեցուց (Օրբ· 384· Վարդ· 184· Բարխ· Արցախ· 342)· նրա եւ նրա որդոց ժառանգութիւնն էր նաեւ Հաղբատը (Զալ· 70/71): Մոնղոլների ժամանակ նշանաւոր հանդիսացաւ Քրդի թոռնորդին Սադուն, որ աթաբէկութեան իշխանութիւն ստացաւ (տես մեր յօդուածը· Շողակաթ· գիրք Ա· Զագավանից ժողովը):

(7) Brosset. Histoire. 400:

(8) Զալ· Ա· 30· Կոստ· Վիմ· Տար· 35: Այս արձանագրութիւնը Սանահնի տաճարի վերայ գտնել չկարողացանք: Երեւի, Զալալեանը արտագրել է Սանահնի «քէօթուկից», որ այժմ էջմիածնի մատենադարանի № 3032 ձեռագիրն է:

9) Օրբ· 385, 391, Համ· С. К.-зе-ի յօդուածը· Кавк. Сл 1916 № 99:

ջին օղնականն էր եղել հակառակորդների ապստամբութեան ժամանակ, ապա Գէորգիի մահուանից յետոյ միայն († 1184), Թամարի երկրորդ տարին, Սարգիս Զաքարեանը Հայոց եւ Վրաց ամիր սպասալար նշանակուեց. իսկ որդիքը բարձր պաշտօններ ստացան պալատում, հայրենիք ստանալով նաեւ Լոռին1): Սարգիս վախճանուեց 1187 թուին եւ թաղուեց Սանահնի վանքում2): Զաքարեանների այս բարձրացումը հետեւանք էր ոչ միայն Սարգսի Գէորգիին ցոյց տուած աջակցութեան, այլ նաեւ նորա երկու որդոց հաւատարիմ պաշտպանութեան Թամար թագուհուն: Վրաց թագաւորութիւնը բռնուած էր ներքին խռովութեամբ 1186/7 թուերին: Ժամանակակից Գոշ Մխիթարը հետեւեալ տեղեկութիւնն է հաղորդում այդ մասին. «Եւ թագաւորութիւնն Վրաց շփոթեալ կայր. զի Թամարն դուստր Գէորգեայ թագաւորի եթող զայրն առաջին յԱլանաց թագաւորութենէն, ի մայրենի ընտանութենէ իւրմէ Սաւսլան անուն, որ եւ Դաւիթ ի թագաւորելն անուանեցաւ»3): *Վրաց իշխանները միացած ռուս իշխանի հետ, արշաւեցին թագուհու դէմ. Զաքարեան եղբայրների հաւատարիմ պաշտպանութեան շնորհիւ միայն ընկճուեց ապստամբութիւնը: Վրաց պատմագրի համեմատ Սարգսին որպէս յաջորդ՝ սպասալար նշանակուեց ոչ Զաքարիան, այլ Գամրակէլ, որ Գէորգի Գ.ի աջակիցն էր ապստամբների դէմ: Եթէ ճիշտ է այս տեղեկութիւնը, ապա Զաքարիայի սպասալարութիւնը պէտք է 1193 թուից յետոյ դնել որովհետեւ մինչ այդ կենդանի էր Գամրակէլը եւ պատերազմների մէջ նորան գործակից էին Զաքարեան Սարգսի եւ Վահրամի որդիքը4): Սակայն Զաքարիայի ամիր սպասալարութեան մասին հայ արձանագրութիւնների մէջ յիշատակութիւն ունինք աւելի վաղ, այն է 1187 եւ 1191 թուականներից5), միայն առանց «հայոց եւ վրաց» բնորոշումների: Հաւանական է, որ Զաքարիա ամիր սպասալար էր մինչեւ Գամրակէլի մահը միայն հայ զօրքի համար, իսկ այնուհետեւ երկու ազգերի: Իւանէն նշանակւում է պալատական զօրքերի հրամանատար:*

Երկու եղբայրները Թամարի թագաւորութեան զարդն են կազմում. մանաւանդ Զաքարիան իւր հանճարեղ զօրապետութեամբ կարողացաւ վերջնականապէս խորտակել մահմեդական լուծը Հայաստանում: Վրաց անուանական գերիշխանութեան տակ Հայաստանի մեծագոյն մասն ընկաւ երկու եղբայրների ձեռքը: Հայ պատմիչները՝ Գանձակեցին, Վարդան, Օրբէլեան, Մխիթար Այրիվանեցին, ինչպէս եւ Վրաց պատմիչը, տալիս են իշխանների յաղթական պատերազմների նկարագրութիւնն ու նուաճուած երկիրների ցանկը՝ Շաքիի եւ Արցախի նահանգներից մինչեւ ներքին Բասէն եւ Բարկուշատից մինչեւ Լոռի(6), կամ ըստ Օրբէլեանի «ի Բարկուշատայ մինչ ի Մժընկերտ»: *Վարդան տալիս է նաեւ գլխաւոր կեդրոնների նուաճման թուականները: 1191 թուին գրաւում են Շիրակը, 1196 թ. Անբերդը7), 1199 թ. Անին, 1201 թ. Բջնին, 1203 թ. Դուինը, 1206 թ. Կարսը: Խլաթն ազատուեց նուաճուելուց միայն պատահա-*


Զաքարէ եւ Իւանէ եղբայրները, Հառիճում. ՊԱՏԿԵՐ 1.

---

1) Brosset. Hist. 409.— Elle (*Թամարը*) désigna pour généralissime Sargis Mkhargrdzel, homme de haute famille et expérimenté dans la guerre, héros distingué, auquel elle donna Loré pour apanage, comme thawad, avec le titre de mthavar du Somkheth.

2) Արձանագ. Սանահնի: Համ. Զալ. Ա. 28. Ազգ. Հանդէս, գիրք Գ. եր. 304. եւ VII եւ VIII. եր. 391. Վիմական Տարեգիր 36:

3) Ձեռ. էջմ. Nº 163/2606, 233բ:

4) Brosset. Histoire, 410. 426. 429.

5) Զալ. Ա. 98. 18. Սանահնի արձանագրութիւնը ստուգել ենք եւ գրի առել անձամբ: Ազգ. Հանդէս III. 283 Վիմական Տարեգիր 36. 37:

6) Գանձ. 154. Վարդ. 181. Այրիվանեցի 64. Օրբ. 391. Brosset. Histoire. 466. 467: Վրաց Պատմագիրը Կարսի առումը նշանակում է Թամարի թագաւորութեան 23րդ կամ 24րդ տարին, որ համապատասխան է 1206/7 Փրկչ. թուին: Իրողութեան աւելի մօտ է առաջինը, որ համապատասխան է Վարդանի տուած Հայոց 655 թուականին: Նոյն թուին (ՈԾԵ) է նշանակում եւ Օրբէլեան իւր նորագիւտ ժամանակագրութեան մէջ, որ առել է հաւանօրէն Վարդանից: Այս ժամանակագրութիւնը դեռ եւս անտիպ է: Օգտուել ենք Հ. Ակինեանի Երեւանի թանգարանում կատարած արտագրութիւնից:

7) Զաքարիան կանգնել է 1200 թ. ի յիշատակ Անբերդի առման մի խաչքար՝ յուշարձան, որ այժմ գտնւում է Ինաքլու (պատկ. 2. առանց պատուանդանի) գիւղի նորաշէն եկեղեցում: Անբերդի՞ց է բերուած, թէ հէնց այս գիւղն է սկզբնական տեղը, ասել չենք կարող: Խաչքարի ձախ կողմից (նայողի) վերին մասում փոքր ինչ կոտրուած է եւ մի ուրիշ կտորով կարկատած: Խաչքարի արձանագրութիւնն է. ***Ի ՈԽԹ թուական/ութինս ես Զաքար/է ամիր սպասալար Հա/յոց եւ Վրաց որդի Մ/եծին Սարգսի առի զանա (—խաչի շուրջը) ուիկ ամրոցս զԱնբերդոյ յաղախնայծին (!s) որդոցն Հաքարու որ***

կան անյաջողութեան պատճառով: Իւանէն իր անզգուշութեամբ ընկաւ թշնամու ձեռքը: Զաքարէն ստիպուած էր եղբօր ազատութեան մասին մտածել, հաշտուելով սուլթանի հետ եւ Իւանէի դստեր Թամթայի նորան կնութեան տալով[1]:

ՊԱՏԿԵՐ 2·

Խլաթի անյաջողութիւնը յետ չկասեցրեց Զաքարեաններին իրենց նուաճողական ձեռնարկութիւններից: Կարինը եւ այլ հեռաւոր երկիրներ, ինչպէս Երզնկան, հարկատու արին Վրաց թագուհուն (Յաւելուած Բ. 2)[2] *Նրանց նուաճումների մասին տեղեկութիւններ ունինք նաեւ արձանագրութիւնների մէջ: Հենց Իւանէն ինքը երկիցս՝ Գեղարդի եւ Հաղարծնի արձանագրութիւնների մէջ թւում է նուաճուած գաւառներն իրենց տիրապետութեան սահմաններում*[3]: *Հայ իշխաններից նրանց օգնականներն էին յատկապէս իրենց ազգական Զաքարէ եւ Սարգիս՝ Վահրամի որդիքը, եւ ապա Զաքարէի որդին Վահրամ Գագէլ, որոնք եւ աւագ Զաքարեանների հովանաւորութեամբ բազմաթիւ բերդեր նուաճեցին Գարդմանի, Փառիսոսի եւ Քուստի գաւառներում եւ մի բաւական ընդարձակ իշխանութիւն հիմնեցին ներկայ Շամշադինի եւ մասամբ Գանձակի գաւառների շրջաններում*[4]:

Զաքարեայի վերջին եւ մեծ արշաւանքն ուղղուած էր Պարսկաստանի դէմ: Հայաստանն արդէն մաքրուած էր Սելջուկներից կամ անզօր դարձրած նրանց: Յաղթական զօրապետը նուաճում է Ատրպատականի մի մասը Մարանդ եւ Արդաբիլ քաղաքներով[5], *բայց վե–*

(ճակատը կարկատած)... յ ի սմա/ի կորուստ քրիստոնէից եւ յաւեր եկեղեց (s!) *եւ ետու տանել զնչ.*

Ոխթ թուականը Անբերդի առման թուականը չէ, այլ խաչի կանգնման: Ուրիշ արձանագրութիւններից երեւում է որ ԺԳ· դարու առաջին քառորդում (արձանագրութիւններից մէկը գրուած է 1221 թ·) Ինաքլու գիւղում վանք ու միաբանութիւն է եղել· ուխտի առաջնորդն էր Հայրապետ վարդապետ: (Համ· Արարատ, 1893· 769):

[1] Գանձ· 156· Մահմեդական եւ Ասորի տարեգիրներ Աբուլ–Ֆարաջ եւ Իբն ալ Աթիր, ինչպէս եւ Աբուլ–Ֆեդա խլաթի պաշարումը նշանակում են 1210 թ· Էյուբեան Մալեկ էլ Նէմջեդդինի օրով (1207–1210), ըստ Գանձակեցու Կուզ կոչուած: Աբուլ–Ֆեդան հաղորդում է այնպիսի մանրամասնութիւններ պայմանների վերաբերութեամբ, որոնց մասին մեր պատմիչները լռում են· «Նրանց (Վրաց) թագաւոր Իւանէն, տաքացած գինով՝ անխոհեմաբար հրապարակի պարիսպների տակ քշան ձիաւորով զբօսնելու ժամանակ, մահմետականները դուրս եկան, ձիուց վայր գլորեցին եւ ձերբակալեցին: Նա ազատութիւն ձեռք բերեց, խոստանալով վերադարձնել բազմաթիւ ամրոցներ եւ 5000 մահմետական գերի, վճարել 10·000 ոսկեդրամ, զինադադար անել 30 տարի եւ իր Թամթա դուստրը կնութեան տալ Աւադին: Այդ պայմանները ընդունուեցան երկուստեք երդմամբ, եւ Վրացին (Իւանէին է այդպէս կոչում) յետ ուղարկուեցաւ՝ իր խոստումները կատարելուց յետոյ»· (Brosset, Additions. p. 273/4: (Համ· Տոմաշէկ· Պատմական Տեղեկութիւնք Սասնոյ վրայ· Հանդ· Ամսօրեայ 1896· 261):

Թամթայի կնութիւնը Աւադ Նէմջեդդինի եւ ապա Աշրաֆի հետ ունեցաւ եւ իր բարի հետեւանքները· մեղմացան խլաթի սուլթանների յարաբերութիւնները իրենց հպատակ Հայերի հետ եւ դարձան Հայոց ու Վրաց դաշնակիցներ: Նոյնիսկ թաթարների արշաւանքի ժամանակ Թամթան տէր դարձաւ խլաթի Սուլթանութեան, գերութիւնից ազատուելուց յետոյ (Գանձ· 157, 215. 276/7):

[2] Գանձ· 154· Brosset. Hist. 466· Մշու Առաքելոց վանքի Տօնականի յիշատակարանը տալիս է մեզ բաւական մանրամասնութիւններ Ջաֆարէի դէպի Կարին կատարած արշաւանքի մասին· *«Եւ ի կատարման գրոցս* (1204/5 *թ.*) *սուլտանն Սեւաստիոյ ժողով արարեալ անհուն բազմութեամբ, նմանեալ անբարշտին Յուլիանեա, փքացեալ լեռնացեալ եհաս ի Թէոդուպաւղիս, եւ անտի կամեցեալ անցանել յաշխարհս հայոց եւ վրաց եւ ամէնեւին մոռացաւ զած. եւ յուսացաւ ի նանրութիւն իւր, կամէր յաւարի տանել զաշխարհս ամենայն: Իսկ աւգնականութեամբ այ. եկին հասին զաւրքն վրաց, եւ մեծն Զաքարիէ* (ի *վերան գրած*) *հանդերձ Իւանէի հարազատաւն իւր, եւ այլ ածասէր իշխանաւք եւ նախարարաւք, եւ յոգնախումբ խառնի ճաղանջ բազմութեամբ հասին ի վերայ անաւրէն զաւրացն տաճկաց, եւ յանխնա կոտորեցին զնոսա, զոմանս ձերբակալ արարին եւ ոմանք ի փախուստ դարձան· բայց սուլտանն անվրէպ մնաց· սակայն զաւարոյն զթիւս ո՛ կարէ գիտել զսկւոյ եւ զարծաթոյ եւ զմետաքսի, զերամակս ուղտուց, ձիոց եւ ջորւոց»* (Երեւանի թանգ·):

[3] Ստեփ· վարդ· Մխիթարեան· Ստորագր· Այրի Վանաց սրբոյն Գեղարդայ· (Վաղարշապ· 1873) եր· 16· սխալաշատ ընթերցուածներով: (Համ· մեր ընթերցուածը՝ Յաւելուած Ա· 1: Ջալ· Ա· 131· Բարխ· Արցախ· 366):

[4] Գանձ· 154/5:

[5] Գանձ· 175· Վարդ· 183· Brosset Histoire. 468–473· Վրաց պատմագիրը երկու արշաւանք է նշանակում դէպի Պարս–

բաղարձին հիւանդանում է եւ մեռնում 1212 թուին: Նորա մահուանից յետոյ Իւանէն շարունակում է գործը, բայց ոչ նոյն յաջողութեամբ եւ ծաւալով, այն էլ աւելի երկրի ներսում, թէեւ նորա ազդեցութիւնը վրա—հայկական պետութիւնների մէջ աւելի է զօրանում, քան առաջ: Դեռ եւս Թամարի ժամանակ (†1207/8) նա ստացել էր աթաբէկութեան աստիճան· ամիր սպասալարութիւնը յանձնուեցաւ Զաքարիայի որդի Շահնշահին, իսկ Իւանէի նախկին պաշտօնը՝ պալատական զօրքերի հրամանատարութիւնը՝ միւս Զաքարիայի որդի Վահրամին[1]): Գէորգի Լաշայի ժամանակ, առաջին տարիները յատկապէս, Իւանէն տէրութեան առաջին մարդն էր իրապէս, թագաւորի անուանական գերիշխանութեան տակ: Վրաց թագաւորութեան լաւագոյն շրջանը՝ Գէորգի Գ.ի վերջին տարիներից սկսած, Թամարի, Գէորգի Լաշայի, նորա քոյր Ռուսուդանի եւ Գէորգի Լաշայի որդու Դաւթի ժամանակ, ամբողջ պետութեան ներքին եւ արտաքին ղեկը Զաքարեան իշխանների ձեռքին էր, եւ երբեմն նրանցից էր կախուած գահի թեկնածուներից սրան կամ նրան նստացնել: Գանձակեցին պատմում է, թէ Վահրամ Գագէլ ինչպէս պաշտպանում է Գէորգի Լաշայի որդի Դաւթի թեկնածութիւնը ընդդէմ Ռուսուդան թագուհու, որ կամենում էր իւր որդուն թագաւորեցնել· «Եւ առեալ զնա մեծամեծ իշխանացն, որք էին հնազանդ Թաթարին, Աւագին՝ որ զօրավարն էր, եւ Շահնշահի՝ որդւոյ Զաքարիայի, եւ Վահրամայ եւ որդւոյ իւրոյ Աղպուղին, տարեալ ի Մծխիթա, կոչեցին եւ զկաթուղիկոսն Վրաց, եւ օծին զնա թագաւոր· եւ էր անուն նորա Դաւիթ»[2]):

Արդէն յիշեցինք, թէ պատմական Հայաստանի մեծագոյն մասն ընկել էր Զաքարեանների ձեռքը, աւելի մեծ քան Բագրատունեաց եւ Սիւնեաց թագաւորութիւնները միասին: Ի զուր չէ նրանց իշխանութիւնը, «աշխարհակալ տէրութիւն», «աշխարհակալութիւն», «պետական իշխանութիւն», «թագաւորութիւն» բառերով սահմանում[3]): Դորանով ոչ միայն նրանց տիրապետութեան ընդարձակութիւնն է չեշտւում, այլ եւ իրական դիրքը: Նորանուաճ Հայաստանը Զաքարեանների ձեռքի տակ վիրական մի սոսկ գաւառ չէ, այլ մի պետութիւն: Արձանագրութիւնները մեզ անվրճելի ցուցումներ են տալիս այդ մասին: Նոքա հանդիսանում են որպէս Հայաստանի գերագոյն պետերը· իսկ մնացած իշխանները նրանց ստորադրեալ վասալներն են: Զաքարիայի եւ Իւանէի, Շահնշահի եւ Աւագի անունով հազուադէպ չեն թագաւոր, շահնշահ եւ մինչեւ իսկ կեսար տիտղոսները: Անիի Աղջկաբերդի եկեղեցու աւագ խորանի ձախ աւանդատան գլխին կայ հետեւեալ արձանագրութիւնը· «սք եւ մեղսաքաւիչ պատարագն/որ ի սմա կատարի, Սահակդխտո է/ ծնաւղի Զաքարեա եւ Իւանեի թագաւորաց Հայոց[4]): Զաքարիայի որդի Շահնշահը Խծկոնից վանքի 1216 թ. մի արձանագրութեան մէջ կոչուած է «ածասէր բարեպաշտ թագաւոր»[5])· Բագնայրի նշանաւոր աւետարանի (էջմ. թ. 230) յիշատակարանի մէջ, գրուած Հոռոմոսի Իգնատիոս նշանաւոր գրչի ձեռքով[6]), Շահնշահի համար ասուած է, «յաջորդեալ զաթոռ թագաւորութեան հաւրն իւրոյ», իսկ նորա որդի Զաքարիան կոչուած է «թագածին»: Զաքարէ մեծն ինքն իրեն, ինչպէս եւ ուրիշները նրան եւ Իւանէին անուանում են «շահնշահ»[7]): Իւանէի կինը Խոշաք Շիրակաւանի երկու արձանագրութեան մէջ իրան անուանում է «վրաց եւ հայոց թագուհի» կամ «վերաիշխող տանս վրաց եւ հաոց եւ նովին թագուհի»[8]): Զաքարեաններն իրենց համարում են Բագրատունեաց արքայական տան ժառանգներ եւ Աստուծոյ նախախնամութեամբ ստացած «սեփական ժառանգութիւն նախնեաց»[9]): Գեղարդի տաճարը շինուած է «ի ժամանակս թագաւորազնոյն Զաքարիայի եւ Իւանէի նորին հարազատի»[10]): Իւանէ Աթաբէկը նոյն վանքի մի արձանագրութեան մէջ իրեն «թագազն եւ աշխարհակալ» է անուանում[11]): Վարդան պատմիչ յիշում է,

---

կատան, եւ երկրորդ անգամ Զաքարիային հասցնում է մինչեւ Խորասան եւ Վրկանաց աշխարհը, որ չափազանցութիւն է եւ չէ ստուգւում հայ աղբիւրներով:

[1] Վրաց պատմիչը (Brosset. 474) Զաքարիայի մահը աւելի վաղ է նշանակում քան Թամարինը, մինչդեռ ըստ Վարդանի սորա թագաւորութեան տեւողութիւնը 23 տարի հաշուելով, մահը 1208–ին պիտի նշանակել:

[2] Գանձ· 273/4:

[3] Զալ· Ա· 132· Բ· 157· — Շահխ· Բ· 182, 370· Բարխ· Արցախ· 366· — Կոստ· Վիմ· Տար· 47· 50 — Սարգսեան· Տեղագր· ի փոքր եւ ի մեծ Հայաստ· (Վենետիկ· 1864) եր· 180· — Ալիշան· Շիրակ· 117· — Ձեռ· էջմ· թ· 230· յիշատակարանը:

[4] Համ· Զալ· Բ· 13· — Շիրակ· 58· — Կոստ· Վիմ· Տար· 41:

[5] Այս արձանագրութիւնը իւր ամբողջութեամբ բանասիրութեան դեռ եւս յայտնի չէ· գրուած է «ի ՈԿԵ» = 1216 թուին: Արձանագրութիւնը հետաքրքրական է «Սարգսի Փարշկեանց» յիշատակութեամբ, որ նկարազարդել է Անիի Փրկիչ եկեղեցին:

[6] Տես մեր Գրչութեան Արուեստը· մասն Գ· Վաղարշապատ· 1913· եր 33: Իգնատիոս գրչի մասին նաեւ Ալիշան, Շիրակ· եր· 27: Ներքեւ յիշուելիք Բռնաւորի եւ Տղատիկնոջ նկարազարդ երկաթագիր աւետարանն էլ սորա գործն է:

[7] Արձ· Հաղբատի· ստուգուած մեր կողմից· Զալ· Ա· 58· Երզնկեան 57· Շահխ· Բ· 182· Սարգսեան 111· 112· 149: Н. Я. Марр. Камень с армянск. надписью из Ани в азиатском музее. Известия имп. Академии наук 1910· Արտատպ· СП. 1910· — Ալիշան· Շիրակ· 41· 43· 117· 164· — Գետաշէնի երկաթ· աւետ· յիշատակարանը, 1211 թ·, այժմ էջմ·ի մատենադարանում:

[8] Սարգսեան 170· Ալիշան· Շիրակ 10:

[9] Շահխ· Բ· 370· Բարխ· Արցախ· 366:

[10] Արձ· Գեղարդի· տես· Ցուցակ Ա· 2· Համ· Ստեփ Վարդ· Մխիթարեան· Ստոր· եր· 27:

[11] Արձ· Գեղարդի· տես Ցուցակ Ա· 1· Համ· Մխիթարեան· Անդ· եր· 16· սխալաշատ եւ պակասաւոր:

*թէ Զաքարիայի որդին Շահնշահ իւր անունն ստացել է «ի պատիւ տէրութեանն Անւոյ», զուգէ եւ Շիրակի գրաւման առթիւ, երբ մօտաւորապէս պէտք է ծնուած լինի նա. Նորա իսկական անունը Սարգիս է*1)*: Այս ձգտումը՝ Բագրատունի թագաւորների տիտղոսներով երեւան գալ կամ Բագրատունեաց ժառանգներ հանդիսանալ՝ իրական մի ապացոյց է նոցա գերագոյն իշխանութեան Հայաստանում, պատմական բերմունքով Վրաց ընդհանուր հովանաւորութեան տակ. նոքա կամենում են վերակենդանացնել Բագրատունեաց աւանդութիւնները, իբրեւ Հայաստանի գերագոյն իշխաններ: Տարաբաղդաբար մեր ձեռքի տակ եղած աղբիւրները բաւարար չափով չեն պարզում, թէ ո՞րպիսի իրաւական յարաբերութեան մէջ էր Զաքարեանների նորանուաճ Հայաստանը Վրաց թագաւորութեան հետ: Զաքարեանների այն բարձր եւ բացառիկ դիրքը, որ մենք տեսանք Վրաց պետութեան մէջ, ապացոյց կարող է լինել, թէ այդ կախումը չպէտք է շատ զօրեղ լինէր. ամիր սպասալարութիւնն ու աթաբէկութիւնը ժամանակի ոգու հետ կապուած մի երեւոյթ էր. երկու տիտղոսներն ու պաշտօններն էլ առնուած հարեւան Պարսիկներից, զուգէ մասամբ եւ Ասորիքից, ուր քայքայուել սկսող Սելջուկեան մեծ պետութեան մէջ թոյլ թագաւորների կողքին երեւան են գալիս բարձր զօրապետներն ու աթաբէկները, իսկական կառավարիչը հանդիսանալով պետութեան եւ հետզհետէ անկախ իշխանութիւններ հաստատելով այլ եւ այլ մասերում: Զլինէր Խորազմների եւ ապա Թաթարական մեծ արշաւանքն ու տիրապետութիւնը, Զաքարեանների նորահաստատ պետութիւնն էլ, հաւանօրէն, նոյն ճանապարհով պիտի գնար, ինչպէս մակաբերել կարելի է նրանց գործածած տիտղոսներից եւ պետութիւնը բնորոշող արտայայտութիւններից:*

*Բայց Զաքարեանները միահեծան պետութիւն չկազմեցին, այլ երկու եղբայրներով երկու ճիւղի բաժանուած աւագ կամ ազդեցիկ ներկայացուցչի գերիշխանութեան տակ՝ յառաջ բերին հայ իշխանութիւնների մի ամբողջ ցանց նորանուաճ երկրում: Զաքարեանների բարձրանալուց առաջ դեռ եւս կային հայ իշխանական մի քանի տոհմերի մնացորդներ, որոնք ապաւինած իրենց լեռների բարձունքներին, անձնական ջանքերով պահել էին իրենց գոյութիւնը: Այդպիսիներից էին Արցախի կամ Խաչենի երկճիւղ իշխանութիւնները՝ Խոխանաբերդում եւ Հաթերքում, իրենց ստորադրեալ աւելի փոքր իշխանութիւններով կամ ազատներով. Կորիկեանց տան մնացորդները Լոռիում եւ ապա Մածնաբերդում. Մահկանաբերդի, Համազասպեանց կամ Մամիկոնեանց իշխանութիւնները Կայենոյ եւ Լոռիի գաւառներում, որոնք Զաքարեանների բարձրանալուց առաջ հաստատուած էին արդէն այստեղ. եւ վերջապէս Պահլաւունիք Անիում կամ շրջակայքում: Բայց սոքա բոլորն էլ այնպէս ընկճուած էին եւ փոքրացած Սելջուկեան տիրապետութեան տակ, որ նոցա մասին գրեթէ յիշատակութիւն չունինք ԺԲ. դարու կէսերից առաջ: Վիրական յաջողութիւններով եւ մանաւանդ Զաքարեանց երկու եղբայրների նուաճողական պատերազմներով վերակենդանանում եւ դեր են սկսում կատարել եւ սոքա: Զաքարեանների խոհեմ քաղաքականութեանն ենք պարտական ԺԳ. դարու քաղաքական վերածնութիւնը: Նոքա մի կողմից խնամիական կապերով մօտենում են հնուց մնացած հայ իշխանական տոհմերի հետ, դաշնակից դարձնում կամ իրենց ենթարկում*2)*, միւս կողմից կազմում են նոր իշխանութիւններ իրենց գերագոյն հովանաւորութեան տակ: Մահկանաբերդի իշխանների կապը տեսանք վերեւ. Սարգիս մեծի կինը Սահակդուխտ՝ Զաքարէի եւ Իւանէի մայրը, Բուրդ իշխանի քոյրն էր*3)*. Բագնայրի աւետարանի յիշատակարանի համեմատ, Զաքարեանների մի ուրիշ մօրեղբայրն էր Սարգիս կամ ամիր Սարգիս, որի որդին Խաւաս գրել եւ նկարագրել է տուել այս մեծագիր եւ շքեղ երկաթագիր աւետարանը ի յիշատակ իւր վաղամեռ որդի Սասնային: Նորան էր յանձնուած Շահնշահ մեծի եւ ապա սորա որդի Զաքարիայի կրթութիւնը իբրեւ Զաքարիայի տան* «մախուր թախուցէս, որ ըստ մերումս թարգմանի գլուխ իշխեցող եւ հրամանատար ամենայն իշխեցողաց եւ գլխաւորաց տանն թագաւորութեան տեառն իւրոյ»4):

*Պահլաւունիք, Հոնենք եւ ուրիշ տոհմեր աջակից են Զաքարեաններին Անիի կառավարութեան գործում որպէս պաշտօնեաներ*5)*: Զաքարէի եւ Իւանէի քոյրե-*

---

1) Ալիշան. Շիրակ 41. վարդ. 183:

2) Հասան Ա.ի որդին Գրիգոր Դոփեան քիչ յետոյ մէջ բերուած Օրբաֆիլիսայի աւետարանի պահպանակ յիշատակարանի մէջ աւագին անուանում է «պարոնն իմ»:

3) Սոյն գրքի մէջ եր. 3:

4) Մեր Գրչութեան արուեստը. Գիրք Գ. եր. 33. էջմ. Ձեռ. թ. 230. 297ա. *«Իշխանն պատրոն Խաւաս որդի ամիր Սարգսին որ էր եղբայր մաւր կեսարոսաց Հայոց եւ Վրաց եւ ամենայն Ափխազաց բարեպաշտին եւ ավ պարացելոյն մեծին Զաքարիայի եւ Իւանէի»:*

5) Շահնշահի ժամանակ՝ (1218 թ.) ամիրայութեան պաշտօն էր կատարում Անիում Վահրամ (Շիրակ. 43. 49). Ճշդագոյն ընթերցումը երկրորդ արձանագրութեան Н. Я. Марр՝ Надпись Епифания католикоса Грузии СП. ***1910.*** Արտատպ. Извест. Имп. Акад. Наук 1910. 1433—1442: Հաւանօրէն Վահրամ ամիրան Պահլաւունի էր, ինչպէս Պահլաւունի է եւ Եպիփանի արձանագրութեան տակ յիշուած Գրիգոր եպիսկոպոսը (որդի Ապուղամրի. Շիրակ 121 եւլն.): Անիի եւ շրջակայ վանքերի արձանագրութիւնների մէջ յիշատակւում են Պահլաւունի մի քանի եպիսկոպոսներ, որ յաջորդում են իրար. մենք նշանակում ենք միայն նրանց անուան հետ կապուած առաջին եւ վերջին թուականները. Տ. Բարսեղ (որդի Գրիգորի) 1173—1195, Տ. Սարգիս որդի Ապիրատի 1209—1210, Տ. Գրիգոր որդի Ապուղամրի 1215—1218, Տ. Բարսեղ որդի Ամիրերկաթայ 1220—1247, Տ. Սարգիս 1262 թ.: Աշ-

րից Նաման Լոռիի վերջին Կորիկեաններից Աբասի ամուսինն էր[1]): Խորիշահը Արցախի հզօր եւ անկախ իշխանական տոհմի ներկայացուցիչ Վախտանգի, Ջալալ Դաւլէի մայրը[2]): Դոփը Արցախի մի այլ իշխանական տան հարսը, որ նոր տոհմի՝ Դոփեանց նախամայրը դարձաւ[3]): Չորրորդ քոյրը՝ (?) Նրջիս, հաւանօրէն Դսեղի Մամիկոնեանց հարսն էր եւ անզաւակ մեռաւ[4]):

Զաքարեանների անմիջական ստեղծագործութիւններն էին Վաչուտեանց, Օրբէլեանց եւ Պռոշեանց մեծ իշխանութիւնները, ենթարկուած Զաքարեաններից մէկի կամ միւսի գերիշխանութեան, նայելով, թէ նրանցից որի՞ պետութեան մասն էին կազմում: Զաքարիան եւ նորա որդին Շահնշահ իշխում էին բացի Լոռիից՝ Անիի եւ Անբերդի երկիրներին՝ մինչեւ Ներքին Բասեն, իսկ Իւանէն եւ Աւագը բացի Կայան եւ Կայծոն բերդերից՝ Բջնիի, Գեղարքունիքի, Վայոց ձորի եւ Սիւնեաց վերայ[5]), ուստի եւ Զաքարիայի տանը ենթարկւում էին Վաչուտեանք, Պահլաւունիք, Հոնենք[6]) եւ ուրիշ տոհմեր ու իշխանութիւններ[7]) իսկ Իւա-

---

խարիկ Պահլաւունիներից յիշւում են Խարիփ, Ապուղամրի որդին եւ Տէր Գրիգորի եղբայրը իբրեւ «քաջ եւ արի զաւրական», 1233 թուին Գրիգոր Մագիստրոս որդի Ապուղամրի, եւլն, որոնց պաշտօնները յայտնի չեն· բայց 1313 թ· մի յիշատակարան (Փիրղալեմեանի ժողովածու, անտիպ) Զաքարիա Պահլաւունուն «քաջ եւ ընտիր պատերազմողի», յիշում է որպէս «հեջուպ եւ առաջնորդ տանս մեծի աթապակ ամիր սպասալար Շահնշահի»: Ժամանակի եպիսկոպոսն է Յովհաննէս Պահլաւունի:

— Մի ուրիշ տոհմ, անունը անյայտ, ժառանգական հարկահաւաք կամ դատաւոր էր Անիում· Գրիգոր խուցես, *«որ էր առաջնորդ եւ հիմն քաղաքիս»*· նորա կինն էր Շնափոր տիկին· սրանց որդին էր Պարոն եւ կենակիցը Ոլուն· այս Պարոնը նորոգել է Բազնայրի վերոյիշեալ աւետարանը· սրանց անդրանիկն էր Դաւիթ: Սոքա բոլորը վախճանուած են յիշատակարանի գրութեան ժամանակ: Պարոնի եղբայրն է Ասիլ, *«որ է առաջնորդ եւ հիմն քաղաքիս Անոյ, իրաւարար եւ արդարադատ»*, սորա կինն է Ըռուզ խաթուն: Պարոնի կրտսեր որդիքն են Սեթ եւ Թամար, «որ առանց մէրական (խնա)մոց սնան» (Զ· թ· 230· 299բ·): Ասիլ ինքն էլ նորոգել է Լեւոն Գ·ի Կեռան թագուհու աւետարանը 1357 թուին· (Գանձակի Ս· Լուսաւորիչ, այժմ էջմ· Նոր Ցուցակ թ· 1804)· յիշատակարանի մէջ նկարագրուած է Անիի գլխին եկած աղէտը «տանկաց» զօրքի կողմից, որոնք յարձակուեցան Անիի եւ նորա գաւառի վերայ:

«Սատակեցին առաջի ծնողաց զորդայն եւ առաջի որդւոց զծնողսն· եւ զորս ըմբռնեալ տանէին գերիս, բանդից եւ տանջանաց մատնեալ· եւ բարերարն աստուած տեսեալ եւ անտես առնէր վասն անբաւ չարեաց մերոց: Որոց գլուխ աթապակ եւ մեծ սպասալար Շահնշահ, որ հազիւ կարաց զերծանել ի ձեռաց թշնամեացըն»: Իսկ «պարոն Ասիլի» համար գրուած է, թէ «բազում վիշտս եւ տրտմութիւնս կրեաց վասն աւերման մայրաքաղաքին Անոյ: Քանզի իբրեւ զորդայս ծնողաբար սնուցեալ էր զնոսա եւ հաւատարիմ կացեալ ի վերայ տանն պարոն աթապակ Շահնշահին եւ ամենայն բազմութեան տան իշխանութեան նորա, ի ձեռս նորա եղեալ եւ զամենայն հոգս ըստ աստուծոյ հաճոյից հոգայր եւ հաւանեցուցանէր, որք ընդ ձեռամբ պարոն Շահնշահի էին»:

ԺԳ· դարու կէսերին, ուրեմն, Զաքարեանների ձեռքի տակ, երկու մեծ պաշտօնեաներ ենք տեսնում, Զաքարիա Պահլաւունին իբրեւ զօրապետ եւ «հեջուպ», իսկ Ասիլը որպէս կառավարիչ կամ դատաւոր:

[1] Ջալ· Ա· 38· Շահխ· Բ· 107· Ալիշան· Այրարատ 175: Սանահնի կամուրջի յուշարձան խաչքարը գլխից կոտրուած է, դրա հետ էլ արձանագրութեան սկիզբը, որ ամբողջ էր Ջալալեանի ժամանակ: Բայց իշխանուհու անունն է այդտեղ «Անանե(նէի) դուստր··· եւլն»:

[2] Ջալ· Ա· 183· 193· Շահխ· 371, 378· Բարխ· Արցախ· 171, 173· Կոստ· Վիմ· Տար· 53, 81:

[3] Ջալ· Ա· 78· «քոյր նեզաւփն» պէտք է ուղղել «քոյրն է դաւփ» (տե՛ս Կարապետ Եպիսկոպոս, Դոփեանք Մելիք Շահնազարեանք· էջմ· 1914, եր· 54·), որ ստուգել ենք տեղում: Երզնկեան· Հնախօս· եր· 25· Շահխ· Բ· 363· Ջալ· Ա· 207:

[4] Ջալ· Ա· 103, 110–111, 141, 214, Շիրակ· 162· Վիմ· Տար· 67, 78, 145: Հառիճի արձանագրութեան մէջ Ջալ· (Ա· 214) Նանա է կարդում եւ ոչ Նրջիս· բայց նոյն արձանագրութեան հեղինակը Գրիգոր՝ Իգահատի արձանագրութեան մէջ (Ջալ· Ա· 103) Նրջիս է անուանում իրեն սնուցանողին Մամքանի հետ: Դսեղի մի արձանագրութեան համեմատ (Համ· Ջալ· Ա· 110, 111) Համլիկ Մամիկոնեան իւր ամուսնու հետ (Մամքան)՝ իւր հօր կտակի համաձայն՝ կալուածական նուէրներ է տալիս եւ երկերկու պատարագ նշանակել տալիս Նրջսին եւ Ագումին, որից եւ մակաբերել կարելի է նրանց ազգակցութեան մասին: Այս բոլորը թէական կը մնան, մինչեւ նոր աղբիւրներով չպարզուի հարցը:

[5] Վանենի իշխանուհու խորանաշատին նուիրած երկաթագիր, մեծ աւետարանի (այժմ էջմ· Ն· Ց· թ· 994) յիշատակարանի մէջ Իւանէի իշխանութիւնը սահմանուած է *«տէրութիւն Այրարատեան նահանգին եւ Խաչենոյ մինչ ի կողմանս Զարեքին»*· իշխանուհու եւ նորա աւետարանի մասին կը խօսենք յետոյ· (տե՛ս Յաւելուած Բ· 1· Համ· Սրուանձտեանց· Թորոս Աղբար· Բ· 272):

[6] Այս տոհմից նշանաւոր էր ԺԳ· դարու առաջին կիսում Տիգրան, որ կարեւոր արձանագրութիւններ ունի Հոռոմոսում, Խծկոնից վանքում եւ Անիում· առաջին եւ երկրորդ վանքերի արձանագրութիւնների մէջ իրեն անուանում է *«հաւատարիմ իմ պարոնին Զաքարիաի»*, կամ *«Տիգրան հաւատարիմ ծառայ մանդատոր թախուցէս ամիր սպասալար շահնշահ Զաքարիաի տեառն իմո»*: Խծկոնից վանքում նշանակել է տալիս *«ի տարին: Խ: ունք մին իմ պարոնին Զաքարիայի»*· 1215 թուին շինում է Անիի նկարազարդ Ս· Գրիգորը *«յերկար կենդանութիւն տէրանց իմոց եւ որդոց նոցա»*: Կատարած շինարարութիւններից եւ նուիրաբերութիւններից երեւում է, որ շատ հարուստ էր նա, կալուածներ եւ շէնքեր ունէր Անիում եւ Խծկոնից վանքի շրջակայքում, որ «իմ *եկեղեցի է*» անուանում: Հոնենց տոհմական գերեզմանատունը գտնւում էր Ծաղկաձորի այրերից մէկում, ուր մինչեւ այժմ էլ մնացել են արձանագրութիւններ եւ որմանկարներ: (Տե՛ս Ալիշանի Շիրակ, եր, 22, 28, 72, 75, 129):

[7] Սանահնի եւ Խծկոնքի արձանագրութիւնների մէջ յիշւում են մի շարք իշխանական անուններ, որոնց տոհմի անունը դեռ եւս չէ յաջողուել մեզ գտնել· այսպէս ՈԿԳ=1214 թուին *«Դաւիթ որդի Գրիգորոյ զաւրավար ամիր սպասալարին Զաքարիաի»*, եւ իւր որդիքը *«Գրիգոր եւ Գայլս Շերպարիք»* Խծկոնից Ս· Սարգսին նուիրում են Վահանաոին գիւղի կէսը (տե՛ս մեր Գրչութեան Արուեստը Գ· § 23· տախտ· ԺԱ·) ասել է, թէ նրանց կալուածները ընկնում էին Անիի, Տիկորի կամ Բագարանի շրջաններում: Բայց նրանք գերեզմանատուն ունէին Սանահնում, ուր թաղուած է Դաւիթ զօրավարի հայրը Գրիգոր· «Դաւիթ իշխանաց իշխան» իւր հօր գերեզմանի վերայ կանգնել է մի փառաւոր եւ հնագիտական-գեղարուեստական տեսակէտից շատ հետաքրքրական խաչքարձան:

— Մի ուրիշ *«Դաւիթ իշխան որդի Շոթոռկան»* նոյնպէս յիշատակւում է Հաղբատի, Սանահնի եւ Խծկոնից վանքերի արձանագրութիւնների մէջ, եւ որը կալուածներ ունէր Հաղբատի եւ Սանահնի մէջտեղ, ապա Խծկոնքի եւ Մրենի շրջաններում: Սրա հետ Զաքարիա սպասալարը հողերի փոխանակութիւն է անում եւ նէի տանը, Դոփեանք, Օրբէլեանք եւ Խաղբակեանք, որ Պռոշեանք անունով յայտնի դարձան ապագայում:



ՊԱՏԿԵՐ 3·
Վասակ Խաղբակեանի արձ· Արատեսում· Յաւելուած Ա· 3·

Զինուորական տեսակէտով նրա բոլորը Զաքարեանների զօրավարներն էին, որ օգնել էին երկու եղբայրներին նուաճման գործում եւ այդպիսի ծառայութեան համար մի մի գաւառի կողմնակալ իշխան նշանակուել ժառանգական իրաւունքով: Լիպարիտ Օրբէլեանը «փոխան հայրենեաց» Վայոց ձորում, Գեղարքունիքում որոշ կալուածներ ստանալուց յետոյ, ստանում է եւ Սիւնիքը, «զի նա եղեւ առաջնորդ առման Սիւնեաց»: Իւանէին աջակից էր Լիպարիտ Օրբէլեան, Խորազմների դէմ մղած պատերազմի մէջ1): Պռոշեանց իշխանութեան հիմնադիր Վասակ Խաղբակեան «հրամանաւ եւ ուժով Իւանէի» նուաճումներ է անում Վայոց ձորում, եւ իւր զինակից եղբայրների եւ որդիների հետ աջակցում նորան պատերազմների մէջ, Զաքարեաններին համարելով իւր պարոնները2): Վաչուտեանց հիմնադիրը իւր իսկ խօսքերով յայտնում է, թէ «վասն հաւատարիմ ծառայութեան իմոյ կոչեցայ ի վերակացութիւն գաւառիս»: Նոյն Վաչէի համար Զաքարիայի որդի Շահնշահը «է լոյս աչաց եւ ապաւէն կենաց մերոց»: Ուրիշ տեղ իրեն անուանում է «ծառայ Զաքարէի»3): Նման արտայայտութիւններ կան արձանագրութիւնների եւ յիշատակարանների մէջ եւ ուրիշ իշխանների կողմից: «Գրիգոր որդի Հասանայ եւ Դոփին», որ մասնակից էր Թաթարաց արշաւանքին դէպի Կարին եւ Կեսարիա, Աւագի ղեկավարութեամբ, նրանից ստանալով մի երկաթագիր, նկարազարդ աւետարան, որ այժմ պահւում է Լենինականի Օրթաքիլիսայի եկեղեցում, յիշատակարանի մէջ գրում է· «այլ եւս գնալով ընդ նոսա··· (Թաթարների)··· եւ ի մայրաքաղաքն Կեսարիայն Կապատկացոց նահանգին եւ անտի առեալ զաւատարանս պարոնն իմ Աւագն եւ ետ ինձ»4)···: Այս

Հաղբատին նուիրում 1210 թուին· իսկ 1211 թուին Խծկոնից մի արձանագրութեան մէջ Զաքարիայի կատարած նուիրաբերութիւնների փոխարէն հայր Յովհաննէսն ու միաբանները «առաջնորդութեամբ Դաւթի որդոյ Տոթրոկայ» հաստատում են աւագ բեմում շարունակ պատարագել Զաքարիայի եւ նորա որդու Շահնշահի արեւշատութեան համար: Դաւիթ իշխան որդի Տոթռոկան ինքն էլ նուիրաբերութիւն ունի Սանահնի վանքին ՈՀԱ=1222 թուի արձանագրութեան համեմատ: Դաւթի ստորադրեալներից մէկը՝ Բոնաւոր իւր ամուսին Տղատիկնոջ հետ՝ գրել են տուել 1236 թուին մի շքեղ, պատկերազարդ, երկաթագիր աւետարան, որ պահւում է այժմ Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքում: Մանրանկարների թւում եւ ստացող ամուսիններինը, որի ջրաներկ արտանկարութիւնն ունինք Վարդգէս Սուրէնեանի ձեռքով: Բոնաւորը իւր յիշատակարանի մէջ խնդրում է յիշել նաեւ «զանուցանողն իմ զբարեպաշտ իշխանաց իշխան զպարոն Դաւիթ Տոթռոկանց եւ զորդին իւր զքաջ եւ զանուանի պարոնաց պարոն Գրիգոր եւ զորդին իւր զՍմբատ եւ զԱրջուկն եւ զԱրղութամթուն»: Աւետարանը նրանք նուիրում են Խծկոնից վանքին Տէր Աբաս եպիսկոպոսի ժամանակ: Նոյն ամուսինները ՈՁԹ=1240 թ· ունին եւ յատուկ արձանագրութիւն նոյն վանքում, որով յայտնում են «ողորմութեամբ աստուածասէր պարոնին իմոյ Գրիգորո» իրենց նուիրաբերութիւնը մի գանձագին այգու հետ, «որ ի Մրեն», «եւ աւետարան մեծագին ի ձեռն աստուածապատիւ եպիսկոպոսի տէր Աբասա եւ այլ սուրբ եղբարցս»: (Աւետարանի յիշատակարանի քաղուածքը, նշանակուած հանգուցեալ Վարդգէս Սուրէնեանցի ձեռքով՝ պատկերի հետեւում, ձեռքի տակ չունենալով այժմ, օգտուեցանք Տ· Աւետիսեան Սմբատի Նոր Ջուղայի ձեռագիրների ցուցակից, արտագրութեամբ Հ· Ներսէս Ակինեանի):

1) Օրբ· 360, 397, 399:

2) Օրբ· 350, 397· — Արատեսի արձանագր· Պատկ· 3 Յաւելուած Ա· 3: Կեչառոյքի արձ· պատկ· 4· Յաւելուած Ա· 4· — Համ· Ջալ· Բ·, 157· Ալիշան· Սիսական 143: Գանձ· 194:

3) Արձ· Սաղմոսավանքի եւ Յոհաննավանքի· վերստուգուած եւ լուսանկարուած մեր կողմից: (Համ· Ալիշան· Այրարատ· 168, 162· Տախ· Բ· 100, 122· Ջալ· Ա· 24):

4) Դոփեանց տոհմի ծագումը շփոթուած է Ձեռագիրների մէջ (տե՛ս Ցուցակ Ձեռագրաց Խաչիկ Վարդ·ի, Վաղարշապատ 1897 Ա· 89· Բարխ· Արցախ 206)· յաճախ կրկնուած ծննդաբանութեամբ

յարաբերութիւնները պահուած են մասամբ նոյն իսկ Թաթարների տիրապետութեան աւելի ուշ ժամանակ, ԺԳ· դարու վերջերում, երբ անցել էր Զաքարեանների հմայքը։ Վասակ Խաղբակեանի թոռը Ամիր-Հասան, 1292 թուի մի յիշատակարանի մէջ կոչուած է «մեծ սպարապետ տանն Աւագին, որդւոյ Իւանէ Աթաբակին»[1])։ *Այս կարգի մեծ իշխանութիւններն էլ իրենց հերթին ունէին իրենց սպարապետները կամ զօրապետները աւելի փոքր տոհմերից· Շահունեցի Ամադին, որ իշխում էր Վայոց ձորի Հերհեր գիւղում եւ շրջակայքում,* «նիզակակալ եւ կորովաձիգ ասպարապետ» *էր* «ի դրան թագաւորաշուք իշխանաց Բուրթելին (Օրբէլեան) եւ վախախին»[2])։ *Զօրքը կազմուած էր «ազատ» եւ «ռամիկ» հեծեալներից։ Վարդանի Դանիէլի մեկնութեան վերջում կամ Զաղավանից ժողովի կանոնների նախարանի մէջ, ինչպէս եւ Կեչառեցու Ողբի, ապա քարոզչական մատենագրութեան մէջ յիշատակութիւններ ունինք եւ բարեմաղթութիւններ իշխանների եւ նրանց հեծելազօրքի մասին*[3])։



ՊԱՏԿԵՐ 4·

Վասակ խաղբակեանի արձ· Կեչառոյքում· Յաւել· Ա· 4·

Զինուորականի հետ նկատւում է եւ քաղաքացիական կամ վարչական պաշտօնէութեան կազմակերպութիւն, թէեւ ոչ բոլորովին պարզ իրենց էութեամբ։ Արձանագրութիւնների եւ յիշատակարանների մէջ յա-

---

Դոփի ամուսինն է Ղարա Գրիգորը· այդպէս էլ ընդունուած է քննասիրութեան մէջ (Արցախ· եր· 426, Կար· Եպս· Դոփեանք 33· 51)։ Բայց այդ դէմ է միանգամայն ժամանակակից եւ անհերքելի աղբիւրներին։ Գանձակեցին երկու անգամ (եր· 265, 269) յիշում է «*Գրիգոր Դոփին որդի, մօրաքուեր որդի Ջալալին*», որ Աւագի եւ միւս հայ իշխանների հետ մասնակցում է Թաթարների արշաւանքին դէպի Կարին 1242 թ· եւ Կեսարիա 1243 թ·։ Եթէ Դոփի որդու անունը Գրիգոր է, հաւանական չէ, հօր անունն էլ Գրիգոր լինէր։ Սոյն այս Գրիգորը ունի մի յիշատակարան, որ հենց վերոյիշեալ արշաւանքներին է վերաբերում գրուած 1244 թուին, որ իբրեւ պահպանակ կցուած է Ալեքսանդրապոլից քիչ հեռու Օրթաքիլիսա գիւղի աւետարանին։ Այստեղ նա իրան անուանում է «*Գրիգոր որդի Հասանայ եւ Դոփին, քուեր որդի սպարապետացն Հայոց եւ Վրաց Զաքարիայի եւ Իւանէի*»։ Օրբէլեանը (եր· 424) նոյնն է հաստատում, յայտնելով, որ Տարսայիճ Օրբէլեանը Մինախաթունից ունեցած աղջիկներից մէկին (Ասփային) տալիս է կնութեան «փառաւորեալ իշխանին խաչենոյ Գրիգորոյ, որդոյ Հասանայ, որդւոյ մեծին Գրիգորին, որ էր քեռորդի Աթաբէկ Իւանէի (տե՛ս մեր յօդուածը Христ. Восток СП. *1913*. Т. II. Потомство Тарсаича Орбеляна и Мина хатуны եր· 222–224)։ Այսպիսով Դոփեան առաջին իշխաններն են Հասան՝ Դոփի ամուսինը, սրանց որդին Գրիգոր, սրա որդին Հասան եւ Հասանի որդին է Գրիգոր՝ Ասփայի ամուսինը։ Չամչեան Գ· 185 չգիտեմ որտեղից առնելով՝ գրում է· «Իւանէ ունէր եւ զերիս քորս, Շուշէն, Խորիշահ, Նանան, Շուշէն եղեւ կին Դաւթա ուրումն, որմէ ծնաւ Գրիգոր Դոփեան»։

[1] Արարատ· 1876, 40։

[2] Վարդաշէնի եկեղեցու աւետարանի յիշատակարանը, որ մեր խնդրանօք արտագրել է Պատուական Քուշմանեան։

[3] Ձեռ· Ս· Էջմ· թ· 1520, 116ա նաեւ թ· 2049, 359բ։ Շողակաթ· Գիրք Ա· եր· 45։ Փիրղալէմեանի յիշատակարանների ժողովածուի մէջ (անտիպ), 1333 թուին «ի սբ· ուխտս Կոշայ» գրուած Ճաշոցի Յակոբ գրիչը յիշում է իրենց գաւառի (Արագածոտն) վահրամ իշխանին՝ «որդւոյ մեծին Իւանէի», «*զոր եւ տէր Յիսուս պահեսցէ զսա խաղաղական կենօք եւ յերկար ժամանակօք ամենայն հեծելազօրօքն իւրովք փառաց ի փառս բարձրանալով եւ զօրացուսցէ զսուր նորա ի վերայ թշնամեաց իւրոց*»։

ճախ յիշւում են «հեճուպ», «ամիրա», «ձեռճաւոր», «տամղաճի», ինչպէս եւ «մուճուր» (մուճրութիւն) եւ «քեթոբար» պաշտօնեաները: Հեջուբները իշխանական տների անմիջական վարիչներն էին կամ վերակացուները· Իւանէի եւ Աւագի տան վերակացուն էր կամ հեջուբը Գրիգոր Տղայ կոչուածը, Խաչենի ազատներից, որին Իւանէն յանձնում է մահուան ժամանակ «զորդին իւր եւ զտուն»· իսկ Աւագը, Կայենոյ բերդում Թաթարներից պաշարուած ժամանակ, նրան դեսպան է ուղարկում Չարմաղանի մօտ, իւր հպատակութիւնը յայտնելու: Այս Գրիգորը նոյն պիտի լինի «հեջուբ Գրիգորի» հետ, մի քանի անգամ յիշուած Հոռոմոսի արձանագրութիւնների մէջ, որ նոյն վանքի անմիջական տէրն էր իւր Սմբատ եւ Իշխան եղբայրների հետ[1]: ԺԳ· դարի առաջին քառորդում Զաքարեանների միւս ճիւղի՝ Շահնշահի տան «հեջուպ եւ առաջնորդ» էր Զաքարիա Պահլաւունին, ինչպէս վերեւ տեսանք:

Ամիրայութեան պաշտօնը կապուած էր քաղաքական եւ քաղաքների կառավարութեան հետ: Բուրդ Արծրունին, Սադուն աթաբէկի մեծ պապը, Տփխիսի ամիրապետն էր Վրաց պետութեան մէջ, Մահկանաբերդի եւ Կայենոյ իշխանը լինելով հանդերձ: Այս մասին պատմում է վերեւ յիշուած Դաւիթ իւր յիշատակարանում[2]: Շահնշահ մեծի ժամանակ, տեսանք, Անիի ամիրայութեան պաշտօնն էր կատարում Վահրամ (Պահլաւունին[3]): Համեմատաբար աւելի ստոր էին ձեռնաւորութեան եւ մուճուրութեան պաշտօնները, հարկաւաքներն ու հում նիւթերով հաւաքուած հարկերի մթերապետները[4]: Ապա յիշւում են «տամղաճիք» եւ «քեթոբար», առաջինները Անիի մէջ, վաճառելու բերուած կենդանիների վերայ կնիք էին խփում եւ որոշ հարկ վերցնում, իսկ երկորդները, երեւի, հարկերի հաշիւները պահող կամ ցուցակագրող, նոտար[5]:

Քաղաքական կեանքին համընթաց էր եւ քաղաքակրթականը: Բագրատունեաց անկումով եւ Սելջուկեան արշաւանքներով, գրեթէ, մարել էր հոգեւոր—քաղաքակրթական կեանքը: Ազնուականութիւնը, տեսանք, սպառուած կամ աննշան դրութեան էր հասած եւ եկեղեցու նուիրապետութեան ծանրութիւնը արեւմուտք փոխադրուած: Իսկ այս երկու տարրերն էին կազմում միջին դարերում քաղաքակրթական կեանքի ղեկավարները: Մի դարուց աւելի մեր երկիրը ենթարկուած էր բարբարոսական արշաւանքների· կեանքը դարձել էր անապահով եւ անկայուն· ոչ ոք ասել չէր կարող, թէ վաղն աւելի մեծ դժբաղդութիւն չպէտք է բերէ, քան այսօր: Այսպիսի պայմանների մէջ հնարաւոր չէր քաղաքակրթական կեանքի կամ ստեղծագործութեան մասին մտածել: Եւ յիրաւի, այս շրջանում շինարարական, գրչութեան արուեստի, եւլն· ուշադրութեան արժանի երեւոյթները հազուագիւտ են Հայաստանում· Անիի եւ ուրիշ մահմետական իշխանների մի քանի փորձերը շինարարութեան մէջ չնչին են այս շրջանի կործանարար բնոյթը փոխելու համար: Բայց այդ ժամանակւոր մի երեւոյթ էր ծանր դէպքերի բերմունքով· փոխուէին հանգամանքները, պէտք է փոխուէր եւ հոգեւոր – քաղաքակրթական կեանքի պատկերը:

ԺԲ· դարու ութսունական թուականներից սկսած վիմական եւ գրական յիշատակարանները շինարարական եւ հոգեւոր կեանքի մի նոր արշալոյս են աւետում· նորոգւում են հին վանքերը կամ նորերը շինւում· իւրաքանչիւր իշխանական տոհմ իւր սիրելի վանքն ունի կամ գերեզմանատունը, իւր իշխանութեան հոգեւոր կեդրոնը, որ վայելում է նորա հովանաւորութիւնը· մի ազնիւ մրցակցութիւն է սկսւում իշխանական տոհմերի մէջ, գերազանցելու միմեանցից շինարարական եւ հոգեւոր կեանքի նպաստաւորման գործում: Հոգեւոր դասի ներկայացուցիչները եւ չեն մնում իշխանական տոհմերի ներկայացուցիչներից իրենց շինարարութեամբ, արուեստի եւ գիտութեան հովանաւորութեամբ: Գրական եւ շինարարական կեանքի առաջին երեւոյթներն սկսւում են հիւսիս — արեւելեան գաւառներից· Հաղբատն ու Սանահինը, Գետկայ եւ Խորանաշատի վանքերը գլխաւոր կեդրոններն են այս շրջանների: Յովհաննէս Տաւուշեցի, Մխիթար Գոշ, Գրիգոր Գանձակեցի, Վանական, ինչպէս եւ սորա աշակերտները՝ Վարդան, Կիրակոս, Մաղաքիա եւ Մխիթար Այրիվանեցի պատմիչները, Գրիգոր Տուտէորդի, Դաւիթ Քոբայրեցի, Գրիգոր որդի Աբասայ, Դաւիթ Ալաւկայ որդի, Վարդան մեկնիչ, Յովհաննէս Ա· եւ Բ·, Համազասպ եւ Յովհաննէս Գ· Հաղբատի եպիսկոպոսները, սոքա բոլորը իբրեւ մատենագիրներ կամ շինարարներ, այս երկու շրջանի մարդիկ են:

Կենդարարար շարժումը երեւում է յատկապէս արուեստի մէջ· ճարտարապետութիւնն ուրոյն կերպարանք է ստանում այս դարում, մանաւանդ գաւիթների պէսպիսութեամբ եւ շքեղութեամբ: Նրանք ծագմամբ աւելի հին լինելով՝ դառնում են ԺԳ· դարում միայն, գրեթէ, պարտադիր բոլոր նորաշէն տաճարների համար: Հաղբատի հին տաճարին կցուած գաւիթը՝ նոյն վանքի Յովհաննէս Ա· եպիսկոպոսի կողմից, իւր հոյակապ մեծութեամբ, իրար խաչող վիթխարի կամարներով եւ կրկնակի գմբէթների բարձրութեամբ, մի գլուխ գործոց է ոչ միայն իւր ժամանակի համար: ԺԳ· դարու գաւիթը թէեւ զարդարանքի մէջ Սելջուկեան արուեստի զուգահեռ երեւոյթներ ունի, բայց իւր ամբողջութեամբ հանդէս է գալիս, որպէս մաքուր հայկական ստեղծագործութիւն, սերտ կապուած ժողո-

---

[1] Գանձ· 210, 344/5, Ալիշան, Շիրակ, 17, 20, 22:

[2] Ջեռ· էջմ· Նոր Ցուցակ թ· 913: Յաւելուած Բ· 1: Տե՛ս եւ Ջալ· Ա· 31:

[3] Տես սոյն գրքի եր· 7, ծանօթ 5:

[4] Շողակաթ· Ա· 1913· մեր յօդուածը՝ Ջագավանից ժողովը· եր· 34:

[5] Ալիշան· Շիրակ· 62:

վրացական արուեստի հետ: Հայ շինականի տունը հիմք է դարձել այս տեղ եկեղեցական ճարտարապետութեան մի նոր ձեւի, զանազանուելով միայն իր շքեղութեամբ, զարդարանքով եւ նիւթի հետ կապուած փոփոխութիւններով: Գիւղացու ներսից փայտաշէն տունը փոխարկուած է այստեղ քարաշէնքի: Քիչ չեն եւ փառաւոր տաճարներ, որոնք հայ նախնի ճարտարապետութեան ոգին ու աւանդութիւնները պահելու հետ, ունին եւ ԺԳ. դարու վերածնութեան յատուկ գծեր եւ զարդարանքի ոճեր: Յոհաննա-վանքը Վաչուտեանց իշխանութեան մէջ, Գանձասարը Խաչէնի, Ամաղուն կամ Նորավանքը Օրբէլեանների, Դսեղի Բարձրաքաշը Մամիկոնեանների, Գեղարդը Խաղբակեանների, նոյնը կարող ենք ասել բոլոր մեծ ու փոքր իշխանութիւնների համար, կենդանի եւ խօսուն վկաներ են մի աննման, եռանդուն շինարարութեան, որի նմանը քիչ է կրկնուել պատմութեան մէջ[1]:

Քանդակագործութիւնը (նաեւ փայտի վերայ), յատկապէս խաչքարի արուեստը կատարելագոյն նրբութեան է հասնում: Գօշ Մխիթարի եւ Սանահնի վանքերի (պատկեր 5) Օրբէլեանների Նորավանքի, Դոփեանների Խոթայ վանքի մէջ, Գեղարդում (պատկ. 6), եւլն., պահուած են բազմաթիւ՝ մէկը միւսից գեղեցիկ եւ ընտիր յուշարձաններ: Իշխանական կամ սուրբերի բարձրաքանդակներ պատահում են աւելի յաճախ: Մանրանկարչութիւնն ու որմնանկարչութիւնը կենդանութեան ուշագրաւ նշաններ են ցոյց տալիս: Հայ իշխանական տներն իրենց ընտանեկան, նոր գրած աւետարաններն ունին, կամ Թաթարաց արշաւանքների ժամանակ արեւմտեան գաւառներում գերութիւնից ազատած, նորոգել տուած[2]: Խաչէնի Վախտանգ իշխանի, Թարգմանչաց (Դոփեանց), Պատրոն Խուտասի կամ Բագնայրի, Հաղբատի (մինչեւ վերջերս Գետաշէնում պահուած, այժմ Էջմիածնում) Խաղբակեանց Ջաջուռի գաւառ Վանենի իշխանուհու եւ ուրիշ բազմաթիւ նկարազարդ աւետարաններ, Մշի Առաքելոց նշանաւոր տօնականը եւ այլ ձեռագիրներ, ԺԳ. դարու առաջին քառորդի կամ առաջին կիսի գրչութեան թանկարժէք մնացորդներ են, ուր պահուած են հին, արեւելեան արուեստի աւանդները, առանց զգալի չափով ենթարկուելու բիւզանդական կամ եւրոպական ազդեցութեան, որ նկատելի է Կիլիկիայում:



ՊԱՏԿԵՐ 5.
Տուտէորդու խաչարձանը Սանահնում.

Այստեղ եւս առաջնութեան դափնին Հաղբատին է պատկանում: Մարգարէ նկարչի աւետարանը (Գետաշէնի), Անեցի Սահակ կրօնաւորի պատուէրով, ընդհանրացած ձեւերից (շաբլոն) զատ, իւր մի քանի անհատական, կենցաղական մանրանկարներով, ժամանակակից Անի քաղաքացու, հոգեւորականի, բարձր եւ ստորին խաւերի երկու սեռի ներկայացուցիչների տարազներով, հայ արուեստի եւ մշակոյթի պատմութեան համար թանկագին արժէք է բերում:

Եկեղեցական որմնանկարչութիւնը, որ եռ էր մղուած հայ արուեստի մէջ պատկերամարտութեան հետ, մասամբ էլ արաբական ազդեցութեամբ, այս դարում աւելի ընդարձակութիւն է ստանում, որպէս հետ-

---

[1] Մտաւոր եւ գեղարուեստական կեանքի այս բարգաւաճումը, ընդարձակ շինարարութիւնը անկարելի էր առանց ժողովրդի ամբողջութեան նիւթական բարեկեցութեան, վաճառականութեան ծաղկման, որոնց մասին մեր տեղեկութիւնները, տարաբաղդաբար, շատ սուղ են եւ կցկտուր:

[2] Գանձ. 264. Ջրաբերդ գաւառի Թալիշ գիւղի՝ իր մանրանկարչական խորաններով նշանաւոր Բեգունց աւետարանը, նորոգուած 1060 թուին, բերուած է Կեսարիայից Շիրանշահեանց իշխանների ձեռքով ԺԳ. դարում (տե՛ս նաեւ Բարխ. Արցախ. եր 226): Գրիգոր Դոփեանը իր յիշատակարանի մէջ նկարագրելով Թաթարաց բարբարոսութիւնները նաեւ քրիստոնեաների վերաբերութեամբ, եւ իրենց անզօրութիւնը նրանց բացարձակ օգնելու, աւելացնում է, թէ ինչպէս սրբազան սպասներ, խաչեր եւ ձեռագրեր են ազատել եւ բերել հայրենիք. *«քանզի ընդ նոցին (Թաթարաց) տէրութեան էաք. այլ սակաւուց ոմանց, զոր գնելով ի նոցանէ եւ զոր ձեռաւք մերովք թաքուցանելով, այլ եւ ըզպաս (s!) սրբութե, զնշանս տէրունական եւ զտառս աստուածային, ոչ ձեռաւք մերովք առեալ յաւարի, այլ գնեալ ի նոցանէ, բերաք ի սեփական տէրութիւնս մեր զծաղկալից բուրաստան զաւագ տաւնականն եւ միւս այլ տաւնական.... (մի տողի չափ չի կարդացւում). Եւ զաւետարանն եւ զայն սրբոյն Ստեփաննոսի, զոր ի քաղաքէն Կանու (Իկոնիա) բերաք եւ տուաք ի բնիկ հայրենական սուրբ ուխտս մեր Խաղայի վանից...»*: Մի ուրիշ աւետարան, տեսանք, նուէր էր ստացել Կեսարիայում Աւագից (Օրթաքիլիսայի աւետարանի յիշատակարանը):



ՊԱՏԿԵՐ 6·
Խաչքար Գեղարդում·

ւանք հայ-վիրական մերձեցման: Մենք որմանկարներ ունինք ոչ միայն նոր շինած տաճարներում, ինչպէս Հոնենց Տիգրանն է յիշատակում իւր շինած Անիի Ս. Գրիգորի մեծ արձանագրութեան մէջ[1]) կամ Քոբայրում, այլ եւ հին տաճարների պատերի վրայ, ինչպէս Արուճն է կամ Հաղբատը, կրօնականից զատ, երբեմն եւ ազգագրական-պատմական արժէքներով:

Կարեւոր երեւոյթ է վարդապետարանների կամ դպրոցների (գիտութեան եւ մանրանկարչական արուեստի) հաստատութիւնը այս դարում, որ թէեւ ծագումով հին է, բայց յարատեւ եւ յաջորդական բնոյթ է ստանում ԺԲ. դարի վերջերից սկսած:

Ծաղկել է սկսում կրօնականի հետ եւ հետզհետէ աշխարհիկ բնոյթ ստացող բանաստեղծութիւնը Կեչառեցու, Ստ. Օրբէլեանի, Ֆրիկի եւ Յովհ. Երզնկացու ստեղծագործութիւնների մէջ, ԺԳ. դարու կէսերից սկսած:

Քաղաքական եւ հոգեւոր կեանքի վերակենդանութեան այսպիսի մի շրջանում երեւան են գալիս մի շարք իշխանութիւններ, որոնցից մէկն էլ Խաղբակեան կամ Պռոշեան իշխանութիւնն է, որ դարու լաւագոյն աւանդութիւններով ապրում է եւ գործում՝ Զաքարեաններից սկսած մինչեւ թաթարական շրջանի անկումը, եւ ապա Լանկթամուրի հարուածներից յետոյ՝ իբրեւ տակայծեալ պատրոյգ՝ իւր գոյութիւնը շարունակում է մինչեւ ԺԸ. դարի սկիզբը, եւ անյայտանում պատմութեան մէջ Իսրայէլ Օրիի անձնաւորութեամբ:

* * *

---

[1]) Ալիշան· Շիրակ· 75:

Բ.

ՊՌՈՇԵԱՆՑ ԾԱԳՈՒՄՆ ՈՒ ԲՆԱԳԱՒԱՌԸ

Խաղբակեան կամ Պռոշեան իշխանական տոհմի ծագման մասին մեր պատմիչների տուած տեղեկութիւնները շատ չնչին են: Նոքա միայն անցողակի կերպով յիշում են, թէ Խաչենցիք են, առանց մանրամասնութիւններ տալու նրանց նախահայրերի մասին: Դրանցից հնագոյնը Կիրակոսն է, որ նկարագրելով Գանձակի մօտ եղած ճակատամարտը Հոնաց եւ Վրաց զօրքերի մէջ 1222 թ· Իւանէ աթաբէկի առաջնորդութեամբ, յայտնում է նաեւ այս տոհմից պատերազմին մասնակցողների անունները՝ «Գրիգոր որդի Հաղբակայ, եղբայր Վասակայ քաջի և Պապաքն նորուն եղբօրորդի»1): Առաջինը դրանցից գերի է ընկնում եւ յետոյ նահատակւում, իսկ երկրորդը սպանւում է պատերազմի դաշտում: «Սոքա գաւառաւ Խաչենեցիք էին», աւելացնում է Գանձակեցին, «յերեւելի ազգէ, հաւատով քրիստոնեայք ուղղափառք եւ ազգաւ Հայ»: Վերոյիշեալ Վասակի Խաչենեցի լինելու մասին յիշատակութիւն ունի եւ Օրբէլեան2):

Այս տեղեկութիւնը հաստատում եւ լրացնում են արձանագրութիւններն ու յիշատակարանները. Նուխվա գաւառի Գէոզբուլաղ գիւղի երկաթագիր, մեծ աւետարանի յիշատակարանը, գրուած 1232 թուին, գաղափար է տալիս այս տոհմի մէջ եղած աւանդութեան մասին իւր ծագման նկատմամբ: Աւետարանը իւր յիշատակարանով գրել է տուել նոյն տոհմին պատկանող Վանենի իշխանուհին՝ «դուստր բարեպաշտ իշխանին Ջաջռոյ որդոյ Խաղբակայ թոռն Բակ իշխանին» եւ նուիրել Հաւապտուկ կոչուած իրանց տոհմական գերեզմանատանը3): Յիշատակարանից երեւում է, որ Բակ իշխանը ոչ թէ Խաղբակի հայրն է, այլ տոհմի նախահայրը, «թոռն Բակ իշխանին» խօսքերն էլ այդ իմաստով պէտք է հասկանալ, որ Վարդանանց պատերազմից յետոյ ամրացած մի բերդում, պարսպից յանդիմանեց ուրացող Վասակին, ցոյց տալով Պարսից ներկայութեամբ նրա կատարած չարիքը Հայոց աշխարհի գլխին, ապա եօթ հարիւր հոգիով գիշերանց դուրս եկաւ բերդից եւ ազատուեցաւ: Բակ իշխանն այդտեղից իրեն ձգեց «յամուրսն Արցախայ եւ կեցեալ (նախնիք Խաղբակեանց) բարեպաշտութեամբ եւ քրիստոսական հաւատով մինչեւ յայս բարեպաշտ իշխանս Ջաջուռ եւ ի սմին որդիացեալս քսասէրս Վանենի»4): Ընթերցողն ինքը տեսնել կարող է, որ Բակ իշխանի այս ամբողջ պատմութիւնը հիմնուած է Եղիշէի վրայ5), միայն նրա փախուստը «յերեսաց Տաշհոյ արքային Պարսից» է համարում յիշատակարանի գրողը, որ պարզ սխալ է, եւ գուցէ յիշողութեամբ օգտուելու հետեւանք: Խաղբակեանների ծագման աւանդութեան կապը Բակ իշխանի հետ կարող էր կազմուել Բակ եւ Հաղբակ անունների նոյնութիւնից. տոհմը կոչւում է եւ Վարդանանք6), թերեւս Բակի Վարդանանց իշխաններից մէկը լինելու պատճառով. իսկ եթէ Վարդանանք կոչումը հին է եւ իրական, նշանակում է հետագայում որպէս լուսաբանութիւն տոհմի այդպիսի անուանակոչութեան, կապուել է Բակի պատմութեան հետ: Իսկապէս, ուրեմն, տոհմի մասին պատմական տեղեկութիւնն սկսւում է յիշատակարանի մէջ Խաղբակի անունով, որ Ջաջուռի հայրն էր, Վանենու պապը: Բայց Խաղբակեան կոչումն աւելի հին է, քան Ջաջուռի հայր Խաղբակը եւ այս մասին ունենք ցուցմունքներ: Օրբէլեան վաւերագրերից առնելով պատմում է. «իշխան մի Դլեն անուն որդի Խաղբակայ, տայ յիւր հայրենի ժառանգութեանցն զԽոտ գիւղն եւ զԽոտագետոյ մեծ այգին եւ ի վժանիս զԾաղիկ, որ է տեղի բազում անդաստանաց, վասն իւր հոգւոյն ի տէր Յովհաննէս եւ ի սուրբ նշանն··· ի թուիս հայոց 495 (= 1046)»7): Տաթեւի Գրիգոր եպիսկոպոսը, որ վերոյիշեալ Յովհաննէս եպիսկոպոսի յաջորդն էր, նոյն Դլեն իշխանից գնում է «զԲոլորաքարն

---

1) Գանձ· 194:

2) Օրբ· 350:

3) Աւետարանի մասին առաջին տեղեկութիւնը տալիս է Ջալալեանը (Բ·216), որ տեսել է, որպէս թէ Վարդաշէն գիւղում, մինչդեռ Բարխուդարեան (Աղուանից Երկիր եւ Դրացիք, Թիֆլիս, 1893 թուին· եր· 342) ցոյց է տալիս իսկական տեղը Նուխվա գաւառի Գեոզ-բուլաղ գիւղը: Ինքներս էլ 1910 թուի ամրանը յատուկ գնացել ենք այդ գիւղը, ուսումնասիրելու աւետարանը մանրանկարչական տեսակէտով եւ արտագրել բոլոր յիշատակարանները: Ձեռագրի և գլխաւոր յիշատակարանի մասին տես I. А Орбели h'Асан Джалал князь Хаченский СП. 1909· եր· 410· արտատպ· Известия Имп. Академии Наук. 1909: Օրբէլին սխալւում է յիշատակարանի թուականը 1222 ուղղելով՝ հիմնուած Իւանէ աթաբէկի մահուան տարեթուի (1229 թ·) վերայ:

4) Յաւելուած Բ· 3:

5) Տփխիս· 1904 թ· եր· 178· 182:

6) Ալիշան· Սիսական 487:

7) Օրբ· 315:

Նորեաց բաժինն» եւ հաստատում Տաթեւի անունով[1]) ։ Խաղբակի որդի Դլենը թէեւ կալուածներ ունի Սիւնեաց աշխարհում կամ Բաղաց թագաւորութեան մէջ, բայց նորա եւ ժառանգների բնագաւառը Արցախումն է, Ջալալ Դաւլայի իշխանութեան մէջ։ Ստեփանոս Օրբէլեան այդ ցեղի հետագայ սերունդ երեք եղբայրներից՝ որոնցից աւագը Հասան էր կոչւում, գնել է 1294 թ․ նրանց հայրենական Աստուածընկալ սուրբ նշանը[2]) ։ Այսպիսով տեսնում ենք, որ երկու տոհմերի ծագումն էլ Խաղբակ անունը կրող իշխաններից է եւ բնագաւառն էլ Խաչենում, Ջալալ–Դաւլայի իշխանութեան մէջ, ուստի եւ պարզ է նրանց ցեղակցութիւնը։ Եթէ իրական է այս հաւանական ենթադրութիւնը, ապա Խաղբակեանց ծագումը կարող ենք տանել մինչեւ Ժ․ դարու վերջերը։ Դլէն ապրում էր 1046 թուին․ նորա հայրը Խաղբակ պէտք է ծնուած լինի Ժ․ դարու վերջին։ Բայց անցնինք իրական յիշատակարաններին։

Վանենու յիշատակարանը մեզ հաստատուն տեղեկութիւն է տալիս նաեւ Խաղբակեանց բնագաւառի մասին։ Աւետարանը իշխանուհու կողմից նուիրուած է «ի սուրբ մենաստանն, որ կոչի Հաւապտուկ, որ է շինեալ յանուն սրբոյն Աստուածածնին, եւ է բնական տուն եւ շիրիմ Ջաջռոյ իշխանի եւ նախնեաց իւրոց, եւ է ի գաւառին Արցախոյ, եւ է հանդէպ ամրոցին որ կոչի Խաւխանաբերդ, ի տէրութիւն երից հարազատացն բարեպաշտ իշխանացն Ջալալին, Ջաֆարիայի, Իւանէի»[3]) ։ Բերդը յիշում է եւ Գանձակեցին[4]) ։ Բայց մինչեւ այժմ էլ Հաւապտուկ եւ Խօխանաբերդ անունները գործածական են ժողովրդի մէջ․ երկուսն էլ գտնւում են Խաչենագետի վերայ Գանձասարի վանքի դիմաց։ Հաւապտուկը մի բլուր է, որի գագաթին շինուած է համանուն վանքը, ծածկուած այժմ անտառով և թփերով։ Վանքի եւ խաչքարերի արձանագրութիւնները, որ ստուգել ենք անձամբ, հաստատում են յիշատակարանի տեղեկութիւնները Ջաջուռի եւ նրա հայրենիքի մասին, տալով եւ թանկագին նորութիւններ տոհմի եւ ուրիշ անդամների նկատմամբ։

Եկեղեցին սաղաշէն է եւ երկու մասից բաղկացած, բուն տաճարից եւ գաւթից, առանց սիւների, շինուած 1163 թուին[5]) ․

Թւին Ո/ԺԲ էր․ յիշխանութե Հասանա որդո Վախտ/անգա եւ ամուսնո նորա Մամքա/–նա ես Յոհան քվեր որդի տր Գրիգ/որո եւ Գերգ եղբաւր որդի եւ այլ միա/բանքս շինեցաք զեկեղ․․․ (կոտրած) **քս ի փրկո/ւթի հոգոց մերոց որք կարդ․․․** (կոտրած) **չեց․**

Այստեղ յիշուած տէր Գրիգորը ինքն էլ ունի մի արձանագրութիւն 1167 թուից․

Թւին ՈԺԶ էր․ Ես տր Գր կանգնեցի զխաչս ի տապանի եղբաւր իմոյ Յուսուփայ, որ երկրպագէք յաղաւթս յիշեցէք։

Մի ուրիշ արձանագրութիւն նուիրուած է տէր Գրիգորի յիշատակին․

Ես Յոհան առաջն/որդ սբ ուխտիս/շինեցի զե/կեղեցիքս եւ կարգեցի։ Բ։/աւր պատարագ տէր Գրիգորի/ի տարոջն կատարիչք/դրոյս աւրհնին յայ ամ են․

Սոյն տէր Գրիգորը Մեծարանց տան եպիսկոպոսն էր։ Նորա յաջորդներն էին իւր երկու եղբօրորդիքը՝ նախ Յակոբոս արհիեպիսկոպոս եւ ապա տէր Սարգիս։ Վերջինս ՈՀԲ (=1223) թուին մի խաչ է կանգնել իւր եղբօր՝ Յակոբոս արքեպիսկոպոսի տապանի վերայ, իսկ ՈՀԴ (=1225) թուին մի երկրորդ խաչ էլ ի բարեխօսութիւն իւր[6]) ։ Գրիգոր եպիսկոպոսի եղբօրորդի Գերգը, որ 1163 թուի արձանագրութեան մէջ վանական էր միայն, աւելի ուշ՝ ցած ընկած, մի անթուական արձանագրութեան մէջ՝ յիշւում է արդէն իբրեւ «հայր» (վանից), ուրեմն յաջորդել էր վանքի առաջին վանահայր Յոհանին[7]) ։

Յանուն այ ես Աթանաս, որ զԳոգին երկիրն գնեցի ի Հաւոյ պտուկ տվի հայր Գորգ եւ այլ միաբանքս տվինք տարումն Գ․ աւր պատարագ նոր կիրակէին որ զհոգն եկեղեցոյս հանէ ՅԺԸ հայրապետաց նզոված է մեռեկաւք կենդանաւք ով զժամն խափանի դատի այ․

Այստեղ տեսնում ենք մի երեւոյթ, որ յաճախ կրկնւում է միջնադարեան մեր եկեղեցական պատմութեան մէջ։ Հայրապետական, եպիսկոպոսական եւ վանահայրական աթոռները ժառանգական են եւ կապուած իշխանական տոհմերի հետ։ Յայտնի է Պահլաւունեաց օրինակը կաթողիկոսական աթոռի եւ Անիի եպիսկոպոսութեան վերաբերութեամբ ԺԲ․ դարու կէսից մինչեւ ԺԴ․ի կէսերը, եւ Օրբէլեանցը՝ Սիւնեաց եպիսկո–

---

1) Օրբ․ 322։

2) Օրբ․ 294, 315, 322, 485։

3) Տես Յաւելուած Բ․ 3։

4) Գանձ․ 255, 256։

5) Հաւապտկի արձանագրութիւնները գրի են առնուած 1897 թուին առանց հնագրական առանձնայատկութիւններն ի նկատի առնելու․ դոցանից մի քանիսը, որոնք տողատուած են, վերստուգուած են 1915 թ․, տարաբաղդաբար անձրեւների պատճառով հնարաւորութիւն չունեցանք բոլորը վերստուգել եւ լուսանկարել։ Ընդգծուածները միացած են (лигатура)։

6) Բարխ․ Արցախ․ 170։

7) Գեռաքարեցոց տանից եպիսկոպոսներ յիշւում են եւ աւելի ուշ ժամանակներում։ Գետաշէնի յայտնի աւետարանը 1383 թուին կազմուել է կրկին Մովսէս քահանայի ձեռքով «իշխանութեամբ պարոն Ջալալին, եպսութբ տր Գրիգորին Գեռաքարեցին»։ Համ․ Բարխ․ Արցախ․ եր․ 263։

պտական (Ստեփաննոս պատմիչ, Աւրպել Յոհաննէս, Ստեփաննոս–Տարսայիճ, Սարգիս եւլն.) աթոռի նկատմամբ[1]): Նոյնն ենք տեսնում Խաչենի եւ Դոփեան իշխանների մէջ[2]): Այստեղ էլ Մեծարանց տան երեք եպիսկոպոսները եւ Հաւապտկի երկու առաջնորդները նոյն տոհմից են եւ Խաղբակեանց բնական տան եւ շիրմի հետ կապուած, նոյն իսկ Գրիգոր եպիսկոպոսի եղբօր գերեզմանն այստեղ է, եւ Յոհան վանահայրն էլ նոյն եպիսկոպոսի յիշատակը Հաւապտկումն է յաւերժացնում: Այս հանգամանքները բնականաբար այն միտքն են զարթնեցնում, թէ յիշուած անձինք կարող են Խաղբակեան տոհմի հետ ազգակցական առնչութիւն ունենալ, թէեւ հաստատել կարելի չէ, որովհետեւ Հաւապտուկը կարող էր մի ուրիշ երկրորդական տոհմի հանգստարան եւս լինել:

Բայց մենք ունինք մի շարք խաչքարեր եւ արձանագրութիւններ, որոնք բուն Խաղբակեան տոհմի յիշատակներ են: Դոցանից հնագոյնը մի խաչքար է Հաւապտուկ լերան հիւսիսային կողին, Վանք գիւղից դէպի Հաւապտուկ կամ Դարբասները տանող ճանապարհի վերայ, տարաբաղդաբար կիսով չափ փճացած.

Ի թվիս ՈԻԲ(=1173) ի հա(յրապե)տութե տն
Ստեփան/ոսի եւ ի թագաւորո . . . Սրահան
գս որդի Ճաջուա . . . . Կանգն
եցի զխաչս ի . . . .
ը: մնո? որ կարդ . . . .

Նոյն Սրահանգը մի խաչ էլ ունի կանգնած իւր հօր յիշատակին դարձեալ նոյն տեղում:

Ես Սրըհանգս կանգն/եցի զխաչ սիմ՝ հաւրն Ջաջու/ռա, որք երկրպագէք... (կոտրած)...

Մի երրորդ խաչքար՝ կից սրան՝ 1214 թ. նոյնպէս կապուած է Սրահանգի անուան հետ. խաչի կանգնողի անունը պարզ չէ, կարող է կարդացուել Փայչաղ կամ Փայշաղ, բայց աւելի հաւանական է առաջինը. որովհետեւ չորրորդ տողի մէջ «աչերս» (=խաչերս) բառի չ–ի նման է ընդգծուածը, բոլորգրի ձեւով:

Ի թվիս ՈԿԳ էր
Ես Փայչաղա(?)յս ... Սրա
յհագին(s!կ(?)ագն ի զա
աչերս ի փրկութին հո
գոյ իմո եւ բարէախաս (s!)

առ քս ծնաւղաց մերոց[3]):

Այս տեղ յիշուած Ջաջուռը կամ Ճաջուռը նոյն չէ մեր յիշատակարանի Ջաջուռի՝ (Բ) Վանենու հօր հետ, այլ նրա աւագ ազգականներից մէկը, հաւանօրէն պապը, իսկ Սրահանգը Խաղբակի եղբայրը կամ Ջաջուռ Բ–ի հօրեղբայրը: Բլրի գլխին՝ եկեղեցու մօտ՝ գըտնւում է մի մեծ խաչ, արձանագրութեան մի մասը գետնի մէջ թաղուած, կարդացւում է այսքան.

Թւ ՈԼԳ (=1184) Ես Հասան որդի Խաղբա...[4])

Քանդակուած է ելնդաւոր մի ձիաւոր, գլխին սաղաւարտ, միրուքաւոր, երկար նիզակը աջին, ձախով բռնել է սանձը. ձիաւորի ձախ կողքից կախուած է լայն եւ կարճ սուր: Ձիու պարանոցը աղեղնաձեւ, գլուխը քաշ ձգած, պոչը հանգոյց: Ձիաւորի առաջ նկատւում է աշտարակի նման մի բան, որի հետեւից մի մարդու գլուխ. այս մասը կիսով չափ թաղուած է հողի մէջ:

Մի այլ մեծ խաչքար ունի այսպիսի արձանագրութիւն.

Ես Վասակ կանգնեցի զխաչս ի տապանի եղբաւր իմոյ Աբուսի. թւ ՈԽ.

Խաչի վերեւի ճակատից՝ դէպի հորիզոնական թեւերը՝ կախուած է մի զոյգ ողկոյզ, իսկ ներքեւից՝ ձողի վերայ բարձրանում են դէպի նոյն թեւերը մի մի քշոցաձեւ բոլորակ՝ մէջը խաչ: Մի կողմը քանդակուած են երկու ելնդաւոր մարդկային ֆիգուր, որոնցից մէկի գօտուց հորիզոնական ձեւով կախուած է մի երկար սուր, աջ ձեռքին բաժակ բռնած, ձախը կրծքին. գլխին սաղաւարտ: Սորա դիմաց կանգնած է միւսը, ձախով փարչ բռնած, աջը կրծքին[5]):

Ովքեր են Հասան եւ Վասակ՝ խաչարձանների կանգնողները: Արձանագրութիւններից երեւում են, որ Հասան եւ Ջաջուռ Բ. եղբայրներ են, միեւնոյն Խաղբակի որդիքը: Անհաւանական չէ, որ այս Հասանը նոյն լինի Օրբէլեանի յիշած Գրիգոր Բաղաց թագաւորի փեսայ Հասանի հետ, որ խաչենցի էր, Գեռաքարից: Նորա վերադարձը հայրենիք կատարուել է 1170 թ.ին[6]): Գեռաքարը Խաղբակեանների նստոցն է, Հաւապտկի

---

[1]) Քաջբերունի. Ճանապարհորդական նկատողութիւնք (Փորձ 1877, բ. Գ. եւ Դ., 1877/8 Բ. Դ., 1879. Ա. Ժ., 1881, Գ. Դ. Ե–Զ. շարունակութիւնը՝ Արարատ 1888, 1889, 1890) Ար. 1890, 38–39. — Ալիշան, Սիսական 237., բայց սխալւում է (Յովհաննէս Աւրպելու յաջորդ Սարգսին նշանակելով. տե՛ս մեր յօդուածը՝ Христ. Восток. *1913* СП. Потомство Тарсаича. եր. 234:

[2]) Բարխ. Արցախ. 194, 204, 205, 206. 408., մեր յօդուածը՝ Потомст. Тарсаича. եր. 224:

[3]) Այս երեք արձանագրութիւնն էլ առաջին անգամն են յայտնըւում բանասիրութեան եւ արժանի են ուշադրութեան նաեւ հնագրական տեսակէտով, մի քանի տառերի շեղագրի նմանութեամբ: Երրորդ արձանագրութեան մէջ երկրորդ տողի «փայչաղայս» բառի մէջ չ տառը, ինչպէս եւ չորրորդ տողի «աչերս»-ի մէջ—ա–ն բոլորովին տարօրինակ են իրենց ձեւով. նաեւ երրորդ տողում «կագն», կ–ն, գլխիվայր գրուած:

[4]) I. Орбели. Бытовые рельефы на Хаченских крестных камнях XII и. XIII вв. СП. *1915*. Оттиск из записок Восточ. отд. имп. русск. археологическаго О-ва. եր. 3 (329): Օրբէլին կարդում է. «ՈԼԳ. Ես Հասան որդի խանբակա... եւլն.

[5]) Խաչքարի բարձրաքանդակների համար տ. Օրբելու վերոյիշեալ յօդուածը:

[6]) Օրբ. 337:

A 3755

հարաւ արեւելեան փէշին: Ժամանակն ու տեղը, գրեթէ, հաստատուն հիմք կարող են ծառայել նոյնացնելու այս երկու Հասանները: Վասակը նոյնպէս Խաղբակի որդին պիտի լինի, եւ նոյն Պռոշեանց իշխանութեան հիմնադրի հետ, որ կանգնել է իւր եղբօր յիշատակին այս խաչքարը, երբ դեռ եւս Խաչենումն էր եւ չէր հաստատուած Վայոց ձորում իբրեւ կողմնակալ—իշխանապետ: Վանենու հայր Ջաջուռը, որին անուանեցինք Ջաջուռ Բ., ունի երկու արձանագրութիւն, երկու մեծ եւ գեղեցիկ խաչքարերի վերայ, բլրի գագաթին՝ վանքի մօտ. դոցանից մէկը նա կանգնել է իւր Սրճպատ, միւսը Հասան որդու տապանի վերայ, երկուսն էլ 1224 թ.

Թուականն ՈՀԳ էր ես Ջաջ/ուռ
որդի / Խաղբակայ / կանգնե/ցի
զխաչս ի/տապանի ո/րդւոյ/իմոյ/Սրճպա
տա(s!). որք երկ/րպագէ/ք յաղաւթս յիշեցէք[1]).

Երկրորդ արձանագրութիւնն է.

Թուական ՈՀԳ էր. Ես Ջաջուռ կանգնեցի զխաչս ի տապանի որդո իմո Հասանա (կոտրած է խաչը):

Մի երրորդ արձանագրութիւն Ջաջուռի անուան յիշատակութեամբ գտնւում է Գանձասարից դէպի արեւելք՝ Ծմակայ հողի ճանապարհի վերայ, հնում Վաճառք կոչուած տեղի եկեղեցու դրան հարաւային կողմը, արեւմտեան պատին[2]):

Հրամանաւ ածասէր իշխանին Հասանա տեառն Խաչենո ես Գրիգոր որդի քաջ զաւրականին Ջաջուռա ետու զԱւանախառին երկիրն ի սուրբ նահատակս տր սեւ միաբանքս տուին զսր Գրիգորի տաւնն: Բ: պատարագ.

Ջաջուռը, յիրաւի, զօրական էր, նա իւր եղբօր Վասակ Խաղբակեանի «զինակիցն» էր պատերազմների մէջ, ինչպէս տեսանք Կեչառոյքում Վասակի շինած կաթուղիկէի հարաւային պատի մեծ արձանագրութեան մէջ (Պատկ. 4. Յաւելուած Ա. 4):

Վանենու մի ուրիշ երկաթագիր մագաղաթեայ, մեծադիր աւետարանի յիշատակարանից, գրուած 1224 թուին, իմանում ենք, որ նա ամուսնացած էր Սեւադեանց Աբասի որդի Կուկ իշխանի հետ. «Ես Վանէնի աղախին Քի դուստր Ջաջռոյ Խաղբակեանց, ամուսին Կուկին որդւոյ Աբասա Սեւադեանց, իշխանաժեացն, միաբանեցա ի խորանաշատոյ սբ Ածածինս», տալով նուէր այս փառաւոր աւետարանը. «շինող եւ առաջնորդ վանիցս Վանական վարդապետն հաստատեաց ինձ աւուր մահուան իմոյ: Ա: քառասունք, Ը. աւր ամբիծք, եւ յամէն տարի: Ա: աւր ժամ յիշատակ ինձ յինանցն, յաւուր տաւնի Աւետեաց Ածածնին»[3]) (տե՛ս Յաւելուած Բ. 4):

Տարաբաղդաբար պարզ գաղափար չունինք Խաղբակեանց ընդարձակ տարածութեան մասին Խաչենում: Այսքանս միայն գիտենք, որ Հաւապտուկը նրանց հոգեւոր կեդրոնն էր եւ տոհմական գերեզմանատունը, իսկ Գեռաքարը նրանց բնակավայրը: Սակայն անհաւանական չէ, որ աւելի ընդարձակ լինէր այն, մանաւանդ եթէ իրական լինի Դոփեանց եւ Խաղբակեանց տոհմակցութիւնը: Մեծարանց վանքի, բայց յատկապէս Կոշիկ անապատի բոլոր արձանագրութիւնների հաւաքելն ու ուսումնասիրութիւնը, գուցէ, կարող էր որեւէ լոյս սփռել այս մութ հարցի վերայ: Բարխուդարեան եւ Օրբելի իրենց վերոյիշեալ աշխատութիւնների մէջ չեն տուել բոլոր արձանագրութիւնները, իսկ մենք հնարաւորութիւն չենք ունեցել այդ մասերն անձամբ ուսումնասիրելու: Քոլատակի հովիտը այս վանքերի եւ Հաւապտկի հետ մի փոքրիկ ամբողջութիւն է կազմում:

---

[1]) Համ. Բարխ. Արցախ. 182:

[2]) Գրի եմ առել 1897 թ. նաեւ հետեւեալ արձանագրութիւնները.

Ա) եկեղեցու ներսը. Յանուն այ ես Ասրդս(?) եկի միաբանեցա սբ Ըստեփանոս/ն լբ տարի (տուի?) կ(?)ով վասն իմ մեղացն թողութն (s!) առաջնորդութե Գրիգորի ... (մի բառ) միաբան ... (մի բառ) տվին Բ (?): ժամ սբ Սարգսին...

Բ) խորանի հիւսիսային պատին. Շնորհիւն այ ես Հասան որդի (Վ.)ախ(տանգա) եւ խորիշահի տէր խաչենո շինեցի զեկեղեցիս յորժամ յայտնեցաւ նշխարք սրբոյն Ստեփանոսի ի սոյն տեղո(ջ) ի թո ՈՀԸ եւ խնդ(րե)ցի ի սպասաւորաց...:

Գ) Բեմի առաջից մի արձանագրութիւն եւ գունաւոր զարդեր, բայց չի կարդացւում:

Դ) Հարաւային մատրան դրան հիւսիսակողմը. Ես Պապաք որ? է (որդի?) խութլա... ա տուաք զԳոխին երկիրն ի սբ նահատակս տր *ս եւ* միաբանքս տուին: Ա: ժամ Դաւթի տաւնին Աղբայրս կատարիչքն աւրհնին.

Ե) Արեւմտեան որմի վերայ. Կամաւն այ ես Սարգիս Կարնու քաղաքեցի սալեցի զեկեղեցիս եւ կանգնեցի զխաչերս ինձ եւ աշակերտ s! իմո Յովաննիսի յաղաւ...: Համ. Բարխ. Արցախ. 184–185:

[3]) Այս աւետարանի մասին առաջին անգամ յիշատակութիւն է անում Սրուանձտեանց (Թորոս Աղբար. Բ. 272): Եղել է սեփականութիւն Վանի ս. Վարդան եկեղեցու: Այժմ գտնւում է Մ. Աթոռում, որ նուէր է բերուած 1915 թ. Վանի գաւառապետ Տերմէնի կողմից, թ. 994: Աւետարանի կազմը կաշեպատ է, հաստ տախտակի վրայ, 36×26×12 սմ. մեծութեամբ. հաստ մագաղաթ 36×26 սմ., մեծ, բոլորաձեւ երկաթագրով, երկսիւն, իւրաքանչիւրը 24$^1/_2$×7 սմ.: Գրուած է խորանաշատում *«ի ժամանակս թագաւորութեան դստեր Թամարին, թոռին Գէորգեայ, եւ ի տէրութեան այրարատեան նահանգին եւ Խաչենոյ մինչ ի կողմանս Զարեքին. յայժմ ժամանակի ինքնակալ տանս Թանա Վահրամ եւ Աստղն եղբայր իւր, ի հայրապետութեան տն Յովաննիսի, ի ՈՀԳ թվականիս»*: Աւետարանը նկարազարդ է, տասն խորաններով, աւետարանիչների պատկերներով եւ սկզբնազարդերով, մանրանկարչական տառերով եւ լուսանցքի զարդերով: Թոյլ են աւետարանիչների պատկերները եւ շատ պարզ. իսկ սկզբնազարդերը, լուսանցքի զարդերը աւելի յաջող եւ արեւելեան բնոյթով: Բացի աւետարանի ծաղման յիշատակարանից կան եւ ուրիշները. յիշատակելի է յատկապէս խորանաշատի հիմնադիր եւ նշանաւոր վարժապետ ու մատենագիր Վանականի ձեռքով գրուած յիշատակարանը Մարկոսի վերջում, 155ա: Յիշատակարանը տես Յաւելուած Բ., 4:

Դ.

ԽԱՂԲԱԿԵԱՆՑ ՆՈՐ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ

Ե՞րբ թողեց Վասակ Խաչենը եւ որո՞նք են նոր իշխանութեան սահմանները։

Ըստ Մխիթար Այրիվանեցու Վասակի տեղափոխութիւնը կատարուած պիտի լինի 1201 թուին· «Վասակ որդի Հաղբակայ եւ երեք որդիքն իւր՝ Պապաքն, Մկդէմն եւ քաջն Պռօշ, եկեալ ի Խաչենոյ, բազում աւարիւքն ցուցին այլասեռս եւ բազում քաջութիւնս առ ազգս քրիստոնէից»[1]։ Այս նոյն թուականին Վարդան նշանակում է Բջնիի գրաւումը, իսկ երկու տարի յետոյ Դուինի, Զաքարեան եղբայրների ձեռքով[2]· Բջնիի արեւելեան մասը Կեչառուց վանքով Խաղբակեանների սեպհականութիւնն էր եւ նոյն իսկ Վասակ Խաղբակեանի սիրելի վայրը, ուր նա շինեց իւր գողտրիկ եւ գեղեցիկ կաթողիկէ եկեղեցին· ինչպէս Օրբէլեաններին շնորհուել էր Սիւնիքը՝ Որոտն ու Բարկուշատը՝ Լիպարտի ցոյց տուած օժանդակութեան համար այդ գաւառների նուաճման գործում[3], նոյնը պէտք է կատարուած լինի եւ Խաղբակեանց հետ· Կեչառոյքը եւ Վայոց ձորի մի մասը վարձատրութիւն էր Վասակին երկու գաւառների գրաւման գործակցութեան համար· գոնէ հաստատ է այդ Վայոց ձորի նկատմամբ։ Արատեսի մի արձանագրութեամբ (պատկ· 3· Յաւել· Ա· 3)՝ Վասակն էր նուաճել Եղեգեաց ձորի ամրոցները, իսկ ըստ Օրբէլեանի նաեւ Հրաշկաբերդը[4]· Վայոց ձորի նուաճման հետ էր կապուած նաեւ Դուինը իւր աշխարհագրական դիրքի համեմատ։ Այսպիսով երկու հեղինակներն իրար լրացնում են եւ հաստատում, որ 1201–1203 թ·թ· արդէն Վասակ Խաղբակեան գործում է իւր նոր իշխանութեան սահմաններում, որպէս գործակից եւ ստորադրեալ Զաքարեանների։

Ե՞րբ վերջացան պատերազմական գործողութիւնները եւ ե՞րբ Վասակ կուսակալ նշանակուեց նոր իշխանութեան մէջ, ճիշդ տարեթիւը որոշել չենք կարող։ Արատեսի վերոյիշեալ արձանագրութեան համեմատ 1214 թուին նա արդէն «կողմնապահ» էր «ի Գառնոյ մինչեւ ի Բարգուշատ»։ Կեչառոյքի կաթողիկէն էլ շինուած է նոյն թուականին, ասել է, թէ Բջնիի այդ մասն էլ նորան էր յանձնուած արդէն։ Բայց Օրբէլեանի մի քանի ցուցմունքի համաձայն կողմնապահութեան հաստատութիւնը պէտք է աւելի վաղ կատարուած լինի· Սիւնիքը նուաճուած է 1211 թուին եւ յանձնուած Լիպարիտ Օրբէլեանին, երբ նա ստացել էր արդէն «զՀրաշկաբերդ իւր գաւառովն եւ այլ բազում գեղօրէս ի Վայոց ձոր...[5]։ Մի ուրիշ արձանագրութիւնից երեւում է, որ Զաքարիա սպասալարը 1211 թուին Նորավանքին ետ է դարձրել Ագարակի ձոր գիւղը, ըստ Օրբէլեանի Լիպարիտի խնդրանօք[6], երբ ուրեմն, նա տէր էր արդէն վանքին եւ գաւառին։ Արդ, Օրբէլեանց եւ Խաղբակեանց կողմնակալութիւնները նշանակուել են միասին Գէորգի Լաշայի եւ Իւանէ աթաբէկի կողմից, ասել է, 1203–1210 թ· թ· մէջ... «Եւ կացուցանէն թագաւորն Լաշայ եւ աթաբէկն Իւանէ զԼիպարիտն կողմնակալ այսմ աշխարհի, նմանապէս եւ զմիւս իշխանն, զամենօրհնեալն զՎասակ Խաչենեցի, զհայրն քրիստոսասէր եւ բարեպաշտ պարոնին Պռօշայ, կացուցանէն կողմնակալ ի Վայոց ձոր գաւառիս»[7]։ Այստեղ յիշատակութիւն չկայ ոչ Թամարի եւ ոչ Զաքարէի մասին, ուստի եւ կարող է թիւրիմացութեան տեղիք տալ, թէ 1212 թ· յետոյ է կատարուել այդ գործողութիւնը, երբ մեռած էին Թամարն ու Զաքարէն· սակայն այսպիսի առարկութիւն չի կարող հիմնաւոր համարուել, քանի որ Գէորգի Լաշան իւր մօր գահակից էր հռչակուած արդէն նորա կենդանութեան ժամանակ, իսկ Սիւնիքը, Վայոց ձորը, Բջնին Իւանէի տէրութեան եւ գերիշխանութեան ենթարկուած գաւառներ էին, ուր նա տէր ու տնօրէն էր եւ ոչ եղբայրը Զաքարիան։

Վայոց ձորն ամբողջապէս Վասակի իշխանութեան մաս չէր կազմում· թէեւ Արատեսի արձանագրութեան մէջ (պատկ· 3· Յաւել· Ա· 3) նա իրեն անուանում է «կողմնապահ ի Գառնոյ մինչեւ ի Բարգուշատ»· այնտեղ շատ մեծ բաժին ունէին Օրբէլեանք, եւ մասամբ Շահուռնեցիք, Մեհեւանեանք, իսկ Վայոց ձորի եւ Գառնիի մէջ էլ, Վեդիի ակունքներում ընկած էին Մամիկոնեանց կալուածները[8]։ Օրբէլեանի տուած մի տեղեկութեամբ էլ հաստատւում է նոյնը· Վասակի որդի

---

[1] Հրատ· Էմինի· Մոսկուա· 1860· եր· 65։

[2] Էմինի հրատ· Մոսկ· 1861· եր· 181։

[3] Օրբ· 397։

[4] Անդ· 350· Քաջբերունի· Ար· 1888, 796։

[5] Օրբ· 397։

[6] Օրբ· 358։

[7] Անդ· 397։

[8] Христ. Восток. 1913· 227–232։

Պռոշ իշխանը «զիւր զաւառն եւ զգեղանսն որ ի Վայոց ձոր, կամէր յափշտակել եւ այլում եկեղեցւոյ ժառանգեցուցանել», այսինքն Երնջակի վանքում նստող եպիսկոպոսին[1]), որից պարզ է, թէ Վայոց ձորի մի մասը միայն նորա գաւառն ու գիւղերն էին: Տարաբաղդաբար հնարաւորութիւն չունինք մեզ հասած աղբիւրներով, արձանագրութիւններ և յիշատակարաններ, որոշել Խաղբակեանց իշխանութեան բովանդակ ծաւալը մանրամասնութիւններով, այլ միայն կեդրոնները, ուր շինարարական և հոգևոր կեանք է ծաղկել, ընդհանուր գծերով:

Բոլորաբերդ· ՊԱՏԿԵՐ 7·

Վայոց ձորում Պռոշեանց գլխաւոր կեդրոնը Սրկղունեաց լեռներից բղխած վտակի հովիտն էր, Սրկղունք աւանով և Բոլորաբերդով (պատկ· 7), որի արևելեան կողմը գտնւում էր նշանաւոր Աղբերից վանքը կամ Գայլիձորը (պատկ· 8), իսկ հիւսիս արևմտեան՝ Սպիտակաւոր Աստուածածինը (պատկ· 9), Բոլորաբերդի կամ Բոլորաձորի անապատ ևս կոչուած, երկուսն էլ Պռոշեանց ստեղծագործութիւնը, մէկը իբրև ժամանակի ամենից նշանաւոր դպրոցը, իսկ միւսը իբրև անապատ և ճարտարապետական մի գեղեցիկ կերտուած, որոնց մասին և առիթ կ'ունենանք երկար խօսելու: Նոյն վտակի միջին հոսանքում, ներկայ Բաշքենդ գիւղում, գտնւում էր ըստ աւանդութեան Պռոշի պալատը կամ միջնադարեան լեզուով դարպասը: Մինչև վերջին ժամանակները մնացել էին դեռ ևս պալատի կամ պարսպի դրան կամարը՝ Պռոշեանց զինանշան համարուած, բարձրաքանդակ առիւծներով և պարսպի ու եկեղեցու մնացորդներով: Դրան կամարակալ քարը տարաբաղդաբար գիւղացիք փշրել են, տաշելով առիւծների պատկերները և գերեզմանաքար դարձնելով, իսկ եկեղեցու տեղում նորն են շինել, գործածելով մասամբ հին քարերը, որոնցից մի քանիսը զարդարուած են քանդակներով և անպայման ԺԳ· դարու արուեստի դրոշմ են կրում, ինչպէս կը տեսնենք յետոյ: Այս Բաշքենդն ենք համարում արձանագրութիւնների և մանաւանդ յիշատակարանների մէջ յիշուած Սրկղունք գիւղը:

Սրկղունքի հնագոյն յիշատակութիւնն ունի Ստ· Օրբէլեանը (Սարկողովք), որ Վայոց ձորի ամենամեծ գիւղը կամ աւանը պիտի լինէր, Սիւնեաց աթոռին տուած հարկի քանակից դատելով. սարը, որի ստորոտում գտնւում էր գիւղը, այժմ կոչւում է Թաքալեանդիւրան: Այս Պռոշեան իշխաններից Էաչի, Ամիր-

---

[1]) Օրբ· 364:

Հասան Ա.ի որդին, 1317 թուին Յախայ քարին նուիրում է մի այգի «ի Սրկղունիս»¹)։ Յիշատակութիւններ



Գլաձորի աւերակները· ՊԱՏԿԵՐ 8·

ունինք աւելի ԺԵ· դարու երկրորդ կիսում եւ մինչեւ իսկ ԺԷ· դարում· Դաւիթ քահանան 1473 եւ ապա 1475 թուին գրել է մի մի աւետարան «ի գեօղս որ կոչի Սրկղունս, ընդ հովանեաւ սբ Գէորգի եւ որ Յակոբի»։ Նոյն յիշատակարաններից տեղեկանում ենք, որ նա գրել է «առ ոտս արիաջան եւ սրբահանոյ Աւագ տէր վարդապետի, հաւրեղբօրս մերոյ, որ է ի յանապատն Բոլորաձորոյ, ի դուռն սբ Ածածնին եւ սբ Կարապետին»²)։ Նոյն Դաւիթը գրել է մի շարական 1487 թուին նոյն գիւղում նոյն Աւագ տէր վարդապետի մօտ, «ընդ հովանեաւ սուրբ Գէորգի եւ սուրբ նշանացս»։ Տփխիսի Շամքորեցւոց եկեղեցու աւետարանը գրուած է 1629 թուին «ի յերկիրս Վայոց ձոր, ի գեօղս որ կոչի Սրկղունս, ի դուռն Գէորգայ եւ այլ սրբոց, որ աստ կան»· Նոյն աւետարանը 1642 թուին գնել է ոմն Ծատուր եւ նուիրել «ի դուռն սուրբ Գէորգայ Սրկղունուց եկեղեցւոյն»³)։ Ջուղայեցի մահտեսի Յակոբ վաճառականը 1665 թ· մի մաշտոց է գրել տալիս «յիշատակ Սորկղնոյ եկեղեցոյն, որ զանուն (s!) սբ Գէորգ կոչի»⁴)։ Այս վկայութիւններից տեսնում ենք, որ Սրկղունքը հեռու չէ Սպիտակաւոր Աստուածածնից եւ Բոլորաբերդից, որ իրար մօտ են, ինչպէս եւ մօտ է սրանց ներկայ Բաշքենդը· Սրկղունքի եկեղեցիներից մէկը կոչւում էր Սուրբ Յակոբ, Բաշքենդի հին եկեղեցու մնացորդ (պատկ· 10) քարի վրայ եւս կարդացւում է «սբ Յբ»=սուրբ Յակոբ, որով այլ եւս կասկածի տեղիք չէ մնում Սրկղունքի եւ ներկայ Բաշքենդի նոյնութեան մասին։ Հենց գիւղացիք այժմ իրենց եկեղեցին, որ շինել են հին եկեղեցու քարերով, ս· Գէորգ են անուանում, երեւի, անունը հին եկեղեցու որեւէ արձանագրութիւնից առնելով։

Նոյն վտակի վերայ է, Բաշքենդից քիչ դէպի ցած, Օրթաքենդը, որի մերձաւորութեան համար, կարելի է կարծել, թէ նոյնպէս Պռոշեանների սեպհականութիւն է եղել իւր ամբողջութեամբ· բայց նորա մի մասի,

---

[1] Ջալ· Բ· 162· Ալիշան· Սիսական 156· մեր լուսանկարը տարաբաղդաբար փչացել է· տես Յաւել· Ա· 5։

[2] Ձեռ· էջմ· թ· 377/2634 եւ 259/221· տ· Յաւել· Բ· 5· 6։

[3] Յաւել· Բ· 7, 8, 9։

[4] Յաւել· Բ· 10· Մահտեսի Յակոբ վաճառականը ապրում էր իւր կեանքի վերջին օրերում Շատինու վանքում, որ հեռու չէ Բաշքենդից կամ Սրկղունքից· այնտեղ նա ունի երկու խաչքար արձանագրութեամբ· Արար· 1888, 164, 171։ Նա գրել է եւ գրել տուել շատ ձեռագիրներ եւ նուիրել վանքերի կամ անհատների· 1661 թուին գրել է ինքը տումարի մասին ոտանաւորներով· էջմ·ի թ· 2958· ձեռ·ը ինքն է գրել մասամբ եւ նկարել տուել իւր եւ իւր եղբօր պատկերը։ Իբրեւ վաճառական ճանապարհորդել է աշխարհի զանազան կողմերը, մի գործունեայ մարդ։

Վարդանի բերդ կոչուած տեղի համար, հաստատ գիտենք, որ Օրբէլեանների սեպհականութիւն էր, Ջեսարի ճիւղի: Այդտեղ գտնւում է մի մեծ խաչքար՝ ներքեւում այսպիսի արձանագրութեամբ. Կամաւ այ, ամենակալին ես Վարդալահ կանգնեցի զխաչս. յիշատակ է ծնողաց իմոց, ով կ... հողի մէջ մնացածը. իսկ խաչի կեդրոնում, երեսին. ՉԿ. իշխանութե պարոն Ջեսարին. Ած ողորմի սաէք[1]): Կան եւ ուրիշ խաչքարեր արձանագրութիւններով[2]): Այսպիսով պարզ է, Օրթաքենդի արեւմտեան կողմը, փոսկի աջ ափը, սեպհականութիւն էր Օրբէլեանների. երկու իշխանութիւնների սահմանակից կարող էր լինել Բուչքենդի ձորով անցնող փոսկը, որ Ալիշանի հետ Սրկղունեաց ենք անուանում[3]): Այդ դէպքում այս վայրը կարող է Ստ. Օրբէլեանի եւ Սպիտակաւոր Աստուածածնի արձանագրութիւնների մէջ յիշուած Խստորալեզը կամ Սխտորալեզը լինել. յամենայն դէպս այս վերջին վայրը մօտ պէտք է լինի Արփա գետին. որովհետեւ Ամիր Հասան Բ. Էաչիի որդին, վերոյիշեալ վանքին նուիրում է մի հողաբաժին, սահման նշանակելով՝ «ի գետաւէն գնա գեղն ի վեր», այսինքն գետափից դէպի սարը:

Երրորդ գիւղը նոյն գետակի վերայ ներկայ Քեշիշքենդն է հին աւերակների հետքերով, բայց առանց գրաւոր մնացորդների. տեղացիները գիւղին յատկացնում են «Փոնձաթաղ» հին անունը[4]): Ի՞նչ հիմունքներով, յայտնի չէ. յիրաւի ոչ հեռու այդ տեղերից գտնւում էր Փանձաթաղ անունով այդպէս մի վայր, ուր Լիպարիտ Օրբէլեանի թոռը եւ Սմբատի որդին Կենա? նուիրում է Թանատի վանքին մի այգի: Վանական անունով մի աբեղայ եւս այստեղ՝ Փոնձաթաղում գրել է մի Մաշտոց 1497 թուին, եւ վերջացրել է Ջորոյ վանքում, որ Պռոշեանների սեպհականութիւն էր[5]): Ո՞րտեղ էր գտնւում այդ վանքը, ճիշտ տեղը որոշել չենք կարող, բայց չպէտք է նոյնացնել ոչ Ծղուկի (Սիսակ. 244), ոչ Փառակայ (Հանդ. Ամս. 1912, 556) եւ ոչ Վանի նոյնանուն վանքերի հետ: Պռոշեանց Ջորոյ վանքը հեռու չէր Սպիտակաւոր Աստուածածնից եւ Սրկղունքից, որովհետեւ Վանականը իւր ձեռագրերը գրել է «առ ոտս ածաբան վրդպացս Վարդան վրդպի եւ Աբրահամ հռետորի. եւ առաջնորդ սբ ուխտիս տր Զաքարիա բաբէմիտ կրունաւորի», որոնք յաճախ յիշուած են վերոգրուած երկու վայրերում յիշատակարանների մէջ[6]):



ՊԱՏԿԵՐ 9.

Սպիտակաւոր Աստուածածին.

Սրկղունեաց փոսկից դէպի արեւելք գտնուած երկիրները Պռոշեանց սեպհականութիւն էին. Բուչքենդից մօտ 7 վերստ դէպի արեւելք գտնւում է Թանատի (այժմ Ղարամանք կոչուած) նշանաւոր վանքը Պռոշի եւ նրա որդոց ձեռքով շինուած «Թ. Ջ. Ի. Բ» (=1273), բազմաթիւ արձանագրութիւններով[7]): Մօտ երեք վերստ այստեղից դէպի արեւելք Արկազու Ս. Խաչի

---

[1]) Христ. Восток. 1913, մեր յօդուածը, Потомство Тарсаича եր. 321/2:

[2]) Օրթաքենդի արեւմտեան կողմը, հին գերեզմանատանը, մի մեծ խաչքարի վերայ գրուած է. «Այս խաչս Քսի արեամբ.. (.նեբ?) կած Է. Բ. ՉԻՋ»: Սրանից քիչ արեւելք միւս գերեզմանատանը աչքի է ընկնում երեք աստիճանների եւ պատուանդանի վերայ կանգնած մի խաչքար. Ի Թ. ՉՀ(?) Է. Այս է հանգիստ Գրիգորի»: Մի ուրիշ խաչքարի վերայ. «Հանգիստ Բէկի խաթունին որ կեսաւրեայ փոխեցաւ ի Քս թուին ՉԾ (կամ ՋԾ): Քիչ տարբեր ընթերցուածներով, Քաջբերունի. Ար. 1889, եր. 49:

[3]) Սիսական. եր. 129:

[4]) Ալիշան. Սիսակ. եր. 122:

[5]) Ձեռ. էջմ. Բ. 960 (Կարինեան 947): Յաւել. Բ. 11: Ալիշանը օգտուել է այս յիշատակարանից, առանց յիշելու տեղը. Սիսական. եր. 125:

[6]) Տես. Յաւել. Բ. 5, 6, 7, 8, 11:

[7]) Գեղարուեստ Բ. 4. Թիֆլիս. 1911. մեր յօդուածը. Ոսկերչական արուեստի մի նմոյշ ԺԳ. դարում. (Խոտակերաց ս. Նշան) եր. 39, Քաջբերունին նկատել է գմբէթի վերայ եղած այդ տառերը. բայց չի կռահել, թէ շինութեան թուականն է (Ար. 1889, 106):

նշանաւոր վանքն է, որից հնութիւններ չի մնացած․ նոր եկեղեցին շինուած է 1871 *թուականին․ միակ հին արձանագրութիւնը գտնւում է պարսպի դրան մօտ՝*



Բաշքեանդ, մնացորդ հին եկեղեցու․ ՊԱՏԿԵՐ 10․

խաչքարի վերայ․ «Թվ ՉԾԳ (=1304)․ (s!)․ *ած ողորմի սա…/ է կին Ուսալայ Խա/թունին ամէն»*1)*: Հին շէնքի մասին շատ համառօտ տեղեկութիւն է տալիս Ջալալեան*2)*․ Հետաքրքրական են մեզ համար յատկապէս փոքրիկ մատրան արձանագրութիւնների մնացորդները ԺԳ․ եւ ԺԴ․ դարերից, որոնք այժմ նոյնպէս չկան․ դոցանից մէկն է «… ամենավեհ իշխանի Պռոշոյ եկեղեցիս եւ մանկան Հաչոյ եւ մեծահաւատ տիկնոջ Խոտանայ, յորժամ տէր էր տեղւոյս…»: Այստեղ գուշակել, թէ «կառուցանող այսր տաճարի է նոյն ինքն Պռոշ իշխանն եւ մեծահաւատ կին նորա Խոտան», անկարելի է․ նա այդ անունով կին չէ ունեցել, ինչպէս կը տեսնենք յետոյ․ դժուար է նոյնպէս կարծել, թէ Պռոշն է շինել այդ մատուռը․ բայց շէնքն անպայման ԺԳ․ դարու գործ է, եւ Պռոշի ու նորա թոռ Հաչի մանկան յիշատակութիւնն ապացոյց, որ այդ վայրն էլ նորա տիրապետութեան տակ էր: Այսպիսով Սրկղունք լերան ամբողջ հարաւային սարոտը՝ մինչեւ Արփա գետը Պռոշեանց սեպհականութիւն էր:*

*Սրկղունեաց սարից (Թաքեադոնդուրան) դէպի արեւելահարաւ, Արկազից մօտ տասն վերստ հեռու, գտնւում է Դալիկ գագաթը, եւ սրա հարաւ-արեւելեան փէշերի վերայ Հերհեր աւանը, որ իւր շրջակայքով, արձանագրութիւններով եւ Վարդաշէնում պահուած մի աւետարանի յիշատակարանի համաձայն, Շահունեցոց սեպհականութիւնն էր, ինչպէս ցոյց ենք տուել մի այլ տեղ*3)*: Շահունեցիք իշխում էին ըստ յիշատակարանի բացի Հերհերից (Երերան) եւ նոյն տեղի վանքից, որ գտնւում է գիւղից դէպի հիւսիս, նաեւ «Քալատակին եւ այլ հայրենեաց»: Թէպէտ այս վերջին տեղերն անյայտ են եւ անորոշ, բայց պարզ է, որ ընդարձակ չէր այն եւ ամփոփուած էր Հերհերի վտակի հովտում․ այն*

---

1) Քաջբերունին (Ար․ 1889, 168)․ թուականը կարդում է «ՉԾԳ»: Արկազի եւ Թանատի ճանապարհի վերայ, ձորում երեք խաչքարերի արձանագրութիւնները վանքի պատմութեան հետ կապ չունին․ ա) Մի ընկած խաչքարի վրայ․ «Ես Մանուէլ քահանայ/ կանգնեցի զխաչս ի բար/եխաւս հարազատ եղբ/աւր իմոյ խաչատուրի յաղաւթս յիշեցէք թ․ ՉԻՁ» (*գուցէ եւ ՋԻՁ*):

բ) Ընկած խաչքար․ թ․ ՉԽԵ որք անցանեք/…/ հարազատ… յիշեցէք ի Քս»․ գ) Կանգուն խաչքար․ «Կանգնեցաւ խաչս բարէխաւսթի Զալէխին / եւ եղբարաց s! իւրոց»․ Համ․ Քաջբ․ Անդ․ 107․

2) Ջալ․ Բ․ 134:

3) Христ. Восток. 1913, 231:

էլ ոչ ամբողջովին։ Պռոշեանց սահմաններն, ուրեմն ձգւում էին Արկազից էլ դէպի արեւելք մինչեւ Դալիկ Թափայի եւ Հերհերի ջրբաժան կազմող բլուրների արեւմտեան փէշերը, իջնելով մինչեւ Արփայի ափերը։ Այս շրջանումն է, Արփային մօտ, Դելիկ Թափայի հրաբուխի լաւաներով ծածկուած բլուրների եզրասահմանում, անուանի Մոզը, Ստեփաննոս Սիւնեցու նահատակութեան վայրը¹)։ Մոզը՝ աւերակներին նայելով՝ բաւական ընդարձակ աւան է եղել, բայց հնութեան մնացորդներ եւ արձանագրութիւններ չեն գտնուած, բացի հիւսիսային ձորագլխում մի քանի խաչարձանները։ Մոզից քիչ բարձր, գետի հոսանքն ի վեր, գտնւում է մի կամուրջ, որ երկու ափերը կապում է իրար հետ եւ ճանապարհը տանում է ուղիղ դէպի Ազատեր եւ ապա Մարտիրոս, որ Պռոշեանց երկրորդ գլխաւոր կեդրոնն էր Վայոց ձորում։ Մեզ թւում է, թէ Մոզը եւ սորա հանդիպակաց, Արփայի ձախ կողմի լեռան փէշերը Մարտիրոս գետակով մինչեւ համանուն գիւղը, եւ այնտեղից Սեւ, Շահապունեաց գաւառը եզերող բարձունքները՝ Աղխաչ եւ Կորադիս գիւղերով, Պռոշեանց սեպհականութիւնն էր, ինչպէս կը տեսնենք, ամբողջ Շահապունիքի հետ²)։

Մարտիրոս գիւղը շինել է Մխիթար Դեղկոյ որդին 1283 *թ. Պռոշ իշխանի եւ նորա որդի Ամիր Հասանի հրամանով, կանգնելով մի բարձր խաչքար գիւղի աղբիւրի մօտ (պատկ.* 11 *Յաւել. Ա.* 7)*։ Կան եւ ուրիշ եկեղեցիներ, խաչքարեր եւ արձանագրութիւններ, որոնք ցոյց են տալիս, թէ ոչ միայն Մարտիրոսը, այլ եւ նոյնանուն գետակի հովիտը պատկանում էր նրանց, որոնց մասին խօսք կը լինի իւր տեղում։ Մարտիրոսից դէպի հիւսիս-արեւելք Գէոմիւր վտակի հովիտն է նոյնանուն գիւղով, որ Ալիշանը նոյնացնում է Օրբէլեանի Գոմոց անուան հետ³), իսկ աւելի հարաւ արեւելքից, Ծղկոյ կամ Սխտանի անջրպետ կազմող լեռներից սկիզբն առնելով եւ զօրանալով Զուլունդաղի ակունքներով, անցնում է Զուլ գետակը, որի ափին է համանուն գիւղը՝ եւ քիչ հեռու՝ մօտ երկու վերստ, Մարաթիւս, հին Աջողքն ու Մայրատուրքն ըստ Ալիշանի⁴)։ Գէոմիւրում Խոյդանայ որդի Մխիթար եւ կինը Արեւիկ կանգնել են մի հոյակապ խաչ մատուռով «ի թվ. Չ.* **ՉԺԲ** (=1263) *բարեպաշտ իշխանութեան Պռոշո» (պատկ.* 12. *Յաւել. Ա.* 8)*. Գէոմիւրի հանդէպ վտակի աջ ափին, Գետաբերդ գիւղն է (Ներքին եւ Վերին Ախտա, ըստ Ալիշանի՝ Օրբէլեանի ցուցակի Ազթարոյնք), ուր մի քանի խաչքարեր կան Պռոշի եւ նորա որդու Ամիր Հասանի անունների յիշատակութեամբ։ Զուլում եւ Մարաթիւսում Պռոշեանց անմիջական յիշատակներ չեն մնացել, բայց նոքա այնպիսի միութիւն են կազմում վերոյիշեալ վտակների հետ, որ ուրիշ իշխանութեան մաս կազմել չէին կարող։ Զուլի եկեղեցին շինած է կամ նորոգուած ԺԸ. դարու սկզբին՝ «շինեցաւ եկեղս թվն ռճծբ», բայց արեւելեան պատի լուսամուտի գլխին մի եղծուած արձանագրութիւն կայ «թվ. Չ..». Թուականն ունեցել է տասնաւոր կամ միաւոր. եղծուած է մի տառի տեղ։ Հնութեան աւելի հետքեր ունի Մարաթիւսը. եկեղեցին շինուած է վտակի ափին. աղբիւրն էլ բղխում է հենց եկեղեցու պատի տակից, հիւսիսից նկատւում են ջրանցքի հետքեր, որ կարօտ են յատուկ քննութեան, տաշած քարերից նաւ շինած եւ վերան էլ*



Խաչքար Մարտիրոս գիւղի. ՊԱՏԿԵՐ 11. (Յաւել. Ա. 7).

---

1) Օրբ. ԼԱ. գլուխը. եր. 139։

2) Կորադիսը գրեթէ նոյնահնչիւն է Օրբէլեանի ցուցակի Կորատիւնք անուան հետ, իսկ Աղխաչը կարող է կրճատումն լինել Ճահուկի Աղբերխաչի ,մանաւանդ թուրքերի բերանում։ Կորադիսում գերեզմանական արձանագրութիւններին նայելով՝ բնակչութիւնը հայ է եղել, որոնց փոխարինել են մահմետականները. ապա ԺԹ. դարու պարսկահայոց մեծ գաղթականութեան ժամանակ՝ դարձեալ հայերի ձեռքն է անցել գիւղը։ Աղխաչում կայ ընդարձակ գերեզմանատուն շատ արձանագրութիւններով, ինչպէս եւ եկեղեցու պատերի մէջ հաստատած խաչքարեր, ամենահինը 1515 թ., իսկ նորը 1715։ Արձանագրութիւնները տ. Յաւել. Ա. 6։

3) Սիսական. 175։

4) Սիսական. 108։

ծածկած, ինչպէս Անիում: Փոքրիկ եկեղեցու արեւելեան լուսամուտի գարնեզի գլխին մի բարձրաքանդակ արծիւ կայ, կողքերից ցուլի եւ առիւծի գլուխներով (պատկ. 13), որ Պռոշեանց ուրիշ յուշարձանների վերայ էլ երեւան է գալիս, ինչպէս ներքին Ախտայի կամ Գէոմիւրի խաչարձանի տակ, չղթայուած առիւծն ու եզը: Մի ուրիշ աւելի ընդարձակ սաղաչէն եկեղեցու պատերի մէջ հագցրած են խաչքարեր, դոցանից մէկի երկու կողմից մի մի երկարազգեստ անձի բարձրաքանդակ, գօտին մէջքերին, ձեռքերին խաչ եւ ոտներին կօշիկ, որոնց լուսանկարը, տարաբաղդաբար, չունինք: Մի ուրիշ՝ դարձեալ պատին հագցրած՝ խաչքարի վերայ նկատւում է «ՉՅԳ» թուականը. Հարաւային պատի ՉՀԳ թըւականով խաչքարն ունի արձանագրութիւն, բայց դժուարընթեռնելի: Մատուռը ներսից եւ դրսից շինուած է սրբատաշ քարով, արեւմտեան պատը քանդուած. սրան կցուած է սաղաչէն, աւելի լայն և մեծ եկեղեցին: Սրանց հիւսիսային կողմը նկատւում են ձիթահանքի երկու մեծ քարեր, իսկ ընդարձակ գերեզմանատանը՝ մի քառանկիւնի քարի վերայ կարդացւում է «Այս է հանգիստ Նազարէթին»: Մի այլ գերեզմանաքարի հարաւային երեսին քանդակուած է մի ձիաւոր, աղեղը ձեռքին, կապարճը մէջքին, մի մարդ բռնել է ձիու սանձը, մի ուրիշը կանգնած է դիմացը, ձեռքին գնդագլուխ գաւազան բռնած, հաւանօրէն ծառաներն են: Երկու հոգի ձեռներին գինու թակոյկ (թունգի) ունին. երկուսը պարում են քիչ հեռու, ձեռքերնին ծնծղաներ: Մի երկարազգեստ կին մի ձեռքը կողքին է դրել, միւսը վեր բարձրացրել, իսկ նրա հետեւից մէկ մարդ խաչաձեւ կոթով թուր ունի եւ նիզակ ձեռքին: Քարի հիւսիսային կողին զոյգ սիւների վերայ կեղծ կամարներ են, տակը խաչերով:



Գէոմիւրի (Գոմոց) մատուռը. ՊԱՏԿԵՐ 12. Ա. 8.

Մարաթուսից դէպի հիւսիս՝ մինչեւ Քիչնէի վտակը՝ Քոչպեկ, Թերփ եւ Թարփ այժմ թուրքաբնակ գիւղերով1), հաւանօրէն պատկանում էր Պռոշեաններին.

---

1) Թերփ գիւղի եկեղեցին ի սպառ ոչնչացրած է եւ նորա տեղը խաղարա Գարա օղլին կալ է շինել (գրուած է պատերազմից առաջ): Ուշադրութեան արժանի են երկու խոյաձեւ գերեզմանաքարերը. դոցանից մէկը դրուած է աղբիւրի գլխին, առաջին ոտներով չոքած (պատկ. 14). մի կողքին քանդակուած է ձիաւոր, գլխարկը փաթոյթով, իսկ ձիու պոչը հանգոյց արած: Խոյի ազդրի վրայ սողոմոնեան կնիք, մէջը մի վարդեակ. պարանոցից կախուած է գեր ու հաստ բոխախը, պարանոցը շղթայուած է, որի ծայրը մէջքի վրայով հասնում է մինչեւ դմակը: Ետեւի երկու ոտքերի մէջ յենարան կայ քարից, որին եւ յենուած են ամորձիքները. ընդհանուր առմամբ բնական է, վարպետ մարդու գործ. մեծութիւնն է 1·23×0,63 մ.:

Մի ուրիշ խոյ մատուռի մօտ է, աղբիւրից քիչ հեռու, մի խաչքարի կողքին. սորա պարանոցին եւս շղթայ է ձգուած եւ շարունակւում է մէջքի վրայով մինչեւ դմակը: Մի կողմը կռուող

Մարաթուսում բարձրաքանդակ· ՊԱՏԿԵՐ 13·

որովհետեւ Շահապունեաց, Ջուլի եւ Բիչնէի ակունքներով են Վայոց ձորն ու Շահապոնիքը սահմանամերձ դառնում Բարկուշատին, որով Վասակ Խաղբակեանը իւր իշխանութիւնը «ի Գառնոյ մինչեւ ի Բարգուշատ» սահմանել կարող էր:

Օրբէլեանի մէջ մի տեղեկութիւն ունինք, որից երեւում է, թէ Վասակ Խաղբակեանի իշխանութիւնը միայն Վայոց ձորով չէր սահմանափակւում. Սիւնեաց Ստեփանոս եպիսկոպո-

որ «զտէր Յովհաննիսի զաւագ խաչն եւ գրիթեղնակացն եւ զկամարակացն» *գրաւ էր դրել* «առ եպիսկոպոսի մի յԱծոպոյ վանս, ի Շահապօնս, Պետրոս անուն»: *Վասակը բռնաբար առնում է այդ երեք խաչերը, աւագ խաչն ընծայում է Իւանէ աթաբէկին,* «եւ զերկուսն գրիթեղնակացն եւ զկամարակացն տարեալ դնէ յիւրում վանսն ի Կեչառուս ուխտի»[1]) :*Այստեղից կարելի է ենթադրել, թէ բացի Կեչառոյքից Վասակի սեպհականութիւնը պիտի լինէր եւ Ածոպա վանքը, որտեղից կարողանար եպիսկոպոսից վերցնել գրաւ դրած խաչերը: Բայց աւելի պարզ տեղեկութիւն ունինք այդ վանքի եւ ամբողջ գաւառի Պռոշեանց սեպհականութիւն լինելու մասին այդ վանքում 1292 թուին գրուած մի աւետարանի յիշատակարանից,* «յիշխանութեան մերոյ նահանգիս մեծ սպարապետացն Պապաքին եւ էաչոյ (*տպագրուած է* Խաչոյ, *արտագրութեան կամ տպագրութեան սխալ է*), որդւոյ եւ թոռին մեծին Պռոշայ, ժառանգք իշխանութեան ամենօրհնեալ ցեղին Խաղբակացն[2]) : *Վերջապէս յիշատակարանի էաչի իշխանը 1300 թ. իւր չինել տուած Խոտակերաց Ս. Նշանի պահարանի արձանագրութեան մէջ գրում է, թէ* «տիրեցի հայրենի երկրիս իմոյ Շապունեաց եւ այլ հոլով գաւառաց»[3]) :



խոյ, Թերփ գիւղում· ՊԱՏԿԵՐ 14·

Ըստ Օրբէլեանի Շահապոնիք եւ Ճահուկ նոյն են եւ տասներկուերորդն է Սիւնեաց գաւառների մէջ[4]); այսպէս էր, գոնէ, իւր ժամանակ. բայց աւելի իրական

ցուլի եւ առիւծի հարթաքանդակներ են, առիւծի ետեւը պտըտող սվաստիկա, վերան կանգնած երկու թագազարդ կենդանիներ դէմ առ դէմ, նոցա մօտ մի մի թռչուն եւ թուում է, թէ պտըտում են անուածեւ սվաստիկան· գուցէ ժամանակի յաւիտենականութեան նշանակը: Նոյն կենդանիները փոքր դիրքով նկատւում են եւ կըռուող ցուլի եւ առիւծի մօտ: Ցուլն ու առիւծը շղթայուած են պարանոցից: Միւս երեսին ձիու վրայ նստած է մի մարդ, ձեռքին գաւաթ եւ մօտը մի թռչուն (բազէ?)· նորա դէմ կանգնած է մի ուրիշը գինու թակոյկը (*թունգին*) ձեռքին, իսկ մի երրորդը նուագում է չունգուրի վրայ: Սրանց մօտ մի մեծ թռչուն մագիլներում խոյ է բռնել, իսկ նորանից վերեւ կայ մի այլ թռչուն: Այս պատկերաքանդակը մասամբ սիմվոլիկ է, մասամբ տալիս է ննջեցեալի կեանքը՝ զուարճութեան եւ որսորդութեան տեսարաններով (պատկ· 15): Խոյի մէջքին հետեւեալ արձանագրութիւնը կայ: **Թվս ՉԺԳ**(տասնաւորն ու միաւորը կասկածելի)·**Անամբն այ/ես Փարդուլ/իս կան/նեցի զ[խ]աչս նս!եղբաւր իմոյ/Ճանդուլին/որ դառն սուք եթողին (s!) ի վր/մեր իշեցէք ի Ք[ս]·**

[1]) Օրբ· 352:

[2]) Արարատ· 1876· եր 412:

[3]) Նոյնատիպը «Գեղարուեստ» թ· 4· եր· 38· տ· նաեւ մեր Գրչութեան Արուեստը· Գ § 28· Տախտ· ԺՋ:

[4]) Օրբ· 298:

եւ նեղ մաքով Ճահուկը նոյնանուն գետի հովիտն էր նոյնանուն գիւղաքաղաքով, որ այժմ Ջահրի է կոչւում· իսկ Շահապունիք նորանից դէպի արեւելահիւսիս ընկած ձորն էր, նոյնանուն վտակի եւ նորա ճիւղերի հովիտներում, երկուսի խառնարանից ձգուած դէպի Սիւնեաց (Սիսիանի) եւ Վայոց ձորի անջրպետ լեռները· սորա կեդրոնն էր Շահապոնք կամ ներկայ կոչումով Շահբուզ բերդը լերան գլխին եւ նորա ստորոտում նոյնանուն աւանը: Ճահուկն սկզբում Ելիկում Օրբէլեանցի սեպհականութիւնն էր, որ ստացել էր Ելտկուզ աթաբէկից[1]· բայց Իւանէի ձեռքով Օրբէլեանց իշխանութեան հաստատութեան ժամանակ այդ գաւառը նրանց սեպհականութիւն չտրուեցաւ· Օրբէլեանց պատմիչը երկիցս հաղորդում է նորահաստատ իշխանութեան գաւառները, բերդերն ու գիւղերը, եւ չունի յիշատակութիւն Ճահուկի մասին, որ անկարելի կը լինէր, եթէ նրա մաս լինէր[2]: Արձանագրութիւնների տուած ընդհանուր սահմաններն էլ համապատասխան են պատմիչի տուած մանրամասնութեան «ի Բարկուշատայ մինչ ի դաշտն Դվնայ», կամ «ի դրանէն Բարկուշատայ մինչեւ ցսահմանն Բջնոյ», որ կը նշանակէ Բարկուշատից մինչեւ Վեդի կամ Բարկուշատից մինչեւ Կոտայք (Էլառ)· նոյնն է հաստատում եւ պատմիչի տուած սահմանը իւր հօր իշխանութեան մասին՝ «տիրեալ ի Բաղաց մինչեւ ցԱյրարատ»[3]: Այս բոլորից պարզ է, որ Պռոշեանց սահմանակից երկու գաւառները՝ Ճահուկ եւ Երնջակ, քաղաքականապէս դուրս էին Օրբէլեանց իշխանութեան սահմաններից եւ ենթարկւում էին Սիւնեաց եպիսկոպոսներին միայն եկեղեցական տեսակէտով:

Սակայն բոլորովին պարզ չէ, թէ այդ երկու գաւառներն ամբողջութեամբ Պռոշեանց իշխանութեան մասեր էին· մենք չունինք ոչ գրական եւ ոչ իրական մնացորդներ այդ փաստը հաստատող, այլ միայն ցուցումներ, որոնք ենթադրութեան սահմաններից աւելի հեռու տանել չեն կարող մեզ, յատկապէս Երնջակի վերաբերութեամբ: Մենք տեսանք, թէ ինչպէս ժամանակակից եւ այս հանգամանքներին կատարելապէս իրազեկ պատմիչը Ճահուկ եւ Շահապոնք մի է համարում իբրեւ գաւառ· անհիմն չի լինիլ ենթադրել, որ մի ուրիշ ժամանակակից՝ Էաչի Պռոշեան «տիրեցի հայրենի երկրիս իմոյ Շապունեաց» խօսքերով Ճահուկն էլ հետը հասկանայ, մանաւանդ, որ սորա արեւելեան մասը Ածոպա վանքով Պռոշեանց սեպհականութիւն էր: Եւ յիրաւի 1292 թուին Ոծոպի վանքում գրուած յիշատակարանն էլ նոյնն է հաստատում: «Եւ գրեցաւ տառս աստուածայինն ի գաւառիս Շահապունեաց ի միաստանիս (s!) որ է մերձ յամենաւրհնեալ եւ յաստուածապահ գեաւղս Ոծոպի կոչեցեալ»[4]: Ուրեմն ենթադրական է մնում միայն Ճահուկի արեւմտեան մասը նոյնանուն աւանով: Երնջակի նկատմամբ ունինք այս-



ՊԱՏԿԵՐ 15·

խոյ—Գերեզմանաքար Թերփ գիւղում·

---

[1] Օրբ· 393–395:

[2] Անդ· 397, 411:

[3] Անդ, 478· 417· 360 եւ Շախ· Բ· 364· Ջալ Ա· 207 «Լփնաց» փոխ· «Դվնայ»· Христ. Восток. 1913· մեր յօդուածը 227 եւ շարունակութիւն:

[4] Արարատ· 1876· 413:

պիսի ցուցում. Վասակի որդի Պռոշ մեծ իշխանը «զիւր գաւառն եւ զգեղանսն որ ի Վայոց ձոր, կամէր յափըշտակել եւ այլում եկեղեցւոյ ժառանգեցուցանել», այսինքն Երնջակի Յովհաննէս եպիսկոպոսին. այս մըտադրութիւնը չի յաջողւում Սիւնեաց եպիսկոպոսների Կոստանդին Բարձրբերդցուն արած բողոքի հետեւանքով[1]). Պռոշի այդ միտքը ոչ միայն ապացոյց կարող է լինել, թէ Երնջակը Օրբէլեանց իշխանութիւնից դուրս էր, այլ եւ հակառակը, թէ կապ պիտի ունենար Պռոշեանց հետ: Թէպէտ պատմիչը յայտնում է, որ Յովհաննէս եպիսկոպոսը բռնաբար յափշտակել է Երնջակը «թիկունս արարեալ այլազգեացն հազարապետ մի», այդ չի նշանակում, թէ նոյն հազարապետի իշխանութեան տակն էր Ապրակունիսը. այս դէպքում միտք չէր ունենալ Պռոշի ձգտումը, որ կամենում էր հողեւորապէս եւս իւր իշխանութիւնը անկախ դարձնել:



Շահապոնք ամրոցը. ՊԱՏԿԵՐ 16.

Շահապունեաց ձորը կամ գաւառը երեք մասի կարելի է բաժանել նոյնանուն գետակի երեք վտակների հովիտներով. հարաւային ձորակ, որի մէջն էր գաւառի կեդրոն Շահապոնք ամրոցը, համանուն գետակի առուակներից մէկի վերայ, բարձրաբերձ ժայռի գլխին ցցուած (պատկ. 16). երկրորդ մեծ ձորակը Շահապունեաց գետակի միջին եւ գլխաւոր վտակի հովիտըն է, որ սկիզբն է առնում Վայոց ձորի եւ Սիւնեաց լեռներից, իւր մէջ ընդունելով Նորսի, Կժաձորի եւ Բիչենակի վտակները. երրորդ ձորակն է Կուքի գետակի հովիտը: Շահապունեաց ամրոցում եւ աւանում տարաբաղդաբար կարեւոր պատմական յիշատակներ չեն մնացել. հաւանօրէն, Լանկթամուրի արշաւանքից յետոյ, որին վկայ եղաւ ամրոցում փակուած Գրիգոր Տաթեւացին եւ գրեց իւր Հարցմունք Գէորգ վարդապետի եւ Լուծմունք Գրիգորի աշխատութեան յիշատակարանը[2]), մահմետական տիրապետութեան տակ մնաց, մինչեւ որ ԺԷ. եւ ԺԸ. դարում բոլորովին մահմետականութիւն ընդունեց, ունիթոռների ջանքերով հայութիւնից ուծացած եւ կաթոլիկութիւն ընդունած հայ ժողովրդի մեծ մասը: Ուստի եւ հասկնալի է, որ Պռոշ-

---

1) Օրբ. 363. 364/5:

2) Ձեռ. էջմ. թ– 830 (Կար. 796) Յաւել. Բ. 12. Համ. Ալիշան. Սիսակ. 481: Քարամեան. Verzeichniss der armenischen Handschrieften. Berlin 1888. եր. 16: Ամբողջ Շահապունիքը բացի Նորս Մազրայից, Ղարաքարայից եւ Առինջից, բոլորը խաների սեպհականութիւն էին՝ 28 գիւղ թուրք եւ 7 հայ:

եանց հայրենի գաւառում համեմատաբար շատ քիչ յիշատակներ են մնացած տոհմի շինարարական գործունէութեան մասին: Բերդում ժայռի մէջ փորուած աւազանները աւելի հին են, իսկ բերդի տակ եղած մատուռից՝ սրբատաշ քարով պատի մի փոքրիկ մնացորդ կայ միայն: Միակ վիմական գրաւոր յիշատակարանը մի խաչքարի արձանագրութիւն է 1293 թուից· խաչքարն ընկած է Նախիջեւանի Ջափար ղուլի խանի նախկին ամարանոցի պարտիզում·

Թվ. ՉԽԲ. Յանուն/այ ես Գ/ոհար/ըս սթի? (փակագիր) /անարժան. ամուսին կանկնե/ցի խաչս Գրգո. քահն այ (աստուծոյ) ... Մի ուրիշ խաչքար գտնւում է Բահրամ խանի բակում՝ փչացած եւ դժուարընթեռնլի արձանագրութեամբ: Գետնի տակից դուրս են գալիս պղնձի շատ անօթներ հայերէն եւ պարսկերէն արձանագրութիւններով· մեր ձեռքն ընկած մի կոնքի վերայ գրուած է «Կօվց», երկու ափսէի վերայ «Մխիթար որդի Թորոսին», «Առաքել ի Աւետի»: Ի զուր որոնեցինք առուակի ձախ ափին, բլրի լանջին հայոց գերեզմանատան մնացորդների մէջ հին գրաւոր յիշատակներ· դորա փոխարէն կան քարեր կենդանական եւ որսորդական տեսարաններով1):

Ներկայ Շահբուզից կամ Շահապունքից 7–8 վերստ



Ոծոպի վանքը· ՊԱՏԿԵՐ 17·

Բայց աւելի բազմաթիւ են խոյաձեւ գերեզմանաքարեր պարսկերէն գրութիւններով գրուած առուակի ափին· դոցանից երկուսն ընկած են Ջափար կուլի խանի պարտիզում, որ ըստ տեղացի ուսուցիչ Սադիղ Խալիլովի հեջիրի 1026 թուականներն են կրում, այսինքն ԺԷ· դարու մնացորդներ: Գերեզմանական այդ արձանագրութիւնների ուսումնասիրութիւնը, գուցէ, մեզ նոր նիւթ կուտար, թէ ինչպէս Պռոշեանց այդ կեդրոնում հայութիւնը հալուել է հետզհետէ մահմետական ծովում եւ վերջապէս անհետացել ԺԸ· դարու առաջին կիսում: Դեռ եւս 1723 թ· հայ կեանքը չէր մարել այնտեղ· Պետրոս Ջահկեցին այդ թուին «ի վանն Շահբունեաց» գրել է մի *մխալ*՝ պատարագամատոյց, իսկ ըստ Ղազար Ջահկեցու 1740 թ· այդտեղի հայերը, որ նախ կաթոլիկութեան էին դարձած, արդէն մահմետական էին:

---

1) ա) Ձիաւորի առաջ կանգնած է մի մարդ, որ մի ձեռքով սանձն է բռնել, միւսով մատռուակից առնում է թասը, երեւի ձիաւորին մատուցանելու համար· մատռուակը միւս ձեռքին բռնել է գինու թակոյկ (թունգի): Քարի միւս երեսին՝ առիւծը բռնել է եզան գլխից: բ) Հասարակ, եղնդաւոր խաչով մի գերեզմանաքար· մի ուրիշը հայերէն գրերի մնացորդներով, որից ոչինչ չի որոշւում: գ) Առիւծը բռնել է եզան (եղջերու?) վզից, եզի ետեւից մի այծեամ, աւելի վերեւ մի փոքր կենդանի, որոշել չենք կարող, թէ ինչ: դ) Որսորդական տեսարանով մի քանդակ· ձիաւորը կապարճը մէջքին· լարել է աղեղը դէպի այծեամը· մի ուրիշ մարդ *հրացանն* ուղղել է դէպի եղջերուն, այս վերջինը բնորոշում է ծագման ժամանակը· մէկն էլ ետեւից թուր է բռնել· ե) Մի ձիաւոր, կանգնած մի մարդու ձեռքին թակոյկ եւ թաս, երրորդը բռնել է կշեռք եւ բաժակ, առաջին քոցի (գինու փոքրիկ կարաս):

դէպի արեւելք, այժմ Թուրքարնակ Բլիւս եւ Հնումն Քոյլք գիւղն է1) ։ Իսկ նորանից էլ մի երկու վերստ արեւելահիւսիս Ագարակի գերեզմանատունը· վանքն աւելի բարձր է, հիւսիսային կողմն ընկած լերան լանջին2) ։



Խաչքար Նորս գիւղում· ՊԱՏԿԵՐ 18·

Շահապունեաց երկրորդ վտակի հովտումն է, լերան դէպի արեւմուտք նայող լանջին, Նորս գիւղը, որի ջուրը թափւում է նոյն վտակի մէջ· տեղի գերեզմանատընից, սպիտակ, մարմարինի նման քարից մի մեծ խաչարձան (պատկ· 18) բերուած եւ հաստատուած է այժմ գիւղի մէջ Պօղոս Ամիրեանի կալում· խաչքարի արձանագրութիւնը ցոյց է տալիս, որ գիւղը գտնւում էր Պռոշեանց իշխանութեան մէջ·

> Ի ։ Թ ։ Է ։ Ճ ։ (=1251) Ես Գ/իգ ի· ? կանգնեցի/զխաչս յիշխանութբ պարոն Պռոշ[ի բ]ա/րեխաւսութի ինձ [ե]ւ ամուսն[ոյ] ...(եւս վեց տառ) որք ... [երկր]պագանէք յաղ/ ... [աւթս] յիշեցեք»3) ։

Գիւղի նշանաւոր աւերակը Լխանոսի վանքն է· մնացել է միայն հիւսիսային պատի մի մասը· հետաքրքրական է, որ գործադրուած է նաեւ թրծած աղիւս, որ հազուագիւտ երեւոյթ է մեր եկեղեցական ճարտարապետութեան մէջ4) ։ Դրան ճակատաքարի արձանագրութեան մնացորդը հետեւեալն է·

---

1) Բլիւսում նոյնպէս հին յիշատակներ գտնել չկարողացանք, չորս սիւների վերայ հաստատուած, ութ կողանի թմբուկով եւ չորս լուսամուտով գմբէթարդ եկեղեցու պատերից սպիտակաւուն, սրբատաշ քարերը պոկուած են։ Եկեղեցու կտուրը տափակ է, տարօրինակ հայ եկեղեցական ճարտարապետութեան մէջ։ Ձախակողմեան յետին սիւնի արեւելեան ճակատին երկու խաչ կայ փորագրուած հետեւեալ արձանագրութեամբ· «Յիշատակ է սբ խաչս մահ/տեսի Օհան? պէկին, Մարոսին մըն Փաշ/ին, կողակից Գուլումին, որդուն Ապրահա··/գ· թվ· ռնլ (=1681)։ Աջակողմեան յետին դասի սեան արեւելեան ճակատին դարձեալ երկու խաչ հետեւեալ արձանագրութեամբ· «Ցշկ է սբ խաչս Շահնազարին մղտսի? Թաթոս»· Նոյն սեան հարաւային ճակատին դարձեալ երկու խաչ այսպիսի արձանագրութեամբ· Ցշկ է սբ խաչս Թասալի կին Եղիսաբ/ետին»։ Աջ դասի աւանդատան պատին· «խ[աչ]ս բարեխաւսութի տր Ովանէսին / իւր ան··· ան··յին ասկին / թվ ։ ոխզ (= 1597)։ Ձախ դասի սեան արեւմտեան ճակատին· «Սբ· խաչս հոգոյն··· (մի բառ) փրկութե ? Մարգարին թվ· ռճլգ (=1684)»։ Գմբէթի մեծ կամարների՝ ներսից՝ աղեղնամէջից վեր, նկատւում է շաղախից ելնդաւոր տառերով· «թվ· ռնլ (= 1681)»։ Այս արձանագրութիւններից երեւում է, որ եկեղեցին ԺԶ· դարու գործ է, նորոգուած ԺԷ· դարում։

2) Վանքի կամ աւելի ճիշդ մատուռի միակ արձանագրութիւնը պատի մէջ դրած քանդակազարդ մի խաչի տակ, անընթեռնելի է։ Լերան լանջից հայելու պէս պարզ, աչքի առաջ է ամբողջ Շահապունիքը իւր երեք ձորերով· հեռաւոր Կուքին եւս նկատւում է նոյնանուն լերան գոգում։ Այս վանքը նոյն դարու գործ է, ինչպէս եւ Բլիւսի եկեղեցին եւ նոյն քարն ու ճարտարապետական բնոյթն ունին, ինչպէս Բլիւսի եկեղեցին կամ Ներկայ Ածոպայ վանքը։ Մեսրոպ եպիսկոպոս Սմբատեան (Երնջակ, Տփխիս· 1906, եր· 485) եկեղեցու շինութիւնը դնում է 1451 թ· «ի Շահան Գագկայ» եւ նորոգուած 1600 թ· «ի տիկին Մարգարտէ»· այս աղբիւրն ինձ անծանօթ է· բայց մի յիշատակարան պատմում է, որ եկեղեցին շինել է Եսայի Կարնեւանցու եղբայր Տ· Ղազար վարդապետը, որ մեռել է 1662 թ· «եւ թաղեցաւ ի ձորն Շահրունոյ, ի սուրբ ուխտն Ագարակու, զոր ինքն կամելով շինել, կիսակատար վախճանեցաւ»· Երնջակ· 138։

3) Սիսական· 485· սխալներով։ Անկիւնաւոր փակագծերի միջինը մենք ենք լրացնում, եղծուած են· ընդգծուածները, հազիւ նկատելի։ Ալիշան (Սիսակ· 486) տալիս է մի այլ արձանագրութիւն· «ի թվ· ՉՀԵ (=1326) կանգնեցաւ սուրբ խաչս իշխանութեան Պռոշո ··· որք երկիր պագանէք յաղաւթս յիշեցէք»։ Այսպիսի արձանագրութիւն չգտանք մենք, եւ հաւանօրէն, հենց նոյն արձանագրութիւնն է, ինչ որ տուինք քիչ առաջ, բայց սխալ ընթերցուածներով կամ երեւակայական լրացումներով· այդ ժամանակ Պռոշ անունով իշխան չկար Խաղբակեանների մէջ։

4) Անիում եւս Միջնաբերդի պեղումների ժամանակ ակադեմիկ Մառի ձեռքով դուրս են եկել այդպիսի աղիւսներ։

> *Թ. Զ. / Յանուն այ ես Լիանո/ս շինեցի սբ խորանս յի/շ. հոգոյ, մեղաց քաւարան ինձ եւ / ծնողաց եւ եղբարց մերոց տվի զմին...* (մնացած քարերը չկան)[1]:

Լիանոսը Պռոշեանց ազատներից մէկն էր, հաւանօրէն, ինչպէս եւ Մարտիրոսի շինող Մխիթար որդի Դեղկոյ կամ Գէոմիւրի խաչարձանի կանգնող Մխիթար որդի Խոյդանայ: Նոյն աւերակում կայ մարմարիոնանման սպիտակ քարի վրայ հետեւեալ արձանագրութիւնը·

> *Ի Թիս Հայոց Չէ/Ես Ներսէս եւ [ա]մ/ուսին իմ ... աքան/ [կանգն]եցաք այ (աստուծոյ)../... չու/մըն...* (մնացածը չի կարդացւում եւ կոտրած):

Մի գերեզմանաքարի վրայ· *«Այս է հանկիս/տ Ըռ..* (մի տառ) *այհանչ/իս· յհք·Թվ·ՉԼԸ»:*

Սոյն վանքին է ակնարկուած անշուշտ Ջաղացի ձորում մի քարի վերայ եղած արձանագրութիւնը·

> *Ես Խաչատուր մխա/կեց շինեցի զՋ/աղացս ի խամո/տվի վանիցս· մխար/անքս տվին: Բ: ժամ զնոր կիրա/կին խափանողքն/Յ:աց նզոված·*

Այս եւ Յաւելուածի մէջ բերուած արձանագրութիւնները ցոյց են տալիս թէ ԺԳ· դարու կիսից սկսած այստեղ հոգեւոր կեանք է եղել եւ ճոխութիւն, որի մնացորդներն են նաեւ այն խաչքարերը, որ կան գերեզմանատանը եւ գիւղի այլ եւ այլ ծայրերում (տ· Յաւել· Ա· 9):

Տարաբաղդաբար Շահապունեաց միջին վտակով աւելի վեր դէպի Կժաձոր եւ Բիչենակ չենք գնացել անձամբ, հաւատալով մեր առաջնորդին, թէ այնտեղ հնութիւններ չկան, ուստի եւ պնդել չենք կարող, թէ որքան ճշմարիտ է այս տեղեկութիւնը· Ալիշանը երկու գիւղերի մօտ աւերակների տեղեր է նշանակում: Նորսից անմիջապէս անցել ենք երրորդ ձորակը՝ Կուքի գետակի հովիտը· Կուքին մէկն է Շահապունեաց ձորի պատմական վայրերից, որ սեղմուած է համանուն լեռան գոգում, հրաշալի դիրքով, պողաբեր, հաստաբուն, հնուց մնացած ծառերով: Մինչեւ այժմ էլ գիւղը պահել է իւր անունը, թէեւ թուրքաբնակ եւ սեպհականութիւն էր Նախիջեւանի Քենգերլինսկի բէկերի: Սարը կոչւում է նաեւ Սանդեար: Գիւղից փոքր ինչ հիւսիս մի տափաստան տեղում գտնւում է բոլորովին աւերակ եւ անմարդաբնակ Կուքի վանքը, որի հովասուն եւ լայնատարած ընկուզենիների տակ մակաղում են ամառը Կուքեցիների հօտերը կէսօրին:

Վանքի հնագոյն, վիմական յիշատակարանը 1287 թուի մի խաչքար է, որ Պապաք, ենթադրաբար Պռոշի աւագ որդին, կանգնել է եկեղեցու արեւելեան կողմը· *«Ի Թվիս Չլզ· Ես Պապ/աք կանկնեցի ի կեն-[դանութիւն-եղծուած է] ամուսին* s! *իմոյ...»* մնացածը փչացած: Նոյն թուականին էլ Մեսրոպ Արքեպիսկոպոսը նշանակում է վանքի շինութիւնը Պապաք իշխանի ձեռքով եւ Յովհաննէս վարդապետի հսկողութեամբ[2]: Այդպիսի արձանագրութիւն գտնել չկարողացանք, եթէ չէ մնացել այն արեւելեան կողմը՝ փլըւածքների տակ կամ չէ հանել որ եւ է մեզ անյայտ յիշատակարանից· բայց այս թուականից էլ հին՝ 1215 թուի խաչքար ունինք Ջրաղացի ձորում[3]: Այս խաչքարը ցոյց է տալիս, թէ այստեղ շինարարութիւնն սկսուել է դեռեւս Վասակ Խաղբակեանի իշխանութեան օրերից: Պռոշեանց յիշատակութիւն ունինք գրաւոր աղբիւրների մէջ 1322 թուականից, երբ Մարկոս անունով մի կրօնաւոր գրել է տալիս Լամբրոնացու պատարագի մեկնութիւնը· «ի վանս Կուքոյ ի տան մեծի սրբարանիս եւ սբ եւ ահեղ հզօր նշանիս Հազարաբուրացս (s!) ··· յիշխանութե նահանգիս մերոյ թոռին Պռոշա զոր ի յազգէն Վարդանանց՝ Վասակա···»[4]· Մի ուրիշ յիշատակարանից տեղեկանում ենք· որ «Հազարաբուրք» կոչման հետ, կաթուղիկէ եկեղեցիները նուիրուած են Ս· Աստուածածնի եւ Ս· Ստեփանոսի անուան, նաեւ «միահամուռ Վարդանանց սբ նահատակացս»[5]: Նոյն անունները հաստատւում են մասամբ եւ արձանագրութիւններով:

Բուն եկեղեցին փոքր է, չորս, անմիջապէս իրար կապած խորաններով (ափսիդ)· ունի եւ գաւիթ, թաղկապ, սրահաձեւ երեք կամարներով (դալան)· գաւիթն աւելի ընդարձակ է, քան բուն եկեղեցին, ինչպէս Հաւուց թառում Աստուածատուր կաթուղիկոսի շինածը, եւ հաւանօրէն նոյն շրջանի կամ քիչ աւելի վաղ, բայց ոչ հին, քան 1496 թիւը: Բուն եկեղեցին աւելի հին է, ինչպէս վերեւ յիշուեցաւ, Պապաքի իշխանութեան օրից, դրսից սրբատաշ եւ ներսից քար ու կրով, բացառութեամբ ձախ աւանդատան, որ ներսից էլ սրբատաշ է: Նոյն աւանդատան պատի վերայ կայ մի արձանագրութիւն 1291 թուից:

> *Կամաւն այ ես Վրթ եւ ամուսին իմ Աղ/ուտ տվաք: Ճ: դեկ ի Ռ: բիւրքս (Հազարբիւրքս) / միաբանքս խոստացան ի տարին: Բ: / ժամ, կատարիչ* s! *աշնին յայ / Թվ· ՉԽ·*

Վանքը իւր բակով առնուած է քառանկիւնի պարըսպի մէջ՝ արեւմտեան եւ հարաւային մեծ դռներով· հարաւային դրան մօտ, պարսպի մէջ, նորոգութեան ժամանակ դրուած է մի քար այսպիսի արձանագրութեամբ·

---

[1] Ալիշան· Սիսական 485 աւելացնում է «ամէն հայրենի հողերս եւ ջրաղացս եւ···», նախընթաց մասը սխալներով:

[2] Երնջակ· 485:

[3] «Թվ· ՈԿԴ· Զարդեղ կանգնեցի···»:

[4] Սիսական· Նմանութիւն յիշատակարանի· եր· 487:

[5] Յաւել· Բ· 13· Զեռ· էջմ· թ· 1500/1511, 60բ·:

«Մեք Սարգիս [եւ] Յովէս միաբան[եցաք] ի սբ Ածածնիս եւ ետու Տ! ... ս եկեղեցոյս. վըս Սա/[րկաւագ]. ըծառզարդարին պատ/..գ...»:

Արձանագրութեանս մէջ յիշուած Սարգիսն ու Յովհաննէսը Մարկոս կրօնաւորի՝ վերոյիշեալ ձեռագրի գրչի (Սիսակ. 487)՝ ուսուցիչներն են. ժամանակի առաջնորդն էր Սարկաւագ վարդապետ, որի անուան առաջին տառերն են մնացած արձանագրութեան մէջ:

Բուն վանքն ընկնում է բակի հիւսիսային կողմը, իսկ արեւմուտքից եւ հարաւից միաբանների խցերն էին. հարաւային պարսպի մօտ, աղբիւրի վերայ, շինուած է մի փոքրիկ մատուռ: Տարաբաղդաբար փչացրել ենք մեր լուսանկարը եւ հնարաւորութիւն չունինք վանքի ընդհանուր տեսարանի մասին գաղափար տալ[1]:

Պարսպից դուրս՝ հիւսիս-արեւմտեան անկիւնում՝ գերեզմանատունն է, հասարակ եւ փոքր խաչքարերով. դոցանից հնագոյնը 1296 թիւն է կրում.

Ես Յակոբ մեղ... [աւոր] քահ, կանգնեցի զխաչս ի / [փրկութիւն] ... (երկու տող չի կարդացւում) աղաւթս... (մի բառ) Թվ. ՉԽԵ.»: Մի ուրիշ խաչքար ունի «ի Թվ. ՉԾԱ» թուականը առանց արձանագրութեան: Վանքի արեւելա-հիւսիսային կողմը, պարսպից դուրս, բլրի վրայ կայ պատուանդանով մի խաչքար. ճակատի արձանագրութիւնը չի կարդացւում, բայց թեւերի մօտ գրուած է «ՉԾԷ» թուականը:

Գիւղի մէջն է Ս. Գրիգորի եկեղեցին, որ յիշատակուած է Թ. 1500/1511 Յայսմաւուրքի յիշատակարանում (Յաւել. Բ. 13)՝ «Գեղամիջի սբ. Գրիգոր» անունով 1471 թուին, բայց նորոգուած է 1669 թուին հետեւեալ արձանագրութեան համաձայն.

Մեք Կուզվայ ժողով/ուրդս շնորհօքն Քսի / շինեցաք սբ. Գրիգոր եկղս հայրապետութի: տն Յակոբայ. Թվ. ռճժը.

Պռոշեանց նշանաւոր կեդրոններից մէկն էլ Ածոպա կամ Ոծոպի վանքն էր, բուն Շահապունիքից դուրս, իսկապէս Ճահուկի մէջ, Բաղամլուի վտակի վերայ, որ Ճահուկի արեւելեան ճիւղն է: Բայց տեսանք, թէ ինչպէս 1292 թուի մի յիշատակարան Ոծոպի վանքը Շահապունեաց գաւառի մաս է համարում եւ Պռոշեանց կեդրոններից մէկը, ուրեմն Շահապունիքն ու Ճահուկը մի գաւառ հասկանալով: Վանքը շինուած է գիւղի արեւելեան կողմը, բերդի հանդէպ, մի բլրի լանջին, արեգակի եւ անձրեւի ազդեցութեան շատ ենթարկուող սպիտակ քարից (պատկ. 17): Դաւրիժեցին[2]) Ածոպն անուանում է «շինեալ ի վաղեմի ժամանակաց վանք», *բայց արձանագրութիւնները համեմատաբար նոր են, ինչպէս եւ շէնքը, ԺԶ. դարու գործ: Դաւրիժեցին այս հանգամանքներին անծանօթ լինել չէր կարող, քանի որ Վրթանէս եպիսկոպոս Ոծոպեցու աւանդութիւնը նա քաղել է Շահապունեաց ձորում եւ մերձակայ վանքերում, բայց եթէ «շինեալ ի վաղեմի ժամանակաց վանք» է անուանում, ճարտարապետական հնութիւնը ի նկատի չունի, այլ վանքի հաստատութիւնը: Հնութեան շատ հետքեր մնացել են եւ ներկայ շէնքի վերայ. բազմաթիւ քարեր, նոյնիսկ քանդակներով եւ արձանագրութիւններով, հին վանքի մնացորդներից, գործադրուել են նոր շէնքի մէջ: Պռոշեանց անուան անմիջական յիշատակութեամբ արձանագրութիւններ չունինք այժմ ոչ այստեղ եւ ոչ գիւղի եկեղեցում, բայց մի շարք պարոն կամ բէկ տիտղոսներով նուիրատուների կամ հանգուցեալների յիշատակութիւնը հիմք է տալիս մեզ հաւանական ենթադրութիւն անելու, թէ նոքա Պռոշեան ծագում ունէին, քանի որ Մարտիրոս եւ Ածոպ գիւղերը նոյն տոհմի անմիջական տիրապետութեան վայրեր էին:*

Վասակ Խաղբակեանի Արատէսում թողած արձանագրութեան մէջ, ինչպէս տեսանք, նոր իշխանութեան սահմաններն էին «ի Գառնոյ ի Բարդուշատ». Գառնիում կամ Կոտայքում Պռոշեանց յայտնի կեդրոնը եղել է Այրի կամ Գեղարդայ վանքը. բայց այդ վանքը իւր սահմաններով Վասակ Խաղբակեանի իշխանութեան մէջ չէր մտնում, այլ գնուած է յետոյ՝ նորա որդու Պռոշ մեծ իշխանի ձեռքով, նոյն վանքում թողած մեծ արձանագրութեան համեմատ. «Գանձագին արարի ի տերանց աշխարհիս (*Իւանէի կամ Աւագի տան*) սուրբ ուխտս Այրիվանից լերամբ եւ դաշտաւ եւ ամենայն կազմութեամբ»: *Եւ, յիրաւի, Իւանէ Աթաբէկը իւր արձանագրութեան մէջ նոյն վանքում յայտնում է, թէ* «տեսի զեկեղեցիքս եւ զսբքս եւ ինձ անոշ թուեցաւ, յիմ անուն արարի, զիմ յիշատակս ի վերայ գրեցի» (*Յաւել. Ա. 2*)*: Այստեղից պարզ է, որ Վասակի «ի Գառնոյ ի Բարդուշատ» խօսքերի մէջ Գեղարդի վանքը չէր ընկնում. մատենագրական տեղեկութիւններ էլ չունինք մեր բանասիրութեան մէջ, թէ Պռոշեանք բացի Գեղարդից որ եւ է կալուած ունեցած լինին Գառնիում կամ Ազատ գետի հովտում: Այս պակասը լրացնում եւ Վասակի միտքը պարզում են արձանագրութիւններն ու շինարարական մնացորդները, որոնք դեռ եւս հարկաւոր ուշադրութեան չեն արժանացել եւ արդէն մօտ են քայքայման ու վերջնական կորստեան:*

Ազատ գետը բաղկացած է երկու մեծ վտակից: Դոցանից առաջինը հոսում է Գեղարդայ վանքի ձորով, իսկ երկրորդ աւելի մեծ վտակը Քեղուայ ձորով, որ այժմ Միլլի չայ է կոչւում: Գեղարդայ եւ Միլլի չայի մէջ ընկնում է մի լեռնագօտի, որ երկու վտակների խառնարանների մօտից հետզհետէ լայնանում է եւ բարձրանում դէպի արեւելք՝ Գեղարքունեաց բար-

---

[1] Տես. Սմբատեանի լուսանկարների ժողովածուն:

[2] Պատմ. Առաքել վարդապետի Դաւրիժեցւոյ. Բ. տպ. Վաղարշապատ, 1896. եր. 427:

ձունքները: Որքան ահագնատեսիլ են, տեղ տեղ, դրեթէ, ուղղահայեաց կախուած ձորի վերայ այդ սարի հիւսիսային կողերը, նոյնչափ գեղատեսիլ եւ ակնապարար հարաւային կողերը, որ աստիճանաբար իջնում են դէպի Միլլի չայը եւ մի սիրուն ձորագոգ կողմում: Սորա հիւսիսային լանջին է ընկած Աղջոց Ս. Ստեփանոսի վանքը (պատկ. 19), բաղկացած բուն տաճարից, գաւթից, որի հիւսիսային պատն է միայն մնացած, եւ Պօղոս-Պետրոսի փոքրիկ եկեղեցուց: Վանքը հիմնուած է ըստ աւանդութեան Լուսաւորչի ձեռքով, բայց ներկայ շէնքը ԺԳ. դարու առաջին քառորդի գործ է: Հնագոյն արձանագրութիւնը Իւանէ աթաբէկինն է 1212 թուից. բայց մի այլ արձանագրութիւն մեզ տեղեկութիւն է տալիս շինողի եւ ժամանակի մասին. այդ Աբէլ վարդապետն է, վանքի առաջնորդը, որ 1217 թուին շինել է «զեկեղեցիս մեծաւ աշխատութեամբ»: Արձանագրութիւններից չորսն անմիջապէս կապ ունեն մեզ հետաքրքրող հարցի հետ, այսինքն գրուած են Խաղբակեանց պայազատների կողմից, տարաբաղդաբար չորսն էլ պակասաւոր: Այդ արձանագրութիւններից տեղեկանում ենք, որ Խաղբակայ որդի Գրիգորը ՈԿԹ (=1220) թուին[1] «բազում արդեամբք» օծնել է եկեղեցին: Մի ուրիշ արձանագրութեամբ էլ «մեծ հող» է նուիրել. իսկ նորա ամուսինը Զազ տուել է «[սպ]ասն պատուական» եւ մի սուրբ նշան: Սրանց որդին Վասակ «Թոռն Ղաղբակայ», որ յիշատակուած է նաեւ մօր արձանագրութեան մէջ, 1270 թուին, Պօղոս-Պետրոսի դրան ճակատին՝ Երեմիայի առաջնորդութեան ժամանակ, թողել է մի արձանագրութիւն, որ հաւանօրէն եկեղեցու շինութեան է վերաբերում:


Աղջոց Ս. Ստեփանոս. ՊԱՏԿԵՐ 19.

Ս. Ստեփանոսից դէպի հարաւ ձորագոգի հարթութեան վրայ ընկնում են մեծ եւ փոքր Գիլանլար, այժմ Թուրքաբնակ գիւղերը, ընդարձակ քրիստոնէական գերեզմանատնով, իսկ մի քիչ էլ հարաւ Այի դարասի (Արջաձոր) կոչուած ձորակի գլխին՝ կանգնած է Գրիգոր Խաղբակեանի յուշարձանը, բարձր պատուանդանով մի մեծ խաչքար, ներքեւի մասում, ձիու վրայ նստած իշխանի հարթաքանդակով, որ կռւում է վագրի դէմ, «Թուի ՈՁԲ. (= 1233). Գրիգոր որդի Խաղբակայ» արձանագրութեամբ (պատկ. 20): Խաչը հանւած է իւր բարձր պատուանդանից եւ երկու կտոր արած· մենք առանձին առանձին նկարելով, միացրել ենք եւ ամբողջութիւն կազմել: Գրիգոր Խաղբակեանը Վասակի եղբայրն էր, որ ինչպէս գիտենք, 1222 թուին գերի ընկաւ Խփչաղների ձեռքը Գանձակի ճակատամարտում եւ ապա սպանուեցաւ: Ցուցարձանից քիչ դէպի արեւելք, ճանապարհի միւս կողմը, կանգնած են երկերկու զոյգ խաչքարեր, պատուանդանների վերայ, մէկը ցած ընկած, հաւանօրէն նոյն ժամանակի գործ, առանց արձանագրութեան (պատկ· 21): Այսպիսով բանաւիրական մի նորութիւն ունինք, որ Բեղուայ ձորը Խաղբակեանց իշխանութեան մասն էր, ուստի եւ Վասակ իրաւամբ իւր իշխանութիւնը «ի Գառնոյ մինչեւ ի Բարդուչատ» սահմանել կարող էր:

---

[1] Ամբողջութիւնը տես Մասն Բ. Գլ. Գ.

Նոյն ձորում, միայն դէպի արեւելա-հարաւ, Իմերղէք Թուրքարնակ գիւղում, գտնւում էր Վանստան վանքը՝ ԺԳ· դարու գործ: Եկեղեցու աւերակների հիւսիսային կողմն ընկած մի խաչքարի վրայ զետեղուած է հետեւեալ արձանագրութիւնը· «Սբ· խաչս բարէխաւս պր Թեէրին»: Պռոշի հարսներից մէկի՝ Ամիր Հասան Ա·ի կինն էր այդպէս կոչւում· երկու Թաճերների նոյնութեան վրայ պնդել չենք կարող, այլ նոյնութեան միտքը ծագում է Բեղուայ ձորի Խաղբակեան տան սեպհականութիւն լինելու պատճառով:

Վանստանից մի քանի վերստ դէպի արեւելք, բարձր ժայռերի գլխին՝ երեւում է Բեղուայ անմատչելի բերդը, այժմ Ղալադիպի կոչուած, ուր ապաստան գտաւ Իւանէ աթաբէկը Խորազմների չահ Ջալալէդդինի կողմից Գառնիի մօտ ջարդուելուց յետոյ[1]: Ճանապարհը բարձրանում է ուղղահայեաց ժայռերի տակով, սարսափ ազդելով անցորդին· բերդը գտնւում է լերան հիւսիս-արեւելեան անկիւնում, այդ կողմից էլ նա պատուած է հաստ պարսպով եւ բուրգերով, միակ մատչելի կողմը· մնացած կողմերը պաշտպանուած են սեպացած ժայռերով, որոնք իջնում են մի քանի հարիւր ոտնաչափ անդունդների վերայ: Մեր օրագրութեան տետրակի մէջ հետեւեալ նկատողութիւնն ունինք բերդի մասին· «Ճանապարհը խիստ զառիվեր է եւ անցնում է նեղ կիրճով, բարձրաբերձ ժայռերի տակով, որտեղից բղխում են նոր աղբիւրներ եւ սարից եկած առուակի հետ խառնւում: Բերդի պարիսպներն ընկած են հիւսիս-արեւելեան կողմից, ուր գտնւում է եւ դարբասը: Պարսպի հաստութիւնն է 2,20 մետր, իսկ դարբասի մօտ աւելի հաստ՝ 2,60 մետր, բարձրութիւնը այժմ 8,15 մ·, բայց կարող էր աւելի բարձր լինել, քանդուած է: Հիւսիսային բուրգերի թիւը ութ է, նրանց բարձրութիւնը տաս մետրից աւելի· բուրգերից ոմանք ներքեւում նախասենեակներ ունին (դալան), հաւանօրէն զօրքի համար, իսկ մէջը բոլորակ սենեակ, Անիի նման, որ քանդուած է այժմ, թիւով քիչ եւ փոքր լուսամուտներով: Բերդի հիւսիսային անկիւնում, դարբասի մօտ, մի վիմափոր եկեղեցի կայ վէմքարով, դրան ճակատին խաչ: Բերդի արեւմտեան կողմն էր միջնաբերդը, որի երեք սենեակները նկատելի են, իսկ չորրորդի մէջ երկու հոր կայ քար ու կրով շինած եւ երեսը ծեփած: Նկատելի են եւ ուրիշ շէնքերի հետքեր: Պարիսպը շինուած է սրբատաշ, գորշ եւ կարմրաւուն քարերով, յիշեցնելով Անիի պարիսպները կամ Հաւուց



Գրիգոր Խաղբակեանի յուշարձանը· ՊԱՏԿԵՐ 20·

---

[1] Օրբ· 399· Գանձ· 212, Վարդ· 188:

Թառի Ամենափրկիչ վանքը: Այդ մասն ուրեմն ԺԲ. դարու վերջից կամ ԺԳ.ի սկզբից աւելի հին լինել չի կարող»: Մասնակի՞ց են եղել Վասակ եւ Գրիգոր Խաղբակեանները բերդի նորոգութեան գործին կամ Վանստանի շինութեան, թէ ոչ, ասել չենք կարող[1]: Բերդի մասին աւելի հին տեղեկութիւն ունինք, քան ԺԳ. դարը. Յովհաննէս կաթողիկոս պատմում է, թէ ինչպէս Գէորգ Մարզպետունին պաշարւում է այդ բերդում արաբական ոստիկան Բշրի կողմից, բայց նա դուրս է գալիս ամրոցից, յարձակւում թշնամու վերայ եւ փախցնում Դուին: Երկու տարի յետոյ միայն ոստիկանը տէր է դառնում ամրոցին՝ հայ զօրականների թողնելու հետեւանքով[2]:

Բերդի տակն է, արեւմտա-հարաւային կողմից, Ղալադիպի (Բերդատակ) թուրքական փոքրիկ գիւղը. նորանից հարաւ եղած պուրակներով ծածկուած ձորակը ձգւում է դէպի փոքր Ախ-Դաղի փէշերը[3]. այստեղ, ինչպէս է դէպի բերդը տանող ձորակի բերնում, գտնւում են մի մի ճգնարան՝ խցիկներ, առանց որեւէ արձանագրութեան: Գետակի ափին, ձորադողում գտնւում է մի հին գիւղատեղ տների աւերակներով. ուշադրութեան արժանի է մի վիմափոր, բաւական մեծ սենեակ, վէմքարով. կողքին մի ուրիշ փոքրը. նորա գլխին երկու ուրիշ վիմափոր սենեակներ, հարաւային կողմը պատշգամբի տեղով. երեւում են գերանների փոսերի տեղը:

Բայց Խաղբակեանց իշխանութեան սահմանները ձգւում էին աւելի դէպի արեւելք Գեղարքունեաց գաւառի միջին մասերը, մինչեւ ներկայ Վերին Ղարանլուխ գիւղի մօտերը, որ մի խաչքարի 1220 թ. արձանագրութեամբ Վասակի եւ իւր Բարաք ! որդու իշխանութեան մէջն էր[4]:

Ամփոփելով մեր ուսումնասիրութիւնը Խաղբակեանների իշխանութեան սահմանների մասին, տեսնում ենք, որ նա մի ամբողջութիւն չէր կազմում, այլ բաղկացած էր մի քանի մեծ ու փոքր մասերից. ամէնից ընդարձակ մասը Ծահապունիքն էր Ճահուկի արեւելեան բաժնի եւ Վայոց ձորի սահմանակից մասերի հետ, Ճահուկ եւ Ծահապոնք գետակների խառնուրդից մինչեւ Բարկուշատ եւ Արփա գետերը. վերջինի հետ միացման կէտեր էին կազմում Մարտիրոսի, Զուլի, գուցէ եւ Քիշնէի վտակները: Թէական պիտի համարել արեւմըտեան Ճահուկը եւ Երնջակի սահմանակից մասը Ապրակունեաց վանքով: Ամբողջական մասեր էին Սըրկղունեաց վտակի հովիտը Վայոց ձորում եւ Քեղուայ ձորը Այրի կամ Գեղարդի վանքի հետ Ազատ գետի հովտում: Ի՞նչ ընդարձակութիւն ունէր Խաղբակեանց բաժինը Կեչառոյի կամ Ծաղկեձորի վանքով, որոշել չենք կարող: Իշխանութեան սահմանների եւ կեդրոնների մասին պարզ գաղափար է տալիս վերջում դետեղած քարտէզը:

---

[1] Բերդի եւ վանստանի յատակագիծը վանքի մի քանի քանդակների եւ արձանագրութիւնների հետ տ. Ուվարովայի Материалы по Археологии Кавказа. XIII. Ст. 66. վանստանի արձանագրութիւնները մասամբ միայն հաւաքուած են մեր ձեռքով. այնտեղ Պռոշեանց մասին բացի Թաների խաչքարից ուրիշ յիշատակութիւն չգտանք: Մանրամասնաբար գրի է առել Աշխարբէկ Լոռու Մելիքեան՝ ակադեմիկ Մառի յանձնարարութեամբ:

[2] Յովհ. կաթ. (Ղուկասեան մատենադարան. Թիֆլիս. 1912) եր. 356/7:

[3] Տեղական թուրքերը կոչում են Դաւա-Բոյուն:

[4] Ազգ. Հանդ. XVIII. 152:

Դ.

ՎԱՍԱԿ ԽԱՂԲԱԿԵԱՆ ԵՒ ԻՒՐ ԵՂԲԱՅՐՆԵՐԸ

Նախընթաց գլխի մէջ տեսանք, թէ Պռոշեանց իշխանութիւնը պէտք է հաստատուած լինի ոչ վաղ քան 1201 թիւը եւ ոչ ուշ քան 1214, երբ Վասակ իբրեւ նոր իշխանութեան գլուխ սկսում է շինարարութեամբ զբաղուել, բայց ամենայն հաւանականութեամբ 1201 – 1210 թ· թ· մէջ: Նորա կեանքի մասին մանրամասնութիւններ չգիտէինք, բայց հայ պատմիչների համառօտ բնորոշումները բաւական են համոզելու, որ ԺԳ· դարու առաջին քառորդի նշանաւոր դէմքերից մէկը պէտք է եղած լինի: Գանձակեցին1) նորան անուանում է «Վասակ քաջ»· Օրբէլեանը պատմելով Իւանէ աթաբէկի եւ Գէորգի Լաշայի ձեռքով նորա կողմնակալ նշանակուելու դէպքը, անուանում է նորան «ամենօրհնեալ Վասակ խաչենեցի», «որ եւ մեծաջան վաստակօք բազումս նահատակեալ ի վերայ քրիստոնէից եւ եկեղեցեաց, օրհնեցաւ եւ գովեցաւ յամենայն աշխարհաց, որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի յայսըմհետէ մինչեւ յաւիտեան»2): Այրիվանեցու բնորոշումը տեսանք վերեւ, որ հօրն ու որդիներին հաւասարապէս որակում է որպէս թշնամիների դէմ «քաջ» եւ քրիստոնեաների համար «բարի» անձինք:



խաչարձաններ Բեղուայ ձորում· ՊԱՏԿԵՐ 21·

Գրական այս տեղեկութիւնների վերայ աւելանում են արձանագրութիւնները, որոնք պատերազմական գործերի մէջ ցոյց տուած յաջողութիւնների հետ՝

---

1) Գանձ· 194:

2) Օրբ· 397:

մատնանշում են նաեւ նորա շինարար ու գեղասէր ոգին: Դոցանից մէկը գտնւում է Եղեգեաց ձորի Արատեսի վանքում[1])*, որ թէեւ յայտնի էր առաջուց, բայց առանց թուականի, այն ինչ գրուած է ՈԿԳ* (=1214) *թուականին, միայն փոքր ինչ կողքից, ուստի եւ ոչ Ջալալեանի եւ ոչ Բաջբերունու, ինչպէս եւ բնականաբար նրանց հետեւող Ալիշանի կողմից նկատուած (պատկ· 3· Յաւել· Ա· 3): Արձանագրութիւնը գրուած է Վասակ Խաղբակեանի բերանից եւ թուագրուած* «ի թագաւորութեն վրաց Լաշաին եւ յաշխարհակալութե Իւանէի աթաբակի»· *եւ* «ի հայրապետութե տր Սարգսի»[2])· *Վասակն իրեն անուանում է* «որդի Խաղբակայ», *յիշում է իւր իշխանութեան սահմանները՝* «կողմնապահ ի Գառնոյ մինչեւ ի Բարգուշատ» *եւ ապա յայտնում է, թէ* «առի զամրոցանիս Եղեգեաց ձորոյս ազնութբն այ (*աստուծոյ*)»: *Ո՞ր ամրոցներն են դրանք, որոշել չենք կարող· Եղեգեաց ձորում յայտնի բերդը ժողովրդի կողմից այժմ Սմբատաբերդ կոչուածն է, Եղեգիս աւանից քիչ դէպի արեւմուտք, Ոստինք գիւղի գլխին, Ցախացքարի վանքի լեռնաշղթայի ծայրին: Բայց «ամրոցանիս» յոգնակի գործածութիւնը ցոյց է տալիս, թէ եղել են եւ ուրիշ երկրորդական ամրութիւններ, որոնց մասին յիշատակութիւն չունի պատմութիւնը: Սակայն մենք Օրբէլեանից գիտենք, որ Վասակ Խաղբակեանը նուաճել է նաեւ Վայոց ձորի ամէնից կարեւոր ամրութիւնը՝ Հրասեկայ բերդը՝ Արփայեցի Ախթամարի օգնութեամբ՝* «հրամանաւ եւ ուժով Իւանէի»[3]) :



Կեչառոյք, Կաթողիկէի արեւմտ· դրան արձ· ՊԱՏԿԵՐ 22· Յաւել· Ա· 10·

Երկու ուրիշ արձանագրութիւն Վասակը թողել է Կեչառուաց վանքում՝ իւր շինած Կաթուղիկէի հարաւային պատին (պատկ· 4· Յաւել· Ա· 4) եւ արեւմտեան դրան ճակատին, (պատկ· 22· Յաւել· Ա· 10): Դոցանից առաջինը, թէեւ պակասաւոր՝ քարերը թափած լինելու պատճառով, բայց տալիս է շինութեան թուականի հետ (ՈԿԳ=1214) *կարեւոր տեղեկութիւններ Վասակի զինակից եղբայրների, որդիների եւ կնոջ մասին: Երկրորդը պարզում է Խաղբակեանների եւ Զաքարեանների յարաբերութիւնը, երկրորդելով կնոջ եւ որդիների յիշատակութիւնը: Այստեղ եւս արձանագրութիւնը Վասակի բերանից է գրուած ՈԿԳ* (=1214) *թուին, եւ* թուագրուած է Գէորգի Լաչայի, Զաքարիա սպասալարի եւ նորա եղբայր Իւանէի թագաւորութիւններով[1]· յիշատակուած պիտի լինէր եւ Իւանէի որդին Աւագը, որովհետեւ յիշուած է Խոշաքի անունը, որպէս Աւագի մօր, ինչպէս մակաբերել կարելի է արձանագրութեան մնացորդից։ Երկրորդ արձանագրութեան մէջ Զաքարիայի անունը չկայ, բնականաբար, որովհետեւ Վասակ յայտնում է, թէ «շինեցի զսբ կաթուղիկէս յաւգնականութիւն եւ յերկարութիւն կենաց իմ պատրոնացն՝ Իւանէ աթաբեկի եւ արեան հարազատի իւրոյ Շահանշահի եւ Աւագին եւ իւր մաւրն պատրոն Խոշաքին», ուրեմն եւ կենդանի պատրոնների անունը միայն պիտի յիշատակուէր, իսկ Զաքարիան վախճանուած էր արդէն։

---

[1]) Ջալալեան· Բ· 157· Բաջբերունի· «Արարատ» 1888· 769: Ալիշան, Սիսական, եր· 143:

[2]) Այս տէր Սարգիսը Նորավանից եպիսկոպոսն է, Սիւնեաց տէր Ստեփանոսի յաջորդը 1216 թուից սկսած· Օրբ· 352:

[3]) Օրբ· 350:

«Պատրոն» բառի հնագոյն գործածութիւնը մեզ յայտնի է նոյն Կեչառուաց վանքի 1003 թուականի մի այլ արձանագրութիւնից[2]։ Այստեղ «Գրիգոր մագիստրոս որդի Հասանայ» շինում է իւր եկեղեցին ի միջի այլոց եւ իւր պատրոնի բարեխօսութեան համար։ Մենք կը տեսնենք, որ այս Գրիգոր Մագիստրոսը նոյն չէ յայտնի մատենագիր Գրիգոր մագիստրոսի հետ, բայց նոյն տոհմից է։ Ակնարկուած «պատրոն»ը ոչ այլ ոք կարող է լինել, քան Գագիկ Ա. Շահնշահ, ուրեմն Պահլաւունի իշխանի գերագոյն պետը։ Աւելի յաճախ է «պատրոն» բառի գործածութիւնը ԺԳ. դարում զանազան նշանակութեամբ· մեզ համար կարեւորն այն է, որ այդ բառը գործ է դրուած ինչպէս վանքերի հովանաւորի, նոյնպէս եւ գերագոյն իշխանի նշանակութեամբ։ Յաճախ ստորադրեալ իշխանները նուէրներ են տալիս վանքերին, խաչարձաններ կանգնում կամ եկեղեցիներ շինում իրենց գերագոյն իշխանի՝ պարոնի կամ պատրոնի արեւշատութեան համար։ «Պատրոն» բառն, ի հարկէ, յատուկ տիտղոս չէ միայն Զաքարեանների համար, այլ իւրաքանչիւր ստորադաս իշխանի համար պարոն էր կամ պատրոն նորա գլխաւոր իշխանը։ Այդ իմաստով է գործադրուած եւ այս արձանագրութեան մէջ։ Մենք տեսանք, որ Վասակ Խաղբակեան իւր նոր իշխանութեան մէջ հաստատուած էր Իւանէ աթաբէկի կողմից իբրեւ «կողմնակալ» կամ «կողմնապահ», թէեւ ժառանգական իրաւունքով, բայց որպէս ներկայացուցիչ գերագոյն իշխանաւորի· «կողմնապահութիւնները» մաս են գերագոյն իշխանի տէրութեան կամ պետութեան ամբողջութեան։

Իբրեւ արձան երախտագիտութեան Վասակ իշխանը շինում է այս գեղեցիկ տաճարը «յերկարութիւն կենաց» իւր պատրոնների, եղբայրների եւ որդիների, ինչպէս եւ «յարեւշատութիւն» իւր եւ իւր կնոջ Մամային։ Խաղբակեանների, ինչպէս եւ միւս իշխանների ընդհանուր ստորադրելութեան մասին քաղաքական եւ զինուորական տեսակէտներով Զաքարեանների վերաբերութեամբ տեսանք եւ վերեւ (Ա. գլ. 9)· տարաբաղդաբար աւելի մանրամասնութիւններ չգիտենք, թէ ի՞նչ կերպ էր արտայայտւում այդ ստորադրելութիւնը, ի՞նչ չափով հարկ էին վճարում կամ պատերազմական աւարից բաժին հանում գերագոյն իշխանին[3]։ Ստորադրեալ բոլոր իշխանները մտնում էին գերագոյն իշխանի «դաւթարների» մէջ։ Ուրիշ խօսքով ցուցակագրուած էին ստորադիր իշխանութեան բոլոր գիւղերը, հաւանօրէն, հարկահաւաքութեան գործը կարգաւորելու համար, ինչպէս այդ սահմանուած էր եկեղեցական հարկերի նկատմամբ[4]։ Այսպիսի մի ցուցում ունինք Օրբէլեանների մասին, նոյնը պիտի լինէր եւ Խաղբակեանների վերաբերութեամբ, որովհետեւ ճիշդ նոյն ժամանակ եւ նոյն պայմաններում ստեղծուած «կողմնապահութիւններ» էին երկուսն էլ Իւանէի ձեռքով։ Սմբատ Օրբէլեանի ջանքերով հանւում են Օրբէլեանք «ի դուրս յամենայն դաւթարաց ի Վրաց եւ յայլոց»· և տէրունի գրւում, այսինքն անմիջապէս մոնղոլներին ենթարկւում[5]։ Այստեղ «այլոց» խօսքը կարող է մի միայն Զաքարեաններին վերաբերել, աւելի ճիշդ Իւանէի կամ Աւագի տանը, որի համար եւ զօրանում է երկու իշխանական տների մէջ եղած թշնամութիւնը[6]։

Համեմատաբար աւելի որոշ էր զինուորական ստորադրելութեան խնդիրը· նոքա Իւանէի տան կամ Աւագեանների զօրապետներն էին կամ սպարապետները, որ իրենց իշխանութեան հեծելազօրքով կատարում էին գերագոյն իշխանի յանձնարարութիւնները, մասնակցում անձամբ կամ իւրայիններով ընդհանուր թշնամու դէմ մղուած պատերազմներին։ Գանձակի պատերազմին մասնակից էին Իւանէի առաջնորդութեամբ «Գրիգոր որդի Հաղբակայ, եղբայր Վասակայ քաջի եւ Պապաքն նորուն եղբօրորդի»[7]։ Իւանէի «հրամանաւ եւ ուժով», տեսանք Վասակը նուաճել էր Հրասեկայ բերդը, գուցէ եւ ամբողջ Վայոց ձորը, իւր Զաջուռ եւ Գրիգոր եղբայրների մասնակցութեամբ· Վասակի մահուանից յետոյ, ըստ Այրիվանեցու, «էառ զդրօշայն որդի նորա քաջն Պռոշ», կողմնապետութեան նշանը, սպարապետական եւ իշխանապետական իրաւունքը

---

[1] Ուշադրութեան արժանի է, որ Զաքարիայի եւ Իւանէի իշխանութիւնը «թագաւորութիւն» է կոչուած· թէպէտ արձանագրութիւնը թերի է այս մասում, բայց անկասկած է իրողութիւնը երկրորդ տողի մնացորդներով (տես· Արձ· Յաւել· Ա· 4)։

[2] Տես մեր Գրչութեան արուեստը, Գ· § 18։

[3] Գոշ Մխիթարի Դատաստանագրքի (եր· 311—314, 314—317) տուած տեղեկութիւնները այս խնդիրների մասին մեզ միայն մօտաւոր գաղափար կարող են տալ, մանաւանդ հարկերի վերաբերութեամբ, որ յաճախ տեղական բնոյթ էին կրում եւ զանազանւում միմեանցից։ Յամենայն դէպս, խնդիրը կարօտ է յատուկ, մասնագիտական-համեմատական ուսումնասիրութեան։

[4] Օրբ· 509։

[5] Անդ· 409· 411։

[6] Անդ· 412։

[7] Գանձ· 194· վարդ· 187։



Կեչառոյք. Վասակաշէն Կաթուղիկէն. ՊԱՏԿԵՐ 23.

տոհմի մէջ[1]): Նոյն Այրիվանեցին Ստեփանոս Սիւնեցու վկայաբանութեան մէջ Պռոշի համար գրում է «կարգեալ հազարապետ Հայոց», անշուշտ Իւանէի եւ ապա Աւագի կողմից: Պռոշի որդին՝ Ամիր—Հասան Ա., «մեծ սպարապետ» էր «տանն Աւագին որդւոյ Իւանէ աթաբեկին»:

Վասակ Խաղբակեանը որքան քաջ էր իբրեւ զինուորական, նոյնքան եւ աւելի նշանաւոր էր որպէս շինարար եւ բարեպաշտ իշխան. Նորա շինարարական եւ գեղարուեստական ճաշակի արդիւնքն է Կեչառուայ վանքի Կաթուղիկէ անունով եկեղեցին, որ մինչեւ այժմ էլ իւր վայելչութեամբ, գողտրիկ տեսքով հիացմունք է պատճառում նայողին (պատկ. 23)[2]. ափսոս միայն, ընկած է գմբէթի վեղարը թմբուկի կէս մասի հետ: Կարծում ենք, թէ հնարաւորութիւն ունինք յայտնելու նաեւ ճարտարապետի անունը. եկեղեցու արեւելահիւսիսային կողմը կանգնած է մի խաչքար, երեսը դէպի արեւմուտք դարձրած, բարձր պատուանդանի վերայ. առաջին երեսի վերայ գրուած է «Զվեցիկ վարդպետ յաղութս յիշես / ջիք ի քս աղաչեմք» (պատկ. 24): Իսկ խաչքարի ետեւը քանդակուած է մի ուրիշ մեծ արձանագրութիւն, որ մանրամասնութիւններ է տալիս նորա մասին.

Յիշեսջիք յաղութս / գծառայն այ(աստուծոյ) զՎեցիկ / քարագործ, որ շինեաց զն / որ եկեղեցիս եւ ի կատարման / սորին, ինքն կատարեաց զկեն/ցաղս եւ փոխեցաւ

---

[1] Այրիվանեցի. (եր. 65): Իւրաքանչիւր իշխանական տոհմ ունէր իւր դրօշն ու պատերազմական փողը, որ ժառանգաբար որդուց որդի անցնում էր տոհմի աւագ ներկայացուցիչներին: Մխիթար Գոշը պատմում է Մահկանաբերդի իշխանների պապ Քրդի մասին, որ իւր աւագ եղբայր Վասակի մահուանից յետոյ, կարնոյ Սուլթանից ստանում է «զդրօշ նորա (Վասակայ որդւոյ Վահրամայ) եւ զփող եւ զիշխանութիւն»: Երկու եղբայրները ժամանակաւորապէս փախել էին Կարին, վրաց Գէորգի Գ. թագաւորի վրէժխնդրութիւնից վախենալով (Ալիշ. Հայապ. 390): Քուրդը յետոյ Գէորգիի ամենամեծ աջակիցը դարձաւ, ինչպէս տեսանք Օրբէլեանների ապստամբութեան ժամանակ (տ. Ա. գլ. էջ 3): Նոյն Գոշ Մխիթարը իւր Դատաստանագրքի մէջ (եր. 312) աւելի է պարզում այս խնդիրը. ինչպէս թագաւորն է պատերազմ զնում իւր «դրօշիւք եւ փողովք», այնպէս էլ «իշխանք ինքեանց դրօշիւք եւ փողովք իցեն», եթէ թագաւորը չլինի հետները: «Փողս եւ դրօշս տալ իշխանի ի վերայ գաւառի եւ բերդի լիցի»:

[2] Տարաբաղդաբար պատկերը ի հակառակէն (թարս) է հանուած. դէպի աջ ընկած շէնքերը գտնւում են եկեղեցու հիւսիսային կողմը. կաթուղիկէի հարաւային ճակատը դէպի ձախ է ընկել աջի փոխարէն, նկարուած է հարաւ—արեւմտեան կողմից: Տես. Ազգ. Հանդ. XXII. սկզբի առաջին եւ իններորդ պատկերները:



Վեցիկի խաչքարը· ՊԱՏԿԵՐ 24·

առ քս կիսաւրեայ աւուրք եւ ես Յովաննէս եւ եղբարքս իմ / Հարազատ սորին կանգնե/ցաք զսր Նշանս քսի ի վ/երայ Հանկստարանի սորին առ / ի բարեխաւսութի սմա եւ մ / եզ եւ ամենայն հաւատա/ցելոց եւ յիշողացն զ/սա[1]).

Ոչ առաջի եւ ոչ ետեւի երեսների արձանագրութիւնները թուական չունին· ուստի եւ հարց կարող է ծագել, թէ ո՞րն է Վեցիկ «վարդապետի» շինած եկեղեցին: Վեցիկի խաչարձանը իւր բոլոր ճարտարապետական—քանդակագործական եւ հնագրական նշաններով ամենավաղը ԺԲ· դարու վերջերի կամ ԺԳ·ի սկզբի գործ է· ապա, ուրեմն, խօսք կարող է լինել միայն երկու եկեղեցու մասին՝ Վասակաշէն կաթուղիկէի եւ սորա ու Գրիգոր Մագիստրոսի մեծ տաճարի մէջ ընկած Ս· Նշանի մասին (տես պատկ· 23, մեր պատկերի մէջ երեւում է միայն նորա մի փոքրիկ մասը երկու լուսամուտով)[2]: Սուրբ Նշանը նոյնպէս շինութեան թուական չունի, բայց սորա ծագումը աւելի նոր չէ, քան ԺԲ· դարու կէսերը· որովհետեւ հարաւային պատի վերայ ունինք արդէն ՈԺԲ(=1162) թուականով արձանագրութիւն· եւ մենք կը տեսնենք, որ մօտաւորապէս այդ ժամանակներում էլ նորոգուած է միաբանական կեանքը Կեչառուց վանքում՝ Սելջուկեան տիրապետութեան շրջանում խրթնանալուց յետոյ: Բայց շէնքի ծագումն աւելի հին է, կարծում ենք, Գրիգոր Մագիստրոսի շինել տուած 1051 թուին· այդ մասին աւելի կ'ունենանք յետոյ մանրամասն գրելու: Խաչքարի պատուանդանի զոյգ կիսասիւները տախտակաձեւ խոյակներով եւ կամարներով, բուն խաչի գլխի սրածայր կամարը եւ խաչի տակի պարանահիւս քանդակը նմանութիւն են բերում Կաթուղիկէի թմբուկի կիսասիւներին, արեւմտեան ճակատի պարանահիւս խաչին եւ դրան սրածայր կամարին, որոնք բնորոշ են ԺԳ· դարու արուեստին: Վեցիկի արձանագրութեան հնագրական կցուածքները՝ ար, որ, աւ տառերի՝ այդպիսի յաճախութեամբ՝ այլեւս ոչ մի կասկած չեն թողնում, թէ Վեցիկը ԺԳ· դարու մարդ է, ուրեմն եւ Վասակաշէն կաթուղիկէն է այն նոր եկեղեցին, որ յիշուած է խաչքարի արձանագրութեան մէջ:

Եկեղեցու մեծութիւնն է 13 մ· 40 սմ·×9մ· 80սմ· հարաւային եւ արեւմտեան պատերով, իսկ հիւսիսային եւ արեւելեան պատերով 13մ· 5սմ· ×9մ· 7սմ· արտաքուստ· աւելի մանրամասնութիւններով հարաւային պատը՝ արեւմուտքից դէպի արեւելք մինչեւ նիշի բացուածքը 3մ· 78սմ·, մինչեւ միւս նիշը 3մ·53սմ·, երկրորդ նիշը 88սմ·, մինչեւ արեւելեան անկիւնը 3մ· 82 սմ·: Արեւմտեան պատը՝ հիւսիսից հարաւ՝ մինչեւ դրան բացուածքը 4 մ· 3սմ·, դրան բացուածքը 1մ·2 սմ·, դռնից մինչեւ հարաւային անկիւնը 4մ· 3սմ·: Հիւսիսային պատը արեւելքից արեւմուտք մինչեւ դուռը 6մ·6սմ·, դրան բացուածքը 1մ· 12սմ·, եւ դռնից մինչեւ արեւմտեան անկիւնը 5մ·88սմ·: Արեւելեան պատը հարաւից դէպի հիւսիս մինչեւ նիշը 3մ· 76սմ·, նիշի բացուածքը 82սմ·, եւ մինչեւ հիւսիսային անկիւնը 2մ· 12սմ·:

Ներսից խաչաձեւ է յատակագիծը, հիւսիսից հարաւ ձգուած թեւը աւելի կարճ: Ինչպէս ԺԲ·—ԺԳ· դարու տաճարներից շատերը (Յոհաննու վանք, Գեղարդ, եւայլն) չորս անկիւններում ունի կրկնայարկ աւանդատներ· արեւմտեան յարկն ունի պատում հա-

---

[1] Ընդգծուածները միացած են:

[2] Տես Ազգ· Հանդ· XXII· 1912 № 1· առաջին, երկրորդ, հինգերորդ եւ տասնումէկերորդ պատկերները գրքի սկզբում:

տաշուած աստիճաններ: Եկեղեցու երկարութիւնն է ափսիդով 1 մ· 35 սմ·, լայնութիւնը 7 մ· 95 սմ·: Ափսիդի խորութիւնը 3 մ· 66 սմ·, բուն բացուածքը 4 մ· 48 սմ·, իսկ արտաքին բացուածքը եզերող կիսասիւնից կիսասիւն 5 մ· 10 սմ·: Հիւսիսային պատը արեւելեան ճակատից դէպի արեւմուտք, երկու կիսասիւների մէջ եղած տարածութիւնը 4 մ· 10 սմ·, ապա մինչեւ արեւմտեան կիսասիւնը 2 մ· 65 սմ·: Արեւմտեան թեւի հիւսիսային եւ հարաւային պատի մէջ եղած տարածութիւնն է 5 մետր: Պատի հաստութիւնը 98 սմ·, իսկ աւանդատների դռների լայնքը 92 սմ·:

Իւրաքանչիւր պատի վերայ կայ մի մի նեղ եւ երկարաւուն լուսամուտ եւ չորս աւանդատների պատերի վերայ մի մի փոքրիկ լուսամուտ, ինչպէս ցոյց է տալիս պատկերը հարաւային եւ արեւմտեան պատերով (պատկ· 23): Յատակագիծ պատրաստել անկարելի էր, յատակագծերը ծածկուած լինելով, եկեղեցու ներսը լցրած փլատակի քարերով:

Վասակ Խաղբակեանը չբաւականացաւ իւր կաթուղիկէի շինութեամբ· հարաւային պատի մեծ արձանագրութեան համեմատ (պատկ· 3· Յաւել· Ա· 4), նա իւր եկեղեցին զարդարեց պէսպէս սպասներով, խաչերով, նուիրեց գանձագին մի գիւղ, անունն անյայտ, արձանագրութեան այդ մասը կտրուած լինելու պատճառով, մի այգի Երեւանում, մի ուրիշը Նորաշէնք գիւղում: Նորա օրինակին հետեւեց եւ ամուսինը Մաման՝ նուիրելով մի այգի Երեւանում· արձանագրութեան այս մասն էլ թափուած է, եւ մենք ուրիշ աղբիւր չունինք որոշելու, թէ ո՞ւմ դուստրն էր Մաման· սորա յիշատակին, որդին Հասան—Պռոշ նուէրներ ունի տուած Կոշիկ անապատին 1244 թ·, Դսեղի Բարձրաքաշ Ս· Գրիգորին եւ Կարբու Յոհաննայ վանքին 1247 թ·: Օրբէլեանը նոյնպէս յիշում է, թէ ինչպէս Սիւնեաց Ստեփանոս եպիսկոպոսի՝ Ածոպի Պետրոս եպիսկոպոսի մօտ գրաւ դրած «զՏէր Յովհաննիսի զաւագ խաչն եւ զթիթեղնակապն եւ զկամարակապն», *որոնցից «Թիթեղնակապն ունէր թիթեղունս ոսկի ի վերայ երեսացն եւ կամարակապն կամար ակնաձեւ թեւէ ի թեւ», իւրացնում է Վասակ,* «թիթեղնակապն ու կամարակապ»*ը դնելով* «յիւրում վանս ի Կեչառուս ուխտի», *իսկ աւագ նշանը նուիրում աթաբէկ Իւանէին: Սիւնեաց Սարգիս եպիսկոպոսն ու Լիպարիտ Օրբէլեան 1000 կարմիր դահեկան տալով Իւանէին, հազիւ կարողացան ետ ստանալ միայն վերջինը*[1]*: Արձանագրութեան մէջ յիշուած Տ· Գրիգորիսի եւ Գրիգոր վարդապետի մասին կը տեսնենք յետոյ, երբ առիթ կ'ունենանք վանքի մասին՝ իբրեւ հոգեւոր կեդրոնի՝ խօսելու:*

Վասակի եւ Մամայի որդիքն էին ըստ արձանագրութեան «Պապաք, Մկդէմ եւ Հասան՝ երկանուն Պռոշ», որոնց մասին տեղեկութիւններ են տալիս Կիրակոս, Այրիվանեցին, միայն Պապաքի մասին նաեւ Վարդան: Դոցանից Պապաքը 1222 թուին ընկաւ Խըփչաղների դէմ մղած պատերազմի մէջ· Գանձակեցին պատմելով այս դէպքը, աւելացնում է· «զի երեք որդիք էին Վասակայ՝ Պապաքն, Մկդէմ, Հասան, զոր Պռոշն կոչէին, արք քաջք եւ անուանիք, որ յահէ նոցա դողայր ամենայն զօրն Տաճկաց»[2]*: Վարդան եւս յատուկ չեշտում է Պապաքի քաջութիւնը· Գրիգոր Խաղբակեանի հետ Խփչաղները բռնեցին* «եւ զեղբօրորդին իւր զարիական եւ զքաջ նահատակն Պապաքն անուանեալ»[3]*: Իսկ Այրիվանեցու խօսքերը հօր եւ որդիների մասին տեսանք առաջ: Տարաբաղդաբար սրանց կատարած քաջագործութիւնների մանրամասնութիւնները չգիտենք· ոչինչ չգիտենք յատկապէս Մկդէմի մասին, որ կենդանի պիտի լինէր դեռ եւս 1222 թուին: Պապաք յիշւում է հօր հետ ՈԿԹ=1220 թուին՝ Գեղարքունեաց Ղարանլուխ գիւղի մօտ Գաղան Լոռեցու կանգնած խաչքարի արձանագրութեան մէջ որպէս իշխանակից,* «ի յիշխանութիւնն Վասակայ եւ որդոյ իւրոյ Բաբաքին...»[4]*: Պապաքն անձամբ եւս նուիրաբերութեան նոյնիմաստ երկու արձանագրութիւն ունի թողած Վեդիի վերին ակունքներում Ջլինդէօլի շրջանի Աղքիլիսա թուրքարնակ գիւղի եկեղեցու վրայ, տալով «մին եզն», «մին չինական», Գոմին մարդն ու Յրդուտը եւ ստանալով չորս ժամ իւր հօր Վասակի համար (Յաւել· Ա· 11):*

Կաթուղիկէի հարաւային պատի արձանագրութիւնը մեզ տալիս է աւելի կարեւոր տեղեկութիւններ Վասակի, նորա եղբայրների, որդիների եւ կնոջ մասին· «եւ ածատուրք եղբարքն իմ հարազատք Ջաջուռն եւ Գրիգոր եւ սիրելի որդիք իմ հարազատք Պապաքն, Մքդէմ եւ Հասան, երկանուն Պռաւշ, տէրամբ պահպանեալ եղիցին այժմ եւ յաւիտեանս ամէն»*: Երկրորդ գլխի մէջ* (էջ 16·17) *տեսանք Ջաջուռ Խաղբակեանի եւ Վասակի արձանագրութիւնները· սորանով հաստատւում է այս Վասակի ծագումը Հաւապտկի կամ Գեռաքարի Խաղբակեաններից, եւ հարազատ եղբայրութիւնը Ջաջուռ Բ· Խաղբակեանի հետ, եւ ապա Ջաջուռի եւ Գրիգորի զինակցութիւնը իրենց աւագ եղբօրը՝ նորա պատերազմական գործողութիւնների մէջ, հաւանօրէն Բջնիի, Քեղուայ եւ Վայոց ձորերի նուաճման ժամանակ:*

Ջաջուռի որդի Գրիգորը Վաճառքում թողած իւր արձանագրութեան մէջ հօրն անուանում է «քաջ զաւրական» (էջ· 17)*· Ջաջուռը Խաչենում զինուորական գործողութիւնների մասնակցելու առիթ չունէր: Խաչենն ազատ էր Խոխանաբերդի եւ Հաթերքի իշխանների ղեկավարութեամբ Զաքարեանների հանդէս գալու ժամանակ: Գանձակի պատերազմին Խաղբակեաններից մասնակցում էին Գրիգորն ու Վասակի որդի Պապաքը·*

---

[1] Օրբ· 352—354:

[2] Գանձ· 194:

[3] Վարդ· 187:

[4] Ազգ· Հանդէս, XVII· № 2· 1908· էր· 152:

մնում է ենթադրել, որ նա «քաջ զաւրականի» անուն պիտի ստացած լինէր Վասակ Խաղբակեանի մղած պատերազմների մէջ: Աւելի հաստատուն կերպով այդ բանը պնդել կարելի է Գրիգորի մասին, որի համար եւ ստացաւ Քեղուայ ձորը, գուցէ եւ բերդը, Աղջոց Ս. Ստեփանոսի եւ Վանստան վանքերով, որոնք Խաղբակեան նոր իշխանութեան մասն էին կազմում (էջ 26): Այդ իրողութիւնը հասկնալի է դառնում արձանագրութեան տուած ցուցումներով: Խաղբակեան նոր իշխանութեան հաստատութիւնից յետոյ՝ Զաջուրին է թողնւում նրանց «բնական» հայրենիքը Խաչենում, ինչպէս տեսանք Զաջուրի եւ նրա որդու Գրիգորի արձանագրութիւններից, (էջ 17), մինչդեռ միւս եղբայրներն այնտեղ այլեւս յիշատակ չունին. Վասակի որդու Պռոշ մեծ իշխանի արձանագրութիւնը Կոշիկ անապատում ցոյց է տալիս միայն տոհմի անդամների աւանդական կապերը, առանց կողմնապետական Խաղբակեանների տիրապետութեան որեւէ նշանի Խաչենում[1]): Խնդիրն աւելի պարզում է Զաջուրի դուստր Վանենու յիշատակարանը, Հաւապտուկը «բնական տուն եւ շիրիմ Զաջռոյ իշխանի նախնեաց իւրոյ» անուանելով (Յաւել. Բ. 3): Զաջուռ վախճանուած էր արդէն 1232 թուին, երբ գրուեցաւ այդ յիշատակարանը. նորանից առաջ՝ հօր կենդանութեան ժամանակ՝ 1224 թ. վախճանուած էին Սմպատ եւ Հասան որդիքը: Զաջուրի միւս որդին Գրիգորը, հաւանօրէն եւ յաջորդը, կալուածական նուիրատուութիւն ունի Վաճառքի սուրբ Ստեփանոս նահատակին, որ շինուած էր 1229 թուին Խաչենոյ տէր՝ Հասան—Ջալալի ձեռքով: Խաչենի Խաղբակեանները այս արձանագրութեան հիման վերայ պէտք է ստորադրուած լինէին Խոխանաբերդի կամ Ներքին Խաչենի մեծ իշխաններին (էջ 17):

Զաջուրի դուստրն էր Վանենի, որի անունը քանիցս յիշատակուեցաւ այս եւ նախընթաց գլուխների մէջ: Այս իշխանուհին անմահացել է հայ դրչութեան արուեստի պատմութեան մէջ իւր երկու մեծադիր, երկաթագիր եւ նկարազարդ նշանաւոր աւետարաններով: Դոցանից մէկը գրուած է ՈՀԳ (=1224) թուին եւ նուիրել է Խորանաշատու հիմնադիր Վանական վարդապետին. սկզբնական յիշատակարանից տեղեկանում ենք (Յաւել. Բ. 4), թէ նա կնութեան էր եկած «Կուկին որդւոյ Արասայ Սեւադեանց իշխանածեանց»: Իսկ միւս աւետարանը գրուած է 1232 թուին Գետկայ վանքում: Սեւադեանց տոհմի մասին տարաբաղդաբար տեղեկութիւններ չունինք, բայց այն հանգամանքը, որ իշխանուհու աւետարաններից մէկը նուիրուած է Խորանաշատի վանքին, իսկ միւսը գրուած է Կայենոյ Գետկայ վանքում, կռուան կարող է լինել ենթադրելու, թէ Սեւադեանք կալուածներ ունէին Մահկանաբերդի կամ Իւանէի իշխանութեան մաս կազմող Կայենոյ գաւառի սահմաններում: Աւելի եւս հաւանական է դառնում այս ենթադրութիւնը նորանով, որ Սեւանայ վանքում գրանւում է ոմն Վանենի իշխանուհու դամբարան, որ հաւանօրէն նոյն պիտի լինի մեր իշխանուհու հետ[2]), իսկ Սեւանը ԺԲ. դարու վերջերում Մահկանաբերդի իշխանութեան հետ կապ պիտի ունենար, որ Բուրդ իշխանի հրամանով այդ վանքի դուռը նորոգուէր[3]):

Մեծ չէ մեր տեղեկութիւնը նաեւ Գրիգոր Խաղբակեանի մասին. Գանձակեցին եւ Վարդան[4]) յիշում են նորա մասնակցութիւնը Գանձակի պատերազմում, որ Իւանէն մղեց նոյն քաղաքի պարսիկներից պատսպարուած Խփչաղների դէմ: Իւանէն յաղթուեց եւ ուրիշների հետ գերի ընկան նաեւ Գրիգոր եւ նորա եղբօրորդին Պապաքը, ինչպէս տեսանք առաջ: Վերջինս սպանուեց, իսկ Գրիգոր ձերբակալուելով, շատ նեղութեան ենթարկուեց, ուրանալու քրիստոնէութիւնը. բայց ոչ միայն յանձն չառաւ, այլեւ անարգել սկսեց Մահմեդի կրօնը, որի համար եւ «քարշեցին զնա մերկ ի վերայ երկրի, եւ փշով քանցեցին զամենայն մարմինս նորա. եւ այնքան տանջեցին զնա, մինչեւ ի զանելն աւանդեաց զոգի իւր»: Գանձակեցին այս պատերազմը նշանակում է 1220 թուից քիչ յետոյ, երբ Թաթարներն առաջին անգամ երեւացին Հայոց եւ Վրաց սահմաններում, իսկ Վարդան 1222 թուին: Բայց մենք տեսանք, որ Գրիգոր Խաղբակեանի յիշատակին կանգնած խաչարձանը կրում է «ՈՁԲ» (=1233) թուականը. դժուար է ընդունել, թէ

---

[1] Բարխ. Արցախ. 169. Սոյն տողերն արդէն տպագրութեան էին յանձնուած, երբ Խաչիկ Ծ. վարդապետից իմացանք, որ նա հաւաքած ունի Կոշիկ անապատի բոլոր արձանագրութիւնները. աչքի անցնելով նրա տետրակը, հանդիպեցանք մի այսպիսի արձանագրութեան.

Այս է հանգիստ իշխան Խէրխանին որդոյ Հասանին թոռին Բաղաց թագաւորի թվին ՉԼԵ (= 1286):

Այստեղ յիշուած Հասանը նոյն պիտի լինի Գեռաքարեցի Հասան իշխանի հետ, որ փեսայացաւ Բաղաց վերջին Գրիգոր թագաւորին, կնութեան առնելով նորա դուստրը Կատային: Այսպիսով հաստատուած կարելի է համարել, որ Կոշիկ անապատն էլ Խաղբակեանների բնագաւառի մասն էր կազմում, ինչպէս ենթադրել էինք առանց այս արձանագրութեան (տ. էջ 17): Այս դէպքում Խէրխանին պէտք է ընդունել սովորականից աւելի երկարակեաց: Մեծարանց վանքի արձանագրութիւնները Խաչիկ Ծ. վարդապետը հրատարակել է Կ. Բասմաճեանի «Բանասէր»ի մէջ: 1901. Փարիզ:

[2] Խաչիկ վարդապետը արտագրել է եւ գծագրել օրօրաձեւ դամբարանի արձանագրութիւնը. «Չ Ժ Ը (=1269) թիվակիսս ! Ես Վանենի դուստր (s!) Զաջուռո», բայց այնքան է եղծուած «Զաջուռ» բառը, որ դժուար է այս մնացորդի վերայ հաստատապէս պնդել նոյնութեան մասին: Մենք անձամբ չենք տեսել եւ քննել այս արձանագրութիւնը:

[3] † Ի թւ. հայոց ՈԻԵ նորոգեցաւ դուռն սբ եկեղեցոյս հրաման/աւ իշխանաց իշխան / Բրդին եւ ձեռամբ Յոհաննիսի հիւսան որք ընթեռնոյք յիշեսջիք»: Լուսանկարուած է մեր կողմից եւ ստուգուած: Համ. Մեսրովբ Արքեպիսկոպոս Սմբատեանց. Գեղարքունիք. Վաղարշ. 1895. 120:

[4] Գանձ. 194. Վարդ. 197:

1222 թուին գերի ընկած Գրիգորը, նահատակուած լինի 1233 թուին: Մնում է ընդունել, թէ խաչարձանը կանգնել են իւրայինները նորա մահուանից բաւական յետոյ՝ յիշատակը յաւերժացնելու համար:

Այդ փառաւոր կոթողը կանգուն էր մինչեւ 1905 թուի հայ թուրքական ընդհարումները, որ սարալանջի բարձրութիւնից իշխում էր ամբողջ ձորակողի վերայ. բայց յետոյ ցած է գլորուած խաչքարը բարձր պատուանդանից եւ երկու կտոր արուած: Մենք առանձին առանձին նկարել ենք կտորները շատ անյարմար պայմաններում եւ միացրել, ուստի եւ կորել են մանրամասնութիւնները եւ միայն ընդհանուր տպաւորութիւնը մնացել (պատկ. 20): Բուն խաչի մեծութիւնն է 2,82×1,17 մետր եւ հաստութիւնը 30 սմ., պատուանդանը հաստատուած ժայռի վրայ քառանկիւնի ձեւ ունի, ճակատը 2,44×2,2 մետր, իսկ կողքը 1,48×1,09 մետր: Պատուանդանի վերայ դրուած է գարնեզը 0,4 մետր բարձրութեամբ եւ ապա սորա վերայ բուն պատուանդանը երկու աստիճանով, որոնցից ներքեւինը 0,34 եւ վերինը 0,42 մետր: Այսպիսով ամբողջ խաչարձանի բարձրութիւնը վեց մետրից աւելի էր: Խաչքարի ճակատին գրուած է. «Ես եմ լոյս աշխարհի», իսկ գարնեզի վրայ, որ դարձեալ ցած է գլորուած, «Թուի ՈՁԲ. Գրիգոր որդի խաղբակա»: Ճակատի գարնեզի տակն է մի խնդրուածքի խմբանկար՝ Δέησις,.: Յիսուս նստած է բարձրաթիկունք աթոռի վրայ, աջից կանգնած է Յովհաննէս եւ ձախից Մարիամ, լուսոյ պսակներով: Յիսուս աջով խաչակնքում է, իսկ ձախով մի գունդ բռնել, վերնազգեստը ձգուած ձախ թեւի վերայով, այսինքն համաձայն հայ եւ բիւզանդական արուեստների մէջ ընդհանրացած ամենակալների (παντοκράτωρ) աւանդութեան: Քարի կեդրոնում քանդակուած է բուն խաչը, սորա տակ գծական կամարի տակ Գրիգոր Խաղբակեանի բարձրաքանդակը ձիու վրայ, երեսը աջ դարձրած, աջին երկար նիզակ, իսկ ձախով ձիու սանձը բռնած. իշխանի գլխին բարձր, սաղաւարտաձեւ գըլխարկ: Ձիու պարանոցի տակից, կրծքի վերայ կախուած է մի զարդ, պոչը հանգոյց արած երեւում է սանձը եւ թամքի զարդարանքը: Խաչքարերի վերայ այդպիսի կենցաղական կամ պատմական բարձրաքանդակներ հազուադէպ չեն, բացի Խաչենից նաեւ ուրիշ տեղերում[1]):



Աղջոց վանք· Պօղոս եւ Պետրոս առաքեալները· ՊԱՏԿԵՐ 25·

---

[1]) Վեդիի ակունքներում Զղին գէոլ կոչուած թուրքաբնակ գիւղի մօտ գտնւում էր մի հոյակապ եւ բարձր խաչքար Ամենա-

Գրիգոր Խաղբակեանի բարեպաշտական հոգացողութեան առարկան եղել է նորա իշխանութեան հոգեւոր կեդրոն Աղջոց Ս. Ստեփանոսի վանքը: Երրորդ գլխի վերջում (էջ 32) ցոյց ենք տուել վանքի ծագման պարագաները. աւելի մանրամասնութիւններ կտանք երբ առիթ կ'ունենանք Խաղբակեանց հոգեւոր կեդրոնների կամ վանքերի մասին խօսել: Բայց այստեղ մեր պատմութեան թելը պահանջում է պարզել Գրիգոր Խաղբակեանի մասնակցութիւնն այդ խնդրում: Շէնքը կառուցուած է 1212—1217 թ. թ., ուրեմն այն ժամանակ, երբ արդէն հաստատուած էր Խաղբակեան կողմնապահութիւնը եւ Քեղուայ ձորը Գրիգոր Խաղբակեանի սեպհականութիւնն էր: Նոր իշխանութեան գլուխ՝ Վասակի օրինակին պիտի հետեւէր եւ կրտսերը, օժանդակ հանդիսանալով իւր իշխանութեան մէջ մի հոգեւոր կեդրոն հաստատելու գործին: Տարաբաղդաբար այն արձանագրութիւնները, որոնք կապուած են Գրիգոր Խաղբակեանի անուան հետ, պակասաւոր են կամ եղծուած, ուստի եւ լիովին գաղափար չենք կազմում իշխանի առատաձեռնութեան եւ շէնքի մասնակցութեան չափի մասին, բայց նշանակուած պատարագների թիւը ցոյց է տալիս, որ նորա օժանդակութիւնը մեծ էր. ինչպէս էլ լինի, այս վանքը շինուած է նորա իշխանութեան առաջին տարիներում, եւ պէտք է Խաղբակեանց ստեղծագործութիւններից մէկը համարել, թէեւ վատ վիճակի մէջ հասած մեզ (պատկ. 19): Գրիգոր Խաղբակեանի անունով մեր ձեռքը երկու մեծ արձանագրութիւն է հասել. դոցանից մէկը զետեղուած է բնականաբար ամենապատուաւոր տեղում՝ դրան կամարակալ քարի վերայ, ուր եւ գտնւում է վերջին դատաստանը ներկայացնող նուրբ բարձրաքանդակ խմբանկարը: Այս արձանագրութիւնը համեմատաբար լաւ է պահուած, բայց եղծուած են եւ հազիւ նկատելի ՌԿԹ թուականի տասնաւորն ու միաւորը, ինչպէս եւ կըրճատուած թւ. բառի առաջին տառը: Արձանագրութեան մէջ նա յայտնում է, թէ «աւդնեցի եկեղեցոյս բազում արդեամբք», որի համար եւ սպասաւորները նշանակել են աւագ խորանի «Ե: շաբաթ եւ Շաբաթ աւրն հանապաղ»: Սոյն արձանագրութեան կցուած է անմիջապէս մի երկրորդը, սակայն առաջին տողերի սկիզբը շատ մաշուած եւ միայն աղօտ կերպով ընթեռնլի «ամուսին Գրիգորո» բառերը: Նա տալիս է «զսբ նշան յեկեղեցիս եւ այլ բազում [արդիւնս]...»: Բարեբաղդաբար մի ուրիշ արձանագրութիւն, դրան աջ կողմի պատի վերայ, պարզում է, թէ ո՞վ էր Գրիգորի ամուսինը. «Ես Զազա (թէ՞ Զազս) մայր Վասակայ եւ կողակից Գրիգորո աւգնեցի տան[ս եւ ետու սպ]ասն պատուական...»2), որի համար եւ սպասաւորները պատարագ են նշանակում «Վարդավառին շաբաթն աւրն եւ կիւրակէ»: Քիչ յետոյ կը տեսնենք, որ Գրիգոր Խաղբակեանն ունէր մի որդի Վասակ անունով, եւ ուրեմն, «մայր Վասակայ եւ կողակից Գրիգորո» Զազան ոչ այլ ոք է, բայց եթէ Գրիգոր Խաղբակեանի ամուսինը: «Մայր Վասակայ» է կոչուած այն պատճառով, որ արձանագրութիւնը գրուած է ամուսնու մահուանից յետոյ: Գրիգոր Խաղբակեանը մի ուրիշ արձանագրութիւն ունի տաճարի հարաւային պատի վրայ դրսից, երկրորդ լուսամուտի (դէպի արեւելք) աջ կողմից, որից երեւում է, թէ մի «մեծ հող» է նուիրել «եւ այլ արդիւնք». արձանագրութիւնը շատ մասերով փչացած է:

Գրիգոր Խաղբակեանի որդին էր Վասակ, որ արդէն յիշատակուած տեսանք մօր արձանագրութեան մէջ. բայց նա ինքն ունի իւր արձանագրութիւնը, տարաբաղդաբար եղծուած եւ վերջին կէսն ի սպառ անընթեռնլի: Բուն տաճարի հիւսիսային պատին կցուած է մի փոքր եկեղեցի Պօղոս—Պետրոս անունով: Երկու առաքեալների բարձրաքանդակները զարդարում են դըրան աջ եւ ձախ կողմերը եւ համեմատաբար մի այնպիսի գեղեցկութեամբ, որ քիչ է պատահում հայ պատկերաքանդակների մէջ (պատկ. 25). հաւանօրէն այդ քանդակներով էլ որոշուած է եկեղեցու անունը: Դրան կամարակալ քարի վերայ գեղագրով դրոշմուած է եղել Վասակի արձանագրութիւնը. յետոյ մի մասը փորագրուած է, մնացածն այդ պատճառով էլ եղծուած եւ միայն հատ հատ տառեր նշմարելի. կարդացւում է այսչափ.

> Թվ. Հ. ԶԺԹ. առաջնոր
> դութի(s!) Երեմիայի ես Վասակ Թոռն
> Ղաղբակայ որդի Գրգրոյ ի նեղ...
> ժամանակ...3)

Հաւանական է, որ շինութեան արձանագրութիւնն է այս. շինողն էլ Գրիգորի որդի Վասակն է, բայց պնդել կարող չենք: Ուրիշ որեւէ արձանագրութեան հետք այս եկեղեցու վրայ նկատելի չէ: Երեմիայի առաջնոր-

---

փրկիչ անունով, տարաբաղդաբար այժմ կործանուած, որ կանգնել է Մամիկոն իշխանը իւր հօր Գրիգոր եւ մօր Մամքանի յիշատակին Մամիկոնեան տոհմից: Պատուանդանի վրայ գտնւում է Մամիկոնի բարձրաքանդակը ձիու վրայ նստած, տես. Strzygowski. die Baukunst der Armenier. 258: Մի ուրիշ խաչքար իշխանական բարձրաքանդակով ձիու վրայ նստած՝ գտնւում է Կոտայքի Ճաթղռան գիւղի մօտ, Ս. Սարգիս կոչուած վայրում: Նման խաչարձանների մասին տես սոյն գրքի էջ 16 և Орбели. Бытовые рельефы եւլն.:

2) փակագծի մէջ առնուած մասերը մենք ենք լրացրել. այս եւ յիշատակուած արձանագրութիւնների ամբողջութիւնը տես Մասն Բ. գլ. Գ:

3) Երկրորդ տողի «Թոռն» բառի ն-ի գլուխը կտրած. երրորդ տողի «Ղաղբակայ» դեղագրով եւ միացած ընդգծուածը: Բազմակէտով նշանակուած մասը կարմիր դեղագրով է եւ եղծուած:

գութեան մասին յիշատակութիւն ունինք եւ ուրիշ աղբիւրից. Վարդան վարդապետ իւր Դանիէլի մեկնութեան յիշատակարանի մէջ գրում է հետեւեալը. «Եւ սկսաք ի ՉԺԶ թու. ի սբ Վիրապին. եւ կատարեցաւ ի ՉԺԷ. առաջի սբ եւ փառաւոր նահատակիս սբ Ստեփանոսիս ի սբ ուխտս Աղչոց վանիցս, յառաջնորդութեան Երեմիայ (s!) գովելի ասպնջականի եւ գոհանալի եղբարց»[1]) :

Եկեղեցու արեւելեան կողմը 1287 *թ. կանգնած մի խաչարձանի պատուանդանի արձանագրութիւնը թուագրուած է ի միջի այլոց* «եւ ի տէրութե տեղոյս պարոն Աշոտոյ». *Թէեւ ուրիշ ցուցում չունինք, բայց անհաւանական չէ, որ «պարոն Աշոտը» Գրիգոր Խաղբակեանի թոռը կամ Վասակ Բ.ի որդին լինի* (*Յաւել. Ա.* 12)[2]) :

Սորանով վերջանում է մեր ծանօթութիւնը Գրիգոր Խաղբակեանի եւ նորա սերնդի մասին :



---

[1]) Ձեռ. էջմ. թ. 2049, 359բ. համ. Շողակաթ. եր. 33: Նոյն յիշատակարանն ունինք եւ Վարագից պատերազմի ընթացքում բերուած եւ այժմ թ. 242 Ձ–ում. բայց սկսման թուականն այստեղ տարբեր է. կարծում ենք գրչի սխալ. «Եւ սկսաք ի ՉԺԳ (թէ՞ զ) թուիս հայոց ի սբ վիրապիս...»:

[2]) Տես մեր յօդուածը «Շողակաթ», Ձագավանից ժողովը. եր. 26:

Է

ՊՌՈՇ ՄԵԾ ԻՇԽԱՆԸ (1223—1284)·

Խաղբակեան տոհմի կողմնակալական իշխանութեան ամենափառաւոր շրջանը Վասակի որդի Պռոշի ժամանակն է։ Ե՞րբ մեռաւ Վասակ եւ ե՞րբ անցաւ նորա տեղը Պռոշ, կարող ենք միայն մօտաւոր ճշգութեամբ որոշել։ Գանձակի պատերազմի ժամանակ 1222 թուին՝ կենդանի էր դեռ եւս Վասակ, թէեւ նորա անունը յիշատակուած չէ մասնակցողների մէջ, եւ հաւանօրէն բացակայ էր ծերութեան պատճառով։ Այրիվանեցին նորա մահը նշանակում է Գանձակի պատերազմից անմիջապէս յետոյ· «փոխեցաւ ի Քրիստոս Վասակ իշխանաց իշխանն եւ էառ զդրոշայն որդի նորա քաջն Պռոշ»[1])։ Գանձակի պատերազմի համար նշանակելով 1221 թիւը, Վասակի մահուան յաջորդող դէպքը Այրիվանեցու մէջ Ջալալէդդինի արշաւանքն է, որ Ատրպատականի սահմաններում հանդէս եկաւ 1222 թուին[2]), իսկ Հայաստան արշաւեց ըստ Գանձակեցու, Վարդանի եւ Օրբէլեանի 1225 թուին[3])· ուրեմն 1223/4 թ· պէտք է պատահած լինի Վասակի մահը։ Հօրից քիչ առաջ վախճանուած էր եւ երկրորդ որդին Մկդէմը· ապա թէ ոչ նա ժառանգ կը հանդիսանար ԺԳ· դարում ընդհանրացած իրաւունքի համեմատ եւ ոչ կրտսեր Պռոշը[4])։ Այրիվանեցու հակիրճ տեղեկութիւնը դրոշակն առնելու մասին մեզ համար շատ թանկագին է։ Կողմնապետութեան կամ սպարապետութեան նշանն էր այդ խաղաղութեան եւ պատերազմի ժամանակ։ Այդպիսի մի երկրորդ տեղեկութիւն տեսանք եւ Մահկանաբերդի իշխանների մասին, որ մի եւ նոյն ժամանակ Տփխիսի քաղաքապետներն էին, ամիրաները կամ շահապները[5])։ Ի՞նչ էր Պռոշեանների զինանշանը· բոլորովին հաստատ յիշատակութիւն չունինք այդ մասին, բայց անհաւանական չէ, որ իրար դէմ կանգնած եւ շղթայուած զոյգ առիւծներ լինէին· զուցէ եւ շղթայուած առիւծ եւ եզ կամ նրանց գլուխները, որոնք կրկնըւում են Պռոշեանների քանդակների եւ մանրանկարչական պատկերագրութեան մէջ։ Շղթայուած առիւծներ ունինք Պռոշ իշխանի վիմափոր եկեղեցիներից մէկի պատի վերայ Գեղարդում կամ Գլաձորի դպրոցի, որ ինչպէս կը տեսնենք, նոյն տոհմի հաստատութիւն էր, Թորոս Տարօնեցու մի սկզբնագրքի մէջ (պատկ· 26· եւ 27)[6] իսկ միւսները տեսանք վերեւ (էջ 24, 25, 26 պատկ· 12, 13, 15)։

Պռոշ շատ խառնակ ժամանակ անցաւ իշխանութեան գլուխը։ Խորազմների շահ քաջ Ջալալէդդինը նեղուած լինելով թաթարներից իւր բնիկ երկրում, անցաւ դէպի արեւմուտք եւ 1222 թուին հաստատուեց Ատրպատականում, իսկ 1224/5 թուին էլ անցաւ Հայաստան։ Հայ եւ Վրացի միացեալ զօրքերը Իւանէ աթաբէկի առաջնորդութեամբ հանդիպեցին նորան Կոտայքում՝ Գառնի աւանի մօտերքը, բայց չարաչար պարտութիւն կրեցին իրենց անփութութեան շնորհիւ· Իւանէն ստիպուած էր տասը մարդով փախչել Բեղուայ բերդը։ Ջալալէդդինը շարունակելով իւր արշաւանքը՝ նուաճեց Տփխիսը, Գանձակը, Նախիջեւանը եւ ապա յարձակուեց Խլաթի եւ Հռոմոց (Փոքր—Ասիայի) սուլթանութիւնների վերայ։ Այստեղ հաղիւ Խլաթի, Հռոմոց եւ Եգիպտոսի սուլթանների միացեալ ուժերով, որոնց մասնակից էին Կիլիկիայի Հայեր և իշխաններ, կարողացան կոտրել նորա թափը։ Ջալալէդդինն ստիպուած էր ետ դառնալ Մուղանի դաշտը՝ ձմերելու· բայց թաթարներն այնտեղից էլ փախցրին նորան դէպի Ամիթ, ուր եւ գտաւ նա իւր վախճանը 1231 թուին։ Մենք չենք տալիս Ջալալէդդինի արշաւանքի մանրամասնութիւնները, մեր նիւթից դուրս համարելով· բաւական է յիշել, որ այս արշաւանքներն ու նոցա հետ

---

[1]) Այրիվանեցի· եր· 65։

[2]) Стэнли Лэн—Пуль, Мусульманския Династии. перев. В. Бартольд. СП. 1899. стр. 150.-А. Мюллер (Ист. Ислама. III. 241) Ատրպատականի տիրապետութիւնը նշանակում է հիջրայի 625 թ·, իսկ վրացիների (եւ Հայոց) հետ ընդհարումը 626 թ·։

[3]) Գանձ· 211· Վարդ 187· Օրբ· 399։

[4]) Գոշ Մխիթար· Դատաստանագիրք Հայոց· հրատ· Բաստամեանի· Վաղարշպ· 1880· 300· Համ· մեր յօդուածը Христ. Восток Т. II. вып II. Потомство Тарсаича Орбеляна и Минахатуны. 1913. 225.

[5]) Ալիշ· Հայապատում· 390։

[6]) Ձեռ· էջմ· № 182/206· 463ա։

կապուած արհաւիրքները եօթ տարի տեւեցին (1224—1231) *ըստ Օրբէլեանի, իրօք մի քիչ էլ աւելի*[1]):

Ջալալէդդինի արշաւանքներից երկիրը շունչ չառած, երեւացին աւելի սոսկալի թշնամիներ՝ Թաթարները: Նոքա մի անգամ արդէն երեւացել էին Հայաստանի սահմաններում եւ 1220 *թ. ընդհարուել Վրաց եւ Հայոց զօրքերի հետ Իւանէի առաջնորդութեամբ*[2]): *Կրկին երեւացել* 1231 *թ. իբրեւ Ջալալէդդինի հալածողներ:* 1232/3 *թ. նոքա կործանում են Գանձակը*[3]):



Բարձրաքանդակ առիւծներ Գեղարդում. ՊԱՏԿԵՐ 26.

Իսկ կարգաւորեալ արշաւանք դէպի Հայաստան սկսում են 1235/6 *թ. թ.*[4]): *Գանձակից յետոյ հետզհետէ Թաթարների ձեռքն անցան հայ իշխանութիւններն իրենց կենդրոններով եւ բերդերով, նախապէս բաժանելով իրենց մէջ իւրաքանչիւր գնդի նուաճելիք մասերը: Հայ իշխաններն անպատրաստ, իւրաքանչիւրն իւր անձի պահպանութեան մասին էր միայն մտածում. Վահրամ իւր որդի Աղբուղայի հետ թափառում էր անծանօթ վայրերում՝ Շամքորն ու մնացած բերդերը բաղդին թողած. Զաքարէ մեծի որդին Շահնշահ՝ Լոռին յանձնելով իւր աներներին, ինքն ամրացաւ որդիների հետ ձորերում եւ այրերում. Իւանէի որդի Աւագը, որ մեծ իշ-*

---

[1]) Գանձակեցին մեր պատմիչների մէջ ամենից աւելի մանրամասն է խօսում այս արշաւանքների մասին, բայց առանց նշանակելու թուականը (221—217). մի յիշատակարան (Նշխարք մատենագրութեան Հայոց. Ք. Պատկանեան. Սպ. 1884. եր. 69) տալիս է ճիշդ թուականը. *«Արդ ի յայսմ ՈՁ* (=1231) *ամի էլաւ ազգ մի որ կոչի Թաթար եւ փախստական արար զՊարսկաց թագաւորն...»*: Ջալալէդդինն այստեղ Պարսկաց թագաւոր է կոչուած, որովհետեւ իւր բնիկ երկրից հալածուելուց յետոյ՝ իրօք նուաճել էր նա Պարսկաստանն ու Ատրպատականը և մի նոր պետութիւն հիմնել: А. Мюллер (*История Ислама. Т. III. Ст 244*) Ջալալէդդինի մահը նշանակում է 16 Օգոստ. 1231 թ.:

[2]) Գանձ. 190:

[3]) Գանձակի առումը յիշուած է վանենու Հաւապտկին նուիրուած աւետարանի յիշատակարանի մէջ (Ցաւել. Բ. 3) *«Ցայսմ ամի եկն ազգն նետողաց, եւ զը ! մայրաքաղաքն Գանձակ հիմն ի վեր արարեալ, կոտորեաց զմարդ եւ զանասուն եւ զբազումս ի քրիստոնէիցն»*:

[4]) Թաթարների արշաւանքը Վարդան (189) նշանակում է 1235 թ. իսկ Օրբէլեան (402), Այրիվանեցին (66) եւ մի անյայտ, բայց Այրարատի եւ Անիի նուաճման ականատես հեղինակ (Նշխարք Մատենագրութեան Հայոց. Ք. Պատկանեան: Սպ. 1884, եր. 71) 1236 թուին. տես եւ Ալիշան. Շիրակ. եր. 102:

տատուած աստիճաններ: Եկեղեցու երկարութիւնն է ափսիդով 1 մ· 35 սմ·, լայնութիւնը 7 մ· 95 սմ·: Ափսիդի խորութիւնը 3 մ· 66 սմ·, բուն բացուածքը 4 մ· 48 սմ·, իսկ արտաքին բացուածքը եզերող կիսասիւնից կիսասիւն 5 մ· 10 սմ·: Հիւսիսային պատը արեւելեան ճակատից դէպի արեւմուտք, երկու կիսասիւների մէջ եղած տարածութիւնը 4 մ· 10 սմ·, ապա մինչեւ արեւմտեան կիսասիւնը 2 մ· 65 սմ·: Արեւմտեան թեւի հիւսիսային եւ հարաւային պատի մէջ եղած տարածութիւնն է 5 մետր: Պատի հաստութիւնը 98 սմ·, իսկ աւանդատների դռների լայնքը 92 սմ·:

Իւրաքանչիւր պատի վերայ կայ մի մի նեղ եւ երկարաւուն լուսամուտ եւ չորս աւանդատների պատերի վերայ մի մի փոքրիկ լուսամուտ, ինչպէս ցոյց է տալիս պատկերը հարաւային եւ արեւմտեան պատերով (պատկ· 23): Յատակագիծ պատրաստել անկարելի էր, յատակագծերը ծածկուած լինելով, եկեղեցու ներսը լցրած փլատակի քարերով:

Վասակ Խաղբակեանը չբաւականացաւ իւր կաթուղիկէի շինութեամբ· հարաւային պատի մեծ արձանագրութեան համեմատ (պատկ· 3· Յաւել· Ա· 4), նա իւր եկեղեցին զարդարեց պէսպէս սպասներով, խաչերով, նուիրեց գանձագին մի գիւղ, անունն անյայտ, արձանագրութեան այդ մասը կտրուած լինելու պատճառով, մի այլ Երեւանում, մի ուրիշը Նորաշէնք գիւղում: Նորա օրինակին հետեւեց եւ ամուսինը Մաման՝ նուիրելով մի այլ Երեւանում· արձանագրութեան այս մասն էլ թափուած է, եւ մենք ուրիշ աղբիւր չունինք որոշելու, թէ ո՞ւմ դուստրն էր Մաման· սորա յիշատակին, որդին Հասան—Պռոշ նուէրներ ունի տուած Կոշիկ անապատին 1244 թ·, Դսեղի Բարձրաքաշ Ս· Գրիգորին եւ Կարբու Յոհաննայ վանքին 1247 թ·: Օրբէլեանը նոյնպէս յիշում է, թէ ինչպէս Սիւնեաց Ստեփանոս եպիսկոպոսի՝ Ածոպի Պետրոս եպիսկոպոսի մօտ գրաւ դրած «զՏէր Յովհաննիսի զաւագ խաչն եւ զթիթեղնակապն եւ զկամարակապն», որոնցից «թիթեղնակապն ունէր թիթեղունս ոսկի ի վերայ երեսացն եւ կամարակապն կամար ակնաձեւ թեւէ ի թեւ», իւրացնում է Վասակ, «թիթեղնակապն ու կամարակապ»ը դնելով «յիւրում վանս ի Կեչառուս ուխտի», իսկ աւագ նշանը նուիրում աթաբէկ Իւանէին: Սիւնեաց Սարգիս եպիսկոպոսն ու Լիպարիտ Օրբէլեան 1000 կարմիր դահեկան տալով Իւանէին, հազիւ կարողացան ետ ստանալ միայն վերջինը[1]: Արձանագրութեան մէջ յիշուած Տ· Գրիգորիսի եւ Գրիգոր վարդապետի մասին կը տեսնենք յետոյ, երբ առիթ կ՚ունենանք վանքի մասին՝ իբրեւ հոգեւոր կեդրոնի՝ խօսելու:

Վասակի եւ Մամայի որդիքն էին ըստ արձանագրութեան «Պապաք, Մկդէմ եւ Հասան՝ երկանուն Պռոշ», որոնց մասին տեղեկութիւններ են տալիս Կիրակոս, Այրիվանեցին, միայն Պապաքի մասին նաեւ Վարդան: Դոցանից Պապաքը 1222 թուին ընկաւ Խըփչաղների դէմ մղած պատերազմի մէջ· Գանձակեցին պատմելով այս դէպքը, աւելացնում է· «զի երեք որդիք էին Վասակայ՝ Պապաքն, Մկդէմ, Հասան, զոր Պռոշն կոչէին, արք քաջք եւ անուանիք, որ յահէ նոցա դողայր ամենայն զօրն Տաճկաց»[2]: Վարդան եւս յատուկ չեշտում է Պապաքի քաջութիւնը· Գրիգոր Խաղբակեանի հետ Խփչաղները բռնեցին «եւ զեղբօրորդին իւր զարիականն եւ զքաջ նահատակն Պապաքն անուանեալ»[3]: Իսկ Այրիվանեցու խօսքերը հօր եւ որդիների մասին տեսանք առաջ: Տարաբաղդաբար սրանց կատարած քաջագործութիւնների մանրամասնութիւնները չգիտենք· ոչինչ չգիտենք յատկապէս Մկդէմի մասին, որ կենդանի պիտի լինէր դեռ եւս 1222 թուին: Պապաք յիշւում է հօր հետ ՈԿԹ=1220 թուին՝ Գեղարքունեաց Ղարանլուխ գիւղի մօտ Գաղան Լոռեցու կանգնած խաչքարի արձանագրութեան մէջ որպէս իշխանակից, «ի յիշխանութիւնն Վասակայ եւ որդոյ իւրոյ Բաքաքին…»[4]: Պապաքն անձամբ եւս նուիրաբերութեան նոյնիմաստ երկու արձանագրութիւն ունի թողած Վեդիի վերին ակունքներում Զղինդէօլի շրջանի Աղքիլիսա Թուրքարնակ գիւղի եկեղեցու վրայ, տալով «մին եզն», «մին չինական», Գոմին մարդն ու Յրդուտը եւ ստանալով չորս ժամ իւր հօր Վասակի համար (Յաւել· Ա· 11):

Կաթուղիկէի հարաւային պատի արձանագրութիւնը մեզ տալիս է աւելի կարեւոր տեղեկութիւններ Վասակի, նորա եղբայրների, որդիների եւ կնոջ մասին· «եւ ածատուրք եղբարքն իմ հարազատք Զաջուռն եւ Գրիգոր եւ սիրելի որդիք իմ հարազատք Պապաքն, Մքդէմ եւ Հասան, երկանուն Պռաւշ, տէրամբ պահպանեալ եղիցին այժմ եւ յաւիտեանս ամէն»: Երկրորդ գլխի մէջ (էջ 16·17) տեսանք Զաջուռ Խաղբակեանի եւ Վասակի արձանագրութիւնները· սորանով հաստատւում է այս Վասակի ծագումը Հաւապտկի կամ Գեռաքարի Խաղբակեաններից, եւ հարազատ եղբայրութիւնը Զաջուռ Բ· Խաղբակեանի հետ, եւ ապա Զաջուռի եւ Գրիգորի զինակցութիւնը իրենց աւագ եղբօրը՝ նորա պատերազմական գործողութիւնների մէջ, հաւանօրէն Բջնիի, Քեղուայ եւ Վայոց ձորերի նուաճման ժամանակ:

Զաջուռի որդի Գրիգորը Վաճառքում թողած իւր արձանագրութեան մէջ հօրն անուանում է «քաջ զաւրական» (էջ· 17)· Զաջուռը Խաչենում զինուորական գործողութիւնների մասնակցելու առիթ չունէր: Խաչենն ազատ էր Խոխանաբերդի եւ Հաթերքի իշխանների ղեկավարութեամբ Զաքարեանների հանդէս գալու ժամանակ: Գանձակի պատերազմին Խաղբակեաններից մասնակցում էին Գրիգորն ու Վասակի որդի Պապաքը·

---

[1] Օրբ· 352—354:

[2] Գանձ· 194:

[3] Վարդ· 187:

[4] Ազգ· Հանդէս, XVII· № 2· 1908· էր· 152:

թիւնը իրենց հարկապահանջութեամբ, կեղեքումներով եւ կամայական կառավարութեամբ, բայց եւ այնպէս քառասնական թուականներից արդէն մի modus vivendi էր կազմուած նրանց եւ հայ իշխանների մէջ եւ հետզհետէ կեանքը տանելի դարձել:


Գեղարդի պահարանի արձանագր· ՊԱՏԿԵՐ 28· Յաւել· Ա· 15·

Քաղաքական այսպիսի վիճակի մէջ էր երկիրը, երբ Պռոշ իշխանութեան գլուխն անցաւ: Պատմական որեւէ ցուցում չունինք, թէ Պռոշ մասնակից եղաւ Ջալալէդդինի դէմ մղուած պատերազմին Գառնիի մօտ: Բայց միանգամայն հաւանական ենք համարում այդ: Եթէ Լիպարիտ, աւելի հեռու ընկած Օրբէլեան իշխանութեան պետը, մասնակից էր այդ մարտին, որչափ եւս Պռոշ, որի սահմանների մօտ հանդիպեցան երկու հակառակորդները: Գուցէ եւ Իւանէի տաս մարդկանցից մէկը, որոնց հետ ազատուեցաւ Քեղուայ ամրութիւնների մէջ, Պռոշն էր· որովհետեւ այդ բերդը, ինչպէս տեսանք, գտնւում էր Գրիգոր Խաղբակեանի, իսկ այդ ժամանակ նորա որդու, իշխանութեան սահմանում: Յամենայն դէպս, Խորազմներից վրէժ լուծելու պատիւն ու բաղդը վիճակուած էր Պռոշին· «մտանէ Պռոշ ի Դուին եւ կոտորէ զխորազմն եւ զՏաճիկն», նշանակում է Այրիվանեցին իւր ժամանակագրութեան մէջ, Ջալալէդդինի տարած այս յաղթութիւնից անմիջապէս յետոյ, միակ աղբիւրը այս իրողութեան համար: Ժամանակի վերաբերութեամբ կարող ենք դնել 1226—1228 թ· որովհետեւ նոյն Այրիվանեցին Խլաթի գրաւումը դնում է այս դէպքից յետոյ, իսկ ուրիշ աղբիւրից գիտենք, որ այդ կատարուել է 1228/9 թուին[1]:

Թաթարների սկզբնական արշաւանքների ժամանակ ի՞նչ դիրք էր բռնել Պռոշ, դարձեալ անյայտ է մեզ· բայց անշուշտ նա միւս իշխանների հետ հետեւեց Աւագի օրինակին, մանաւանդ որ վերջինս նորա «պատրոնն» էր: Գանձակեցին չէ յիշում հպատակուող իշխանների թւում նորան, ինչպէս եւ չէ յիշում Օրբէլեաններին, բայց «եւ այլք բազումք»ի մէջ պէտք է հասկանալ անպայման եւ սրանց: Զարմանալի է, նորան յիշատակուած չենք տեսնում նաեւ Թաթարների քառասնական թուականների արշաւանքներին մասնակցող հայ իշխանների ցանկում՝ Բաչուի առաջնորդութեամբ· արդեօ՞ք իբրեւ Աւագի ստորադրեալ զօրավար կամ սպարապետ չէ յիշատակւում, թէ իրօք մասնակից չէ եղել ոչ մի արշաւանքի մինչեւ 1258 թիւը: Այս վերջին ենթադրութիւնն ամենեւին հաւանական չէ· որովհետեւ Գանձակեցին Բաղդատի գրաւման առթիւ գրում է նորա մասին, «մեծ պատուով պատուեալ յաչս Ղանին», որ նորա անցեալ ծառայութեան արդիւնք միայն կարող էր լինել: Մանկու խանը 1251 թուին գահ բարձրանալով, իւր եղբօր Հուլաղուին Պարսկաստանի եւ դրացի երկիրների կառավարիչ նշանակեց ժառանգական իրաւունքներով: Հուլաղուի առաջին գործը եղաւ Բաղդատի խալիֆայութեան դէմ արշաւանք սկսել, որին

---

[1] Ձեռ· էջմ· թ· 589: Նոր Ցուց· Ոմն Վարդան վարդապետի՝ Տօնականի ստացողի՝ յիշատակարանում նշանակուած է Խլաթի պաշարման եւ առման ճիշդ թուականը· «*Յայսմ ամի* («*ի ՈՀԸ*»= 1128/9·) *Խորազմ շահն բազում զաւրաւ աւարեաց եւ անմարդ արար եւ անթիւ զաւրաւք պաշարեաց զԽլաթ եւ առնի մեծ նեղութե*»· Քիչ յետոյ նոյն ձեռքով, բայց տարբեր թանաքով աւելացրած է «*որ եւ առ ի նոյն ամի*»: Վարդան վարդապետը Տուրուբերանի Խարձի անապատից էր, ուր յիշւում է նաեւ Ղազար վարդապետ, որ գրիչ Յովհաննէս քահանայի վարդապետն է: Յիշւում է եւ հայր Կարապետ, «սուրբ է ընտրեալ եւ պատուեալ կրաւնաւոր եւ հմուտ եւ յառաջադէմ յարհեստ գրչութեան»· նաեւ «հայր Խարձի անապատին» Թէոդոս հայր եւ ուրիշները: Տօնականը մեծադիր է, թուղթ, արեւելեան, խոշոր, վարժ եւ ընտիր բոլորգրով (անցման երկաթագիր):

մասնակից եղան Շահնշահի որդի Զաքարէն եւ Պռոշ իշխան: Վերջինս այն դեսպաններից մէկն էր, որ Հուլաղուի կողմից ուղարկուեցաւ Մուսթասար խալիֆայի մօտ՝ առաջարկելու նորան անձնատուր լինել: Գանձակեցու աղբիւրն էլ Բաղդատի առման նկատմամբ Պռոշն է եղել, «որ ականատես եւ ականջալուր էր իրացս[1]): Երկրորդ արշաւանքը, որին մասնակից եղաւ Պռոշը, Մուֆարղինի կամ Նփրկերտի դէմ էր, որի պաշարման Օրբէլեանին մասնակից է համարում և Աւագին, Շահընշահին եւ Ելիկումին· բայց այդ սխալ է· Աւագ մեռած էր արդէն 1250 թ·, մեռած էր նաեւ Ելիկում Օրբէլեան եւ նորան յաջորդել էր եղբայրը՝ Սմբատ· ուրեմն եւ չէին կարող սոքա մասնակից լինել այդ քաղաքի առման, որ կատարուեց 1258—1260 թ· թ·[2]): Շփոթութիւն պիտի լինի նաեւ Օրբէլեանի կողմից Շահնշահի մասնակցութիւնը, որովհետեւ Գանձակեցին պարզ յայտնում է, թէ զօրքի գլխաւորներն էին թաթարների կողմից Ջաղատան, «եւ ի քրիստոնէից իշխանն Պռոշ, զոր Հասան կոչէին»: Շահնշահը չէր կարող ստորադըրւած լինել Զաքարեանց սպարապետ եւ կողմնապահ համարուող Պռոշին· բայց Պռոշին օժանդակ են եղել անշուշտ ուրիշ հայ իշխաններ, որոնցից մէկի անունը՝ Գրիգոր որդի Սեւադայի, Խաչենոյ իշխաններից, յիշում է Վարդան[3]), «որ քաջապէս մարտուցեալ», ընկաւ պատերազմի դաշտում· ահա այն բոլորը, ինչ որ գիտենք Պռոշի զինուորական և քաղաքական գործունէութեան մասին:



Պռոշի արձանագր· Գեղարդի վիմափոր ժամատանը· ՊԱՏԿԵՐ 29·

Սակայն այն աւանդութիւնները, որ կապուած են Պռոշի անուան հետ, ապացոյց են, թէ նա մեծ ժողովրդականութիւն էր վայելում, որ կարող էր նորա ընդարձակ եւ փառաւոր գործունէութեան հետեւանք լինել[4]): ԺԳ· դարու վերջում ապրող Խաչատուր Կեչառեցին արդէն իր «Ողբ իշխանացն Հայոց» ոտանաւորի մէջ պատկերացնում է նորան որպէս ժողովրդական հերոսի·

Զպարոն Պռաւշն զարդ հեծելի·
Որ զերկաթի դուռն առնէր փոշի·
Աջ ու բազուկ էր նոր Սիոնի·
Հիմքն հաստատ հայոց հաւատի:

Պռոշի գործունէութեան երկու բնորոշ կողմերն ամփոփուած են այս տողերի մէջ, իբրեւ զինուորականի եւ եկեղեցու պաշտպանի: Զարմանալի է, որ ոչ նա եւ ոչ միւս պատմիչները նորա կեանքի մի երրորդ կողմի մասին յիշատակութիւն չունին: Միայն Այրիվանեցին

---

1) Գանձ· 368:

2) Օրբ· 404, 414, Գանձ· 305, 369, Վարդ· 194:

3) Վարդ· 199:

4) Գարեգին եպ· Սրուանձտեանց· Համով—Հոտով Թիֆլիս· 1904· 85/6: Էփրիկեան· Բնաշխարհիկ բառարան· «Խաչլուայ լճակ»· Վենետիկ· 1907, 107: Ստ· Կանայեան· Ջոջանց տուն· Վաղարշ· 1910· Յառաջաբան· Ի·:

է, որ անուանում է նրան «աշխարհաշէն իշխան»[1]): Խաչատուր Կեչառեցուն չէր կարող անծանօթ լինել նորա այս գործունէութիւնը, որ ծագումով, ինչպէս կը տեսնենք, Խաղբակեան էր եւ նոյն իշխանութեան մէջ աշխատող վարդապետ:

Պռոշի եկեղեցու հետ կապ ունեցող գործերից գիտենք երկուսը: Օրբէլեան պատմում է, թէ ինչպէս նա «զիւր գաւառն եւ զգեղանսն, որ ի Վայոց ձոր, կամէր յափշտակել եւ այլում եկեղեցւոյ ժառանգեցուցանել»· ուրիշ խօսքով նա կամենում էր Օրբէլեանց հոգեւոր տեսչութիւնից ազատել իւր գիւղերը: Այս մտքի գործիք հանդիսացաւ Ապրակունիսի Սեդրաք անունով քահանայի որդին՝ Յովհաննէս, որ Կոստանդին կաթուղիկոսից եպիսկոպոս ձեռնադրուեց եւ հաստատուեց Երնջակում՝ առարկելով, թէ այնտեղ եւս Սիւնեաց եպիսկոպոսներ կան թաղուած: Բայց սորա հովուութիւնը երկար չտեւեց: Տարսայիճ Օրբէլեանի օժանդակութեամբ Սիւնեաց Սարգիս եւ Յովհաննէս եպիսկոպոսները գնացին Յակոբ կաթուղիկոսի մօտ (1268—1286), որ յաջորդել էր Կոստանդին Բարձրբերդցուն, նզովեց Յովհաննէս Երնջակեցուն, «նմանապէս եւ առ իշխանն Պռոշ գրէ թուղթ, մեղադրելով զինքն եւ զորդիս իւր· և հրամայէ ի բաց կալ յայնմ մտածութեանց»: Սիւնեաց եպիսկոպոսները «մատուցին զնամակն Պռոշոյ· եւ նա ըստ հանճարեղ մտացն եւ մեծայոյս հաւատոյն» զղջաց, ետ կացաւ այդ մտքից, «եւ դարձոյց անդրէն ըզթէմն եւ օրհնեալ յեպիսկոպոսացն»[2]): Այս դէպքը պէտք է պատահած լինի 1273 թուից յետոյ, երբ Տարսայիճ իշխանութեան գլուխն անցաւ իւր եղբօր՝ Սմբատ արքայի մահից յետոյ: Այս հանգամանքը բնորոշում է Պռոշ իշխանի դիրքը: Սմբատի եւ Տարսայիճի ժամանակ Օրբէլեանք զօրեղ իշխանութիւններից մէկն էին: Բայց Պռոշ չի քաշւում նրանց եպիսկոպոսներից խլել իւր գիւղերը եւ այլ վիճակ հաստատել:



Պռոշի մեծ արձ· Գեղարդի վանքում· ՊԱՏԿԵՐ 30· Յաւել· Ա· 17·

Երկրորդը Ջագավանից ժողովի հովանաւորութիւնն է: Յայտնի է, որ Իւանէ Աթաբէկը եւ յետոյ նաեւ իւր եղբօրորդի Շահնշահ քաղկեդոնականութիւն ընդունեցին[3]): Դրանց հակառակ իշխանական տոհմերից ոմանք ոչ միայն հաւատարիմ մնացին մայրենի եկեղեցուն, այլ եւ պաշտպան հանդիսացան: Այդպիսի տոհմերից նշանաւորներն էին Օրբէլեանք, Պռոշեանք, Վաչուտեանք, Արծրունիք կամ Մահկանաբերդի իշխանները: Այդ հովանաւորութիւնը աւելի զօրացաւ, երբ Աւագի մահուամբ ընկաւ Զաքարեանց տան զօրութիւնը եւ աթաբէկութիւնն անցաւ նախ Սադուն իշխանին եւ ապա Տարսայիճ Օրբէլեանին: Այդ է պատճառը, որ հայ վարդապետները իրենց քարոզների մէջ կամ գրութիւնների վերջում բարեմաղթութիւններ են անում իշխանների եւ նրանց հեծելազօրքի մասին: Վարդան իւր Դանիէլի մեկնութեան վերջում յիշում է «երախտաւոր պարոնացն Սադունին (Արծրունի), Սմբատայ (Օրբէլեան), Քրդին (Վաչուտեան), Պռոշայ...»[4]), այդպիսի յիշատակութիւն ունի նաեւ Երգ· Երգոցի վերջում[5]): Հաղբատի եւ Ջագավանից ժողովներն էլ գումարուած են Սադուն, Պռոշ եւ Սմբատ իշխանների հրամանով եւ հովանաւորութեամբ: Իսկ ԺԳ· դարու վերջում ընդդէմ

---

[1]) Այրիվանեցի· եր· 68:

[2]) Օրբ· 365/6:

[3]) Գանձ· 157, Վարդ· 181, 183/4:

[4]) Շողակաթ· 1913 թ· «Ջագավանից ժողովը» եր· 45: Ձեռ· էջմ· թ· 1520· 116 ա·, թ· 2049, 359բ:

[5]) Ձեռ· Լիմ անապատի· այժմ էջմ· Ն· 8· թ· 55:

Գրիգոր Անաւարզեցու գումարուած ժողովին մասնակից էին նոյնիսկ Օրբէլեան եւ Պռոշեան տան իշխանները։ Վերեւ յիշուած երկու ժողովների մասին մինչեւ վերջերս միակ յիշատակութիւն ունէինք Այրիվանեցու մէջ. «ի ղանութեան Ապաղային (1265—1282) եւ ի կաթուղիկոսութեան տեառն Յակոբայ (1267/8—1287) արարին ժողով ի Հաղբատ եւ ի Ջագավանս». բայց այժմ արդէն գտնուած են Ջաղավանից ժողովի կանոնները եւ հրատարակուած մեր կողմից. ժողովը գումարուած է 1270 թ. «յաշխարհակալութեան Ապաղ ղանին կամաւք եւ հրամանաւ պարոն խոշաքին (Աւագի դուստրը, որի իշխանութեան մէջ էր Ջագավանքը) եւ իշխանաց մերոց մեծին Պռաւշայ եւ Սադունին և Սմբատայ»։ Հաղբատի ժողովն էլ պէտք է վայելէր առնուազն Սադունի հովանաւորութիւնը իբրեւ տեղական իշխանաւորի եւ ժամանակի Աթաբէկի1)։

Արդէն տեսանք, որ Պռոշ Այրիվանեցու կողմից «աշխարհաշէն իշխան» է կոչուած եւ մեր պատմիչների մէջ ոչ մի տեղեկութիւն չունինք այդպիսի կոչումը բացատրող։ Այդ պակասը լրացնում են արձանագրութիւնները։ Պռոշի անուան յիշատակութեամբ ամենահին արձանագրութիւնը գտնւում է Խաչենի Կոշիկ անապատի վանքում՝ 1244 թուից, ուր յայտնում է, թէ նուիրել է խաչ, աւետարան, տօնապատճառ եւ միաբանները վեց օր Սուրբ խաչին ժամ են նշանակել մօրը, իւր մեռնելուց յետոյ իրեն2)։ Երկրորդը Դսեղի Բարձրաքաշ Ս. Գրիգորի մի արձանագրութիւնն է 1247 թուից, ուր յայտնում է, թէ «էտու ի շինութի տանս։ Ճ։ դէկան»3)։ Նոյն թուականին մի այլ արձանագրութիւն ունի Կարբու Յոհաննայ վանքում, որ առաջին անգամ գրի է առնուած եւ լուսանկարուած մեր կողմից։ Արձանագրութիւնը գտնւում էր տաճարի ներսը հարաւային պատի վերայ՝ ուրիշ կարեւոր մեծ արձանագրութիւնների հետ, որ այժմ, աւա՜ղ, փլուած է։ Արձանագրութիւնից իմանում ենք, որ ՈՂԶ (1247) թուին «Պռաւշ որդի մեծի իշխանին Վասակա» միաբանել է Յոհաննայ վանքին նուէրներով եւ տարին տաս պատարագ ստացել «յանուն մաւր իմո Մամաքին» (Յաւել. Ա. 14)։

Բայց Պռոշի շինարարական մեծագործութեան կենդանի վկաները Գեղարդի վիմափոր տաճարներն են եւ Թանատի վանքը Վայոց ձորում. նորա երկու մեծ արձանագրութիւնները Գեղարդի վանքում բաւական տեղեկութիւններ են տալիս մեզ այդ մասին։ Դրանց վերայ աւելանում է Գեղարդի պահարանի արձանագրութիւնը, որ կարեւոր աղբիւր է վանքի եւ Պռոշի պատմութեան համար (Յաւել. Ա. 15. պատկ. 28)։ Ունինք եւ ժամանակակից եւ ականատես Մխիթար Այրիվանեցու տուած տեղեկութիւնը վիմափոր եկեղեցիների մասին Ստեփանոս Սիւնեցու վկայաբանութեան մէջ4)։ Առաջին արձանագրութիւնը գտնւում է վիմափոր արեւմտեան ժամատան հարաւային պատին՝ ներսից. արձանագրութեան մակերեւոյթն սպիտակացրած է եւ կարմիր տողերի մէջ փորագրած (Յաւել. Ա. 16. պատկ. 29). վերին ճակատին նոյնիսկ գունաւոր օրնամենտներ կան, իբրեւ որմնանկարչութեան փոքրիկ մնացորդներ. վերջին տողի մէջ «իմ մուլքն գամէն տվի ի դուռն սբ Գեղարդի», ինչպէս նոյնատիպ պատկերից էլ երեւում է, յետոյ աւելացրած եւ կեղծիք է5)։

Կոստանեան սխալմամբ արձանագրութիւնը նշանակում է 1214 թուին6)։ Արձանագրութիւնը թուական չունի։ Մենք թէպէտ հնարաւորութիւն չունինք նորա ծագման ճիշդ թուականը դնել, բայց ԺԳ. դարու քառասնական թուականներից առաջ կարելի չէ ընդունել։ Արձանագրութիւնը թուագրուած է «ի տէրութեան բարէպաշտ և ածասէր թագաւորին վրաց Աւագին և Շահընշահի եւ որդո նորա Զաքարիայի»։ Սոցանից Աւագի իշխանութեան տարիներով միայն կարելի է որոշել արձանագրութեան ամենից վաղ եւ ամենից ուշ ծագման ժամանակը։ Շահնշահ եւ նորա որդի Զաքարիան վախճանուած են Աւագից շատ ուշ։ Օրբէլեանը Իւանէի մահը նշանակում է 1227 թուին, իսկ Աւագի իշխանութեան տեւողութիւնը 23 տարի, ուրեմն 1227—1250։ Աւագի մահուան թուականը տալիս է նաեւ Վարդան, իսկ Գանձակեցին մօտաւոր կերպով7)։ Բայց այլ բան են ասում արձանագրութիւնները. անշուշտ սխալ է Կ. Վ. Շահնազարեանի յայտնած տարակոյսը Դսեղում թողած Պռոշի արձանագրութեան հիման վերայ, Ջալալեանի ակներեւ սխալ ընթերցանութեան պատճառով8). 1247 թուին Իւանէն երբեք կենդանի լինել կարող չէր, բայց նոյնչափ սխալ է Իւանէի մահը 1227/9 թուին ընդունել։ Շիրակաւանի երկու արձանագրութեան համեմատ Իւանէն կենդանի էր ՈՀէ=1228 եւ ՈՁ (=1331) թուին9). կենդանի էր նաեւ ՈՁԱ (1232) թըւին, երբ Գետկայ վանքում «յիշխանութիւն իշխանաց իշխանին աթաբակ Իւանէի եւ որդւոյ նորա Աւագի» գրուեց Հաւապտկի աւետարանը (Յաւել. Բ. 3)։ Ստե-

---

1) Այրիվանեցի, 68. Շողակաթ. Ջագավանից ժողովը. 41. 26։

2) Բարխ. Արցախ. 169։

3) Ջալ. Ա. 112. գրի առնուած եւ ստուգուած մեր կողմից. (Յաւել. Ա 13)։

4) Համ. մեր Գրչութեան Արուեստը § 30. Յայսմաւուրք, Աշոտ Յովհաննիսեանի մօտ։

5) Արձանագրութիւնը նոյնատիպ հրատարակել է I. Орбели. X. B. 1917. 150։ Համ. Շահխ. Բ. 285, Ստ. Վ. Մխիթարեան 37. Ալիշան. Այր. 341. Уварова-ի Матер. по Арх. Кавказа XIII. 13:

6) Վիմական տարեգիր 56։

7) Օրբ. 398։ Վարդ. 194. Գանձ. 305. Ջամչեան, Գ. 204. 1229 թ. է ընդունում Իւանէի մահուան տարին։

8) Օրբ. Բ. 334. իւր հրատարակութեան. Ջալ. Ա. 112։ Ուղիղ ընթերցուածը տ. Յաւել. Ա. 13։

9) Շիրակ. 10. Վիմական Տարեգիր, 74։

վանոս գրիչն ապրում էր Գետկայ վանքում, Իւանէի իշխանութեան մէջ, չէր կարող անտեղեակ լինել կամ չարտայայտել որեւէ կերպով, եթէ տարիներ առաջ վախճանած լինէր Իւանէն։ Վերջին անգամ յիշւում է Իւանէն արձանագրութիւնների մէջ ՈՁԲ եւ ՈՁԳ (1233, 1234) *թուերին, երբ Հաղբատի առաջնորդ տէր «Յովհաննէս» շինեց Կայենոյ բերդը Թաթարների արշաւանքի հետեւանքով,* «հրամանաւ քեռւոյն իմոյ Իւանէի եւ որդւոյն իւրոյ Աւագի եւ Շահնշահի, որդւոյ Զաքարէի», *իսկ Կարսի քրիստոնեաները քաղաքի «բրջները»։ Ուշադրութեան արժանի են յատկապէս Կարսի արձանագրութիւնները, որոնց նոյնատիպ օրինակը տալիս է Յովսէփ Օրբէլին*[1]*. դրանցից մէկի մէջ պարզ ասուած է.*



Որմանկար Աստուածածնի այրում· Պռոշ իշխան ընտանիքով ? ՊԱՏԿԵՐ 31·

> *...Թվիս ՈՁԳ* (=1234) *ի Թագաւո/րութեա Ըռուսուդանա / յաթապակութենն Իւան/էի մեք Կարուց քրիստոնէ/քս շինեցաք զբրջներս ի / հալալ արդեանց մերոց։*

Այս թուականներն աւելի յարմար են գալիս Գանձակեցու տեղեկութեան, որ Իւանէի մահը նշանակում է Թաթարների կարգաւորեալ արշաւանքից (1235/6 *թ.*) *«յառաջ քան զաւկաւ ժամանակս», բայց Գանձակի աւերումից* (1232 *թ.*) *յետոյ*[2]*։ Այսպիսով Իւանէի մահը եւ Աւագի իշխանութեան առաջին տարին պէտք է նշանակենք մօտաւորապէս* 1233/4 *թուին, որից առաջ Պռոշի արձանագրութիւնը գրուած լինել կարող չէ, այլ* 1233—1250 *թ. թ. մէջ։ Բայց պատմական հանգամանքներն ի նկատի ունենալով, հնարաւոր է աւելի սահմանափակել այդ միջոցը։ Թաթարների արշաւանքի առաջին տարիներն այնպիսի սարսափ էր տարածուած, որ անկարելի էր որեւէ շինարարական ձեռնարկութեան մասին մտածել։ Յիրաւի,* 1235—1241 *թիւը արձանագրութիւններից ոչ մի նոր շինութեան մասին տեղե-*

---

[1] Христ. Восток. 1917· 148—149։ Համ· Սարգսեան· 104· Ալիշան· Այր· 85։ Հաղբատի Յովհաննէս եպիսկոպոսի արձանագրութիւնը տ· Ջալ· Ա· 81· (սխալներով) եւ Երզնկեան· Հնախօսական Տեղագրութիւն Հաղբատայ· Վաղարշ· 1886· 71·։ Գրի է առնուած եւ լուսանկարուած մեր կողմից։

[2] Գանձ· 224։

կութիւն չունինք: Բուրդ Վաչուտեանի շինած գրատունը թէեւ թուագրուած է 1235 թ.1), բայց, հաւանօրէն, նոյն թուականի առաջին կիսում, Թաթարաց արշաւանքից առաջ: Գանձատունը շինուած է տարիների ընթացքում եւ միայն եկեղեցու նաւակատիքը կատարուած 1240 թուին2): Գեղարդի վիմափոր եւ մեծածախս տաճարները կոփելու համար — «փորեցի ի վիմէ տուն այ (աստուծոյ)» — հարկաւոր էր երկրի մէջ փոքր ինչ տանելի խաղաղութիւն: Իսկ այդ համեմատական խաղաղութիւնն սկսւում է ԺԳ. դարու քառասնական թուականներից, երբ հայ իշխաններն իրար հետեւից հպատակութիւն յայտնեցին Թաթարներին:



Գեղարդայ վանքը· արեւմտեան տեսարան· ՊԱՏԿԵՐ 32·

Այրի կամ Գեղարդի վանքը, ինչպէս գործածական է սկսում դառնալ ԺԳ. դարից յետոյ, իր ամենամեծ սրբութեան անունով, Խաղբակեանց իշխանութեան մաս չէր, այլ ինչպէս ցոյց է տալիս այս արձանագրութիւնը «լերամբ եւ դաշտաւ եւ ամենայն կազմութեամբ, որ կայր ի սմա», գնել է Պռոշ իշխանը «ի տէրանց աշխարհիս»: Իւանէի եւ Աւագի իշխանութիւնն ու կալուածները «տէրանց աշխարհ» էր Պռոշեանց համար, ինչպէս «տէրանց աշխարհ» էր այն Բագրատունիների նկատմամբ Վասակայ որդի Գրիգոր Մագիստրոսի համար Հաւուց Թառում թողած մեծ արձանագրութեան համեմատ3): Ընդհանրապէս նկատւում է Մագիստրոսի արձանագրութեան ազդեցութիւնը Պռոշի արձանագրութեան վերայ, տեղ տեղ բառացի: Այրի վանքը նախ Իւանէի տան սեպհականութիւն լինելու մասին ունինք եւ ուրիշ ապացոյց:

Իւանէի մեծ արձանագրութիւնը, թէեւ անթուական, բայց, ինչպէս կը տեսնենք, գրուած 1215-ից յետոյ՝ ճիշդ 1219 թ., ուր յայտնում է, թէ «եկի ի սբ ուխտս ի յԱյրի վանս եւ տեսի զեկեղեցիքս եւ սրբքս եւ ինձ անոշ թուեցաւ, *յիմ անուն արարի*, զիմ յիշատակս ի վերայ գրեցի եւ ետու յիշատակ զԲերդաղն սբ կաթուղիկէիս լուսացուի» (*Ցուցկ. Ա.* 1): *Վանքի նախնական արձանագրութիւնների մէջ եւս, բնականաբար,*

---

1) Սաղմոսավանքի Արձանագր. համ. Շահխ. Բ. 423. Ալիշ. Այր. 163:

2) Գանձ. 256. Ջալ. Ա. 183. Բարխ. Արցախ. 173:

3) Ջամբռ. Սիմէոն կաթ.ի 276. Շահխ. Բ. 293:

չկայ ոչ մի յիշատակութիւն Խաղբակեանց կամ Պռոշեանց մասին:

Պռոշի երկրորդ՝ աւելի մեծ արձանագրութիւնը, գրուած է բուն տաճարի ավսիդի հիւսիսային պատին, 1283 *թուին: Տարաբաղդաբար արձանագրութիւնը տեղ տեղ մաշուած է, թափուած խոնաւութիւնից, ուստի եւ անընթեռնլի· նոյնատիպ պատկերը* (*պատկ·* 30· *Յաւել· Ա·* 17) *հանուած է էստամպաժից, անմիջական լուսանկարչութեան ենթակայ չլինելով: Երկրորդ կտորը, ուր թուականն է, բուն արձանագրութեան շարունակութեան վերայ չէ, այլ գարնեզից բարձր, հիւսիսային կամարի վերայ: Այստեղ եւս նախ բառացի կրկնում է այն, ինչ որ նախընթաց արձանագրութեան մէջ էր,* «Ես Պռոշ իշխան որդի Վասակայ յազգէ Հաղբակայ գանձագին արարի ի տէրանց աշխարհիս սուրբ ուխտս Այրիվանից լերամբ եւ դաշտաւ եւ ամենայն կազմութբ որ կայր ի սմա»· *եւ ապա աւելացնում է, որ նուիրել է աւետարան, արծաթի եւ ոսկի խաչ, պահարաններ, սկիհք, բուրվառներ եւ քշոց,* շինել է եկեղեցիներ, *կանգնել է խաչքարեր կամ սուրբ նշաններ եւ պատրաստել է հանգստարան իւր եւ իւր ազգի համար, նուիրաբերելով իւր ոսկով գնած Ողջաբեր եւ Բերդաղ վայրերը եւ տաս հազար սպիտակ· միաբանները հաստատում են զատկի յինանցը? քառասուն պատարագ ամէն տարի: Բերդաղ անունով վայրը տեսանք նաեւ Իւանէի արձանագրութեան մէջ· այնտեղ է նաեւ այժմ վանքի ագարակը, ոչ հեռու մենաստանից, իսկ Ողջաբերը գտնւում է Երեւանի եւ Գեղարդի ճանապարհի վրայ: Այս արձանագրութեան «շինեցի եկեղեցիք» բառերն անշուշտ համազօր չեն նախընթաց արձանագրութեան «փորեցի ի վիմէ տուն այ» արտայայտութեան բովանդակութեան· մի տեղ եղակի է, միւսը յոգնակի· ասել է, թէ նա քառասնական թուականներին, Այրիվանքը Աւագից գնելուց յետոյ, կոփել է տուել վիմափորներից միայն մէկը, կամ ի նկատի ունի Աստուածածնի քարայրի նորոգութիւնը* 1257/8 *թուին*[1]): *Յամենայն դէպս երկու արձանագրութիւնները տարբեր ժամանակի ծագումն ունին· վերջինը նորա ծերութեան շրջանի կտակն է, որի մէջ ամփոփում է իւր բոլոր շինութիւններն ու նուիրաբերութիւնները: Այս արձանագրութեան համապատասխան է Մխիթար Այրիվանեցու տեղեկութիւնը Ստեփանոս Սիւնեցու վկայաբանութեան մէջ·* «իսկ ի ներքոյ այրին յաւրինեցան բ· եկեղեցիք ի միաձոյլ միապաղաղ քարանց փորեալ եւ յարուեստս գաղատոսաց նկարեալ· զարմանալի երեւեալ տեսողացն: Եւ ի մէջ եկեղեցեացն տուն տապանի ի նոյն վիմէ կամարակապ դրոշմեալ առ ի հանգիստ քսասէր իշխանացն՝ իշխանին Պռոշայ, որ է յազգէ Հաղբակայ՝ կարգեալ հազարապետ հայոց»[2]) :

Պռոշի երկրորդ մեծ արձանագրութիւնից տեսանք, որ ի միջի այլոց նա նուիրել է «եւ պահարանք»· դոցանից մէկը, գուցէ եւ ամենից նշանաւորը հասել է մեր ձեռքը ոչ նոյնութեամբ, այլ նորոգուած 1686 *թուին Գեղարդայ վանահայր Դաւիթ վարդապետի ձեռքով, բայց հին արձանագրութեան պատճէնով: Պռոշեանց տոհմական այս ամենամեծ սրբութեան մասին մենք կը խօսենք յետոյ· առ այժմ մեզ հետաքրքրում է նորա արձանագրութիւնը, որպէս նիւթ Պռոշի պատմութեան, յատկապէս ընտանեկան պատմութեան* (*Յաւել· Ա·* 15· *պատկ·* 28)[3]) : *Արձանագրութիւնը գրուած է «ի թուին ՉԺէ»* (1268), *ուր յայտնում է, թէ* «Ես Պռոշ իշխան որդի Վասակայ արժանաւորեալ ածազէն սբ նիզակիս, զարդարեցի զսա պատուական պահարանաւ» *եւ* «ընծայեցի յիմ գանձագին գերեզմանատունս ի սբ ուխտս Այրիվանից յիշատակ յաւիտենական ինձ եւ զաւակաց իմոց Պապաքին, Ամիր Հասանին եւ Վասակա եւ կենակցի իմոյ խութլու խաթունին ի քս փոխեցելոյ եւ Մկդեմին եւ Գոհար խաթունին, որ կիսօրեայ ելին յաշխարհէ»[4]) : *Եթէ ստոյգ է նախընթաց ծա-*



Թագազարդ պարիկներ Պռոշի վիմափոր Գաւթում· ՊԱՏԿԵՐ 33·

---

[1]) Ըստ արձանագրութեան նորոգել է այն ոմն Զաքարիա «սնեալ ի սբ ածածինս», «ի թուիս ՉԶ.» (1257)· բայց ներսի նորոգութիւնը որմանկարներով ունի այլ թուական՝ «Չէ (1258) նորոգեցաւ / սբ ածածի/նս»· որմանկարների մէջ նկատելի է մի իշխանի եւ իշխանուհու ամբողջական եւ այլ մնացորդ պատկերներ (պատկ· 31), որ կարծում ենք Պռոշն է իր կնոջ խութլու խաթունի եւ զաւակների հետ· տարաբաղդաբար շատ մասերով այնպէս պոկոտուած եւ փչացած, որ գոյներով նկարել տալ աւելորդ էր:

[2]) Ձեռ· Յայսմաւուրք Աշոտ Յովհաննիսեանի մօտ այժմ: Այս վկայաբանութեան մի տարբեր ձեւակերպութիւնը տալիս է Օրբէլեան Ստ· պատմիչը, որ յետոյ անցել է դարձեալ Յայսմաւուրքի մէջ: Երկու հեղինակներն օգտուել են մի երրորդ դեռ եւս անյայտ աղբիւրից:

[3]) Մեր Գրչութեան արուեստը· Գ· § 30:

[4]) Զարմանալի թիւրիմացութեամբ Ալիշան (Այրարատ· 269)

նօթութեան մէջ մեր արած նկատողութիւնը իշխանական պատկերների մասին, Խութլու խաթունի մահը պէտք է դնել 1258—1268 թ· թ· մէջ: Այս ենթադրութիւնը գրեթէ դառնում է հաստատուն, եթէ ի նկատի ունենանք Ս· Աստուածածնի հետեւեալ արձանագրութիւնը, որ ինչպէս կը տեսնենք, նորոգութեան շրջանին է պատկանում:



խաչաքանդակ Պռոշի վիմափոր գաւթում· ՊԱՏԿԵՐ 34·

> *«Ես Ագլիզս անեալ ի տան Խութլու խաթունին եւ Պռոշոյ էտ:Ի: դեհեկան/եւ սպասաւորքս խոստացան ի տարին: ա: աւր ժամ, որ խափանէ մերացն (մեր մեղացն?) պարտկն է»*[1]) :

Տղայութեան հասակում մեռած Մկդէմի եւ Գոհար Խաթունի, ինչպէս եւ 1268 թուին դեռ եւս կենդանի Վասակի մասին, չունինք ոչ մի տեղեկութիւն: Զպէտք է չփոթել սորան Գրիգոր Խաղբակեանի եւ Զազի նոյնանուն որդու հետ: Պռոշի որդի Վասակի մահը պիտի հանդիպած լինի 1268—1273 թ· թ· մէջ: Վերջին թուին, երբ շինուեցաւ Թանահատի վանքը, Վասակն այլեւս չի յիշատակւում կենդանի որդիների շարքում, մինչդեռ Պռոշի թոռը եւ Հասանի որդի Էաչին, որ մանուկ էր այդ ժամանակ, յիշուած է: Պռոշի որդիների մասին յիշում է եւ Խաչատուր Կեչառեցին իր վերոյիշեալ Ողբի մէջ, որպէս շարունակութիւն Պռոշին նուիրած քառատողին, որ մէջ բերինք արդէն.

> «Եւ զիւր (Պռոշի) որդիքըն զարմանալի
> Մըկդէմ, զՎասակ, զկորիւնքն առիւծի·
> զայն զաւրաւորն ի պատերազմի՝
> զԱմիր Հասնայ բազուկն քաջի» :

Այստեղ չէ յիշուած Պապաքը, որովհետեւ Ողբի գրած ժամանակ կենդանի էր նա. իսկ հեղինակը ողբում է միայն մեռած իշխաններին: Սրանցից վերջինը Ամիր-Հասանն է, որ վախճանուել է 1292 թուին, որով եւ հնարաւորութիւն ունինք Ողբի ծագման terminus post quem*-ը որոշելու, իսկ* terminus ante quem *կարելի է Պապաքի մահը նշանակել, որ ինչպէս կը տեսնենք, պատահեցաւ 1298/9 թուին*[2]) :

Պռոշի շինած վիմափոր տաճարները երկուս են, մուտքերը սրբատաշ քարով տաճարի գաւթի հիւսիսային կողմից: Մենք արդէն յիշել ենք, հետագայում առիթ կ'ունենանք աւելի մանրամասն պարզելու, թէ սրբատաշ քարով շինուած բուն տաճարն ու նորա սիւնազարդ մեծ գաւիթը Պռոշից առաջ են շինուած: Նրա ստեղծագործութիւններն են միայն միակտուր ժայռի մէջ կերտուած, ներսից գմբէթարդ տաճարը իր գաւթի հետ, եւ մի երկրորդ ժամատուն, սրանցից դէպի արեւ-

---

երբեք եղբայրներին մեռած է համարում 1268 թուից առաջ այս արձանագրութեան հիման վրայ, եւ նոյնը կրկնում է Տաշեան· Ուսումնասիրութիւն Ստոյն Կալիսթենեայ· 126:

[1]) Աստուածածնի արձանագրութիւնները մէջ կը բերենք Բ· մասի Բ· գլխի մէջ:

[2]) Ողբի ամբողջութիւնը տ· Յաւել· Գ· 1:

մուտք, առանձին մուտքով: Այս երեք շէնքերը ընկնում են սրբատաշ քարով տաճարի եւ նորա գաւթի հիւսիսային կողմը՝ զուգահեռ սրանց: Ականատես Մխիթար Այրիվանեցին, եթէ երկու եկեղեցի է յիշում Պռոշի շինած միապաղաղ եւ միաձոյլ քարից, վիմափոր տաճարն ու նորա գաւիթը մի է համարում: Շէնքերի դիրքն ու յատակագիծը կարելի է տեսնել Սիսովի աշխատութեան մէջ, Ուվարովայի եւ Խ. Յովհաննէսեանի խմբագրութեամբ[1]) եւ Ստ. Վ. Մխիթարեանի գրքի մէջ (եր. 25) առնուած Dubois-ից:

Վիմափոր տաճարի եւ իւր գաւթի մուտքը, անջատ սիւներով գաւթի հիւսիսային պատից է, կից, գրեթէ, կրկնայարկ աւանդատներին: Ներս ենք մըտնում նախ քարակոփ գաւիթը, որի հարաւային պատի մի փոքրիկ մասը, դրան մօտ միայն սրբատաշ քարից է շինուած. մնացածն ամբողջապէս փորուած է ժայռի մէջ: Դրսից այդ շէնքերը նկատելի չեն, ինչպէս պարզ գաղափար է տալիս բոլոր շէնքերի արտաքին տեսարանը, որ նկարուած է արեւմտեան կողմից (պատկ. 32): Բարձր գմբէթով շէնքը նախապռոշեան սրբատաշ քարով շինած տաճարն է: Նրանից այս կողմը, դէպի նայողը, արեւմտեան կողմից, սրբատաշ, տափակ եւ քառանկիւնի կտրով, կեդրոնում փոքրիկ բարձրութեամբ եւ բոլորակ բացուածքով, սիւնազարդ նախապռոշեան գաւիթն է իւր երդիկով, իսկ սրանցից դէպի ձախ ժայռերին կցուած հարթ տարածութիւնը երկու բոլորակ բացուածքներով, Պռոշի եւ նորա որդու՝ Պապաքի վիմափորներն են, կտուրները ալայատակած:

Վիմափոր գաւիթը ներսից՝ բաժանուած է երկու մասի. հիւսիսային կողմից մուտքի դէմ ու դէմ յատակը բարձրանում է տախտաձեւ, պատի ուղղութեամբ, եւ երկու կամարներով, որոնց միջին ծայրերը հանգչում են ութ կողանի մի սեան վերայ, մի սրահ կազմում, ուր ամփոփուած էին տոհմի ննջեցեալները. այժմ գերեզմանները խառնուած: Այս սրահի արեւելեան պատին մի խորափիտ, կամարով, պատրհան է փորուած, որ դարձեալ գերեզման է: Ահա այս մասերն են, որ Պռոշ պատրաստել էր «տուն տապանի», «կամարակապ», «առ ի հանգիստ իշխանացն»՝ Այրիվանեցու խօսքերի համաձայն: Բուն գաւթի մէջ եւս կան գերեզմաններ, որոնցից մէկն է եղել Պռոշեանների վերջին շառաւիղներից Դանիէլ վարդապետի գերեզմանը, որի քարն այժմ ձգուած է սրբատաշ տաճարի հարաւային պատի մօտ՝ դրան առաջ:



Պօղոս եւ Պետրոս առաքեալները. ՊԱՏԿԵՐ 35.

Սրահի երկու կամարները միացնող սեան գլխին երեւում է մի եզան գլուխ, բերանից օղակ կախուած, իսկ այդ օղակից շղթայուած են երկու, իրար դէմ հանդիստ կանգնած առիւծներ, պոչերի ծայրերը վիշապագլուխ: Առիւծների մօտ, նրանց կապող շղթայի տակ, մէջտեղում, քանդակուած է մի թեւատարած արծիւ, մագիլների մէջ խոյ բռնած: Առիւծները եւ ամբողջ բարձրաքանդակը կոպիտ է, բայց տպաւորիչ (տ. պակտ. 26): Սրահի տեսարանը առիւծների հետ տ. Мат. по Археол. Кавк. XIII. Табл. VII. 14): Գաւիթը արեւելեան պատի մէջ խորը կամարի տակ վէմքար ունի, այդտեղ եւ մի գերեզման. կամարի անկիւններում, դրսից դէմ առ դէմ կանգնած են երկու թաղազարդ պարիկներ (պատկ. 33), իսկ դէպի վիմափոր տա-

---

1) Мат. по Археол. Кавказа XIII. ст. 3.

ճարը տանող դրան եւ այս խորանի միջին տարածութեան վերայ քանդակուած է մի գեղանկար խաչքար (պատկ․ 34), որի գլխի հիւսկէն վարդեակը կրկնուած է եւ հորիզոնական թեւերի ուղղութեամբ, երկու կողմից, մեր լուսանկարի մէջ վերջին վարդեակները չեն երեւում (տ․ Мат. Арх. Кавк. XIII. Табл. VI. 13)։ Նոյն դրան կամարի անկիւններում, պատի մակերեւութին, մի մի, նիմբուսով, մօրուքաւոր ֆիգուրներ, հաւանօրէն երկու առաքեալները, Պօղոս եւ Պետրոս, որ յաճախ են կրկնւում ԺԳ․ դարու տաճարների վերայ (պատկ․ 35)։ Պատերի վերայ բարձրանում է ութ կողանի, թեթեւ գնդաձեւ գմբէթը, ներսից զարդարուն, որ սկսում է փչանալ ժայռի վատ յատկութեան եւ անձրեւների հետեւանքով․ համեմատաբար լաւ մնացած մասերը ցուցադրուած են էջ լուսանկարում (պատկ․ 36)։


Պռոշի վիմափոր գաւթի գմբէթը ներսից․ ՊԱՏԿԵՐ 36․

Գաւթի մեծութիւնն է հարաւից հիւսիս՝ մինչեւ գերեզմանատան սրահը կամ նրա սիւնը 5,35 մ․, արեւելքից արեւմուտք 6,02 մետր․ սրահի լայնքը 2,88 մ․, երկարութիւնը 5,93 մետր։ Այս եւ հետագայ քանդակների եւ գեղարուեստական հոսանքի մասին կը խօսենք յետոյ։

Մի դուռ այս գաւթից տանում է դէպի վիմափոր տաճարը (պատկ․ 35), որ իւր տեսակի մէջ արեւելեան Հայաստանի նման շէնքերի գլուխ գործոցն է, ԺԳ․ դարու մի տաճար, կերտուած միակտուր, պինդ ժայռի մէջ․ խաչաձեւ է այն, սեղանի խորանը (ափսիդը) աւելի խոր, չորս որմասիւներն իրար կապող կամարների վրայ բարձրացող գմբէթով։ Որմասիւների գլխին աղեղնամէջերը ծածկող զարդերը ստալակտիտներն են․ գմբէթի բացուածքի ներքեւի գարնեզն էլ սիրուն, քանդակազարդ։ Թմբուկի շուրջը, 12 կեղծ լուսամուտներն առնուած են զոյգ սիւների վրայ հանգչող կամարների տակ, աղեղների մէջը եղան գլուխներով, եռատերեւների եւ այլ զարդերով ծածկուած։ Կեղծ լուսամուտներով գլխին բոլորող գարնեզը բաժանում է գմբէթի վեղարը թմբուկից։ Վեղարն էլ իւր հերթին բաժանւում է երդիկից եկող ճառագայթաձեւերով 12 մասի, որոնց միջին տարածութիւնները ծածկուած են բուսական եւ գծական գեղեցիկ զարդերով, ծայրերը նռնով վերջացած (պատկ․ 37 եւ 38)։

Մեծ ափսիդի պատերը նոյնպէս բաժանուած են կեղծ կամարներով ինն մասերի, միջինն աւելի մեծ, գլխներին ստալակտիտը յիշեցնող գարնեզով․ առաստաղը գծական—երկրաչափական Ֆիգուրներով ծածկուած: Ավսիդի աջ եւ ձախ կողմից մի մի աւանդատուն վէմքարով· տաճարի աջ կողմից դարձեալ մի աւանդատուն վէմքարով: Բեմը բաւական բարձր է, 1,42 մ., երկարութիւնը 4,43 մ., ճակատը զարդարուած է աստղաձեւերի եւ երկրաչափական ութկողմանիների չարքերով (պատկ. 39): Բեմի երկու կողմից չորս չորս աստիճաններ տանում են դէպի բարձրութիւնը· ձախ դասի աստիճանների անկիւնում քանդակուած է մի վայրենի քոչ, բերանին արմաւենիկ բռնած (պատկ. 40), իսկ ավսիդի եւ հարաւային պատի մէջ եղած տարածութեան արեւելեան պատին, մի խաչաքանդակ, խարսխից դէպի վեր բարձրացող սովորական արմաւենիկների փոխարէն՝ իրար հանդէպ կանգնած մի մի աղաւնի· նման մոտիվ կրկնւում է մանրանկարչական արուեստի եւ քանդակագործութեան մէջ, օրինակ, Դսեղի Բարձրաքաշ Ս. Գրիգորում: Խաչի տակը հիւսուածքի մի գեղեցիկ զարդարանք է, իսկ կողերից եւ ճակատից որպէս շրջանակ նոյնպէս զարդարուած (պատկ. 40)· խաչի մեծութիւնն է 1,87×1,02 մ.:

Ավսիդի աջ կողմից եւս, արեւելեան պատին՝ քանդակուած է ճիպոտաձեւերից կազմուած մի խաչ, կեդրոնականից դատ, թեւերն էլ խաչով: Խաչը բարձրանում է եռաստիճան պատուանդանի վերայ, պատուանդանի մակերեւոյթը հիւսկէն զարդով, կեդրոնում Ադամի գլուխը: Խաչի երկու կողմից կանգնած են մի մի մարդ, աջ կողմինը մի ձեռքում նիզակ, միւսում դուրգ (?), ձախինը մի ձեռքին նիզակ, միւսով պատերազմական փողը բերանին դրած: Խաչաքանդակի մեծութիւնն է 2,58×1,35 մ. (պատկ. 41): Կողքին, խաչի ձախ կողմից, նկատւում է քառանկիւնու մէջ մի հիւսկէն զարդ, վերեւը, քառանկիւնուց դուրս՝ մարդու գլուխ·ինձ համար անհասկանալի,եթէ կիսաւարտ չէ գործը·մեծութիւնն է 70×60 սմ.:

Տաճարի հիւսիսային պատից մի դուռ տանում է դէպի փոքրիկ աւանդատունը վէմքարով· դրան լայնքը 0,73 մ. է, բարձրութիւնը 2,2 մեթր· դրան ճակատը զարդարուած է ելնդաւոր, գծական, գեղեցիկ հիւսուածքով, գծերի ծայրերը վարդեակից դուրս եռատերեւով վերջացած, կողքի տերեւները նշատերեւի նման: Դրան շրջանակի վերին անկիւնում մի մի օչօչի բացուած (պատկ.42) ծաղիկ,արուեստի սիրելի մոտիվներից մէկը: Աւելի բարձր, այս դրան շրջանակից վեր, մի բոլորակ, մեծ վարդեակ, հիւսուածք (պատկ. 43):



Պռոշի վիմափոր տաճարի գմբէթը ներսից· ՊԱՏԿԵՐ 37–38·

Տաճարի մուտքի մօտ, ձախ յետին դասում, պատերի վերայ փորագրուած են ելնդաւոր խաչեր, մօտն այսպիսի արձանագրութեամբ· «սբ խաչս կոչի բարեխաւս տր Մանուէլ եպկի»:

Բացի գմբէթի երդիկից, մի լուսամուտ էլ հարաւային պատից բացւում է դէպի սրբատաշ քարով շինած կաթուղիկէ տաճարը։

Տաճարի մեծութիւնը արեւմտեան պատից մինչեւ բեմը 5,05 մ., ափսիդի խորութիւնը 3,38 մ., բացուածքը 3,2 մետր. Հարաւից հիւսիս, տաճարի լայնքը 6,68 մետր։



Երկրորդ վիմափորի դուռն առանձին է, բայց դարձեալ մեծ տաճարի սիւնազարդ գաւթի հիւսիսային պատից, աւելի արեւմուտք, քան նախընթաց վիմափորների դուռը։ Այս վիմափոր ժամատան գմբէթը բարձրանում է ութ որմահեց կիսասիւների վերայ, որոնց կամարները գոթականի նման խաչաձեւ կտրում են իրար, անկիւններում չորս փոքր ափսիդանման խորչեր կազմելով (տ. պատկ. 44)։ Բացի այս չորս խոռոչներից, որոնց բացուածքը 1,35 մ. է, իսկ խորութիւնը 1,15 մ., արեւելեան, հիւսիսային եւ արեւմտեան կողմերից փորուած են մի մի ափսիդ (տ. պատկ. 44 ձախից). գլխաւոր կամ արեւելեան ափսիդի բացուածքն է 3 մ., խորութիւնը 2,3 մետր։ Այս ափսիդի պատը՝ ութ որմասիւների վերայ կազմուած կեղծ կամարներով՝ բաժանուած է եօթ մասի, աջ կողմը խորհրդանոցն է, առաստաղը ստալակտիտներով զարդարած։ Հիւսիսային եւ արեւմտեան ափսիդի կամարի մի մասը երեւում է մեր պատկերի ձախ կողմից եւ լիովին գաղափար տալիս ամբողջութեան մասին։ Արեւմտեան ափսիդի խորութիւնն է 2,12 մ. եւ բացուածքը 2,25 մ., հիւսիսային ափսիդի խորութիւնն է 2,62, իսկ բացուածքը 2,5 մետր.։ Արեւելեան եւ արեւմտեան ափսիդների միջին տարածութիւնն է 6,5 մ., իսկ հիւսիսից հարաւ 6,22 մ., որով ամբողջ վիմափորի երկարութիւնն է ափսիդների խորութեան հետ 10,92 մետր, իսկ լայնութիւնը 8,84 մետր։ Հիւսիսային որմի առաջ կայ մի աւազան, որի մէջ լցւում է պատի տակից բղխած ջուրը. մի աւազան էլ կայ հիւսիս-արեւելեան անկեան փոքրիկ աւանդատան մէջ։

Հարաւային պատը ափսիդ չունի. հարթ է երկու որմասիւների միջին տարածութիւնը եւ այդտեղ է Պռոշի առաջին կամ փոքր արձանագրութիւնը (էջ 49, պատկ. 29)։ Արձանագրութեան տակ փորուած են երեք խոռոչներ կամ պատրհաններ, որոնց սրածայր կամարները հանգչում են միջին երկու սիւների վերայ։ Կամարների անորվալյանները ծածկուած են արմաւենիկի եւ միջինը սուր հնգատերեւի ցօղունների մի գեղեցիկ զարդով, որ երեւան է գալիս նաեւ ձեռագրական զարդագրութեան մէջ։ Իսկ պատրհանների տակը եղած տարածութիւնը քանդակուած է սիրուն, ճիպոտանման ցօղունների հիւսուածքով, ցօղունները վերջաւորուած արմաւենիկներով կամ զոյգ նշտերեւներով։ Հիւսուածքների կեդրոններում չարուած են մի մի անօթ, վարդեակներով, առիւծի գլխիկներով զարդարուած, (Ուվարովայի Мат. եւլն Табл. պատկ. 12):

Գմբէթն, ինչպէս ասացինք, բարձրանում է ութ որմահեց կիսասիւների վերայ եւ զարդարուած է ստալակտիտներով, իսկ կամարների ճակատը եւ գմբէթի հիմքը նռների շարքով: Այս նռնազարդերից բարձր, արեւելեան ճակատին գրուած է «Զվարդպես դա… դ յիշեցե»: Կարծում ենք շինող ճարտարապետի անունն էր այստեղ, բայց տարաբաղդաբար լուսանկարը չունինք, որ գոնէ գրութեան ձեւը դնէինք ընթերցողների առաջ: Բազմակէտերով նշանակուած տեղը փակագրի կամ զարդի նման մի քանդակ է:



Գոշի վիմափոր տաճարի բեմի ճակատը. ՊԱՏԿԵՐ 39.

Արեւմտեան եւ հիւսիսային ափսիդների մէջ անկիւնախորշի, ինչպէս եւ հիւսիսային ափսիդի արեւմտեան պատի արձանագրութիւնները խաչազարդերով թողնում ենք այժմ, որպէս ուշ ժամանակի գործ, իւր տեղում յիշելու (տ. պատկ. 44):

Գոշի աշխարհաշինութեան երկրորդ մեծ ապացոյցը Թանահատի կամ Թանատի վանքն է Վայոց ձորում, Սրկղունից կամ Բաշքենդի վտակի եւ Արկազու Սուրբ խաչի մէջ (պատկ. 45): Թուրք գիւղացիներից, ինչպէս եւ Հայերից, որ միայն ԺԹ. դարի ռուս — պարսկական պատերազմից յետոյ են այստեղ հաստատուել, Ղարավանք կոչուած է: Ալիշան այսպիսի կոչումը կապում է վանքի քարերի գոյնի հետ, բայց մեզ թւում է այդ սխալ: Հաւանօրէն, Ղարավանքը ոչ այլ ինչ է, բայց եթէ Քարէվանք կոչման լոկ աղաւաղութիւնը: Ինքն էլ քիչ յետոյ գիւղն անուանում է «Քարէվանք», չյիշելով, թէ ո՞րտեղից գիտէ գիւղի այդպիսի անուանակոչութիւնը: Մի ճաշոցի յիշատակարան՝ գրուած 1335 թուին, աւելի եւս պարզում է այս խնդիրը. «Ես պարոն Հայրուտս, որ շինեցի զաղօթանոցն մեր սուրբ մենաստանացս գՔարի վանուցս, զԹանահատի վանուց եւ զսուրբ Կաթուղիկէիս…» (տ. Յաւել. Բ. 14): Օրբէլեանի ցուցմունքներով «Քարէվանք» հին տեղը՝ Եղեգեաց եւ Արփայ գետերի անջրպետ՝ Թեաքեադոնդուրան կոչուած սարի բարձունքներումն էր[1]), եւ Նայում էր դէպի Եղեգեաց ձորն ու գետը, իսկ պարոն Հայրուտի յիշատակարանից երեւում է, որ երեք վանքերն էլ իրար մօտ պիտի լինէին եւ, գուցէ, մի ամբողջութիւն էին կազմում: ԺԳ. դարում եւ յետոյ բուն Եղեգեաց ձորը Օրբէլեանների սեպհականութիւն էր, իսկ Թանահատի վանքը, որ յիշուած սարի հարաւային փէշերին է, Պռոշեանց. ուրեմն, Օրբէլեանի յիշած հին ճգնարան Քարէվանքը նոյն չէ ԺԳ. դարու Քարէվանքի հետ:

Թանահատի վանքի հնագոյն յիշատակութիւնն ունինք Օրբէլեանի մէջ. նոյնանուն մի վանք էլ գտնում էր բուն Սիւնիքում· մեր Թանահատը Վայոց ձորումն էր եւ հիմնուած ութերորդ դարից առաջ։ Այստեղ են ամփոփուած Սիւնեաց Ստեփանոս նշանաւոր եպիսկոպոսի եւ մատենագրի նշխարները, որ նահատակուեցաւ այստեղից ոչ շատ հեռու Մողն աւանում1)։ Սակայն հնագոյն յիշատակներ ԺԳ· դարից վաղ չեն մնացել։

---

[1] Օրբ. 259:



Պռոշի վիմափոր տաճարի բեմի ճակատին ձախ կողմից·

ՊԱՏԿԵՐ 40·

Ներկայ վանքի շինութեան մասին պատմիչները ոչինչ չեն յիշում, բացի մի ակնարկութիւնից Օրբէլեանի մէջ, որ յետոյ կը տեսնենք։ Այդ պակասը լրացնում են արձանագրութիւնները· շինութեան արձանագրութիւնը գտնւում է արեւմտեան դրան աջ կողմը, տարաբաղդաբար քարեր ընկած լինելու պատճառով պակասաւոր է (տես Յաւելուած Ա· 18)։ Այս արձանագրութեան հիման վրայ մենք պէտք է կարողանայինք միմիայն վանքի շինութեան մօտաւոր թուականը որոշել Ապաղայի (1265—1282) եւ Յակոբ Ա· կաթուղիկոսի (1268—1287) ժամանակներով, եթէ բարեբաղդաբար մի այլ տեղ պահուած չլինէր իսկական թուականը· գմբէթի թմբուկի հարաւային կողմը՝ մազիլների մէջ խոյ բռնած արծուի բարձրաքանդակի չորս անկիւններում· «Թ· Զ· Ի· Բ·» (1273) տառերը· առաջինները վերին՝ իսկ վերջին երկուսը ներքեւի անկիւններում· այս թուականը չունի ոչ Ջալալեան եւ ոչ Ալիշան, այլ միայն Քաջբերունի եւ Սիսով (տ· պատկ· 47)2)։

Արձանագրութեան մէջ տաճարի շինութեան համար ասուած է «յարիական եւ քաջատոհմ յիշխանութե Պռոշոյ եւ որդոցն Պապաքին, Հասանա, մանկան Խաչոյ շինեցաւ սբ եկեղեցիս ի բնակարան փառացն այ (աստուծոյ) եւ յարկ սրբոյն Ստեփանայ»։ Արձանագրութիւնը հաստատում են «մեք պարոնայքս եւ միաբանքս»։ Այստեղ որոշակի չի ասուած, թէ եկեղեցու շինողը Պռոշն է իր որդիների հետ, բայց անկասկած է, որ մեծ օժանդակողն է· տաճարը շինուած է «յերկար կենդանութի պարոնացն» եւ սահմանուած է Աստուածածնի փոխմանը երեք օր «մեծ պարոնին մերոյ Պռոշայ»։ Տաճարը շինուած է, ուրեմն որպէս «յարկ Ս· Ստեփանոսի» եւ մեծարանք տոհմի նահապետ Պռոշի համար։ Նորա երկու որդիները Պապաք եւ Հասան յայտնի են մեզ արդէն առաջուց· մանուկ Խաչին Պռոշի թոռն է, Հասանի որդին, որ միակ ժառանգը լինելով, յիշատակուած է այստեղ, կրկին անգամ սոյն վանքի Խութլու բէկի եւ ապա Մարտիրոս գիւղի վիմափոր եկեղեցու արձանագրութիւնների մէջ՝ Պռոշի եւ որդիների հետ։ Ջալալեան եւ Քաջբերունին սխալմամբ

---

1) Անդ· գլ· ԼԱ· ԼԴ· ԿԲ·։

2) Գմբէթի վերայ կամ եկեղեցու ճակատին շինութեան թուականը նշանակելու սովորութիւնը հազուագիւտ չէ մեր եկեղեցական ճարտարապետութեան մէջ միջին դարերում, ինչպէս Վայոց ձորում Սպիտակաւոր Աստուածածնի արեւմտեան ճակատին ՉՀ· որ դարձեալ Պռոշեանների շէնք է· Հերհերի նորագոյն մատրան արեւմտեան ճակատին ՉԼԱ·, Շահունեցի իշխանների գործ· Կոտայքի Գէոգ Քիլիսայի արեւմտեան ճակատին ՉՂԸ։

նորան Պոռշի որդիների շարքում են դասում, տեղիք տալով երկու խաչինների գոյութեան: Մենք առիթ կ'ունենանք այս խնդիրը պարզելու, երբ յատուկ գլխով նորա մասին կը խօսենք:

Օրբէլեանը ԼԱ. գլխի մէջ նկարագրելով Ստեփանոս Սիւնեցու մահն ու թաղումը Թանատի վանքում, աւելացնում է.«և շինեալ ի վերայ փոքրիկ մատուռ մի. զոր յետոյ յ728 (ՉԻԸ) թուականին շինեցին բնակիչք տեղւոյն եկեղեցի գմբեթայարկ, գեղեցիկ յօրինուածովք, և եդին զտապան սրբոյն ի հիմն նորա»¹): Օրբէլեանի այս հակիրճ նկարագրութիւնը միանգամայն յարմար է գալիս ոչ միայն ներկայ շինութեան արտաքին կողմին, այլ եւ արձանագրութիւններին, որոնց համեմատ տաճարը կոչւում է «յարկ Սրբոյն Ստեփանոսի», «սուրբ Ստեփանոսի գերեզման», սուրբ «Ստեփանոս»: Թիւրիմացութիւն պիտի համարել Ալիշանի կարծիքը, որպէս թէ տաճարը նուիրուած էր նաեւ Ստեփանոս Նախավկայի յիշատակին: Միակ դժուարութիւնն այս մտքի հաստատութեան՝ շինութեան եւ Օրբէլեանի տուած թուականների տարբերութիւնն է: Սակայն անհաւանական չէ, որ առաջինը սկսուածքի թուականը լինի, իսկ երկրորդը վերջաւորութեան, մանաւանդ որ 1278 թուից ունինք Ամիրշահի արձանագրութիւնը վանքի ներսը՝ աջ դասի աւանդատան գլխին, որով յայտնում է, թէ ինքն է հոգացել այդ աւանդատան կամ ըստ արձանագրութեան մատրան ծախսը: Թանահատը եւ Վայոց ձորի Նորավանքը, ուր ապրում էր ժամանակակից պատմիչը, այնքան մօտ էին իրար, որ նա սխալուել կարող չէր: Օրբէլեանի նոյն թուականը պահուած է Յայսմաւուրքի՝ Ստեփանոս Սիւնեցու վկայաբանութեան մէջ, որ հաւանօրէն ԺԴ—ԺԵ. դարում արդէն առնուած էր Օրբէլեանից այդտեղ: Պատմիչի այս տեղեկութիւնից իմանում ենք նաեւ, որ վանքի շինութեան մասնակից էին «բնակիչք տեղւոյն», այսինքն միաբանները: Այս եւ ուրիշ վանքերի շինութեան արձանագրութիւններից էլ երեւում է, թէ տեղի միաբանութիւնը վանահօր գլխաւորութեամբ միշտ դրական մասնակցութիւն են ունեցել վանքերի շինութեան մէջ:

Եկեղեցին իւր արտաքինով մի շատ գողտրիկ շէնք է. իւրատեսակ գեղեցկութիւն է տալիս մանաւանդ գմբէթի բարձր թմբուկը, զարդարուած բարձրաքանդակներով: Տաճարի մարմինը քառանկիւնի է դրսից. բացի արեւմտեան պատից, միւսները կտրատուած են զոյգ նիշերով. մի մի նեղ եւ երկարաւուն լուսամուտ պատերի վերին ճակատներում, որ շրջանակուած է ներքեւից վեր բարձրացող զոյգ երիզկաձեւով (տ. հարաւային պատը. պատկ. 46): Մի մի փոքրիկ, անզարդ լուսամուտներ էլ գտնւում են արեւելեան պատին աւանդատների համար: Միայն մի դուռ ունի՝ արեւմտ-



խաչաքանդակ Պոռշի վիմափոր տաճարում. ՊԱՏԿԵՐ 41.

---

¹) Ստեփանոս Սիւնեցու վկայաբանութիւնը Օրբէլեանի պատմութեան խմբագրութեամբ անցել է Յայսմաւուրքի մէջ (Չեռ. Ն. 8. թ. 1005). միայն այստեղ թուականը ՉԻԹ. է: Բայց կայ Մխիթար Այրիվանեցու գրած վկայաբանութիւնը պատմական—մատենագրական կարեւոր տեղեկութիւններով, նոյնպէս անցած Յայսմաւուրքի մէջ, որից մի քանի կտոր առել ենք մեր այս աշխատութեան մէջ: Երկու հեղինակներն էլ օգտուել են մի երրորդ աղբիւրից, որ դեռ եւս գտնուած չէ:

եան կողմից, քառանկիւնի բացուածքով, որ շրջանակուած է նման երիշկաձեւերով եւ վերջանում է կամարակալ քարի գլխին սրածայր աղեղով։ Մի երկրորդ արտաքին շրջանակ քառանկիւնի է, մէջն առնելով դրան շրջանակը իւր կամարակալ քարով, վեր է բարձրանում, կրկին քառանկիւնի շրջանակ կազմում արեւմըտեան լուսամուտի շուրջը եւ վերջանում ճակատին բոլորագլուխ գաւազանով, մէջը դուրս ընկած պորտով (տ. արեւմտեան պատը, պատկ. 46)։


խաչաքանդակ Պռոշի վիմափոր տաճարում· ՊԱՏԿԵՐ 42·

Հարաւային պատի վերայ, լուսամուտից ներքեւ, նայողի ձախ կողմից, մի բաղէ պատառում է մի ուրիշ թռչունի կուրծքը· իսկ աջից արեւի ժամացոյցի գլխին քանդակուած է աւելի փոքր, ելնդաւոր մի սկիհ, որից խմում են երկու դէմ առ դէմ կանգնած թռչունները, երկու սիրամարգ առանց փռուած պոչերի։ Ճիշդ նման մի մոտիվ գտնում է Գահիրէի Թանգարանում, մի գերեզմանական յուշարձանի կտորի վերայ, որ Crum–ից առել է Kaufman[1])։ Փոքր ինչ տարբեր ձեւակերպութեամբ եւ փոփոխակներով՝ մեր մանրանկարչական սիմբոլիկ զարդագրութեան ամենասիրելի մոտիվներից մէկն է։ Այս մոտիվն անցել է նաեւ Անիի կարասներին[2])։ Սիրամարգը իւր գեղեցիկ փետուրներով դեկորատիւ նպատակների համար շատ յարմար լինելով, միեւնոյն ժամանակ հոգու անապականութեան նշանակն էր։ Այստեղ անապականութեան կամ անմահութեան ծարաւի հոգիները խմում են կենդանարար բաժակից, որտեղ Յիսուսի մարմինն ու արիւնն է։

Գմբէթի թմբուկը դրսից ակնահաճոյ ձեւ ունի եւ սովորականից աւելի բարձր է, ութ կողանի· վեղարի գլուխն ընկած է, կողքերից էլ մասամբ թափած։ Վեղարը նոյնպէս ութ կողանի, որ գագաթից ակօսաձեւ իջնում է թմբուկի կողերի վերայ անկիւնաձեւ վերջաւորութեամբ այնպէս, որ ակօսի խորութիւնն ընկնի թմբուկի կողածների վերայ։ Այսպիսով վեղարի կողերի վերջաւորութիւնը մի զիկզակ է կազմում, որ եզերուած է նման զոյգ բարակ երիշկաձեւերով։ Վեղարի կողերի բարձրութիւնները կամ ողնաշարը ծածկուած է առանձին խորափիտ շերտաքարով, որ կափարչի նման վերից վար ծածկում է քարերի հանդիպման գիծն, սուղման առաջն առնելու համար։ Թմբուկը դրսից հանգչում է փոքր ինչ դուրս ընկած բոլորաձեւ գօտու վերայ. չորս կողմից ունի մի մի ուղղանկիւն եւ երկարաձիգ, նեղ լուսամուտ: Հարաւային լուսամուտի պըսակի գլխին մի թեւատարած արծիւ մագիլների մէջ բռնել է խոյը, թեւերի կողքից ձախից աջ երեւում են խորաքանդակ Թ. եւ Զ., իսկ մագիլների կողքից Ի. եւ Բ. տառերը, որ շինութեան թուականն է, ինչպէս տեսանք: Աւելի բարձր, վեղարի տակ թմբուկների կողերի վերայ երեւում են երկու, մէջք մէջքի թռչունների, սիրամարգերի բարձրաքանդակներ: Արեւմտեան լուսամուտի պսակի գլխին երկու վարդեակներ կան եւ նրանցից բարձր երեք փոքր խաչաքանդակներ, որոնց նմանները կրկնըւում են եւ պատերի ճակատին: Աւելի բարձր թմբուկի նոյն կողի վերայ, վեղարի տակը, գտնւում է մի բարձրաքանդակ, եզան գլուխ: Իսկ դէպի աջ, թմբուկի հետեւեալ կողի վերայ մի ուրիշ բարձրաքանդակ. ցուլի վերայ գլխի կողմից յարձակուել է առիւծը: Այս վերջին մոտիվն էլ մեր եւ մահմետական ազգերի քանդակագործութեան սիրելի մոտիվներից մէկն էր: Նոյնը մենք տեսնում ենք Յախայքարում, որ Ժ. դարու գործ է, կամ նոյնիսկ Գեղարդի կաթուղիկէ եկեղեցու կամ սրբատաշ քարով տաճարի հարաւային պատի ճակատին:

---

[1]) Handbuch der Christlichen Archåologie. Poderborn. 1905. 313/4.

[2]) Х. В. Том: V. вып. I Пет. 1916. Чубинов. Г. Декоративное убранство Анийских карасов. табл. XV. 4.



Մեծ վարդեակ վիմափոր

Տաճարի հիւս. պատին.
ՊԱՏԿԵՐ 44.

Արտաքին պատերի չափագրութիւնը հետեւեալն է: Հարաւից դէպի հիւսիս արեւմտեան պատը 3,2 մետր, դրան բացուածքը 1,12 մ., դռնից մինչեւ հիւսիսային անկիւնը 3,42 մետր., ուրեմն ամբողջը 7,74 մետր: Հարաւային պատի ամբողջ լայնքն է 9,15 մետր. արեւմուտքից դէպի արեւելք մինչեւ առաջին նիշը 2,15 մ., նիշի բացուածքը 0,73 մ., երկու նիշերի միջի տարածութիւնը 3,39 մ., երկրորդ նիշը 0,73 եւ մինչեւ անկիւնը 2,15 մ.: Արեւելեան պատի երկարութիւնն 7,7 մետր: Ներսից տաճարի երկարութիւնն է ափսիդի խորութեան հետ 7,63 մ. ափսիդի խորութիւնը 2,8 մ., իսկ բեմի լայնութիւնը 0,68 մեթր. ափսիդի բացուածքը 2,77 մ., մինչեւ ափսիդի կամարի կիսասիւնը 0,19 մետր, իսկ սիւնից մինչեւ աւանդատան դուռը 0,28. եւ դրան բացուածքը 70 սմ.: Արեւելքից արեւմուտք երկու սիւների միջի տարածութիւնը 2,9 մ., արեւմտեան թեւի խորութիւնը 2,2 մ. խորանի բացուածքը ուղղակի արեւմտեան պատից 1,04 մ.: (Տաճարի յատակագիծն ու հատուածականը տ. Սխովի աշխատութեան մէջ եր. 126): Գմբէթը ներսից բոլորակ է եւ հանգչում է չորս որմնայեց սիւներն իրար կապող կամարների վերայ.



Վարդեակ Պռոշի վիմափոր տաճարի հիւս. աւանդատան դրան ճակատին.

ՊԱՏԿԵՐ 43.

որմնայեցներից երկուսը արեւելեան պատին, ափսիդի երկու կողքերից, իսկ երկուսը տաճարի արեւմտեան կողմից յեցուած հարաւային եւ հիւսիսային պատերին: Թմբուկի հիմքը պատում է մի բոլորաձեւ գօտի, մի երկրորդը վերեւում, որտեղից սկսւում է գմբէթի բոլորակ առաստաղը: Ափսիդի երկու կողմից կրկնայարկ փոքրիկ աւանդատներն են, իսկ արեւմտեան անկիւններում էլ մի մի փոքրիկ աւանդատուն կայ առանց վերին յարկերի: Ներսից տաճարը պարզ է, առանց զարդերի, բացառութեամբ կիսասիւների խոյակների: Տըպաւորութիւնը ներսից աւելի է, արտաքինի գեղեցկութեան համեմատութեամբ:

Տաճարի հիւսիսային պատին կից մնացած է մի, համեմատաբար աւելի փոքր շէնքի մնացորդ, պատերն այնքան քանդուած, որ մինչեւ իսկ հնարաւոր չէ գաղափար կազմել, թէ ինչ ձեւ է ունեցել իւր վերին մասերով: Շէնքի ուշադրութեան արժանի մնացորդը արեւմտեան դրան կամարակալ քարի քանդակն ու զարդարանքն է. արուեստի ոճից եւ քանդակներից դատելով ոչ վաղ քան ԺԳ. դարու վերջերի կամ ԺԴ.ի առաջին կիսի գործ (պատկ. 47): Իշխանական բարձրաքանդակը ցոյց է տալիս, որ դարձեալ Պռոշեան իշխանների մի կերտուածը պիտի լինի. ձիու վերայ նըստած է մի երիտասարդ, որ նիզակը խրել է առիւծի բերանը․ առիւծից վեր մի սիրամարգ, պոչը վեր ցցած, իսկ նորա առաջ մի աւելի փոքր թռչուն, թւում է սիրամարգի ձագ, ապա ձիու գլխից բարձր մի քոչ․ իսկ ձիաւորի ետեւը մի այլ թռչուն․ չլինէր սիրամարգի եւ նորա ձագի քանդակը, ամբողջը մի որսորդական տեսարան կ'ընդունէինք իշխանական կեանքից։ Իշխանի եւ ձիու զարդարանքի մասին կը խօսենք յետոյ, երբ կը նկարագրենք Պռոշեան մի ուրիշ իշխանի՝ Ամիր Հասան Բ․ի բարձրաքանդակը Սպիտակաւոր Աստուածածնում։ Կամարակալ քարի շուրջը եղած քանդակները ստալակտիտներ են, բայց ոչ այնպիսի ազնուութեամբ, ինչպէս նկատելի են ԺԳ․ դարու գաւիթներում կամ ժամատներում, ուստի եւ աւելի հակուած ենք ԺԴ․ դարու գործ ընդունել, գուցէ եւ վերոյիշեալ պարոն Հայրուտի չինած աղօթանոցը։ Տաճարի հարաւային կողմը, մի քանի քայլ հեռու, եղել է մի այլ շէնք, որ տեղական թուրքերն այժմ բոլորովին քանդել են, որով եւ Հայրուտի յիշատակարանի երեք վանքերը լրացած կը լինեն իրար կողքի։



Պռոշի վիմափոր ժամատան սիւներն ու կամարները, ՊԱՏԿԵՐ 45·

Պռոշի անուան հետ է կապուած ըստ ժողովրդական աւանդութեան եւ Բաշքեանդի աւերակների շինութիւնը։ Այդ գիւղը գտնւում է Թանահատի վանքից դէպի արեւմուտք, մի վտակի վերայ, որ հոսում է Թեաքեագինդիւրան լեռան լանջերից եւ թափւում է Արփայի մէջ։ Երրորդ գլխի մէջ մենք ցոյց ենք տուել, որ դա Սրկղունք գիւղը պիտի լինի, Պռոշեանց հետագայ հոգեւոր կեդրոններից մէկը։ Շէնքերից մէկը եղել է եկեղեցի, որի քարերով գիւղացիք շինել են նորը, պատերի մէջ հագցնելով քանդակազարդ խաչեր եւ գերեզմանաքարեր․ խաչերից մէկի պատկերը տուել ենք արդէն (պատկ․ 10)․ երկրորդը դրան կամարակալ քար է խաչազարդ (պատկ․ 48), կեդրոնական խաչի վերին թեւերի մօտ ելնդաւոր գրերով «Քս», «Ած», իսկ ներքեւից կողմնակի խաչերի արտաքին կողքերից «Յս» «Տր» կրճատուած բառերով․ խաչերի տակ դարձեալ ելնդաւոր տառերով եւ փակագրութեամբ «ողորմի Սարգ· Աքանէ քահանի»։ Մենք տեսանք արդէն, որ միւս խաչի (պատկ․ 10) վերին անկիւններում ելնդաւոր բառերով «սբ Յբ» (սուրբ Յակոբ) էր գրուած, բայց սրանից խաչի ճակատին կայ «Թ: Չ: Ի: Զ: (1277)» թուականը․ ներքեւի անկիւններում «Մխ» «Վդ» (Մխիթար վարդապետ)․ թուականի տառերով գրուած են «իսկ» «? ահ» եւ «խաչ», որ չենք հասկանում։ Յամենայն դէպս այստեղ ունինք մի թուական, որ շինութեան իսկական ժամանակն է ցոյց տալիս Պռոշ իշխանի օրով։ Երեւի այս կամ ուրիշ արձանագրութիւնների մնացորդների հիման վերայ ժողովուրդը եկեղեցին կոչել է Ս․ Յակոբ, իսկ աշխարհիկ շէնքը Պռոշի պալատ: Մի ուրիշ քարի վերայ քանդակուած էր մի սրբի անդրի, վերեւն էլ ենդաւոր «Թվ.», վերին աստիճանի նուրբ եւ գեղեցիկ, որ պահ տուինք տեղական քահանային, որպէսզի հնարաւոր եղած ժամանակ էջմիածնի թանգարանը փոխադրել կարողանանք:

Պալատ կոչուած շէնքից այժմ մնացած են որոշ տեղերում միայն պատերի հիմքերը, որոնց վերայ գիւղացիք շինել են իրենց խրճիթները: Տեղացի, այժմ հանգուցեալ, Տէր Գրիգոր Աւագեանի ասելով, այնտեղ գտնուած են եւ պղնձի անօթներ՝ քանդակուած զարդով, որոնցից մէկը էջմիածին է փոխադրուած: Մինչեւ վերջին տասնեակ տարիները պալատից աւելի մասեր կային մնացած. ականատեսները պատմում էին մեծ դարբասի կանգուն կամարի եւ նորա կամարակալ քարի մասին՝ «ասլան ղափլան» բարձրաքանդակով: Կամարի հետքն անգամ չկայ, իսկ կամարակալ քարը տաշել են հետագայում եւ գերեզմանաքար դարձրել: Տգիտութեան եւ բարբարոսութեան ձեռքից ազատուել է միայն քանդակների մի մասը՝ կռուող կամ շղթայուած առիւծների ընդհանուր ուրուագծով (պատկ. 49): Հայ արուեստին ծանօթ անձի համար կասկածի ոչ մի տեղիք լինել կարող չէ, թէ այս եւ նախընթաց քանդակները ԺԳ. դարի կէսերի արդիւնք են. ուրեմն եւ անհիմն չէ այս շէնքերը Պռոշի կամ Պռոշեանց անուան հետ կապելը:


Թանատի վանքը. ՊԱՏԿԵՐ 46.

Պռոշի եւ նորա Ամիր Հասան որդու անմիջական հրամանով 1283 թուին շինուած է նաեւ Մարտիրոս գիւղը, ինչպէս տեսանք Դեղկայ որդի Մխիթարի ձեռքով: Մարտիրոս գիւղը գտնւում է Վայոց ձորի, Սիսեանի եւ Շահապունեաց սահման կազմող Եաղւրդլերան հիւսիս—արեւմտեան փէշերին, դալարադեղ, սիրուն սարահարթի վերայ. Ջալալեան[1]), չգիտենք ինչ հիմունքներով, Պռոշ իշխանի ամարանոցն է համարում այն: Գիւղամիջին, աղբիւրի գլխին կանգնած փառաւոր խաչքարի արձանագրութիւնը տեղեկութիւն է տալիս գիւղի ծագման եւ շինողների մասին (պատկ. 11 Յաւել. Ա. 7), մեծութիւնը 3,42×0,33 մետր. պատկերի մէջ չէ հանուած պատուանդանը: Խաչը շատ շքեղ չէ իր քանդակներով, բայց ազնիւ եւ գեղեցիկ իր գծերով: Կեդրոնական խաչի հորիզոնական թեւերի տակ քանդակուած են երկու ուրիշ փոքրիկ խաչեր, իսկ վերեւի անկիւններից կախուած են ԺԳ. դարուն յատուկ ձեւով արմաւենիկի մի մի տերեւ, որոնցմով լցւում է մակերեւոյթը: Խաչի ուղիղ գագաթին հիւսկէն արմատից կախուած է զոյգ նշատերեւ, մէջտեղը փոքրիկ վարդեակ: Բուն խաչի եւ պատուանդանի մէջ գտնւում է մի պտտուող սվաստիկա՝ ժամանակի յաւիտենականութեան նշանը: Խաչի եւ սվաստիկայի մէջ եղած արձանագրութիւնից տեղեկանում ենք, որ կազմուած է այն «**ձեռամբ Շնհաւորիս: ի Թվ. ՉԼԲ**»: Այս Շնհաւոր վարպետի կամ քարգործի մի ուրիշ մեծ գործի հետ կը ծանօթանանք քիչ յետոյ: Խաչի ճակատին, տակը եւ ապա աջ եւ ձախ կողմից շարունակուող արձանագրութիւնից տեղեկանում ենք, որ «Մխիթար որդի Դեղկա հրամանաւ իշխանաց իշխանին մեծն Պռաւշո եւ որդո իւրո պր Հասան(այ)» շինել է Մարտիրոս գիւղը եւ կանգնել այս խաչը «ի դուռն սբ վկայարանիս», որ այժմ չկայ, բայց գիւղացիք ցոյց էին տալիս տեղը քիչ հարաւ: Մխիթարի կինն է Մամեր, որդին՝ Խարփիշահ եւ դուստրը՝ Ռուզուքան: Մարտիրոս գիւղը Պռոշի եւ նորա որդի Ամիր Հասանի օրով եղել է այդ իշխանութեան կեդրոններից մէկը եւ հաւանօրէն նրանց մի ճիւղը մնացել է այստեղ մինչեւ ԺԷ. դարու վերջերը, երբ գիւղն արդէն բոլորովին դատարկուել է հին բնակիչներից: Ներկայ Մարտիրոսցիք 1828 թ. գաղթականներ են Պարսկաստանից, ինչպէս եւ Վայոց ձորի հայ բնակչութիւնն ամբողջապէս՝ չնչին բացառութեամբ: Մարտիրոսում եւ նրա շրջակայքում բազմաթիւ են Պռոշի եւ նորա որդիների անունների հետ կապուած յիշատակները[1]. դոցանից հնագոյնը մի խաչքար է 1275 թուից, միապաղաղ մի քարից, իւր ձեւով անսովոր, նման մահմետական գերեզմանաքարերի. վերից բոլորաձեւ է այն, բայց փորագրուած պարզ եւ ազնիւ: Այս խաչը գտնւում է գիւղի եւ վիմափոր եկեղեցիների մէջ՝ հին գերեզմանատանը ուրիշ մեծ խաչքարերի հետ, որոնց մասին խօսք կը լինի յետոյ: Խաչի բարձրութիւնն է 2,6 մետր., իսկ լայնքը տարբեր է զանազան տեղերում, ինչպէս ընթերցողը նկատել կարող է պատկերից (50): Խաչի աջ կողմից սկսած շուրջանակի գրուած է հետեւեալ արձանագրութիւնը.

---

[1]) Բ. եր. 200:



Թանահատի մատուռի դրան կամարակալ քարը. ՊԱՏԿԵՐ 47.

«Կամաւ այ (աստուծոյ) իշխանութր Ամիր Հասանա ես Մաթէոս վդ կգնեցի զնշանս ինձ եւ Պետրոսո և ծն / (մնացածը խաչի տակ) — ողաց իմոց որք / երկրպագէք ած / ողորմի նոց»: Խաչի հորիզոնական թեւերից բարձր թուականն է. «Թ. ՉԻԴ»: Ալիշան, ի հարկէ, սխալւում է, կարծելով թէ թուականը «ՉԽԴ» պիտի լինի[2]: Երկրորդ խաչքարն է

---

[1] Ոչ իշխանական կամ անորոշ արձանագրութիւնները՝ գիւղի հետագայ պատմութեան միակ աղբիւրները, բացի Մատթէոս վարդապետի մեծ յիշատակարանից, որ կը տեսնենք հետեւեալ գլխի մէջ, տ. Յաւել. Ա. 19:

[2] Խաչքարի նոյնատիպ պատկերը տպել է Strzygowski-ն. Die Baukunst der Arm. II. 721, շփոթմամբ լուսանկարը վերագրելով Թորամանեանին, մինչդեռ մեզնից է ստացել:

1279 թուականից, որ յիշում է Ջալալեան եւս, միայն սխալւում է այս Բաւթարին նոյնացնելով նոյնանուն Օրբէլեանի հետ: Արձանագրութիւնը թուագրուած է Պռոշի եւ նորա որդի Հասանի իշխանութեամբ: Մնացած արձանագրութիւններն ու յուշարձանները հետագայ ժամանակին են վերաբերում, որոնց մասին կը խօսենք հետեւեալ գլխում[1]):

Մարտիրոսից քիչ դէպի արեւելք Եաղւրդ լերան հիւսիսային կողմը մի հրաշալի ձորակում գտնւում են Գէոմիւր եւ Գեարըդ գիւղերը, Գէոմիւր գետակով միայն բաժանուած· կոչւում են նաեւ Ներքին եւ Վերին Ախտա: Առաջինը Ջալալեանը նոյնացնում է Յովսէփ երէցի հայրենիք Հողոցիմ աւանի հետ: Բայց Քաջբերունին շատ աւելի դէպի արեւմուտք՝ Խաչիկ գիւղի մօտերքը՝ Եայիջի գիւղն է համարում այն, որի հետ համաձայն է եւ Ալիշան[2]): Հնում այստեղ եւս Պռոշեանց կենդրոններից մէկն է եղել, հաւանօրէն նրանց ազատներից մէկի սեպհականութիւն, բազմաթիւ յիշատակներից դատելով, Դոցանից ամէնից կարեւորը եւ այժմ լաւ պահպանուածը Գէոմիւրի մատուռն է իւր խաչարձանով, շինուած 1263 թուին: Խաչի երեսն ուղղուած է դէպի արեւմուտք (էջ 24, պատկ· 12), ճակատին թուականն է, երկու զարնեղների միացման անկիւնում, իսկ բոլորաձեւ կամարի անկիւնի վերայ սկսւում է արձանագրութիւնը եւ շարունակւում խաչի շուրջը ձախից դէպի աջ (Յաւելուած Ա. 8): Խոյդանայ որդիքը Մխիթար եւ Արեւիկ կանգնել են այս խաչն ու մատուռը, նոքա շինել են եւ եկեղեցի, որ մինչ այդ գիւղում չկար, ի յիշատակ իրենց եւ ամուսինների:



Բաշքեանդ· մնացորդ հին եկեղեցու· ՊԱՏԿԵՐ 48·

Նոյն իմաստով կրկնւում է արձանագրութիւնը եւ խաչի տակը: Արձանագրութիւնները թուագրուած են «ի բարեպաշտ իշխանութե Պռոշո», «ի Թվ· Հ· ՁԺԲ· (=1263)»· աջ կողմից, կամարի հիմք կազմող կիսախոյակի տակ «Մխիթար» եւ ապա «Շնորհոր աղբար», քարգործի անունն է արձանագրուած: Մարտիրոսի մեծ խաչքարի վերայ (էջ 23, պատկ· 11) արդէն տեսանք յիշատակուած նոյն «Շնհաւոր»ի անունը: Կեղծ կրկնակամարի տակ գրուած է «որդի Մխիթարա», իսկ բուն խաչի գլխին, կամարակալ քարի վերայ՝ «կազմեցաւ խաչս ի բարեխաւսութի Աստարշաին թոռն խոյդանայ»:

---

[1] Ջալալեան Բ· 200–202· Ալիշան· Սիսական 177:

[2] Ջալ· Բ· 202· Քաջբերունի· Արարատ· 1889· 447· Ալիշան· Սիսական 173· 177:

կարծում ենք «որդի Մխիթարա» խօսքերը շարունակութիւնն է «Խոյդանայ» բառի, որով նոյն տոհմի երեք սերնդի յիշատակութիւնը կ'ունենանք։ Խոյդան, նորա որդիքը եւ թոռը Պռոշեանց ազատներից պէտք է լինին, որանց էր պատկանում յիշուած գետակի հովիտը։ Արձանագրութեան մէջ յիշուած եկեղեցին, հաւանօրէն, մատուռից քիչ հեռու, դէպի արեւմուտք եղած աւերակ եկեղեցին է, նորոգուած ՋԾԳ (=1504) թուից յետոյ, որովհետեւ սոյն թուականով խաչքարը դրուած է պատի մէջ։

Բուն խաչքարի լայնքն է 1,60 մետր, իսկ մատուռի ճակատը 3,32 մետր։ Տարաբաղդաբար հնարաւորութիւն չունէինք բարձրութիւնն էլ չափելու։ Խաչքարը զետեղուած է կիսախոյակների վրայ հաստատուած կեղծ կամարի տակ· կամարակալ քարը ամբողջապէս զարդարուած է քանդակներով, կեդրոնում մի խաչով։ Բուն խաչքարի կեդրոնական մասը մի մեծ խաչաքանդակ է, խարսխուած զարդարուն վարդեակի վրայ։ Խաչի արմատն են կազմում աջից եւ ձախից մի մի արմաւենիկներ, որոնց վրայ կանգնած են դարձեալ մի մի աւելի փոքր խաչ, մեծ խաչաքանդակի հորիզոնական թեւերի տակ, իսկ թեւերից վերեւ տարածութինը ծածկուած է մի մի օրնամենտով։ Այս խաչքանդակն էլ առնուած է կեղծ կամարի տակ· խաչի կողքերից եւ վերեւից շրջանակ են կազմում երկրաչափական եւ աստղաձեւ զարդարանքների փոխ առ փոխ շարքը։ Ճակատին՝ անկիւնաքարերը, տանիքի կողերի տակ, զարդարուած են նոյն մոտիվներով, ինչ որ կամարակալ քարն ունի։ Կեդրոնական խաչքարի ձախ կողմը նոյն ձեւով, բայց փոքր դիրքով քանդակուած է մի ուրիշ խաչ։ Խաչի տակը, ներքեւի ճակատն ամբողջապէս առնուած է կրկնակի գարնեզով քառանկիւնի շրջանակի մէջ, կեդրոնում դէմ առ դէմ եղն ու առիւծը, բոլորովին հանգիստ դիրքով, իսկ մակերեւոյթը ծածկուած է օրնամենտներով եւ երկու կողմից մի մի վարդեակով· աջ կողմը մի կանթաւոր անօթ։ Տանիքի ճակատին՝ սուր անկիւնում, եղել է մի Ֆիգուր կամ զարդ, որ կոտրուած է։

Մատուռը կցուած է այս խաչարձանին արեւելեան կողմից, որի հիւսիսային կողմում փոքրիկ դուռն է (տ. Սիսովի աշխատ. եր. 155. պատկ. 88), ճակատին հետեւեալ արձանագրութեամբ.



Պռոշեանց դարբասի դրան ճակատաքարը, Բաշքենդում. ՊԱՏԿԵՐ 49.

Կամեցաւ խաչս բարեխաւսութե Եղ/իաի քահանայ որք պատարա£էք յիշեցէք (s!) ի սր [պատ]արա£ս ձեր։

Մատուռի մէջ եւս մի եղծուած արձանագրութիւն կայ Պռոշի որդու Պապաքի անուան յիշատակութեամբ. հաւանօրէն այս երկու արձանագրութիւններն էլ մատուռի շինութեան հետ չեն կապուած։

Մատուռի արեւելեան ճակատին, փոքրիկ լուսամուտի գլխին, տանիքի կողերի միացմամբ կազմուած անկիւնն ամբողջապէս զարդարուած է քանդակներով (պատկ. 51). վերեւը մի պտտող սվաստիկա, նորա տակ թեւատարած արծիւը մագիլների մէջ բռնել է մի խոյ, արծուի երկու կողմից մի մի սիրամարգ, որոնցից աջ կողմինն ամբողջապէս դարձած է դէպի արծիւը, իսկ միւսը դէպի ձախ ուղղուած, բայց թեքել է գլուխը դարձեալ դէպի արծիւը։ Քանդակի մնացած մասը, բու-

սակաւ, դեկորատիվ զարդեր են:

Գեարըդ կամ Վերին Ախտա գիւղում, որ գտնըւում է գետակի միւս կողմը, աջ ափին, ձորամիջի մի բարձր ժայռի գլխին կայ փոքրիկ եկեղեցի, իսկ ժայռի երեսը ծածկուած է բազմաթիւ խաչաքանդակներով: Ջալալեանի տեսած «մահարձանը» քառանկիւնի, սիւնաձեւ մի կոթող է, 3,2 մետր երկարութեամբ, կողերը 60×50 սմ., որ հաստատուած է եղել պատուանդանի վրայ, իսկ գագաթը պսակուած պատրհանաձեւ (փակ, կեղծ պատուհան) մի քարով, իր կարգին հաստատուած 0,6×0,83 պատուանդանի վերայ. քարի երեսը ծածկուած է այժմ անընթեռնլի գրով, իսկ քարի վերայ հաստատուած է Տիրամօր պատկերը «ի գրկի ունելով զՓրկիչն աշխարհի»: Վերոյիշեալ ժայռից քիչ հարաւ կանգուն են մի շարք խաչքարեր, մի քանիսը մեզ համար կարեւոր արձանագրութիւններով եւ 1261, 1266 եւ 1271 թուականներով, որ տարաբաղդաբար երեկոյանալու պատճառով՝ լուսանկարել չկարողացանք:



խաչքար, Մարտիրոս գիւղում. ՊԱՏԿԵՐ 50.

Դոցանից առաջինը կոտրած է. ներքեւի մասում ունի հետեւեալ արձանագրութիւնը. «Ի Թվ. ՉԺԱ./ ի յիշխանութեանս Պռո/շոյ ես Մխիթար ու Դեղս կա/նգնեցաք զխաչս եղբաւր մերոյ / Շաշին ի բարէխաւս»:

Երկրորդ խաչքարն ունի 2,6×1,22 մետր մեծութիւն, հետեւեալ արձանագրութեամբ. «Ի Թվին ՉԺԵ. Ես Ղուկաս եւ Եղիա կա/նգեցաք ըզ խաչս ի բար/էխաւսութի հաւր իմոյ Տիրատէր քահան ի/շխանութբ (ի չէ կրկնուած) Պռոշայ»[1]):

Երրորդը կից է սորան 1,85×1,5 մ. մեծութեամբ, «Ի Թվ. Հ. ՉԾԻ: իշխան/ութբ Պռոշոյ/կամաւն այ(ստուծոյ) ես Սարգիս Գրիգոր կանկնեց/աք զխչաս ի բար[ե]/խաւս մեզ եւ զա(ւակաց) կդկք?

Ըստ Ջալալեանի այս գիւղում պէտք է եղած լինի մի ուրիշ խաչքար ՉԼԵ=1286 թուից, «ի Դեղէ, յիշխանութեան Պռոշոյ եւ Ամիր Հասանայ», որ մենք գտնել չկարողացանք:

Պռոշի մահը Մխիթար Այրիվանեցին նշանակում է 1281 թուից յետոյ եւ Արղունի թագաւորելուց (1284 թուին) առաջ. «Փոխեցան ի Քրիստոս աշխարհաշէն իշխանքն Պռոշ եւ Սադուն Արծրունի»[2]): *Սակայն հաստատ գիտենք, թէ նա կենդանի էր 1283 թուին Գեղարդի մեծ արձանագրութեան համեմատ (տ. Յաւել. Ա. 17): Բայց մի անծանօթ ժամանակագիր Սադունի մահը որոշ կերպով նշանակում է 1285 թուին[3]). Օրբէլեանի պատմութիւնից եւս կարելի է եզրակացնել, որ Արղունի թագաւորութեան առաջին տարին՝ 1284/5 թուին պէտք է մեռած լինէր Սադունը, որ նորա փոխարէն աթաբէկ նշանակուէր Տարսայիճ Օրբէլեան[4]): Բայց աշխատութեանս տպագրութեան վերջին պահին մեր ձեռքը հասած երկու աղբիւր կասկածի ոչ մի տեղիք չեն թողնում, թէ Պռոշ վախճանուել է 1284 թուին: Դոցանից առաջինը Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի մի աւետարանի յիշատակարանն է, գրուած ՉԼԳ թուին, ասել է 1284 թուին, առանց Պռոշի անուան յիշատակութեան, Թանատի վանքում,* «յիշխանութե բարեպաշտ Պապաքին»[5]): *Իսկ միւսը Օրբէլեանի նորագիւտ ժամանակագրութիւնը, որ դարձեալ նոյն ՉԼԳ թուին է նշանակում Պռոշի մահը.* «մեռանի մեծ եւ բարի իշխանն

---

[1]) Ջալ. Բ. 205, Ալիշան. Սիսական. 175: Սոքա չունին արձանագրութիւնների բնագիրները:

[2]) Այրիվանեցի 68:

[3]) Սամուէլ Անեցի. շարունակ. եր. 163. Շողակաթ. Զագավանից ժողովը. եր. 26:

[4]) Օրբ. 425/6:

[5]) Տ. Աւետիսեան. Նոր Ջուղ. Ցուց. № 34 (35 Ամենափրկչի), արտագրութեամբ Հ. Ն. Ակինեանի (տ. Յաւել. Բ. 17):

Հայոց Պռաւշ եւ դնի ի Կեչառուս»[1]) ։ *Բայց այս թուականից յետոյ էլ 1286 թուին երկու անգամ յիշատակուած ենք տեսնում Պռոշի անունը արձանագրութիւնների մէջ· այն է Մարտիրոս գիւղի վիմափոր տաճարի, որի մասին կը խօսենք, եւ Ջալալեանի յիշած Դեղի խաչքարի արձանագրութիւնների մէջ· առաջինը բացատրել կարելի է նրանով, որ չէնքն սկսուել է Պռոշի կենդանութեան ժամանակ, իսկ երկրորդի ստուգութիւնը երաշխաւորել չենք կարող, եւ դուցէ կապուած էր այն որեւէ չէնքի հետ, որ նոյն բացատրութեամբ հասկանալի կը լինի ։*

Պռոշի Կեչառոյքի վանքում թաղուելու մասին ունինք եւ հետագայ ժամանակների վկայութիւն ։ Սահակայ որդի Փիլիպպոս երէցի 1641 թուի յիշատակարանի համեմատ Պռոշ թաղուած է Կեչառուաց վանքի Ս. Հռիփսիմէի մատրանը[2]) ։ *Մի երկրորդ վկայութիւն ունինք 1677 թուի մի աւետարանի յիշատակարանից· Մկրտիչ ստացողը աւետարանը տալիս է* «ի բազմահավաք եկեղեցուն Լուսաւորչին եւ սբ Նշանին եւ Կարապետին եւ սբ Յարութենին եւ սբ Հռոմսիմին, եւ սբ Ստեփանոսին, որ աստ կան հաւաքել, ի գեօղն որ կոչի Կէչառիս, որ ասի Ծաղկունաց գւռ, որ հանգուցել կայ Պռոշ իշխան»[3]) ։ *Մեզ անյայտ են այն պատճառները, որոնք արգելք եղան նրան թաղելու Գեղարդում, ուր վիմափոր, տոհմական յատուկ հանգստարան էր պատրաստել իւր եւ իւր ազգի համար ։*

---

[1]) Երեւանի թանգարանի № 670· Զ–ը· գտել է եւ ընդօրինակել հ· Ներսէս Ակինեան ։

[2]) Ալիշան· Այրարատ· 263 ։

[3]) Ձեռ· էջմ· № 335· Հ· Ակինեանի ցուցմամբ· (տ· Յաւել· Բ· 18) ։

Վեդի գետակի հարաւային վտակի՝ Շահապլուի ակունքում, Ղարախաչ գիւղի գերեզմանատանը եղել է մի մատռաձեւ խաչքար, որ այժմ ցած է ընկած, բաւական նուրբ գործ· պատուանդանի զարնեզի վրայ կայ մի արձանագրութիւն, որից կարդացւում է հետեւեալը· «Կամաւն այ (աստուծոյ) եւ իշխանութբ պրոն Պռ··· բարեխաւս մեզ եւ ծնողաց» ։ Արդեօ՞ք յատուկ անուան պակասը պիտի լրացնել «Պռ(ոշոյ)»· այս վայրերը սակայն Պռոշեանց սեպհականութիւն չեն եղել, այլ Օրբէլեանց ։ Տես մեր յօդուածը Христ. Вост. Потомст. Тарсаича եւլն· 230—231 ։

Դ.

ՊԱՊԱՔ ԵՒ ԱՄԻՐ – ՀԱՍԱՆ Ա.

Նախընթաց գլխի մէջ տեսանք, թէ Պռոշի եւ Խութլու Խաթունի որդիքն էին Պապաք, Ամիր–Հասան, Վասակ, Մկդէմ եւ դուստրը Գոհար Խաթուն, վերջին երկուսը վախճանուած էին Գեղարդի պահարանի արձանագրութիւնից (1268 թ.) առաջ, իսկ Վասակ 1268—1273 թ. թ. մէջ: Պռոշի մահուանից յետոյ նորա իշխանութեան անմիջական ժառանգներն էին, ուրեմն, Պապաք եւ Ամիր–Հասան եղբայրները, առաջինն իբրեւ աւագ իշխանապետութեան իրաւունքով: Այս իրողութիւնը հաստատում է ոչ միայն ժամանակի ժառանգական իրաւունքով[1]), *այլ եւ աղբիւրների ցուցմամբ: Ամէն անգամ հօր կենդանութեան կամ մահուանից յետոյ՝ յիշատակւում է նախ Պապաքի եւ ապա Ամիր–Հասանի անունը. այսպէս էր Գեղարդի պահարանի արձանագրութեան մէջ 1268 թուին, Թանատի շինութեան արձանագրութեան մէջ 1273 թուին (էջ 61). նոյնը կը տեսնենք եւ այսուհետեւ մէջ բերուելիք յիշատակարանների եւ արձանագրութիւնների մէջ: Հօր մահուանից անմիջապէս յետոյ առաջին յիշատակութիւնը տեսնում ենք մի աւետարանի յիշատակարանի մէջ*[2]) *որ գրուած է 1284 թուին Թանատի վանքում: Ստացողն է Վարդան վարդապետ* «սնել եւ վարժել ի սբ ուխտիս, որ կոչի Արատէս, առ ոտս ածազարդ բաբունոյ Հայրապետի նորոգիչ եկեղեցոյ եւ սիրող սրբութե»: *Այնտեղից անցել եւ բնակուել է* «ի մենաս–



Վերին Ալստայում, արծիւ մագիլների մէջ խոյ. ՊԱՏԿԵՐ 51.

---

[1]) Տես X. B. 1913. T. II. вып. II. 225. Գոշ Մխիթար. Դատաստ. եր. 300:

[2]) Տ. Աւետիսեանի Ն. Ջուղայի Ցուց. № 34 (=35 վանքի ցուց.): Ձեռագիրը աւետարան է, թուղթ, բոլորգիր, ըստ ցուցակագրողի, «թէ գրութիւնը եւ թէ նկարները գեղեցիկ օրինակ կարող են ծառայել այն շրջանի արուեստի»: «Ունի բազմաթիւ խորաններ, զարդանկարներ, լուսանցազարդեր», Մատթէոս աւետարանչի պատկերի տակ գրուած է «Ծաղկող Յովանէս վրդ.»: (Տես. Ցանկ. Բ. 17):

տանիս, որ կոչի Գնդեվանս», *եւ գծագրել տուել* «զսա ի թուաբերութես Հայոց, որ էր ՉԼԳ· ի հայրապետութե հյց տն Յակոբայ եւ յարհի եպսե այսմ նահանգի տր Սարգսի գիտնականի, յիշխանութե բարեպաշտ Պապաքին եւ ի տէրութե այսմ մենաստանի պատրոն Դաւթի եւ ամուսոյն (s!) իւրոյ Թամսերին, ձեռամբ սրբասնել եւ պատուական Յովանէսի ի սբ ուխտէն, որ կոչի Թանատի վանս, որ մեծաւ աշխատուբ գրեաց զսա, եւ նկարեաց ըստ իւրում կարողութեան...»[1]):



Պապաքի վիմափոր ժամատան սիւնը· ՊԱՏԿԵՐ 52·

Մարտիրոս գիւղի Խաչ-դէրէսիում (Խաչաձոր) եղած արձանագրութիւնը թուագրուած է երկու եղբայրների իշխանութեամբ 1288 թուին՝ առաջին տեղը Պապաքին տալով·



Պապաքի վիմափոր ժամատան սիւնը· 53·

«Ի Թվականիս Հայոց ՉԼԷ յիշխանութեան

---

[1]) Սոյն Ձեռագրի յիշատակարանը տալիս է մեզ մի կարեւոր նորութիւն, որ մինչեւ այժմ ձեռքի տակ ունեցած աղբիւրներով դեռ յայտնի չէր: Այսինքն, Գնդեվանքն էլ Պռոշեանց իշխանութեան սահմանների մէջ էր մտնում, բայց անմիջական սեպհականութիւն էր ստորադաս իշխանական մի ուրիշ տոհմի, որի մի ներկայացուցիչը «պատրոն Դաւիթ», իւր ամուսին Թամսերի հետ յիշւում է այստեղ: Խաղբակեանց կամ Պռոշեանց նոր իշխանութեան սահմանների քննութեան մէջ (Գլ· Գ· էջ· 24) մենք գրել էինք, թէ «Մարաքուսից դէպի հիւսիս՝ մինչեւ Քիշնէի վտակը՝ Քոչպէկ, Թերփ եւ Թարփ··· գիւղերով, *հաւանօրէն*, պատկանում էր Պռոշեաններին, որովհետեւ Շահապունեաց, Ջուլի եւ Քիշնէի ակունքներով են վայոց ձորն ու Շահապունիքը սահմանամերձ դառնում Բարկուշատին»: Այս յիշատակարանը միանգամայն հաստատում է մեր ենթադրութեան ճշմարտութիւնը, Գնդեվանքն էլ մէջն առնելով, որ շատ քիչ հեռու է Թարփ գիւղից: Յիշատակարանի մէջ յիշատակուած Սարգիս եպիսկոպոսը Նորավանքի աթո-

Պապաքին եւ Ամիր Հասանայ ես Սարգիս եւ որդին իմ Պետրոս շինեցաք զաղբիւրս եւ կանգնեցաք զխաչս···»1):

Թանատի վանքի մի երկրորդ արձանագրութեան մէջ նախ Պապաքն է յիշուած եւ ապա Ամիր–Հասան (Յաւել· Ա· 18բ·): Ալիշան սխալմամբ 1263—1267 թըւերի գործ է համարում այն, բայց այդ անկարելի է, նախ այն պատճառով, որ ինչպէս տեսանք, այդ թուականներին եկեղեցին դեռ շինուած չէր, եւ երկրորդ, որ այդտեղ յիշուած էր Արղունի (1284—1291) անունը:



Խաչեր, Պապաքի վիմափոր ժամատանը· ՊԱՏԿԵՐ 54·

Պռոշի մահուան տարեթիւը որոշելուց յետոյ, առել կարող ենք, որ գրուած է այն 1284 թուից յետոյ որովհետեւ անկարելի էր, որ նորա կենդանութեան ժամանակ Խութլու բէկը յիշէր որդիների, նոյն իսկ թոռան անունը՝ «ողորմութբն Պապաքին Հաս(անայ մանկանն Էաչոյ)»՝ լռութեան տալով տան նահապետի, մեծափառ իշխանի անունը:

Պապաքի զինուորական գործունէութեան մասին չունինք տեղեկութիւն, բայց նա 1292 թ· մի յիշատակարանի համաձայն սպարապետութեան պաշտօն ունէր, ինչպէս եղբայրը Ամիր–Հասան կամ սորա որդին Էաչին հետագայում: Յիշատակարանը գրուած է «յիշխանութիւն մերոյ նահանգիս մեծ սպարապետացն Պապաքին եւ Էաչոյ (տպ· Խաչոյ), որդւոյ եւ թոռին մեծին Պռոշոյ, ժառանգք իշխանութեան ամենօրհնեալ ցեղին Խաղբակեանց»2): Մենք առիթ ենք ունեցել բացատրելու, որ Պռոշեանները Իւանէի կամ Աւագի տան սպարապետներն էին. այդ պատճառով էլ վերոյիշեալ արձանագրութեան տէր Խութլու բէկը, որդի Մխիթարայ եւ թոռն Խալայշահին, թուագրում է «յաշխարհակալութեան Արղունին, իշխանութեան Խոշաքին», եւ ապա միայն յիշում իւր անմիջական իշխաններին՝ Պր-

---

ռակալն էր, Ստեփանոս Օրբէլեանից առաջ եւ նորա ժամանակ, միայն պատմիչը ձեռնադրութիւնից յետոյ նախաթոռ հանդիսանալով Տաթեւի եւ Նորավանքի ժամանակակից եպիսկոպոսների մէջ (Օրբէլեան· 418, 429, 461, 480, 499): Սարգիս եպիսկոպոսի յիշատակութիւնը Պռոշեանց իշխանութեան սահմաններում հասկանալու համար, չպէտք է մոռանալ, որ Վայոց ձորի գիւղերը հոգեւորապէս ենթարկւում էին Սիւնեաց թեմին: Նորա անուան կրկնութիւնը կը տեսնենք եւ ուրիշ յիշատակարանների եւ արձանագրութիւնների մէջ:

1) Ալիշան· Սիսական 175:

2) Արարատ, 1876· 412:

ռոշի որդիների անունները: Երկրի գերագոյն իշխանը Արղունից յետոյ Խոջաքն էր, Աւագի եւ Գոնցայի դուստրը, որ ամուսնացաւ Թաթար մի իշխանի հետ, ժառանգելով իւր հօր իշխանութիւնը[1]):


Պապաքի արձ· Կեչառոյքում· ՊԱՏԿԵՐ 55·

Համեմատաբար աւելի տեղեկութիւն ունինք Պապաքի շինարարութեան մասին. նորան է վերագրւում Կուքուայ վանքի շինութիւնը, որի մասին առիթ ունեցանք յիշատակելու Գ. գլխի մէջ (էջ 30): Ինչպէս Պռոշ իշխանի, այնպէս էլ Պապաքի շինարարութեան գլխաւոր վայրը Գեղարդն էր: Այստեղ է նա կառուցել իւր մեծ, վիմափոր ժամատունը, աւելի մեծ քան Գեղարդայ միւս վիմափոր տաճարներն ու գաւիթները, բայց ոչ նրանց գեղեցկութիւնով. այնտեղ թէ յատակագիծը, թէ քանդակներն իրենց մանրամասնութիւններով, աւելի ազնիւ են, քան այստեղ: Պապաքի ժամատունն աւելի գիւղական տան տպաւորութիւն է թողնում, անզարդ եւ անպաճոյճ, բացառութեամբ հաստահեղոյս սիւների եւ մի քանի խաչերի: Սիւներն իրենց խոյակներով եւ ստալակտիտ քանդակներով կրում են իրենց ժամանակի դրոշմը, իսկ արձանագրութիւնն էլ (Ցուցկ. Ա. 20. պատկ. 52–53) հաստատում է, որ ժամատունը կառուցել է Պռոշի որդի Պապաքը իւր Ըռուզուքան ամուսնու հետ ՉԼԷ (=1288) թուին ,յիշատակ իրենց հոգու և որպէս անմահ զաւակ՝ Տէր Մարգարէի առաջնորդութեան ժամանակ: Խաչերի մէջ ուշադրութեան արժանին այն է, որ որոշ օրնամենտներ նկարուած են եւ ոչ քանդակուած, թէեւ գոյները փոքր ինչ խունացած են. խաչերի թիւը վեց է, արեւելեան պատի վերայ (պատկ. 54):

Պապաքի ժամատունը գտնւում է Պռոշի վիմափոր տաճարի գաւթի գլխին, դէպի արեւմտահիւսիս. մի փոքրիկ բացուածքով Պապաքի ժամատան արեւելահարաւային անկիւնից հաղորդակցութիւն կար Պռոշի այդ վիմափորի հետ: Ժամատան մուտքը ժայռի արեւմըտեան կողմից է, գրեթէ, իւր բարձրութեամբ հաւասար բուն տաճարին կամ Կաթուղիկէին կից գաւթի տանիքին: Մի միջանցք 9,65 մետր երկարութեամբ եւ 1,88 մ. լայնութեամբ տանում է դէպի վիթխարի ժամատունը, որի չորս հաստահեղոյս սիւների վերայ հանգչում են սիւներն իրար եւ պատերի հետ միացնող կամարները: Մեր այստեղ ցուցադրած երկու պատկերը (52—53) աջակողմեան զոյգ սիւնն են ներկայացնում արեւմտեան և հարաւային ճակատներից՝ լիովին գաղափար տալով նրանց ձեւի եւ խոյակների զարդի մասին: Առաստաղի կեդրոնում երդիկն է, լայնափոր կիսագմբէթով բայց առանց ստալակտիտների կամ այլ զարդերի ինչպէս ԺԳ. դարու ժամատների առաստաղներն են կամ հէնց Այրի վանքի տաճարին կցուած ժամատունը, որի մասին խօսք կը լինի յետոյ. շէնքի մեծութիւնն է արեւելքից արեւմուտք 13,5 մետր եւ հիւսիսից հարաւ 13,3 մետր, գրեթէ քառակուսի յատակագծով:

Ժամատունը եղել է իշխանական հանգստարան. արդեօ՞ք Պապաքն ու Ըռուզուքանն այնտեղ են թաղուած. տեղեկութիւն չունինք. մնացած են միայն երկու տափակ գերեզմանաքարեր այսպիսի արձանագրութեամբ.

ա. Այս է հանգիստ պարոն Մէրկկին.
բ. Այս է հանգիստ պարոն Գրիգորին.

Տարաբաղդաբար հնարաւորութիւն չունինք որոշելու ե՞րբ էին ապրում այս իշխանազունները եւ ինչո՞վ նշանաւոր հանգիստացան: Ցամենայն դէպս, այստեղ յիշուած Գրիգորը աւելի ուշ էր ապրում քան Գրիգոր Խաղբակեանը, Գանձակի հերոսը, նոյնիսկ ոչ վաղ, քան ԺԳ. դարու կէսերը, մինչեւ երբ մենք հետեւել կարող ենք Պռոշի որդիների եւ թոռների ուղղագիծ յաջորդականութեան:

Գէոմըր գիւղի մէջ եղած արձանագրութեան մնացորդի մասին Պապաքի անուան յիշատակութեամբ, խօսք եղաւ վերեւ (էջ. 69). արձանագրութեան եղծըւած լինելու եւ մթութեան պատճառով հազիւ կարողացանք հետեւեալ բառերը կարդալ. «Կամաւ այ. (մի տառ) աս․․ (երկու տառ) / ս Պապաքիս որդի Պռոշոյ պարգեւեցի (?) շինագլուխ․․․[1]):

---

[1] Օրբ· 412· 418· Շողակաթ· Ջագավանից ժողովը· 24:

Պապաքի մի այլ արձանագրութիւն ունինք Կեչառուսյ վանքի Լուսաւորչի ժամատան հարաւային պատին՝ ներսից (Յաւել․ Ա․ 21․ պատկ․ 55)․ «Պապաք որդի Պռոշոյ թոռն Հաղբակենց» իւր ազգական ընկեր Գրիգորի հետ տալիս է իւր «Կաւանոցի Նորքն ու Մ։ ապ։», ընծայած կալուածն ազատելով ամէն հարկից․ իսկ միաբանները հաստատում են վեց պատարագ «ի տաւնի սրբոյն Ստեփանոսի յանուն Գրիգորոյ»։ Արձանագրութիւնը թուական չունի, բայց հաւանօրէն Պռոշի մահուանից յետոյ պիտի գրուած լինի։ Այստեղ յիշուած Պապաքի ազգական Գրիգորի մասին միայն ենթադրութիւն կարող ենք անել, որ կը յայտնենք յետոյ․ անյայտ է նաեւ Կաւանոցի տեղը։



Մատթէոս վարդապետի արձ․ Մարտիրոսում․ ՊԱՏԿԵՐ 56․

Պապաքի գործունէութիւնից յայտնի է մի ուրիշ բան․ 1295/6 թուին իւր եղբօրորդի Խաչէի (Ամիր Հասանի որդին) հետ ստորագրում է Ստեփանոս Օրբէլեանի նախագահութեամբ Գրիգոր Անաւարզեցու դէմ գումարուած ժողովի ձեռնարկին[2])․ Թէպէտ այստեղ Պապաքն ու Խաչէն ընդհանուր կերպով կոչուած են «որդիք բարեպաշտ իշխանին Պռոշայ», բայց Պռոշ Խաչէ անունով որդի չի ունեցել, այլ միայն թոռն։

Յովհաննէս Բարաղամեանի անտիպ ցուցակի № 288 յիշատակարանի համեմատ (Լիմի, Կտուց անապատի եւայլն ձեռագիրներ) 1288 թուին դեռ եւս կենդանի էր Պապաք․ ափսոս, որ յիշատակարանը թերի է, թերթ ընկած լինելու պատճառով։ Յիշատակարանը թուագրուած է ի միջի այլոց եւ «քաջ եւ զօրեղ իշխանացն որդւոցն Պռոշոյ Պապաքին․․․»․ (Յաւել․ Բ․ 19)։ Պապաքի անուան վերջին յիշատակութիւնը գտնում ենք Խոտակերաց Ս․ Նշանի պահարանի արձանագրութեան մէջ[3]), գրուած 1300 թուին․ դորանից առաջ, գուցէ, 1298/9 թուին արդէն վախճանուած էր Պապաք, որովհետեւ Ստեփանոս Օրբէլեան Խաչէն արդէն իբրեւ կողմնակալ է յիշում, իսկ նա իւր պատմութիւնը փակում է 1299 թուին։

Պապաքի որդիների մասին ոչ մի յիշատակութիւն չունինք։ Գեղարդի վիմափոր ժամատան արձանագրութիւնն էլ իրաւունք է տալիս ենթադրելու, թէ Պապաք անզաւակ էր․ իշխանական զոյգի անմահ զաւակը ժամատունը պիտի լինէր։ Այս մտքի հաստատութեան ապացոյց կարող է լինել նաեւ Պապաքի եղբօր Ամիր-Հասանի կնոջ յիշատակարանը (Յաւել․ Բ․ 20), ուր Պապաքի մասին յիշատակութիւն կայ առանց զաւակի, որ դժուար լռութեան մատնուէր եւ Խաչէի հետ չյիշուէր, եթէ այդպիսի զաւակ ունենար։ Աւելացնենք նաեւ, որ Պապաքի յաջորդը իբրեւ Պռոշեանց իշխանապետ Խաչէն եղաւ, որ անկարելի կը լինէր դարձեալ տիրող օրէնքի համեմատ, եթէ Պապաք որդի ունենար։

Պապաքի եղբայր Ամիր-Հասանը, ինչպէս տեսանք, շատ յաճախ յիշատակւում է արձանագրութիւնների մէջ հօր եւ եղբայրների հետ։ Դոցանից հնագոյնը Գեղարդի պահարանի արձանագրութիւնն էր, 1268 թուին (տ․ Յաւել․ Ա․ 15․ էջ․ 54)։ Ապա Թանահատի շինութեան արձանագրութիւնը (էջ․ 61)․ Նորա անունը յիշատակուած տեսանք նաեւ 1275 եւ 1279 (էջ․ 67), 1283 (էջ․ 66, 67), 1284 եւ 1286 (էջ․ 70) թուականների արձանագրութիւնների մէջ։ Հասանի անուան յաճախ կրկնութիւնը Մարտիրոս եւ նորան կից Վերին եւ Ներքին Ախտա գիւղերում, ապացոյց կարող է լինել, թէ այս շրջանը նորա կառավարութեան կեդրոնն էր հօր կենդանութեան վերջին տարիներում եւ նորանից յետոյ։ Հօր մահուանից յետոյ անմիջապէս մի խաչքար 1284 թուից միայն Հասանի անունով է թուագրուած՝ Արիստակէս, Աթանէս եւ Յովհաննէս եղբայրների կողմից, իրենց հօր Մխիթարի յիշատակին: Մի երկրորդ խաչարձան Ամիր–Հասանի անուան յիշատակութեամբ 1286 թուին կանգնել են Աւետիս եւ Վահրամ եղբայրները իրենց հօր Մխիթարի եւ Վահրամի տիկնոջ յիշատակին: Ջալալեան եւ նորանից առնելով՝ Ալիշան սխալ ընթերցուածներ ունին եւ միտքն աղաւաղած են1) (տես Յաւել· Ա· 22):

---

[1] Տարբեր ընթերցուածներով Սիսով (Мат. по Археол. Кавк. 156։

[2] Օրբ․ 463։

[3] Գեղարուեստ № 4։ Մեր Գրչութեան Արուեստը Գ․ § 28․ Տախտ․ ԺՁ․։ Քիչ յետոյ եւս Է․ գլխի մէջ։

Կամաւն այ (աստուծոյ) եւ իշխանութբ / Ամիր Հասան: մեք եղբարքս Աւ/ետիս եւ Վահրամ կազ· զխաչ / հաւր մեր Մխիթ· և ամնուսնո / Վահրամա եւս (s!) տիկնոջ որք / կազ· ած / ողորմի ասէք· ի Թվ· ՉԼԵ· խաչի տակը գրուած է· «Գրիչ»:

Նոյն 1286 թուականին Ամիր Հասանի կինը Թաճեր գրել է տուել մի Նարեկ, սեպհականութիւն Լիմ անապատի, այժմ գտնւում է էջմիածնի մատենադարանում եւ կրում է Ն· Յ· 408 համարը, հաստատ թղթի վերայ արեւելեան բոլորգրով: Բացի գլխաւոր յիշատակարանից մի քանի տեղ կան համառօտ յիշատակագրութիւններ ստացողի եւ նորա որդու Խաչիի անուան յիշատակութեամբ:

Համեմատաբար աւելի ընդարձակ տեղեկութիւններ ստանում ենք Ձեռագրի վերջում եղած մեծ յիշատակարանից (Յաւել· Բ· 20)· «ածասեր եւ բարեպաշ(տ) եւ արքայուհի պարծանաց» պարոն Թաճերը գրել է տուել այս գիրքը «յերկար կենդանութի եւ բարէխաւս առ տր իւրն եւ պատուական գլխոյն իւրոյ ածազաւր իշխանաց իշխանին Հասան(այ) որդոյն Պռուշայ եւ հարազատ եւ (պար)ծանաց եղբաւր իւրոյ Պապաքին եւ գեղ(ուղէշ, եցիկ? եւ բարե)պաշտ զաւակին Խաչոյ··· ի գաւառիս Վայոց ձոր ի վանս Թառեւոյ2), ձեռամբ Յովանիսի տխմար եւ ագէտ գրչի, ի վերայ դիտողութե Թորգոմեան սեռից տն Յակոբայ եւ ի թագաւորութե Լեւոնի եւ մերոյս գաւառի հայրապետութե տն Սարգսի գիտնական(ի եւ) հեզի եւ անարատի պատուիրանաց տն կատարողի»: Ստացողն ապա կրկին խնդրում է օգտըւողներից յիշել «զամենաւրհնեալ պարոնայքն զԹաներն եւ զՀասան··· (երկու գիր: եւ զ)Պապաքն եւ զԽաչի»: Գրիչն ապա աւելացնում է, որ նա կատարել է «զհրամանն մարմնաւոր տէր(անց)» գրելով այս գիրքը: Յիշատակարանի վերջում մեծ տառերով գրուած է «Թվկ· ՉԼ—» տարաբաղդաբար միաւորի միայն կէսը մնացած, ինչպէս եւ Լ-ի պոչը կտրուած· միաւորը՝ մնացորդից դատելով՝ կարող է ա, ե կամ է լինել, սակայն առաջինը կարելի չէ, որովհետեւ 1282 թուին կենդանի էր դեռ եւս Պռոշ մեծ իշխանը, հնարաւոր չէ երրորդը, որովհետեւ մեռած էր արդէն Յակոբ կաթուղիկոսը, այսպիսով յիշատակարանի գրութեան ժամանակը կարող ենք ճշդիւ նշանակել ՉԼԵ (=1286) թիւը:

Ձեռագիրն սկզբում ունի մի սկզբնազարդ, երբեմն եւ լուսանցքի զարդեր, պարզ գոյներով, առանց ոսկու գործադրութեան եւ արեւելեան ոճով: Ձեռագիրը վատ է պահուած, հնարաւոր չէր գոնէ սկզբնազարդը նկարել, գաղափար տալու գրչի կարողութեան մասին:

Այս միեւնոյն գրչի՝ «սրբասնեալ եւ պատուական Յովանէսի ի սբ ուխտէն որ կոչի Թանատի վանս»՝ պէտք է լինի նաեւ Պապաքի անուան յիշատակութեամբ 1284 թուի աւետարանը, որի մասին յիշատակութիւն եղաւ վերեւ (էջ· 70 եւ 72):

Մարտիրոս գիւղի ամենակարեւոր շէնքը վիմափոր եկեղեցիներն են, որոնց շինողն է այն Մաթէոս վարդապետը, որ խաչքար է կանգնել նոյն գիւղում 1275 թուին Պետրոսի անուան յիշատակութեամբ: Եկեղեցիները շինուած են 1286 թուին, ափսիդի ձախ կողմը՝ պատրհանաձեւ աւանդատան գլխին եղած արձանագրութեան համեմատ, «ի բարէխաւսութի ինձ (Մաթէոս վարդապետի) եւ Պետրոսի, (նորա հոգեւոր հօր) եւ ծնողաց մերոց եւ պարոնաց մեր», այսինքն Պապաքի, Հասանի, սրա Խաչի որդու եւ Հասանի կնոջ Թաճերի, Յակոբ կաթուղիկոսի (Կլայեցի) եւ գաւառի Տ· Սարգիս եպիսկոպոսի (Նորավանից, որի հոգեւոր տեսչութեանն էին ենթարկւում նաեւ Պռոշեանների գիւղերը Վայոց ձորում) ժամանակ: Արձանագրութիւնը տեղ–տեղ եղծուած է, բայց հնարաւոր է լիովին վերականգնել (Յաւել· Ա· 23· պատկ· 56): Նոյն Մաթէոս վրդ·ի ձեռքով 1292 թուին գրուած աւետարանի յիշատակարանը տալիս է աւելի մանրամասնութիւններ թէ եկեղեցիների շինութեան եւ թէ Ամիր–Հասանի անձի մասին· «բայց գրեցաւ ի գաւառիս, որ կոչի Վայոց ձոր· յանապատիս որ (կո)չի Աղաւ, ընդ հովանեաւ մաւրս յի եւ սրբոյն Գէորգայ եւ այլ սրբոցս· ի քահանայպետութե (s!) նահանգիս տն Ստեփանոսի (պատմագիր Օրբէլեանն է) հեզի եւ մարդասիրի: եւ յիշխանութե որդոցն մեծափառ իշխանաց իշխանին Պռոշոյ՝ Պապաքին եւ Ամիր–Հասանայ· եւ ես Մաթէոս վդ: հրամանով եւ ձեռնտվութբ Ամիր–Հասանա շինեցի զտեղիքս միաբնակ վանս· եւ շինեցի զեկեղեցիքս եւ զժամատունս»3): Վիմափոր եկեղեցին բաղկացած է բուն տաճարից եւ ժամատնից կամ գաւիթից· բայց յիշատակարանից պարզ է, որ սրանից զատ՝ Մաթէոս վարդապետը շինել է եւ մի ուրիշ եկեղեցի, հաւանո–

---

1) Ջալ· Բ· 200—202· Ալիշան· Սիսական 177:

2) Ձեռագրի մէջ փչացած են փակագծի մէջ առնուած մասերը, որ մենք ենք լրացնում այստեղ: Թառեւոյ բառը պէտք է ուղղել «Թանատի»· ստորագծուած մասը գրուած է բոլորովին նոր թղթի վերայ, շատ յետին գրչի եւ նորոգողի կողմից աւելացրած: Ձեռագրի մէջ անաղարտ է մնացած Թ-ի կէս մասը եւ ա: «Թառեւոյ» վանք ոչ միայն Վայոց ձորում, այլ եւ Հայաստանում գոյութիւն չէ ունեցել· յետին սրբագրողը հաւանօրէն Տաթեւ անուան հետ է շփոթել եւ այդ անուան հետեւողութեամբ լրացրել կիսատ բառը: Ձեռագիրը տեսել եւ յիշատակարանից օգտուել է Յովհաննէս Բարադամեանը:

3) Ձեռ· Ն· Յ· № 1669· Յաւել· Բ· 21:

րէն գիւղամիջինը, որն այժմ ի սպառ նորոգուած է եւ չպէտք է շփոթել այն վկայարանի հետ, որ նոյն գիւղում շինել էր Դեղկայ որդի Մխիթարը Պռոշի եւ Ամիր Հասանի հրամանով, կանգնելով մի խաչքար (էջ. 23):

Ներսից գմբէթադարդ տաճարն ու ժամատունը փորուած են լերան կրծքին. դրսից ոչինչ չի նկատւում, բացի գմբէթի երդիկից: Տաճարի ախիղը բոլորակ է, իսկ միւս երեք կողմերը ուղղանկիւն ներքեւում, իսկ վերին մասերում կամարաձեւ, որոնց վրայ բարձրանում է գմբէթը փոքրիկ երդիկով. տաճարն ունի մի փոքրիկ լուսամուտ ախիղի հակառակ պատին, դուռը վիմափոր գաւիթից: Ախիղի երկու կողմից կան փոքրիկ պատրհանաձեւ աւանդատներ: Տաճարի երկարութիւնն է արեւելքից արեւմուտք 6,57 մետր ախիղի հետ միասին, իսկ մինչեւ ախիղը 4,55 մ., ախիղի բացուածքը 2,4 մետր. հիւսիսից հարաւ տաճարի լայնք է 5 մ., հարաւային կողը 2,32 մետր, 1,92 մ. խորութեամբ, իսկ հիւսիսայինը 2,45 մ., 1,15 մ. խորութեամբ: Արեւմտեան թեւի բացուածքը 2,45 մ., խորութիւնը 1,15 մ., անկիւնից մինչեւ դուռը 0,49 մ., դրան բացուածքը 0,95 մետր: Երկրորդ վիմափորի կամ ժամատան երկարութիւնն է 6,98 մ., իսկ լայնքը 6,63 մ., սա եւս երդիկ ունի փոքր կիսագմբէթով: Այս վիմափորները Գեղարդի Պռոշի տաճարների վսեմութիւնն ու արուեստը չունին, բայց աննշան չեն:


Ձեռ. էջմ. Ն. 3. № 1669. ՊԱՏԿԵՐ 57.

Գեղարուեստական տեսակէտից աւելի արժէքաւոր եւ Մատթէոս վարդապետի ճաշակի եւ շնորհքի մասին գաղափար է տալիս նրա աւետարանի մանրանկարչութիւնը: Աւետարանը զարդարուած է սկզբում խորաններով, եւ ապա աւետարանիչների պատկերներով եւ սկզբնազարդերով: Խորանների մէջ ուշադրութեան արժանի են հայկական խոյակների վերայ հաստատուած պայտաձեւ կամարները եւ նրանց կողքերի զարդարանքները, սիրամարգներ, թռչուններ, բուսական զարդեր, որոնք զուտ արեւելեան բնոյթ ունին, պարզ գոյներով, առանց ոսկու գործադրութեան. պատկերների մէջ ոսկու փոխարէն նիմբուսի համար գործադրում է դեղին գոյնը: Մատթէոս վարդապետը շատ է սիրում յատկապէս սիրամարգը, ոչ միայն մեր ցուցադրած պատկերի (57) մէջ, այլեւ խորանների կողքերին, պէս պէս ոճաւորութեամբ եւ մեր հին աւետարանների յատուկ ձեւով: Բայց կան բուսական զարդարանքներ եւս, որոնք, գրեթէ նոյնութեամբ կրկնուած ենք տեսնում պարսկական նոր գորգագործութեան մէջ: Մատթէոս վարդապետի խորանների արուեստը հին աւանդի հետեւողութիւն է, նշանակական, եւ ոչ իւր ժամանակի ստեղծագործութիւն: Սիրամարգների պարանոցին մեծ օղակ կամ մանեակ է ձըգուած, երբեմն փաթաթուած իրար վզի, ինչպէս եւ Սասանեան արուեստի մէջ թռչունների վերաբերութեամբ:

Աւետարանների պատկերագրութեան մէջ եւս ունի իւր ուրոյն կողմերը: Աւետարանիչներն անկախ չեն ներշնչւում եւ գրում իրենց աւետարանները, այլ նրանք իրենց գրիչներն ունին, որոնց թելադրում են, որ սովորական է միայն Յովհաննէսի եւ Պրոխորոնի համար: Որպէս հազուագիւտ երեւոյթ մանրանկարչութեան պատմութեան մէջ ունինք նման բան Մարկոսի եւ Ղուկասի համար Reims–ի շրջանում Թ—Ժ. դարում ծագած մի աւետարանի մէջ, որտեղ Պետրոս առաքեալը թելադրում է Մարկոսին գրել իւր աւետարանը, իսկ Ղուկասին՝ Պօղոսը, որոնց աշակերտներն են ըստ աւանդութեան այդ երկու աւետարանիչները[1]. մեզանում Մարկոսի վերաբերութեամբ ունինք Հեթումի Աստուածաշնչի մէջ[2]): Բայց Մատթէոսի նկատմամբ ոչ միայն անհասկանալի է այդ, այլեւ այստեղ Յովհաննու Պրոխորոնը մօրուքաւոր է, հակառակ ընդունուած աւանդութեան, մինչդեռ միւս աւետարանիչների գրիչները, բոլորն անբեղ եւ անմօրուք երիտասարդներ են: Այս հանգամանքն ի նկատի ունենալով, կարծում ենք, որ Մատթէոս վարդապետը ոչ թէ հին աւանդութեան հետեւողութեամբ Պետրոսին կամ Պօղոսին է նկարում, որպէս իրենց աշակերտ աւետարանիչներին թելադրողներ, այլ Յոհաննու եւ Պրոխորոնի հետեւողութեամբ բոլոր աւետարանիչներին որպէս թելադրողներ իրենց գրիչներին։

---

[1] Beissel Geschichte der Evang. Bücher. Freiburg in Breisgau. 1906. 202.

[2] Ձեռ. էջմ. № 180:

Մեր մանրանկարչութեան մէջ ընդհանրապէս պատկերագրութիւնը թոյլ է զարդագրութեան համեմատութեամբ։ Մատթէոս վարդապետն ընդհակառակ աւելի ուժեղ է պատկերագրութեան մէջ, դէմքի, շարժումների իրական եւ կենդանի արտայայտութեամբ, բոլորաձեւ եւ թաւ մօրուքով, գլխի մազերի ուրոյն սանրուածքով, կողքերից դէպի ետ, իսկ ճակատին վերից վար, թել–թել, որ նկատւում է ասորականի հետ աղերս ունեցող մեր հին քանդակագործութեան մէջ, Պտղավանքի հարաւային պատին, Զ. դարու առաջին կէսի գործ։ Դէմքերը նոյնպէս բոլորակ են եւ կանոնաւոր, աչքերը կենսալից. դիմագծերի կոնտուրները չեշտուած սեւ բծերով, յատկապէս սկզբնազարդերի պարիկների դէմքին, որ նկատւում է նաեւ ժամանակակից բիւզանդական արուեստի մէջ[1]։



Ձեռ․ էջմ․ Ն․ Ց․ № 1669․ 65բ—66ա․ ՊԱՏԿԵՐ 58․

Մեր պատկերը (58) Մարկոսն է իւր սկզբնազարդով։ Զարդարուն գերանի կամ տախտակի երկու ծայրերին հաստատուած են խորանի երկու սիւները եւ նրանց վերայ ձգուած քառանկիւնի խորանի գերանը։ Սիւների խարիսխները երկու շերտեր իրար վերայ, ներքեւինն աւելի լայնանիստ. խոյակների հիմքն էլ նման տախտակ է, վերեւի երեսն աւելի լայն, իսկ սրա վերայ բուն խոյակն է, ներքեւում բոլորաձեւ, իսկ վերեւում նշատերեւով վերջացած։ Խորանի զարդը, իրար կտրող բոլորակներով ձուաձեւներ են կազմուած, կանաչ, դեղին, մոխրագոյն եւ սպիտակաւուն երանգներով, մի տեսակ խաչաձեւերի շարք, թեւերի ծայրերից դիտելով՝ շեղակի դասաւորութեամբ, ինչպէս պատահում է եւ քանդակների մէջ։ Խորանի այսպիսի ճիշդ ձեւակերպութիւնն իւր սիւներով եւ զարդերով պարզ հետեւողութիւն է հայկական ժողովրդական փայտակերտութեան։ Խորանի ճակատին երեք բոլորակ աւազաններ են իրար կողքի, ջրով լի, միջինը աւելի բարձր, որոնց երկու կողմի սիւնի մօտ բարձրանում է արմաւենու մի պայմանական ծառ, չորս ողկոյզներով։ Խորանի տակ, երկու սիւների մէջ, ձախ կողմից, բարձրաթիկունք աթոռի վերայ նստած է պատանի գրիչը, ծնկան վերայ բաց գիրքը դրած, ձախով բռնել է թերթը, իսկ աջն աւետարանի առաջին տողերի վերայ այնպէս բռնել, որ կարծես գրում է, բայց մոռացուած է գրիչ տալ ձեռքը։ Ճիշդ նոյն գիրքն ունի Մատթէոսի առաջ նստած պատանին, բայց ձեռքին եղեգնեայ գրիչ բռնած։ Նորա առաջ կանգնած է աւետարանիչը, շագանակագոյն մազերով եւ վերեւ մասնանչուած սանրուածքով, ոտները ծածկող երկար տունիկայի վերայից ձգուած է ծալքաւոր տոգան, բոլորակ եւ դեղին նիմբուսով, մի ձեռքը դէպի խորանի տակ երեւցող աստղազարդ երկինքն է մեկնել, միւսը դէպի գրիչը։ Խուսափում ենք պատկերների մանրամասն նկարագրութիւնից. ընթերցողն ինքնին տեսնել կարող է մեր բերած այս մի օրինակից նկարչի շնորհքն ու կարողութեան չափը։

Սկզբնազարդի խորանի կեդրոնում, երկու կողմից եռամասնեայ, մահմետական արուեստին աւելի ընդհանուր, կամար է։ Կամարի վերեւը գլխարաց պարիկներ, գլուխներն իրար մօտեցրած եւ թեւերից մէկը կախ ձգած։ Կամարի երկու կողմից խորանի դաշտը ծածկուած է արմաւենիկի եւ եռատերեւի շրջանաձեւ զարդերով, ցօղունները օղակներով եւ հանգոյցներով։ Խորանից դուրս, ճակատին, այստեղ եւս իրար կողքի երեք բոլորակ աւազաններ, միջինն աւելի բարձր, լցուած են ջրով. մէջտեղի աւազաններում երկու բերանաբաց առիւծների գլուխներ են, ետեւի կողմից իրար կցուած, բայց բերաններից ջուր չէ հոսում։ Աւազանների երկու կողմից շարուած են իրար ետեւից կաքաւներ, որոնց առաջինը ջուր է խմում։ Այստեղ եւ թէ նախընթաց խորանի ճակատին, կենդանութեան աղբիւրի պարզ եւ սովորական ձեւակերպութիւնը։ Ձախ կողմից թղթով կարկատուած է ճակատը, թռչուններից միայն մէկի գլուխն է երեւում։

Լուսանցքի զարդը կազմուած է եռատերեւի եւ արմաւենիկի հիւսկէն կամ սրտաձեւ զարդերով, իրար մէջ հագցուած ձուաձեւներով կազմած խաչով վերջացած։ Աւետարանի առաջին բառը՝ «Սկիզբն»՝ զարդագրուած է բուսական, ութաձեւերի եւ արմաւենիկների մօտիվներով. ութաձեւերի գծերի հանդիպման կէտե-

---

[1] Beissel. Gesch. der Evang. Bücher. 48.

բում կարմիր գնդակներով. երեւոյթներ, որոնք յատուկ են արեւելեան ոսկերչական եւ մանրանկարչական արուեստներին:

Պատկերի մեծութիւնն է 28×24 *սմ., լայնքը սիւների վրայ ձգած գերանի վերայով չափուած. իսկ սկզբնագրքի՝* 27×22 *սմ., լայնքը գրի վերայից չափուած: Աւետարանը գրուած է արեւելեան բոլորգրով, յիշատակարանի գիրը* (*պտկ.* 59. *Յաւել. Բ.* 21) *քիչ տարբեր բնագրից. իսկականի մեծութիւնն է* $26^{1}/_{2}\times 18$ *սմ. փոքրացրած է երկու անգամ: Ստացողներն են երկու քահանաներ, Սիխանոս եւ Յուսամ, հայր եւ որդի:*

Մատթէոս վարդապետի յիշատակարանը տալիս է մեզ տեղեկութիւններ նաեւ Ամիր–Հասանի անձի մասին, որ մեռել է գրութեան տարին, այն 1292 *թուին.* «բայց յայսմ ամի անվերանալի տրտմութի հասաւ (s!), զի իշխանաց իշխանն մեր Ամիր–Հասան մահուամբ փոխեցաւ ի քս, եւ ամենայն աշխարհ ի սուգ եւ տրտմութի անկան, հայք եւ վիրք, ափխազք եւ հոռոմք. զի թէպէտ որ իշխանաց իշխան կոչիւր, սակայն ի թագաւորաց անբաժանելի էր, որ յամենեցուն լսելիս հասեալ էր բարի լուր եւ համբաւ նորա, որ հեռաւորքն որպէս ի մաւտոյ կոծ եւ աշխարումն կատարեցին: Բայց եթող տեղապահ զորդի իւր, որ կոչի Ճաչի, որ ամենայն յաջողութբ բարգաւաճեալ եր քան զհայրն, զոր տր յս պահեսցէ զինքն յամայր ամս ժամանակաց յարգոյ եւ բարգաւաճ փառաւք. ամէն»1):

Աւելի մանրամասնութիւններ Ամիր — Հասանի մասին ստանում ենք ճիշդ նոյն թուականին Ոծոփի վանքում գրուած աւետարանի ընդարձակ յիշատակարանից, որից մի փոքրիկ հատուած մէջ բերինք Պապաքի մասին խօսելիս: Ամիր — Հասանն այստեղ կոչուած է « մեծ սպարապետ տանն Աւագին, որդւոյ Իվանէ աթաբակին». «սպարապետ հայոց» *է կոչուած նաեւ Թաճերի արձանագրութեան մէջ, Թանահատի վանքի դրան գլխին: Յիշատակարանի համաձայն, Ամիր–Հասանի մահը հանդիպեց* 1292 *թուին, սգի մէջ ձգելով աշխարհն ու իւր զօրքը. նա* «ի բազում պատերազմունս» *քաջի անուն էր ժառանգել, Հուլաղուի* (1256—1265) *եւ Ապաղայի* (1265—1282) *պալատում նուէրների եւ պատուի արժանացել.* «այնպէս սիրեցեալ էր ի նոցանէ վասն արիական քաջութեան եւ խոհեմութեան իւրոյ մինչեւ զինակիր եւ յառաջադէմ լեալ յամենայն գործս արքունի: Եւ յանձնէ իւրեանց բազում անգամ զարդարեցին զնա ոսկէհուռ դիպակաւք եւ կամար ոսկեղէն ընդելուզեալ ակամբք եւ մարգարտոք կապեալ ի մէջս նորա2): *Հայ իշխաններին սիրաշահելու մի միջոց էր այդ ընդհանրապէս Թաթարների կողմից: Գրեթէ նման խօսքերով Օրբէլեան նկարագրում է Ապաղայի պարգեւ-*



Ձեռ. էջմ. Ն. Ց. № 1669. 218բ. ՊԱՏԿԵՐ 59.

---

1) Ձեռագրի (№ 1669 Ն. Ց.) կազմը տախտակ է, կաշով պատած, 32×20×9 սմ. մեծութեամբ. երեսը եղել է կոստղած, որից միայն նշաններ են մնացել: Կաշին էլ զարդարուած է (ճնշմամբ) գեղեցիկ խաչով եւ օրնամենտներով, բայց ոչ գրութեան ժամանակից:

2) Այս աւետարանի մասին տ. **Изв. Имп Ак. Наук.** 1909. **I. A. Орбели. h'Асан Джалал 433.** Յիշատակարանը տպուած է Արարատի մէջ. 1876. 412:

ւատրութիւնը Տարսայիճին[1])։ Ամիր-Հասանի քաջութեան հռչակը տարածուած էր մինչեւ Հռոմայեցւոց եւ յունաց աշխարհը, հաւանօրէն այն արշաւանքների ժամանակ, որ Թաթարները ձեռնարկում էին դէպի արեւմուտք, եւ որոնց, դուցէ, նա մասնակից էր եղել, ինչպէս երբեմն իւր հայրը։ Յիշատակարանի հեղինակը նորա մահը նշանակում է «մինչչեւ էր հասեալ ի հասակ ծերութեան», յամենայն դէպս ոչ անց յիսունից, ի նըկատի ունենալով, որ նորա անդրանիկ եւ միակ որդի Խաչին՝ ծնուած էր 1268–1273 թ. թ. մէջ։ Շմաւոն գրիչը յայտնում է ձեռագրի մասին, թէ «ըստ իմում կարի զարդարեցի ոսկւով եւ արծաթով, ոսկեգիծ դրվատով եւ ծաղկերանգ գունով, եւ պաճուճեցի ներքոյ եւ արտաքոյ, ընտելուզեալ քարամբք պատուականաւք եւ լուսափայլ մարգարտօք»։ Այս չքեղութիւնը կազմին է վերաբերում, մանրանկարները եւ դրչութիւնը միջակ էր, որ տեսել ենք անձամբ ակադեմիկ Մառի մօտ, երբ նրան էր ուղարկուած գնահատելու։

Ե՞րբ մեռաւ իշխանուհի Թաճերը, չգիտենք։ Նա կենդանի էր դեռեւս 1307 թ., երբ գրեց իւր արձանագրութիւնը Թանահատի վանքի արեւմտեան դրան կամարակալ քարի վրայ (Յաւել. Ա. 18. գ. պատկ. 60). այստեղ նա իրեն անուանում է Թաճեր «դուստր Ուքանա, ամուսին Հասանա ասպարապետին հոց (հայոց) որդոյն Պռոշա», տալով ընծայ «ի հալալ ընչից իմոց հայրենի տանս մեր Թանատի վանաց», եւ փոխարէնն ստանալով չորս պատարագ։ Արձանագրութեան վերջին բառը տարաբաղդաբար չի դուրս եկել մեր նկարի մէջ։

---

[1] Օրբ. 423։

Է

ՊՌՈՇԵԱՆՆԵՐԸ ԺԳ. ԴԱՐՈՒ ՀԱՅ ԱՐՈՒԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Պռոշի շինարարութիւնը իր ժամանակակից մի ուրիշ մեծ իշխանի՝ Սադուն Աթաբէկի հետ, պէտք է մեծ տպաւորութիւն անէր ժամանակակիցների վերայ որ Մխիթար Այրիվանեցին «աշխարհաշէն» մականունը տար նրան։ Տարաբաղդաբար նորա հետ կապուած Սրկղունիքի «դարբասի» եւ եկեղեցիների մասին ոչինչ աւելի ասել չենք կարող, քան ինչ ասուած է։ Պեղումները, դուցէ, կարող էին մեզ որոշ նորութիւններ տալ։

Պաշտամունքի հետ կապուած տաճարների հայրենիքը Հնդկաստանն է։ Բայց կարիք չունինք այդչափ հեռու գնալու մեր վիմափորների նախադաղափարը մատնանշելու համար։ Առաջաւոր Ասիային յատուկ մի երեւոյթ էր Հետիտների ժամանակից, պատերը զարդարած կրօնական պաշտման հետ կապ ունեցող բարձրաքանդակներով[1]։ Ս. Գիրքն էլ վկայում է, թէ Աբրահամ Քետացիներից յատուկ այր է գնում իւր կնոջը Սառային թաղելու համար (Ծննդ. ԻԳ. 3)։ Բազմաթիւ են Փ. Ասիայում եւ Հայաստանում նախաքրիստոնէա-



Արձ. Թաների Թանատի վանքում. Ցաւել. Ա. 18գ. ՊԱՏԿԵՐ 60

Բայց Գեղարդայ վիմափորներն իրօք առաջնակարգ երեւոյթներ են իրենց ժամանակի համար՝ տեխնիքական դժուարութիւնների յաղթահարման եւ գեղարուեստական որոշ հոսանքների հետ ունեցած առնչութեամբ։

---

[1] Хетты и Хетская Культура. Москва. Статья А. Захарова. 60. Культура Востока շարքի մէջ։

կան եւ քրիստոնէական շրջանի արուեստական քարայրները, յաճախ կրօնական պաշտման համար փորուած: Ամասիայում մենք ինքներս անձամբ տեսել ենք այդպիսիները: Strzygowski-ն Փոքր-Ասիային նուիրած իւր աշխատութեան մէջ նկարագրում է այդպիսի եկեղեցիներից մի քանիսը, ժայռից կտրած եւ անջատ շէնք կազմած իւր արտաքին ֆասադներով կամ հէնց ժայռերի մէջ, միայն ներսի տարածականութեամբ, պատերի վերայ բարձրացող գմբէթով եւ գաւթով, ոմանք յատկացուած նոյնիսկ գերեզմանների համար, եւ զարդարած որմանկարներով[1]):

Արուեստական քարայրներով եւ ժայռերի մէջ փորուած շէնքերով հարուստ է եւ Հայաստանը: Հէնց Գեղարդի ձորն ունի այդպիսի շատ այրեր: Գեղարդն առաջ Այրի վանք կամ Այրից վանք է կոչուել դրա համար: Պռոշի վիմափորներից առաջ գոյութիւն է ունեցել պարսպից դուրս Աստուածածնի քարայրը, որ միայն նորոգուել է 1257/8 թուերին Պռոշի ժամանակ· նորա վերայ գրաւոր յիշատակարան ունինք դեռ եւս ՈԺԳ=1164 թուից: Պռոշի որդի Պապաքն էլ 1286 թուին, տեսանք, կոփել էր տուել մի մեծ ժամատուն դարձեալ միակտուր ժայռի մէջ Գեղարդայ վանքում: Մարտիրոս գիւղում Մատթէոս վարդապետը նոյն թուին «հրամանով եւ ձեռնտուութբ Ամիր Հասանա», Պռոշի միւս որդու, շինել է «զեկեղեցիքս եւ զժամատունս» դարձեալ ժայռի մէջ: Ապա կան Վայոց ձորում, Անիում եւ ուրիշ տեղերում[2]) վիմափորներ, բայց ոչ մէկը այն կատարելութիւնը չունի եւ գեղարուեստական արժէքը, ինչպէս Պռոշի վիմափորները:

Միակտուր ժայռի մէջ, նկարագրութիւնից եւ պատկերներից տեսանք, կերտուած է ԺԳ· դարու արուեստի բնորոշ գծերով եւ զարդարանքներով մի տաճար իւր գաւիթով եւ մի անջատ ժամատուն, որ իւր տպաւորութեամբ աւելի ուժեղ է, քան նոյն ժամանակի սովորական տաճարներն ու գաւիթները, ոչ իրենց հոյակապ մեծութեամբ կամ նրբութեամբ, այլ տեխնիքական դժուարութիւնների յաղթահարութեամբ: Կամքի ոյժ, վճռականութիւն եւ դորա հետ, ի հարկէ, կարողութիւն եւ ճաշակ էր հարկաւոր այդպիսի մի գործ գլուխ բերելու համար, աւելի դժուար եւ մեծածախս, քան սրբատաշ քարով նրանից աւելի մեծ եւ աւելի շքեղ շէնքերի կառուցումը: Բայց նա կամենում էր տեւական եւ մնայուն մի գործ ստեղծել՝ «փորեցի ի վիմէ տուն այ (աստուծոյ)», «յարդարեցի գերեզմանատուն ինձ եւ ազգի իմոյ յաւիտեան», եւ նա հասել էր իւր նպատակին: Հայ ճարտարապետական արուեստի պատմութեան մէջ Պռոշի վիմափորները պէտք է իրենց պատուաւոր տեղը գրաւեն, որպէս Հայաստանում նման շէնքերի մէջ ամենից կատարեալը տեխնիքական եւ գեղարուեստական հետաքրքրութեան կրկնակի տեսակէտներով:

Իբրեւ ճարտարապետական ձեւեր Պռոշը իւր վիմափորներով նորութիւն չէ բերել: Վիմափոր տաճարը իւր գաւթով, ինչպէս եւ սրանցից դէպի արեւմուտք եղած ժամատունը իւր ութ որմայեց սիւներով, իրար խաչող կամարներով, կիսագմբէթով եւ պատրհաններով ԺԳ· դարու հայ ճարտարապետութեան ընդհանուր երեւոյթներ են· դրանցից աւելի հոյակապ գեղարուեստական եւ հին շէնքեր ունինք, օրինակ, Հաղբատում եւ Սանահնում, գրադարաններ, աղբիւրների սիւնազարդ սրահներ, բայց այստեղ դիտողի ուշադրութիւնը սեւեռում է տուեալ դժուարին պայմանների յաջող լուծման վերայ: Ճարտարապետական այս ձեւի շէնքերը, ինչպէս եւ անջատ, միակտուր սիւների վերայ հաստատուած կամարներով եւ երդիկաւոր գմբէթներով գաւիթները իրենց պէսպիսութեամբ, երեւան են գալիս ԺԱ· դարում, յաճախել են սկսում ԺԲ· դարու երկրորդ կէսերից եւ ընդհանրանում ԺԳ· դարում[3]): Պռոշեանց շէնքերը մեզ լիովին առիթ չեն ընծայում ԺԳ· դարու տաճարների, գաւիթների, մատենադարանների եւ այլ տեսակ շէնքերի մասին աւելի լրիւ տեսութիւն տալու· այդ թողնում ենք այս շարքի մի այլ հատորի: Բայց կը կամենայինք չեշտել այն մի քանի երեւոյթներն այստեղ, որ աչքի են ընկնում Պռոշի եւ նորա ժամանակի շինարարութեան մէջ· այդ նրանց զարդագրութիւնն ու կենդանական պատկերագրութիւնն է:

Վիմափորների եւ միւս շէնքերի զարդագրութիւնն իրենց ձեւերով եւ նիւթերով բոլորովին անծանօթ չեն ԺԳ· դարու քանդակագործութեան մէջ, բայց իբրեւ տաճարների եւ գաւիթների ներսի պատերի կամ գմբէթների զարդարանք, երեւան չեն գալիս ուրիշ տեղ: ԺԳ· դարու անջատ սիւներով գաւիթների առաստաղներն ու գմբէթները նոյնպէս զարդարուն են ստալակտիտներով, երկրաչափական ֆիգուրներով, գոյնզգոյն քարերի շախմատաձեւ շարուածքով, գերանաձեւ գունաւոր չերտերով, արմաւենիկի եւ բուսական ուրիշ զարդերով: Նոյնիսկ նուռը գործադրուած ենք տեսնում Գեղարդի նախապռոշեան, անջատ սիւներով գաւթի գմբէթի ստալակտիտների եզերազարդ, բայց ոչ նման մեր վիմափորներին, որ իրենց ամբողջական տեսքով ուրոյն են, ուստի եւ ուշադրաւ հայ արուեստի պատմութեան մէջ։ Նռնների գործադրութիւնը նախընթացից աւելի վաղ ունինք Է· դարու Զուարթնոցում կամ Ժ· դարու Անիի Առաքելոցի գմբէթի վերայ ապա աւետարանների խորանների լուսանցքում կամ խաչքարերի վերայ իբրեւ զարդագրութիւն ԺԳ· դարում, ինչպէս Հաղբատում Նաջմադինի խաչքարի վերայ ՈԿ= 1211 թուից, կամ նոյնիսկ Գեղարդի զոյգ խաչքանդակներում ժայռի վերայ (պատկ· 61), որ իրենց արուեստով ԺԳ· դարու գործ են եւ ամենայն հաւանականութեամբ այն սուրբ նշաններից, որոնց մասին յիշատակում է Պռոշը իր մեծ արձանագրութեան մէջ։ Բայց վիմափորի նռնազարդերը ծառերի հետ կապուած չեն, ինչպէս Զուարթնոցում կամ Առաքելոցում, այլ բուսական եւ երկրաչափական մոտիվներով ոճաւորուած մի զարդ, նռնով վերջաւորած (պատկ· 37—38)։

---

[1]) Kleinasien ein Nueland der Kunstgeschichte. Lpzg. 1903· 145· 149 շար· 20 շ·

[2]) Ի լրոյ գիտենք, Strzygowski-ն իւր Kleinasien-ի մէջ (145) նոյնպէս յայտնում է, որ Վանի շրջանում վիմափոր եկեղեցիներ կան: Ապա այդպիսի քարայր եկեղեցի, ըստ Լինչի, շատ հին, գտնւում է Խլաթի մօտ· Մատնավանք գիւղում· Линч· Армения· II· 1910· 376 (ըստ Լինչի Մաղաւանց):

[3]) Յովհաննէս Սմբատի ժամատունը Հոռոմոսի վանքում շինուած է 1038 թուին, Թեղենեաց վանքի գաւիթը 1167 թուից ոչ ուշ, երբ Վահրամ իշխան՝ որդի Պատրոնկան՝ օգնութիւն է անում «ի շինութն գաւթիս»: Սանահնի մեծ տաճարի առաջ եղած գաւիթը շինուած է ՈԼ=1181 թուին, Հաղբատի մեծ ժամատունը տաճարին կից 1221 թուին, Սանահնի գրատունը 1234 թուից առաջ եւայլն:



խաչաքանդակներ ժայռի վերայ Գեղարդում· ՊԱՏԿԵՐ 61·

Աւելի հետաքրքրական է նրանց գործադրութեան տեղը, գմբէթի ճառագայթաձեւ բաժանմունքների մէջ։ Մեր հնագոյն եկեղեցիներից Աւանը, Հռիփսիմէն, Թալինի մայր եկեղեցին, Մաստարան գմբէթների ներսից ճառագայթներով մասերի են բաժանուած։ Strzygowski-ն քրիստոնէական արուեստի ծագման նուիրած իր աշխատութեան մէջ հաւանական է համարում, որ ճառագայթների մէջ եղած տարածութիւնները նկարչութեամբ ծածկուած լինէին, այս դէպքում ծեփի վերայ, համեմատութեան առնելով չինական Թուրքեստանի բուդդայական այրերի յարդարանքը, որ անցած է համարում եւ քրիստոնէական տաճարների առաստաղների զարդագրութեան[1]։ Այս ուղղութեամբ համեմատութեան նիւթեր է տալիս նաեւ իր զարդարանքի ծագման նուիրած աշխատութեան մէջ, զարգացման հոսանքը Միջին Ասիայից Արշակունիների միջնորդութեամբ կապելով Հայաստանի հետ, որի ուշ ժամանակի մնացորդներ է համարում Անիի նկարազարդ Լուսաւորչի թեւաւոր կենդանակերպների զարդագրութիւնը, գործուածքների փոխադրութեամբ Հայաստան հասած[2]։ Մենք միայն ասել կարող ենք, թէ նման մոտիվները կրկնուած են յաճախ Սասանեան արուեստի մէջ[3]։ Գեղարդի վիմափորների գմբէթների զարդա-

---

[1] Die Ursprung der chrislt. Kirchenkunst. Lpzg. 1920· 114· 120·

[2] Altai—Iran und Völkerwanderung Lpzg. 1917· 132—136· 162—164·

[3] Տես Восточное Серебро. Смирнов-ի, СП. 1909· պատկ· 83· 288 եւայլն։

բանքները որոշ չափով հաստատութիւն են բերում այն մտքին, թէ անկարելի չէր, որ մեր ներսից էլ բազմակողմանի գմբէթները զարդարելու սովորութիւնը լինէր, մանաւանդ որ փոքր ինչ տարբեր ձեւի զարդարուն մի գմբէթ էլ ունինք ԺԲ. դարու երկրորդ կիսից, Թեղենեաց վանքում, ինչպէս յիշեցինք, 1167 թուականից։ Կիսով չափ միայն կանգուն է այդ գեղեցիկ գաւիթը, չորս հաստահեղոյս եւ 12 որմասիւների վերայ յեցուած կամարներով եւ նրա վերայ հաստատուած կիսագմբէթով, որի ներսի քանդակազարդի մասին գաղափար է տալիս մեր պատկերը (պատկ. 62)։ Սրանց վերայ աւելացնենք եւ այն, որ անցեալ տարի պատահական պեղումներով Հռիփսիմէի հարաւային պատի տակ Խաչիկ վարդապետը գտել է ալաբաստրի հաստ ծեփերի մասեր գունաւոր զարդերով, որ եթէ նորանոր գիւտերով հաստատուի նրանց հնութիւնն ու կապը վանքի հետ, մի նորութիւն կը լինի մեզ համար։ Այսպիսով Պռոշի վիմափորների գմբէթների զարդագրութիւնը մեր առաջ դնում է մի խնդիր, որ ամենայն հաւանականութեամբ անցեալից եկած աւանդ է, բայց որի օղակները անցեալի հետ կապող, մեզ անյայտ են։



Թեղենեաց վանքի գաւթի առաստաղը. ՊԱՏԿԵՐ 62.

Միւս զարդագրութիւններից ամէնից բնորոշն ու ժամանակակից գեղարուեստական հոսանքը մատնանշողը վիմափոր գաւթի չղթայուած առիւծներն են, բերանին օղ եզան գլխով եւ մագիլների մէջ խոյ բռնած արծուով, որ մենք ենթադրութեամբ Պռոշեանների զինանշան համարեցինք։ Այս ենթադրութիւնը հիմնաւոր համարելով հանդերձ, որովհետեւ քանդակը զինանշական բնոյթ ունի, պէտք է յայտնենք, սակայն, որ յատուկ չէր այն միայն Պռոշեաններին, այլ որոշ մասերով Հայաստանի ուրիշ տեղերի եւ սելջուկեան — մահմեդական արուեստի[1])։ Ընդհանրապէս զինանշանների փոխառութիւններ ու փոփոխակներ յաճախ են նկատւում արուեստի պատմութեան մէջ։ Առիւծը մէջքի կողմից կենդանութեան ծառով տեսնում ենք Սասանեան արուեստի մէջ[2])։ Կենդանութեան ծառը խաչով փոխարինած Անիի պարիսպների վազող առիւծի հետ։ Նոյնը քիչ տարբերութեամբ Ռուբինեանց դրամների վերայ, կամ նոյնիսկ եկեղեցական պաշտամունքի հետ կապուած իրեղէնների զարդագրութեան մէջ, որպիսին այստեղ ցուցադրած գրակալի առիւծն է խաչով և ծառով (պատկ. 63. 64)[3])։ Փոքր Ասիայի սելջուկների և նոր պարսիկների մէջ տեսնում ենք կենդանութեան ծառը եւ խաչը փոխարինած արեւով[4])։ Եւ ո՛րչափ նմանութիւններ կան նրանց մէջ շարժումների եւ ձեւակերպութեան նկատմամբ, ի հարկէ, եւ ո-

---

[1]) Amida. Max van Berchem եւ Josef Strzygowski 1910. Heidelberg Taf. XVII. 2. եւ եր. 78։

[2]) Восточное Серебро. 91. 285. 311։

[3]) Գրակալի արձանագրութիւնն է. «Յիշատակ է սբ. Գրրիգ″րին եւ/ — միւս երեսին — շինեալ : ի Թվ : Չ : Ի : Ա :» Առաջին երեսի ձախ անկիւնը կոտրած է. Նորոգուած է երկրորդ երեսի ձախ անկիւնը, ներքեւից. Տարաբաղդաբար չափագրութիւնը չունինք այժմ ձեռքի տակ. լուսանկարն ուղարկել է մեր խնդիրքով Ն. Նախիջեւանից Ռուբէն Ա. Քահ. Բէկգիւլեան:

[4]) Sarre. Reise in Kleinasien. Berlin. 1896. 39։

րոշ փոփոխութիւններով եւ տարբերութիւններով։ Վերցնենք Անիի պարսպի վազող, գեղարուեստական եւ կենդանի արտայայտութեամբ առիւծը առանց խաչի (պատկ․ 65), եւ մենք կը կարծենք, թէ Սելջուկեան արուեստի մի գործ է այն, որ համեմատել կարելի է Դիարբեքիրի պարսպի աշտարակներից մէկի արձանագրութեան (1089/90 թ․) երկու կողմից վազող առիւծների հետ[1])։ Նոյնը կարող ենք ասել եւ մեր ցուցադրած գրակալի առիւծի մասին։ Այսպիսի նմանութիւնները չպէտք է մեզ հիմք ծառայեն անմիջական փոխազդեցութեան հետեւանք համարել ամէն ինչ, որ փոքր ի շատէ նմանութիւն է բերում միմեանց, այլ գեղարուեստական մի ընդհանուր հոսանքի զանազան շրջաններում, որոնց փոխ–ազդեցութիւնները ճշդութեամբ դժուար է որոշել։

Ակադեմիկ Մառի պեղումներով Անիի Միջնաբերդի դրան մօտ գտնուած է մի քար, առիւծի քանդակով․ աջ թաթը վեր բարձրացրած, պոչի ծայրը արմաւենիկով ոճաւորուած եւ դէպի մէջքը դարձրած․ դէմքը թեքել է դէպի նայողը[2])։ Ամենայն հաւանականութեամբ հանդիպակաց կողմը պիտի լինէր երկրորդ առիւծը, իբրեւ դրան պահապաններ։ Սրա նման երեւոյթ տեսնում ենք Դիարբեքիրի Խարբերդի դրան մօտ, խորշի աջ եւ ձախ կողմերից, ըստ արձանագրութեան հիջրեթի 297 կամ փրկչական 909/10 թուին[3])։ Տեղի եւ դասաւորութեան կողմից Դիարբեքիրին շատ նման են մեր Աղթամարի վանքի զոյգ առիւծները 916 թուից, արեւելեան պատի խորշի երկու կողմից[4])։

Առիւծի յարձակումը ցուլի վերայ հայ արուեստի մէջ տեսնում ենք Ցախաց քարում 1061 թուին, Մակարայ վանքում ոչ ուշ քան 1207 թ․, բայց հաւանօրէն ԺԲ․ դարու երկրորդ կիսում։ ԺԳ․ դարու առաջին քառորդում Գեղարդի տաճարի հարաւային պատին եւ մօտաւոր նմանութեամբ Դիարբեքիրում 1163/4—1180 թ․ թ․[5]), հաւանօրէն աւելի վաղ արեւելեան ոսկերչական գործերի մէջ, քիչ տարբերութեամբ միայն, այսինքն առիւծը յարձակուել է եզան վերայ եւ փողոտում է պարանոցի կողմից, կամ եղջերուի վերայ[6]), իսկ շատ աւելի հին հեթեան արուեստի մէջ[7])։ Այս յիշատակութիւնների ձեւակերպութեան մէջ ի հարկէ, կան փոքրիկ տարբե–



Գրակալ փայտակերտ․ 1272 թ․ ՊԱՏԿԵՐ․ 63—64․

---

[1]) Strzygowski. Amida. 346. պատկ․ 294. Տախտ․ VII. 1․ Տախտ․ V․

[2]) Анийская Серия №2. Н. Марр. СП. 1908. ст. 40. №49. рис. 8.

[3]) Strzygowski. Amida. 344. պատկ․ 292. Taf. III.1.2.

[4]) Walter Bachman. Kirchen und Moscheen ni Armenien und Kurdistan.Lpzg.Taf.34.36: Линч. Армения. *1910* Том. II. պատկ. 141.: Strzygowski. Die Baukunst der Armenier. 295.

[5]) Գեղարդինը տ․ Ուվարովայի․ Матер. XIII. Табл. III, Մակարայ վանքինը՝ Փափազեանի․ Հնութիւնք վանօրէից․ Առաջին գիրք․ Վաղարշ․ 1899․ լուսանկարների ժողովածու։ Դիարբեքիրում՝ Strzygowski. Amida. 63․ 67․ Տախտ․ XVI․ 1․

[6]) Смирнов. Восточное Серебро. Атлас. պատկ․ 289, 106։

[7]) Хетты. статья Захарова. 73.

րութիւններ, բայց ընդհանուր միտքը նոյն է. առիւծը յարձակուել է եզան վերայ եւ կամենում է փողոտել նորան:

Վերցնենք մի ուրիշ մոտիվ, որ գործադրուած ենք տեսնում հայ եւ մահմեդական — սելջուկեան արուեստների մէջ, թեւաւոր կամ անթեւ վիշապները, իրար հետ կռուող, իրար փաթաթուած կամ իրար հանդէպ, որոնց համար Berchem–ը նկատում է. Ce motif est figuré sur plusieurs monuments musulmans du moyen âge — այս մոտիվը ձեւակերպուած է միջնադարեան, մուսուլմանական շատ յուշարձանների վերայ — եւ փաստական օրինակներ ցոյց տալիս, Բաղդադում, Ամիդում, Գահիրէում, Հալէպի միջնաբերդում կամ Էրզրումի Չիֆտէ մինարէի վերայ, գործադրուած նաեւ Օրթոքիդների դրամների վերայ[1]): Թողնենք գիտնականների, դրանց թւում եւ Բերխեմի բացատրութիւնները, պատմական դէպքերի հետ կապելով, իբրեւ զինանշանների: Մեզ հետաքրքրում է այստեղ իբրեւ գեղարուեստական երեւոյթ, որ նկատում ենք նաեւ Հայաստանում: Վիշապական (և կենդանական) մոտիվների առատ նիւթ է տալիս Առաքելոց յայտնի Տաւնականը 1204/6 թուից, բայց, նկատելի են նաեւ քանդակագործութեան մէջ: Ահա ձեզ Կոտայքի Առինջ գիւղի հիւսիսային կողմը եղած բերդի դրան կամարակալի քարի վիշապների քանդակը (պատկ. 67), որպէս փոփոխակ Բաղդադի Թալիսման կոչուած դրան կամ Հալէպի միջնաբերդի դրան ճակատի քանդակին, նոյնիսկ գործադրութեան տեղն արժանի է ուշադրութեան: Առինջի բերդը հին է, պարսպի ներքեւի սեւ քարերի խոշորութիւնից դատելով, հաւանօրէն, Ուրարտական վերջին շրջանների գործ. բայց վերեւի քարերը յետոյ են շարուած: Դրան ձախ կողաքարի արձանագրութիւնը մեզ հնարաւորութիւն է տալիս դրան կողքերի քարերի ամենավերջին փոփոխութիւնների մօտաւոր ժամանակը որոշել. «տր Մանուէլ քարգործ որդի տր Յովհաննէսին յիշեցէք ի քս ամէն, թվ. ՋԾ»=1501: Այս արուեստաւորի ուրիշ քանդակներն էլ կան բերդի մէջ եղած փոքրիկ եկեղեցու աւերակներում: Այս թուականն, ի հարկէ, ապացոյց չէ, որ կամարակալ քարն էլ այդ ժամանակից է ծագում: Առինջը, գերեզմանական բազմաթիւ գեղեցիկ յուշարձաններից եւ ձեռագրական յիշատակարաններից դատելով, ԺԳ. եւ ԺԴ. դարերում մի կարեւոր կեդրոն էր եւ այդ ժամանակի գործ ենք համարում նաեւ մեր վիշապները:


Անիի պարիսպի առիւծը. ՊԱՏԿԵՐ 65.

Սրանց վերայ աւելացնենք եւ առիւծի մարմնով եւ մարդկային դէմքով սփինքսները կամ թռչունի մարմնով եւ կնոջ գլխով պարիկները, հաւասարապէս սիրուած հայ եւ մուսուլմանական արուեստների մէջ[2]), որոնց հրաշալի օրինակներն ունինք հայ քանդակագործութեան, եւ մանաւանդ մանրանկարչութեան մէջ (Պռոշեան վիմափորներինը կոշտ են եւ ոչ գեղեցիկ): Ահա մեր ցուցադրած երկու սփինքսները, որոնք բարձրակոչ աղաղակում են, որ ծագմամբ կապ ունին Սասանեան եւ նախասասանեան աւանդների հետ, մինչդեռ նրանք նկարուած են ՈԿԸ=1219 թուին Հառիճի վանքում Յովհաննէս գրչի ձեռքով, «յառաջնորդութի Գրիգորոյ վարդապետիս, որդւոյ Աբասայ, որ եկն ի սբ ուխտէն Սանահնէն առաջնորդ մաւրս լուսոյ եւ սպասաւոր» (պատկեր 68—69)[3]): Եւ ո՛րքան նմանութիւն եւ համեմատելի կէտեր կան սրանց եւ Պիզայի Կամպո—Սանտոյի բրոնզէ գրիֆոնի մէջ, գլխի ձեւակերպութեամբ նման մեր թռչնագլուխ կորձառիւծին, ազդրի եւ թիակի


Արեւելեան ոսկերչական գործ. ՊԱՏԿԵՐ 66.

---

[1]) Berchem—Strzygowski, Amida. 82 է.

[2]) Սփինքսներ Հայոց մէջ Հառիճի տաճարի արեւելեան պատի անկիւնում (տ. պատկ. 1), եւ Մակարայ վանքի գաւթի վերայ. իսկ Դիարբեքիրում Amida. 89. 346. Տախտ. XVIII. 1. Օրթոքիդ Մահմուդի ժամանակից՝ 1208/9 թուին:

[3]) Ձեռ. էջմ. № 1382. 306բ: Մեր սփինքսներն առնուած են 32բ եւ 47բ: Առաջինը ներքեւի լուսանցքի ձախ անկիւնում, առիւծի մարմնով, թռչնագլուխ պոչով եւ մարդկային գլխով, բարձր թագով զարդարուած. պարանոցը փողկապի նման պատած կարմիր կտորով, վերան սեւ բծեր, իսկ փողկապի քղանցքները բուսական զարդով: Թեւերը վեր են ցցուած սասանեան կենդանակերպների նման: Թիակի եւ ազդրի վերայ սեպաձեւ մի նշան, մարմինը դեղին է եւ եզերուած սեւ բծերով: Երկարութիւնն է 7 սմ.: Իսկ երկրորդը առիւծի մարմնով, վիշապագլուխ պոչով, գլուխը թռ–

սեպաձեւ նշանով նման երկուսին էլ, որ Ֆատիմիդների շրջանի գործ է համարում, խաչակիրների ժամանակ Իտալիա փոխադրած[1]): Ֆատիմիդների էին ենթարկուած Ժ. դարու վերջերից Ասորիքն ու Որոնտի երկիրները, որոնց պետութեան մէջ փոքր դեր չեն կատարել եւ հայ տարրերը:

Բայց աւելի վաղ նոյն Թռչնագլուխ կորճառիւծները իրար դէմ, կարծես, պատրաստ իրար վերայ յարձակուելու, տեսնում ենք կոպտական ձեռագրական արուեստի մէջ (պատկ. 70), որի ժամանակը, թէեւ որոշել չենք կարող, բայց յունական հնագրութեան հետ համեմատելով, հաւանօրէն, ոչ ուշ Թ—Ժ. դարերից: Իսկ աղջկագլուխ Թռչնամարմին պարիկն ունինք նոյն կոպտական արուեստում արդէն Աղեքսանդրիայի նշանաւոր Տիեզերական ժամանակագրութեան մէջ, որ Ե. դարու գործ է համարում (պատկ. 71), գրուած եւ նկարազարդուած պապիրուսի վերայ[2]): Հայ արուեստի մէջ պարիկի հնագոյն օրինակը մեզ յայտնի է ԺԱ. դարուց, որ կը տեսնենք քիչ յետոյ: Թէ՛ վերեւ յիշուած կոպտական պարիկը եւ թէ՛ մերն այստեղ, գլխարկի ետեւից ունին զոյգ ժապաւէններ:



Առինջի բերդի դրան կամարակալ քարը· ՊԱՏԿԵՐ 67·



Սփինքս· Ձեռ· էջմ· №· 1382, 32բ· ՊԱՏԿԵՐ 68·

Ոչ միայն այս, մենք կը մատնանշենք ուրիշ երեւոյթներ եւս զարդագրութեան մէջ, որ գրեթէ միաժամանակ երեւան են գալիս Հայաստանում, Ամիդում, Փ. Ասիայում կամ Եգիպտոսում եւլն. օրինակ. սրածայր կամարի հետ, ստալակտիտի, երկրաչափական որոշ ձեւերի, արմաւենիկների, եռատերեւների նման ձեւակերպութիւն ու գործադրութիւնը ԺԲ—ԺԳ. դարում երկու արուեստների մէջ, որ միայն երկուսի համար էլ ընդհանուր շարժմամբ կարելի է բացատրել եւ որից օրինակներ կը տեսնենք հետզհետէ:



Սփինքս (կորճառիւծ) Ձեռ· էջմ· № 1382· 47բ· ՊԱՏԿԵՐ 69·

չունի, սուր ու կեռ կտցով եւ ականջներով, պարանոցի տակից կախուած աքաղաղի մօրուքով: Պարանոցը զարդարուն է, վերից վար կարմիր եւ դեղին ժապաւէններինը պարանոցի վերին մասում մանեակով: Մարմնով կանաչ է, գոտին դեղին, թեւերը արմաւենիկի նման եւ վեր բարձրացրած, ազդրի եւ թիակի վերայ ստորակէտի կամ սեպի նման նշան· մարմինը բծերով: Մեծութիւնն է $7^{1}/_{2}$ սանտիմետր ըստ երկարութեան:

[1]) Migéon. Manuel d'Art Musulman. Paris. II. 1907. 221/22: Al. Gayet. L'art Arabe. Paris. 185/6. Բ· ծագումը կապում է կոպտական արուեստի հետ:

[2]) Հրատարակել է Strzygowski-ն. Eine Alexandrinische Weltchronik. կոպտական այս երկու եւ ուրիշ կարեւոր լուսանկարների համար պարտական եմ Մոսկուայի Գեղեցիկ արուեստների թանգարանի (Музей Изящных Искусств) վարիչ Тамара Николаевна Бороздина—Козьмина-ի սիրալիրութեան, որ թոյլ տուաւ նկարել տալու ինձ հարկաւոր նիւթերը նոյն թանգարանի պաշտօնեայ В. Сухов-ի ձեռքով, որի համար եւ յայտնում եմ մեր շնորհակալութիւնները: Լուսանկարներից առաջինը կրում է 4270, իսկ երկրորդը 1786 համարը: Թեւաւոր առիւծի մարմնով եւ աղջկայ գլխով սփինքսներ գտնում են

Այս երեւոյթը հասկանալու համար իրաւամբ Յովսէփ Օրբէլին մատնանշում է Սասանեան արուեստի վրայ, որ հաւասարապէս մեծ ազդեցութիւն եւ հետք է թողել մուսուլմանական եւ կովկասեան քրիստոնեաների արուեստի մէջ[1]) : Բայց ամէն ինչ նոյնիսկ Սասանեան արուեստով չի բացատրւում, եւ ամէն ինչ, որ Սասանեան նմանութիւն է բերում նոյն արուեստի անմիջական ազդեցութիւն չպէտք է համարել մեր հին եւ միջնադարեան արուեստի մէջ, որովհետեւ Սասանեանն էլ իր նախընթացներն է ունեցել աւելի հին Հետիտների, Ասորա-բաբելացիների միջագետական ստեղծագործութիւնների մէջ, որոնց ազդեցութիւնը դարերից դար զարմանալի կերպով նշմարւում են հին Պարսից եւ Սասանեանների, արեւելեան քրիստոնեաների եւ մուսուլմանական միջնադարեան արուեստի մէջ, ի հարկէ ամէն շրջան կրելով եւ իրեն յատուկ բնորոշ կողմերը:

ԺԳ. դարու հայ արուեստի վերածնութեան սաղմերն արդէն նըկատւում են Ժ–ԺԱ. դարում կենդանական եւ բուսական օրնամենտացիայի մի ամբողջ աշխարհ է բաց անում մեր առաջ Աղթամարի Ս. Խաչ վանքը, մի կողմից կապուած հին, իրանական-սասանեան եւ միջագետական աւանդների հետ, միւս կողմից ԺԳ. դարու արուեստի հետ, այսպիսով բանալի հանդիսանալով սորա հասկացողութեան համար: Անշուշտ այս հասկացողութեան քիչ տուեալներ չունին առ-հասարակ Ժ–ԺԱ. դարու հայ



կոպտական հատակոտոր Թ—Ժ. դարու ? ՊԱՏԿԵՐ 70.

ճարտարապետութիւնը, զարդագրութիւնը եւ մանրանկարչութեան մնացորդները, միջին օղակը հանդիսանալով ԺԳ. դարու եւ աւելի հնագոյն շրջանների համար, բայց ոչ մի տեղ այնպէս ուժեղ եւ շօշափելի կերպով, ինչպէս Աղթամարում, յատկապէս կենդանական—բուսական զարդագրութեան համար: Այս կողմից որոշ չափով նպաստում են նաեւ ուրիշ շէնքեր, ինչպէս Բարդուղիմէոս առաքեալի վանքը Վասպուրականում, Ցախացքարը Վայոց ձորում, Անիի մայր եկեղեցին Շիրակում: Շատ նմանութիւններ, որ մենք տեսնում ենք հայ եւ սելջուկեան արուեստների մէջ, նկատւում են արդէն Աղթամարում կամ ԺԱ. դարու մանրանկարչութեան եւ քանդակագործութեան մէջ, որով եւ փոխազդեցութեան

հետիտեան արուեստի մէջ, Ը. դարու (Ք. Ա.) գործ. Die Kunst der Hethiter. Otto Weber. պատկ. 45. եր. 49: Սրանք եւ աղջկագլուխ պարիկները ամենայն հաւանականութեամբ եգիպտական ծագում ունին, որոնց ազդեցութիւնը մեծ էր Հետիտների վրայ (Reich u. Kunst der Hetiter. Eduard Meyer. 1914. Berlin. եր. 24—28. 49, 47 շ.). վերջիններս էլ իրենց հերթին ազդել են Ասորեստանցիների եւ հիւսիսային Միջագետքի արուեստի եւ քաղաքակրթութեան վրայ. Հետիտներից էլ հիւսիսային Ասորիքի եւ Միջագետքի վրայով այդ մոտիվներն անցած պիտի լինին Սասանեաններին (համ. Вост. Сер. պատ. 307): Սրանց կարգին են պատկանում եւ մարդկային մարմնով ու կենդանական գլխով ֆիգուրները, տարածուած Հայաստանի նախնական շրջանի քանդակագործութեան մէջ, որի մասին մի այլ տեղ պիտի խօսենք:

1) Временная выставка, 1922. 6.

յուսարանութեան փոխարէն երկուսի համար էլ ընդհանուր հայրենիքը մատնանշում: Այդ աղերը աւելի են պարզում Մշոյ Առաքելոց դրան (այժմ Երեւանի Թանգարանում) աջ եւ ձախ շրջանակների թեւաւոր, առասպելական կենդանիների շարքերը, ՇՁԳ=1134 *թուից, որոնց թւում նաեւ կորճառիւծն ու պարիկը· իսկ աւելի հին Աղցի գետնափոր գերեզմանի դրան շրջանակարդն է:*

Սակայն երկու արուեստների փոխազդեցութիւնն էլ անուրանալի է, ոչ միայն զարդարանքի, այլ եւ կառուցողական մասերով, նոյնիսկ կահ կարասիքի եւ անօթեղէնների մէջ: Սելջուկների արշաւանքն ու տիրապետութիւնը կործանարար էր եւ վանողական միայն առաջին շրջաններում, բացառութեամբ Մելիքշահի ժամանակի, երբ «առավել խաղաղացաւ աշխարհն ամենայն, մանաւանդ երկիրս հայոց, որ ի նախնի բռնակալացն ի սպառսպուռ զկործանման բաժակն արբեալ էր յանցեալ ժամանակս»[1]: *Բայց բնականաբար հետզհետէ մեղմացան յարաբերութիւնները այն չափով, որ նոյնիսկ խնամիական կապեր էին հաստատւում հայ եւ սելջուկ տեղական իշխանների մէջ: Մանուչէն մօր կողմից իրեն Բագրատունի էր համարում եւ բարեկամական յարաբերութեան մէջ էր Պահլաւունիների հետ*[2]: *Արցախի իշխաններից Վասակի որդի Գրիգորը իր դուստրը կնութեան էր տուել Ճարտաբերդի սելջուկ իշխանին, որի օգնութեամբ կամենում էր վրէժխնդիր լինել Դեսմեան Հասան իշխանից*[3]: *Թամթէի կնութիւնը Խլաթի Շահիարմէնին տեսանք վերեւ* (*էջ*· 5)· *Տարսայիճ Օրբէլեանի առաջին կինը, Ստեփանոս Օրբէլեանի մայրը, Սիւնեաց մահմեդական իշխաններից մէկի դուստրն էր*[4]: *Մահմեդական իշխանների յարաբերութիւնները մեղմ էին աւելի Անիում եւ Խլաթում:*

Պարսկական եւ միջագետական աւանդութիւններին աւելի մօտ շէնքերը Հայաստանում բոլորը աղիւսաշէն են, ինչպէս Նախիջեւանի Յուսուբ իբն Կուսայիրի դամբարանը 1161 *թուից եւ Մումինէ Խաթունի դամբարանը* 1168 *թուից*[5], *Վանի Ուլու Ջամին ԺԱ—ԺԳ· դարերի եւ Էրզրումի Չիֆտէ մինարէն ԺԲ· դարու սկիզբի գործ*[6]: *Հակառակ բացարձակ հայկական սովորութեան, որ եկեղեցական շէնքերի համար իբրեւ արտաքին հանդերձանք սրբատաշ քարն է գործադրում, տեսնում ենք բացառաբար տաճարներ թրծած եւ մասամբ գունաւոր աղիւսով շինած, որ մահմեդական ազդեցութեան պէտք է վերագրել: Այսպէս են Սրվեղի եւ Կիրանց վանքերի շէնքերը Ղազախում, որոնց ծագման ճիշդ ժամանակը որոշել չենք կարող, անձամբ տեսած եւ ուսումնասիրած չլինելով, բայց Կիրանց վանքը հաւանօրէն ԺԳ· դարից ուշ չէ, հայ–վիրական քաղաքական—կուլտուրական աւելի սերտ մերձեցման ժամանակներից*[7]:



Ալեքսանդրիայի Տիեզերական ժամանակագրութեան հատակոտր· Ե· դարու· ՊԱՏԿԵՐ 71·

---

[1] Սամուէլ Անեցի· 118/9:

[2] Վարդ· 145: Ուռհ· 269:

[3] Ալիշան· Հայապատում· 387:

[4] Օրբ· 416:

[5] Mittelalterliche Backsteinbauten zu Nachtschewan im Araxesthale. Eduard Jacobsthal. Berlin. 1899. 10. 13.

[6] Bachman. Kirchen n. Mocheen 73/4 եւ 78/9 Բախմանն ուղղում է· Հ· Ներսէս Սարգսեանի՝ Տեղագրութիւնք ի փոքր եւ ի մեծ Հայս· 1864· 73, տուած թուականը, Մելիքխանը նոյնացնելով Մելիքշահի հետ:

[7] «Բարձրում (ներսը) նկարուած են սրբոց պատկերներ, բայց ոչ հայկական ճաշակով եւ ոճով, այլ յունական· սակայն պատկերների ստորոտում կան հայերէն գրեր»: (Բարխ· Արցախ· 380): Նման երեւոյթ նկատում ենք Անիի Հոնենց նկարազարդ Ս· Գրիգորի պատկերագրութեան մէջ:

Փափազեանը իր լուսանկարների ժողովածուին կցած տեղեկութիւնների մէջ, Կիրանց վանքի մասին գրում է· «կան շատ գե-

Սրան հակառակ երեւոյթ ենք նկատում Հայաստանի կեդրոններում հաստատուած մահմեդական իշխանութիւնների շինարարութեան մէջ, Անիում եւ Խլաթում: Այստեղ ոչ միայն շէնքերի հանդերձանքը սրբատաշ քարով է, այլ եւ ամբողջ կառուցուածքը ակնյայտնի կերպով ենթարկուած հայ արուեստի ազդեցութեան: Մանուչէի մզկիթը Անիում ոչ այլ ինչ է, բայց եթէ մեր գաւիթների կրկնութիւն: Խլաթի մուսուլմանական դամբարաններն ու գերեզմանական արձանները իրենց արտաքին տպաւորութեամբ միանգամայն մօտ են հայկական տաճարներին եւ խաչքարերին, գմբէթները նման հայ տաճարների գմբէթներին, սիւները կրկնութիւն ԺԳ. դարու գաւիթների հաստահեղոյս, միակտուր սիւներին իրենց խոյակներով: Բախմանը վերլուծութեան ենթարկելով նրանց կառուցուածքի (Konstruktion) առանձնայատկութիւնները, յատուկ հայկական (typisch armenisch) է համարում այն, որպէս փոխառութիւն կամ հայ վարպետների գործ[1]): Անիի եւ Խլաթի մահմեդական շէնքերի նմանութիւնը մատնանշում են նաեւ Լինչը եւ Սալադինը[2]): Այդ ազդեցութիւնը նկատուում է որոշ չափով մինչեւ իսկ փոքր ասիական սելջուկների շինարարութեան մէջ: Կառուցողական եւ զարդարանքի շատ մեծ նմանութիւն ունին մեր կրկնայարկ եւ գմբէթաւոր զանգակատները, ինչպէս Եղուարդի գեղամիջի Ս. Յակոբը, սելջուկեան կրկնայարկ գմբէթով մեչիդների հետ, կառուցուած



Եղուարդի ու Ս. Յակոբի երկրորդ յարկի արեւմտեան դուռը.
ՊԱՏԿԵՐ 72.

գլխաւորապէս կարաւանատների կեդրոններում[3]): Կարբիի նման զանգակատան երկրորդ յարկը հաստատուած է բաց, սրահաձեւ կամարների վրայ, ինչպէս եւ Իսակլիի մեչիդը: Այստեղ ցուցադրուած պատկերը (72) Եղուարդի շէնքի արեւմտեան պատի երկրորդ յարկի դուռն է, որի խորշի քանդակն աւելի ընդհանրացած է մուսուլմանական արուեստի մէջ, քան մեր: Նոյն շէնքի երկրորդ յարկի փոքրիկ ափսիդը ձեւակերպուած է եւ քանդակուած նոյն ոճով եւ նման մահմեդական մեհրաբների խորշերին: Եղիպատրուշ գիւղի (Տամշլու, Ապարանի շրջանում) Վաչուտեանց ժամանակի գաւթի դրան գլխի խորշը նոյն, բայց աւելի պարզ, մոտիվն ունի, իսկ շրջանակագարդը հաւասարապէս գործադրուած է հայ եւ մահմեդական քանդակագործութեան եւ ապակուած (глазурный) արուեստների մէջ (պատկ.73):

Անիի թանգարանը իր անօթեղէնների հարուստ ժողովածուներով, ակադեմիկ Մառի անձնուէր եւ երկարատեւ աշխատանքների արդիւնքը, աւա՜ղ, այժմ ոչնչացած պատերազմի հետեւանքով եւ մի փոքրիկ մասը միայն ազատուած Աշխարբեկ Լօռու Քալանթարի ձեռքով, ակնյայտնի ապացոյցներ էր բերում հայ եւ սելջուկ քաղաքակրթութեան եւ արուեստի կենդանի յարաբերութեան նաեւ տնային իրերի եւ անօթեղէնների մէջ: Սելջուկեան կայսրութեամբ, Հայաստանում հաստատուած նրանց աւելի մանր իշխանութիւններով եւ ապա մոնղոլական տիրապետութեամբ, մեր երկիրը քաղաքական եւ վաճառականական կենդանի յարաբերութեան մէջ էր մահմեդական Պարսկաստանի, Միջագետքի եւ ապա Միջին Ասիայի հետ, որ իրենց հետեւանքները պէտք է ունենային նաեւ կուլտուրական—գեղարուեստական կեանքի մէջ: Պրոֆեսոր Զուբինաշվիլին այդ կապը մատնանշել է Անիի կարաս-



Եղիպատրուշի գաւթի արեւմտեան դուռը. ՊԱՏԿԵՐ 73.

բեզմանաքարեր, որոնց արձանագրութիւնը անհնարին է կարդալ, եւ մինչեւ անգամ Հայոց տառեր լինելուն երաշխաւոր չլինէր մարդ»: Փափազեան. Հնութիւնք Հայրենեաց, Ա. գիրք: Արդեօք խցուրի արձանագրութիւններ են, որով հաստատուած կը լինէր մեր ենթադրութիւնը վանքի ծագման ժամանակի մասին:

[1] Bachman. 59.

[2] Линч. Армения. II. 1910. 372. 377/8. Saladin. Manuel d'Art Musulman. II. Paris. 1906. 441—445.

[3] Sarre. Reise in Kleinasien. Berlin, 1896. 20. Taf. III. և 79/80. Taf. XXXVI. Saladin. 446. 451. 456—460.

ներին նուիրած իր աշխատութեան մէջ, նրանց նախնական պատկերագրութիւնն ու զարդագրութիւնը ծագման տեսակէտով մահմեդական արուեստի ազդեցութեան վերագրելով1), իսկ Պրոֆ· Յովսէփ Օրբէլին, ակադեմիկ Մառի աշակերտը եւ նորա ղեկավարութեամբ երկար տարիներ Անիում աշխատակիցը, Հայպարսկական ճարտարապետական քարի քանդակի ազդեցութիւնը մահմեդական ապլիկուած արուեստի վերայ2)։ Անկասկած է, որ այդ արուեստի զարդագրութեան որոշ երեւոյթներ իրենց ծագմամբ կապ ունին քարի, փայտի, ոսկերչական զարդագրութեան հետ, որոնք Հայաստանի քարաշէնքին այնքան ընտանի են եւ որոնց մասին այստեղ մանրամասնել չենք կարող։ Գունազարդ ապլիկուածքի գործադրութիւնը փոքր չափով ունինք եւ եկեղեցական շէնքերում, ինչպէս Եղուարդի վերեւ յիշուած Ս· Յակոբի գմբէթի վրայ մի ժապաւէն արտաքուստ3), կամ Կիրանց վանքի գմբէթի թմբուկը գունաւոր աղիւսներով արտաքուստ։ Նոյն իսկ հեռաւոր, միջին ասիական, չին-մոնղոլական ազդեցութեան հետքեր նկատւում են մեր ԺԳ· դարու մանրանկարչական զարդագրութեան (Հեթումի Ճաշոց, մետաքսի կտորներից առնուած) եւ քանդակագործութեան մէջ· Հոռոմայրի շէնքերից մէկի դրան ճակատի բարձրաքանդակ Յիսուսը մոնղոլական դէմք ունի· Վայոց ձորի Նորավանքի խաչքարերից ոմանց մարդկային պատկերները մոնղոլական դիմագծերով են եւ հագուստով, ինչպէս եւ նկատել է Strzygowski-ն4), իսկ քանդակագործը մեզ ուրիշ աղբիւրներից յայտնի գրիչ եւ նկարիչ Մոմիկն է5)։

Պռոշեանների ստեղծագործութիւններն էլ, ինչ որ մեզ ծանօթ են արդէն եւ պիտի ծանօթանանք այսուհետեւ, մաս են ամբողջի, վերեւ ակնարկուած ԺԳ· դարու գեղարուեստական շարժման եւ փոխազդեցութիւնների։ Մենք հարկաւոր համարեցինք այս փոքրիկ շեղումը, որպէսզի աւելի դիւրին կերպով կարելի լինի բացատրել եւ հասկանալ այն երեւոյթները, որ Պռոշեան պայազատների անմիջական ձեռնարկութեամբ կամ նրանց իշխանութեան մէջ երեւան են գալիս իշխանութեան հաստատութիւնից մինչեւ ԺԴ· դարու կէսերը արուեստի այլ եւ այլ ճիւղերի մէջ, ճարտարապետական կառուցուածքից սկսած մինչեւ քանդակագործական, ոսկերչական եւ մանրանկարչական զարդագրութիւնն ու պատկերագրութիւնը։

Պռոշեանների զինանշան համարուած կենդանական խմբանկարը երեք մասի է բաժանւում, եւ այդ առանձին առանձին մասերը մենք գտնում ենք Հայաստանում եւ Հայաստանից դուրս այլ եւ այլ տեղերում։ Վերցնենք, օրինակ, եզան գլուխը· Դիարբեքիրի Հալէպի դրան ճակատին կայ մի քանդակ երկու արձանագրութիւնների մէջ· Թեւատարած մի արծիւ մագիլները դրել է եզան գլխի եղջիւրների ծայրերին, իսկ եզը բերանում բռնել է պարանահիւսի զարդով մի օղակ, մօտաւորապէս, ուրեմն, նման Գեղարդի բարձրաքանդակին։ Արձանագրութիւնների ընթերցումը Բերխեմի կողմից, ցոյց է տալիս, որ նա գրուած է Օրթոքիդ Ղարա—Ասլանի որդի Մուհամմադի կողմից, 1183/4



Մանրանկար ԺԱ· դարու· Ձեռ· էջմ· № 369· ՊԱՏԿԵՐ 74·

---

1) X. B. Том. V. вып. I. 1916· Մեզ թւում է այդ պնդումը վերջնական չպէտք է համարել, քանի չեն հաւաքուած եւ ուսումնասիրուած յախճապակեղէնների մնացորդները ԺԳ· դարուց էլ աւելի հին ժամանակների նկատմամբ։ Խաչիկ վարդապետը Ջուարթնոցի պեղումներից հաւաքել էր բաւական քանակութեամբ գունազարդ խեցեղէններ, իրենց զարդերով աւելի մօտ Սասանեան կամ մեր հնագոյն ճարտարապետութեան եւ մանրանկարչութեան։ Այդպիսի խեցեղէնների մնացորդներ կան եւ մեր ուրիշ աւերակների մէջ։ Նրանց հաւաքումը եւ ուսումնասիրութիւնը ամենայն հաւանականութեամբ նոյնը պիտի հաստատէ, ինչ որ արուեստի միւս ճիւղերի համար նկատեցինք։

2) Мусульманские Изразцы. Петербург. 1923·

3) Տես մեր յօդուածը· Ազիզբէկեանք եւ նրանց շինարարական գործը· Բանբեր Հայաստանի Գիտական Ինստիտուտի, Գիրք Ա· եւ Բ· 1921—1922, 188· ԺԶ· եւ հետագայ դարերի ապիկուած հայ արուեստի մասին փ· Ասիայում տես Առնակի (Համբարձում Պ· Զօրթեան) յօդուածը· Թէոդիկ· Ամենուն Տարեցոյցը· 1923· 213։

4) Die Baukunst der Armenier. 708։ Ուվարովայի Материалы. XIII. Табл. XXXVIII. պատկ· 83—84։

5) Մեր Գրչութեան Արուեստը· Գ· § 108· 109։

թ., երբ յաղթելով Ինալիդ Մահմուդին եւ Նիզանիդ Մասուդին, գրաւում է Ամիդը: Բերխեմը անպայման զինանշան համարելով այդ, փորձում է բացատրել իմաստը, արծիւը համարելով յաղթական Մուհամմադի նշանը եւ եզան գլուխը յաղթուողներից մէկն ու մէկի կամ քաղաքի նշանը: Նա հիմնաւորում է իւր ենթադրութիւնը նման երեւոյթների կրկնութեամբ մահմեդական ուրիշ իշխանների կեանքից: Այս զինանշանի երեք տարրերը, թռչունը, եզան գլուխը եւ օղակն առանձին առանձին գտնւում են Դիարբեքիրի շէնքերի եւ պարսպի այլ եւ այլ մասերում: Աւելացնենք նաեւ, որ արծիւ թառած եզան գլխի վրայ, տեսնում ենք եւ ԺԶ. դարու պարսկական թաւշեայ կտորների վրայ, որ հաւաքել է Sarre-*ն*[1]):



Մանրանկար ԺԱ. դարու Ձեռ. էջմ. No. 369. ՊԱՏԿԵՐ 75.

Բայց ի՞նչպէս բացատրենք, երբ այս նոյն երեւոյթն առանձին առանձին եւ խմբակցութեան քիչ տարբերութեամբ տեսնում ենք եւ Հայաստանի զանազան կողմերում. արդեօ՞ք պարզ փոխառութեամբ: Պռոշեան քանդակի մէջ ոչ միայն խմբակցութիւնն ու դասաւորութիւնն է տարբեր, այլ եւ նրա առանձին տարրերը: Այստեղ տեսնում ենք արծիւը մագիլների մէջ խոյ ունի բռնած, իսկ այնտեղ թառել է եզան եղջիւրների վրայ: Առհասարակ թեւատարած արծուի գործածութիւնը, հաշուելով եւ երկգլխանիները, արուեստի մէջ հին է Առաջաւոր Ասիայի ազգերի մէջ, սկսած Հեթիտներից[2]) *մինչեւ Սասանեանները, Բիւզանդացիք, Հայերն ու Վրացիք*[3]): *Աւելացնենք, որ նրանց գործածութիւնը մատնանշում է* Strzygowski-*ն նաեւ միջին Ասիայում, եւ որտեղից կարծում է կարող է Հայաստան եկած լինել Պարթեւների միջոցով իբրեւ զինանշան*[4]): *Այն հանգամանքը, որ երկգլխանի արծիւը արեւելեան զարդագործութեան մէջ ամենատարածուած մոտիվներից մէկն է եւ ոճաւորուած մինչ այն աստիճան, որ համբակ աչքի համար նկատելի չէ, կամ հէնց եզան եղջիւրների վրայ թառած արծիւը թաւշեայ կտորների վրայ, ապացոյց է նորա հնութեան եւ ժողովրդականութեան, որ անշուշտ Դիարբեքիրի բարձրաքանդակից չէ առնուած: Երկգլխանի արծիւը, աւելի ճիշդ երկու իրար միացրած արծիւ, որ երկգլխանի է դառնում եւ չորս ոտնանի, ունինք հայ մանրանկարչութեան մէջ* 1066 *թուից*[5]) (*պատկ.* 74) *եւ քանդակագործութեան մէջ, Անիի Առաքելոց դաւթի մի խաչքարի վրայ*[6]): *Այս մանրանկարը մեր առաջ է դնում եւ մի ուրիշ կարեւոր հանգամանք՝ եռամանեայ կամարը եւ երկրաչափական վանդակազարդեր (պատկ.*



Սասանեան ոսկերչական գործ. ՊԱՏԿԵՐ 76.

---

[1]) Manuel d'Art Musulman. II. Gaston Migéon. Paris. 1907. 407.

[2]) Хетты. Культура Востока. 73. Weber. Die Kunst. պատկ. 13. Ed - Meyer. 28.

[3]) Strzygowski. Die Baukunst. 289. պատկ. 327.

[4]) Անդ. 284:

[5]) Ձեռ. էջմ. No 369. Տես Արարատ. 1910, Յունվ. եւ Փետր. Մեր յօդուածը. «Նախնեաց Յիշատակներ»:

[6]) Н: Марр. О. Раскопках и Работах в Ани Сп. 1907. 52.

75); որ սելջուկեան անմիջական ազդեցութեան հետեւանք լինել կարող չէ մեր մէջ այդքան վաղ ժամանակից: Մահմեդականների մէջ եւս նոյն մոտիվը իբրեւ զոյգ թռչունների (բազէի) միութիւն եւ իբրեւ մի կամ երկգլխանի արծիւ գործադրուած ենք տեսնում Դիարբեքիրի Օրթօքիդների եւ Փ. Ասիայի սելջուկների քանդակագործութեան եւ դրամների վրայ[1]:


Սասանեան արծաթի գործ· ՊԱՏԿԵՐ 77·

Բայց այստեղ այժմ մեզ հետաքրքրում է մագիլների խոյ կամ գառ բռնած արծիւը, որ շատ տարածուած է Հայաստանում· բացի Պռոշեանց շէնքերում յիշուածները (էջ 24 եւ 64), դրանց հնագոյն օրինակն ունինք Ցախաց քարի հարաւային պատին, ուրեմն ոչ ուշ քան ԺԱ· դարու կէսերը, այսինքն երբ հայ կամ սելջուկեան անմիջական փոխազդեցութեան մասին խօսք լինել կարող չէ: Ալիշանը Ջալալեանի նկարագրութիւնից առնելով, կարծում է «մագլեալ դցուլ», որ սխալ է: Կեչառիսում պտնւում է մի քար մագիլներում խոյ բըռնած արծիւ քանդակով, որ հաւանօրէն Վասակաշէն կաթուղիկէից պէտք է ընկած լինի: Դսեղի Բարձրաքաշ Ս· Գրիգորի հարաւային շէնքի պատին, շինուած 1245 թուին Մամիկոնեան կամ Համազասպեանց Մարծպանայ որդի Ասլան բէկի կողմից, Տիրացու վարդապետի առաջնորդութեան ժամանակ, պտնւում է մի հարթաքանդակ երկգլխանի արծիւ, մագիլներում խոյ բռնած, պարզ զինանշաններից կամ դրօշներից առնուած[2]: Հերհերի, Վայոց ձորում, զոյգ մատուռներից մէկի լուսամուտի գլխին քանդակուած է արծիւ, մագիլների մէջ դարձեալ խոյ բռնած: Շէնքը շինուած է ՉԼԱ=1282 թուին եւ Շահուռնեցոց իշխանական տոհմի սեփականութիւն էր: Եղուարդի Ազիբէկենց Ս· Յակոբի հարաւային պատին, շինուած 1301 թուին, քանդակուած է նոյն մոտիվը: Վեդիից դէպի արեւելք Ջինջիրլուի Ս· Կարապետի վանքում կայ նոյն քանդակը ԺԴ· դարու առաջին կիսից[3]: Այս մոտիվն այսպէս տարածուած լինելով Հայաստանում, մենք կարող էինք աւելի ընդարձակել այս ցուցակը, մասամբ միայն նմանութիւն է բերում Դիարբեքիրի Օրթօքիդների թողած մի եւ երկու գլխանի արծիւներին եւ անմիջապէս չի կապւում ծագմամբ նրանց հետ, այլ աւելի հնագոյն աւանդների, ինչպէս Ցախաց քարի օրինակից տեսանք, կամ Սասանեան արուեստին շատ մօտ մի արծաթեայ անօթի նոյն պատկերից մակաբերել կարելի է, որ ցուցադրում ենք այստեղ (պատկ· 76)[4]:


Պռոշեան վիմափոր ժամատան հարաւային պատին, քանդակ, ՊԱՏԿԵՐ 78·

---

[1] Berchem. Amida 87—100:

[2] Պատկերը տես Strzygowski. Die Baukunst. 287:

[3] Х· В· Том· II· вып· II· Потомст. Тарсаича· Табл· XXXII·

[4] Я· И· Смирнов· Восточное Сер· պատկ· 88· 162· Երկգլխանի արծիւ մագիլների մէջ նապաստակ նաեւ Հեթիթեան արուեստի մէջ· Ed· Meyer· Kunst նկն· 28, որ Հեթիթական պետութեան զինանշանն էր:

Այս տեսութեան նկատմամբ ոչինչ չէ փոխում եւ ինսբրուկի Ֆերդինանդեումի պղնձի սկուտղը, որ ըստ արձանագրութեան Կայֆայի եւ Խարբերդի տէր իրն Սուքման իրն Ուրթուք Դաւուդի (1114—1144) պատուէրով է շինուած, եւ ի միջի այլոց ունի նաեւ նիմբուսաւոր արծիւ մագիլների մէջ կենդանի բռնած: Բերխեմը արձանագրութիւնների հնագրական առանձնայատկութիւններից դատելով, կարծում է, որ սկուտղը վերոյիշեալ քաղաքների կամ Ամիդի գործ չէ, եւ մատնանշում է Migéon–ի հետ միջին ասիական կամ չինական շրջանները: Սրանց հակառակ Strzygowski–ն հնարաւոր է համարում նրա ծագումը տեղի հետ կապել, բայց օտար վարպետի գործ, որ օգտագործել է տեղական մոտիվները: Ընդհանրապէս այսպիսի պղինձի գործերի հայրենիքը, ինչպէս եւ մոսուլականի, համարւում է Հայաստանը կամ պարսկահայկական սահմանները՝ Ասորիքն ու հիւսիսային Միջագետքը[1]) :

Առիւծների մասին արդէն խօսք եղաւ մասամբ վերեւ· դրանք իրար դէմ, հանդիստ կամ կռուելիս, իրար կամ ուրիշ կենդանիների հետ, թեւաւոր եւ անթեւ, հաւասարապէս տեսնում ենք հայ եւ մահմեդական արուեստների մէջ: Բայց այստեղ առանձնայատուկ է նրանց շղթայուած դիրքը իրար հետ, ինչպէս Պռոշեանների անմիջական հովանաւորութեան տակ ծաղկած Գլաձորի դպրոցի նշանաւոր մանրանկարիչ Դաւիթ Տարոնեցու նկարն է Եսայի Նչեցու Աստուածաշնչի մէջ (պատկ· 27· էջ 47), գեղարուեստական մի գործ, աւելի հնագոյն՝ Սասանեան եւ միջագետական՝ աւանդութիւնների պահպանութեամբ, կամ առանց թեւի այստեղ՝ Պռոշեան քանդակում, վիշապագլուխ պոչերով, եթէ ճիշդ է մեր դիտողութիւնը (սկզբնական օրինակի մէջ բոլորովին պարզ չէ այդ մասը), որ դարձեալ արեւելեան հին աւանդներն է մատնանշում: Ուրոյն երեւոյթ է նոյնպէս եզան կամ նորա գլխի հետ շղթայուած (պատկ· 12, 13 եւ 15· էջ 24, 25, 26) կերպը՝ արծուի ոտքերի տակ: Արդեօ՞ք Պռոշեան եւ նրանց ստորադրեալ աւելի մանր իշխանութիւնների խմբակցութիւնն է պատկերաւորում Գեղարդի վիմափորի քանդակը, դժուար է պնդել, բայց անշուշտ իմաստ ունի այս խմբակցութիւնը:

Ինչ որ ասացինք Պռոշեան այս քանդակի մաս կազմող կենդանիների եւ թռչունի համար՝ եզան գլուխը, շղթայուած առիւծներն իրար դէմ, արծիւը մագիլների մէջ խոյով կամ զոյգ պարիկները, նոյնը կարող ենք ասել եւ մնացածների համար, ինչպէս վիմափոր տաճարի քոշն է, որի թեւաւոր օրինակն ունինք Եղուարդի Ս· Յակոբի հիւսիսային լուսամուտի գլխին, իսկ աւելի վաղ Սասանեան արծաթի գործերի (պատկ· 77) մէջ[2]), Թանատի վանքի հարաւային պատի աղաւնին պատող բազէն, յար եւ նման Աղթամարին, եզան գլուխը, զոյգ սիրամարգները կաթուղիկէի թմբուկի վերայ[3]): Այսպէս են եւ երկրաչափական, հիւսկէն քանդակները, վարդեակները[4]), արմաւենիկները, սրածայր կամարներով պատրհաններն իրենց զարդերով Պռոշեան ժամատան մէջ (պատկ· 78)[5]), կրկնուած նման փոփոխակներով նաեւ մահմեդական ժամանակակից արուեստի մէջ, խաչքանդակների զարդերը, ոմանք միայն աւելի հին աւանդները պահած, ինչպէս վիմափոր գաւթի գեղանկար խաչը (պատկ· 43, 44, 49, 34): Սրանք բոլորը մեզ համար հասկանալի են իբրեւ ԺԳ· դարու հայ արուեստին յատուկ մոտիվներ, կամ իբրեւ մաս ընդհանուր հոսանքի:

---

[1] Berchem—Strzygowski. Amida. 120 ե· եւ 268 ե· Migéon. Manuel d'Art Musulman. 165/6. Н. Марр, О. Раскопках. в Ани. СП. 1907· 50·

[2] **Смирнов. Восточное Серебро.** պատկ· 88· Սասանեան ոսկերչական գործերից մեր ցուցադրած պատկերները 65· 76, 77· առնուած են Լենինգրադի Էրմիտաժի Սասանեան ժողովածուներից· լուսանկարները հոգացել է ինձ համար ներկայ վարիչ Պրոֆ· Յովսէփ Օրբէլին, որին եւ յայտնում ենք սրտանց շնորհակալութիւն: Անիի հիւսիսային պարսպի վազող առիւծը խաչով առնուած է Անիի շարքից, որ հրատարակուած է ակադեմիկ Մառի կողմից կամ նրա խմբագրութեամբ:

[3] Bachman. Tafel. 34.

[4] Հմմ· Strzygowski. Altai—Iran պատկ· 138:

[5] Սրա նկարագրութիւնը տես էջ 59–60· մեզնից անկախ պատճառով պատկերը իւր տեղում դնել չկարողացանք տպագրութեան ժամանակ:

Ը

ԽԱՉԻ Ա· (1299—1317)

Ամիր Հասանի եւ Թաճերի որդին էր Խաչոն կամ Խաչին, որի գործունէութեան նկարագրութեան անցնելուց առաջ, հարկաւոր է պարզել մի խնդիր, որ մեր բանասէրներին շփոթութեան մէջ է ձգել: Ջալալեան (Բ· 148) եւ Ծաղքերումի (Ար· 1890, 339) Խաչի անունով մի իշխան են ընդունում, որպէս Պռոշի կամ Պապաքի որդի, որ սխալ է: Աղբիւրների ուսումնասիրութիւնը պարզում է, որ Խաչի անունով մի իշխան է միայն եղել այս ժամանակ եւ նա Պռոշի թոռն է, Ամիր-Հասանի որդին: Այս սխալի պատճառն այն է, որ Խաչին մի քանի արձանագրութիւնների մէջ յիշուած է Պռոշի որդիների շարքում: Դոցանից հնագոյնը Թանատի վանքի 1273 թուի արձանագրութիւնն է (Ցաւել· Ա· 18·)· «յարիական եւ քաջատոհմ իշխանութեան Պռոշոյ եւ որդւոցն Պապաքին, Հասանայ, մանկանն Խաչոյ շինեցաւ սուրբ եկեղեցիս»: Երկրորդ անգամ յիշւում է Մարտիրոս գիւղի վիմափոր եկեղեցու Մաթէոս վարդապետի արձանագրութեան մէջ 1286 թուին (Ցաւել· Ա· 23, պատկ· 56): Այստեղ, ի հարկէ, բոլորովին պարզ է, որ Խաչին Հասանի որդին է՝ «Եւ ի տրութ իշխանաց իշխանին Պռոշոյ եւ որ/(դւոց նոր)ին Պապաքին եւ Հասանա եւ որ/(դոյ) նորին Խաչո եւ մաւր նորին/Թ(աճ)երոյն…»՝ բայց Ջալալեան սխալ է կարդացել, (Բ· 201), ուստի եւ չէ պարզուել նորա համար խնդիրը: Երրորդ անգամ Պապաքի եւ Հասանի հետ յիշուած է Խաչին Թանահատի մի երկրորդ՝ Խութլուբէկի՝ արձանագրութեան մէջ (էջ· 74· Ցաւել· Ա· 18բ·), ինչպէս պարզել ենք, 1284 թուից՝ Պռոշի մահուանից յետոյ գրուած: Վերջապէս չորրորդ անգամ յիշուած է Արկազու Ս· Խաչի մի թերի արձանագրութեան մէջ, որ բերում է Ջալալեան[1]· «Եւ ամենավեհ իշխանի Պռոշոյ եկեղեցիս եւ մանկան Խաչոյ եւ մեծահաւատ տիկնոջ Խոռանոյ, յորժամ տէր էր տեղւոյս»:

Չունենայինք ուրիշ աղբիւրներ, քան այս արձանագրութիւնները, այն էլ մեր նախորդների սխալ ընթերցումներով, արդարեւ ուրիշ եզրակացութիւն Խաչիի մասին դժուար էր հանել: Սակայն, տեսանք, որ այդ արձանագրութիւններից մէկը՝ Մաթէոս վարդապետինը, պարզ եւ մեկին կերպով յայտնում է, թէ Խաչին Հասանի եւ Թաճերի որդին է: Նոյնը հաստատում են Խաչիի երկու արձանագրութիւնները, մէկը իւր շինել տուած Խոտակերաց Ս· Նշանի պահարանի ետեւում (պատկ· 79)[2], միւսը Սպիտակաւոր Աստուածածնի հիւսիսային պատի վերայ ներսից (պատկ· 80)· նոյնը տեսանք պարզ հաստատուած Թաճերի (էջ· 77–80) եւ Շմաւոն գրչի Ոծոպի վանքում 1292 թ· գրուած յիշատակարանների մէջ: Բացի դորանից, Օրբէլեան, որ ժամանակակից է, քանիցս խօսում է Խաչի իշխանի մասին, որ իւր փեսան էր, Ելիկում Օրբէլեանի դստեր ամուսինը, առանց ակնարկի կամ յիշատակութեան մի երկրորդ Խաչիի մասին[3]: Գրիգոր Անաւարզեցու դէմ գումարուած ժողովի ձեռնարկի տակ Պապաքի եւ Խաչոյի ստորագրութիւնը որպէս «որդիք բարեպաշտ իշխանին Պռոշոյ» մեզ չպէտք է շփոթեցնէ: Որովհետեւ այդտեղ «որդիք» բառը ընդհանուր իմաստով է գործածուած: Հէնց Պռոշեան տոհմի հետագայ սերնդի համար յիշատակարանների մէջ յաճախ գործածուած է «թոռն» կամ «թոռունք» խօսքը, թէեւ նոքա Պռոշի բուն թոռները չեն: Բառի այդպիսի ընդհանուր գործածութիւն պատահում է Օրբէլեանի մէջ նաեւ ուրիշ դէպքերում:

Ե՞րբ է ծնուել Խաչին, կարող ենք մօտաւոր ճշգրութեամբ որոշել· 1268 թ· Գեղարդի պահարանի արձանագրութեան մէջ դեռեւս յիշատակութիւն չկայ նորա մասին: Հնագոյն յիշատակութիւնը գտնւում է Թանատի վանքի շինութեան արձանագրութեան մէջ, որ թէեւ թուական չունի, բայց գիտենք, որ 1273 թ· պէտք է գրուած լինի, այսինքն վանքի շինութեան ժամանակ: Այսպիսով, Խաչիի ծնունդը կարող ենք նշանակել 1268–1273 թ· թ· մէջ· այստեղ նա յիշուած է «մանուկ» մականուամբ, ինչպէս եւ Ջալալեանի մէջբերած Արկազու Ս· Խաչի թերի արձանագրութեան մէջ, որովհետեւ իրօք փոքրահասակ կամ նորածին մանուկ էր նա դեռեւս· բայց այդպէս վաղ յիշատակուել է սկսում այն պատճառով, որ իշխող տան միակ ժառանգն էր: Ջալալեանի յիշած (Բ· 134) Արկազու Ս· Խաչի արձանա-

---

[1] Բ· 134:

[2] Տես եւ Գեղարուեստ №· 4· Գրչութեան Արուեստը Գ· § 24, Տախտ· ԺՁ:

[3] Օրբ· 432, 475, 473, 485, 488:

գրութիւնը՝ «եւ ամենավեհ իշխանի Պռոշոյ եկեղեցիս եւ մանկան Խաչոյ եւ մեծահաւատ տիկնոջ Խոտանայ, յորժամ տէր էր տեղւոյս»՝ *տարաբաղդաբար գտնել եւ ստուգել չկարողացանք· բայց ինչպէս էլ լինի, սխալ է նորա եզրակացութիւնը, որպէս թէ Պռոշի կինն է տիկին Խոտանը։ Մեզ յայտնի է Գեղարդի պահարանի արձանագրութիւնից, որ Պռոշի կնոջ անունը Խութլու Խաթուն էր եւ վախճանուած արդէն 1268 թուից առաջ (էջ 54–55)։ Ոչ մի հիմք չունինք ենթադրելու, որ նա ամուսնացած էր երկրորդ անգամ ծերութեան հասակում եւ կամ այս երկրորդ ամուսնութիւնից էր յիշուած մանուկ Խաչին, ապա թէ ոչ որդու հետ յիշատակուած կը լինէր եւ մայրը արձանագրութիւնների մէջ։ Այլ հաւանականն այն է, որ Արկազու Ս· Խաչն էլ Պռոշի տիրապետութեան տակ էր, իսկ Խոտանայ կամ Խոտան տիկինը նորա ստորադրեալ ազատների մէկի կինը, որ իւր շինութեան արձանագրութեան մէջ պարտք է համարել յիշել իւր պատրոնի ու նորա ժառանգի անունը (էջ 22)։ Ալիշան եւս իրաւամբ մերժում է Պռոշի այդպիսի կին ունենալու իրողութիւնը*[1]։

Խաչի անուան լոկ յիշատակութիւններ տեսանք 1286 թ· Մարտիրոս գիւղի վիմափոր եկեղեցու արձանագրութեան մէջ, Թաձերի Նարեկի յիշատակարանների մէջ եւ ապա Թանահատի վանքի Խութլու բէկի արձանագրութեան մէջ, գրուած Պռոշ իշխանի մահից՝ 1284 թուից յետոյ (էջ 74)։ Փոքր ինչ աւելի մանրամասնութիւններ ենք իմանում Շմաւոն գրչի Ոծոպում գրած յիշատակարանից։ Այստեղ Խաչին (տպուածի մէջ Խաչոյ) կոչուած է սպարապետ իւր հօրեղբօր Պապաքի հետ (էջ 74) եւ «ժառանգք իշխանութեան ամենօրհնեալ ցեղին խաղբականց»։ *Ամիր Հասանի կեանքը գրուատելուց եւ մահը յիշելուց յետոյ՝ գրիչն աւելացնում է* «Եւ զպակասութիւն ժամանակի նորա (*Հասանայ*) տացէ որդւոյ նորին Խաչոյ եւ եղբօր նորա Պապաքին, եւ պահեսցէ յամերամ ժամանակս մինչեւ ի խորին ծերութիւն»։

Խաչի գործունէութեան մասին համեմատաբար աւելի տեղեկութիւններ ստանում ենք Օրբէլեանից· նա պատմելով Ղազան Խանի (1295—1304) զօրապետ Խութլու շահի արշաւանքը դէպի Խորասան, աւելացնում է, թէ նորա հետ էին եւ «իշխանք մեր Լիպարիտ (*Օրբէլեան*) եւ Խաչի, որք թուք արձակեալ յերես Նաւռուզին, մեծ անարգանօք ձաղէին»[2]։ *Խութլու շահի արշաւանքը դէպի Խորասան պէտք է կատարուած լինի Ղազանի գահակալութեան առաջին կամ երկրորդ տարին, այսինքն 1295/6 թուականներին։ Նոյն թուին նա իւր հօրեղբօր Պապաքի հետ ստորագրել է Գրիգոր Անաւարզեցու դէմ գումարած ժողովի ձեռնարկը։ Միանգամ էլ Օրբէլեան Խաչին յիշում է ազգաբանական մանրամասնութիւններով· թուելով իւր եղբօր Ելիկումի որդիների անունները՝ Բուրթելին եւ Բուղտային, աւելացնում է, թէ*



Խաչի արձ· Սպիտակաւոր Աստուածածնում· ՊԱՏԿԵՐ 80·

---

[1] Սիսական· 119։

[2] Օրբ· 475։

ունէր «եւ դուստր մի, զոր ետ ի կնութիւն գեղեցկածաղիկ իշխանին եւ մեծ կողմնակալին Խաչոյ որդւոյ Հասանայ, որդւոյն Պռոշայ՝ մեծ իշխանին, որ էր որդի վասակայ քաջի»[1]) :

Արդ, ե՞րբ անցաւ Խաչէն իշխանութեան գլուխը. 1292 թուին, հօր մահուանից յետոյ, նա յիշւում է «սպարապետ» կոչումով Ծմաւոն գրչի յիշատակարանի համեմատ: Հօրից ժառանգած անմիջական իրաւունքն էր այդ չափահասութեան շրջանը թեւակոխած իշխանի համար: Բայց Օրբէլեանը վերոյիշեալ վկայութեան մէջ նորան անուանում է «մեծ կողմնակալ», որ միայն Պապաքի մահուանից յետոյ կարող էր կոչուել: 1298 թուին դեռեւս կենդանի էր Պապաք (էջ 76), իսկ Օրբէլեանը իր պատմութիւնը փակում է 1299 թուին, ասել է, թէ 1299 թուին արդէն մեռած էր Պապաք եւ իշխանապետութեան կամ կողմնակալութեան իրաւունքն անցել էր Խաչէին: Խոտակերաց Ս. Նշանի համար շինել տուած պահարանի արձանագրութեան մէջ Խաչէն յայտնում է, թէ «տիրեցի հայրենի երկրիս իմո Շապունեաց եւ այլ յոլով գաւառաց» *եւ խնդրում է յիշել իր ծնողների, Ամիր—Հասանի եւ Թաճերի հետ,* «եւ զհաւրեղբայրն իմ Պապաք»: *Պահարանի շինութիւնը երախտագիտական զգացման մի արտայայտութիւն էր երիտասարդ եւ բախտաւոր իշխանի կողմից, որ իբրեւ միակ ժառանգ անուանի տոհմի իշխանապետութեան, հօրեղբօր Պապաքի մահուամբ տէր դարձաւ Պռոշեանց բոլոր գաւառներին, երկրի կատարեալ խաղաղութեան ժամանակ, վայելելով նաեւ իշխանի եւ Թաթար զօրապետների հովանաւորութիւնը իբրեւ մասնակից Ղազան խանի տիրապետութեան յաջողութեան: Ի նշան այս բարեբաղդ սկզբնաւորութեան նա կերտել է տուել մեր մանր արուեստի համար առաջնակարգ նշանակութիւն ունեցող այս պահարանը 1300 թուին: Այսպէս պէտք է հասկանալ* «տիրեցի հայրենի երկրիս իմո» *խօսքերը: Վերստին նուաճման կամ այլազգիների ձեռքից ետ խլելու մասին խօսք լինել կարող չէ այստեղ: Ճշմարիտ է, 1295 թուին փոքր ինչ աղմկուեցաւ երկիրը Բէյդաթուի, Բատուի եւ Ղազան խանի կողմնակիցների մէջ, բայց հրդեհը շուտ նստեց եւ չնչին բացառութեամբ Նախիջեւանի եւ Սիւնեաց որոշ մասերի, երկիրն անվնաս մնաց այս երկպառակութիւնների ժամանակ*[2]) : *Ղազան խանի գահակալութեամբ երկիրը խաղաղեց: Այդ մասին միջնորդեց ոչ միայն Հեթում Բ., այլ եւ Ղազան խանի մեծ զօրապետ եւ քեռայր Խութլու շահը, որի բանակի մէջ էին նաեւ Լիպարիտ Օրբէլեան եւ մեր Խաչի իշխանները: Ղազան խանի առաջին չորս տարին, որով վերջանում է Օրբէլեանի պատմութիւնը, Հայոց երկրում խաղաղութիւն էր, որ եւ շարունակուեց մինչեւ Ղազանի մահը: Ժամանակակից մի յիշատակարան, գրուած Նախիջեւանում* 1304 *թուին, հետեւեալ տողերով է բնորոշում նրա թագաւորութիւնը.* «ի սոյն ամի ինքնակալն խազանն վնարեցաւ ի կենացս եւ սուգ մեծ էհաս ամենայն տանս արեւելից, մանաւանդ նեղել (s!) ազգացս քրիստոնէից, որոյ յիշատակ նորա աւրհնութբ եղիցի եւ ընդ սրբոց թագաւորացն գահակալեսցի. վս զի ի սորա ժամանակս խաղաղացաւ երկիր իբրեւ զդրախտ Այ»[3]) :

Օրբէլեանից տեսանք, որ Խաչէն ամուսնացած էր Ելիկում Օրբէլեանի դստեր հետ: Արձանագրութիւնները հաւաստիացնում են, որ նորա անունը Մամախաթուն էր: Այդպիսի երկու արձանագրութիւն ունինք Թանատի վանքում, մէկը 1304 *թուից, միւսն անյայտ թուականով: Առաջին արձանագրութիւնը Ջալալեան տալիս է սխալաշատ ընթերցուածներով. Նուիրատուի անուան հետ եղծուած է յատկապէս եւ թուականը: Չնչին սրբագրութեամբ նոյնը տալիս է եւ Ալիշան: Ջալալեան արձանագրութեան թուականը նշանակում է ՉԺԸ* (=1269), *իսկ Ալիշան ՉՁԸ* (=1339): *Սխալ է թէ մէկը եւ թէ միւսը: Ջալալեանի թուականը սխալ է, ո-*



Խոտակերաց Ս. Նշանի պահարանի արձանագր. ՊԱՏԿԵՐ 79.

---

[1]) Օրբ. 432:

[2]) Օրբ. Գլ. Հ.:

[3]) Մատ. էջմ. Ձեռ. № 3722, 353բ:

րովհետեւ 1269 թուին Էաչին դեռեւս, գուցէ, ծնուած չէր, իսկ Ալիշանի նշանակած 1339 թուին, ինչպէս կը տեսնենք, Էաչին շատ վաղուց վախճանուած էր: Արձանագրութիւնը գրուած է ՉԾԸ=1309 թուին (Յաւել. Ա. 18 գ.), որից երեւում է, թէ Սիմէոն անունով մէկը «պարոնացն ողորմութք էաչո, Մամախաթունին» իւր հայրենի այգին տալիս է Ս. Ստեփանոսին եւ սուրբ Նշանին Մխիթարայ հողուն, փոխարէնը միաբաններից ստանալով երեք ժամ Տեառնընդառաջին, երկուսը Մխիթարի եւ մէկը իւր անունով:

Երկրորդ արձանագրութիւնը նոյն վանքում Խութլու բէկինն է, Պռոշեանց ազատներից մէկը, հաւանօրէն, որ դարձեալ նոյն «պարոնացն ողորմութքն էաչո Մամախաթունին զԱղալտեղին հողն» տալիս է սուրբ Ստեփանոսին, իսկ միաբանները սահմանում են երկու ժամ Ս. Ստեփանոսի տօնին, մէկը Նաբընջին, միւսն իրեն (Յաւել. Ա. 18ե.): Խութլուբէկի մի ուրիշ արձանագրութիւնը տեսանք վերեւ (էջ 74):

Էաչի իշխանի կեանքի վերջին տարիներից՝ 1317 թուից՝ ունինք մի արձանագրութիւն Ցախաց քարում: Բուն վանքից դէպի արեւմուտք կայ աւերակների մի ուրիշ խումբ. կամարակապ մի անցք տանում է դէպի այդ աւերակները, այդ կամարակապ անցքի հիւսիսային պատի վերայ գտնւում է Էաչի իշխանի արձանագրութիւնը, որի լուսանկարը տարաբաղդաբար տալ չենք կարող՝ ճանապարհին փչացած լինելուն պատճառով. բայց ուղղել ենք լուսանկարչական մնացորդի վերայ, բացառութեամբ մի քանի խօսքերի (Յաւել. Ա. 26): Արձանագրութիւնից երեւում է, որ «Էաչի որդի Հասանս» ՉԿԶ=1317 թուին միաբանել է «Ցախաքարո» սուրբ ուխտին, տալով «յիմ հայրենեաց ի Սրկղունիս զմեր ձեռատունկ այգին» իւր ջրով, ստանալով Յովհան Օրբէլ եպիսկոպոսից եւ նորա միաբաններից չորս պատարագ իւր, ծնողների եւ իւր ամուսին Մամախաթունի անունով: Սրկղունիք աւանի մասին խօսել ենք ընդարձակ Գ. գլխի մէջ (էջ 19) եւ առիթ կ'ունենանք դարձեալ խօսելու: Էաչին Յոհան Աւրպելուն անուանել է «մեր եղբայր», իւր կնոջ կողմից, որովհետեւ Մամախաթունը նորա հետ մի մի եղբօր թոռներ էին. Յոհան Աւրպելը Իւանէի թոռը՝ Լիպարտի որդի, իսկ Մամախաթունը Տարսայիճի թոռը եւ Ելիկումի դուստրը. Յոհան Աւրպելը Ստեփանոս Օրբէլեանի յաջորդն էր (1303—1324) եւ մէկը Սիւնեաց նշանաւոր եպիսկոպոսներից:

Էաչին վախճանուել է 1317 թուին: Գլաձորի դպրոցի գրիչ՝ Յակոբ Թագորցին իւր մի յիշատակարանի մէջ տալիս է մեզ հաստատուն տեղեկութիւն այդ մասին. «ի թիւն Հայոց տումարի ՉԿԷ եւ նախ քան զմըտանել ամիս, փոխեցաւ առ Քրիստոս մեծ եւ փառաւոր սկայազուն իշխանն էաչի, թոռն հռչակաւոր իշխանին Պռոշայ եւ որդի մեծին Ամիր–Հասանայ» (Յաւել. Բ. 22):

Այս պարզ եւ հաստատ տեղեկութիւնից յետոյ ունինք, սակայն, մի արձանագրութիւն Սպիտակաւոր Աստուածածնում այս իշխանի անունով ՉՀԱ=1322 թուից (Յաւելուած Ա. 25ա. պատկ. 80). «Էաչի որդի պարոն Ամիր Հասանս» տալիս է Նորակնունք սուրբ Աստուածածնին եւ սուրբ Կարապետին Գրիգոր ճգնաւորի հայրութեան ժամանակ Տանձի հողը իւր չորս սահմաններով եւ ստանում է ամէն տարի երեք պատարագ: Այս հակասութիւնը միայն նրանով կարելի է բացատրել, որ Սպիտակաւոր Աստուածածինն սկսել է շինել Էաչին, բայց վերջացրել է նորա որդին Ամիր–Հասան Բ., որոնց պատկերներն էլ քանդակուած են վանքի հիւսիսային պատին. իսկ հարաւային ճակատին ունինք շինութեան վերջաւորութեան թուականը «Թվ. ՉՀ.» (=1321): Ահա մեր ունեցած տեղեկութիւնները Էաչիի գործունէութեան մասին:



Խոտակերաց Ս. Նշանի պահարանը. ՊԱՏԿԵՐ 81.

Ինչպէս տեսանք, մեր ծանօթութիւնը մեծ չէ Էաչիի կեանքի եւ գործունէութեան մասին. բայց նորա անունը անմահացած պէտք է համարել Խոտակերաց Ս. Նշանի պահարանով, որ իւր հնութեամբ միակն է արեւելեան Հայաստանի ոսկերչական նման գործերից, չհաշուելով Կիլիկեան շրջանի մի քանի ուրիշ մնացորդ–

ները, ուստի եւ շատ արժէքաւոր հայ մանր արուեստի (Klein kunst, Прикладное Искусство) պատմութեան համար:

Արեւելեան ուրիշ ազգերի հետ նախնի Հայերի մէջ եւս ոսկերչական արուեստը մէկն է եղել մանր ճիւղերից, որ բաւարարութիւն է տուել թէ իշխանական տների եւ թէ եկեղեցական պաշտաման գեղարուեստական եւ շքեղութեան պահանջներին: Սմիրնովի հրատարակած Արեւելեան արծաթեղէնների քարտէզը մի գեղեցիկ ապացոյց է՝ թէ որքան մեծ նշանակութիւն կ'ունենար հայ արուեստի պատմութեան համար, եթէ մեր ձեռքը հասած լինէին ոսկերչական գործի հնագոյն մնացորդներ: Նա ամենասերտ կերպով կապուած լինելով պատկերագրութեան, քանդակագործութեան եւ մանրանկարչութեան հետ, լուսաբանող կարեւոր նշանակութիւն կ'ունենար այդ ճիւղերի փոխադարձ յարաբերութեան եւ նրանց զարգացման պատմութեան համար: Քիչ չեն մեր մատենագրութեան, յիշատակարանների եւ արձանագրութիւնների մէջ ոսկի եւ արծաթի անօթների, կազմերի, խաչերի եւ պահարանների մասին տեղեկութիւնները, որոնք ապացոյց են, թէ շատ տարածուած էին եւ սիրուած նըման գործերը, եւ մնացորդներից դատելով, նաեւ բարձր զարգացման հասած: Եթէ մեր ձեռքը չեն հասել ԺԳ. դարուց աւելի հին մնացորդներ, կարելի էր մեծ նիւթ հաւաքել այդ դարից մինչեւ մեր օրերը, որոնց մէջ մասամբ պահուած են հնագոյն աւանդներ, բայց առաւել եւս արտացոլած իրենց ժամանակի գեղարուեստական հոսանքն ու փոխազդեցութիւնները[1]:



Խոտակերաց Ս. Նշանի ճակատը.
ՊԱՏԿԵՐ 82.

Խոտակերաց Ս. Նշանի պահարանը մէկն է ԺԳ. դարում տարածուած մասանց աղիւսաձեւ պահարաններից: Տաթեւի Յովհաննէս եպիսկոպոսի Աւագ Նշանի համար Սմբատ Օրբէլեանը ոսկի պահարան է շինել տալիս «ի կերպ աղիւսակի, ունելով դրունս երկբացիկս», ինչպէս մեր պահարանն է: Ստեփանոս Օրբէլեանը Դլենեանց իշխաններից, որ ինչպէս տեսանք, պատկանում էին Խաղբակեանների Արցախում մնացած ճիւղին, 5000 դրամով գնում է նրանց հայրենական խաչը, ոսկով եւ թանկագին քարերով պատում եւ ապա «յոսկւոյ եւ արծաթոյ ի ձեւ աղիւսակի գեղեցիկ յօրինուածովք եւ երկբացիկ դրամբք» պահարան կազմում[2]:

Խոտակերաց Ս. Նշանը, որ այժմ պահւում է Էջմիածնում, պէտք է իր ծագմամբ կապուած լինէր Խոտակերաց կամ Քարկոփի վանքի հետ, որ գտնւում է Վայոց ձորում, ոչ հեռու ներկայ Խաչիկ, եւ հին Արաստամուխ գիւղից, սկզբում Սիւնեաց իշխանների, իսկ ԺԳ. դարում Օրբէլեանների սեպհականութիւն: Ըստ պատմիչ Օրբէլեանի այդտեղ էր դրուած «ահարկու եւ աստուածահրաշ ս. Նշանն, որ խոտակերաց կոչի»: Բայց ի՞նչպէս եւ ե՞րբ էր անցել սրբութիւնը Պռոշեանների ձեռքը, չգիտենք: Պահարանի ետեւում, խաչի արձանագրութեան համեմատ, նա Պռոշեանների հայրենական ժառանգութիւն էր, «որով եւ նախնիքն իմ զօրացան», հաւանօրէն Վասակ Խաղբակեանի ժամանակ ձեռք բերած: Արդեօ՞ք Օրբէլեաններից խլած խաչերից մէկը (էջ 40), ասել չենք կարող: Այդ խաչը պահւում էր, հաւանօրէն, Ոծոպի վանքում: Վարդանի Աշխարհացոյցի մէջ Այրից վանքի կամ Պռոշեանների միւս սրբութիւնների հետ՝ «ս. գե-

---

[1] Առանձին ուշադրութեան արժանի են ժողովրդական տարազի, զարդ ու զարդարանքի հետ կապուած ոսկերչական գործերը, որոնցից միայն չնչին փշրանքներ կարելի եղաւ փրկել գիտութեան համար վերջին պատերազմի ժամանակ: Այդպիսի փոքրիկ ժողովածուներ կան այժմ Էջմիածնի եւ Երեւանի թանգարաններում, ինչպէս եւ Լենինգրադի նախկին Ալեքսանդր Գ.ի անուան թանգարանում:

[2] Օրբ. 415, 488:



Էաչի Պռոշեանի անդրին·

ՊԱՏԿԵՐ 83·

գարթն աստուածամուխ, ներկեալ արհամբ կենարարին եւ տախտակն ս· տապանին», չէ յիշուած Խոտակերաց Ս· Նշանը[1])։ Բայց նոյնանուն մի խաչ գտնւում էր Ոծոպի վանքում, որի մասին յիշատակութիւն ունինք արդէն քանիցս յիշուած նոյն վանքի Շմաւոն գրչի 1292 թուին գրած յիշատակարանի մէջ· «գրեցաւ տառս աստուածային ի գաւառիս Շահապունեաց, ի միաստանիս որ է մերձ յամենաւրհնեալ եւ յաստուածապահ գեաւղս Ոծոպի կոչեցեալ, ընդ հովանեաւ սոսկալի եւ սխրագործ նշանացս, Խոտակերաց եւ Խիկարաց[2])։ Այս խաչը պիտի լինի Էաչիի ձեռքով նորոգուած եւ գեղարուեստական պահարանի մէջ դրուած։ Խոտակերաց Ս· Նշանի մասին ապա յիշատակութիւն ունինք նոյն վանքում ԺԷ· դարու առաջին քառորդին, միայն այդ խաչը տարբեր է մեր պահարանի խաչից· բայց այդ մասին յետոյ, պատմութեան մէջ։

Պահարանը քառանկիւնի է կամ «աղխամաճեւ», ինչպէս անուանում է Օրբէլեանը նման պահարանները, արծաթից եւ ոսկեջրած, 42×26 սմ· մեծութեամբ։ Ետեւի երեսում արձանագրութիւնն է, գեղեցիկ, ելընդաւոր գրերով (պատկ· 79), որից տեղեկանում ենք, թէ «Էաչի որդի Հասանա որդո Պռոշա որդո մեծին վասակա յազգէ Հաղբականց» կազմել է տուել այս պահարանը որպէս անջինջ յիշատակ եւ խնդրում է յիշել իւր ծնողներին՝ Ամիր–Հասանին եւ Թաճերին եւ իւր հօրեղբորը Պապաքին իւր նախնեաց եւ ազգատոհմի հետ։ Իսկ առաջին երեսի երկտող արձանագրութիւնից իմանում ենք, որ պահարանը շինուած է ՉԽԹ=1300 թուին, որի առիթն էլ բացատրեցինք վերեւ։

Առաջին երեսին (պատկ· 81), ճակատի կեդրոնում, չորեքկերպեան աթոռի վերայ բազմած է Յիսուս, աջից մարդ եւ արծիւ, իսկ ձախից առիւծ եւ եզ· երեւում են միայն չորեքկերպեանների այն դասաւորութիւնը, որ ունինք այստեղ, համապատասխան է Յովհաննու Յայտնութեան Դ· գլ· տեսլեան։ Բայց հայ արհեստի մէջ աւելի ընդհանրացած էր մի ուրիշ դասաւորութիւն, համապատասխան Եզեկիէլի Ա· գլխի տեսլեան։ Յիշենք Նորավանքի (Ամաղու) Բուրթելաշէն Աստուածածնի ափսիդի նոյն մոտիվը, որ ժամանակակից է մեր պահարանին, դասաւորուած է Եզեկիէլի համեմատ, երկու կողմից կանգնած հրեշտակներով, ձեռքերը մեկնած դէպի Ամենակալը։ Մեր քանդակի մէջ մի տարբերութիւն եւս կայ, որ չորեքկերպեաններից էլ հրեշտակը իսկական մարդ է, մօրուքով եւ ոչ կուսական կերպարանքով, այսինքն բառացի հետեւողութիւն է բնագրին։ Յիսուսի նիմբուսը բոլորակ է, զուգաւոր եւ խաչազարդ· նա նայում է դիտողին en face, ունի բոլորակ եւ թաւ մօրուք, դէմքի արեւելեան արտայայտութեամբ, աջով խաչակնքում է Յունա–Հայկական ձեւով, իսկ ձախով բռնել է ծնկան վերայ յենած աւետարան, «ես եմ լոյս աշխարհի» բառերի խորաքանդակով։ Յիսուսի գլխի երկու կողմից ելնդաւոր գրերով գրուած է «Յս Քս»։ Հագել է մինչեւ ոտները հասնող երկար պարեգօտ, բազուկների մօտ սեղմուած թեւերով, որ արեւելեան է, եւ վերայից ձգել սիրուն ծալքերով վերնազգեստ։ Այս ամբողջն առնուած է զարնեզաւոր, կրկնաչերտ եւ անկիւններում սրածայր՝ շրջանակի մէջ։ Երկու կողմից, պահարանների վերին անկիւններում, թեւաւոր եւ ամբողջ հասակով մի մի հրեշտակ թեքուած են դէպի Ամենակալը (παντοκράτορ). երկու ձեռքով խաչազլուխ երկար գաւազան բռնած։ Հրեշտակների ֆիգուրները քիչ երկար են, անհամաչափ ամբողջութեան, մի երեւոյթ, որ ետին բիւզանդականութեան ազդեցութիւն է ցոյց տալիս, բայց ոչ չափազանցութեամբ։ Հրեշտակների լուսոյ պսակը եզերուած է պարանահիւս զարդով։ Երկար եւ ոլորուն խոպոպիքները իջնում են ուսերի վրայ, իսկ ականջների մօտ ծածանւում են լողութեան զոյգ ժապաւէնները։ Նրանց լուսոյ պսակի մակերեւոյթը ծածկուած է արմաւենիկի զարդով։ Երեք քառորդական երեսով դարձած են դէպի դիտողը։ Նրանք հագել են մինչեւ ոտները հասնող ներքնազգեստ, քղանցքները, բազպանները եւ փողկապը զարդարուն։ Ներքնազգեստի վերայից ունին աւելի կարճ, կողքերից աստիճանաբար իջնող կտրուածքներով եւ ծալքերով վերնազգեստ· ոտքերին նուրբ կօշիկներ, առանց կրունկների։ Ամբողջ խմբանկարը թողնում է գեղարուեստական, հաճելի տպաւորութիւն։

Առաջին երեսի միջին տեսարանը արտաքուստ, դռների եւ նրանց կողքերին եղած պատկերներն են, խնդրուածքի կամ բարեխօսի խմբանկարը՝ հայ արուեստի մի առանձնայատուկ ձեւակերպութեամբ· Հայաստանի լուսաւորիչն էլ բարեխօսների խմբի մէջն է մտած։ Սովորական խմբանկարն է քրիստոնէական ընդհանուր արուեստի մէջ, կեդրոնում Ամենակալը, աջից Մարիամ եւ ձախից Յովհաննէս Մկրտիչ· բայց այստեղ մենք տեսնում ենք այլ կերպ, դռնակների վերայ աջից Լուսաւորիչ եւ ձախից Յովհաննէս Մկրտիչ, իսկ կողքերից աջ կողմը Մարիամ եւ ձախ՝ Յովհաննէս աւետարանիչ։ Վերջին պատկերներն առնուած են խաչելութեան խմբանկարներից։

Լուսաւորիչ կանգնած է ամբողջ հասակով, դէմքը քիչ դէպի ձախ թեքած, Յունական զգեստաւորութեամբ, գլխաբաց, գագաթին տոնզուրայով, աջով լատինական օրհնութիւն է տալիս, իսկ ձախով խաչազարդ աւետարան բռնել, աւետարանի խաչը ԺԲ—ԺԳ· դարերի մանրանկարչական խաչերի նման: Գլխի լուսոյ պսակի բոլորակ շրջանակը կազմուած է մէանդրի նման զարդով, բոլորակի մակերեւոյթը նուրբ զարդարանքով ծածկուած: Գլխից վերեւ՝ կլոր եւ ուռուցիկ բոլորակի մէջ ելնդաւոր տառերով գրուած է· «Ս· Գրի գորր»: Զգեստաւորութիւնը պարզ է, առանց զարդարանքների շուրջառը, շապիկը, եմիփորոնը, բայց ազնիւ ծալքերով: Զարդարուած են միայն շապկի ներքեւի եզրները: Դէմքն անզարդ է ընդհանրապէս, միայն քիթը քիչ ճզմուած, աջ աչքն էլ լռուած: Ոտքերի հողաթափները սրածայր են:

---

[1]) Յ· Թոփճեան· Ցուց· Ձեռ· Խաչիկ վ–ի, Ա· 77։

[2]) Արարատ 1876· 413·

Միւս դռնակի ելնդաւոր պատկերը, ինչպէս ասացինք, Յովհաննէս Մկրտիչն է· այս հաստատւում է ոչ միայն գլխից վերեւ ուռուցիկ մանեակի մէջ «սբ Յվնէս» վերտառութեամբ, այլ եւ դէմքի արտայայտութիւնով, մազերով եւ հագուստով: ԺԳ· դարում եւ աւելի վաղ, Յովհաննէս Մկրտչի համար հայ եւ բիւզանդական արուեստների մէջ մշակուած էր որոշ տիպ, որ կրկնուած ենք տեսնում արեւելեան Հայաստանի եւ Կիլիկիայի մանրանկարչական եւ քանդակագործական արուեստների մէջ փոքրիկ տարբերութիւններով: Հետեւեալ գլխի մէջ էլ առիթ կ'ունենանք խօսելու հէնց այս Վաչէի որդի Ամիր–Հասան Բ·ի շինած Սպիտակաւոր Աստուածածնի խնդրուածքի մի այլ խմբանկար քանդակի մասին, ուր աւելի պարզ են առանձնայատուկ նշանները: Յովհաննէս Մկրտիչ հագել է մինչեւ ծնկները հասնող պարեգօտ, կուրծքի մասերն իրար վերայ բերած, թեւերը կարճ եւ մերկ մինչեւ արմունկները, ձախ ձեռքը ազդրի վրայ, աջով օրհնութիւն է տալիս· մէջքին կապել է չորից գօտի, սրունքները եւ ոտները մերկ են: Աչքերը լռուած են· լուսոյ պսակը նման Լուսաւորչի պսակին:

Դռնակների եզերազարդերը արմաւենիկներ են ոլորապտոյտ ցօղուններով, իսկ միջին եզրները զիկզակներով արմաւենիկի մի այլ եղանակի զարդ· դռնակների վերեւի կամարազարդը եռատերեւների եւ եռամասնեայ արմաւենիկների փոխեփոխ մի շարք է ոճաւորած եւ գեղեցիկ: Բոլորն էլ յատուկ եւ տարածուած ժամանակակից հայ եւ բիւզանդական, յատկապէս, մանրանկարչական արուեստների մէջ:

Դռնակների կողքերից աւելի փոքր դիրքով, աջից Մարիամն է, ձախից Յովհաննէս Մկրտիչ: Առաջինը, en face, ձեռքերը աղօթողի դիրքով, ափերը դէպի դիտողը եւ վեր բարձրացրած, իսկ երկրորդը նոյնպէս en face ձախով աւետարան է բռնել, կրծքին դէմ արած, եւ աջով խաչակնքում է: Պատկերների գլխից վերեւ գրուած է ելնդաւոր տառերով՝ «ածածին», եւ «Յհէս»:

Ներքեւի խմբանկարը բաղկացած է երեք անդրիներից, երկուսը անկիւններում՝ «Պետրոս» եւ «Պաւղոս» առաքեալները, գլուխներից բարձր ելնդաւոր գրութիւնների համաձայն, իսկ մէջտեղում աղօթողի դիրքով Վաչէ Պռոշեանն է, պահարանի շինել տուողը կողքերից երկտող արձանագրութեան համեմատ·

«սբ Նշան տրունական դու Վաչո
լեր օգնական Թվ: ՊԽԹ·

Առաքեալների անդրիները ձեւակերպուած են ժամանակակից մանրանկարչութեան, որմանկարչութեան եւ քանդակագործութեան աւանդութեան համաձայն, Պետրոսը կարճ եւ կլոր միրուքով, Պօղոսը ճաղատ եւ երկար միրուքով, ԺԳ· դարու հայ արուեստի մէջ աւելի յաճախ երեւոյթ, քան առաջ: Նրանց ամբողջ հասակով քանդակները տեսանք Աղջոց Ս· Ստեփանոսում (էջ 42, պատկ· 25): Երկու առաքեալներն էլ ձախ ձեռքում աւետարան են բռնել, Պօղոսը կրծքին սեղմած, Պետրոսը ուսից բարձր բռնած, իսկ աջով խաչակնքում են: Զգեստները սովորական են, տունիկայի վերայից, ուսերին տոգա ձգած եւ աջ կողմից կոճկած: Երկուսն էլ բոլորակ լուսոյ պսակով, Պետրոսն ամբողջ երեսով դէպի նայողն է դարձած, իսկ Պօղոսը երեք քառորդականով դէպի աջ: Պաշտական–ազգագրական տեսակէտով աւելի հետաքրքրական է Վաչոյի անդրին (պատկ· 83), շրջանակուած ճիշդ այն ձեւով, ինչպէս Ամենակալն էր պահարանի ճակատին (պատկ· 82): Այս շրջանակներն արժանի են յատուկ ուշադրութեան, որովհետեւ փոքրիկ տարբերութեամբ իրենց ձեւով շատ նման են Անդրէա Պիզանոյի շինած Ֆլորենցիայի մկրտարանի հարաւային բրոնզէ դրան պատկերագրութեան շրջանակներին, վերջինս պատրաստուած 1330—1336 թուերին, ասել է, աւելի քան 30 տարի յետոյ մեր պահարանի շինութեան ժամանակից: Այս եւ մեր այս շրջանի Աստուածածնի պատկերագրութեան որոշ նմանութիւններ իտալական սկզբնական վերածնութեան երեւոյթների հետ մի կապ են ենթադրել տալիս երկու արուեստների մէջ, որ առիթ կ'ունենանք մատնանշելու հետեւեալ գլխի մէջ: Այնտեղ կը խօսենք նաեւ Վաչոյի անդրիի ազգագրական արժէքի մասին, որ կըրկնուած է իւր Ամիր–Հասան որդու հետ Սպիտակաւոր Ս· Աստուածածնի հիւսիսային պատին:

Բանալով դռնակները մեր առաջ ուրիշ տեսարան է բացւում (պատկ· 84)· սրաբեկ կամարի տակ, փոքր ինչ խոր ընկած հարթութեան կեդրոնում տեսնում ենք մի խաչ, ուղղահայեաց, թեւերը համեմատաբար աւելի երկար, եւ ծայրերը երկճղի: Թեւերի հանդիպման կեդրոնում եղած քարը, ինչպէս եւ ուղղահայեաց թեւի երկու քարերը շրջանակուած են աւելի մանր մարգարիտներով: Կեդրոնի շուրջը՝ թեւերի հանդիպման տեղում՝ նկատւում է նուրբ, բոլորակ լուսոյ պսակ:

Խաչի ոսկեզօծ դաշտը ծածկուած է արմաւենիկի եւ հնգատերեւի գեղեցիկ զարդերով, ցօղունների վրայ կանթեր եւ օղակներ կազմած, մի երեւոյթ, որ յատուկ է եւ մանրանկարչական զարդարանքներին, քանդակագործութեան եւ ընդհանրացած է մեր եւ հարեւան ազգերի արուեստների մէջ: Վրաց Տբետի աւետարանի կազմը մի քանի մոտիվներով բոլորովին նման է մեր պահարանի զարդերին եւ ԺԲ. դարու գործ է, հրատարակուած Տակայշվիլու ձեռքով1): Նոյն բնոյթն ունին նաեւ մեր պահարանի կողերի զարդերը (պատկ. 85 եւ 86), աջ եւ ձախ կողմից արմաւենիկներ՝ ԺԳ. դարում հայ եւ մուսուլմանական արուեստների մէջ ընդհանրացած ձեւերով, իսկ վերին կողինը հնգատերեւներ, որոնց ցօղուններից բոլորաձեւ շրջանակներ են կազմուած նրանց համար: Այս զարդերը գծական են եւ ոչ բարձրացած մակերեւոյթով, ինչպէս մարդկային պատկերներն են:



Խոտակերաց Ս. Նշանի պահարանը բացուած դռնակներով.

ՊԱՏԿԵՐ 84.

Խաչի տակ, բեկուած կամարներով մի առանձին տեսարան են կազմում իրար հանդէպ զոյգ եղնիկները: Նրանց մէջը մի թուփ, ճիւղերը տարածուած այս եւ այն կողմը. եղնիկները ետ են դարձրել գլուխները եւ տերեւ են ուտում (մանրամասնութիւնը պատկ. 87): Եղնիկն ու եղջերուն քրիստոնէական արուեստի մէջ ընդհանրապէս, ինչպէս եւ հայոց, շատ յաճախ գործածուած են խորհրդաւոր նշանակութեամբ, համեմատ ԽԱ. 1 Սաղմոսի: Բայց կան նրանց պէսպիսութիւններ եւս:

Հայ քանդակագործութեան մէջ ամենահին օրինակն ունինք պատմական Բասաղի (Բաշ-Ապարան) բազիլիկայի արեւմտեան դրան ճակատին երկու եղջերուներ կանգնած եւ խաչի հորիզոնական թեւերի ուղղութեամբ իրար հանդէպ եւ դունչերը մեկնել են դէպի խաղողի որթի տերեւները: Բասաղի բազիլիկան մեր ճարտարապետութեան ամենահին մնացորդներից մէկն է, ոչ ուշ քան Ե—Զ. դարը: Ժ. դարում շինուած Աղթամարի Ս. Խաչի քանդակների շարքում որթերի եւ ողկոյզների մէջ ուրիշ կենդանիների հետ երեւում է նստած եղջերուն իւր ձագի հետ: Բայց այդ մոտիվը յատուկ չէ միայն քրիստոնէական արուեստին, այլ եւ արեւելեան աշխարհիկ արուեստին, որից օրինակներ ունինք ոսկերչական եւ ապիկուած արուեստների մէջ2): Սմիրնովի Արեւելեան արծաթի ժողովածուի անօթներից մէկը բոլորակների մէջ բուսական զարդերի հետ ունի եւ թռչուններ կամ եղնիկներ. վերջինները նստած կամ կանգնած ուտում են թփի տերեւները: Նոյնիսկ քրիստոնէական արուեստի մէջ նրանք աւելի յաճախ դեկորատիւ բնոյթ ունին եւ ոչ խորհր-



Պահարանի կողազարդերը.

ՊԱՏԿԵՐ 85. 86.



Նստած եղնիկներ. ՊԱՏԿԵՐ 87.

---

1) Материалы по археологии Кавказа. выпуск XII. Подъ редакціей Графини Уваровой. Москва, 1909. էր. 151—162:

2) Восточное Серебро. CIV 229.

դուռը, սիմվոլիկ. այսպէս է յատկապէս ԺԳ. եւ հետագայ դարերի մանրանկարչութեան մէջ, որ իւր նըմանութիւններն ունի նաեւ մեր հարեւան ազգերի արուեստի մէջ: Էջմիածնի մասանց խորանում գտնւում է ոսկերչական մի գեղեցիկ գործի մնացորդ, հաւանօրէն մասանց պահարանի մի երես, կեդրոնում մի հարթ խաչ, ծածկուած բուսական զարդարանքով. տախտակի մնացած մակերեւոյթն էլ ամբողջապէս զարդարուած թփերով, նրանց ցօղուններով եւ ծաղիկներով. խաչի անկիւններում փոխեփոխ մի մի վագրի, եղջերուի եւ նրանց ձագերի պատկերներ, պարսկական արուեստին յատուկ բծերով (պատկ. 88): Պէտք է ենթադրել, որ այս ամբողջութիւնը խորհրդաւոր մի իմաստ ունի խաչի հետ զուգորդուած, բայց ոչ համապատասխան Եսայի ԺԱ. 6 բովանդակութեան: Չլինէր պատուանդանով ձեւակերպուած խաչը, նրան քրիստոնէական – հայկական ծագում էլ չէինք վերագրել այնքան մօտ է նա արեւելեան մահմեդական ազգերի արուեստներին: Այդ կողմից մեծ աղերս են ցուցադրում յատկապէս արեւելեան Հայաստանում գրուած ձեռագիրները: Բազմաթիւ օրինակներից յիշենք միայն հէնց Պռոշեանների հոգեւոր կեդրոններից մէկի՝ Աղջոց Ս. Ստեփաննոսի Գալուստ գրչի ճաշոցը 1442 թուից կամ Յովհաննէս Խիզանցու նկարազարդած բազմաթիւ ձեռագիրների լուսանցքի զարդերը ԺԴ. դարի վերջում եւ ԺԵ.ի առաջին քառորդում ծաղկած1): Այսպէս ուրեմն ոսկերչական արուեստի մէջ եւս նոյն աղերսն ենք նկատում կենդանական եւ բուսական զարդարանքների նկատմամբ դէպի արեւելեան ազգերի արուեստը, ինչպէս եւ պատկերագրական արուեստի մէջ դէպի Ասորիքն ու Բիւզանդիան:



Մասանց պահարանի երես. ՊԱՏԿԵՐ 88.



Միքայէլ հրեշտակապետ, դռնակի վրայ ներսից. ՊԱՏԿԵՐ 89.

Շարունակենք մեր պահարանի վերլուծութիւնը:

Շատ գեղեցիկ են բացուած դռնակների հրեշտակապետները՝ աջից Գաբրիէլ եւ ձախից Միքայէլ (պատկ. 89), երկուսն էլ իրար նման հագուստով եւ դիրքով, միայն համեմատ իրենց տեղերի: Իրար նման են նաեւ դռնակների մակերեւոյթի եւ շրջանակների զարդերով: Հրեշտակները կանգնած են խաչի կողքերից, գլուխները դէպի սրբութիւնը խոնարհած, թեւերից մէկը վեր եւ միւսը ներքեւ փռած. երկու ձեռքով բռնել են խաչագլուխ գաւազան, խաչի կոթը եւ գաւազանը ներքեւում խնձորներով: Ներքնազգեստը իջնում է մինչեւ հողաթափներ հագած ոտները, իսկ ուսերի վրայ ձգուած կրկնոցը, կոճկուած ձախ ուսին խաչազարդ ճարմանդով գեղեցիկ ծալքերով իջնում է ծնկներից ցած: Ներքնազգեստի պարանոցը զարդարուն է, ինչպէս եւ սեղմուած բազպանները: Դէմքերը մեծարանքի արտայայտութեամբ. պարանոցների վրայ իջնում են ոլորուն խոպոպիքները: Ականջները ծածկուած են մազերով եւ լսելիքի ժապաւէնները փողփողում են ետեւից, ճակատներին երեւում է եռանկիւնի կապը, գլխի շուրջը լուսոյ պսակով: Գաբրիէլի պատկերը տեղ

---

1) Ձեռ. էջմ № 754. Ն. Յ. 135ա: № 984, 56բ. Ն. Յ.

տեղ ճզմուած է, համեմատաբար աւելի է լաւ պահուած Միքայէլինը (պատկ․ 89)։ Ուսերի մօտ ելնդաւոր փակագրով նշանակուած են հրեշտակապետների անունները, Գաբրիէլ եւ Միքաէլ։

Մակերեւոյթի զարդարանքերը նոյնպէս գծական են, ինչպէս միւս մասերում․ ոլորապտոյտ արմաւենիկներ, իսկ ոտքերի տակ փոխեփոխ տերեւների եւ կոկոնների շարք, ցօղունները իրար հիւսած։ Շրջանակի զարդը երկու գծով եզերուած մի շերտ է զոյգ սլաքների կազմած կիսաշրջաններով, բացուածքը վեր կամ վար, փոխեփոխ, մէջը ծաղկով։ Այդպիսի սլաքաձեւ զարդարանքները ծագումով հին են Հայաստանում է․ եւ աւելի հնագոյն դարերում գործադրուած քանդակագործութեան մէջ, իսկ այս կազմութեամբ յաճախել են սկսում ԺԳ․ դարում, յատկապէս մանրանկարչութեան մէջ։



Թ,

ԱՄԻՐ-ՀԱՍԱՆ Բ. ԵՒ ԵՂԲԱՅՐՆԵՐԸ

Խաչոյի յաջորդն էր նորա որդին Ամիր-Հասան երկրորդ: Գլաձորի դպրոցի մի գրիչ՝ Սարգիս՝ իւր յիշատակարանը թուագրում է արդէն 1318 թուին Ամիր-Հասան Բ.-ի անունով. «Եւ եղեւ կատարումն գրոցս ի թվ. ՉԿէ: Ի գաւառիս Վայոց ձորոյ յանապատս Գլաձոր, ընդ հովանեաւ սրբոյն Ստեփանոսի... եւ յիշխանութեան գաւառիս Ամիրհասանայ որդոյ Խաչէ որդոյ Ամիրհասանայ որդոյ Պռոշայ բարեպաշտի»[1]: *Խաչի Պռոշեանի մահը եւ նորա որդու յաջորդութիւնը եղել է, ուրեմն, 1318 թ. Նաւասարդից առաջ, ինչպէս տեսանք Յակոբ Թագորցու յիշատակարանից (էջ. 99 Յաւել. Բ. 22): Նոյն դպրոցի մի ուրիշ գրիչ՝ Կիւրեղ Սարկաւագ՝ 1321 թուին,* «Ի թուաբերութեան մերոյս հայկազեան տումարի ՉՀ». *իւր գրած մագաղաթեայ աւետարանի յիշատակարանը թուագրում է ի միջի այլոց եւ Ամիր-Հասանի անունով.* «Ի զօրավարութեան եւ իշխանութեան գաւառացս յորում եմք Բուրթելի եւ Ամիր Հասանայ» (*Յաւել. Բ.* 23)[2]: *Այստեղ յիշատակուած Բուրթելը՝ Էլիկում Օրբէլեանի որդին է, Ստեփանոս Օրբէլեանի եղբօր որդին, իսկ Ամիր-Հասանը Խաչոյի որդին: Բայց շատ աւելի ընդարձակ եւ կարեւոր տեղեկութիւններ ենք ստանում Ամիր-Հասանի, իւրայինների, ինչպէս եւ նրանց դէպի Գլաձորի դպրոցն ունեցած յարաբերութեան մասին, Առաքել Հաղբատեցու մի յիշատակարանից, գրուած 1328 թուին,* «ի վանս Գլաձոր, որ կոչի Աղբերց վանք» *Դաւիթ Գետկեցու ձեռքով: Յիշատակարանը Գլաձորի դպրոցի, նորա վարդապետների եւ Օրբէլեան իշխանների մասին տեղեկութիւն տալուց զատ՝ խօսում է նաեւ Խաղբակեան տան իշխանների մասին.*

«Դարձեալ յեռեալ հիւսեսցի ընդ յիշատակ... յիշման արժանաւոր ծնողաց զաւակքն՝ ի քաջ եւ արիական ազգէ սերեալ ծնունդքն՝ Խաղբակեանցն Պռօշայ եւ իւրոցն, որք են ժառանգ հայրենի տանն իւրեանց, զհեզահոգի եւ զողջախողն (s!) Ամիր Հասանն, եւ զքաջն եւ զարին հոլովն Վասակ, եւ զկորովամիտն Ամիր Ասաթն, եւ զտիովք մանուկն՝ զխայտակն եւ զքաջազանգուրն Ջում, որք են տէր եւ իշխեցող սուրբ մենարանիս եւ տանս դպրոցական ժողովելոց, որոց տացէ տէր Աստուած զբաղտ եւ զանուն քաջութեան նախահարցն իւրեանց եւ յիշատակ նոցա օրհնութեամբ եղիցի» (*Յաւել. Բ.* 24):

Էջմիածնի մատենադարանի № 734 *խառն գրչութեամբ ձեռագրի մէջ մի հատակոտոր* (Fragment) *կայ, ամենայն հաւանականութեամբ Գլաձորի դպրոցականներից մէկի աշխատութեան մաս, որի վերջաբանութիւնը բարեմաղթութիւն է Խաղբակեանց կամ Պռոշեանց տոհմի ժամանակակից իշխանների՝ Ամիր-Հասանի եւ նրա եղբայրների հասցէին.* «Արդ ահեսցէ տրն տերանց եւ իշխեցելոցն իշխանն զծիրանայծին եւ զծիրանայծաղիկ զմանկա,գոյն իշխանն մեր որ տա,րին (s!) են տեղոյս եւ փառք ազգին (իւրո?)յ... եւ ի բարձր տոհմիցն Խաղբակեցն Վասակայ եւ Պ(ռոշ)եցն Հասանայ ազնուա,գոյնին եւ հսկայաձեւին Խաչոյ եւ ի յոգնայշաւիղ եւ ի բազմոստեն տնկոցն տատմա... (*երկու կամ երեք տառ պակաս*) բարձրելոյն ի մի իմն եկել համեղութի քաղցրորակ պտղ(ովք?)ի ծայրս երկնահաս տնկոյն ի վերջնում ժամանակիս (մե[ծ]աւ հրաշիւք սերեցան զ/արձական խնդութի եւ փառ(ք) ազգին իւրեանց եւ երկրորդ Աբրահայմու հաւատոցն համաքատակի. եւ չորրորդ եղեն որդիք, չորրորդ հա(ւ)ոյն իւրեանց Վասակայ, իբր եղանակաց չորից առ վերջնովքն առին բոլորել զաւրութե ծնունդ. ընդարձակեսցէ ած ի տան Ասադին եւ Ջումային: եւ եղիցին այլազգիքն ծառայք նոցայ. լվիցէ տր ձայնի նոցայ եւ ի ժողովուրդ(ս) նոցայ բնակեսցէ ած եւ ձեռք նոցայ ընտրեսցեն... այ եւ աւգնական ի թշնամեց եղիցի նոցա. Ահնեսցէ տր զօրութիս նոցայ եւ ընկալցի զգործս նոցայ. խորտակեսցէ զմէջս ի վերայ յարուցելոց թշնամեց նոցա եւ ատելիք նոցայ մի կանգնեսցին. եւ սիրեցել լիցին նոքա ի տէ եւ ած հովանի եղիցի նոցայ զամ օուրս (s!): եւ ի մէջ ուսոց նոցայ հանգիցէ ած. յահութեէն այ երկիր նոցայ լցցի. ի ժամանակաց երկնից եւ ի ցաւղոյ. եւ յանընդոց (s!) աղբիւրասցի նոցայ բարիք ի ներքուստ ի ժմկի արդենցն եւ արեգական փոփոխմանց. ի գումարելոց առ...» (*Յաւել. Բ.* 25)[1]: *Այստեղ ընդ-*

---

[1] Н. Марр. Сборник притч Вардана. I. էր. 459/60.

[2] A Catalogue of the Armenian Manuscripts in the British Museum by Frederick Cornwallis Conybeare. London 1913. 22.

հատւում է հատակոտորը թերթ ընկած լինելու պատճառով:

Մենք դիտմամբ մէջ բերինք այս երկար վկայութիւնները, որպէսզի ընթերցողներին իսկական աղբիւրների խօսքերով գաղափար տանք Պռոշեանց տոհմի դէպի Գլաձորի դպրոցը ցոյց տուած հովանաւորութիւնն ու գլաձորցիների երախտագիտական վերաբերմունքը դէպի իրենց պատրոնները:

Այստեղ յիշատակուած եղբայրներից համեմատաբար աւելի մանրամասնութիւններ գիտենք Ամիր-Հասանի մասին, որ իբրեւ աւագ՝ տոհմի իշխանապետն էր հօր մահուանից յետոյ, եւ նշանաւոր հանդիսացաւ քիչ յետոյ յիշուելիք Սպիտակաւոր Աստուածածնի շինութեամբ, բայց վերեւի վկայութիւններից զատ տեղեկութիւններ ունինք եւ միւս եղբայրների մասին: Կուքուայ վանքում գրուած մի յիշատակարանից, 1332 թուին, գիտենք, որ մի Վասակ՝ Շահապունեաց ձորի իշխանն էր եւ յիշատակարանն էլ թուագրուած է նրա անունով. «ի յիշխանութե նահանգիս մերոյ թոռին Պռոշա զոր ի յազգէն Վարդանանց Վասակա»[2]: «Թոռն Պռոշա» արտայայտութիւնը պէտք է հասկանալ ընդհանուր՝ այսինքն Պռոշի սերունդի մտքով: Յայտնի է, որ Պռոշը Վասակ անունով թոռ չէ ունեցել: Նրա միակ թոռը Խաչին էր, որի զաւակներն են վերոյիշեալ չորս եղբայրները: Այս Վասակը չի կարող նաեւ Ամիր-Հասան Բ.ի որդին լինել, որովհետեւ 1332 թուին վերջինս այնքան երիտասարդ էր, որ իշխանութեան որեւէ գաւառի կառավարիչ որդի ունենալ կարող չէր: Խաչին, գիտենք, ծնուել է ԺԳ. դարու եօթանասնական թուականների սկզբին եւ ամուսնացել է դարավերջի տասնամեակին. 1317 թուին երբ մեռաւ նա, Ամիր-Հասան Բ.ը կարող էր միայն անչափաս պատանի լինել եւ իրօք, մենք տեսանք, որ № 734 Զ.ի պատառիկի մէջ «մանկազոյն իշխանն մեր» է կոչուած, եթէ ընդունելու լինինք նոյնիսկ, որ այդ պատառիկը ծագում է նորա իշխանութեան առաջին տարիներից: Մենք կը տեսնենք նաեւ՝ որ ՉՀ=1321 թուին շինուած Սպիտակաւոր Աստուածածնի պատի վրայ գտնւում է Ամիր-Հասան Բ.ի քանդակուած պատկերը բոլորովին երիտասարդական հասակում: Ապա, ուրեմն, Կուքուայ վանքի յիշատակարանի Վասակը ոչ այլ ոք է, բայց եթէ Խաչոյի որդիների շարքում յիշուած Վասակը կամ Առաքել Հաղբատեցու «քաջ եւ արի հոլովն Վասակ»:

Ամիր-Հասանի եւ Ջումայի յիշատակութիւնն ունինք Գլաձորի դպրոցի Յունան գրչի կողմից եւս 1334 թուին. «ի յիշխանութե եւ տէրութե համօրէն գաւառացս մեծ իշխանին Բուրթէլի եւ որդոց նորին Պէշգենի եւ Իւանէի, իսկ ի տեղւոյս տէրութե թոռանց մեծին Պռոշա Ամիր-Հասանա եւ Ջումայի»[3]: Այստեղ յիշատակուած չենք տեսնում Վասակի եւ Ասադի անունները. արդեօ՞ք մեռած էին, թէ պատահական է այդ լռութիւնը: Յամենայն դէպս Ջուման աւելի երկարակեաց եղան քան Ասադը: Թանատի վանքի անթուական արձանագրութիւններից մէկը (պատկ. 92. Յաւել. Ա.





Յունան գրչի յիշատակարան. Յաւել. Բ. 26. ՊԱՏԿԵՐ 90—91

---

[1] Մատենադարանում աշխատելիս այս հատուածի վրայ մեր ուշադրութիւնը դարձրեց Հ. Ներսէս Ակինեան: փակագծի մէջ առնուածները մենք ենք լրացնում. բազմակէտերով նշանակուած մասերը ցեցակեր:

[2] Ալիշան. Սիսական. 487:

[3] Յակոբ Թոփճեան. Ցուց. Ձեռ. Դաղեան խաչիկ վարդապետի. Բ. 30. (Պատկ. 90—91. Յաւել. Բ. 26):

27), գրուած է Ամիր-Հասանի թոռ եւ Խաչոյի որդի Ջումայի կողմից, որի մէջ յիշատակութիւն կայ նաեւ Ասադ անունով եղբօր մասին: Նա իւր կենակից Խոնադգելի հետ Աւագակնայ Ջրաղացը նուիրում է սուրբ Ստեփաննոսի գերեզմանին: Միաբանները սահմանում են երեք պատարագ սուրբ խաչի տօնին, երկուսը իւր եղբօրը՝ «պարոն Ասադին: Ա: էլխուբլոյ»: *Երկու եղբայրների պապի եւ հօր այսպիսի պարզ յիշատակութիւնից յետոյ այլեւս ոչ մի կասկած լինել կարող չէ նրանց նոյնութեան մասին:*



Արձ. Ջումայի Թանահտի վանքում (Ցանկ. Ա. 27). ՊԱՏԿԵՐ 92.

Ամիր-Հասան Բ.ի իշխանութիւնը կարելի է բնորոշել որպէս Գլաձորի դպրոցի, միջնադարեան, արեւելեան Հայոց «համալսարանի» ծաղկման բարձր շրջանը: Այդ դպրոցը, որ Վարդանի մահուանից յետոյ Գլաձոր է փոխադրւում Պռոշի ժամանակ, Ներսէս Մշեցու, ապա Եսայի Նչեցու եւ Դաւիթ վարդապետի ղեկավարութեամբ, անընդհատ շարունակում է իւր գոյութիւնը մինչեւ ԺԴ. դարի գրեթէ կէսերը, ամենադործօն դեր կատարելով եկեղեցական եւ գիտական – դեղարուեստական ասպարէզներում: Մենք առիթ կ'ունենանք սոյն աշխատութեան երկրորդ մասի մէջ յատուկ գլխով պարզել այդ դերը, այստեղ միայն կարեւոր ենք համարում մատնանշել, թէ գրչութեան եւ մանրանկարչութեան ամենից փառաւոր գործերն այս դպրոցի՝ Ամիր-Հասան Բ.ի իշխանութեան առաջին տարիներից են եւ այս ժամանակի յիշատակարանների մէջ էլ շեշտւում է Պռոշեանների խրախուսութիւնն ու հովանաւորութիւնը դպրոցի վերայ:

Ամիր-Հասան Բ.ի գլխաւոր գործը Գլաձորի դըպրոցի հովանաւորութեան հետ Սպիտակաւոր Աստուածածնի շինութիւնն է եղել: Այդպէս է կոչուել այդ վանքը (պատկ. 9. էջ 21) արձանագրութիւնների համեմատ: Բայց նաեւ Ս. Կարապետ, Անապատ, Բոլորաբերդի կամ Բոլորաձորի անապատ ԺԴ. եւ ԺԵ. դարերում յիշատակարանների համեմատ: Վերջին անունն ստացել է մօտակայ բերդի անունով, որ գոյութիւն ունի եւ այժմ բոլորաձեւ մի բլրի գագաթին (պատկ. 7, էջ 19): Ե՞րբ է շինուած բերդը, տարաբաղդաբար տեղեկութիւն չունինք մեզ ծանօթ ոչ մի յիշատակարանի եւ արձանագրութեան մէջ, բայց նա գոյութիւն ունէր վանքի շինութեան ժամանակ եւ յիշուած է խաչքի արձանագրութեան մէջ (Ցանկ. Ա. 25. պատկ. 80):

վանքի ներկայ շինութիւնը վերջաւորուած է ՉՀ(=1321) թուին, որ ելնդաւոր տառերով երեւում է շինութեան հարաւային պատի ճակատին: Վանքը գտնւում է բերդից, որ այժմ Պռոշի բերդ է կոչւում, քիչ դէպի հիւսիս–արեւմուտք Թեաքաղեոնդիւրան սարի հարաւային փէշերին, մի սքանչելի բարձրաւանդակի վերայ, շրջապատուած վայրի վարդենիների թփերով, որի համար եւ մահմեդականների կողմից Գիւլվանք կոչուած: Վանքից քիչ հեռու զանգակատունն է, կամարակապ մի փոքրիկ շէնք, արտասովոր մեր զանգակատան շէնքերի համեմատութեամբ, որի կիսեղծ եւ դժուարընթեռնլի արձանագրութիւնը, տարաբաղդաբար, կորցրել ենք: Եկեղեցու շինութեան եւ նախնական պատմութեան աղբիւրները արձանագրութիւններն են:

Քիչ վերեւ արդէն յիշեցինք, թէ եկեղեցին շինուած է կամ աւելի ճիշդ վերջաւորուած է 1321 թուին: Մենք յիշեցինք նաեւ Խաչիի արձանագրութեան մասին, որ կրում է ՉՀԱ (1322) թուականը (պատկ· 80), մինչդեռ նա մեռած էր արդէն ՉԿԷ (1318) թուի նաւասարդից առաջ: Այս անախրոնիզմը բացատրել կարելի է միայն նրանով, որ շէնքն սկսուած է հօր կենդանութեան ժամանակ, բայց վերջաւորուած է մի քանի տարի յետոյ՝ որդու ժամանակ, որին ապացոյց կարող է լինել եւ այն հանգամանքը, որ վանքի հիւսիսային պատի վերայ քանդակուած է Խաչիի եւ Ամիր–Հասան Բ·ի պատկերները իբրեւ վանքի հիմնադիրների, որ մինչեւ այժմ սխալմամբ Պռոշի եւ նորա Ամիր–Հասան Ա· որդունն է համարուել: Այս մասին քիչ յետոյ: Վանքի շինութիւնը, ուրեմն, տեւել է մօտաւորապէս 4—5 տարի, որ անհասկանալի է իսկապէս այսպիսի մի փոքր շէնքի համար[1]:

Խաչիի արձանագրութիւնը հետաքրքրական է ոչ միայն հնագրական տեսակէտով, իւր բազմաթիւ, նախկին դարերի համար անսովոր ձեւի կցումներով որ շատ դժուարացնում է ընթերցումը, այլ եւ նուիրուած Տանձի հողի չորս սահմանների որոշումով, ժողովրդական բառերով եւ արտայայտութիւններով: Այդ դժուարութիւնն է եղել պատճառը, որ Ջալալեան, Քաջբերունի, նրանց հետեւող Ալիշան եւ ապա Սիսով կամ չեն յիշատակում այդ արձանագրութիւնը կամ շատ թերի եւ արտառոց ընթերցում են տալիս: Բարեբաղդաբար Լալաեանցի եւ մեր լուսանկարներով ամբողջացած են այս եւ բոլոր կարեւոր արձանագրութիւնները, որով հնարաւորութիւն է տրւում բանասէրներին վերստուգութեան ենթարկելու նրանց ընթերցումը: Արձանագրութիւնը գրուած է Պարոն Ամիր–Հասանի որդի Խաչիի կողմից, որով յայտնում է, թէ Նորակընունք, այսինքն նոր օծուած սուրբ Աստուածածին եւ սուրբ Կարապետ եկեղեցուն, Գրիգոր ճգնաւորի հայրութեան ժամանակ «վախմ» է տալիս Տանձի հողը «հանդ» ու սահման ? իւր չորս «հատովն», այն է վերի ու ներքին ճանապարհով, երկու ձորամիջով, Քարարտոյ ? ձորն գանձհանի առով, ներքի Ջրախառով ու բերդի ձորով: Միաբանները որոշում են չորս պատարագ Աստուածածնի փոխման տօնին: «Հակառակար»ին Յուդայի եւ Կայէնի բաժինն է սպառնում: Նորակնունք բառը արձանագրութեան մէջ ցոյց է տալիս, որ գըրուած է Խաչիի մահուանից եւ շէնքի վերջաւորութիւնից յետոյ, ինչպէս հաստատում է արձանագրութեան վերջում գրուած թուականը «Թվ· ՉՀԱ»: Դժուար է, ի հարկէ, այժմ ճշդիւ որոշել, թէ որո՞նք են «վերի» եւ «ներքի» ճանապարհները, բայց դոցանից մէկը, հաւանօրէն, այն ճանապարհն է, որ Բաշքեանդ գիւղից Պռոշայ կապ կոչուած ժայռերի տակով (Քարար ? ձոր) անցնում է դէպի վանքի բարձրաւանդակի արեւմըտեան ստորոտը, ուր խառնւում են հիւսիսից եւ հարաւից եկող երկու վտակները (Ջրախառը), բարձրաւանդակին մի տեսակ սուր թերակղզու ձեւ տալով: Հարաւային վտակի հիւսիսային ճիւղն է, որ հոսում է բերդի ձորով, որի աղբիւրները բղխում են կարծեցեալ Գլաձորի մօտերքից: «Գանձհանի առը» պիտի լինի վանքի բարձրաւանդակի արեւմտեան ձորը, որ ձգւում է հարաւից դէպի հիւսիս՝ Թեաքաղեոնդիւրանի լանջերը· այդ բարձրաւանդակը, յիրաւի, պղնձի հանքեր ունի եւ վանքի մօտից բղխող աղբիւրից փայլուն, մետաղի աւազ է դուրս գալիս: Արձանագրութիւնը պատմական մի վկայութիւն է մի ժամանակ բանուկ հանքերի համար:

Ամիր–Հասան Բ·ն էլ ունի իւր արձանագրութիւնները· դոցանից մէկն անթուական է եւ գրուած է 1340 թուականից ոչ ուշ, երբ նորա կինը առանձին արձանագրութեամբ իւր հողու բաժինն է տալիս վանքին: Արձանագրութեան համեմատ «Ամիր–Հասանի որդի Խաչո» եւ «Բոքա դստ (դուստր) Ջաֆարաի» յայտնում են, թէ Ֆստորալեզում իրենց հայրենի Նախագպարենց ? Ջահենենց այգին եւ Դուլթենց այգետեղի կէսը տալիս են «որ անապատիս եւ Գրիգորի դերեզմանիս» յիշատակ՝ հայր Մկրտչի ձեռքով՝ իրենց եւ իրենց նախնեաց համար: Վանահայրը իւր միաբանների հետ տարին չորս պատարագ է սահմանում Աւագ Հինգշաբթի եւ Զատկի Կիւրակէն (Յաւել· Ա· 27· պատկ· 93): Այստեղ յիշատակուած Բորան կամ Բորէն Ամիր-Հասանի կինն է, որի տոհմական ծագման մասին առ այժմ տեղեկութիւն չունենք· միայն կինը կարող էր գահերէց իշխանի հետ նուիրաբերութիւններ անել հայրենի ժառանգութիւններից: Մօր անունը, գիտենք, Մամախաթուն էր, Օրբէլեանց տոհմից:

---

[1] Հաւանօրէն այս յապաղման պատճառը երկրի խառնակ վիճակն էր, որի մասին մեզ գաղափար է տալիս Յովհաննէս գրչի յիշատակարանը, նկարագրելով յատկապէս Գեղարքունիքի վիճակը· *«յարեաւ ոմն անաւրէն Ղուռումչի, որ պատերազմեցաւ ընդ պարոն Զաւպանի եւ արար փախստական»*, երկիրը, եկեղեցիները, գրքերն ու սպասները կողոպտւում են, գերիներ տանում երեխաներին եւ ծերերին· *«ընակութի աշխարհիս թողին զինչս իւրեանց եւ ի ծերպս վիմաց ապաւինէին… իբրեւ զնուէ* (s!) *էրէրէր էրկիր ի յահէ անիծեալ Ղուռումչոյ, մինչեւ քաղցրացաւ եւ առաքեաց զԲուսախտ խանն եւ կոտորեաց զՂուռումչի եւ զաւրսն իւր· եւ եղեւ խաղաղութի ամ աշխարհի եւ դարձաւ աշխարհս ի ընակութի իւր… եւ Զաւպանն կրկին հաստատեցաւ ի պարոնութի Բուսախտղանի»*: (Ձեռ· № 88, Երեւանի թանգարանում): Ժամանակը թուագրուած է «ՉԿԹ: եւ ի: ՉԿԸ: (=1319—1320)»: Այս դէպքերին ակնարկում է եւ մի անյայտ ժամանակագիր «*Երընչի եւ Ղուռումչին նստան*»· (Սամուէլ Անեցի· շարունակութիւն· Վաղարշապատ· 1893· 167:

Այս արձանագրութեան անմիջապէս կցուած է նոյն գրով Բորայի կամ Բորէի առանձին արձանագրութիւնը ՉՁԹ=1340 թուականից, որից պէտք է եզրակացնել, թէ նախընթաց արձանագրութիւնն էլ նոյն թուին է գրուած, ուր յայտնում է, թէ գնել է Զառաւետկանց (թէ՞ Առաւետկանց) այգին եւ Հայր Մրկտչի ձեռքով նուիրել «յանապատն Սպիտակաւոր Աստուածածնին»· Հայրը եւ միաբանները նշանակում են երկու պատարագ Աստուածածնի փոխմանը (Յաւել· Ա· 28):



Սպիտ· Աստուածածին· արձ· Ամիր–Հասան Բ·–ի (Յաւել· Ա· 27)· ՊԱՏԿԵՐ 93·

Ամիր-Հասանի երկրորդ արձանագրութիւնը, որ կրում է Պ=1351 թուականը, գրուած է միայն իւր կողմից (պատկ· 94· Յաւել· Ա· 29)· որով իւր «հոգո բաժին»ն է տալիս, երկու կտոր հող «ի Սխտորալէզն ի Մզատեղ (կամ Ամզատեղ)» Սպիտակաւոր Աստուածածնին: Վարդապետը եւ միւս միաբանները սահմանում են տարին երկու օր պատարագ սուրբ Սարգսի տօնին: Պէտք է ասել արձանագրութեան ընթերցումը ինձնից շատ աշխատանք եւ ժամանակ է պահանջել, բայց ապահով չեմ դարձել ճշգութեան մասին:

Կարծում եմ այս թուականն էլ պէտք է համարել Ամիր-Հասան Բ·ի մահուան տարին, ի նկատի ունենալով, որ հոգեբաժնի արձանագրութիւնները քանդակւում էին սովորաբար նուիրատուի մահուանից յետոյ:

Մեր տեղեկութիւնները վանքի պատմութեան մասին՝ Ամիր-Հասան Բ·ի հովանաւորութեան շրջանից՝ շատ քիչ են: Վանքի առաջին վանահայրն էր Գրիգոր, որ իւր ճգնաւորական կեանքով մեծ հեղինակութիւն էր ստացել եւ մահուանից յետոյ էլ նորա գերեզմանը սրբավայր հռչակուել (Յաւել· Ա· 25—27): Մահուան տարեթիւը նշանակել չենք կարող, բայց 1340 եւ 1343 թուերի արձանագրութիւնների մէջ վանահայրը Հայր Մկրտիչ է: Սա իւր ուսումն ստացել էր Գլաձորի դպրոցում, եւ նորա ուսուցիչն էր Եսայի Նչեցու աջակից նշանաւոր Դաւիթ վարդապետը: Վերջինս Հայր Մկրտչին նուիրում է մի մագաղաթեայ աւետարան, գրուած յիշեալ դպրոցում 1221 թուին «սպասաւոր բանի» Կիւրեղի ձեռքով եւ Մարտիրոս քահանայի արդիւնքով, հետագայում րաբունապետ Մարտիրոս կոչուած: Ապա այս ձեռագիրն անցնում է Դաւիթ վարդապետի ձեռքը, որ իւր մակագրութեամբ նուիրում է սուրբ Աստուածածնին եւ նորա առաջնորդ Մկրտչին. «Նուաստս ի շարս ուսուցչապետաց Դաւիթ շնորհեցի աւետարանս սուրբ Աստուածածնին եւ առաջնորդի սուրբ Անապատին Մկրտչին, հոգեւոր որդեկին իմոյ ի յիշատակ հոգւոյ իմոյ» (**Յաւել. Բ.** 23): Սրա օրով պէտք է գրուած լինի մեր ձեռքը հասած աւետարանը Յովհաննու Հանգստեան հետ, «ի թվականիս Հայոց ՉՁԶ (=1337), ի ձորիս Վայոյ, ի յանապատիս, որ կոչի Բոլորաձոր»[1]), Աւետարանիչների պատկերները տարաբաղդաբար պոկուած են, իսկ սկզբնազարդերը կարմրադեղով են եւ բաւական լաւ: Յիշատակարանի մնացած թերթերի պոկուած լինելու պատճառով աւելի մանրամասնութիւններ չգիտենք (**Յաւել. Բ.** 27):

Արձանագրութիւնների համեմատ 1331 թուին Պարսամ աբեղան Անապատի Աղբերափոսում այգի է տնկում եւ արձանագրով վանքին թողնում. միաբանները երկու ժամ են սահմանում նորա անուան (**Յաւել. Ա.** 31): Եւ յիրաւի մինչեւ այժմ Աղբրափոսում երեւում են ընկուզենիների եւ այլ պտղատու ծառերի մնացորդներ: Ապա 1339 թուին Սմբատ որդի Լիպարտի (Օրբէլեան) միաբանում է Աւագ անապատին, սուրբ Կարապետին եւ սուրբ Աստուածածնին եւ նուիրում «զվախթանգենց այգին իւր ամէն հատաւն, զծառ եւ զտունկ, որ հանապազ զմեզ ի պատարագն յիշեն (**Յաւել. Ա.** 32)[2]): Ոմն Մկրտիչ 1343 թուին տալիս է իւր հոգու բաժինը «ի սբ ածածին», որպէսզի սպասաւորները՝ Հայր Մկրտիչն ու «միաբանք ի պատարագն զիս ու զիմն յիշեն» (**Յաւել. Ա.** 33): Ենթադրում ենք, որ այս Հայր Մկրտիչը պէտք է լինի Խաչատուր Կեչառեցու որդին: «Չորրորդ աւուր Ծննդեան եւ Աւետեաց Աստուածածնին» գանձը «Խնդութեան ձայն բարբառ աւետեաց» սկսուածքով Կեչառեցունն է: Ըստ Ալիշանի գանձարաններից մէկում խորագրուած է եղել.

«Երգեաց ըզսա Կեչառեցին, Հայր՝ Մկըրտիչ վարդապետին»:

Ափսո՛ս, Ալիշանը իւր սովորութեան համեմատ լիովին չի յիշում աղբիւրը. ձեռագրի ծագման տեղը եւ ժամանակը, գուցէ, կը լուսաւորէին մութ խնդիրը[3]):

Վերջապէս, նախնական շրջանին է պատկանում նաեւ Մարգարէ վարդապետի եւ իւր հարազատ Գրիգորիսի անթուական արձանագրութիւնը, որով «զբանքեր հողն» ընծայ են տալիս Աստուածածնին (**Յաւել. Ա.** 34):



Արձ. Սպիտակաւոր Աստուածածնի. (Յաւել. Ա. 29). ՊԱՏԿԵՐ 94.

Այժմ անցնենք շէնքի հնագիտական զննութեան: Եկեղեցին փոքր է, 6,16 մետր երկարութեամբ, ափսիդն էլ հետը հաշուելով, եւ 3,75 մ. լայնութեամբ, առանց սիւների, գմբէթարդ, բարձր եւ բոլորակ թմբուկով: Եկեղեցու տպաւորութիւնը գեղեցիկ է յատկապէս արտաքուստ, շինուած սրբատաշ, սպիտակ եւ խայտաւոր քարերով: Եկեղեցուն կցուած էր եւ փոքրիկ գաւիթ, բայց ոչ տաճարի ժամանակից, որ այժմ կործանուած է եւ պատերի հիմքն է մնացած քիչ բարձրութեամբ[4]): Չնայելով եկեղեցու փոքրութեան՝ հարուստ է եւ հետաքրքրական իւր զարդաքանդակներով եւ պատկերաքանդակներով, թէեւ մի քանիսը պակասաւոր կամ անյայտացած: Այսպէս Ջալալեան գրում է (**Բ.** 148), թէ «ի տեղի վէմքարի զոյ արձան մարդոյ, ունելով զգեստ հոգեւորականի, զձեռս յերկինս տարածեալ», *որ գտնել չկարողացանք: Սեղանի կիսաբոլոր ափսիդի առաստաղի վերայ Յիսուսի բարձրաքանդակն է* «Յիսուս Քրիստոս» *գրութեամբ, իսկ ներսից կիսաբոլորակ գմբէթի մէջ Քրիստոսի եւ չորս աւետարանիչների: Հիւսիսային պատի խորշը եզերուած է ուռուցիկ շրջանակով, վերին մասում ատամնաձեւ զարդարանքով եւ խաչով վերջացած, իսկ խորքում ստալակտիտաւոր սրածայր կամարով, յատուկ ԺԳ. դարու հայ եւ մուսուլմանական քանդակագործական զարդարանքին: Աւելի գեղեցիկ են արտաքին պատերի զարդարանքները, ինչպէս երկար եւ նեղ լուսամուտների շրջանակները, որ ընդաւոր մեծ խաչ են ձեւացնում արեւելեան եւ հարաւային պատերին, քառանկիւնի շրջանակ հանգոյցներով հիւսիսային պատին, եւ աստղաձեւ արեւմտեան լուսամուտի շուրջը, լուսամուտի ձեւին համապատասխան, որ ապա վեր բարձրանալով խաչ է դառնում կրկին*[1]): *Շքեղ շրջանակուած է յատկապէս դուռը, արեւմտեան կողմից, ստալակտիտների եւ երկրաչափական ձեւերի զարդարանքներով, մահմետական արուեստին եւս յատուկ* (*պատկ*. 98):

---

[1]) Ձեռ. էջմ. Ն. Ց. № 1601:

[2]) Լիպարտի որդի այս Սմբատը թոռն էր Տարսայիճի իւանէ եղբօր, Յոհան Աւրպէլի եղբայրը. տես. Օրբ. 431/2:

[3]) Այրարատ. 268:

[4]) Եկեղեցու յատակագիծն ու հատուածականը տես. Мат. по Археол. Кавказа, XIII. Уворова-ի հրատարակութեամբ. 120. պատկ. 60 եւ 61:



խաչի եւ որդիների մէկը. ՊԱՏԿԵՐ 95.

Առանձնապէս ուշագրաւ են մարդկային քանդակապատկերները, յատկապէս աշխարհիկ բովանդակութիւն ունեցողները: Դոցանից մէկը գտնւում է հիւսիսային պատի ճակատին: Աթոռի վերայ բազմած է խոյրակիր, մօրուքաւոր, երկարազգեստ մի մարդ (*պատկ*. 95). *աջ ձեռքին աղեղ բռնած, իսկ ձախը ծնկանը. վերնազգեստի ուսն ու կուրծքը զարդարուն է եւ կոճկուած աջ թեւի տակ, ինչպէս Խաչէնի պատկերն էր իւր արծաթի պահարանի վերայ: Նստած մարդու կողքին կանգնած է մի պատանի, առանց վերնազգեստի, մինչեւ սրունքները հասնող բաճկոնով, մէջքին գօտի, ձախ ձեռքում մի բան բռնած, որ պարզ չէ: Գլխարկի ծայրին մի զարդարանք կայ, իսկ թեւին իշխանական ժապաւէն: Ջալալեան* (Բ. 148) *աթոռի վրայ նստած մարդը Պռոշ իշխանն է համարել եւ մօտը կանգնած պատանին «երկրորդ որդի նորա Խաչոյ»: Առաջնի համար նոյն ընծայութիւնն է անում նաեւ Ալիշան*[2]). *իսկ Հ. Վարդան Հացունի երկուսի համար էլ համակարծիք է Ջալալեանին*[3]): *Ջալալեանին է հետեւում եւ* Баградзе*-ն, ապա Խ. Յովհաննիս–*

---

[1]) Տես. Мат. по Археол. Кавказа. т. XIII, Табл. XXXI. պատկ. 66. 67: Լալաեան. Ալբում վայոց ձորի. նաեւ մեր պատկերը 96:

[2]) Սիսական. 137:

[3]) Պատմութիւն հին հայ տարազին. 1924. Վենետիկ. 214:

եան¹): Բայց մենք արդէն ցոյց ենք տուել (եր. 96–97), որ Պռոշ խաչի անունով որդի չէ ունեցել, իսկ այժմ էլ եկեղեցու շինողների եւ նրանց ժամանակի պարզաբանութիւնից յետոյ, գլխովին սխալ պէտք է համարուին այդ ենթադրութիւններն ու հակաճառութիւնները: Այստեղ նստած իշխանը ոչ այլ ոք է, բայց եթէ Ամիր–Հասան Ա.ի որդի Խաչին, եկեղեցու հիմնադիրը, իսկ նորա կողքին կանգնած երիտասարդը նորա աւագ որդին՝ Ամիր–Հասան Բ., որ ինչպէս արձանագրութիւններից եւ յիշատակարաններից տեսանք, Խաչոյի յաջորդն էր եւ մասնակիցը եկեղեցու շինութեան: Բայց այս խնդիրը աւելի եւս կը պարզուի հետեւեալ տողերի մէջ:



ՊԱՏԿԵՐ 96.

Մի ուրիշ բարձրաքանդակ խմբանկար երկու քարի վերայ, որսորդական տեսարան է (պատկ. 96—97): Ձիու վրայ նստած է մի երիտասարդ, որ լարել է աղեղը եւ արձակել նետը փախչող եղնիկի վզին: Աղեղնաւորի ձին առաջ է գնում, իսկ ինքը ետ է դարձել դէպի իր որսը, մինչդեռ եղնիկը փախչում է հակառակ ուղղութեամբ, բայց հարուածն ստանալով դարձել է դէպի որսորդը: Վերջինս հագել է նեղ, մինչեւ սրունքները հասնող բաճկոն, ականազարդ գօտին մէջքին եւ իշխանական ժապաւէնը թեւին: Գլխի խոյրը բոլորակ է, ներքեւի եզրները զարդարուն կամ ականակուռ, ետեւից կախուած են արտախուրակներ (գուցէ եւ երկար խոպոպիքներն են դրանք): Գլխարկի վերեւի մասը պարզ չէ, բայց ձեւից երեւում է, որ նման է խաչիի պահարանի իշխանական գլխարկին: Դէմքը ծածկուած է թեթեւ մօրուքով: Նկատւում է ձիու սանձը, թամբի ետեւի մասերը, պոչի տակով դէպի մէջքն ու թամբն անցած: Այս քարերն ընկած են հաւանօրէն հարաւային պատի ճակատից, եւ այժմ պահւում են ափսիդի մէջ, որի հետ ոչ մի կապ չունին:

Արդ, ո՞վ է այս բարձրաքանդակը ներկայացնող իշխանը: Ջալալեանը, որպէս թէ «հուպ ի գլուխ արձանի» կարդացել է «Ամիր Հասան որդի Պռոշայ» փակագիրը: Բայց սխալ է միանգամայն այս տեղեկութիւնը. ձիաւորի գլխի աջ կողմից գրուած է «Ամիր», ձախ կողմից «Հսան (ընդգծուածը միացած), որով եւ կասկածի տեղիք չի մնում, թէ եկեղեցու շինող Ամիր–Հասան Բ.ի բարձրաքանդակն է այս եւ ոչ Պռոշի որդի Ամիր–Հասան Ա.ի, որ վախճանուած էր արդէն 1292 թուին: Այսպիսով ձեռքի տակ ունինք ազգագրական–պատմական արժէք ունեցող երկու բարձրաքանդակ, որոնք գաղափար են տալիս մեզ թաթարական շրջանի իշխանական հագուստի մասին ԺԴ. դարու առաջին քառորդից, որ համեմատելի են Տարսայիճ Օրբէլեանի եւ նրա թոռը Բուրթելի պատկերաքանդակների հետ²):



ՊԱՏԿԵՐ 97.

---

[1] Мат. по Археол. Кавказа. XIII. 123:

[2] Х. В. Том II 216--17. Табл. XXV. եւ Գեղարուեստ № 4. եր. 39: Ունինք եւ երկու կարեւոր մանրանկարներ, Բռնաւորի եւ իր ամուսին Տղատիկնոջ պատկերները, որոնց մասին յիշել ենք արդէն (եր. 9), եւ վերջերս հրատարակել է Հ. Վարդան Հացունի, Վենետկի Մխիթարեաններից, իր «Պատմութիւն հին Տարազին». 1923 թ. Վենետիկ, աշխատութեան մէջ, եւ ապա Ումեկայ որդի եւ Հասան–Ջալալի թոռը Վախտանգ իշխանի պատկերը էջմ.ի № 155 ձեռագրի մէջ: Իշխանական որմանկարներ ունինք Հաղբատում, Սադունի որդի Խութլու Բուղայինը, որ հրատարակել է Մառը (Х. В. Т. I. Табл. XXI) եւ Տրդատի

Կրօնական պատկերաքանդակներից ամենից ուշագրաւն է դրան կամարակալ քարի Աստուածածինը (պատկ. 98), Յիսուս մանուկ գրկին, ընդհանուր առմամբ մօտ բիւզանդական ամենամեծ սրբութիւններից մէկի՝ Օդիգիտրիայի տիպին, որ հիմք է դարձել ԺԳ—ԺԵ. դարերում նոյն տիպի իտալական նկարների համար: Այստեղից էլ պէտք է հասկանալ մեր քանդակի ընդհանուր նմանութիւնը նրանց հետ: Իտալական անմիջական ազդեցութեան մասին մեր քանդակի նկատմամբ խօսք լինել կարող չէ: Այդ ազդեցութիւնն սպասել կարելի էր միայն որպէս ունիթոռական շարժման հետեւանք, որ արեւելեան Հայաստանում միայն ԺԴ. դարի երեսնական թուականներին է սկսում: Ճիշդ է հայ եւ արեւմտեան արուեստների աղերս նկատում ենք Կիլիկիայում ԺԳ. դարու կէսերից, բայց ոչ արեւելեան Հայաստանում: Այդ նմանութիւնը մենք հասկանում ենք բիւզանդական միջնորդութեամբ: Նախընթաց գլխի մէջ մատնանշեցինք (եր. 102) Խոտակերաց Ս. Նշանի պահարանի Ամենակալի եւ Անդրէա Պիզանոյի Ֆլորենցիայի մկրտարանի հարաւային բրոնզէ դրան պատկերագրութեան շրջանակների մօտաւոր նմանութիւնը, որ պատահական լինել կարող չէ: Փոքր է այդ նմանութիւնը, բայց արժանի ուշադրութեան, որ հաւանօրէն, կապ ունի արուեստի այն հոսանքի հետ, որ արեւելքից, գլխաւորապէս, Բիւզանդիայի միջնորդութեամբ անցնում է Իտալիա եւ վերածնութեան նախնական շրջանի հասկացողութեան հիմքերից մէկը կազմում:



Սպիտակաւոր Աստուածածին. ՊԱՏԿԵՐ 98.

Արդեօ՞ք բիւզանդական է մեր քանդակը:

Լիխաչովի[1] եւ Կոնդակովի[2] Աստուածածնի պատկերագրութեան նուիրած մեծ աշխատութիւններից երեւում է, որ Օդիգիտրիայի տիպի երկու մեծ խմբաւորութիւններ կային մինչեւ պատկերամարտութիւն եւ նրանից յետոյ: Առաջին՝ Մարիամ կանգնած է ամ-

---

ու հայ նախարարների պատկերները ԺԳ—ԺԴ. դարու իշխանական տարազով Անիի Հոնենց Ս. Գրիգորում, որ բարեբաղդաբար արտանկարել ենք տուել իսկական մեծութեամբ եւ գոյներով Հնութ. Պահպանութ. Կոմիտէի որոշմամբ՝ եւ այժմ գտնւում է Երեւանի թանգարանում:

[1] Н. П. Лихачев. Изображения Богоматери. СП. 1911.

[2] Иконография Богаматери Н. П. Кондакова. Т. II. 1914 и 1915. СП. Т. II. եր. 152 եւ շար. 184 եւ շար.:

բողջ հասակով, ձախ թեւին մանուկը, աջով բռնել է թեթեւ կերպով մանկանը կամ իր ձախ ձեռքը: Մանուկը ձախ ձեռքին փաթոյթ ունի, աջով խաչակնքում է, գլուխը դէպի մայրը դարձրած. մօր գլուխը նոյնպէս քիչ թեքուած է դէպի որդին: Կնիքների մէջ երեւում է նաեւ օդիգիտրիայի տիպի մինչ գոտին (ПОЯСНОЙ) *պատկերը, որից բազմաթիւ օրինակներ է տալիս Լիխաչովը, ոմանք Զ—Ը. դարու գործ: Այս տիպի Աստուածածնի ամբողջական կամ ուղիղ դէմքով* (ПРЯМОЛИЧНОЕ) *պատկեր հազուագիւտ է. այլ սովորաբար թեթեւ թեքուած դէպի մանուկը, աչքերն ուղղած աղօթողին, աջը կրծքին կամ դէպի մանուկը մեկնած՝ բռնելու համար: Յիսուս մանուկն էլ աջը մեկնել է առաջ կամ վեր բարձրացնելով՝ սեղմել, խաչակնքելու համար. երբեմն էլ կրծքին դրած կամ կիսով չափ ծածկած հագուստով: Պատահում են նաեւ շատ ու քիչ շեղումներ այս ընդհանուր տիպերից:*

Արդ, համեմատելով մեր քանդակը երկու ականաւոր գիտնականների տուած բազմաթիւ պատկերների եւ հանած եզրակացութիւնների հետ, գտնում ենք ընդհանուր նմանութիւնների հետ եւ տարբերութիւններ: Այստեղ եւս մայրը թեքուած է գլխով դէպի մանուկը, կամենալով մայրական սիրով եւ գորովով բարեխօս հանդիսանալ աշխարհի համար եւ բռնել է նրան ձախ թեւով, իսկ աջը մեկնել բռնելու համար: Աստուածածնի դէմքը բոլորակ է, մատաղահաս մօր տպաւորութեամբ, աչքերն ուղղած աղօթողին: Գլխին քօղ է ձգած, որ գեղեցիկ ծալքերով իջել է ուսերի վերայ, քղանցքներով լաւ նկատելի աջ եւ ձախ ուսերի վրայից: Քօղի տակից թեւերի վրայով ծալքաւորուած ցած է իջնում նուրբ ծիրանին, որ բազուկների մօտ քիչ ետ է ծալուած շնորհալի կերպով: Սորա տակից հագել է նեղ, մարգարիտներով եզերուած թեզանիքով ներքնազգեստը, որ պարանոցի տակից հորիզոնական ծալքերով ցած է իջնում: Յիսուս փոքրիկ պատանի է (ОТРОК) *դէմքի երեք քառորդականն ուղղած դէպի մայրը, բայց նայում է աղօթողին եւ խաչակնքում աջով, իսկ ձախ ձեռքին փաթոյթ է բռնած: Նա հագել է մինչեւ ոտները հասնող* տունիկա *եւ վերան ձգել քղանցքը ձախ թեւին փաթաթած* տոգա, *թեթեւ յենուելով մօր ձախ ձեռքին: Տարբերութիւնների մէջ յատկապէս արժանի է ուշադրութեան մանկան կանգնած դիրքը, որից պէտք է ենթադրել, թէ սկզբնական օրինակի մէջ մայրը նստած էր, թէպէտ այստեղ նշան չկայ աթոռի եւ մօր գլխի համեմատաբար աւելի թեքումը դէպի մանուկը, որ մօտենում է խանդաղատանքի* (УМИЛЕНИЕ) *տիպին, բայց ոչ այնչափ, որ մանկան թշիկը կպչէր մօր այտին: Պէտք է նկատել նաեւ մօր աջ ձեռքի սովորականից քիչ տարբեր դիրքը, ցուցադրուած երեսի մասով եւ հորիզոնական ուղղութեամբ մեկնած դէպի մանուկը:*

Լիխաչովի եւ Կոնդակովի բերած օդիգիտրիայի բազմաթիւ օրինակներից ոչ մէկը բոլորովին *նման չէ մեր քանդակին. համեմատաբար աւելի մօտ է միայն Զմիւռնիայի յունական Բարուախոսի մի պատկերը շրջանակի մէջ առնուած եւ նկարուած իբրեւ մաս մանրանկարի*1) *: Մեր քանդակի Մարիամի գլխի թեքումը, ձեռքերի դիրքը նոյն է, ինչ որ Բարուախոսի այդ պատկերի մէջ: Յիսուս Մանուկն էլ, թէեւ բոլորովին կանգնած չէ մեր քանդակի նման, այլ թեթեւ պառկած, բայց ամբողջական մարմնով, եւ աջով խաչակնքում է եւ ձախով փաթոյթ բռնել: Զմիւռնիայի Բարուախոսի ձեռագիրը ԺԱ. դարու գործ է համարում Ստրժիգովսկին, իսկ պատկերների նախնական ծագումը աւելի հին, պատկերամարտութեան պարտութիւնից յետոյ վանական–աստուածաբանական հայեացքների հետ կապուած մի երեւոյթ*2) *: Բայց ըստ Կոնդակովի ԺԴ. դարու երկրորդ կիսի գործն է*3) *: Մօր գլխի սովորականից աւելի թեքումը, եւ ուրեմն մօտ մեր քանդակին, երեւում է նաեւ Ը—Թ. դարու, ասորական ծագում ունեցող մի փոքրիկ խաչի պատկերի վերայ Աստուածածինը կանգնած: Այսպ Ս. Աննայի կանգնած պատկերը մանուկ Մարիամը գրկին, որ օդիգիտրիայի հետեւողութիւն է, գլխի թեքումով դարձեալ նման է մեր քանդակին, ԺԱ. դարու գործ, ինչպէս եւ նոյն ժամանակակից՝ Ռոմանոս Դ. Դիոգէնի* (1067—1071) «մեդալի» *կանգնած Մարիամը Յիսուս մանուկը գրկին: Սրանց կարգին է պատկանում Վենետիկի Ս. Մարկոսի մարմարէ «Անտիոքեան» քանդակը, ԺԳ. դարու գործ*4) *: Իսկ ԺԴ. եւ ԺԵ. դարերում յունական եւ յունա–իտալական ծագում ունեցող պատկերագրութեան մէջ այդ երեւոյթը աւելի յաճախ է կրկնուած:*

Այս ցուցումները մի բան են հաստատում, թէ մեր քանդակի նախատիպը պէտք է լինի արեւելեան եւ ոչ անմիջական բիւզանդական ազդեցութեան հետեւանք, ինչպէս եւ բիւզանդական օդիգիտրիայի տիպն էլ իր ծագումով արեւելեան է ըստ Կոնդակովի, այսինքն ասորական կամ եգիպտական: Մեր մտքի հաստատութեան հիմք կարող է լինել այն հանգամանքը, որ բիւզանդական օդիգիտրիայի պատկերագրութեան մէջ չունինք ըստ ամենայնի նոյնը մեր քանդակի հետ, թէեւ ընդհանուր նմանութիւնն ու տարբերութիւնների մասնակի երեւոյթը նկատում ենք այլ եւ այլ տեղերում: Թէ օդիգիտրիայի նմանութիւն բերող Աստուածածնի պատկերագրութիւնը ընտանի էր հայ արուեստին, այդ

---

1) **Лихачев.** եր. 107 պատկ. 242:

2) Manuel d'Art Byzantin. Ch. Diehle. 357: Տարաբաղդաբար ձեռքի տակ չունինք Strzygowski-ի գործը. Der Bilderkreis des greiechischen Phisioligus. Leipzig. 1899.

3) **Иконографія Богаматери II. 264.**

4) **Кондаков.** Անդ. 166, 247, 257. **Лихачев.** 109 (պատկ. 252), 110 (պատկ. 254):

երեւում է ոչ միայն մեր քանդակից եւ ժամանակակից Ամաղուի Բուրթելաշէն Աստուածածին կրկնայարկ եկեղեցու[1]) եւ Ս. Գրիգորի արեւմտեան դրան կամարակալ քարի քանդակներից, այլ աւելի եւս պատկերամարտական շարժումից շատ առաջ Հայաստանում գոյութիւն ունեցող քանդակներից: Հայ մանրանկարչութիւնն ու քանդակագործութիւնը, որ դեռ եւս, գրեթէ, կուսական վիճակի մէջ են ուսումնասիրութեան կողմից, իրենց ասելիքներն ունին քրիստոնէական արուեստի որոշ երեւոյթների հասկացողութեան եւ պատմութեան համար: Աստուածածնի (բազմատեսակ տիպերով), Ամենակալի, տէրունական եւ սրբոց քանդակները հազուագիւտ չեն մինչ Է. դարու հայ արուեստի մէջ, էլ չեմ ասում նրանց աւանդական պահպանութիւնը հետագայ դարերում, բայց դեռ եւս մեծ մասով անմատչելի մնացած գիտութեան: Մասնաւորելով մեր խօսքը Աստուածածնի պատկերագրութեան մասին, պէտք է յայտնենք, որ մեզանում նկատւում է ասորական եւ եգիպտական ծագում ունեցող Աստուածածնի տիպեր եւ այդ հասկանալի պիտի լինի, ի նկատի ունենալով յատկապէս Աղեքսանդրիայի աստուածաբանական դպրոցի դերը արեւելեան եւ առանձնապէս Հայ եկեղեցու դաւանաբանական ուղղութեան նկատմամբ: Աղեքսանդրիայի յայտնի ժամանակագրութեան աստուածածինը՝ Յիսուս ձախ թեւին, իսկ աջը վեր բարձրացրած, որ Ե. դարու գործ է[2]), գտնում ենք փոքրիկ տարբերութեամբ Իղահատի եկեղեցու ափսիդի հարաւային պատին, որ գերեզմանական կոթող է պատին հագցրած: Թեբայի Աստուածածնի տիպը Գահիրէի թանգարանում[3]), կողքից կանգնած երկու հրեշտակներով փոքրիկ տարբերութիւններով նոյնանում է Թալինի գերեզմանական կոթողի քանդակի հետ, որ ուշ չէ քան Է. դարը: Նոյն տեղում եւ նոյն ժամանակների գործ է եւ մի այլ քանդակ Աստուածածնի, Յիսուս մանուկ նստած մօր գոգում, աւետարանը ձեռքին եւ աջով խաչակնքելիս, որ Կարկեդոնում գտնուած կաւէ անօթների Աստուածածինն է յիշեցնում[4]), ծագումով հաւանօրէն արեւելեան:

Էջմիածնի թանգարանում ունինք մի գերեզմանական կոթող, բերուած Սենեքերիմ Տէր Յակոբեանի ձեռքով Արագածի հարաւային լանջի Վանք Խարաբայ կոչուած վայրից, Ուջան գիւղից քիչ բարձր, որի մի կողի քանդակը Աստուածածինն է Յիսուս ձախ թեւին, իսկ աջը դրել է մանկան փորի վերայ: Մարիամ ամբողջական դէմքով նայում է դիտողին, գլխի լաչակն առանձին, որ ուսերի առաջի մասի վրայից մինչեւ արմունկներն է իջնում: Յիսուս մանուկ մինչեւ ոտները հասնող բաճկոնով, ձախով աւետարան սեղմած կրծքին, իսկ աջը պարզ չէ խաչակնքո՞ւմ է, թէ ոչ: Խարաբայ վանքի հնագոյն ճարտարապետական մնացորդը բազիլիկա է: Ահա օդիգիտրիայի մի նախատիպ Է. դարուց առաջ, հաւանօրէն, աթոռի վերայ նստած: Իսկ օդիգիտրիայի կազմած տիպին նման է արեւելեան Շիրակում Մահմուճուղի եկեղեցու պատկերաքանդակը, ոչ ուշ քան Է. դարու առաջին կէսը, տարաբաղդաբար եղծուած վիճակի մէջ: Աստուածածնի դէմքը եւ աջ ձեռքի դիրքը, որ մեզ համար էական նշանակութիւն պիտի ունենար, թաթի մօտ պարզ չէ բոլորովին. բայց անկասկած է, որ նա չէ բռնել իւր ձախ ձեռքը, այլ հաւանօրէն դրել է մանկան ծնկան վերայ. գլուխը քիչ դէպի որդին թեքած: Որոշ է եւ մանկան դիրքը, թէեւ այստեղ եւս եղծուած է. նա նստած է մօր ձախ ձեռքին, աջով խաչակնքում է, իսկ ձախում հաւանօրէն աւետարան, ժամանակակից միւս քանդակներից դատելով[5]):

Յիշատակելի են նաեւ Օձունի աստուածածինները, տաճարում եւ գերեզմանական առաջնակարգ յուշարձանի վրայ, որ այժմ զանգակատուն են կոչում: Սոցանից առաջինը մօտ է միանգամայն օդիգիտրիայի տիպի, միայն մայրը նստած է, դէմքը բոլորակ, դուրս ընկած աչքերով: Մանուկ Յիսուսը նոյնպէս ունի խոշոր, դուրս ընկած աչքեր եւ զանգուր մազեր, երկար՝ մինչեւ ոտները հասնող բաճկոնով, արեւելքին սիրելի ծալքաւորումներով, որ մատնանշում են ասորական կամ միջագետական ծագումը: Ամբողջ շէնքն էլ ասորական բազիլիկաների հետ ամենասերտ կապ ունեցող մի կերտուածք է, բազիլիկայի եւ գմբէթաւորի միութեան նախնական մեծ երեւոյթներից մէկը Հայաստանում: Իսկ յուշարձանի Աստուածածինը նստած եւ աթոռի վերայ Յիսուս մանուկը գոգում պահած:

Մենք թողնում ենք այս քանդակների մանրամասնութիւնները եւ նրանց նշանակութիւնը ուրիշ աշխատութեան մէջ կատարելու, բայց հարկ ենք համարում շեշտել, որ նրանք Ե. դարու վերջերից մինչեւ Է. դարու առաջին կիսի գործեր են, իսկ հնութեամբ եւ պէսպիսութեամբ հնագիտական մեծ արժէքներ, արեւելեան եւ արեւելեան—քրիստոնէական արուեստի ծագման եւ հասկացողութեան իրական, կարեւոր փաստեր, պատկերագրութեան եւ զարդարանքի տեսակէտով[6]): Այստեղ անցողակի յիշատակելու նպատակն էր միայն ցոյց տալ Սպիտակաւորի քանդակի նախնական օրինակի գոյութեան կարելիութիւնը նախապատկերամարտական Հայաստանում:

---

[1]) Ալիշան. Սիսական. 199: Матер. по Археол. Кавказа. XIII Табл. XL. 88.

[2]) Кондаков. Иконогр. Богоматери I. 252. Лихачев. 106.

[3]) Strzygowski. Die Koptische Kunst. 1904. եւ. 105. պատկ. 161:

[4]) Տես. Strzygowski. Die Baukunst der Armenier. II 717. պատկ. 680:

[5]) Լուսանկարն ստացել ենք Թ. Թորամանեանից որի համար եւ շնորհակալութիւն ենք յայտնում:

[6]) Տարաբաղդաբար հնարաւորութիւն չունեցանք Աստուածածնի պատկերագրութեան յիշատակուած քանդակներից կարեւորները իսկ ցուցադրել այստեղ:

Այս բոլորի վերայ պէտք է աւելացնենք մի հանգամանք եւս մեր քանդակի բիւզանդականից անկախ գոյութիւնը Հայաստանում ապացուցանելու համար: Յիշել ենք արդէն, թէ եկեղեցին շինուած էր Սպիտակաւոր Աստուածածին անունով· այդ նշանակում է, թէ կար պաշտաման առարկայ եղած Աստուածածնի մի պատկեր, որ այդ անունն էր կրում: Պատկերների կամ սրբութիւնների անունով եկեղեցին անուանել հազուագիւտ երեւոյթ չէր ոչ մեր եւ ոչ ուրիշ քրիստոնեայ ազգերի մէջ: Հենց վերեւ յիշուած օդիգիտրիային պատկերը Պոլսում ունէր իւր յատուկ տաճարը τῶν ὁδηγῶν կոչուած· Մոսկուայի եկեղեցիներից մէկը, կառուցուած 1654 թուին, կոչւում է Страстной монастырь Աստուածածնի նոյնանուն պատկերի պատճառով: Հայոց մէջ Գառնի աւանի մօտ եղած Հաւուց թառը կոչւում էր Ամենափրկիչ նոյն տեղում պահուած ամենամեծ սրբութեան անունով: Այրի վանքը ԺԳ· դարից Գեղարդայ վանք սկսեց կոչուել այդտեղ պահուած յայտնի սրբութեան անունով: Այդպէս էլ Սպիտակաւոր Աստուածածին անունը ծագած պիտի լինի մի պատկերից, որի քղամիդը կամ ծիրանին սպիտակ էր, ինչպէս եւ «Ծիրանաւոր», «Կարմրաւոր» անունով եկեղեցիները[1]: Սպիտակաւոր Աստուածածին անունով մի ուրիշ տաճար կառուցուած է 1301 թուին Օրբէլեանների հարս, Տարսայիճի եւ Մինախաթունի որդի Ջալալի ամուսին Գոնցա իշխանուհու կողմից· «զեկեղեցիս շինեցի անուամբ Սպիտակաւոր Ածածնին», ասուած է արձանագրութեան մէջ[2]· այս եկեղեցու արեւմտեան դրան կամարակալ քարի վերայ եւս քանդակուած է մի Աստուածածին, բայց տարբեր մեր քանդակից, որ նշան կարող է լինել, թէ նոյնանուն Աստուածածնի տարբեր պատկերները կային: Ամաղուի Բուրթելաշէն Աստուածածինը նոյնպէս դրան ճակատին եւ ներսը ունի Աստուածածնի քանդակներ, բայց թէ ունէ՞ր որեւէ մականուն, յայտնի չէ[3]: Ահա փաստերը, որոնք ապացուցում են, թէ սրբութիւնների անունով շինւում եւ կոչւում էին եկեղեցիներ եւ այդ սրբութիւնների քանդակները կամ պատկերները ցուցադրւում եկեղեցու արտաքին պատերի վրայ որեւէ պատշաճ տեղում, որի մի երեւոյթն էլ մեր քանդակն է:

Սպիտակաւոր Աստուածածնի քանդակների երրորդ խումբը «խնդրուածքի» կամ բարեխօսի քանդակն է (պատկ· 99· 100, 101), արուեստի պատմութեան մէջ «դէիսուս» կոչուած, յունարէն δέησις խնդիր, խնդրուածք բառից: Այս խմբանկարի զանազան փոփոխակներն ու ձեւակերպութիւնները կան որմանկարչութեան, քանդակագործութեան, մանրանկարչութեան եւ մանր արուեստների այլ եւ այլ ճիւղերի մէջ: Ամէն տեղ խմբանկարի կեդրոնն է փառաւորեալ Յիսուս, աթոռի վրայ նստած կամ կանգնած, աջով խաչակնքելիս, իսկ ձախով աւետարան բռնած· նորա աջ կողմից Մարիամ եւ ձախից Յովհաննէս Կարապետ իբրեւ միջնորդ եւ բարեխօս: Հազուագիւտ չեն սակայն վերջինների տեղ երկու կամ աւելի առաքեալներ կամ այլ սրբեր նուիրատուների հետ: Եօթերորդ դարու հայ արուեստի մէջ յիշել կարող ենք Մրենի արեւմտեան դրան ճակատի քանդակը· մէջտեղում Ամենակալը, աջից եւ ձախից մի մի առաքեալ եւ ապա Կամսարական իշխաններն ու եպիսկոպոսը· կեդրոնական պատկերի գլխին երկու հրեշտակներ, փառաբանութեան եւ բարեխօսութեան գաղափարները միացած: Մանրանկարչութեան մէջ հնագոյն օրինակն ունինք Ժ· դարից, աթոռի վրայ բազմած Յիսուսի երկու կողմից մի մի կանգնած առաքեալ[4]: Նոյն խմբանկարն ունինք Օրբէլեանների հարս Գոնցայի 1301 թուին շինած Սպիտակաւոր Աստուածածնի պատի վրայ[5], իսկ երկու հրեշտակների մէջ Բուրթելաշէն Աստուածածնի արեւմտեան ճակատին, Ամաղու վանքում, 1339 թուին[6]:

Քրիստոնէական արուեստի պատմութեան մէջ, անշուշտ, այս խմբանկարի առանձին պատկերների ծագումը հին է, մանաւանդ Ամենակալինը, որ մոզայիկ եւ մանրանկարչական ճիւղերի մէջ կրկնուած է յաճախ Զ· դարում· մեր մէջ Օձունի տաճարի արեւելեան պատին, որ աւելի ուշ չենք համարում քան Զ· դարի առաջին քառորդը: Բայց բարեխօս Աստուածածնի պատկերների ծագումն էլ, դրեթէ, նոյնչափ հին պիտի լինի: Յամենայն դէպս, Զ· եւ Է· դարերից ունինք այդ երեւոյթը հաստատող փաստեր մոզայիկ եւ մանրանկարչական արուեստների մէջ[7]: Ուշադրութեան արժանի է այն հանգամանքը, որ Կոսմա Հնդկանաւորդի մանրանկարներից մէկի մէջ «խնդրուածքի» երեք Փիղուրները իրար մօտ են առաջին անգամ, եւ որ կարեւորն է, Մարիամ այնպիսի դիրքով, որ յատուկ է մեր խմբանկարին· իսկ հնագոյն ձեռագրի (Վատիկանի № 699) օրինակը գիտնականների կողմից աւելի ուշ չէ համարւում, քան Զ· դարը, որքան եւ տարբեր կարծիքի լինին բուն ձեռագրի նկատմամբ[1]:

---

[1] Աշտարակ քաղաքում երկու եկեղեցիներ կան Զ· եւ Է· դարերի: Առաջինը բազիլիկա է եւ աւերակ, կոչւում է «Ծիրանաւոր», իսկ երկրորդը գմբէթաւոր, խաչաձեւ մատուռ· այժմ տարաբաղդաբար նորոգութեան պատճառով մասամբ փոխած հին ձեւը, կոչւում է «Կարմրաւոր»: Մի երրորդ եկեղեցի, որ քանդել են եւ հնի տեղը հիմքը դրել, կիսատ թողնելով, կոչւում է «Ամենափրկիչ», որ յիշատակւում է 1478 թուին գրուած մի աւետարանի յիշատակարանի մէջ (Բարխ· Արցախ· եր· 344) եւ ապա Ս· Մարինէում պահուած մի երկրորդ աւետարանի յիշատակարանում 1716 թուին:

[2] Х. В. Том. II. 1913· եր· 236:

[3] Ալիշան· Սիսական· 199: Матер. по Археол. Кавказа. XIII. Табл. XL. Նալայեան-Վայոց Ձոր (Լուսանկ· Ալրոմ):

[4] Ջեռ· էջմ· № 2374· 6ա:

[5] Х· В· 1913· եր· 240:

[2] Ալիշան· Սիսական· 197: Мат. по Археол. Кавказа, Уварова. XIII. XL. 189:

[7] Кондаков. Иконогр. БМ. Т. I. 356

Սակայն սա բացառիկ երեւոյթ է արուեստի պատմութեան մէջ: Ընդրուածքի խմբանկար աւելի վաղ քան Ժ—ԺԱ· դարը յայտնի չէ: Լիխաչովը իւր մեծ աշխատութեան մէջ մի շարք կնիքներ եւ դրամներ է բերում Աստուածածնի ընդրուածքի տիպի պատկերներով, որոնց հնագոյնները Ժ—ԺԱ· (պատկ· 10· 11) եւ ԺԱ—ԺԲ· (8) դարերից այն կողմը չեն անցնում[2]· Նրա հետ համաձայն է եւ Կոնդակովը[3], որ նոյն տիպի կնիքների եւ դրամների ծագումը կապուած է ընդունում այսպէս կոչուած մակեդոնական, աւելի ճիշդ հայկական հարստութեան հետ: Թէեւ նախնական օրինակը կարող է Ը—Թ· դարերում պաշտման առարկայ եղած լինել, ծագումով աւելի հին, ասորական տիպով:

Կոնդակովի այս վերջին ենթադրութիւնը հաստատւում է, կարծես, հայ արուեստի տուեալներով: Սեբաստիայի վիլայէթի հարաւային սահմաններում՝ Խանդալ գիւղաքաղաքի հայոց եկեղեցին ունէր մի աւետարան[4], գրուած «Սամուէղ նուաստ քահանայի եւ յետին գրչի» կողմից «ի թագաւորութեանն Հոռոմոց, որ կոչի Միխայլիս եւ ի թուականութեանն հայոց ի ՆՂ եւ ի կաթողիկոսութեանն տն Պետրոսի հայոց կաթողիկոսի եւ վերադիտողի, յորժամ Յաւանէս հայոց թագաւորն վախճանեցաւ ի քս եւ ետ զթագաւորութին (s!) իւր որդւոյ եղբաւր իւրոյ որ կոչի Գագիկ», ուրեմն 1041 թ·: Աւետարանը իւր խորաններով եւ մանրանկարներով շատ մօտ է ասորական 586 թուի Ռաբուլայի աւետարանին: Սկզբում եղած մի շարք անօրինակներից Գր· խաչելութիւնն է եւ խաչից իջեցնելը, որ իրենց պարզութեամբ եւ պատկերագրական նշաններով օրինակներ ունին Զ· դարու ասորա — պաղեստինեան արուեստի մէջ:



Ամենակալը Սպիտ· Աստուածածին վանքում· ՊԱՏԿԵՐ 99·

Խաչեցեալի աջ կողմից կանգնած է Մարիամ բարեխօսի նոյն դիրքով, ինչ որ մեր քանդակի մէջ: Եւ սա միակ օրինակը չէ· նման երեւոյթ ունինք Թիֆլիսի Մուղնու երկաթագիր, մեծադիր աւետարանի մէջ որի խորանները ասորակոպտական արուեստների հետ կապ ունին, իսկ ձեռագիրը ծագումով ուշ չէ, քան ԺԲ·

---

[1] Diehl. 226. Krause $46^1/_2$.

[2] Лихачев. 56 եւ շար·:

[3] Иконогр. БМ. 296 եւ շար·:

[4] Այս աւետարանը տեսել ենք, նկարագրել եւ լուսանկարել 1914 թուին մեր դէպի այդ կողմերը կատարած հնագիտական ճանապարհորդութեան ժամանակ:

դարը։ Աւետարանն այժմ պահւում է Երեւանի թանգարանում եւ մէկն է հայ արուեստի նշանաւորագոյն երեւոյթներից։ Աւելի քիչ տեղեկութիւն կարող ենք տալ, խմբանկարի երրորդ անձի՝ Յովհաննէս Կարապետի տիպի մասին, որպէս բարեխօսի։ Յովհաննէս Մկրտչի տիպը չպէտք է շփոթել, Յովհաննէս բարեխօսի հետ, թէպէտ երկու տեղումն էլ շեշտուած է անապատականի հանգամանքը։

Ինչպէս ասացինք, արուեստի պատմութեան մէջ այս խմբանկարը իւր երեք ֆիգուրներով երեւան է գալիս միայն Ժ—ԺԱ· դարերից սկսած, ինչպէս Հարբավիլի տրիպտիկն է Լուվրում, Լիմբուրգի եկեղեցական թանգարանի մասունց պահարանը, որ Կոստանդին (920 թ·) եւ Ռոմանոս (944 թ·) կայսրների կողմից է շինել տուած· վիրական Խախուլի Աստուածածնի պահարանը, որ շինել է տուել Դեմետր արքան (1125—1154 թ·), բայց նրա վրայ եղած պատկերները աւելի հին են։ Մեր քանդակի նմանութիւն են բերում աւելի Հռոմի Sancta Sanctorum-ի մի արծաթի արկղի դեիսուսը, բայց առաւել եւս Ակուիլայից Ս· Մարկոս փոխադրած բարձրաքանդակը, ուր մերի նման ֆիգուրներն առնուած են կիսասիւների վրայ կապուած կամարների տակ[1])։



Մարիամ բարեխօս· Սպիտ· Աստուածածին· ՊԱՏԿԵՐ 100·

Այս յիշատակութիւնները ցոյց են տալիս, որ մեր խմբաքանդակը բիւզանդական արուեստի մէջ ընդհանրացած, «խնդրուածքի» վերջնական ձեւակերպութեան մի փոփոխակ է։ Ե՞րբ է մտել մեր մէջ, ճշգութեամբ որոշել չենք կարող, բայց ԺԳ· դարում շատ տարածուած մի մօտիվ էր այն հայ արուեստի մէջ, բացի վերեւ յիշուած հայ քանդակներից, յաճախ նաեւ մանրանկարչութեան մէջ։

Պօղոս առաքեալ, բարեխօսի քանդակի մէջ·
Սպիտ· Աստուածածին· ՊԱՏԿԵՐ 101·

Մեր խմբաքանդակի կեդրոնն էր կազմում աթոռի վերայ բազմած Ամենակալը (պատկ· 99), տարաբաղդաբար երեսն ու կուրծքը փչացուած բարբարոս ձեռքով։ Նկատւում է միայն բոլորակի մէջ խաչաձեւ լուսոյ պսակը· աջ ձեռքի վեր բարձրացրած մասն էլ նկատւում է, որը պէտք է խաչակնքելիս լինէր, իսկ ձախում աւետարան, բայց աւելի հաւանական է փաթոյթ բռնած։ Յիսուս հագել է մինչ ոտները հասնող տունիկա եւ մինչեւ ծնկները ծալուած տոգա· երկուսն էլ նստած դիրքին համապատասխան ծալքերով· ոտներին փափուկ կօշիկ, ինչպէս եւ Մարիամի քանդակի մէջ։ Աթոռն առանց թիկունքի է, տախտաձեւ չորս ցածր ոտների վրայ հաստատուած· գետնին կպած մասերը սրտաձեւ· աթոռի վրայ դրուած է երկայնաձեւ բարձրոց (մութաքա), որ աթոռի ճակատի հետ զարդարուած է երկարաձիգ հիւսկէնով։ Պատկերի դաշտը զարդարուած է արմաւենիկի ցօղուններով եւ տերեւով, ԺԳ· դարում ընդհանրացած եղանակով։ Ամբողջ պատկերն առնուած է կեղծ կամարի տակ, որի կողերն ու ճակատը նոյնպէս զարդարուած են արմաւենիկի ցօղուններով եւ տերեւներով։ Քառանկիւնի քարի կամարից դուրս մնացած վերին անկիւնները դարձեալ զարդարուած են նոյն մոտիվների տարբեր ձեւակերպութեամբ։

---

[1]) Kraus I. 559. Diehl 619, 646, 663, Кондаков. Иконогр. Спаса. 35, 37, 38: Տես նոյն հեղինակի Иконогр. БМ. II. 307.

Ամենակալի աջ կողմից մի այլ քարի վրայ Մարիամն է բարեխօս, կանգնած ամբողջ հասակով, ձեռքերն ուղղած դէպի Յիսուս, ձախն աւելի բարձր եւ առաջ մեկնած, քան աջը (պատկ· 100)։ Մինչեւ ոտները հասնող ներքնազգեստի վրայից ձգուած է վերնազգեստը ծալքերով, գլխի լաչակը առանձին մինչեւ ուսերը, մի հանգամանք, որ օղիգիտրիայի բացառիկ օրինակների մէջ է նկատւում եւ արեւելեան յատկանիշ պիտի համարել։ Գլուխը համեմատաբար աւելի մեծ է եւ անհամաչափ ամբողջութեան, չուրջը լուսոյ պսակով· դէմքը, յատկապէս աջ կողմը, փոքր ինչ մաշուած է եւ աչքը լաւ չէ նկատւում։ Ոտներին փափուկ կօշիկներ ունի առանց կրունկի։ Պատկերն առնուած է զոյգ կիսասիւների վրայ բարձրացող կամարի տակ։ Կիսասիւների խարիսխները բոլորաձեւ են, ինչպէս եւ խոյակները, որոնք վերին մասում քառանկիւնի բարձիկ ունին։ Կամարի ճակատն ու քարի դրսի անկիւնները զարդարուած են դարձեալ արմաւենիկի զուգընթաց ցօղունների հիւսուածքով եւ տերեւով։

Ամենակալի ձախ կողմից ճիշդ նոյն մեծութեամբ եւ նոյն տեսակ զարդարանքով կամարի տակ կանգնած է Յովհաննէս Կարապետ։ Այստեղ մերկ սրունքներով չէ եւ մորթենի հագած, ինչպէս Մկրտչի տիպերի մէջ, բայց ճակատի երեք փնջիկ մազերով, մօրուքով եւ դէմքի արտայայտութեամբ ասկետի կերպարանք ունի։ Հագել է երկար պարեգօտ, ուսերին ձգած վերնազգեստ։ Տարաբաղդաբար պատկերը տալ չենք կարող, փչացած լինելով ճանապարհին։

Այս խմբաքանդակի մասն էին կազմում ամենայն հաւանականութեամբ երկու ծայրերում Պօղոս և Պետրոս առաքեալները, որոնցից առաջնի պատկերը (պատկ· 101) տալիս ենք այստեղ, թէեւ վատ պահուած եւ կեղտոտուած։ Նոքա էլ քանդակուած էին մի մի քարի վրայ, միայն աւելի փոքր եւ առանց զարդարանքների, բայց դարձեալ կեղծ սիւների վրայ հաստատուած կամարի տակ, միայն աւելի փոքր, տեղի պակասութեան պատճառով։ Մեզ թւում է, թէ այդ հինգ քանդակները բեմի ճակատն էին կազմում։

Ժ·

ՊՌՈՇԵԱՆՔ ԺԵ· ԴԱՐՈՒՄ

ԺԴ· դարու կէսերին՝ հանգչում է մոնղոլ իլխանների հզօր պետութիւնը Պարսկաստանում՝ Թաւրիզ մայրաքաղաքով: Աբու–Սէյիդ (1315—1335), մեր յիշատակարանների մէջ յաճախ Պուսայիդ կոչուած, վերջին իլխանն էր, որի ժամանակ պահւում էր պետութեան միութիւնը, թէեւ ոչ առանց յուզումների: Նրա մահուանից յետոյ պետութիւնը իւր կարճատեւ հոգեվարքն էր ապրում, հիւծուած մոնղոլ զօրապետների երկպառակութեամբ եւ խաղալիք դարձած երկու հակառակորդ մեծ եւ փոքր Հասանների ձեռքում, առաջինը Ջելայիրեան ցեղից էր, իսկ երկրորդը Աբու–Սայիդի վէզիր Չօբանի թոռը՝ Տամուրտաշի որդին[1]):

Թաթարների մահմեդականութիւն ընդունելուց յետոյ արդէն դէպի վատն էր թեքուել Հայոց վիճակը: Յիշատակարանները՝ միակ աղբիւրը ժամանակի հայ պատմութեան համար, յուզմամբ են պատմում թաթարների հարկապահանջութիւնը· «յամենայն քրիստոնէից վասն հաւատոցն», կապոյտ նշան կարել տալը «ի վերայ թիկանց հաւատացելոցս»: Հարկահաւաքութեան պատրուակով կողոպտում են վանքերը, հալածում կրօնաւորներին[2]): Բայց մոնղոլների անկման հետեւեալ տասնամեակի դժբաղդութիւնները երբեք կարելի չէ համեմատել սրա հետ· անիշխանութիւնը, յափշտակութիւնը, սովը հասնում են գերագոյն աստիճանի· «ի թագաւորութեն զոք ոչ գոյ· այլ բարձեալ է թագաւորութի· քանզի իշխանք են խռովարարք եւ տատանեալք, ի վերայ միմեանց աղմկեալք, զոր ոչ կարէ բերան պատմել, զոր յայսմ ամի տեսին աչք մեր զաղէտ տարակուսանաց, զորս էրեսուն հազար մարդադէմ գազանաց ի վերայ երկրիս մերում յարձակեալք զնետս սրեալ եւ զաղեղն լարեալ եւ զթիւրս (զթո՞յնս) իւրեանց թափեալ, յարեան ի վերայ երկրիս մերում··· քանզի բազում գաւառս գերեցին եւ աւերելով կործանեցին, եւ զինչս արդիւնեաց (s!) զամենայնն յափշտակեցին եւ զամենեսեան զքրիստոնեայք կողոպուտ արարին, մերկ եւ բոկ եւ ոչ թողին ոչ մի ինչ ի վերա անձանց քրիստոնէից, այլ զանասունս տաւարաց ջոկս ջոկս առեալ տարան, զոչխարաց եւ զեզանց, զկովուց եւ զցլուց, զիշուց եւ զերիվարաց, զհանդերձս ի յանձնէ մերկացուցին··· որ յերէկ տան տանուտէր եւ ամենայն իրաւք լի, եւ այսաւր··· մերկ ի վերա մոխրոյ նստեալ»: Լի երկիրը աղքատացաւ մինչ այն աստիճան, որ չները սովից սատկում էին: Յիշատակարանի հեղինակը խօսում է միայն իւր գաւառի մասին, բայց պատկերն ընդհանուր էր: Մարդկային կարողութիւնից վեր էր տանելու այնպիսի մեծ նեղութիւն: Կենդանի մնացածները երանի էին տալիս մեռածներին, որ ազատ են «յայսմ տանջանաց»[3]):

Այս շրջանին է վերաբերում հաւանօրէն նաեւ մի անթուական յիշատակարան, գրուած Թեղենեաց վանքում, Դաւիթ գրչի ձեռքով, «ի ժամանակիս խառնիճաղանն ազգիս նետողաց··· ով ոք կարէ պատմել զաղէտս տարակուսանաց, որ ոչ աշխարհ եւ ոչ քաղաք եւ ոչ ագարակ եւ ոչ սրբայկրաւն (s!) վանորայք զխաղաղութի գտեալ, այլ համակ ի նեղութիս եւ ի խիստ հարկապահանջողաց աւերեալ լինէր աշխարհս· քան[զի] ոչ գոյր թագաւոր եւ ոչ իշխան եւ ոչ այցելու, այլ յամենայն կողմանց խռովութի եւ աղմուկ»[4]): Պակասը լրացնում է սովը, որ հաղուադէպ չէր այս շրջանի համար[5]):

Այս վիճակը շարունակւում է աւելի քան մի ամբողջ դար· երկու Հասաններից փոքրը եւ նորա եղբայր Աշրաֆը առ ժամանակ տիրում են Ատրպատականին եւ Հայաստանի մի կարեւոր մասին Թաւրիզ մայրաքաղաքով: Բայց Աշրաֆ սպանւում է 1258 թ· Ջանիբէկի կողմից, իսկ սրա կարճատեւ իշխանութեան յաջորդում են Ջելայիրեան Հասան մեծի ժառանգները· 1287 թ·

---

[1] A. Müller. Der Islam im Morgen u. Abendland. II. Berlin. 1887. 265 Стэнли Лэн-Пуль. Мусулм. Династ. 182· Սամուէլ Անեցի· շար· 158:

[2] Ազգ· Հանդէս, ԺԲ· 164: Փիրղալէմեան· Նշխար Հայոց պատմութեան· անտիպ: Այս աղբիւրները գրուած են 1318 եւ 1330 թ· թ·: Կան եւ ուրիշները:

[3] Արարատ· 1915, էջ 72-73, վերին Ագուլիսի եւ շրջակայքի հայերէն ձեռագրերը· Մեսրոպ վ· Մագուդեանի: Նաեւ Ձեռ· էջմ· № 1009 Ն· Յ·

[4] Ձեռ· էջմ· 4645:

[5] Անյայտ ժամանակագիր· Սամ· Անեցի· 169: Մեր յիշատակարանների ժողովածուից, դեռ եւս անտիպ· Հառիճի ձեռագիր 1419 թ·: Փարիզի ձեռագիր· 1429 թ·: Փիրղալէմեան· Նօտարք· 57, 59: Արարատ· 1910· 624:

Թաւրիզ աւերում է Թոխթամիշ խանը, մինչեւ գալիս է Լանկթամուր եւ գերազանցում իր աւերածութեամբ ամէնքին։ Աւելի լաւ չէր մեր դժբաղդ երկրի վիճակը Լանկթամուրի որդոց եւ Սեւ ու Սպիտակ խոյերի արշաւանքների ու պայքարների ժամանակ։ Մեծոփեցուց զատ՝ ժամանակակից գրիչները սարսռով են նկարագրում սրանց ձեռքով կատարուած ահաւոր գազանութիւնները[1])։

Մեր նիւթից եւ նպատակից դուրս է երկար կանգ առնել այս շրջանի աղէկտուր պատմութեան մանրամասնութեան վրայ։ Կամեցանք միայն ցուցումներ տալ, որ բուն թաթարական շրջանին յաջորդող այս տիրապետութիւններն ու պատերազմները մեծ վնաս հասցրին՝ երկրի տնտեսական–կուլտուրական աւերածութեան հետ՝ եւ իշխանական տների գոյութեան։ Անկարող զէնքի ուժով պահպանելու իրենց նախկին կացութիւնը, նրանք եւս ենթակայ են հալածանքի, յափշտակութեան, սպանութեան, գաղթի, ինչպէս եւ ժողովրդի ամբողջութիւնը։ Լանկթամուրից առաջ եւ նորա ժամանակ պարզ հալածանք ենք նկատում հայ իշխանութիւնների՝ Զաքարեանների, Օրբէլեանների, Դոփեանների եւ ուրիշների դէմ, որոնցից ոմանք հայրենազուրկ են դառնում, փախչում կամ իրենց ժողովրդի հետ գաղթում ուրիշ վայրեր։

Անիի եւ Զաքարեան տոհմի Աթապակ Շահնշահի գլխին եկած փորձանքը 1357 թ. առիթ ունեցանք անցողակի կերպով յիշելու առաջ (եր. 8 ծանօթ.)։ Նոյն տոհմից 1358 թուին Աթապակ Զազան, որդի Աթապակ Շահնշահի, Բջնիի մի արձանագրութեան մէջ պատմում է, թէ Մելիք Աշրաֆը «զմեր հայրենիքս զԲջնի քաղաք յինէ հուքմով խլեր եր, զիր նորտերն էսիր կացուցեր, եւ Հանի–բէկ նիազեցավ ու զքաղաքս ի հիմանց քակեց ու շատ յանուանի մարդ ի սուր քաշեց ու զեկեղեցիքս տապալեց ու զերկիրս ի չորս դիաց անբռնակ արար...»[2])։ Մի անյայտ ժամանակագիր ՊԼԵ (=1386) թուի համար նշանակում է. «թուրքն էառ զբերդն Որոտան եւ մեծ Վարդապետն Կախիկ (Որոտնեցի) գնաց փախստական ի Ծարայ եւ պարոն Գորգունէն դարդամահ եղեւ[3])։ Որոտան բերդը Օրբէլեանց իշխանութեան մասն էր։ Լանկթամուրի արշաւանքի ժամանակ Իւանէ իշխանի եւ նրա որդոց սեպհականութիւն, որոնցից մէկն էր Յոհան Որոտնեցին[4])։ Նոյնը հաստատում է եւ Որոտնեցու վկայաբանութեամբ Յայսմաւուրքի մէջ։ Հալածանքն սկսուած էր եւ բուն Օրբէլեանների կամ Բուրթելեանների դէմ, ինչպէս այդ ժամանակ յաճախ կոչւում էին Բուրթել երկայնակեաց իշխանի, Ելիկումի որդու եւ Տարսայիճի թոռան անունով։ Որոտնեցու աշակերտներից մէկը՝ Յակոբ գրիչ՝ ականատես դէպքերին՝ հետեւեալ նկարագրութիւնն է տալիս. «մինչդեռ անճառ ցնծութեամբ լցեալ կայաք, րաբունին (Յոհան Որոտնեցին), Կ. (60) աշակերտօքն ի բնիկ գաւառն իւր յերկիրն Որոտան, կդալով եւ գրելով զսբ մատեանս, մեղքն իմ ծովացեալ եհան զգունդս անօրինաց ի վր քրիստոնէից՝ մանաւանդ ի վր տանն Բուրդելի, որ եկին եւ առին զբերդն Որոտան, եւ հրենազուրկ արրին Սպատն (s!) որդի Նանիկին, Եւ կմէին ձերբակալ առնել զսբ րաբունիս մեր վս հյրենեացն ժառանգութե, եւ սա կմօքն այ զերծաւ ի նցնե, եւ, բ· ամ բոլոր յայլ եւ յայլ տեղիս շրջէր աշկտօք հդձ՝ կրդլով եւ ուսուցանելով»[5])։

Որոտնայ բերդի եւ Բջնիի կրկին առման Լանկթամուրի ժամանակ եւ ընդհանուր կերպով իշխանական տների հալածանքի կամ գերութեան մասին յիշում է եւ Գրիգոր Ծերենց Խլաթեցին՝

Իշխանք բազում ի տանց ելին
Եւ ի յընչից պարապեցին,
Յերկիւարացն գրկեցին
Եւ հետիոտս տանէին[6])։

Պռոշեանների մասին յատուկ յիշատակութիւն չունինք, բայց Տաթեւացու Հարցմանց Գրքի յիշատակարանից[7]) գիտենք, որ 1387 թուին Լանկթամուրի զօրքերի կողմից պաշարուած էր Շահապոնք բերդը, ուր եւ գտնւում էր հեղինակը. «եւ մեր նստելով իբր ի մետաղս կամաւոր դիպահոջ Շահապոնս կոչեցեալ ամրոցին»։ Պաշարումը նմանեցնում է վերջին դատաստանի օրուան իւր անպատմելիութեամբ եւ ահաւորութեամբ. «Յաւուր նոր կիւրակէի յասացեալն կրկնոյ զատկի. յանկարծահաս ժամու շարժեալ հեղեղաց ուխից խռովութեանց զօրաց, սաստկագին գոչմամբ եւ ահագնատեսիլ սուսերամերկ, կորովալին նետողաց, որք պատեալ, պահեալ, պաշարեալ զմեզ»։ Շատերը գերի էին ընկնում հէնց բերդի դռների առաջ, եթէ ուշացել էին ների մտնել, եւ նրանց հարազատներն ու սիրելիները ոչնչով օգնել չէին կարող: Հարուստ եւ աղքատ հաւասարապէս մատնուած էին սովի, յափշտակութեան. «յերեկօրեայ զառաւօտ խնդրէաք եւ ի նմա զեռանդն եռանեալք, այս ոչ շաբաթու եւ աւուրց, այլ ամաց երից սորին յերկարեալ եւ գործելոցն վրէժ ոչ կշիռ հատուցեալ: Եւ այս աղէտ տարակուսից շրջապատեալ զմեզ շրջագայութեան տոմարի հայկազեան սեռից հարիւրից կրկնակի քառից եւ վեցեակ վեցից»: Վերոյիշեալ անյայտ ժամանակագրի[1]) տուած տեղեկութեամբ այս արշաւանքն սկսուած էր Մուղանից ՊԼԵ=1386 թուի գարնանը, «յաւուրս աւագ զատկին». ասել է, մի ամբողջ տարի էր տեւել Սիւնիքի գրաւումը եւ այնտեղից Ճահապունեաց գաւառն անցնելը: Ե՞րբ ընկաւ բերդը եւ ի՞նչ բաղդ վիճակուեց Պռոշեաններին, որոնք, անշուշտ, այնտեղ էին իբրեւ բերդի եւ գաւառի տէր իշխանները, տեղեկութիւն չունինք: Յամենայն դէպս այդպիսի երկարատեւ պաշարումը, եթէ մի կողմից բերդի անմատչելիութեան պիտի վերագրել[2]), ոչ պակաս նաեւ ղեկավար Պռոշեանների քաջութեան: Հաւանօրէն բերդի անկումից յետոյ նրանց մի մասը ամրացաւ Վայոց ձորի լեռներում եւ շարունակեց իր գոյութիւնը:

---

[1]) Müller. Der Islam. 1887. 265/6, 284, 286 եւ բազմաթիւ հայ Յիշատակարաններ։

[2]) Ալիշան. Այրարատ. 272։ Սմբատեան. Գեղարքունիք. 320. «Ես Աթարակ Շահինշահ որդի Աթարակ Զազայի». Նոյն ձեւով եւ Շախաթունեան. եր. 183. ստուգութեան կարօտ է, թէ ո՞րն է ճիշդ ընթերցումը։ Կոստանեան. վիմ. Տար. 169։

[3]) Սամ. Անեցի. շար. 170։

[4]) Մեծոփեցին Որոտնեցուն կապում է Սիւնեաց հին իշխանական տոհմերի հետ (Շահնազ. հրատ. 14/15), բայց Օրբէլեանց տիրապետութեամբ նրանց ազատների շարքն անցած։ Գրիգոր Տաթեւացին հաստատում է իւր ուսուցչի իշխանական ծագումը, խնդրելով յիշել «զբազմերախտ հոգեշահ պարոն, զմեծ վրդն Յոհաննէս, որդի քաջի Իւանէի Որոտան իշխեցողի (Տաթեւի աւետարան. գրուած Գրիգորի ձեռքով)։

[5]) Ձեռ. էջմ. № 1067. Ն. Յ.։

[6]) Յիշատակարան Աղէտից. հրատ. Գր. Խալաթեանի. Արարատ. 1897. 178 եւ առանձին գրքոյկով։ Տես եւ Մեծոփեցի. Փարիզ 18/19։

[7]) Կ. Պոլիս. ռճիէ։ Ալիշան. Սիսական. (քաղուածօրէն). 238, 481։ Թոփճեան. Ցուցակ. 68։ Ձեռ. էջմ. № 2889. (Յաւել. Բ. 12)։

Ամիր–Հասան Բ.ով ընդհատւում է Պռոշեանց տոհմի հաստատուն յաջորդականութիւնը: Ինչպէս տեսանք, Տաթեւացին իսկ, որ 1387 թուին ապաստան էր գտել Ճահապոնք բերդում, չի յիշատակում բերդի պաշտպան իշխանի կամ իշխանների անունները: Մոնղոլական պետութեան անկումից մինչեւ Լանկթամուր, գրեթէ ոչինչ չգիտենք հայ իշխանութիւնների, դրանց թւում եւ Պռոշեանների մասին: Իսկ այնուհետեւ եղած տեղեկութիւնները կցկտուր են կամ զուրկ կուլտուր — պատմական նշանակութիւնից: ԺԵ. դարու առաջին քառորդին ոմն «պարոն Խոնդքարի» յիշատակութիւնն ունինք Սպիտակաւոր Աստուածածնում, որ հաւանօրէն Պռոշեան էր, թէեւ այս էլ հաստատ պնդել կարելի չէ.

«Զպարոն Խոնդքարն յիշեցէք ի քս թվ պծր» (գուցէ եւ պձր):

Արձանագրութիւնը գտնւում է մուտքի ձախ կողմը:

Պռոշեանների մասին յիշատակարանները կրկին խօսել են սկսում միայն ԺԵ. դարու երկրորդ կիսից. նրանց հոգեւոր եւ մտաւոր կեդրոնն այժմ Սպիտակաւոր Աստուածածինն է Սրկղունք աւանի հետ եւ ապա Գեղարդայ վանքը: Ժամանակի նշանաւոր անձնաւորութիւնը Աւագտէր «բանաւէր» վարդապետն է, որ մի քանի ձեռագիրներ ունի գրած: Դոցանից մէկը գրուած ՋԻԴ (=1475) թուին «ի յերկիրս Եղէգեաց, որ կոչի Վայոց ձոր, ի յանապատիս Բոլորաբերդոյ, առ դրան սբ Ածածնիս եւ սբ Կարապետիս եւ սբ ճգնաւորաց գեբեզմանացս», այսինքն Հասան Բ.ի շինած Սպիտակաւոր Աստուածածնում: Ձեռագիրը թուագրուած է «ի կթղկոսութե տր Սարգսի ընթանուր Հայաստանեայց ազգի, ի յահրի (s!) եպսուբի մերում գաւառի տր Յոհանիսի, ածահաճոյ եւ մաքուր սբ հայրապետի, թոռին մեծին Պռաւշայ, որ ե է առ դրան սբ Գեղարդեան եւ եղբաւր նորին տր Ստեփնսին, նորընծայ կուսակրաւն աբեղայի… եւ բարեհաւատ պրն Ջումին, թոռին մեծին Պռաւշայ՝ եւ սպարապետին Հայոց եւ որդոց նորին պրն Լաղաբէկին, Թուման բեկին, եւ եղբայր որդոց (s!) սորին պր Հայկազին, Ամիր Վասակին, Հաղբակին, Ամիր Հասանին, եղբարց տր Յոհանիսին եւ տր Ստփնսին…»: Աւետարանի յիշատակարանը տեղեկութիւններ է տալիս նաեւ գրչի հոգեւոր եւ մարմնաւոր ծնողների, եղբայրների եւ եղբօր որդիների մասին, բոլորն էլ կապուած Աստուածածնի վանքի հետ: Նա գրել է իր ձեռագիրը «առ ոտս երիցս երանեալ եւ քաջ հռետորի եւ բանիբուն վդի եւ անյաղթ փիլիսոփայի, վարժապետիս իմոյ՝ Սարգսի, զի որպես զարեգակն փայլէ յազգս հայոց: Եւ համշիրաք եղբարցս եւ ուսումնակցացս մերոց՝ Յակոբ վդին, Պղս վդին, Վրդան վդին, զոր տր ած պահեսցէ զոսայ ի փորձանաց սատանայի ամէն»[3]):

Նկարիչն է Աբրահամ Ծաղկող, որ գրչի եղբօրորդին է եւ աշակերտը: Արուեստը թէեւ բարձր չէ, բայց հետաքրքրական է: Թւում է, թէ պահել է որոշ չափով Գլաձորի աւանդութիւնները եւ տուել է ստացողների պատկերները (պատկ. 102): Պատկերի տակ ծունկ չոքածները՝ աջից՝ ծերունին Սատաղան է, նորա դիմացը որդին՝ Եղիշէ քահանան, որի համար գրուած է աւետարանը, իսկ ծունկ չոքած կինը՝ Դիլշատն է, Սատաղայի ամուսինը, պատկերների վերտառութիւնների համեմատ: Սկզբնազարդի մէջ սրածայր կամարի տակ նստած է Թագազարդ Մարիամ, որ ծիծը դրել է իր մանկան բերանում[4]): Ներքեւում բարեխօս Յովհաննէս Մկրտիչ անապատականի զգեստով եւ Ստեփաննոս նախավկայ մի ձեռքին բուրվառ, միւսում խնկաման: Բացի Մատթէոսից կան եւ միւս աւետարանիչներն ու նրանց սկզբնազարդերը: Մարկոսի սկզբնազարդի կեդրոնում նստած է մեծ աթոռի վերայ Ամենակալը, կողքերից Գաբրիէլ եւ Միքայէլ մի մի նիզակ ձեռքներին: Ղուկասի տակ՝ 104բ. Նկարիչն ինքը մակագրել է. «Զաբրահամ տկարս յիշեայ եւ ասա միշտ ողորմեայ».

---

1) Սամ. Անեցի. շար. 171:

2) նկարագրութիւնը եւ պատկերը տես էջ 27:

3) Ձեռ. էջմ. № 377 ԳՅ=2634 (Յաւել. Բ. 28):

4) Մինչեւ վերջերս Աստուածածնի պատկերագրութեան այդ տիպը համարւում էր զուտ արեւմտեան, մինչեւ որ Գահիրէի մօտ Սակկարայի վանքում գտնուեցաւ կոպտական մի որմանկար (Лихачев. 157—164): Ինձ յայտնի հնագոյն երեւոյթը հայ արուեստի մէջ այս տիպի Գլաձորի դպրոցի նկարիչ Դաւիթ Տարօնեցու գործն է, Եսայի Նչեցու աւետարանի մէջ 1323 թուից:



Մանրանկար Աբրահամ Ծաղկողի· Էջմ· № 2634· ՊԱՏԿԵՐ 102·

նոյնը եւ 170ա· Յովհաննու սկզբնազարդի տակ։ Լուսանցքի զարդերը սովորական են· հազուադէպ են եւ մանր պատկերներ բովանդակութեան համեմատ, ինչպէս 3ա· լուսանցքում· Աստուածածին ձախ թեւին մանուկը, թուշը թուշին կպցրած, նման Նշեցու աւետարանին։

Սոյն Աւագտէրն ունի գրած նաեւ մի Մաշտոց եւ մի Յայսմաւուրք։ Մաշտոցը, թէեւ թուական չունի, բայց կարելի է որոշել մօտաւոր ժամանակը Տէր Գրիգորի (Մակուեցին) հայրապետութեան տարիներով (1444—1466)։ Գրչի նոյնութիւնը հաստատւում է ոչ միայն գրի, այլ եւ գրչի անուան եւ ծնողների՝ Յովհաննէս եւ Մարթա՝ նոյնութեամբ։ Յիշւում է նաեւ Երեմիա կրօնաւորը, որ գրչի ուսուցիչն ու հոգեւոր ծնողն էր։ Առաջին ստացողն է Գուլիկ անունով մէկը· իսկ յետոյ «Սրկընուց» (Սրկղունք, տէր Յովհաննէսը իր կողակից Դաւլաթի եւ որդիների հետ[1])։

Յայսմաւուրքն էլ, որ գրուած է բոլորգրով, մագաղաթի վերայ, սկզբից եւ վերջից թերի է եւ վատ պահուած, ուստի եւ մանրամասնութիւններ չգիտենք գրչի, ժամանակի եւ տեղի մասին։ Բայց վկայարանութիւնների վերջում եղած հակիրճ յիշատակարաններից երեւում է, որ գրիչը նոյն Աւագտէրն է, ծնողները Յովհաննէս եւ Մարթա, իսկ հոգեւոր ծնողը Երեմիա ճգնաւորը, ուրեմն գրուած է Սպիտակաւոր Աստուածածնում[2])։ Ստացողն է Յովհաննէս եպիսկոպոս, եղբայրը Ստեփանոս քահանայ, որոնց ծնողներն են՝ հայրը Միրիշիկ, մայրը Շնահաւոր եւ քոյրը Մինքոյր, հաւանօրէն նոյն՝ քիչ առաջ յիշուած Պռոշեան Յովհաննէս եպիսկոպոսի հետ, որի եղբայրն էր տէր Ստեփանոս կուսակրօն աբեղան։ Մի տարակոյս միայն ունինք, որ Միրիշիկ անունը աւանդական չէ Պռոշեանց տոհմի մէջ։

Աւագտէր վարդապետի աշակերտն էր իր եղբօրորդի Դաւիթ գրիչ «ածային շնորհաւքն լի ի կարգ քհութե», որ մի քանի ձեռագրեր ունի գրած։ Դոցանից հնագոյնը մի աւետարան ՋԸ=1459 թուին գրած, «ի գեւղն, որ կոչի Սրկղունս, ընդ հովանեաւ սուրբ Գէորգիս եւ սուրբ Յակոբիս, ձեռամբ սուտանուն Դաւիթ իրիցի··· եւ առ ոտս երջանիկ եւ սրբասէր տէր Երեմիա աբեղիս»[3])։ Երկրորդը նոյնպէս աւետարան է, ՋԻԲ=1473 թուից· «ի ղանութե Հասան բէկին, թոռին Պայընտրոյ, որ տիրեաց բազում աշխարհաց եւ քաղաքաց, ի կաթղկսութեն Վաղարշապատու տր Ըրստակիսի, եւ մերում նահանգի պրնութես պրն Ջումին», Սրկղունիք գիւղում··· «եւ առ ոտս արիաջան հովւապետի Աւագտր վարդապետի, հաւրեղբաւրս մերո···»[4])։ Մի երրորդ աւետարան գրել է ՋԻԴ=1475 թուին «ի յաթոռակալութեն Վաղարշապատու տր Սարգիս կթղկսի եւ մերում նահանգի եպսութեն տր Յոհանիսի, որ է ի դուռն սբ Գեղարդեանն, ի յերկիրս Վայոց ձորոյ», դարձեալ Սրկղունիք գիւղում· «ի իշխանութե պրն Ջումին եւ որդւոցն իւրոց։ Առ ոտս նոյն Աւագտէր վարդապի,··· որ է ի յանապատն Բոլորաձորոյ, ի դուռն սբ Ածածնին եւ սբ Կարապետին, որ վերստին նորոգեաց շինութբ եւ պայծառութբ ժամատեղաց»։ Նկարողն է Աբրահամ աբեղան, գրչի եղբայրը[5])։ Նա գրել է եւ մի Ճառընտիր «ի թուիս հայոց· ՋԻԷ· եւ ի ղանութե

---

[1]) Ձեռ· Էջմ· № 1477 Ն· Յ· (Յաւել· Բ· 29)։

[2]) Մեր սեպհականութիւն, որ յանձնել ենք այժմ Էջմ· մատենադարանին (Յաւել· Բ· 30), նուէր ստացած Ա· Ձիլինկարեանից։

[3]) Փիրղալէմեան· Նօտարք· 192։

[4]) Ձեռագիր· ստացուած հայրապետական դիւանում, այժմ Էջմ· մատ· № 1312 Ն· Յ· (Յաւել· Բ· 5)։ Արդեօք նո՞յն է խաչիկ վարդ·ի Ցուցակ Բ· եր· 55 յիշուածի հետ։

[5]) Ձեռ· Էջմ· № 259/221, 317բ· (Յաւել· Բ· 6)։ Մի հատուած այս յիշատակարանից· Սմբատեան· Երնջակ· 176։

Յայղուպ պէկին որդոյ Հասան պէկին, թոռինն Աւթմանայ, զոր յայսմ ամի էսպան զեղբայրն իւր զսուլտան խալիլն եւ էառ զսուլթանութիւն: Եւ ի յաքոռակալութեն վաղարշապատու տր Սարգիս կթղի եւ մերում նահանգի եպսութե տր Յոհաննիսի եւ տր Եղիշէի հոգեւոր եղբարց»: *Ձեռագիրն ունի եւ մի սկզբնազարդ բուսական շնորհքով պատրաստուած: Գրչութեան մասին գաղափար է տալիս պատկ· 103: Ձեռագիրը գրուած է Սրկղունիքում եւ յիշուած է Սպիտակաւոր Աստուածածնի «արխաջան եւ բանիբուն» Աւագտէր վարդապետը իւր միաբաններով, որոնց մէջ են գրչի եղբայրները «տր Զաքարայ աբեղան» եւ «տր Աբրահամ ծաղկող, որ է փարթամ շնորհաւք ի լին»: Ստացողն է «տր Սարգիս», «զովեալն յամ լեզուաց»: Լուսանցքի մի նկատողութեան մէջ յիշուած է ոմն* «պրն Գուլգուն, որ մեզ նոր կարասէ գինի էր ուղարկել մի գաւ», *հաւանօրէն Պռոշեանց պայազատներից մէկը, որի մասին ուրիշ տեղեկութիւն չունենք*[1]): *Սրկղունքը, ինչպէս մենք յայտնել ենք, Պռոշեանց գլխաւոր աւանն էր կամ Նոտոցը Վայոց ձորում* (*էջ* 19—20), *որ նոյնացնում ենք ներկայ Բաշքենդ գիւղի հետ:*



Յիշատակարան Դաւիթ գրչի· էջմ· № 942· ճաշոց· ՊԱՏԿԵՐ 103·

Վերջապէս նա գրել է 1487 *թուին եւ մի շարական* «ի գեւղս որ կոչի Սըրկղունս, ընդ հովանեաւ սուրբ Գէորգի եւ սուրբ նշանացս, առ ոտս քրտնաջան, արի եւ քաջ Աւագտէր վարդապետի հօրեղբօրս մերոյ, եւ իմ եղբարցս տէր Զաքարիայ աբեղային եւ տէր Աբրահամ նկարողին»: *Ձեռագիրը գտնւում է այժմ Բրիտանական թանգարանում*[2]):

Դաւիթ գրչի եղբայրներն էին եւ Աւագտէր վարդապետի աշակերտները Զաքարիա եւ Աբրահամ աբեղաները, երկուսն էլ գրիչ, իսկ վերջինը նաեւ ծաղկող կամ նկարիչ, ինչպէս տեսանք վերը: Սրանք երկուսը միասին «ի թվականիս Հայոց մեծաց ՋԻԵ (=1476) ի դառնութե Պայանդուր Հասան բէկին, որդոյ Աւթման բէկին, ի կաթողիկոսութե տն Սարգսի եւ յաիրի (s!) եպսութե մերոյ նահանգիս տր Յոհաննիսի, ի յիշխանութե պրն Ջումին եւ որդոց նորին Ղլայբէկին, Ուլուս բէկին, Թուման բէկին, պրն Հայկազին եւ եղբարց նորին պր Ամիր Վասակին, Հաղբակին, Ամիր Հասանին, եղբարց տր Յոհաննիսին եւ տր Ստեփանոսին», *նորոգել են մի ճաշոց, պակասը գրել,* «վոսլայել», *ծաղկել եւ կազմել* «ի սբ մենաստանս, որ անուամբ յորջորջի Բոլորաձորոյ անապատ, առ դրան սբ Ածածնիս եւ շնորհաբաշխ սբ Կարապետիս եւ սրբոց ճգնաւորաց հանգստարանիս, ի յառաջնորդութե սբ ուխտիս նուաստ ի բանասիրաց Աւագտէր կոչեցեալ»[3]): *Յիշատակարանը գրուած է Զաքարիայի կողմից:*

Բայց Աբրահամ ինքն է գրել եւ ծաղկել 1482 *թ· մի աւետարան, որ այժմ գտնւում է Երեւանի պետական թանգարանում*[4]), *չորս աւետարանիչների պատկերներով, սկզբնազարդերով եւ լուսանցքի զարդերով, միջակ արուեստի, ինչպէս* № 2634 *ձեռագիրն էր,* «յերկիրս այս Վայի ձորի, որ Եղեգեաց գաւառ կոչի, Բոլորաբերդայ յանապ[ատ]ի, ի յահագին բարձր սարի»: *Ստացողն է ոմն Յակոբ քահանայ իւր զաւակների հետ: Ժամանակը թուագրուած է* «Յաղուպ բեակի», *Սարգիս կաթուղիկոսի, գաւառի տէր Յովհաննէս եւ Ստեփանոս եպիսկոպոսների անունով,* «եւ բաքունեացս ցանկալի, մեծն Սարգիս յոյժ գովելի եւ ի սորին աշակերտի Աւագտիրի եւ Յակոբի եւ Եսայի նորաբուսի, որք են շնորհօք հոգոյն ի լի»: *Ո՞վ է այս «մեծն Սարգիս յոյժ գովելի»ն, որ այնքան գովեստի էր արժանացած նաեւ Աւագտիրի կողմից, առ այժմ չգիտենք: Յիշատակարանի մի մասը, ինչպէս մէջ բերուած կտորից էլ երեւաց, ոտանաւորով է:*

Նա մի առ մի յիշում է եւ վանքի միաբաններին. «Զհոգեւոր հայրն իմ եւ զուսուցիչն եւ զառաջնորդ սբ տեղեացս զԱւագտէր վրդտն, զտր Ստեփանոս սբ· աբեղայս եւ դասավար, զտր Զաքարա հէրպտ եւ մարմնաւոր եղբայր իմ, զտր Դաւիթ աւաք եղբայրն իմ յոյժ շնորհալի եւ աւաք երէց գեղէից, զտր Նահապետ աշակերտս մեր կուսակրաւն, որ զթուղթս կոկեաց· զտր Կոստանդն· զտր Ալէքսանոս փակակալ· զԹուրքէլ դպիրն եւ զՈհան»:

Աբրահամ գրչի եւ ծաղկողի մի ուրիշ գործն է Մանր ումմունք՝ Վիեննայի Մխիթարեանց մատենադարանում, որ գրել, կազմել եւ ոսկով զարդարել է ի վայելս իւր հօրեղբօրը Աւագտէր վարդապետին եւ Դաւիթ երէց (*նախընթաց գրիչը*), *տէր Զաքարա եւ Մարգարա եւ Յակոբ եղբայրների: Վերջինս Սպիտակաւոր*

---

[1]) Ձեռ· էջմ· 909/942 (կար· 884), 488*բ*· (Յաւել· Բ· 31):

[2]) Փիրղալէմեան· Նշխարք Պատմ· Հայոց· անտիպ· այժմ էջմ· մատենադարանում (Յաւել· Բ· 7):

[3]) Ձեռ· էջմ· № 479/2781, 278*ա* (Յաւել· Բ· 32):

[4]) Ձեռ· № 1091 (Յաւել· 33):

Աստուածածնի կամ Բոլորաձորի անապատի տնտեսն էր։ Այստեղ էլ գրուած է ձեռագիրը՝ ՋԼԳ=1484 թըւին։ Հ. Տաշեանը մանրանկարչական խորանների, լուսանցքի զարդերի եւ մանրանկարչական տառերի համար նշանակում է. «բազմագոյն, ոսկւով եւ գեղեցիկ»[1]։

Ե՞րբ մեռաւ Աւագտէր վարդապետը, չգիտենք. 1498 թուին Սպիտակաւոր Աստուածածնի առաջնորդն արդէն նորա եղբօրորդին Զաքարիան էր, որի ժամանակ Վանական ոմն կրօնաւոր գրել է մի Մաշտոց, պատմական կարեւոր յիշատակարանով, սկսելով Փոնձաթաղ գիւղում, որ նոյնացնում են ներկայ Քեչիչքեանդի հետ, եւ տեղից տեղ փախչելով, վերջացնում Զորոյ վանքում։ «Եւ եղեւ զրաւ գծագրութե սորա ի թվիս հայոց Ջխէ, (առ) ոտս ածաբան վդպացս Վարդան վրդպի եւ Աբրահամ հռետորի. եւ առաջնորդ սբ ուխտիս տր Զագարիա բարէմիտ կրունաւորի (s!) եւ այլ կրաւնաւորացս»։ Վարդան վարդապետը Աւագտէրի ուսումնակիցն էր։ Օրինակի շնորհողներն են ուխտի առաջնորդը տէր Զաքարիան եւ իր Յակոբ եղբայրը միայնակեաց։ Ժամանակի Պռոշեան իշխանն էր պարոն Արղութա, «թոռն մեծ Ջումային»[2]։ Սպիտակաւոր Աստուածածնի արեւմտեան դրան ձախ կողմը մի կարճ արձանագրութեան մէջ 1494 թուին յիշւում է եւ պարոն Ճահպանի, որ դարձեալ նոյն տոհմից պիտի լինի. «ՋխԳ. զպր Ճահպանին յշ»։

Աբրահամ ծաղկողի մեզ յայտնի վերջին գործն է փոքրադիր, 12×83 սմ. մագաղաթի, բոլորգիր եւ նկարազարդ մի աւետարան։ Տների սկզբնագրերը, ինչպէս եւ նշանակալից բառերը՝ «տր», «ած», «հայր», «յս» եւ հատուածների առաջին տողերը ոսկեգիր, մանրանկարչական տառերով, խորաններով, տնօրինական բազմաթիւ պատկերներով եւ լուսանցքի զարդերով։ Եթէ համեմատելու լինինք 1475 թ. (№ 2374) կամ 1484 թ. աւետարանների նկարչութեան հետ, այստեղ անհամեմատ աւելի բարձր արուեստ կայ, մինչ այն աստիճան, որ կասկածել կարելի է, թէ Աբրահամի գործն է սա։

Տնօրինականների տակ Աբրահամը բացատրական մակագրութիւն ունի, տողերի սկզբնագրերը իր անուան սկզբնատառերով. օրինակ՝ Խաչելութեան տակ գրուած է.

Անեղ որդին հաւր ծոցածին
Բեւեռելով կայր ի խչին
Րամից հրէից քհյից
Աննայի եւ Կայիափային.
Յանձնէն զհանդերձն մերկացին,
Հանեալ ի խաչ բեւեռէին,
Ասաց փրկիչն զելի ելին
Եւ մեռաւ կամօ (s!) նա ի խաչին.
Իսկ բնութիւս աղամային
Կենդանացաւ մահուամբ նորին։

Նա յառաջդիմել է նաեւ իր վարդապետական հմտութեան մէջ. այժմ նա կոչուած է «քաջ րաբունապետն Աբրահամ» աւետարանի Գրիգոր դրչի կողմից, որ «վերին Նորավանքի» աբեղայ է, նախընթաց Վանականի կողմից էլ կոչուած «Աբրահամ հռետոր»։ Նա ստացել է այս աւետարանը ՋԽԴ=1495 թուին, բայց նկարչութիւնը շարունակուել է ՋԽԵ=1496, ՋԽԷ=1498, դուցէ եւ յետոյ։ Մարկոսի վերջում գրուած է. «թվ. ՋխԵ. Ստաթէի վանքս ծաղկեցաւ». միւսանգամ գալստեան պատկերի տակ, նկարչի և իր Զաքարիա եղբօր ոչ անհատական բնոյթ կրող պատկերներով, նշանակուած է. «թվ. Ջխէ», իսկ դիմացի երեսի ներքեւի լուսանցքում հազիւ նկատելի կարմրադեղով գրուած է. «Զբարեմիտ կինն եւ զերկիւղածն այ / Զազիզն, որ շատ կու ծառայէ մեզ եւ / ետ ընծա սբ աւետարանիս. յիշ. ի քս/ թ. ՋԾԱ»=1502։ Մատթէոսի նկարի տակ մակագրել է. «Զանարժան Աբրահամ, ստացիչ եւ նկարիչ սբ աւետարանիս, հանդերձ ծնողօք եւ վդաւք յիշեսջիք ի սբ եւ ածամերձ յաղօթս ձեր եւ ած զձեզ յիշէ, ամէն»։ Նա արդեօք Տաթեւի եւ վերին Նորավանքի կողմերից կրկին իր Անապատը դարձա՞ւ, թէ ոչ, չգիտենք։

Գրիգոր դրչի ձեռքով գրուած յիշատակարանի համեմատ ստացել է Աբրահամ այս աւետարանը «ի յիշատակ հոգւոյ իւրոյ եւ ի ժառանգութի ընդանեաց իւրոց կենդանեաց եւ ի փրկութի հոգոց ննջեցելոց իւրոց, հօրն իւրոյ... (ջնջուած է, բայց գիտենք, որ անունը Տէրտէր էր) եւ հաւրեղբաւրն ածաբան վդտն Աւագտէրի եւ մաւրն իւր Գոնցին։ Եւ աւագ եղբաւրն Դաւիթ քհնին եւ միւս եղբաւր բարէմիտ եւ կուսակրաւն աբեղային Զաքարիայի եւ կրտսեր եղբաւրն իւր միայնակեաց եւ սպասաւոր միաբանիցն Յկբին եւ այլ միւս եղբաւրն աշխարհի Մարգարին եւ եղբաւր որդոյն իւր դեռաբոյս եւ կուսակրաւն աբեղայի Վրդանիսի»[3]։

Վերեւ մի քանի անգամ յիշատակուեցան (էջ 123, 124, 125) Գեղարդում նստող Յովհաննէս եպիսկոպոսը «Թոռն մեծին Պռոշայ» եւ իր եղբայրը Ստեփանոս, նաեւ «պարոն» Հայկազ, Ամիր Վասակ, Հաղբակ եւ Ամիր Հասան, որոնք Ջումայի եղբօրորդիներն էին։ Այս Յովհաննէս եպիսկոպոսն էլ ոչ միայն ստացող էր, այլ եւ լաւ գրիչ։ 1486 թուին նա գրել է Գեղարդայ վանքում մի Յայսմաւուրք Կոտայքի Բարձապի[4] գիւղի եկեղեցու համար, «յառաջնորդութես Յոհս եպսի եւ հարազատիս իմոյ գեղեցկատիպ մանկանս տր Ստեփանոս եպսի»: *Ուրիշ տեղ խնդրում է յիշել* «զբազմամեղ գրիչս տր Յոհանէս եպս եւ զեղբայրն իմ զտր Ստեփանոս այսմ նախանգիս կոտայից»: *Տարաբաղդաբար նա տեղեկութիւններ չէ հաղորդում իւր տոհմի ոչ անցեալ եւ ոչ ժամանակակից անձանց մասին, բացառութեամբ պարոն Հայկազի, զի* «ժամանակս դառն եր, որ այլազգեաց շատ նեղութի քաշեցաք, որ յայսմ ամի խ· ազատորդի կալան, թէ տանկացէք· այլ ողորմածն ած ձեռնտու եւ աւգնական եղեւ նոցա, յորոց մի էր եղբայրն իմ պր Հայկազն եւ պր Աւագն, որ է ամիս կալուլական կացին եւ բզմ տուգանք տվին եւ ի հաւատոցս քրիստոսի ոչ դարձան»1): *Ո՞ր տոհմին էր պատկանում պարոն Աւագը, ասել չեմ կարող: Ժամանակակից յիշատակարանները, յիրաւի, հաստատում են, որ Սպիտակ Խոյի տիրապետութեան ժամանակ եռանդով առաջ էր տարւում կրօնափոխութեան խնդիրը ազատորդիներին եւ առաջաւորների մէջ, որոնցից մէկն էր եւ Թաւրիզեցի Խոջա Միրաքը, որ նահատակուեցաւ, հաստատ մնալով իւր հաւատի մէջ:*

---

[1] Տաշեան. Ցուցակ. 855։

[2] Ձեռ. էջմ. № 960 (Յաւել. Բ. 11)։

[3] Ձեռ. էջմ. № 577. Ն. Յ. (Յաւել. Բ. 34)։

[4] Բարձապի գիւղը այժմ կոչւում է Ելղովան, Ղըրխբուլաղի շրջանում։ Հնութեան մնացորդներ չկան, բացի մի անթուական խաչքարից, գիւղի մօտ եղած բլրի վրայ։ Հին մատուռը քանդել

Յովհաննէս եւ Ստեփանոս եպիսկոպոսների վերջին յիշատակութիւնն ունինք 1493 *թուին: Ստեփանոսի յաջորդն էր Տ. Բարսեղ եպիսկոպոս,* «որ է թոռն մեծին Պռաւշայ»2):

են եւ նոքը չինել: Գերեզմանատանը մի տափակ քարի վրայ «ՌՃԾԳ»=1704 թիւը: Դըրխըրուլաղ գիւղի հին անունն Աղասար է. Conybeare. Catalogue of the Armen. Manuscripts. 63.

1) Ձեռ. էջմ. № 131 Ն. Յ. (Յաւել. Բ. 35):

2) Սրուանձտեան. Թորոս Աղբար. Բ. 304:

ԺԱ·

ՊՌՈՇԵԱՆՑ ՄՆԱՑՈՐԴՆԵՐ ԺԶ· ԵՒ ԺԷ· ԴԱՐԵՐՈՒՄ

ԺԶ· դարու սկզբից սկսած մեր տեղեկութիւնները Պռոշեանց մասին դառնում են աւելի եւս կցկտուր եւ անորոշ մինչեւ ԺԷ·ի գրեթէ կէսերը: Ինչ որ ԺԴ· դարու կէսերից սկսած քաղաքական կացութեան, կործանարար արշաւանքների, շփոթութիւնների, տնտեսական եւ կուլտուրական արժէքների ոչնչացման մասին ասացինք, նոյնը կարող ենք կրկնել եւ ԺԶ· դարու եւ ԺԷ·ի սկզբի մասին: Գործողութիւնը նոյնն է, փոխւում են միայն գործող անձինք: Այժմ երեւան են գալիս քաղաքական երկու այլ մրցակիցներ, Պարսից եւ Օսմանցոց պետութիւնները, որոնք ձգնում են իրար ձեռքից յափշտակել Ատրպատականն ու Հայաստանը պարբերական արշաւանքներով: Եւ այս պայքարի մէջ ոտնակոխ է դառնում մեր երկիրը իր ժողովրդի, իշխանական եւ հոգեւոր դասի հետ: Արշաւանքներից ազատ, որպէս թէ խաղաղութեան շրջաններումն էլ անասելի կեղեքումներն ու հարկապահանջութիւնները ծծում են ժողովրդի տնտեսական եւ ստեղծագործական զօրութիւնը եւ շատերը գաղթի եւ փախստեան ճանապարհն են բռնում: Այն՝ ինչ որ Դաւրիժեցին հաղորդում է ԺԶ· դարու վերջերի մասին[1]), մասնակի երեւոյթ չէր, այլ հետեւանք քաղաքական ընդհանուր կացութեան ԺԶ· դարու ընթացքում:

Այսպիսի պայմանների մէջ, ի հարկէ, չէր կարող կուլտուրական յաջորդական յառաջդիմութեան եւ նրա ղեկավարների մասին խօսք լինել: Հայ փոքրիկ իշխանութիւնների մնացորդները աւելի եւս փոքրանում են, նուաղում, զրկուելով քաղաքական եւ կուլտուրական ազդեցութիւններից, մելիքի կամ գիւղական առաջնորդների աստիճանին հասնելով, իսկ մեր տեղեկութիւնները դառնում պատահական:

Այստեղ ամփոփում ենք գերեզմանական եւ վանքերի արձանագրութիւններից քաղած բոլոր այն նիւթերը, որոնք ենթադրաբար կարող են Պռոշեանների հետ կապ ունենալ, մանաւանդ որ նրանք մեծ մասով բանասիրութեան անյայտ են: Անկարելի չէ, որ մեր ենթադրութիւնները նորագիւտ աղբիւրներով սխալ դուրս գան ապագայում եւ յիշուած անձնաւորութիւններից ոմանք կապ չունենան Պռոշեանների հետ կամ նրանց ազատները լինին միայն, բայց եւ այնպէս աւելորդ չհամարեցինք զետեղել եւ այդ կցկտուր եւ մինչեւ իսկ անորոշ յիշատակութիւնները, ապագային թողնելով իրականն ու ենթադրականը պարզել, մանաւանդ որ մասամբ այդ մեր աշխատութեան բնոյթից է բղխում, ուսումնասիրութեան հետ և նիւթերի ամփոփումն տալ: Այդ նիւթերն այստեղ դնելու հիմք է ծառայել այն հանգամանքը, որ այդ անձանց արձանագրութիւնները կամ յիշատակարանները, «պարոն», «բեղ» տիտղոսներով, գտնւում են Պռոշեանց կեդրոններում եւ նրանց ազնուական ծագումն են մատնանշում:

Ամբողջ ԺԶ· դարում մի անձի մասին միայն անմիջական եւ հաստատ տեղեկութիւն ունինք, թէ Պռոշեան ծագում ունի, եւ այդ Զաքարիա Գնունեաց եպիսկոպոսն է, յայտնի իբրեւ գրիչ, մանրանկարիչ եւ տաղասաց: Զաքարիայի ծննդեան եւ պատանեկական կեանքի մասին չունինք որեւէ տեղեկութիւն: Ոտանաւորների վերնագիրների համաձայն նա կոչւում է «խծբծցի», «Գնունցի», «եպիսկոպոս ամենայն Գնունեաց»[2]): Ի՞նչպէս է Զաքարիան ընկել Գնունեաց կամ Ամկոյ (Բերկրի) երկիրը, յայտնի չէ: Գուցէ իշխանական տոհմերի դէմ եղած հալածանքների ժամանակ Պռոշեանց մի մասը գաղթել եւ հաստատուել է այս կողմերում, ինչպէս Օրբէլեանները 1438 թուին գաղթեցին դէպի Լոռի[3]): Բաղէշի եւ Վանի շրջաններում տոհմական կամ տեղերի անունները[4]) կարող են կռուան լինել այսպիսի ենթադրութեան:

Զաքարիայի գրական աշխատութիւններով զբաղուել են Վիեննայի Մխիթարեան հայրերից Տաշեան[5]) եւ Ակինեան: Մենք եւս անցողակի կերպով առիթ ենք ունեցել յիշելու նրա մասնակցութիւնը Սուտ Կալիսթենէսի Աղեքսանդրի պատմութեան խմբագրութիւնների մէջ[6]): ԺԳ· դարում արդէն Խաչատուր Կեչառե-

---

[1] Գ· տպ· էջմ· 18:

[2] Ակինեան· Զաքարիա եպիսկոպոս Գնունեաց եւ իր տաղերը· Վիեննա· 1910:

[3] Թովմա Մեծոփեցի· 117/118:

[4] Ս· Կանայեան· Ջոջանց տուն· Արարատ· 1910· 892· առանձին արտատպութեամբ եւս:

[5] Ուսումնասիրութիւնք Ստոյն Կալիսթենեայ վարուց Աղեքսանդրի· Վիեննա· 1892:

[6] Արարատ· 1918 թ·, 246, 261: 1919 թ·, 4, 8 եւ շար·:

ցին զբաղուել էր այդ գործով, այժմ Գրիգոր Աղթամարցին, նորա աշակերտ Զաքարիա Գնունեաց եպիսկոպոսը եւ սրանց ժամանակակից Յովասափ Սեբաստացին առանձին հետաքրքրութիւն են ցոյց տալիս դէպի այդ իւրատեսակ վէպը: Աղթամարցին կաֆաներ է գրել եւ կիսով չափ նկարազարդել Երուսաղէմի № 73 *ձեռագիրը, Մարգարէ Արճիշեցու գրչութեամբ: Իսկ Զաքարիան ոչ միայն կաֆաներ է գրել, այլ եւ գրել եւ նկարազարդել է երկու օրինակ: Յովասափ Սեբաստացին եւս գրել է եւ նկարազարդել Պերլինի* Ms. Or. № 805 *ձեռագիրը:*



Նեգտանիոս ցոյց է տալիս աստղերը· Մանչեստրի ձեռագրից·

ՊԱՏԿԵՐ 104·

Զաքարիայի առաջին օրինակը պատրաստուած է 1544 *թուին Պոլսոյ Աստուածատուր պատրիարքի համար, որ յատուկ ընծայականով մատուցել է նրան: Աւելի կարեւոր տեղեկութիւններ է տալիս գլխաւոր յիշատակարանը Զաքարիայի անձի մասին.* «Եւ ես թափուրս յամենայն բարեաց զԶաքարիա (s!) մեղապարտ եպիսկոպոս աշակերտ Գրիգորիս կաթողիկոսին եւ Յովսեփ վարպետին, որ յայսմ ամի փոխեցաւ ի դասս անմահից եւ եղեւ ինձ մեծ սուք: Եւ տեսի զփափաք եւ զսէրն փրերիս մերոյ՝ յանձն առի եւ Աստուծոյ աջողութեամբն կատարեցի գրով եւ ծաղկեալ ոսկով եւ երանգ գունով աւանդեցի սիրալիր եղբաւրս մեր տէր Աստուածատուր պուետիկոսին»[1]: *Յիշատակարանը գրուած է ՋՂԳ* (=1544) *թուին ի Սուլիմանատիր, որ Պոլսոյ եկեղեցիներից մէկն էր*[2]:

Գրիգորիս կաթուղիկոսին եւ Յովսէփ վարդապետին Զաքարիան յիշում է եւ ուրիշ տեղ, 1576 *թուին իւր գրած եւ նկարազարդած շարականի մէջ:* «Դարձեալ աղաչեմ յիշել ի տր զզուսուցիչքն (s!) իմ զշնորհազարդ եւ զպատուական հայրապետն զԳրիգորիս Աղթամարցին և զՅովսէփ վարպետն, որ շատ աշխատեցան ի յուսուցանելն իմ» (*Յաւել. Բ.* 36): *Յովսէփին վարպետ է անուանում նկարիչ լինելու համար, որ այդ ժամանակ սովորական տերմին էր մանրանկարիչների համար: Բայց նա եւ գրիչ էր եւ ոտանաւոր գրող*[3]:

Զաքարիան Աղեքսանդրի պատմութեան մի երկրորդ օրինակ պատրաստել է Հռոմում, տարաբաղդաբար ժամանակն անյայտ, եւ բերել է Հայաստան, Խաչատուր Կեչառեցու յիշատակարանների մէջ ներմուծութիւններ անելով եւ յարմարցնելով իրենց երկուսի անուան: Հէնց այդ ներմուծութիւններն էլ մեզ համար կարեւոր են, որովհետեւ միակ աղբիւրն են Զաքարիայի, դորա հետ եւ Խաչատուր Կեչառեցու, Պռոշեան ծագում ունենալու մասին: Այդ ներմուծութիւնները հնարաւոր է ճշդութեամբ որոշել նախազաքարեան ձեռագիրների համեմատութեամբ, որ կատարել է Հ. Տաշեան: Այդ տեղից մենք իմանում ենք, որ նա գրել է «ի մեծ քաղաքն Հռոմ առ պապն փռանկաց, ի յաթոռ նստեալ Պետրոսի եւ Պաւղոսի առաքելոցն, *սրբագրեալ ի գրոց հնոցն սակս աւգտի* (*ընդգծումները Կեչառեցու ազդեցութեամբ*) եւ զարդարեցի ոսկով եւ տնաւրինականով եւ ոտանաւորով ի փառս փրկչին, եւ բերեալ ի հայս պարգեւս մեծ վարդապետին եւ քաջ վարպետին (*հակառակ Տաշեանի օրինակի, աւելի ճիշդ*) իմոյ Եսայեայ եւ պարոն եղբարցն իմոց եւ հարցն Պռաւշանց տոհմին»: *Ունի եւ ուրիշ յիշատակութիւններ, ինչպէս.*

«Զվարդապետն աստուածազարդ զԽաչատուր
Կեչառեցի
Եւ ի շառաւիղէ նորին Զաքարիա ախմար Գնունցի,
Բազում ջանիւ նորոգել զյիշատակ հարանց իմ
նախնի»:

Խաչատուր Կեչառեցու բարանութեան տակը գրած յիշատակարանի վրայ,— «Որք լսէք զաղիողորմ բարանութիւնս զարմարող սորա զԽաչատուր Կեչառեցիս», *աւելացրել է* «եւ ի սոցին շառաւիղէ Զաքարիայ եպիսկոպոս՝ գծողս եւ նկարողս Աղեկսանդր գրոցս յիշել ի տէր»[4]:

Ո՞վ է այս Եսայի մեծ վարդապետ եւ քաջ վարպետը: Տաշեան եւ Ակինեան արդէն նկատել են, որ Եսայի Նչեցին լինել կարող չէ, ինչպէս կարծում էր Ալիշանը[5]: *Նչեցին վախճանել է* 1338 *թուին, ուրեմն եւ չէր կարող մի մարդու ուսուցիչ լինել որ կենդանի* էր 1576 թուին: Եթէ մեզ համար պարզ լինէր, թէ նա ծնուած է Վայոց ձորում, բոլորովին պարզ կը լինէր վերեւի ամբողջ վկայութիւնը Եսայի վարդապետի եւ վարպետի մասին «հարցն Պռոշեանց տոհմին» արտայայտութեան հետ:

---

[1] Տաշեան· 157: Ակինեան· 7· 46:

[2] Ձեռագիրն այժմ գտնւում է Մանչեստրի քաղաքային մատենադարանում № 2 եւ սեփականութիւն էր The John Rylands գրադարանի, իսկ աւելի վաղ Lord Grawford and Balcarres ընտանիքի:

[3] Արարատ· 1919· թ· 4—5· 33: Կոստանեան· Նոր ժողովածու· Վաղարշապատ· 1903 թ·, 42:

[4] Տաշեան· 88, 125: Ակինեան· 2, 10/11: Էջմ·ի Ն· 8· № 1522/782 Զաքարեան խմբագրութեան է պատկանում, առաջին (եր· 265/6), երկրորդը (88) եւ վերջինը (264) յիշատակարաններով:

[5] Այրարատ· 268:

Մենք տեսանք, որ Սպիտակաւոր Աստուածածնի Աբրահամ գրիչն ու ծաղկողը 1482 թուին «մեծն Սարգիս յոյժ գովելի» վարդապետի աշակերտների կարգում յիշում է «Եսայի նորաբուս»ին, «շնորհօք հոգոյն ի լի» մէկին, որ հաւանօրէն ապագայում դարձել է Պռոշեանց հոգեւոր այս կեդրոնի մեծ վարդապետն ու նկարիչ «վարպետը» եւ որին աշակերտել է Զաքարիան իւր պատանեկութեան շրջանում եւ միայն յետոյ հաստատուել Գնունեաց Խժիժ կամ Խժիչկ գիւղում, աշակերտել երկու Աղթամարցիներին եւ ապա Գնունեաց եպիսկոպոս ձեռնադրուել: Այս ենթադրութիւնը հաւանական է դառնում միանգամայն, երբ ի նկատի ունենանք, որ նա կոչւում է ե՛ւ «Խժրժցի», ե՛ւ «Գնունցի», ե՛ւ «Լըմեցի», որովհետեւ եղել է Լիմ անապատում եւս: Զաքարիան, ուրեմն, Հռոմում պատրաստած իւր օրինակը նուէր է բերել վերեւ յիշուած Եսայի վարդապետին, որ Սպիտակաւորի վանքումն էր ապրում, եւ Պռոշեանց տոհմին, որոնց բնակավայրն էր Սրկղունքը, ԺԵ. դարու ընթացքում այնքան յաճախ միասին յիշուած երկու վայրեր ձեռագիրների մէջ:

Ե՞րբ է նա թողել իւր աթոռը եւ Պոլիս ու Հռոմ անցել, չգիտենք, բայց 1538 թուից առաջ, ինչպէս եւ Հ. Ակինեանն է նկատել, երբ «Զաւրք անմարմնոցն» տօնաւորի մէջ արդէն իբրեւ «ի տանէ» հեռացած է եւ թափառական, իսկ Հռոմ 1544 թուից առաջ էր, թէ՞ յետոյ, չգիտենք. բայց հաւանական է աւելի առաջ, որի մի թեթեւ ապացոյց կարող է լինել Աստուածատուր պատրիարքի հացէին «ֆրեր» բառի գործածութիւնը: Յամենայն դէպս, 1549 թուին, նա Լիմ անապատումն էր, ուր մի աւետարան է գրել եւ նկարազարդել ոմն Յակոբի համար, յիշատակ հօրը «Սարխաշին եւ մօր Մախսումին», «ձեռամբ Զաքարա եպսկպի, ի գաւառս, որ կոչի Ամուկ, ի կղզին (s!), որ կոչի Լիմ, ընդ հովանեաւ սբ Գէորգա զաւրավարին, ի հայրապետութե տն Գրիգրիսի (Գրիգորիս փոքրն է եւ ոչ աղթամարցը)... ի թուաբերութես հայոց Ջ՛. Դ՛. Ը՛.»1):

Վերջին տեղեկութիւնը նորա մասին ունինք 1576 թուին, երբ գրել եւ նկարազարդել է մի Շարական շատ աւելի բարձր արուեստով՝ նկարչութեան եւ գրչութեան կողմից, քան նախընթաց ձեռագիրները: «Գրեցաւ եղանակաւոր տառս ի թուականութես հայոց Ռ.ԻԵ. ի բռնակալութե աւսմանց ազգին եւ ի հայրապետութե տն տր Առաքել կթղւղիկոսին սբ աթոռոյն էջմիածնայ (s!) ի յանապատիս Լիմն կոչեցեալ ընդ հովանեաւ տանարիս սրբոյն Գէորգայ, որ կառուցեալ կա նման վերին խորանին. ձեռամբ անարհեստ գրչի Զաքրիյ եպս նկարողի»: Յիշատակարանին մէջ թւում է իւր աշխատանքը մանրանկարչական եւ գրչութեան արուեստի մի քանի տերմիններով. «նախ զգիրն, երկրորդ զարհեստն զրճգլին յեվ զհիպիլին իմիսկոս: Երրդ զերկաթագիրն: Չրրդ զերեքխորանսն եւ զոնաւրինականքն տախտակ ոսկով եւ ազնիւ լաժվարդով, եւ նուրբ թփերով եւ ծաղկեալ գրով»2): Յիշատակարանի համեմատ Շարականի սկզբում պիտի լինէին եւ խորաններ, որ այժմ չկան:



Աղեքսանդրի ցլագլուխ ձին

Մանչեստրի ձեռագրից. ՊԱՏԿԵՐ 105.

Զաքարիան ոչ միայն գրել է եւ նկարազարդել Աղեքսանդրի Պատմութիւնը, այլ եւ իւր կողմից կաֆաներ աւելացրել, ինչպէս արել էին Խաչատուր Կեչառեցին եւ իւր ուսուցիչը Գրիգոր Աղթամարցին: Հ. Ակինեանը Զաքարիայի տաղերի հետ հրատարակել է եւ նորա կաֆաները, որքան հնարաւոր է եղել պարզել իւր ձեռքի տակ եղած նիւթերով եւ ձեռագիրներով, սակայն դոցանից մի քանիսը Զաքարիայի գործը լինել կարող չեն, ի նկատի ունենալով այդ կաֆաների մէջ ցուցադրուած բանաստեղծական տարբեր յատկութիւնները, թռիչքն ու պատկերաւորութիւնը: Տարբեր են նաեւ ձեռագիրների ցուցումներն այդ մասին: Ներկայումս վաղաժամ է ճշդութեամբ որոշել բոլոր կաֆաների իսկական հեղինակները, մինչեւ բաւականաչափ առաջ չհաւաքուին ձեռագիրների համեմատութեամբ: Այս խնդրում կարող է շատ կարեւոր նշանակութիւն ունենալ Երուսաղէմի № 473 ձեռագիրը, որ գրել է Մարգարէ Արճիշեցին եւ կիսով չափ նկարազարդել Գրիգորիս Աղթամարցին, ուրեմն եւ նախազաքարեան մի օրինակ Կեչառեցու, Աղթամարցու եւ աւելի հնագոյն կաֆաներով միայն3):

Ինչ վերաբերում է նրա տաղերին, երկրորդական

---

1) № 362 Ն. Յ. (Յաւել. Բ. 37):

2) № 1613 (Յաւել. Բ. 36): Ընդգծուածները չկարողացանք հասկանալ. աղաւաղուած յունարէն:

3) Տես Արարատ. 1919. մեր յօդուածը, «Գրիգորիս Աղթամարցի»: Իբրեւ նիւթ ապագայ ուսումնասիրութեան տալիս ենք էջմ.ի № 782 Ն. Յ. ձեռագրի լուսանցքների ցուցումները Զա-

են նրանք բովանդակութեան, բանաստեղծական յղացման, պատկերաւորման եւ զգացմունքի արտայայտութեան կողմից, շատ անգամ եւ բռնազբօսիկ։ Համեմատաբար լաւ են «Տաղ վարդին եւ բլբուլին» վերնագրով հատուածները, որ նմանողութիւն են Աղթամարցու մտքի, ձեւի եւ յաճախ արտայայտութեան կողմից։ Գեղարուեստականից աւելի նրանք ունին գրական–պատմական արժէք։

Աւելի բարձր է Զաքարիան որպէս գրիչ եւ նկարիչ։ Նրա չարականի գրչութիւնը ու նկարչութիւնը կարելի է մինչեւ իսկ ազնիւ համարել, մանաւանդ լուսանցքի փոքր զարդերն ու պատկերները, մանրանկարչական տառերի հետ։ Ինչպէս երեւում է նա 1544 թուի Աղեքսանդրի պատմութիւնից կամ 1549 թուի աւետարանից յետոյ, երկար ժամանակ զբաղուել է գրչութեամբ եւ մանրանկարչութեամբ, հետզհետէ աւելի հմտութիւն եւ ճարտարութիւն ձեռք բերելով։ Արուեստի յատկութեան կողմից միմեանց մօտ են վերոյիշեալ աւետարանն ու Աղեքսանդրի պատմութիւնը, հասակները երկար, այտերը նիհար, երկարաւուն եւ փոս ընկած, մարմնի կազմութեան եւ համաչափութեան թոյլ հասկացողութեամբ։ Բայց նրանք տարբեր արժէքներ են ըստ բովանդակութեան։ Մինչդեռ աւետարանի տնօրինականները առանձին նորութիւն չեն բերում հայ արուեստի պատմութեան համար իբրեւ սովորական երեւոյթ։ Աղեքսանդրի պատմութեան նկարչութիւնը գնահատելի պիտի համարել իր աշխարհիկ բովանդակութեամբ, ճոխ եւ բազմատեսակ պատկերագրութեամբ, շաբլոնականից զատ նաեւ ժամանակակից հագուստով, զէնքերով, երաժշտական եւ այլ գործիքներով, կահկարասիքով եւայլն։ Հարց է, թէ ո՞րքան ինքնուրոյն է Զաքարիան այստեղ։ Յովասափի եւ Զաքարիայի նկարչութեան մասին հաստատ ասել կարող ենք, որ նոքա իրար հետ կապ չունին մեր ձեռքի տակ եղած լուսանկարներից դատելով, իսկ Աղթամարցու եւ Զաքարիայի մասին կարծիք յայտնել կարող չենք միայն յիշողութեան վրայ հիմնուած։ Լուսանկար էլ չունինք։ Բայց Աղթամարցու ուրիշ նկարներից դատելով, ուսուցչի արուեստը աւելի բարձր է[1])։

Տարբեր է նաեւ Էջմ․ի № 782 Ն․ Յ․ ձեռագրից, որ ճոխ նկարազարդուած է ոմն Յակոբ Ջուղայեցու կողմից, թէեւ բնագիրը Զաքարեան խմբագրութեան է պատկանում եւ գրուած պիտի լինի ԺԶ․ դարու կէսերին[2]), ուրեմն եւ Զաքարիայից ոչ շատ ուշ։ Սակայն



Դարեհի դեսպանները Աղեսանդրի առաջ․
Մանչեստրի ձեռագրից․
ՊԱՏԿԵՐ 106․

նախնական աւանդների ազդեցութեան ապացոյցները նկատելի էին Զաքարիայի վրայ, նոյն իսկ մեր ձեռքի տակ եղած փոքր չափով նիւթերի համեմատութեամբ։

Մանրանկարներով զարդարուած Աղեքսանդրի պատմութեան ձեռագիր ունինք աւելի վաղ ժամանակից, քան ԺԶ․ դարը։ Վենետիկի Մխիթարեանների մատենադարանի № 424 ձեռագիրը, որ բնագիր է ծառայել 1842 թուի հրատարակութեան, համարւում է ԺԳ․ դարու գործ։ Նկարչութեան եւ գրչութեան մասին գաղափար ենք ստանում Հ․ Երեմեանի «Գրական պատմութիւն եւ Գեղեցիկը» աշխատութիւնից[3]), ուր նմանահանութեամբ մէջ են բերուած հինգ երես։ Գրիչը պիտի լինի ոմն Ներսէս Սարկաւագ[4]), իսկ նկարիչը տարբեր, հաւանօրէն, եթէ բոլորգրով գրած բացատրութիւնները նկարչինն են[5])։

Արդ, համեմատելով Զաքարիայի մի քանի լուսանկարները 1544 թ․ Աստուածատուր պատրիարքի համար գրած օրինակից, տարաբաղդաբար միայն մէկն է ըստ բովանդակութեան համապատասխան Հ․ Երեմեանի հրատարակած պատկերին, առնուած ձեռագրի էջ 94–ից Աղեքսանդր եւ Ստարադրաս քրմուհու մօտ։ Բայց այդ մէկն էլ բաւական է փոխառութեան իրողութեան հաստատութեան համար։ Զաքարիայի նկարի մէջ եւս անձանց դասաւորութիւնը նոյն է Վենետիկի ձեռագրի հետ։ Աղեքսանդրը կանգնած է, գլուխը թեքած եւ ձեռքերը մեկնած ճիշդ նոյն ձեւով․ Ստարադրաս ծունկ է չոքել, իրանով դէպի առաջ թեքուել եւ ձեռքերը մեկնել դարձեալ նոյն ձեւով․ պատկերների վերտառութիւնները նոյն տեղերում, մինչեւ իսկ պահուած

քարիայի նկատմամբ, համեմատելով Հ․ Յ․ Տաշեանի եւ Ակինեանի հրատարակութիւնների հետ․ (Յաւել․ Գ․ 2)։

[1]) Ձեռ․ էջմ․ № 962 Մաշտոցի մէջ կան Գրիգորիսի չորս մեծ մանրանկարներ բովանդակութեան հետ կապուած։

[2]) Արարատ․ 1919․ 10․ Մեր յօդուածը․ Գրիգորիս Աղթամարցի։

[3]) վենետիկ, 1915․ 178, 180։

[4]) Տաշեան, Սուտ Կալիսթենէս․ 87։

[5]) Հ․ Տաշեանի հետ մենք էլ կասկածելի ենք համարում ձեռագրի այդքան վաղ ծագումը, բայց աւելի հին քան մեր երեք քանաստեղծ նկարիչները, եւ ոչ ուշ քան ԺԵ․ դարու առաջին կէսը։ Արդեօ՞ք նկարչութեան օրինակի ծագումը մինչեւ Կեչառեցին չի հասնում, ինչպէս խմբագրութիւնը։ խաչատուր Կեչառեցու այսպիսի աշխատութեան մասին անմիջական տեղեկութիւն չունենք, բայց անկարելի չէ, քանի որ նա էլ գրիչ էր եւ նկարիչ, որ կը տեսնենք իր տեղում։

է վանդակի եւ կամարակապ զմրէթարդ շէնքի գաղափարը երկուսի մէջ։ Կան եւ փոքր տարբերութիւններ երկուսի մէջ։ Մինչդեռ բոլորովին ուրիշ է Յակոբ Նըկարչի ձեւակերպութիւնը, պարսկական նկատելի ազդեցութեամբ։ Այսպիսի նմանութիւնները պատահական լինել կարող չեն, այլ անմիջական, բայց աւելի հաւանօրէն հեռաւոր օրինակների յարաբերութեամբ կամ փոխազդեցութեամբ։ Զաքարիայի եւ Վենետիկի № 424 ձեռագրի արուեստն իրենց որակով շատ են տարբեր միմեանցից. № 424-ի նկարիչը շատ աւելի կարող մէկն է երեւում դէմքերի, շարժման եւ կացուածքի որոշ և հաստատուն ձեւակերպութեամբ. բայց Զաքարիան էլ անարժէք չէ, մանաւանդ եթէ ապագայում համեմատութիւններով պարզուի, թէ ի՛նչ չափով ինքնուրոյն է եւ ի՛նչ չափով հետեւող։

Մանրանկարչական արուեստի պատմութեան կարեւոր եւ ուսանելի մի գլուխը կը կազմէր պատկերազարդ կալիսթենեանների համեմատական ուսումնասիրութիւնը։ Գուցէ, որոշ չափով խմբագրութիւնների ուսումնասիրութիւնը եւ աղերսը յունական բնագրի հետ, որ կատարել է օրինակելի ջանասիրութեամբ Հ. Տաշեանը, կ՚օգնէր նաեւ այս հարցի լուսաբանութեան, թէեւ չըպէտք է կանոն համարել, թէ պատկերազարդութիւնն էլ միշտ բնագրի ընթացքն է ունեցել։


Եամենիաս փողահարը Աղեքսանդրի առաջ· Մանչեստրի ձեռագրից·
ՊԱՏԿԵՐ 107·

Զաքարիայի Աղեքսանդրի պատմութեան մասին գաղափար ունինք միայն Աստուածատուր պատրիարքի օրինակից, Մանչեստրի քաղաքային մատենադարանի թիւ 2, իսկ Հռոմից Հայաստան բերուած ձեռագրից, որ նոյնպէս նկարազարդ է, տեղեկութիւն չունինք։ Վենետիկի Մխիթարեան հայրերը, որոնց մատենադարանումն է այդ ձեռագիրը, հնարաւորութիւն ունին իրագեկ անելու երկու օրինակների նոյնութեան կամ տարբերութեան մասին։ Մանչեստրի կամ Կրաֆորդեան ձեռագրի պատկերների թիւն է 119 ըստ Տաշեանի տուած տեղեկութեան, ուրեմն շատ ճոխ նկարազարդուած, որոնցից մի քանիսը ցուցադրում ենք այստեղ, օգտուելով Տ. Տիրայր արքեպիսկոպոսի սիրալիր կերպով մեզ տրամադրած լուսանկարներից։ Տարաբաղդաբար չենք կարող ձեռագրի այն երեսները նշանակել, որտեղից առնուած են պատկերները։

Հետագայ հատուածների մէջ յիշուած անձնաւորութիւնները ենթադրաբար միայն Պռոշեան ենք համարում։ Ածոպայ վանքի (էջ. 26, 31) գերեզմանատանը՝ եղել է մի տապանաքար փառաւոր խաչքարով, մնացել է մի կտորը միայն պատուանդանի հետ. տապանաքարի վրայ գրուած է.

Այս ե տապան որ Վրթանէս... (երեք տառ պակաս, որ կարելի է կարդալ «եպս») ին որդի Ամ (? մի տառ) բասխոսին? / Թռոն Ապուտահլին որդոյ Ղութլու բէկին Թռոն Գ / եղկա եւ մեծի Արկար իշխանին բարի ալեաւք եւ Ծ / ագկեալ գաւազանաւ, հանգիստ խաղ... Թվ. ՋԻԲ=1473 (թէ՞ ՋԽԲ)։

Դժուար չէ որոշել այս Վրթանէս եպիսկոպոսի անձնաւորութիւնը, որի մասին Դաւրիժեցին մեզ բաւարար տեղեկութիւն է տալիս։ Աղթամարից նա է գողացել եւ Էջմիածին բերել Լուսաւորչի աջը, որի համար եւ արժանացել է կաթուղիկոսների եւ ժողովրդի երախտագիտութեան։ Ծերութեան հասակում նա քաշւում է Ոծոպի գիւղը, իր ազգականների մօտ եւ այնտեղ կնքում իր մահկանացուն. «եւ թաղեցաւ ի թուին ՋԽԲ=1493, որպէս եւ գրեալ է ի վերայ տապանին իւրոյ»[1]։ Այստեղ կարող է տարկութեան առիթ տալ թուականների տարբերութիւնը։ Բայց պարզ է, մեզնից մէկն ու մէկը շփոթել է եւ սխալ կարդացել «Ի» եւ «Խ» տառերը։ Հաւանական է սխալը իմ կողմից լինի, «Խ»ի բնորոշ մասնիկը ժամանակի ընթացքում մաշուած եւ ես «Ի» ընդունած լինիմ «Խ»ի փոխարէն։

Վրթանէսի տոհմաբանութեան մէջ չկայ որեւէ ակնարկ Պռոշեան լինելու մասին։ Իսկ Դաւրիժեցին լռում է նաեւ նորա ազնուական ծագման մասին. բայց անհաւանական չէ, որ նա Պռոշեանների երկրորդական ճիւղերից լինի, որոնք իշխում էին Ածոպում։ ԺԳ. դարու առաջին կիսում Վասակ (Բ) Խաղբակեանն էր տեղական իշխանը, Ամիր-Հասան Բ.ի եղբայրը (էջ 107)։

Վրթանէսի տոհմական յաջորդականութեան ապացոյց կարող է լինել գիւղի եկեղեցու բակում մի ուրիշ գերեզմանաքարի արձանագրութիւն.

Այս է տապան Ամիրին որդի Ա (թէ՞ միացած Սա) ակիլ բէկին Թռոն Ամիրասին. Թվ. ՋԾ (=1501)։

Պարզ է, որ Ամիրը Վրթանէս եպիսկոպոսի եղբօրորդին է։ Գերեզմանաքարի մի կողմի վրայ ընդաւոր Թուենկի եւ Զամ է քանդակուած. քարի շքեղութիւնը ապացոյց է, որ հասարակ գիւղացի չէ նորա տակ հանգչողը։

---

[1] Գ. տպագր. էջ 427—731։

Գեղարդայ վանքի 1559(?) թուի մի արձանագրութեան մէջ երեք իշխանազուններ «Սմբատեցիքս? պարոն Ջումէս, պարոն Միրզայ պէկիս, պարոն Բիրթէս» իրենց հայրենական մուլքը այգին, բաղչէն վախմ են տալիս «ի դուռն սբ Գեղարդին»: Թուականը կասկածելի է, բայց հաւանօրէն ՌԸ=1559: Կասկածելի է եւ «Սմբատեցիքս» ընթերցուածը, կարող է լինել «Տմբատեցիքս»: Արձանագրութիւնը գտնւում է ներքեւի յարկի արեւմտեան վիմափորի (տ· էջ 55· 59 եւ չար· պատկ· 45) հիւսիսային եւ արեւմտեան որմասիւների մէջ (պատկ· 108)· Նոյն անունները կրկնւում են արեւմտեան պատի վերայ փորագրուած խաչերի մօտ (պատկ· 109· Յաւել· Ա· 35), բայց երրորդ անունը պարզ «Բուրթէլ» գրուած: Ջումայի անունը առիթ է տալիս մտածելու, որ նա ԺԵ· դարու երկրորդ կիսում յիշուած Ջումա Բ·ի թոռն էր կամ թոռնորդին:



Պռոշեանց? արձանագր· Գեղարդում· ԺԶ· դար· ՊԱՏԿԵՐ 108·

Հայրապետ եպիսկոպոսի պատուէրով Խաղ գրիչը մի Մաշտոց է գրում նորա համար «ի թուականութես հայոց ՌԹ (=1560) ի երկիրս Արարատեան, ի ձորս Քեղոյ, ի վանքս, որ կոչի Վանըստան, ի դուռն սբ ածածնիս»: Յիշատակարանի մէջ Հայրապետ եպիսկոպոսը յայտնում է, որ Մաշտոցը գրել է տուել իւր հօր «Խէսարի եւ մօր Գիւլիւլի» յիշատակին, եւ «եղբարցն իմ պրն Միրաքին, պրն Պռոշին եւ ամ արեան մերձաւորաց»: Միաբանների շարքում յիշում է նաեւ իւր «հայրաքիրն պրն ապաշխարող Արայիշն, որ բազում ժամանակ ծառայեց վանիցս»· (Յաւել· Բ· 38): Հայրապետ եպիսկոպոսի մասին եւս պարզ յիշատակութիւն չունինք, թէ ծագմամբ Պռոշեան է, բայց հաւանական ենք համարում հետեւեալ հիմունքներով: Նախ, Քեղուայ ձորը, ինչպէս եւ Վանստանը Պռոշեանց սեպհականութիւն էր (էջ 34): Երկրորդ, ԺԵ· դարում հաստատուն փաստերով տեսանք, որ Քեղուայ ձորին կից Գեղարդի եպիսկոպոսութիւնը տոհմական էր եւ բոլորն էլ Պռոշեաններից: Մենք կը տեսնենք, որ ԺԷ· դարումն էլ մի շարք եպիսկոպոսներ ունինք նոյն տոհմից: Պէտք է ենթադրել, որ ԺԶ· դարու եպիսկոպոսներն էլ նոյն տոհմից են: Վերջապէս Հայրապետ եպիսկոպոսի եղբայրներից մէկի «պրն Պռոշ» անուանակոչութիւնը նոյն տոհմի աւանդութիւնն է մատնանշում: Այս դէպքում պէտք է ենթադրել, թէ Հայրապետ եպիսկոպոսի հայր Խեսարը Ջում Բ·ի կամ նորա ժամանակակից իշխաններից մէկի որդին էր:

Ածոպայ կամ այժմեան կոչմամբ Բաղամլուի վանքը մէկն էր Պռոշեանների հոգեւոր կեդրոններից (էջ 25, 31)։ *ԺԳ· դարում յիշւում է Պետրոս եպիսկոպոս այս վանքում· պատահական է՞ր այդ, թէ յարատեւ եպիսկոպոսական աթոռ, ասել չենք կարող։ Յամենայն դէպս, յիշատակութիւն չունինք մինչեւ ԺԶ· դարու երկրորդ կէսը, երբ Յովհաննէս եպիսկոպոսը շինում է ներկայ վանքը, շատ քանդակներ եւ արձանագրութեան մնացորդներ զետեղելով պատերի մէջ։ Շինութեան արձանագրութիւնը գտնւում է վանքի հարաւային դրան ճակատին, որտեղ քանդակուած Աստուածածնի պատկերի մօտ·*

Թ· ՌԻ· (= 1571)·

Կամաւն այ եւ օժանդակութբ Յոհանէս եպսի հրաշակերտեցօ եկեղցս Նաոն սբ Ածած·



Պռոշեանց ? արձ· Գեղարդում· ԺԶ· դար· ՊԱՏԿԵՐ 109·

Սոյն Յովհաննէս եպիսկոպոսը մի ուրիշ արձանագրութիւն ունի արեւմտեան դրան ճակատին զարդարուն խաչքարերից մէկի տակ·

Սբ խչս յիշատակ է Յ / ոհաննէս եպիսկսին·

Այս Յովհաննէս եպիսկոպոսը, ինչպէս եւ քիչ յետոյ յիշուելիք Մարտիրոս եպիսկոպոսը Գեղարդայ եպիսկոպոսներ էի՞ն, որ հովւում էին Սրկղունեաց կամ Վայոց ձորի հետ եւ այս շրջանը, եւ Պռոշեան ծագում ունէի՞ն, ասել չենք կարող։

ԺԶ· դարու վերջերին եւ ԺԷ·ի սկզբին Գեղարդի եպիսկոպոսն էր Աստուածատուր, Մելքիսէդ կաթուղիկոսի կուսակիցը ընդդէմ Սրապիոնի, Հաւուց Թառի եւ Բջնոյ Մանուէլ անունով եպիսկոպոսների հետ, որոնցից առաջինը Պահլաւունի պիտի լինէր, Գրիգոր Մագիստրոսի տոհմից, եւ երկրորդը Աչիբէկենց տանից։ Հաւուց Թառի եւ Գեղարդի եպիսկոպոսները հրաւիրակ հանդիսացան Շահ Աբասի արշաւանքի ժամանակ, իրենք էլ զոհ դառնալով եւ սպանուելով Գեղարդայ ձորի քարայրներից մէկում[1])։

Եթէ Գեղարդի եւ Ածոպի եպիսկոպոսութիւնները միացած էին, սրա յաջորդը պիտի լինէր Մարտիրոս եպիսկոպոս, որ «վերստին նորոգեալ», շինել է «զգաւիթ եկեղեցոյս» (Յաւել· Ա· 36)։ *Մի յիշատակարանի մէջ,* 1611 *թուին, ասուած է նորա համար, թէ* «շատ երախտիք ունի դուռն սբ Նշանիս Խոտակերաց· ոչ միայն զժամատունս շինեաց, այլ եւ այգիքն ամենայն խափանեալ անկեալ կայր ի ձեռս անօրինաց· վերստին նոր գնեց եւ երետ յիշատակ սբ Նշանիս»[2])։ *Նա է շինել տուել «Խոտակերաց սուրբ Մինաս»ի հաւասարակող արծաթի խաչը, որի հետեւում արձանագրուած է·*

Սբ Նշանս Խո / տակերաց բար / եխօս է Մարտիրոս եպսկսին / ծնողացն Զուլթղու բէկին, որ նորոգեց իւր յիշ / ատակի, Սաթլմշին, տր Բարս / ղին· թվ· ՌՀԳ (=1624)։

---

[1]) Առաքել Դաւրիժեցի· Գ· տպ· 12, 17, 47։

[2]) Մեսրոպ Արքեպիսկոպոս Սմբատեանց· Նկարագիր Երնջակայ սուրբ Կարապետի վանից եւ շրջակայից նորին· Տփխիս· 1906· 242։

Տփխիսի Շամքորեցոց եկեղեցու մի արծաթապատ աւետարան գրուած է «ի թուին հայոց ռհը=1629 ի յերկիրս Վայոց ձոր, ի գեօղս, որ կոչի Սրկղունք, ի դուռն սբ Գէորգայ եւ այլ սրբոց, որ աստ կան հաւաքեալ· ի կաթուղիկոսութեան սուրբ էջմիածնայ տէր Մելքիսէթի եւ առաջնորդ տեղւոյս Յովհաննէս եպիսկոպոսի»[1]: Մենք շատ յաճախ տեսանք, որ Սրկղունքը Գեղարդայ Պռոշեանց եպիսկոպոսութեան մասն էր, ուրեմն եւ այս Յովհաննէսը Գեղարդայ եպիսկոպոս էր:

Նոյն Սրկղունքում, որ Վայոց ձորի ներկայ Բաշքենդն է (էջ 20), Ենովքի կալի մօտ, գիւղի հիւսիսային կողմը եղած հանգստարանում կայ մի գերեզմանաքար, այսպիսի արձանագրութեամբ.

Այս է հանգիստ Ղալաբէգին, որ է / որդի Քարամին. Թվ. ՌՃԹ=1660:

Ածոպայ վանքի հարաւային դրան ճակատին, Յովհաննէս եպիսկոպոսի արձանագրութեան տակ գրուած է հետեւեալը.

Ես տր Ղազարս ի գեղէն Մարտիրոսէն, շինել ետու Թումա / իզ դուռս սբ ածածնիս վս ծնողաց իմոց պարոն Աղաճանին եւ կենակցին Սիրմարքին եւ եղբօրն իմոյ Վէլիճանին, կողակիցն Փարուն եւ կողակցին իմոյ Մարխանին Թվ. / ՌՃԻ=1671:

Սորա տակը.

Ես Մարտիրոսեցի պարոն Լալէս ետո (s!) բաժին: Ժ: Թուման ի ? հոգոյ հաւրն / իմոյ Մարտիրոսին, որ նաո ? ամէն գործն կատարեաց եւ մաւրն իմոյ / Մուրասին: Է: Թուման տվի սբ ածած (պատկ. 110):

Սորա կողքին.

Խաչս իշակ է (s!) Լալին եւ կողակցին Կուլիխանին / եւ որդոցն Ավգին, Հախնզ / արին, Մարտսին (Մարտիրոսին), եւ եղբս իմ պարոն Էլխազին, որ տվաք: Դ: Թուման սբ եկղյս. Թվ. ՌՃԻ (=1671):

Եկեղեցու ներսը հիւսիսային պատին.

Խչս յշկէ, խչս յշկէ, խչս յշկէ, խչս յշկէ / խչս յշկէ Մուրադին եւ Մուրասին, Էլխաչին, Կուլլիխանին, Լալին եւ / կողկցն հօնկլյն (հանգուցելոյն) Շահզատթումբ. Մարխանին մօրն, Մարտիրոսին ՌՃԻ (1671):

Մարտիրոս գիւղը, որտեղից ծագում են այս արձանագրութիւնների մէջ յիշուած անձինք, Պռոշեանց կեդրոններից մէկն էր Ամիր Հասան Ա.-ի ժամանակ (էջ 23, 76, 77 չ.) եւ գտնւում է Ածոպից դէպի հիւսիս, Շահապունեաց եւ Վայոց ձորի անջրպետ կազմող լերան վրայ, Եաղիւրդ գագաթի ստորոտում: Ածոպը, բայց աւելի հաւանական, Մարտիրոս գիւղը պէտք է լինէր Խորայէլ Օրբի հայրենիքը, որ, ինչպէս կը տեսնենք Պռոշեանց տոհմի վերջին մոհիկանն էր պատմութեան մէջ:


Պռոշեանց? արձանագր. Ածոպայ վանքում. ԺԷ. դարում. ՊԱՏԿԵՐ 110.

---

[1] Յաւել. Բ. 7:

ԺԲ·

ՊՌՈՇԵԱՆՑ ՎԵՐՋԻՆ ՇԱՌԱՒԻՂՆԵՐԸ ԵՒ ԻՍՐԱՅԷԼ ՕՐԻ

Պռոշեանց տոհմի մասին արձանագրութիւններն ու յիշատակարանները վերջին անգամ խօսել են սկսում ԺԷ· դարու երկրորդ կիսին: Մենք յիշել ենք, (եր· 54), որ Պռոշի շինել տուած Գեղարդի պահարանը 1687 թուին նորոգել է տուել նորա շառաւիղներից մէկը՝ Գեղարդայ վանքի առաջնորդ Դաւիթ վարդապետը: Պահարանի եռեւում նա տալիս է թէ Պռոշի նախկին արձանագրութեան պատճէնը եւ թէ իւր կողմից աւելացնում է նորոգութեան հանգամանքները նոր արձանագրութեամբ (պատկ· 28· Յաւել· Ա· 15): Այստեղ նա տալիս է տեղեկութիւններ իւր ծնողների եւ հարազատների մասին: Նա Այրիվանքի սուրբ ուխտի առաջնորդն է, «յազգէն խաղբակա եւ Պռոշա, որդի Ինանիկին»: Նորա հօրեղբայրներն են Դաւիթ եպիսկոպոս եւ Ստեփանոս վարդապետ, որոնք վախճանուած են արդէն, իսկ եղբայրներն են Բէկ սոսի եւ Կիրակոս, քոյրը՝ Մարիամ: Յիշուած են նաեւ պահարանի կազմող ոսկերիչները՝ Գրիգոր եւ Սարգիս: Բայց աւելի ընդարձակ տեղեկութիւններ ստանում ենք մի Յայսմաւուրքի յիշատակարանից[1], որ գրել է տուել ոմն Երեմիա քահանայ, տէր Զաքարիայի խնամակալութեամբ· «զի ես մանուկ գոլով, որբ մնացի ի հօրէ, եւ այս տէր Զաքարիայս եղեւ ինձ հայր, տարաւ զիս ի սբ վանքն Գեղարդի, եւ անտի եմ սնեալ եւ ուսեալ ի տէր Զաքարիայէն»: Իւր եւ իւր կողակից Խանազէի, ծնողների՝ Զաքարիայի եւ Շաղոսկու յիշատակին տալիս է այս ծաղկաւէտ մատեանս «ի սբ վանքն ածամուխ գեղարդին»· «ի ձեռն Դաւիթ սրբանուէր վրդպի··· առաջնորդ եւ վերատեսուչ սբ ուխտիս»: Միաբաններին խնդրում է խնամքով պահել այս սուրբ մատեանը կրակից եւ ջրից եւ տարին երեք անգամ՝ Ջրօրհնեաց եւ Յայտնութեան, Զատկին, Աստուածածնի փոխման տօներին կարդալ իւր յիշատակարանը, որի մէջ նշանակուած են իւր մերձաւոր եւ հեռաւոր բոլոր ազգականների անունները: Յայսմաւուրքի գրելու, ծաղկելու եւ կազմելու բոլոր ծախսերը հոգացել է տէր Զաքարիան իւր չքաւորութեամբ, բայց «ի հալալ եւ ի քաղցր վաստակոցն եւ ի քրտանց երեսացն, որ ի հողագործութք էր վաստակեալ, ինքնին ձեռօքն եւ ողամբն եւ թիկամբն»: Գրուած է Գրիգոր Երեւանցու ձեռքով, որ ուրիշ ձեռագիրներ եւս ունի գրած[2]. սկիզբն ու վերջը Վաղարշապատում, իսկ մեծագոյն մասը «ի գիւղաքաղաքն Նորագաւիթ»: Յիշատակարանի հեղինակն է Սուքիաս քահանան «ի գիւղաքղքէն Գառնւոյ», որին եւ պարտական ենք պատմական կարեւոր տեղեկութիւններ ժամանակակից Պռոշեանների եւ դէպքերի մասին: Նկարիչն է նոյն Գրիգոր Երեւանցին, բայց մեծ պատկերները իրենց սկզբնագարդերով, Մովսէս ծաղկողի[3]:


Յայսմ· № 1512. 206բ·

ՊԱՏԿԵՐ 111·

Հեղինակը Գեղարդի ժամանակակից առաջնորդին անուանում է «Դաւիթ փոքր», «ի մեծ եւ յազատ իշխանաց տոհմէ, ի զաւակէ եւ ի թոռանց մեծին Պռօշի», իսկ նոյնանուն հօրեղբօրը «մեծ Դաւիթ», «որ յառաջ քան զայս առաջնորդ էր սբ վանիցս» 40 տարի: Նա վախճանուել է ՌՃԻԴ (=1675) թ·, «յա-

---

[1] Ձեռ· էջմ· № 1501/1512 (Կար· 1643)· տպ· Արարատ 1888· 526:

[2] Ձեռ· էջմ· № 548 (Կար· 534) կարեւոր յիշատակարանով Եղիազարի կաթուղիկոսութեան եւ Երեւանի մեծ շարժի մասին 1686 թուին գրուած:

[3] Արուեստը բարձր չէ, բայց ժամանակի դրոշմն է կրում եւ պարսկական ազդեցութիւն, յատկապէս լուսանցքի ծաղիկների եւ անօթների նկատմամբ, որ պարսկական կապոյտ զարդերով յախճապակիներ են· 111-րդ նկարը գաղափար է տալիս այդ մասին: Պատկերագրութիւնը, լուսանցքի զարդերը չկորցնելով իրենց արեւելեան բնոյթը, ազդուած են կաթոլիկ արուեստից, հաւանօրէն ժամանակակից միսիոնարների միջոցով: Ժամանակակից վարդապետների տարազը (98բ) յար եւ նման Եղիազար կաթուղիկոսի որմանկարին Գայիանէի գաւթում: Կոստանդիանոս թագաւորը թէեւ թագով, հագել է երկար, զարդարուն, նեղ թեզանիքներով կապայ եւ վերան կարճ թեւերով մուշտակ ժամանակակից մի խանի կամ շահի նման:

Մովսէս ծաղկողի արուեստը աւելի է ազդուած արեւմուտքից իւր շարադրութեան ձեւով· 2բ· Լուսաւորիչ զգեստաւորուած, ւուր վերափոխման Ածածնին», ասել է, թէ նորա առաջնորդութիւնն սկսուած էր 1635 թուին: Ամենայն հաւանականութեամբ նորա նախորդն էր Յովհաննէս եպիսկոպոս, որ 1629 թուին յիշատակուած տեսանք Տփխիսի Շամքորեցոց եկեղեցու աւետարանի յիշատակարանի մէջ: Սուքիաս քահանան նկարագրում է մեծ Դաւթին որպէս հեզ, բարեմիտ եւ ողորմած մարդ, «այր երեւելի եւ քաջահնար ի դրունս արքունեաց, արդիւնարար եւ շէն ի տունն, որ եւ բզմ աշխատանս կրեց եւ յոլով շինուածս արար ամ կողմանց՝ զեկղցքս հնացելս եւ զխախտելս եւս յօրինուածովք նորոգեց»: Տարաբաղդաբար նորա շինարարութեան մասին այս ընդհանուր խօսքերից զատ՝ թանձրացեալ տեղեկութիւն չունինք:

Ոմն Սարգիս երէց մի ձեռագրի մէջ հետեւեալ նկատողութիւնն է գրել. «Թվ. ՌՃԻ. ումն Յոհան հաբեղէն թուրքացաւ. որ զետինն: շարժեցաւ աւգոստոսի ամսու. ա. բ. ուսումն ու. թ. ումն: Դաւիթ վարդայպետն Ըստեբաննոս վարդայպետն, որ մանուկ ի տղ. եր, շահ Սոլէմանն եւ Շխալի խանն բռնեցին. մեր առաջնորդ Դաւիթ վարդայպետն, Ըստեբաննոս վարդայպետն որ բռնեցին»1): Թէպէտ այստեղ յիշատակուած չէ, թէ ո՞րտեղ է գրուած այս նկատողութիւնը, բայց կասկածի ոչ մի տեղիք չկայ, որ Սարգիս երէցը Գեղարդի միաբաններից է, իսկ Դաւիթ եւ Ստեփաննոս վարդապետները Դաւիթ մեծն է եւ նորա եղբայրը Ստեփաննոս, որ նորա յաջորդը եղաւ:

Այս տեղեկութիւնը ցոյց է տալիս, որ 1671 թ. Դաւիթ եպիսկոպոսը Ստեփաննոս վարդապետի հետ Սպահան էր գնացել, հաւանօրէն իւր վանքի կալուածական եւ յարակից խնդիրներով. լինէր այդ ձերբակալութիւնը միջնորդաբար, օրինակ՝ Երեւանի խանի միջոցով, կ՚արտայայտուէր այդ իրողութիւնը որեւէ կերպով: Շահ Սուլէյմանը (1667—1694) մեր երկիրը չէր արշաւել կամ ճանապարհորդել, իսկ Շխալի խանը նորա ժամանակ էհտիմալ-տովլաթն էր2): Մեր Յայսմաւուրքի յիշատակարանն էլ անուանում է նրան «ի դրունս արքունեաց արդիւնարար»:

Դաւիթ «մեծ»ին յաջորդում է նորա եղբայրը Ստեփաննոս եպիսկոպոս (վարդապետ), որի մասին խօսք եղաւ Սարգիս երէցի նկատողութեան մէջ: Սուքիաս քահանան գովում է նորա գիտութիւնը որպէս «քաջ փիլիսոփայ եւ ածաբան», բայց ոչ շինարար Դաւթի նման: Նորա եպիսկոպոսութիւնը չորս տարի տեւեց, զոհ դառնալով այն մեծ երկրաշարժին, որի մասին Զաքարիա սարկաւագն ու ժամանակակից յիշատակարանները սարսափով են պատմում: Շարժի օրը Ստեփաննոս վարդապետը գտնւում էր Երեւանում «ի յանապատն սբ եւ ի հասարակաց ճաշու աղօթս կատարէին հանդերձ միաբան ուխտիւն. յայսմ ժամու շարժեց եւ քակտեցաւ եկեղեցին, էառ զտակ զեպիսկոպոսն զՍտեփաննոս եւ զքաջ հռետորն եւ անտի փոխեցաւ առ Քս...»: Շարժի նկարագրութիւնն ունի եւ այս Յայսմաւուրքի գրիչ Գրիգոր Երեւանցին, իւր գրած ժամագրքի վերջում3), յատկապէս Երեւանին վերաբերեալ, բայց Ստեփաննոս եպիսկոպոսի յիշատակութիւնը չկայ: Այդ գուցէ, կարելի չէ նրանով բացատրել, որ այդ ժամանակ գրիչը որեւէ կապ եւ ծանօթութիւն չունէր Գեղարդի հետ, ուստի եւ յատուկ հետաքրքրութիւն չէ ցոյց տուել դէպի Ստեփաննոսի անձը:

Շարժին զոհ եղաւ ոչ միայն Ստեփաննոս եպիսկոպոսը, այլ եւ կործանուեցան ու վնասուեցան շատ վանքեր ու շէնքեր, որոնց թւում եւ Գեղարդայ վանքը: Նոր Բայազիդի եկեղեցու աւետարաններից մէկի յիշատակարանում յականէ յանուանէ յիշուած են Գառնոյ ձորի բոլոր վանքերը. «Գեղարդի վանքն եւ Ախջոց վանքն եւ Ամենափրկչի վանքն (Հաւուց Թառ), եւ Տրդատայ թախտն եւ խոր Վիրապա Աստուածածնա եկեղեցին հիմնայատակ աւերեցան»4):

Սուքիաս քահանան, մեր Յայսմաւուրքի յիշատակարանի հեղինակը, շարժի ժամանակը նշանակում է «ի թուաքերութե հայոց ՌՃԻԸ. յունիս ամսոյ Դ. յաւուր Զորեքշաբթի մինչ ոչ եր հասարակել օրն». ճիշդ նոյն թուականը, ամսաթիւն ու օրն է տալիս եւ Գրիգոր Երեւանցին, աւելացնելով եւ ժամը՝ «ոպ թէ ի չորրորդումն ժամու»: Մի կողմ թողնելով հեղինակի նկարագրած մանրամասնութիւնները, յիշենք միայն ինչ Գեղարդայ վանքին է վերաբերում. «Իսկ ձորակն Այրէվանից առաւել եղեւ աւերումն եւ քակտումն, վս զի ամ շինուածք ի մէջ խոր ձորի եւ շուրջ բոլորաւն վէմք ահագին, եւ յորժամ շարժեաց, շուրջանակի թաւալեցան ամ դիմաց եւ լցան վանքն ամ», ծածկուեցան բոլոր շէնքերը եւ քարակոյտներ էին միայն երեւում. ճանապարհները խափանուեցան, չկար ո՛չ աղօթքի եւ ո՛չ բնակութեան տեղեր:

Այսպիսի պայմանների մէջ Ստեփաննոսին յաջոր-

հովուական գաւազանով, իսկ Տրդատ ծունկի եկած նորա առաջ: Նոյն բովանդակութեամբ, բայց տարբեր ձեւակերպութեամբ 4բ: Աստուածածնի ննջման պատկերը 10բ. նման չէ մեր մանրանկարչութեան մէջ ընդունուած աւանդութեան. մեռած Աստուածածնի ձեռքն էլ մոմ է տուած, եւ առաքեալները պարզ կապայի վերայ փիլոն են ձգած: Խաչվերացի պատկերը շատ աւելի որոշ է իւր կաթոլիկ ազդեցութեամբ. ներքեւը ոչ հայկական մի տաճար, վերեւը խաչափայտը բոլոր գործիքներով եւ լատինական վերտառութեամբ: Վերջապէս 235բ Ծնունդն է, դարձեալ սովորականից տարբեր ձեւակերպութեամբ, իտալական նկարիչների հետեւողութեամբ, տակը գրուած. «Ով տիրամայր որ թագուհի, / մաղթեմ առ քեզ արտասուալի / Մովսէս ծաղկող սորի»:

1) Conybeare. A Catalogue of the Armenian Manuscripts in the British Museum. London. 1913. 297.

2) Стэнли Лэнъ-Пуль. Мус. Династ. 219: Զաքարիա սարկաւագ. 83, 84:

3) Ձեռ. № 548 (Կար. 534). 317բ.:

4) Ջալ. Բ. 127:

գում է նրա եւ Դաւիթ «մեծի» եղբօրորդի Դաւիթ «փոքր»ը: Հօրեղբօր մահուան ժամանակ նա դեռ եւս քահանայական աստիճան չունէր եւ շատ երիտասարդ էր: Աւելացնենք նաեւ, որ վանքը 50 թուման պարտք ունէր, իսկ ինքը Դաւիթը՝ հակառակորդներ, «իշխանական պատուով պատուեալք··· մինչ զանունս նոցին ի սեղանս արքունւոյ (s!) խօսէին յարակայ», որոնք «կամէին մի եւս լիցի ի սեռէ եւ ի տոհմէ նոցին վերադիտող եւ առաջնորդ ածազէն նիզակին»: Բայց նա կարողացաւ Յակոբ կաթուղիկոսի տեղապահ Միքայէլ վարդապետի (եպիսկոպոս) սիրտն իրեն գրաւել եւ Ենկիճա գիւղում քահանայ ձեռնադրուել նոյն չարժի թուականին, այսինքն 1679 թուին, Այլակերպութեան տօնին: Ո՞յք էին իշխանական պատուով հակառակորդները, առ այժմ չունինք որեւէ ցուցում խնդիրը պարզելու:

Դաւթի առաջին գործն էր պարտքերը վճարել եւ ճանապարհները հարթել. իսկ երկրորդ տարին շինութիւններով զբաղուել: Այդ ժամանակ մեռնում է Յակոբ կաթուղիկոսը Կ. Պոլսում եւ տեղապահ Միքայէլ վարդապետը Ծամբի ձորի Ս. Ստեփանոսի վանքում: Հայրապետական աթոռը մի տարի անտէր է մնում, մինչեւ որ արեւելեան վարդապետները համաձայնութեան են գալիս եւ Գողթնեաց Պետրոս եպիսկոպոսին հրաւիրակ են ուղարկում Եղիազար Այնթապցու մօտ, գալու եւ չարունակելու իր կաթուղիկոսութիւնը էջմիածնում: Եղիազարը հայրապետական գահն է նստում «ի թուոջ հայոց ՌՃԼԱ, յաւուր վերափոխման սբ Ածածնի կիրակին», երկրորդ տարին՝ ՌՃԼԲ (=1683) թուի առաջաւորի բարեկենդանի Կիրակին Դաւթին վարդապետական գաւազան է տալիս եւ հետեւեալ Կիրակին եպիսկոպոս ձեռնադրում «ի վր իւր սեպհական տանն Գեղարդի, կոնդակաւ եւ իշխանութեամբ լինիլ ի վր թեմի եւ վիճակին»: Այնուհետեւ բուռն կերպով անձնատուր է լինում իր վանքի վերաշինութեան գործին, շինելով վանքի պարիսպը, «նախ շինուածք բոլորակի, թանապայք, քօշք, ապարանք, սենեկք, խահարանոցք եւ այլ ամ շտեմրնք, տաշել քարով, կրով եւ թաղով»:

Յիշատակարանի հեղինակը պատմում է նաեւ 1687 թուին շինել տուած Գեղարդի պահարանի մասին: «շինեց զտուփ ղուբի արծաթէ պահարանս ածամուխ գեղարդի նշանի, եւ ակամբք պատուականօք յօրինել ետ եւ ոսկւով ջրեց. բզմ ծախս գնաց, մինչ Ի թումանս աւելի եւ ոչ պակաս»: Պահարանի գեղարուեստական արժէքի մասին գաղափար են տալիս նկ. 112, 113 եւ 114: Ետեւի արձանագրութիւնը (նկ. 28) պարզում է նորա ծագման հանգամանքները. երկարութիւնն է 56 սմ., լայնութիւնը՝ 24, իսկ հաստութիւնը, կողը (նկ. 114) $5^1/_2$ սմ.: Առաջին նկարը պահարանի երեսն է, ծածկուած երկփեղկ դռնով, ներքեւի մասը ուղիղ անկիւններով, իսկ վերեւը կոտրուած կամ սուր աղեղով: Դռնակների վերայ վերին տեսարանը Աւետումն է: Հրեշտակը աջից (նայողի ձախ կողմից) մօտենում է կոյսին, որ ձեռքին սափոր ունի բռնած, մանկութեան անվաւեր աւետարանի համաձայն. Ներքեւի տեսարանը խաչելութիւնն է, աջից Յովհաննէս եւ ձախից Մարիամ, երկուսն էլ ձեռքները կրծքին դրած: Խաչելութեան դիմաց միւս դռնակի վերայ եղած երկարազգեստ նիմբուսով պատկերը, աջին խաչ եւ ձախին հովուական գաւազան, կարծում ենք, Լուսաւորիչն է բարեխօսի դերում[1]: Գրիգոր եւ Սարգիս ոսկերիչները Փիգուրներին չեն կարողացել տալ հարկաւոր չափով կենդանութիւն: Դէմքերը նիհար են եւ ասկետական դրոշմը գօ-



Գեղարդի պահարան. ՊԱՏԿԵՐ 112.

---

[1] Տես. եր. 101—2 այս գրքի մէջ:

րեղ, թէեւ շարժումները եւ կեցուածքը ոչ զուրկ բնականութիւնից: Դռնակների մակերեւոյթը, պատկերներից վեր եւ վար, ծածկուած են բուսական զարդարանքներով: Նկար 113 նոյն պահարանի բացուած տեսարանն է: Մէջտեղում երկաթի նիզակը կամ գեղարդը, դաշտը եւ դռնակների երեսները զարդարուած բուսական զարդարանքներով. նոյն կերպով զարդարուած են եւ կողերը (պատկ. 113): Իսկ ետեւի արձանագրութիւնը, որի մասին (նկ. 28. Յաւել. Ա. 15), քանիցս առիթ ենք ունեցել յիշելու եւ օգտագործելու, երկու մասից էր բաղկացած. առաջին մասը Պռոշ մեծի շինել տուած պահարանի արձանագրութեան պատճէնն է, իսկ երկրորդ մասը ներկայ նորոգութեան[1]):



Գեղարդի պահարան, բաց դռնակներով. ՊԱՏԿԵՐ. 113.

Նոյն Յայսմաւուրքի յիշատակարանի համեմատ Դաւիթ փոքրի օրով պայծառ եւ փառաւոր էր վանքը, եկեղեցիները լի «ամ գահօք եւ պաշտօնատարօք, եւ բզմ քհնյիւք եւ միաբանօք, կրօնաւորօք եւ աղքատօք, սաղմոսերգութբ, եւ հաստատ ժամատեղօք, աղօթասէր ծերօք եւ ուսումնասէր մանկամբ, որ եւ շաբաթ եւ ի Կիրակի միշտ անդադար պատարագ այ (աստուծոյ) մատուցանելով, որ ոչ օր մի Շաբաթ կամ Կիրակի խափանել կարէին ի տարին բոլոր»: Նորա միաբանների կազմի, թուի, պատրաստութեան ու գործունէութեան մասին տեղեկութիւն չունինք: Բայց գիտենք, որ դոցանից երկուսը՝ Անանիա եւ Դանիէլ սարկաւագները նորա եղբօրորդիքն էին: Դանիէլը, ինչպէս կը տեսնենք, յաջորդեց իբրեւ առաջնորդ իւր հօրեղբօրը: Յիշւում է նաեւ տէր Յովհաննէս, «որ է ազգ Դաւիթ վրդպիս»: Սարգիս երէցի մասին խօսք եղաւ վերեւ, որի ժամանակագրական նկատողութիւնից իմացանք Դաւիթ մեծի եւ Ստեփանոս վարդապետի բանդարկելութիւնը: Գեղարդի ժամանակակից միաբաններից մի ուրիշը Սիմէոն աբեղայ ամենայն հաւանականութեամբ նոյն՝ քիչ յետոյ յիշուելիք Սիմէոն կրօնաւորի հետ. «որ է երկրէն Գանձոյ, եւ սնեալ եւ վարժեալ ի մանկութենէ մինչեւ ի հասակ կրօնաւորուե ի դրան սբ Գեղարդին»[2]), գրել է Մխիթար Այրիվանեցու նշանաւոր ձեռագրի մէջ[3]) մի քանի ժամանակագրական նկատողութիւններ այս Դաւիթի մասին.

«Թուին ՌՃԼԸ (=1689). Ես աղբայեղ (վերջին ղ-ի գլխին երկու կէտ, որ ջնջման նշան է, բայց նշանակում է «աբեղայ») որ է անուն իմ Սիմոն... (բաց մի բառի տեղ)»:

«Թուին ՌՃԽ... (բաց երկու բառի տեղ) որ եղեւ Դաւիթ վարպետ հոգեւոր տրին... (մէկ ու կէս տող ջնջուած) յետ այնորիկ այն ամին մեռաւ Եղիազար կաթուղիկոսն եւ դարձեալ աշակերտ նր եղեւ կաթուղիկոս. Նահապետ անուն»:

«Թվ ՌՃԽ ամին այլ եւ եղեւ յաշտոմն (s!) բարուք ի մէջ կաղթուղուկոսի (s!) եւ սբ Գեղարդա առնորդ (s!) Դավիթ վարդապետին:

Ես տր Սիմոնս գրեցի»:

Ինչ որ այստեղ մութ է ջնջուած տողերի պատճառով՝ մասամբ պարզւում է նոյն ձեռագրի լուսանցքի մի ուրիշ նկատողութեամբ, նոյն ձեռքով գրուած,

---

[1] Տես. եր. 98, 104, 137, 183 եւ 255:

[2] Ձեռ. էջմ. № 1797/1796. Յաւել. Բ. 40:

[3] Ձեռ. էջմ. № 944/1500 (Կար. 924). 29բ.:

ներքեւի լուսանցքներում · 392*բ* «Եւ եղեւ այս ինչ իր· ումն Նախապետ անուն, եղեւ / 393*ա* կաթուղուկոս սբյն էջմիածնայ, ահա պատմեմ, ասեմ կսկիծ որ եղեւ· այլ ասեմ՝ Դաւիթ վարդապետ մի կայր առաջնորդ սուրբ Գեղարդայ, այր սրբասնունդ եւ մաքուր, զրպարտեալ խիստ· թ · ՌՃԽ նոենբերի ա· ի մէջ գիշերի, ոչ կարեմ պատմել, / 394*ա* ի կաթուղուկոսէ ոչ ի բռնէ, այլ ասեմ իսկապէս մուրուս սորա վեր ա-բարել, չարն սատան այսպէս ա-բար ամենի»1) :

Դաւիթը յանցաւոր էր կամ զրպարտուել էր Եղիազարի առաջ, բայց մահը վրայ հասնելով՝ նորա աշակերտ ու գործակից եւ ապա յաջորդ Նահապետ կաթողիկոսն է պատժում միրուքը վեր անել տալով : Այստեղ է ունենում նոյն թուին երկուսի մէջ բարւոք հաշտութիւն : Ի՞նչ էր խռովութեան պատճառը կաթողիկոսների եւ Դաւիթ եպիսկոպոսի մէջ, չգիտենք· բայց վանականների մօրուք խուզելը ընդունուած ծանր պատիժ էր այս շրջանում : Այսպէս Յակոբ Ջուղայեցին իւր աթոռակալ (տեղապահ) Ոնոփրիոս եպիսկոպոսի գլուխն ու մօրուքը խուզեց եկեղեցու մէջ նորա ըմբոստութեան եւ ծանր յանցանքների համար : Պատժի այդ ձեւը գործադրւում էր յատկապէս Եղիազար եւ Նահապետ կաթողիկոսների օրով· «այլ եւ զինչ պակասութիւն տեսանէին աբեղայից եւ երիցանց, բերեալ գործէին զգլուխսն եւ զմօրուսն եւ բրածեծ առնէին մահու չափ» : *Նահապետ կաթողիկոսի օրով յատկապէս* «կարի սաստիկ էր ի վերայ յանցաւորաց· եւ եթէ ոք պակասութիւն ինչ գործէր, սա կալեալ հրապարակաւ կախէր եւ գանալից առնէր, եւ տուգանէր մարմնաւոր իշխանութեամբ· հարէր զմօրուսն եւ զանգուրն, եւ արկանէր ի բանտ եւ շղթայէր»2) :



Գեղարդի տապանի կողը· ՊԱՏԿԵՐ 114·

Այնուհետեւ մինչեւ 1698 *թիւը ոչ մի տեղեկութիւն չունինք Դաւթի մասին : Այս թուին նա շինել է տալիս մի ուրիշ արծաթի պահարան Նոյեան տապանի տախտակի կտորի համար, որ Գեղարդի, Խոտակերաց Ս. Նշանի հետ, Պռոշեանց մեծ սրբութիւններից մէկն էր : Պահարանի ետեւի մեծ արձանագրութիւնից*3) *տեղեկանում ենք, որ շինել է տուել* «Դաւիթ անարժան հաբեղէս, ազգաւ Պռօշեցի», *Գեղարդայ վանքի տեղապահը, Քանաքեռցի ոսկերիչ Աւետի ձեռքով «Թվ· ՌՃԽԷ» : Մեզ չպէտք է շփոթէ արձանագրութեան մէջ Դաւթի «աբեղայ» տիտղոսը : Գեղարդի պահարանի արձանագրութեան մէջ նա իրեն կոչել էր «վարդապետ», մինչդեռ յիշատակարանից գիտենք, որ նա եպիսկոպոս էր ձեռնադրուած տարիներ առաջ : Վարդապետական պատիւ ունեցող եպիսկոպոսներ յաճախ իրենք իրենց կամ ուրիշները նրանց վարդապետ էին միայն անուանում ,որովհետեւ այդ նրանց գիտութեան աստիճանն էր ,*



Նոյեան տապանի պահարան· ՊԱՏԿԵՐ 115:

---

1) Տաշեան· Ցուցակ· 453, 554· ունի այս նկատողութիւնները, բայց արտագրողը ըստ ամենայնի չէ հետեւել բնագրին :

2) Զաքարիա սարկաւագ· Բ· 88, 107, 136:

3) Մեր Գրչութեան Արուեստը· Գ· 1913· § 29· Յաւել· Ա· 36:

որ առանում էին դպրոցի գլուխ կանգնած վարժապետ վարդապետներից, դորա հետ միասին 'իրաւունք՝ քարոզելու եւ մեկնելու Ս· Գիրքը։ Այստեղ Դաւիթն իրեն համեստութեամբ աբեղայ է անուանում վանականութեան ընդհանուր անունով։ Նոյեան տապանի արձանագրութեան Դաւիթ աբեղային նոյնանուն եպիսկոպոսից ուրիշ անձ ընդունելու ոչ մի առիթ չունինք, քանի որ յիշատակարանի մէջ պարզ ասուած է, որ այդ պահարանի շինել տուողը նա է։



Նոյեան տապանի կտորի պահարանը բացուած դռներով·
ՊԱՏԿԵՐ 116·



Նոյեան տապանի պահարանի
կողքը· ՊԱՏԿԵՐ 117·

Պահարանի գեղարուեստական արժէքի մասին գաղափար են տալիս նկ· 115, որ առաջին երեսն է երկփեղկ փակ դռներով, նկ· 116, բացուած են դրան փեղկերը, միջի սրբութիւնը ցոյց տալու համար, իսկ նկ· 117 *կողն է կամ հաստութիւնը։ Պահարանի մեծութիւնն է* $51\times25^{1}/_{2}$ *սմ·, հաստութիւնը* $5^{1}/_{2}$ *սմ·։ Առաջին երեսի վրայ ձախ դռնակին կանգնած է թեւաւոր հրեշտակը, աջով մատուցանելիք տախտակը բռնած, իսկ ձախով խօսելու շարժում կամ օրհնութիւն· Նրա առաջ, միւս դռնակի վրայ, չոքել է Յակոբ Մծբնայ հայրապետը, ձեռքերը աղօթողի դիրքով· կէս դէմքով, որ ծածկուած է մօրուքով, գլխին լուսոյ պսակ ունի։ Հրեշտակը հագել է մինչեւ սրունքները հասնող պարեգօտ, նեղ թեւերով, ոտերը բոբիկ են։ Դռնակների երեսի մնացած մասերը ծածկուած են բուսական զարդաբանքներով։ Միացած դռնակները վերեւի մասում կազմում են սրաբեկ կամար, իսկ ներքեւում ուղիղ ան-*

կլին. որպէս շրջանակ մի շղթայաձեւ զարդ զուգընթաց երկու նուրբ պարանահիւսների մէջ: Դռնակներից բարձր, պահարանի ճակատին, սրածայր աղեղի տակ, գտնւում է մի երկթեւեան հրեշտակի գլուխ, իսկ ներքեւի անկիւններում մի մի քառաթեւի: Պահարանը եզերող ժապաւէնի եւ դռնակների մէջ եղած տարածութիւնը ծածկուած է բուսական զարդերի եւ ծաղիկների քանդակներով, ոլորապտոյտ դէպի ճակատը բարձրացող ցօղունների վերայ: Կողերի զարդարանքները նոյնպէս բուսական են եւ ոլորապտոյտ ձեւով. ներքեւի կողը զարդ չունի: Ներսը դռնակների վրայ (պատկ. 116) ոճաւորուած, վեցթերթեան զարդեր, զարձեալ ոլորապտոյտ ցօղունների վրայ. կեդրոնում հաստատուած է քառանկիւնի տախտակը, վերան քառաթեւ մի խաչ, հասարակ քարերով զարդարուած: Տախտակը շրջափակուած է քառանկիւնի մի զարդարանքով, որի մոտիվները ոճաւորուած եռատերեւներ են, ցօղուններն իրար կպած կիսաբոլորակի ձեւով. մնացած տարածութիւնը, յատկապէս կամարի տակը, ծածկուած է ձկան թեփի նմանութիւն բերող մի զարդով, որ գործադըրուած է նաեւ մեր մանրանկարչութեան մէջ:

Նոյեան տապանի պահարանի արձանագր. ՊԱՏԿԵՐ 118.

Պահարանի կողքից կախուած է շղթայով մի խաչ, վրան ելնդաւոր խաչելութիւն, խաչի վերին անկիւններում մարդկային բոլորակ դէմքով արեգակ եւ լուսին:

Մի տարի յետոյ, այսինքն 1699 թուին, անշուշտ այս Դաւթի ժամանակ, թէեւ առանց նորա անուան յիշատակութեան Առաքելի որդի Գրիգորը Գեղրոն գիւղից նուիրում է վանքին մի զանգակ այսպիսի արձանագրութեամբ. «Յիշատակ է Գեղրոնցի Առաքելի որդի Գրիգորին ի դուռն սուրբ Գեղարդին, թուին ՌՃԽԸ»[1]: Գեղրոն գիւղը գտնւում է ոչ հեռու Քանաքեռից՝ Հրազդանի ափին:

Դաւթի անուան վերջին յիշատակութիւնն ունինք 1702 թուին. Կոտայքի Աղասոր (Ղըխբուլաղ) գիւղից Ղարս վերաբնակուած ոմն «պարոն Միքայէլ» յիշել է տալիս իւր հայրենիքի վանահայրերին՝ «իւրեանց առաջնորդ Գետարգել վանացն Յոհան պարոն տէրն եւ Գեղարդի վանաց Դաւիթ վարդապետն...»: Նա մեռաւ 1705 թուին, ինչպէս ցոյց է տալիս նորա գերեզմանաքարի արձանագրութիւնը.

Այս է հանգիստ Դաւիթ ածայ/բանութե վարդապետի որ է շինող ածայծինի (s!) ժամայտան կա / ռուցօղի Ծ ամեայ սա վաղջանի / երդալ (s!) առ արն ամենի օվ ոք առ (տառխ) հանդեսցէ (հանդիպեսցէ), լի սրտիւ ողո / րմի տայցի Թվ. ՌԾԾԴ[2]:

Դաւթի յաջորդն էր իբրեւ վանահայր նորա եղբօրորդին, որ Յայսմաւուրքի յիշատակարանի գրութեան ժամանակ, այսինքն 1689 թուին դեռ եւս սարկաւագ էր: Գեղարդի միաբաններից վերոյիշեալ Գանձակեցի Սիմէոն վարդապետը 1707 թուին՝ «ի թուականիս հայկայինս տոհմի ՌՃԾԶ»ին տացել է Կիւրեղ Աղեքսանդրացու Գանձուց եւ Պարապմանց մի գիրք Այլաբերցի տէր Աստուածատուրի որդի Սուքիաս երէցի գրչութեամբ, որ թերին միայն լրացրել է Աղեքսանդր կաթուղիկոսի առաջին տարին «եւ ի առաջնորդուե սբ ուխտին Գեղարդու աիրի եւ քաջ բաբունապետի Դանիել վրդապետին, որ է ցեղէն իշխանաց իշխան Պռօշ իշխանի, որ վերադիտողուբ վարէ առաջնուբի սբ ուխտիս»: Մի տարի յետոյ, 1708 թուին, նա թողել է մի արձանագրութիւն իւր կատարած շինարարութեան մասին.

---

[1] Մեսրովբ Արքեպիսկոպոս Սմբատեանց. Գեղարքունի. 1895. 223:

[2] Ընդգծուածները կցումներով:

«Թվ ՌՃԾԷ էին շինեցաւ դարվազի տնտեսատունի վերին կողմըն բրջայպատիս առաջնորդ· Դանիէլաբան վրդպին, որ է Նորայրողբոջ, որ է սայ ի շառաւիղէն [Պռոշ իշխանին, որ է եղբօրորդի Դաւիթ վարդապետի][1]):

Սորանով էլ վերջանում են մեր տեղեկութիւնները Պռոշեանց տոհմի հոգեւորական վերջին շառաւիղների մասին:

ԺԷ. դարու աշխարհիկ Պռոշեանների մասին ոչինչ գիտենք, բացառութեամբ Իսրայէլ Օրիի, որ այնքան նշանաւոր հանդիսացաւ Հայաստանի ազատագրութեան փորձերի պատմութեան մէջ: Նորա կեանքի եւ գործունէութեան համառօտ նկարագրութիւնն ու գնահատականը տալուց առաջ, պարտաւոր ենք ամէնից առաջ այն հարցին պատասխանել, թէ արդեօ՞ք ծագմամբ Պռոշեան էր նա:

Իսրայէլ Օրիի անձի եւ գործունէութեան նկատմամբ կասկածներ են եղել դեռ եւս նորա կենդանութեան ժամանակներից, ինչպէս ասում է ճիզուիթ միսիոնար Կրուզինսկին, որ այդ ժամանակ գտնւում էր Սպահանում: Նորա կարծիքով Օրին կասկածելի արկածախնդրի մէկն էր, որ ստութեամբ եւ խորամանկութեամբ քաղաքական գործչի ծիրանի էր հագել իւր առեւտրական-շահադիտական նպատակների համար[2]): Նորան է հետեւում մասամբ գերմանացի գիտնական Հայգել, որ թէեւ լաւ հայրենասէր էր համարում նորան, բայց արքունիքներ ել ու մուտ ունենալու համար ստիպուած էր «բարոն» ձեւանալ[3]):

Եզեանի ձեռքով փաստաթղթերի հրատարակութեամբ եւ լուսաբանութեամբ թւում էր այս կասկածը բոլորովին փարատուած, սակայն Աշոտ Յովհաննիսեանի մի երկրորդ աշխատութեամբ[4]), որով անվաւերական է համարում այս խնդրի ծագման հետ կապուած մի քանի փաստաթղթեր, նորից կանգնած ենք տարակոյսների առաջ:

Իսրայէլ Օրիի ծագման հետ կապ ունեցող փաստաթղթերից հնագոյնը Պֆալցի կուրֆիւրստ Իոհան Վիլհելմի Վրաց Գէորգի իշխանին գրած նամակն է 1698 թ. Մայիսի 3-ին: Այդտեղ թէեւ պարզ յիշատակութիւն չկայ Օրիի Պռոշեան տոհմից ծագելու մասին, բայց անշուշտ այդ է ակնարկուած Օրիի նկատմամբ՝ nobiles Armenus... oriundus ex provinicia Naschiran Majoris Armeniae — «ազնուական հայ... ծագմամբ Մեծ Հայքի Նախիջեւան նահանգից» խօսքերով[5]): Սակայն Պֆալցի իշխանի աղբիւրը այս տեղեկութեան համար Օրին ինքն էր: Երկրորդ աղբիւրը հայ մելիքների գրած թուղթն է պապին, որ ,բանասիրութեան յայտնի է դարձած միայն Սէն Մարտէնի թարգմանութեամբ, 1969 թ. Ապրիլի 19-ին գրուած: Այդտեղ հայ մելիքները յայտնելով էջմիածնի 1678 թ. ժողովի մասին Յակոբ կաթուղիկոսի գլխաւորութեամբ պապին մի դեսպանութիւն ուղարկելու նկատմամբ, աւելացնում են, որ անդամներից մէկն էր (Le seigneure Israël, issu de la race du prince Borosch, illustre chez les Arméniens) «պարոն Իսրայէլը, ծագած Հայոց մէջ նշանաւոր Պռոշ իշխանի տոհմից»· բայց նա չկարողանալով շարունակել ճանապարհը թշնամիներէ եւ ուրիշ պատճառներով, տեղն ընտրում են որդուն՝ Իսրայէլ Օրիին, որ պէտք է Յակոբ կաթուղիկոսի հետ ներկայանար պապին: Կաթուղիկոսը մեռնում է Պոլսում, հայ իշխաններն ու արքեպիսկոպոսները վերադառնում են հայրենիք, բացառութեամբ Օրիի, սերուած Պռոշ իշխանից, որ շարունակում է իւր ճանապարհը Եւրոպա[6]):

Երրորդ վկայութիւնը Օրիի Պռոշեան ծագման մասին հայ մելիքների հաւատարմաթուղթն է նրան Անգեղակոթում տուած՝ լատիներէն լեզուով, ըստ որում «նա ծագում է Պռոշեան պայծառ իշխանական ընտանիքից», (qui ducit ex familia principum electoris Broschensium) եւ 19 տարի չարչարուել է Հայաստանը անօրէնների ձեռքից ազատելու, հետեւելով իւր ազնիւ նախնիներին: Երեսուն տարի առաջ հէնց իրենք մելիքները ականատես են եղել, թէ ինչպէս երեք հոգի նոյն ցեղից նահատակուել են սուրբ կրօնի համար: Օրիի հայր Իսրայէլն էլ նոյն պատճառով թունաւորուած է: Այդ պատճառով են նրանք շատ յարգում այս մեծ տոհմը (Idcirco hanc magnam familiam multum veneramur) եւ վկայում են գովութեան արժանի լինելու, քաջութեան եւ բարեպաշտութեան մասին: Ուստի եւ Իսրայէլ Օրիին ամէնից արժանաւոր են համարում եւ իրենց գլխաւոր ընտրում ազատութեան այս գործը գլուխ հանելու[7]):

Նոյն մելիքները գրում են կուրֆիւրստին, թէ ստացել են նորա 1698 թ. Մայիսի 13-ի նամակը Իսրայէլ Օրիի ձեռքով, ծագմամբ Պռոշ իշխանի շատ պայծառ տնից (descendant de la très illustre maison des princes de la Brosch): Պատմում են Օրիի հանդիպումը էջմիածնում, ապա մելիքների հետ Գանձասարում եւ Անգեղակոթում: Այստեղ եւս, ինչպէս եւ պապին գրած թղթում, պատմում են էջմիածնի 1678 թ. ժողովում որոշած պատգամաւորութեան մասին. երեք ընտրուածներից մէկն էլ մելիք Իսրայէլն էր՝ Պռոշեան իշխան եւ պարոն Իսրայէլ Օրիի հայրը (prince de Brosch et père de monsieur Israël Ory): Նոքա յիշելով կուրփիւրստի բարի վկայութիւնը Օրիի մասին, հաստատում են նորա բարձր ծագումը եւ տոհմի նահատակութիւնը կրօնի համար, որոնցից երեք անունները յիշուած են՝ մելիք Մարտիրոս, Մելիք Աղաջան եւ Գարաղան (Garagan — Կարախան ?): Օրիի հայրը նոյնպէս թունաւորուեց[1]), որոնց տոհմի հետ թշնամի են Նախիջեւանի խաները:

---

[1]) Հետագայ նորոգութեան ժամանակ փակագծի մէջ առնուած արձանագրութեան քարը ուրիշ տեղ է հագցուած:

[2]) Г. А. Эзов. Сношение Петра Великаго с Армянским народом. СП. *1898*. LXXXIII.

[3]) Israel Ory und die Armenisch Befreiungsidee. Aschot Iohannissian. 51.

[4]) Հայ-Ռուս Օրիենտացիայի Ծագման խնդիրը. 1921.

[5]) Эзов. № 1. եր. 1:

[6]) Эзов. № 2. եր. 2:

[7]) Անդ. № 3 եր. 6:

Վերջապէս նոյն ժամանակից ունինք մելիքների թղթի մէջ Պետրոս մեծին, Իսրայէլի «ի տոհմէ Պռոշ իշխանի» եւ նորա որդու Օրիի «հնոց եւ վաղեմէ իշխանաց զարմէ» լինելու մասին վկայութիւն: Նոյնը կրկնուած է Օրիի մասին նաեւ Ղարաբաղի մելիքների թղթի մէջ Պետրոս մեծին՝ 1703 թ· Մայիսի 27-ին (մեր պրն Իէլն ի տոհմէ Պռոշ իշխնէ)[2]):

Իոհան Վիլհելմ կուրֆիւրստը 1700 թ· Հոկտ· 13ին Պետրոս մեծին գրած թղթի մէջ, ինչպէս եւ Լէոպոլդ կայսրը 1701 թ· Փետր· 9-ին, Օրիի մասին գրում են, որ նա ծագում է Պռոշեան իշխանական ընտանիքից (ex principum Broschensium familia ortum)[3]).

Իսրայէլ Օրին կուրֆիւրստին գրած մի թղթի մէջ 1704 թ· յայտնում է, որ Վրաց Արչիլ իշխանը ճանաչում է իր ծնողներին[4]) եւ յիրաւի Արչիլն էլ 1704 թ· Վիլհելմին եւ Լէոպոլդ կայսրին գրած նամակների մէջ յայտնում է Օրիի Պռոշեան ծագումը (e familia principum de Brosch oriundus)[5]): Նոյնը կրկնում է Լէոպոլդը Պետրոս մեծին եւ Արչիլին գրած թղթերում[6]):

Մի վերջին վկայ էլ Ստեփան Ռոշկան է, որ իր ժամանակագրութեան մէջ 1700 թ· համար նշանակում է· «Իսրայէլ Օրին, Պերոշ իշխանի որդին, ընդ իւր բերեալ զՄինաս վ· Խարբերդցի, եկն ի Հռոմ եւ մատոյց Իննոչ ԺԲ·ին զթուղթն ի տանէ մելիքաց Հայոց գրեալ յԸնկեղակութ յամի 1699 Ապրիլի 19, զորոց անուանսն վասն պատճառի ուրուք լռեմ· Զթուղթն ես ինքնին թարգմանեցի··· Ունէր եւ զայլ թուղթս առ Լէօբոլտոս, առ բալադին Էլէքդօրն եւ առ Զարն Մոսկովաց: Ընկալեալ զյանձնարարութիւն ի փափէն առ կայսրն, երթայ առ Զարն, եւ այնքան խորագիտութեամբ շրջի, եւ ի սմանէ դեսպան լինի առ Պարսիցն արքայն, մինչ զի պատճառ եղեւ ունելոյ Մոսկովաց զԿերչսն, եւ ի դառնալն ի Պարսից մեռանի յԱշտարխանն»[7]):

Այս փաստաթղթերից մի քանիսը № 85, 98 եւ 100 կեղծ են համարուած Աշոտ Յովհաննիսեանի կողմից իր վերոյիշեալ աշխատութեան մէջ· խօսք կայ նաեւ Օրիի Պռոշեան ծագում ունենալու մասին: Նորա կարծիքով այդ թղթերի հեղինակն ու գրիչը Իսրայէլ Օրիի գործակից Մինաս վարդապետն է, եւ թղթերը գրուած են ոչ թէ Հայաստանում, այլ Մոսկուայում, բովանդակութիւնը յարմարեցնելով ժամանակի քաղաքական վիճակի եւ նիւթական պահանջներին: Սրանց կարգին են Եզեանի № 102 եւ ապա հեղինակի № 1 Յաւելուածում մէջ բերած, որոնք մի տեսակ պարտագիրներ են հայ մելիքների կողմից Գոլովինին եւ Նիկոլայ սպաթարին· առաջինին խոստանում են տալ քսան հազար ոսկի եւ երկրորդին չորս հազար, երբ իրենց գործը յաջող ելք կը ստանայ: Այս հանգամանքը բնականաբար տարակուսանք է յառաջ բերում Մինաս վարդապետի եւ Օրիի անձի եւ գործի նկատմամբ[8]):

Ընդունենք ըստ ամենայնի հաստատուած, որ յիշեալ թղթերը կազմուած են եւ կնքուած Մոսկուայում· դորանով դեռ չեն հերքւում ամբողջ շարժման ծագման հետ կապուած փաստաթղթերի վաւերականութիւնը եւ ղորա հետ էլ Օրիի Պռոշեան եւ մելիքների ներկայացուցիչ լինելու վկայութիւնը: Այդ մի ստիպողական տուրք էր, գուցէ, պատմական դէպքերի եւ հանգամանքների ճնշման ներքոյ, որ անշուշտ ստուեր է ձգում որոշ չափով հեղինակի անձի եւ գործի վրայ, բայց ոչ ի սպառ արկածախնդրութեան նոյնանիշ դարձնում այն:

---

[1]) Эзов. № 5. էջ· 9:

[2]) Անդ № 6 էջ· 17 եւ № 98· էջ· 154: Համեմ· նաեւ մելիքների գրած թուղթը Головин-ին· № 100· էջ· 162· «եկաւ մեզ էհաս իէլ Օռի Պռոշ իշխնի տոհմէ»:

[3]) Эзов· № 17· էջ· 61 եւ № 21· էջ· 66:

[4]) Անդ № 120· էջ· 189:

[5]) Անդ № 126· էջ· 199· եւ № 127· էջ· 202:

[6]) Անդ· № 129· էջ· 204 եւ № 131· էջ· 205:

[7]) Հանդէս Ամս·, 1897· 27:

[8]) Աշոտ Յովհաննիսեանի յիշեալ փաստաթղթերի ուսումնասիրութիւնն ու պատճառաբանութիւնները նրանց անվաւերականութեան մասին որքան եւ ուշագրաւ, սրամիտ, բայց ըստ ամենայնի ընդունելի չեն առանց այլեւայլութեան: Տարակոյսներ չեն պակասում նրա պնդումների եւ եզրակացութիւնների դէմ յիշուած թղթերի ամբողջութեան նկատմամբ: Փաստաթղթերի հեղինակը գտնելու լեզուական համեմատութիւնները, նորա կարծիքով «աւելի զօրեղ միջոցներ» Մինաս վարդապետի հետ կապելու, ըստ մեզ երկբայական են եւ ոչ բաւարար: Առ հասարակ լեզուական տուեալների վերայ հանուած եզրակացութիւնները բարդ են, դժուար եւ կարող են երկրորդական արժէք ունենալ իբրեւ փաստ: Աւելի կարեւոր կը լինէր գրի նմանութեան փաստը հաստատել: Բայց այդ եւս համոզիչ չէ բերած օրինակներով· II եւ III նկարներով փաստաթղթերի գրիչը նոյն անձը լինել կարող չէ: Մենք ընդունում ենք, որ հասակի հետ փոխուել կարող է մարդու ձեռքը, բայց սրանք բոլորովին տարբեր մարդկանց գրածներ են: Կասկածելի է նաեւ, որ I եւ II նկարներով փաստաթղթերի գրիչն ու հեղինակը նոյն անձը լինի: Ուշադրութեան առնենք հէնց մի հանգամանք· I նկարով փաստաթղթի մէջ միշտ Օրիի անունը գրում է «իէլ», «պրն իէլ», եւ այդ մի երեսում չորս անգամ, մի տեղ միայն «իղէլ», որ դարձեալ յօգուտ երկու թղթերի գրիչների տարբերութեան է, իսկ II նկարով փաստաթղթի մէջ, որ Մինաս վարդապետի բուն գիրն է, «պրն իսէլ», եւ այդ կրկնած է մի երեսի մէջ հինգ անգամ: Այս ցոյց է տալիս, որ Մինաս վարդապետը Իսրայէլ անուան համար ունէր իր հաստատուն սղագրութիւնը, որ մինչ այդ հարիւրաւոր անգամներ գործածել էր իր նամակների եւ թղթերի մէջ: Բայց նորա առարկութիւններից ամէնից կարեւորը նոյն կնիքների գործածութիւնն է նոյնանուն տարբեր անձնաւորութիւնների կողմից: Էջմիածնի աթոռակալ Մինաս վարդապետի եւ Ռուսաստանում գործող Մինաս վարդապետի կնիքները ըստ ամենայնի նոյն լինել կարող չեն, եւ եթէ նոյն են, կեղծիքն ակներեւ է:

Այս ցուցումների նպատակը չէր հերքել Աշոտ Յովհաննիսեանի պնդումները, այլ մատնանշել, որ բոլորովին անվիճելի չեն դրանք: Այս հարցի վերջնական պատասխանը դարձեալ նրանից պիտի սպասել, որ հնարաւորութիւն ունի նոր պրպտումներ կատարելու պետական դիւաններում եւ մեր մէջ եզակի մասնագէտ է Օրիի վերաբերեալ գրականութեան նկատմամբ:

Մեր թուած փաստաթղթերից ամէնից կարեւորները կասկածի ենթարկելու հիմք չունինք, այն է մելիքների պապին, կուրֆիւրստին, Պետրոս Մեծին գրած թղթերը Անգեղակոթից, եւ նրանց տուած հաւատարմաթուղթը Օրիին[1]: Թղթերի գունաւորումը քաղաքական հանգամանքների եւ ուղղուած անձերի համեմատ կարելի է եւ հասկանալի, բայց որ նրանք երեւակայութեան կամ ստութեան արդիւնք են, ո՛չ: Անարժէք չեն այս տեսակէտով կուրֆիւրստի № 17 եւ Լէոպոլդ կայսեր № 21 գրութիւնները, առաջինը Պետրոս Մեծին եւ երկրորդը հայ մելիքներին, որ հետեւանք են եւ պատասխան մելիքներից ստացած թղթերի: Նոյնը պիտի ասենք Բոշկայի տուած տեղեկութեան մասին: Վերջապէս ի նկատի պիտի ունենալ Արջիլի վկայութիւնը, որ կարող էր ծանօթ լինել Օրիի հօր հետ, իբրեւ ժամանակակից եւ ընդհանուր շահերով եւ ձգտումներով կապուած մարդիկ ընդդէմ Պարսից ապստամբական մտքերի, իսկ Օրիին ոչ միայն լաւ ծանօթ էր, այլ եւ նորան «հաւատարիմ եւ ճշմարիտ բարեկամ» (confides et sincerus amicus) է անուանում[2]:

Սրանց վրայ պէտք է աւելացնել եւ Աղուանից Եսայի կաթողիկոսի վկայութիւնը Պետրոս Մեծին 1721 թուի Ապրիլի 1-ի թղթի մէջ. «մեր մեծազգի եւ մէլիք զատայ եւ ձեր մեծութե էլչի կարգեալ Իսրայէլ Օռին» եւայլն, որ անշուշտ նրա Պռոշեան ծագումն է ակնարկում[3]:

Այս փաստաթղթերով եւ վկայութիւններով ինքնին հերքած պիտի համարել Օրիի գործի եւ անձի արկածախնդրական բնոյթը, որ կամեցել էր տալ Կրուզինսկին: Փաստաթղթերի ընթերցումից եւ քննութիւնից բոլորովին այլ տպաւորութիւն է ստացւում Օրիի մասին: Աշոտ Յովհաննիսեանի խօսքերով արտայայտած, նրա տուած բնութագիրը նոյնչափ մօտ է Օրիին, որչափ կարրիկատուրան օրիգինալին[4]: Օրին ոչ միայն շահախնդիր չէ, այլ եւ յանձն է առնում նիւթական եւ բարոյական զրկանքներ իւր մտադրեալ նպատակին հասնելու համար: Նա անխոնջ է իւր ձգտումների հետ կապուած աշխատանքի մէջ եւ ցուցադրում է անսպառ եռանդ եւ սէր դէպի իւր գործը: Կասկածելի է եւ միտումնաւոր ընդհակառակ Կրուզինսկու գունաւորումը, որ հետեւանք էր այն երկիւղի, թէ ռուսական քաղաքականութեան եւ Օրիի յաջողութիւնը վտանգաւոր կը լինի միսիոներական գործին: Ֆրանսիացիների քաղաքական-առեւտրական ձգտումները Պարսկաստանում, որոնք նաեւ կաթոլիկութեան պաշտպանն էին արեւելքում, աւելի եւս պարզում են Կրուզինսկու բռնած դիրքը[5]:

Ուրիշ աղբիւրներ եւ ցուցումներ եւս մասամբ օգնում են ճշդելու Օրիի ծագումն ու հայրենիքը: Հայ մելիքներն իրենց թղթերի մէջ մատնանշում են մելիք Իսրայէլի, Օրիի հօր, տոհմի եւ Նախիջեւանի խաների թշնամութիւնը: Օրին նոյնը կրկնում է Իոհան-Վիլհելմ կուրֆիւրստին ուղղած յայտարարութեան մէջ՝ նրան մահացու թշնամի համարելով իրենց ընտանիքին[6]: Այդ թշնամութիւնը զօրեղ էր և հասկանալի իրար սահմանամերձ լինելուց եւ քաղաքական հակամարտութեան պատճառով: Օրիի հայրենիքը յիշուած չէ աղբիւրների մէջ: Բայց մենք գիտենք, որ Պռոշեանների կեդրոններն էին Շահապունեաց գաւառում նոյնանուն բերդի հետ Ոծոպը, Սրկղունքի հետ Մարտիրոս գիւղը Վայոց ձորում: Մելիք Իսրայէլի բնակավայրը պէտք է որոնել այս տեղերում իբրեւ Պռոշեան տոհմի ներկայացուցչի: Բացի դորանից Օրին էլ ունի մի ցուցում, որ իւր հայրենիքից մինչեւ մելիք Սաֆրաղի Անգեղակոթ գիւղը, որին այցելութեան է գնում անմիջապէս, հեռու չէր[7]: Օրիի հայրենիքը որն էլ ընդունելու լինինք սրանցից, աւելի հեռու չէ քան մի օրուայ ճանապարհ: Իսկ Մարտիրոս գիւղից շատ աւելի մօտ է լեռնային ճանապարհով: Հաւանօրէն հէնց այս գիւղն էլ պիտի համարել Օրիի հայրենիքը:

ԺԷ. դարու երկրորդ կիսում, 1671 թուին, մենք տեսանք մի շարք «պարոններ» յիշուած Ոծոպի արձանագրութիւնների մէջ, որոնց բնակութեան վայրը Մարտիրոս գիւղն էր (եր. 135): Կարծում ենք դրանք Պռոշեանների մնացորդներ են եւ Օրիի ազգականներ: Մելիքները կուրֆիւրստին գրած թղթի մէջ յայտնում են, Իսրայէլ Օրիի տոհմից երեք հոգի նահատակուած կրօնի համար երեսուն տարի առաջ, ուրեմն 1670 թ. մօտաւորապէս եւ դրանք են մելիք Մարտիրոս, մելիք Աղաջան եւ Գարաղան (Garagan—Կարախան?): Նոյն տեղեկութիւնը կայ եւ Օրիի վկայականի ու Պետրոս Մեծին ուղղած թղթի մէջ, միայն առանց անունների[8]: Արդ, այս նահատակ Պռոշեաններից երկուսի անունը եւ մահուան ժամանակը նոյնանում են մեր արձանագրութիւնների երկուսի հետ՝ «պարոն» Աղաճանի եւ «պարոն» Մարտիրոսի, մի զուգադիպութիւն, որ չպիտի վրիպէ մեր ուշադրութիւնից: Այս հանգամանքը մեզ ստիպում է ճշմարտանման համարել, որ Օրիի հայրենիքը Մարտիրոս գիւղն է, այնտեղի «պարոնները» Պռոշեան մնացորդներ, որոնց պատկանում է եւ Օրին:

---

[1] Эзов. № 2, 3, 5, 6:

[2] Անդ. № 126 եւ 127:

[3] Հայ—ռուս Օրիենտացիայի Ծագման խնդիրը. Յաւել. № 14:

[4] Israel Ory. եր. 66:

[5] Կրուզինսկու աշխատութիւնը ձեռքի տակ չենք ունեցել, այլ օգտուել ենք Եզեանի եւ Ա. Յովհաննիսեանի աշխատութիւններից եւ քաղուածքներից:

[6] Տես եր. 144 սոյն գրքի մէջ:

[7] Эзов. № 11. եր. 52:

[8] Անդ. № 3. 5. 6:

Այժմ փորձենք մի քանի խօսքով ամփոփել Իսրայէլ Օրիի գործի ծագումն ու բնոյթը: Խաչակրաց արշաւանքներից դեռ եւս Կիլիկիայի հայերը սովոր էին իրենց աչքերն ուղղել արեւմուտք, երբ նրանց վտանգ էր սպառնում հարեւան մահմետականութեան կողմից: Արեւելքին այդ գաղափարն սկզբում օտար էր: ԺԶ. դարու կէսերից միայն երեւան են գալիս այստեղ նման փորձեր: Ստեփանոս Ե. Սալմաստեցին անձամբ դիմում է Պօղոս Գ. Պապին, Վենետիկի հանրապետութեան նախագահին եւ ապա Կարլոս Ե.ին Հայաստանի ազատագրութեան խնդրով: Ստեփանոսի ձեռնունայն վերադարձը չյուսատացրեց եւ նորա յաջորդ Միքայէլ Սեբաստացուն, որ յատուկ պատգամաւորութիւն ուղարկեց Համ Աբգար Թոքաթեցու գլխաւորութեամբ եւ ապա առանձին էլ թուղթ գրեց, իր հպատակութիւնը յայտնելով Պիոս Դ. պապին: Արդե՞օք քաղաքական կացութեան հետեւանք էր այս, կաթոլիկ միսիոնարների թելադրութեան, թէ հին՝ Ներսէս մեծի եւ ուրիշների անունով տեսիլների աւանդութեան. հաւանական է բոլորն էլ իրենց բաժինն ունենան մի այդպիսի ձեռնարկութեան յղացման մէջ, բայց ամէնից աւելի քաղաքական եւ տնտեսական ծանր կացութիւնը, որի մէջ գտնւում էր ժամանակակից հայութիւնը:

ԺԶ. դարու առաջին կէսը Օսմանեան աշխարհակալութեան հզօր ժամանակն էր, որ հաւասարապէս սպառնալիք էր Պարսկաստանի հետ եւ արեւմտեան քրիստոնեայ պետութիւններին: Այս վտանգի ազդեցութեան տակ կրկին զարթնում է Խաչակրաց արշաւանք սկսելու միտքը, բնականաբար պապի ղեկավարութեամբ: Պարսիկներն իսկ դիմեցին Կարլոս Ե.ի օգնութեան ընդհանուր թշնամու դէմ: Այսպիսի քաղաքական պայմաններում հասկանալի է եւ Հայոց դիմումը:

Բայց ինչ որ ենթադրաբար կարելի է ասել ԺԶ. դարու մասին, պարզ է ԺԷ. դարի նկատմամբ: Պատահական չէր ամենեւին, որ հայ ազատագրութեան ղեկավարը Նախիջեւանի շրջանից էր: Ունիթորները ոչ մի տեղ այնպիսի յաջողութիւն չէին ձեռք բերել արեւելեան Հայաստանում, ինչպէս այստեղ, Պռոշեանց եւ Իսրայէլ Օրիի հայրենիքում՝ Ճահուկ եւ Շահապունիք գաւառներում: Այնտեղ էր հաստատուած նրանց եպիսկոպոսութիւնը, այնտեղ էր նրանց կազմած կաթոլիկ համայնքների մեծագոյն մասն իրենց հոգեւոր կեդրոններով եւ վանքերով: ԺԷ. դարը կաթոլիկ քարոզչութեան համար առաւել յուսալից էր: Սէֆեանների տիրապետութեան ժամանակ շահ Իսմայէլից սկսած աւելի եւս յաճախում են միսիոնարների երթեւեկութիւնը: Շահ Աբասի եւ նորա յաջորդների օրով Պարսկաստանի եւ եւրոպական պետութիւնների մէջ սկսւում են քաղաքական–վաճառականական յարաբերութիւններ: Նրանք իրենց դեսպանութիւններն ունէին յաճախ եւ ենթարկեալ միաբանութիւնները, որոնցից եւ դեսպաններ էին նշանակւում: Պապի ներկայացուցիչներն էին Կարմելեանները եւ Ֆրանսիական կառավարութեանը՝ Ճիզուիթները, յատկապէս Լուդովիկոս ԺԴ.ի ժամանակ: Բայց նոյնիսկ Պորտուգալիան, Լեհաստանը իրենց ներկայացուցիչներն ունէին եւ անտարբեր չէին իրենց քաղաքական նպատակների համար հովանաւորել եւ կաթոլիկ պրոպագանդան: Բազմաթիւ փաստերով կարելի է ցոյց տալ, թէ ինչպէս պապերը, Փրանսիական արքունիքը, բայց երբեմն եւ միւս պետութիւնները բանակցութեան մէջ են Պարսից հետ, որոշ դիւրութիւններ եւ արտօնութիւններ ձեռք բերելու հայ եկեղեցուց կտրուած եւ կաթոլիկութեան յարած իրենց հաւատակիցների համար: Միարարների եպիսկոպոսներն իսկ յաճախ միջնորդ են արեւմուտքի եւ Պարսից արքունիքների մէջ: 1619 թուին Օգոստինոս Բաջենց թղթեր է բերում պապի, Փրանսիական եւ իսպանական թագաւորների կողմից եւ մատուցանում շահին քրիստոնեաների պաշտպանութեան համար: Մատթէոս Յովհաննէսեան (Avanicensis) Պիրամոլլի յաջորդն իբրեւ եպիսկոպոս, Կղեմէս Թ.ի, Լուդովիկոս ԺԴ.ի եւ ապա Թուսկանայի դուքսի եւ Վենետիկի ծերակոյտի կողմից թղթեր է տանում Պարսից շահին 1669 թուին, իր հետ ունենալով ծագմամբ հայ Պետիկին: Շահը իր կողմից նոյն եպիսկոպոսի ցուցմունքով դեսպան է ընտրում Անտոն Նազարեանին եւ Ազարիա Ճահկեցուն, որոնք եւ տանում են շահի պատասխանները պապին, Փրանսիական թագաւորին եւ միւսներին եւ նրանցից կրկին պատասխան բերում 1674/5 թուին: Այս թղթերի բովանդակութիւնն էր շահի պաշտպանութիւնը խնդրել իր հպատակ քրիստոնեաների համար, բայց յատկապէս Նախիջեւանի գաւառի կաթոլիկ գիւղերի հարկերի թեթեւութեան եւ տեղական իշխանաւորների կեղեքման դէմ, նաեւ դաշնակցելու քրիստոնեայ պետութիւնների հետ ընդդէմ օսմանցիների: Կղեմէս Ժ. եւ Դոմինիկեանների կարգապետը 1673 թ. ուղարկում են Ֆրանցիսկոս Պիսկոպոսին իբրեւ քննիչ: Մի անգամ արդէն նա 1664 թուին՝ ուղարկուած էր Աղեքսանդր Է. պապի կողմից շահի մօտ Նախիջեւանի կաթոլիկ գիւղերի հարկերի թեթեւացման համար եւ այժմ կրկին անգամ 1675 թ. ներկայանում է շահին Անտոն Նազարի եւ Ազարիա Ճահկեցու հետ Ղազվինում եւ յանձնում իր եւ իր ընկերների բերած թղթերը: Շահը ներում է կաթոլիկ գիւղերի 70.000 լիրա պարտքը եւ յանձնարարում նրանց Թաւրիզի կուսակալի պաշտպանութեան ընդդէմ Նախիջեւանի խաների: Լուդովիկոս ԺԴ. 1682 թ. կրկին անգամ դիմում է շահին Ճիզուիթների ձեռքով իր խոստովանահայր Լաշէզի միջնորդութեամբ, Նախիջեւանի կաթոլիկ հայերի դրութեան թեթեւացման համար, որ աւելի եւս սկսել էր ծանրանալ այս ժամանակները: Սեբաստիանոս Քնապը 1685 թ. մատուցանում է շահին պապի, Հռոմէական կայսեր, Լեհաց թագաւորի թղթերը, որոնց մէջ կրկնուած էր նաեւ զինակցութեան գաղափարը։ Նախիջեւանի եպիսկոպոսը Պօղոս Մկրտիչ 1692 թուին գալիս է պապի եւ Վենետկի սովորական ընծայական թղթերով իր թեմը[1])։

Այս հանգամանքներն ու անցուդարձը, պապի եւ եւրոպական արքունիքների կողմից, ստացուած դրամական օժանդակութիւնները կաթոլիկ համայնքների համար, ճանապարհորդների, դեսպանների երթեւեկութիւնը չպէտք է անխուլ մնային ոչ պապական հայութեան կողմից, որոնք աւելի ենթակայ էին տեղական խաների եւ իշխանների կամայականութեան։ Հաւանօրէն միսիոնարներն էլ իրենց կողմից աւելի էին ներշնչում՝ օգնութիւն եւ թեթեւութիւն արեւմուտքից սպասել, յատկապէս պապից, ի հարկէ, հայ եկեղեցու հնազանդութեան պայմանով։

Ժողովրդի հոգեւոր եւ աշխարհիկ դասի ներկայացուցիչների տրամադրութիւնը՝ դիմելու պապի եւ արեւմուտքի օգնութեան, աւելի եւս հասկանալի կը լինի, երբ մատնացոյց անենք ժողովրդի տնտեսական նեղ կացութիւնը, որպէս հետեւանք պարսկական կառավարութեան եւ հարկապահանջութեան կամայական կարգաւորութեան Շահ Աբաս մեծի յաջորդների ժամանակ, որ Հայաստանում շատ աւելի ծանր էր։ Տասանորդից զատ բնական բերքերով, պէտք է եւ գլխահարկ տային իւրաքանչիւրը մի դուկատ. ով վճարել չէր կարող, պէտք է մահմեդական դառնար։ Սակայն այս հարկերն էլ հաստատուն սահման չունէին, այլ ենթակայ կամայական յաւելումների եւ կեղեքումների պաշտօնեաների կողմից, որոնք նշանակւում էին շատ յաճախ շահադիտական կամ եսական դիտումներով, սկսած ամենաբարձրներից մինչեւ ստորինները։ Նահանգների կամ երկիրների վարիչներին կամ խաներին նշանակում էր շահը մեծամեծ նուէրներ ընդունելով ինքը եւ իւրայինները։ Բացի այդ՝ մեծ տօներին կամ շահին այցելութեան գնալիս, պէտք է նոր նուէրներ ուղարկէին կամ տանէին անձամբ։ Նոյնը կատարւում էր երկրի խաների կողմից աւելի ստորին պաշտօնէութեան նկատմամբ։ Հարկերի հետ ժողովրդի կեղեքման աղբիւր էր կաշառակերութիւնը, խաների եւ պաշտօնեաների կամայական վերաբերմունքը փող կորզելու նպատակով։ Շարդէնի տուած տեղեկութեան համեմատ Երեւանի խանը իբրեւ հարկ տարեկան հաւաքում էր 32000 թուման, մօտաւորապէս 500·000 ֆրանսիական վահանադրամ (écu) եւ 200·000 էլ անուղղակի եկամուտներ կեղեքումներից կամ ընծաներից[2])։ Աւելի ստորին պաշտօնեաներն էլ իրենց հերթին էին քերթում խեղճ ժողովրդի կաշին։ Զաքարիա սարկաւագը անցողակի կերպով պաշտօնեաների եւ խաների կեանքից պատմում է դէպքեր, որ շատ ցայտուն կերպով գաղափար են տալիս այդ մասին։ Զալ խանի տեղակալ Մուրթուզա-ղուլի խանը, տեսնելով, որ ինքը «աւագ իշխան» չպիտի նշանակուի հակառակ արքունի մեծամեծներին ուղարկած կաշառքներին, «կամեցաւ հնարիւք իմն կողոպտել զերկիրն» եւ պատճառ դտաւ, «թէ հրաման է թագաւորին՝ զի գինի ոչ երեւեսցի յաշխարհին Երեւանայ»։ Պաշտօնեաները կնքում են բոլոր կարասներն ու ամանները, իսկ լեռնային երկիրներում, ուր գինի չկայ, «կնքեցին զպուտկունս մածնի եւ թանի»։ Գաւառապետներն ու տանուտէրներն ստիպուեցան դրամական մուրհակներ տալ խանին եւ գինու հրաման ստանալ, մինչեւ որ գիւղերից դրամ հաւաքեցին եւ նրան տուին[3])։ Նոյն շահ Հիւսէյինի ժամանակ Երեւանի Ֆարզալի խանը հաւաքում է 500 աղջիկ որպէս թէ շահի հարեմի համար եւ ծնողներից փրկանք առնելով, ազատում է[4])։ Չեն պակասում եւ աւելի ստորին պաշտօնեաների կողմից կաշառակերութեան, հարկահաւաքման կեղեքումների նկարագրութիւններ, որ զանց ենք առնում չերկարելու համար[5])։

Հարկատուութեան էր ենթակայ նաեւ կաթողիկոսական աթոռը կամ եկեղեցին՝ նախ օսմանցիների եւ ապա պարսից կողմից։ Դաւիթ եւ Մելքիսեդ կաթուղիկոսների օրով էջմիածինը մինչեւ իսկ պարտքի տակ էր եւ Մելքիսեդէկն ստիպուած էր եկեղեցական սրբութիւններ կամ անօթներ գրաւ դնել։ Բանդարկելութիւնից ազատուելու համար նա խոստացել էր շահին միանուագ 300 թուման վճարել, իսկ շահը նշանակել էր տարեկան 100 թուման պահանջել[6])։ Հայ կաթուղիկոսներն էլ ազատ չեն նուէր կամ կաշառք տալու ստիպմունքից[7])։ Բացի դորանից նրանք օգնութեան պիտի հասնէին այն քրիստոնեաների փոխարէն, որոնք իրենց գլխահարկը վճարել կարող չէին եւ ստիպուած պիտի լինէին մահմեդականութիւն ընդունել, որ լրացւում էր ըստ եւրոպացի ճանապարհորդների եկեղեցական տուրքերի կամ հարկերի միջոցով։ Ըստ ոմանց կաթուղիկոսների եկամուտը այդպիսի հարկերով հասնում էր մինչեւ 600·000 եւ ըստ այլոց 200·000 թալերի, որ երբեմն ամբողջապէս վճարւում էր աղքատ քրիստոնեաների հարկերի փոխարէն. ի հարկէ չափազանցութիւն, թէ՛ գումարի քանակութեան եւ թէ՛ գործադրութեան կողմից[8])։

---

[1]) Ալիշան· Սիսական· 372—373, 377, 394, 398, 399, 400, 401։ Արարատ· 1915· 61։

[2]) Voyage de Chardin en Perse et autres lieux de l'Orient. Paris. 1811. t. V. Chap. VII. եւ t. II. 197.

[3]) Զաքարիա Սարկաւագի պատմ· 1870· Բ· 134։

[4]) Անդ. Բ· 139։

[5]) Անդ· 39/40, 45, 76/7։

[6]) Առաքել Դաւրիժեցի· Գլ· ԺԸ։

[7]) Զաքարիա· Բ· 60/1։

[8]) Aschot Iohannissian. Israel Ory. էր· 40։ Վաղ ժամանակներից սովորութիւն էր հայ հաւատացեալների կողմից աթոռահաս կոչուած կամաւոր նուէրներ տալ, որ սրբադրամ, պտղի

Դրամական ծախսերի մեծ դուռ է բաց անում նաեւ Յակոբ Ջուղայեցու ժամանակ Եղիազարի ըմբոստ եւ հակաթոռական ընթացքը։ Կաթողիկոսն ստիպուած էր 1665 թ․ Պոլիս գնալ եւ ըստ Զամչեանի երեսուն քսակ, մօտ 9000 թուման, ծախսել արքունիքում՝ միւռոն բաշխելու եւ նուիրակներ ուղարկելու հայրապետական իրաւունքները վերականգնելու համար։ Կաթողիկոսը իւր այդ եւ ուրիշ ծախսերը ծածկելու համար ստիպուած էր ժողովարարութիւն սկսել, որին հակառակում է Երեւանի խանը, կամենալով բաժին ստանալ, եւ երբ կաթողիկոսը ճանապարհ է ընկնում շահին տեսութեան գնալու, ոչ միայն արգելում է եւ հսկողութեան տակ դնում, այլ եւ նորա անունով 1300 թուման է հաւաքում, «թէ աթոռին պարտն տամք», բայց խաբում է եւ «ինքն լափեաց»։ Կաթողիկոսն ստիպուած է լինում ծածուկ փախչել եւ ընծաներ տալով շահին իւր իրաւունքները վերականգնել ու պաշտօնանկ անել տալ խանին։ Կաթողիկոսին օգնեցին եւ ուրիշ գանգատաւորներ․ «էր անդ եւ Լակզաց խանն, եւ նա եւս ասաց, Սաֆի խանն այնքան ապրանք առաքեաց ի տուն իւր, զի ես Յ (300) թուման մաքս առի, թո՛ղ զբեռանցն»[1]։

Քաղաքական-տնտեսական այսպիսի պայմանների մէջ, կաթոլիկ հայերի վիճակի համեմատական թեթեւութիւնը պապի եւ եւրոպական արքունիքների բարեխօսութեամբ, նոր խաչակրաց արշաւանքի քարոզութիւնն ու քրիստոնեաների միացած ուժերի յաղթութիւնները օսմանցիների դէմ, որ նկարագրուած է նոյն իսկ Գեղարդի վերոյիշեալ Յայսմաւուրքի յիշատակարանի մէջ Սուքիաս քահանայի կողմից, հարեւան Վրաց ապստամբական շարժումները, որ աւելի թանձրացել կերպարանք ստացան մի քանի տարի յետոյ՝ «միաբանել ընդ հիւսիսային թգրին Մօսկովու»[2], *միսիոնարների փափուկները տանջուած կաթողիկոսի ականջին Սպահանում եղած ժամանակ, թէ պապի միջնորդութիւնը Ֆրանսիական թագաւորին բաւական կը լինի նորա դառն վիճակի թեթեւացման համար, եթէ միայն հնազանդի պապին*[3]*, որին անճար կաթողիկոսն ստիպուած էր հաւատալ, այս բոլորը մեզ հասկանալի են դարձնում Էջմիածնի ժողովի իրողութիւնը եւ որոշումը՝ հայ մելիքների եւ հոգեւորականների ներկայացուցիչներից մի պատգամաւորութիւն ուղարկել Եւրոպա, օգնութիւն խնդրելու Հայաստանի ազատագրութեան միտքը գլուխ բերելու համար։ Ժամանակի տրամադրութեան համոզիչ յայտարարն է եւ վերոյիշեալ Պետիկի գիրքը, 1676 թուին, ուր ծերունի կաթողիկոսի համար ասուած է, թէ յոյս ունի այնքան ապրել, մինչեւ յաղթող հանդիսանան քրիստոնեաները մահմեդականների վրայ խաչի նշանի տակ իւր քաջ հայկական զօրքերով եւ Հռոմէական օգնական գնդերով։ Կաթողիկոսի կողմից Պետիկը Պիսկոպոսի հետ բերում է եւ հնազանդութեան թուղթ Կղեմէս Ժ․-ին եւ նամակներ եւրոպական կաթոլիկ իշխաններին։ Նրան յանձնարարուած էր նաեւ բերանացի խօսել կաթողիկոսի «գաղտնիքի» մասին Լէոպոլդ կայսեր հետ*[4]։

Այս բոլոր հանգամանքները հաստատում են Էջմիածնի ժողովի իրական բնոյթն ըստ էութեան, որի մասին տեղեկութիւն ունինք միայն քսան տարի յետոյ՝ Անգեղակոթում գումարուած մելիքների գրութիւններից։

Մենք երկար կանգ չենք առնի Օրիի գործունէութեան մանրամասնութիւնների վրայ, այլ կը մատնանշենք միայն ահրաժեշտը նորա անձնաւորութիւնն ու գործի արժէքը լուսաբանելու համար։ Մելիքների պապին գրած թղթի քաղուածքներից տեսանք (երես 143), որ Յակոբ կաթողիկոսի մահուամբ 1680 թուին պատգամաւորութիւնն ստիպուած էր ետ դառնալ։ Օրին միայն շարունակում է հայ վաճառականների հետ ճանապարհը իւր խօսքի համեմատ՝ գլուխ բերելու պատգամաւորութեան գործը։ Բայց մենք էլ Աշոտ Յովհաննիսեանի հետ հաւանական չենք համարում, որ քսան տարեկան մի երիտասարդի այդպիսի դժուարին եւ պատասխանատու գործ յանձնարարուէր։ Յամենայն դէպս, նա գրաւոր փաստաթուղթ չունէր իւր ձեռքում այդ մասին, այլ միայն մի յանձնարարական՝ պատգամաւոր եպիսկոպոսներից մէկի կողմից[5]*։ Պէտք է ասել, որ մինչեւ 1698 թիւը, երբ արդէն փաստաթղթերի հիման վրայ կարելի է հետեւել նորա կեանքի եւ գործի ընթացքին, միակ աղբիւրը Օրին ինքն է այն զեկուցմամբ, որ նա տալիս է իւր հովանաւոր կուրֆիւրստին եւ ապա ռուսական կառավարութեան։ Երեք ամիս Վենետկում մնալուց յետոյ, անցնում է Ֆրանսիա, առաջին վեց տարին ծանօթանում է երկրի հետ, իսկ երկրորդ վեց տարին զինուորական ծառայութեան մէջ էր որպէս կամաւոր, սկզբում տեղակալ սպայ (*ПОРУТЧИК*) հետեւակ զօրքի մէջ եւ ապա որպէս հեծելազօրի կապիտան։ Նամուրի պաշարման ժամանակ նա գերի է ընկնում անգլիացիների ձեռքը, բայց թագաւորից ազատութեան թուղթ ստանալով, անցնում է Դիւսելդորֆ, սկզբում իբրեւ վաճառական եւ ապա կուրֆիւրստին ծառայութեան մտնում*[6]*։ Օրին կուրֆիւրստին գրած զեկուցման մէջ տալիս է մեզ ուրիշ տեղեկութիւններ եւս իւր կեանքի այս շրջանի մասին։ Նա առիթ է ունեցել դիմել Լուդովիկոս ԺԴ․-ին, բայց առանց հետեւանքի, ինչպէս երեւում է հետագայ խօսքերից։ Անծանօթ լեզուին եւ*

եւ այլ անուններով շարունակուել են մինչեւ մեր օրերը․ Եւրոպացի ճանապարհորդները, երեւի, այս կամաւոր տուրքերն ի նկատի ունին եկեղեցական հարկ առնելով։

1) Զաքարիա․ Բ․ 76—83։

2) Ձեռ․ էջմ․ № 1512․ Յաւել․ Բ․ 39։

3) Chardin. III. 146—147.

4) Aschot Iohannissian. Israel Ory. 47—49:

5) ЭЗОВ․ № 44․ եր․ 92։

6) Անդ․ № 44․ եր․ 93։

երկրի նիստ ու կացին, շրջում է ամբողջ Ֆրանսիան, առանց կարողանալու իւր գործի համար որեւէ բան կատարել: Ապա ստիպուած է լինում չքեղութեան իրերի վաճառականութեամբ զբաղուել, ոչ կարիքի անհրաժեշտութիւնից, այլ որպէսզի առիթ ունենայ ծանօթանալու զինուորական սպաների եւ ամէն կարգի մարդկանց հետ: Պատերազմ հրատարակելուց յետոյ, զինուորական ծառայութեան մէջ է մտել, մասնակից լինելով վեց արշաւանքի: Նրա նպատակն է եղել կրկին խօսելու Թագաւորի հետ եւ մի մարդ խնդրելու, որպէսզի իւր հետ Հայաստան գնայ՝ ստուգելու իրենց նպատակի ճշմարտութիւնը[1]): *Այս ամէնը նա պատմում է, որպէսզի կուրֆիւրստին պարզէ, որ նորա Եւրոպա գալը եւ Ֆրանսիայում դեգերելը կապուած էր իւր մինչ այդ անյաջող առաքելութեան հետ, որ նորա կեանքի էութիւնը վաճառական դառնալը չէր կամ հարստութիւն ձեռք բերել, այլ հոգու մէջ մոխրի տակ թաղնուած կայծի նման ապրում էր իւր հայրենիքի ազատագրութեան գաղափարը:*

Կուրֆիւրստի հետ ունեցած մի խօսակցութեան մէջ նա առիթ է ունենում պատմելու հայերի ազատագրական իղձերի մասին, եւ նորա բարեհաճ վերաբերմունքից յետոյ, նոր եռանդով հետամտութիւն սկսում 1678 *թուի պատգամաւորութեան նպատակին: Դորա հետեւանքն էր Օրիի Հայաստան գալը կուրֆիւրստի յանձնարարական թղթերով Վրաց Գէորգի իշխանի, Էջմիածնի Եղիազար եւ Գանձասարի կաթողիկոսների եւ մելիքների անունով, որոնցից մեր ձեռքն է հասել միայն առաջինը*[2]): *Օրին հէնց սկզբից յաջողութիւն է գտնում, հաւանօրէն կուրֆիւրստի խոստովանահայր Պոտիէի* (Pottier) *աշխատութեամբ, որ Օրիի բարեկամն էր եւ շահագրգռուած Հայոց պապին ցոյց տալիք հպատակութեան խնդրով· այդ աւելի պարզ երեւում է հետագայում: Կուրֆիւրստի թղթերը ըստ էութեան թելադրուած են Օրիի կողմից, բայց նորա երկար բացակայութեան ժամանակ փոխուած էին հանգամանքները, որին անտեղեակ էր նա: Գէորգի խանն արդէն հպատակուել էր շահին եւ Սպահան կանչուելով, պատուաւոր բանտարկելութեան ենթարկուել* 1698 *թուին*[3]): *Մեռել էր Եղիազար կաթողիկոսը, որ ըստ մելիքների առ պապն ուղղած թղթի իւր կեանքի վերջին օրերում ժողով էր ունեցել Էջմիածնում եւ որոշել ընդունելու Հռոմայ հպատակութիւնը՝ օգնութիւն ստանալու համար, եւ նոյնիսկ ճանապարհ ընկել Եւրոպա գնալու, բայց վերադարձել էր Էրզրումից տաճիկների ստիպմամբ*[4]):

Օրին Հայաստան է գալիս 1699 *թուին, Ապրիլ ամսին: Նա տեսակցում է Նահապետ կաթողիկոսի հետ, սակայն առանց ցանկալի հետեւանքի, մերժում է ստանում նաեւ Գանձասարի կողմից, յատկապէս պապին ենթարկուելու առաջարկութեան համար: Օրին ուրախութեամբ է ընդունւում միայն Անգեղակոթում հաւաքուած* 10 *մելիքների կողմից, ուր ներկայ էր նաեւ Ցակոբայ վանքի վանահայր Մինաս վարդապետը, Օրիի օգնականն ու նորա գործի շարունակողը ապագայում: Ժողովը որոշում է ոչ միայն պապին հպատակութեան թուղթ գրել, այլ եւ դժգոհութիւն յայտնել կաթողիկոսների եւ հայ հոգեւորականութեան դէմ: Գործի յաջողութեան դէպքում խոստանում են պապական կաթողիկոս նստեցնել Էջմիածնում: Մի ուրիշ թուղթ մելիքները գրում են Իոհան Վիլհելմ կուրֆիւրստին, ուր յայտնում են նորա* 1698 *թուի Ապրիլ* 13-*ի գրութեան ստացումը եւ Եղիազարի մահը ութ տարի առաջ, Օրիի տեսակցութիւնը Էջմիածնի եւ Գանձասարի կաթողիկոսների հետ, առանց յայտնելու բուն գաղտնիքի էութիւնը: Այստեղ եւս մելիքները արծարծում են միութեան խնդիրը, դժգոհութիւն յայտնում կաթողիկոսների մեծ ծախսերի համար, յիշում Էջմիածնի ժողովն ու պատգամաւորութեան առաքումը, կաթողիկոսի մահն ու պատգամաւորների վերադարձը, Իսրայէլի եւ Օրիի մասնակցութիւնը, Պռոշեանց տոհմի նահատակութիւնը կրօնի համար եւ Օրիի ընտրութիւնը որպէս ներկայացուցիչ: Ապա իրենց երախտագիտութիւնն են յայտնում, որ պէտք է ազատուեն անհաւատների ձեռքից կուրֆիւրստի շնորհիւ: Ամէն բան գրել չեն կարող թշնամիների երկիւղից, տեղեկանալ կարող է նա Օրիից եւ Մինաս վարդապետից: Ապա համառօտ բացատրում են իրենց ազատագրութեան ծրագիրը, որին գլուխ պիտի կանգնէր կուրֆիւրստը, ստանալով Հայաստանի թագաւորութիւնը: Միջոցներ չեն պակասում նրանց, այլ առաջնորդ միայն, որ կուրֆիւրստի եղբայր Կարլ Ֆիլիպը կը լինի ժամանակաւորապէս, իսկ նա Հայաստան կը գայ, երբ ամէն ինչ պատրաստ կը լինի: Եղբօր համար կարելի է մի ուրիշ իշխանութիւն կազմել, որ դաշնակից կը դառնան ընդհանուր թշնամու դէմ*[5]):

Նոյն ժողովում մի ուրիշ թուղթ էլ գրւում է Պետրոս Մեծին: Մելիքները ծանուցանում են իրենց նեղութիւնը պարսիկ լծի տակ, որ «ապի» պայմանական բառով են արտայայտում: Պատմում են 1678 *թուի ժողովի մասին, ինչպէս նախընթաց թղթերում, իւր հետագայ անց ու դարձով: Օրիի բացակայութեան ժամանակ, ոչ ոքի չեն վստահացել ցարի մօտ ուղարկելու· այժմ Օրիին ընտրում են իրենց ներկայացուցիչ, ինչպէս եւ Մինաս վարդապետին, որոնք աւելի մանրամասնութիւններ կը պատմեն: Խոստանում են ենթարկուելու նրան՝ իրենց ազատագրութիւնից յետոյ:Այստեղ այլեւս* խօսք չկայ պապի հնազանդութեան կամ կուրֆիւրստի թագաւորութեան մասին, իսկ քրիստոնեայ թագաւորի ձեռքով ազատուելու դերը յատկացրած է ռուսաց ցարին: Հաւանական չէ, որ 1678 թուի ժողովում ռուսներին եւս դիմելու որոշում եղած լինի. սա նոր միտք էր, որ կարող էր պէտք գալ Եւրոպայում գործը անյաջողութեան հանդիպելուց յետոյ, կամ եթէ յաջողութիւնը կապուած լինէր ցարի բարեկամութեան հետ, որի երկրով պիտի անցնէր Հայաստանին օգնութեան գալիք զօրքը:

---

[1] Aschot Iohannissian. Israel Ory. Anhang № 4.

[2] ЭЗОВ ·№ 1:

[3] Զաքարիա· Բ. խթ·: Տես եւ ЭЗОВ· № 9, եր· 40:

[4] ЭЗОВ· № 2:

[5] Անդ· № 5:

Այն, ինչ որ մելիքները միայն ակնարկով էին յայտնել իրենց պատերազմական ծրագրի մասին, Օրին մանրամասնութեամբ մատուցանում է առանձին գրութեամբ կուրֆիւրստին 1699 թ. Սեպտ. 22-ին[1]: Բանակի սաղմը կազմում է կուրֆիւրստի տրամադրած հեծելազօրքը 2500 հոգուց բաղկացած, այլ եւ այլ տեսակի հրազէնների համեմատ, վեց թնդանօթով (canon) չորսը վեց կալիբրի եւ երկուսը տասներկու, մի ռմբաձիգ թնդանօթ (un mortier) յիսուն ռմբերով, հինգ հարիւր հրացան (mousquet) եւ ըստ այնմ վառօդ, հարիւր դրօշակ՝ մի կողմը խաչ եւ միւս կողմը Ս. Գրիգոր (Լուսաւորիչ):

Պապը, կայսրը, Թոսկանայի դուքսը ցոյց են տալիս բարոյական եւ իրական աջակցութիւն, որոնց երախտահատոյց կը լինի ապագայ ազատուած Հայաստանը: Կայսրը տալիս է 2000 հունգարական հուսար եւ հրետանի: Լեհաց թագաւորն ու ցարը թոյլ են տալիս իրենց երկրով անցնելու զօրքը, բայց խիստ գաղտնիք պիտի մնայ նրանցից կուրֆիւրստին եղած Հայաստանի թագի խոստումը, որովհետեւ նրանք էլ կը կամենային ձեռք բերել այն: Ցարը կարող է 20—30 հազար զօրք տալ, որ հայերին օգնած լինելով, կ'օգնէ իւր հաւատակից վրացիներին:

Արշաւանքը պիտի սկսուի 1700 թուի Մայիսի վերջին, բանակն անցնելով Բոհէմիայի, Լեհաստանի եւ Ռուսաստանի վրայով, այնտեղից Նիզովիա եւ ապա նաւերով Բագու եւ Շամախի: Այստեղի հայերը զինուելով օգնութեան կը հասնեն, տեսնելով խաչի դրօշակները: Ապա զօրքը չորս մասի բաժանուած, գրաւում են Գանձակը, Լոռին, Ղափանը եւ Նախիջեւանը Օրդուբատի հետ, այստեղ Երասխով գծուած սահմանի մօտ միանում են բոլոր մասերը եւ բռնում անցքերը: Իսկ հայ մելիքները, որոնց նախապէս իրազեկ պիտի արուէր Ամիրբէկի ձեռքով, 5000 հոգով պաշարում են Երեւանը: Գանձակը ամրութիւն չունի եւ ոչ զօրք, այլ միայն 30 մարդ խանի ձեռքի տակ: Լոռին եւ Ղափանը նոյնպէս ամրութիւն չունին, իսկ շրջապատը հայութիւն է: Նախիջեւանի խանը միայն հարիւր մարդ ունի: Երեւանը բերդ է, խանն ունի 200 պատերազմիկ, 30 թնդանօթ (canon),առանց ռմբաձիգների (sans mortiers), ռմբերի եւ գրանադների: Զինանոցի եւ վառօդի պահեստներն էլ հայերի ձեռքին են: Քաղաքի վերայ իշխող բարձունքից բաւական է 25 ռմբ ձգել գրաւելու համար: Հայաստանի նուաճումը 20—25 օրուայ գործ է: Ապա կարելի է անցնել դէպի Թաւրիզ եւ աւելի հեռու, թոյլ տալով զօրքին կողոպտել հարուստ քաղաքն ու շրջակայքը: Հայաստանը հարուստ է անասուններով, շերամով, մետաքսով, փողով, որ Հայոց ձեռքն է: Իսկ Պարսկաստանը նոյնպէս հարուստ է թանկագին քարերով, որի վաճառականները հայեր են: Մելիքների անունով 24 ժամուայ ընթացքում կարելի է 200·000-ի չափ զէնքի ընդունակ մարդ հաւաքել, Տաճկաստանի հայ երիտասարդութիւնն էլ պատրաստ՝ կրօնի պաշտպանութեան համար կռուելու 80·000 հոգով եւ վաճառականութիւնը իւր հարստութեամբ օգնելու: Վերջապէս Վրաց իշխանից էլ յոյս ունի մեծ օգնութեան:

Իսկ Պարսիկները ձմեռուայ հասնելով շատ բան անել չեն կարող: Վրանաբնակ ցեղերին, որոնք Մայիսին բարձրանում են լեռները, կարելի է ետ դարձնել կամ ոչնչացնել 5000 հոգով, բռնելով անցքերը: Պարսկաստանի զինուորական ոյժը մեծ չէ, եղածն էլ անկանոն, խաղաղութեան պատճառով անվարժ պատերազմի մէջ: Վրաստանը թէեւ պարտաւորուած է քառասուն հազար զօրք մատակարարել, բայց Հայաստանն ընկնում է երկուսի մէջ: Իսկ բուն Պարսկաստանից, Հայաստանն ու Վրաստանը կորցնելուց յետոյ, հազիւ կարող են քսան հազար մարդ ոտքի կանգնեցնել, որովհետեւ չեն կարող անպաշտպան թողնել արեւելեան նահանգները:

Տաճիկները դժուար որեւէ բան ձեռնարկեն. նոքա առանձին շահ էլ չունին: Կայսրը, Լեհաց թագաւորը եւ ցարը կը հասկացնեն, որ կուրֆիւրստը պարսիկների դէմ է պատերազմում եւ ոչ տաճիկների: Հակառակ դէպքում քրիստոնեայ իշխանները, յատկապէս ցարը, պատերազմ կը հրատարակէ:

Անպայման Օրիի տուած տեղեկութիւնները չափազանցութիւններ են հայոց զօրքի թուի, երկրի հարստութեան եւ ժողովրդի պատրաստութեան նկատմամբ, ինչպէս եւ պակասեցրած է թշնամու ուժը: Այդ պէտք է վերագրել մասամբ Օրիի դիտաւորեալ նպատակին՝ երիտասարդ իշխանի մէջ կասկածներ չզարթեցնելու համար եւ մասամբ իւր աղբիւրների, հայ մելիքների լաւատես տրամադրութեան: Նոքա վստահ էին իրենց ոյժերի վրայ, որ եթէ մի եւրոպացի իշխան առաջնորդ ունենան եւ քիչ թուով օգնական զօրք, կարող կը լինեն դիմադրաւել պարսկական ուժերին: Պէտք է նկատել նաեւ, որ ԺԷ. դարու վերջերը Սէֆեանների պետութեան քայքայման շրջանն էր, որով եւ հասկանալի արեւելեան եւ արեւմտեան սահմաններում ծագած ապստամբական շարժումները: Ցամենայն դէպս, Օրիի լուրջ, բազմակողմանի եւ խոհուն բնաւորութեան, որ ցոլում է նորա բոլոր թղթերից, այս չափազանցութիւնները անհամապատասխան են, բայց նա տոգորուած էր իր ամբողջ էութեամբ մտադրուած նպատակով եւ հաւատում էր, թէ կարող կը լինի գործը դրական վախճանի հասցնել վրաց եւ եւրոպացի իշխանների օգնութեամբ: Այսպէս էր մտածում եւ Յակոբ կաթուղիկոսը:

---

[1] Эзов. № 9:

Այս զեկուցագրի հետեւանքով Օրին յանձնարարականներ է ստանում կուրֆիւրստից՝ դիմելու պապին, Թոսկանայի դուքսին եւ ի վերջոյ կայսեր: Պապին դիմելու համար խնդրում է մի վստահելի հոգեւորական, որի միջոցով բանակցութիւն վարել կարողանայ Հռոմում առանց իր գաղտնիքները յայտնի դարձնելու հայ հոգեւորականութեան կամ կաթուղիկոսի ներկայացուցիչներին: Այդ գործը Ստեփան Բոչկային վիճակուեցաւ, ինչպէս տեսանք առաջ (եր. 144): Օրիին աջակից էր Պոտիէն, որ եւ թարգմանել էր մելիքների կուրֆիւրստին ուղղած թուղթը: Հաստատ տեղեկութիւն ունինք միայն պապի խոստացած աջակցութեան մասին1): Ապա Օրին կուրֆիւրստից պատասխան է ստանում հայ մելիքներին եւ յանձնարարականներ Պետրոս մեծի եւ Լեհաց թագաւորի անուններով: Առաջինի մէջ կուրֆիւրստը մելիքներին խոստանում է օգնութիւն իր եւ դաշնակիցների կողմից2) դրական մտքով, իսկ երկրորդում խորհուրդ է հարցնում, թէ հնարաւո՞ր է մելիքների խնդիրքը կատարել եւ թոյլ կը տա՞յ իր երկրով անցնելու ուղարկուելիք գնդերը. համաձայնութեան դէպքում, պատրաստ է օգնել գործին: Օրին յաջողւում է նաեւ Լէոպոլդ կայսրից մելիքներին պատասխան եւ Պետրոս մեծին յանձնարարական ստանալ3), բայց ոչ համապատասխան իր ցանկութեան: Քաղաքավարական խօսքեր միայն ուղղած մելիքներին, իսկ Օրիին անձնական լաւ յանձնարարութիւն: Այստեղից պէտք է եզրակացնել, որ Լէոպոլդ կայսրը Հայոց ազատագրութեան հարցով հետաքրքրուած չէր, իսկ առանց կայսեր կուրֆիւրստի բարեացակամութիւնը չէր կարող ունենալ այնպիսի ծանրակշիռ նշանակութիւն, ինչպէս կամենում էր տալ Օրին այդ հարցին. պապի, կայսեր եւ դաշնակիցների օգնութեամբ մի տեսակ խաչակրաց արշաւանք կազմել ընդդէմ Պարսից: Ի՞նչ վերաբերմունք ունէր Լէոպոլդը դէպի հարցը, չգիտենք, բայց Օրիի հետագայ բացատրութիւններից այնպէս է երեւում, որ կայսրը անյարմար էր համարում կուրֆիւրստի խնդիրը ցարի երկրով զօրք անցնելու համար, որ այդ գործը վայել է ցարական մեծութեան ձեռնարկել, որպէս Պարսկաստանին սահմանակից, եւ առհասարակ անկարելի է համարում առանց ցարական օգնութեան այդպէս մի գործ կատարել4):

Այս մտքերն իրօք Լէոպոլդ կայսե՞րն էին, թէ Օրին ինքն է յարմարեցնում նոր պայմաններին, չգիտենք: Փաստն այն է, որ Օրիի Մոսկուա գալով 1701 թուին, բոլորովին նոր ուղղութիւն է ստանում նորա բանակցութիւնը, քան մինչեւ այժմ: Գործի գլուխն այժմ ցարը պիտի անցնէր, համապատասխան մելիքների տուած թղթին եւ ըստ մարգարէութեան: Պապին հնազանդելու կամ կուրֆիւրստին թագաւորեցնելու խնդիր չկայ: Մելիքները դիմել են կուրֆիւրստի օգնութեան, որպէս նախազգուշութիւն տաճիկների դէմ, որովհետեւ նա մեծ կապեր ունի եւրոպական իշխանաւորների հետ, որոնցից ոմանք ցանկութիւն են յայտնել օգնելու, եթէ ցարին հաճելի լինի: Զօրքերը Ռուսաստանով անցնելիս ոչ մի վնաս չի լինիլ երկրին եւ կը վճարուի ամէն բանի համար, նուաճուած երկիրը ցարի իշխանութեան պիտի ենթարկի, որն իրագործելու համար բաւական է 15—20·000 կոզակ5): Աւելի մանրամասնութիւններ է տալիս պատերազմական ծրագրի մասին Գոլովինին ներկայացրած զեկուցման մէջ, որ ըստ էութեան նոյն է, ինչ որ կուրֆիւրստին էր տուել, միայն թուերն աւելի չափաւորած եւ իրականութեան աւելի մօտ: Բաւական է 25·000 զօրք, որից 10·000–ը հետեւակ, վեց թնդանօթով, 2 ռմբաձիգով, հարիւր ռմբով եւ ուրիշ պաշարով: Զօրքը երկու մասի է բաժանւում, 10·000 ծովով անցնում են Նիզովիա եւ ապա Շամախի, իսկ 15·000 ցամաքային ճանապարհով Վրաստան. Թիֆլիսի խանը Արչիլի ազգականն է, որ կը միանայ ցարական զօրքին: Շամախի դրաւող զօրքը, որին միանալ կարող են 10·000 զինուած քրիստոնեաներ, չորս կէտերով, ինչպէս նախկին ծրագրի մէջ, միանում են Նախիջեւանում, եւ նուաճում հարուստ Օրդուբադը, Երեւանը եւ ապա Թաւրիզը, որ շատ հարուստ է: Հայոց նահանգներից կարելի է 116 հազար զօրք հաւաքել, 30·000 վրացիները կը տան, պարսից զօրքը կարող է 38·000 լինել միայն, որ աւելի կը պակասի Հայաստանի եւ Վրաստանի նուաճմամբ: Կոզակները կարող են հեշտութեամբ նուաճել Գիլանը, ինչպէս երբեմն Ստենկա Ռազինը 3000 հոգով6):

Օրիի խնդրած տեսակցութիւնը Պետրոս մեծը նշանակում է 1701 թ. Նոյեմբերի 7–ին, նորա ցանկութիւնները համապատասխան համարելով իր ծրագիրներին: Օրին ընդունւում է որպէս կուրֆիւրստի դեսպան, եւ մատուցանում է ընծաներ: Ցարը յայտնում է, որ իր տեղեկութիւնները համապատասխան չեն Օրիից ստացածներին, ուստի եւ մի վաճառական մարդ պիտի ուղարկի ստուգութիւն կատարելու. առաջարկում է Օրիին կուրֆիւրստին յայտնել, որ նա 3—4 գունդ զօրք ուղարկէ ցարին այս գործի մէջ օգնելու՝ լաւ սպաներով եւ ճարտարագէտներով: Օրին խոստանում է գրել այդ մասին կուրֆիւրստին7): Ցարից յետոյ նա խօսակցու-

---

1) Эзов. N° 44, եր. 94, 95: Aschot Iohannissian, Israel Ory. 100 եւ Anhang. N° 8, 9, 11, 12.

2) Эзов. N° 14 եւ 16:

3) Անդ N° 21 եւ 23:

4) Անդ· N° 42:

5) Անդ N° 35, N° 40, 42:

6) Անդ N° 43:

7) Անդ· N° 53:

թիւն է ունենում Գոլովինի հետ, առաջարկելով վաճառականի փոխարէն մի դեսպանութիւն ուղարկել Պարսկաստան, որի մէջ լինի եւ ինքը, որպէս ցարի համար ձիեր եւ պարսկական ապրանքներ գնող, որով հնարաւորութիւն կ'ունենայ ամէն տեղ մտնել եւ տեղեկութիւն հաւաքել: Ռուս մարդուն, այն էլ վաճառականին տեղացիները չեն վստահանայ բան յայտնել: Թող ցարը հրովարտակ գրէ նաեւ իրեն ուղարկող մելիքներին լատիներէն, որովհետեւ ռուսերէնի թարգման չի լինիլ, յուսադրելով օգնել եւ պահել նրանց արտօնութիւններն ու կրօնի ազատութիւնը, իսկ ժողովրդին եւ վանքերին կը գրէ Մինաս վարդապետը հայերէն, որով նախապատրաստուած կը լինին զօրքերի երեւալու ժամանակ: Մի թուղթ էլ ցարը թող գրէ Վիեննայի արքունիքի խոստովանահայր Վուլֆին, որպէսզի նորա միջնորդութեամբ կայսրն էլ մի քանի գունդ ուղարկէ: Ցարը պէտք է ողջոյնի թուղթ գրէ եւ կուրֆիւրստին, իսկ գործի համար ինքը կը գրէ ցարական հրամանի համեմատ[1]:

Բայց Պետրոսը զբաղուած էր շուետական պատերազմով եւ Օրին ստիպուած էր կրկին յիշեցնելու կուրֆիւրստին, կայսրին եւ մելիքներին գրելիք պատասխանի մասին, առաջինները կ'ուղարկի իւր թարգման Նազար Արեխովիչի միջոցով, իսկ վերջինը ծագմամբ հայ եւ նախկին սպայ Միրոն Վասիլյէւի, եւ ապա առաջարկում է իւր զինուորական ծառայութիւնը առանձին կարաբինների գունդ կազմելու Ֆրանսիացիների նման[2]: Օրիի խնդիրքը կատարւում է, ցարը թղթեր է գրում Օրիի գալստեան եւ ընդունելութեան մասին միայն, բայց ոչինչ բուն գործի, որ պէտք է Օրին գրէր: Կուրֆիւրստի պատասխանը ցարին ստացւում է 1702 թ. Սեպտեմբերի 21-ին[3], ուր իւր շնորհակալութիւնն է յայտնում, Օրիի գործին օգնելու հակումն ցոյց տալու համար: Գալիս է եւ մելիքների պատասխանը, որոնց տեղեկացրել էր Օրին ցարի պատրաստակամութիւնը օգնելու: Մելիքները ուրախութիւն են յայտնում եւ հնազանդութիւն՝ ենթարկուելու նորա հրամաններին, իրենց յոյսը նրա եւ Աստուծոյ վրայ դնելով[4]:

Այժմ Օրին որոշում է Գերմանիա գնալ, եւ այն տեղից կուրֆիւրստի ու կայսեր կողմից իբրեւ դեսպան Պարսկաստան անցնել, խնդրելով Գոլովինին եւ ցարին տալ իրեն դեսպանութեան աստիճան, ոչ սնափառութեան, այլ գործի յաջողութեան համար: Գերմանիայից նա հետը կը վերցնէ ճարտարապետներ եւ սպաներ, որոնք կը ծանօթանան երկրի դրութեան եւ ճանապարհներին, մելիքներին էլ վստահութիւն կը ներշնչէ եւ միջոցներ կը հայթայթէ, եւ մաս-մաս երիտասարդներ ուղարկելով Աստրախան, վերադարձից յետոյ նրանց կը կրթէ որպէս ուղեցոյցներ եւ օգնական ապագայ արշաւանքին: Նա ստանում է իւր խնդրած աստիճանը, եւ ապա ցարի թղթերով կայսեր եւ կուրֆիւրստի անունով, 1704 թ. Փետրուարի 10-ին անցնում Գերմանիա[5], տանելով եւ Արջիլի նամակները կուրֆիւրստին եւ Լէոպոլդ կայսեր՝ միջնորդել Շուէտների ձեռքը գերի ընկած իւր որդուն ազատելու համար[6]: Վիեննայում Օրին ներկայանում է կայսեր. այնտեղ էր եւ կուրֆիւրստը: Թէպէտ կայսրը պատուիրում է հրովարտակ գրել շահին, բայց կոմս Կաունիցը ձգձգում է, մինչեւ ինքը կուրֆիւրստի հետ Դիւսելդորֆ է անցնում: Այստեղ կուրֆիւրստի միջնորդութեամբ եւ նորա խոստովանահօր ձեռքով յաջողւում է պապից դեսպանութեան թուղթ ստանալ շահի անունով, ի վերջոյ նաեւ կուրֆիւրստի կողմից, բայց առանց սպաներ եւ ճարտարապետներ ստանալու, ինչպէս եւ գնդեր կուրֆիւրստի եւ կայսեր կողմից[7]: Ապագայ արշաւանքը պիտի կատարուէր միայն ռուսաց զօրքով:

Օրին վերադառնում է Մոսկուա 1706 թ. Հոկտեմբերի վերջերին: Յայտարարութեամբ խնդրում է ցարից դեսպանութեան թուղթ տալ շահին, ուր պիտի առաջարկուէր Արջիլին հաստատել իշխանութեան մէջ եւ քրիստոնեաներին պաշտպանութիւն ցոյց տալ նահանգապետների բռնութիւնների դէմ: Արջիլի հաստատութեամբ, հայերի եւ վրացիների դաշնակցութիւնը շատ օգտակար կը լինի Պարսից ու Տաճիկների դէմ մղուելիք պատերազմների ժամանակ: Խնդրում է ցարից տալ եւ մի քանի սպաներ եւ գրագիրներ երկրի ուսումնասիրութեան եւ նկարագրութեան համար: Կրկնում է եւ Աստրախանում հայերից գունդ կազմակերպելու ծրագիրը: Բայց ցարը շահին թուղթ է գրում Օրիին որպէս պապի դեսպանի ընդունելու, խնդրելով նաեւ դէպի քրիստոնեաները ուշադիր լինել[8]: Այս մի նախազգուշութիւն էր ցարի կողմից շահի մէջ կասկած չյարուցանելու եւ անյաջողութեան դէպքում վարկաբեկ չլինելու համար:

Օրիի դեսպանութիւնը բաղկացած էր 50 հոգուց զանազան տեսակի պատրաստութեան եւ արհեստի տէր մարդկանցից, լեռնային 12 թնդանօթով: Վերցրել էր եւ 22·000 ռ. արժողութեամբ Ամստերդամում ձեռք բերուած զէնքը իւր ապագայ գնդի համար: Օրին 1707 թ. արդէն Շամախումն է, ուր ստիպուած էր սպասել մինչեւ շահից թոյլտուութիւն կը ստանար: Այս յապաղման պատճառը մասամբ Աղուանական իշխան Միր վայն էր, որ տեղեկացրել էր շահին Օրիի դեսպանութեան կասկածելի բնոյթը, ինչպէս եւ Ֆրանսիական դեսպանն ու միսիոնարները, որոնք վտանգ են տեսնում այժմ ռուսական ազդեցութեան աճմամբ եւ Օրիի գալստեամբ[1]): Ի վերջոյ շահը թոյլ տուեց Օրիին շարունակել իւր ճանապարհը եւ մեծ շքեղութեամբ ընդունեց նորան:

---

[1] ЭЗОВ. № 54:

[2] Անդ. № 61 (62):

[3] Անդ. № 82:

[4] № 98. Մենք տեսանք, որ Աշոտ Յովհաննիսեանը այս (Հայ-ռուս Օրիենտացիայի Ծագման Խնդիրը) եւ նորա հետ մի քանի թղթեր կեղծ է համարում. տես եր. 144 սոյն գրքի մէջ:

[5] ЭЗОВ № 105. 106. 108. 110. 116. 118. 121. 123:

[6] Անդ. № 126. 127:

[7] Անդ. № 139. 135: Պապի թղթի մասին տես եւ Ալիշան Սիսական. 402:

[8] ЭЗОВ. № 141. 143:

Օրիին գործունէութեան նկատմամբ Պարսկաստանում մանրամասնութիւններ չգիտենք, բացի իւր դէմ եղած ինտրիգների եւ քաղաքական կացութեան վերաբերեալ տուած մի քանի տեղեկութիւններից: Մենք չգիտենք, նաեւ, թէ ինչ խորհրդակցութիւն ունեցաւ նա մելիքների հետ, բայց Օրին իրագործեց իւր խոստումը Հայաստանից ցարին պատգամաւորութիւն տանելու նկատմամբ: Նորա հետ էր Գանձասարի Եսայի կաթուղիկոսը երկու եպիսկոպոսների հետ, գործի ապագայ շարունակութեան գլխաւոր աշխատաւորներից մէկը[2])․ նա տեսակցել էր նաեւ Էջմիածնի Աղեքսանդր կաթուղիկոսի հետ եւ ցարի անունով կոնդակ գրել տուել, թէեւ այստեղ եւս պարզ չէ կաթուղիկոսի բռնած դիրքը դէպի յարուցուած խնդիրը[3]): Նա գնել էր ընտիր ձիեր ցարի համար եւ պարսկական ապրանք, գորգեր, ազնիւ գինի, չերամ, հետը տանում էր մետաքսագործ վարպետներ[4]): Նա բերել էր շահի պատասխանները պապին, եւ ցարին: Առաջինի բովանդակութիւնը չգիտենք, իսկ ցարին պատասխանում է, որ ընդունել է Օրիին եւ խոստանում է անհնազանդ քրիստոնեաներին չպատժել, զիջելով ցարի խնդիրներին[5]): Քաղաքական հարցերի համար ինքն անձամբ պիտի զեկուցանէ ցարին, որ Գոլովինին գրած թղթի համաձայն «բարի լուրեր» (всякия добрыя вѣсти) ունէր հաղորդելու․ մի ուրիշ թղթի մէջ նոյն կանցլերին գրում է․ «քո հրամանացդ հայտնի է, թէ ինչ պատճառէ եմ այս երկրումս, բան եւ խօսք շատ ունիմ յամենայն կողմանէ, չեմ կարող գրել, երբ որ Աստուծով ծառայութիւնդ հասայ, բերանով պիտի արզ անեմ»: Ինչպէս երեւում է, սկսել էին արդէն չարախօսել նրա մասին, ուստի եւ ցարին գրում է․ «ծառայդ Իրանու երկրումս ինչ որ արարեալ եմ եւ ասացեալ, ամէնն պատճառով է եւ առանց պատճառի բան չեմ արարեալ․ հիմա չեմ կարող գրել, երբ, որ ոտն համբուրելու հասայ, ամէնն արզ կանեմ»[6]):

Սակայն Օրիին չվիճակուեցաւ ներկայանալ ցարին: Նորա դէմ Աստրախանի նահանգապետ Ապրաքսինը թշնամական դիրք էր բռնել: Բերած ապրանքի մի մասը ծովամոյն եղաւ նորա ուղարկած փտած նաւի կործանման պատճառով, ձիերից չորս լաւագոյններն էլ ինքն էր զաւթել, եւ առհասարակ աշխատում էր դժուարութիւններ յարուցանել Օրիի դէմ եւ վարկաբեկել: Օրին մասամբ սկսել էր հարթել այս դժուարութիւնները իւր գրած թղթերով Գոլովինին, ցարին, Մինաս վարդապետին, գուցէ եւ յաջող դուրս գար իւր հնարագիտութեամբ եթէ անակնկալ մահը չկտրէր նորա կեանքի թելը եւ անյայտութեան չմատնէր նորա աշխատանքի վախճանական ընթացքը[7]): Նա վախճանուեցաւ 1711 թ. Օգոստոսի վերջերին Աստրախանում, իսկ Եսայի կաթուղիկոսն ստիպուեցաւ ետ դառնալ հայրենիք:

Նորա բովանդակալից կեանքի այս նկարագիրը ինքնըստինքեան յայտարարն է նորա անձի, ընդունակութիւնների եւ հայրենասէր իղձերի: Զարմանալի է, թէ ինչպէս Հայաստանի լեռներից Եւրոպա ընկած պատանին հետզհետէ կարողանում է սովորել շատ լեզուներ, հմտանալ դիւանագիտական եւ զինուորական արուեստների մէջ, կապեր հաստատել եւ նոյնիսկ բարեկամական յարաբերութեան մէջ լինել աշխարհի ժամանակի բոլոր նշանաւոր մեծամեծների հետ, որոնցից կարող էր որեւէ բան սպասել իւր գործի համար: Ապացուցուած համարելով[8]), որ Օրին չէ այլ եւ այլ լեզուներով իւր ստորագրութիւնը կրող թղթերի գրիչը, անկասկած է, սակայն, որ նա է դրանց «հոգեւոր ծնողը» բուն էութեան: Փաստաթղթերից պարզ տեսնում ենք, որ ամբողջ գործի շարժիչ եւ ուղղութիւն տուող մեքենան Օրին է, որ կարողանում է զարմանալի դիւրութեամբ մարդկանց տրամադրել եւ իւր կողմը քաշել․ նա իւր գործի անշահասէր ծառան է, որ զոհ է բերում նիւթականի հետ իւր ընտանիքի բարեբաղդութիւնը, իւր ամբողջ էութիւնը: Հետաքրքրական է լսել Կուրֆիւրստի գծած բնութագիրը մելիքներին գրած թղթի մէջ[9]), որպէս «հաւատարմագոյն եւ ամենաընդունակ» մի մարդ, «որը այս մեծ գործը Աստուծոյ շնորհիւ լցուած, ի կատար պիտի ածէ․ եւ արժանի է վստահութեան, թէ նորա խելքը եւ թէ յաջողակութիւնը իւր գործելու գերազանց եւ անհամեմատելի եղանակով: Աստուած ընտրել է նորան այս գործի համար, որի վախճանը այնպէս նպաստաւոր պիտի լինի Աստուծոյ փառքի, հոգիների փրկութեան, քրիստոնէական կրօնի, ձեր եւ ամբողջ Հայաստանի բարիքի համար»։

---

[1]) Эзов. № 171 եւ Введение XXX. XLIV: Aschot Iohannissian. Israel Ory 135 եւ շար.:

[2]) Эзов. № 167—205.

[3]) Աշոտ Յովհաննիսեան Հայ–ռուս Օրիենտացիայի Ծագման խնդիրը. Էջմիածին. 1921. Յաւելուած № 5:

[4]) Эзов. № 167. 169. 180. 190. 193:

[5]) Անդ. № 161. 200. 201:

[6]) Անդ. № 167. 169. 200:

[7]) № 176. 183. 194. 174. 176. 180:

[8]) Աշոտ Յովհաննիսեան. Հայ–ռուս Օրիենտացիայի Ծագման խնդիրը. եր. 30 եւ շ.:

[9]) Эзов. № 14 եր. 58... dominus Ory fidelissimus et capacissimus, qui grande hoc negotium, aspirante Dei gratia, ad effectum perducat, et sane meretur, ut totum illi confidatur, eusque prudentiae, dexteritati, et agendi modo absque comparatione praeclaro. Deus illum in hunc finem elegit, cuius succesus ita favet gloriae Die, animarum saluti, religioni christianae, vestro ac totius Armeniae bono.

Բայց այսպիսի գրական կողմերի հետ նկատում ենք չափից աւելի լաւատես վերաբերմունք դէպի գործի ապագայ յաջողութիւնը, իրականին անհամապատասխան ծրագիրների առաջարկութիւններով, որ մատնացոյց արինք վերը։

Մենք չենք ուզում մարգարէ լինել եւ գուշակել, թէ ի՞նչ կը լինէր գործի վախճանը, եթէ այնպէս անըսպասելի վրայ չհասնէր Օրիի մահը։ Բայց գիտենք, որ կեանքն ու պայմաններն աւելի զօրեղ են քան մարդկանց ձգտումներն ու իղձերը, եւ այդ ոյժերն արդէն թելադրել էին Օրիին իւր բռնելիք ընթացքը։ Կեանքի վերջին օրերում նա այլեւս ռուսական քաղաքականութեան գործիք է Պետրոս մեծի ձեռքում։ Ցամենայն դէպս, Պռոշեանց այս վերջին շառաւիղը, որով փակւում է նրանց նուիրուած այս աշխատութեան պատմական մասը, իւր գգալի հետքն է թողել հայ-ռուսական յարաբերութիւնների պատմութեան մէջ, մեր երկրի եւ ժողովրդի բաղդը կապելով ռուս մեծ ժողովրդի հետ։



Աւագ տէր վարդապետի Յիշատակարանը. ՊԱՏԿԵՐ 199.

ԽԱՂԲԱԿԵԱՆՔ ԿԱՄ ՊՌՈՇԵԱՆՔ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ՀՈԳԵՒՈՐ ԿԵԴՐՈՆՆԵՐ
ԵՒ
ԳԼԱՁՈՐԻ ԲԱՐՁՐ ԴՊՐՈՑԸ
ՊՌՈՇԵԱՆՑ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Ա

ԿԵՋԱՌՈՅՔ

Պռոշեանց իշխանութեան քաղաքակրթական–հոգեւոր կեանքի մասին խօսել, նշանակում է նոյն իշխանութեան մէջ ծաղկած վանքերի պատմութիւնն անել, որոնցից շատերը հիմնուած էին նոյն տոհմի իշխանների կողմից կամ վայելում էին նրանց հովանաւորութիւնը։ Միջին դարերում հոգեւոր–քաղաքակրթական կեանքը, գիտութիւնն ու արուեստը, դպրոցը, գրեթէ ամբողջապէս ամփոփուած էր վանքերում։ Իշխանական աշխարհիկ կեանքի հետ կապուած քաղաքակրթութեան, արուեստի, ճարտարապետութեան եւ ուրիշ նիւթական կուլտուրայի մնացորդներ առհասարակ մեզ չեն հասել կամ քիչ են հասել, ոչնչանալով ուրիշ ժամանակի եւ բարբարոսութեան ձեռքից։ Պռոշեանց դերը մեր պատմութեան մէջ պարզելու համար, պէտք է պարզենք եւ նրանց հիմնած կամ հովանաւորած վանքերի, դպրոցների դերը մեր հոգեւոր կեանքի եւ քաղաքակրթութեան նկատմամբ։

Ընթերցողին թիւրիմացութիւնից ազատ պահելու համար, հարկ ենք համարում այստեղ շեշտել, թէ ինչ որ ծաղկել է այս վանքերի մէջ իբրեւ գիտութիւն, արուեստ, գրչութիւն, շինարարութիւն, մատենագրութիւն եւայլն իւր բոլոր բովանդակութեամբ Պռոշեանց անմիջական ստեղծագործութիւն չէ կամ նրանց ազդեցութեամբ յառաջ եկած, այլ նաեւ արդիւնք ժամանակի ժողովրդի բարեպաշտական զգացման, իշխանական նաեւ ուրիշ տոհմերի օժանդակութեան, եւ որ գլխաւորն է, այնտեղ հաստատուած հոգեւորականութեան աշխատութեան, բայց եւ այնպէս իրաւունք ունինք նրանց ծաղկումն ու անկումը կապելու այս տոհմի պատմութեան եւ բաղդի հետ իբրեւ այդ վանքերի ընդհանուր տէրերի եւ պատրոնների։ Նկարագրելով այդ վանքերի պատմութիւնը, ուսումնասիրելով արձանագրութիւնները, նրանց հետ կապուած անձնաւորութիւններն ու դէպքերը, շեղւում ենք նրանց պատմութեան անմիջական նիւթից, վնասում գործի գեղարուեստական ամբողջութիւնը, դժուարացնում նաեւ ընթերցանութեան



ՊԱՏԿԵՐ 121·

գործը նոյնիսկ գիտական պատրաստութիւն ունեցող մարդկանց համար, բայց թոյլ ենք տալիս մեզ այդ շեղումը, ի նկատի ունենալով, որ սա միեւնոյն ժամանակ նիւթերի ժողովածու եւ նրանց քննադական ուսումնասիրութիւն է։

Պռոշեանց հնագոյն հոգեւոր կեդրոնը Կեչառոյքն էր, մի ժամանակ Պահլաւունեաց սեպհականութիւն եւ Բջնիի եպիսկոպոսութեան երկրորդ գլխաւոր կեդրոնը (պատկ· 121 եւ 122, որոնցից առաջինը արեւմտահարաւային եւ երկրորդը հարաւ–արեւելեան տեսարանն է ցուցադրում)։ Նորա հիմնարկութեան աղբիւրները՝ արձանագրական եւ մատենագրական՝ մութ են, ըստ երեւոյթին նոյնիսկ հակասական, եթէ լուսաբանութեան չենթարկենք նրանց։ Ամենահին աղբիւրը մեծ տաճարի հարաւային դրան արձանագրութիւնն է[1]) (Ցուցկ· Ա· 37, պատկ· 123), որից երեւում է, թէ ՆՁԲ (=1033) թուին Գագիկ Ա·ի եւ Սարգիս կաթուղիկոսի ժամանակ, Հասանայ որդի Գրիգոր Մագիստռոսը շինել է այս եկեղեցին «ի բարէխոսութն» իւր, իւր պատրոնի եւ որդիների։ Երկրորդ արձանագրութիւնը յայտնի մատենագիր՝ Վասակայ որդի Գրիգոր Մագիստրոսինն է, 1054 թուից, նոյն տաճարի հարաւային պատին, գրուած Բջնոյ Յովհաննէս եպիսկոպոսի եւ հայր Բարսղի կողմից (Ցուցկ· Ա· 38, պատկ· 124)։ Այստեղ խօսք չկայ եկեղեցու շինութեան մասին, այլ թէ Գրիգոր Մագիստրոսը, Վասակայ որդին, «մեծաւ աշխատութբ· ազատեալ էր զմեծ եւ փոչակաւոր եկեղեցիքս»[2])։ Բայց մի երրորդ գրութեան պատճէն բերում է Ալիշան[3]), առնելով այն Սէն Մարտէնից, որ իտալերէն թարգմանութեամբ գտնուել էր Հռոմի Propaganda fide–ի դիւանում, փոխադրուած Փարիզ Նափոլէոնի ժամանակ։ Այս գրութիւնն արդէն Գրիգոր Մագիստրոսի բերանից է, որով յայտնում է· «Ի Շ· թուականիս, ի ժամանակս Կոստանդնոյ Մոնոմախի թագաւորի Հայոց (s!), դուքսս Վասպուրականի, գաւառիս Ծաղկնուց ես Գրիգոր Մագիստրոս որդի Վասակայ հրովարտակաւ եւ հրամանաւ վերոյասացեալ թագաւորիս՝ հիմնադրեալ շինեցի զեկեղեցիս ի տեղւոջս որ կոչի Կեչառուս, ի նախասացեալ գաւառիս Ծաղկնուց հանդերձ մատրամբ· եւ նուիրեցի զտաճարս եւ զեկեղեցիս յանուն Սրբոյն Գրիգորի Լուսաւորչի մերոյ· եւ զարդարեցի զսա սպասուք, արծաթեղինօք եւ ոսկեղինօք, գրովք եւ այլովք պիտոյիւք, որպէս վայել էր տաճարիս։ Դարձեալ ետու եկեղեցւոյս գեօղս երկուս եւ այգի մի»։ Իսկ Բջնիի Վանական եւ Համավար եպիսկոպոսները սահմանում են



ՊԱՏԿԵՐ 122·

---

[1]) Տե՛ս եւ մեր Գրչութեան արուեստը· Գ· Քարտէզ հայ հնագրութեան· Վաղարշապատ, 1913 թ· § ԺԱ·։ Տե՛ս եւ «Շողակաթ» ժողովածու, 179։

[2]) Անդ· Տախտ· ԺԳ· § 21· Շողակաթ, 181։

[3]) Այրարատ· 260· Ալիշանը թարգմանում է իտալերէնից։ S. Martin. Mémoires Historiques et Géographiques sur l'Arménie. II. 287—8:

«ի թեմ եւ կալուած վերոգրեալ եկեղեցւոյս՝ գեօղս քսան եւ հինգ եւ քաղաք մի» *եւ հաստատում իրենց վճիռը* «մերով ձեռնագրովս եւ կնքովս» :

Ժամանակով աւելի մօտ պատմիչները՝ ոչ Լաստիվերտցին եւ ոչ Ուռհայեցին յիշատակութիւն չունին Կեչառուսի շինութեան մասին, այլ միայն Վարդան[1]) *եւ Մխիթար Այրիվանեցին. երկուսն էլ եկեղեցու հիմնադիր են համարում Ապիրատ իշխանին, որին Այրիվանեցին զանազանում՝ Վասակի որդի Գրիգոր Մագիստրոսից, 12·000 հեծելազօրքի պետ, մէկը ժամանակի նշանաւոր իշխաններից, որ միայն իւր խելքով եւ քաջութեամբ աննշան վիճակից բարձր դիրքի էր հասել: Վարդան Ապիրատի մասին օգտւում է Մխիթար Անեցուց, բայց չի երեւում, թէ վանքի շինութեան տեղեկութիւնն էլ նոյն աղբիւրից քաղած լինի: Ուռհայեցուց գիտենք, որ Հասանի որդի Ապիրատը Պահլաւունեաց ցեղից էր: Նորա որդիքն էին Ապլջահապ եւ Վասակ՝ Գրիգոր Մագիստրոսի քրոջ ամուսինը: Վասակի որդիքն էին Հասան, Գրիգոր Կիւրապաղատ, Տէր Բարսեղ կաթուղիկոս եւ Ապլջահապ*[2]) *: Այս իշխանների մէջ յատկապէս նշանաւոր հանդիսացաւ Գրիգորը, Վասակի որդին եւ Ապիրատի թոռը,* «զոր ասեն ունել ի գլուխս ազատականացն հինգ հարիւր թագ երեւելի, զի տէր մեծ զօրաց եւ բազում ազատաց» *էր: Նորա մահը հանդիպեց Կաղզուանում, ուր քաջութեամբ յաղթել էր թշնամուն եւ ազատել Մանուչէի կեանքը.* «եւ տարեալ թաղեցին զնա ի Կեչառուս եւ Մանուչէն եւ ամենայն զօրքն բանակին Հայոց երթայր զկնի դիոյն»[3]) : *Սրանց վերայ պիտի աւելացնենք եւ Սիմէոն կաթուղիկոսի տեղեկութիւնը Կեչառիսի մասին.* «Նախապէս հիմնաւորեցեալ է ի թուոջն ՆԽԴ (=995) յԱպիրատ իշխանէ»[4]) :



ՊԱՏԿԵՐ 123.

Ընթերցողը տեսնում է, որ արտաքին հակասութիւններով լի են այս տեղեկութիւնները թէ շինողի եւ թէ շինութեան ժամանակի վերաբերութեամբ:

Նախ վերցնենք առաջին արձանագրութեան թուականը՝ ՆՁԲ (=1033), որ միանգամայն անհամապատասխան է Գագիկ Շահնշահի († 1019) եւ Սարգիս կաթուղիկոսի († 1021) ժամանակին, ուստի եւ Ձ-ն պէտք է ուղղել Ծ-ի, որ կը լինի 1003: Այդ տառերի շփոթութիւնն արձանագրող դրչի կողմից աւելի հաւանական է, քան անձնաւորութիւնների ժամանակի. թէեւ Մխիթար Այրիվանեցին եւս մօտաւորապէս նոյն ժամանակն ի նկատի ունի, բայց, հաւանօրէն հէնց արձանագրութեան ազդեցութեամբ: Իսկ Ջամբռի հեղինակի տուած թուականը անհամապատասխան է նոյնիսկ սրբագրուած թուականին: Երեւակայութեան արդիւնք համարել չենք կարող այդ մի հեղինակի կողմից, որ իւր ամբողջ գործը փաստաթղթերի եւ արձանագրութիւնների վերայ է հիմնում: Միտք էլ չունէր նրա կողմից այդպիսի թուական հնարել: Մնում է ընդունել, որ նա մեզ անյայտ արձանագրական կամ մատենագրական աղբիւր է ունեցել, մանաւանդ որ Վարդան յայտնում է, թէ այդ վանքը տոհմի մի ճիւղի հանգստարանն էր, ինչպէս վերեւ տեսանք: Գուցէ 995 թուականը շինութեան սկզբնաւորութեան, իսկ 1003 վերջաւորութեան թուականն է:

Բայց այսքանը դեռ բաւական չէ խնդիրը լիովին պարզելու նաեւ շինողների անձի նկատմամբ: Երկու արձանագրութիւնների մէջ, մանաւանդ ըստ Propaganda fide*-ի պատճէնի, եկեղեցու շինողները կոչւում են Գրիգոր Մագիստրոս: Անունների եւ տիտղոսների նոյնութիւնը չի կարող հիմք լինել նրանց անձը նոյնացնելու, որովհետեւ մէկը Հասանայ որդի է, միւսը Վասակայ, ինչպէս Ուռհայեցին գիտէ նրանց զանազանութիւնը: Իսկ Վարադան եւ Այրիվանեցին վանքի հիմնադիր համարում են Հասանայ որդի Ապիրատին: Այս* վերջին դժուարութիւնը հեշտ է լուծել եւ նոյնացնել Հասանայ որդի Գրիգորին եւ Հասանայ որդի Ապիրատին, երբ յիշենք, որ Պահլաւունիների մէջ Գրիգոր – Ապիրատ երկանունը սովորական էր:

---

[1]) Վարդ. 131:

[2]) Մատթ. Ուռհայեցի, բ. տպ. Վաղարշապատ, 10, 221, 269:

[3]) Վարդ. 145:

[4]) Ջամբռ. Վաղարշապատ, 1873, 283:

Ճարտարապետական մնացորդները համեմատելով արձանագրութիւնների տուած տեղեկութեան հետ, աւելի եւս պարզւում է խնդիրը: Propaganda fide–ի արձանագրական պատճէնի համաձայն Վասակի որդի Գրիգոր մագիստրոսը շինել է մի եկեղեցի «հանդերձ մատրամբ»: ԺԳ. դարից կամ Խաղբակեան Վասակի տիրապետութիւնից առաջ[1]), Կեչառիսում մնացած են երկու շէնքեր, տաճարը եւ Ս. Նշան մատուռը, որի հիմնարկութեան մասին թէեւ չունինք արձանագրութիւն, բայց ճարտարապետական նշաններից դատելով ԺԱ. դարի գործ պիտի լինի: Յամենայն դէպս, 1163 թուից հիւսիսային պատին Վարդըմբելի արձանագրութիւնն ունինք (Յաւել. Ա. 40), ինչպէս եւ պատրոն Վարդինը հայր Պետրոսի անուան յիշատակութեամբ, որ ինչպէս կը տեսնենք ապրում էր այդ ժամանակները (Յաւել. Ա. 41). ՌՀԲ = 1223 թ. նորոգութեան է ենթարկուել Վաչէ պատրոնի ձեռքով (Յաւել. Ա. 44): Սելջուկեան հարուածների տակ Հայաստանում շինարարութիւնը կանգ էր առել, գրեթէ, ԺԱ. դարի կէսերից մինչեւ ԺԲ.ի կէսերը, դեռ մի քիչ էլ աւելի: Այս շրջանից շատ չնչին են արձանագրութիւնները կամ նրանց մէջ յիշատակուած շինարարութիւնը: Նոյնը կարող ենք ասել եւ դրչութեան արուեստի նկատմամբ: Յատկապէս Կեչառիսի մասին տեղեկութիւն ունինք, ինչպէս կը տեսնենք քիչ յետոյ, որ նա խրթնացած էր առաջին պայծառութիւնից յետոյ՝ մինչեւ Հայր Պետրոսի առաջնորդութիւնը ԺԲ. դարի վաթսունական թուականները: Ապա ուրեմն այս մատուռի ծագումը կարող ենք առանց տատանուելու տանել մինչեւ ԺԱ. դարի կէսերը, այսինքն այն ժամանակ, երբ այդպիսի մի մատրան շինութեան մասին յիշատակութիւն ունինք Գրիգոր Մագիստրոսի ձեռքով:



ՊԱՏԿԵՐ 124.

Մնում է պարզել մեծ տաճարի խնդիրը, Գրիգոր–Ապիրատի՞նն է այն, թէ Վասակայ որդի Գրիգոր Մագիստրոսինը: Ս. Նշանի մատրան եւ ժամատան շատ արձանագրութիւնների համեմատ մեծ տաճարը նուիրուած էր Լուսաւորչի անուան, եւ որովհետեւ Վասակայ որդի Գրիգոր Մագիստրոսի արձանագրութեան պատճէնի համաձայն նորա շինած եկեղեցին Լուսաւորչի անունով էր, պէտք է եզրակացնել, որ ներկայ տաճարը, որին եւ կցուած է ժամատունը, նորա շինածն է: Ըստ այսմ Հասանայ որդի Գրիգոր–Ապիրատի շինած եկեղեցուց ոչինչ չէ մնացել, ՆՁԲ թուականով արձանագրութիւնն էլ սկզբնագիր չէ, դուցէ, հենց այդ արտագրութեան ժամանակ էլ կատարուել է թուականի տառերի շփոթութիւնը: Ուղղագրական եւ հնագրական որոշ փաստեր համոզում են մեզ, որ երկու արձանագրութիւնն էլ միաժամանակ են գրուած, երկու արձանագրութիւնների մէջ եւս յատուկ անունների սեռականը յ չունի, մի տեղ միայն մեծ արձանագրութեան մէջ՝ «Գրիգորոյ» բառի մէջ շեղումն կայ, մինչդեռ նոյն բառը երկու տեղ յ չունի: Երկու արձանագրութեան մէջ եւս «Գրիգոր մագիստրոս» գրուած է նոյն լիգատուրայով եւ նոյն արտասանութեամբ. մի հանգամանք, որ շատ նշանակալից է, որովհետեւ սովորական չլինելով, այստեղ կրկնուած է երկու տեղումն էլ: Յատկապէս ուշադրութեան արժանի է ո եւ ր տառերի կցումը, որ հազիւ է երեւան գալիս մեր հնագրութեան մէջ եւ ընդհանրացած է միայն ԺԳ. դարում:

---

[1] Տե՛ս Դ. գլուխ:

Բայց այս արտաքին նշաններով յարուցուած կասկածը աւելի հաստատուն կռուան է ստանում ուրիշ դիտողութիւններով: Propaganda fide-ի պատճէնը Շ (= 500) թուականն է կրում: Այդպէս է կարդացուել եւ հասկացուել մինչեւ այժմ նաեւ վանքի մեծ արձանագրութեան թուականը. մինչեւ իսկ մենք էլ մեր Գրչութեան արուեստի քարտէզի մէջ (§ 21) հարկաւոր ուշադրութիւնը չենք դարձրել բնագրի վերայ, հասկանալով այն 1051 թուականի մտքով: Բայց այդպիսի ժամանակագրութեամբ անհասկանալի կը լինէր, որ միեւնոյն տարին իբրեւ Բջնոյ եպիսկոպոսներ դիւանական պատճէնի մէջ յիշւում են Վանական եւ Համավար, իսկ արձանագրութեան մէջ Յովհաննէս: Այս դժուարութիւնը վերանում է ինքնըստինքեան թուականի ճիշդ ընթերցմամբ, որ է «ի հինգհարիւր երրորդի ամի» եւ ոչ «ի հինգհարիւրերրորդի ամի», ինչպէս հասկացուած է մինչեւ այժմ: Տարբեր է նաեւ երկու վաւերագրերի բովանդակութիւնը. մի տեղ խօսքը շինութեան մասին է, իսկ երեք կամ չորս տարի յետոյ ոսկի մատանի բերել տալու եւ բիւզանդական շողոքորթութեան՝ Կոստանդին Մոնոմախի հացէին: Մեզ համար պարզ չէ միայն, թէ ի՞նչ Հասան է, որին մատենագիր Գրիգոր Մագիստրոսը իւր արձանագրութեան մէջ կամենում է որ յիշեն, քանի ինքը կենդանի է:



ՊԱՏԿԵՐ 125·

Վանքի նախնական վիճակի մասին՝ Հասանայ որդու շինած, տեղեկութիւն չունինք մինչեւ Գրիգոր Վասակայ որդին, որ յատուկ թղթով իւր շինած եկեղեցիներին երկու գիւղ եւ մի այգի է նուիրում, իսկ Բջնիի1) Վանական եւ Համավար եպիսկոպոսները 25 գիւղ եւ մի քաղաք սահմանում են եւ հաստատում որպէս թեմ եւ կալուած նոյն վանքին, իրենց վճիռը վաւերացնելով «ձեռնագրովս եւ կնքովս»: Այս վերջին խօսքերը ցոյց են տալիս, որ Մագիստրոսի վերոյիշեալ խօսքերն արձանագրուած չէին քարի վերայ, այլ թղթի կամ մագաղաթի, որի վերայ աւելացնում են եպիսկոպոսներն իրենց ստորագրութիւններն ու կնիքը. դարձեալ մի հանգամանք արձանագրութեան քանդակումը ուշ ժամանակի հետ կապելու համար:

Այսպիսի հարուստ վանքն, անշուշտ, պէտք է եւ պայծառ վիճակի մէջ լինէր, բայց շատ կարճ ժամանակի համար, որովհետեւ Սելջուկեան արշաւանքներով կրկին նսեմացաւ Աստուածատուր արեղայի յիշատակարանի խօսքերի համաձայն՝ «պայծառապէս ճոխացեալ ի սկզբանն եւ դարձեալ խրթնացեալ», մինչեւ նորոգուեցաւ հայր Պետրոսի եւ իւր եղբօր Յովսէփի ձեռքով: Յիշատակարանը մեզ լիովին գաղափար է տալիս հայր Պետրոսի անձնաւորութեան մասին եւ գրուած է 1184 թուին՝ Կեչառիսում, երբ արդէն մեռած էր Պետրոսը: Աստուածատուրը դրուատում է Պետ-

---

1) Բջնիի մի արձանագրութիւնից երեւում է, որ Պետրոս Գետադարձը 1031 թուին յատուկ թեմ եւ եպիսկոպոսութիւն է հաստատել Բջնիի համար, նշանակելով եւ թեմի սահմանները: Այդ թեմից 25 գիւղ յատկացուած է վերոյիշեալ եպիսկոպոսների ձեռքով Կեչառիսի վանքին:

րոսին իբրեւ խստակեաց, առաքինի, գթած, անընչասէր եւ հիւրընկալ մի մարդ, օրինակ հանդիսանալով իւր միաբանների համար· «զի որ զկնի նորա էաք ի նա ամենեքեան նկրտէաք· եւ թէպէտ անհասանելի էր այրն՝ սակայն պատճառ բարեաց հանդիսաւոր շնորհի սուրբ եղբայրանցիս լինէր»։ Աստուածատուր գրչին օգնել են «Անդրէ գծող եւ ձեռնասուն մանուկ մեր» եւ «Առաքեալ համբակ քահանայ, զի յոլովս աշխատեցաւ ի սպասաւորութիւն գրոցս»1)։

Հայր Պետրոսի արձանագրութիւնը (Յաւել· Ա· 39, պատկ· 125) գտնւում է մեծ տաճարի հարաւային պատին, յետոյ շինուած ժամատան կամ գաւթի պատը ծածկել է տողերի առաջին բառերը, դորա հետ եւ թուականը2)։ Բայց մենք կարող ենք արձանագրութեան մօտաւոր թիւը որոշել ճշգութեամբ՝ այնտեղ յիշուած անձնաւորութիւնների ժամանակներով եւ արձանագրութեան թուականի վերջին տառի մնացորդով· գրուած է այն «ի հայրապետութեան տեառն Գրիգորիսի եւ ի թագաւորութեանն Գաւրգէ»· Հայր Պետրոսը «եւ եղբայր իւր տր· Յուսէփ եւ Սարգիս կրաւնաւոր» իրենց միաբան ուխտի հետ Աղուանից Ստեփանոս կաթուղիկոսին որոշ թիւ պատարագներ են սահմանում (այդ մասը ժամատան պատի տակ) բոլոր եկեղեցիներում «ի տաւնի առաքելոցն Դաւթի, Պետրոսի, Յովհաննու»։ Այստեղ յիշատակուած Տէր Գրիգորիսը կարող է Գրիգոր Գ· Պահլաւունին լինել (1113–1166) կամ Գրիգոր Դ· Տղայ (1173—1193)· Վրաց թագաւորը Գէորգի Գ·ն է (1156—1184), իսկ Ստեփանոս Աղուանից կաթողիկոսը գահակալել է ըստ Գանձակեցու 1155—1191 թուականը3), ժամանակակից վերոյիշեալ կաթուղիկոսներին եւ թագաւորին։ Բայց արձանագրութեան թուականի վերջին մնացորդը «ասն» ցոյց է տալիս, թէ նախընթաց հարիւրաւորի հետ պիտի լինէր «ի վեց հարիւր տ–ասն», որով կը ստանանք 1161 թիւը։ Շատ չատ կարող էր նոյն հարիւրաւորի եւ տասնաւորի հետ լինել 1—5 միաւորներից մէկն ու մէկը, այսինքն «մի եւ տասն, երկու եւ տասն» եւն·, թէեւ չէր լինի այդ կանոնաւոր եւ սովորական։ Բայց այդպիսի դէպքում էլ արձանագրութեան թուականը հաստատուն կերպով պէտք է նշանակել 1161—1166, երբ կենդանի էր Գրիգորիս Պահլաւունին։ Հէնց այդ ժամանակ էլ սկսւում է վանքերի եւ հոգեւոր կեանքի վերանորոգչական շարժումը Արեւելեան Հայաստանում, հաւանօրէն կապուած Գէորգի Գ·ի յաջողութիւնների հետ4)։

Այդ ժամանակ նորոգուած կամ վերակենդանացած վանքերից մէկն էլ Կեչառիսն էր, որին ապացոյց ունինք Ս· Նշանի հիւսիսային պատին եղած ՈԺԲ (= 1163) թուի արձանագրութիւնը, որով Վարդըմբել ոմն գնում է «զՄեղտինոյ էգոյն չարեքն եւ ետու ի Սբ· Գրիգորս»· սպասաւորները տարին երկու ժամ են նշանակում նրա համար (Յաւել· Ա· 40)։ Հայր Պետրոսի ժամանակն էր նոյնպէս, որ «Պատրոն Վարդ Երեւանոս» տալիս է «ի Սբ· Լուսաւորիչս» իւր հայրենի Զմչկա կոչուած այգին, ստանալով տարին ութ պատարագ, չորսը իրեն Վարդին, իսկ չորսը Անիարին, որ Վարդի կինը պիտի լինի (Յաւել· Ա· 41· պատկ· 126)։ Նոյն Հայր Պետրոսն է յիշատակուած նաեւ ժամատան ձախ աւանդատան դրան մօտ եղած արձանագրութեան մէջ, ոմն Տէր Բարսղի հետ, որին Տեառնընդառաջի օրն են ժամ յատկացնում, իսկ Պետրոսի եւ . . . (փչացած, պիտի լինի «Պաւղոսի») տօնը Հայր Պետրոսին (Յաւել· Ա· 49)։ Թէպէտ այս արձանագրութիւնը ժամատան պատին է փորագրուած, իսկ ժամատան շինութիւնը վերջաւորուած է ամենայն հաւանականութեամբ 1214 թուին, բայց այդ հանգամանքն արգելք չէ մեր ենթադրութեան համար, որովհետեւ կը տեսնենք, որ 1214–ից առաջ թուագրուած արձանագրութիւններ ունինք նոյն ժամատան պատի վերայ։ Այստեղ յիշատակուած Տէր Բարսեղ Բջնիի եպիսկոպոսն է հաւանօրէն, եթէ Անիի նշանաւոր Բարսեղ ե-

---

1) Ալիշան· Այրարատ, 261։ Յիշատակարանի ամբողջութիւնը՝ Հայապատում· 399։

2) Մեսրովբ Արքեպիսկոպոս Սմբատեան իւր «Գեղարքունիք»ի մէջ (եր· 351) թուական է նշանակում «ՇԿԳ (=1114· տպ· 1116)», որ անկարելի է, որովհետեւ այդ ժամանակին միանգամայն անհամապատասխան են արձանագրութեան մէջ յիշուած անձնաւորութիւնները։ Հաստատ կարող ենք ասել, որ ոչ մի թուական չի երեւում արձանագրութեան սկզբում, այլ ծածկուած է պատի տակ (տ· պատկ· 125)։

3) Գանձ· 189—90։ Նորա մասին յիշատակութիւն ունինք խոսրով Գանձակեցու վկայաբանութեան մէջ, որ նահատակուել է ՈԺԶ=1167 թուին «ի հայրապետութեան տեառն Գրիգորիսի եւ Ներսիսի հարազատ եղբարց Հայոց Մեծաց, եւ տանն Աղուանից տեառն Ստեփաննոսի եւ տէր Յոհաննիսի եպիսկոպոսի քաղաքին Գանձակայ» (Արարատ· 1896 դեկտ·, հրատ· Գալուստ Տէր Մկրտչեանի)։ Ապա 1174–5 թուին Գրիգոր Տղայի եւ Տուտէորդու թղթակցութեան մէջ, նա ամբաստանուած էր Աղուանից եպիսկոպոսների եւ խաչենի իշխանների կողմից Գրիգոր Տղայի։ Վերջինս Տուտէորդուն գրած նամակի մէջ բացատրում է ամբաստանութեան էութիւնը եւ իւր արած կարգադրութիւնը, եւ խորհուրդ է հարցնում· «թէ զի՞նչ պարտ իցէ առնել առ այս գործ»։ Տուտէորդին խորհուրդ է տալիս սիրով տնօրինել գործը, ինչպէս եւ սկսել էր (Արարատ· 1893, 238 եւ շ· 325։ Յօդուածագիրն է Ա· Տէր–Միքէլեան)։ Նոյն Ստեփանոս կաթուղիկոսը մի արձանագրութիւն ունի Այրիվանքում 1181 թուականից· նա էր, որ 1184 թուին դրդեց Գոշ Մխիթարին գրել Դատաստանագիրքը (տ· Բաստամեանի հրատ· 1880 թ· եր· 17—18 եւ յիշատակարանը եր· 73)· 1179 թուին մասնակից Հռոմկլայի ժողովին (Օրմանեան, Ազգապատում եր· 1467)։

4) վահրամ զաւրա(վար) իշխ· վանաց իշխան—տեղից դատելով որդի Պատրոնկան 1167 թ· օգնում է Թեղենեաց վանքի հրաշալի գաւթի շինութեան։ Նոյն թուին Նիգ գաւառի Աստուածընկալի վանքն է նորոգւում· «Տէր Գրիգոր» եւ մի քանի վանականներ արձանագրում են, «հաստեցաք (Տ!) զուխտ միաբանութե· հոգոց մերոց·..·»։ Նոյնը նկատում ենք եւ ուրիշ վանքերի նկատմամբ։

պիսկոպոսը չէ, որ յետոյ կաթողիկոսացաւ, որ կարող էր Կեչառիսի վերանորոգութեան եւ պայծառութեան հովանաւոր լինել իբրեւ իր նախնեաց, Պահլաւունիների սեպհականութեան[1]):

Հայր Պետրոսի յաջորդն էր հայր Խաչատուր, որի արձանագրութեան կցուած են երկու ուրիշներ եւս, որոնց տողերի սկիզբը նոյնպէս մնացած է ժամատան պատի տակ. ասել է, թէ գրուած են նրա շինութիւնից առաջ։ Առաջին արձանագրութիւնը գրուած է ոմն Սիմէոն քահանայի բերանից, որ, ինչ որ բան գնել է եկեղեցու համար եւ նրա համար նշանակել են տարին երկու ժամ։ Միւս արձանագրութիւնը, որի սկզբնաւորութիւնը կամ թուականը նոյնպէս ժամատան պատի տակն է մնացած, հետեւեալն է.



ՊԱՏԿԵՐ 126.

> *...Ես հայր Խաչատուր եւ միաբան եղբարքս վերստին նորոգեցաք զեկեղեցիս եւ սահմանեցաք տաւն սրբո խաչին, որ ամենայն եկեղեցիքս ժամ Գիշուկին առնեն միջնորդութբ. ամիր Բուրախին / ...* (պատի տակ)...
> (Յ)*ԺԸիցն* (*Յաւել. Ա.* 39, *պատկ.* 125)։

Խաչատուրի վանահայրութիւնն ընկնում է ԺԲ. դարի ութսունական–իննսունական թուականներին, որին յաջորդում է Գրիգոր վարդապետ Մոնոնիկ, գուցէ եւ հայր Համազասպ, մէկը վարդապետութեան, միւսը կառավարութեան գլուխ, որ յամենայն դէպս պաշտօնավարում էր Գրիգորի ժամանակ։ Նորոգուած եկեղեցին կարող է միայն Լուսաւորիչը լինել, որի պատին եւ արձանագրուած է իրողութիւնը։ Հայր Պետրոսը միաբանական կեանքն էր նորոգել, նորա յաջորդն արդէն զբաղուած է շինարարական նորոգութեամբ։ Հայր Խաչատուրի եւ Գիշուկի մասին աւելի տեղեկութիւն չունինք, քան ինչ որ գրուած է արձանագրութեան մէջ, բայց ամիր Բուրան, կարծում ենք, հայր Օհաննա վանքի[2]) 1211 *թուի մի արձանագրութեան մէջ յիշուած «մեծ սպարապետ Բուրայ»ն է, որ տեղական իշխանն է եւ* «ետ Առուինչք զայգին Ոսկերակա, Առուքանակ, որ է առու Քանաքեռու. Բ. ակն ջաղացին»։ *Նոյն Բուրան կամ Բուրակը պիտի լինի Աթաբէկ Իւանէի տան զօրակալը, որ իր դուստր Սափային կնութեան տուաւ Լիպարիտ Օրբէլեանին։ Վերջին անգամ յիշւում է Ամաղուի մի արձանագրութեան մէջ* 1223 *թուին*[3])։ *Գուցէ նա նոյն լինի եւ քիչ յետոյ յիշուելիք Հայրաձայնի արձանագրութեան Պատրոն Բուպալի հետ, եթէ հայր Օ-*

---

[1]) Ալիշան (Այր. 261–2), այս երկու արձանագրութեան հայր Պետրոսին տարբեր անձն է համարում։

Բարսեղի մասին. Ալիշան. Շիրակ. 21, 27, 41, 85, 164։ Վարդ. 170, 174։

[2]) Այս վանքը գտնւում է Սեւանայ լճի արեւմտեան ափին, Նոր Բայազիդի եւ Ելենովկայ գիւղի մէջ. արձանագրութիւնը տե՛ս Ջալալեան. Բ. 130։ Սմբատեան, Գեղարքունիք. 435։ Կոստանեան, Վիմական տարեգիր. 51։ Արձանագրութիւնը կարօտ է վերստուգութեան։

[3]) Օրբ. 353, 357։ Ալիշան. Սիսական. 186։ Կոստ. Վիմ. տար. 67։

հաննա վանքի արձանագրութեան «Առուինչք»ը եղծումն է կամ նոյն «Առինջք» անուան հետ, որ հաւանական ենք համարում եւ մի գիւղ է Կոտայքում։

Հայր Խաչատուրի յաջորդն էր, ինչպէս վերեւ յիշեցինք, Գրիգոր վարդապետ, որ թէեւ առաջին անգամ արձանագրութիւնների մէջ յիշւում է ՈԾԵ (= 1206) թուին, բայց աւելի վաղ յաջորդած պիտի լինի։ Վերոյիշեալ թուին Հայրաձայն անունով մէկը հող է գնում Առինջքում «յիմ Պարոն Բուպալէն», այգի է տնկում եւ նուիրում Կեչառիսի ուխտին, Գրիգոր վարդապետը եւ միւս միաբանները բոլոր եկեղեցիներում մի օր պատարագ են նշանակում Թէոդորոսի տօնին (Յաւել. Ա. 42)։ Երկրորդ անգամ Գրիգոր վարդապետը յիշատակւում է «ի ՈԿԲ» (= 1213) թուին Վաչէ Վաչուտեանի ժամատան հարաւային պատին թողած արձանագրութեան մէջ։ Վաչէն մի նոր իշխանութեան հիմնադիրն էր Քասաղի հովտում Զաքարեանների գերիշխանութեան տակ, մէկը իւր ժամանակի շինարար իշխաններից՝ իւր կնոջ Մամախաթունի հետ։ Նա իւր գաւառից դուրս եւս առատ նուիրաբերութիւններ ունի արած ուրիշ վանքերին, որոնց մէջ եւ Կեչառիսին։ Վաչէն միաբանում է (այսինքն նուէրներ տալով միաբանում վանքի պայծառութեան, շինութեան) իւր կնոջ Մամախաթունի եւ Քուրդ ու Վաչուտ որդիների հետ եւ տալիս իւր գանձագին Շէն Գաւիթ գիւղում այգի եւ եկեղեցու սպասներ։ Տէր Գրիգորիսը (Բջնոյ եպիսկոպոսը, որ միեւնոյն ժամանակ այս վանքի վերատեսուչն էր) եւ Գրիգոր վարդապետը Ծաղզարդարի պատարագը յատկացնում են Վաչէին, Ղազարինը՝ Մամախաթունին, իսկ Նոր Կիրակէինը՝ Քրդին, պարտաւորելով յետագայ վանահայրերին «զսէրն առնէն Նոր Կիրակէին անխափան»[1])։

Նոյն Ս. Նշան մատրան արեւմտեան պատի ճակատին Գրիգորի որդի Մխիթարիչը իւր «ախրին այգին» Երեւանում՝ տալիս է Կեչառիսի ուխտին եւ ստանում «հրամանաւ տն. Գրիգորիսի եւ Գրիգոր վարդապետի(ն— մի տառ կոտրած) եւ յառաջնորդութի. Համազասպա» հինգ ժամ Մխիթարչին, երեքը՝ «Տիկնացտիկնա Կոկորին մարն», չորսը՝ Գրիգորին, երեքը՝ Մամիկին (Յաւել. Ա. 45, պատկ. 126[2])։ Այստեղ յիշուած Տէր Գրիգորիս եւ Գրիգոր վարդապետը յիշուած են նաեւ Վասակ Խաղբակեանի շինած գողտրիկ կաթողիկէի (պատկ. 28., նաեւ 12 աջ կողմի եւ 122 ձախ չէնքը) հարաւային պատի մեծ արձանագրութեան մէջ (Յաւել. Ա. 2, պատկ. 4)։ Առաջինը Բջնիի եպիսկոպոսն է, իսկ երկրորդը Գրիգոր Մոնոնիկ կոչուածը, մէկը Արեւելեան Հայաստանի նշանաւոր վարդապետներից, ժամանակից Լոռուայ եւ Անիի ժողովներին Զաքարիա սպասալարի ժամանակ։ Հաղբատի Գրիգորիս եպիսկոպոսը, որ Զաքարիայի նորաձեւութիւնների գլխաւոր հակառակորդներից մէկն էր, բրածեծ անել տուաւ կաթուղիկոսի նուիրակ Մինաս եպիսկոպոսին, փախչելով նախ Գետկայ վանքը՝ Գօշ Մխիթարի մօտ եւ ապա Կեչառիս, ուրեմն, Գրիգոր վարդապետ Մոնոնիկի, ուր եւ ձերբակալուեցաւ Զաքարիայի մարդկանց կողմից[3])։ Այսպիսով տեսնում ենք, որ Կեչառոյքը ծաղկեալ վիճակի մէջ եւ հռչակ ունեցող մի վանք էր, երբ անցաւ Վասակ Խաղբակեանի ձեռքը։

Գրիգոր վարդապետի օրով շինուեցաւ ոչ միայն կաթուղիկէն 1214 թուին[4]), այլ եւ ժամատունը (պատկեր 121, ձախ կողմի չէնքը, տաճարին կցուած)։ Յատուկ արձանագրութիւն ժամատան շինութեան մասին չունինք, բայց աջ եւ ձախ դասի աւանդատների դռների գլխին թուագրուած են մի մի արձանագրութիւն «Թվ. ՈԿԳ» (= 1214). առաջնում ասուած է՝ «սբ. Յովանէս Յովհաննիսա ծայրին է (ծեր)»[5]). երկու պատարագ Վարդավառի ուրբաթ եւ շաբաթ օրերը յատկացնում են նորան. իսկ երկրորդում գրուած է, թէ «Սբ. Յակոբս Մխիթարա է, տարին :Բ: աւր ժամ առնեն նմա, Եղիական... եւ (ի շաբաթն—մի բառ փչացած)» (Յաւել. Ա. 46ա. եւ բ.)։ Այս տուեալներով կարող ենք ասել, որ ժամատունը նշանակուած թուականից ուշ չէ շինուած, բայց շատ էլ առաջ չպէտք է լինի նորա ծագումը, որովհետեւ այդպիսի արձանագրութիւնները կապուած են եկեղեցու օծման կամ նաւակատեաց տօնի հետ, որ շատ յաճախ երեւում է մեր վիմագրութեան մէջ։ Հենց հետեւեալ գլխի մէջ Գեղարդի նկատմամբ կը տեսնենք նման երեւոյթներ։

Ի հաստատութիւն ժամատան ծագման մօտաւոր ժամանակի ունինք եւ Հայրաձայնի արձանագրութիւնը նոյն Գրիգոր վարդապետի օրով, ՈԾԵ (= 1206) թուականից (Յաւել. Ա. 42), որ փորագրուած է եւ կարմիր ներկած նոյն ժամատան հիւսիսային պատին։ Սորա տակն է անմիջապէս՝ փորագրուած եւ կարմիր ներկած ումն Սարգսի արձանագրութիւնը, որով իւր կնոջ Զամալի հետ միաբանակցում է Կեչառիսի ուխտին, իսկ

---

[1] «Սէր առնել» նշանակում է եղբայրական, սիրոյ ճաշ տալ, որի համար սովորական էր «ագապ»։ ’αγαπη տերմինը։ Այս մասին տե՛ս Մառի կարծիքը X. B. T. I. b. I. 41—42 եւ T. II. b. I. եր. 145. եւ մեր յօդուածը՝ Արարատ 1912, 997. «Ագապի հաստատութիւնը Հայոց եկեղեցու մէջ»։

[2] Պարոն կուկոր անունով մէկը թաղուած է Հաւուց Թառի վանքում ՈՂԵ = 1246 թուին, նախապէս նուիրելով իւր տունը, ջաղացը, երկու այգին հող եւ ստանում մի մի ժամ հօր, մօր եւ ամուսնու անունով։ Մի խոյակի արձանագրութեան մէջ եւս յիշւում է Տիկնանցտիկնայի նուիրատուութեան մասին։ Մենք կարծում ենք, որ դրանք նոյն են Կեչառիսի արձանագրութեան նոյնանուն անձանց հետ։ Մխիթարիչը հայրն է, Տիկնանցտիկնան Կուկորի մայրը։

[3] Գանձ. 162, 166։

[4] Տե՛ս Աստ. Մասն Առաջին, երես 36 եւ շար.։

[5] Ուշադրութեան արժանի հայ լեզուի բարբառագիտութեան համար. արձանագրութիւնների մէջ ունինք նաեւ «խայչ», փոխանակ «խաչ». օր. հենց հետեւեալ գլխի մէջ (Յաւել. Ա. 114)։

առաջնորդները հաստատում են երեք օր պատարագ իրեն եւ մէկը իր ամուսնուն. «Գրոյս ընձա Կ. դահեկան» *աւելացրած է վերջում, որ գրելու վարձատրութիւնն է (Ցուել. Ա. 47)։ Սորա տակն միայն կարմրադեղով գրուած է հետեւեալ եղծուած արձանագրութիւնը.*

3. ...ժ Հոռոմտամալն, Գառնեղի ցայլքս
(այժմեան Ռնտամալը)
... առին Քալատակն ... (պէտք է լինի. «եթէ ոք յէպիսկոպոսաց կամ յաւագաց կամ ի»)
4. ... (ի փոքունց) խափանել ջանա ։ ՅԺԸ



ՊԱՏԿԵՐ 127.

1. ...եւ երկուց Հարազատ որդեացն իւր
... գին եւ յառաջնորդութի. հայր Համազասպա ես տր
2. ...(Գրիգորիս) եւ այլ էպիսկոպոսք սահմանեցաք ժող... որ /
հայրապետացն
... (նորվեալ եղիցի) Յովաննէս գր.[1])

Այս եւ 1206 թուի արձանագրութեամբ որոշւում է

---

1) փակագծի մէջ առնուածները մենք ենք լրացնում։

եւ Սարգսի արձանագրութեան ժամանակը, որ երկուսի մէջն է գրուած· Հայր Համազասպը ժամանակակից տեսանք Գրիգոր վարդապետին (Յաւել· Ա· 45)։

Ժամատան շինութեան հետ են կապուած մի քանի ուրիշ արձանագրութիւններ, թէեւ առանց թուականի։ Այսպէս, ձախ աւանդատան վերին յարկը շինել է Կիրակոսի որդի Դաւիթ Ջուղայեցին «իւր հալալ արդենից (s!) շինած, յամէն տարի :Ե: աւր ժամ առնեն նմա ի սբ· Գրիգորին պասն անխափան» (Յաւել· Ա· 48)։ Նոյն աւանդատանն արեւմտեան ճակատին է Վարդի եւ իւր ամուսին Նազի արձանագրութիւնը, որ տալիս են իրենց «հոգս ինչս ի սբ· Գրիգոր Լուսա··(ւորիչ)··» եւ ստանում տարին երկու ժամ (Յաւել· Ա· 49)։



ՊԱՏԿԵՐ 128·

Սորա տակն է Հայր Պետրոսի եւ Տէր Բարսղի անուան յիշատակութեամբ կիսեղծ արձանագրութիւնը, որ ծագման ժամանակով հին ենք համարում, բայց քանդակուած այս ժամանակները (Յաւել· Ա· 49)։

Դեղ կրօնաւորը ՈԿԹ (= 1220) թուին Ս· Նշանի ետեւը կանգնել է մի խաչքար «աւգնականութբ· Գրիգոր վարդապետի», «ի բարեխաւսութի·» իւր Յովսէփ եղբօրը, որ կուսակրօն քահանայ էր եւ Երուսաղէմից դարձին «խողխողեցաւ սրով յայլազգեաց» (Յաւել· Ա· 50)։

Նոյն թուին է շինուել բուն վանքերի խմբից քիչ դէպի արեւմուտք փոքրիկ, բայց սիրուն եկեղեցին Ս· Յարութիւն անունով (պատկ· 127, 128), շինութեան արձանագրութիւնը գտնւում է տաճարի արեւմտեան դրան գլխին, իւրատեսակ դաւթի ներսը.

Թվ. :ՈԿԹ: շինե/ցաւ սբ. Յարութիւնս առ/
ի յիշատակ համաւրէն նընջ/եցելոց ի Քս.
եւ ծնողաց իւրո/
ց Հասանայ եւ Ռուզուքանայ (դ—ն կոտրած
եւ զաւակաց.../
. . . / . . . . . եւ եւ /
արձան աւրհնութե. սիրոյն որ առ Ած. եւ
առ սբս. Նորա. ամէն.¹)

Ո՞վքեր են այստեղ յիշուած Հասանն ու Ռուզուքանը: Այս հարցի պատասխանը լուծում է Գեղարդի վանքի մի արձանագրութիւն (Յաւել. Ա. 78), որից երեւում է, թէ Սմբատ Թագաւորազնի թոռը եւ Վաղթանկի որդի Հասանը իւր տուած նուէրների փոխարէն ստացել է տաս պատարագ, հինգն իրեն, «Գ: իմ մաւրն Նանային: Բ: Ռուզուքանա կենակցի իմոյ»: Արձանագրութիւնը թուական չունի, իսկ վանքը շինուած է 1215 թուին, երբ պիտի գրուած լինի մօտաւորապէս եւ այս արձանագրութիւնը: 1220 թուին արդէն վախճանուած են նրանք, որոնց յիշատակին երախտագէտ որդին նուիրում է այս փոքրիկ տաճարը: Խնդիրն աւելի եւս պարզւում է Դատի վանքի մի արձանագրութեամբ՝ գրուած վերոյիշեալ Վաղթանկի²) եւ իւր կնոջ Նանայի կողմից, նաեւ Վաղթանկի հօր Սմբատ Թագաւորազնի յիշատակութեամբ: Տարաբաղդաբար մեզ չէ յաջողուել գտնել Կեչառիսի այս փոքրիկ եկեղեցու շինողի եւ զաւակների անունները:

Մի վերջին արձանագրութիւն եւս ունինք Գրիգոր վարդապետի օրով: Ոմն Սարգիս՝ «կրաւնաւոր ի վանաց Գետկայ», նուէր է տալիս իւր կարողութեան չափ, Գրիգոր վարդապետը եւ միաբանները մի պատարագ են յատկացնում Ս. Սարգսի տօնին (Յաւել. Ա. 51):

Մի տարի յետոյ թաղուել է այստեղ Եարէք անունով մէկը, Լաւչքարէի եղբայրը, մեծ տաճարի հարաւային կողմը՝ դրան առաջ՝ գերեզմանաքարի արձանագրութեան համեմատ. «Այս է հանգիս/տ Եարէքին եղբա/ւր Լաւչքարէ / յիշեսջիք ի/յաղաւթս ի/թու ՈՀ.»:

Արդեօ՞ք կենդանի էր Գրիգոր վարդապետը, երբ պատրոն Վաչէն 1222 թուին նորոգեց Ս. Նշանի մատուռը (պատկ. 126, Յաւել. Ա. 44), ասել չենք կարող: Այս պատրոն Վաչէն չպէտք է նոյնացնել Վաչուտեան Վաչէի, Մամախաթունի ամուսնու հետ (Յաւել. Ա. 43), այլ ամենայն հաւանականութեամբ Երեւանում բնակուող մի տոհմի ներկայացուցիչներ են, ինչպիսիք են «պատրոն Վարդ Երեւանո» (Յաւել. Ա. 41), «Մխիթարիչ որդի Գրիգորի» իւրայիններով (Յաւել. Ա. 45),զուգէ և Վարդըմրել (Յաւել. Ա. 40),նաեւ Գեղարդի վանքի արձանագրութիւնների մէջ, Դոլ եւն.:

Գրիգոր վարդապետին յաջորդեց Ներսէս վարդապետ, ըստ Գանձակեցու «այր առաքինի եւ ողջախոհ». սա եւս ժամանակից էր Անիի ժողովին: Սորա օրով ոմն Սարգիս տալիս է իւր հողու արդիւնքը սուրբ Գրիգորին՝ «յառաջնորդութե. Ներսէս վրդ.: Վարդապետերս եւ միաբանքս» տալիս են տարին երկու ժամ, մէկն իրեն եւ միւսը իւր ամուսնուն (Յաւել. Ա. 52): Այս արձանագրութիւնից տեսնում ենք, որ նա միակ վարդապետը չէ, այլ գլխաւորն է միայն, որ վանքի կարեւոր կեդրոն լինելն է ապացուցանում:

Ներսէսի յաջորդն էր Մխիթար վարդապետ, որի օրով Ամարասի Սարգիս եւ Վրթանէս եպիսկոպոսները միաբանում են Կեչառիսի սուրբ Լուսաւորչին եւ իրենց արդիւնքից 200 դահեկան նուէր տալիս. Մխիթար վարդապետը միւս վարդապետների եւ միաբանների հետ հարիւրը «ի ջաղացն անցուցաք :Ճ: ժամատուն» եւ սահմանում են տարին վեց պատարագ «ի տաւնի Ռստակիսի եւ Վրթ.ի: Գ: ՍԳ: Գ. Վ.Բ.» (Յաւել. Ա. 53, պատկ. 129): Արձանագրութիւնը գտնւում է ժամատան արեւմտեան դրան եւ կամարակալ քարի վերայ եւ գրուած պիտի լինի մօտաւորապէս 1242 թուին, քիչ առաջ կամ յետոյ, երբ երկիրն սկսել էր բնականոն վիճակի մէջ մտնել Թաթարների նուաճողական արշաւանքից յետոյ, բայց ոչ ուշ քան 1246 թիւը, երբ մեռած էր արդէն Սարգիս եպիսկոպոսը: Նոքա երկուսով հիմնարկել են Գտչոյ վանքը Ղարաբաղի Դիզակ գաւառում, որի խորանը խփելու ժամանակ՝ վախճանւում է Սարգիսը: Արձանագրութիւնները ՈՂԵ (= 1246) թուին միայն Վրթանէս եպիսկոպոսի մասին են խօսում, իբրեւ «զգրուեալ վիճակս (Ամարասի)» հաստատողի եւ եկեղեցու շէնքը վերջացնողի: Երկու եպիսկոպոսների տարագրութիւնը, ապա վերադարձը կապ ունէր Թաթարների արշաւանքի հետ, երբ «ազգն Նետողաց զքազում գաւառս աւերեաց եւ մնաց այլասեռից աթոռ եւ վիճակ սրբոյն Գրիգորիսի»³):

Կախաբերի որդի Քուրդը 1244 թուին Ս. Լուսաւորչի դրանը կրօնաւոր է դառնում Յովհաննէս կոչուելով եւ Սուրբ Յովհաննիսի մասունքի համար պահարան շինում: Նորա արձանագրութիւնը գտնւում է ժամա-

---

[1] Տե՛ս եւ Շահխաթունեան Բ. 197: Ալիշան. Այր. 263: Սմբատեան. Գեղարքունի. 354, թերի: Լալայեան. Ազգագրական Հանդէս. XXIII. 131:

[2] Այս վաղթանկին չպէտք է շփոթել ոչ Ներքին խաչենի իշխան, խորիշահի (Զաքարէի եւ Իւանէի քոյր) ամուսին, Հասանի որդի վաղթանկի հետ, որ Հասան–Ջալալի հայրն էր (Գանձ. 254. Վարդ. 184. Բարխ. Արցախ 173). եւ ոչ Հաթերքի իշխան Արզուխաթունի ամուսնին եւ Հասանի որդի վաղթանկի հետ, որ Գոշ Մխիթարի մեկենասն էր (Դատաստանագիրք. Բաստամեանի հրատ. եր. 71–72: Գանձ. 197, 203: Վարդ. 184: Բարխ. Արցախ 203: Տես եւ Orpeli. Asangalal kniaz Khatchanski, Izvestia Academi Naouk. 406/7): Բայց սա եւս խաչենի իշխաններից էր եւ նրա կալուածները Դատի վանքից ոչ հեռու:

[3] Շահխ. Բ. 366: Բարխ. Արցախ, 81—82: Կոստ. Վիմ. տար. 84, 90:

տան վրան ճակատին, կամարից եւ վերոյիշեալ եպիսկոպոսների արձանագրութիւնից բարձր (Ցաւել. Ա. 54, պատկ. 129) ։

Թաթարական արշաւանքի ժամանակ այս չէն եւ փառաւոր վանքը, որ այնքան խնամքի եւ ուշադրութեան էր արժանացած Վասակ Խաղբակեանի եւ Գրիգոր վարդապետ Մոնոնիկի կողմից, աւերման է ենթարկւում։ Մեր միակ աղբիւրն այդ մասին Խաչենի Խոյախան բերդի մեծ իշխան՝ Վաղթանկի որդի Հասան-Ջալալի եւ նրա կնոջ՝ Բաղաց Թագաւորի դուստր Մամքանի արձանագրութիւնն է, ժամատան երդիկի պատուանդան կազմող գարնէզի վերայ (Ցաւել. Ա. 55), երկուսն էլ յայտնի իրենց շինարարութեամբ, մէկը Գանձասարի վանքի, միւսը նրա ժամատան։ Այդ երկու ամուսինները 1248 թուին, վանքի առաջնորդ Մխիթարի օրով, ուխտ են գալիս եւ «բազում գանձիւք վերստին» նորոգում են «մեծ եւ հոչակաւոր» վանքը եւ իւրաքանչիւր տարի քառասուն դուկատ նուէր նշանակում «ի համաւրէն վանառէն»[1] ։ Վարդապետները Մխիթարի եւ միւս միաբանների հետ սահմանում են բոլոր եկեղեցիներում երկու օր պատարագ, աւագ զատկին Հասան-Ջալալին «եւ ։գ։ չաբաթն աւրն» Մամքանին ։

Հաւանօրէն Մխիթարը կենդանի էր, երբ 1252 թուին կանգնում են Վեցիկի խաչարձանի(պատկ. 130)[2] մօտ մի ուրիշ խաչքար այսպիսի արձանագրութեամբ. Թվ. ՉԱ։ Քս. / Ած ողորմեա / Ցաղագարա ի / գալըստեան քում» (պատկ. 131) ։



ՊԱՏԿԵՐ 129.

Մխիթարի յաջորդն էր որպէս առաջնորդ Թադէոս վարդապետ, որի անունը յիշուած է ՉԺԱ (= 1262) թուին, Մոնթի եւ իւր ամուսին Խաթութի արձանագրութեան մէջ. նրանք ի Թվ. ՉԺԱ. գալիս են Կեչառիս եւ իրենց հոգու արդիւնքը տալիս Սուրբ Գրիգորին «յառաջնորդութե. Թադէոս վդին»։ Միաբանները քառասնից տօնին երեք օր ժամ են նշանակում, երկուսը Մոնթին եւ մէկը Խաթութին (Ցաւել. Ա. 56)։ Արձանագրութիւնը գտնւում է ժամատան հիւսիսային պատի վերայ ներսից, արեւելեան կիսասեան մօտ։

Երկու տարի յետոյ՝ «Թվ. ՉԺԳ (= 1264)» ումն Վարհամ... (իշխան ? փչացած է մի բառի տեղ) եւ ամուսինը Թամթեր գալիս են եւ տալիս իրենց հոգու արդիւնքը Սուրբ Գրիգորին։ Միաբանները սահմանում են չորս ժամ Աստուածածնի Վերափոխման տօնին,

---

[1] «վանառք» անունով տեղի աւերակները գտնւում են Հասան-Ջալալի իշխանութեան մէջ, ոչ հեռու Խոյախան բերդից՝ Գանձասար եւ Առաջաձոր գիւղերի մէջ։ Այս վայրը, հաւանօրէն, իշխանութեան վանառականական կեդրոնն էր, տօնավաճառը, որի եկամուտից իշխանական զոյգը տարեկան քառասուն դուկատ նպաստ է նշանակում այս վանքին։ Հասան Ջալալի մասին Գանձ. 249, 254, 269, 298, 345–6, 373–5։ Նաեւ նախընթաց ծանօթութիւնը Վաղթանկների մասին։

[2] Տես եւ պատկ. 24, որ աղօտ լինելու պատճառով այստեղ երկրորդում ենք։

երեքը՝ Վարհամին եւ մէկը՝ Թամթերին։ Արձանագրութիւնը գտնւում է ձախ դասի տաճարին կպած կիսասեան կամարի վերայ (Ցաւել· Ա· 57)։ Նոյն արձանագրութիւնը չնչին տարբերութեամբ կրկնուած է ձախ դասի սիւնից բարձր, արեւմտեան կամարի վերայ առանց թուականի (Ցաւել· Ա· 58)։ Սորա ներքեւը եղել է սեւ աղեղով մի արձանագրութիւն, որ այժմ չէ կարդացւում։



ՊԱՏԿԵՐ 130·

Նոյն խոյակի արեւմտեան ճակատին է հետեւեալ փոքրիկ արձանագրութիւնը·

«Քս· Ած ողորմեա Ստեփանոսի / փակայկալին Գանձասարայ / եւ իր ծնողացն»։

Այս նոյն Ստեփանոսը 1263 թուին միաբանել է Սանահնի վանքին[1])։ *Անհաւանական չէ, որ նոյն տարին կամ քիչ յետոյ եկած լինի եւ Կեչառիս։ Այս թուականը իրական ընդունելու կռուան կարող է լինել այն հանգամանքը, որ սրանից քիչ բարձր, կամարի վերայ գրուած է Վարհամի եւ Թամթերի արձանագրութեան կրկնակը, այսինքն 1264 թուին։*

Թադէոսի յաջորդն էր Տէր Աթանաս, որ յիշւում է Արապշահի արձանագրութեան մէջ ՉԻԱ (=1272) թուին։ Վիրապշահը միաբանում է Ս· Նշանին եւ իր հալալ արդիւնքից բաժին է տալիս, ստանալով չորս օր ժամ Ատոմեանց տօնին։ Այս միակ անգամն է, որ նուիրատուն միաբանում է այս եկեղեցուն· մեծ մասով Լուսաւորչի եկեղեցուն են միաբանում կամ ընդհանուր կերպով Կեչառիսի ուխտին։ Արձանագրութիւնը գտնւում է ժամատան հարաւային պատին՝ դրսից (Ցաւել· Ա· 59)։

Մի տարի յետոյ վանքի բակում՝ մեծ տաճարի դրան առաջ՝ թաղւում է Աբրէհամ քահանան, հաւանօրէն, վանքի միաբաններից մէկը·

«Այս է հանկի/ստ շնորհաց / Աբրէհամ ք/ահանայի որ / կիսաւրէ (s!) *փոխե/ցաւ թվ· ՉԻԲ»*[2])։

ԺԳ· դարի ութսունական թուականներին պէտք է դնել Պռոշի որդի Պապաք Խաղբակեանցի արձանագրութիւնը, որով նուէր է տալիս իր «Կաւանցի Նորքն ու :Մ: սպ: սք· Գրիգորիս եւ կաթուղիկէս»։ *Արձանագրութիւնը չի կազմուած կանոնաւոր հայերէնով, իսկ մի բառ էլ, որ հարկի տեսակ պիտի լինի, փակագիր լինելով, հնարաւոր չեղաւ կարդալ (Ցաւել· Ա· 21, պատկ· 55)*[3])։ *Ժամանակը որոշում ենք ենթադրաբար, ընդունելով, թէ հօր մահուանից յետոյ († 1284) միայն կարող էր կալուածական նուիրաբերութիւններ անել։*

Ոմն Պետրոս եւ Քահանայապետ անթուական մի արձանագրութեամբ «յառաջնորդութե· տր· Յոհանիսի» *տալիս են իրենց հողու բաժինը եւ ստանում չորս ժամ* «ի տաւնի Էրեւման խաչին» *(Ցաւել· Ա· 60)։ Հարց է, թէ ե՞րբ էր ապրում Տէր Յոհաննէսը· «տէր» տիտղոսը ԺԳ· դարում, ինչպէս եւ առաջ յատուկ էր միայն եպիսկոպոսներին եւ կաթուղիկոսներին· պէտք է ենթադրել, որ այս Տէր Յովհաննէսն էլ Բջնոյ եպիսկոպոս էր, որի աթոռի հետ սերտ կապուած էր եւ Կեչառիսի վանքը, ինչպէս տեսանք Գրիգորիս եպիսկոպոսի եւ Գրիգոր վարդապետի անուններին յիշատակութեամբ արձանագրութիւնների մէջ (Ցաւել· Ա· 2*[4])*, 43, 45)։ Յոհաննէսի նախորդն էր Բջնոյ աթոռի վերայ դարձեալ*

---

1) Ջալ· Ա· 35։

2) Տե՛ս եւ Լալ·, Ազգ· Հանդ· XXIII· 132, բայց ունի «կիսամեայ», փոխ· «կիսաւրէ» ճիշդ ընթերցուածի։

3) Տե՛ս Աստ· եր· 73։ Ցաւել· Ա· 21, պատկ· 55։

4) Այս Ցաւել· տ· խաղբ· պատկ· 4։

Գրիգոր անունով մի եպիսկոպոս, որ 1246, 1251, 1267, 1284 *թ. թ. յիշատակւում է արձանագրական եւ ձեռագրական յիշատակարանների մէջ*¹)*. Յովհաննէսը նորա տեղն անցաւ* 1287 *թուին*²) *եւ մասնակից եղաւ Ստեփանոս Օրբէլեանի գլխաւորութեամբ ընդդէմ Անաւարզեցու գումարուած ժողովին*³)*: Մկրտիչ արեղան յիշելով իւր ուսուցիչ Գրիգոր Բջնեցու (սա եւս ժողովի անդամներից եւ ժամանակի գրասէր վարդապետներից մէկն էր) մահը* 1298 *թուին, խնդրում է յիշել* «այլ եւ զքվեբորդին մտր. Յովէս զարհիեպիսկոպոսն Բրջնոյ (s!) եւ զվերատեսուչն Այրարատեան նահանգին, զանեալն սրբութք. եւ զվարժեալն ա. առաքինութք., որ է այր հե՛զ եւ երկայնամիտ եւ զուարթ դիմաւք...», *եւն.*⁴)*: Ստեփանոս Օրբէլեան իւր Հայկազնութեան ութերորդ եւ իններորդ ձեռնարկները գրել է* «ի խնդրոյ տն. Յո-



ՊԱՏԿԵՐ 131.

---

¹) Մեր յօդուածը՝ Զագավանից ժողովը, Շողակաթ, 1913, վաղարշ., եր. 29 եւ շար.:

²) Ձեռ. էջմ. № 1432/1422: Փիրղալէմեան, Նշխարք Հայոց Պատմ. (անտիպ) բ. 37 յիշատակարանը:

³) Օրբ. 461:

⁴) Ձեռ. էջմ. № 1395/1405, Յաւել. Բ. 65, 74:

վանիսի Արարատեան նահանգին եպսկի.» կամ «ի խընդրոյ տն. Յովանիսի Բջնոյ եպիսկի.»[1]): Մկրտիչ Թեղենեցին, երբ 1302 թուին գրում էր էջմ. № 1844 Նժ. ձեռագիրը Նչեցու համար, կենդանի էր տէր Յոհաննէս, «որոյ կցորդեալ կամացն (Նչեցւոյ)՝ բարեաէր յաւժարութբ. եւ ձեռնտու աւժանդակութբ., հոգւոյն շնորհաւք ծաղկեալ սրբազան եւ ածապատուեալ արհեպսն, տր. Յովաննէս, որ ունէր զվերատեսութի. այցելականն դիտման քահանայականն դասու կատարողապետութե. Այրարատեան նահանգիս, նիստ կայանի ունելով զամուրն Բջնի, որ էր ա. առաքինութբ. զարդարեալ, զորս խնամքն այ. պահեսցէ զնա խաղաղական կենօք, շնորհելով եկեղեցոյ սրբոյ ընդ երկայն աւուրս»:

Աջ դասի աւանդատան շինող Յովհաննէս «ծայր»ի արձանագրութեան (Ա. 46ա) տակ է մի կիսեղծ արձանագրութիւն «...(Ներսէ?)ս Զարաբերդո եպիսկոպոս»ի, որին տարին մի ժամ են նշանակում ծրագալուցին: Իբրեւ շարունակութիւն վերջին տողի կցուած է եւ ոմն «Սարգիս տանուտրոջ» արձանագրութիւնը, որին վեց ժամ է խոստացուած բոլոր եկեղեցիներում (Յաւել. Ա. 61ա 61բ): Զարաբերդի մի եպիսկոպոս Ներսէս անունով արձանագրութիւն ունի Հաւուց Թառում: Կարծում ենք, որ սորա անունն էլ Ներսէս պիտի լինի, որի անուան վերջին տառն էլ ս մնացած է անեղծ: Ներսէս Զարաբերդի եպիսկոպոսը Սարգիս եպիսկոպոս Դոփեանի քրոջ որդին է. վերջինս իբրեւ եպիսկոպոս յիշւում է 1311, 1312 թուերին եւ վախճանուած է 1336 թուին[2]): Մօտաւորապէս այս ժամանակ էլ պէտք է նշանակել Ներսէս Զարաբերդցու դեգերումը Արարատեան երկրում՝ Հաւուց Թառում եւ Կեչառիսում:

Մի քանի անթուական արձանագրութիւնների ժամանակը դժուար է որոշել, չունենալով որեւէ ցուցում. այդպիսիներն են.

ա) Գրիգորի որդի Խոցադեղի արձանագրութիւնը, որ գտնւում է ձախ դասի սիւնի կամարի վերայ՝ Ներսէս վարդապետի անուան յիշատակութեամբ Սարգսի արձանագրութեան տակ.

Կամաւն այ. Ես Գրիգոր որդի Խոցայ/դեղին եւ ամուսին իմ Գոհար / տուաք զմեր հոգո արդինս(s!) ի սբ. Գրիգորս. միաբանքս տվին :Բ: աւր ժամ ի տաւնի քաւշին :Ա: ինձ եւ :Ա: Գոհարին, ով որ խափանէ դատի ի տէ.

Այս արձանագրութիւնն ունի իր կրկնակը հիւսիսային պատի յետին դասի կիսասեան կամարի վերայ, կարմրադեղով եւ փորած.

Ես Գրիգոր որդ/ի Խոցադեղին եւ ամուսին իմ Գոհար տուաք / զմեր հոգո արդինս ի սբ. Գրիգոր եւ միաբանքս էտուն :Բ: / աւր պատարագ...: (մնացած մի տողը եղծուած):

բ) Նոյն կիսասեան խոյակի բարձի վերայ.

Ես Մարկոս քահանա տվի զիմ հոգո արդինս ի սբ. Գ/րիգորս միաբանքս ետուն ի տարին :Գ: ժամ Անդրէի տաւնին, էթէ ոք խափանէ իմ մեղացն տէր է:

գ) Յետին դասի աջակողմը սիւնի կամարի վերայ, դէպի ժամատան կեդրոնը.

Ես Յովանէս եւ ամուսն (s!) իմ տուաք զմե/ր հոգոյ արդինքս / ի սբ. Գրիգորս. մի աբ/անքս ետուն ի տարին :Բ: / աւր պատարագ Յովան/նու տաւնին ինձ եւ ա/ամուսին (s!) իմ. ով խափ/անէ մեր մեղացն / տէր է այ. առաջի:

դ) Աջակողմեան սիւնի կամարի վերայ, դէպի կեդրոնը. առաջին երեք տողերը ծեփի վերայ, թափած է.

...տիքս եւ ամուսին իմ .../անեմ տիկին միաբանեցաք / սբ. ուխտիս Կեչառու/աց եւ տվաք զմեր հոգո/յ արդինքն ի սբ. Գրիգոր / :Բ: ժամ սբ. Գրիգոր/ի տաւնին ով ոք / խափանէ դատի:

ե) Ժամատան հարաւային պատին՝ ներսը, Պապաքի արձանագրութիւնից բարձր.

Ես Պողոս տուի զիմ հոգոյ ար/դինս ի սբ. Գորս (Գրիգորս) միայրանք / հաստատեցին :Ա: աւր պատար/ագ Նոր Կիւրակէին, որ խափան/են դատի (s!) ի տնէ:

զ) Լուսաւորչի տաճարի արեւելեան պատին փորագրուած են երկու խաչ, կողքերին հետեւեալ արձանագրութիւնները.

1. **Սբ. Խաչս** (ս չ-ի բոլորակի մէջ) **բարեխաւս Ոստիան / Փիրպապին եւ Ներսեսին.**

2. **Սբ. Խաչս** (նոյն ձեւով) **բարէխաւս տր. Ղազարին / եւ Մարթայ:**

է) Մեծ տաճարի հարաւային դրան առաջ եղել է գերեզմանատուն, տափակ քարերով. նոցանից թուականով երկուսը յիշեցինք, հետեւեալ գերեզմանաքարերն առանց թուականի են.

1. **Այս է հանգ/իստ Վարդ/ան քահան/այի.**

2. **Այս է հանգիստ Վասակա որդո Յալէ? / Խաչենեցո. յիշեսջիք աղաչեմ.**

---

[1] Մեր ձեռագիրը, այժմ էջմիածնի մատենադարանում:

[2] Բարխ. Արցախ. 205, 206, 290: Մանրամասնութիւններ մեր Հաւուց Թառի Ամենափրկչին նուիրուած աշխատութեան մէջ:

3· Ած ողորմեա սր· վարդապետիս Սիմէ/ոնի եւ խառոյ եղբ··· հանգու/ցել են···

4· (Այ)ս է հանգիս(տ) Եւրէքին որդո Արտաւազա / յիշեսջի(ք) յաղաւթս աղաչեմ·

ր) Տաճարի եւ Ս· Նշանի մէջ եղած տարածութեան վերայ եղել են երկու փոքր խորաններ, որոնց մէջ կանգնել են չորս խաչքար: Դոցանից հնագոյնը արւեստին նայելով՝ ձախ կողմի (նայողի) եզր վերայ դրած խաչերից ներքեւինն է (պատկ·132), ոչ ուշ քան ԺԲ· դարը: Սորա գլխինը ունի արձանագրութիւն առանց թուականի· «Ած ողորմի Սարգ(ս)ի եւ իւր ծնողացն»: Սրանց կողքինը պատուանդանի վերայ ունի արձանագրութիւն կիսով չափ մնացած· «կանգնեալ պ/····/ ժամանեա··· մահու/ ··· եղկելի ծնողի իւրո Եղիաի· ···ոց/·· յիշեցէք ի տր·»: Երեք խաչերը բաւական գեղեցիկ են, համարում ենք ԺԳ· դարի գործ: Կան եւ ուրիշ խաչարձաններ, որոնց լուսանկարը, տարաբաղդաբար, ձեռքի տակ չունինք:



ՊԱՏԿԵՐ 132·

Այս արձանագրութիւններից ա—ը, միայն Է—ի 2 և 4 համարներն ունի Լալայեան, Ազգ· Հանդէս XXIII, 132:

Բայց այստեղ յիշատակելի է յատկապէս մի անձն, որի անունը կապուած է վանքի հետ եւ ծագմամբ էլ Խաղբակեանց կամ Պռոշեանց տոհմին է պատկանում· դա խաչատուր Կեչառեցին է: Զլինէր մականունը, չէինք ունենալ որեւէ առնչութեան հիմք այս վանքի հետ, որովհետեւ ոչ արձանագրութիւնները եւ ոչ էլ մինչեւ այժմ որեւէ յայտնի յիշատակարան տեղեկութիւն է տալիս այդ մասին: Արդեօ՞ք լոկ միաբան էր, առաջնորդ, թէ Կեչառիսի գլխաւոր վարդապետը կամ գիտնական ներկայացուցիչը· հաւանականը վերջինն է: Ստեփանոս Օրբէլեանի գլխաւորութեամբ գումարուած ժողովին 1295 թուին Կեչառեցին անմիջապէս ներկայ չէ եղել, որովհետեւ նորա ստորագրութիւնը չկայ ձեռնարկի տակ, որ բերուած է հեղինակի պատմութեան մէջ, բայց մի ձեռագրի մէջ ունինք եւ նորա ստորագրութիւնը· «Ես խաչատուր վրդպս· Կեչառեցի վկայ եմ այսմ դաւանութես·»[1]: Մեզ թւում է, թէ սկզբում Խաչատուր Կեչառեցին համակիր չէ եղել ժողովին, համարելով այն մի տեսակ ըմբոստութիւն կամ հակառակութիւն կաթուղիկոսի դէմ, եւ յետոյ միայն համողուել է եւ աւելացրել իւր ստորագրութիւնը: Այս ենթադրութեան հիմք է ծառայում մեզ վերոյիշեալ երեւոյթից զատ նաեւ նորա մի արտայայտութիւնը իւր Ողբի մէջ՝ «զհովիւ հօտին մեր բամբասեցաք», որ միայն Գրիգոր Անաւարզեցուն կարող է վերաբերուել եւ գըրուած է, ինչպէս կը տեսնենք, ժողովից քիչ առաջ: Ի հարկէ կային ուրիշ պատճառներ եւս, որոնք պէտք է բարոյապէս ճնշէին նորան եւ հակէին դէպի համաձայնութիւն: Ժողովին մասնակցում էին բացի Օրբէլեան եւ Խաղբակեան իշխաններից՝ Սիւնեաց, Բջնոյ, Հաղբատի, Հաւուց Թառի, Գողթան եպիսկոպոսները, «Տէր Մարգարէ եղբօրորդի վանական վարդապետին», իսկ վարդապետներից Գլաձորի դպրոցի նշանաւոր վարժապետներ՝ Եսայի Նչեցի եւ Դաւիթ վարդապետ: Բջնոյ Յովհաննէս եպիսկոպոսի հետ ձեռնարկին ստորագրում է եւ Գրիգոր Բջնեցի վարդապետը, որ ինչպէս տեսանք իւր վիճակի եպիսկոպոսի մօրեղբայրն էր եւ «հրամանատար» նոյն աթոռի, եւ ինքն էր միայն Արարատեան կամ Բջնոյ վիճակի վարդապետ լինելով հանդերձ, որ իւրայինների հետ չէր: Բայց կաթուղիկոսի ակնյայտնի եւ դայթակղեցուցիչ դիրքը դէպի Հայ Եկեղեցու աւանդութիւնների վերջնականապէս համոզում են եւ նորան միանալ իւր ընկերների հետ: Ժողովից մի քանի տարի յետոյ նա Ստեփանոս Օրբէլեանի հիւրն է եւ մտերիմը. նորա խնդիրքով էլ Օրբէլեանը գրել է իւր «Ողբ ի Կաթուղիկէն», ինչպէս ցոյց է տալիս վերնագիրը. «Ի Ստեփանոսէ Սիւնեաց այցելուէ, ի խնդրոյ շնորհազարդ վարդապետի Խաչատրոյ Կեչառեցոյ ի թուին ՉԽԸ»1): Կեչառեցու դիրքն ու բարեկամութիւնը աւելի պարզ երեւում են Ողբի վերջին տողերի մէջ.

---

[1] Ձեռ· էջմ· Nº 94/3276· 58: Մի տեսակ ժողովածու է մատենագրական տեղեկութիւնների, յիշատակարանների, հաւանօրէն եղել է դպրոցական ձեռնարկ:

Փութով մեծաւ զմեզ հարկեալ,
Ի յայս հանդէս բանից մղեալ,
Բաբունապետս հոգւով լցեալ,
Անյաղթ հռետս շնորհօք ծաղկեալ
Եւ բանիբուն մեզ ճանաչեալ.
Յազգաց բազմաց գովաբանեալ
Որ Խաչատուրս է յորջորջեալ,
ՅԱրարատեան տանէն եկեալ:

Վերջին տողը պարզում է նորա Կեչառեցի կոչումը: Կեչառիսը Բջնոյ կամ Արարատեան թեմի երկրորդ կեդրոնն էր ԺԳ. դարում: Ստեփանոս Օրբէլեանը ոչ միայն իւր Ողբն է գրել Խաչատուր Կեչառեցու խնդիրքով, այլ եւ Հակաճառութեան տասնեւմէկերորդ ձեռնարկը կամ գլուխը2):

Նորա վարժապետական գործունէութեան մասին եւս ունինք տեղեկութիւն ՉԿԴ (= 1315) թուին գրուած մի նկարազարդ աւետարանի յիշատակարանից, թէեւ առանց մանրամասնութիւնների. «յամս առաքելաշնորհ արհեպի· տն· Յովհաննիսի մականուամբ Աւրպել կոչեցելոյ, ձեռամբ նուաստ եւ ոսկեգիր գրչապետի Բարդաղի, աշակերտի մեծ բաբունապետի խաչատուր Կեչառուեցի, գծագրեցաւ ի քաղաքիս յեղեգիս ի տէրութե· արեաց վեհագունի իշխանաց իշխեցողի մեծ կոմսի եւ կողմնակալի Բուրթելին եւ նորին հարազատի Բուղտային, ի խնդրոյ սրբասնունդ քհի· Սահակայ»: Այստեղ յիշուած Բուրթելն ու Բուղտան Ստեփանոս Օրբէլեանի եղբօր Ելիկումի որդիքն են, առաջինը յայտնի իւր երկարատեւ իշխանութեամբ եւ նշանաւոր հանդիսացած իւր կրկնայարկ եկեղեցով Ամաղուի վանքում: Աւետարանը թուղթ է, 24×32 սմ· մեծութեամբ, 324 թ·, խոշոր բոլորգրով եւ նկարազարդուած չորս աւետարանիչների մանրանկարներով եւ սկզբնազարդերով, նաեւ տասը խորանով սկզբում, եւ բազմաթիւ ծաղկագիր–մանրանկարչական սկզբնատառերով: Ունի եւ երկու «վարդազարդ՝ վրան ծաղկահիւս մի խաչ, իսկ սորա կողքին մի մի թռչուն, ամբողջը պատած գեղեցիկ շրջանակով»: Երկրորդ վարդազարդի շուրջը երկաթագրով գրուած է. «բոլորակիս շրջապատի դուք յիշեցէք զիս բաբունի զխաչատուր Կեչառուեցի· թվ· ՉԿԳ»: Այս քաղուածքներից հաստատւում է ոչ միայն Կեչառեցու վարժապետական գործունէութիւնը, ի հարկէ ոչ այնչափ ընդարձակ, ինչպէս Գլաձորի դպրոցի վարժապետ–վարդապետներն էին, այլ եւ նորա նկարիչ եւ գրիչ լինելու իրողութիւնը: Կեչառեցու մի ուրիշ աշակերտի մասին կը տեսնենք քիչ յետոյ: Տարաբաղդաբար ձեռքի տակ չունինք լուսանկարներ, բայց Ե. Լալայեանցի վկայութեամբ պէտք է գեղարուեստական արժէք ունենան այդ ձեռագրի մանրանկարները: Ձեռագիրը գտնւում էր Նուխուայ գաւառի Վարդաշէն գիւղի եկեղեցում3):

Մեր ձեռքն է հասել նաեւ Կեչառեցու սեփականութիւն եղած մի շատ կարեւոր ձեռագիր. «Պատճառ լայն եւ նուրբ գրեանց, առեալ ի հարցն սրբոց եւ ի վդաց·, եւ ի մի հաւաքեալ եւ հոգացեալ մեծ բաբունապետին Գրի·, որդոյ Աբասայ»4), որ փիլիսոփայական, եկեղեցական հայրերի եւ Ս. Գրքի մի տեսակ ներածութիւն է, նրանց ծագման, հեղինակների մասին տեղեկութիւններով: Առաջին ստացողն է Գերսամ վարդապետ. 28բ. «Տր· Ած ողորմեա ստացողի սորա Գերսամ վարդապետին եւ ծնողաց իւրոց եւ յիշողացդ, ամէն»: Գրիչն է Մովսէս. 286բ. «ԶՄովսէս գրող գրոցս յիշեսջիք ի սբ· յաղաւթս ձեր աղաչեմ եւ զձեզ Տր· յիշէ»: Արդեօ՞ք սրանք Կեչառիսի միաբաններ են, եւ այնտե՞ղ է գրուած ձեռագիրը, ասել չենք կարող. բայց նրանք ժամանակով շատ հեռու չեն Կեչառեցու ժամա-

---

1) Ձեռ· էջմ· № 2407, 265: Հրատարակել է Կ. Կոստանեան. Ողբ ի Կաթուղիկէն, Թիֆլիս 1885:

2) Ձեռ· Երուս· № 633· «բոլոր պատճառ ժողովոյն Քաղկեդոնի: Եւ բացայայտութի· նոցին աղանդոյն· եւ յայտարարութիւն տումարին Լեւոնի վիպասանեալ նորին Ստեփանոսի ի խնդրո Խաչատուր վրդպէ· Կեչառեցոյ· սկս· ի Թագաւորութեն· Թէոդոսի փոքու...»:

3) Օգտւում ենք Լալայեանցի նկարագրութիւնից Հ. Ակինեանի արտագրութեամբ, այժմ ձեռքի տակ չունենալով Պատուական Քուշմանեանի մեզ համար կատարած նկարագրութիւնն ու յիշատակարանների արտագրութիւնը:

4) Ձեռ· էջմ· № 1650/1879 (Կար· 1608): Տե՛ս Արարատ· 1905· 148· Կ· Վ·-ի յօդուածը: Ձեռ·-ի բովանդակութեան մասին Տաշեան, Մայր Ցուց· 213: Պատճառաց գրքի հեղինակ Գրիգոր Աբասայ որդու մասին Ակինեան· Հ· Ա· 1907· 132:

նակից, քանի որ գրքի հեղինակ կամ խմբագրող Գրիգոր որդի Արասայ ապրում էր ԺԳ. դարի երկրորդ տասնամեակում[1]): *Ապա գիրքն անցել է Կեչառեցուն, ինչպէս ցոյց են տալիս բազմաթիւ մանր յիշատակարաններ իր իսկ ձեռքով գրուած, 3ա.* «Քս· Ած Մեսեայ եւ Մանուէլն շնորհաւոր արասցէ զսա վրդի· Խչտոյ», *կամ աւելի պարզ 16ա.* «զԽչտ· վդ· Կեչառվեցի ստացող սբ· տառիս յաղաւթս յիշեա»:

Բայց Կեչառեցին ինքն էլ իր բաժինն է բերել տօնապատճառների գրականութեան մէջ: Տարաբաղդաբար այդ աշխատութեան միայն բեկորներն են հասել մեզ, կցուած այժմ էջմ. № 753 *Նժ. ձեռագրին: Այդտեղ մի գլուխը վերնագրուած է.* «Իմաստութի· հոգեւոր վարդապետին Խաչատրու ասացեալ». *սկս.* «Ածային ամենառ(ատ) եւ ամենազաւր սքանչելագործ զաւրութբ·» *Թերթերը յետ ու առաջ ընկած. 378բ–ի շարունակութիւնն է 390աբ., բայց դարձեալ թերի: Մի ուրիշ գլուխ՝* 386բ. «Պատճառք ՝Նոր Կիրակէին եւ աւետաբանացն կարդացման սակաւ». *սկս.* «Ոմն յիմաստնոցն ասաց, ա· օրէնք ածայինք· իբրեւ զկենդանի մդ· մի են»: *Վերջում գրիչն աւելացնում է.* «զոր եւ իմ լուսաւորիչն եւ ամենաիմաստն... (*գովասանական խօսքեր*) ..տրն· իմ եւ յոյս, ծնողն հոգեւոր եւ երջանիկ վարդապետն Խաչատուր գիտնականն, ցանկացեալ ածագիծ· տառիցս, բազում ջանիւ եւ աշխատութբ· ի մի հաւաքեաց զբանս բազումս վարդապետաց, զոր եւ ես թակարդապատեալս մեղաւք... Ստեփանոս քահանայ... գրեցի զպատճառ ծննդեան Փրկչին մերոյ»:

Կեչառեցու մի աշխատութիւնն էլ պահուած է էջմ. № 2617/2154 *ձեռագրի մէջ 413բ—415բ, այսպիսի վերնագրով.* «Խչտուրու Կեչառուեցու ժողովել· ստոյգ օրինակէ վս· գլստն· Այ· առ մդիկ· կուսածին թգին· Քի· Այ· մերյ·: Զժմկն· եւ զթգն· համառօտիւք: Աւծյն· Ած եւ արքիչ յաւիտենից ծնանի...»:

Նախ ծննդեան ժամանակն է որոշում. «Ի թգւին հռոմանեցոյց Օգոստեայ կայրի (s!) ի ԽԲ· (*թէ ԺԲ.*) ամին, եւ ի հրէից Հերոդի, ՅԼԲ·: Եւ ի Պարսից Ար(շ)աւրի, ԽԱ·: Եւ հայոց Աբգարու յերկդին, Ը· որս եւ էին ամքն· յԱդամայ մինչեւ ցարդ եւս (!) :ու: հրէակնին քրտ (=ու)նինկու: Իսկ հ·իցն ոնի ին ղը: Ըս· Եննոսի, բղա: եւ ըստ Ասորոց· բիզ· եւ ամն երկոտասա(ն) Լուսնեա, որ եւ Աւգոստոստ որ էր երկրորդ ինքնակալ զկ/նի Յուլիոսի, զոր ասեն փորահան»: *Ապա պատմում է Յիսուսի ծնունդը տղայութեան աւետարաններէ ձեւով, բայց տարբեր առասպելներով*[2]), *թագաւորների գալուստ ու երկրպագութիւնը.* «եւ զայս զեկոյց Սեկոնդոս իմաստուն եւ տեսանող եւ Լուկանոս գրեաց յԱսորոց առ կայսրն Աւգոստոս»: *Տարբեր է նաեւ Եգիպտոսում հիւրասիրուիլը* «առ այրի կնոջ մի, ազգաւ Ղպտի, եւ սա որ լցել· զջուրն ի կոնքն, լուաց ըս· օրինի զորովամիտ մարցասիրաց(!): Եւ ապա հանլ· ի ջրյն· նրգոյն մանդլով պատլ· եւ գրկեալ գըգուանօք երգս քաղցրաձայն մատուցանէր եւ ասէր», *գովասանական մի ներբող արեւելեան ոճով մօրն ու որդուն ուղղուած: Կուռքերի կործանումն է պատմում, ապա քաղաք մտնելիս եգիպտացիք որոնում են մանկան եւ չեն գտնում,* «եւ ոչ որպէս (Զ–ի մէջ 9) անպէտ ստայօղ պատմին· ասէ, զոր Մանիքեցիքն տղայւե· աւետրն· կոչեն ի քէ·»: *Բայց գտնում են այրի կնոջը, որ ցոյց է տալիս* «ի ձեւ ոսկոյ» «փոխել»· *մանդիլը, եւ պարտիզում նոր կանաչած 12 ծառերը, ուր թափել էր լուացման ջուրը: Այդ ծառերը յետոյ բազմանում են, պարարտ ձիթապտղով,* «որ պալասին կոչի», *որով օրհնութեան իւղը կամ միւռոնն է կատարւում:*

Այս քաղուածքը ցոյց է տալիս, որ Կեչառեցուն յայտնի էր տղայութեան աւետարանի մի տարբեր փոփոխակ, որ յայտնի չէ դեռ եւս մեր բանասիրութեան, թէեւ մեծ աղերս ունի հրատարակուած խմբագրութիւնների հետ[3]): *Միեւնոյն ժամանակ բնորոշում է Ողբի եւ Աղէքսանդրի պատմութեան հետ նորա գրական սէրը դէպի վիպական–առասպելական նիւթերը:*

Բայց Կեչառեցին աւելի յայտնի է մեր մատենագրութեան մէջ Սուտ Կալիսթինեսի Աղէքսանդրի վէպի կամ պատմութեան խմբագրութեամբ, գանձերով եւ տաղերով: Տաշեան իր յայտնի ուսումնասիրութեան մէջ[4]) *ցոյց է տուել, թէ այդ խմբագրութիւնը միանգամայն արտաքին է եւ թէ հին թարգմանութիւնը փոփոխութեան չէ ենթարկուել հակառակ հին կարծիքների, որ խանգարուած էին համարում Կեչառեցու կողմից, հիմնուելով միայն յիշատակարանի խօսքերի վերայ*[5]): *Կեչառեցին միայն ընդօրինակել է մի հին ձեռագրից, որ մատչելի չէր եւ դիւրընթեռնելի իր ժամանակակիցներին եւ տեղ տեղ մտցրել է իր ոտանաւորները (կաֆաները) բնագրի բովանդակութեան համեմատ, ինչպէս եւ Յառաջաբանն ու Վերջաբանը, որոնց մէջ նա Աղէքսանդրի կեանքի պարագաները նմանեցնում է Յիսուսի կեանքին: Կեչառեցու օրինակով*

---

[1]) Նա ՈԿԶ (= 1217) թուին Սանահնի առաջնորդ էր իր այնտեղ թողած արձանագրութեան համեմատ, իսկ 1219 թուին անցնում է Հառիճոյ վանքը էջմիածնի № 1382 ձեռագրի յիշատակարանի համեմատ (տե՛ս Աստ· եր· 87): Բայց նա թաղուած է Սանահնում Ս· Աստուածածնի հիւսիսային պատի տակ· լայն, մեծ եւ տափակ գերեզմանաքարի վերայ գրուած է· «Գրիգոր սբ· վդապ· *որդի Արասայ*»: Մահուան տարեթիւը չգիտենք:

[2]) Սորա նման է Ոստանցի Սադաղա երէցի տաղը· Զեռ· էջմ· 222 Ն8· 76ա· Սիրով սիրելի որդին Acr· Սադաղին է այս բանս: Երրորդ տունն է· «*Դողալով յայրըն մըտին, / Մանուկ խանձարրուք տեսին· / Ած խաչեալ ի փայտին / 'ւ արքայ նստեալ յաթոռին*»:

[3]) Անկանոն գիրք Ն· Կտակարանաց, Վենետիկ, 1898:

[4]) Ուսումնասիրութիւն Ստոյն Կալիսթենեայ վարուց Աղէքսանդրի, Վիեննա, 1892:

[5]) Ալիշան· Այրարատ, 267: Սիսական· 134:

ԺԶ· դարում կաֆաներ են գրել այս վէպի հետ կապուած նաեւ Գրիգոր Աղթամարցին եւ Զաքարիա Գնունեաց եպիսկոպոսը· վերջինս ներմուծումներ անելով Կեչառեցու յիշատակարանների մէջ, որոնցից տեղեկանում ենք, որ Խաչատուրն էլ ծագմամբ Պռոշեան տոհմից է, ինչպէս եւ ինքը[1])։ Թէեւ ձեռագրերի մէջ լուսանցքում «խչ», «խաչ» սղագրութեամբ նշանակուած են նորա կաֆաները, բայց դժուար է ճշդութեամբ որոշել ի՛նչ նրանն է իսկապէս եւ ինչ վերագրուած նորան շփոթութեամբ։ Օրինակ՝ մի քանի տնից բաղկացած հատուածների, թէեւ կողքին նշանակած է անունը, բայց չենք կարող ասել, թէ ամբողջը նշանակուած անձինն է[2])։

Ուշադրութեան արժանի երեւոյթ է, որ կեղծ Կալիսթինեսի Աղէքսանդրի պատմութեան համար առանձին հետաքրքրութիւն են ցոյց տուել մեր միջնադարեան բանաստեղծները Գրիգոր Աղթամարցին, նորա աշակերտ Զաքարիա Գնունեաց եպիսկոպոսը եւ սրանց ժամանակակից Յովասափ Սեբաստացին։ Առաջին երկուսը ոչ միայն կաֆաներ են գրել, ինչպէս տեսանք, այլ եւ նկարազարդել են։ Յովասափ Սեբաստացին, թէեւ կաֆաներ չէ գրել, բայց իւր ոտանաւորների մէջ ենթարկուած է հնագոյն կաֆաների ազդեցութեան[3]) եւ նկարազարդել է միւսների նման։ Խաչատուր Կեչառեցին սրանց նախահայրն է կաֆաներ գրելու մէջ, բայց ի նկատի ունենալով նորա նկարիչ լինելու իրողութիւնը, անհաւանական չէ, որ լինի նաեւ առաջին նկարազարդողը, եւ այդ աւանդն անցած հետագայ բանաստեղծներին[4])։

Խաչատուր Կեչառեցու ոտանաւորների եւ տաղերի մէջ պատմական բովանդակութիւն եւ արժէք ունեցողը նորա Ողբն է։ ԺԳ· դարի վերջերին եւ ԺԴ·ի սկզբում արդէն զգալի է հայ իշխանութիւնների մանրանալը արեւելեան Հայաստանում, մանաւանդ Թաթարների դէպի մահմեդականութիւն հակուելուց յետոյ։ Ժամանակակից մատենագրութիւնը զգում է, որ անցնող դարի ընթացքում ձեռք բերուած քաղաքական համեմատական ապահովութիւնն ու կայունութիւնը դէպի վատն է թեքւում։ Մեռել են բարեկամական շրջանի փառաւոր իշխաններն ու դէմքերը, եւ ներկայի իշխաններն այլեւս այն դերը կատարել չեն կարող, ինչպէս իրենց հայրերը[5])։ Այս մտայնութեան եւ զգացմունքի խտացումն է Խաչատուր Կեչառեցու Ողբը, դժբաղդութեան պատճառը համարելով ժողովրդի բարոյական-կրօնական թերութիւնները, գործած չարիքը միջնադարեան հասկացողութիւնների համեմատ։ Հեղինակը սրտառուչ կերպով ողբում է ժամանակի վիճակը, եւ օգնութիւն խնդրում Աստծուց·

Ծաղր եւ նախատ բազմաց մեր եղաք
Յերկաթ եւ ի նեղ զընդան մեք մտաք,
Յաղքատութիւնս որ ժամանեցաք,
Այս մեծ դարիս, որ հանդիպեցաք,
Ի ձեռն չար ազգի դրաւեցաք·
Բժիշկ չունինք ցաւիս, որ դիպաք,
Զմեր բարերարն անյայտ կորուսաք,
Եւ այլ չունինք իսկի մեզ ճարակ·
Խիստ արժանի էաք զինչ եղեաք,
Վասն չարեացն որ մեք գործեցաք·
Աւգնեա՛ մեզ ի նեղութեան մերում, Աստուա՛ծ, աղաչեմք։

Մեռել են այն իշխանները, որոնք Թաթար խաների կամ իլխանների առաջ ազդեցութիւն եւ դիրք ունէին, հերոսների եւ քաջերի անուն։ Չկայ Սադուն աթաբակը (մօտ 25 տարի Հայաստանի աթաբէկն էր) եւ իւր որդին Խութլու բուղայ։ Մեռել են Պռոշը՝ «զարդ հեծելի, որ զերկաթի դուռն առնէր փոշի» եւ իւր «զարմանալի» որդիքը՝ Մկդէմ, Վասակ, «կորիւնքն առիւծի», պատերազմի մէջ զօրաւոր Ամիր-Հասանը՝ «բազուկն քաջի»։ Չկայ Տարսայիճը՝ «զարմն վեհազգի» (Օրբէլեան եւ Սադունից յետոյ Հայաստանի աթաբէկը), Մանկու խանի արքունիքում պատիւ ստացած Սմբատի եղբայրը, Խաչենի իշխաններից Հասան Ջալալ Դաւլէն, Դոփեան Հասանը՝ ատեանի մէջ այնպէս ընդունելի, ինչպէս Քրիստոսի խաչը բեմի վերայ[6])·

---

[1] Այդ խնդիրը պարզել են Վիեննայի Մխիթարեան երկու հայրերը՝ Տաշեան իւր վերեւ յիշուած Ուսումնասիրութեան մէջ (եր· 88) եւ Ակինեան· Զաքարիա եպիսկոպոս Գնունեաց եւ իւր տաղերը, Վիեննա, 1910։ Մենք ցոյց ենք տուել (Արարատ, 1910, 11), որ Երուս· № 473 նախազաքարեան մի օրինակ է 1536 թուին գրուած Մարգարէ գրչի ձեռքով եւ մի մասը նկարազարդուած Գրիգորիս Աղթամարցու կողմից։ Յիշատակարանները տ· Յաւել· Գ· 3։

[2] Տես Յաւել· Գ· 4։

[3] Արարատ· 1918, 248 եւ շար· մեր յօդուածը, «Յովասափ Սեբաստացի»։

[4] Աստ· 131/2։

[5] Նոյն մտայնութիւնը յայտնում է եւ ժամանակակից Մխիթար Այրիվանեցին իւր Թարգմանչաց Գանձի մէջ· *«Զարթի՛ր ողորմած, յիշխանաց սպառած, ի քար խիղանած»* (Ձեռ· Էջմ· № 75 ՆԳ· 76ա)։ Գլաձորի գրիչներից մէկը՝ Յովհաննէս ժամանակը բնորոշում է դառն եւ դժնեայ, «յորում տիրէր լուծ այլասեռիցն ի վերա քրիստոնէից···» եւն· (Ալիշան· Սիսական 133)։ Օրբէլեան եւս բնորոշում է «յամս կործանման աշխարհիս Հայոց··» (489 եր·) եւ ի նկատի ունի Նաւրուզի ժամանակ եղած շփոթութիւններն ու աւերմունքը (472/3)։

[6] Այստեղ յիշուած իշխաններից Սադունի եւ Սմբատ Օրբէլեանի մասին տե՛ս մեր «Զագավանից ժողովը», Շողակաթ, եր· 26/27։ Ղութլու Բուղայի մասին X· B· T· I· b· III· 252։ Հասան Ջալալի մասին Գանձ· տես ցանկը։ Դոփեան Հասանը նոյնանուն երկրորդն է նոյն տոհմից, Դոփի եւ Հասան Ա·ի թոռը, Գրիգոր Ա·ի որդին· նորա կինն է Մամքան՝ դուստր Վաչուտեան Քրդի եւ խորիշահ Մամիկոնեանի, իսկ սրանց որդին Գրիգոր Բ·, ամուսին Տարսայիճ Օրբէլեանի եւ Մինա խաթունի դստեր Ասփայի։ Հասան Բ· կենդանի էր դեռ եւս 1274 թ· (Արցախ· 405), իսկ 1289 թուին, երբ նորա որդին խաչարձան կանգնեց հօր յիշատակութեամբ հա-

Աւաղ թէ զորն աւեմ ի լալի
Զայն հին ու նորն ի գերեզմանի·
Վայ զմնացորդս սուտ կենդանի
Մակար չէաք ծնեալ յաշխարհի·
Արդ գերեցաք ու խիստ արժանի,
Մեր գերեզարձն չեն ի միջի։
Աւգնեա մեզ ի նեղութեան մերում Աստուած, աղաչեմք։

Մենք արդէն որոշել ենք այս գրութեան ծագման terminus post quem-ը եւ terminus ante quem-ը Պռոշի երկու որդիների մահուան տարիներով՝ Ամիր Հասանի † 1292 թուին եւ Պապաքի † 1298/9։ Ողբի մէջ յիշուած է միայն առաջնի անունը եւ նա մեռած իշխանների մէջ վերջինն է, որոնց մահը ողբում է հեղինակը։ Կենդանի իշխաններին, որոնց մէջն է եւ Պապաքը, չէ յիշում[1]։ Բայց կարող ենք աւելի սեղմել եւ գրեթէ ճշգութեամբ որոշել գրութեան տարին։ Ժամանակի այն նկարագրութիւնը, որ տալիս է հեղինակը համապատասխան է միայն 1294/5 թուականին, Նաւռուզի կատարած չարիքներին[2]։ Այդ ժամանակին համապատասխան է եւ «Ձիովիւ հուտին բամբասեցաք» արտայայտութիւնը, որ իրաւամբ Անաւարզեցու հետ կապեցինք։ Վերջինս ՉԽԲ թուի առաջին կիսում դեռ եւս եպիսկոպոս է յիշում[3], իսկ Օրբէլեանը նորա կաթուղիկոսութիւնը նոյն թուականին է նշանակում, ասել է, մօտաւորապէս, երկրորդ կիսում։ Երկու տարի յետոյ միայն՝ Ծառզատկի առթիւ՝ արեւելեան Հայաստանում պարզւում է նոր կաթուղիկոսի բռնած գայթակղեցուցիչ դիրքը[4] եւ առիթ դառնում Օրբէլեանի ժողովրդական թղթի գրութեան. մինչ այդ կաթուղիկոսի հասցէին եղած խօսակցութիւնը կարող էր ոմանց կողմից «բամբասանք» համարուել, ինչպէս եւ Խաչատուր Կեչառեցու։ Այսպիսով Ողբի ծագումը հաստատուն կերպով կարող ենք 1294/5 թուին նշանակել։ Ժողովից յետոյ Կեչառեցին եւս համակարծիք է Օրբէլեանին եւ նորա բարեկամն ու հիւրն է ՉԽԸ թուականից առաջ։

Գանձարանների յիշատակարանների մէջ, որպէս հնագոյն գանձասացներ եւ տաղասացներ Գրիգոր Նարեկացու և Ներսէս Կլայեցու հետ յիշւում են «տր·Մխիթար Այրիվանեցին եւ Խաչատուր Կեչառեցին»։ Այդպիսի յիշատակարանով Գանձարաններից մեզ յայտնի հնագոյն եւ լաւագոյն օրինակներից մէկն է 1445 թուին Աղթամարի յայտնի գրիչ Մինասենց Թումայի ձեռքով գրուածը[5]։ Այստեղ խօսք կայ նաեւ գրչի աւագ ժամանակակից Գրիգոր Խլաթեցու մասին († 1445) որպէս վերջին գանձասացի եւ Գանձարանի խմբագրողի։ Մենք առիթ կ'ունենանք հետեւեալ գլխի մէջ պարզելու, թէ յիրաւի Խլաթեցին օգտուել է իւր խմբագրութեան համար Մխիթար Այրիվանեցու գանձերի ժողովածուից դեռ եւս 1387 թուին։ Անհաւանական չէ, ուրեմն, որ Մինասենց Թուման իւր մատենագրական տեղեկութիւնները Գանձերի հեղինակների մասին քաղած լինի Խլաթեցուց, եթէ հենց ինքը չէ հանել գանձերի վերնագիրներից կամ տների սկզբնատառերից, «Խաչատուր» կամ «Խաչատուր Վարդապետ» սկզբնատառերով Գանձերը յատկացնելով Կեչառեցուն։ Կը դժուարանայինք առանց յատուկ եւ մանրամասն ուսումնասիրութեան որդեգրել յիշատակարանի եւ ցանկերի տեղեկութիւնը իւր ամբողջական բովանդակութեամբ, թէեւ անկասկած է, որ այդ Գանձերից շատերը Կեչառեցունն են, Acrostic-ից զատ՝ նրանց կազմութեան արտաքին նշաններից ու ներքին յոյզերի եւ արտայայտութեան ձեւերից դատելով· իսկ ոմանք էլ այլ եւ այլ ձեռագիրներում անկախ միմեանցից վերագրուած Կեչառեցուն (Յաւել· Գ· 5)։

Բայց բարեբաղդաբար ունինք ուրիշ աւելի հիմնաւոր պատճառներ եւս տնազլուխների «Խաչատուր» սկզբնատառերով գանձերը կապելու Կեչառեցու անուան հետ։ Երեւանի թանգարանի № 37/383 ձեռագիրը բաղկացած է երկու մասից· առաջինը Գանձարան է մինչեւ 120բ, իսկ երկրորդը Ճառընտիր՝ 121ա–398բ։ Երկու մասերը գրուած են տարբեր գրիչների կողմից· Գանձարանի գրիչն է Մարկոս կրօնաւոր (15ա), որ գրում է իսկապէս մինչեւ 109բ, իսկ 110բ—120բ վերջին թերթերը 118բ սկսած ամբողջ Ճառընտրի հետ գրել է եւ կազմել Գրիգոր քահանան Երզնկայում, ՊԺԵ (= 1366) թուին՝ Ներսէս քահանայի ստացմամբ։ Յիշատակարանի մէջ խնդրում է «այլ եւ յիշել զգանձերուն գրողն զՄարկոս կուսակրաւն քհ»։ Պարզ է, որ ձեռագրի երկու մասերն իրար են կցուած վերոյիշեալ թուականին, իսկ Գանձերը գրուած են աւելի վաղ։ Գանձերը չնչին բացառութեամբ՝ «Խաչատուր» Acrostic-ն ունին, մի հեղինակի գործերի ժողովածու։ Գանձերի թիւը 44 պիտի լինէր, բայց սկզբից եօթը պակաս է, եօթերորդի վերջին երեք տներն են միայն մնացած, 37-ից տասը ուրիշ հեղինակների, այն էլ ԺԳ·, ԺԲ· դարերի, եւ աւելի հին ժամանակների, մնացածը՝ «Խաչատուր»ի։

Այս վերջին խմբի գանձերից մէկը՝ ԽԳ·ը ընդհանուր թուի, 108բ ունի այսպիսի վերնագիր· «Գանձ սրբոց առաքելոցն Թադէոսի եւ Բարդողիմէի, Յուդայի Յակոբեան եւ Շմաւոնի նախանձայոյզ· Ասացեալ ի խնդրո հեզի եւ քաջ գրչապետի վդ· Պաւղոսի ի նահանգէն Կիւլիկեայ»· սկս· «խորհուրդ հայրաշարժ, անշարժ

ւանական է կենդանի լինէր։ Այդ դէպքում Դոփեան Հասան Բ·ի մահը պէտք է նշանակել 1289—1294 թ·։ Ողբի մի փոքրիկ հատուածը հրատարակել է Ալիշան, Այր· 268· ամբողջը տ· Արարատ 1896, 278։ Տե՛ս եւ Յաւել· Գ· 1, ձեռագիրների համեմատութեամբ։

[1] Ատ· 55։

[2] Օրբ· 472/3։

[3] Լալայեան· Ցուց· Վասպուրականի, եր· 114։

[4] Օրբ· 446 եւ շար·։

[5] Այժմ էջմ· № 831 Նգ·։

շարժողիդ...»: Այստեղ յատուկ շեշտուած է խնդրողի «ի նահանգէն Կիւլիկեայ» լինելու հանգամանքը, որ ապացոյց է, թէ ոչ հեղինակը եւ ոչ խնդրողը Կիլիկիայում չեն: Ուրիշ աղբիւրներից էլ յայտնի է մեզ շնորհալի գրիչ եւ մանրանկարիչ Պօղոս վարդապետի անձնաւորութիւնը, տեղն ու ժամանակը: Նա Գլաձորի դպրոցի գրիչ է, Նչեցու աշակերտներից, ծագմամբ Կիլիկիայի Ակներ վանքից, ՉԿԲ եւ ՉԿԳ թուականներին գրել է երկու նկարազարդ աւետարան, Կիլիկեան ոճով, վերջինը Ջալալ Օրբէլեանի եւ Գոնցայի որդու համար, որ Ստեփանոս Օրբէլեանի խորթ եղբօր որդին էր, Տարսայիճի եւ Մինա խաթունի թոռը, իբրեւ եպիսկոպոս Յոհան Աւրպելու աջակիցը եւ ապա յաջորդը, դարձեալ Ստեփանոս անունով (աշխարհական անունը Տարսայիճ): Նա էլ աւետարանը ստանալիս Գլաձորումն էր եւ պատրաստւում էր վարդապետական աստիճանի համար[1]:

Այս լուսաբանութիւնից յետոյ պարզ է նաեւ «Խաչատուր»ի եւ Կեչառեցու նոյնութիւնը: Այսպիսով Երեւանի № 37/383 Գանձարանի «Խաչատուր» Acrostic-ով գանձերը Կեչառեցունը պիտի համարել վերջնականապէս, հիմք ընդունելով ուսումնասիրութեան համար, եւ աւելցնելով նաեւ ուրիշ գանձարանների յիշատակութիւնները Խաչատուր Կեչառեցու անուամբ (տ. Յաւել. Գ. 5):

Կեչառեցու Գանձերը իրենց տեսակի հոգեւոր գրականութեան մէջ պատուաւոր տեղ ունին. այնտեղ չեն պակասում անկեղծ, ջերմեռանդ եւ մաքուր զգացմունքով ցօղուած հատուածներ եւ պատկերաւոր արտայայտութիւններ. աւելի աչքի են ընկնում այն մասերը, որոնք ժողովրդական գոյն եւ դրոշմ են կրում: Ահա ինչպէս է ողբում Մարիամ իւր որդու մահը խաչի վերայ.

Յս. որդի մաւրս միաւոր,
Աչացս լոյս, Ած ահաւոր:
Ա՛յ գեղեցիկ աչեր ծովային,
Այսաւր շիջար ի տեսանելոյ:
Ա՛յ գերագով գլուխ գանգրահեր,
Խոնարհեցար իբր ըզմեռելոյ:
Ա՛յ ոսկեթել մորուս վարդագոյն,
Դուն ներկեցար արեամբ յորդանոյ,
Ա՛յ հրաշագործ բերան բերկրալի,
Դու լռեցեր այժմ ի խաւսելոյ:
Ա՛յ սքանչելի բազուկ զաւրաւոր,
Դադարեցար ի ներգործելոյ:
Ա՛յ պերճազնաց դարշապար յուսոյ,
Խափանեցար ի յերթ եւ եկոյ[2]:

Մարտիրոսներին նուիրուած մի գանձի մէջ երեւան է բերում հակոտնեայ մտքերի պատկերաւոր արտայայտութեան մի ձեւ, որ յատուկ է նորա աւագ ժամանակակից Յովհաննէս Գառնեցուն, որի մասին խօսք կը լինի հետեւեալ գլխի մէջ.

Զարաչար կիզմամբ ողջակիզեալ մարմնոցդ,
Ըզմեզ փրկեցէք ի կիզանող բոցոյն:
Պատուական գլուխքդ յաւդեալ ի գլուխն Յիսուս,
Ըզմեզ յաւդեցէք ընդ նոյն հիւսմամբ սիրոյ:
Զարդմամբ անդամոց ձեր ընդ սիրոյ նորին,
Զհոգիս մեր յախտից բժըշկեցէք ցաւոց:
Ռահիւք յաշխարհի հալածականաւքն զձեզ,
յԱշխարհըն վերին բարձրացուցէք ըզմեզ[3]:

Բացի Գանձերից, որոնց կցուած են երբեմն եւ տաղեր զուտ կրօնական բովանդակութեամբ՝ եւ եկեղեցում սրբոց տօներին երգուելիք, Կեչառեցին ունի եւ անկախ, աւելի աշխարհիկ բնաւորութեամբ տաղեր, տարաբաղդաբար ոչ այնքան բազմաթիւ, ինչպէս Գանձերն են, գոնէ մեզ յայտնի չեն մեծ թւով: Նրանք արժանի են յատուկ ուշադրութեան, գրուած ժողովրդական ոճով եւ լեզուով, մրցել կարող են ժամանակակից Ֆրիկի հետ զգացմունքի խորութեամբ, անկեղծութեամբ եւ պատկերաւորութեամբ: Կեչառեցու այդ կարգի բանաստեղծութիւնները, ինչպէս եւ Ֆրիկինը, որ տարաբաղդաբար իւր ամբողջութեամբ դեռ եւս յայտնի չէ բանասիրութեան, զղջական եւ խրատական բնաւորութիւն ունին՝ աշխարհի անցաւորութեան մոտիւներով եւ նման տաղաչափութեամբ[4]:

Մէջ ենք բերում մի քանի հատուած այլ եւ այլ տաղերից ընթերցողին ճաշակ եւ գաղափար տալու համար նորա այդ կարգի ստեղծագործութեան մասին.

Հանցգուն զինչ բուսնի տերեւ եւ ծաղկի գարունն ի ծառէն,
Տր. իմ ծաղկեցոյ հոգւով զիս ի սէր քո ածեղէն:
Հանցգուն զինչ աշնան քամին, որ թափէ զտերեւն ի ծառէն,
Հողմով մեղանաց իմոց զրկեցայ յանանց պսակէն:

---

[1] Տես X. B. T. II. b. II. 216, մեր Potomstwo Tarsaitcha i Minachathuni յօդուածը:

[2] Ձեռ. էջմ. № 831 Նգ. 100. Մեծի Ուրբաթին է Գանձս. Սկս. Խորհուրդ սոսկալի, անիմանալի, Acr. Խաչատուր: Մէջ բերուած մասը նաեւ № 3540, 263ա., առաջին մասը ընկած է:

[3] Ձեռ. էջմ. № 831 Նգ. 103ա.:

[4] Ֆրիկի բանաստեղծութիւնների ժողովածուն ձեռագիրների համեմատութեամբ պատրաստել է Տիրայր Արքեպիսկոպոս Տէր Յովհաննիսեան, որ դեռ եւս անտիպ է: (Այժմ արդէն հրատարակուած «ՖՐԻԿ ԴԻՒԱՆ» անունին տակ, Նիւ-Եորք, 1952:— Գ. Ե.):

Հանցգուն զինչ հանեն մարդիք հնարիւք ըղձուկն ի ծովէն,
Որ պահ մի արտանը տայ, մեռանի կարաւտ ի ջրէն,
Հանցգուն զինչ ելնէ ժամ ժամ թանձրացեալ թուխ ամպն ի ծովէն,
Որ յորոտմանէ նորա սասանի ամէն մըսեղէն,
Ես արտաքսեցայ մեղաւք իմաստից անհուն քո ծովէն,
Հոգիս թալկացաւ դէմ քեզ, զիս կեցոյ, ահեալդ ի կուսէն[1]):

⁂

Աշխարհս էր ծով նըման
Զիս ի վայր տարաւ յանդըման,
Կենհաղս էր յալեաց նըման
Զիս ի մէջ էառ քան (ըզ)գընտան.
Սէրն էր անդընդոց նըման
Զիս վայր քաշեց փոշըման
Աւուրքս էր ծաղկի նըման
Որ անցաւ յերագ ի նման:

. . . .

Խաչատուր, զարթի՛ր ի քնոյ,
Չի քեզ ժամ է աշխարհելի.
Այս կեանքն է ձիւնի նըման,
Որ ի գալ գարնան կու հալի:

. . . .

Ծաղկեալ ես տերեւ ունիս
Այսօրից ալ չուտով տի թափիս.
Կանաչ ես վայել(ու)չ կենաւք,
Փոխուի գոյնդ եւ չուտ մեռանիս:

. . . .

Հիւանդ եմ, ի տես եկէք,
Միթէ դեղ առնէք խոցերուս.
Ահ ու դող պատեց զհոգիս,
Պատճառ զի՞նչ դնեմ տանողիս[2]):

Կեչառեցին ըստ Պոտուրեանի մեռել է 1331 *թըւին*[3]): *Նորա գերեզմանը ցոյց է տըւում բոլորովին մի այլ տեղ, քան ենթադրել կարելի էր: Մի Աշխարհացոյց, որ յայտնի է ընդհանրապէս Վարդանի անունով, բայց որը ԺԴ. դարի կնիք կամ յաւելումներ է կրում, Արշարունիքի եւ Երասխաձորի նշանաւոր վայրերի եւ վանքերի հետ յիշում է նաեւ* «Կէչրօր քաղաքն եւ Ծառաքարն ի վիմափոր վանքն, ուր կայ գերեզման Կեչառեցի խչատուր վրդպտին»[4]):



ՊԱՏԿԵՐ 133.

---

[1] Առնուած է «Ես եմ կորուսեալ ոչխար» բանաստեղծութիւնից, տպագրուած Տէվկանց. Հայերգ. եր. 141: Ձեռ. էջմ. № 3081, 40ա.։ № 934, 129ա. եւ № 2676, 123բ. «Տաղ Կեչառեցոյ ասացեալ»: Բայց մի ձեռագրում՝ № 962 ՆԳ. 385բ., վերնագրըւած է. «Յոհաննէս քաղցրաձայնի ասացեալ Երզնկեցոյ»:

[2] Ձեռ. էջմ. № 2676, 180բ., 181ա.: № 3081. 84բ., 85ա., 85բ.: «Թէ մարդ ես, ու միտք ունիս» ոտանաւորից: Յաւել. Գ. 5ա:

[3] Բազմավէպ. Սիոն:

[4] Ձեռ. Լիմից բերուած № 358: Կեչրոր քաղաքը յիշում է Վարդան, 171 եւ 173: Կեչրոր քաղաքում նահատակուեցաւ ոմն Տէր Առաքել ՈԾԷ (= 1208) թուին՝ Մարգարէ միայնաւոր քահանայի աշակերտ Գրիգորիոսի Խծկոնից վանքում կանգնած խաչքարի արձանագրութեան համեմատ: Գրի առնուած եւ վերստուգուած մեր կողմից. տե՛ս եւ Սարգսեան. Տեղագրութիւնք ի Փոքր եւ ի Մեծ Հայս, 1864, 212: Ալիշան. Շիրակ. 129: Իսկ Գրիգոր Կեչրորցին նահատակուել է 1222 թուին. (Այր. 47):

ԺԴ. դարի վերջերից այլեւս արձանագրութիւնները լռում են Կեչառիսի մասին, մի երեւոյթ, որ գրեթէ ընդհանուր է դառնում հետզհետէ Մեծ Հայքի եւ միւս վանքերի համար: Մահմեդական անողոք լուծի տակ սկսում է նսեմանալ հայ կրօնական եւ հոգեւոր – քաղաքակրթական կեանքը: Կեղեքումներն ու հալածանքները ու խիստ հարկապահանջութիւնը աղքատացնում են ժողովրդին, որի մասին ողբում է արդէն Կեչառեցին՝ «յաղքատութիս. որ ժամանեցաք», եւ սրանց հետեւանքով էլ պակասում են նուիրաբերութիւնները, որոնց հետ կապուած էր արձանագրութիւնների յաճախութիւնը: ԺԴ. դարի կէսերից Թուականով միայն մի արձանագրութիւն ունինք ոմն Սարգսի տափակ գերեզմանաքարի վերայ, որ «Կիսաւրեայ վաղճանեցաւ ի ձեռաց այլազգեաց», «Թվին ՊԴ» (= 1355), (Ցուել. Ա. 62, պատկ. 133): Արձանագրութիւնը լուսանկարուած է էստամբաժից եւ արժանի է ուշադրութեան իւր հնագրական ձեւերով:

Այսուհետեւ մեր աղբիւրները միայն յիշատակարաններն են, այն էլ կցկտուր: Կէս դարից աւելի Կեչառիսի վիճակի մասին տեղեկութիւն չունինք. միայն 1364 թուին յիշւում է «Տէր Յովհաննէս Կեչառուեց Ս. Լուսաւորչին»1), ապա 1491 թուին Ալիշան բերում է մի կիսեղծ յիշատակարան, գրուած «ի Ս. ուխտն Կեչառուս ի դրան Սուրբ Աստուածածնի եւ Ս. Գրիգոր կաթուղիկէիս եւ առ Ս. Նշանիս, որ իմովս անարժանութեամբ կոչիմ առաջնորդ սուրբ ուխտիս...». առաջնորդի անունը պակաս է կամ եղծուած եւ գրուած է նորա եղբոր Յովասափի եւ սորա որդու անունը2): Բայց մենք ի վիճակի ենք յայտնելու, որ առաջնորդը Գալուստ գրիչն էր, «սուտանուն աբեղայ», եւ եղբոր անունն էլ Յորդանան էր, սորա որդիքը՝ Մարտիրոս քահանայ եւ Խաչատուր սարկաւագ, միւս եղբայրները Գինոս, Խաւճիկ, Պետրոս եւ Պաւղոս: Գալուստ աբեղայի հօրեղբայրն էր Դանէլ աբեղայ, որին վարժապետ է անուանում: Յիշում է եւ իւր մարմնաւոր ծնողներին՝ Սամուէլ քահանայ եւ Մամախաթուն: Ձեռագիրը աւետարան է, մագաղաթ, բոլորգիր, հասարակ նկարազարդուած ոմն Մկրտչի ձեռքով, ՋԽ (= 1491) թուին «ի բռնակալութե. աշխարհիս (նշանագրով) Հայոց եւ Պարսից Եաղուպ բէկի եւ ի հայրապետութե. Տն. Սգիս. կաթղկսի... ի յածապահ գաւառ Բուժկան ի յերկնհնգէտ եւ ի գերահռչակ ուխտս Կեչառուս, ի դրան մաւրս լուսոյ Սբ. Ածածնիս եւ հրաշափառ Սբ. Նշանիս, որ իմովս անարժանութբ. կոչիմ սպասաւոր սբ. ուխտիս»3): Նոյն Գալուստ աբեղան նոյն թուականին գրել է մի աւետարան, որի յիշատակարանը բառացի նոյն է նախընթացի հետ եւ գրուած է «ի յաստուածապահ գաւառ Ծաղկանց ի յերկնահանգիստն եւ ի գերահռչակ ուխտս Կեչառուս»4):

Վաթսուն տարուց աւելի անցնելուց յետոյ ՌԺ. (= 1561) թուին յիշւում է Փիլիպպոս անունով մէկը, որ նկարել է մի աւետարան «ի հռչակաւոր ուխտս Կեչառուաց Սբ. Լուսաւորչիս եւ ժա. անուն եկեղեցւոյս». գնողն է Մաթէոս արքեպիսկոպոս, որի ծնողներն են Խոտլպէկ եւ Մարիամ. ապա յիշւում են Մինաս քահանայ, Վարդանշի, Միրանշի, Յենիպէկ... Շմաւոն եպիսկոպոս... Խաչատուր եպիսկոպոս5): Նոր Բայազիտի եկեղեցու ձեռագրերից մէկը ըստ Ջալալեանի (Բ. 126) «ի թվին Հայոց ՌԻԷ (= 1578) յառաջնորդութեան Գեղամայ Կարապետ արքեպիսկոպոսի եւ Կեչառուայ վերադիտողի, քաջ փիլիսոփայի Փիլիպպոս եպիսկոպոսի», գրչութեամբ սորա աշակերտ Առաքել սարկաւագի եւ արդեամբ Շնորհօր տիկնոջ, գրուած է մի աւետարան6): Մաթէոս գրիչը «ի յերկիրս Ծաղկընու, ի հըրչակաւոր վանքս, որ կոչի Կեչառիս», «ընդ հովանեաւ սբ. Լուսաւորչիս, սբ. Ածածնիս, սբ. Նշանիս, սբ. Յարութիւնիս եւ ամ. սրբոցս, որ աստ կան հաւաքեալ, ի հայրապետութե. տն. Թադէոսի, որ նստեալ է ի Վաղարշապատ քաղաքն...», «եւ առաջնորդութեան սբ. ուխտիս պն. տր. Փիլիպոսին» գրել է մի Մաշտոց: Տարաբաղդաբար յիշատակարանը կիսատ է, թերթ ընկած լինելու պատճառով, եւ թուական չունի, բայց, պն. տր. Փիլիպոսը նոյն է նախընթաց նոյնանուն անձի հետ7):

Վերեւ յիշուած Առաքել սարկաւագը այս Փիլիպպոս եպիսկոպոսի աշակերտն էր, որ «ի թուականութեան հայկազան տումարի ՌԼԶ» (= 1587) գրել է մի աւետարան «ի հայրապետութեան տեառն սուրբ աթոռոյն էջմիածնայ Տէր Գրիգոր կաթողիկոսին, Տէր Առաքել կաթողիկոսին, Տէր Դաւիթ կաթողիկոսին», «ի յերկիրս Կարնոյ, որ կոչի Առզուրում, եւ աստուածապահ գեօղս, որ է Սալաձոր»: Աւետարանը շատ ճոխ է նկարազարդուած յիսուն պատկերով եւ տաս խորանով, երկրորդ գալստեան պատկերի խաչի պատուանդանի

---

1) Ալիշան. Այրարատ. 47:

2) Անդ. 267:

3) Ձեռ. Սեւանի, № 14, այժմ էջմ. № 3989: Սոյն աւետարանի մասին յիշատակութիւն, Սմբատեան, Գեղարքունի. 397:

4) Սմբատեան, Գեղարքունի. 48:

5) Ձեռ. էջմ. № 3603, Աւետարան, մագաղաթ, լաւ բոլորգիր, նկարազարդ, չորս աւետարանիչներից միայն Մատթէոս եւ Մարկոս մնացած իրենց սկզբնազարդերով, իսկ Ղուկասի եւ Յովհաննէսի միայն սկզբնազարդերը մնացած: Կան եւ լուսանցքի զարդեր, բայց խոնաւութիւնից շատերը փչացած. յիշատակարանը Ցուել. Բ. 42:

6) Սմբատեան, Գեղարքունի, 55 եւ 355:

7) Ըստ Սմբատեանի (Գեղարքունի. 357) մի Մաշտոցի յիշատակարանի մէջ որպէս թէ 1498 թուին յիշուած է մի Փիլիպպոս պարոն տէր: Սա նոյն անձն է, որ ապրում էր Թադէոս Բ.ի ժամանակ, բայց որովհետեւ յիշատակարանի մի մասը կտրուած է եւ թուականը չկայ, այլ միայն «ի հայրապետութե. Տն. Թադէոսի, որ նստեալ է ի Վաղարշապատ քաղաքն», շփոթել է Թադէոս Ա.ի հետ, եւ իւր կողմից վերեւ յիշուած թիւը նշանակել:

մօտ չոքել է մի վարդապետ, վեղարով եւ փիլոնով, ձեռնամած եւ նորա կողքին չալիկ հագած, տնդուրայով մի սարկաւագ, տակը գրուած «սուտանուն սարկաւք, եւ ուսուցիչն իմ արհիեպիսկոպոսն Փիլիպպոս Կեչառեցին»[1]): Բիչ առաջ տեսանք, որ Փիլիպպոս ինքն էլ մանրանկարիչ է եղել:

ԺԷ. դարում վանքը չէն էր. 1611 Թուին Փիլիպպոս երէց իւր յիշատակարանի մէջ Թւում է Կեչառիսի եկեղեցիները՝ Ս. Լուսաւորիչ, Ս. Նշան, Ս. Յարութիւն եւ Ս. Հռիփսիմէ՝ «ուր է հանգուցեալ Պռօշ իշխանն»[2]): Նոյնպէս եւ Թովմաս Վանանդեցին իւր ոտանաւոր ներբողի մէջ Թւում է Կեչառիսի եկեղեցիները՝

«Իսկ սուրբ ուխտն Կեչառիս՝
Նա լուսատու Հայոց ազգիս,
Եկեղեցին սուրբ Գրիգորի,
Ընդ Աւագու սուրբ Նշանի,
Աստուածածին սրբասնեալ,
Սուրբ Սիոնըն պաշտեցեալ
Որ Պռօշի հանգիստ տուեալ.
Սուրբ Սարգիսըն բարեմասնեալ,
Յոր Յարութիւնըն կցորդեալ,
Սուրբ Կարապետըն Յիսուսի՝
Սուրբ Յակոբայ զուգեալ լինի.
Հռիփսիմէն գեղեցկացեալ.
Աստուածահայր Դաւիթ եղեալ,
Ընդ մակագրեալըն զասակցեալ,
Ի կայանիս տեղիք գտեալ
Քառասներորդ պատարագեալ»[3]):

Այստեղ յիշուած շէնքերից կանգուն են կամ կիսաւերակ, ինչպէս տեսանք, միայն Ս. Գրիգորի տաճարը, Վասակաշէն կաթուղիկէն, Ս. Նշանը, Ս. Յարութիւնը եւ Ժամատունը Աստուածածնի անունով. մնացածները փոքրիկ մատուռներ կամ ժամատան խորանները պիտի լինին, ինչպէս Սուրբ Դաւիթ, Սուրբ (Յովհաննէս) Կարապետ:

Փիլիպպոս կաթուղիկոսի ժամանակ վանքի վանահայրն էր Յովհաննէս եպիսկոպոս[4]): Մկրտիչ ոմն 1677 Թուին «ի հայրապետութեն. սբ. աթոռոյս էջմիածնի տն. Յակոբայ կաթուղիկոսին Հայոց. եւ ի թագրութեն. Ղիզիլպաշի շահ Սիլեմանին, որ կարմրագլուխ գոչէ եւ ի խանութեն. էրէվանան Սափի Ղուլի, որ է որդի Ըռըստամի», ստանում է մի աւետարան եւ նուիրում Կեչառիսի վանքին, դրչութեամբ Կարապետ երէցի, «ի գաւառիս Գեղամա ի գեօղս որ գոչի Շաղվաճա»[5]):

Նահապետ կաթուղիկոսի աշակերտն էր Յովհաննէս վարդապետ, որին ապա եպիսկոպոս ձեռնադրեց եւ նորա ձեռքով նուիրեց իւր Յայմաւուրքը Բջնիի Ս. Աստուածածին տաճարին[6]):

---

[1]) Արարատ. 1905. 722:

[2]) Ալիշան. Այր., 262: Աստ. 71:

[3]) Ալիշ. Այր. 262:

[4]) Զաքարիա Սարկաւագ, Բ. 48, 137:

[5]) Ձեռ. էջմ. № 335 (Ցաւեյ. Բ. 43):

[6]) Ձեռ. էջմ. № 1493, 610բ.:

Բ.

ԱՅՐԻՑ ԿԱՄ ԳԵՂԱՐԴԱՅ ՎԱՆՔ

I

Պռոշեանների երկրորդ նշանաւոր հոգեւոր կեդրոնը Այրիվանքն էր կամ հետագայում եւ այժմ Գեղարդայ վանք կոչուածը (*պատկ*. 32)։ *Առաջին անունն ստացել է այրերով շրջապատուած կամ նոյնիսկ այրի մէջ շինուած լինելու պատճառով, իսկ երկրորդը նոյնանուն սրբութեան, որ երկար դարեր պահւում էր այստեղ։ Յետնագոյն մատենագրական աւանդութիւնների համաձայն վանքը հիմնուած է նոյնիսկ Լուսաւորչի ձեռքով՝* «հաստատեալ ի սբ· Լուսաւորչէն»[1]). *այստեղ հանգստացել է Ներսէս Մեծ, իսկ պատմագիր Յովհաննէս կաթողիկոս անուանում է* «կացուրդ Սրբոյն Իսահակայ»[2])։ *Մխիթար Այրիվանեցին Ստեփանոս Սիւնեցու վկայաբանութեան մէջ*[3]) *տալիս է նաեւ տեղեկութիւններ Այրիվանքի միաբան Գրիգոր Գողիկ միաբանի կեանքի մասին, որ ժամանակակից եւ ընկերն էր Սիւնեցու, ուսումնակիցն ու աշխատակիցը նորա թարգմանութիւնների մի քանիսի համար*. «Եւ էր ընկեր սորա (Ստեփանոսի) ի նմին քաղաքէ (Դուինի)՝ քհնյ· ումն Գրիգոր անուն ի սբ· ուխտէն Այրի վանաց, որ է հիմնարկեալ ի Սրբոյն Գրիգորէ, ի գլուխ ձորոյն՝ գեղաքաղաքին Գառնոյ»։ *Երկուսն էլ* «յառաջադէմք ի գիտութի· գրոց եւ յարուեստս երաժշտականութե·»։ *Աթէնքում* (!) *նոքա* «ուսան զամ· սահմանս փիլիսոփայութե· իմաստնոց արտաքնոց եւ քաջատեղեակք եղեն ածաշունչ մեկնչաց», «Յեռեթէոսի տարրական ածաբանութեցն» *եւ թարգմանում են յունարէնից հայերէն։ Գտնում են եւ Նիւսացու* «Վս· բնութե· մարդոյ եւ կազմութե· կարգ եւ զայս եւս թարգմանեցին»։ *Ծանօթանում են Գերմանոս պատրիարքին, առաջարկութիւն են ստանում հաղորդուիլ յոյների հետ, բայց յանձն չեն առնում։ Ապա վերադառնում են Հայաստան եւ գտնում Օձնեցի հայրապետին մեռած եւ երկիրը նեղուած* «ի խազրաց, ի տանկաց եւ ի յունաց»։ *Մխիթար շարունակելով այնուհետեւ Ստեփանոսի դրական եւ հովուական գործունէութիւնը Հայաստանում՝ աւելացնում է Գրիգորի մասին*. «Իսկ ընկեր սորա Գրիգոր քհայ· մականուն կոչեցեալ Գոզիկ, գնացեալ ի տեղիսն իւր Այրիվանս». *այնտեղ յառաջադէմ է հանդիսանում երաժշտական եղանակների յօրինման մէջ եւ երգեր սահմանում տէրունական եւ սրբոց տօներին*։ «Բայց յաղագս քաղցրավանկ եղանակի նր·, տնկեցաւ ի նա ախտ ամբարտաւանութե·»,*որի համար եւ յանդիմանութիւն է ստանում Այրիվանքը հիւր եկած Ստեփանոսի կողմից։ Գրիգորը զղջատանում է, առանձնանում այնուհետեւ այրերից մէկի մէջ ճգնելու, ուր եւ մեռնում է*։ «Իսկ յետ բազում ժամանակաց շինեցաւ այր բնակութե· նր· խոռան փառացն այ· եւ սեղան պատարագի...»։

Ըստ Մխիթար Այրիվանեցու, ուրեմն, նա Ը· դարի առաջին կիսի մարդ էր, մինչդեռ Ալիշան մետասաներորդ դարն է կարծում նորա ժամանակը, բայց առանց որեւէ հիմք բերելու[4])։ *Տարաբաղդաբար յայտնի չէ, թէ Մխիթարի սկզբնական աղբիւրը ո՞րչափ հին է, եւ ո՞րտեղից է առել Գողիկի հատուածը, թէեւ բուն Սիւնեցուն վերաբերեալ մասի հնութիւնը մինչեւ Ժ· դար է եւ աւելի հին ժամանակին է հասնում*[5])։

Օրբէլեան Յովհաննէս Օձնեցու մասին պատմում է, թէ լսելով չարախօսների մտադրութիւնը իրեն աքսորելու մասին, «կամաթող լինի աթոռոյն եւ բնակէ միայնիկ ի վանս Այրից»[6])։ *Բայց Յովհաննէս պատմագիր կաթողիկոսն էլ Նսըր ոստիկանի որոգայթներից ազատուելու համար՝ իւր շրջապատողների խորհրդով առ ժամանակ Դուինից փախչում է այստեղ եւ* «ապա եկեալ ի վանաց անտի Այրից ի կացրդից սրբոյն Իսահակայ, որ ի ծործորս լերինն Գեղայ ի ձորակի միոջ՝ դէպ ուղիղ գնացաք եւ եկաք ի վերին վանս, ուր կայանք անասնոցն էին» *եւ այնտեղից Սեւան*[7])։ *Յիրաւի* վանքը շինուած է խոր ձորի մէջ լեռներով շրջապատուած (պատկ. 134 եւ 32)՝ հիւսիս-արեւելեան կողմը (պատկ. 135) ահաւոր եւ բարձրաբերձ ժայռերով, իսկ հարաւ-արեւմտեանը թփերով եւ ալպեան կանաչով։

---

[1]) Ձեռ· էջմ· № 358 (Լիմ) վարդանի Աշխարհացոյցը։ Նաեւ № 2179/2166· 7ա։

[2]) Յովհ· կաթ· (Ղուկ· հրատ· Թիֆլիս· 1912)· 335։

[3]) Ձեռագիր Յայսմաւուրք, սեպհականութիւն Սնարի։ Հրատարակել եմ նախ «Սիոն»ի մէջ, ապա առանձին՝ «Մխիթար Այրիվանեցի· նորագիւտ արձանագրութիւն եւ երկեր»· Երուսաղէմ· 1931։

[4]) Շնորհալի եւ պարագայ իւր, 90։

[5]) Մխիթար Այրիվանեցի, Նորագիւտ արձանագրութիւն եւ երկեր, եր· 8, § 5։

[6]) Օրբ· 168։

[7]) Յովհ· կաթ· 335։



ՊԱՏԿԵՐ 134·

Սակայն ԺԲ. դարի կէսերից առաջ եղած ոչ մի իրական մնացորդ չէ հասել մեր ձեռքը, եւ ոչ էլ ունինք որեւէ տեղեկութիւն վանքի անընդհատ կենդանութեան մասին մինչեւ այդ ժամանակը· Հնագոյն մնացորդը բուն վանքի պարսպից դուրս դէպի արեւմուտք գտնուած Աստուածածնի այրն է (պատկ. 136) հարաւ-արեւմտեան ճակատին, ժայռի վերայ փորագրուած մի քանի խաչերով, դոցանից երրորդը ձախից դէպի աջ ունի հետեւեալ արձանագրութիւնը·

ՈԺԳ (= 1164) թուակ / հաոց կանկնցաւ ար. ... (նշա)նս ի բարեխաւսութ/իւն ... (մնացածը չի կարդացւում)։

Արձանագրութիւն է ունեցել եւ երկրորդ խաչը, բայց ի սպառ փչացած է։

Այրի սրբատաշ պատի վերայ, որտեղից եւ մուտքն է, կան մի շարք արձանագրութիւններ այլ եւ այլ ժամանակներից, որոնցից մի քանիսը թուականով։ Այդ արձանագրութիւնները երեք խմբի կարելի է բաժանել· առաջինը հիւսիսային անկիւնում, երկրորդը մէջտեղը եւ երրորդը սրա տակը նոր սկզբնաւորութեամբ։ Իւրաքանչիւր խումբն էլ ունի մի մի թուականով արձանագրութիւն, որով եւ միւսների ծագման մօտաւոր ժամանակը կարելի է որոշել։ Կարծում ենք, որ այդ արձանագրութիւնները ծագումով թէեւ աւելի հին, փորագրուած են ԺԳ. դարի կէսերին, երբ նորոգուեցաւ Աստուածածնի անուան այս այրը։ Դոցանից հնագոյնը մէջտեղինն է, որի առաջին արձանագրութիւնը կրում է 1177 թիւը·

1. Ի Թվ. ՈԻԶ։ Ես Ստեփաննոս Կուտակեա(ն)ց եառւ գիմ հայրե(նի)
2. գՔարափաւղոց եառւ (s!) ի սբ. ուխտս յառաջնորդ
3. ուԹե. հաւր Գրիգորոյ :Գ: աւր ժամ ի տարոջն
4. Ստեփանոսի որ եւ խառնեցաւ Մարեմարոյն մեծաւ աշխատութբ. :Ը:
5. աւր Մարեմարոյ :Գ: աւրն հաւրն ու :Գ: աւր մաւրն եւ :Բ: աւր Սիրիբախտին[1])

---

[1] Երկրորդ տողի մէջ աւելորդաբար կրկնուած է «եառւ»։ Չորրորդ տողում «որ եւ խառնեցաւ Մարեմարոյն» խօսքերի իմաս-

Սորա տակն են Ուրբաթ Կաւակերտեցու եւ որպէս սորա շարունակութիւն, Դոլի անուան արձանագրութիւնները, որ ինչպէս ասացինք, նախընթացի հետ մի խումբ են կազմում, ուրեմն եւ ժամանակով իրարից մօտ: Ուրբաթը այգու հող է նուիրում եւ երկու ժամ ստանում իր եղբօր անունով (Ցանկ. Ա. 63): Դոլը Երեւանի իշխանական տոհմից է, բայց հնարաւորութիւն չունինք որոշելու տոհմի անունը, միայն նորա տոհմակից «Վարդ Երեւանռ» *յիշուած տեսանք կէչառեսի արձանագրութեան մէջ (Ցանկ. Ա. 41): Երեւանի տանուտէրերն ու պարոնայքը* «ի ժամ մահուան Դոլիս գիր յղարկեցաք եւ զհայրն կոչեցաք եւ նա իւր քահ(ն)աեաւքն եւ եպիսկոպոսով հաղորդեցոյց»: *Վանահայրը ընծաներով վերադառնում է մի մի օր նշանակելով Դոլին, Վարդին եւ Պատրկին (Ցանկ. Ա. 63ա.):*

ՊԱՏԿԵՐ 135.

Մի ուրիշ թուականով արձանագրութիւն Ստեփանոս Աղուանից կաթուղիկոսինն է, նոյն պատի հիւսիսային անկիւնում, 1181 թուից.

1. Ի Թ. ՈՂ: Ես տր. Ստեփանոս Աղուանից կ
2. աթողիկոս եղէ միաբան սբ. ուխտիս Այրից
3. վանաց յառաջնորդութե. հաւր Գրիգորի եւ եա
4. ու զԱնդրէի առաքելոյ նշխարն եւ սբ. նշան եւ ծնր
5. նդ(?)ոց Յոհան եւ բնակիչք տեղոյս խոստա
6. ցան ինձ զտաւն փոխման Տիրամաւրն :Գ: աւր ՆԱ? աւուրն
*7. յամենայն եկեղեցիս պատարագել զՔս.*1)*:*

Թուականով այս արձանագրութիւնները կարեւոր նշանակութիւն ունին վանքի պատմութեան համար: Դոքա ցոյց են տալիս, որ վանքի հնագոյն մասը այրի մէջ է եղել, որտեղից եւ առնուած է անունը: Ներկայ տաճարի եւ ժամատան տեղում եղե՞լ են շէնքեր, թէ ոչ, դժուար է ասել: Աւելի ուշ ժամանակի մի արձա-

---

տը պարզ չէ բոլորովին. մօտաւոր իմաստն է, թէ Ստեփանոսի եւ Մարեմտրոյ նուիրած հողերը միացուել եւ մի ամբողջութիւն են կազմել: Փակագծի մէջ առնուած տառերը մենք ենք լրացրել:

1) Ստեփանոս կաթուղիկոսի մասին տե՛ս նախընթաց գլխի մէջ: Այստեղ անհասկանալի է 4—5 տողերի մէջ «Ծննդոց Յոհան». գուցէ, գրքերի անունը լինի, Ծննդոց գիրք, Յովհաննու աւետարան, թղթեր եւ Յայտնութիւն. ընդգծուած գ. կասկածելի: Վեցերորդ տողի մէջ «ՆԱ աւուրն» անհասկանալի:

նագրութեան մէջ, ամն Շաքար բէգի անունով, յիշուած է եւ մի ուրիշ եկեղեցի Լուսաւորչի անունով, նա էլ քարայր էր ներկայ տաճարի հիւսիս-արեւելեան անկիւնում, դարբասի մօտ: Իսկ ներկայ տաճարը, հետագայում, ի հարկէ, նորոգուած, շինուած է ԺԳ. դարի երկրորդ տասնամեակին, մինչդեռ տեսանք գրաւոր յիշատակարաններ 1164 թուից սկսած:

Արձանագրութիւնների տեղից դատելով ԺԲ. դարի վերջին քառորդի հետ ենք կապում եւ հետեւեալ արձանագրութիւնները, որոնք գտնւում են Ստեփանոս կաթուղիկոսի արձանագրութեան մօտ, Աստուածածնի վերին յարկի արեւմտեան պատի հիւսիսային անկիւնում: Ոմն Տիրանուն տալիս է քառասուն դահեկան եւ ստանում երկու ժամ (Յաւել. Ա. 64): Դանիէլ եւ եղբայրները Նորագաւթում ընծաներ են տալիս եւ երեք ժամ ստանում (Յաւել. Ա. 65): Սրանց ազգական Մխիթարը տալիս է իւր այգին եւ երեք օր ժամ ստանում (Յաւել Ա. 66), ինչպէս եւ Առաւուտիկ քառասուն դահեկան տալիս Աստուածածնին եւ տարին երկու օր ժամ ստանում՝ մէկն իրեն, միւսը Ազրգին (Յաւել. Ա. 67): ԺԲ. դարի վերջերին է պատկանում Կումխտասի եւ Հագարդեղի արձանագրութիւնը Աստուածածնի ներքեւի յարկի, երեք փոքր, կամարակապ դռներով իրար կապուած խորաններից միջինի պատի վերայ (Յաւել. Ա. 68): Այս անձնաւորութիւնները իրենց նուիրաբերութիւնն ունին եւ տաճարի արեւելեան պատի արձանագրութեան համեմատ (Յաւել. Ա. 102): Կումխտասը յիշատակուած է նաեւ իւր Յակոբ աշակերտի արձանագրութեան մէջ (Յաւել. Ա. 101), դարձեալ տաճարի արեւելեան պատին, պէտք է ենթադրել շինութեան ժամանակներից:


ՊԱՏԿԵՐ 136.

Այս շրջանից մեր ձեռքն է հասել նաեւ մի կարեւոր ձեռագիր, էջմ. Գց. № 482/3795 մեծադիր Տօնապատճառը, ՈԼԹ (= 1190) թուից, գրուած Փիլիպպոս քահանայի ձեռքով, թղթի վերայ, արեւելեան խոշոր բոլորգրով (պատկ. 137)[1]: Գրիչը իւր յիշատակարանի մէջ յայտնում է, «տառապանաւք եւ պանդխտութք. գրեցի զսա ի սբ. ժողովարանիս Այրիվանից, ընդ հովանեաւ սրբոյ Ածածնի եւ սբ. վկայիցս», խնդրում է յիշել «զանարժանս զՓիլիպոս եւ զծնողսն իմ եւ զմայր մանկանց իմոց զՄարեմտիկին՝ ընդ նմին եւ զսիրելի որդեակս մեր զԱղբայրիկ եւ զԳորգիոս եւ զհարազատ եղբայրն իմ զՀարբ եւ զԳրիգոր եւ զՄամուկն, որ շատ աշխատեցան ի սպասաւորութի. մեզ ի գրել ժամուս» (Յաւել. Բ. 44)[2]: Ձեռագիրը արժանի է ուշադրութեան իւր բովանդակութեամբ, իբրեւ մէկը հնագոյն Տօնապատճառներից, արժանի է ուշադրութեան նաեւ իւր կաշեպատ կազմով. «ՈԽԹ» (= 1200) թուականից, «արդեամբք Ցաւղկայ աղախնոյն Քի.»: Կազմողն է Ակոբ, որի յիշատակը դրոշմուած է կազմի երեսին, կաշուի վերայ. «Փիլիպպոսի է. զԱկոբ յիշեայ ի Քս.», բոլորգրին մօտ շեղագրով: Այս բոլորը ցոյց են տալիս, որ Այրիվանքը Սելջուկեան արշաւանքներից յետոյ՝ միայն ԺԲ. դարի կիսից սկսում է կենդանութեան նշաններ ցոյց տալ, իսկ դարավերջին արդէն ծաղկեալ վիճակի մէջ էր, երբ Զաքարեանները նուաճեցին այս կողմերը եւ մի նոր շրջան սկսուեց վանքի համար:

---

[1] Տես եւ մեր Քարտէզ հայ հնագրութեան, § 65:

[2] Ձեռագրի մի ուրիշ յիշատակարանից, որ գրուած է առանձին թղթի վերայ եւ կպցրած թերթին, 208բ., երեւում է, որ Փիլիպոս քահանան իւր Տօնապատճառը մի տարի յետոյ նուիրել է Աստուածընկալ սուրբ Նշանին. «ի թվ. ՈԽ» (= 1191), «Հրամանաւ տն. Գրիգորի, սպասաւորի սբ. Նշանի», որ խոստանում է չորս ժամ, երկուսը նուիրատուին եւ երկուսը նորա ամուսնուն Մարեմտիկնոջ: Ո՞վ է այս Տէր Գրիգորիսը, որ խոստանում է կատարել նուիրատուների յիշատակը, «եթէ ի մեր յաւուրքս լինի


ՊԱՏԿԵՐ 137.

Վարդան պատմիչ Բջնիի եւ Դուինի նուաճումները Զաքարիայի կողմից նշանակում է 1201 եւ 1203 թուերին: Անշուշտ այս թուականներին էլ պէտք է Զաքարեանների ձեռքն ընկնէր Ազատ գետի հովիտը Այրի վանքով: Յիրաւի մենք ունինք արձանագրական յիշատակութիւն այս մասին, որով հաստատւում է Զաքարեանների տիրապետութիւնը 1200 թուից: Աստուածածնի արեւմտեան պատի երրորդ խմբի արձանագրութիւններից

վախճան սոցայ, մեք առնեմք, ապա թէ ոչ, ով եւ լինի զնի մեր սպասաւոր Սբ. Նշանիս, նա կատարեսցէ աներկբայ զտառ յիշատակի սոցա»: Զենք կարծում, թէ այս Աստուածընկալ Սուրբ Նշանը Այրի վանքումն էր եւ նորա սպասաւորը նոյն վանքի Գրիգոր առաջնորդը, որի յիշատակութիւնը տեսանք քիչ վերեւ 1177 եւ 1181 թուերի արձանագրութիւնների մէջ: Փիլիպպոսի յիշատակարանից, ինչպէս եւ մեր մինչեւ այժմ տեսած արձանագրութիւններից չի երեւում, թէ այնտեղ այնպիսի մի նշանաւոր սրբութիւն լինէր, որի անունով յատուկ նուիրաբերութիւն կատարուէր եւ որի սպասաւորը լինէր ուխտի առաջնորդը: Ստեփանոս կաթուղիկոսի նուիրած «Սբ. Նշան»ը մի սովորական խաչ էր: Հաւանական ենք համարում, որ այդ Հաւուց Թառի նշանաւոր Ամենափրկիչ խաչը լինէր, որի անունով եւ վանքն էր կոչւում, թէեւ դժուար է հաստատութեամբ պնդել:

հնագոյնը վերաբերում է Զաքարէի եւ Իւանէի ռազման հետ կապուած մի կարգադրութեան.

1. Ի թու. ։ԽԹ։ Քս.ասէր իշխանաց իշխանքն Զաքարէ եւ Իւանէ վերստին դար
2. ձոյց (s!) զջուրն Ամառնատակի ։Եչ։ եւ Ուրբաթ ի սբ. ուխս (s!) զ։Ա։ աւրն որ է Ուր
3. բաթ եւ ընակիչք սորա խոստացան զաւագ խորան զԱծածինն բովանդակ տարին պատարագել զՔս. յանուն նոցա։

Արձանագրութեան առաջին տողի մէջ գրուած չէ թուականի հարիւրաւորը, որ «Ո» միայն կարող է լինել։ Ուրիշ տեղ եւս պատահում է մեր արձանագրութիւնների մէջ նման երեւոյթ[1]։ Այս արձանագրութեան կից, որպէս տողերի անմիջական շարունակութիւն ունինք ուրիշ երեք արձանագրութիւն եւս, որոնցից վերջինն արդէն կրում է նորոգութեան 1258 թուականը, իսկ մնացածները, հաւանօրէն, դորանից ոչ շատ վաղ։



ՊԱՏԿԵՐ 138.

II

Բուն տաճարը պարսպի մէջ, շինուած է 1215 թուին, ինչպէս երեւում է արեւմտեան ճակատին, դրան գլխին՝ բարձր կամարի վերայ եղած արձանագրութիւնից, ուրեմն Պռոշեան տիրապետութիւնից առաջ (պատկ. 138).

Ի ժամանակս Զաքարիայի եւ Իւանէի նորին հարազատի եւ որդոց նո/ցին Շահնշահի եւ Աւագին եւ յառաջնորդութե. Բարսղի միայնաւորի եւ աշխատութբ. եղբար/ցս շինեցաւ կաթողիկէս մեծափառ ։ՈԿԴ։

Եկեղեցու շինութեան շրջանին է պատկանում եւ այն գեղեցիկ խաչարձանը, որ կանգնած են նոյն դրան աջ կողմից (հայողի).

ՈԿԲ (1213) Թ. Աձ ողորմեա Տխմոթին եւ Մխիթարա յաւրինուղիս (ընդգծուածը պարզ չէ, կասկածելի) արձանագրութեամբ (տես պատկ. 6)[2]։

Հաւանօրէն հայր Բարսղի յաջորդն էր, գուցէ եւ տաճարի շինութեան վերջին աշխատանքներին մասնակից Սարկաւագ վարդապետը իւր միաբաններով, որի արձանագրութիւնը այնքան պատուաւոր տեղ է գրաւում արեւմտեան դրան կամարակալ քարի ճակատին, առաջին տողը համընթաց աղեղնաձեւ զարդաքանդակին, իսկ երկրորդը նորա տակը՝ հորիզոնական ուղղութեամբ.

---

[1] ԺԲ. դարից նկատելի է այս երեւոյթը, բայց աւելի յաճախ հետագայ դարերում, որ երբեմն թուականների մէջ հարիւրաւորը չեն գրում (տե՛ս Սմբատեան, Գեղարքունի, 531, 532)։ Քիչ յետոյ կը տեսնենք նաեւ Գեղարդի ժամատան արձանագրութիւնը Պապաքի որդի Յակոբի անունով, աջ դասի սեան վերայ։

[2] Խաչարձանը ԺԳ. դարի նման գեղեցիկ գործերից մէկն է, յաճախ կրկնուած շրջանակի երկրաչափական ձեւերի պէսպիսութիւններով եւ խաչի դաշտի զարդարանքներով. բայց հազուագիւտ է պատկերաքանդակներով։ Մէջտեղը բարձր աթոռի վերայ Ամենակալն է նստած երկու կողմից օրհնող ձեռքերով. նրա աջից իւղաբեր Մագդաղենացու հանդիպումն է պարտիզում յարուցեալին (Յովհ. Ի. 15), իսկ ձախից մկրտութիւնը։ Մխիթարեան կարծում է Սամարացի կինն է, որ սափորով ջուր է մատուցանում Յիսուսին։ Պատկերը տես նաեւ Ուվարովայի Mat. po Archäolgie XIII. Tabl. V. 10:



ՊԱՏԿԵՐ 139.

Զմահացեալս մեղաւք զՍարկաւագ: Վդս համաւրէն միա/բանաւքս յիշեցէք ի Քս. (պատկ. 138):

Մխիթարեան կարդում է «զսարկաւագ Վարդանն», որ սխալ է եւ արձանագրութեան բովանդակութեան անհամապատասխան. միաբանութեան գլուխը վարդապետ էր, անշուշտ, մանաւանդ, արդէն հռչակ ստացած միաբանութեան[1]):

Եկեղեցու շինութեան մասնակից են եւ բազմաթիւ անձնաւորութիւններ: Այսպէս ոմն Ասխաթան շինել է աջակողմեան աւանդատունը (Ցաւել. Ա. 69), միւս յարկը շինել է ոմն Նախավկայ (Ցաւել. Ա. 70). ձախ դասի արեւելեան պատի արձանագրութեան համեմատ՝

---

[1] Գոշ Մխիթարի աշակերտներից մէկը կոչւում էր Սարկաւագ, հին Գետիկի վանահայրը (Գանձ. 197). Նոյնանուն մի վարդապետ եւս յիշւում է Հաղարծնի արձանագրութիւնների մէջ (Ջալ. 131): Սարկաւագ յատուկ անուն է այստեղ եւ ոչ պաշտօն կամ կոչում:

գրսից՝ Աբրահամ ոմն թոռն Աբրահամու եւ քեռորդի Մարկոս վարդապետի չինել է այդ խորանը (Յաւել· Ա· 71, պատկ· 139)։ Անշո՛ւշտ, Մարկոս վարդապետը միաբաններին եւ տեղացիներին ծանօթ անձնաւորութիւն է, գուցէ եւ վանքի առաջնորդը կամ գլխաւորներից մէկը հայր Բարսղից առաջ եւ հայր Գրիգորից յետոյ։ Սորա տակի աւանդատունը չինել է ոմն Պետրոս, նուիրելով նաեւ Երեւանում գտնուած իւր այգին (Յաւել· Ա· 72, պատկ· 139)։ Աջ կողմի յետին դասի խուցը չինել են Գրիգոր եւ Լուսոտ (երեւի, ամուսիններ), տալով միեւնոյն ժամանակ 120 դահեկան (Յաւել· Ա· 73)։ Նոյն անկիւնի դրսի կողմից, բայց տաճարի մաս, աւանդատունը չինել է Գրիգորի որդի Մխիթարը (Յաւել· Ա· 74)։ Ձախ դասի յետին վերին աւանդատունը չինել է Վարդ երէց՝ որդի Աւագ երիցոյն (Յաւել· Ա· 75) արձանագրութեան տեղից դատելով, ներքեւինը Վարհամ իւր Ռուզուքան կնոջ հետ (Յաւել· Ա· 76)· Ստեփանոս ոմն, որ սնուել է Այրիվանքում, սալել է տալիս կաթուղիկէն եւ երկու խորան· այս արձանագրութիւնը գտնւում է ժամատան ձախ դասի սեան վերայ, եւ կարծում ենք ծագմամբ կաթուղիկէի եւ ժամատան չինութեան ժամանակներից (Յաւել· Ա· 77)։

Տաճարի չինութեան տարիներից է անկասկած Սմբատ թագաւորազնի թոռն եւ Վաղթանկի որդի Հասանի եւ նորա կնոջ Ռուզուքանի արձանագրութիւնը, որ գտնւում է ափսիդի հարաւային պատին։ Մենք տեսանք, որ սրանց յիշատակին որդին Կեչառուաց վանքում ՈԿԹ թուին չինել է Ս· Յարութիւն եկեղեցին· այս արձանագրութիւնն, ուրեմն, գրուած է այդ թուականից առաջ (Յաւել· Ա· 78)։ Նա վանքին նուիրել է մի աւետարան եւ Տաւնական եւ ստացել տարին տաս ժամ։



ՊԱՏԿԵՐ 140·

Նոյն ժամանակից է եւ Տղայ Գրիգորի, տարաբաղդաբար եղծուած, արձանագրութիւնը, գրուած ափսիդի հիւսիսային պատին, Պռոշի մեծ արձանագրութեան տակ (Յաւել Ա· 79)։ Տղայ Գրիգորը Խաչէնի իշխաններից էր, Աւագի տան վերակացուն[1]։ Սորանն է, հաւանօրէն, նաեւ արեւելեան պատին՝ դրսից՝ մի արձանագրութիւն, որից միայն «Ես Գրիգոր Խաչենեցի / ... տունս .. գիմ խաչն եւ / փոխարէն տվին :Ա: աւր ժամ ի տրին» հազիւ կարողացայ կարդալ (Յաւել· Ա· 100)։ Շինութեան ժամանակից է Կարապետի արձանագրութիւնը, Ասխաթանի արձանագրութեան տակ (Յաւել· Ա· 80), որ կրկնուած է նաեւ արեւմտեան կողմից, կրկնայարկ աւանդատան պատին (Յաւել· Ա· 105) եւ տաճարից ու Պռոշի վիմափորից դէպի հիւսիս ընկած ժայռի մէջ, երկու խցիկների դրան ճակատին։ Շինութեան ժամանակից է նաեւ Գոհարի «դուստր պարոն Սարգսի Մեհեւանանց» արձանագրութիւնը աջ աւանդատան ճակատաքարի վերայ, որ 60 դահեկան է տալիս եւ երեք օր ժամ ստանում (Յաւել· Ա· 81)։ Մեհեւանանց տոհմը ծագմամբ Բաղաց գաւառից էր, որոնք Զաքարեանց նուաճումներից յետոյ՝ Իւանէ աթաբէկից Նրբին բերդը ժառանգութիւն ստացան, Վայոց ձորի Էլփի գետակի հովտում[2]։ Շինութեան ժամանակից է, հաւանօրէն, եւ տիկին Զուզայի արձանագրութիւնը տաճարի արեւմտեան պատի ճակատին, շինութեան ՈԿԴ թուականի արձանագրութիւնից բարձր, որ 120 դահեկան է տալիս եւ վեց պատարագ ստանում (Յաւել. Ա. 108):

---

[1] Գանձ· 242։

[2] Տես Ալիշան· Սիսական· 168։

Բազմաթիւ են սակայն եւ այնպիսի արձանագրութիւններ, որոնք թուական չունին եւ ոչ պատմական որեւէ անձի յիշատակութիւն, որով կարելի լինէր նրանց ժամանակը որոշել. Նրանք ամենայն հաւանականութեամբ ԺԳ. — ԺԴ. դարի կէսերի արդիւնք են: Այսպէս, ոմն Գրիգոր «յառաջնորդութե. Զա...(քարիայ)ի միայնաւորի» նուէր է տալիս: Զաքարեան հաւանօրէն ԺԳ. դարի առաջին կիսում, հայր Բարսղի յաջորդներից մէկն է (Յաւել. Ա. 82). Մամքան տալիս է 20 դահեկան եւ երկու օր ժամ ստանում (Յաւել. Ա. 83): Յովհաննիսի որդի Սուքայն տալիս է 20 դահեկան եւ տարին մի օր ժամ ստանում (Յաւել. Ա. 84): Ուլունը 80 դահեկանով թափում է «զԳառնոյ խուպանն» եւ չորս ժամ ստանում իւր եւ իւրայինների համար (Յաւել. Ա. 86, պատկ. 140): Մխիթար ոմն նոյնպէս 80 դահեկան նուիրելով, չորս օր է ստանում իւր եւ իւրայինների համար (Յաւել. Ա. 87): Առոմ եւ Արքայ ամուսինները ուխտ են գալիս եւ իրենց տունը Երեւանում ընծայում վանքին, ստանալով վեց օր ժամ (Յաւել. Ա. 88):



ՊԱՏԿԵՐ 141.

Առոմի արձանագրութեան տակ մնացած են երեք արձանագրութեան բեկորներ. Նորոգութեան ժամանակ արձանագրութիւնների քարերը մասամբ կորել են, մասամբ խառնուել իրար (Յաւել. Ա. 89—90): Առաջին նուիրատուն Ումեկն է. ո՞վ է նա. արդեօ՞ք Գանձակեցու եւ Վարդանի յիշած վաճառական Ումեկը[1]), որ ԺԳ.

---

[1] Գանձ. 349: Վարդ. 193:

դարի քառասնական թուերին Մանազկերտից կամ Կարինից Արեւելեան Հայաստան փոխադրուելով, հաստատուեց Տփխիս քաղաքում, շինեց կաթուղիկէ կամ Մէյդանի Ս. Գէորգ Եկեղեցին, կալուած ձեռք բերեց Գետիկում՝ ժառանգութիւն թողնելով իր ձար որդուն, երկրորդ անգամ ամուսնացաւ Հասան-Ջալալի դստեր Մամախաթունի հետ, որի Վախտանգ որդին Յովհաննէս Երզնկացու մեկենասը եղաւ, ասել չենք կարող[1]*: Այդ ժամանակից նոյնանուն անձն մեզ յայտնի չէ ոչ մի տեղից. նա մեռաւ ՁԺԵ* (= 1266) *թուին*[2]*: Նոյնութեան դէպքում կ'որոշուի մօտաւորապէս եւ արձանագրութեան ժամանակը: Երկրորդ նուիրատուի անունը չգիտենք: Բայց նա հինգ օր ժամ է ստանում, մէկը Ոսկեհատին, որ իր կինը կարող է լինել, եւ չորսն իրեն:*



ՊԱՏԿԵՐ 142.

Երրորդ նուիրատուն է Վարդ, որ, երեւի հիւսիսային աւանդատան վերին յարկն է շինել, մի հնձան նորոգել եւ Կողճնուտի այգին նուիրել, ստանալով 8 օր, վեցն իրեն, մէկը իր հօրը Ստեփանոսին եւ մէկը իր կնոջը Նասխաթունին:

Ապա Մխիթար ոմն տալիս է 20 *դահեկան եւ մի ժամ ստանում (Ցաւել. Ա.* 91). *Միթորը* 100 *դահեկան տալիս եւ հինգ ժամ ստանում (Ցաւել. Ա.* 92). *Տէր Յուսէփը* 1000 *սպիտակ տալիս եւ հինգ ժամ ստանում (Ցաւել. Ա.* 93, *պատկ.* 141). *Թորոս* 40 *դահեկան տալիս եւ երկու օր ստանում (Ցաւել. Ա.* 91). *Տիրատուր* 44 *դահեկան տալիս է* «ի գաւիթս» *եւ երկու ժամ ստանում (Ցաւել. Ա.* 95)*: Այս վերջին արձանագրութիւնը* 1225 *թուականից յետոյ պէտք է դնել, երբ մօտաւորապէս շինուեցաւ գաւիթը. այս մասին յետոյ:* «Խորինշահ ամուսին Ջաքարեի տն. Թեղան» *միաբանում է եւ տալիս երկու սկիհ, մի բուրվառ, արծաթի կանթեղ եւ ուրիշ արդիւնք եւ ստանում տարին չորս ժամ, երկուսն իրեն եւ երկուսը Ջաքարէին (Ցաւել. Ա.* 96)*: Թեոդան կամ Թոդան անունով մի վայր գտնւում է Արցախում*[3]*: Արդեօ՞ք նուիրատու ամուսինները այս վայրի տէրերն էին: Ոմն Շողակաթ տալիս է* 20 *դահեկան եւ ստանում մի ժամ (Ցաւել. Ա.* 97), *իսկ Խաչիկ* «սնեալ ի սբ. Ածածինս» 40 *դահեկան: Խաչատուր ոմն տալիս է իր այգին* «ի սբ. եղբայրանոցս» *եւ ստանում տարին երկու օր ժամ, մէկն իրեն, միւսը ծնողներին: Ստեփանոս* 40 *դահեկան է տալիս եւ երկու ժամ ստանում, մէկն իրեն, միւսը Պետրոս եղբօրը: Համազասպը տալիս է* 40 *դահեկան եւ երկու օր ստանում: Բախտոս դարբնին՝ միաբանները որոշում են երկու օր ժամ տալ (Ցաւել. Ա.* 98, *պատկ.* 139)*: Վարդաշահ յիսուն դահեկան է տալիս եւ երկու ժամ ստանում: Ջուռենց Դեղը նոյնպէս երկու ժամ ստանում (Ցաւել. Ա.* 99, *պատկ.* 139)*: Սարու ոմն տալիս է* 40 *դահեկան եւ երկու ժամ ստանում: Ոսկին, Հաւրքուրը, Մանուչը քսան քսան դահեկան են տալիս եւ մի մի ժամ ստանում (Ցաւել. Ա.* 103)*: Արե-*

---

[1] Տե՛ս մեր «Վախտանգ որդի Ումեկայ եւ նորա տոհմը», Սիոն, 1932 Դեկտ. եւ հետեւեալ տարին:

[2] Ձեռ. էջմ. № 2188/2174, 48բ.:

[3] Ջալ. Ա. 210: Բարխ. Արցախ, 252:

ւելեան պատի երկու խորշերի մէջ արձանագրութիւնների բեկորներ կան, նորոգութեան ժամանակ պատերի մէջ հագցրած, որոնցից երկուսը իմաստ ունին: Մամխաթուն եւ Ներսէս որդի Ովանիսի մի մի ժամ են ստանում, առաջինը 20 դահեկան տալով, իսկ երկրորդը միայն ընծայ (Ցուել. Ա. 104):



ՊԱՏԿԵՐ 143.

Այս եւ մնացած արձանագրութիւններից, որ կը բերենք, պարզ է, որ Զաքարեանները տաճարի շինութեան, ինչպէս եւ ժամատան, մասնակից չեն անմիջապէս, թէեւ 1200 թուականից արդէն վանքը նրանց իշխանութեան մէջ էր, աւելի ճիշդ Իւանէի: Մենք առիթ ենք ունեցել պարզելու, որ Զաքարեանց տիրապետութեամբ արեւելեան Հայաստանը երկու մասի էր բաժանուած երկու եղբայրների եւ ապա նրանց որդիների գերիշխանութեան տակ. Լոռիի եւ Անիի շրջանները, Արագածոտն մինչեւ Երասխ՝ Զաքարիա մեծի եւ նորա որդի Շահնշահի տիրապետութեան եւ գերիշխանութեան տակ էր, իսկ Աղստեւի գետից սկսած, Բջնիի եւ Գեղարքունեաց, Վայոց ձորի, Արցախի մի կարեւոր մասի եւ Սիւնեաց գաւառներով մինչեւ Երասխ՝ Իւանէի տիրապետութեան եւ գերիշխանութեան տակ1): Աղստա գետի Հովիտը Իւանէի իշխանութեան մէջն էր մտնում

---

1) Տե՛ս Աստ. Ա. մաս. 4—5:

Այրի վանքի հետ: Իւանէի մի ընդարձակ արձանագրութիւն աւելի եւս պարզում է խնդիրը (Յաւել· Ա· 4, պատկ· 142): Արձանագրութիւնը տարաբաղդաբար անաղարտ չէ հասել մեզ: Նորոգութեան ժամանակ իւր տեղում չեն հագցրած որոշ մասեր, այլ Խորենշահի արձանագրութեան տակ, որով եւ առաջին տողերից որոշ բառեր պակաս են եւ մենք լրացնում ենք անկիւնաւոր փակագծի մէջ դնելով:Արձանագրութիւնը թուական չունի, բայց դժուար չէ որոշել մօտաւոր ժամանակը·



ՊԱՏԿԵՐ 144·

արձանագրութիւնը, թէեւ գրուած է «աթաբակ Իւանէի և արեան հարազատի իւրոյ տիեզերակալին Զաքարիայի» *անունով, բայց անկասկած է, որ Զաքարիան վախճանուած էր արդէն* († 1212): *Արձանագրութիւնների մէջ յաճախ են պատահում այդպիսի երեւոյթներ. Ննջեցեալների անունով հարազատները կարգադրութիւն են անում կամ նրան յիշատակում որպէս մասնակից կատարուած կարգադրութեան. օրինակ հէնց նոյն Իւանէի արձանագրութիւնը Հաղարծնի վանքում նման բովանդակութեամբ, ուր յիշուած է Զաքարիայի մահը*[1])*. հենց այստեղ, Աստուածածնի այրի պատին՝ արդէն մեռած Դոլի արձանագրութիւնն է նորա բերանից (Յաւել· Ա· 63ա): Իւանէն տալիս է եւ իրենց պետութեան սահմանները,* «որ առ ի Կայենով եւ Կայծոնով մինչ ի Բարկուշատ եւ մինչ ի Ցականա եւ մինչ ի Նախճաւան եւ անգի մինչ ի Կարս»: *Ըստ Վարդանի*[2]) *Իւանէն ժառանգութիւն է ստանում Հաթերքը* 1214 *թուին. ճիշդ այդ ժամանակն էլ ստացած պիտի լինի Հաթերքին կից Ականայ բերդը, որ յիշատակուած է այս արձանագրութեան մէջ իբրեւ սահմանագլուխ, եւ դորանից առաջ Հաթերքի կամ Խաչէնի միւս ճիւղի սեպհականութիւն էր*[3])*: Յիշուած երկրներին տիրելուց յետոյ՝ Իւանէն գալիս է* «ի սբ· ուխտս ի յԱյրիվանս եւ տեսի եկեղեցիքս եւ սբքս· ինձ անոշ(!) թուեցաւ, յիմ անուն աբարի զիմ յիշատակս ի վերագրեցի» ,նուիրելով Բերդաղ կոչուած վայրը, որ նոյնացնում ենք վանքի ագարակ Պորտիկ անուան հետ, քիչ դէպի արեւմուտք վանքից, որպէս լուսացու «սուրբ կաթուղիկէիս»: Իսկ կաթուղիկէն տեսանք շինուած է 1215 թուին: Բայց ճշգութեան կարող ենք աւելի մօտենալ· վերոյիշեալ արձանագրութեան մէջ սահմանների հարաւային գաւառը Բարկուշատն է, իբրեւ Սիւնեաց մաս, որի մէջն է եւ Որոտնայ գաւառը իւր բերդով, որ ըստ Վարդանի[1]) նուաճուած է 1219 թուին, որ արձանագրութեան ծագման ամենավաղ ժամանակը կարող է լինել: Բովանդակութիւնն էլ համապատասխան է նուաճողական շփոթ ժամանակից յետոյ՝ իշխանաւորի խաղաղ այցելութեան հոգեբանութեան՝ 1219—1222 թիւը, որից յետոյ սկըսուեցան Խփչաղների եւ ապա Ջալալէտտինի արշաւանքները:

---

[1]) Զալ· Ա· 31: Բարխ· Արցախ, 366:

[2]) Վարդ· 184:

[3]) Բարխ, Արցախ· 212: Գանձ· 345:

Տաճարը շինուած է ԺԲ.ի վերջերին, բայց մանաւանդ ԺԳ· դարում ընդհանրացած շէնքերի յատակագծով, ճարտարապետական մասերով եւ ոճով, թէեւ նրանց տիպը պատրաստ էր արդէն ԺԱ· դարի առաջին կիսում, ինչպէս Անբերդի տաճարն է՝ Վահրամ Պահլաւունու հրամանով շինուած ՆՀԵ (= 1026) թուականին: Այս մի շատ կարեւոր փաստ է, որ յանձնարարում ենք ԺԳ· դարի ճարտարապետական արուեստի հասկացողութեան համար, ընդհանրացած երեւոյթներից սխալ եզրակացութեան չգալու նրանց ծագման նկատ–



ՊԱՏԿԵՐ 145·

---

[1]) վարդ· 184:

մամբ: Ափսիդի երկու կողմերից կրկնայարկ աւանդատներ կան, երկրորդ յարկի մուտքը աջ եւ ձախ կողմից աստիճաններով պատի մէջ: Աւանդատների նման խցիկներ կան եւ յետին դասերում, վերեւի յարկը բարձրանալու համար պատի մէջ աստիճաններ հագցրած: Տաճարի կեդրոնում բարձրանում է գմբէթը, յեցուած չորս կամարների վերայ, որոնք հաստատուած են հիւսիսային եւ հարաւային պատերից դուրս ընկած որմայեցերի վերայ: Ուշադրութեան արժանի են հարաւային դրան ճակատաքարի եւ շրջանակի զարդաքանդակները. առաջինը ոճաւորած, ծառանման որթ է շարէ շար, միջի տարածութիւնները ողկոյզներով լցուած, իսկ դրան շրջանակը երկրաչափական պէսպիսութիւններով ճիպոտազարդ (պատկ. 143). կամարի անկիւններից դէմ առ դէմ երկու սիրամարգեր են կանգնած: Շրջանակուած եւ քառանկիւնի լուսամուտի գլխին առիւծի յարձակումն է ցուլի վերայ (պատկ. 144). բոլորն էլ սելջուկեան արուեստի մէջ սիրուած մօտիվներ, որոնց զուգահեռ երեւոյթը յատուկ է նաեւ ԺԲ. — ԺԳ. դարի հայ արուեստին1):



ՊԱՏԿԵՐ 146.

Ժամատան շինութեան համար չունինք հաստատ թուական, բայց չպէտք է տաճարից շատ ուշ լինի, ԺԳ.

---

1) Տաճարի յատակագիծը տե՛ս Ouvarova-ի Materiali po Archäologie T. XIII. 3, իսկ զարդարանքներն ու բարելիեֆը Tabl. III: Հայ եւ Սելջուկեան արուեստների յարաբերութեան մասին, Աստ. Գլ. Է.:

դարի առաջին կէսում սովորութիւն էր, գրեթէ առանց բացառութեան, տաճարներին կից՝ արեւմտեան կողմից գաւիթների կամ ժամատների շինութիւնը: Այդ ժամանակից չունինք որեւէ աչքի ընկնող չէնք, որ իւր ժամատունը չունենար, եւ միշտ տաճարից անմիջապէս կամ քիչ յետոյ շինուած: Այսպէս, ըստ Գանձակեցու[1]) եւ ըստ արձանագրութիւնների շինուել է նախ Գոշ Մխիթարի վանքը եւ ապա գաւիթը: Տեղերու վանքը (Արագածոտն գաւառում) պէտք է շինուած լինի ՈԿԲ (= 1213) թուին, դրան գլխի արձանագրութեան համեմատ, իսկ 1221 թուին Աղբայրիկ վարդապետը, որ ճարտարապետն է, յայտնում է, թէ «շինեցի զեկեղեցիս եւ զգաւիթս»: Վերջապէս Վաչէ իշխանի ամուսինը, վանքը շինել տուողը, Մամախաթուն ՈՁԱ (= 1232) թուին արձանագրում է, թէ «շինեցի զեկեղեցիքս զմեծ եւ զփոքր եւ զժամատունս». նոյն ժամատան արեւելեան պատին եւս կայ Խնծորիկի արձանագրութիւնը ՈԿԲ (= 1213) թուից[2]): Այս բոլորը ցոյց են տալիս, թէ տաճարն ու ժամատունը շինուած են անմիջապէս իրար յետեւից: Սաղմոսավանքի տաճարն ու գաւիթը շինուած են միաժամանակ նոյն Վաչէ իշխանի եւ նորա ամուսին Մամախաթունի հովանաւորութեամբ 1215 թուին: Գաւթի երդիկը զարդարող սիրուն խաչաքանդակը նուիրուած է Վաչէին. «սբ. Նշան տէրունական Վաչէի լեր քաւարան»: Գանձասարի վանքը

ՊԱՏԿԵՐ 147.

աւարտած է 1239-ին եւ օծուած 1240 թուին Հասան-Ջալալի ձեռքով, իսկ գաւիթը նորա կնոջ Մամքանի եւ անդրանիկ որդու՝ Աթաբէկի կողմից 1266 թուին. «յետ կատարման եկեղեցոյս հիմնարկեցաք ժամատունս»[3]):

Գեղարդի վանքի տաճարն ու ժամատունը շինութեան ժամանակով իրարից հեռու չեն. 1215 թուին շինուած է տաճարը, իսկ ժամատան հիւսիս-արեւելեան անկիւնի կրկնայարկ խորանները ՈՀԴ (= 1225) թուին Ճարի որդու (անունը տարաբաղդաբար եղծուած) արդիւնքով, «ի գեղջէն Երեւանոյ», տալով իւր այգին «որ յԵրեւան» եւ ստանալով 20 օր (Յաւել. Ա. 105): Հօր անուան հետ ունինք մի եղբօր անունը, որ Մխիթարիչ է, մօր անունը եղծուած (Մահա..?): Այս թուականը չունին մեր նախորդները վանքի ուսումնասիրութեան մէջ, որ ունի շատ կարեւոր նշանակութիւն շէնքերի ժամանակագրութիւնն ու մեկենասները որոշելու համար, թէեւ մեր լուսանկարն էլ շատ աղօտ եւ անպէտք է ցուցադրելու: Նման կրկնայարկ աւանդատներ կամ խորաններ կան եւ ձախ դասում. վերին աւանդատան դրան ճակատին, որ նուիրուած է Թադէոս առաքեալի անուան, Կիրակոսի արձանագրութիւնն է (Յաւել. Ա. 106). նոյն ժամանակից, իսկ աւելի բարձր երեք արձանագրութիւններից միայն միջինն է կարդացւում, այն էլ նուիրատուի անունը եղծուած (Յաւել. Ա. 107): Ժամատան շինութեան ժամանակից է Առփայեցի Լուլիկի արձանագրութիւնը, որ գտնւում է ձախ դասի որմայեցը եւ սիւնը կապող կամարի ներքեւի մասում, արեւմտեան կողմից, որով քառասուն դահեկան է նուիրում կաթուղիկէին (Ցուել. Ա. 109): Նոյն կիսասիւնից դէպի հարաւ՝ պատի վերայ Սիմէոնի եւ սորա տակը Սարճուտի արձանագրութիւնն է. առաջինը յիսուն դահեկան է նուիրում եւ երեք ժամ ստանում, երկրորդը քսան եւ մի ժամ ստանում (Ցուել. Ա. 110 եւ 111): Նոյն ժամանակից պիտի լինի եւ տաճարը սալող Ստեփանոսի արձանագրութիւնը ձախ դասի սեան վերայ, որ մենք կապեցինք տաճարի շինութեան մասնակից անձանց հետ (Ցուել. Ա. 77):

---

[1]) Գանձ. 155, 200, 204:

[2]) Գրի առնուած եւ լուսանկարուած մեր ձեռքով վաչուտեաններին նուիրուած հատորի համար:

[3]) Գանձ. 256: Բարխուդարեան. Արցախ. 173—175:



ՊԱՏԿԵՐ 148.

Աջ դասի սեան վերայ (աւելի բարձր միւս արձանագրութիւնը չի կարդացւում) եւս գտնում է մի արձանագրութիւն, կարծում ենք ծագումով աւելի ուշ.

Կամաւ այ. ես Ցակ/որ Պապաքի որդի եւ ամ/ուսին իմ Մենայ (փակագրով) խաթ/ուն միաբանեցաք սբ. Գեղարդանս եւ մեր հալալ ընչից տվ/աք Ճ: դհ: եւ սպասաւորքս խոստացան :Դ: ժամ տարին :Ա: ինձ :Ա: / իմ հաւրն :Ա: Իմնայ խաթին· ժամ / սբ· Յակոբի տաւնին ՀԴ թվ·:

Թուականի հարիւրաւորը պակասում է, որ ինչպէս տեսանք եզակի երեւոյթ չէ մեր վիմական արձանագրութիւնների մէջ· եթէ ընդունենք «Ո», նշանակում է, գրուած է հենց ժամատան շինութեան ժամանակ: Բայց կասկածի հիմնաւոր պատճառներ կան աւելի ուշ ՁՀԴ կամ նոյնիսկ ՊՀԴ ընդունելու: Առաջին՝ արձանագրութիւնը փորագրուած է ոչ վարժ ձեռքով, յետին ժամանակի տպաւորութիւն է անում, քանդակման եղանակով եւ գրերի ձեւով տարբեր ժամատան շինութեան արձանագրութիւններից: Բայց ուշ ծագման աւելի հիմնաւոր առարկութիւն կարող է համարուել վանքի «Սուրբ Գեղարդ» անուանակոչութիւնը, յայտնի սրբութեան անունով, որ երեւան է գալիս Պռոշեանց տիրապետութեան ժամանակ միայն, ԺԳ· դարի կէսերին:



ՊԱՏԿԵՐ 149·

Ժամատունը նոյնպէս, ինչպէս եւ տաճարն էր, ԺԳ· դարում իր տեսակի մէջ ընդհանրացած տիպի շէնք է· սակայն այս էլ ծագումով աւելի հին, քան ԺԳ· դարը: Յովհաննէս-Սմբատ ՆՁէ (= 1038) թուին[1]) շինել է Հոռոմոսի Ս· Յովհաննէսը «հանդերձ ժամատամբս», որ իր ներսի, առաստաղի եւ երդիկի շուրջը եղած պատկերաքանդակներով եւ խաչաքանդակներով մի սքանչելիք է (պատկ· 145, 146): Թեղենեաց վանքի գաւիթը շինուած է 1167 թուին[2]), իսկ ԺԳ· դարում գրեթէ չկայ մի տաճար, որ իր գաւիթը չունենայ, որոնց թւում եւ Պռոշեանց իշխանութեան սահմաններում եղած վանքերից Կեչառոյքն ու Գեղարդը։ Այս շէնքերի բնորոշ կողմերն են հաստահեղոյս չորս սիւները (պատկ· 147), որոնց վերայ հաստատուած են չորս կեդրոնական կամարները, որանց վերայ բարձրացող սֆերիկ եւ երդիկաւոր գմբէթով (պատկ· 148, 149)։ Սիւները կամարներով կապուած են ոչ միայն իրար հետ, այլ եւ համապատասխան պատերի որմայեց կիսասիւների հետ, կեդրոնական երդիկաւոր կիսագմբէթի շուրջը կազմելով տափակ կամ բոլորաձեւ առաստաղներով սրահներ։ Կիսագմբէթի երդիկով վերջացած առաստաղը միշտ զարդարուած խաչաքանդակներով եւ պատկերաքանդակներով (Հոռոմոս, պատկ· 146), երկրաչափական եւ ճարտարապետական (Թեղենեաց վանք, պատկ· 62[1]) Կեչառոյք, պատկ· 148), բայց առաւելապէս ստալակտիտներով (Գեղարդայ վանք, պատկ· 149· Անիի Առաքելոց գաւիթը եւն·)։ Սրահների առաստաղները նոյնպէս զարդարուած են երկրաչափական ձեւերի մօզաիկներով, ինչպէս Գեղարդը։ Այս տիպի շէնքերը, թէեւ իրենց արտաքին պատերով մի քիչ սառը եւ միապաղաղ, բայց ներքուստ սիւներով, կամարներով եւ քանդակներով կենդանի, իսկ երբեմն իրենց գեղեցկութեամբ եւ ազնուութեամբ (Անիի Առաքելոց գաւիթը) կամ հոյակապ բարձրութեամբ, ընդարձակութեամբ եւ վիթխարի կամարներով խորը տպաւորիչ (Հաղբատի մեծ գաւիթը, Յովհաննէս Ա·ի շինած)։ Այդ գաւիթները իրենց ներքին, ճարտարապետական ձեւակերպութեամբ մեծ նմանութիւն են բերում մեր լեռնային գաւառների գիւղական տներին, ինչպէս Արցախն է կամ Սիւնիքը, ուրեմն եւ բնորոշ հայկական, բայց առաստաղների ստալակտիտներով եւ երկրաչափական մօզաիկ զարդարանքներով արեւելքի հետ կապուած եւ սելջուկեան արուեստի ազերսներով[2])։ Գեղարդայ վանքը այդ կողմից տալիս է համեմատութեան կարեւոր երեւոյթներ· տաճարի հարաւային պատին մեր մատնանշած քանդակների հետ շատ բնորոշ են ժամատան արեւմտեան դրան ճակատաքարի եւ սրաբեկ կամարի զարդարանքները (պատկ· 150)[3])։

---

[1]) Ալիշան· Շիրակ· 20:

[2]) Աստ· 85, պատկ· 62:



ՊԱՏԿԵՐ 150·

Այս կենդանի շինարարութեան շրջանում ոչ պակաս ծաղկած պիտի լինի եւ դրչութեան արուեստը· մեր ձեռքն է հասել ՈԿԶ (= 1217) թուին գրուած, ուբեմն, հայր Բարսղի կամ Սարկաւագ վարդապետի ժամանակ, մի աւետարան, որ իւր գրչութեամբ եւ մանրանկարչութեամբ Արեւելեան Հայաստանի արժէքաւոր մնացորդներից մէկը կը լինէր, եթէ լաւ պահուած վիճակում հասած լինէր մեզ: Հետաքրքրականն այն է, որ գրիչը, նկարիչը եւ կազմողը վանքի միաբաններն են, մի հանգամանք, որ ցոյց է տալիս, թէ ստեղծագործական կեանքն ու մշակոյթը շինարարութեան հետ զարգացած էր այստեղ բազմակողմանի կերպով: «Ոմն ի յընտրելոց քահանայից այ․, որ էր մի ի ժառանգաւորաց սուրբ ուխտին Այրիվանից, սնեալ եւ ուսեալ ի նմին մենաստանի խաչաւուր անուն», իւր Գառնեցի երեք եղբայրների հետ գրել է տալիս եւ նուիրում «ի բնիկն իւրեանց ի գերապանծ արքայանիստն Գեղամի, որ է Գառնի, յորում հրաշակերտ հովանոցն է յարդարեալ հաստահեղոյս քարամբք ի սքանչանս թագաւորաց եւ թագուհեաց: Եւ աւանդեն զսա մեծափառ կաթուղիկէին, տալով ի ձեռս սպասաւորաց նորին սրբասէր քահանայից…»: Ձեռագրի սկզբնաւորութիւնը եղել է «ի գերադրական սբ․ ուխտին, որ կոչի Այրից վանք (պատկ․ 151), որ է բանակետղ լուսակիր արանց եւ կացորդ լուսաւորչացն նախնեաց»․ Վերջաւորութիւնը Գեղձանայ վանքում ՌԿԶ թուին, «առ ոտս մեծ հեղինակիս Կարապետիս եւ այլ սրբոց միաբանացս»[1]:

---

[1]) Աստ· 85, պատկ· 62։

[2]) Մեր հայեացքը Հայ եւ Սելջուկեան արուեստների յարաբերութեան նկատմամբ· տե՛ս Աստ· 85 եւ շար·։

[3]) Պատկերները տե՛ս եւ Ouvar. Mat. XIII. Tabl. IV. 8 եւ V. 9:



խաղողոյ. որ ուրախ
առնէ զսրտաց ողս ն
Եւ յոյժ գործ առնա
մե բարւոյ. սկիզբն է
. գր ի գերադրական սբ
ուխտին. որ կոչի այրից
վանք, որ է բանակետ ղ
լուսակիր արանց, եւ
կացորդ լուսաւորչացն
նախնեաց:

ՊԱՏԿԵՐ 151․

Աւետարանը մեծադիր է՝ 29×22 սմ․, արեւելեան խոշոր բոլորգրով (պատկ․ 151), թղթի վերայ, զարդարուած իւրատեսակ խորաններով (պատկ․ 152), աւետարանիչների պատկերներով եւ լուսանցքի զարդերով, տարաբաղդաբար խոնաւութիւնից վնասուած կամ ներկերը թափուած շատ տեղ․ իսկ աւետարանիչներն էլ պոկուած, բացառութեամբ Ղուկասի (պատկ․ 153) եւ Յովհաննու սկզբնազարդի (պատկ․ 154), որի կամարի տակ նստած է Պրոխորոնը գրիչը ձեռին: Արուեստի բնոյթն ու տեխնիկան զուտ արեւելեան, տարբեր մեր Կիլիկեան կամ Բիւզանդական մանրանկարչութիւնից․ ոչ ճոխ, առանց ոսկու գործածութեան եւ պարզ, բայց հետաքրքրական գիտական տեսակէտով: Աւելի մեծ ազերս է նկատւում ոճի եւ մոտիվների կողմից սասանեան-արեւելեան հայկական հին աւանդների հետ, որոնք ապրում են մինչեւ ԺԳ․ դարը եւ յետոյ, արաբական-սելջուկեան եւ հայ ժողովրդական (պատկ․ 152) (զորգագործական) արուեստների հետ: Այսպէս են վիզերն իրար փաթաթած եւ պոչերը վեր ցցած սիրամարգները երկու սիւների վերայ հաստատուած խորանի կամարի տակ, թռչուններ եւ կենդանիներ խորանների գլխին, լայնատերեւ պալմետներ տերեւի ճիւղաւորութեան կեդրոնում կարմիր գնդակով կամ զուգահեռ տերեւներով (պատկ․ 155, 156, 157), պարզ հիւսկէններ լուսանցքի զարդերի մէջ, ուլթաձեւեր, կանթեր կամ օղակներ մանրանկարչական տառերի մէջ (պատկ․ 158): Խորանների սիւները պարզ հայկական են, փայտի սիւների հետեւողութեամբ, խարիսխները եռաստիճան, լայնքից դէպի նեղը բարձրանալով, իսկ խոյակները տախտակի վերայ կիսաբոլոր բարձով: Սիրուած գոյներն են կապոյտը եւ կարմիրը, ապա քիչ չափով մոյգ կանաչն ու դեղինը, վերջինը լուսոյ պսակների համար եւս գործադրուած: Նկարիչն է Սարգիս, գրիչը Աբէլ, իսկ կազմողը Ստեփանոս:

III

Վանքի պատմութեան երրորդ եւ աւելի փառաւոր ժամանակը Պռոշեանց տիրապետութեան շրջանն է: Մենք ցոյց ենք տուել, որ ԺԳ․ դարի քառասնական թուականներին Պռոշ մեծ իշխանը գնել է այդ վանքը Իւանէ աթաբակի որդի Աւագից իւր տոհմի համար գերեզմանատուն դարձնելու նպատակով[2]: Պռոշեանց շրջանի թուականով արձանագրութիւններն սկսւում են միայն յիսունական թուականների վերջերից: Վանքում սնուած միաբաններից մէկը՝ Զաքարէ 1257 թուին նորոգել է քարայրի Աստուածածինը․

---

[1] Ձեռ․ Տաթեւի, այժմ էջմ․ № 4509․ Յաւել․ Բ․ 45:

[2] Աստ․ 53 եւ շար․: (Յաւել․ Ա․ 17, պատկ․ 30, եւ Ա․ 16, պատկ․ 29):

Ի թուիս ՉՉ·

Ես Զաքարէ սնեալ ի սբ· Ածայծն/իս (s!) *նորոգեցի զԱծածինս ի հալալ / արդեանց իմոց եւ գնեցի զդատաւորին հողն :Ի: դահեկան եւ զԹոգայ Խայտերն Արթգոյ ի Հասանայ :Խ: դահեկան եւ եատ ընծայք սբ· Ածայծնիս եւ սպ/ասաւորքս խոստացան :Բ: աւր ժամ :Ա: ինձ :Ա: Մամքանայ ով* (?մաչուած) *որ զ/այս հայրենիքս այս եկեղեց/ոյս հանեցէ :ԺԸ:* (այսինքն ՅԺԸ) *հայրապետ/աց նզոված է:*

Արձանագրութիւնը գտնւում է Աստուածածնի սրբատաշ քարերով նորոգած արեւմտա-հարաւային պատի վերայ, լուսամուտի երկու թռչնապատկերների տակ: Մենք կարծում ենք այստեղ գտնուած բոլոր արձանագրութիւնները՝ ժամանակի կողմից տարբեր ծագումով, փորագրուած են այս նորոգութեան ժամանակ (պատկ· 136, ձախ): Մի ուրիշ արձանագրութիւն, աւելի համառօտ, հաստատում է նորոգութիւնը մի տարով յետոյ՝

Ի թուիս ՉԷ (= 1258) *նոնրոգեցաւ / սբ· Ածածինս:*

Նորոգութեան շրջանին են պատկանում Լուրիկի (Յաւել· Ա· 112), Պատրիկի (Յաւել· Ա· 112ա·) եւ Ագիգի (Յաւել· Ա· 112բ·) արձանագրութիւնները: Առաջինը Կ· դահեկան է տալիս եւ երեք օր ժամ ստանում, մէկը իր, միւսը Շերեշահի եւ երրորդը Երեմի համար· Պատրիկը տալիս է 20 դահեկան եւ տարին մի օր ժամ ստանում· իսկ Ագիգը՝ «սնեալ ի տան խութլու խաթունին եւ Պռաւշոյ» նոյնպէս քսան դահեկան է տալիս եւ մի ժամ ստանում: Դէպի Աստուածածնի վերին քարայրը տանող դրան ճակատին է Մխիթար քահանայի արձանագրութիւնը, որ կարող է Մխիթար Այրիվանեցին լինել աւելի երիտասարդ հասակում (Յաւել· Ա· 113), իսկ փոքրիկ լուսամուտի գլխին՝ վերեւ յիշուած արձանագրութիւններից բարձր՝ Շաքար բէկի, որի մէջ յիշուած է վանքի «Գեղարդ» անուանակոչութիւնը (Յաւել· Ա· 114):

Մենք արդէն մի անգամ յիշել ենք, որ վանքի շինութիւնների մէջ հնագոյն մնացորդը Աստուածածնի քարայրն է, ժայռի երեսին փորագրած մի քանի խաչերով, որոնցից մէկը ՌԺԳ (=1164) թուականն ունէր (պատկ· 136): Մեր խօսքը վերաբերում է միայն ներքեւի շարքին, որոնցից աջակողմեան երեքն ի սպառ փչացած, իսկ մնացած երեքը պարզ, առանց ճոխ կամ սեթեւեթ քանդակների, որ տիրապետել է սկսում ԺԳ· դարում: Խաչերի պարզ ձեւերն իսկ տպաւորիչ են եւ հետաքրքրական նրանց զարգացման պատմութեան նկատմամբ, որ համընթաց են հայ ճարտարապետական արուեստի զարգացման: Ինչպէս դասական շրջանի ճարտարապետութեան մէջ, ներառեալ եւ Բագրատունեաց վերածնութեան շրջանը, արուեստի կենդանութեան եւ ճաշակի յայտարարը նորա ազնիւ գծերն են ամբողջութեան ձեւակերպութեամբ, այդպէս եւ խաչի արուեստը իւր զարգացման հնագոյն շրջաններում պարզ է, առանց քանդակագործական զարդարանքների ճոխութեան եւ երկրաչափական ձեւերի պէսպիսութեամբ եւ այլ զարդերով տպաւորիչ դարձնելու ձգտման, որ սկսում է քաղաքացիութիւն ստանալ ԺԲ· դարի վերջերից: Մեր ասածին ապացոյց հենց մեր երեք խաչերից բարձր հաստատուած ճոխ քանդակներով խաչքարը Հայր Գրիգորի ժամանակից՝ «խաչս բարեխաւս հաւր Գրիգոր եւ ծնողացն»· Հայր Գրիգորին յիշատակուած տեսանք ՈԻԶ եւ ՈԼ թուերի արձանագրութիւնների մէջ, կարելի է համեմատել նաեւ Տիմոթի եւ Մխիթարի խաչարձանի հետ ՈԿԲ թուականից (պատկ· 6)[1]: Մնացած սրբատաշ քարով պատը, կտուրով, ինչպէս եւ պատի մէջ հաստատուած խաչքարերը, բոլորակ լուսամուտի կողքերի սուաստիկանները, ճառագայթաւոր աստղը եւ եռանկիւնին թռչուններով, յաւիտենականութեան սիմվոլիկ նշաններ, նորոգութեան շրջանից են, որի արձանագրութիւնն էլ տեսանք ՉՉ (= 1257) թուականով:



ՊԱՏԿԵՐ 152·

---

[1] Աստ· 13:

Նորոգութեան շրջանի ամենից հետաքրքրական մասը որմանկարչութիւնն էր, տարաբաղդաբար միայն փոքր մասով առաստաղի վերայ մնացած, այն էլ խաղխղուած եւ կեղտոտուած վիճակում: Որմանկարների հին շերտը տակն էր, երփներանգ, որոնց մասին ոչինչ ասել չենք կարող, իսկ երեսի շերտը սեւացած ժամանակի ընթացքում ծխից եւ փոշուց: Ափսիդի կեդրոնում տիրամայրն է, Յիսուս գրկին, մեդալիոնի մէջ, երկու կողմից մի մի հրեշտակ, գլուխները խոնարհած, որպէս երկիւղածութեան նշան (պատկ· 159): Իսկ առաստաղի վերայ կայ մի ուրիշ խմբանկար· կանգնած է միրուքաւոր մի մարդ, նորա ձախից կանացի մի ֆիգուր, աջից դարձեալ մի տղամարդ, հանդերձը կարճ՝ մինչ ծնկները, նեղ անդրավարտիկով եւ կօշիկներով· երկու տղամարդն էլ, թւում է, լաթից գօտի ունին, որի ծայրերը կախուած են կողքերից: Նկատելի են եւ ուրիշ ֆիգուրների մնացորդներ: Իշխանական հագուստներով այս խմբանկարը կարծում ենք Պռոշն է իւր կնոջ եւ աւագ որդու հետ[1]): Մի երկրորդ խմբանկար Յիսուսն է նստած, մօտը երեք աշակերտ, որոնցից ոչ մէկը նիմբուս չունի(?):



ՊԱՏԿԵՐ 153·

Ամենայն հաւանականութեամբ այս նորոգութեան շրջանին է պատկանում Աստուածածնի քարայրի մօտ՝ հարաւից մի փոքրիկ չէնքի կամար (տե՛ս Ալիշան, Այր· 345), որի վերայ արձանագրուած է վանքում սնուած Վարդարուտի նուիրաբերութիւնը՝ Արթայ[2]) մի հողի՝ քառասուն, եւ վեց առու այգու գինը՝ քան դահեկան (Յաւել· Ա· 115):

Շինարարութիւնն այս ժամանակ կատարւում է ոչ միայն Աստուածածնի քարայրի շուրջը, այլ եւ վանքի պարսպի մէջ, ժամատնից եւ տաճարից հիւսիս ընկած ժայռի մէջ փորւում են խցիկներ եւ մատուռներ· դոցանից արեւելեանն աւելի հին է, ոմն Կարապետի կոփել տուած, հաւանօրէն տաճարի եւ ժամատան շինութեան ժամանակից (Յաւել· Ա· 105), իսկ արեւմտեան զոյգ խցիկներից մէկի հիւսիսային պատին Մխիթար սարկաւագի եղբօրորդիների՝ Գրիգորիսի եւ Վրթանիսի շինել տուած ՉԹ (= 1260) թուականից (Յաւել· Ա· 116): Տաս տարի յետոյ ունինք երկու կողմերը նրբաքանդակ՝ եռագիծների հիւսուածքով մի խաչքար, որ զետեղուած է պարսպի արեւմտեան դարբասի գլխին· «**Ի· Թ· / ՉԺԹ / Խաչատուր**» (գրուած է «Խաչատորւ) արձանագրութեամբ (պատկ· 160):

Պռոշի անուան հետ կապուած թուականով առաջին յիշատակարանը Այրի վանքի պատմութեան մէջ Գեղարդի պահարանի արձանագրութիւնն է 1268 թուականից[3]): Գեղարդը արեւելեան Հայոց ամենամեծ սրբութիւններից մէկն է եղել Նոյեան տապանի կտորի եւ Հաւուց Թառի փրկչական պատկերի հետ, որ յիշատակուած ենք տեսնում Վարդանի աշխարհագրութեան մէջ· «...եւ Այրիվանքն, ուր կան սբ· Գեղարդն ածայմուխ, ներկեալ արեամբ կենարարին եւ տախտակն սբ· տապանակին Նոյեան նահապետին· եւ նայ է տուն հաւատոյ Հայաստանեայցս հաստատեալ ի սբ· Լուսաւորչէն...»[4]): Աշխարհացոյցը իւր ծագմամբ ուշ չէ, քան ԺԳ· դարի երկրորդ կէսը, բացառութեամբ փոքրիկ ներմուծութիւնների, որ յետոյ են մտած: Հեղինակի հայեացքը Այրի վանքի նշանակութեան մասին, մեր կողմից ընդգծուած բառերով, ցոյց է տալիս վանքի վայելած հռչակն ու հեղինակութիւնը նորա ժամանակ: Եւ յիրաւի ԺԳ· դարը, մանաւանդ երկրորդ կէսը, այս վանքի պատմութեան ամենափառաւոր շրջանն է ամէն տեսակէտով:

Վանքի հռչակը բարձրացնելու գործում Պռոշ իշխանի շինարարութեան եւ փառաւոր միաբանութեան հետ, որ գրական-գեղարուեստական-հոգեւոր կեանքի կեդրոն էր դարձրել այդ վայրը, տալով այնպիսի հեղինակ անդամներ, ինչպէս Յովհաննէս Գառնեցին է եւ

---

[1] Աստ· 54, պատկ· 31:

[2] Մի գիւղ այժմ էլ նոյն անունով, վանքից հիւսիս-արեւմուտք, ոչ հեռու: Նոյն գիւղի անունը յիշուած եւ Զաքարիա նորոգողի արձանագրութեան մէջ ՉԶ (= 1257) թուականին:

[3] Աստ· 51· (Յաւել· Ա· 15, պատկ· 28):

[4] Ձեռ· էջմ· № 358 Նժ· (Լիմի):

ապա Մխիթար Այրիվանեցին, կարեւոր դեր են կատարել եւ վերոյիշեալ երկու սրբութիւնները. մինչ այդ Այրից վանք էր կոչւում, այնուհետեւ սկսում է ընդհանրանալ Գեղարդայ վանք կոչումը։ Մեր աւելի հին աւանդութիւնների մէջ չունինք որեւէ տեղեկութիւն նրանց իրական գոյութեան մասին։ Նոյեան տապանի կտորի աւանդութիւնը կապուած է Յակոբ Մծբնայ հայրապետի առասպելախառն պատմութեան հետ, որ չարականի նիւթ է դարձել նոյն հայրապետին նուիրուած կանոնի մէջ. սակայն չարականը հների կարգին չի պատկանում. ըստ հեղինակների ցանկի ոմանք վերագրում են այն Շնորհալուն[1]*)։ *

թիւն, որ պէտք է զանազանել Խաչակրաց արշաւանքի ժամանակ Անտիոքում գտնուած եւ ապա Ալէքս կայսերն անցած գեղարդից[4]*)։ ԺԳ. դարում նա ունի իւր յատուկ չարականը Վարդանի կողմից երգուած, ամենայն հաւանականութեամբ, հենց Պռոշ իշխանի շինած պահարանի առթիւ*[5]*)։ Ճառեր եւ չարականներ գրւում էին, երգւում սրբերի եւ տաճարների նաւակատեաց տօներին, այս դէպքում սրբութեան փառաւորութեան՝ պահարանի շինութեան առթիւ։ Վարդան բարեկամական կապեր պիտի ունենար Պռոշի հետ. *1268 *թուին նա վերջացրեց իւր Դանիէլի մեկնութիւնը Աղջոց վանքում*[6]*), որ Խաղբակեանի մի ճիւղի հոգեւոր կեդրոնն էր եւ ոչ հեռու Գեղարդից։ *1270 *թուին գումարուած Ջագավանից ժողովի ղեկավարն էր Վարդան, հովանաւորութեամբ նաեւ Պռոշ իշխանի*[7]*), իսկ *1268 *թուին շինուեց պահարանը։ Կարծում ենք նոյնիսկ, թէ պահարանի արձանագրութիւնը Վարդանի գրածը պիտի լինի, որ սովորական արձանագրութիւն չէ, այլ այդ սրբութեան մեծարանքի եւ պաշտաման բանաստեղծական մի արտայայտութիւն իւր առաջին մասով, որ Պռոշ իշխանը ինքը չէ գրել, անշուշտ, ինչպէս վերջաւորութիւնն էլ ցոյց է տալիս, այլ նորա մերձաւոր անձնաւորութիւններից մէկը։ Տարաբաղդաբար Պռոշի շինել տուած պահարանը մեր ձեռքը չէ հասել, այլ նորոգուած է նոյն տոհմի վերջին շառաւիղներից մէկի՝ Գեղարդի Դաւիթ*



ՊԱՏԿԵՐ 154·

*Գեղարդի ծագման աւանդութիւնը Հայաստանում կապուած է Թադէոս առաքեալի վկայաբանութեան հետ, որ չարականի մէջ է մտած արդէն *1159 *թուին գրուած մի ձեռագրում*[2]*), Գրիգոր Գ. եւ Ներսէս Շնորհալի կաթողիկոսների ժամանակ։ Նոյն աւանդութիւնը կրկնուած է Վանականի եւ Վարդանի անունով մնացած գրութիւնների մէջ*[3]*)։ Յամենայն դէպս Վարդան իւր պատմութեան մէջ յիշում է նորա իրական գոյութիւնը, որպէս մի անցեալ ունեցող սրբու-*

---

[1]) Տարական, էջմիածին, 1861, 528։ Հեղինակների ցանկը սկզբում։

[2]) Սահակ վարդապետ Ամատունի. Պարականոն կամ անվաւեր շարականներ. Վաղարշապատ, 1911, 31 եւ շար.։ Միքայէլ Ասորին եւս քիչ յետոյ իւր «Ցաղագս քահանայական կարգաց» ճառի մէջ յիշում է. *«Եւ գեղարդն աստուածամուխ պատկաւն փչեալ ի Թադէոսէ բերեալ, եւ կայ անդէն ի Հայս ի պարծանս ազգին եւ ի փառս Աստուծոյ»*. Միքայէլ Ասորի, Պատմ., Երուսաղէմ, 1870, եր. 600։ Սոփերք հայկականք, Վենետիկ, Ը. 59։

[3]) Ձեռ. էջմ. № 2496, 356*բ*., 2179/2166, 310*բ*., եւ 753 Նժ. 404*բ*.։

[4]) Վարդ. 147/8։ Գանձ. 143։

[5]) Ամատունի, Պարականոն շարականներ, 130, եւ Շախխաթ. Ա. 48։ Ալիշան. Այրարատ. 348։

[6]) Ձեռ. էջմ. № 2049, 359բ.։ Ալիշան Հայապատում. 383։

[7]) Տես մեր «Ջագավանից ժողովը», Շողակաթ, Հայագիտական ժողովածու, Վաղարշապատ, 1913, 22։

եպիսկոպոսի ձեռքով 1687 թուին, պահելով Պռոշի արձանագրութեան պատճէնը[1]):

ԺԳ. դարի վաթսունական եւ եօթանասնական թուականներին պէտք է դնել Պռոշի մեծ շինարարութիւնը Գեղարդում, վիմափոր տաճարի եւ նորա գաւթի կոփումը, որ իւր տեսակի շինարարութեան գլուխ գործոցն է Հայոց մէջ եւ որի մանրամասն նկարագրութիւնն ու գեղարուեստական վերլուծութիւնը կատարել ենք արդէն եւ այստեղ երկրորդել չենք կարող: Նոյնն պիտի ասենք նաեւ եւ նորա որդու Պապաքի վիմափոր ժամատան մասին, որ վերջացած է ՉԼԷ (= 1288) թուին[2]):

ՊԱՏԿԵՐ 155·

Այժմ անցնինք Գեղարդի հոգեւոր եւ կրօնական դերի եւ նորա միաբանների մատենագրական գործունէութեան նկարագրութեան եւ վերլուծութեան: Վիմական յիշատակարանների այն հոյլը, որ մենք տեսանք նորա պատերի վերայ, կապուած շինարարութեան, բարեպաշտական նուիրաբերութիւնների, հասարակ եւ արհեստաւոր ժողովրդից սկսած մինչեւ եկեղեցական եւ իշխանական անձնաւորութիւնները, ապացոյց են վանքի վայելած հռչակի եւ հեղինակութեան ժամանակակիցների աչքում: Մենք տեսանք, թէ միաբանութեան հետ մեծ էր եւ ժողովրդի մասնակցութիւնը տաճարի, ժամատան եւ միւս շէնքերի եւ փոքր վիմափորների շինարարութեան մէջ, նաեւ անհատ միաբանների յատուկ յիշատակութեամբ: Ինքնին դա մի նշանակալից երեւոյթ էր, թէ վանքը իւր միաբանութեամբ գնահատուած էր ժամանակակիցների կողմից, որ նա հեղինակութիւն եւ վստահութիւն էր վայելում, որ իւր հիմունքները պիտի ունենար նորա ցուցաբերած բարեպաշտական եւ գործնական կեանքի մէջ: Տեսանք, որ Աշխարհացոյցի հեղինակը «տուն հաւատոյ» բառերով է բնորոշում նորա նշանակութիւնը: Գանձակեցին Արեւելեան Հայաստանի գլխաւոր վանքերի շարքում յիշում է եւ Այրի վանքը, որի խօսքը նշանակութիւն ունէր եկեղեցու վերաբերեալ ընդհանուր խնդիրների մէջ: Այրի վանքն էլ մասնակից էր Կոստանդին կաթողիկոսին ուղարկած հաւանութեան թղթին, իբրեւ պատասխան նորա շրջաբերականի, Վարդանի կողմից բերուած[3]): Նա մասնակից էր, հաւանօրէն, եւ Ջաղավանից ժողովին, թէեւ յատուկ յիշատակութիւն չունինք այդ մասին, որի հովանաւորներից մէկն էլ Պռոշ մեծ իշխանն էր, Այրի վանքի պատրոնը:



ՊԱՏԿԵՐ 156·

Գրչութեան արուեստի մէջ մեզ հասած արդիւնքների մասին յիշատակեցինք արդէն եւ կը տեսնենք այսուհետեւ եւս, բայց միաբաններից երկուսը առանձին եւ պատուաւոր տեղ ունին մեր մատենագրութեան եւ

---

[1] Աստ· 138· Արձանագրութիւնք Յաւել· 15, պատկ. 28:

[2] Աստ· 55—60, 75:

[3] Գանձ· 295:

մտաւոր կեանքի պատմութեան մէջ՝ Յովհաննէս Գառնեցին եւ Մխիթար Այրիվանեցին։ Գանձակեցու հաղորդած մի քանի տեղեկութիւնները Գառնեցու մասին առասպելախառն են, բայց այդ հանգամանքն արգելք չէ տեսնելու, թէ նա իրօք մեծ հեղինակութիւն եւ սուրբ մարդու հռչակ էր վայելում ժամանակակիցների աչքում, որպէս լուրջ եւ խիստ հայեացքների տէր վանական, որ առաւելապէս պարզւում է վանականների նուիրած գրական վաստակների մէջ։ Այդ պատմութիւնների աղբիւրը՝ Վարդան վարդապետ՝ սիրով կապուած էր նրա հետ։ Ամենամեծ յարգանքով է խօսում նրա մասին եւ ինքը՝ Գանձակեցին, «առաքինի, զարմանալի վարուք, գործող պատուիրանացն Աստուծոյ» *անուանելով. նա* «ի սուրբ ուխտէն Այրիվանից», *էր* «ի մանկական տիոցն արհամարհեալ զամենայն ինչ կենցաղոյս, լքեալ զազգ եւ զտուն, յանապատ տեղիս բնակէր, սիրէր առանձին լինել եւ անզբաղապէս խօսել ընդ Աստուծոյ, տուեալ զինքն ազգի ազգի ճգնութեան, պահոց եւ աղօթից, գետնատարած անկողնօք եւ անհանգիստ աշխատութեամբ, շրջելով ի տեղւոջէ ի տեղիս, եւ լուսաւորելով զպատահեալսն»։ *Նա ճանապարհորդում է դէպի Երուսաղէմ, Սինա, Փոքր Ասիայի այլ եւ այլ կողմերը, կեանքի վերջին մնացորդն անցկացնելով Հռոմկլայի հայրապետանոցում, ուր հրաւիրել էր նրան կաթողիկոս Բարձրբերդցին*¹)։



ՊԱՏԿԵՐ 157·

Այստեղ եւս մի տեսիլքով նա բացատրել է իր հայեացքը կրօնափոխների նկատմամբ· մեղաւորների հետ տանջուելու են եւ նրանք, «որ կամեցան ազգէ յազգս փոխել եւ արհամարհեցին զմի մկրտութիւն եւ եղեն Հոռոմ կամ Ֆրանգ կամ Ասորի²)։

Գառնեցին իր վաստակն ունի նաեւ գրական ասպարիզում։ Գրչութեան արուեստի մէջ Սաղմոսների նկատմամբ յայտնի է Գառնեցու օրինակը։ Ժամանակի ընթացքում «յանհոգութենէ ոմանց եւ ի սղալագիր գրչաց» *եղծուել էր Սաղմոսի հայերէն բնագիրը, մանաւանդ որ* «Հայք ի բերան առեալ ասեն վայրաքար քահանայք եւ ռամիկք եւ մանկունք եւ կոզեռք եւ հաւատաւոր կանայք»։ «Եւ գնացի, *գրում է Գառնեցին իր յիշատակարանի մէջ,* ի սուրբ ուխտն Հաղբատ եւ երկրպագեցի սուրբ խաչին եւ սուրբ գերեզմանին մեծ եւ տեսանող հայոց սուրբ վարդապետին Յովանիսի, մականուն Սարկաւագ, այն որ զՍաղմոսն բազում



ՊԱՏԿԵՐ 158·

նզամբ ի թարգմանչագիր սաղմոսարանէ գաղափարեաց։ Եւ իմ հանդիպեալ նոյն Սաղմոսարանի սուրբ վարդապետի, առեալ համբուրեցի։ Եւ գրեցի յիւրմէն ամենայն ստուգութեամբ զբանն, զգիրն, զհարցուկն,

---

¹) Գանձ. 334—342։

²) N. Marr. Sbornik Pritcht Vardana, Prilojenik I. 13։ Վարդանն էլ ունի Գառնեցու անուան հետ կապուած աւանդութիւններից մէկը. Արարատ, 1869, 55։

զհանգիստն, զտունն, զկէտն, զստորն» (Յաւել. Բ. 46)։ Գառնեցին յանձնարարում է իր այսպէս սրբագրած օրինակը, որ ապագայում մեծ հեղինակութիւն է ստանում եւ շատերն են արտագրում «ի յընտիր աւրինակէ Գառնեցւոյ»[1])։

Նա գրել է եւ հոգեւոր երգեր։ ԺԳ. դարում արեւելեան Հայաստանում ծաղկել է սկսում հոգեւոր երգերի, տաղերի եւ գանձերի գրականութիւնը, Վարդան (ոչ Բարձրբերդցի, ինչպէս կարծում է Ամատունին), Մխիթար Այրիվանեցի, Խաչատուր Կեչառեցի, Մկրտիչ, Յովհաննէս Երզնկացի, Կիրակոս Երզնկացի եւն. ձգում են այդ գանձանակի մէջ իրենց արժէքաւոր եւ անարժէք լումաները։ Յովհաննէս Գառնեցին եւս իր բաժինն ունի այդտեղ։ Տարաբաղդաբար մեր գրականութեան այդ մասը հարկաւոր ուշադրութեան չէ արժանացած եւ տակաւին մթութեան մէջ է, դժուար է որոշել, թէ նոյնանուն հեղինակների գործերից ո՛րը որինն է իսկապէս. մենք մատնանշել կարող ենք միայն այնպիսիները, որոնք կասկածի տեղիք չեն թողնում հեղինակի նկատմամբ իրենց տնազլխի տառերով (Acrostica). այսպէս օրինակ N° 1588 շարականի, 223բ. «Յիսուս միածին» սկսուածքով շարականի տնազլուխ տառերն են «Յովհաննէս Գառնեցի»[2])։

Նա աղօթասաց է եւ ունի բաւական թւով աղօթքներ եւս գրած։

Հետաքրքրական են նորա խրատական գրուածքները վանականութեան նկատմամբ. «Սբ. հօրն Յովանիսի Գառնեցոյ ասացեալ խրատ կրաւնաւորաց». սկս. «Ամենանուաստ ծառայակիցս ձեր ի Քս. Յս. Յովանէս Գառնեցի...»։ Այս գրուածքը խրատական թուղթ է ուղղուած կրօնաւորներին, յատկապէս մէկին, որի անունն անյայտ է։ Նա բացատրում է ի՞նչ է բարին եւ ի՞նչ մեղքը։ Բարին խորհել, խօսել, վաստակել, տառապեալներին օգնել, դատաստանից վախենալ, անանց փառքին ձգտել, դեղերելով Աստուծոյ ողորմութեան դռներին կրօնաւորական կեանքի գլխաւոր կողմերն են։ Ընդհակառակը մեղք է ամբարտաւանութիւնը, ծուլութիւնը, մեղկութիւնը, երդուելը, մարմին պարարելը, եղբայրատեցութիւնը, հիւանդին չայցելելը, «մեղք է բարկ ծիծաղիլն եւ կատակ առնելն եւ դատարկաբանելն» եւ այլն։ Յորդորում է զգաստ լինել, որպէսզի չարը չմտնի մեր ներքին գանձարանը եւ յափշտակէ։ Մարդիկ անձնիշխան են եւ իրենց ընտրութեան համապատասխան վարձքի կամ պատժի արժանի։ «Արդ, ո՛վ պատուական եղբայր, զաւրացիր եւ քաջ լեր եւ զերասանակ անձնիշխան կամացդ պինդ կալ»։ Յանձնարարում է ողորմածութիւն, «առանց որոյ ոչ ոք կարէ տեսանել զտէրն.», խոնարհ լինել, որովհետեւ «երբէ բուն իսկ ի գլուխ եւ ի գագաթն առաքինութե. եղանիցես եւ խոնարհութի. ոչ ունիցիս, ոչինչ օգտիցիս»։ Ապա բացատրում է աղօթքի ժամերն ու կերպերը. բայց միայն աղօթքը բաւական չէ, «զի ոչ եթէ քաջաթռիչ արծիւն երկու թեւօքն միայն լոկ բարձրանայ, այլ ունի փետուրս մանր եւ մեծ, եւ ամ. զօրութբն. սփռեալ սլանայ ի բարձունս», այդպէս էլ աղօթքի հետ պէտք են ուրիշ առաքինութիւններ, նոյնիսկ արտաքին վայելչութեան կանոններ։ «Պարտ է համապազ գիրք կարդալ առտնին առանձինն», «զեղբօրն կարիսն կատարեա՛, կարելով, կարկատելով, կախելով զչուխայն եւ զայլ տկարութիսն. բառնալով», եղիր սիրալիր դէպի ամէնքը[3])։

Մի երկրորդ գրութեան վերնագիրն է. «Նորին սուրբ հաւրն Յովհաննէս վարդապետին Գառնեցոյ ասացեալ խրատ ոգեշահ ի Քս.», որ սկսում է «Ծառայակիցս ձեր ի Քս. Յովհաննէս Գառնեցի հարցանեմ զողջունէ սիրելեացդ ի տէ., թէ զիա՞րդ կայք յայս դառն դարուս, որ դիպեցաւ եւ մտանեաց ի սով, ի սուր եւ ի գերութի.»։ Այս խօսքերով դժուար է, ի հարկէ, որոշել գրութեան ժամանակը, որ եթէ թաթարների արշաւանքի սկզբնական շրջանը չէ, ՉԱ (=1252) թուի մօրեխի բերած սովն է եւ ՉԳ թուականի՝ Արղուն ոստիկանի հարկահանութեան հետ կապուած բռնութիւններն ու գերութիւնները[4])։

Առաջին հատուածի մէջ բացատրում է երկնաւոր բարիքն ունենալու միջոցները. ապա երկերկու նախադասութիւններով խրատների մի ամբողջ շարք, մաքուր եւ հեղինակաւոր լեզուով, երբեմն եւ բանաստեղծական հակադրութիւններով՝ մի տեսակ առածների ձեւ առած։ Գրականութեան այս ձեւը սովորական չէ մեզանում, մտքերի ամփոփ եւ պատկերաւոր արտայայտութեամբ արժանի ուշադրութեան եւ համեմատելի մասամբ Կեչառեցու հակոտնեայ եւ պատկերաւոր երկտողանի ասացուածներին, որ տեսանք վերեւ։ Մէջ ենք բերում քաղուածաբար մի քանի օրինակներ ընթերցողին գաղափար տալու համար։

Որ երկնչի յանքուն որդանցն
Աստ մի խածատիցէ զեղբայր իւր լեզուաւ։

Որ կամիցի անդատապարտ մնալ ի դատաստանին,
Աստ մի դատապարտեսցէ զեղբայր իւր։

Որ կամիցի զերծանել ի բոցածաւալ ծովէն,
Աստ ծովացուսցէ զաչս իւր արտասուաւք։

Որ ցանկա մտանել յանվրէպ վայելչութին.,
Աստ մի հեղգասցի երթալ ի տեսութի. հիւանդաց։

---

[1] Թորոս Աղբար, Բ. 421—422. Հանդ. Ամս. 1895, 247։ Ձեռ. էջմ. N° 662 Նժ.։

[2] Ամատունի. Պարականոն շարականներ, 188։

[3] Ձեռ. էջմ. N° 2680. 262բ.։

[4] Գանձ. 267. 346։

Որ կամիցի ըմբել յաղբերէն կենաց,
Աստ կարաւտ կացցէ ապակւոյ միոյ գինւոյ:
Որ կամիցի քաղցր եւ անուշ լսել զբարբառ փողոյն,
Աստ մի անտես արասցէ զձայն կարաւտելոց:

Երրորդ հատուածի մէջ սիրոյ պատուէրն է յանձնարարում· բայց ամէնից բարձր առաքինութիւնը խոնարհութիւնն է· «Թէ զամ· աւրէնս կատարես եւ խոնարհութի· չունիս, ի զուր եւ ընդ վայր աշխատիս, եւ ոչինչ աւգտիս յամ· բարեգործութիւն· քո, որպէս այն, որ ի յաւդ փչէ եւ կամ ի ծակ կարաս ջուր արկանէ»:

ՊԱՏԿԵՐ 159·

Ապա ընթերցողի ուշադրութիւնը հրաւիրելով թափանցելու իւր ասածների եւ ասելիքների իմաստի մէջ, փոխում է խրատականի ձեւը, կարծես, միակերպութիւնից խուսափելու համար·

Որ աստ գինւով զմայլի,
Անդ կարաւտանա կաթիլ մի ջրոյ:

Որ աստ մախս ընդ այլոց բարէկեցութի·,
Անտ չառնու զվարձս վաստակոց իւրոց:

Որ աստ հարկանէ անողորմ զմարդ կամ զանասուն,
Անտ հարկանի հրեղէն գաւազանաւ:

Որ աստ փակէ զգութ իւր ի տնանկաց,
Անտ նմա փակի դուռն առագաստի:

Խրատական թղթերից մէկն էլ ուղղուած է «սրտակից սեռն եւ սերտ սիրելի ի տր· Սարգիս քահանայ», *որ հարցրել էր նորան,* «եթէ զի՞նչ օրինակաւ պարտ է կեալ ըստ կամացն այ· եւ կամ թէ ո՞րպէս պիտոյ է քաղաքավարիլ եւ զերծանիլ ի վշտագին եւ յաններելի տանջանացն, եւ կամ ո՞րպէս գործեսցուք զլուսաւոր բարիսն»: *Ո՞վ է այս Սարգիս քահանան, արդեօք Գեղարդի վանականներից նոյնանուն մէ՞կը, որ ութսունական թուականներին գործակցել է Մխիթար Այրիվանեցուն նորա ճառընտրի գրութեան ժամանակ եւ* 1298 *թուին ստացել է մի Սաղմոսարան իւր եւ աշակերտներին յիշատակ, ինչպէս կը տեսնենք յետոյ: Յամենայն դէպս Սարգիսը կրօնաւոր էր եւ հեղինակը ծանօթ նորա մանկութեան եւ կեանքին:*

Խրատները ընդհանուր կրօնական-բարոյական բնոյթ ունին, բայց երբեմն եւ կենցաղական: Նախ սրում *է գիտակցութիւնը եւ կամքը մարդկային բնութեան բացասական հակումների դէմ (Հատ․ Է․ գլխի իմաստով)․ ոչ միայն պէտք է ճանաչել չարն ու բարին, այլ կարողանալ բարին ընտրել։ Այս նախաբանից յետոյ մի մի նախադասութեամբ արգելք է դնում, ինչ որ պէտք չէ անել, որից մի քանի քաղուածք ենք բերում կենցաղական բնոյթ ունեցողներից։*

Մի՛ տացես զարծաթ քո ի վարձու։
Մի՛ հարկանիցես զմարդ կամ զանասուն։
Մի՛ անողորմեսցիս ի վերայ գրաստուց։
Մի՛ լինիցիս գող ջրոյ եւ կամ հողոյ եւ կամ այլ
իւիք իրաց։
Մի՛ կցեսցես տուն առ տուն կամ մերձեսցես
սինոռ առ սինոռ։
Մի՛ երթիցես ի գիւթ եւ ի կախարդ եւ զարըն-
գէց։
Մի՛ անցուսցես ի վերայ քո աւր՝ որ եթէ
չկարդասցես գիրք։
Մի՛ խառնեսցես ջուր ի կաթն կամ ընդ գինի ի
խապ կամ ի վաճառ։
Մի՛ քակեսցես զցանգ հայրենի եւ կամ արհա-
մարհեսցես զեղեալ կարգս եւ զկանոնս
նախահարցն։
Մի՛ տացես թոյլ առնել ի վերայ մեռելին կած,
եւ կապոյտ եւ կտուր հերաց եւ օճիրս։
Մի՛ մնասցեն առ քեզ վարձք վարձականաց եւ
աշխատութիւք․ մշակաց։
Մի՛ ձգիցես առաջի մդ․կան խաւս կամ խլինք
կամ թուք։
Մի՛ լինիր կոշտ եւ կոպիտ, անհանճար եւ ա-
նիմաստ։

Այս ձեւով 150 *խրատ տալուց յետոյ, աւելացնում է,* «զոր եթէ առեալ ընդունիցիս զսա՝ եւ այլոց երկիւղածաց ուսուցես՝ բարւոք արասցես»։

Մի առանձին գրութիւն էլ կայ նորա անունով․ «Նորին Յովհաննու խրատ։ Բայց յաղագս ժամու պատարագին։ Պարտ եւ պատշաճ է մեզ»։ *Բացատրում է երրորդ ժամի նշանակութիւնը եւ յորդորում այդ ժամը չմոռնալ, ուր եւ լինիս, այլ մտքով եւ աղօթքով ներկայ լինել պատարագին։ Ունի եւ յատուկ աղօթքներ գրած* «Վասն երրդ․ ժամու աւուրն»[1]։

Մատենագրական գործունէութեամբ շատ աւելի նշանաւոր է Մխիթար Այրիվանեցին․ նորա ամէնից աւելի յայտնի գործը Ժամանակագրութիւնն էր, որ հրատարակել են առանձին առանձին Մկրտիչ Էմին եւ Քերովբէ Պատկանեան ուսուցչապետները[2]*։ Ունի վկայաբանութիւններ, նրանցից կարեւորը պատմական-մատենագրական արժէքով՝ Ստեփանոս Սիւնեցու վկայաբանութիւնն է, որ մենք ենք հրատարակել, նախ Երուսաղէմի Սիոնի մէջ եւ ապա առանձին տետրակով*[3]*։ Բազմաթիւ են նորա անունով մնացած գանձերը։ Բայց նորա մեղուաջան աշխատութեան պտուղը ճառընտիրն է, մեր գրչութեան արուեստի մէջ արտակարգ ճոխ բովանդակութեամբ։ Նորանն է վերջապէս Մաշտոցի մէջ մի յաւելում, ոչ ընդհանրացած եւ կանոնական դարձած, նորակերտ գրոց օրհնութիւնը, որին եւ յատուկ գանձ ունի նուիրած։ Ի նկատի ունենալով, որ Ստեփանոս Սիւնեցու վկայաբանութեան հրատարակութեան առթիւ յատուկ ուսումնասիրութեան ենք ենթարկել այդ գործը եւ մասամբ նորա միւս աշխատութիւնները՝ կենսագրական խնդիրների հետ, այստեղ մենք ամփոփ կ՚անցնինք միայն։*



ՊԱՏԿԵՐ 160․

Մխիթար Այրիվանեցու ծննդեան տարին մեզ յայտնի չէ, բայց կարող ենք մօտաւոր ժամանակը տալ։ Նորա ժամանակագրութիւնը պէտք է վերջացած լինէր Կոստանդին երկրորդ կաթուղիկոսի յիշատակութեամբ, որ գահընկէց եղաւ Հեթում Բ․ի կողմից 1289 *թուին։ Նորանից յետոյ եղած կաթուղիկոսների անունները յաւելումն են յետագայ ժամանակի։ Բացի դորանից Մխիթարի Նորագիտ արձանագրութիւնը, որ կը տեսնենք յետոյ, գրուած է ՉԼԸ թուին, նորա կեանքի* 67*-րդ տարին։ «ՉԼԹ․ յամսեանն Հոռի, Դ․, եւ Փետըրվարի, ժ․ աւրն շաբաթ ի տաւնի սբ․ Սարգսին, ի թագաւորութեան հայոց Հեթմու, ի հայրապետութեն․ տն․ Ստեփանոսի, ի բռնակալութեն․ ազգին նետողաց Արղուն խանին ի Թավրէզ» նշանակուած է Գրիգոր Բալուեցու նահատակութիւնը, նորա աշակերտ եւ ականատես քրոջորդու կողմից։ Ժամանակագրական այս տուեալների հիման վերայ Մխիթարի մահը պէտք է նշանակենք վեր-*

---

[1] Այս բոլոր քաղուածքները առնուած են Ձեռ․ № 2680․ ԺԹ․ ԾԴ—Ծէ հատուածներից (262*բ*—274), գրուած ընտիր գրչութեամբ ՊԻԷ = 1378 թուին «ի գեղաքաղաքս, որ Անկեղակոյտ կոչի»։

[2] Առաջինը Մոսկուայում 1860 թուին, երկրորդը Պետերբուրգում։

[3] Մխիթար Այրիվանեցի, Նորագիտ արձանագրութիւն եւ երկեր․ Երուսաղէմ․ 1931։

ջին Թուականից ոչ յետոյ եւ մօտաւորապէս 68 տարեկան հասակում, որով եւ ծննդեան տարին կարող ենք 1222 թուականը նշանակել: Յամենայն դէպս նա մասնակից չէր ընդդէմ Անաւարզեցու կազմուած ձեռնարկին 1295 թուին որ անկարելի կը լինէր, եթէ կենդանի լինէր, իբրեւ մօտ անձնաւորութիւն Պռոշեանց տան, որի ներկայացուցիչ իշխանները Օրբէլեանների հետ ներկայ էին[1]):

Նորա հնագոյն գործը պիտի համարել Ճառընտիրը, գոնէ սկզբնաւորութեան տեսակէտով, թէեւ միեւնոյն ժամանակ նա զբաղուած էր եւ իւր Ժամանակագրութեամբ, ինչպէս կը տեսնենք քիչ յետոյ: Մխիթարի Ճառընտիրը մեր գրչութեան արուեստի առաջնակարգ երեւոյթներից մէկն է, ոչ իւր արտաքին ճոխութեամբ կամ գեղեցկութեամբ, այլ հարուստ բովանդակութեամբ: Տարաբաղդաբար վերջից պակաս է. ոչ միայն վերջին գլխաւոր յիշատակարանը չկայ, այլ եւ ձեռագրի մասեր: Բայց այժմ էլ մի պատկառելի գործ է, 1118 թերթանոց, 35,5×24 սմ. մեծութեամբ, երկսին՝ իւրաքանչիւրը $28^{1}/_{2}\times9{,}8$ սմ.: Նիւթը թուղթ է, շատ տեղ փափկած, կարկատուած: Գրուած է շեղագրին մօտ անցման բոլորգրով Մխիթարի ձեռքով (պատկ. 161)[2]): Սարգիս անունով մի գրիչ լուսանցքներում պարզ, միայն կինեվարիումով զարդեր ունի (պատկ. 162–163), նշանակելով երբեմն իւր անունը «զՍարգիս գրիչ առ Քս. յիշեայ» 723բ., բայց առանց մասնակցելու գրչութեան: Արդեօ՞ք սա այն Սարգիսն է, որին Յովհաննէս Փառնեցին ուղղել է իւր խրատական գրութիւններից մէկը, ասել չենք կարող: Մասնակից չէր գրչութեան նաեւ Ստեփանոս սարկաւագ, որի անունը Մխիթարի եւ Սարգսի հետ յիշուած է 270բ. առանձին առանձին բոլորակների մէջ «զՍարգիս տր. յիշէ», «Ո տր. Մխ. վդ. յիշէ ի տր.», «զՍտեփանոս սարկաւագ յիշէ ի տր.»: Մի այլ տեղ՝ 74բ. դարձեալ լուսանցքում, բոլորակի մէջ գրուած է. «Վանական վդի. աւրինակեալ է», ժամագրքի վերնագրի դիմաց («Գիրք աղաւթից, զոր արարել սբ. հարցն Սահակա եւ Մեսրոպա»), որ



ՊԱՏԿԵՐ 161.

---

[1]) Աւելի մանրամասն հիմնաւորում այս մտքերի տե՛ս մեր վերոյիշեալ աշխատութեան § 7:

[2]) Ձեռագրի համառօտ նկարագրութիւնը տե՛ս մեր Գրչութեան Արուեստը Գ. § 101. իսկ բովանդակութեան մասին Տաշեան. Ցուցակ. 548:

նշանակում է, թէ Մխիթարի կամ նորանից առաջ գըրուած օրինակը կատարուած էր Վանական վարդապետի ձեռքով: Այդ նկատողութիւնն էլ գրուած է Մխիթարի ձեռքով: Ընդարձակ յիշատակարան գրչի կողմից չունինք, այդ վերջում կը լինէր, գուցէ մանրամասնութիւններով Պռոշ իշխանի եւ նորա տոհմի, վանքի եւ իւր անձի մասին, որ ընկած է: Բայց բազմաթիւ են մանր յիշատակարանները (տես Յաւել. Գ. 7), որոնք ցոյց են տալիս, թէ գրիչն ու ստացողը Մխիթարն է: Ահա դոցանից մի քանիսը. 7բ. Յովհաննու աւետարանի վերջում. «Աւգնեայ յս. եւ ողորմեայ տր. Մխիթար վդիս., գրչողիս եւ ստացողիս ածաշունչ. սք. կտակիս յառաջին աստիճանիս». Գործոցի վերջում. 40ա. «Որոց աղաւթաւքն (s!) ողորմեսցի Քս. ած. տր. Մխ. վդիս. գծողի եւ ստացղի»: 763ա. «Ահնել է ած., որ ահնէ. զտր. Մխ. վդ. ծոպտիչ գրոցս»:976ա «քս. ած. քաւիա զմիղս տր. Մխ.վդիս.»:Ուշադրութեան արժանի է գաւառաբարբառի ազդեցութիւնը վերջին յիշատակարանի մէջ, որ նման է Տփխիսի Հաւլաբարցոց բարբառին, իսկ նրանք մասամբ Երեւանից են այնտեղ գաղթել[1]):

Չունինք գրչութեան թուականը, բայց կարող ենք որոշել գրութեան մօտաւոր ժամանակը. Պատարագի արարողութեան «Գոհութիւն եւ փառաբանութիւն» քարոզի մէջ յիշուած են ժամանակակից կաթուղիկոսի, հայ եւ վրացի թագաւորների անունները. 79ա. «եկեղեցո իւրում սրբո եւ ա. ուղղափառ եպ. հայրապետին հայոց տն. Յակ. եւ մերո արհի եպիսկոպ. տր. Մխ., որ զպատ: Եւ վս. զաւրութե. եւ յաղթութե. թագաւորաց քրիստոնէից եւ իշխանաց բարեպաշտից. քազաւր արքահին Լեւոնի եւ Դեմետրէի. եւ ա. զօրագլխաց եւ զաւրաց նոցին. ազատութի. եղբարց»...: Կաթուղիկոսի անունը յիշուած է նաեւ «Ասացուք»ի մէջ. «Վս. հայրապետին մերո տն. Յակոբա կենաց եւ փրկութե. զտր...»:

Յակոբ Կլայեցու կաթուղիկոսութեան տարիներն են 1268—1287, Լեւոնի թագաւորութեանը 1270—1288 եւ Դեմետրէինը 1272—1289. ասել է, թէ ձեռագիրը գըրուած է 1272—1287 թ. թ. մէջ[2]): Այս վկայութիւնից պարզւում է նաեւ, որ Մխիթար Այրիվանեցին արքեպիսկոպոս վարդապետ էր: Հայ եկեղեցու մէջ միջին դարերում «վարդապետութիւնը» մի տեսակ գիտնական աստիճան էր, որ ստանում էին աւագագոյն վարդապետ-վարժապետից, երկար տարիներ նորան աշակերտելուց եւ որոշ հմտութիւն եւ պատրաստութիւն ձեռք բերելուց յետոյ: Սովորական էր եպիսկոպոսների, երբեմն մինչեւ իսկ կաթուղիկոսների համար վարդապետ տիտղոսով կոչուիլ: Այս մասին առիթ կ'ունենանք Գլաձորի դպրոցին նուիրուած գլխի մէջ աւելի կանգ առնել: Այրիվանեցու ճառընտիրը անհերքելի ապացոյց է եւ մի ուրիշ իրողութեան, թէ նորա ժամանակ վանքը պէտք է ընդարձակ մատենադարան ունենար եւ ժամանակի հասկացողութեամբ գիտնական միաբաններ, որ հնարաւոր եւ հարկաւոր լինէր այդպիսի մի բազմաբովանդակ ժողովածու պատրաստել[3]):

Խօսել ճառընտրի մանրամասն բովանդակութեան մասին, մեր խնդրից դուրս է. բաւական է յիշել, որ նա տալիս է ոչ միայն Հին եւ Նոր Կտակարանների վաւերականները, այլ եւ անվաւեր գրքեր, որ համեմատաբար քիչ են յայտնի. Ժամագիրքն ու Պատարագի արարողութիւնը, ապա Փիլոնի եւ եկեղեցական հայրերի՝ Բարսեղ Կեսարացու, Գրիգոր Նիւսացու, Գրիգոր Աստուածաբանի, Եւագրի, Սեբերիանոսի գրուածքներն ու ճառերը



ՊԱՏԿԵՐ 162.

---

[1]) Գանձարանների մէջ երբեմն Մխիթարը Երեւանեցի է կոչւում. օր. № 75 Նժ. 45ա. «ի Մխիթարայ Երեւանեցոյ սրբոյ անապատաւորացն». կամ 90ա. որի Acr.–ն է «Երեւանեցին»: Մանրամասնութիւնները տե՛ս Յաւել. Գ. 7:

[2]) Այս թուերի ճշգման փաստերն ու վկայութիւնները տե՛ս մեր «Մխիթար Այրիվանեցի» եւն. տետրակի մէջ. երես 4, ծանօթութիւնները:

[3]) Ընդարձակ մատենադարանի գոյութեան ապացոյցներ է տալիս եւ հեղինակի ժամանակագրութիւնը իւր բովանդակութեամբ եւ թարգմանական եւ հայ պատմագիրների յականէ անուանէ թուարկութեամբ (Հրատ. էմինի, 22—23): Նաեւ Ստեփանոս Սիւնեցու վկայաբանութեան մէջ օգտագործուած կամ յիշուած են որոշ աղբիւրներ, որ կորած են եւ որոնց մասին խօսք կը լինի քիչ յետոյ:

ևն.: Փիլիսոփայականներից հաղուագիւտ է Հերմեսի «Ած իմանալի աշխարհ» *գրութիւնը*, 1124*ա.*:

Կեսարացու «Ցղգս. գ. օրհա աւուրց, զոր ասաց ի զատկի տօնին», *ակս.* «Լուաք ի գրոց», *Ներքեւի լուսանցքում Մխիթարը նկատում է.* «գ. օրհայ գիրգս բ.



ՊԱՏԿԵՐ 163.

թարգմանչաց է յաւրինած, վս. որոյ ուրոյն են» 976*ա.*: *Եւագրի* «Ճ. օրքն (Հարիւրաւորքն) գ. երորդք. առաջին յաղթութիւք. ընդդէմ բանաստեղծիցն արտաքնոց». 1041*ա.*: *Լուսանցքում բոլորակի մէջ նկատում է՝* «Վարդան վարդապետի թարգմանել», *իսկ ներքեւի լուսանցքում* «նորաթրքմն»:

Ճառընտրի գրիչ «Մխ. վդ.»*ի եւ Ժամանակագրութեան հեղինակի նոյնութեան բազմաթիւ եւ անհերքելի փաստեր է տալիս նրանց որոշ մասերի համեմատութիւնը.* ա) *Թէ՛ այստեղ եւ թէ՛ այնտեղ Ս. Գրքի վաւերական եւ անվաւեր գրքերի ցանկը բերուած է նոյնութեամբ.* բ) *Ճառընտրի մէջ* 261*ա. լուսանցքում նշանակուած է նահապետների մի ժամանակագրութիւն, ճիշդ նոյն կերպով հաշուած, ինչպէս Ժամանակագրութեան մէջ (եր.* 33, 35, 36. *Էմինի հրատ.). օրինակ* «ՅԱդամա: Վշղէ: Մովսէս, Վպիզ.: Դեբովրիա: Տձէ Սամուէլ» *ևն.:* գ) *Ճառընտիր լուս.* 201*բ.* «Արտաշէս երկայնաբազուկ ամս խ. աստ Եսթեր. ի սորա Ե. ամին էլ Եզրաս դպիրն շինել զպարիսպն Եմի., որ եւ գրեց ի բերան զա. Հին Կտակարանսն շնորհելովն այ. եւ Ի. ամին էլ Նեեմի տակառապետն ուգնել Եզրի» *հաւասար է Ժամանակագրութեան (եր.* 39 *եւ* 40. *հրատ. Էմինի): Ուրիշ շատ նմանութիւնների հետ, որ միայն հեղինակների նոյնութեամբ կարելի է հասկանալ, կան երբեմն եւ տարբերութիւններ փոքրիկ. այդ ապացոյց է, որ դոցանից մէկը, ետ ու առաջ է գրել եւ փոփոխութեան ենթարկել նորանոր հաշիւներով եւ ճշդումներով.* դ) *Ժամանակագրութեան մէջ կայ հետեւեալ պարբերութիւնը.* «Կարգաւորութիւնք գրոց սրբոց, որք ստուգաբանեցան ի Սարկաւագ վարդապետէ եւ գրեցան յինէն ի տէր Մխիթար վարդապետէս պատմագրէս ի մին տուփ յաւուրս ՃՀ» *(եր.* 33). *Ճառընտրի մէջ էլ, արդա՛րեւ, Ս. Գրքի վաւերական եւ անվաւեր մասերը, դորա հետ եւ առաւօտեան ժամերգութեան եւ պատարագի արարողութիւնը մի ամբողջութիւն են կազմում,* 370 *թերթից բաղկացած, որ օրական* 2 *թերթից մի բան աւելի է գալիս, մի քիչ դժուար, բայց ոչ անկարելի յարատեւ ջանասիրութեան եւ իւր գործին անձնուէր գրչի համար: Թղթի կողման եւ ուրիշ տեխնիկական աշխատանքների համար, անշո՛ւշտ, ունեցել է իւր օգնականները: Իսկ եթէ Ժամագիրքն ու պատարագի արարողութիւնը չհաշուենք, կանոնաւոր չափ լաւ գրչի համար:*

Վերջապէս մի հանգամանք եւս, որ առաջին անգամ նկատել է Մեսրոպ վարդապետ (այժմ արքեպիսկոպոս) Տէր Մովսէսեան[1], *այլեւս կասկածի տեղիք չի թողնում Ճառընտրի գրչի եւ Ժամանակագրութեան Մխիթարների նոյնութեան մասին. Ժամանակագրութեան մէջ* «Կաթուղիկոսք Հայոց» *հատուածում (եր.* 16) *Մխիթարը Լուսաւորչի եւ նորա տոհմի կաթուղիկոսների համար գործածում է* «սուրբ», *իսկ մնացածների համար* «տէր» *տիտղոսը: Այս երեւոյթը բացատրւում է Ճառընտրի Երկրորդ Մնացորդաց վերջում գրչի հետեւեալ նկատողութեամբ.* «տն. Սաակա կաթողիկոսի՝ զմնացորդս յետ ա. մգէիցն է թարքմանել, որ կարդացէ զաւրինակս զայս, աղաւթս արասցէ ի վերա սրբոյն Սաակա կաթողիկոսի. մինչեւ ցՍաակ սբ. ասին: Իսկ անտի եւ այսր տր.»:

Մեզ կը մնայ Ճառընտրի հետ կապուած մի կարեւոր խնդիր եւս պարզել, որ բանասէրներին այլեւայլ բացատրութիւնների առիթ է տուել եւ ոմանց մոլորու-

---

[1] Istoria Perevoda Biblii. S. P. 1902, 97:

թեան մէջ ձգել: Վաւերական եւ անվաւեր գրքերի ցանկը 369բ.[1]) բաղկացած է չորս հատուածից, որոնցից երկրորդը՝ «Սրբոյն Կղեմա, եթէ ո՞ր գիրք ընդունելի են» վերնագրով՝ վերջանում է «Զայս ես եւ Անանէ գրեցաք ի վիմի քաղաքի, որ եկեղեցի աւրհնեցաք»: Աւելորդ ենք համարում մի առ մի մէջ բերել այս վկայութեան հետ կապուած զանազան ենթադրութիւններն ու կարծիքները[2]). Էականն այն է, որ «ես եւ Անանէ» խօսքերը գիտնականներից ոմանց կողմից կապուել են Այրիվանեցու անձի հետ: Մոլորուածներից վերջինը մենք ենք, որ մեր «Մխիթար Այրիվանեցի» աշխատութեան մէջ նոյն միտքն էինք պաշտպանել: Գրուած լինելով Ն. Նախիջեւանում, տարաբաղդաբար, գտնել չկարողացանք Մեսրոպ վ. Տէր. Մովսիսեանի վերոյիշեալ գիրքը, որի եզրակացութիւնը Տաթեւացու վկայութեան վերայ հիմնուած, թէ «Ia i Anania» ia ne moget otnositsya k Mhitarou (եր. 244): Մենք կարող ենք այժմ նոր եւ աւելի հին փաստեր աւելացնել, որոնք պարզում են, թէ յիրաւի, այդ խօսքերը ոչ մի կապ չունին Մխիթարի անձի հետ, այլ նորա աղբիւրի խօսքերն են: Էջմ. № 4166 ձեռագիրը՝ Տաթեւի նախկին № 55, Պատճառոց Գիրքը ոչ ուշ քան ԺԳ. դարի գործ, բայց հաստատուն կերպով 1346 թուականից առաջ՝ մի յետին ժամանակագրական նկատողութիւնից դատելով, ունի նոյն հատուածը իւր վերջաբանութեամբ[3]): Բայց աւելի կարեւորը Վարդանի վկայութիւնն է Հեթում թագաւորին գրած «Ժղլանք»ի մէջ, որ զանազան խնդիրների բացատրութիւններ են, մէկն էլ դրանցից «իսկ քանի՞ գիրք են Ածաշունչ» հարցի պատասխանը: Վարդանը մի առ մի թուելով Հին եւ Նոր Կտակարանի գրքերի անունները, ի վերջոյ աւելացնում է. «Եւ Կղեմ գրեալ է Ե. գիրք ընկալաք յեկեղեցի: Ես եւ Անանէ Դամասկացի: Ա. գիրք... («զՅակոբայ» պիտի լինի, փչացած է) զընթերցուածն ասէ:Բ. կանոնք առաքելոցն: Գ. բանքն Յոստոսի: Դ. գիրքն Դիոնիսեա Արիսպագացւոյ: Ե. զոր ես գրեցի զքարոզութիւն. Պետրոսի առաքելոյ»[4]): Նոյն ցանկը բերում է եւ Յակոբ Ղրիմեցին, Վարդանից առնելով եւ վերջին խօսքերը սխալմամբ կապելով Վարդանի անձի հետ[5]): Ուրեմն Մխիթարից առաջ այդ ցանկը յայտնի էր Վարդանին:

Մխիթարի երկրորդ աշխատութիւնը՝ Ժամանակագրութիւնը՝ ցամաք է, մանաւանդ առաջին մասում, որ անունների ցանկ է, խմբերի բաժանուած, Հրէից, Հայոց, Վրաց աշխարհիկ եւ եկեղեցական նահապետների, թագաւորների եւ կաթողիկոսների, հռոմէական եւ բիւզանդական թագաւորների, արաբ, սելջուկ եւ թաթար իշխանապետների, վերջաւորելով իրանից առաջ եղած ժամանակագիրների եւ պատմագիրների անուանացանկով, որոնցից եւ օգտուել է: Այս ցանկի մէջ կան հեղինակներ, որոնք դեռ գտնուած չեն:

Երկրորդ մասը բացառապէս Ս. Գրքի ժամանակագրութիւն է, որի որոշ մասերի զուգահեռը ունի եւ իւր ճառընտրի մէջ համապատասխան մասերի լուսանցքներում, որից եւ համեմատութեան օրինակներ բերինք քիչ առաջ:

Երրորդ մասը «վասն Հայաստանն ազգիս եւ աշխարհիս պատմութեանց են», կապելով եւ տիրապետող ազգերի հետ: Այս մասն է, որ փոքր ինչ հետաքրքրութիւն է զարթեցնում՝ իբրեւ քաղուածք եւ համեմատելի նիւթ նախընթաց հայ եւ հայերէն թարգմանուած ժամանակագիրների հետ, երբեմն միայն ԺԲ—ԺԳ. դարերի համար տալով փոքրիկ նորութիւններ, որ միայն Այրիվանեցուց գիտենք: Ցանկերի եւ ժամանակագրութեան վերջում եղած յաւելումների մասին խօսք եղաւ վերեւ, մանրամասնութիւնները կարելի է տեսնել մեր «Մխիթար Այրիվանեցի» եւն. աշխատութեան մէջ[6]):

Մխիթարի երրորդ պատմական-գրական արժէք ունեցող երկը Ստեփանոս Սիւնեցու վկայաբանութիւնն է: Մի երկրորդ վկայաբանութիւն եւս ունի գրած, յետնագոյն վկայութեան համաձայն. «Վարք երանելոյն Աղէքսանոսի մարդոյն այ.». սկս. «Աղէքսիանոս այ. մարդն», Արեգի Թ. եւ Մարտի ԺԷ., որ առանձին նշանակութիւն չունի[7]): Ստեփանոս Սիւնեցու վկայաբանութիւնը[8]) գրել է նա Վայոց ձորի Թանատեաց վանքի շինութեան եւ նաւակատեաց տօնի առթիւ, որին ներկայ է եղել ինքը, որպէս Պռոշեանց տան եպիսկոպոս, նաեւ յատուկ շարական գրել, որ դեռ յայտնուած չէ: Վանքի արձանագրութիւնների եւ Օրբէլեանի վկայութեան համաձայն շինութիւնը պիտի նշանակել ՉԻԲ—ՉԻԸ թուերին. Նաւակատեաց տօնն, ուրեմն, վերջին թուականին, երբ գրուած է վկայաբանութիւնը եւ ընծայուած հեղինակի կողմից «վանաց սրբաժողով եղբայրութե.»: Մենք այն կարծիքն ունինք, թէ նոյնիսկ վանքի շինութեան արձանագրութեան հեղինակը Մխիթարն է[9]): Վկայաբա-

---

[1]) Հրատարակել է Կ(արապետ) Վ(արդապետ), Արարատ, 1895. 408, բայց ուղղագրական եւ վերջին տողի սխալ ընթերցումներով (տե՛ս Յաւել. Գ. 8):

[2]) Հանդ. Ամս. 1891, 161—167, Հ. Գալէմքարեանի յօդուածը: Հ. Ներսէս Ակինեանի յօդուածը, Հանդ. Ամս. 1907 242: Mesrop Ter-Movsisian. Istoria Perevoda Biblii. S. P. 1902: Ուրիշ գիտնականների եւ հեղինակների եզրակացութիւնը. 238 եւ շար. 244:

[3]) Ձեռ. էջմ. № 4166. Տաթեւի նախկին № 55, 125բ. «Բռ. ԹՃ. եւ կա. ամով յառաջ քան զհայ թուականն շինեցաւ գեղաքաղաքն Գառնի ի Գեղամայ եւ ի Գառնկոյ դռ. ծճ. հդ. տարի է մինչ ի յայսօր է թիւն ՁՂԵ»:

[4]) Ձեռ. էջմ. № 2544, 139ա.:

[5]) Ձեռ. էջմ. № 1461, 182բ.:

[6]) Եր. 14—15. § 7:

[7]) Ձեռ. էջմ. № 145: Ներքեւի լուսանցքում. «Մխիթար վրդ. Այրիվանեցին է գրել զպատմութիւնս զայս. եւ զիս յիշեա վս. Այ. աղաչեմ»:

[8]) Հրատարակուած մեր «Մխիթար Այրիվանեցի, նորագիւտ արձանագրութիւն եւ երկեր» աշխատութեան մէջ, 17—23:

[9]) Անդ՝ 9:

նութեան որոշ մասերն ունին Օրբէլեան, Գանձակեցին եւ Կաղանկատուացին: Օրբէլեանը իւր ամբողջ նիւթը բառացի կամ ըստ իմաստի քաղել է Մխիթարից, իսկ սա թէեւ ծանօթ վերջին երկուսին էլ, եւ նոյնիսկ հետեւած Կաղանկատուացուն Սիւնեցու ժամանակը բնորոշելիս, բայց վկայաբանութեան աղբիւրը Կաղանկատուացին չէ, առաւել եւս Գանձակեցին, այլ մի աւելի հին «սկզբնական» աղբիւր, որից օգտուել են Կաղանկատուացին եւ Մխիթար: Յայսմաւուրքների մէջ բացի այս «սկզբնական» աղբիւրից, եղել է նոյն վկայաբանութեան մի ուրիշ խմբագրութիւն, որի մէջ Սիւնեցու եպիսկոպոսական ձեռնադրութիւնը կապւում է Բարդէն կաթուղիկոսի հետ, որ Մխիթարն իրաւամբ սխալ է համարում․ այդ խմբագրութիւնը կատարուած է Շնորհալուց յետոյ[1]): Այս խմբագրութեան մէջ չկայ Սիւնեցու եւ Սմբատ Բագրատունու վիճաբանութիւնը եւ դորան կից կայսեր հետ խօսակցութիւնը, բայց նկատելի է նորա հետքերը Մխիթարի կազմած վկայաբանութեան մէջ: Իւր հերթին Մխիթարի այս վկայաբանութիւնը ոչ միայն աղբիւր է եղել Օրբէլեանի համար Ստեփանոս Սիւնեցու վկայաբանութիւնը գրելիս (Գլ․ ԼԲ), այլ եւ այստեղից է առել իւր ծանօթութիւնները նախարարական եւ եպիսկոպոսական բարձերի եւ աթոռների դասաւորութեան նկատմամբ եւ ոչ անմիջական աղբիւրներից, թէեւ յիշում է նրանց անունը:

Պատմական–ժամանակագրական տեղեկութիւնների համար Մխիթարն օգտւում է մեր պատմագիրներից: Կաղանկատուացու մասին խօսք եղաւ արդէն: Նորա հետեւողութեամբ է բնորոշում Սիւնեցու հանդէս գալու ժամանակը, ինչպէս եւ հայ նախարարների ութ հարիւրով եւ չորս հարիւրով Նախիջեւանում եւ Խրամում այրելը[2]): Սամուէլ Անեցուց է առել Դուինի նուաճումը արաբների կողմից եւ երեսուն ու հինգ հազարի գերեվարութիւնը[3]), Դուինի աւերումն ու վերստին շինութիւնը համապատասխան է Ղեւոնդին[4]), Դուինի առումն ու վրէժխնդրութիւնը Գէորգի Գ․ի կողմից առել է Վարդանից[5]): Բացի սորանից օգտուել է եւ այնպիսի աղբիւրներից, որոնք կորած են տարաբաղդաբար: Հայ նախարարների բարձերի կամ գահնամակի տեղեկութիւնն առել է մասամբ Ագաթանգեղոսից եւ Մեսրոպ երէցից, բայց առաւելապէս Ղեւոնդից, որ այդ մասով կորած է[6])․ եպիսկոպոսական աթոռների դասաւորութիւնը Սամուէլ Կամրջաձորեցուց, որ նոյնպէս կորած է[7])․ Ծադ ազգի մասին առել է Ուխտանէսից, որ Ա․ գլխի մէջ խոստանում է գրել[8]), այժմ կորած այդ մասով, բայց ամբողջութեամբ կար Մխիթարի ձեռքին․ վերջապէս Թոնդրակեցւոց ծագման ժամանակի մասին տալիս է տարբեր տեղեկութիւն, քան մենք գիտենք Ասողիկից եւ Գրիգոր Մագիստրոսից[9])․ այս էլ, գուցէ, քաղած լինի Ուխտանէսից:

Աղբիւրների այսպիսի ցուցումներով ինքնին կատարած կը լինենք եւ Մխիթարի այս երկի գնահատականը, եթէ աւելացնենք նաեւ, որ իբրեւ ժամանակակից եւ ականատես, տեղեկութիւն է տալիս Պռոշ իշխանի Գեղարդի վիմափորների ծագման եւ Թանատեաց վանքի նաւակատեաց տօնի մասին: Բայց ունի եւ թերութիւններ ու սխալներ, որ մատնանշել ենք մեր վերոյիշեալ աշխատութեան մէջ (եր․ 14):

Մխիթարի Գանձերի եւ հեղինակի ձեռքով 1286 *թուին ժողովածու կազմելու եւ ապա Գրիգոր Խլաթեցու տուած տեղեկութեան մասին* 1386 *թուին, երբ նա այդ նպատակով Այրիվանք էր եկել, պատմել ենք մեր վերոյիշեալ աշխատութեան մէջ[10]): Գանձերից առանձին նշանակութիւն ունին երկուսը հայ ազգագրութեան եւ արուեստի պատմութեան համար, մէկը «վս․ ահութե․ նոր գրոց», միւսը «պատկերաց»: Առաջինը կապուած էր նորա կողմից Մաշտոցի մէջ մտցրած յատուկ կանոնի հետ[11])․* «Կանովն նորակերտ գիր ահնելոյ» *գլխաւոր աղօթքը Մխիթարի անունով է․ պէտք է ենթադրել, որ ամբողջութիւնը նորա կազմածը պիտի լինի, որ շատ չէ տարածուած ձեռագիրների մէջ․* «Աղթք․ զոր արրլ․ է Մխիթար վրդպի․ Այրիվանեցոյ» *․սկս․* «Տր․ Ած․ ամենակալ, հզօր եւ կարող յամենայնի», *ուր յայտնուած է հեղինակի եւ ժամանակակիցների հայեացքը գրքի նշանակութեան մասին․ ապա խնդրում է օրհնել* «զնիւթ մելանիս եւ զգրչութի․ գրչիս», «զստացողս եւ զգրօղս, զկազմօղս եւ զխնամօղս», «զնիւթ կտաւոց եւ վարշամակաց սոցա», «զտախտակ տառիս եւ պահարանին», «զկաշի կազմի սորա եւ զսեկ շարագուրի», «զնիւթ պղնձոյ, զմարգարտաց՝ արտաքին զարդու», «եւ արձանացիր ի վերա աղիւսաձեւ սափրիս» (ספר *–սէֆէր, սոփերք = գիրք): Գանձն սկսւում է* «Մեծապայծառ ցնծութք․», *որի մէջ հեղինակը ներբողում է գրքերը*

---

[1]) Անդ․ 9—13 Մխիթարի եւ միւս երեք պատմագիրների գրական առնչութեան մասին: վկայաբանութեան այս տարբեր խմբագրութեան մասին՝ եր․ 20:

[2]) Կաղանկ․ Շահնազ․ հրատ․ Փարիզ, 1860, 44 եւ 46—47 համեմատել վկայաբանութեան, եր․ 17, երկրորդ պարբերութիւնը եւ երրորդի առաջին տողերը:

[3]) Սամուէլ Անեցի, էջմ․ հրատ․ Տէր Միքելեանի ձեռքով, 80․ վերջին պարբերութիւնը հմմտ․ վկայաբանութեան․ 19, Դուինի աւերման տեղեկութեան հետ:

[4]) Ղեւոնդ, Եզեանցի հրատ․ Ս․ Պետերբուրգ, 36, Դուինի աւերումն ու վերաշինութիւնը Աբդլ–Ազիզի ձեռքով հմմտ. վկայ․ 19․ երկրորդ պարբերութեան հետ:

[5]) Վարդ, 161, 162, հմմտ․ վկայաբանութիւն, 19:

[6]) Տես եւ Ալիշան․ Այր․ 423:

[7]) Կամրջաձորեցու այս երկի մասին յիշում է եւ Օրբէլեան, 24/25, բայց Մխիթարի ազդեցութեան տակ:

[8]) Ուխտանէս, (էջմ․ի հրատ.) 14: Ծադերի մասին տես Ադոնցի յօդուածը․ Հանդ․ Ամս․ 1912, 258:

[9]) Ասողիկ, (Շահնազ․ հրատ․) 147: Կ․ Կոստանեան․ Գրիգոր Մագիստրոս 153:

[10]) Մխիթար Այրիվանեցի եւ նորագիւտ երկեր, 5—8:

[11]) Ձեռ․ էջմ․ № 3987, 228ա․:

որպէս հարսի (եկեղեցի) զարդարանքի մասեր, թուելով նրանց անուններն ու գործածութեան տեղը.

Խընդա խորանդ լուսոյ, խորհրդարանդ Աստուծոյ
Ընկալ զընծայս խորհրդո՝ զգիրս աւրինաց հաւատոյ։
Սա տարփ զատոյ քոյդ միջոյ եւ շաղք հերաց քում հիւսոյ.
Ոսկի խնձոր խաղալոյ եւ վարդ ծոցոյդ յարակայ։
Իսկ այս կտակ նոր ուխտի, ներկեալ արեամբ Յիսուսի,



ՊԱՏԿԵՐ 164.

Այս քեզ շարոց մարգարտոյ եւ զումարտակ քում զըլխոյ.
Նոյն մեհեանդ քում անթոյ եւ բազկալար զաստակոյ.
Սա մատանի քում կընքոյ եւ գինդ գեղոյ ականջոյ,
Սա դամռանկի քում գլխի եւ Սարասխի ճակատի.
Ջառքաշ խիլայ վերն յարկի բեհեզ հաջաղ պարխակի.
Հանդերձ նուրճ հալուզի եւ պարեզատ չուշթարի։

Սա զարդ անձինդ գովելի բիւրապատիկ
խիլայի·
Որ ուրըստաուր փոփոխի ըստ խորհըր-
դեան քում տանի,
Երկըրպագեալ խիլայութին, որ գայ առ
քեզ հեզաբար[1]*)*:

Միւս գանձը «Մին միածին հաւր որդի» *նուիրուած է նորակերտ պատկերների օրհնութեան, որի մէջ տեղեկութիւն կայ որմանկարչութեան եւ պատկերագրութեան մասին: Առաջին հերթին Յիսուսի եւ Աստուածածնի պատկերները, որոնց նախատիպը առաքեալների ձեռքով բերուած է Հայաստան, ապա Մանուէլի պատկերը, երկու կողմից Միքայէլ եւ Գաբրիէլ հրեշտակապետներով, ի վերջոյ բոլոր սուրբերն ու արդարները·*

Ներկարագրեալք ի դեղոց յեկեղեցիս արդարոց
Այլ եւ ի տիպ տախտակաց կենդանագրեալ
նաղաշաց:

Մխիթարի կեանքն ու գործունէութիւնը ամփոփելու համար մեզ կը մնայ յիշել եւ նորա առանձնութեան քարայրի շինութիւնն ու ժայռի վերայ փորած արձանագրութիւնը (պատկ· 164)· այդտեղ նա յայտնում է, որ շինել է այդ անապատը իբրեւ տեղի անդրաղ աղօթքի եւ ընթերցման· խնդրում է յիշել «զիշխանն մեր Պռաւշ եւ զաւրինել զաւակս նորա»: *Թուական նշանակում է ՉԼԸ, որ ըստ Մխիթարի հաշուի հաւասար է Քրիստոսի 1291 թուին, տառերի գլխի ՊԿԹ տարուան, սկիզբը հաշուելով 423 թուականից, Հայոց Եկեղեցու հաստատութեան կամ Լուսաւորչի ՋՁԵ, սկիզբը հաշուելով 307 թիւը, եւ Ադամի 6439 թուին, ստեղծագործութիւնն ընդունելով 5198 տարի առաջ Քրիստոսից, Սարկաւագադիր կամ Փոքր Թուականի ՄԶ (=206) թուին, իւր կեանքի 67-րդ տարին: Այս թուականութիւնը համեմատ է իւր ժամանակագրութեան*[2]*)*: *Քարայրը գտնւում է վանքի պարսպից դուրս, դէպի արեւմուտք լերան գոգում, գեղեցիկ տեսարանով դէպի Ազատ գետը եւ դիմացի լեռնալանջերը:*

Մխիթարի կրտսեր ժամանակակիցն էր Սարգիս կուսակրօն քահանան «ի մեծահռչակ սբ· ուխտէն Այրիվանից», *որ ստացել է մի աղօթամատոյց (Սաղմոսարան) Հաւուց Թառի Գրիգորի գրչութեամբ·* «Ի թվ· Չխէ (= 1298), յիշատակ իւրն եւ աշակերտաց իւրոց վարդին եւ Գորգա··· *(մի կամ երկու տառ փճացած)* ազգայնոցն եւ ծնաւղաց իւրոց»· 93*բ*·: *Մի ուրիշ փոքրիկ յիշատակարանից տեղեկանում ենք, որ գրքի ստացող Սարգիս քահանան բացի վերոյիշեալներից ունէր արեան մերձաւոր եւ ձեռնասուն մի ուրիշ աշակերտ Ասլան բէկ: Դժուար է ասել, թէ Մխիթարի ճառընտրի մէջ յիշուած Սարգիսն ու մեր Սաղմոսարանի ստացողը նո՞յն են, թէ ոչ· աւելի պակաս հաւանական է, որ Յովհաննէս Գառնեցու նոյնանուն թուղթընկալը լինի:*

Այնուհետեւ մօտ իննսուն տարի այլեւս տեղեկութիւն չունինք, աւելի ճիշդ, մեզ յայտնի չեն գրաւոր յիշատակարաններ կամ արձանագրութիւններ Գեղարդայ վանքի մասին, միայն 1387 թուին Գրիգոր Խլաթեցին ուխտ է գալիս եւ ձեռք է բերում Մխիթարի Գանձերի ժողովածուն, հեղինակի ձեռքով պատրաստուած 1287 թուին իւր խմբագրական նպատակների համար: Յայտնի է, որ Գրիգոր Խլաթեցին եւս Գանձասաց էր· նա ոչ միայն նոր Գանձեր է գրել կամ կափաններ աւելացրել, այլ եւ ուրիշների Գանձերը հաւաքել, խմբագրել:



ՊԱՏԿԵՐ 165·

ԶԱյրի վանուց անուն լըեալ
'Ի ընտիր գանձուցըս (Մխիթարայ) հանդիպեալ,

---

[1] Մեր Մխիթար Այրիվանեցի· 7—8:

[2] Մոսկուայի հրատ· 16, 42, 47, 60:

Եւ յայնմ աւրէ յոյժ ցանկացեալ,
Տեսլեան տեղւոյս ես տառապեալ:
Հէմ աստ եղեւ բաղձանս յանկեալ
Եւ տեսութեան արժանացեալ
Սուրբ գեղարդեան տեառնամըրխեալ
Եւ խաչերոյս աստուածընկալ·
Սուրբ խորանացս հիմնացեալ
Որ եւ երկնից են կիմաթեալ,
Եւ դամբարանք սուրբ հաւրս ընտրեալ,
Մխիթարայ շնորհաւք լըցեալ,
Եւ այլոց սըրբոց ճըգնազգեցեալ,
Որք յԱյրիվանս են հանգուցեալ,
Որոց լիցի մեզ մասնակցեալ
Ողորմուե· արժանաւորեալ[1]:

ԺԵ· դարի սկզբից յաճախում են մեր տեղեկութիւնները վանքի մասին մինչեւ դարի վերջը: Այս ժամանակ նշանաւոր է հանդիսանում Սիմէոն Այրիվանեցին, որի կենսագրականը տալիս է ՊՂԳ (= 1444) *թուին գրուած Ցայսմաւուրքի գրիչը,* «Ի մենաստանս Այրիվան, ընդ հովանեաւ հրաշափառ սուրբ լուսոյ մօր կաթուղիկէ սուրբ Աստուածածնին, ներկեալ արեամբ կենարարին սուրբ Գեղարդեանն եւ ամենայն սրբոցն, որ անդ հաւաքեալ կան»: *Սորա օրինակի տէրն էր* «աստուածահաճոյ եւ արդիւնական եւ մեծ վարժապետն Հայոց Սիմէոն, որ յայնմ ժամանակի փայլէր ի մէջ եկեղեցւոյ իբրեւ զարեգակն»: *Սիմէոն վարդապետն էլ իւր հերթին ընդօրինակել էր այն Ցայսմաւուրքից,* «զոր տէր մեր Ստեփանոս որդի մեծափառ իշխանին Իւանէին Որոտնեցւոյ եբեր ի Սսոյ յաստուածաբնակ ուխտն Եւստաթէի սուրբ առաքելոյն...» *եւ բերել տալով Արարատեան գաւառը* «բազում ծախիւք գրել ետ»· *ուրիշ յիշատակարաններ աւելացնում են,* «եւ հրաման ետ ամենեցուն նոյնպէս գրել»[2]:

Նորա անունով մնացած երկու արձանագրութիւն՝ Գեղարդում եւ Յոհաննայ վանքում[3] *ցոյց են տալիս թէ Սիմէոնը մի մի օրինակ այդ Ցայսմաւուրքներից նուիրել է այդ վանքերին: Գեղարդի արձանագրութիւնը գտնւում է Պապաքի վիմափոր ժամատան ձախ դասի սեան վերայ·*

Կ ? Սր նշան տրունական
Սիմեոն վրդ·ին / լեր պահապան
հոգոյ նր· / պատսպարան
եւ անցանացն քաւարան /·
որ ետ պարգեւս անանցական
եկղոյս· / սբ· Գեղդան
զայսմաւուրքս հրաշագան /
զարդարեալ բանիւ Ածկան
իւր յիշատակ ան/ընջական



ՊԱՏԿԵՐ 166·

եւ բխ· (բարեխաւս) միշտ յաւիտեան
Պայծառութի· տանից լըման
բոլոր ամ/աց հանդիսարան
զոր ստացաւ բ/ազում բաղձմամբ
ի զուարճու/թի· նորոդ մանկանց
բերըլ· տանէ...

---

[1] էջմ· № 178 Հատակոտորք:

[2] Ալիշան· Հայապատում...: Արարատ 1911· Ազուլիսի եւ շրջակայքի ձեռագրերը· Մ· Վ· Մախուդեան, 853, 1010: Ձեռ· էջմ· 94/3276:

[3] Յոհաննայ վանքի արձանագրութիւնը ՊՀԶ (=1427) թուականն ունի, մահուան նախընթաց տարին, ուր յայտնում է, թէ նուիրել է իւր «նորընծա Այսմաւուրքս սբ· կարապետիս», «որ քանի իմ գիրքս կայ, հանապազ զայս կարդան ի յատենիս»: Գրի առնուած միւս արձանագրութիւնների հետ մեր կողմից:

Այստեղ ընդհատւում է արձանագրութիւնը, բայց պարզ է, որ շարունակութեան մէջ պիտի լինէր օրինակի Տաթեւից, գուցէ եւ Սսից բերուած լինելու հանգամանքը։ Վերեւի ձեռագրի յիշատակարանից իմանում ենք, որ նա վանքին այս Ցայսմաւուրքի հետ նուիրել է նաեւ մի պատուական Աստուածաշունչ եւ մի Տօնական։ Ուրիշ առթիւ գրել ենք այս մարդու գրասիրութեան եւ գրչութեան տարածման մէջ ցոյց տուած ջանքերի մասին[1])։ Նա ծագումով Տաթեւից էր եւ Գրիգոր Տաթեւացու աշակերտ· յետոյ միայն անցել էր Այրիվանք, Եղուարդ եւ ի վերջոյ Ջաղավանք։ Տաթեւի շրջանից մեր ձեռքն է հասել նորա գրած Մաշտոցը ոմն Երեմիա սարկաւագի համար ՊԽԹ (= 1400) թուին։ Յիշատակարանի մէջ յիշում է Սմբատ եւ Բուրթել Օրբէլեաններին եւ ակնարկում Տաթեւացու գործունէութեան եւ Լանկթամուրի արշաւանքի մասին (Ցուց· Բ· 47· պատկ· 164)։ Սորանից կամ նորա ձեռքով գրուած մի ուրիշ Մաշտոցից պէտք է ընդօրինակուած լինի Ձեռ· էջմ· № 1078/1088, «ի լաւ եւ ի ընտիր յաւրինակէ Սիմէոն րաբունապետին» (Ցուց· Բ· 38, Ձեռ· էջմ· № 1075/1088· 93ա)։ Նորա վարժապետական գործունէութեան մասին Գեղարդում տեղեկութիւն չունինք, քան ինչ հաղորդեցինք վերեւ, բայց «Այրիվանեցի» մականունն ինքնին փաստ է, որ նշանաւոր է հանդիսացել հէնց այդ վանքում։ Աւելի իրազեկ ենք նորա տասնամեայ վարժապետական գործունէութեան Եղուարդում 1404–1414 թ· թ· «բազում կրաւնաւորս եւ աշակերտեալ մանկունս եկեղեցւոյ ժողովեալ յուսուցանել զհինն եւ զնոր մատեան աստուածաշունչ գրոց զնուրբ եւ զարտաքին փիլիսոփայութիւն ամս տասն», տեղի իշխան Ազիզբէկի եւ նորա Աւագ եւ Զաքարիա որդիների հովանաւորութեան տակ[2])։ Նորա աշակերտներից Գրիգոր դրիչ եւս 1415 թուին կենսագրական տեղեկութիւններ է հաղորդում Սիմէոնի Եղուարդի շրջանի գործունէութեան մասին· «եւ դաս հրամեյ· բզմ· ժկ· ր· (որպէս) ի քս·է շնորհեալ մեզ։ Եւ ապա ի խնդիր ամ· ածաշունչ գրոց եւ մեկնչաց· եւ ստացեյ· բզմ·, զոմանս գրելով եւ զոմանս գրել տալով ընչուք, որ եւ զայս բժնից· մեկնիչս (հաւանօրէն Լամբրոնացու) ստցաւ· ի վայելումն անձին իւրյ· եւ աշկրտաց իւրոց»[3])։ Հէնց այս Գրիգոր դրիչը դարձեալ գրել է 1411 եւ 1414 թ· մի մի Տաթեւացու Հարցմանց գիրք «ի գաւառս Արարատեան ի գեղաքա-



ՊԱՏԿԵՐ 167·



ՊԱՏԿԵՐ 168·

---

[1]) Տե՛ս մեր յօդուածը· Բանբեր, էջմ· գիտ· ինստիտուտի, 194—195։

[2]) Ալիշան· Հայապատում· 569։

[3]) Ձեռ· էջմ· № 94/3276։

ղաքս յԵղիվարդ ի վանքս սբ· Յակոբ, առ ոտս երջանիկ պետին Սիմէոն րաբունի»։ *Այստեղ է եւ Մատթէոս նշանաւոր գրիչը, դեռ եւս իբրեւ գրոց աշակերտ, որի մասին խօսք կը լինի։ Յովհաննէս Երզնկացին գրել է* «առ ոտս Սիմէոնի» *նոյն տեղում* № 1215 *էջմ·ի ձեռագիրը։ Իւր կեանքի վերջին տարիները նա հաստատուած էր Կոտայքի Զաղավանքում, ուր եկեղեցական եւ վանական բարեկարգութիւններ է մտցնում, շինարարութիւններ կատարում. մեռել է 1428 թուին*[1])։

Թովմա Մեծոփեցին պատմում է իւր ուսուցչի՝ Մեծոփայ վանքի վանահայր Յովհաննէս վարդապետի մահուան մասին 1410 թուին, Հաւուց Թառում, ուր եկել էր նաեւ «երկիր պագանել աստուածամուխ գեղարդեանն»[2])։ *Ապա 1423 թուին Դաւիթ քահանան գրում է մի Մաշտոց, սկիզբը* «ի նախադրական սուրբ ուխտն ի մեծ Այրիվանս եւ կատարումն յաստուածապահ գիւղաքաղաքիս Գառնի»[3])։ *Փարիզի Ազգային մատենադարանի հայ ձեռագրերից մէկը,* «մանրումունք որ կոչի տետր» *այսինքն խազգիրք, գրուած է 1429 թուին Գրիգոր վարդապետի ձեռքով,* «ի գաւառս Գառնոյ, ի յանապատս, որ կոչի Մանուէլի, որ է սիրտ լերինս Այրիվանուց, յորում բազմեալ կայ Գեղարդն ածամուխ։ Ընդ հովանեաւ սբ· Ածածնիս եւ սբ··· (*մի բառ փճ· կաթուղիկէս* ?) եւ սբ· ճգնաւորաց սբ· գերեզմանացս· ի յառաջնորդութե· սբ· մենաստանի Ստեփանոս միայնակեցիս»։ *Յիշատակարանի մէջ պատմուած է Լանկթամուրի որդու Շահռուհի արշաւանքը, Դաւրէժի առումը եւ թուրքմանների գերեվարութիւնն ու հալածանքը։* «Բայց այս միայն էր բարուի·, զի սպանումն եւ արիւն ոչ արար· եւ զթուրքման ազգն ցիրուցան արար ընդ երեսս երկրի· եւ ազգս քրիստոնէից փախստական ի ծերպ եւ ի ծակ մտած եւ յիւրեանց բնակուէն· ելած· եւ փախուցել· թուրքմանն,թալանեաց զաշխարհս Հայոց· զհացն եւ զգինի հանին եւ մեծ աւերուի· ածին աշխարհիս»։ *Գրիգոր վարդապետը Այրիվանքի միաբաններից չէ, այլ* «փախստական եկաք ի յանապատս· եւ ամիս երկու մնացաք ի տեղ· եւ մենաբանիս հայրն իւր միաբանաւքն ծառայութի· ոչ սակաւ արարին, զի բզմ· աշխատանք կրեցին ի վր· մեր, եւ խնդրեցին զայս մանրուսմունս»· *ապա խնդրում է յիշել Այրիվանքի միաբաններին,* «զՍտեփանոս միայնակեացն··· եւ զՍտեփանոս աբեղայն··· զԱռաքել կրաւնաւորն եւ զԱնտոն ճգնաւորն»։ *Գրիգոր վարդապետի ուսուցիչն է Գէորգ վարդապետ եւ իւր «որդիացեալն է» Յովհաննէս կրօնաւոր*[4])։

Պերլինի արքայական մատենադարանի հայ ձեռագրերից № 37 *չարականը նոյնպէս գրուած է* «ի սբ· գերահռչակ··· սբ· ուխտս Այրիվանքս ի սկիզբն եւ մայրն վանորայից, ընդ հովանեաւ սքանչելագործ տիգին եւ արեամբ ներկեալ անմահին յի· սբ· գեղարդեանն»։ *Մաղաղաթը իւր ձեռքով գնել է եւ գրել Մատթէոս եւ ապա նուիրել իւր «ձեռնասնունդ» աշակերտ Յովհաննէս աբեղային, իսկ սա ծաղկել է տուել «ոսկեճաճանչ երանկաւք եւ ազգի ազգի գունաւք»։ Ընտիր է եղել եւ օրինակը՝ Սսոյ առաջին իմաստունների եւ վարժապետների օրինակից,* «զոր էր գրեալ ձեռամբ Յովհաննէս եպիսկոպոսի Անոյ մականուն Ոսկեփոր վերաձայնելոյ»[5])։ *Ձեռագիրը գրուած է ի թուականութեանս հայոց ՊՂԶ։ Զարմանալի է, որ Աթոռի փոխադրութեան առթիւ գումարուած ժողովում Գեղարդի վանքի կողմից ներկայացուցիչ չէ յիշուած, մինչդեռ այս ժամանակ ոչ միայն չէն էր, այլ եւ գրչութեան մնացորդներից դատելով, պայծառ վիճակի մէջ։*

Էջմիածնի մատենադարանի № 1005 *Նժ· Յայսմաւուրքը (Խաչիկ Ծ· Վարդապետի բերած) լաւ բոլորգրով, թղթի վերայ գրել է Մատթէոս գրիչ, որ ոչ այլ ոք է, բայց եթէ Պերլինի չարականի գրող Մատթէոսը· նա «գրոց աշակերտ» էր Սիմէոն Այրիվանեցու մօտ Եղուարդում, երբ Յովհաննէս Երզնկացին գրում էր 1413 թուին իւր ձեռագիրը։ Սաղմոսի օրինակը այս Մատթէոսն է նրան տալիս։ Գրոց աշակերտ Մատթէոսը յետագայում դառնում է նշանաւոր գրիչ, որ Եղուարդի շրջանում 1464, 1465 եւ 1469 թ· թ· գրել է մի մի ձեռագիր, վերջինը Մանուէլ Բ· Ագիրէկենցի համար։ Առաջնի նմանահանութիւնը տալիս է Ալիշան (Այր· 198) եւ համեմատութիւնը ցոյց է տալիս կատարեալ նոյնութիւնը մեր № 1005 Նժ·ի հետ։ Տարաբաղդաբար, ձեռագիրը թուականով յիշատակարան չունի, վերջից թափած լինելով, բայց գրուած է Գեղարդի վանքում Ներքեւի լուսանցքի (ժէ· տետր) հետեւեալ նկատողու-*

---

[1]) Ալիշան· Հայապատում· 569։

[2]) Թովմա Մեծոփեցի· (հրատ· Շահնազարեանցի, Փարիզ· 61։

[3]) Փիրղալէմեան, Նոտարք· 73։

[4]) Ըստ ձեռագիր ցուցակի Զօհրապի № 33, որ գտնւում է Պերլինում։

[5]) Verzeichniss der armenischen Handschriften. Dr. N. Karamianz. 30։ Յովհաննէս «Ոսկեփոր»ը գրել է եւ մի Աստուածաշունչ Մանուէլ Ա· եպիսկոպոս Ագիզբէկեանցի համար· նկարագրութիւնը Տաշեան· Ցուց· № 55, 1368–1375 բ·։ Տե՛ս եւ մեր Ագիբէկեանք, Բանբեր գիտ· ինստիտուտի, 193։

թեան համեմատ· «Քս· զտր· Աթանաս հոգին լուսաւորէ, զփակակալ սբ· Գեղարդեանն՝ որ բազում գթով ի մեզ կու գթա եւ զիւր ծնօղացն, ամէն»։ *Գրչի մի այլ անձի յիշատակութիւն·* «յիշեցէք ի քս· զսիրելի եղբայրս մեր զԱռաքելս, որ բազում սէր ցուցանէ առ մեզ», *նոյն պիտի լինի Գրիգոր գրչի յիշած Առաքել կրօնաւորի հետ, որ տեսանք 1429 թուին յիշուած։ Մատթէոս գրչի այս գործով Գեղարդի վանքի գրչութեան եւ մանրանկարչութեան արուեստի գնահատելի մի մնացորդ ունինք ձեռքի տակ։ Մեծ մանրանկարներ չունինք այստեղ, այլ լուսանցքի զարդեր եւ փոքր սկզբնազարդեր, բայց ճարտարապետական, պատկերագրական (պատկ· 165—168) եւ կենդանագրական ֆիգուրներով (պատկ· 169—173), ինչպէս եւ Թէոդորոս սարատելատի ձիաւոր պատկերով, ուշադրութեան արժանի եւ կարող վարպետի գործ· յատկապէս եղջերուն, մասամբ եւ առիւծը շատ սիրելի մոտիվներ են իրենց պէսպիսութեամբ, ինչպէս կը տեսնենք, ժամանակակից մի այլ նկարողի համար եւս այս վանքում։ Ձեռագրի ստացողն է Արթուխ Մահդասի միայնակեացը, որի ծնողներն են Էդիլշահ եւ Խէրիկ, հարազատ եղբայրները Խումար, Ջանիկ եւ Սահակ, իսկ քոյրերը Թանկիկ եւ Թաճմելիք, յաճախ կրկնուած վկայարանութիւնների վերջերում*[1])։



ՊԱՏԿԵՐ 169·



ՊԱՏԿԵՐ 170·

Յովհաննէս աբեղան, հաւանօրէն վերեւ յիշուած Մատթէոսի աշակերտը հայոց Ջէ (= 1458) *թուին,* «ի վանս որ կոչի Յայրիվանս (s!), ընդ հովանեաւ ամէնահեալ ս· լուսոյ մաւր Ածածնիս· եւ սբ· տիգիս ածամուխ սբ· Գեղարդեանս», «ի վայելումն անձին Յակոբքհի· եւ զաւակաց իւրոց» *գրում է մի Մաշտոց*[2])։ *Մի տարի յետոյ* «ի թվականութե· հայկազեան տումարի ՋԸ· թվի, եւ ի վշտաշատ ժամանակի, յորում նեղիմք յանաւրինաց եւ յանիրաւ պահանջողաց, ի թագաւորութեն· Վրաց Գաւրկոյ որդւոյ Ալէքսանդրէ եւ ի հայրապետութե· հայոց տն· Գրիգորի յաթոռ սբ· էջմիածնին,ի դանութե·Ջահան շահի որդւոյ Ղարա Ուսուփին» *Աստուածատուր Մահդասի աբեղայ քահանան Մատթէոս աբեղայի գրչութեամբ ստանում է մի Տարեգիրք, որ Լազարեան ճեմարանի սեպհականութիւն էր*[3])։ *Ձե-*

---

[1]) Ձեռ· էջմ· № 1005 Նժ·։

[2]) Ձեռ· էջմ· № 1016/1027· 173բ· (Ցաւել· Բ· 48)։

[3]) Այժմ էջմ· № 1159 (Լազ· № 9)· թուղթ, ընտիր բոլորգրով, երկսիւն, մեծ սկզբնազարդերով եւ լուսանցքի զարդերով· վերջին մեծ յիշատակարանը 551բ·, ամբողջ 555 թերթ։ Բովանդակութիւնը ճաշոցի հետ նաեւ Սաղմոս կրճատ, Տօնացոյց եւ երգերը (Ցաւել· Բ· 49)։

ռագիրը գրուած է «ի յերկնահանգէտ եւ ի գերահռչակ սբ· ուխտս Այրիվանս վերաձայնելոյ, ընդ հովանեաւ մաւրս լուսոյ սբ· Ածածնի· եւ հրաշափառ եւ երկնանման սբ· կաթուղիկէիս եւ ածընկալ սբ· նշանացս եւ արեամբ ներկեալ անմահին Ցի· սբ· գեղարդեանս եւ սբ· աջերոյս, Յովհաննու Մկրտչին, ձեռնադրողին Քի· եւ սբ· աջոյ Բարդողիմէոսի առաքելոյն եւ համաւրէն ամ· սրբոցս, որ աստ կան հաւաքեալ աւժակութք· (s!) հոգւոյն սրբոյ եւ կամակցութք· սբ· եղբարցս եւ բազմերախտ հոգւոյ հաւր մեր եւ վարժապետացն տր· Ներսեսի եւ ամ· սրբութեց· վարպետի տր· Յոհս· ծաղկողի, որ բազում երախտիք ունի ի վերայ մեր»: *Աստուածատուր քահանայի հայրն է Խոցադեղ եւ մայրը Հռիփսիմէ, հօրեղբայրը Յովանէս եւ եղբայրը Պռօշ: Ստացողի ըստ հոգւոյ հարազատ եղբայրն է Ստեփանոս նկարող, որ յայտնում է իւր կողմից, թէ* «վասն ջերմեռանդ սիրոյ նորա (*ստացող Աստուածատրի*), ծաղկեցի եւ նկարեցի եւ կազմեցի»: *Ստեփանոս Ծաղկողի արուեստը չի կարող Մատթէոսի հետ չափուել, բայց անարժէք չէ, յատկապէս լուսանցքի թռչունների, կենդանիների եւ սրբերի պատկերագրութեամբ եւ զարդերով: Բացի դրանից ձեռագիրն ունի մշակոյթի պատմութեան համար յատուկ արժէք նաեւ կազմի կողմից, որ, կարծում ենք, անաղարտ հասել է մեզ Ստեփանոսի ձեռքից դուրս եկած: Հաստ տախտակը կաշւով պատած, մի կողմը գեղեցիկ խաչ եւ միւսում հիւսկէն զարդարանք դրոշմած, 32×22×12 սմ.: Կազմի հնութեան արտաքին ապացոյցների հետ ունինք եւ ներսի կողմից կպցրած լաթի կտորը, որ կէս մետաքս* գեազի *է հին տեսակի: Այսպիսով տեսնում ենք, որ ԺԵ. դարում Այրիվանքը կատարելապէս ծաղկած վիճակի մէջ է. ափսո՛ս, աւելի մանրամասնութիւններ չգիտենք* «վարժապետացն տր· Ներսեսի» *եւ* «տր· Յովհաննէս Ծաղկող»*ի եւ* «Ստեփանոս նկարող»*ի մասին:*



ՊԱՏԿԵՐ 171·

Կայ եւ ստացող Աստուածատուր քահանայի եւ յետագայում եպիսկոպոսի ինքնաձեռագիր յիշատակարանը, որով թողութիւն է խնդրում նախ իւր վերոյիշեալ ծնողների եւ ազգականների եւ ապա «մաւրքրւերն խութլու խաթունին եւ քրւերն իմոյ Մարգարտին եւ Նարինին եւ հանգուցեալ քերցն իմոց Թանսուխին, խութլու խաթունին եւ Մարթային եւ եղբարցն իմոց Մարտիրոսին եւ աշակերտի Պետրոսին եւ Սարգսին»: *Գիրքը նուիրում է Հոռոմոսի վանքին* «սբ· Յովանիսին եւ սբ· Ածածնին դրանցն»: *Աստուածատուր եպիսկոպոսի այս նուիրատուութիւնը յետոյ՝ առանձին յիշատակարանով Սարգիս կաթուղիկոսի եւ Հոռոմոսի Գրիգոր եպիսկոպոսի կողմից հաստատուած են ՋԼԴ·* (= 1485) *թուականին: Չենք կարող ասել, թէ Գեղարդի նախկին Աստուածատուր աբեղան նո՞յն վանքի, թէ Հոռոմոսի վերայ եպիսկոպոս ձեռնադրուեց: Առաջին դէպքում նա պէտք է մեռած լինի դարի եօթանասնական թուականների սկզբին, որովհետեւ* 1475 *թուին արդէն Գեղարդի եպիսկոպոսն էր Տէր Յովհաննէս, իւր եղբայր նորընծայ Ստեփանոս կուսակրօն աբեղայի հետ, որ յետոյ յաջորդեց եպիսկոպոսական աստիճանով: Սրանք Պռոշեանց տոհմից էին*1):

Մխիթար Այրիվանեցու ճառընտրի 345*բ· ներքեւի լուսանցքում սեւ ֆոնի վերայ նկարուած է* «Ցի· Քի· ծառայ Յօհան» *խօսքերը, իսկ սորա տակը մի կնիք* «Քի· ծռ· /Ըստեփն / աբեղ», *որ կրկնուած է նաեւ* 346*ա· լուսանցքում, որոնք Յովհաննէս եւ նորա եղբայր Պռոշեաններ են: Կայ մի երրորդ կնիք եւս, բայց կարդալ չկարողացանք:*

Ստեփանոսին յաջորդեց Բարսեղ եպիսկոպոս դարձեալ նոյն տոհմից, 1493 *թուին*2):

---

1) Աստ· 123, 124, 125, 135:

2) Թորոս Աղբար· Սրուանձտեանի· 304:

Այս շրջանի, այսինքն ԺԶ· դարի գործ ենք համարում զոյգ, անթուական խաչարձանները, որ կցուած են տաճարի հարաւային պատին (պատկ· 174ա):

Այստեղ ընդհատում ենք դարձեալ մեր տեղեկութիւնները վանքի մասին մինչեւ ԺԷ· դարի սկիզբը:



ՊԱՏԿԵՐ 172·

1603 թուին Հաւուց Թառի եւ Խոր վիրապի Մանուէլ եպիսկոպոսի հետ յիշւում է եւ Գեղարդի Աստուածատուր եպիսկոպոսը իբրեւ կուսակից Մելքիսեդեկ եւ Դաւիթ կաթողիկոսների, որ անյաջող բանակցութեան մէջ մտան Սրապիոն Ուռհայեցու հետ Ջուղայում: Այս Աստուածատուր եպիսկոպոսը Հաւուց Թառի Մանուէլ եպիսկոպոսի եւ Մելքիսեդ կաթողիկոսի հետ Տաթեւից Սպահան գնացին Շահ Աբասին Երեւան հրաւիրելու, կամակից հանդիսանալով նորա որոշմանը: Իսկ մեծ գաղթի ժամանակ նա եւս Հաւուց Թառի Մանուէլ եպիսկոպոսի հետ փակուեցաւ Գեղարդի ձորի մի այրում, որտեղից ցած բերուեցաւ եւ սպանուեցաւ Ամիրգունայ խանի զօրքի կողմից[1]):

Յովհաննէս Վարագեցին 1604 թուին նորոգում է Մխիթար Այրիվանեցու մեծ Ճառընտիրը, Ղուկասի վերջում 29բ· գրելով իւր յիշատակարանը[2]): Այնուհետեւ 1629 թուին յիշւում է Յովհաննէս եպիսկոպոս Սրկղոնից: Այդ աւանը իւր եկեղեցիներով Պռոշեանց սեպհականութիւնն էր, Պռոշեանց բաժին Վայոց ձորի հետ (մի մասը Օրբէլեանների սեպհականութիւն էր) եւ Գեղարդի եպիսկոպոս էր: Ուշադրութեան արժանի է, որ յիշատակարանը թուագրուած է «ի կաթուղիկոսութեան սուրբ էջմիածնայ տէր Մելքիսեթի», մինչդեռ նա վախճանուած էր 1628 թուին Լեհաստանի Իլով (Լեմբերգ) քաղաքում: Երեւի, Սրկղոնքում դեռ եւս լսած չէին նորա մահը[3]): Սորա ժամանակ էր, երբ 1628 թուին, Պոլսում «Ձեռամբ Թոխաթցի Միքայէլի» գրուած մագաղաթի բոլորգիր աւետարանը յետին ստացող մահտեսի Յարութիւնը «եդ յիշտկ· ածամուխ սբ· Գեղարդայ իւր հոգւոյն եւ ծնօղացն»[4]):



ՊԱՏԿԵՐ 173·

Յովհաննէսի յաջորդն էր Դաւիթ վարդապետ Պռոշեանց տոհմից, որի առաջնորդութիւնն սկսւում է 1635 թուին. մեռնում է 1675 թուին[1]): Վերջերս Աշտարակից մատենադարանում ստացուած մի քայքայուած Յայսմաւուրքի գրութիւնը թուագրուած է ի մէջի այլոց եւ սոյն Դաւիթ եպիսկոպոսի անունով. «եւ աքոռակալութե. սբ. Գեղարդեանն Դաւիթ սրբազան եպսի., որդի կի-Սուլթանին, իր ամուսին Դերջանին, Ստեփանոս որդուն եւն., նուիրելով նաեւ արծաթի կանթեղ եւ հոգալով վառելու մշտական ծախսը (Յաւել. Ա. 118. պատկ. 142): Այս նորոգութիւնը յամենայն դէպս դրան շրջանակին եւ զարդարանքներին չի վերաբերում, որ աւելի հնագոյն արուեստի՝ սելջուկեանին զուգահեռ

---

[1]) Առաքել Դաւրիժեցի, (1896· վաղարշ·) 12, 17, 47—49: Շահ Աբասի արշաւանքն ու նորա հրամանով կատարուած արտագաղթը սրտաճմլիկ եւ աղեկտուր տեսարաններով նկարագրում են եւ յիշատակարանները· օր· Ձեռ· էջմ· № 519, 74ա·:

[2]) Ձեռ· № 944/1500, 29բ· «Վարագեցի Յովհաննէս կազող եւ կազմող սբ· մատենիս Թվ· ՌԾԳ ի սուրբ ուխտս Այրիվանք ընդ հովանեաւ գեղեցկաշէն սբ· Ածածնի տաճարին· ·»:

[3]) Տես Ցաւել· Բ· 7:

[4]) Ձեռ· էջմ· № 269/291:



ՊԱՏԿԵՐ 174ա.

ազատաց եւ մեծ ազգէ»[2]): Սորա ժամանակ, 1655 թուին, «Սուլէ որդի Թաղայի յազգէ Ջիբաղի ի քաղաքէն Թփխիսի» նորոգում է «գկաթուղիկէս» ի յիշատակ Բէ- գրոշմ են կրում, ինչպէս կարելի էր մակաբերել արձանագրութեան տեղից դատելով, այլ, հաւանօրէն, գմբէթին միայն: Միեւնոյն անձը նուիրաբերութիւններ ունի Սեւանում եւ ուրիշ վանքերում: Սորա յաջորդն էր եղբայրը՝ Ստեփանոս եպիսկոպոս, որ վախճանուեց 1679 թուին Երեւանում երկրաշարժի ժամանակ, ապա Դաւիթ փոքրը նոյն Պռոշեան տոհմից, որ ՌՃԽԵ (=

---

[1] Աստ. 137:

[2] Ձեռագիրը դեռ չի համարակալուած. յիշատակարանի համար պարտական ենք մատենադարանի վարիչ Սենեքերիմ Տ. Յակոբեանի սիրալիրութեան:

1696) թուին նորոգում է երկրաշարժից վնասուած վանքը, իսկ «ՌՃԽԸ դարբասին ձեռն տուինք»: 1689 թուին նորոգում է Գեղարդի պահարանը, իսկ 1698-ին Նոյեան տապանի տախտակի պահարանը[1]): Առաքելի որդի Գրիգորը Գեղրոն գիւղից 1699 թուին նուիրում է մի զանգակ այսպիսի արձանագրութեամբ.«Յիշատակ է Գեղրոնցի Առաքելի որդի Գրիգորին ի դուռն սուրբ Գեղարդին, Թուին ՌՃԽԸ»: Գեղրոն գիւղը գտնւում է Հրազդանի ափին, Քանաքեռից ոչ հեռու[2]):



ՊԱՏԿԵՐ 174բ.

Դաւիթ փոքրը վախճանուել է 1705 թուին եւ նրան յաջորդել է Դանիէլ վարդապետ, դարձեալ Պռոշեաններից, որի թեթեւ շինարարութեան արձանագրութիւնը ՌՃԾԷ Թուականից գտնւում է պարսպի մեծ դարբասի գլխին (Աստ. 75, պատկ. 174բ): Սորա ժամանակ վանքը Ռուսճուղի արեւելեան վաճառականներից (այսինքն Արեւելեան Հայաստանի հայերից) նուէր է ստանում ասեղնագործ եպիսկոպոսական մի գեղեցիկ Թագ իւր վակասով: Թագի մի երեսը Աստուածածինն է, մանուկ Յիսուսը գրկին (պատկ. 175), միւս երեսին յարուցեալ Յիսուսը մարգարտաշար կոթով բահը ձեռքին, իբրեւ պարտիզպան, Մագդաղենացի Մարիամ նստած գերեզմանի վերայ (Յովհ. Ի. 15), երկուսն էլ մարգարտաշար նիմբուսներով, դէմքերը վերին աստիճանի նուրբ եւ գեղարուեստական. պարտէզի դաշտը ծաղիկներով ծածկուած (պատկ. 176): Առաջին երեսի արձանագրութիւնն է «Թվ. ՌՃԿԴ (1715) ի ամսեանն Փետրվարի ԺԵ», միւս երեսին՝ յարութեան տեսարանի տակ. «Սբ. Գեղարդի տուաք Թագս յշկ. Ռուռուս/ճուղի յրաւելեան վճռկնց. գնծընկին վէքիլ Նաւորդի եւ Վրդանիսի ձեռամբ շինեցի»: Վակասի պատկերագրութիւնը. մէջտեղում նստած է Յիսուս, ձախին խաչազարդ գունդ բռնած, աջով խաչակնքում է (պատկ. 177), երկու կողմից վեց վեց առաքեալ, սիւներով բաժանուած եւ առանձին առանձին կամարների տակ, բոլորի նիմբուսները, սիւներն ու կամարները մարգարիտներով կազմուած, վերջին դատաստանն է ներկայացնում: Արձանագրութիւնն է. «Յշկ. է սբ. Գեղարդին ընդ Թագին ձեռամբ Վրդանէսին. Թվին ՌՃԿԴին շինեալ», որով և Թուականն ու արուեստաւորը որոշուած:Սակայն երկուսի արուեստների մէջ կայ մեծ տարբերութիւն, Թագի պատկերագրութիւնը միանգամայն արեւմտեան դրոշմ է կրում, բայց ոչ վակասը: Տարբեր են նաեւ երկուսի արձանագրութիւնների հնագրական ձեւակերպութիւնները, թէեւ երկուսն էլ նոյն Թուականն ունին, նոյն վանքին նուիրուած եւ վակասի արձանագրութեան մէջ Թագի յիշատակութեամբ: Այս տարբերութիւնը բացատրել կարելի է տարբեր անձանց կողմից պատրաստուած նախարտակներով, բայց ասեղնագործութիւնը միեւնոյն անձի, Վրդանիսի գործն է:

Դանիէլի[3]) յաջորդն էր, հաւանօրէն, Եղիսէ վարդապետ Նորեցին, որ յիշատակւում է 1733 թ. «Ի թվին ՌՃՁԲ. Յունիսի ԻԵ. ի յառաջնորդ (s!) սբ. Գեղարդես. վանիցն Եղիսէ վրդպտն. ի գեղջէն Նորեցի»[4]): Նոյն Թուականից միչեւ 1749 վանքի վանահայրն էր Պետրոս Ջահկեցին, որ հետզհետէ այլեւայլ հողեր է գնել կամ ձեռք բերել վանքի համար[5]): Ոմն մահտեսի

---

[1]) Աստ. 137—139: Ձեռ. էջմ. № 449 Նժ. (Յաւելուած Բ. 39):

[2]) Զաքարիա Սարկ. Բ. 17: Ջամբռ, 141, 285, 287: Սմբատեան Մեսրոպ արքեպիսկ., Գեղարքունի. 223: Ալիշան. Այր. 228:

[3]) Դանիէլի մասին Աստ. 142—143 (Յաւել. Բ. 40):

[4]) Ձեռ. էջմ. № 2103/2065, ՂԲ. Ձեռագիրը Տաթեւացու քարոզների առաջին հատորն է, գրուած Թովմա Մեծոփեցու ձեռքով, որ յետոյ ընկել է Գեղարդայ վանքը. տե՛ս մեր Թովմա Մեծոփեցու կեանքը, ԻԸ. եւ 15:

[5]) Ջամբռ. 273/4:

Պետրոսի կողմից 1750 *թուին արծաթի, քանդակազարդ մի սկիհ է նուիրուած Գեղարդի վանքին՝ յիշատակ իւր կողմից Մարինոսի հոգուն·* «Յիշատակ· Է սկիհս մհտէսի Պետրոսին եւ կողակցուն Մարինոսին հոգուն ի դուռն սբ· Քէղարդու վանիցն· թվին· ՌՃՂԹին»: *Սկիհն այժմ գտնւում է Աշտարակի Կարմրաւոր եկեղեցում (պատկ·* 178)*, տարաբաղդաբար պատուանդանի մեդալիոնները պոկուած, ոսկերչական ընտիր գործ, հնի հետեւողութեամբ:*


ՊԱՏԿԵՐ 175·

Էջմիածնի զգեստատանը պահւում է մի շապիկ, օձիքն ասեղնագործ, հետեւեալ արձանագրութեամբ· «Յշկ· Է խաչէս Աղամլի կողակից Մանիկին եւ միջնորդի սորին սբ· Ածածնին· մյր· Եղիսապտին: Եռուն ի դռն· ածամուխ սբ· Քեղարդին»: *Թէպէտ անթուական է արձանագրութիւնը, բայց գործուածքն ի նկատի ունենալով, հաստատ կարելի է ասել, որ ԺԸ· դարի կէսերից ուշ չէ:*


ՊԱՏԿԵՐ 176·

*Արդեօ՞ք Ղունկիանոս վարդապետը*1) *սորա անմիջական, թէ երկրորդ յաջորդն էր, ասել չենք կարող:*

---

1) Զամբռ· 274:

Գ.

ԱՂՋՈՑ Ս. ՍՏԵՓԱՆՈՍ

Գեղարդից ոչ հեռու, դէպի հարաւ, լերան հարաւային գեղատեսիլ լանջին՝ Գառնիից եւ Հաւուց Թառից դէպի արեւելք, Եղիջա գիւղի մօտ, ընկած է այդ վանքը: Ըստ աւանդութեան, ինչպէս եւ մեր հին վանքերից շատերի համար է ասուած, հիմնուած Գրիգոր Լուսաւորչի ձեռքով, Հռիփսիմեանց քահանաներից մէկի՝ Ստեփանոսի անունով, որ փախել էր Տրդատի հալածանքներից եւ նահատակուել այդտեղ. «Եւ մի ոմն ի բուռին հողն ի Հռոմա Աղջոց վանացն» (*Յաւել. Ա.* 121): *Վերջապէս այդ անունով յիշատակւում է նաեւ Վարդանի Աշխարհացոյցի մէջ իբրեւ Գառնոյ շրջանի վանքերից մէկը.* «եւ Աղջոց վանքն, ուր կայ սբ. աջն Ստեփանոսի քհնյին. եւ սբ. աջն Արիստակիսի որդոյն Գրիգորի Լուսաւորչի»[2]):

Սակայն վանքի շինութիւնը Յայսմաւուրքի յայտարարած հնութեան ոչ մի նշան չունի: Նա Զաքարեանց



ՊԱՏԿԵՐ 177.

քհնյիցն Ստեփանոս անուն անկաւ փախստական ի լեառն Գառնոյ եւ անդ կեցեալ կորցւ. ի քս. եւ թաղեցաւ ի տեղոջն: Եւ յետոյ սբն. Գրիգոր ազդմամբ հրշտկց. արբ. զտեղին վանք միաբանակեցաց, որ է մինչեւ ցայսօր եւ կոչի Աղջոց վանք, այս է աղջկանց վանք: Եւ զանունն եւս ուսաւ ի հրեշտակէն սբն. Գրիգոր Ստեփանոս գոլ. վս. որոյ ասի Աղջոց վանուց սբ. Ստեփանոս»[1]):

Արձանագրութիւններից մէկի մէջ եւս երեւում է վանքի անունը. «Ես Գրիգոր որդի Աբխալին տվի զԳա-

շրջանի մի շէնք է, նոյն ժամանակին յատուկ բոլոր ճարտարապետական նշաններով եւ արձանագրութիւններով: Վանքը բաղկացած է երեք մասից, տաճարը իւր գաւթով (պատկ. 19) *եւ ապա հիւսիսային կողմից Պօղոս եւ Պետրոս առաքեալների անունով փոքրիկ եկեղեցին: Առաքեալների հարթաքանդակներն էլ զարդարում են արեւմտեան դրան երկու կողմերը (պատկ.* 25), *թէեւ վիմական եւ ձեռագրական յիշատակարանների մէջ այդ անունով եկեղեցի չէ յիշուած: Առաջին պատկերը տալիս է մեզ եկեղեցիների արեւմտեան տեսարանը. տաճարի գմբէթն ընկած է, մնացած է միայն* թմբուկի հիմքը· կործանուած է ի սպառ, բացառութեամբ հիւսիսային եւ հարաւային պատերի, նաեւ գաւիթը։ Պօղոս–Պետրոսից էլ միայն պատեր են մնացել։

---

[1] Յայսմաւուրք: վանքի անուան նուիրուած է եւ յատուկ շարական նոյն աւանդութեան ակնարկելով, հեղինակն անյայտ: Ամատունի, Պարականոն շարականներ. 1911. 164: Ձեռ. էջմ. № 1588. 200ա.:

[2] Ձեռ. էջմ. № 358 Նժ. (Լիմ.) նաեւ № 2179/2166:


ՊԱՏԿԵՐ 178·

Ամենահին արձանագրութիւնը Իւանէ Աթաբէկինն է, 1212 թուականից, տարաբաղդաբար մի մասը եղծուած, որից երեւում է հողային նուիրաբերութիւն է արել իւր որդի Աւագի երկարակեցութեան համար (Ցաւել· Ա· 120· պատկ· 179)։ Արձանագրութեան այս թուականը չպէտք է հակասութիւն համարուի Գեղարդի արձանագրութեան ժամանակի որոշման, որ փաստական տուեալների հիման վերայ 1219–1222 թ· թ· նշանակեցինք, որովհետեւ անհրաժեշտ չէ նորա ներկայութիւնը ընդունել արձանագրութեան թուականին այդտեղ։ Սորա շարունակութիւնն է նոյն գծի վերայ եւ նոյն գրով, աւել է, թէ եւ նոյն ժամանակ, ոմն Գորգիի արձանագրութիւնը, որով իւր որդոց արեւշատութեան համար եկեղեցուն նուէր է տալիս Քարուղենի հողը (Յաւել· Ա· 121· պատկ· 179)։ Մենք ունինք նաեւ եկեղեցու շինութեան թուականը 1217 թուականից, դարձեալ պակասաւոր, որից տեղեկանում ենք, որ Իւանէի իշխանութեան ժամանակ «Աբէլ վարդապետաց առաջնորդ» մեծ աշխատութեամբ շինել է եկեղեցին, երեւի իր միաբանների հետ, եւ վեց օր ժամ է յատկացուած ոմն Սարգսի, որի անձնաւորութիւնը անյայտ է մնում արձանագրութեան քարերի մի մասի թափած լինելու պատճառով: Այս արձանագրութիւնը գտնւում է տաճարի հարաւային պատին, գաւթին կից, վերին անկիւնում՝ դրսի կողմը (տե՛ս Ցուցակ· Ա· 122· պատկ· 179): Պէտք է ասենք, որ այս պատը, գրեթէ, ամբողջապէս ծածկուած է արձանագրութիւններով (պատկ· 179, 180), բայց քարերը մասամբ փճացած, մասամբ էլ տեղափոխուած նորոգութեան ժամանակ կամ բոլորովին կորած: Աբէլ վարդապետը մի խաչքար էլ ունի տաճարի արեւմտեան պատին, դրան ձախ կողմից, այսպիսի արձանագրութեամբ· «ԶԱբէլ վա/դ· գաւաջնորդ / սբ· ուխտիս յաղաւ...» (պատկ· 181): Իւանէի եւ Աբէլ վարդապետի արձանագրութիւնները ցոյն են տալիս, որ վանքի շինութիւնը տեւել է ոչ պակաս քան 1212—1217 թուերը, առաջինը սկզբնաւորութեան, իսկ երկրորդը վերջաւորութեան ժամանակը: Թուականով մի ուրիշ խաչքար գտնւում է գաւթի հիւսիս–արեւմտեան անկիւնում· «Ի Թվ· ՈԿԸ (=1219) կանկնեց/աւ խաչս Կա/րապետ վդին·»: Արդեօ՞ք այս Կարապետ վարդապետը Աբէլի յաջորդն էր, թէ այդ ժամանակ կենդանի էր նա:



ՊԱՏԿԵՐ 179·

Թէպէտ վերեւ յիշուեցաւ Աբէլ վարդապետը իւր միաբանների հետ իբրեւ եկեղեցու հիմնադիր, բայց անմասն չմնացին եւ օժանդակ հանդիսացան եկեղեցու պայծառութեան, գուցէ եւ շինութեան, տեղական իշխան Գրիգոր Խաղբակեան[1]) եւ նորա ամուսինը Զազ· տարաբաղդաբար, սրանց անուան հետ կապուած արձանագրութիւնները մասամբ փճացած են, եւ մենք լիովին գաղափար չենք կազմում նրանց մասնակցութեան մասին: Գրիգոր Խաղբակեանի արձանագրութիւններից մէկը գտնւում է դրան կամարակալ քարի վերայ, ուր գտնւում է եւ վերջին դատաստանը ներկայացնող բարձրաքանդակը (Ցուցակ· Ա· 123, պատկ· 181)· արձանագրութիւնը գրուած է 1213 կամ 1220 թուին, ուր նա յայտնում է, թէ օգնել է «եկեղեցւոյս բազում արդեամբք» եւ սպասաւորները նրան են յատկացրել աւագ խորանի Հինգշաբթի եւ Շաբաթ օրերը «հանապազ»: Սորան անմիջապէս կցուած է եւ իւր ամուսնու արձա–

---

[1]) Սորա մասին եւ Քեղուայ ձորը Զաքարեաններից ժառանգութիւն ստանալու մասին տես Աստ· 32—33· 41—44:

նագրութիւնը, շատ փճացած, որից երեւում է, թէ միաբանել է սուրբ ուխտին եւ եկեղեցուն խաչ եւ այլ բազում արդիւնք տուել (Յաւել· Ա· 123)։ Գրիգորի մի երկրորդ արձանագրութիւն գտնւում է հարաւային պատի վերայ դրսից, երկրորդ լուսամուտից դէպի արեւելք, շատ եղծուած, որով նուիրում է «զմեծ հողն...» եւ «այլ արդիւնք» (Յաւել· Ա· 124, պատկ· 180)· իսկ նորա կնոջ երկրորդ արձանագրութիւնը արեւմտեան պատի վերայ՝ աջ դասում (պատկ· 182) իւր Վասակ որդու եւ կողակից Գրիգորի անունների յիշատակութեամբ· «աւգնեցի տան··· (ս եւ ետու սպ)ասն պատուական», ստանալով դորա փոխարէն երկու պատարագ Վարդավառի Շաբաթ եւ Կիւրակի օրերը (Յաւել· Ա· 125)։ Արձանագրութեան սկսուածքից, «Ես Զազս մայր Վա(սակայ եւ կե)նակից Գրիգորո...» պէտք է եզրակացնել, որ մեռած է ամուսինը եւ կարեւոր անձը որդին է, որով եւ բնորոշւում է Զազի ով լինելը։ Ուրեմն եւ հաստատ կարող ենք ասել, որ 1222 թուից տարիներ յետոյ է գրուած, երբ նահատակուեցաւ Գրիգոր Խաղբակեանը։

Տաճարի շինութեանը մասնակից են եղել եւ ուրիշները· եկեղեցու ներսը՝ աջակողմեան աւանդատան դրան գլխի արձանագրութեան համեմատ՝ ոմն Ռստակէս քահանայ ստացել է այդ խորանը, ուրիշ խօսքով հոգացել է դորա ծախսը, փոխարէնն ստանալով երեք ժամ (Յաւել· Ա· 126)· ներսից՝ հարաւային պատի արձանագրութեան համեմատ՝ «Սարգիս որդի Սմբատա թոռն Շղեանց» ստացել է այդ կողմի խորանը, որի համար սպասաւորները նշանակել են երեք պատարագ, մէկը իւր, միւսը հօրը և երրորդը մօրը՝ Նրճնին (Յաւել· Ա· 127[1])։ Հարաւային պատին դրսից՝ հարաւ-արեւելեան անկիւնի բարձր կիսատ արձանագրութեամբ Պատրոնիկ եւ Արխունդիա գնել են «ի շինուած սորա» մեղ



ՊԱՏԿԵՐ 180·

անյայտ նիւթեր եւ ստացել են «ի ժ: բ: աւր ժամ» (Յաւել· Ա· 128, պատկ· 180)։

Թուականով մի ուրիշ արձանագրութիւն ունինք դրան կամարի գլխին դրսից՝ մի անկանոն կիսաբոլորակի մէջ, որ գուցէ կամարի հետքը կարելի է համարել ենթադրաբար, որով եւ նորա ծագման մօտաւոր ժամանակը որոշել։ Արձանագրութիւնը քանդակուած է ՈՁԳ· (= 1234) թուին Տիրացու վարդապետի առաջ–

---

[1] Ովարովայի հրատարակութեան մէջ (էջ· 56) այս արձանագրութիւնը թուագրուած է «ՈԸ» (= 1159), որ անկարելի է։ Մենք չենք կարողացել կարդալ, ուստի եւ թիւը չենք նշանակել։ Բայց ինքնին հասկանալի է, որ ԺԳ· դարի առաջին քառորդում շինուած եկեղեցու վերայ չէր կարող այդ թուականի արձանագրութիւն լինել շինութեան մասնակցութեամբ։ Հաւանօրէն պէտք է կարդալ ՈՀ (= 1221)։

նորոգութեան ժամանակ, Սմբատայ որդի Սեւադայի եւ նորա ամուսին Թաճերի կողմից, որոնք նուիրել են «զԴիճակի տափ ջրփողովն եւ զիմ արկած այգին զԲալատակն եւ զաւետարանն իմ պատուական» (Յաւել· Ա· 129, պատկ· 181)։ Իշխանական այս զոյգն ունի նուէրներ տուած նաեւ Դադի վանքին[1])։ Սեւադան նոյն է Արցախի Մչահանի արձանագրութեան մէջ յիշուած Սեւադայի հետ, ուրեմն ծագումով Խաչենեցի, ինչպէս եւ Խաղբակեաններն էին։



ՊԱՏԿԵՐ 181·

Ե՞րբ է շինուած գաւիթը, հաստատ չգիտենք, որովհետեւ բոլորովին քանդուած է, քարերն ու սիւների մնացորդները արեւմտեան կողմի փոսը լցրած, պատնէշ շինած, երեսն էլ հողով ծածկած պարտէզի կամ բանջարանոցի համար, բայց կարծում ենք ՈՁԳ (= 1234) թուից առաջ, եթէ հաստատ է մեր ենթադրութիւնը, որի համար կասկած չունինք, թէ կամարի այն հետքը, որ մնացել է տաճարի արեւմտեան պատին, դրան գլխին, գաւթի կամարի հետքն է (տե՛ս պատկ· 181)· առանց շէնքի անկարելի էր, որ արձանագրութիւնն այդպիսի անկանոն բոլորակի մէջ գրուէր· ապա, ուրեմն, այդ շինութիւնը, այսինքն գաւիթը, վերջացած էր 1234 թուից առաջ եւ 1217 թուից յետոյ, երբ վերջացաւ տաճարի շինութիւնը։ Այս ժամանակամիջոցը կարելի է աւելի եւս սահմանափակել· դրան աջ կողմը արձանագրութիւնների մի խումբ ունինք, որոնցից մէկով Մխիթար եւ Սարգիս եղբայրները գաւթին քառասուն դեկան են նուիրել եւ եկեղեցուն էլ «զմարտիրողոգն», վկայաբանութիւն կամ սովորական անունով Յայսմաւուրք (Յաւել· Ա· 130, պատկ· 182)։ Այս արձանագրութիւնը կից է Զագայի արձանագրութեան եւ նոյն գրչով, որ, ինչպէս գիտենք՝ կարող էր լինել ոչ վաղ քան 1222 թիւը, երբ մեռաւ Գրիգոր Խաղբակեանը, ուրեմն եւ գաւթի շինութիւնը պէտք է դնել 1222—1234 թ· թ·ի մէջ։ Ժամատան կամ գաւթի շինութեան ժամանակակից են Պետրոսի եւ Հողէզեղի, Տիրատուրի արձանագրութիւնները, որ միասին են գրած. վերջինը իւր նուէրը գաւթին է տուել (Յաւել· Ա· 131-132, պատկ· 182), ինչպէս հիւսիսային կողմից դէպի գաւիթը տանող մեծ մուտքի կիսով չափ կանգուն կամարի արձանագրութիւնը Խաչիկի անունով (Յաւել· Ա· 133)։ Գաւթի շինութեան շրջանից է, դուցէ եւ վերջաւորութիւնը Զագի նուիրաբերութիւնների հետ Գրիգոր Խաղբակեանի յիշատակին կանգնած խաչարձանը ՈՁԲ թուականին, որի նկարագրութիւնն ու գնահատութիւնը տեսանք առաջ[1])։

---

[1]) Ջալ· Բ· 225—228։

Բուն տաճարի հիւսիսային կողմն է Պօղոս–Պետրոս փոքրիկ եկեղեցին, տարաբաղդաբար շատ վատ վիճակի մէջ մեզ հասած։ Վերոյիշեալ առաքեալների պատկերաքանդակները զարդարում են դրան աջ եւ ձախ կողմերը, համեմատաբար այնպիսի գեղեցկութեամբ, որ քիչ է պատահում մեր քանդակագործութեան մէջ[2])։ Սոյն եկեղեցու մի զարդն էր նաեւ այն սիրամարգը (պատկ· 183), որ գլորուած էր ձորը եւ դժուարութեամբ բերինք եւ հաստատեցինք պատի վերայ։ Քարի ձեւից երեւում է, որ վերին անկիւնաքար պիտի լինէր, ուրեմն եւ սպասելի էր մի երկրորդը գտնել։ Եկեղեցու շինութեան արձանագրութիւնը, որ գտնւում է դրան կամարակալ քարի վերայ, սկզբում գեղագրով է եղել եւ ապա քիչ մասը փորագրուել է եւ կիսատ մնացել, որից սակայն պարզ է, որ եկեղեցին շինուած է ՉԺԹ (= 1270) թուին Երեմիայի առաջնորդութեան ժամանակ հաւանօրէն Ղաղբակայ թոռը Վասակի կողմից[3])։ Զագի արձանագրութիւնից եւս տեսանք (Յաւել· Ա· 125) ,որ Գրիգոր Խաղբակեանի որդին էր «Վա(սակ)»։ Մի ուրիշ տեղ՝ Գրիգորի արձանագրութեան տակ (Յաւել· Ա· 124), անմիջապէս կցուած է մի եղծուած արձանագրութիւն, որից կարդացւում է «...ակս որ բազում ընծայք ետու յեկեղեցիս/..../»։Ի հարկէ ,միայն հաւանական ենթադրութեամբ կարելի է ընդունել, թէ «..ակս» մնացորդն է «(Վաս)ակս» անուան· որդին իւր նուիրաբերութիւնը փորագրել է տուել անմիջապէս հօր արձանագրութեան տակ (պատկ· 180)։ Այս տուեալներով հաստատ կարող ենք ասել, Խաղբակի թոռն էր, Գրիգորի եւ Զագի որդին Վասակ, որի ժամանակ կամ նորա կողմից շինուած է Պօղոս–Պետրոսը։ Այսպիսով Աղջոց Ս· Ստեփանոսի բոլոր շէնքերը պէտք է համարել Խաղբակեաններից Վասակ Ա·ի եղբայր Գրիգորի ճիւղի ստեղծագործութիւն։ Երեմիա առաջնորդի անուան յիշատակութիւնն ունինք Վարդանի կողմից իւր Դանիէլի մեկնութեան յիշատակարանի մէջ, որ վերջացրել է հէնց այստեղ, վայելելով նորա ասպնջականութիւնը[4])։ Սորա ժամանակ Գոհար անունով կինը քսան դահեկան նուէր է տուել եւ մի ժամ ստացել, իսկ Աթանաս քահանան (? եղծուած) քառասուն դահեկան եւ երկու ժամ ստացել, մէկը իւր, միւսը հօրը՝ Թադէոսի (?) համար (Յաւել· Ա· 134–135)։

Բազմաթիւ են խաչարձանները թափթփած այստեղ այնտեղ· դոցանից մէկը Մարտիրոս քահանայինն է կանգնած բարձր պատուանդանի վերայ, տաճարի հիւսիսային պատին կից, 1258 թուին յիշատակ իւր ծնողներին (Յաւել· Ա· 136)։

Բազմաթիւ են նաեւ անթուական արձանագրութիւնները, որոնց մասին կը յիշենք յետոյ, բայց դոցանից մէկը պատմական անձնաւորութիւնների հետ կապուած լինելով, հնարաւոր է մօտաւոր ժամանակը գտնել։ Գրիգոր վարդապետի առաջնորդութեան ժամանակ Աթապակ Սադունի քարտուղար Ղարաւլանը միաբանել է սուրբ ուխտին, տալով քսան դահեկան, եւ ստացել է տարին մի պատարագ Սուրբ Սարգսի տօնին (Յաւել· Ա· 137· պատկ· 180)։ Գրիգոր վարդապետի առաջնորդութիւնը կարող էր միայն 1279 թուից յետոյ լինել, երբ մեռաւ Երեմիայի յաջորդ Յովսէփ վարդապետը։ Սորա գործունէութեան մասին տեղեկութիւն չունինք, բայց Պօղոս–Պետրոսի դրան հիմք կազմող ատիճանների վերայ կայ մի արձանագրութիւն նորա անուան յիշատակութեամբ ոմն Դեղի կողմից, որ իւր այգին նուէր է տալիս «յառաջնորդութի· Յսւփ վարդն» եւ ստանում երկու ժամ (Յաւել· Ա· 138)։ Նոյն դրան աջ կողմից, Պետրոսի քանդակի ետեւը, կայ մի ուրիշ արձանագրութիւն ոմն Շահերի կամ Շահետի կողմից, որ քսան դահեկան նուէր է տալիս եւ մի ժամ ստանում (Յաւել· Ա· 139· պատկ· 25)։ Յովսէփ վարդապետին յիշում է Ստեփանոս Օրբէլեան իւր ժամանակագրութեան մէջ, որ դեռ եւս անտիպ է· «ՁԻԸ կատարի մեծ վարդապետն Յովսէփ ի վանսն Ախչոց»[5])։ Հաւանօրէն նոյն պիտի լինի սա այն Յովսէփ վարդապետի հետ, որին Վանականի եւ Վարդանի հետ դիմել էր Կոստանդին կաթուղիկոսը իմանալու նրանց կարծիքը՝ Հռոմի կողմից Ս· Հոգու մասին յարուցած դաւանաբանական խնդրի նկատմամբ: Գուցէ նոյն է նաեւ Յովհաննէս աբեղայի յիշած նոյնանուն Յովսէփը, որի օրինակից արտագրել է ինքը իւր կէս Աստուածաշունչը, «ի ստոյգ եւ ընտիր աւրինակէ, որ կոչի Բագնայրեցի, զոր սբ· վարդապետին Յովսէփայ գտեալ թարգմանչացն գրած ի մայրաքաղաքն Հաղբատ»[1]): Իսկ Սաղուն Աթաբէկը ԺԳ· դարի հայ իշխանների մէջ շատ յայտնի անձնաւորութիւն էր, Մահկանաբերդի տէրը, որ Աթաբէկութեան պաշտօն ստացաւ Աւագի մահուանից († 1250) յետոյ եւ մեռաւ 1284 թուին[2]): Ապա, ուրեմն, Ղարասլանի արձանագրութեան ծագումը պէտք է դնել 1279—1284 թ· թ·:

---

[1]) Աստ· 32, 41· պատկ· 20։

[2]) Աստ· 43—44· պատկ· 25։

[3]) Աստ· 43—44։

[4]) Աստ· 44։ Ձեռ· № 2049, 359բ։ Շողակաթ· Հայագիտական ժողովածու, 33։

[5]) Երեւանի թանգարան, Ձեռ· № 670։

Բայց մենք ունինք այստեղ մի ուրիշ արձանագրութիւն դարձեալ նոյն Սաղուն Աթաբէկի անուան յիշատակութեամբ: Տաճարի արեւելեան կողմն ընկած է առանձին մի գեղեցիկ խաչքար բաղալտի քարից (պատկ· 184)· պատուանդանը դեռ իւր տեղումն է, բայց ոչ ամբողջովին· պոկուած են զարնէզի քարերը եւ ցրուած չորս կողմը, որոնցից մէկի վերայ գտնւում է արձանագրութեան թուականը· «ի թվ· ՉԼԶ» (=1287): Արձանագրութիւնը փորագրուած է պատուանդանի չորս կողմի վերայ եւ հետեւեալ բովանդակութիւնն ունի· Սրղունի աշխարհակալութեան, Դաւթի թագաւորութեան, Տէր Յովանիսի հայրապետութեան, «եւ ի տէրութե· տեղոյս պարոն Աշոտոյ»· Ղազար, Աստուածատուր, Տէր Աւագ ջուր են բերում, կանգնեցնում են այս խաչը, տնկում են Յովայն այգին, որ ամիր սպասալար աթապակ Սաղունը «նուվէր (s!) ետ եկեղեցոյ» (Յաւել· Ա· 12): Արձանագրութեան պատմական անձնաւորութիւնների նկատմամբ ժամանակագրական մեծ շփոթութիւն կայ: Սրղունի աշխարհակալութիւնն ընկնում է 1284—1291 տարիներին, մինչդեռ Դաւիթ Վրաց թագաւորը մեռած էր արդէն 1272-ին, երբ յաջորդեց նորա որդին Դեմետրէն 1272—1289: Սաղունը նոյնպէս մեռած էր, երբ գրուեցաւ արձանագրութիւնը: Նշանակում է, Սաղունը կարգադրութիւնը կատարել է 1272 թուից առաջ, երբ կենդանի էր Դաւիթ թագաւորը եւ միայն յետին թուով գրի առնուած Սրղունի աշխարհակալութեան ժամանակ՝ ՉԼԶ (=1287) թուին, երբ նուիրատուները ջուր են բերում եւ այգին տնկում:

Ո՞վ է Յովհաննէս հայրապետը: Այստեղ, անշո՛ւշտ, կաթուղիկոսի կամ պատրիարքի իմաստով չէ գործածուած «հայրապետ» բառը, այլ արքեպիսկոպոսի կամ մետրապոլիտի, ինչպէս անուանում էին իրենց Բջնիի կամ Արարատեան կամ Սիւնեաց մեծ եպիսկոպոսները: Պռոշեան իշխանութեան մէջ այդ ժամանակ Յովհաննէս ա-

ՊԱՏԿԵՐ 182·

---

[1]) Ձեռ· էջմ· № 920 Նժ·:

[2]) Շողակաթ, Հայագիտական ժողովածու· 1913· մեր «Ձագավանից ժողովը» յօդուածը· 26:

նունով եպիսկոպոս յայտնի չէ։ Գեղարդում Մխիթար Այրիվանեցին էր ութսունական թուականներին, ինչպէս տեսանք վերեւ։ Վայոց ձորում Պռոշեանց հոգեւոր կեդրոնը Գլաձորն էր, բայց ոչ իբրեւ եպիսկոպոսարան, այլ բարձրագոյն դպրոց, «համալսարան» կամ վարդապետարան, նախ Ներսէս Մշեցու, ապա 1284 թուից յետոյ՝ Եսայի Նչեցու եւ Դաւիթ վարդապետի ղեկավարութեամբ։ Թանատի վանքը Վայոց ձորում նոյնպէս եպիսկոպոսարան չէր։ Մեզ յայտնի է, թէ ինչպէս անյաջող անցաւ Պռոշ մեծ իշխանի փորձը Վայոց ձորի իւր կալուածները Սիւնեաց հոգեւոր տեսչութիւնից հանելով, Ապրակունեաց Յովհաննէս եպիսկոպոսի տեսչութեան տակ դնել[1]։ Այստեղ, ուրեմն, խօսք կարող է լինել միայն Բջնիի կամ Արարատեան թեմի եպիսկոպոսութեան մասին, որին ենթարկւում էին Բջնիի եւ Կոտայքի շրջաններից զատ, նաեւ Խոր վիրապը եւ Վեդիի վերին՝ աջ թեւի՝ ակունքները։ Յիրաւի, Բջնիի Գրիգոր եպիսկոպոսին 1287 թուին յաջորդեց Յովհաննէս եպիսկոպոսը, որ ապա մասնակից եղաւ ընդդէմ Անաւարզեցու ձեռնարկին 1295 թուին։ Մկրտիչ աբեղայ գրիչը յիշում է նորան իւր յիշատակարանի մէջ 1298 թուին, որպէս արհիեպիսկոպոս Բջնոյ եւ վերատեսուչ Այրարատեան նահանգին եւն․, ինչպէս ցոյց ենք տուել առաջ։ Արձանագրութեան մէջ յիշուած տեղւոյն իշխան կամ պարոն Աշոտը պէտք է վերոյիշեալ Վասակ Խաղբակեանի որդին լինի, Գրիգոր Խաղբակեանի թոռը։

Բացի յիշատակուածներից բաւական շատ են անթուական արձանագրութիւնները, որոնք մեծ մասով ԺԳ․ դարից պիտի լինին, բայց դժուար է ժամանակը ճշդիւ որոշել։ Այսպէս եկեղեցու ներսը, հիւսիսային կողմից, միջին թեւի արեւմտեան կողմը՝ Յոհաննա որդի Մխիթարը արդիւնք է տալիս եւ մի քառասունք ստանում (Յաւել․ Ա․ 140)։ Տաճարի արեւմտեան պատի վերայ, դրան ձախ կողմը դրսից, Աբէլ վարդապետի խաչքարից դէպի հարաւ, Գերսամ անունով մէկը քառասուն դեկան է տուել եւ երկու պատարագ ստացել (Յաւել․ Ա․ 141)։ Սորա տակն է ոմն Խաչատուրի արձանագրութիւնը, որ տուել է իւր հայրենի այգին եւ երեք պատարագ ստացել (Յաւել Ա․ 142)։ Յովհաննէսը քառասուն դահեկան է տուել եւ մի պատարագ ստացել (Յաւել․ Ա․ 143)։ Թադէոս անունով մէկը մի խաչ է փորագրել տուել, մահուանից յետոյ մի քառասունք ստացել (Յաւել․ Ա․ 144)։ Հաւուց Թառի «չպետ» (հովիւ) Գրիգորը քառասուն դահեկան է տուել եւ երկու պատարագ ստացել (Յաւել․ Ա․ 145)։ Այս միեւնոյն անձը արձանագրութիւն ունի եւ Հաւուց Թառում, ուր յայտնում է, թէ ծառայութիւն է արել եւ արդիւնք տուել, երեք ժամ ստացել։ Հաւուց Թառի արձանագրութիւնը 1214 թուից յետոյ եւ 1293 թուից առաջ է գրուած, ուրեմն եւ այս թուականների մէջ պիտի գրուած լինի Ս․ Ստեփանոսի արձանագրութիւնը, կարծում ենք երեսնական թուականներին, արձանագրութեան տեղից դատելով, Մխիթար եւ Սարգիս եղբայրների արձանագրութեան տակ, իսկ սրանց եւ Ջագի արձանագրութիւնը նոյն գրչութեամբ է գրուած։

Աւելի շատ են հարաւային պատին եղած արձանագրութիւնները, բայց շատ փճացած վիճակում։ Աբիսալի որդի Գորգին՝ Քարուռի հողը տուել է «ի Հոռոմա Աղչոց վանացն» իւր որդիների արեւշատութեան համար (Յաւել․ Ա․ 121), որ գրուած տեսանք Իւանէի ՈԿԱ (= 1212) թուի արձանագրութեան տակ եւ նոյն գրով, ուրեմն հնագոյն արձանագրութիւններից մէկը։ Տարաբաղդաբար շատ է փճացած Վանենու արձանագրութիւնը (Յաւել․ Ա․ 146)։ Սա, դուցէ, Ջաջուռ Խաղբակեանի, Գրիգորի եւ Վասակի եղբօր, դուստրը լինի, նշանաւոր հանդիսացած իւր երկու մեծագիր, երկաթագիր, մագաղաթի աւետարաններով[2]։ Մխիթար կրօնաւորը իւր հալալ արդիւնքից տուել է քառասուն դահեկան եւ տարին երկու պատարագ ստացել (Յաւել․ Ա․ 147)։ Բարխոք անունով մէկը տալիս է քառասուն դեկան (Յաւել Ա․ 148)․ Խաչանելը նոյնպէս եւ երկու պատարագ ստանում (Յաւել Ա․ 149)։

Տաճարի ներսը արեւմտեան պատի վերայ, դէպի հարաւ, «Յերկայն» Մխիթարի արձանագրութիւնն է, որով վաթսուն դահեկան նուէր է տալիս եկեղեցուն եւ երեք պատարագ ստանում, երկուսն իրեն, մէկը ծնողներին (Յաւել․ Ա․ 150)։ Հիւսիսային պատի վերայ, սանդուղներից բարձր, երկու արձանագրութիւն փճացած է։ Նրանց մօտ է Նազիկի եւ Օհանի արձանագրութիւնը, որով յիսուն դահեկան են տալիս եւ չորս ժամ ստանում (Յաւել․ Ա․ 151)։

Մենք չենք յիշում այնպիսիները տաճարի ներսը եւ դուրսը՝ հարաւային պատին՝ որ չափազանց եղծուած են եւ դժուար է միտք հանել կամ նուիրատուի անունը որոշել։

Մի խաչքարի վերայ, որ հագցրած է տաճարի արեւմտեան պատին, դրան մօտ՝ գրուած է․ «Յիշեցէք ի Քս․ զՀասան զորդի Սմբատա զծառա Քի․ եւ ողորմեա» հաւանօրէն ԺԳ․ դարի գործ[3]։

Արձանագրութիւնների այսպիսի յաճախումը ցոյց է տալիս, թէ այս վանքն իրօք մի կարեւոր կեդրոն է եղել, յատկապէս ԺԳ․ դարի ընթացքում։ Տարաբաղդաբար, քիչ են մեր ձեռագրական տեղեկութիւնները, եղածներն էլ մի որոշ շրջանից միայն։ Վարդանի յիշատակութիւնը 1268 թուին եւ Յովսէփ վարդապետինը 1279 թուին, տեսանք վերեւ։ Աբէլ, Երեմիա եւ Գրիգոր վարդապետների գրական կամ վարժապետական գործունէութեան մասին տեղեկութիւն չունինք։ ԺԳ․ դարից յետոյ մինչեւ ԺԵ․ դարը չէ յաջողուել մեզ որեւէ

---

[1] Աստ․ 50։ Օրբ․ 634/5։

[2] Աստ․ 14—15․ 17։

[3] Ouvarova, Mat. XIII. 57:

գրաւոր յիշատակարան գտնել: Այս դարի հնագոյն յիշատակը մի խազգիրք է, գրուած Գալուստ աբեղայի ձեռքով մանր բոլորգրով, մագաղաթի վրայ, $8^{1}/_{2}\times 9^{1}/_{2}$ *սմ. կաշեպատ կազմով, ՊՂԱ* (= 1442) *թուին,* «ի վանքս Աղջոց ընդ հովանեաւ սբ. Ստեփանոս նախատակիս եւ Թրի սբ. Նշանիս.... յիշատակ Մխիթարի եւ Գալստի ծնաւղացն» (*Յաւել. Բ.* 50[1]): *Նոյն ՊՂԱ թուին նա գրել է մի ճաշոց թղթի վրայ, լաւ բոլորգրով եւ երկսիւն, լուսանցքի եւ սկզբնազարդերով, մարդկային եւ կենդանական պատկերներով (եղջերու,* 339*բ.*), *միջակ կարողութեամբ, իւր յիշատակարանի մէջ համառօտ նկարագրելով Ջհան շահի կոտորածը Շամշուլդայում. գրչութեան տեղը՝* «ի գաւառիս Արարատեան ի ձորս Քեղոյ, ի վանքս Աղջոց, ընդ հովանեաւ սբ. Ածածնիս եւ սբ. կաթուղիկէիս եւ սբ. Ստեփանոս նախատակիս եւ Թրի սբ. Նշանիս եւ Արամունից սբ. խաչիս եւ Թեւատ սբ. Գրիգորիս եւ այլ բազմահաւաք սրբոցս, որ աստ կան հաւաքեալ»: *Թերթ ընկած լինելու պատճառով վերջից, չենք իմանալ Գրչի անունը, եթէ* 219*ա. չլինէր հետեւեալ համառօտ յիշատակարանը.* «Զբազմամեղ եւ փծուն գրիչս զԳալուստ աղաչեմ յիշել ի տր. եւ դուք յիշեալ» (*Յաւել. Բ.* 51 *Ձեռ. Էջմ.* № 903/939) :*Այս կ. Պոլսի Անտոնեանց հայր ՂԵ. համարը կրող աւետարանը գրուած է ՊՂԲ* (=1443) *թուին* «ի գաւառս Արարատեան ի ձորս Քեղոյ ի վանքս Աղջոց ընդ հովանեաւ սբ. Ածածնիս եւ սբ. կաթուղիկէիս եւ սբ. Ստեփանոս նախատակիս եւ սբ. աջոյս, եւ Թրի սբ. Նշանիս եւ սբ. խաչիս եւ Թեւատ սբ. Գրիգորիս եւ այլ բազմահաւաք սրբոցս, որ աստ կան հաւաքեալ. ձեռամբ յոգնամեղ եւ անիմաստ գրչի Գալստի, անուամբ միայն աբեղայի եւ ոչ գործով»[2]: *Նոյն Գալուստ գրիչը գրել եւ նկարազարդել է մի ուրիշ աւետարան* 1447 *թուին, որի մասին յիշատակութիւն ունի Ալիշանը, բերելով նմանահանութեամբ եւ Մատթէոսի սկզբնազարդը, որ գաղափար կարող է տալ նկարչի ճաշակի եւ կարողութեան մասին*[3]: *Գրչին գործակից է եղել եւ վիճակակից Մխիթար աբեղայ: Մի երրորդ աւետարան նա գրել է ՋԱ* (= 1452) *թուին Դաւիթ միայնակեցի խնդիրքով*[4]:

ՊԱՏԿԵՐ 183.

Բայց նա միակ գրիչը չէր այս ժամանակ. «Յոգնամեղ եւ անարհեստ գրչի Վարդան աբեղայի» *ձեռքով ՋԲ* (= 1453) *թուին գրուած է մի աւետարան նոյն վանքում*[5]: *Նոյն Վարդան գրիչը դարձեալ գրել է մի աւետարան* 1460 *թուին* «ի վանքս Աղջոց» *Ստեփանոս անունով մէկի ցանկութեամբ, որ նուիրել է Գառնի գիւղաքաղաքի եկեղեցուն: Գրիչը իւր յիշատակարանի մէջ նկարագրում է Ուսուֆի որդի Ջհանշահի* (1437—

---

[1] Ձեռ. էջմ. № 690/760 (կար. 677):

[2] Արտագրել ենք անձամբ 1911 թուին, ժամանակի մատենադարանապետ, այժմ հանգուցեալ, Հ. Իսահակ Սրապեանի սիրալիր թոյլտուութեամբ: Այս աջը յիշատակուած է եւ Վարդանի Աշխարհացոյցի մէջ. *«Աղջոց վանք, ուր կայ ս. աջն Ստեփանոս քահանային եւ ս. աջն Ռստակէսի եւ որդոյն Գրիգորի ս. Լուսաւորչին».* Թոփչեան, Ցուցակ ձեռագրաց խաչիկ վարդ.ի, 1898, Վաղարշապատ, Ա. 77: Նաեւ Գրիգոր Մակուեցու կոնդակի մէջ, Փիրղալէմեան, Նոտարք, 140: Արիստակէսի աջն այժմ գտնւում է Էջմիածնում: Նոյն աջի մասին տես եւ քիչ յետոյ:

[3] Այրարատ. 353/4:

[4] Փիրղալէմեան, Նոտարք, 170:

[5] Անդ. 195:

1460) *արշաւանքը դէպի Հրէ* «երկու հարիւր հազար հեծելով եւ եօթն տարի անդ կացեալ, եւ ի դուրս եկեալ բազում աւարաւ» (*Յաւել. Բ.* 52)[1]: *Մի արձանագրութիւն եւս ունինք* 1471 *թուականից այս երկու գրիչների անունով: Միայն Վարդանն արդէն եպիսկոպոս է եւ ուխտի առաջնորդը, իսկ Գալուստը՝ փակակալ: Սրանց հետ միացած նաեւ տէր Յովհաննէս եւ Սքանդար Յլղուբենց եւ մի այլ Գալուստ միասին հազար դահեկան են տալիս, ձիթահանք շինում եւ նուիրում վանքին* (*Յաւել. Ա.* 152)*: Վարդանը իբրեւ եպիսկոպոս նոյն թուականին գրել է մի աւետարան Դանիէլ վարդապետ Սեւանեցու համար: Աւետարանը փոքրադիր է, արծաթապատ կազմով, մագաղաթ, լաւ բոլորգիր, նկարազարդ՝ խորաններով, աւետարանիչների պատկերներով, սկզբնազարդերով եւ լուսանցքի զարդերով: Գլուխների սկզբնագիրը թռչնագիր, տների սկսուածքը ոսկեգիր. ժամանակին եղել է չքեղ, բայց վատ է պահուած: Նկարչութիւնը միջակից բարձր, կիլիկեան ոճով:*



ՊԱՏԿԵՐ 184.

Ցիշատակարանը շարադրուած է գեղեցիկ հայերէնով ոմն Ովանէսի կողմից, որ, գուցէ, նոյն լինի վերեւ յիշուած հազար դահեկանի նուիրաբերութեան մասնակից «տէր Յոհանէս»*ի հետ: Այստեղ ասուած է, թէ Դանիէլ վարդապետ Սեւանեցին* «շարժեալ ի հոգւոյն սրբոյ, եդ ի մտի իւրում ըստանալ աւետարան փոքր տուփ, գեղեցկագիր եւ ըստուգաքան, լինել անջինջ յիշատակ իւր եւ ծնողաց եւ ազգականաց իւրոց: Զոր եւ ես Վարդան եպս. մեղապարտ ոգի, անուամբ միայն եւ ոչ գործով, վասն խնդրոյ ճգնազգեաց եւ սրբասնեալ քաջ րաբունոյն Դանիէլի ըզմեր տկարութիւն մարմնոյ եւ ըզսուտ ըզբաղումս ի բաց դնելով, ապաւինեցաք յԱծ եւ ի Միածին Յս. Քս. յորդին այ եւ առաջնորդութբ. սբ. հոգւոյ եւ ձեռնտւութբ. նորին ըստ իմում կարի գրեցի զսբ. աւետարանս ի թվաբերութես. հայկազեան տումարի ՋԻ (= 1471), ի հայրապետութեն. տր. Արիստակէսի ի յաթոռ սբ. էջմիածնի: Եւ ի թագաւորութեն. Վրաց Բագրատին, եւ ի Ղանութեն. Հասան բէկին...»: «Արդ գրեցաւ սբ. աւետարանս ի գաւառս Արարատեան ի ձորս Քեղոյ ի վանքս Աղջոց» (*Յաւել. Բ.* 53. *Ձեռ. Երեւան.* № 134/129)[2]:

---

[1] Փիրղալէմեան, Նշխարք Հայոց պատմ., անտիպ. Էջմիածնի մատենադարանում այժմ:

[2] Դանիէլ վարդապետի եւ նորա շինել տուած Սեւանի նշանաւոր դրան մասին տե՛ս մեր յօդուածը. Անահիտ, 1932, թ. 5—6. «Սեւանի Առաքելոց դուռը»: Այդ դուռը այժմ գտնւում է Երեւանի թանգարանում:

Ամբողջ ԺԶ. դարից միայն մի յիշատակ ունինք այս վանքում, մի խաչքար թուագրուած ՌԴ (=1555) (*Ցաւել. Ա.* 153) :

Այնուհետեւ վանքի մասին տեղեկութիւն չունինք մինչեւ ԺԷ. դարի սկիզբը՝ Շահաբասի արշաւանքը, երբ ի միջի այլ վանքերի բացւում է եւ կողոպտւում նաեւ Աղջոց վանքի դարանը պարսիկ ասպատակների կողմից, տանելով Արիստակէս հայրապետի աջը Թաւրիզ շահաստան: Ապա «հանդիպեալ ումն վաճառական Բաղիշեցի այր մեծատուն, ետ գինս եւ թափեաց ի յանօրինաց եւ եբեր ի քաղաքն իւր Բաղէշ»1) : *Բայց ինչպէս երեւում է, աջը բերւում է դարձեալ իւր տեղը: Ըստ Դաւրիժեցու՝ Մելքիսէդ կաթուղիկոսը պարտքի փոխարէն գրաւ է դնում Արիստակէս հայրապետի եւ* «զաջն Աղջուց վանից Ս. Ստեփանոսի», *որ ապա ազատում է Մովսէս կաթուղիկոսը: Մելքիսէդ կաթուղիկոսն էլ ծագմամբ Աղջոց վանքից էր*2), *իսկ ժամանակակից առաջնորդն էր Միքայէլ եպիսկոպոս*3) :

Զաքարիա Սարկաւագը 1625 *թուին (ՌՀԴ) յիշում է* «Պետրոս աբեղայ Աղջոց վանից», *որ պատմել էր նրան Յոհաննայ վանքում Ղառչղայ խանի սպանման մասին Վրաց կողմից*4) : *Յիշատակարաններից տեղեկանում ենք, որ* 1679 *թուի մեծ շարժից շրջակայ միւս վանքերի հետ աւերուել է* «եւ Ախջոց վանքն»5), *բայց յետոյ նորոգուած պիտի լինի, որովհետեւ ԺԸ. դարի սկզբում վանահայրն էր Մովսէս անունով մէկը, եւ ապա չէն էր մինչեւ դարի կէսերը, Լեզգիների վերջին արշաւանքը*6), *որովհետեւ Զամբռի գրութեան ժամանակ դեռ չէն էր: Վանքի վիճակն էին կազմում Ծաթղան, մեծ եւ փոքր Գլանները. առաջինը Կոտայքում, իսկ երկրորդները ոչ հեռու վանքից՝ Քեղուայ ձորում:*

---

1) Ձեռ. էջմ. № 519:

2) Դաւրիժեցի (Բ. տպագր. էջմ.) 7. 277. 304:

3) Ալիշան, Այրարատ, 354:

4) Զաքարիա. 28:

5) Ձեռ. էջմ. № 548 (Կար. 534). 317բ.: Ջալալեան, Բ. 127:

6) Ալիշան, Այր. 354: Լէզգիների կամ Լեկաց առաջին արշաւանքը կատարուեցաւ 1721 թ. (Շահխ. Բ. 293: Ձեռ. էջմ. № 616, 205ա): Երկրորդ արշաւանքը նկարագրում է Սիմէոն կաթուղիկոսը իւր մէկ գրութեան մէջ. «*Թուղթ առ քաղօր արքայն Վրաց Հերակլ վասն ասպատակելոյ Լեկզեացն յերկիրս մեր*». տալիս է բաւական մանրամասն նկարագրութիւն այդ արշաւանքի, բայց ինչ որ Երեւանի եւ էջմիածնի շրջակայքին է վերաբերում. հեռաւոր տեղերի մասին՝ լռում է (Ձեռ. № 747. ձխԸ):

Դ.

ԹԱՆԱՏԻ ՎԱՆՔԸ

Այս վանքի ծագման եւ շէնքի մասին առիթ ենք ունեցել խօսելու նախընթաց գլուխների մէջ համապատասխան տեղերում։ Հիմնուած տեսանք Ը. դարից առաջ, բայց ժողովրդականութիւն ստացած Ստեփանոս Սիւնեցու նշխարներն այնտեղ ամփոփելուց յետոյ։ Ներկայ շէնքը բաղկացած է երկու մասից. տաճարը շինուած ՉԻԲ—ՉԻԸ թուականներին, Պռոշ իշխանի եւ նորա որդիների ժամանակ, նաւակատեաց տօնը կատարուած Մխիթար Այրիվանեցու ձեռքով եւ այդ առթիւ էլ նոր խմբագրած Ստեփանոս Սիւնեցու ընդարձակ վկայաբանութիւնը։ Մատուռի շէնքը, ենթադրաբար, նոյն համարեցինք ոմն «պարոն» Հայրուտի ձեռքով շինուած աղօթանոցի հետ (պատկ. 46—47)։ Եղել է մի երրորդ շէնք եւս տաճարի հարաւային կողմը, որ ի սպառ սրբուած է այժմ[1])։

Ներկայ շէնքերից առաջ էլ այնտեղ եղել է կեանք ու միաբանութիւն, բայց իրական մնացորդ միայն երեք գերեզմանական արձանագրութիւն ունինք. առաջինը ՈԿԷ (= 1218) թուականից, «խաչատուր անյաղթ փիլիսոփայի» յիշատակին, որ գտնւում է վանքից հարաւ, գիւղից դուրս գտնուած հին գերեզմանատանը. «անյաղթ փիլիսոփայ» կոչումը ապացոյց է աչքի ընկնող միաբանութեան եւ հոգեւոր կեդրոնի ներկայացուցչի, ինչ նշանակութեամբ էլ հասկանալու լինինք «փիլիսոփայ» կոչումը, որ միջին դարերում նշանակում էր նաեւ երգիչ, երաժիշտ. երկրորդը ՈՂ (= 1241) թուականին Գորգայ եւ Գրիգորի յիշատակին է. եւ Երրորդը ՉԱ (= 1252) թուականին խաչքարը, որ կանգնել են Սարգիս եւ Սիմէոն (Ցուց. Ա. 153 ա. բ. գ.)։

Ներկայ շէնքի հնագոյն արձանագրութիւնը, ինչպէս տեսանք, ամբողջութեամբ չէ հասել մեզ (Ցուց. Ա. 18, պատկ. 185), բայց պակաս մասերն արգելք չեն մեզ լիովին գաղափար կազմելու նորա բովանդակութեան մասին։ Շէնքը կառուցուած է «ի յարք(այու)թե. մեծին եւ բարէպաշտին Ապաղայ խանին», եւ «ի կաթուղիկոսութե. տն. Ցակոբայ եւ յարհական եւ քաջատոհմ յիշխանութե. Պռոշայ եւ որդոցն Պապաքին, Հասանա, մանկան էաչոյն», «յերկար կենդանութի. պարոնացն», Աստուածածնի փոխման տօնին երեք օր պատարագ սահմանելով բոլոր եկեղեցիներում։ Ծինութեան ժամանակից է ոմն Ամիրշահի արձանագրութիւնը։ Նա հոգացել է հիւսիսային կողմի աւանդատան կամ «մատրան» ծախսը եւ երկու պատարագ ստացել Դաւթի և Ցակոբայ տօնին (Ցուց. Ա. 154)։Թուականի հարիւրաւորը պարզ չէ, բայց միայն «Չ» կարող է լինել, քանի որ տասնաւորն ու միաւորը «ԻԷ» է, միանգամայն համապատասխան Օրբէլեանի յիշած ժամանակին[2]), որ շինութեան վերջաւորութեան եւ նաւակատեաց թուականն էր։ Այդպէս էլ կարդացել է Բաջբերունին[3])։ Ծինութեան ժամանակից պիտի լինին Դեղի արձանագրութիւնը գրուած ձախ աւանդատան դրան գլխին, որ քառասուն դեկան է տուել (Ցուց. Ա. 155) եւ Սահակինը (Ցուց. Ա. 155ա)՝ յետին աջ դասի աւանդատան գլխին։

Թուականով երրորդ հնագոյն արձանագրութիւնը համարել կարող ենք Խալայշահի թոռն Խութլուբէկի արձանագրութիւնը (պատկ. 186, Ցուց. Ա. 18բ)։ Այստեղ եւս պակասաւոր է, մանաւանդ չունինք «Չ» հարիւրաւորին հետեւող տասնաւորն ու միաւորը, որ յամենայն դէպս ՉԼԳ–ՉԽԱ թ. թ. մէջ կարող է լինել. այսինքն Պռոշի եւ Ամիր–Հասանի մահուան ժամանակների մէջ, առաջինը չէ յիշուած, որ անկարելի կը լինէր, եթէ կենդանի լինէր. իսկ երկրորդը յիշուած է, ուրեմն եւ կենդանի. սա էլ մեռած է ՉԽԱ թուականին[4])։ Նուիրատուն Պռոշեանների աչքի ընկնող պատ–

---

[1]) Աստ. 61. 62։ Մեր «Մխիթար Այրիվանեցի», եւն.։

[2]) Օրբ. 143։

[3]) Արարատ, 1889, 103։

[4]) Աստ. 70 եւ 80։

ներից մէկը պիտի լինի, որի երկրորդ արձանագրութիւնն ունինք արդէն 1300—1317 *թուականների մէջ (Ա.* 18*բ, պատկ.* 187): *Այստեղ յայտնում է.* «Ես Խութլուբէկս իմ պարոնացն ողորմութքն· Խաչո Մամախաթունին» *տուի Աղալտեղի հողը եւ միաբանները կարգեցին մի օր Նարնջին, որ իւր կինը պիտի լինի, եւ մէկն իրեն: Արձանագրութեան վաղագոյն ժամանակը* 1300 *թիւն ենք նշանակում, երբ Խաչին Պապաքի մահուանից յետոյ իշխանութեան գլուխն անցաւ, եւ յետնագոյն ժամանակը* 1317 *թ., երբ մեռաւ Խաչին*1)*: Որոշել չենք կարող, թէ ո՞րտեղ էր Աղալտեղի հողը, հաւանօրէն ոչ հեռու վանքից:*

Բայց այս միեւնոյն տոհմից ունինք եւ ուրիշ նուիրատուներ: Նախ քոյրը՝ Թաճմըլք, Սանճարի հետ, որ ամուսինը պիտի լինի, միաբանում է Ս. Ստեփանոսին եւ նուէր տալիս Կկուաքարի հողը Հովվենց հողով եւ հինգ ժամ ստանում. օգնել է նաեւ «Կատվհատնեաւ» (*Ա.* 156, *պատկ.* 186)*: Այս արձանագրութիւնը գտնւում է Խութլուբէկի արձանագրութեան տակ եւ նոյն գրչով, որով եւ կողմնակի կերպով նրանց ժամանակակցութիւնն ու ազգակցութիւնը հաստատւում, մանաւանդ հետեւեալ արձանագրութեամբ. Թաճմըլք «դուստր Մխիթարա, թոռն Խալաչահի» մի «վեցկի» (արօր) է տալիս իւր գերեզմանատանը եւ չորս ժամ ստանում Սանդխտոյ տօնին, երկուսն իրեն եւ երկուսը մօրը (Ցաւել. Ա.* 157)*: Նոյն տոհմից՝ Խութլուբէկի*



ՊԱՏԿԵՐ 185·

---

1) Աստ. 99:

եղբօր կնոջ՝ Աւագ խաթունի արձանագրութիւնն ունինք ՉԿԲ թուականից. «Ես Աւագխաթունս ամուսին Վաղթանկա որդո Խալաշահի» նուիրում է հարիւր դեկան եւ ստանում չորս օր պատարագ (Յաւել. Ա. 158, պատկ. 60)։ Արձանագրութիւնը գտնւում է արեւմտեան դրան քառանկիւնի շրջանակի ճակատին[1])։

Սորա տակն է, կամարակալ քարի վերայ, Ամիր-Հասանի կնոջ Թաճերի արձանագրութիւնը ՉԾԶ (= 1307) թուականից, որ տեսել ենք արդէն (Յաւել. Ա. 18գ)[2]). մեր կարծիքը նորա առհմական ծագման մասին քիչ յետոյ։



ՊԱՏԿԵՐ 186.

Գոռշեանների մի ուրիշ պաշտօնեայ Սիմիանոս, որի անունը կարդացուած է այլ եւ այլ կերպ (Յաւել. Ա. 18գ, պատկ. 186)[3]) ՉԾԸ (= 1309) թուականին եւ ոչ ՉՁԸ կամ ՉԺԸ, տալիս է իւր «հայրենի իգին պարոնացն ողորմութք. խաչո եւ Մամախաթունին» «Մխիթարա հոգւոյն» եւ երեք ժամ ստանում, երկուսը Մխիթարին եւ մէկն իրեն: Ջալալեան, Քաջբերունի, Ալիշան նուիրատուի անունը Սիմէոն են կարդացել եւ թուականը ՉՁԸ նշանակել, որ սխալ է: Խաչէն, Մամախաթունի ամուսինը, Օրբէլեանների փեսան, վախճանուել է 1317 թուին, ուրեմն եւ նուիրատուն չէր կարող ՉՁԸ (= 1339) թուականին նրանց ողորմութեամբ նուէր տալ: Ouvarovaի մէջ միայն թուականը ճիշդ է, բայց նուիրատուի անունը սխալ՝ Սինանոս՝ կարդացուած:

---

[1]) Մի անթուական արձանագրութիւն եւս ընկած է գիւղում, Աբդուրահիման Ամիր օղլիի տան մօտ, Խալաշի դուստր Խաթունի անունով, որ ֆառասուն դեկան է տուել (Յաւել. Ա. 172). Եթէ Խալաշի Խալայշահի կրճատ ձեւն է, սրան Խութլուբէկի հօրաքոյրը պիտի համարենք։ Նոյնանուն մի անձն «Խաթուն դուստր Խալայշահի» Ամաղուի Նորավանքին 300 սպիտակ է նուիրել, այգի գնել Առփայում եւ Տէր Սարգսի կարգադրութեամբ երկու օր պատարագ ստացել։ Տէր Սարգիսը Սիւնեաց նոյնանուն եպիսկոպոսն է (1274—1298, տե՛ս Օրբ., 499), վախճանուած Չխէ թուականին (Ալիշան, Սիսական, 194)։

[2]) Աստ. պատկ. 60։

[3]) Ընթերցուածների եւ թուականի տարբերութիւնները տե՛ս Յաւելուածի մէջ։



ՊԱՏԿԵՐ 187.

Հասիկ անունով մէկը ՉԿ (= 1311) թուին շինել է «պասարանոցն» եւ տուել Վարագայ Ս. Նշանին եւ Ս. Ստեփանոսին: Ժամանակի վարդապետն ու միաբանները նշանակել են չորս ժամ Քառասնից տօնին (Յաւել. Ա. 159): Նուիրատուի անունը Քաջբերունին կարդացել է «Յուսիկ», որին հետեւում է Ալիշան. իսկ Ouvarovaի մէջ դարձել է «Համիկ», մինչդեռ բնագիրը «Հասիկ» է ամենայն պարզութեամբ: Սրբագրութեան է ենթարկուել եւ չակերտների մէջ առնուած բառը. մենք կարծում ենք գրչի սխալն է այդ և պէտք է կարդալ «պամարանոցն» (Յաւել. Ա. 159, պատկ. 188)[1]:

Սալան ափան իւր որդիների հետ ՉՀԵ (= 1326) թուին Ս. Ստեփանոսին եւ Ս. Նշանին (Վարագայ) նուիրել է հարիւր դահեկան (Յաւել. Ա. 160), ստանալով Զատկի շաբաթը: Այս Սալանափան նուիրատուութիւն ունի նաեւ Զինջիրլուի Ս. Կարապետում[2]:

Տաճարի արեւելեան պատի վերայ գտնւում է Վահրամ Շահունեցու որդի Ուքանի արձանագրութիւնը (Ա. 161, պատկ. 189), որ Երերանի (Հերհեր) տէրն էր, նուիրելով Խալդինըրղալաին(?) հողերը «իւր դ. հատովն» եւ ստացել է վարդապետի եւ միաբանների կողմից երկու ժամ Ս. Նշանի (Վարագայ) տօնին: Արձանագրութեան տասնաւորը եղծուած է, իսկ հարիւրաւորն ու միաւորն են Չ եւ Ե, որ սակայն մեր նախորդների կողմից միայն Չն է նկատուած: Սակայն մի շարք արձանագրութիւնների եւ մի կարեւոր յիշատակարանի հիման վերայ հնարաւորութիւն ունինք ոչ միայն որոշելու եղծուած թուականը, այլ եւ նուիրատուի տոհմն ու անձը: Վահրամ Շահունեցու իշխանութեան կեդրոնը Վայոց ձորի Հերհեր աւանն էր, Գնդեվանքի եւ Ս. Խաչի կամ Մալիշկայի մէջ, Դալիկ թափայի ստորոտում[3]: Իշխանութեան գլխաւոր սրբավայրն ու հոգեւոր կեդրոնն էր Ս. Սիոն կոչուած անապատը զոյգ մատուռներով, Հերհերից քիչ

---

[1] Անուան եւ ընթերցուածների տարբերութեան մասին տե՛ս Յաւելուածը:

[2] Christ. Vostok. 238. մեր յօդուածը. Potomstwo Tarsaitcha i Minachathuni:

[3] Քաջբերունի. Արարատ. Ճանապարհորդական նկատողութիւնք. ԽԱ. Արարատ, 1889, 279 եւ շար. 321 եւ շար.: Ալիշան. Սիսական, 114: Գրի առնուած եւ ստուգուած նաեւ մեր կողմից:



ՊԱՏԿԵՐ 188·

դէպի հիւսիս մի ծորակի մէջ: Հարաւային մատրան վերայ գտնւում է Վահրամ Շահունեցու մեծ արձանագրութիւնը ՉԼԲ Թուականից, ուր յիշատակութիւն կայ նաեւ մեր նուիրատու Ուքանի եւ եղբայրների մասին: Վահրամի եղբայրն էր Ուքան, ոչ նուիրատուն, այլ նորա հօրեղբայրը, իսկ կինը Գոնցան: Վահրամի Ուքան եղբօր դուստրն ենք համարում Թաճերին, Ամիր-Հասան Ա·ի կնոջը, Պռոշի երկրորդ որդու: Կրկին անգամ յիշատակուած են «գեղապանծ իշխան» Վահրամը Գոնցայի եւ իրենց Ուքան, Հասան եւ Ամադին զաւակների հետ «ի թվին ՉԽՁ» *Շաղ միայնակեացի արձանագրութեան մէջ*1): *Վահրամ մեռած էր արդէն ՉԾԹ* (= 1310) *Թուականին, որովհետեւ Վարդան վարդապետը իւր արձանագրութիւնը Թուագրում է միայն* «ի պատրոնութեան տեղւոյս Ուքանայ, Հասանայ, Ամադենայ»2): *Բայց Ամադինն էլ մեռած էր արդէն ՉԽԴ Թուին, երբ մայրը Գոնցան տալիս է Նորավանքին* «խանակեաիի էգին Ամադինի հոգւոյն»3): *Վերջին անգամ երեք եղբայրները յիշատակւում են Գոնցայի ՉՂԴ* (= 1345) *Թուականի արձանագրութեան մէջ, երեքն էլ արդէն մեռած*4):

Նոր մանրամասնութիւններ ենք իմանում մի աւետարանի յիշատակարանից, որ գրել է տուել Ամա-

---

1) Ալիշան· Սիսական· 113:

2) Ալիշան· Սիսական· 117:

3) Անդ· 197—8:

4) Անդ· 115—6:

դինի կինը Թուղթանի, ըստ Գոնցայի արձանագրութեան Թուխտանի, «դուստր Իւանէ թագաւորատոհմ եւ բարեպաշտ իշխեցողի Որոտան գաւառի», «քոյր քաջ քարտուղարի եւ երջանիկ բարունապետի Յովհաննէս վրդի.», *որ Որոտնեցին է,* «հարսն մեծ Շահունեցեանց, կենայկից հզաւր եւ մեծ իշխանին Ամատին»։



ՊԱՏԿԵՐ 189.

Նրանց հայրենիքն է «Երերան», *վանքը՝* «Քալատակ» *եւն. իշխանուհին չինել է Երերանի (գիւղի) Աստուածածնի ժամատունը եւ դնել այս աւետարանը ի յիշատակ իւր ամուսնու, որ գրուած է* «ի վանս Երերան, ընդ հովանեաւ սբ. Ածածնիս եւ Գէորգայ զաւրավարիս, ձեռամբ անարհեստ եւ մեղսայմակարդ եւ փցուն գրչի Վահանայ ի թւաբերուն. հայկազեան տոմարիս ԶՂԸ (= 1349)»[1]։ *Այստեղ եւս յիշատակուած է երեք եղբայրների մահը երիտասարդութեան հասակում։*

Ըստ այսմ մեր նուիրատու Ուքանը Վահրամ Շահունեցու եւ Գոնցայի որդին էր, կենդանի ԶԽԴ, ԶԽԶ եւ ԶԾԹ թուականներին, մահը յիշատակուած ԶՂԴ եւ ԶՂԸ թուականներին։ Նորա նուիրաբերութիւնը կարող էր ԶԿԵ, ԶՀԵ կամ ԶՁԵ թուականին լինել։ Ա՛րդ, համեմատելով արձանագրութեան թուականի տասնաւորի մնացորդը ընդգծուած տառերի հետ, մասամբ միայն նմանութիւն ենք գտնում Հի, բայց աւելի Ձի հետ, որով եւ վերականգնել կարող ենք թուականը՝ ԶՀԵ, բայց աւելի հաւանական ԶՁԵ։ Վերջին դէպքում ԶՀԵ թուականին Յախայ քարում թաղուած Ուքանից տարբեր անձն պէտք է համարել մեր Ուքանին. «Զազնիւն յընտրեալսն եւ զքաջն ի զաւրականսն զպարոն Ուքանն յիշեցէք. թուին ԶՀԵ»[2]։

---

[1] Վարդաշէնի եկեղեցու աւետարանի յիշատակարանը։

[2] Քաջբերունի, Արարատ, 1889, 327։ Ալիշան. Սիսական, 156։ Առ հասարակ դժուար է ենթադրել տարբեր տոհմի իշխանը,

Եփրեմ վարդապետի ժամանակ ՉՂԷ (= 1348) թուականին Սարգիս ? որդի Սմբատայ եւ թոռն Լիպարտի տէր Փանձաթաղին նուիրում է «ի մեր հալալ հայրէնեաց որ ի Փանձաքաղին զՄազմանենց եւ զԱւանշահեց էգին» եւ ստանում Աստուածածնի տօնին մեկ պատարագ (Ցուցկ· Ա· 162, պատկ· 189)։ Փանձաթաղ կամ Փոնձաթաղ անունով վայրի մասին խօսել ենք առաջ1), որ ներկայ Քէշիշքենդի մօտն էր, իսկ նուիրատուն Օրբէլեանց տոհմից։ Ոչ հեռու այդտեղից՝ Վարդանի բերդը՝ սեպհականութիւն էր Չեսար Օրբէլեանի։ Այս Սարգիսն էլ նորա մերձաւորներից մէկն էր, որի մասին մեզ անյայտ աղբիւրից տեղեկութիւն ունի եւ Ալիշան, որ դրել է Օրբէլեանց ճիւղագրութեան մէջ2)։ Պէտք է ասել, նուիրատուի անունը շատ աղօտ է արձանագրութեան մէջ, ուստի եւ կարդացուած է Ջալալեանի կողմից «Ես Բենարիտի Մամա թոռն», Բաջբերունին՝ «Բենարդի», Ալիշան՝ «Բենա», Ouvar. Mat. XIII. խառնած է բոլորովին եւ դուրս է եկել «Ես Պետրոս որդի Աբրահամ թոռն»· մենք էլ (Աստ· 21) կարդացել ենք «Կենա»։ Բայց լուսանկարը երկար եւ ուշադրութեամբ քննելուց յետոյ, պարզուեց, որ պէտք է լինի «Եսարգիս որդի Սմբատա թոռն» եւն·։ Այս Սմբատն էլ Խաղբակեանների Սպիտակաւոր Աստուածածնին նուիրել է Վախտանգենց այգին ՉՁԸ թուականին, որից մակաբերել կարելի է, որ նրանք խնամութեամբ կապուած էին իրար հետ։ Այդպիսի երեւոյթ նկատւում է իշխանական տոհմերի արձանագրութիւնների մէջ3)։

ԺԴ· դարի քառասնական կամ յիսնական թուականների սկզբին պիտի նշանակել Ամիր-Հասանի թոռը եւ Խաչիլի որդի Ջումայի եւ նորա կնոջ Խոնդգի արձանագրութիւնը, եկեղեցու ներսը՝ արեւմտեան պատի վերայ՝ դրան մօտ (Ցուցկ· Ա· 27, պատկ· 92), որոնց մասին խօսել ենք արդէն։

Տաճարի պատերին մնացած արձանագրութիւններն անթուական են եւ չեն կապուած պատմական անձանց անուան հետ, որով կարելի լինէր ժամանակները որոշել· յամենայն դէպս նրանք ԺԴ· դարի կէսերից վաղ են։ Այսպէս Թէլիկ ոմն եւ ոչ Թեկղի, ինչպէս տալիս են Ջալալեան (Բ· 210), Ալիշան (122), Ouvar. (129), որ ստուգուած է մեր կողմից տեղում եւ կրկին անգամ լուսանկարի վերայ, միաբանում է ընծաներով եւ երկու ժամ ստանում (Ցուցկ· Ա· 163, պատկ· 186)։ Արձանագրութիւնը գտնւում է հարաւային պատի արեւելեան կողմը։

Նոյն պատին բաժակից ջուր խմող երկու սիրամարգների քանդակի տակ, Սեթարը քսան դահեկան է տուել եւ մի օր ժամ ստացել «Նավայարին» (Ցուցկ· Ա· 164, պատկ· 190)։ Սորա տակը՝ Պետրոս զանգակի ծախս է տալիս եւ երկու ժամ ստանում (Ցուցկ· Ա· 165)։ Զանգակի գինը պիտի լինէր ոչ աւելի քան քառասունից յիսուն դահեկան, որովհետեւ սովորաբար իւրաքանչիւր ժամի համար նուէր է տրւում այս ժամանակները քսան կամ քսանեւհինգ դահեկան։

Նոյն պատին աղաւնի յօշոտող բազէի քանդակի տակ Արեւհարը միաբանում է, քսան դահեկան տալով եւ մի ժամ ստանում Խաչգիւտին (Ցուցկ· Ա· 166 պատկ· 190)։

Արեւելեան պատին «Բուրայիս թոռնս Սամաղաւլին» եւ (թէեւ?) «Սարգիս», տալիս է Զարինայ «վարի» հողը «նացան» հայրենիք, «նաքան տվին զԱյտնութե·» հինգ օր ինը խորանում (Ա· 167, պատկ· 189)։ Պարզ չէ, թէ սրանք տարբեր անձնաւորութիւններ ե՞ն, ուրեմն, առաջնի արձանագրութիւնը կիսատ մնացած եւ շարունակութեան վերայ երկրորդի՞նն սկսած, թէ երկանուն մի անձնաւորութիւն է։ Ուշադրութեան արժանի լեզուաբանական բարբառագիտութեան տեսակէտով չակերտների մէջ առնուած ձեւերը, որ յատուկ են Ն· Նախիջեւանի բարբառին։ Արձանագրութիւնը գտնւում է Ուքանի եւ Լիպարտի թոռ Սմբատայ որդի Սարգսի արձանագրութիւնների գլխին, որ ԺԴ· դարի առաջին յիսնամեակի գործ համարեցինք։ Այս էլ մօտաւորապէս նոյն ժամանակի գործ ենք ընդունում հնագրական նշաններից դատելով։

Արեւմտեան դրան աջ կողմից շինութեան արձանագրութեան տակ Բուրինայի արձանագրութիւնն է, որ ընծայ է տալիս Ս· Ստեփանոսին եւ երկու օր պատարագ ստանում Ս· Խաչին (Ցուցկ· Ա· 168· պատկ· 185)։ Սորա տակն է մի շատ եղծուած արձանագրութիւն, որի ճիշդ ընթերցմանը վստահ չենք· ոմն Նաւորդ ? Խաթուն եւ ամուսինը Սախո՞ս թէ Վախոս եւ

մանաւանդ աւագ իշխանը, որ պէտք է լինէր Ուքանը, թաղուէր մի այլ տոհմի վանքում։ Բայց Շահունեցիք Օրբէլեանների սպարապետներն էին, նրանց արքունիքի հետ կապուած, ինչպէս այդ հաստատ գիտենք Ամադինի մասին վերեւ յիշած աւետարանի յիշատակարանից։ Ցախաց քարում թաղուած Ուքանը կարող է եւ մեր նուիրատուի նոյնանուն հօրեղբայրը լինել։

1) Աստ· 21։

2) Սիսական· 192։

3) Աստ· 111։

Մուրադ փաշէս տալիս են իրենց գնած էջին (Ցաւել. Ա. 169)։

Տաճարի ներսը, դռնից դէպի հարաւ, ոմն Աւֆսուլիտ քառասուն դեկան է տալիս եւ երկու ժամ սահնում Ս. Սարգսին (Ցաւել. Ա. 170)։ Ջալալեան, Բաջբերունի, Ալիշան եւ Ouvarova նուիրատուի անունը կարդում են «Աւագ սուլիմս», բայց իրարից արտագրելով։ Մի ուրիշ փոքր արձանագրութիւն էլ ունինք հիւսիսային կամ աջ աւանդատան պատին, երկու խաչերի կողքին, Ամիր չահի (Ցաւել. Ա. 154) արձանագրութիւնից բարձր, Պետրոսի եւ իւր ծնողաց յիշատակին (Ցաւել. Ա. 171)· պէտք է ենթադրել շինութեան ժամանակից· տեղից դատելով աւանդատան հետ կապուած։

Մի շարք Թուականով խաչքարեր եւս ունինք վանքի այլ եւ այլ կողմերում։ Նոցանից երեքը (153ա—153գ), որ աւելի հին էին, քան ներկայ շէնքը, տեսանք վերեւ։

Շինութեան ժամանակից է մի խաչքար, որ ոմն «տր.» «ի թվիս ՉԾԻԵ» (s!) (= 1276) կանգնել է իւր ամուսնու եւ որդու փրկութեան համար (Ցաւել. Ա. 173)։ Երկրորդը Թանատի եւ Ս. Խաչ վանքի ճանապարհի վերայ՝ Մանուէլ քահանան կանգնել է իւր Խաչատուր եղբօր յիշատակին ՉԻԶ (= 1277) Թուին (Ցաւել. Ա.



ՊԱՏԿԵՐ 190·

174)։ *Սորա կողքին ընկած է մի ուրիշը՝ ՉԽԵ (=1296) թուականով·* «Որք անցանէք...» *եւայլն, որ ամբողջութեամբ չի կարդացւում, յատկապէս անունը։ Սրանց մօտ է Զաքէսի եւ եղբայրների յիշատակին կանգնած խաչը։*

Ըստ Ալիշանի, որ վրիպել է մեր ուշադրութիւնից, գիւղի արեւմտեան կողմի խաչերից երկուսը արձանագրութիւն ունին, մէկը «Ներսէս քահանայ, որ տարաժամ փոխեցաւ առ Քրիստոս, Աստուած ողորմի· թ· ՉԽԴ»· *միւսն անթուական է·* «Դաւիթ քահանայ յիշեցէք յաղաւթս»։

ԺԴ· դարի կէսերից ընդհատւում են մեր տեղեկութիւնները վանքի մասին։ Չունինք եւ յիշատակարաններ բացի Ն· Ջուղայի № 34 *աւետարանից եւ էջմ·* № 408 *Նժ· Նարեկից, որոնք գրուած են այս վանքում եւ օգտագործել ենք իւր տեղում։ Հաւանական չենք համարում, սակայն, որ ԺԳ· դարի կէսերից մինչեւ ԺԴ·ի կէսերը արձանագրութիւններով հարուստ մի վանքում, ուր եղել են եւ առաջնորդ «վարդապետ»ներ, այդքան ամուլ լինէր ձեռագրական արուեստի կողմից։ Ինչպէս էլ լինի, իրողութիւն է, որ վանքի դիրքը ԺԴ· դարի կէսերից յետոյ՝ շատ երկրորդական էր։ Այս ընդհատումից յետոյ շատ չնչին և կցկտուր մի քանի տեղեկութիւն ունինք միայն այստեղ կեանք լինելու մասին։ Տաճարի արեւելեան կողմը ՊԵ* (=1356) *թուականից է Սարգիս քահանայի տապանագիրը (Ցաւել· Ա·* 175)*· ՋԴ* (= 1455) *թուից Ամի(ր?) Սարգսի խաչքարն է իւր ծնողների եւ որդու յիշատակին՝ հարաւային գերեզմանատանը· Խաչատուրի եւ իւր կենակից Արզուքանի յիշատակին են ՌԳ* (=1554) *թուականի խաչանիշները տաճարի հիւսիսային պատին ներսից· Շահռամանի խաչքարը տաճարի արեւելեան կողմը (Ցաւել· Ա·* 176, 177, 178)։ *Այստեղ է եւ Մահեւանա քահանայի անթուական տապանագիրը·* «Քս· ողորմի Մահեւանա քահանայի», *որ գուցէ ԺԴ· դարից լինի։*

Ձեռագրական մի յիշատակարան միայն ունինք այսքան երկար ժամանակի համար։ Թանատի վանքի Յովհաննէս կրօնաւորը 1491 *թուին գրել է մի Ճաշոց Գեղամայ Գաւառ գիւղում*[1])։

Ահա մեր բոլոր տեղեկութիւնները վանքի վերջին դարերի կեանքի մասին։

---

[1]) Բաջբերունի· Արարատ· 1889, 104։

Ե·

ԿՈՒՔԻ ԵՒ ՈԾՈՊԱՑ ՎԱՆՔԵՐԸ

Խաղբակեանց կամ Պռոշեանց տոհմի հոգեւոր կեդրոններից մէկն էլ Կուքի վանքն է, այսպէս կոչուած տեղի անունով, մինչդեռ արձանագրութիւնների եւ յիշատակարանների մէջ Հաղարաբիւրք է յիշւում: Կուքին գտնւում է համանուն գետակի ակունքների մօտ եւ համանուն կամ Սանդեար լերան ստորոտում, մի գողտոր, գեղազարդ անկիւնում: Պտղատու ծառերի պարտէզները զարդարում են գիւղի միջով անցնող գետակի ափերը, յատկապէս խնձորի, տանձի եւ դարաւոր, հաստաբուն ընկուզենիները: Կլիման սքանչելի և առողջարար, որովհետեւ պատսպարուած է Կուքի բարձր սարով հիւսիսային քամիների դէմ:

Վանքը պարսպապատ է քառանկիւնի ձեւով: Մեծ դարբասի բացուածքը հարաւից, իսկ աւելի փոքր դուռը արեւմուտքից: Հարաւային դարբասի մօտ, բակի մէջ, աղբիւրի վերան շինուած է մի մատուռ, իսկ բուն եկեղեցին աւելի դէպի հիւսիս, դրսից սրբատաշ քարով, իսկ ներսից քար ու կրով. պարսպին կից արեւմուտքից եւ հարաւից խցերն էին ընկած: Եկեղեցին փոքր է, չորս ափսիդներով, որոնց կամարները իրենց ներքեւի մասում միացած միմեանց հետ անմիջապէս, հաղուագիւտ երեւոյթ մեր եկեղեցական ճարտարապետութեան մէջ: Արեւմտեան կամարով եկեղեցին միանում է գաւիթի հետ, դալանաձեւ երեք կամարներով կապուած: Գաւիթն աւելի ընդարձակ է, քան եկեղեցին, եւ աւելի ուշ ժամանակի, հաւանօրէն, ԺԷ· դարի:

Վանքը շատ աղքատ է արձանագրութիւններով: Հնագոյնը մի խաչքար է 1215 թուի արձանագրութեամբ, այն էլ վանքի սահմաններից բաւական հեռու Ջրաղացի ձորում: Երկրորդը 1287 թուականից, որ կանգնել է Պռոշի աւագ որդին՝ Պապաքը իւր ամուսնու կենդանութեան համար (Յաւել· Ա· 180): Երեւի, այս երկրորդ արձանագրութեան հիման վերայ Սմբատեանը[1] վանքի հիմնարկութիւնը կապում է նոյն իշխանի անուան հետ, որ իրական ապացոյց լինել կարող չէ այդպիսի կարծիքի համար: Ուրիշ արձանագրութիւն չգտանք վանքի հիմնարկութեան մասին, իսկ նա Պապաքի այս արձանագրութիւնն էլ առանձին չի յիշում: Վանքի պատերի վերայ միայն մի արձանագրութիւն ունինք 1291 թուից, որով տեղեկանում ենք, թէ Վրթանէս եւ Աղութ ամուսինները հարիւր դեկան են տուել «ի Ռ: բիւրքս» եւ միաբանները երկու ժամ նշանակել (Յաւել· Ա· 181): Իսկ արեւմտեան պատի մէջ հաստատուած է մի փոքրիկ, գեղեցիկ եւ նրբաքանդակ խաչ, որի մի կողմից գրուած է «թվ· Չ: Խ· Ե·», իսկ միւս կողմից՝ «Ած ողորմեա Վար(դ)ան···» (պատկ· 191): Արձանագրութեամբ մի քար էլ տեղաւորուած է հարաւային դարբասին մօտ՝ պարսպի մէջ, որ, անշուշտ, վանքի շինութեան վերայ էր՝ բովանդակութիւնից դատելով· «մեք Սարգիս (եւ) Յովէս· միաբան/եցաք ի սբ· Ածածնիս եւ ետու/··· ս· եկեղեցոյս վդս· Սա/···· գծառզարդարին պատ/····/»: Բարեբաղդաբար, հնարաւորութիւն ունինք որոշելու արձնագրութեան մօտաւոր ժամանակը, որ ԺԴ· դարի առաջին քառորդն է, սրանց աշակերտի գրած Լամբրոնացու պատարագի մեկնութեան յիշատակարանով, որի մասին խօսք կը լինի քիչ յետոյ:

Թուականով մի քանի խաչարձաններ են մնացած գերեզմանատանը, որ վանքի հիւսիս-արեւմտեան կողմն է, մի բլրի վերայ: Դոցանից հնագոյնը 1292 թուից է· «Ես Յակոբ մեղաւոր / քահ· կանգնեցի զխաչս ի /···/ (յ)աղաւթս·· (յիշեցէք?) / թվ· ՉԽԵ» (= 1296): Մի ուրիշ հասարակ խաչքարի վերայ փորագրուած է միայն «ի թվ· ՉԾԱ» (= 1302): Արեւելա-հիւսիսային կողմը բլրի վերայ պատուանդանով մի խաչքար կայ, որի ճակատի արձանագրութիւնը չի կարդացւում, բայց թեւերի մօտ փորագրուած է թուականը՝ «ՉԾԷ» (= 1308):

Այսպիսով տեսնում ենք, որ վանքի շինութեան հետ կապուած արձանագրական տեղեկութիւնները ԺԳ· դարի վերջին տասնամեակներից այն կողմը չեն անցնում, բայց եւ այնպէս նորա գոյութեան մասին ունինք աւելի հնագոյն ապացոյցներ՝ 1215 թուի խաչարձանից զատ եւ ձեռագրական յիշատակարան 1276 թուականից· այստեղ է գրուած Լամբրոնացու Պատարագի մի մեկնութիւն, «որոյ յառաջաբանի մեկնութիւն է ի Լամբրոնացւոյն՝ բաղդատութեամբ երից օրինակաց»[2]: ԺԳ· դարից յաճախում են մեր ձեռագրական յիշատա-

---

[1] Սմբատեան· Երնջակ· 485:

[2] Սմբատեան· Երնջակ· 140:

կարանները· 1333 *թուին Մարկոս կրօնաւորը գրել է տալիս* «ի վանքս Կուքւոյ ի տան մեծի սրբարանիս եւ Ածաբնակ տաճարիս Ածածնիս եւ սբ· եւ ահեղ հզօր նշանիս Հազարաբուրաց» *Լամբրոնացու Պատարագի մեկնութիւնը։ Յիշատակարանը թուագրուած է ի միջի այլոց, Պռոշեանց Վասակ իշխանի անունով·* «եւ ի յիշխանութե· նահանգիս մերոյ թոռին Պռոշա զոր (s!) ի յազգէն Վարդանանց Վասակա», «եւ յառաջնորդութե· ուխտիս մերոյ տր· Սարկաւագին»[1]։ *Մենք բացատրել ենք, որ այս Վասակը Խաչիի որդին էր, Ամիր-Հասան Բ·ի եղբայրը*[2]։ *Յիշատակարանի հեղինակի ուսուցիչները են եղել Սարգիս եւ Յովհաննէս, որոնց արձանագրութիւնը տեսանք հաստատուած պարսպի պատի մէջ։ ԺԴ· դարի կէսերին մօտաւորապէս յիշատակւում է Դանիէլ գրիչ Կուքեցին, որ արտագրել է Մարգարէ վարդապետ Ոծոպեցու համար Յովհաննէս Քռնեցու թարգմանած «Գիրք Դժոխոց»ը, վերջում աւելացնելով հետեւեալ փոքրիկ յիշատակարանը·* «Զդանիէլ Կուքեցի գծօղ տետրիս քարոզի յաղօթս յիշեցէք»[3]։ *Մարգարէի վարդապետը Քռնեցու հետեւողներից էր, Եսայի Նչեցու աշակերտներից։ Գուցէ նոյն շրջանին էր պատկանում եւ Դանիէլ Կուքեցին։*


ՊԱՏԿԵՐ 191·

ԺԵ· դարի սկզբին, 1409 *թուին*, «ի 17 յոբելեանի եւ ութ թուոց», «ընդ հովանեաւ սուրբ Նշանին Հազարաբիւրք անուանեալ» *գրուած է Գիրք Ստորոգութեանց Արիստոտելի*[4]։ *Փիրղալէմեանը իր «Նօտարք Հայոց»ի մէջ բերում է մի Պատարագամատոյցի յիշատակարան, գրուած* «ի թուականիս մեր Հայոց ՋԺ (= 1461) ի ձոր Շահապունից, ի վանքս Կուգոյ»· *գրիչն է* «Յովտէփ յետին եպիսկոպոս»[5]։

Իբրեւ գրչութեան գեղեցիկ գործ շատ աւելի կարեւոր է Էջմիածնի մատենադարանի № 1511 (*Կար·* 1462) *Յայսմաւուրքը*, «ի թվաբերութես· հայոց ի Ջ· Ի·» (= 1471) *Մանուէլ գրչի ձեռքով*, «ի ձորս Շահապունեաց ի գեւղս, որ կոչի Կուքի, ընդ հովանեաւ սբ· Հազարաբիւրացս եւ սբ· Կաթուղիկէիցս սբ· Ածածնի եւ սբ· Ստեփանոսի եւ գեղամիջի սբ· Գրգրիս· եւ սբ· Նշանիս եւ այլ միահամուռ Վարդանանց սբ· նահատակացս» (*Յաւել· Բ·* 54, *պատկ·* 192)։ *Ձեռագրի սկզբնական մասը գրել է Յակոբ գրիչ մինչեւ 70բ·, եւ ապա շարունակել է Մանուէլը, որի ծնողներն են Պետրոս քահանայ եւ Ալամշատ։ Ստացողներն են Յովհաննէս կրօնաւոր կամ ճգնաւոր եւ Յորդան կամ Յորդանան մաղդասի իւր որդի Մկրտիչ աբեղայի հետ։ Յիշում է եւ* «Գրգրին եւ տր· Խաչատուրին եւ տր· Յոհանին», *որոնք հաւանօրէն վանքի միաբաններից են, նաեւ* «խոնդշայ ապաշխարողին, որ ԺԲ· թկյ· աւգնութի· երետ մեզ» (*գրչին*)։ *Ձեռագիրը բաղկացած է* 601 *թերթից*, 31,8×20,6 *սմ· մեծութեամբ, երկսիւն, իւրաքանչիւրը* $24^1/_2=7{,}2$ *սմ·։ Թուղթը ընտիր է, ողորկ, լաւ օսլայած*[6]։

Այս Մանուէլ քահանայ գրչի ձեռքով գրուած է եւ մի Գանձարան Ջ եւ Իէ (= 1478) *թուին*, «ի գեւղս որ կոչի Կուքի, ընդ հովանեաւ սբ· Հազարաբիւրացս եւ սուրբ Գրիգորիս եւ սբ· Նշանիս»։ *Ստացողն է Ըռուզբէկ, որի մահուանից յետոյ գործը շարունակել են տուել կինը՝ Ասուդան, դուստրը Սուլթան-մելիք եւ թոռները Ալիբէկ, Ահմիբէկ։ Ըռուզբէկի փեսան եւ Սուլթան-մելիքի ամուսինն է Հազարբէկ եւ սրանց որդիքն են Սաթիբէկ, Յակոբ եւ Ահմիբէկ, որոնք ձեռագիրը ընծայում են Ագուլիսի Միջիթաղի Ս· Սիօն եւ Ս· Յակոբ եկեղեցիներին։ Մանուէլ գրչի ծնողները Պետրոս քահանայ եւ Ալամշատ յիշուած են եւ այստեղ, որով երկու Մանուէլների նոյնութիւնը կասկածից դուրս է մնում*[7]։

Նոյն Մանուէլ գրիչը 1493 *թուին* «ի ձորս Շահապունեաց ի գեւղս Կուքի (s!) կոչեցեալ ընդ հովանեաւ սուրբ եկեղեցեացս եւ սուրբ խաչերոյն եւ Վարդանանց սուրբ նահատակացս» *գրել է մի Մաշտոց Վարդան քահանայի համար*, «ի ժմկին· որ Ըռաստամ անուն փատշահ կանգնեցաւ եւ գնաց ի վր· Շարվանայ...»[1])։ *Նոյն յիշատակարանից օգտուել է եւ Ալիշան, առանց տեղը յիշելու, որից իմանում ենք, թէ Վարդան քահանայի ծնողներն են Մուրատ եւ Խոնտխաթուն եւ մօրքուրն Թաղամելիք եւ թէ Մաշտոցը գրել է տուել* «ի վայելումն որդոյ իւրոյ Վանական քահանային եւ Անտոնին»[2])։

---

[1] Ալիշան· Սիսական· 487։

[2] Աստ· 107։

[3] Ձեռ· էջմ· № 370 Նժ։

[4] Սմբատեան· Երնջակ· 125, արտագրել է Գանձասարի 1868 թ· ցուցակից։

[5] Փիրղալէմեան, Նօտարք, 205։ Համեմատել Ալիշան· Սիսական· 478 եւ Սմբատեան· Երնջակ· 130։

[6] Յայսմաւուրքի յիշատակարանի սկզբում 601բ· կայ մատենագրական տեղեկութիւն Տէր Իսրայէլ Խաչենեցու խմբագրութեան մասին։ Մի ուրիշ յիշատակարանից 602բ· երեւում է, որ յետին ստացող Գրիգոր ոմն տալիս է *«Վանմ Կալասեռու սբ· Գրիգորի եկեղեցւոյն, որ է յերկիրն Վայո ձորոյ, ի նահանգին որ ասի Աշոտի ձոր»*, իսկ այդ գիւղի անցման դէպքում *«տանեն Հերմոնի վանքն եւ սբ· յանապատն Շատիկու ամանաթ պահեն»*։

[7] Սմբատեան· Երնջակ· 141, 194։

Վերջապէս նոյն Մանուէլ գրիչն ունի եւ մի աւետարան գրած «թուականիս Հայոց Ջ եւ ԽԴ (= 1495) ընդ հովանեաւ սուրբ Հազարաբիւրացս եւ սուրբ նշանացս եւ սուրբ եկեղեցեացս ի գիւղս Կուքի կոչեցեալ»։ *Ստացողներն են Ջան ղուրբան եւ Ջաւահիր ամուսինները, ի վայելումն իրենց Գալուստ քահանայ որդուն։ Յիշատակարանի վերջում գրիչը ներողութիւն է խնդրում սխալների եւ խոշորութեան համար*, «զի կար մեր այս էր, զի լոյս աչիս պակասեալ էր եւ հոգս եւ պատրանք աշխարհիս զմեզ ընկղմեալ էր ի դառն եւ դժուար ժամանակի, որ յոյժ վշտացեալ եմք ի յայ(լ)ազգեաց...»[3])։



ՊԱՏԿԵՐ 192·

Մի տարի յետոյ «ի թվ· Հայոց ՋԽԵ (= 1496), ի դառն եւ դժար ժամանակի յոյժ տառապեալ եմք» «ի խնդրոյ բարեպաշտ եւ երկիւղած քրիստոնէից Գուզալին եւ ամուսնոյն իւր Խոնծին» *գրուած է մի աւետարան, որի գրչի մասին Սրուանձտեանցը տեղեկութիւն չէ տալիս, բայց, հաւանօրէն, նոյն Մանուէլն է*[4])։

Գեղամիջի Ս. Գրիգորը, որ յիշուած տեսանք նախընթաց յիշատակարանների մէջ, կիսականգուն վիճակի մէջ է այժմ. բայց այդ շէնքն էլ հինը չէ, այլ 1669 *թուին շինուած հնի տեղում Յակոբ կաթուղիկոսի ժամանակ*. «Մենք Կուզվայ ժողով/ուրդս շնորհօքն Քս·ի / շինեցաք սբ· Գրիգոր եկեղ· հայրապետութի·։ / տն· Յակոբայ· թվ· ՌՃԺԸ»։

Նահապետ կաթուղիկոսի ժամանակ վանքի առաջնորդը մինչեւ իսկ եպիսկոպոս էր եւ հաւանօրէն նաեւ շրջանի առաջնորդը, որ տարբեր տեղում գրուած մի աւետարան թուագրուել կարող է նորա անունով «ի հայրապետութեան տեառն Նահապետ կաթուղիկոսի ի առաջնորդ (s!) Մարտիրոս պարոն տէր Հազարափրկչին· արդ նորոգեցաւ յիշատակարան սուրբ աւետարանիս ՌՃԽ եւ Ե թվին (= 1696)... սուրբ Գրիգոր եկեղեցին ի գիւղն Գոմէր ի գաւառն Շահբունեաց ի յերկիրն Նախչուան»[5])։ *Մարտիրոս «պարոն տէր» կոչումը իշխանական կամ ազնուական ծագում է մատնանշում. արդեօ՞ք Պռոշեանց մնացորդներից։*

Մեր վերջին տեղեկութիւնները հասնում են մինչեւ 1730 *թուականները, երբ Կուքեցի Սարգսի որդի Առաքել վարդապետը նոտրագիր մի ժողովածու է գրում Պոլսում* (*Յաւել. Բ.* 55) «ի թվին մերյ· ՌՃՀԹ եւ ի Մայիսի ամսոյ իթ·», *իսկ* 1735 *թուին մի խաչ նուիրում իւր հայրենի գիւղի վանքին*. «Սուրբ խաչս յիշատակ է Կուքեցի Առաքել վարդապետին եւ իւր ծնողացն, ի դուռն ս· Ռ·ափրկչին (Հազարափրկչին)· թվ· ՌՃՁԴ»։ *Այդ Խաչը մինչեւ վերջերս գտնւում էր Ապրակունեաց Ս. Կարապետի վանքում*[6])։

Խաչիկ գիւղի մօտ մի ճիթահանի վերայ արձանագրուած է «Կուքեցի ուստայ Յովհաննէս նկարաքար», *ըստ Ալիշանի*[7]) «*ոչ ի վաղուց*», *բայց որքան հին, ասել չենք կարող, մեր նկատողութեան տետրակում ոչինչ նկատած չլինելով այդ մասին։*

Շահապունեաց ձորի երկրորդ նշանաւոր կեդրոնն է Ոծոպի կամ Ածոպի վանքը, Օծոպի նոյնպէս կոչուած (*պատկ.* 17), *որ մեր պատմական մատենագրութեան մէջ առաջին անգամ յիշատակւում է Օրբէլեանի կողմից հետեւեալ դէպքի առթիւ. Սիւնեաց Ստեփանոս եպիսկոպոսը իւր «կամարակապ» խաչը պահ էր տուել* «առ եպիսկոպոս մի յԱւծոպայ ի Շահապօնս Պետրոս անուն»։ *Պռոշեանց տոհմի հիմնադիրը Վայոց ձորում՝ Վասակ Խաղբակեան՝ իմանալով այդ, առնում է նրանից եւ դնում իւր շինած Կեչառուաց վանքում*[8])։ *ԺԳ. դարի առաջին քառորդում արդէն վանքը եպիսկոպո-*

---

[1] Քարամեան· Ցուցակ· 47, եւ Սմբատեան· Երնջակ· 126։

[2] Սիսական· 487։

[3] Սմբատեան· Երնջակ· 134—5։

[4] Թորոս Աղբար· 423, Ալիշան· Սիսական· 487։

[5] Բարխ· Արցախ· 140։

[6] Սմբատեան· Երնջակ· 80։

[7] Սիսական· 172։

[8] Օրբ· 352։



ՊԱՏԿԵՐ 193·

սանիստ էր· նոյնը տեսնում ենք եւ ԺԴ· դարի սկզբում, երբ Շմաւոն եպիսկոպոսը մասնակից եղաւ Սսոյ ժողովին[1]): *Բայց ներկայ շէնքը կառուցուած է ԺԶ· դարի երկրորդ կէսում· Հարաւային պատի ճակատին միայն պահուած արձանագրութեան մնացորդներով երեք քար, որ յետոյ են այնտեղ հաստատել կորստից փրկելու համար· միջին քարի արձանագրութիւնը բոլորովին եղծուած է, ձախ քարի վերայ միայն տառեր եւ վանկեր են նկատւում, որոնցից հնարաւոր չէ միտք հանել· աջ կողմի քարի վերայ կարդացւում է·* «(պատ)*արա*գն տան մեր··· / ր եւ քանկանն··· / կատարիչքն աւրին/ին յայ·: Ի թվ· Ջ·· (*կարող է մի*

---

[1]) Չամչեան, Գ· 310:

տառ լինել) գրեցաւ»․ *ուրեմն առ առաւելն ԺԳ․ դարի երկրորդ կիսի մի յիշատակարան։ Կան եւ ուրիշ բազմաթիւ քարեր, նոյնիսկ քանդակներով եւ արձանագրութիւնների մնացորդներով, որոնք գործադրուած են ներկայ եկեղեցու շինութեան ժամանակ։*

ԺԳ․ դարի վերջերից ունինք մի կարեւոր յիշատակարան Պռոշի որդի Ամիր–Հասան Ա․ի, վանքի եւ վանականութեան եւ ժամանակակից դէպքերի մասին։ Այդ յիշատակարանից արդէն մի անգամ օգտուել ենք Ամիր–Հասանի եւ այնտեղ յիշուած ուրիշ իշխանների մասին խօսելիս․ «Եւ գրեցաւ տառս աստուածային ի գաւառիս Շահապունեաց, ի միաստանիս, որ է մերձ յամենաւրհնեալ եւ յաստուածապահ գեաւղս Ոծոպի կոչեցեալ»։ *Տաճարը շինուած է Աստուածածնի անունով, իսկ սրբութիւններից յիշուած են Խոտակերաց եւ Խիկարայ սուրբ Նշանները։ Գրիչն է Շմաւոն ոմն, որ զարդարել է* «ոսկւով եւ արծաթով, ոսկեգիծ դրուատով եւ ծաղկերանգ գովնով (s!), եւ պաճուճեցի ներքոյ եւ արտաքոյ, ընտրեալ քարամբք պատուականաւք եւ լուսափայլ մարգարտօք»։ *Աղքատութեան պատճառով երկարել է* «առաւել քան զմետասան ամ» *նիւթի պատրաստութիւնը, խնդրում է յիշատակել իր ծնողներին՝* «զիւանի եւ զՇահրազատն եւ զհարազատն իմ զՈվանէս, որ ի ձեռն սրոյ ելաւ յաշխարհէս յազգէն Նետողաց»։ *Յիշում է իր հոգեւոր որդեակ Ովանէս սարկաւագին,* «նաեւ զդասս եղբայրութեան այսմ անապատի, զառաջնորդ սորա եւ զփակակալ, զծերսն եւ զմանկունս եւ զմիաբանեալսն յայսմ քաւարանի»[1]։ *Այս վերջին խօսքերից երեւում է, որ միաբանութիւնը եղել է բազմանդամ․ արդեօք այս Շմաւոն գրի՞չն է, որ 1307 թուին մասնակցում է Սսոյ ժողովին, որպէս Ոծոպի եպիսկոպոս, հաւանական կարող է լինել։ Ոչ միայն յիշատակարանի կանոնաւոր շարադրութիւնը, այլեւ ոտանաւոր միւս յիշատակարանը, որի տողերի սկզբնատառերը կազմում են* «Շմաւոնի է աւետարանս այս» *խօսքերը, ապացոյց են հեղինակի կարողութեան եւ պատրաստութեան։*

ԺԴ․ դարի կէսերին յիշւում է Մարգարէ Օծոպեցին, Եսայի Նչեցու աշակերտներից մէկը, որ ուրիշ ընկերների հետ անցաւ միարարների կողմը եւ որի մասին յիշատակութիւն կ՚ունենանք Գլաձորի դպրոցին կամ «Համալսարանին» նուիրուած գլխի մէջ։ Քիչ յետոյ՝ 1462 թուին թաղուած է վանքի գերեզմանատանը Թարխանի որդի Մարտիրոսը․ «Այս է տապան Թարխանի որդի Մարտիրոսին / ԹՃԺԱ»։

Այնուհետեւ ոչ վանքի եւ ոչ գիւղի մասին տեղեկութիւն չունինք մինչեւ ԺԵ․ դարի կէսերը․ ըստ Դաւրիժեցու՝ Սարգիս Բ․ եւ Յովհաննէս կաթողիկոսների ժամանակ[2] *յաջողում է Օծոպեցի Վրդանէս եպիսկոպոսին Լուսաւորչի աջը փախցնել Աղթամարից եւ Էջմիածին բերել* ՋԻԶ (= 1477) *թուականին մօտաւորապէս․ իբրեւ վարձատրութիւն Վրդանէս նշանակուեցաւ մինչեւ մահ կաթողիկոսների աթոռակալ, իսկ մահուանից յետոյ կաթողիկոսներն, անձամբ տարէ ցտարի պատարագ էին մատուցանում նորա յիշատակին, պաշտաման դրամ բաժանում վանականներին եւ կերակրում աղքատներին, որ աւանդաբար պահպանւում էին մինչեւ Դաւիթ եւ Մելքիսէդ կաթողիկոսները։ Վրդանէս մեռաւ ըստ Դաւրիժեցու* ՋԽԲ (= 1493) *թուին Ոծոպում իւրայինների մօտ, ուր քաշուել էր ծերութեան օրերում։ Նորա դամբարանը գտնւում է վանքի պարսպից դուրս, դէպի հարաւ, գիւղին նայող բլրի վերայ։ Խաչարձանը քանդուել է եւ միայն մի կտորը մնացել։ Խաչարձանի առաջ դրուած է մի տափակ գերեզմանաքար եպիսկոպոսական գաւազանով զարդարուած եւ արձանագրութեամբ (Յաւել․ Ա․ 182), որից իմանում ենք, թէ նորա հօր անունը Ամրախոս կամ Ամրասխոս էր,* «թոռն Ապուտահիլին, որդոյ Ղութլու բէկին, թոռն Գեղկա եւ մեծի Աբկար իշխանին»։

Գիւղի եկեղեցու բակում գտնւում է մի գերեզմանաքար մի կողի վերայ ելնդաւոր թունկի *եւ* ջամ *այսպիսի արձանագրութեամբ․* «Այս է տապան Ամիրին որդի Ատիլբէկին թոռն Ամիրսոսին թվ․ ՋԾ» (=1501)։ *Չենք կասկածում, թէ այս Ամիրսոսը եւ Վրդանէս եպիսկոպոսի տապանաքարի երկբայութեամբ կարդացուած Ամրասխոսը նոյն անձնաւորութիւնները լինին, ուրեմն եւ Ատիլբէկը Վրդանէսի եղբայրն է, իսկ Ամիրը եղբօրորդին։ Դաւրիժեցին էլ պատմում է, որ նորա ազգականները այնտեղ էին ապրում։*

Այսուհետեւ Ածոպ գիւղի կամ վանքի մասին ստանում ենք աւելի յաճախ տեղեկութիւններ վանքի արձանագրութիւններից, որ, ինչպէս տեսանք, շինուած է 1571 թուին Յովհաննէս եպիսկոպոսի օժանդակութեամբ։ Սորա յաջորդն էր Մարտիրոս եպիսկոպոս։ Երկուսի շինարարութեան մասին արդէն խօսել ենք[3]։ *Մարտիրոսի ժամանակն էր կամաւոր միայնակեաց Մելիքը, որ աշխատում էր մինչեւ իր ծերութեան օրերն այս վանքում, նուիրելով* «զիւր ձեռաւք տնկած այգին սբ․ Ածածնին խոտակերաց սբ․ Նշանիս» *եւ ապա* «դ․

---

[1] Յիշատակարանը տպուած է Արարատ․ 1876, 413, նաեւ ուրիշ տեղեկութիւններով Ձեռագրի մասին։ Մի յիշատակարանից, գրուած ՋԾԳ (= 1504) թուին երեւում է, որ Ձեռագիրը մի ժամանակ սեփականութիւն էր Եղիշէ եպիսկոպոսի, որ հազար դեկանով ծախել է խոջայ Հազարբէկին։ Այս Եղիշէն ծագումով Օրբէլեան էր եւ Պռոշեան Յովհաննէս եպիսկոպոսի հոգեւոր եղբայրը (Տե՛ս Աստ․ 125)։

[2] Դաւրիժեցի․ 427 եւ շար․։ Այս կաթուղիկոսների ժամանակագրութիւնը կարօտ է սրբագրութեան, որ մասամբ կատարել ենք «Սեւանի Առաքելոց հարաւային դուռը» ուսումնասիրութեան մէջ (Անահիտ․ 1932․ թ․ 5—6) եւ լրացնելու ենք առանձին յօդուածով։

[3] Աստ․ 134։

քթոց մեղրի, զի միաբանք սբ· Ածածնին հանապազ զմայլին գինով եւ քաղցրանան մեղրով»։ *Նուիրել է նաեւ մի Տարեգիրք, այսինքն Ճաշոց։ Տէր Ղուկաս կուսակրօն ճգնազգեաց կրօնաւորը բոլոր միաբանների բազմերախտ մօր Խաթունջան տոտեսի հետ նուիրել է մի արծաթի սկիհ։ Յիշատակուած են Մարտիրոս եպիսկոպոսի հետ եւ վանքի միւս միաբաններից Ղազար Հերպետ, տէր Ղուկաս կրօնաւոր, Մելքի միայնակեաց, Խաթունջան տոտես,* «տէր Ղազար հայր վանացս», *եւ ուրիշ միաբաններ առանց անունների։ Յայսմաւուրքի գրիչն է ծերունի Սարգիս մոնողոնիկ*[1])։



ՊԱՏԿԵՐ 194·

Նոյն Մարտիրոս եպիսկոպոսից մնացել է եւ մինչեւ այժմ գիւղի եկեղեցու մէջ մի արծաթի, ոսկեջրած հաւասարակող խաչ՝ Խոտակերաց սուրբ Մինաս անունով· խաչի թեւերին ամրացրած է մի քար, ինչպէս եւ կեդրոնում, որ աւելի մեծ է· խաչի ետեւի կողմից փորագրուած է հետեւեալը·

«Սբ· Նշանս Խո/տակերաց բար/եխաւս է Մարտ/իրոս եպսկպսին / ծնողացն Ջուխթղու բէգին, որ նորոգեց իւր յիշատակի Սաթմշին տր· Բարս/եղին Թվ· ՌՀԳ» (= 1624)։

Վանքի մի շարք արձանագրութիւնները 1671 *թուականից զանազան նուիրաբերութիւններով Մարտիրոս գիւղի ազգակցութեամբ իրար կապուած «պա–*

---

[1]) Սմբատեան· Երնջակ· 242—3։ Թոփճեան, Ցուցակ Ձեռագրած խաչիկ վրդ·ի, Բ· 3։

րոն»ների կողմից, յիշել ենք արդէն, ենթադրաբար նրանց Պռոշեան տոհմի շառաւիղներ եւ Իսրայէլ Օրիի ազգակիցները համարելով[1]:

ԺԸ· դարի սկզբում վանքի առաջնորդն էր տէր Ովանէս, որի գերեզմանաքարը զարդարուած է եպիսկոպոսական հովուական գաւազանով, օձ ու կարիճով· «Այս է տապան տր· Ովանեսին թվ· ՌճԿԱ (= 1712)»:

Ըստ Ալիշանի 1704 թուին «առաջնորդ վանացն Օծոպու էր Թադէոս վարդապետ»[2]: Բայց նորա գերեզմանաքարը թուագրուած է 1718ով· «Յիշատակ է տապանս առաջնորդ / Թաթէոս··· (չի կարդացւում երկու բառի տեղ), թվ· ՌճԿԷ»: Սորա ժամանակը պիտի շինուած լինի, գուցէ նորոգուած, եկեղեցու թմբուկը· «Շինեցւ· սբ· կղկէս· / Տիկեցի Մալխասի որդի Մարքարէս թվ· ՌճԾԴ» (=1705): Գմբէթի թմբուկը բոլորակ է, հիմքից ոչ շատ բարձր ութ լուսամուտներով (պատկ· 19):

Ղազար Ճահկեցու մի կոնդակից տեղեկանում ենք, որ 1749 թուին վանքի առաջնորդն էր «Մարկոս հանճարեղ եւ աշխատաւոր վարդապետ»ը, որին թոյլ է տալիս կամ սորա միաբաններից մէկին ժողովրդից նուէրներ հաւաքելու՝ եկեղեցու խախտուած տանիքը նորոգելու համար[3]: Մի տարի յետոյ՝ վանքի արեւմըտեան դրան ճակատին թողած արձանագրութեան համեմատ, նոյն Մարկոս եպիսկոպոսը գնել է 1750 թուին Մկրտիչի որդի Եղումից Ծատուրի կէս օրավար այգին, մի չարէք հողով եւ մի զանդակ (Յաւել· Ա· 183): Մեր ձեռքն է հասել հէնց այն վաւերագիրը, որով կատարուել է այդ գնումը վկաների յիշատակութեամբ, ինչպէս եւ ոմանց կնիքներով հաստատուած: Վաւերագիրը գրուած է նոյն ՌճՂԹ թուին Օծոպեցի Մկրտիչի որդի Եղումի կողմից, որով յայտնում է, թէ «ծախեցի մեր Ծատուրէնց այգին Օծոպա վանից առաջնորդ Մարկոս վրդ·ին» քսան եւ վեց հազար դինանով· «կէս օրավար այգի ա· չարէք հող», յայտնելով սահմանները· «թէ որ դավի դարապի անիլոյ լինի, ես Եղումս օհտէն գամ, պատալն ա· այգի դամ»: Կնքուած է Եղումի կնիքով: Վաւերագիրն ամբողջութեամբ գրել է Գոմէրցի տէր Սողոմոնի որդի տէր «Ըստէփան»ը «Եղումի խըրվն», ինչպէս եւ վկաների անունները (Յաւել· Բ· 56, պատկ· 193):

Մի երկրորդ վաւերագիր ունինք 1746 թուին հէնց իւր Մարկոս վարդապետի ձեռքով գրուած Տիկնեցի Պօղոսի դուստր Հէրիքնազի կողմից նոյն այգու մասին, որից երեւում է, թէ նորա հայրը Պօղոս եւ հօրեղբայրը Մուրատ գնած են եղել Ասկանդարենց Յակոբից Ծատուրի այգին, որի սահմանները որոշուած են· 15·000 դեկանով «պէշարդ» էր, Հերիքնազն առնում է «պէշարթլամէն ժե· ռ· դեն·» եւ տալիս Մկրտիչի տղայ Եղումին: Իսկ սրանից, ինչպէս տեսանք, գնում է Մարկոս եպիսկոպոսը (Յաւել· Բ· 57, պատկ· 194):

Մի երրորդ վաւերագրով Մարկոս վարդապետը 1748 թուին Խաչիկի որդի Ովսէփից գնել է «մէկ թուխդ ֆահրէզ» «մղտարն բռ· դկն·», դարձեալ վկաների ստորագրութեամբ եւ ոմանց կնիքներով հաստատուած: Թղթի գրողն է Գրիգոր վարդապետ (Յաւել· Բ· 58, պատկ· 195):

Սորանով վերջանում են մեր տեղեկութիւնները Ոծոպի մասին: Ոծոպը կամ Ածոպը այժմ կոչւում է Բադամլու եւ հայաբնակ է· բայց Պարսկաստանից եկած հին գաղթականներ եւ ոչ նախկին բնակիչների սերունդ:

---

[1] Աստ· 135:

[2] Սիսական· 483:

[3] Սմբատեան· Երնջակ· 436:

Ձ.

ԳԼԱՁՈՐԻ ԲԱՐՁՐ ԴՊՐՈՑԸ ԿԱՄ «ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»Ը

Պռոշեանց տոհմի պարծանքը՝ հոգեւոր–քաղաքակրթական կեանքի զարգացման նկատմամբ՝ Գլաձորի դպրոցն է: Այս վանքի պատմութիւնը տարօրինակ սկիզբ եւ վախճան ունի: Անյայտութիւնից յանկարծ երեւան է գալիս ԺԳ. դարի ութսունական թուականի սկզբում իբրեւ Արեւելեան Հայաստանի մտաւոր կեդրոնը, եւ յանկարծ չքանում անյայտութեան մէջ ԺԴ. դարի կէսին: Անորոշ է նոյնիսկ տեղը. այն աւերակները, որոնք Գլաձորի մնացորդները պիտի լինին, չնչին են, նիւթի հետ կապ չունեցող եւ ոչինչ չլուսաբանող երկու արձանագրութեան բեկորներով (պատկ. 8): Եկեղեցին շինուած է հասարակ քարով, շրջապատում էլ չկան ընդարձակ աւերակներ, ինչպէս ենթադրել կարելի էր վանքի մեծ հռչակից: Գլաձորը հին վանք չէր, այլ նորա ծագումն ու գոյութիւնը կապուած էր դպրոցական նպատակների հետ: ԺԴ. դարի կէսերից առաջ խմբագրուած կամ յաւելումներով ճոխացրած Վարդանի Աշխարհացոյցը[1]) ընտրո–



ՊԱՏԿԵՐ 195.

---

[1]) Ձեռ. էջմ. N° 2179/2166: N° 358 Նժ:

չում է այդ վանքն էլ միայն իբրեւ վարժարան կամ վարդապետարան։ Վայոց ձորի ուրիշ վանքերի հետ հեղինակը յիշում է «եւ Գայլուձոր, ուր վարժարանն է եւ աթոռ սբ· վարդապետացն մերոց»։ Յիշատակարաններից երեւում է, որ վանքի անունն էր «Աղբերց վանք», բայց աւելի տարածուած էր «Գլաձոր», երբեմն եւ «Գայլեձոր» անունը։ Եկեղեցին նուիրուած էր Ս· Ստեփանոսի անուան։

Առաջին անգամ վանքի անունը յիշւում է 1280 թուին, երբ Ներսէս Մշեցին հաստատեց այնտեղ իւր վարժապետական աթոռը[1]։ Ո՞վ էր Ներսէսը· այս հարցին պատասխան է տալիս Յայսմաւուրքի մէջ պահուած նորա վկայաբանութիւնը։ Նա Տարօնի Մուշ քաղաքից էր, սնուած եւ կրթուած Ղազարու Ս· Առաքեալ վանքում· «կարի քաջ վարժեալ ի գիր եւ յուսումն յունաց եւ սերտ գիտէր զլեզուն Հռոմաց եւ զերիցութի· նոցա»։ Ապա հանդիպում է հոգելից Վարդան վարդապետին եւ աշակերտում նորան։ Վարդանի մահուանից յետոյ նստում է նորա վարժապետական աթոռը, «եւ լուսաւորեաց գիտութբ· զազգս Հայոց ուսմամբ գրոց»։ Խորին ծերութեան հասած, մեռնում է Գլաձորի վանքում ՉԼԳ· (= 1284) թուին։ Այս համառօտ կենսագրականը, գրեթէ, բառացի թարգմանուած է նորա վկայաբանութիւնից, որ, անշո՛ւշտ, նորա կեանքին լաւ տեղեակ եւ ականատես անձի գրած է (Յաւել· Բ· 59)։ Ալիշան բերում է Ներսէսի վարքի մի տարբեր խմբագրութիւն, որից երեւում է, թէ Ղազարու վանքից նա անցել է նախ Քաջբերունեաց գաւառը, «եւ ժե· ամ անդ էր փոխեալ դասատուն վարդապետաց մերոց»[2]։ Այստեղից նա պէտք է փոխադրուած լինի Արարատեան երկիրը, աշակերտած Վարդանին եւ ապա նորից Առաքելոց վանքը վերադարձած, ինչպէս կը տեսնենք, եւ վերջապէս 1280 թուին հաստատուած Գլաձորում։

Ձեռագիրների մէջ մի ճառ ունինք «Յովհաննէս վդի· ասացեալ ի պայծառ այլակերպութի· տն· ի Թաբոր լերինն» վերնագրով։ Հեղինակը իւր ճառի վերջում բարեմաղթութիւններ է անում հոգեւոր եւ մարմնաւոր իշխանաւորների համար։ Ընդհանուր կերպով ննջեցեալ քրիստոնեաներին յիշելուց յետոյ՝ աւելացնում է· 217ա· «եւ զաշխարհալոյս վրդտսն· զԳոշն, զՎանական, զՎարդան, զՆերսէս, զԵսայի, որ կան շիրիմք նոցա առ դուրս սբ· եկեղեցոյ, որով այժմ արդիւնաւորի եկեղեցի ի բանից նց·»։ Կարծում ենք հեղինակը Յոհան Որոտնեցին է· յամենայն դէպս ապրում էր այնպիսի ժամանակ, երբ դեռ չէր վերջացել Ռուբինեանց թագաւորութիւնը։ Տաթեւացին եւս իւր Յովբայ մեկնութեան յիշատակարանում բերում է վարդապետների նոյն շարքը· «եւ ժողովողն մեկնութենս· է Վանական վրդն·, աշակերտ Մխիթր· վդպի·, որ Գոշ անուանի· եւ է սայ վդտն· Վարդանայ, եւ Վարդան Ներսեսի եւ նա Եսայայ վադտին·, որ եւ Յովհաննու Որոտնեցոյ Լուսաւորչին[3]։

Գլաձորի դպրոցի ծագումն ու հաստատութիւնը պարզելու համար, անհրաժեշտ է փոքր ինչ աւելի կանգ առնել Ներսէս վարդապետի ուսուցիչ Վարդանի վարժապետական գործունէութեան վերայ։ Նա Վանականի աշակերտն էր, Կիրակոս Գանձակեցու, Մաղաքիայի աշակերտակիցը, նշանաւոր հանդիսացած իւր պատմութեամբ եւ ուրիշ գրուածներով[4]։ Այստեղ մեզ հետաքրքրում է միայն նորա վարժապետական գործունէութիւնը, թողնելով այլ առթիւ պարզելու ԺԳ· դարի Վարդանների եւ նրանց գրական երկերի կնճռոտ հարցը։ Մեր «Զաղավանից ժողովը» աշխատութեան մէջ բերել ենք Գէորգ Լամբրոնացու ձեռքով 1267 թուին գրուած Տօնապատճառի յիշատակարանից վկայութիւն նաեւ Վարդանի վարժապետական գործունէութեան մասին Խոր Վիրապում, «որ ընդ այն ժամանակս ի վերա ամենայն մասանցն բարեաց, որով բոլորն (կա)տարի առաքինութի·, եւ զուսուցապետութեն· եւս զգործ ի կիր արկեալ, ընդ առնելն լծակցելով, որ ի դուռն Սրբոյն Գրիգորի նստելով՝ զամենայն եկեալսն յածայինսն ուղղէր ճանապարհ»[5]։ Վարդանի վարժապետական գործունէութեան մասին Խոր Վիրապում ունինք եւ ուրիշ աղբիւր, Գրիգոր Բալուեցու վկայաբանութեան հեղինակը՝ թէեւ ուշ՝ 1290 թուին՝ բայց աղբիւր ունենալով իւր մօրեղբայր Նահատակին՝ Խոր Վիրապում եղած աշակերտների թիւը քառասուն է համարում· «եւ գնացեալ (Գրիգոր Բալուեցին) դադարէր յարեւելս՝ յԱրարատեան գաւառն՝ ի վանքն Վիրապի Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին, առ հռչակաւոր իմաստասէր վարդապետն Հայոց Վարդան, որ եւ դպրոց կարգեալ էր նորա խ· աշակերտօք»[6]։ Այստեղ Բալուեցին մնում է վեց տարի եւ ապա վարդապետական գաւազան ստանում Վարդանից նորա մահուան կամ նախընթաց տարին։ Բացի Գէորգ Լամբրոնացուց

---

[1] Ձեռ· էջմ· № 1111/1907։

[2] Սիսական· 131։

[3] Ձեռ· էջմ· № 1174· 205բ·։ Լիմ անապատի № 214, 139բ· (այժմ էջմիածնում) ընդգծուածը չունի· սակայն Տաթեւացու կենսագրութիւնից գիտենք, որ Յոհան Որոտնեցին Նչեցու աշակերտն էր (Ձեռ· Լիմի № 358· Արարատ· 1916· 29)։

[4] Ինչ որ վերագրւում է նորան, կասկածից ազատ չէ։ ԺԳ· դարում ապրում էին մի քանի Վարդաններ, չհաշուած Շնորհալու ժամանակակից Վարդան Հաղբատեցին, որին յիշում է եւ Գրիգոր Տղայ Տուտէորդուն գրած նամակի մէջ (Արարատ· 1893· 326)։ Սրան չպէտք է շփոթել Վարդան Այգեկցու հետ, ինչպէս արել է այդ մեծանուն գիտնական Մառը իւր Sbornik Pritcht Vardana մեծ աշխատութեան մէջ (263· 323)։ Վարդանի մասին Հ· Հ· Ոսկեան· «Վարդան Արեւելցի», Հանդ· Ամս· 1921· 364 եւ շար·։

[5] Ձեռ· էջմ· № 295։ Շողակաթ ժողովածու 31/2։

[6] Մանանդեան եւ Աճառեան· Հայոց նոր վկաները· գիտակ· հրատ· Վաղարշապատ· 1903· 104։

Վարդանի աշակերտներն էին Յովհաննէս Երզնկացին[1]) եւ Գրիգոր Բջնեցին. վերջինս իր մասին յայտնում է՝ «սնեալ եւ վարժեալ առ ոտս տիեզերալոյս, սք· եւ եռանաշնորհ րաբունապետին Վարդանայ»[2]):

Վարդանի Սաղմոսի մեկնութեան վերջում աւելացրած է հետեւեալ նկատողութիւնը նորա վարժապետական գործունէութեան մասին. «ընդ որս երեւեալ ազքանազեան ազգիս ի տանէ Թորգոմա, փառք եւ պարծանք Այրարատեան գաւառիս եւ իբրեւ զարեգակն (նշանագրով) փայլէր յաշխարհի (նշանագրով) սքանչելի այրն Ածյ եւ մեծանուն հռետորն Վարդան վդպն·, վարժելով զքզմս· ի կրթասիրաց ի գիտութի· Ածաշունչ կտկրնց·, երեւելին ի գիտնականս, այլ եւ յոյժ ըղձալի փափագմամբ մեկնեալ զՍղմոս· Ածահօրն Դաւթի, քողու զանձ անհամեմատ սք· եկղցոյ· եւ ինքն առ անձկալին Յս· վերափոխի···»[3]): Խոր Վիրապից 1267 թուին նա գալիս է Սաղմոսավանք եւ այնտեղից Աղջոց



ՊԱՏԿԵՐ 196·

Ս· Ստեփանոս, ուր վերջացնում է Դանիէլի մեկնութիւնը իր իսկ յիշատակարանի համեմատ: 1270 թուին մէկն էր նա Զագավանից ժողովի ղեկավարներից, որի կանոնները աշխարհիկ, դիւրահասկանալի լեզուով խմբագրում է Խոր Վիրապում: Մահուանից քիչ առաջ՝ ՉԻԹ թուականից ունինք նորա ինքնաձեռագիր յիշատակարանը, որով յայտնում է, թէ Նիւսացու բնութեան, կազմութեան եւ կուսութեան, երեք հատուածներով գիրքը՝ Գրիգոր Բջնեցունն է, «շնորհալից եղբաւր մերոյ եւ սպասաւորի բանին», որ «շարագծեալ է ի կրտսերէ ճորին ի Ստէ· (Ստեփանոսէ)», նորան շնորհուած: «Գրեցաւ յետին գիրս առ դրան սրբոյ Վիրապիս» (Յաւել. Բ. 60, պատկ. 196)[4]): Այստեղ էլ մեռնում է նա իր աշակերտակից Մաղաքիայի վկայութեամբ. «ի թուականին Հայոց ՉԻ (= 1271) փոխեցան ի Քրիստոս փառաւոր վարդապետքն Հայոց Վարդան եւ Կիւրակոս»[5]): Աշխարհացոյցի տեղեկութեամբ նա թաղուած է Խոր Վիրապում, «եւ ի բերան Վիրապին հանգուցեալ կան շիրիմ սք· մեծահռչակ եւ եռամեծին տիեզերալոյս վրդպտին· Վարդանա»[6]):

Ե՞րբ է յարել Ներսէսը Վարդանին իբր աշակերտ եւ հայրենակից Նչեցու հետ, կարող ենք միայն մօտաւորապէս որոշել: 1265 թ· Վարդանը Զորավետումն էր, ուր նա գրել է Երգ Երգոցի մեկնութիւնը իր հոգեւոր հարազատի՝ Կիւրակոս Գանձակեցու խնդիրքով «յաստուածամերձ սուրբ ուխտս Հաղբատ»[7]): Նոյն թուականին, յամենայն դէպս ոչ ուշ քան 1266 թուի սկիզբը, եկել է նա Խոր Վիրապ, որովհետեւ տեսանք, որ Գրիգոր Բալուեցին այստեղ աշակերտել է նորան վեց տարի եւ վարդապետական գաւազան ստացել. 1266–ին Վարդանի Խոր Վիրապում լինելու մասին վկայում է Գէորգ Լամբրոնացին[8]). իսկ Վարդանի մահը տեսանք 1271 թուին: Ահա այս վեցամեակումն էլ Ներսէս յարած պիտի լինի Վարդանին, եթէ ոչ աւելի վաղ: Նոյնիսկ Վարդանի խօսքերով վկայութիւն ունինք, որ 1267 թուին Ներսէսը նորա մօտ էր. Դանիէլի մեկնութեան վերջում ողորմութիւն հայցել է խնդրում երախտաւոր իշխանների՝ Սադունի, Սմբատի, Քրդի եւ Պռոշի հետ «եւ եղբօր մերոյ Ներսէս վրդ·ին, որ եւ զնա աշխատեցաք (s!) ի գիրս»[9]): Այս վերջարանը Վարդանը գրել է 1268–ին Աղջոց Ս· Ստեփանոսում:

Վարդանի մահուանից յետոյ՝ բայց Գլաձորում հաստատուելուց առաջ՝ նա կրկին վերադառնում է Մուշի Առաքելոց իր նախկին վանքը եւ այնտեղ հաստատում իր վարժապետական աթոռը. Եօթանասնական թուականներից երկու ձեռագիր ունինք, որոնք գրուած են նորա համար. մէկը 1275, իսկ միւսը 1279 թուին նոյն վանքում: Դոցանից մէկը Փիլոնի «Որ ի լինելութենէ խնդրոց եւ լուծմանց», «Որ յԵլսն խնդրոց եւ լուծմանց» եւն. գործն է. առաջինը (1—128ա) գրուած Գր(իգոր) գրչի կողմից, երկրորդ մասը մի անյայտ գրչի (129ա—235ա), իսկ մնացածը,

---

[1]) N. Marr, Sbornik Pricht Vardana, III. 23:

[2]) Ձեռ· էջմ· № 1253 (կար· 1223):

[3]) Ձեռ· էջմ· № 2522, 333բ:

[4]) Ձեռ· էջմ· № 456/569, 260բ:

[5]) Մաղաքիա աբեղայ, տպ· 1870, 52, հրատ· Պատկանեանի: Վարդանի մահը նաեւ Ձեռ·էջմ·№2188, 48բ· №1520, 116ա:

[6]) Ձեռ· էջմ· № 1187, 2179/2166, 7ա: Լիմի № 358 Նժ:

[7]) Ձեռ· էջմ· № 1155, 86բ· նաեւ № 1429/1419, 202ա—263:

[8]) Մանանդեան եւ Աճառեան, Հայոց նոր վկաները, գիտ· հրատ· 105: Շողակաթ, 32/3:

[9]) Ձեռ· էջմ· № 1520, 116ա:

որ դարձել Փիլոնինն է (235ա–329բ) *Բարսեղ գրչի։ Գրիգորի յիշատակարանից տեղեկանում ենք* (*Յաւել· Բ·* 61, *Ձեռ· էջմ·* № 3932), *որ* «հայրն հասարակաց Ներսէս վարդապետն խնդրել» *է* «ի նուաստ աշակ· Գր· սուտանուն վդ·է զգրծս· Ծննդոց Փ(իլոնի) ի մէջ ամեբանս»... *խնդրում է յիշել* «եւ զմեր վդպետն· Դաւիթ ընդ նմա արժանի արասցէ Քս· յիւր արքաութեն.»։ *Այս Դաւիթը Նչեցու աշխատակիցն էր Գլաձորի դպրոցում, երկրորդ* «ուսուցապետը», *որի մասին խօսք կը լինի յետոյ։ Գրիգորի հայրն է Բարսեղ քահանայ։ Յիշատակարանը թուական չունի, բայց պէտք է ձեռագրի երեք մասերն էլ մի եւ նոյն ժամանակ գրուած լինին, որովհետեւ մի ամբողջութիւն են, Փիլոնի կողմից հնգամատեանի զանազան մասերի մեկնութիւն եւ գրուած միեւնոյն Ներսէս վարդապետի համար։ Իսկ Ձեռագրի երրորդ մասը գրուած է* 1275 *թուին·* «Յորժամ գծագրեցաւ մատեանս այս, թուականն Հայոց ՉԻԴ էր, եւ թագաւոր Լեւոն, եւ կաթողիկոս տր· Յակոբ եւ բնակութիս· Եղիազարու վանք, եւ տեղոյս առաջնորդ տր· Հայրապետ եւ վարդապետ եւ ուսուցիչ Ներսէս ստացաւղ գրոցս եւ անուն գծողիս Բարսեղ» (*Յաւել Բ·* 62)[1]։

Երկրորդ ձեռագիրը ՉԻԸ (= 1279) *թուին է գրուած, Բարսեղ Կեսարացու վեցօրեայ արարչութեան, Հարցողաց գրքի եւ նորա ուրիշ ճառերի եւ թղթերի ժողովածու* «*Ստեփաննոս եւ Եսի·*» (*Եսայի*) *հմուտ գրիչների կողմից։ Հարցողաց գրքի վերջում յիշատակարանը գրուած է նոյն իսկ Ներսէս վարդապետի ձեռքով,* «ի հոչակաւոր եւ յականաւոր սբ· ուխտս Եղիայզարու, ընդ հովանեաւ սրբոց առաքելոցն Պաւղոսի եւ Պետրոսի եւ Անդրէի, կամաւք եւ յաւժարութբ· եւ մեծաւ հոգաբարձութբ· իմոյ անարժանութես· Ներսիսի սոսկ անուն վարդապետի։ Զոր ետու գրել ի խրատ ուղղութե· վարուց իմոց՝ անուղղա կենացս, եւ ամենեցուն որ պատահին սմա եւ շահեսցին ի հոգեշահ բանից աստի եւ վարժեալ կրթեսցեն զանձինս, գիտելով թէ որպէս արժան է կեալ ի միաբանական եղբայրանոցս ըստ այսմ եդելոյ սահմանիս» (*Յաւել· Բ·* 63, *պատկ·* 197)։ *Երկու ուրիշ յիշատակարաններ՝ մէկը վեցօրեայ արարչութեան ճառերի* (107*բ*) *եւ միւսը ձեռագրի վերջում գրիչների կողմից են գրուած· առաջինը* «*Ստեփ*» (*Ստեփաննոս*) *յայտնում է իւր ոտանաւոր յիշատակարանին մէջ՝*

«որ եւ Ներս· հռետոր կորովաբան·
յս·ական տեսարանացն խոհեմ տեսաւղ
անվրիպական,
ետ ինձ գրել վս· մանկանց նոր սիոնի,
որ իմտանան»։

Իսկ երկրորդը Եսայն է· «զմեղապարտ գրիչս Եսի· յիշել յաղաւթս աղա(չեմ)»։ *Սորան կից աւելացրել է նախկին գրիչը·* «եւս եւ զստացօղ սորին զՆերս վդ· եւ զծ(նողս) (զ)երջանիկ րաբունն, զուսուցող եւ զվարժապետ, զմաքուր անձն եւ զպայծառ հոգի...» (*Յաւել· Բ·* 64, *Ձեռ·* № 906 *Նժ*, 288*բ*)[2]։ *Այս գրիչներից երկրորդը Եսայի Նչեցին է, որ իւր վարժապետի հետ Գլաձոր փոխադրուեց եւ ապա յաջորդեց նորան դպրոցի ղեկավարութեան գործում։*

Մեզ համար մութ են դպրոցի ծագման հանգամանքները։ Պռոշ մեծ իշխանը՝ «աշխարհաշէն» կոչուած Մխիթար Այրիվանեցու կողմից, հետամուտ եւ հովանաւոր եկեղեցու եւ իւր իշխանութեան վանքերի ծաղկման, անհաւանական չէ, որ Ներսէս Մշեցին Գլաձորում հաստատուէր նորա ցանկութեամբ եւ առաջարկութեամբ։ Պռոշը հոգեւոր կապեր ունէր Վարդանի հետ, հաւանօրէն, ծանօթ էր եւ նորա աշակերտի հետ Աղջոց Ս· Ստեփաննոսում եղած ժամանակից, զուցէ եւ այդ ժամանակ էլ յղացուած իւր իշխանութեան մէջ բարձր վարդապետարան հաստատելու միտքը։ Նորան չյաջողուեց եկեղեցական–վարչական անկախ եպիսկոպոսութիւն հիմնել Վայոց ձորի իւր մասի համար, որովհետեւ դա կապուած էր նուիրապետական կազմակերպութեան եւ աւանդութեան հետ, բայց ոչ ոք կարող չէր արգելք լինել այնտեղ մի վարդապետարան–մտաւոր կեդրոն ստեղծել եւ այսպիսով իւր իշխանութեան այս կողմից առանձին փայլ տալ· որովհետեւ դպրոցը վարդապետի անձի հետ էր կապուած, երբեմն եւ անկախ հոգեւոր իշխանութեան կամ նուիրապետութեան կամքից։ Վարդանի, Որոտնեցու, Տաթեւացու, Սիմէոն Այրիվանեցու կեանքից գիտենք, թէ ինչպէս նոքա իրենց աշակերտների հետ մի տեղից միւսը փոխադրուել կարող էին իրենց ցանկութեան, երբեմն եւ յաջող եւ անյաջող բերմունքների հետեւանքով։ Յամենայն դէպս, Գլաձորի դպրոցը հիմնուում է Պռոշի կենդանութեան ժամանակ եւ այն էլ ոչ հեռու նորա «դարբասից», որ Սրկղունիքն էր։

Մեզ համար մութն է նաեւ, թէ ի՞նչ բնոյթ ունէր Պռոշեանների հովանաւորութիւնը դպրոցի նկատմամբ· այնքան բազմաթիւ աշակերտներ, որ խմբուել էին Ներսէսի, եւ յատկապէս Եսայի Նչեցու շուրջը, պէտք է իրենց նիւթական ապրուստի միջոցներն ունենային· բոլորովին մի նոր վանք, առանց անցեալի հեղինակութեան, սրբութեան, հռչակի, առանց կալուածների եւ հաւատացեալների նուիրաբերութեան անկարող էր կերակրել այդքան բազմութիւն, որ հաւաքւում էր հայ աշխարհի ամենահեռաւոր անկիւններից՝ Կիլիկիայից սկսած, Երզնկայից, Տարօնից, հիւսիսային Հայաստանից եւն·։ Երկու յիշատակարանների մէջ մի-

---

[1] Ձեռ· Տաթեւի № 59, այժմ էջմ· № 3932։ Սկզբից ընկած է երեք թերթ· յետին ստացողն է Սիմէոն վարդապետ, որ նոյնացնում ենք Սիմէոն Այրիվանեցու հետ, ծագմամբ Տաթեւից։

[2] Փակագծի մէջ առնուածները լրացնում ենք· փճացած է եւ ցեցակեր։

այն ակնարկուած է Պռոշեան պայազատների յարաբերութիւնը դէպի Գլաձորի դպրոցը. 1317 թուին Սարգիս աբեղան եւ «բանի սպասաւոր» գրիչը, յայտնում է, թէ Վայոց ձորը, ուրեմն եւ Գլաձորը, ուր ապրում էր գրիչը, գտնւում է «Ամիր-Հասանայ, որդւոյ Խաչէ, որդոյ Ամիր-Հասանայ, որդւոյ Պռօշայ» իշխանութեան տակ[1]): Աւելի պարզ տեղեկութիւն ունինք 1328 թուին գրուած մի յիշատակարանից, ուր Պռոշեանները կոչուած են «տէր եւ իշխեցող սուրբ մենարանիս եւ տանս դպրոցական ժողովելոց»[2]): Մի երրորդ հատակոտոր գրուածքի մէջ եւս, որ ներբողի բնաւորութիւն ունի Գլաձորցիների կողմից Պռոշեան Ամիր-Հասան Բ.ին ուղղուած, «ծիրանայ ծաղիկ մանկագոյն իշխանն մեր, որ տայրն (s!) է տեղւոյս» կոչուած[3]): Այս բառերն ու որակումները աւելի սերտ յարաբերութիւն են ցոյց տալիս, քան սովորական կապն էր իշխանի եւ իւր սահմանների մէջ գտնուած վանքերի: Պռոշեանները «տէր եւ իշխեցող են» Գլաձորի դպրոցի, այսինքն ենթարկուած նրանց անմիջական հովանաւորութեան, որոնց օժանդակութեան շնորհիւ ծլեց, ծաղկեց եւ արդիւնաւոր հանդիսացաւ այս «դպրատունը» կամ «համալսարանը», վաթսուն տարուայ ընթացքում:


ՊԱՏԿԵՐ 197·

Գլաձորը վանք չէր սովորական մտքով, ինչպէս Կեչառոյքն էր, Գեղարդը եւ այլն, ուր նոյնպէս վարդապետներ կային եւ որոնք աշակերտներ ունէին, այլ դերազանցօրէն դպրոց: Այստեղ գալիս էին միայն ուսանելու կամ կատարելագործուելու համար: Նա մտաւոր կեդրոնն էր ոչ միայն Արեւելեան Հայաստանի համար, այլ եւ հեռաւոր Կիլիկիայից գալիս էին Գլաձորի վարժապետների մօտ իրենց ուսման ծարաւը յագեցնելու: ԺԳ· դարի վերջին երկու տասնամեակից սկսած մինչեւ ԺԴ· դարի կէսերը հոգեւոր քաղաքակրթական բնոյթ կրող բոլոր երեւոյթները մեծ կամ փոքր չափով կապուած են Գլաձորի հետ: Այստեղ են իրենց ուսումն ստացել կամ կապուած են Գլաձորի հետ Բջնոյ կամ Արարատեան Սիւնեաց մեծ եպիսկոպոսութիւնների աթոռակալներն ու աչքի ընկնող վարդապետները: Ներսէս Մշեցու աշակերտն էր Ստեփանոս Օրբէլեան իւր իսկ խօսքերով· «վարժեցայ ի կրթարանի աստուածեղէն տանից՝ սակաւ մի առեալ զճաշակ ռետնի քաղցրութեան՝ առի հրաման յաստուածազգեաց եւ յաշխարհալոյս րաբունապետէն Ներսիսէ, եւ տհաս խակութեամբ նստայ յաթոռ վարդապետական»[1]: Գլաձորի աշակերտներ են Յոհան Աւրպէլ եւ Ստեփանոս Տարսայիճ՝ պատմիչ եպիսկոպոսի անմիջական յաջորդներն ու տոհմակիցները· Յոհան Որոտնեցին, որ Տաթեւի դպրոցի հիմնադիրը եղաւ Օրբէլեանց շրջանում: Այստեղ են կատարելագործուել Մխիթար Սասնեցին եւ նորա ընկեր Յոհան Արճիշեցի ոսպնակերը[2]· երկուսն էլ իրենց լումաները ձգած մեր մատենագրութեան պատմութեան գանձանակը, իսկ Մխիթարը նաեւ ղեկավար Մեծոփայ դպրոցի: Վարդանի աշակերտ էր, բայց հոգեւոր կապեր ունէր Գլաձորի հետ յայտնի մատենագիր Յոհան Երզնկացին, իսկ Կիրակոս եւ սորա եղբօրորդին միւս Յովհաննէս Երզնկացին սնուել են եւ գործել երկար ժամանակ Գլաձորում· Կիրակոսը մատենագիր-բանաստեղծ, իսկ Յովհաննէսը աննման գրիչ եւ ապա գործակից Կիրակոսին դպրոցական ասպարիզում հայրենի երկրում: Հերմոնի դպրոցին հիմնադիրը Տիրատուր վարդապետ Եսայի Նչեցու աշակերտն էր: Ամբողջ մի հոյլք ունինք գրիչների, բայց եւ բեղմնաւոր մանրանկարիչների, որոնց գործերին կը ծանօթանանք հետզհետէ[3], այս դպրոցում կրթուած: Գլաձորի հետ հոգեւոր կապեր են ունեցել Խաչատուր Կեչառեցին, զուգէ եւ մեր միջնադարեան բանաստեղծութեան պարծանք Ֆրիկը: Առաջնի ապացոյցը տեսանք երբ նորա Գանձերի մասին էինք խօսում: Թադէոս եւ Բարդուղիմէոս առաքեալներին նուիրուած Գանձը գրել է նա Գլաձորի յայտնի գրիչ եւ մանրանկարիչ Պօղոս Կիլիկեցու խնդրիքով[4]: Իսկ Ֆրիկի համար ունինք հետեւեալ ցուցումը· Ալիշան կազմել է նորա եւ նման տաղասացների երկերի մի ժողովածու՝ որի ոտանաւորների ցանկի վերայ հետեւեալ վերնագիրը կայ· «Ոտանաւոր ասացեալ է Ֆրիկն որդի Թագւոշին եղբօրորդի Դողոնայի ի վերայ իւր մեղացն, ի վանս բանասիրաց»[5]: Վերջին ընդգծուած բառերը մենք նոյնացնում ենք Գլաձորի հետ: Ֆրիկի ծագումն արեւելեան Հայաստանից պարզել է Տիրայր եպիսկոպոսը: Լեզուի նմանութիւնը մեր արեւմտեան բարբառների կամ հայերէնի հետ արգելք չէ այդ մտքին, որովհետեւ ներկայ առանձնայատկութիւններով դժուար է որոշել բարբառների նախնական հայրենիքը: Թող զարմանալի չերեւայ, եթէ յայտարարենք, որ ԺԳ· դարի Անեցիների բարբառը նման առանձնայատկութիւններ ունէր· բայց աւելի պարզ կը լինի, եթէ Խաչատուր Կեչառեցու ժողովրդական ոգւով գրուած ոտանաւորների լեզուն համեմատելու լինինք: Իսկ Ֆրիկի լեզուի, ոճի, արտայայտութեան ձեւերի մէջ եւ Խաչատուրի այդ կարգի ոտանաւորների մէջ այնքան նմանութիւն կայ, որ ոմանք նոյնացրել են նրանց անձնաւորութիւնները: Հաստատ համարելով Ֆրիկի հայրենիքը Արեւելեան Հայաստանում ընդունելու միտքը, իսկ ժամանակը ԺԴ· դարի վերջին տասնամեակներին, անհիմն չէ «վանքն բանասիրաց» արտայայտութիւնը նոյնացնել Գլաձորի հետ: Ի հարկէ այս մի ենթադրութիւն է դեռ եւս, որ նորագիւտ փաստերով կը հաստատուի կամ կը հերքուի:

---

[1]) Աստ· 106· Ցաւեյ· Բ· 22: Ալիշան· Սիսական· 133:

[2]) Աստ· 106· Ցաւեյ· Բ· 24:

[3]) Աստ· 106· Ձեռ· էջմ· № 734:

Հետաքրքրական է լսել ժամանակակիցների կարծիքը Գլաձորի դպրոցի եւ նորա վարժապետների մասին, որքան եւ արեւելեան պատկերաւորութեամբ եւ չափազանցութիւններով արտայայտուած լինին, որ աւելի յաճախ կը լսենք գրչութեան արտադրութիւնները թուելիս: Մկրտիչ գրիչ (Թեղենեաց րաբունի) 1298 թուին, Գլաձորն անուանում է «երկրորդ Աթէնք պանծալի»[6]· Տիրատուր Կիլիկեցին, 1309 թուին, «մեծ դպրատուն»[7]· Մխիթար Երզնկացին, 1314 թուին, դնում է «մայրն իմաստից Գլաձոր»[8]· Յակոբ Թաղորցին, 1318 թուին, «համարձակիմ զսա կոչել երկրորդ Աթէնք եւ մայրաքաղաք ամենայն իմաստից»[9]· Կիւրեղ գրիչը, 1321 թուին, անուանում է «հռչակաւոր, սուրբ մենաստան համալսարան»[10]: Վարժապետները բնորոշուած են հետեւեալ խօսքերով· Ներսէսը՝ «մեծ հռետոր», «սուրբ այր», «ամենագով վարդապետ»[1]). *Մի ուրիշ յիշատակարանի մէջ*, 1280 *թուին*, «արդիւնակատար վարդապետ»[2])։ *Ստեփանոս գրիչը որակում է նրան որպէս* «գիտնական եւ արդիւնական հռետոր, որ զյաւժարամիտսն ծնանի երկաւք բանին ճշմարտութե.»[3])։ *Նման որակումներով յիշւում է եւ Եսայի Նչեցին. Վարդան Կիլիկեցի ներհուն գրիչը յիշել է խնդրում* «զամպս գերագոյն հրաշիւք, լուսատու ցաւղ զվարժապետս իմ Եսայի»[4])։ *Նոյն գրիչը մի այլ տեղ մաղթում է, որ Յիսուս* «հատուցանէ զգործս բարի, Եսայիաս վարժապետի, զիմանալի հաց ծասկողիս»[5])։ *Մկրտիչ Թեղենեաց րաբունին անուանում է նորան* «հոգէհանճար, գերիմաստ րաբունապետ եւ հայր հոգեւոր» *կամ* «քաղցրահանճար փիլիսոփայ եւ բանիբուն... տիեզերալոյս րաբունապետ»[6])։ *Կիրակոս Երզնկացին*, 1318 *թուին*, «մեծ րաբունապետ բոլոր Հայաստանեայց» *է կոչում, իսկ Յակոբ Թաղորցին* «ներհուն հռետոր հանուրց հայկազանց եւ լուսատու ջահ մանկանց եկեղեցւոյ»[7])։ *Դաւիթ Գետկեցին*, 1328 *թուին*, *Առաքել վարդապետի համար գրած Աստուածաշնչի մէջ* «կորովաբան եւ ծերացեալ ամենայն իմաստութեամբ՝ եւ զարդարեալ խոհականաւն եւ արիականաւն, տելէտ (ὁ τελειωτὴς — *կատարեալ*) իմաստից եւ ներհուն վարժապետ», *իսկ ստացող Առաքել վարդապետը* «լուսաւոր այր Աստուծոյ, մեծ սոփեստոս», *փայլող* «ի գահս իմաստութեան իբրեւ զարեգակն ի կորնթարթն վերին»[8])։ *Ստեփանոս Օրբէլեանը, արեւելեան վարդապետների մէջ ամենից նշանաւորն ու ազդեցիկը նաեւ իւր իշխանական դիրքով, Նչեցու Եզեկիէլի մեկնութեան ընծայականի մէջ նրան անուանում է* «յիսուսական համալսարանացն պետ», «դպրապետ անճառ դըպրոցացն», «համակ դիւան անհասական խորոցն»[9])։

---

[1] Օրբ· 478:

[2] Մեր «Մխիթար Սասնեցի (Կիրմանեցի)» աշխատութիւնը, Արարատ, 1899, 158: Արտատպուած եւ առանձին գրքոյկով:

[3] Ջամչեան, (Գ· 326), միայն Նչեցու աշակերտների թիւը 363 է հաշւում· Ալիշան վարդապետական աստիճան ստացողների թիւը՝ 360 (Սիսական 23): Ոմն Գէորգ վարդապետ (Ձեռ· էջմ· № 4226, 300ա) մի ներբող ունի ի պաշտպանութիւն Հայոց, ուր ի միջի այլ հեղինակների յիշում է «մեծ Եսայ վարժապետ ի Նիչ գաւառէն Յկ (=360) աշակերտս վարժեաց, որոց մի աշակերտաց նր· էր արմատ դառնութե· ժանտ Յոհան Քոնեցի ող· Ուղայ աշակերտաց քի·»:

[4] Ձեռ· Երեւան № 37/383· ԽԳ· գանձը:

[5] Արարատ, 1918, 71· Տիրայր եպիսկոպոսի յօդուած· «Մոռացուած մի հայ երգիչ»:

[6] Ձեռ· էջմ· № 1395/1409:

[7] Ձեռ· էջմ· № 3393:

[8] Ալիշան· Սիսական· 133:

[9] Ալիշան· Սիսական· 133:

[10] Տես Յաւելուած Բ·, 23:

Եսայի Նչեցու հռչակի եւ հեղինակութեան լաւագոյն ապացոյց կարող է համարուել եւ այն հանգամանքը, որ իշխանների եւ կաթողիկոսների հետ նորա անունն էլ ծառայում է որպէս թուագրութեան որոշիչ։ Քասաղի Յովհաննայ վանքում գրուած է մի աւետարան «ի թուականիս Հայոց ՉԾԹ (= 1310)։ Յաշխարհակալութեան ազգիս Նետողաց Ղարապանտա խանին եւ Հայոց թագաւ. Ալինախին, եւ ի դասապետութե. մեծ իմաստնոյ Եսայոյն»[10])։ *Թադէոս գրիչը* 1303 *թուին իւր յիշատակարանի ժամանակը որոշում է՝* «դիտապետք Հայոց տր. Գրիգոր (*Անաւարզեցին*), տր. Զաքարէ (*Թադէոս առաքեալի վանքի առաջնորդը իբրեւ Եքզարխ կամ փոխանորդ կաթողիկոսի Արեւելեան Հայաստանում*) եւ տր. Ստեփանոս Աղուանից (*կաթողիկոս*) եւ վարժապետ Եսայեայ»[11])։ *Զեսար Օրբէլեանը Սելիմի կարաւանատան արձանագրութեան մէջ չէնքի սկզբնաւորութիւնն ու վախճանը Նչեցու անուան հետ է կապում*[12]). «սկիզբն... րաբունապետին Եսաւայ եւ կատարումն աղօթիւք նորա. թվին ՉՁԱ» (= 1332)։ *Գրիգոր քահանան* 1335 *թուին իւր յիշատակարանը Խանի, Լեւոն թագաւորի եւ Յակոբ կաթողիկոսի անուան հետ թուագրում է* «եւ ի վարժապետութի. մանկանց Սիոնի տն. իմոյ վսամական անյաղթ հռետորին յԵսաեա»[13])։ *Աւագ գրիչը եւ ծաղկողը* 1337 *թուին Թաւրիզում գրելով մի նկարազարդ աւետարան Բուրթել Օրբէլեանի որդի Բեշքենի համար, թուագրում է ի միջի այլոց եւ* «ի դպրապետութե. մեծ հռետորին Եսայեա»[14])։ *Նոյն Աւագը նոյն թուին գրել է* «*Երգարան եւ տետրակ*» *կամ* «*Խազգիրք*» *Սինեաց մետրապոլիտ Սարգսի համար եւ թուագրել է ի միջի այլոց* «եւ ի լուսաւոր վարժապետութե. մեծին Եսայեա»[15])։ *Որքան եւ չափազանցութիւն լինին գովասանքների մէջ եւ մասամբ հետեւողութիւն սովորական դարձած արտայայտութիւնների, անուրանալի է մարդու մեծ հռչակն ու հեղինակութիւնը, որ կ'երեւայ եւ Գլաձորի վաթսունամեայ արդիւնքի մէջ, որչափ յաջողուել է մեզ ի մի բերել։*

Գլաձորի գոյութեան ամենահին տեղեկութիւնը ստանում ենք մի չատ թանգարժէք ձեռագրից, որ գըրուած է այնտեղ 1280 *թուին։ Ձեռագրի ստացողն է* (6*բ*) «մեծ հռետոր Ներսէս». *յիշուած է նաեւ* «նուաստ ոգիս Եսայի հետեւող եւ աշակերտ սբ. առնն Ածյ Ներս. վդի.»։ *Հէնց այս նկատողութիւնը գրուած է Նչեցու ձեռքով։ Նա ունի եւ փոքրիկ լրացումներ ու սրբագրութիւններ* (159*ա*. 166*ա*)։ *Մի ուրիշ յիշատակարանում գրչի ձեռքով տալիս է աւելի տեղեկութիւններ* 145*ա*, (*պատկ.* 198). «Շնորհաւք եւ ողորմութբն. Ածյ կատարեցի զտառս Ածաշունչ, ես փցուն եւ ապիկար գրող Լուսեր ի վայելումն սբ. եւ ամենագով վդն. (*վարդապետին*) Ներսեսի...»։ *Բայց այս գրիչը չէ վերջացրել, այլ շարունակել է մի երկրորդ գրիչ Թովմա վարդապետ.* «Ած ողորմի Ներսէս վրժապետին եւ ինձ Թովմա վդ.իս, որ զանարուեստ գիրս յաւարտ ածի»։ *Նա քննադատում է նախորդ գրչին.* 108*բ* «Աւաղ եւ եղուկ է անգէտ գրագրին, ահած հոգի, ի՞նչ կու առնես, գիտեմ, բանական ես, զգիրս տողել ես եւ մէկ մէկ յինչ ես կցել»: *Ձեռագիրը նշանաւոր է յատկապէս Եզնիկ Կողբացու հազուագիւտ եւ հին ընդօրինակութեամբ* (*Յաւել. Բ.* 65)[1]: *Վենետկի ձեռագիրն էլ այստեղից է առնուած:*

---

[1] Ձեռ. էջմ. № 1111/1097։

[2] Ձեռ. էջմ. № 1298 Նժ։

[3] Ձեռ. էջմ. № 67։

[4] Ձեռ. էջմ. № 1844 Նժ, 408ա։

[5] Ձեռ. էջմ. № 658/749, 115բ։

[6] Ձեռ. էջմ. № 1844, 618ա։

[7] Ձեռ. էջմ. № 182/206 եւ Փիրդալէմեան, Նշխարք Հայոց պատմ., անտիպ։

[8] Յաւել. Բ., 24։

[9] Ձեռ. էջմ. № 1266/1276։

[10] Ձեռ. էջմ. № 240/380։

[11] Ձեռ. էջմ. № 3606, 273ա։

[12] Ջալալեան Բ. 164։ Ալիշան. Սիսական. 165 Ouwarova, Mat. Kavk. Arx. XIII. 118։

[13] Ձեռ. էջմ. № 1120/1141 (կար. 1099)։

[14] Ձեռ. էջմ. № 368/212, 310բ։

[15] Քարամեան, Ցուց. Պերլինի արք. մատենադարանի, 26։

Նոյն Թուականին Ներսէս վարդապետի հրամանով գրուել է մի ուրիշ աւելի կարեւոր ձեռագիր, որ պատերազմի ընթացքում բերուել է Վարագից եւ այժմ կրում է 1298 *համարը: Տարաբաղդաբար ձեռագիրը թերի է սկզբից, հաւանօրէն չորս թերթ, որ Ոսկեբերանի Եզեկիէլի մեկնութեան յառաջաբանի մասն էր, բայց հնարաւոր է մեծ մասով վերականգնել Եսայի Նչեցու նոյն մարգարէի մեկնութիւնից, որի մասին խօսք կը լինի յետոյ: Այդ ձեռագիրը գրուած է* 1280 *թուին.* 203*ա.* «Յամի Չ.երորդի, Ի.երորդի, Թ.երորդի թուականիս Հայոց». *ստացողն է Ներսէս վարդապետը: Ձեռագրի բովանդակութիւնն է Ոսկեբերանի, Եփրեմի, Կիւրեղ Աղեքսանդրացու եւ մեր Ստեփանոս Սիւնեցու եւ Վարդանի Եզեկիէլի մեկնութիւնները, որոնցից ոչ մէկը դեռ եւս տպագրութեամբ ծանօթ չէ բանասիրութեան: Եփրեմի ասորերէն բնագիրը տպուած է Հռոմի հրատարակութեան մէջ պատառիկներով, իսկ Ոսկեբերանի եւ Կիւրեղ Աղեքսանդրացու մեկնութիւնների բնագրերն իսկ անյայտ են մինչեւ այժմ, եւ ուրեմն այս Ձեռագիրը Գլաձորի փառքն ու պատիւը բարձրացնող մի* unicum *է համաշխարհային նշանակութեամբ*[2]:

Ներսէս վարդապետի գրել տուած եւ մեր ձեռքը հասած երրորդ ձեռագիրն է Դիոնեսիոս Արիսպագացուն վերագրուած «Յաղագս երկնային քահանայապետութեան» *աշխատութիւնը.* «ի թուիս ՉԼԱ (= 1282) հայկազեն. տոմարիս» «հրամանաւ գիտնական եւ արդիւնական հռետորի Ներսի.» *Ստեփանոս կրօնաւորի ձեռքով, որ խնդրում է յիշատակել* «զառաջ ասացեալ երջանիկ վարդապետն Ներս. եւ զծնողսն իւր՝ ընդ նմին եւ զՄովսէս բեմբական, որ ա մարմնաւոր հանգստեամբ սպասաւորեաց մեզ»: *Խնդրում է յիշել եւ իւր հանգուցեալ Պետրոս եղբօրը* (*Յաւել. Բ.* 66, *պատկ.* 199): *Մենք հնարաւորութիւն չէինք ունենալ որոշելու ոչ Ներսէս վարդապետի անձը եւ ոչ գրչութեան տեղը, եթէ* 296*ա. ներքեւի լուսանցքում չլինէր հետեւեալ նկատողութիւնը.* «Զամենամեղ ոգի Եսայի, որ յուղղելս աշխատեցայ, յիշեսջիք հանդերձ վարժողաւք յողորմութիւն. Ածյ.»: *Ձեռքից ծանօթ է մեզ, թէ նկատողութեանս գրող Եսային՝ Նչեցին է եւ ուրեմն, պատրաստուած է Գլաձորում իւր վարժապետի հրամանով: Ձեռագիրը գրուած էր հաւանօրէն դպրոցական նպատակների համար. որովհետեւ Դիոնեսիոսի անուան հետ կապուած բոլոր աշխատութիւնները մեր միջնադարեան վարդապետարանների սիրելի դասագրքերից մէկն էին, արտագրուած եւ մեկնաբանուած մեր երկու վարդապետների ձեռքով: Փիրղալէմեանի հաւաքած անտիպ յիշատակարաններից մէկի ձեռագիրը արտագրուած է* 1319 *թուին այն օրինակից, որ գրուած էր* «ձեռամբ Ներսէս բանի սպասաւորի, ի լաւ եւ ի հին օրինակաց, ի թարգմանչաց մեկնչացն, որ բնաբանն որիշ կայ գրած եւ մեկնիչն որիշ եդեալ խոռոմ գրով նշանակեալ»: *Իսկ մեկնութեան համար ասուած է.* «այն լուծմունքն, զոր մեծ րաբունապետն Եսային է արարեալ իւր գիտնական իմաստութեամբն»: *Ակնարկուած ձեռագրի բնագիրը Էջմիածնի* № 60/167*ը պիտի լինի, որի լուսանցքում Նչեցին իւր ձեռքով գրել է իւր լուծմունքը* (*պատկ.* 200). *իսկ բուն ձեռագիրը պատրաստուած է Յովհաննէս Հռոմայրեցու ձեռքով* «ի ստոյգ եւ յընտիր աւրինակէ ի հռչակաւոր ուխտէն Հաղբատայ. հրամանաւ եւ արդեամբք եռամեծի եւ անյաղթ վարժապետի եւ ժրաջան հռետորի Եսաեայ» (*պատկ.* 201, *Յաւել.* 67, 68)[3]:



ՊԱՏԿԵՐ 198.

Էջմիածնի ձեռագիրներից մէկը № 94 *Գց.* / 3276 *ի միջի այլոց ունի եւ շատ մատենագրական յիշատակարաններ, որոնք արտագրուած են ուրիշ տեղերից, կարծում ենք դպրոցական նպատակի համար, որոնցից մէկն է* 126*բ.* «Գրոցս յիշտկրան եւ տաղ չաքերական» (s!) *վերնագրով. յիշատակարանի բնագիրը գրուած է եղել* «յՉ մերոյ թվի, երեսներորդ եւ երրորդի» (= 1284), *Ամատի բռնակալութեան* (1282—1284)[4], «յարքայւեն. Լեւոնի որդւոյ Հեթմոյ բարեպաշտի, եւ ի կաթողիկոսութեան տն. Յակոբի» (*Յաւել. Բ.* 69):

---

[1] Ձեռ. էջմ. № 1111/1907. նկարագրութիւնը եւ գիտի հանգամանքները, նաեւ արժէքը տե՛ս Հանդ. Ամս. 1904. Գալուստ Տէր Մկրտչեանի եւ Հ. Աճառեանի յօդուածների շարքը. արտատպուած նաեւ առանձին տետրակով. 1904. Վիեննա:

[2] Տե՛ս մեր նախնական հաղորդագրութիւնը այս գիտի մասին. Արարատ. 1917. Փետր. — Մարտ: Ստեփանոս Սիւնեցու մեկնաբանական մի ուրիշ գրուածք «Համառօտ տեսութի. աւետարանին Յովհաննու ի Ստեփանոսէ եպէ. Սիւնեաց» գրուած է 1308 թուին Յովհան Երզնկացու ձեռքով (Ձեռ. էջմ. № 1311 (Կար.) իսկ նորա մեկնութիւնը «Չորից աւետարանչացն» շատ հազուագիւտ (Ձեռ. էջմ. № 862 նժ), պատրաստել ենք տպագրութեան համար:

[3] Տե՛ս մեր Բարտէզ Հայ Հնագրութեան. § 130, տախտ. ՁԲ.:

[4] Չգիտենք ինչու Ալիշանը 1283 թ. է դնում այս յիշատակարանը: Համ. Սիսական. 131, Սիսուան. 74: Սմբատեան, Երնջակ, 280:

Յիշատակարանի հեղինակն է Մատթէ քահանայ Կիլիկեցի, Մլիճի անապատից, որ

«Է ի ստորոտն Տօրոսի,
Լերին մեծի եւ անուանի.
Մերձ ի դղեակ Պապառօնի,
Առ սահմանօքն Տարսոնի»:

Այնտեղից նա գալիս է Վայոց ձոր» գաւառը.

«Հուպ ի չիրիմն Սիւնեցի
Ի յԱղբերց, վանս մենաստանի.
Յերկդ. Աթէնս պանծալի.
Առ ոտըս հօր մեր Ներսեսի
Եւ րաբունեց. վարժապետի,
Հասել. ի ծյրս. իմաստ բանի»:



ՊԱՏԿԵՐ 199·

Նա հրաման է ստանում գրելու «Էր ը· եղբարս մեկնըչի, եւ Յովհաննու Յայտնութէնի» *նոր Սիոնի մանկանց համար, որոնք փափաք ունին ուսման, ի յիշատակ իւր (Ներսէսի) ծնողաց եւ զարմի: Գրիչը իւր արուեստը սովորել է Կիլիկիայում՝ Բարսեղ վարդապետի մոտ եւ խնդրում է յիշել իւր եղբայր Ղուկաս քահանային.* «Գրեցաւ յոչ· ք· զը· կաղանդին Յուլիս ամսոյ, ձեռամբ Մատթէոս անարժան քհյի·»: *Սորա տակ գրուած է.* «Եսայի ասակերտ (s!) մեծիմաստ վեհին Ներսեսի յշոց·»*. այս մակագրութիւնից տեսնում ենք, ինչպես եւ առաջ, թէ ձեռագիրների ուղղողը կամ սրբագրողը այս շրջանում Եսային է (Յաւել. Բ. 69): Գրչութեան դպրոցներում այդ մի անհրաժեշտ պաշտօն էր ձեռագիրները սխալներից ազատ պահելու համար:*

Բայց Եսային ինքն էլ իւր ձեռքով ձեռագիրներ է պատրաստել. Ձեռ. Էջմ. № 659/437, 68*ա*—386*բ* *գրուած է Նչեցու ձեռքով, տարաբաղդաբար սկզբից եւ վերջից պակաս, միայն 1—67ր յետոյ է աւելացրած ձեռագրի վերայ: Թուականը որոշել կարող չենք, բայց Ներսէս Մշեցու մահուանից տարիներ առաջ է գրուած, գուցէ եւ մինչ Գլաձորում հաստատուելը: Գրիչը փոքրիկ յիշատակարաններ ունի մի քանի տեղ, ուր խնդրում է յիշել իւր վարդապետին· օր·* 144ա «Զվպտն· իմ զՆերսէս եւ զամենամեղ գրողս աշակերտ նորին Եսաի, յիշել աղաչեմ ի տր·»· «Աղաչեմ յիշել զպետս իմ վարժից եւ իմոց համասեռից Ներսէս, ընդ նմին եւ զամենամեղս Եսաի գրիչ»: *Այս վերջին նկատողութիւնից պարզ է, որ դեռ եւս վարդապետական անկախ դիրք չունի նա: Աշակերտակիցներից մէկը օգնել է օրինակը եւ «քարտ»ը շնորհելով* (107ա)· «Զհամշիրակ եղբ· իմ Սփ· որ զօրինակս քարտիւ հանդերձ շնորհեց·, յիշեսջիք ընդ նմին եւ զամենամեղ գրիչս Եսաի, աղաչեմ»: *Մի ուրիշ ընկեր օգնել է արտագրութեան մէջ* 110—126ր *եւ ուրիշ տեղեր փոքր չափով, չյիշելով իւր անունը·* «Ով պատուական եղբայր Եսի·, դու արժանի ես, թէ խ· տետր այս ցեղ քեզ օգնութի· է արրել·, ապա դու գիտես զտկարութիս· եւ զհարկս որ ի վր· կա, անմեղադիր լեր եւ յաղօթից մի մոռանար, թէ այլ կարեմ օգնել· յօժար եմ»: *Այս մէջբերումներով կամեցանք ոչ միայն գրչութեան մօտաւոր ժամանակը որոշել, այլ եւ ժամանակի դպրոցական բարքերի մասին գաղափար տալ: Ձեռագիրը գրուած է դպրոցական նպատակների համար (Ցուցլ· Բ·* 70, *Ձեռ·* № 659/437) :



ՊԱՏԿԵՐ 200·

Ներսէսի մահուանից քիչ առաջ եւ իբրեւ դպրոցի ղեկավար իւր ուսուցչապետի աթոռը դեռ եւս չժառանգած ունինք Նչեցու ձեռքով գրուած մի ուրիշ ձեռագիր, «հրամանաւ երիցս երանեալ առնն Այծ տր· Գրիգորի արքեպիսկոպոսի սարարադեան գաւառի»… «ի վայելումն արիւնառու մերձաւորաց եւ ժառանգորդաց իւրոց տր· Վարդանա եւ Դիթ· եւ Գրիգոր վպտի ···», «եւ միւս այլ վպտի· Վահրամա, որ ի սոցանէ սնեալ եւ կրթեալ ի մամուլս գրոց, եւ ի սոյն ամի եղեւ կոչումն սորայ յաստիճան վպտութե·»: *Այստեղ յիշուած Գրիգոր արքեպիսկոպոսը եւ իւր ազգակիցները բոլորն էլ այս եւ այն կերպով նշանաւոր են հանդիսացել իրենց շրջանում· առաջինը Բջնիի եւ Վիրապի արքեպիսկոպոսն էր, Զաղավանից ժողովի նախաթոռ եպիսկոպոսը*[1], *Վարդան եւ Գրիգոր հարազատ եղբայրներ են, վերջինը Բջնեցի մականունով յայտնի, ձեռագրերի ստացող եւ մասնակից Ստեփանոս Օրբէլեանի գլխաւորութեամբ, ընդդէմ Անաւարզեցու գումարուած ժողովին· իսկ Վահրամը հեղինակ մի ճառի, որի վերջաւորութիւնը ուղերձ է իւր վարդապետին, աստիճան ստանալու առթիւ (Ձեռ· Էջմ·* № 636/734)[2] : *Գրիչ Եսային իւր հետ յիշել է խնդրում եւ «զսիրելի եղբայրս Ստեփանոս սպասաւոր բանի», որի մտերմութիւնը տեսանք վերեւ եւս «համշիրակ եղբ· իմ Սփ·» կոչելով նորան (Ցուցլ· Բ·* 71, *Ձեռ· Էջմ·* № 1432/1422) :

Ներսէս մեռնում է «ի բարւոք ծերութեան» Գլաձորի վանքում, ինչպէս տեսանք նորա Վկայաբանութեան մէջ: Մի անյայտ ժամանակագիր հաստատում է ոչ միայն մահուան տարեթիւը, այլ եւ յայտնում ամսաթիւը· «Հանգեաւ ի Քս· Ներսէս վդպն· ի վանս Գլաձորոյ, թվ· հայոց ՉԼԳ ի փետրվարի գ·, ի փառս»[3] :

Նչեցին յաջորդեց իւր ուսուցչին ոչ իբրեւ համբակ: Գլաձորի հետ կապուած առաջին ձեռագրի մէջ արդէն յիշատակութիւն ունինք նրա մասին իբրեւ վարդապետի: Ուսուցչի կենդանութեան ժամանակ նա օգնում էր ձեռագրերի սրբագրութեան, հաւանօրէն, նաեւ ուսուցչութեան մէջ[4] : *Ինչպէս Վարդանի կեն-*

---

[1] Շողակաթ, 1913, վաղարշ·, Մեր «Զագավանից ժողովը» յօդուածը, 23, 30 եւ շար·:

[2] Տաշեան (Ցուց· վիեննայի Ձեռագրաց, 771) յատկացնում է այդ ճառը վահրամ Րաբունի Կիլիկեցուն, Լեւոնի ժամանակակից, բայց հեղինակի դիմումները իւր ուսուցչին եւ նրան ուղղած գովեստները յատուկ են Գլաձորի աշակերտներին (տես Ցուցլ· Գ· 13):

[3] Ձեռ· Էջմ· № 13/84, 282ր:

[4] Մատթէոս գրչի ձեռքով «*ի Թուիս ՉԻԳ*» (= 1274), «*ի վանս Առաջաքար*» Գրիգոր Բջնեցու իշխանութեան տակ, գրուել է «*Փիլոնի այնոցիկ որ լինելութենէ խնդրոց եւ լուծմանց*», որի վերջում գրուած է՝ «*Եսայի վարդապետին է գիրքս*»: Սրան կցուած են Փիլոնի «*Որ յՆլսն են յեգիպտոսէ*» եւ «*Յաղագս քահանայութեան*», բայց տարբեր եւ անյայտ գրչի ձեռքով· վերջից թերթ է ընկած: Նչեցին իւր ձեռքով սրբագրութիւններ ունի երեք մասերումն էլ: Դժուար է պարզել, թէ սրբագրութիւններն էլ գրչութեան ժամանակից են· այդ դէպքում պէտք է ընդունել, որ Նչեցին իւր ուսուցիչ Ներսէսի հետ 1274 թուին դեռ եւս արեւելեան Հայաստանումն էր եւ այդ կամ հետեւեալ տարին է փոխադրուել Մուշի Առաքելոց վանքը եւ այնտեղ մնացել մինչեւ 1280 թիւը:

գանութեան ժամանակ գործակից էր նորան Ներսէսը, այնպէս էլ սորա օգնականն էր Եսային վարդապետական աստիճանով, որ, Տարօնից աշակերտել էր, հետեւելով Բաջբերունեաց եւ Արարատեան գաւառների չըրջագայութեան ժամանակ։ Մեծ վարդապետարաններն ունէին մէկից աւելի, առնուազն երկու ուսուցչապետներ, ինչպէս շարունակ տեսնում ենք Գլաձորի ամբողջ գոյութեան շրջանում։

Նչեցու անկախ գործունէութեան տարիներից տեղեկութիւն չունինք մինչեւ 1291 թիւը։ Իսկ այնուհետեւ, գրեթէ, անընդհատ հետեւել կարող ենք նորա կեանքի եւ դպրոցի ընթացքին մինչեւ վերջ։ Նչեցու գործունէութիւնը երեք մասի կարելի է բաժանել, դպրոցական, եկեղեցական եւ մատենագրական–գիտական։ Առաջինի հետ կապուած են գրչութեան արուեստի մէջ նորա կատարած մեծ ծառայութիւնները, իսկ եկեղեցականի հետ մատենագրականի մի մասը։ Փորձենք ամփոփել այդ երեք կէտերի մէջ այս բազմաշխատ վաստակաւորի եւ նորա հետ կապուած դպրոցի կատարած գործը։



ՊԱՏԿԵՐ 201·

Յովասափ գրչի ձեռքով 1291 թուին գրուած է Գէորգ Լամբրոնացու Գործք Առաքելոցի մեկնութիւնը, որ հեղինակը գրել է Յովհաննէս Արքայեղբօր խնդիրքով· ստացողն է Եսայի վարդապետը· 28բ «Տր· Ած Յս·Քս· բարէխաւսութբ· ա սրբոց ողորմեա բազմաբարի րաբունոյն Եսաեա, ստացողի սորա եւ բազմաբիծ գրողին, ամէն»։ Կան եւ ուրիշ բազմաթիւ փոքր յիշատակարաններ (32ա, 37ա, 41բ, 45ա, 58ա, 66բ, 70բ, 76ա, 84ա, 119բ, 149բ, 154, 167ա, 170բ, 173ա, 183ա, 186բ, 190ա, 193ա, 197բ, 218ա), որոնց մէջ Եսային կոչուած է «բազմաբարի, ածագուբ եւ սրբազան վարդապետ»։ Գլխաւոր յիշատակարանից 217ա տեղեկանում ենք, որ ձեռագիրը գրուած է «ի թուիս հայոց ՉԽԱ», «ձեռամբ գրասէր, բազմաբիծ եւ յոքնամեղ Յովասափի», «հրամանաւ եւ արդեամբք··· գերափառ եւ հրաշագեղ ոգի մեծ րաբունապետին Յեսաեա», յիշատակ «հոգեւոր ծնողին եւ ածազարդ մեծ վդ·ին Ներսիսի, փոխեցելոյն առ Քս·»։ Կոկողն է Տիրացու անունով մէկը, որ եւ իւր համառօտ յիշատակութիւնն ունի· «զՏիրացու, որ բովանդակ զքարտէզս կոկեցի, յիշեցէք ի բարի» (Ցուել· Բ· 73, պատկ· 202)1)։

Գրիգոր Նիւսացու մարդակազմութեան մի անթուական յիշատակարանի մէջ2), ոչ անեղծ հասած մեր ձեռքը, կայ հետեւեալը· «հրամանաւ Շարազանպարգի (?) զգերարքուն դրախտ պէս պէս որակ պըտղովք ի զմայլումն իմաստից, նմլեալ ի խոհեմական իմաստս բանասիրաց, լուսափայլ տեսչութբ· յիսկականն լոյս· յորմէ ճաշակ եւ ճաշակող վերաբերիլ յիմանալի ստեղունսն ի փառս միակին զվերասացեալ հրաբունի վարժապետս իմ Եսայի հանդերձ ծնողօք եւ ազգայնօք անմոռաց մաղթել զիսկն բան, յորմէ թողութին· վերայաւելու սատ եւ ի հանդերձեալն»։ Սորան անմիջապէս կցուած է մի անյայտ գրչի (անուան տեղը բաց) յաւելուած նկատողութիւնը· «եւ զիմն Յովհաննէս արքայեղբայր Հայոց Հեթմոյ յիշել առաջին կենեղուտ պատգին·»։ Եթէ կենդանի էր Յովհաննէս արքայեղբայրը, որի աշակերտներից մէկը ընկել էր Գլաձոր, ձեռագրի ծագումը պէտք է նշանակենք 1293 թուականներից առաջ3)։

Սիսականի մէջ Ալիշանը բերում է Կաթուղիկեայց թղթերի մի նոյնատիպ յիշատակարան Յովհաննէս գրչի կողմից, «ի մենաստանս, որ կոչի Աղբերց վանս եւ մականուն Գլաձոր», «ի վարժապետութիս· գիտնական եւ արդիւնական մեծ հռետորի յԵսաս» (s!) «ի թուիս ՉԽ»4)։

Յովհաննէս անունով գրչի ձեռքով 1297/8 թուին գրուել է Պիտոյից գիրքը՝ «ի դառն եւ ի դժնեայ ժմկիս·, յորում խստագոյն տիրէր լուծ այլասեռիցն ի վերա քրիստոնէից, եւս առաւել ի վր· շինուածոց եկեղեցեաց, զորս բազումս քակեալ եւ աւար հարեալ անպիտանացուցին»5)։ Արդեօ՞ք սա նոյն է Յովհաննէս Սսեցու հետ, որ աշակերտել է Եսայի Նչեցուն եւ Մեսրոպ վարդապետին6)։

Մկրտիչ քահանան 1298 թուին Գլաձորում գրել է սկսել Կաթուղիկեայց եւ Յովհաննու Յայտնութեան մեկնութիւնները, «էր ընդ եղբարցս» եւ Դաւիթ Անյաղթի Խաչի ճառը։ Յիշատակարանը գրուած է № 94/3276 ձեռագրում պահուած Մատթէոս Կիլիկեցու

---

1) Ձեռ· էջմ· № 1369/1363, կաշեկազմ, $24^1/_2 \times 17 \times 5^1/_2$ սմ· մեծութեամբ, գրուած շեղագրին մօտեցող բոլորագրով, երկսիւն՝ իւրաքանչիւրը $21,4 \times 6,2$ սմ·, թուղթ, թերթի մեծութիւն $25,2 \times 17$ սմ·, ամբողջը 218 թերթից բաղկացած, պինդ եւ լաւ կոկած· նմանահանութիւնը տես եւ մեր Քարտէզ հայ հնագրութեան, § 106, Տախտ· Հ։

2) Ձեռ· էջմ· Գ· ց· № 138/2509, 198բ։

3) Ըստ Ալիշանի (Սիսուան, 147) Յովհաննէս արքայեղբայր մեռել է 1288 թ·, բայց կարծում ենք սխալւում է· վահրամ գրիչ ՉԽԲ (= 1293) թուին խնդրում է յիշել «տն· Յոհաննիսի եղբաւր արքային Հայոց Հեթմոյ, ուսուցչին մերոյ եւ քահանա ձեռնադրաւղին» առանց մահուան ակնարկութեան· Ձեռ· Երուսաղէմ 2612/57։

4) Սիսական· 131։ Սմբատեան, Երնջակ, 157, 163։

5) Ալիշան· Սիսական· 133, նմանահանութեամբ· նրանից առել է Սմբատեան, Երնջակ, 157։ Գրեթէ նոյն բառերով է նկարագրում Օրբէլեանը ժամանակի հալածանքը, Օրբ· 472/3։

6) Ալիշան· Սիսուան· 517։

հետեւողութեամբ, միայն տեղի եւ անձանց անունները փոխելով, այն գովեստը, ինչ որ այնտեղ ասուած է Ներսէս վարդապետի համար, այստեղ յատկացուած է Նչեցուն, նիւթն էլ ընդօրինակութիւն է նոյն ձեռագրից: Գրիչը իր մասին ասում է, որ եկել է



ՊԱՏԿԵՐ 202·

«ՅԱրարատէ հռչակելի
Որ յորջորջի Նաթելենի·
Է ստորոտն Արագածի,
Լերին մեծի եւ անուանի·
Մերձ ի դղեակն է ի Բջնի (?!)
Առ սահմանաւքն Կոտայի»:

Մկրտիչ քահանան նոյն տարին վախճանուած Գրիգոր Բջնեցու աշակերտն է, իսկ Բջնոյ եպիսկոպոսն է «տր· Յովէս· արհեպիսկոպոս», *որ Գրիգորի քրոջ որդին է· Մկրտչի եղբայրն է Յովանէս քահանայ· յիշատակարանը վերջից պակաս է, թերթ ընկած լինելու պատճառով, բայց միայն վերջին տողերը: Նոյն Մկրտիչն ունի մի ուրիշ յիշատակարան* 261*բ·*

«Ընդ նմին եւ զեղկելիս
Զվերագծող այսմ տառիս
Ի մենաստանիս Գլաձորիս,
Ընդ հովանեաւ սբ· Ստեփանոսիս,
Անուանակիր մգ·էիս
Ձեռամբ անարժանիս Մկչիս·
Եւ գերանուն կրաւնաւորիս,
որ սպասաւոր եմ լեալ բանիս,
Միայն անուամբ ու ոչ ըստ գործիս·
Ընդ խնամաւք վարժապետիս
Որ յորջորջի իսկ Եսաիս»:

Ապա խնդրում է յիշել իր րաբունու Բջնեցու հետ «եւ զպատանիս իմ զՍարգիս, որ ընդ իս եւ սա իսկ պանդխտիս» (*Յաւել· Բ·* 74, *պատկ·* 203)[1]:

Այս միեւնոյն գրիչը «ի թուաբերութե· հայկազեանս տումարի յարաբարդեալ ամաց հինգ եւ տասան յիսնեկաց ընդ միակի շարամանելոյ», *այսինքն է Հայոց ՉԾԱ եւ քրիստոսական* 1302 *թուին աւարտել է Թեղենեաց վանքում Եսայի Նչեցու կողմից պատուիրած Ներսէս Լամբրոնացու Սաղմոսաց մեկնութիւնը: Գրիչը իր ընդարձակ եւ կարեւոր յիշատակարանի մէջ տալիս է ձեռագրի ծագման մասին հետեւեալ տեղեկութիւնները·* «բայց առաջին սկիզբն գրութե· սորա եղեւ ի գաւառին Վայոյ ձոր կոչեցեալ ի սբ· եւ ի գերահռչակ ուխտն Գլաձոր անուանեալ, որ Է երկրորդ Աթենս· ձեռամբ ուրումն սրբազան քահանայի առն իմաստնոյ եւ ճարտարի ա Ածաշունչ կտակարանաւքն վարժեալ, սպասաւոր գոլով բանի, մերձ ի կատարելութի·, Յովհաննէս անուն, որ էր ի հռչակաւոր քաղաքէն Եզնկայ կոչեցեալ· արդ զկէս մեկնչի Սաղմոսիս գրեաց սոյն այր· եւ ապա սակաւ ինչ այլ ոմն Վարդան անուն ի նահանկեն Կիլիկիոյ»: *Ապա յայտնում է, որ* «ըստ պատահման ինչ դիպեցաւ վերյիշեցեալ րաբապետին ելանել յիւրոյն կայանէ եւ երթեալ, շրջէր յԱյրարատեան գաւառն, ի վանորայսն, որ յայնմ նահանկի, աղաւթից պատճառաւ», *եւ մի ամբողջ տարի այստեղ այնտեղ շրջելուց յետոյ՝ կրկին գալիս է իր մենաստանը Վայոց ձորում եւ հրամայում է գրչին երկու նախընթաց գրիչների կիսատ թողած գործը լրացնել: Գրիչը իր կարողութիւնից վեր է համարում այս գործը,* «այլ ի յոլով խնամս վայելեալ նախայիշեցեալ սբ· րաբունապետին եւ անինահ վար(կու?)ցեալ զանց առնել զպատկառեցուցիչ հրամանաւ նորին» *ձեռնարկում է, յոյսն Աստուծոյ վերայ դնելով: Հակառակ իր համեստութեան, երեւում է ոչ համբակ, այլ արդէն* «րաբի» (*րաբունի*), *այսինքն վարդապետ-ուսուցիչ եւ գրչութեան մէջ ընտիր եւ անսխալ, որ իր ուսումն ստացել է հէնց Եսայի Նչեցու մօտ: Յիշատակարանի շարադրութիւնը մաքուր եւ լաւ գրաբարով, հրահանգուած մտքի արդիւնք, իսկ գրչութիւնը գեղեցիկ* (*Յաւել· Բ·* 75, *պատկ·* 204)[2]:

---

[1] Ձեռ· էջմ· 1395/1409, 310բ:

[2] Ձեռ· էջմ· 1844 Նժ· բերուած է Երեւանի կաթուղիկէ եկեղեցուց եւ մի մեծ հատոր է, կաշեկազմ, սոլայած թուղթ եւ բոլոր

Մկրտիչ Թեղենեցու յիշատակարանի մէջ յիշուած երկու գրիչները՝ Յովհաննէս «ի հռչակաւոր քաղաքէն Եզնկայ կոչեցեալ», եւ «այլ ոմն Վարդան անուն ի նահանգէն Կիլիկիոյ», երկուսն էլ առաջնակարգ գրիչներ են, մանաւանդ առաջինը, որի գործերին կը ծանոթանանք, եւ որին չպէտք է շփոթել նոյնանուն եւ նոյն քաղաքացի նշանաւոր մատենագրի հետ։ Յովհաննէս գրիչ Երզնկայեցին Կիրակոս Երզնկացու եղբօր որդին էր· սա է գրել մինչեւ ԻԱ· տետրակի վերջը 329ա։ Այնուհետեւ շարունակել է Վարդան Կիլիկեցին ԻԲ· — ԻԹ· տետրակի կէսը 441· ԻԲ· տետրակի ա երեսի լուսանցքում կարմրդեղով նշանակուած է· «աստից ի վեր Վարդանա Կիլիկեցոյս է գիր»։ Մնացածը գրել է Մկրտիչ Թեղենեցին։



ՊԱՏԿԵՐ 203·

Վարդան Կիլիկեցին գրել է եւ մի ուրիշ ձեռագիր· Նիւսացու ենն երանութեանց եւ Հայր մերի մեկնութիւնները· յիշատակարանը ոտանաւորով է եւ իր ուսուցչի անուան յիշատակութեամբ· Acr· Վարդան։

Յորմէ յոն· այն սոսկալի
Հատուցանէ զգործս բարի
Եսայիաս վարժապետի
Ձիմանալի հաց ծաւկողիս·
Ի Վարդանա աշակերտի···

Նորա ընտիր գրչութեան մասին գաղափար է տալիս պատկ· 205· (Յաւել· Բ· 76)[1])։

Լամբրոնացու Երկոտասան մարգարէից վերլուծութիւնը գրուած է ՉԾԲ (= 1303) թուին «հրամանաւ վերասացեալ առնն այ Եսա· րաբունապետի ի խնդրոյ Յոհաննէս վարդապետի եւ ձեռամբ Թադէոսի անարհեստ գրչի», «ի գաւառիս Արարատեան ի վանքս որ կոչի Նռնաւնից, ընդ հովանեաւ Սբ· Ածածնիս»[2])։ Գրիչը գանգատում է, որ դառը եւ դժնդակ ժամանակ է գրում, ձմեռ եղանակին տառապելով երբեմն ցրտից, «երբեմն ի թաթարի գալ ու գնալոյ, ի տեղեաց աւերութենէ» փախստական են դառնում, նա կը կամենար, «որ ամէն գիր ոսկի էր լել (s!), ապա մեր կարողութիս· այդ չափ էր»։ Յետոյ ստացուած է «յիշատակ ազախնոյն այ Ասուդա կոչեցեալ», «որ տղա եւ տիաս հասակաւ փոխեցաւ առ Քս·»։ Ո՞րտեղ է Նռնաւնից վանքը, ուր Եսային իշխանութիւն ունէր հրամայելու, չգիտենք հաստատ։ Նռնաւնից Ս· Աստուածածին էր կոչւում Ածոպի Խտակերաց Ս· Աստուածածինը, Պռոշեանց վանքերից, որի պատմութիւնն ու նկարագրութիւնը տուինք։ Բայց նոյն ձեռագրի մի ուրիշ յիշատակարան 330ա· պարզում է Յով-

---

մասերն էլ ընտիր գրչութեամբ· թերթի մեծութիւնն է $20\times15^1/_2$ սմ·, վերեւի լուսանցքը 2/3 մասով կտրուած· բուն գիրը $17,4\times12$ սմ·, տարաբաղդաբար վատ պահուած եւ տեղ տեղ թղթերը միացած։ Բովանդակութիւնն է ա) Լամբրոնացու Սաղմոսաց մեկնութիւնը· բ) հեղինակի կենսագրականը «Ընդ նուաղել թագաւորութե···»· գ) Լեւոն թագաւորի յիշատակարանը՝ մի օրինակ Հաղբատի վանքին նուիրելու առթիւ· դ) գրչի յիշատակարանը պատմական–մատենագրական արժէքով· ե) «Ներբողեան պատմագրաբար ասացեալ սրբոյն Գրիգոր Ածաքարոզ երջանիկ վդպետի եւ առ Քս· միայնացելոյ, ի վարս եւ ի նգնութի· մեծ քահանայապետին սրբոյն Ներսիսի արքեպիսկոպոսի Տարսոնի Կիւլիկեցւոց ի խնդրոյ նորին համանուն եւ համազգւոյ Ներսիսի եպ·ոսի եւ սրբասնունդ քահանայի»· սկս· «Բազում զգուշութե···»· զ) բան յիշատակի մատենիս (Յաւել· Բ· 75)։

[1]) Ձեռ· էջմ· N° 652/749բ· փոքրադիր, թուղթ, բոլորգիր։

[2]) Ձեռ· էջմ· N° 3606· կաշեկազմ $16\times16^1/_2\times6^1/_2$ սմ· թուղթ· բովանդակութիւնը 1—274ա· Լամբրոնացու Երկոտասան մարգարէից վերլուծութիւն· իսկ 276ա—330ա· Վարդանի Դանիէլի մեկնութիւնը։ Յիշատակարաններ 70բ· 100բ· 122ա· 185ա· 148ա· 156ա· 258ա·, մեծ յիշատակարանը 273ա—274ա։ Մխիթարի յիշատակարանը 330ա·։ Մի հատուած գլխաւոր յիշատակարանից 273ա· տես Թոփճեանի Ցուց· խաչիկ վրդ·ի Ձեռագրաց Բ· 45· Թ· 28։ Այս ձեռագիրը Գանձասարից է էջմիածին բերուած։

հաննէս վարդապետի անձնաւորութիւնը եւ թէ ձեռագրի մի մասի գրութեան տեղը· «Գրեցաւ վերլուծութիս· Դանիէլի մգէի· յանապատիս Գայլեձոր անուանելոյ, ի թուի ՉԾԲերորդի, աւժանդակութբ· մերոյս սրբազան եւ արդիւնական րաբունապետի Եսաիաս անուն առձայնելոյ, ի ստացումն եւ ի խնդրոյ պատուական եւ աստուածահաճոյ Յոհ· վարժապետի եւ իմոյ հոգւոյ հարազատի· ձեռամբ անպիտան եւ անարժան Մխ· պիտակ անուն վպի·» (*Յաւել· Բ·* 77, *պատկ·* 206): *Այստեղ յիշուած Յովհաննէս վարժապետը Արճիշեցին է կամ Ոսպնակերը, որ յայտնի է մեր մատենագրութեան մէջ իր Պատարագի մեկնութեամբ, քաղուածք Խոսրով Անձեւացու եւ Ներսէս Լամբրոնացու նման աշխատութիւններից*[1]), *իսկ Մխիթար վարդապետը Սասնեցին է, Կերմանեցի եւս կոչուած, Մեծոփայ վանքի նշանաւոր վարժապետներից մէկը եւ մեր մատենագրութեան մէջ յայտնի իր երկերով*[2]):



ՊԱՏԿԵՐ 204·

Նա Գայլեձոր է եկել 1281 թուին, որին հետեւել են ապա Ստեփանոս եւ այս Յովհաննէս ուսումնակիցները, կամ «հոգւոյ հարազատ»ները, սկզբում աշակերտելով Ներսէսին, իսկ սորա մահուանից յետոյ Նչեցուն: Նոքա Գլաձորումն էին դեռ եւս 1291 թուին «առ վարդապետին մերոյ ընտրելոյ··· որոյ անուն Եսայիաս առձայնիւր»[3]): *Այդ թուականից յետոյ նա կարճ ժամանակով վերադարձել է հայրենիք, բայց կրկին երեւացել Գլաձորում վարդապետական աստիճան ստանալու համար: 1303 թուին տեսանք, որ նա իրեն վարդապետ է անուանում, իսկ Յովհաննէսին վարժապետ: Չորս տարի յետոյ, 1307 թուին, կրկին նա Մեծոփումն էր, երբ Աւետիք քահանայի համար մի Աւետարան գրեց· իսկ մի տարի յետոյ մի Նարեկ* «ի թուի Հայոց ՉԾէ յանապատիս Մեծոփայ վանս առձայնելոյ» «յառաջնորդութիւն տեղւոյս Սարգիս եպսի·»: *Այստեղ նա մնաց մինչեւ իր կեանքի վերջը՝ 1337 թուականը, արդիւնաւոր հանդիսանալով իր վարդապետական–մատենագրական աշխատութիւններով, նաեւ իբրեւ «քարտուղար ճարտար, գեղեցկագիր եւ ստուգաբան» ձեռագրներ էր պատրաստում եւ աշխատավարձը աղքատներին* եւ կարօտեալներին բաժանում. եղել է եւ մանրանկարիչ, բայց նորա գործերից մեր ձեռքը չէ հասել. «Զի յոյժ վարժ գոլով եւ ի ծաղկազարդ նկարակերտութիւնս գրոց»։ Մեծոփում նորա գործակիցն էր Ստեփանոսը «Հոգեւոր հարազատ նորին»[1]։

---

[1]) Մեկնութիւն ահաւոր խորհրդոյ սուրբ պատարագին. Յովհաննու վարդապետի Արճիշեցւոյ· Էջմիածին· 1860: Առաջին տպագրութիւնը Պոլսում 1779 թուին, իսկ երկրորդը Կալկաթայում 1830 թ··:

[2]) Մեր «Մխիթար Սասնեցի կամ Կերմանեցի»· Արարատ· 1889· 167: Նաեւ առանձին գրքոյկով:

[3]) Անդ· 161:

Յովհաննէս Երզնկացին 1306 թուին գրել է Յովհաննու աւետարանի մեկնութիւնների մի ժողովածու (Ստեփանոսի Սիւնեաց, Նանայի, Անդրէի եւ Արեթաս եպիսկոպոսաց Կեսարու Կապադովկիոյ) աքանչելի բոլորգրով, թղթի վերայ. չկայ յիշուած գրչութեան տեղը, բայց անկասկած է, որ Գլաձորումն է գրուած ուր նա ապրում էր այդ ժամանակ (Յաւել. Բ. 78, Ձեռ. էջմ. № 2520. 344ա)։



ՊԱՏԿԵՐ 205.

Տիրատուր Կիլիկեցին 1300 թուին գրել է մի նկարազարդ աւետարան «ի մեծ դպրատանս, որ կոչի Գալիձոր ի վարժապետութե. մեծիս Եսայիայ եւ եռամեծին Դավթայ» (պատկ. 207)[2]։ Այստեղ յիշատակուած Դաւիթը Նչեցու օգնականն էր իբրեւ վարժապետ. ստորագրել է Նչեցու հետ նաեւ ընդդէմ Անաւարզեցու ձեռնարկին 1295 թուին։ Սորա նախնական կեանքի մասին տեղեկութիւն չունինք, բայց նոյն պիտի լինի այն Դաւթի հետ, որին յիշում է Գրիգոր գրիչը Առաքելոց վանքում 1275 թուին՝ Ներսէս Մշեցու համար գրած Փիլոնի հնգամատեանի մեկնութեան յիշատակարանի մէջ, «մեր վդպետ.» անուանելով, որ ապա 1280 թուին Նչեցու հետ հետեւել է Ներսէսին դէպի Գլաձոր, Ներսէսի մահուանից յետոյ օգնական հանդիսանալով Նչեցուն դպրոցի ղեկավարութեան գործում[3]։ Նորա աւագութեան, ըստ հասակի կամ ձեռնադրութեան, բայց ոչ նոյն չափով հեղինակութեան, ապացոյց է տալիս Կիւրեղ գրիչը 1321 թուին գրած աւետարանի յիշատակարանի մէջ, թուագրելով «եւ ի վարժապետութեան սուրբ եւ բազմերջանիկ հռետորաց հայոց, երկուց ամոլաց ճշմարիտ հաւատոց մերոց Դաւթի եւ Եսայեա ի հռչակաւոր եւ սուրբ մենաստանի համալսարանիս Գլաձորոյ եւ ածընկալ վերաստացեալ դպրապետացս»[4]։ Մի քանի տարի յետոյ այս աւետարանն անցնում է Դաւիթ վարդապետի ձեռքը եւ նա իւր մակագրութեամբ նուիրում է Սպիտակաւոր Աստուածածնի առաջնորդ Մկրտիչ վարդապետին. «Նուաստ ի շարս ուսուցչապետաց Դաւիթ շնորհեցի զսուրբ աւետարանս սուրբ Աստուածածնին եւ առաջնորդի սուրբ անապատին Մկրտչին հոգեւոր որդեկին իմոյ ի յիշատակ հոգւոյ իմոյ»։ Նա ժամանակից էր նաեւ Սիւնեաց եպիսկոպոսների (Յովհաննէս-Աւրպէլ եւ Ստեփանոս-Տարսայիճ), Գլաձորի եւ ուրիշ վանքերի կողմից Անաւարզեցու եւ Կոստանդին կաթողիկոսի նորամուծութիւնների դէմ մղուած պայքարին. այս մասին յետոյ։ Բրիտանական թանգարանի ձեռագրերից մէկը՝ Վարդանի Սաղմոսի մեկնութիւն՝ ստացել է Դաւիթ րաբունը, Շմաւոնի գրչութեամբ. «Ստացող մատենիս գործական եւ արդիւնական վարդապետ Դաւիթ իւրովքն ծնողաւք եւ հարազատաւք եւ զմեղուցեալս Այ. զՇմաւոն գրիչ, այլ եւ զՎարդան, զՄխիթար, զՍարգիս» խնդրում է յիշել գրիչը։ Նոյն անունները կրկնուած են եւ ուրիշ փոքր յիշատակարանների մէջ[5]։

Պօղոս վարդապետ «ի մեծ մենաստանիս որ Գլաձոր յորջորջի ի դրան սբ. Նախավկայիս ի թվականութես. հայկազենս սեռի :ՉԿԲ: ի վարժապետութե. մերոյ մեծի Եսայեայ, յիշխանութես. գաւառիս Պապաքին եւ Էաչո, հայրապետութեն. Կոստանդնոյ Կատուկցո, թագաւորութեն. Աւշնի եւ ղանութեն. Խարբանդին» *գրել է բոլորգիր մի աւետարան թղթի վերայ, նկարազարդուած Կիլիկեան ոճով, որից միայն Մատթէոսի, Մարկոսի եւ Յովհաննու սկզբնազարդերն են մնացած*1) :

---

[1] Անդ. 167։ Նարեկի յիշատակարանից օգտուել ենք Հ. Ներսէս Ակինեանի արտագրութիւնից. Նարեկը գտնւում է Սարդարապատ գիւղի եկեղեցում։ Իսկ Աւետիք քահանայի համար գրուած աւետարանի յիշատակարանը տե՛ս Լալայեան, Ցուցակ Վասպուրականի. 1915. 154։

[2] Ձեռ. էջմ. № 3393։ Այս յիշատակարանը արտագրութիւն է եւ ոչ բնագիր Տիրատուրի գրած աւետարանի, որ մի ժամանակ գտնւում էր Երնջակի Ս. Կարապետի վանքում. (տես Սեդրակեան, Հնութիւնք Հայրենեաց, Արարատ, 1872, 150)։ Առանձին գրքով եւս տպուած։ Պատկեր 207-ի գիրը նման է բոլորովին Ձեռագրի երկրորդ ստացողի գրին, որ իւր յիշատակարանն ունի 122բ—123ա։

[3] Ձեռ. № 3932. (Յաւել. Բ. 61)։

[4] Փիրղալէմեան, Նշխարք եւն. անտիպ։ Conybeare. Caatlogue Arm. Manuscr. 1913, London. 22 (Յաւել. Բ. 23)։

[5] Conybeare. Catal. Arm. Manuscr. 187:



ՊԱՏԿԵՐ 206ա·

Մխիթար Երզնկացին 1314 թուին գրել է մի Պատճառաց գիրք (?) իւր վարժապետ Գրիգորիս Երզնկացու կամ Ցաղմնացու յորդորանքով· նկարազարդել է Թորոս Տարոնեցին, որի գործերին կը ծանօթանանք քիչ յետոյ· «Ես նուաստ անուն Մխիթար կոչեցեալ Երզընկայեցի· գնալով ի մայրն իմաստից Գլաձոր կոչեցել· առ ոտս Եսայա վդտի· ի վարժումն ածիմաստ գրոց· եւ յորդորել զիս վդտն· իմ Գրիգորիս գրել զգիրքս զայս յոյժ աշխատանաւք եւ հանդիպել· բարեմիտ եւ քաղցրատեսակ եղբաւր լցել· ա իմաստութբ· եւս առաւել գրականութբ· (*ուզում է ասել գրչութեամբ*) եւ ծաղկողութբ·, անուն կոչեցել· Թորոս ի Տարաւն գաւառէ· ծաղկազարդեաց զգիրքս զայս վս· յոյժ սիրելոյ զմեզ»2) : *Մի ուրիշ ոտանաւոր յիշատակարանի մէջ ուշադրութեան արժանի են հետեւեալ տողերը·*

«Ես Մխիթար գրիչ սորա
Թուղթս անկոկ ու գրիչ չկայ,
Աւուրքս ցուրտ ու պարզկա
Ջարտախ բարձր ու կրակ չկայ,
Դոներս (հաց) չոր ու սպաս չկայ,
Եւ այս Գլաձորն ո՞վ գիտենայ.
Ես յոյժ նեղած ու ճար չկայ,
Եւ ես պանդուխտ ու վեղար չկայ»:



ՊԱՏԿԵՐ 206բ·

Մի Գրիգոր Երզնկացի ըստ № 3116 ձեռագրի Մկրտութեան խրատ ունի «Երջանիկ քաջունապետի եւ քաջ հռետորի մեծի Գրիգորի վարժապետի Եզնկեցոյ ի մի վայր հաւաքեալ զխրատ վս· սբ· մկրտութե·», *իսկ ըստ № 3118-ի* «Սահմանադրութի· դաստիարակութե· նորածնեալց մանկանց, որք հրաւիրեալց են յաստիճան քհյութե·, խրատք հարկաւորք եւ պիտանիք արարեալ մեծ վարժապետին Գրիգորի հռետորի» : *Չեմ կարող ասել, թէ Մխիթարի ուսուցիչ Գրիգորիսն է այս հեղինակը, թէ Կիրակոս եւ Յովհաննէս Երզնկացիների նոյնանուն աշակերտը ՊԴ* (= 1355) *թուին յիշատակուած, որ կը տեսնենք քիչ յետոյ:*

Նոյն 1314 թուականին վերեւ յիշուած Պօղոս վարդապետը, որ Ակներից Գլաձոր էր եկել «յաղագս փափագման իմաստասիրական արհեստից» «առ ոտս երիցս երանեալ քաջունապետին Եսայեայ, որ իբրեւ զարեգակն լուսաւորեալ պայծառացուցանէ զբոլոր ազգս եւ զեկեղեցիս Հայաստան աշխարհիս», *գրում է մի նկարազարդ աւետարան* «հրամանաւ եւ ծախիւք մեծազարմ, իշխանաշուք լուսաբողբոջ մանղանն Տարսային կոչեցեալ, իսկ ի շնորհս հոգւոյն սրբոյ Ստեփանոս» :*Սա*

---

1) Երեւանի թանգ· № 1090 (Ցուցլ· Բ· 79) : Որոշ հիմունքներով Պապաքի մահը նշանակել ենք 1299-ին (Աստ· 98), երբ այս յիշատակարանը դեռ չէինք տեսած:

2) Նմանահանութիւնը Ալիշան, Սիսական, 138: Միւս յիշատակարանը Սիսակ· 135: Աւելի մանրամասն Հայապատում 525/6: Սմբատեան, Երնջակ, 164/5: Հ· Ակինեան, Հանդէս Ամս·, 1915, 64, «Մխիթար Երզնկացի» յօդուածը:

Յոհան Աւրպելու յաջորդն էր, Ջալալ իշխանի որդին, Տարսայիճ Օրբէլեանի եւ Մինախաթունի թոռը։ Այս ձեռագիրը երբեմն պատկանում էր Գանձասարի վանքին, որի յիշատակարանն ու նկարազարդ ընծայականը միայն գտնւում է Խաչիկ վարդապետի մօտ, այժմ Էջմիածնի պետական ձեռագրատանը (պատկ· 208)[1]։ Յիշատակարանից տեղեկանում ենք նաեւ, որ այս իշխանազուն եկեղեցականը պատրաստւում էր վարդապետական եւ եպիսկոպոսական աստիճան ստանալու, երկար ժամանակ նուիրուելով «ի կրթութի· գրոց··· նաեւ յիմաստասիրական արհեստն յոլով ժամանակս դեգերեալ ընդ բեւաւք խնամոց սբ· եւ երանաշնորհ բաքունապետին եւ տիեզերալոյս վդին· եսայեայ»։ Ստեփանոս Տարսայիճի աշակերտութիւնը Նչեցու մօտ՝ կը տեսնենք քիչ յետոյ հէնց Նչեցու խօսքերով։



ՊԱՏԿԵՐ 207·

Սարգիս աբեղայ «սպասաւոր բանի» 1317 թուին գրել է Նիւսացու գործերի հետ նաեւ Ներսէս Շնորհալու թղթերը եւ այլն «Ամիր–Հասանայ, որդւոյ Խաչէ, որդոյ Ամիր–Հասանայ, որդւոյ Պռօշայ», իշխանութեան ժամանակ, նկարազարդուած Գրիգորէս եւ Մամախաթուն ամուսինների պատկերներով, որոնք ծունկ են չոքել աթոռի վերայ նստած, Յիսուս մանուկը գրկին՝ Մարիամի առաջ (Ալիշ· Սիսակ· 133· գունազարդ)։ Ձեռագրի ընդհանուր ծաղկողն է Թորոս Տարօնեցին, Գլաձորի մեծ մանրանկարիչը, իսկ վերոյիշեալ ամուսինների նկարիչ, Ալիշանը կարծում է, թէ պատկերի տակ մակագրող Յովհաննէսը լինի· «զանպիտան Յոհանէս յիշել աղաչեմ»։ Ո՞վ է այս Յովհաննէսը, տարաբաղդաբար ճիշդ որոշել չենք կարող, բայց նա չէ ոչ Յովհաննէս մատենագիր Երզնկացին եւ ոչ նոյն անուն եւ նոյն տեղացի առաջնակարգ գրիչը, Կիրակոսի եղբօր որդին, որոնց գրչութիւնը մեզ լաւ ծանօթ է եւ միանգամայն տարբեր մակագրութեան գրից։ Նա չէ եւ Յովհաննէս Արճիշեցին կամ Ոսպնակերը, որի գործունէութեան շրջանը Արճէշն էր, եւ հաւանօրէն, իւր ընկերներ Մխիթար Սասնեցու եւ Ստեփանոսի հետ հայրենիք վերադարձած։ Բայց կար Յովհաննէս անունով մի ուրիշ քահանայ, որ Եփրեմ գրչի քեռին է եւ Յովհաննէս գրչի ընկերը, «ծաղկեալ հոգւով եւ հերով»։ Սա է տուել Կարապետ Տոսպեցու համար գրուած կէս Աստուածաշնչի օրինակը, 1318 թ· քիչ յետոյ Երուսաղէմ գնացել, որին անձկանօք սպասում էր Յովհաննէս գրիչը։ Հաւանօրէն այս Յովհաննէսն է, որ Ներսէս վարժապետ Մշեցու յիշատակարանի տակ, լուսանցքում աւելացրել է «նա եւս զՅովհաննէս յիշել աղաչեմ» (պատկ· 197)։ Պատկերների վերայ եղած մակագրութիւնները, ինչպէս եւ Աստուածածնի պատկերի տակ Յովհաննէսի յիշատակութիւնը միեւնոյն գրով է եւ շատ նման Թորոս Տարօնեցու գրին (պատկ· 224), ուզում ենք ասել, թէ նկարիչը հէնց ամբողջ գիրքը ծաղկող Տարօնեցին է եւ ոչ Յովհաննէս, որի անունն այստեղ գրուած է սիրալիրութեամբ իբրեւ աղաչաւորի։ Պատկերը արժէքաւոր է գեղարուեստական եւ ազգագրական տեսակէտներով։

Գրչութեան արուեստի հոյակապ արտադրութիւններն այս դպրոցի պատրաստուած են 1317 եւ 1318 թուականներին, երկուսն էլ Աստուածաշունչ։ Առաջինը ստացել է Կիրակոս Երզնկացին· Ծննդոց գրքի վերջում եղած յիշատակարանի համեմատ 34բ· «Գրեցաւ Ծննդոց գիրքս ի թվ· ՉԿԶ»։ Ձեռագրիս մէջ իրենց աշխատանքի լուման ձգել են Գլաձորի գրչութեան շատ ներկայացուցիչներ։ Բազմաթիւ մանր յիշատակարաններ տալիս են մեզ այդ մասին բաւարար չափով տեղեկութիւն· օրինակի շնորհողն է 34բ· «երջանիկ բաքունապետս մեր», ուրիշ տեղ անունով յիշուած 312ա· «Զմեծ բաքունապետն զեսայի եւ զհետեւող նորին զԿիրակոս վարդապետն, ընդ նոցին եւ զմեղաւոր հոգս Տիրացու գրիչ աղաչեմ»[2]։ Կիրակոս ինքն էլ ԺԴ· դարի առաջին կէսի նշանաւոր գրիչներից եւ վարդապետներից մէկն է, որ իւր եղբօրորդի Յովհաննէսի հետ բազմաթիւ ձեռագրեր ունի գրած եւ երկար ժամանակ ուսուցչութիւն է արել յատկապէս իւր հայրենիքում Երզնկայում (Յաւել. Բ. 80): Ե՞րբ է եկել Գլաձոր, չգիտենք. բայց այս թուականին արդէն «վարդապետ» 259ա. կամ «րաբունի» 205ա., մի տեղ մինչեւ իսկ «րաբունապետ» է կոչւում: Նորա եղբօրորդին Յովհաննէսը դեռ եւս սարկաւագ, բայց Գլաձորի ամենաշնորհալի գրիչներից մէկը (պատկ. 209), որի մասնակցութիւնը տեսանք Լամբրոնացու Սաղմոսաց մեկնութեան մէջ Եսայի Նչեցու համար[1]), իսկ այստեղ Կիրակոս նորա համար գրում է «զանձն ի յաշխատանս եդ ջանակից լինել մեզ՝ մանաւանդ թէ զյոլով մասն սա գրէ»: Բացի նորանից այս Աստուածաշնչի գրչութեան մէջ օգնել են նաեւ Կարապետ երէց որդի Գրիգորի եւ Հաղբեւարդի (254ա), բայց մանաւանդ Թորոս գրիչ եւ նկարիչ Տարօնեցի, որ յիշւում է շատ տեղ 57բ. «Զապիկար ծրողս յիշեցէք ի տր.»: Այս կարճ յիշատակարանի տակ կարմրադեղով աւելացրել է «եւ զԹորոս նկարագրաւղ»: Ղուկասի պատկերի տակ 534բ. «Զանարժան գրիչ Թորոս յիշեա ի տր. Յս. Քս.»: Յովհաննու եւ Պրոխորոնի պատկերի տակ 565բ. «Զսբ. պատկերաց նկարագրօղս զԹորս. յիշեա ի տր. Յս. Քս.»: Կիրակոս ինքն էլ մի քանի տեղ յիշում է նորան 205ա, 368ա: Յիշուած է նաեւ մի Մովսէս 611ա., հաւանօրէն նոյն «Մովսէս բեմբական»ի հետ (Յաւել. Բ. 66):

---

[1] Տես· Christ. VostoK, T. II. vib. II. 1913, մեր յօդուածը Potomstvo Tarsaitcha Orbelian եւն· 233—235, նաեւ առանձին արտատպութեամբ։ Ցուցակ Խաչիկ վարդապետի, թ· 29/30։

[2] Կարծում ենք այն Տիրացուն է սա, որ կոկել էր 1291 թուին № 1369/1363 ձեռագիրը եւ դեռ եւս անվարժ ձեռք ունէր։

«ԶՄովսէս մեռեալ ոգի
Վըշտաւք բազում պատեալ դերի.
Յիշման առնել միշտ արժանի
Ասել թէ տր. ողորմեսցի»:

Վերջապէս յիշում է «Յակոբոս սրբասնունդ կրաւնաւոր… որ զշիքերոնս շնորհեաց» 135ա, հաւանօրէն Յակոբ Թաղորցին է սա, որի մասին՝ քիչ յետոյ[2]):

Գլաձորի դպրոցի գրչութեան գլուխ գործոցն է մեր տեսածների մէջ Եսայի Նչեցու Աստուածաշունչը. գրիչներն են Կիրակոս (պատկ. 210) եւ Յովհաննէս (պատկ. 211) Երզնկացիները, նախընթաց ձեռագրի մեզ յայտնի ստացողներն ու գրիչները, բայց եւ մատենագիր Յովհաննէս Երզնկացի, որ Ծործորեցի էլ է կոչւում (պատկ. 212), Ծործորի վանքում այդ ժամանակները բնակուած լինելու պատճառով, ճոխութեամբ նկարազարդողն է Թորոս Տարօնեցին: Մի տեղ միայն յիշուած է ոմն Ստեփանոս, բայց նորա մասնակցութիւնը իրապէս չի նկատւում. «ԶՍտեփ. աղաչեմ յիշել ի տր.» 113ա.: Կիրակոսի յիշատակութիւնն ունինք



ՊԱՏԿԵՐ 208.

---

[1]) Ձեռ. էջմ. № 1844, Երեւանի կաթուղիկէ եկեղեցուց բերուած:

[2]) Կիրակոս Երզնկացին եւ Յովհաննէս եղբօրորդին 1318 թուին եւս դեռ Գլաձորումն են, ինչպէս կը տեսնենք նրանց գրած ձեռագրերի յիշատակարաններից, բայց 1324 թուին արդէն վերադարձել են հայրենիք. *«Ի թվ. ՉՀԳ* (= 1324) *ես Կիւրակոս վարդապետս բնակեցա ի լերինս սբ. Լուսաւորչիս»* (Ձեռ. էջմ. № 2329, 302բ.): Ձեռագիրը եղել է սեպհականութիւն Երզնկացի գրասէր Ահարոն վարդապետի († ՉԿԵ, յաւգոստոս ժբ.), որ յետոյ անցել է Կիրակոսի ձեռքը, որպէս դպրոցի ղեկավարի: Նորա դասասացութեան մասին իւր եղբօրորդի Յովհաննէսի հետ, որ այժմ վարդապետ է, տեղեկութիւն ունինք 1334 թուին (Ձեռ. էջմ. № 1402/1379, 271բ. 354բ). *«Զստացող գրոցս զերջանիկ եւ զանհուն րաբունապետն զԿիրակոս եւ զեղբաւրորդին իւր զՅովհանէս*

512բ., 541բ., իսկ Յովհաննէս գրչինը 550բ., Յովհաննէս Երզնկացի մատենագրինը, Ծործորեցուն 588բ., որ սքանչելի գեղագիր էր միեւնոյն ժամանակ (պատկ. 212). «Զածեղէն գանձիս ստացօղն զերջանիկ վարժապետն Եսայիաս յիշեսջիք ի Քս.: Ընդ սմին եւ զնուաստ գծօղ սորին զՅոհ. սպասաւոր բանի Եզնկայեցի, որ եւ Ծործորեցի հանդերձ ծնողօք: Որ եւ գրեցի զսա յըստ մեզ մարդեղութե. թուին Յի. Քի. տն. մերոյ ՌԳԾ եւ ԺԸ: եւ ըստ խոսրովային տօմարին: ՉԿէ» (=1318)[1]:



ՊԱՏԿԵՐ 209·

Սորա տակ աւելացրած է Թորոս նկարչի ձեռքով. «Եւս եւ զանարժան նկարագրող զԹոր.» *եւ* «զծնաւղն մեր» *(բոլոր յիշատակարանները տե՛ս. Յաւել. Բ. 81)*:

Բայց նոյն Թորոսի կողմից գրուած է եւ հետեւեալ ոտանաւոր յիշատակարանը. 497ա.



ՊԱՏԿԵՐ 210·

Զվարդապետս սիրունական,
Ով սրովբէից է ըղձական,
Եսայի ածաբան
Եւ առաջնոյն համայնման,
Նկարաւղիս եւ անպիտան
Որ աշակերտ եմ եւ անարժան,
Հոգովս եմ եղկական
Եւ մարմնով յոյժ ցաւական,
Հայցեցէք աղաւթական
Իմ յանցանացն թողութի.:

վարդապետ եւ զծնաւղսն նոցա յիշեցէք ի Քս. ամէն»: Ձեռագիրը գրուած է Թորոս եւ Մանուէլ գրիչների ձեռքով: Թորոսի աշակերտներն են Յովհաննէս եւ Գրիգորէս: Հետաքրքրական է դասասաց վարդապետների պատմութեան համար Կիրակոսի եւ Մկրտիչ վարդապետների պատկերներն իրենց աշակերտներով (160բ), բայց ոչ բարձր արուեստի գործ: Այս ձեռագրի մէջ *«ի սկզբանն զաղիւսակս կարգաւորութե. բանից. զօրացն հաոց ը. ազգի եւ տոհմի իւրեանց»*, որ կիսատ է, մի թերթ միայն մնացած լինելով, ուր կայ հետեւեալ յիշատակարանը. *«Յիշեա Քս. Ած զմեղուցեալ ծառայքս զԿիրակոս վարդապետ եւ զՅովանէս վղ. եւ զներսէս հոգեւոր որդեակն մեր, ի քում գալստեանդ եւ քեզ փառք»*:

Կիրակոս եւ Յովհաննէս վարդապետների գործունէութիւնն այստեղ բաւական երկար է տեւել. էջմ. № 94/3276, 190 յիշատակարանի համեմատ նրանց աշակերտներից մէկը՝ Ստեփանոս Երէց Երզնկայում, *«ընդ հովանեաւ սբ. տճրիս., որ ծառով սբ. Յակոբ կոչի»* ՊԴ (=1355) թուին գրել է մի կանոնագիրք *«ի վայելումն եւ յշտկ. Գրգր. աբեղային, գրոց աշկրտի. եւ բանի սպասաւորի ի յիշատակ ծնողաց եւ սբ. րաբունապետաց իւրոց Կիւրակոսի եւ Յովանիսի»*:

Կիրակոս Երզնկացին յայտնի է եւ իբրեւ մատենագիր եւ բանաստեղծ: էջմ.ի № 1982/1980, 105բ. յիշատակարանից երեւում է, որ նա *«յետինս ի վարժապետաց Կիւրակոս, ի յութն հարիւր եւ յերեք Թուականիս Հայոց* (= 1354) *արարի զվերլուծութի. հարիւրօորաց սբ. հօրն Եւագրիա»*: Կիրակոսի անունով կան քարոզներ եւ ճառեր. այսպէս էջմ.ի № 2239/2187, 105ա., գրուած ՉՂԵ (= 1346) թուին, *«Ի բանն, որ ասէ Զայն տն. ի վերայ ջուրց»*. Սկս. *«Արուեստաւորք եւ մակացուք»*. վերնագրուած է՝ *«Կիւրակոսի վդի. Եզնկեցոյ արարեալ»*: Նոյն Ձեռագրի մէջ 244ա. *«Նախերգան Տն. առաջին* (Տ!) *Կիրակոս վդպի. արարեալ»*: Սորանն է նաեւ *«Արեւելք գերարփին»* շարականը: Ունի կանոնական, ընդհանրական խրատներ. *«Ի Կիրակոս վարդապետէ Երզնկացւոյ Արեւելք ասողէ, զնւագրեայ լուծմունքն պարզողէ»* եւն., Սկս. *«Յայ. ամենակալէն աւրհնութի...»*: Ձեռ. էջմ. № 3527, 1446ա. (տես նաեւ № 2542, ուր կան եւ ուրիշները նորա գրուածներից):

[1] Այս Յովհաննէս Երզնկացին Վարդանի աշակերտն էր, մէկը մեր բազմաշխատ մատենագիրներից եւ ընտիր գրիչներից: Տեղը չէ եւ ոչ հնարաւոր է տալ նորա կեանքի եւ գրական ընդարձակ գործունէութեան նոյնիսկ ուրուագիծը, բազմաթիւ են նորա աշխատութիւնները գիտական, մատենագրական, բանաստեղծական եւ թարգմանական ասպարիզում: Նա եղել է իւր ժամանակի բոլոր հոգեւոր կեդրոններում Տփխիսից սկսած մինչեւ Հռոմկլայի հայրապետանոցը եւ Կիլիկիայի արքունիքը, ամէն տեղ վայելելով իւր ընդունակութիւններին համապատասխան պատիւ եւ յարգանք: Այս գլխի մէջ յաճախ առիթ կ'ունենանք յիշելու նորա անունը, որչափ կապուած է Գլաձորի հետ:

Մի քանի տեղ Եսային իր ձեռքով փոքրիկ յիշատակարաններ ունի, ինչպէս 296բ. 305բ. 354ա.: Աւետարաններից առաջ եղած խորաններից մէկի անկիւնում (439բ.) նկարուած է, աւետարանիչների չաբլոնական զգեստով, սպիտակահեր Եսայի Նչեցին, իսկ 440ա. մի երիտասարդ, գրիչը ձեռքին, որ Յովհաննէս գրիչ սարկաւագ Երզնկացին է (պատկ. 212):

Ինչպէս վերեւ յիշեցինք, շատ ճոխ նկարազարդուած է Թորոս Տարօնեցու ձեռքով, որոնցից մի քանիսը հրատարակել ենք Ա. Չօպանեանի «Անահիտ» պարբերականի մէջ[1]*: Մենք առիթ կ'ունենանք մանրամասն կանգ առնելու եւ գնահատելու Թորոսի աշխատութիւնները մեր մանրանկարչական մեծ գործի մէջ, բայց հարկ ենք համարում այստեղ եւս մի քանի նկարներ բերել, որոնք ընթերցողին ընդհանուր գաղափար կը տան այս վաստակաւոր մանրանկարչի արուեստի եւ նորա ուսուցիչ, հովանաւոր Եսայի Նչեցու ճաշակի մասին, ինչպէս քիչ յետոյ նորա աւետարանից եւս կը տեսնենք, նկարազարդուած դարձեալ նոյն Թորոսի կողմից: Թորոսի արուեստի մէջ խաչուած է եւ միացած արեւելեան եւ արեւմտեան Հայոց մանրանկարչութիւնը: Մենք տեսանք որ Կիլիկիայից Գլաձոր եկած գրիչներն ու վարդապետները հաղուադէպ չէին, նրանցից ոմանք հասուն վարպետներ էին, որոնք իրենց հետ բերած արուեստն ու տեխնիկան պատուաստում են Գլաձորի դպրոցում: Այսպէս էր, օրինակ, Պօղոս վարդապետ Ականեցին, որի աւետարանի Կիլիկեան ոճով նկարազարդուած ձօնն ունինք միայն, Տարսայիճ-Ստեփանոս Օրբէլեանի համար, իսկ բուն աւետարանը կորած է: Այդ հանգամանքը շատ լաւ երեւում է Եսայի Նչեցու Աստուածաշնչի եւ Աւետարանի մանրանկարչութեան մէջ, հէնց մեր այստեղ ցուցադրած պատկերները կրում են Կիլիկեան (պատկերք 212, 213, 214, 215) եւ արեւելեան–Սասանեան յետին աւանդների դրոշմ, թեթեւ կերպով նաեւ սելջուկեան*[2]*: Աւետարանի նկարներից է Աստուածածնի պատկերագրութիւնը, ինչպէս Օդիգիտրիայի (պատկ. 216), Խանդաղատանքի (պատկ. 217) տիպերի նմանութիւններն են, բայց առաւել եւս որդուն ծիծ տուող տիպը, որ մինչեւ վերջերս զուտ արեւմտեան էր համարւում, մինչեւ որ Գահիրէի մօտ, Սակկարայի վանքում, գտնուեցաւ Կոպտական մի մանրանկար* (Auxarob 157–164)*: Այստեղ մենք ունինք մի երկրորդը ԺԴ. դարի առաջին քառորդից հայ մանրանկարչութեան մէջ (պատկ. 218): Թորոսի արուեստը հնագիտական առանձնայատկութիւնների հետ ոչ պակաս հետաքրքրական է իր գեղարուեստական կողմերով. թէեւ չունի ԺԳ. դարի վերածնութեան տաք շունչը, Կիլիկեան արուեստի հիւթալից, պայծառ, վճիտ եւ խօսուն, թովիչ գոյների համադրութիւնն ու ներդաշնակութիւնը. դարուն չէ, որ այստեղ փթթում է, աչքերը պայծառագոյն գալիքին ուղղուած, այլ թեքման եւ խոնարհման նշաններով արդէն, բայց նա չէ կորցրել ձեւերի գեղեցկութեան զգացումը, շարժումների ռիթմն ու իմաստը, ամբողջի մէջ գաղափարի ներդաշնակ արտայայտութեան գիտակցութիւնը: Դիտեցէք պատկեր 213 եւ 214, շղթայուած առիւծների դիրքը, Դաւթի կանոնաւոր եւ մշակուած դէմքը իր գործիքի վերայ նուագող ձեռքով, մատաղահաս Մարիամի խոշոր աչքերով, մանրիկ բերանով կուսական արտայայտութիւնը (պատկեր 216): Նչեցու գլուխը (պատկեր 212), ծննդեան տեսարանը իր բարդ մանրամասնութիւններով (պատկեր 215), թռչող ձիու վերայից վիշապին նիզակով շամփրող Ս. Գէորգը (պատկ. 219), խորանների համեմատական ճոխութիւնն ու գագաթների ու թռչունների կեանքն ու շարժումը, մանրանկարչական տառերի, երբեմն ֆանտաստիկ, բայց չափի զգացմունքը պահուած ձեւակերպութեամբ, լուրջը հումորի հետ խառնուած, եւ կը համոզուիք, որ այստեղ կարող եւ մի բազմարուանդակ արուեստագէտի հետ գործ ունինք:*



ՊԱՏԿԵՐ 211.

---

[1] Անահիտ, 1911, թ. 5—6, էր. 112—115: Նաեւ Հայ էջեր եւ La Roseraie d'Arménie, III. Paris, 1929, p. 246 նոյն հեղինակի:

[2] Ձեռ. էջմ. N° 182/206, կաշեկազմ, 28×19 սմ., առաջին երեսին դրոշմուած է մի գեղեցիկ խաչ, երկրորդին երկրաչափական վարդեակ, փակիչը ճարտարապետական ժապաւէն՝ ծայրերին բոլորակի մէջ առնուած իրար մէջ հագցրած զոյգ ձուաձեւներով: Կազմը պինդ եւ գեղեցիկ, կարծում ենք գրչութեան ժամանակից (պատկ. 220, 221, 222): Նիւթը մագաղաթ, ամբողջը 589 թերթից, ընտիր բոլորգրով, երկսիւն՝ իւրաքանչիւրը 28·8×17,8 սմ., ներքեւի ծանօթութիւնների հետ:

Վենետիկի Մխիթարեանների № 1108 *ժողովածու ձեռագիրը գրուած է «ի թվ. ՉԿԷ»* (= 1318)․ *գրիչն է դարձեալ վերեւ յիշուած Սարգիսը.* «Ես Սարգիս համբակ եւ սպասաւոր բանի տկար մարմնով եւ տառապեալ անձամբ բազում աշխատութեամբ ծրագրեցի զսայ իմովս փցուն եւ անարհեստ մատամբ գումարեցի զսայ իբր զմեղու որ զխորիսխն ժողովէ ի վայելուչ (s!) բուրաստանաց ի բջիջս մաղու իւրոյ նախ ի պէտս իւր եւ ապա ի բժշկութիւն հիւանդաց եւ ի պէտս թագաւորաց եւ իշխանաց: այնպէս եւ ես կամեցա զսա ամբարել ի քարտի··· Եւ եղեւ կատարումն գրոցս: ի թվ· ՉԿԷ: ի գաւառիս Վայոց ձորոյ յանապատս Գլաձոր, ընդ հովանեաւ սրբոյն Ստեփանոսի, եւ մեծ վարդապետի, եւ անյախթ (s!) հռետորի՝ Եսաեա: ի թագաւորութեան Հայոց Աւշնի եւ ի կաթողիկոսութեան (*անունը բաց, թուղթը պատռուած*) եւ յիշխանութեան գաւառիս Ամիր Հասանայ: Որդոյ Խաչէ, որդոյ Ամիր-Հասանայ: Որդոյ Պռոշայ բարեպաշտի»¹):



ՊԱՏԿԵՐ 212·

Նոյն 1318 *թուին գրուած է մի ուրիշ ժողովածու²), որի յիշատակարանները* (81ա․ 130ա․ 201ա․ 263ա․) *գաղափար են տալիս ձեռագրի ծագման մասին․ գրուած է* «յամսեանն ապրիլի, իե․: համբակ եւ պատանեակ Եփրեմ»*ի ձեռքով*, «հրամանաւ իմոյ սնուցողի եւ վարդապետի Մարտիրոս սրբասէր եւ ճգնազգեց․ կրաւնաւորի»: *Մարտիրոս վարդապետը կոչուած է «բանի սպասաւոր»³): Գրչի «բազմերախտ» եւ «սիրեցեալ» քեռին է Յովհաննէս քահանայ, իւր երկրորդ ծնողը, իսկ սորա ընկերն է Յովհաննէս գրիչ, որ օգնել է «ի յայս գործառնութի.»․ Եփրեմը, թէեւ պատանեակ էր եւ իրեն համբակ է անուանում, բայց Գլաձորի ընտիր գրիչներից մէկն էր (պատկ. 223): Ձեռագիրը գրուած է* «ի վանս Գլաձոր ընդ հովանեաւ սուրբ Ստեփանոսի եւ սք․ րաբունապետիս Եսայեայ» (*Յիշատակարանները տես Յաւել. Բ.* 82)⁴):

Այս նոյն Յովհաննէս գրչինն է եւ Երուսաղէմի

---

[1] N. Y. Marr, Sbornik Pritcht Vardana,S. P. 1899, 459/60: Ձեռագրի բովանդակութիւնն էր Նիւսացու Ինն երանութիւնների եւ Հայր մերի մեկնութիւնները, Հարանց վարք, Շնորհալու Ընդհանրականը, «Պլուզին կանոնքն», Ոլոմպիանի առակները եւն.:

[2] Ձեռ. էջմ· № 1429/1419· կաշեկազմ, 16,8×11½× 6 սմ., թուղթ, 16,7×12,2 սմ., բոլորգիր 13,6×9 սմ. գրուած մասը: Բովանդակութիւնն է. Ա) 1ա—81ա· Յայտնութիւն Յովհաննու, սկզբից թերի, սկսւում է Գ. 5 համարի մեկնութիւնից՝ *«յԱնդրէասէ եպիսկոպոսի Կեսարու»*: Բ) 82—130ա· *«Տեսութի. քննութը. աղաւթից սր. աւետարանչին Յովհաննու ի խնդրոյ Ստեփանոսի վարդապետի Յակոբցոյ, ի Ներսիսէ աշակերտէ իւր եւ հոգեւոր որդեկէ»*․ Սկս· *«Գիր քոյոյ պատուականութեդ.»*: Գ) 131ա—201ա· *«Եւագրեա նշանակ յեզեկիէլէ»*․ Սկս· *«Յորժամ Բասիլիոս վախճանեցաւ»*: Դ) 202ա—263ա· *«Բազմերջանիկ եւ տիեզերաքարոզ սբ. վարդապետին Վարդանայ․ Հաւաքումն մեկնութեց․ Երգոյ երգոյս ի խնդրոյ լուսաւոր առն Կիրակոս վարդապետի»* (Գանձակեցին է)․ Սկս· *«Նման է արքայութին․ Այ․ գանձի ծածկելոյ»*:

[3] Յիշւում է 1346 թուին մի Մարտիրոս քահանայ Սանահնեցի, որ ստացել է Թորոս Տարօնեցու գրած էջմ· № 2239/2187· ձեռագիրը· երկու Մարտիրոսների նոյնութեան ապացոյց չունինք:

[4] էջմ· № 1429/1419: Այս Ձեռագիրը Երուսաղէմ է ընկել· այնտեղից յետոյ բերել է Մկրտիչ վարդապետ Նահապետեան, որով դասախօսել է Թովմա Մեծոփեցին 1427 թուին· *«դասիւ զգիրս ի դուրս ելի»*:

№ 540 ձեռագիրը, Նոր Կտակարանն ամբողջապէս, հնից էլ Առակք Սողոմոնի եւ Եսայի, գրուած Տոսպեցի Կարապետ վարդապետի համար, որ երեք տարի աշակերտել էր Յոհան Արճիշեցուն եւ ապա քահանայ ձեռնադրուելուց յետոյ՝ Գլաձոր եկել եւ ութ տարի աշակերտելով Նչեցուն, վարդապետական գաւազան ստացել երեսուն տարեկան հասակում: Այստեղից նա գնում է Երուսաղէմ եւ այս ձեռագիրն էլ Փրկչի վանքին նուիրում: Օրինակը տուել է վերոյիշեալ Յովհաննէս քահանան, «ծաղկեալն հոգւով եւ հերով»: Ձեռագիրը թուական չունի, բայց գրուած է 1318 թուից քիչ յետոյ, երբ օրինակի շնորհող Յովհաննէս քահանան ուխտ էր գնացել Երուսաղէմ, որի գալստեանն սպասում է Յովհաննէս գրիչը: Կարապետ վարդապետը վախճանուել է 1356—1363 թ. թ. մէջ[1]):

ՊԱՏԿԵՐ 213.

Նոյն 1318 թուին գրուել է այստեղ մի Կանոնագիրք Յակոբ Թագորցու ձեռքով, «հրամանաւ մեծ րաբունապետիս», այսինքն Եսայի Նչեցու: Ստացողն է Տիրացու քահանայ, Նչեցու «երկամբք ծնեալ որդեակ»-ներից մէկը, գուցէ նոյն՝ Տիրացու գրչի հետ: Եսային կոչուած է «ներհուն հռետոր հանուրց հայկազանց եւ լուսատու ջահ մանկանց եկեղեցւոյ»[2]): Յակոբ Թագորցու գրչութեան մասին գաղափար կարելի է կազմել նորա ընդօրինակած Նիւսացու մարդակազմութեան ձեռագրից, որից մի կտոր նմանահանութեամբ տալիս է Ալիշանը[3]): Թագորցին ոչ միայն գրիչ էր, այլ եւ վարդապետ հեղինակ. «Յակոբա վարդապետի Թագորցոյ արարեալ ի բանն, որ ասէ, Ծնել.ն ի մարմնոյ մարմին է եւ ծնեալն ի հոգոյ հոգի» (Յովհ. Գ. 6). Սկս. «Գրէ ուրեմն ածաինն Դաւիթ յաղաւթական ի բանն իւր»: Նա է գրել նաեւ Ստեփանոս–Տարսայիճ Օրբէլեանի աւետարանի ընծայականը Սարգիս վարդապետին: Իսկ գրիչն ու նկարիչն էր Պօղոս վարդապետ Կիլիկեցին՝ ՉԿԳ = 1314 թուին Գլաձորում, ինչպէս տեսանք[4]):

Արղնիի Բարձրահայեաց Ս. Աստուածածնի վանքի ձեռագիրներից մէկը՝ Վարք Եւագրեա եւ Նեղոսի, գրուած է 1319 թուին «ի գաւառն հայոց ձորոյ ի վանս Գլոյձոր». ընդգծուած տառերը արտագրութեան կամ տպագրութեան սխալներ են, անշուշտ, որ պէտք է լինի «Վայոց» եւ «Գլաձոր»[5]):

Վերեւ յիշուած Մարտիրոս վարդապետի համար «Կիւրեղ սպասաւոր բանի» գրել է 1321 թուին մագաղաթի մի աւետարան, որ ապա անցել է Դաւիթ ուսուցչապետի ձեռքը, իսկ սա էլ նուիրել է Սպիտակաւոր Աստուածածնի վանքին եւ նորա առաջնորդ Մկրտիչ վարդապետին, որ նկարազարդուած է Թորոս Տարօնեցու ձեռքով[6]):

ՊԱՏԿԵՐ 214.

---

[1]) Երուսաղէմի Ձեռագրի նկարագրութիւնն ու յիշատակարաններ տես Թ. Մուրատ, Յայտ. Յովհ. հին թարգմանութեան յԵրուսաղէմ, 1905—1911, էր. ՅԺԹ եւ շար:

[2]) Փիրղալէմեան, Նշխարք, անտիպ (Յաւել. Բ. 22):

[3]) Սիսական, 135, պատկ. 39:

[4]) Ch. V. T. II. vip. II. մեր Potomstvo Tarsaitcha եւն.: Իսկ Ճառը Թագորցու Ձեռ. № 734, 92ա.:

[5]) Սրուանձտեան, Թորոս Աղբար, Բ., 386:

[6]) Փիրղալէմեանի Նշխարք եւն., Conybeare. Catalogue 24: A. Tchobanian, La Roseraie d'Arménie, III. Paris, 1929, p. 270. տես Յաւել. Բ. 23:

Եսայի Նչեցին ինքը բացի Աստուածաշնչից ստացել է եւ մի աւետարան Գլաձորի դպրոցի ճոխ գործերից մէկը: Ընդարձակ յիշատակարանը շարադրուած է Նչեցու կողմից (*Յաւել. Բ.* 83), *գրուած* «ՉՀԲ յաբեթեանս տումարի, յաշխարհակալութի. մեծ ինքնակալ խանին Պուսաիտ կոչեցել., ի թագաւորութեն. հայոց Ղեւոնի, նըստեալ ի գահն կիլիկեցոց. եւ տանն վրաց եւ մեծաց Հայոց թգ. Գաւրգի եւ յաւուրս տէրութե. մեծ իշխանաց իշխանին տանս Սիւնեաց Բուրթելի, ամենաբարէպաշտի եւ քաջի եւ միշտ յաղթողի»: *Եսայի* «կրսեր բանասիրաց եւ յետին վարժապետաց» *գրել է տալիս եւ նուիրում... (երկու տող քերուած, ուստի եւ անյայտ, թէ ո՞ր վանքին է նուիրում)* «յիշատակ բարեաց վարդապետին իմոյ Ներսիսի մեծ եւ քաջ ռետորի եւ ածախօս վարժապետի», *իր մարմնաւոր ծնողների, երախտաւորների,* «մանկանց աշակերտեալ մանկանցս, զոր ծնաք բանին երկամբք, որ դեգերին ի կրթութի. տեսական եւ գործական իմաստից եւ ա Ածաշունչ տառից»: *Գրութեան տեղը յիշուած է ընդհանուր կերպով,* «ի գաւառիս Սիւնեաց, ի նեղ եւ յանձուկ աւթեվանիս: Իսկ յիշխանութի. վերոգրեալ մեծ իշխանաց իշխանին եւ յաղթող սպայապետին Բուրթելին եւ երկու արեգակնանման գեղեցկագեղ հարազատ զաւակացն իւրոց Պեշքենայ եւ Իւանէի: Նա եւ ամուսնոյ իւրոյ Վախախին», *որոնցից* «մեք մեր աշակերտաւք բազում եւ անթիւ գութս բարեաց գտաք»: *Յիշում է նաեւ* «Սիւնեաց մետրոպօլիտ Տ. Յոհաննէս Աւրպելին», *որ իր աշակերտն է, նորա հետ եւ Ստեփանոս–Տարսայիճին, որ դարձեալ իր աշակերտն է եւ* «մանուկ տիաւք առեալ զաստիճան արհեպիսկոպոսութե.»: *Յոհան Աւրպէլը Լիպարիտ Օրբէլեանի որդին էր, իսկ Տարսայիճ–Ստեփանոսը Ջալալ Օրբէլեանի որդին, Տարսայիճ մեծ եւ Մինախաթունի թոռը, որոնցից գութ եւ խնամք է վայելել Եսային:*



ՊԱՏԿԵՐ 215.



ՊԱՏԿԵՐ 216.

Զարմանալի է, որ յիշատակարանի մէջ չեն յիշուած դպրոցի բուն տէրերը՝ Խաղբակեանները եւ թուագրուած է միայն Օրբէլեան իշխանների անունով: Ենթադրել, թէ Եսային հեռացել էր Գլաձորից եւ բնակուել Օրբէլեանների իշխանութեան մէջ, կարելի չէ, քանի որ հետեւեալ տարիների յիշատակարաններից հակառակ փաստեր կը տեսնենք: Այդ հանգամանքը կարելի է միայն նորանով բացատրել, որ Եսային կամեցել է երախտագիտական յատուկ յիշատակ թողնել միայն նրանց անունով: Գլաձորի անուան բացակայութիւնը եւ «ի գաւառիս Սիւնեաց» *արտայայտութիւնն այդ կողմից առանձին նշանակութիւն չունի: Գլաձորն էլ ամբողջ Վայոց ձորով Սիւնեաց մեծ նահանգի մասն էր, մանաւանդ որ* «ի նեղ եւ յանձուկ աւթեվանիս» *իր մշտական բնակավայրն է ակնարկում:*

Աւետարանի մագաղաթն ու ոսկու մեծ մասը ընծայել է ոմն Տիրացու (Յաւել. 83ա.) հաւանօրէն 1292 թուի անվարժ գրիչը եւ № 1369/1363 *ձեռագրի կոկողը, որ* 1318 *թուին էլ մի կանոնագիրք էր ստացել Յակոբ Թագորցու գրչութեամբ: Իսկ նկարիչը մեզ յայտնի Թո–*

րոս Տարոնեցին է, որ շատ տեղ (Յաւել. Բ. 83բ.) իր ձեռքով գրուած յիշատակարաններ ունի եւ մէկը տեղեկութիւն է տալիս նորա հայրենիքի մասին. 285ա. «Եւս եւ զանարժան Թորոս ի Տարօնոյ քաղաքէ Մշոյ եւ զծնօղսն իւր յիշեցէք ի տր. յս. քս. որ բազում աշխատեցաւ ի խորան, ի ծաղիկ եւ ի գլխագիր»[1]։

«Ի վանս Գլաձոր մօտ ի մեծ վարժապ(ետ)ն Եսայի» 1325 *թուին «յամսեանն հոկտեմբերի» գրուած է Յովհաննէս Երզնկացու լատիներէնից թարգմանած Թովմա Աքուինացու Եօթն Խորհրդոց գիրքը։ Գրուած է Թորոս Տարոնեցու ձեռքով։ Առաջին թերթերը գրուած են մի անյայտ գրչի կողմից։ Ստացողն է* «հեզահոգի վարդապետն Սարգիս···, որ եռափափաք սրտիւ ետ գրել զգիրքս իմաստասիրաց. եւ սա խոկայ եւ բաղձայ ի տուէ եւ ի գիշերի արհեստից եւ մակացութե. եւ իմաստասիրաց արանց» (*պատկ.* 224. *Յաւել. Բ.* 84)[2]։



ՊԱՏԿԵՐ 217.

Տփխիս ծնուած Առաքել վարդապետ Հաղբատեցին, Խոցաղեղ եւ Խաղուղէ ամուսինների որդին, 1327 *թուին Դաւիթ Գետկեցուն՝* «կուսակրօն քահանայի, իմաստուն գրչի եւ քաջ քարտուղարի» *գրել է տալիս մի Աստուածաշունչ, որ ծաղկեզարդում է դարձեալ Թորոս Տարոնեցին։ Ընդարձակ յիշատակարանից տեղեկանում ենք, որ ձեռագրի գրութեան սկիզբը եղել է* «ի թվիս ՉՀԶ (= 1327) ի յամսեանն Մայիսի ի յերեքշաբաթի՝ տօնի Երեւման խաչին», *Աղբերց կամ Գլաձորի վանքում.* «եւ եղեւ աւարտ սմին ի սկսեալ նոր ամին ՉՀԷ յամսեանն Օգոստոսի հինգն ի տօնի Սրբոց վարդանանց», *ասել է, թէ Դաւիթ Գետկեցին ամբողջ հին եւ նոր կտակարանը գրել է* 15 *ամսուայ ընթացքում։ Եսայի Նչեցու համար ասուած է.* «յայսմ ժամանակի փայլէր ի գահս իմաստասիրութեան իբրեւ զարեգակն ի կորնթարթն վերին», *ոչ պակաս առաքեալներից եւ մարգարէներից*, «ընտրեալ ընտրելոց, ծաղկեալ ծերութեամբ եւ բարգաւան առաքինութեամբ··· զգիրքս աստուածային ի վերայ բազկաց իւրոց բարձալ մեկնէր··· ծերացեալ եւ լի իմաստութեամբ, ցուպ ի ձեռին առեալ, զտհաս եւ զանիմաստ համբակս ժողովէ ի փարախս իմաստութեան ընդ որ եւ այժմ է տեսանել, զի ի բազում գաւառաց կան դեգերեալ առ պէտս վարժից եւ տեղէտս իմաստից։ Իսկ սա գործէ եւ կազմէ զխոպանացեալ անդաստանս իւրոց աշակերտեալ մանկանց, ի վեր բողբոջէ արս կատարեալս իւրով որոշմամբ եւ քաղցրունոյց վարդապետութեամբ։ Եւ կատարեցաւ առ սա այն բան, թէ որ հանէ զանարգն ի պատուականէն, բերան իմ կոչեսցի. նաեւ այլ եւս բազում եցոյց մեզ գութ եւ խնամ, որ եւ գիրս աստուածաշունչ բազում օրինակս շնորհեաց. այլ եւ ի խրատտուութեամբ ի բանս եւ յառոգանութիւնս եւ ի ստիք στῖχος — *ոտանաւոր», այսինքն սովորեցնել արտասանել եւ ոտանաւոր գրել, որ միջին դարերում շատ ընդունուած ձեւ էր նոյնիսկ հասարակ, ոչ բանաստեղ-*

---

[1] Ձեռագիրը գտնւում էր Վաղարշապատի եկեղեցում, այժմ մատենադարանում մեր ձեռքով յանձնուած. կաշեպատ, հաստակ կազմով $24^1/_2\times19^1/_2\times5^1/_2$ սմ., մագաղաթ՝ 25×19 սմ., բոլորգիր, երկսիւն, իւրաքանչիւրը $20\times6^1/_2$ ներքեւի ծանօթութիւնների հետ։ Կան եւ յետին ժամանակի շատ յիշատակարաններ։

[2] Ձեռ. էջմ. № 505/560 (կար. 493) կաշեպատ կազմով, թուղթ, $15{,}7\times11{,}7$ սմ., բոլորգիր, $13\times8^1/_2$ սմ., 205 թերթ։ Յիշատակարանի առաջին մասը թարգմանիչ Յովհաննէս Երզնկացու շարադրածն է. թարգմանութիւնը կատարուած է ՉՀ (=1321) թուին «*ի դուռն Մործորու ընդ հովանեաւ սբ. Ածածնիս*»։

ծական գրուածքների համար։ Աստուածաշնչի օրինակը Եսային է տուել[1]։



ՊԱՏԿԵՐ 218·

Մի ուրիշ Աստուածաշնչի ընդարձակ յիշատակարան գրուած 1330 թուին, բազմակողմանի եւ հետաքրքրական տեղեկութիւններ է տալիս Գլաձորի դպրութեան դպրոցի մասին. ստացողն է ոմն Ներսէս, «որդի վահրամա, յաշխարհէն Տարօնու, ի գաւառէն Սանսնու, ի վանացն Ղազարու, ի գեղջէն որ կոչի Կոռ, եղէ ցանկացող ուսման եւ ընթացայ յարեւելս ի գաւառն Վաւո (s!) ձոր, ի վանքն Գայլեձոր եւ եօթն ամ աշխատեցայ ի վարժումն հին եւ նոր տառից եւ այլ բազում սրբոց բանից»։ *Նա շատ է փափաքում մի Աստուածաշունչ գրել տալ, ուստի եւ իր բարեկամներից եւ ազգականներից հաւաքում է հարկաւոր դրամը, մի առ մի յիշելով, թէ ո՛վ ի՞նչքան է տուել, եւ իր հայրենակից Յովհաննէս Մշեցու միջնորդութեամբ վարձում է մեզ ծանօթ Եփրեմ եւ Դաւիթ (Գետկեցին) գրիչներին 1500 դրամով,* «բայց յետոյ զրկեց զիս Դաւիթն, —*աւելացնում է Ներսէսը,*— քանզի խիստ ագահ էր եւ արծաթասէր· և գն· դր· այլ եւ յինէն»։ *Պակաս դրամը լրացնելու համար՝ ծախում է փիլոնը, հողաթափները որպէս ճանապարհածախս եւ գնում Թադէոս առաքեալի վանքը, Զաքարիա Ծործորեցու մօտ եւ նորանից 500 դրամ ստանում, եւ Գայլեձոր վերադառնալով, վճարում պարտքը։ Ձեռագիրը գրուած է տասն ամսուայ ընթացքում.* «Զսա սկսեալ ի Դեկտեմբերի, աւարտեցաւ ի Հոկտեմբերի, ի ձեռն երկու քաջ քարտուղարաց»։ *Նկարողն է Թորոս Տարօնեցին*[2], *որից երկու նմուշ բերում է Ալիշանը, պարզ, միայն կարմրով։ Ձեռագրի ամբողջ ծախսը 2200 սպիտակ դրամ է նստում խեղճ Ներսէսի վերայ, դեռ կազմն էլ ձրի է կատարել Քանայում Մարտիրոս վարդապետը «յաւուրս Խ.»*[3]։ *Ըստ Ալիշանի, 2200 դրամը կամ սպիտակը հաւասար է 1350 իսկական Ֆրանքի, որ գրքի վերայ կատարուած ծախսն է. դորանից 1800 դրամ գրիչներն են ստացել իբրեւ աշխատավարձ տաս ամսուայ համար, իւրաքանչիւրին, ուրեմն, ամսական իննսուն սպիտակ կամ 55¼ Ֆրանք։ Վաճառւում էին եւ պատրաստ ձեռագրեր, որ կը տեսնենք*

---

[1] Փիրղալէմեան· Նշխարք Պատմութեան Հայոց· բ· 83· տե՛ս Յաւել· Բ· 24։ Տարաբաղդաբար տեղեկութիւն չունինք ձեռագրի մանրանկարչութեան մասին, ուստի եւ չենք կարող ասել, թէ ի՞նչ չափով ճոխ էր նկարներով եւ ո՞ր դէպքերը նորա նիւթը։ Ձեռագիրը գտնւում է Բաղէշի Ամրդօլու Ս· Կարապետի վանքում։

[2] Թորոս Տարօնեցին 1330 թուականից յետոյ այլեւս չի յիշւում Գլաձորի ձեռագրերի մէջ։ Նոյն թուականին նա հեռացել է այնտեղից, եւ *«ի գաւառիս Ապահունեաց ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին եւ Սրբոյն Սարգսի զօրավարին եւ որդւոյ նորա Մարտիրոսին եւ Սուրբ Գէորգեայ* (S!) *զօրավարին»* գրել է մի աւետարան, յիշատակարանի մէջ խնդրելով յիշել *«զնկար գրիչ Թորոս եւ զպապն իմ զՄխար եւ զհայրն իմ Սարգիս քահանայ եւ զմայրն իմ Մարիամ ի Տարօնոյ քաղաքէ Մշոյ»*· (Փիրղալէմեան· Նշխարք· 86։ Յաւել· Բ· 85)։ Թորոս Տարօնեցու մասին վերջին տեղեկութիւն ունինք 1346 թուից· նա գրել է էջմ· № 2239/2187 ժողովածուն (պատկ· 225ա)։ Հեղինակները բոլորն էլ Գլաձորի հետ կապուած անձինք՝ ինչպէս Նչեցին, Կիրակոս Երզնկացի, Տիրատուր վարդապետ, Յովհաննէս Սիւնեաց եպիսկոպոս, հաւանօրէն Որոտնեցին՝ Թորոսի մասին յիշատակարաններ 163բ· 230· 244ա· բոլորովին պարզ· *«Զստացող սր· տառացուածոյս զՄարտիրոս քհ· Սանահնեցի եւ զծրող Թորոս Տարօնեցի աղաչեմ զձեզ յիշեցէք զմեզ մաքուր աղօթիւք ի թուին հայ· ՉՂԵ»* (պատկ· 225ա)։ Մարտիրոս քահանայ Սանահնեցին տարբեր անձն ենք համարում Գլաձորի Մարտիրոս «վարդապետ» եւ «բանի սպասաւոր»ից, որ յիշատակուած տեսանք Եփրեմ պատանեակի յիշատակարանում։

[3] Ալիշան· Հայապատում· 545· 548։

քիչ յետոյ: Բարեբաղդաբար հազուագիւտ չեն նման տեղեկութիւնները մեր ձեռագրական յիշատակարանների մէջ, որոնցով կարելի է որոշ գաղափար կազմել ձեռագրերի գնի, աշխատանքի տեւողութեան եւ համապատասխան աշխատավարձի մասին, որ գրչութեան արուեստի լուսաբանելիք խնդիրներից մէկն է: Երբեմն գնումն ու վաճառումը կատարւում է փոխանակութեամբ, որ կարեւոր լոյս է սփռում ուրիշ տեսակէտով: Քիչ յետոյ կը տեսնենք եւ պատրաստ ձեռագրի գնում արծաթով:

Եսայի Նչեցու աշակերտներից է Կիւրիոն գրիչ, որ «թվականութես· հայոց ՉԿ» (=1311) *գրել է Մեկնութիւնների մի ժողովածու, մանր, վարժ բոլորգրով, լաւ մոմած թղթի վրայ: Իրեն անուանում է «սպասաւոր բանի» եւ խնդրում է յիշել* «իմ անչափ երախտաւոր եղբօրն Մխիթար քհի· եւ խաչատրի»: *Խնդրում է յիշել եւ* «զբազմերախտ բարունապետն իմ զՅոհ· զծնողն երկամբք հոգոյն»: *Հայրն է Վարդան քահանայ*[1]): *Մի երկրորդ ձեռագրի մէջ, որ Նիւսացու աշխատութիւնների ժողովածու է.* «Տեսութի· մարդոյն կազմութե·» *վերջում ունի փոքրիկ յիշատակարան.* «Զբազմավէր անձն հիքոյս Կիւրիոնի ծրողի սորին՝ յիշեա ի թողութիւն մեղաց», *աւելացնելով ապա եւ վերոյիշեալներին.* «զՄխիթար քհ· եւ զխաչատուր կրօնաւոր եւ զբարունապետն իմ Յովհաննէս, ամէն»[2]): *Ձեռագրի գրութեան ժամանակն ու տեղը անյայտ են պակաս լինելու պատճառով, բայց նախընթաց, ինչպէս եւ յետագայ յիշատակարանը պարզում են մօտաւոր ժամանակն ու վայրը եւ անձնաւորութիւնը: Այս նոյն Կիւրիոնը* «ի թվաբերութես· հայոց ՉՁԲ» (=1333), «ի դպրապետութեն· մեծ վարժապետ եւ իմոյս լուսաւոր կենացս Լուսաւորչի Եսայեա», «ի գաւառիս Վայոց ձորոյ ի մենաստանիս Նորավանքս կոչեցելոյ»:*Նորավանքը Օրբէլեանց իշխանութեան հոգեւոր կեդրոնն ու մետրապոլտարանն էր, Ամաղու եւս կոչուած, որի երեք առաջնորդներին՝ Ստեփանոս Օրբէլեան՝ պատմիչը եւ նորա անմիջական յաջորդները Յոհան Աւրպէլ եւ Ստեփանոս–Տարսայիճ կրթուած տեսանք Գլաձորում, այսպէս եւ Կիւրիոն, բայց յետոյ Նորավանքում հաստատուած: Այստեղ յիշատակութիւն կայ եւ Բուրթէլ Օրբէլեանի, նորա կնոջ Վախախի եւ զաւակների Պեշքենի եւ Իւանի մասին, իսկ Սիւնեաց եպիսկոպոսն է Սարգիս, Ստեփանոս–Տարսայիճի յաջորդը*[3]): *Աւետարանը փոքրադիր է, սիրուն բոլորգրով եւ նկարազարդուած:*

Ոսկան վարդապետի ձեռքով ՉՁԳ (= 1334) *թուին,* «ի վանս Գլաձոր», «եւ ի դաստիարակութեան հայոց դպրոցի Եսայի վարդապետին» *գրուած է մի աւետարան*[4]):

Յունան ընտիր գրիչը նոյն 1334 *թուին գրել է մի իմաստասիրական գիրք*[5]), *իրեն անուանելով* «յետին ի յաշակերտս բանասիրաց»: *Նա եկել է* «առ ոտս մեծին վարժապետաց եւ առաջինս յիմաստասիրաց Եսայիաս կոչեցեալ, որ յայսմ ժամանակի փայլէ իբրեւ զարեգակն, լուսաւորելով բանիւ իմաստից զազգս հայկազեան, նաեւ զբոլոր տիեզերս շրջակայականն… ի թուիս հայոց ի յեւթ(ն) հարիւրորդի ութսուներորդի երրորդի, ի ձորս Վայոց ի յանապատիս մեծափառ Գայլեձոր կոչեցեալ»:

Գրիգոր գրիչը «ի թվականութե· հայկազեանս տումարի ՉՁԴ (= 1335) … եւ ի վարժապետութի· մանկանց սիոնի տն· իմոյ վսամական անյաղթ հռետորին յԵսայեա», *որ եւ օրինակի շնորհողն է, գրել է մեկնութիւնների մի ժողովածու,* «ի նահանգիս Սիւնեց· ի գաւառիս Վայոց ձոր, բարձրադիտակ մենաստանիս Գլաձոր, որ յանհմուտ եւ զնչու արանց Գայլաձոր ասի, յորս հօսքել· հրնւին ի սմա հարազատք եկցոյ· հայկազինս տոհմի ի տարփումն անճառ խհդոյ· տնօրէնութե· անմահ փեսային յի·, ըստ ելլադական սահման պայմանի»· *ապա գրիչը յայտնում է, որ շատերն են գրել նոյն գիրքը Եսայի Նչեցու հրամանով: Ստացողն է* «Սարգիս քհ·, որ հանդերձել· է զօւգան առուլ (s!) բարունի»· *Հաւանօրէն նոյնանուն անձը, որ* 1317 *թուին Նիւսացու գործերի արտագրութեան յիշատակարանում իրեն* «Սարգիս աբեղայ սպասաւոր բանի» *է կոչում: Նա անձամբ գրել է ձեռագրի մի մասը* 302*ա*—311*բ· եւ յատուկ յիշատակարան ունի* 305*բ·* «Սարգիս պիտակաբար քհ·անայ, զձեւ ունելով, բայց գործն պակաս»· *խնդրում է յիշել* «եւ զմենակեց· եղբայրն իմ զՄիւս Սգ·» (*Սարգիս*) (*Յաւել· Բ·* 88, *Ձեռ· էջմ·* N° 1120/1141 (*Կար·* 1099), (*պատկ·* 226)[6]):

Թադէոս գրչի ձեռքով 1303 *թուին գրուած եւ Դանիէլի մեկնութիւնը Մխիթար Սասնեցու ձեռքով* N° 3606, 1337 *թուին գնում է բանի սպասաւոր Աւագ ար· վարդապետը եւ իւր չեղագիր յիշատակարանի մէջ յայտնում է, թէ* «բազում ժամանակաւ աշխատեցայ առ ոտս մեծ րաբունապետացն Յեսայի եւ Տիր(ատ)րոյ եւ գնեցի զսա ի հալալ ընչից իմոց ի :Ճ· մթխալ արծաթ ի Գալիձորին ի թվ· հայոց Չ: Չ: Չ» (*Ցուցակ· Բ.* 89, *Ձեռ· էջմ·* № 3606· 274*բ*·)։ *Այս յիշատակարանի նշանակութիւնը կրկնակի է, նախ առ ու ծախի մի տարբեր եղանակի օրինակ, եւ երկրորդ՝ թէ Դաւիթ վախճանած է արդէն եւ նորա տեղն է անցել իբրեւ օգնական ուսուցչապետ Տիրատուր վարդապետ։ Արդեօ՞ք սա նոյն է Տիրատուր Կիլիկեցու հետ, որ* 1209 *թուին գրել է* № 3999 *նկարազարդ աւետարանը, հաւանական է· բայց հաստատ է, որ նա Հերմոնի դպրոցի հիմնադիրն է, որին յիշում է Նչեցին իւր հրաժարական թղթի մէջ։ Նա Հերմոնում յիշւում է արդէն* 1338 *թուին, Ալիշանի քաղուածօրէն բերած մի յիշատակարանից*[1])։ *Եսայի Նչեցու աշակերտներից է Աւագ նկարիչ, որ թէեւ Գլաձորում գրելու մասին յիշատակութիւն չկայ, բայց այնտեղ է ուսում առացել եւ այնտեղ պիտի օրինակած լինի մեզ յայտնի նորա հնագոյն գործը, որ մի աւետարան է (Երեւան, Թանգ·* № 99, 349*բ*·) «Յիշեցէք ի Քս· աղաչեմ զզանապատս ի բարեաց զԱւագ դպս· (դպիրս), որ զսբ· աւետարանս ցանկագրեցի մեծ սիրով ի յընդիր օրինակէ մեծ վդին· Եսայեա...»։ *Գրուած է թղթի վերայ, բոլորգրով,* ՉՀԸ *թուին, որ հաշուած է Քրիստոսի* «ի ՌԳՃԼԲ ամն», *նկարազարդուած խորաններով եւ տէրունական պատկերներով։ Ստացողն է ոմն Ասլան, որի պատկերը նկարուած է Աւագի պատկերի հետ Հովհաննէս մանրանկարչին կից։ Երկրորդ մեզ յայտնի գործը Բեչգին Օրբէլեանի համար գրուած աւետարանը, զարդարուած*

---

[1] Ձեռ· էջմ· N° 1466/1460· 58բ· 203բ· 291ա·(Յաւել· Բ· 86):

[2] Ձեռ· էջմ· N° 3463· 177բ· (Տաթեւից բերուած N° 47)· (պատկ· 225բ):

[3] Ձեռ· էջմ· N° 962 Նժ (Յաւել· Բ· 87):

[4] Սրուանձտեան, Թորոս Աղբար, Բ· 375:

[5] Ձեռագրի բովանդակութիւնն ինձ անյայտ է· ուստի չգիտենք, որոնք են ակնարկուած իմաստասէրները, օգտուել եմ Խաչիկ վարդապետի հատուածների (fragment) ժողովածուից, տե՛ս եւ Թոփճեան, Ցուց· Բ· 30: Տե՛ս Յաւել Բ· 26, պատկ· 90—91: Տե՛ս եւ մեր Քարտէզ հայ հնագրութեան, տախտ· ՁԴ· § 132:

[6] Ձեռագրի բովանդակութիւնն է՝ Ա) Ներսէս Լամբրոնացու Մեկնութիւն Առակացն Սողոմոնի 2բ—144ա: Բ) Նոյն հեղինակի Մեկնութիւն Իմաստութեան Սողոմոնի 242ա: Գ) Վարդան վարդապետ Մեկնութիւն Երգ Երգոցի: Դ) 328ա· Գրիգոր Նարեկացու Մեկն· Երգ Երգոցի, որի վերջում (331ա) կայ այսպիսի նկատողութիւն· *«Այլ աստանաւր զկայ առցէ, որ ի Գրիգորէ Նարեկա սրբոյ· վս· զի առաջիկայս զայն ունի զօրութի· զառաջագրելոցս, զոր լուսօոր առնն Այ· վդ· վպտի· եղեւ հաւաքեալ»:*



ՊԱՏԿԵՐ 219·

---

[1]) Սիսական· 125։ Գրիչն է Գրիգոր բանասէր, Տիրատուրի աշակերտներից։ Տիրատուրի բազմաթիւ ճառերը տես Ձեռ· էջմ· № 2193/2178։ Ձեռ· էջմ· № 2540, եւագրի խրատականք, 163ա· Տիրատուրի ձեռքով, շեղագիր· «*Զամենատառապեալս ի բարեաց եւ զրազմահարուստ չարեաւք, զեղկելի անձնս, նուաստ Տիրատուր՝ պիտակ անուամբ վրդ· յորջորջեալ, զատացեալ Ածային տաւիղս· զծնաւղսն իմ եւ զհարազատս եւ զս· եղբարսն մեր ըստ հոգո եւ ըստ մարմնո, յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր, ով խոնհմամիտ ընթերցողք, աղաչեմ*»։ Մովսէս գրիչը (Ձեռ· էջմ· № 1558/1565 [Կար· 1520]) ՉՂԸ թուին «*ի վանս Հերմոնի, ընդ հովանեաւ սբ· քաւարանիս Գրիգորի, առ ոտս մեծ վարժապետիս Տիրատուր կոչեցեալ, կամօք եւ ձեռնտուութեամբ սորին*» գրել է մի Նարեկ։ Ձեռ· էջմ· № 569 Նժ (Աղթամարից) սմանչելի բոլորգրով. 131բ· «*Գրեցաւ մեկնութիւ· հրահանգ բանիցն Յորա իմով ձեռամբ մեղապարտ սպասաւորի Գր· ի վայելս անձին իմոյ եւ յիշատակ հոգւոյ իմում եւ ծնողաց եւ վարժապետաց Մխիթարա եւ Տիրատրոյ, արդ որք հանդիպիք աւգտութ· ինչ, յաղաւթս յիշեսջիք· ի թուի ՊԲ*» (= 1353)։ Նոյնպէս Լիմից բերուած № 478 ձեռագրի յիշատակարանի մէջ· «*Զողորմելի որսացեալս ի ծուղակս կենակորոյս գոռոզին զՅոհ· սպասաւորի բանի բարի կամաւք յիշել աղաչեմք հանդերձ ծնողաւք եւ համազգայնօք։ Ընդ նմին զախեղերալուր վարժապետն մեր զՏիրատուր, որ փայլէր ի ժամանակին իւրում իբրեւ զարեգակն* (նշանագրով) *ի մէջ աստեղաց* (նշանագրով)· *Թի· ՊԻԱ*» (= 1372)։ Այս թուին, ուրեմն, մեռած էր Տիրատուրը։

Նա թաղուած էր Հերմոնի վանքում էջմ·ի № 1241/1128, 384, յիշատակարանի համեմատ· «*Գրեցաւ տխեղծ մատամբ Յովհաննէս պիտակ պտի·* (վարդապետի ?) *ի թվս· ՊԿԴ* (= 1415) *ի վանքս Հերմոնի, առ դրան սբ· Լուսաւորչին եւ սբ· գամբարանաց սբ· վրդաց Տիրատրոյ, Գրիգրի· եւ այլոց*»։ Հերմոնի վարժապետները էին Տիրատուրից եւ սորա աշակերտ Գրիգորից յետոյ Սարգիս, ապա Յովհաննէս Կոլոտիկ, որ մասնակից եղաւ Աթոռի փոխադրութեան։ Սարգսի աշակերտն էր նաեւ Աւագտէր Սպիտակաւոր Աստուածածնի վարդապետը եւ գրիչը (Աստ· 123—125)։ Հերմոնի գրիչներից յայտնի է Գրիգոր եւ նկարիչներից Եսայի։

աւելի բազմաթիւ, բովանդակութեան հետ կապուած մեծ ու փոքր մանրանկարներով եւ զարդերով․ «ի բռնակալութե․ ազգին Նետողաց՝ Կարնակեցին Արփայի (1335 թ․) եւ յիշխանութե․ զօրացելոյ յիւ․ եւ փառաց ի փառս բարձրացելոյն կրկին կենօք եւ աշխարհօք մեծ իշխանաց իշխանին պարոն Բուրթելին, հօր վերաստացեալ զարդու զաւակին Պեշգենին, ստացողի ածահին գանձուս: Եւ ի վերատեսչութե․ եպիսկոպոսութե․ տն․ Սարգսի մետ(ր)ապօլտի: Ի դպրապետութե․ մեծ հռետորին Եսայեա»: *Երրորդ գործն է հէնց սոյն Սարգիս մետրապօլտի համար գրած երգարանը կամ Խազգիրքը, նուրբ մագաղաթի վերայ, բոլորգրով, որ գտնւում է Պերլինի արքայական մատենադարանում: Թուագրուած է* «յաշխարհակալ ղանութեան սուլթան Մահմուտին (1336—1338) ··· Եւ ի լուսաւոր վարժապետութե․ մեծին Եսայեա», **ՉՁԶ** = 1337: *Ձեռագրի սկզբում երկու մանրանկար կայ, մէկը վեղարով,* «տէր Ներսէս երգող» *(Շնորհալին), միւսը եպիսկոպոսական կարճ խոյրով, որ ստացող Սարգիս եպիսկոպոսն է*[1]:

Մի տարի յետոյ յիշում է մեր Աւագին Մխիթար Անեցին, ոչ ժամանակագիրը, իբրեւ իւր Աստուածաշնչի զարդարման օժանդակող․

Մեծ օժընդակ այսմ գործին
արի եւ քաջ քարտուղարին
ւ'անհամեմատ նրկարաւղին
չնորհաց Աւագ սարկաւագին:

Մխիթար Անեցու ձեռագիրը թուագրուած է․ «Ցեօթն Ճ․ ւ Զ․ թվին․ եւ է․երորդ աւելորդին․ աշխարհս հայնց է ի վշտին, որպէս պատմեն վս․ նեռին: Զի չէ լուեալ ամենեւին, թէ թգ․ ոք լեալ է կին, աջապ թէ օրն վերջին, որ սրով միմեանց կոտորեցին»[2]:

Վերջապէս Աւագի գլուխ-գործոցն է մի Աստուածաշնչի նկարազարդութիւնը: Աստուածաշունչը գրուած է Կիլիկիայում Մարտիրոս աբեղայի ձեռքով, որ Աւագն, այժմ վարդապետ արդէն, իւր այցելութեան ժամանակ նուէր է ստանում Կոստանդին Թագաւորից եւ Մխիթար կաթուղիկոսից, եւ հայրենիք բերելով, նկարազարդում է ճոխ կերպով «պարոն Սօրթղաթմիշ»*ի եւ նորա կնոջ Բէգխաթունի համար,* «յայս գաւառ Տփխեաց Փայտակարան նահանգիս»: *Նչեցուն աշակերտելը հաստատում է հետեւեալ փոքրիկ յիշատակարանով 101բ․* «Զհամշիրակ եւ գլծակից եղբայրն մեր ի Քս․ զՍարգիս վդ․ Մոշադբերցի աղաչեմ յիշել ի քս․: Նաեւ ըստ հոգո հայրն մեր եւ զուսուցիչն զեռամեծն Եսայի ծնողիւքն, ամէն, ամէն»: *Ձեռագիրը նկարազարդուած է* «*հայոց ԸՃԶ*» *եւ Քրիստոսի* «*Ռ․ ԳՃ․ ԾԸ*» *Թուին:*

ՊԱՏԿԵՐ 220․

Աւագի արուեստը փափուկ է եւ նուրբ, դէմքերը լաւ մշակուած․ դաշտանկարները մեղմ եւ ակնահաճոյ, աւելի կիլիկեան քան արեւելեան ոճով: Ուշադրութեան արժանի են աւելի ստացողների պատկերները, ինչպէս Սալանի եւ նկարչի պատկերները Երեւանի ձեռագրի մէջ (№ 99, 24*բ․* 25*ա․ պատկ․* 227), *իսկ Աստուածաշնչի Ծննդեան պատկերի տակ (էջմ․* № 1756 *Նժ․* 400*բ․, պատկ․* 228) *Սօրղաթմիշի և Բէգխաթունի, Թաթարական շրջանի իշխանական զգեստով: Աւագի մանրանկարչութեան մասին եւս երկար պիտի խօսենք մանրանկարչութեան նուիրուած մեր* գործի մէջ․ առ այժմ տալիս ենք այս երկու մանրանկարները, ընթերցողին ճաշակ եւ գաղափար տալու համար։

---

[1] Verzeichniss der armenischen Handschriften. Dr. N. Karamianz, 1888, Berlin. 26: Մենք օգտուել ենք բուն ձեռագրից, որ յետոյ սեպհականութիւն էր Մանուէլ եպիսկոպոս Ազիզբէկեանցի:

[2] Գրչի ակնարկած կինը Սաթիբէգն է, Աբու Սէյդի քոյրը, որ թագաւորեց 1338/9 թուին (տես Stenli Len Poul, Moussoulman Skaya Dinastya, perev. V. Bartoldь. S. P. 1899, str. 183/3: Մխիթարի ձեռագրի №ն է էջմ․ 4429: Նորանն է նաեւ Երեւան № 111, ընտիր բոլորգրով աւետարանը, նոխ նկարազարդուած նորա կողմից ծերութեան հասակում ՊԶ=1357 թուին, արուեստով մի կողմից նման Աւագին եւ ներարկուած նորա ազդեցութեան, ուրեմն եւ միջնորդաբար կապուած Գլաձորի հետ, միւս կողմից պարսիկ-մոնղոլական դրոշմ ունի:

Եսայի Նչեցու եկեղեցական գործունէութիւնը կապուած է ամբողջապէս մի շարժման հետ, որ երեւան եկաւ ԺԳ․ դարի վերջերում՝ նախ Կիլիկիայում եւ ապա ԺԴ․ դարի քսանական թուականներին, Արեւելեան Հայաստանում։ Այդ միարարական շարժումն էր։ Յայտնի է Գրիգոր Անաւարզեցու եւ Հեթում Բ․ի դերը այդ խնդրում։ Անաւարզեցին իւր հակումները պարզ ցոյց տուաւ կաթուղիկոսութեան երկրորդ տարին 1294-ին կրկնազատկի առթիւ։ Նա համոզեց Թագաւորին եւ ամբողջ Կիլիկիայում էլ Զատիկը պաշտօնապէս տօնել տուեց մի շաբաթ առաջ՝ Ծաղկազարդին, դորա հետ նաեւ որոշ աւանդութիւններ առնելով Հոռոմներից եւ մերից յապաւելով որոշ բաներ, գործադրելով եւ բռնութիւն՝ «բազումք զանեալ եւ աքսորեալ», թէեւ շատերը եպիսկոպոսներից եւ վարդապետներից յանձն չառան։ Հեթում Բ․ն էլ իւր Աստուածաշնչի վերջում գրած ոտանաւորի մէջ յիշում է Ծառազատկի դէպքը1)։



ՊԱՏԿԵՐ 221․

Կոստանդին Կեսարացու ներկայութիւնից օգտուելով, որ կաթուղիկոսի նուիրակն էր, արեւելեան եպիսկոպոսներն ու վարդապետները Ստեփանոս Օրբէլեանի գլխաւորութեամբ «մաղթանաց, նաեւ ողջամիտ հաւատոյ եւ կարգաց» մի թուղթ են ուղարկում կաթուղիկոսին, խնդրելով փարատել իրենց տարակոյսները ստացուած լուրերի մասին։ Թղթի հեղինակը Ստեփանոս Օրբէլեանն է, բայց գրուած «միաբան խորհրդով եպիսկոպոսաց աշխարհիս եւ իշխանաց»։ Ո՞րտեղ է եղել այդ խորհուրդը, Օրբէլեանը տեղեկութիւն չէ տալիս, բայց հաւանօրէն Սիւնեաց աթոռանիստ Նորավանքում։ Մեզ համար հետաքրքրականն այն է, որ այս խորհրդին մասնակից են Գլաձորի ուսուցչապետները՝ Եսայի եւ Դաւիթ, ինչպէս Պռոշեան տոհմի ժամանակակից իշխանները՝ Պապաք եւ եղբօրորդին Էաչէ2)։ Պահուած է Օրբէլեանի մէջ, կայ եւ առանձին, միաբանութեան ձեռնարկը, մասնակիցների ստորագրութեամբ, ըստ № 94/3276-ի օրինակի՝ նաեւ Խաչատուր Կեչառեցու, որ չունի Օրբէլեանը։

Բայց այս թուղթը չունեցաւ իւր դրական հետեւանքը։ Դորա ապացոյց կարող է լինել Օրբէլեանի մեծ Հակաճառութիւնը, գրուած ՋԾԱ (= 1302) թուին։ Ընդհակառակն Անաւարզեցին, օգտուելով Կիլիկիայի ժամանակաւոր խաղաղութիւնից, արդէն բացարձակ կերպով սկսեց հետամուտ լինել իրագործելու իւր ծրագիրը, գրելով թղթեր արեւելեան եպիսկոպոսներին եւ վարդապետներին, ունենալով եւ իւր նուիրակը Հայաստանում։ Այդ ժամանակից ունինք Անաւարզեցու մի մակագրութիւնը էջմ․ի № 500 (Կար․ 517) Ներսէս Շնորհալու եւ ուրիշների թղթերի մի ժողովածուի մէջ, որ նա ուղարկել էր Եսայի Նչեցուն․ «Տր․ Գրիգորիս

---

1) Անաւարզեցին կաթուղիկոսացաւ 1293 թուին՝ նոյն թուի առաջին ամիսներում դեռ եւս եպիսկոպոս էր Անարզաբայում (Յուց․ Լալայեանի, 114)։ Հեթումի Աստուածաշունչն է Ձեռ․ էջմ․ № 157/180 (Կար․ 151)։ Անաւարզեցու նորամուծութեանց մասին Օրբ․ 447։

2) Օրբ․ 447։

ծառայ այ․ եւ ողորմութք․ նորին կաթողիկ ա․ հայոց՝ ընծաեցի զգիրքս Եսայի վդ․ին ի ձեռն մեր հաւատարիմ լիկատին տր․ Կոստանդեայ արքեպիսկոպոսին Կեսարու․ առաքեալ յարեւելս․ ի թվիս ՉԾԴ» (*պատկ․* 228)[1]։ *Անաւարզեցին մտադիր էր ժողով գումարել եւ ընդունել տալ իր ծրագիրը Թագաւորի օգնութեամբ, բայց մահը* (1306 *թ․*) *արգելք հանդիսացաւ։ Սոյն ժողովը, որի անդամները չէին բացառութեամբ Կիլիկիայի եպիսկոպոսներից էին, նոր կաթուղիկոսի ընտրութեան հետ, ընդունեց եւ Անաւարզեցու Հեթումին գրած թղթի ինը կէտերը։*

Բայց այս որոշումները ոչ միայն չիրագործուեցան, այլ եւ մեծ շփոթութիւն յառաջ բերին ժողովրդի մէջ։ Ժամանակակից Թումաս գրիչը շատ պարզ կերպով նկարագրում է քաղաքականի հետ եւ կրօնական խառնակ վիճակը ՉԾ—ՉԾԶ (1301—1307) *թուերին արեւելեան Հայաստանում եւ Կիլիկիայում։ Տխուր կացութիւնն աւելի ծանր է,* «զի մերքս ընդ մեզ պատերազմին, ոչ միայն այլասեռ քրիստոնեայք վիճին ընդ մեզ վս․ հաւատոյ, այլ եւ մեր իսկ թագաւոր եւ կաթուղիկոս հանել ջանան զմեզ յաւանդութենէ սրբոյն Գրիգորի»[2]․ *Շփոթութիւնը շարունակւում է յետագայ տարիներում, մեզ չեն հասել ոչ Գրիգոր Անաւարզեցու արեւելեան եպիսկոպոսներին եւ վարդապետներին ուղարկած թղթերը եւ ոչ նորա յաջորդ Կոստանդին կաթուղիկոսինը, բայց Սիւնեաց եւ Պռոշեանց եպիսկոպոսների եւ վարդապետների պատասխանը Կոստանդին կաթուղիկոսին, ինչպէս եւ Յովհաննէս Արպելու, Զաքարիա Ծործորեցու եւ Եսայի Նչեցու թղթակցութիւնները բաւարար չափով գաղափար են տալիս այդ առթիւ եղած անց ու դարձին*[3]։

Դոցանից հնագոյնը Սիւնեաց Յովհաննէս (Արպէլ) եւ Ստեփաննոս (Տարսայիճ) եպիսկոպոսների եւ Գլաձորի Դաւիթ ու Եսայի վարդապետների պատասխանն է Կոստանդին կաթուղիկոսին, գրուած ոչ վաղ քան 1314 *թուականը, քանի որ տեսանք, Ստեփաննոս-Տարսայիճն այդ թուին պատրաստւում էր դեռ եւս վարդապետական եւ եպիսկոպոսական աստիճան ստանալու, մինչդեռ թղթի մէջ որպէս եպիսկոպոս է յիշուած։ Թուղթը գրուած է Ադանայի ժողովից էլ մի կամ երկու տարի յետոյ, մինչեւ Կոստանդին կաթուղիկոսի թուղթը Ադանայի ժողովի որոշումներով արեւելք հասնէր Գրիգոր Հրաւիրակի հետ, խորհրդակցութիւն լինէր նախ Թաւրիզում Արպելու եւ Թադէոս առաքեալի առաջնորդ Զաքարիա Ծործորեցու միջեւ եւ ապա գործը գժտութեան ու բաժանման հասնէր, պէտք է ժամանակ անցնէր։ Երկու տարուայ ակնարկ կայ Արպելու Զաքարիային գրած թղթի մէջ, որ կաթուղիկոսին ուղղած պատասխանից շատ ուշ չպէտք է լինի։ Ապա, ուրեմն, այս թղթակցութիւնների ընդհանուր տարեթիւ կարող ենք* 1317/18 *թուականը համարել։*

Կաթուղիկոսին ուղղուած թուղթը գրուած է այսպիսի հասցէով․ «Աստուածպետականին ա գլխոյ շնորհօք լցեալ եւ հոգոյ նր․ ներընդունակ եղեալ, գլուխ պատուական եւ տիեզերական կթղկս․ եւ եպսպետ Հայոց մեծաց տէր Կոստանդին», *իբրեւ պատասխան այն թղթին, որ ստացել են* «նուաստ եպսքս Սիւնեց․ տէրն Յովանէս եւ տր․ Ստփնս․ եւ վդպետքս Դաւիթ եւ Եսայի այլ ա մեր վդապօքս եւ վանօրէօքս եւ ազատօքս»։ *Պատասխանից երեւում է, որ կաթուղիկոսը ա-*

ՊԱՏԿԵՐ 222․

---

[1] Տես եւ մեր Քարտէզ հայ հնագրուք․ § 116 եւ տախտ․ ՀԶ։

[2] Ձեռ․ Երուս․ № 1303։

[3] Ձեռ․ Էջմ․ № 2276, 264ա․ նաեւ 2622, 156 եւ 4188, 524/573, (Յաւել․ Գ․ 9 եւ 10)․ Զամչ․ Գ․ 306 ունի միայն Արպէլու եւ Զաքարիայի թղթակցութիւնից քաղուածք․ նորան եւ առ հասարակ անյայտ է կաթուղիկոսին ուղղուած թուղթը, Նչեցու շրջաբերականը եւ թղթակցութիւնները։ Զամչեան, նորա հետ եւ Օրմանեան (Ազգապատում 1774) սխալւում են Արպելու եւ Զաքարիայի թղթակցութիւնը կապելով Անաւարզեցու ժամանակի հետ։

ռանձին նամակներ էր գրել աւելի մեղմ, իսկ «հասարակաբար» ուղարկուածը «լի յանդիմանական բանիւ եւ սաստիւ կանոնադրել·», դորա հետ եւ անդիր հրաման «զմեզ պատուհասել իբրեւ զոչ արժանիս ձեր ահութե· եւ սրբալոյս միռոնիս», մինչդեռ իրենք հայրական գութ, օրհնութիւն եւ խաղաղութիւն էին սպասում: Ուրիշ մխիթարութիւն չունին, բայց միայն «զԱծ եւ զքաղցր ձեր կամքդ», իսկ այժմ «կշտամբանք եւ յանդիմանութի·» են ստանում: Կաթուղիկոսը նոյնիսկ Հայոց պատարագը թերի է համարում եւ անընդունելի Աստծուն (ջուր չխառնելու պատճառով), մինչդեռ Լուսաւորչից սկսած մինչեւ «առ քեզ ածաին եւ անթերի խորհուրդ» է պատուած: Բոլոր եկեղեցիներն էլ կատարել են առաջ Հայոց պահած աւանդութեամբ, մանաւանդ Հռոմայ եկեղեցին մինչեւ Աղեքսանդր Բ. եւ Յուլիոս պապերը: Յունաց եկեղեցին էլ միայն յետոյ է սկսել ջուր խառնել: Իսկ Ծնունդը Դեկտեմբերի 25ին սկսեցին կատարել Ոնորիոս եւ Արկադիոս կայսրների հրամանով[1]: Մենք հետեւում ենք Լուսաւորչին, որին հետեւել են եւ Ներսիսեանք (Շնորհալին եւ Պահլաւունիք առ հասարակ):

Նոքա պնդում են, թէ երբեք անհնազանդ չեն եղել կաթուղիկոսի դէմ, մինչդեռ «սուտակասպաս, տգէտ



ՊԱՏԿԵՐ 223·

եւ քսու» մարդկանց լսելով, «անուանդ քո ի վեր· մեր կոչմանէ զրկել ջանաս»: Մենք ոչ մի բանում չենք թեքացել ձեր առաջ, ընդհակառակ «վս· ձեր բազում նախատինս եւ անարգանս ընկալաք ի ներքնոց եւ յարտաքնոց»: Ուղարկել էիք մեզ կանոնական եւ վարդապետական վկայութիւններ, որ առաջինը չէր եւ որոնց պատասխանը ժամանակին գրել ենք եւ ուղարկել: Վկայութիւնների մեծագոյն մասը չեն վերաբերում ջրի խորհրդին, բռնազբօսիկ են բացատրութիւնները· իրենք իրենց կողմից մատնանիչ են անում ուրիշ վկայութիւններ: Կաթուղիկոսի կողմից խրախուսւում են այն-



ՊԱՏԿԵՐ 224·

պիսիները, որոնք «անխտրաբար յամ· կերակուրս եւ ի բանս եւ ի գործս հեշտութե· վարին», իսկ իրենց աչքում այդպիսիները «պատճառ հայհոյութե·» են կաթուղիկոսի անուան, կրօնի, եկեղեցու, եւ ոչ սիրոյ միջնորդ: Յետոյ կը տեսնենք, որ այստեղ ակնարկուած է Զաքարիա Ծործորեցին:

Թղթից իմանում ենք նաեւ, որ կաթուղիկոսի Գրիգոր նուիրակը վճռական կերպով յայտնել է, «թէ հոգեւոր տնն· հրամանք է, թէ որ ոք յանձն առնու զջրով պատարագելն եւ ի դեկտեմբերի իե· զԾնընդեան տօնն կատարել, այնոցիկ մեռոն տուր եւ ահէ, եւ որ ոչ կամիցին ի սբ· խորհուրդն զջուրն խառնել եւ ի դեկտեմբերի իե·զծնունդն առնել, այնպիսեացն· մեռոն մի տալ եւ մի՛ ահել զայնոսիկ»: Իրենք «իշխանօք եւ ազատօք, վդօք եւ քհնյօք եւ ա սրբազան ժողովրդովք» խորհուրդ են արել եւ բացասական եզրակացութեան հասել, հրա-

---

[1] Պատմական այս տեղեկութիւնները, գրեթէ, բառացի կրկնուած են Նչեցու շրջաբերական–դաւանաբանական թղթի մէջ, որ ապացոյց է նորա մասնակցութեան եւ այս թղթի խմբագրութեան մէջ:

ժառուելով եւ մեռոն ստանալուց: Թուղթը վերջանում է այսպիսի խօսքերով. «մեր ջանն եւ կամքն այս էր, որ չլինէր մեզ ի մէնջ բաժանել եւ ով ոք եղեւ պատճառ եւ լինի, ինքեանք տայցեն պատասխանի այդ»: *Այս վերջին ակնարկն էլ Զաքարիա Ծործորեցուն է վերաբերում, ինչպէս պարզւում է Սըրպելու Զաքարիային գրած պատասխանից:*



ՊԱՏԿԵՐ 225ա.



ՊԱՏԿԵՐ 225բ.

Յովհաննէս Սըրպէլը իր Թղթով պատասխան է գրում Զաքարիային «էքսարխոսիտ Հայոց», *այսինքն կաթողիկոսի տեղակալին արեւելքում, որ ողջունի եւ անձնական տեղեկութիւններ տալու հետ, յորդորել էր* «ի ճշմարտութե. խոկումն եւ ի... հրամանաց կատարումն»: *Պատասխանը պարզ է եւ խիստ. նա հեգնութեամբ գրում է, թէ ի՞նչպէս է որ,* «սկզբանն տարոյն» «հետեւեցար ճշմարտութեն.» *եւ մեզ խորհրդակից չարիր. այս տարի էլ մեր բնակութեան մօտով գնացիր* «ի դրունս աշխարհակալացն եւ ոչ երբեք հարցման կամ տեսութե. արժանի արարեր», *ուստի եւ տարակուսի մէջ է, թէ ներկայ հրամանը իշխանարա՞ր է, թէ սիրույ ուղարկուած: Նուիրակներին սիրով եւ պատուով ընդունելու համար յորդորի կամ խրատի պէտք չկայ, որովհետեւ իրենք միշտ հնազանդ են եղել Լուսաւորչի աթոռին եւ կարողութեան չափ* «զսէրն եւ զհարկից նրվիրակացն եկեղոց եւ զհասկն կթղկսի. անբերի եւ յօժարութբ. ենք հասուցել.»: *Իսկ կրօնի վերաբերեալ խնդիրներում նոյնն ենք, ինչ որ բոլոր հայերն են Լուսաւորչից մինչեւ ներկայ կաթողիկոսը: Ամենախիստ կերպով մեղադրում է Սըրպելին Զաքարիային, որ նա* «ի հակառակաց կողմն է անցել և երդմամբ չափ քակես զեկեղեցի Աստուծոյ, եւ զհնազանդեալքս ի հոգեւոր գլխոյն օտարես, երբեմն իշխանաբար սաստելով, երբեմն գիրս եւ խօսս չարախօսութե. զմէնջ առ հոգեւոր տէրն առաքելով եւ ի նմանէ մեզ սաստ եւ սպառնալիս տաս բերել»: *Ապա հեգնութեամբ աւելացնում է, որ դու քո նպատակիդ հասար բաժանելով մեզ, Հայոց աշխարհը իր գլխից. այլեւս ի՞նչ ես կամենում մեզնից: Արդարանալու հիմք չունիս, որպէս թէ կաթողիկոսի հրամանն ես կատարում: Նա քեզնից* «ջուր միայն խնդրեց ի խորհուրդն եւ դեկտեմբերի գինե. ծնունդ առնել», *իսկ դու պահքի լուծումն, առաքելական կանոնների խախտումն անսուրբ կենդանիների նկատմամբ.* «զհարկ երդուեցնելդ եւ ի հաւատոյն յո՞րմէ քէ. ուսար. կամ եւ զեկեղեցիս Հայաստանեց. ուրանալ եւ յոլով նախատանօք նախատել կամ փտարոյն բոլոր պահքն ի ժ. օր բերել, որպս. քո գրել. կանոնս էր, կամ զամուսնութի. աշխարհի քահնյի. բառնալ» *եւ անարժաններին քահանայութեան կոչել: Թուղթը վերջացնում է դարձեալ հեգնութեամբ. եթէ դու գիտուն ես դարձել,* «կամ քոյքդ որպս. պարծիս հանապազ եւ խրոխտացել. ես առջի. իշխանաց» *պարտաւոր էիր գալ եւ մեզ էլ հասկացնել, իսկ եթէ մի երկու բան ես իմացել, այն էլ լսելով եւ ոչ ընթերցանութեամբ, քննիր* «թէ ի ճշմարտութե. ե՞ս, թէ ոչ»: *Այլեւս ինչ երկար գրեմ, քո կամքի համաձայն եղաւ. մենք ի՞նչպէս կարող ենք բռնել քեզ,* «երբ դուք ի մէնջ փախչելն կու սիրէք»: Աւրպելին «քոյքդ» բառով ակնարկում է կաթոլիկ միսիոնարներին, որոնք այդ ժամանակներն արդէն սկսել էին հաստատուել Ատրպատականի սահմաններում, իսկ իշխանները Օրբէլեանները եւ Պռոշեաններն էին, որոնք, երեւի, հանդիպել էին «ի դրունս աշխարհակալաց գալիս» (Յաւել. Գ. 10)[1]:

Զաքարիան առանց պատասխանի չի թողնում այս գրութիւնը, բայց առանց հեղնութիւններին հեղնութեամբ տարկելու: Աւրպելու խօսքերին, «թէ երբ ճշմարտութեն· հետեւեցար զմեզ ընդէ՞ր չարաբեր խորհրդակից», պատասխանում է, թէ մենք խորհրդի գլուխ քեզ էինք համարում, ինչպէս Դաւրիժում էլ եկեղեցու սենեակում խորհուրդ արինք· բայց երբ տեսանք, որ դուք կամք չունիք կաթուղիկոսին հնազանդելու, վստահանալով ձեր գիտութեան եւ փարթամութեան վերայ (իշխանական դիրքն ակնարկելով), մենք չհամարձակեցանք ապստամբել կաթուղիկոսից· բաժանման պատճառը մենք չենք, այլ ատելութիւնը· սիրոյ օրէնքով նա կամենում է, որ ամէնքը մի լինին, մի հօտ մի հովիւ[2]:



ՊԱՏԿԵՐ 226·

Այս շարժման մասնակից էին ոչ միայն եկեղեցականները, այլ եւ ժամանակակից իշխանները թէր եւ դէմ ուղղութեամբ: Օրբէլեան եւ Պռոշեան իշխանների մասնակցութիւնը Գրիգոր Անաւարզեցու դէմ գրուած թղթին տեսանք վերեւ: Բայց այդ մասնակցութիւնը շարունակւում է եւ յետոյ Կոստանդին կաթուղիկոսին ուղարկած թղթում: Իշխանների եւ ազատների ստորագրութիւնն այստեղ չկայ, բայց 1317/8 թուին Օրբէլեանների իշխանապետն էր Բուրթէլ, իսկ Պռոշեաններինը Խաչի կամ նորա որդին Հասան Բ., նայելով, թէ առաքման ճիշդ տարեթիւն ու ամսաթիւը երբ էր: Իսկ Կիլիկիայում Հեթում Բ.ի պաշտպանողական դերը շարունակում են Օշին թագաւորը եւ նորա մահուանից յետոյ Օշին պայլ, Կոռիկոսի տէրը, իւր որդի Հեթումի հետ: Այս վերջինները յատուկ թուղթ ունին գրած Եռայի Նչեցուն, որ կորած է, բայց կարելի է բովանդակութեան մասին գաղափար կազմել պատասխանից: Նչեցու թուղթն ուղղուած է «Քրիստոսի զօրացլ·, ամ· քջութբ· և իմաստութբ· թագժոնգ· զարմի ծնունդ, զունդ և կողմնկլ· բլր· մասինդ Սօվրիոյ և ի վեհից մծ· անիստ շինլ· տանդ Տարոնի պր· Հեթում, պր· պայլ և մարզպան ամ· Հայոց Օշին, ի նուաստ Եսայեայ ի սպսւր· բանին»[1]: Պատասխանից երեւում է, որ վէճը երեք հարցի շուրջն է պտըտում· մարդեղութեան, այսինքն մի՞, թէ երկու բնութեան, բաժակի անապականութեան, թէ ջրախառն լինելու, և Ծննդեան ու Մկրտութեան տօները միասին կատարելու մասին: Նչեցին յայտնում է, թէ դա հին վէճ է հայոց, յունաց եւ լատինների մէջ Իննովկենտիոս (երկրորդ) պապից սկսած, «որ ՇՁ (=1131) թուին հայոց գրեաց առ Գրիգորիոս եղբօր Ներսեսի զնոյն խնդիր, բայց ոչ նովին թխտով, թէպտ· եւ նկրագրով եւ նրին· վկայութ·, զորս ձերս ունէր», որի պատճէնն ունինք մեզ մօտ: Այս նախադրանից յետոյ Նչեցին մի առ մի մէջ է բերում յարուցուած խնդիրները եւ հարկաւոր բացատրութիւնները տալիս[2]:

---

[1] Միութեան վիճաբանութիւնն սկզբում յունական բնոյթ ունի, բայց հետզհետէ զօրանում է կաթոլիկ ազդեցութիւնը լատինական քարոզիչների ազդեցութեամբ:

[2] Զաքարիան բացի այս թղթերից՝ ՉՀԹ (=1330) թուին նորոգել է ոմն Յովհաննէս սպասաւոր բանի «ի սուրբ ուխտէն Մաղարթայ» աշխատութիւնը, ինքն էլ ուրիշ աղբիւրներից նորոգել *«Յիշկգրութի· եպիսկոպոսաց տոքլին· վիճակիս Արտազու»* վերնագրով (Արարատ, 1868· 102):

Նորա շինարարական գործունէութեան մասին տեղեկանում ենք Թադէոս առաքեալի տաճարի արձանագրութիւնից, որից երեւում է, թէ *«Զաքարիա եպիսկոպոս, որդի պարոն Մանվէլայ»*, կրկին նորոգել է շարժից կործանուած տաճարը ՉՀԸ (=1329) թուին· խնդրում է յիշել նաեւ իւր յաջորդ *«ազրաւորդին զտէր Տիրացուն»*, այլեւ իւր հարազատ եղբայրները Պետրոս եւ Սարգիս, որոնք նիւթապէս նպաստել են շինութեանը (Շահխ· 350· եւ Արարատ 1898· 89· յօդուած Խ· Վ·ի):

Այս մասին տեղեկութիւն է տալիս եւ Սամուէլ Անեցու շարունակողը (հրատ· էջմ· 1898· 157)· ՌՅԻ (=1320)· *«Ի ՉԿԸ թվին եղեւ ահագին շարժ յարեւելս· եւ զԹադէոս առաքելոյն վանքն եւ զեկեղեցին կործանեաց՝ եւ զտունն փլոյց եւ ՀԵ* (=75) *ոգի եսպան, զոր դարձեալ վերստին շինեաց զեկեղեցին եւ զվանքն տէր* Զաքարէ»:

Նորա շինարարութեան մասին տեղեկութիւն ունինք եւ յետին ժամանակների վկայութեամբ: Թադէոս առաքեալի վանքի վանահայրն էր 1677 թուին Խաչիկ վարդապետ (եպիսկոպոս) Մակուեցին, Յակոբ Դ· կաթուղիկոսի աշակերտներից, որ իւր ստացած Հարցմանց գրքի յիշատակարանում ի միջի այլոց գրում է· *«յետ երեք տասն ամի առաջնորդութ· մերոյ, եւ ի թվկնիս· մերում ՌՃԻԸերորդի եղեւ գիւտ ջրմղին, որ ասի Կանոնւոր, զոր յառաջ· ժմկս· բերել· էր մեծն Զաքարիա եպսն· պարոն Էմանուէլի որդի, երկդ· անգամ ի հիմանէ շինող սր· եկեղեցւոյս, եւ էր քակել· եւ աւերել· եւ հողիւ ուրեք ուրեք նշմարանք մնացել·: Այլ այժմ շնորհօքն այ· կրկին նորոգե· եւ յորդարուխ աղբիւրն բերել· ածաւ ի մէջ վանիցս եւ դեղջս, հոգաբարձուբ· Սարգիս վրդպտի· կաֆայեցւոյ»*· Ձեռ· էջմ· N° 843/808, 489ա·:

Նորա մահուան տարեթիւը մեզ յայտնի չէ, բայց կենդանի էր դեռ եւս 1336 թուին, երբ *«ի մայրաքաղաքս Թավրէժ ընդ հովանեաւ մաւրն լուսոյ տիրամաւր Ածածնին եւ Սրբոյն Սարգսի զաւրավարին»*, *«յեպիսկոպոսութե· սրբոյ առաքելոյն Թադէոսի տր· Զաքարիաի եւ տր· Տիրացուի, հեզոյ եւ հանդարտոյ եւ բարեխառնոյ»*, գրուել է Թումա գրչի ձեռքով մի բոլորգիր աւետարան, թղթի վրայ, Նասխարունի ստացմամբ, որի որդիքն են Ագիզբէկ եւ Թաւաքալի: Գրչութեան ժամանակն է «ՉՁԵ յամսե· արեգ ժէ» (Ձեռ· էջմ· N° 1376 Նժ·):

Արեւելեան վարդապետները ոչ միայն ստիպուած էին ունիթոռական շարժման գլուխ կանգնած կաթուղիկոսների, եպիսկոպոսների եւ իշխանների դէմ մաքառել, այլ եւ զգուշացնել ժողովրդին լատին քարոզիչների եւ նրանց հետեւող հայ միաբանների դէմ, որոնք այս ժամանակ երեւան են գալիս Արեւելեան Հայաստանում եւ բուռն գործունէութիւն սկսում այստեղ: Ե՞րբ են նրանք հաստատուել Արեւելեան Հայաստանում, ճիշդ ժամանակը չգիտենք· նրանց ձեռքով կատարուած ամենահին թարգմանութիւնը՝ «Գիրք մոլուեց· եւ ժ· բանեան հրամանաց» կրում է 1320 թուականը: Յիշատակարանից տեղեկանում ենք, որ կատարուած է Ֆրա Պետրոսի ձեռքով, ազգով հայ Ֆրա Յակոբոսի օգնութեամբ, վերին Քռնայի վանքում, Յովհաննէս վարդապետի առաջնորդութեան ժամանակ: Նման յիշատակարան, գրեթէ, բառացի կրկնւում է այս շրջանի ունիթոռական բոլոր թարգմանութիւնների վերջում, ուստի եւ անհնարին չէ, որ յետին թուով յաւելուած լինի, ինչ որ Քռնային եւ Յովհաննէս Քռնեցուն է վերաբերում, մանաւանդ «հիմնարկօղ կրգց· միաբանից» արտայայտութիւնը երկար տարիների գործունէութեան հետեւանքն է մատնանշում: Քռնայի վանքը (Երնջակում, Ապրակունիսից ոչ հեռու) միաբանական գործունէութեան կեդրոն դարձաւ նշանակուած թուականից աւելի յետոյ, հաւանօրէն, 1330 թուին, երբ Բարդուղիմէոս Բոլոնիացին հաստատուեց այնտեղ Քռնեցու հրաւէրով: Բայց նա իւր գործունէութիւնն սկսել էր աւելի վաղ՝ Մարաղայից, ուր քարոզում էր պարսից լեզուով: Հայոց ՉՀ թուականի վերջում եւ Քրիստոսի 1322/3 թուին արդէն նա կապեր ունէր հաստատած Զաքարիա Ծործորեցու եւ Յոհան Երզնկացու հետ, որ այդ ժամանակ նստում էր Արտազի Ծործորի վանքում: Երզնկացին այդ ժամանակ լատիներէնից թարգմանում է «տր· Բարդօղիմէոսի հեզահոգի քահանայ(ի) եւ յոյժ գիտնականի» օգնութեամբ Թովմա Ակուինացու եօթն խորհրդոց գիրքը[3]: Յոհան Քռնեցին ի՞նչպէս կապուեց Բարդուղիմէոսի հետ, չգիտենք: Ըստ Զամչեանի[4], որպէս թէ հէնց Եսային է ուղարկել նորան Մարաղա, տեղեկանալու, թէ «ո՞րպիսի իցէ վարդապետութի· սորա», ապա յարելով նորան, համոզում է գալ, բնակուել Քռնայում, իւր աշակերտներին էլ նոյնը յորդորելով: Այս վերջին իրողութիւնը հաստատւում է Քռնացի Յակոբ վարդապետի խօսքերով, որ նա կցում է Բարդուղիմէոսի քարոզգրքի յիշատակարանին եւ յայտնում, թէ Յովհաննէս վարդապետը մեծ նեղութեամբ բերել է «զվերոգրել· այրն այ զտր· Բարդուղիմէոս եւ բնակեցոյց ի գեղս Քռնա»· գիւղի առաջնորդ պարոն Գորգի ձեռքով շինել է տալիս եօթնասուն օրուայ ընթացքում Քռնայի Ս· Աստուածածինը· նաեւ «զբզմս· յորդորեաց ի միաբանութի· սբ· եկղցոյն Հռոմայ… եւ բերեալ զընկերակիցս իւր արար կցորդ այսմ մեծի բարութեցս·»[5]: Այս խօսքերն աւելի պարզւում են մի համառօտ յիշատակարանից· «Յոհան Քռնեցին մեծին Եսայեայ աշակերտք էին եւ այսչափ վարդապետովս դարձեր են ի փռանգաց դաւանութի· Մարգարէ վրդպտ· ի գեղջէն Օծոպայ· Յակոբ վրդպտ· ի գիւղաքաղաքէն Գառնւոյ· Հայրպտ· վրդպտ· է· աղբիւր գեղջէ· Յոհան վրդպտ· ի Ծուանա գեղջէ Սիմէօն վրդպ· ի Բասեն գաւառէ· Ներսէս վրդպտ· ի գաւառէն Տարօնոյ· Առաքել եւ Իէլ· վրդպ· ի գաւառէն Արտազու· Գրիգոր վրդպտ· ի յԱպրակունիս գեղջէ· Կոստանդին եւ Յոհէս· վրդպտք· ի յաշխարհէն (նշանագրով) Կիլիկիոյ· Սիմէօն վրդպ· ի խչէն· գւռէ·»[6]:

---

[1] Այդ թուղթը տե՛ս Արարատ· 1893, 133· յօդուած Ա· Տէր Միքէլեանի:

[2] Ձեռ· էջմ· № 524/573, 321բ·: Թղթի վերնագիրն է «Երջանիկ բարունոյն Եսայեա ասացլ· վս· դաւանութե· հւոյ· ընդդէմ պրն· Հեթմոյ կոռիկոսցոյն· պատասխանի թխտոյն», որ յետոյ է աւելացրած եւ ոչ հեղինակի կողմից: Օշինը պայլ տիտղոսն ստացաւ ՉԿԹ (= 1320) թուին, երբ Օշին թագաւորը մեռնելիս իւր մանուկ Լեւոն որդուն յանձնեց նորա խնամակալութեանը (Սմբատ սպարապետի ժամանակագրութեան շարունակողը, Մոսկուա, 1856, 120, 122: Նաեւ Սամ· Անեցու շարունակողը եր· 157, էջմ·ի հրատ·): Մի տարի յետոյ Օշին պայլը Լեւոնին ամուսնացրեց իւր աղջկայ հետ: Օշին պայլի որդին՝ Հեթումը վախճանուեց ՉՀԴ (= 1325) թուին· ուրեմն այս թուղթը գրուած է 1320—1325 թ· թ·, հաւանօրէն, 1321 թուին: Ձեռագիրը գրուած է Թովմա Կաֆայեցու ձեռքով, որ Մխիթար Տաթեւացու աշակերտն էր, 162ա·:

[3] Ձեռ· էջմ· № 505/560 (կար· 493), 204ա· (Յաւել· Բ· 84, պատկ· 224):

[4] Պատմութիւն Հայոց, Գ· 326: Բայց այդպիսի բովանդակութեամբ աղբիւր մինչեւ այժմ չէ գտնուած: Հաւանօրէն, ի նկատի ունի Բարդուղիմէոսի Քարոզգրքի յիշատակարանը:

[5] Ձեռ· էջմ· № 689 Նժ·:

[6] Ձեռ· էջմ· № 2195/2180, 321ա· Ձեռագրի այն մասը, որտեղից հանուած է այս ցանկը, թուական չունի: Տես նաեւ Ձեռ·

Մշակուած էր նաեւ միարարների ուխտի մէջ ընդունելութեան երդման բանաձեւ եւ տարազը հագցնելու աղօթք: Քոնեցին գրաւոր եւս մաքառել է Հայոց դէմ, մեղադրելով տասն եւ ինն կէտով[1]): *Միարարութեան գործին աջակցում էր նաեւ Զաքարիա Ծործորեցին, որին Բարդուղիմէոսը իր Քարոզգրքի յիշատակարանի մէջ անուանում է* «հրամանակատար եւ անդրդուելի դդեակ միաբանութե·»[2]): *Նաեւ մի ամբողջ խումբ լատին կրօնաւորների ուղարկուած էր Հայաստան քարոզութեան համար:*

Այս համառօտ տեսութիւնն ինքնին պարզում է, թէ ի՛նչպիսի ծանր վտանգի առաջ էին կանգնած արեւելեան վարդապետները, յատկապէս Սիւնեաց եպիսկոպոսութեան եւ Գլաձորի դպրոցի ղեկավարները, որոնց աշակերտների մէջ էլ սկսել էր խմորումը, հրապուրելով Բարդուղիմէոսի եւ նորա ընկերների գիտութեան արտաքին փայլից եւ քարոզութիւնից: Բնականաբար, հակառակորդների գործունէութեան դէմ համապատասխան պայքար պիտի սկսուէր հայ եկեղեցու գիտութեան ներկայացուցիչների կողմից Նչեցու գլխաւորութեամբ: Մեր ձեռքն է հասել նորա մի շրջաբերական թուղթը, ուղղուած «(հո)յակապ եւ հռչկւր· քաղաքացդ եւ բնակչաց··· (*բաց՝ տեղի անունը*), տէրանց եւ ծառայից, արանց եւ կանանց, մեծաց եւ փոքունց, առհսրկ· բլրմանց, յառատաձիր բարերարէն եւ յամենաստեղծ արրչ·էն ահուքի· ձեզ եւ խնամք, քաղցրուի· առատացի· եւ ի նուաստ Եսայեայ աղօթք առ Ած, պհլ· զձեզ ի կմս· իւր եւ ի հաճոյս, եւ մաքուր յամ· բասրելի կրից եւ ի վրիպակ խոտորմանց ճշմարտութէն·»:

Արդէն հասցէի վերջին խօսքերից երեւում է, թէ ի՛նչ բովանդակութիւն պիտի ունենայ թուղթը: Ամբիծ հաւատք է պէտք, իսկ կամակոր շաւղով ընթացողները սրտով թիւր եւ մտքով խոտոր, բազմատեսակ պատ-



ՊԱՏԿԵՐ 227·

էջմ· N° 1364/1361, 341ա·: N° 717, 55ա·: Այս ցանկից երկուսը մեզ ծանօթ են արդէն· Մարգարէ Օձոպեցու համար Դանիէլ Կուքեցու ձեռքով արտագրուած տեսանք Յոհան Քոնեցու թարգմանած « *Գիրք դժոխոց*»ը, հաւանօրէն սա է· «*մենամարտիկ բարունին Մարգարէ*», որ յետոյ կը տեսնենք: Ծանօթ է մեզ եւ «*Ներսէս վրդպտ· ի գաւառէն Տարօնոյ*», որ Եփրեմ եւ Դաւիթ գրիչների ձեռքով մի Աստուածաշունչ գրել տուեց:

[1]) Ձեռ· էջմ· N° 1364/1361, 340բ· եւ 341բ·: Նաեւ N° 717, 54բ·:

[2]) Տաթեւի N° 84 ձեռագրի, նաեւ Ձեռ· էջմ· N° 3011 եւ N° 4025, համեմատ, «*ի խնդրոյ··· եւ ի հարկեցուցիչ հրամանէ արհիական գլխոյն եւ մեծ դիտապետին (տն·) Զաքարե(այ)ի սպասաւորի սբ· առաքելոյն Թադէի*» թարգմանուել է «*Նախադրութի· մեկնութեն· որ ըստ աւետարանի Յօհան*» «*ի լատին(աց)ւոց ի մերս բարբառ, աշխատութբ· յոքնահանճար բարունոյն Ցրողոնց կոչեցելոյ եւ սպասաւորութբ· նուաստ բանի սպասաւորի Խարայէլի*»: Այս Խարայէլն էլ, անկասկած, ցանկի մէջ յիշուած Խարայէլ Արտազեցին է:

ճառեր են հիւսում պարզ մարդկանց պատրելու համար: Ձեզանից ոմանք, «սիրդց· զուտանուն գիտութե·, աւտրցել· ի սբ· հարցն կրօնից, օտարաբար խորհին», ուստի եւ յորդորում է ամէն մարդու չհաւատալ, որոնք աշխատում են թիւրել Լուսաւորչից ընդունած ճշմարտութիւնը: Այստեղ նա համառօտ տալիս է Հայոց եկեղեցու դաւանութիւնը եւ ապա շարունակում զգուշացնող խրատներով. չար եւ անխմաստ մարդիկ շրջում են ձեր մէջ եւ հակառակ առաքելական կանոնների «զպնդութի· պհց· լուծանեն ի ձուկն եւ ի գինի»: Եթէ Փռանգներից, ասորիներից կամ հոռոմներից ձեզ մօտ վարդապետ կը գայ կամ քահանայ կամ աշխարհական, պատուով կ'ընդունէք «իբրեւ զեղբարս եւ զծառայակիցս ի քս·»: Բայց եթէ հակառակութեամբ կը գան եւ կը կամենան ձեզ դարձնել սուրբ հայրենի աւանդութիւնից, նրանց չընդունէք իբր Քրիստոսի աշակերտների, «այլ իբրեւ օտարոտ քի· եկղցոյն· եւ հկոկրդ· ճշմարտութե· եւ գայլս ծածկել· ստեւով գառնենոյ»: Նոյնպէս ձեզանից նրանց, որոնք իրենց եկեղեցին ու առաջնորդները կը թողնեն եւ կ'երթան հակառակորդների մօտ, եւ անդուռն բերանով հայհոյել կը սկսեն «զկրօնս Հայաստնց·, զեպս· եւ զերէց··· մի ընդունիցիք զնս· ի տունս ձեր»:

Ապա աւելացնում է, հայոց կրօնը եւ աւանդութիւնները աննշան մարդկանց նորմուծութիւններ չեն, այլ առաքեալներից եւ սուրբ հայրերից հաստատուած: Հին եկեղեցիներն էլ Ծննդեան եւ Յայտնութեան տօները Յունուարի վեցին էին կատարում եւ բաժակն՝ անապական, յատկապէս Հռոմայ եկեղեցին, որ Յունուարի վեցի աւանդութիւնը փոխեց միայն Ոնորիոս եւ Արկադիոս ինքնակալների հրամանով: Գրիգոր աստուածաբանի եւ Կիւրղի Պարապմանց վկայութիւններով հաստատում է մարդեղութեան «մի Է բնուի· բանին Աստուծոյ մարմնացելոյ» բանաձեւը ընդդէմ երկու բնութիւն քարոզողների: Տիրատուր վարդապետից լսել է, որ Փռանգ վարդապետները եկել են «ի տրամաբանութի· հետ վրպ·ին», յատկապէս «ասցլ· էր տր· Բարդողիմէոսն, թէ Քս· զմդկային· բնուի· անբժնլի· էուի· (?), թէ զբանկն· էուին· կու ասեն անձն եւ զայն ոչ առլ· կամ ասցլ· են թէ զբանկնուի· էուի· չէ առեալ», որ Եսային նոյնացնում է Ապողինար Լաւոդիկեցու վարդապետութեան հետ[1]:

Այս միեւնոյն շրջաբերականը որոշ փոփոխութիւններով եւ յաւելումներով ուղղուած է Մատթէոս անունով մի եպիսկոպոսի. «(թ)ուղթ Եսայեայ ի տր· Մաթէոս»[2], մէջը մտցնելով խրատներ եւ հրահանգներ քահանաներին՝ մկրտութեան եւ պսակ կատարելու վերաբերմամբ. արգելում է ժողովրդին «ի վերա մեռելո երես ցտել եւ կամ հեր խզել եւ կամ զյուսովքն մերկանալ եւ կամ անածանանչ· (?) ի մութ սենեակ նստել եւ կամ սեւ կամ կապուտ առնել: Այր կամ կին որ յառն եւ կնոջ մէջ մտանէ, զկնոջ զերկու երեսն սեւեն եւ զմարդոյն զմինն»: Բացատրում է քահանաների վարձատրութեան կերպն ու եղանակը. «երիցոյն պտուղն տան յամ· իրաց եւ ի սերմանց իւրոց ժողովուրդն, եւ զխաչհամբոյրն Աւագ Ուրբաթին եւ խաչվերացին», բայց արգելում է «խոստովանադրամ» ստանալ. «դարձեալ մի ոք ըստ հարկի պահանջեսցէ գին արծաթոյ անգին շնորհին՝ վս· մկրտութե· կամ մահու հաղորդելոյ, այլ որ ունին եւ տան սիրով առէք, ոպ· զնուէր եկեղեցոյ եւ աղքատացն ուգնէք»: Ուրիշ պատուէրների հետ արգելում է յատկապէս հայհոյանքը. «յամ· տեղ յիշոցնաւազ դնեն ի գեղ, ի քաղաք, զյիշոցնատուքն խրատեն· ծեծելով ի շուրջ ածեն, թէ յարանց լինին կամ ի կանանց· եւ մանկանց առաւել զգուշանան, որ սովորին ոչ»: Կանոնական այս խրատներն ու պատուէրները, քահանաներին եւ հայհոյողների նկատմամբ առնուած են Զաղավանից ժողովի որոշումներից, որոնցմով զբաղուել են Վարդան, Յովհաննէս Երզնկացի, Եսայի Նչեցի իբրեւ ժողովրդական դաստիարակչական–կրթական հրահանգներ:

Քահանաներից յետոյ դիմում է Մատթէոս եպիսկոպոսին (եւ հոգեւորականութեան), քաղաքացիներին եւ իշխանական դասին («քսասէր· պարոնայք»). «նախ ողջոյն եւ օհնութի· ի մէնջ ընկալջիք եւ ապա պատուէրք որ սակաւ բանիցս մերոց նախ ի ձեզ պտղաբերեալ, եւ ապա զայլս ուսուցանէք»: Նա լսել է, որ Հայոց եկեղեցու մէջ ճեղք է յառաջացել, «յայսմ համբաւո հարկեալ, գրեցաք զգիրս առ ձեզ, վստահացեալ ի սէր եւ ի հնազանդութի· ձեր բարէպաշտութեդ·»: «Դարձեալ լսեցաք, թէ սուտ վդպտեր· ի Փռանգաց յազգէ եւ այլ ի հայոց ծաղեր[3]) եկեալ են առ ձեզ» եւ հերձուած են յառաջ բերում, որոնց դէմ զգուշացնող խրատներ է տալիս: Այստեղ եւս աւելացնում է Տիրատուր վարդապետից լսածը, որ վերեւ մէջբերինք: Միջնադարեան մեծ վարդապետների բարձր դիրքն ու իրաւունքն է ցոյց տալիս այս հանդամանքը, որ նրանք կարող էին հրահանգել նոյնիսկ եպիսկոպոսներին եւ նրանց թեմերի ժողովրդին, բանադրել եւ արձակել, եթէ եկեղեցական կամ վարդապետական խնդիրներում պակասաւոր կամ զանցառու նկատուէին:

Բարեբաղդաբար հնարաւորութիւն ունինք որոշե-

---

[1] Ձեռ· էջմ· № 524/573, 316ա·:

[2] Ձեռ· էջմ· № 2776, 234ա·: Շատ հետաքրքրական են ազգագրութեան եւ ԺԴ· դարի բարքերին վերաբերեալ տեղեկութիւնները:

[3] Այսպէս էին կոչւում բիւզանդական ազդեցութեամբ յառաջ եկած, յունական եկեղեցուն եւ աւանդութիւններին յարած հայերը: Նրանց ծագման մասին գրել է Ուխտանէսը իւր աշխատութեան երրորդ մասում, որ մեր ձեռքը չէ հասել, բայց գոյութիւն ունէր ԺԳ· դարի վերջերին, երբ Մխիթար Այրիվանեցին գրում էր Ստեփանոս Սիւնեցու վկայաբանութիւնը· տես մեր «Մխիթար Այրիվանեցի» տետրակը, երես 13, 19:

լու Մատթէոս եպիսկոպոսի անձնաւորութիւնն ու տեղը, հէնց այս ձեռագիրը (էջմ· № 2776)*, ուր արտագրուած է Նչեցու Թուղթը, գրուած է «եւթն հարիւր ՁԴ·* (= 1335) *թուին», Բուսաիտ խանի (Աբու-Սէյիդ* 1315—1335) *ժամանակ·յիշատակարանի մէջ կայ* (259ա) *եւ ներբողական մաս, նուիրուած այս Մատթէոսին, որ ստացողն է գրքիս·*



ՊԱՏԿԵՐ 228·

Եպիսկոպոս մի հրաշալի
Բազմաց պատուած եւ մեզ ցուցան,
Տր· Մաթէոս սա անուանի
Որբոց ՚ւ այրեաց եղեալ պաշտպան:
. . . .

Եւ առաւել Տր· Մաթէոս,
Փայլեաց ի յազգս հայկազան·
Որպ· զարծիւ սլանալով
Առ Թագաւոր եւ ընդ իշխան,
Տիրուցանէր ըզբարկութի·
Որ բորբոքէր բարեկական·
Ցոյժ տրտմութի· փարատեցաւ,
Ի խաւարէն զերծեալ լուծան:
Զտիւ եւ զգիշեր ոչ դադարեալ
Զաղօթս առնել որ խոր սահման:

Ոչ թէ լսել եմ եւ գրել,
Այլ իմ տեսած է զինչ գրեցան,
Կամք ունէի յերկար ասել,
Թէ կարդացաւղքն չձանձրանան:

Վերջում աւելացնում է

Եւ եթէ զանունըս հարցանես,
Գրիգոր չերէց եմ անարժան,
Որ կարգեցի յայսմ տառի
Տունս թվով Ճ եւ քսան:

Մի ուրիշ «երգասաց» Յովհաննէս Տարբերունի գրել է մի ոտանաւոր դարձեալ նոյն ձեռագրի մէջ, 223*բ· օրուայ չարիքին նուիրուած,* «ըստ խնդրոյ հոգեւոր եղբաւրս մերոյ Ասլանի եւ այլ քրիստոնէիցս Թավրիժի, զոր սիրով խնդրեալ»· *սկս·* «Եկայք այսաւր որդիք մարդկան»·

Ես Յոհաննէս Տարբերունի,
Որ զսակաւ բանքս երգեցի,
Ոչ զօրաւոր, այլ ըստ կարի,
Դէմ հոռոմաց եւ Փռանգի:

Վերջում·

Յերես անկեալ զձեզ աղաչեմ
Յիշման առնել զիս արժանի,
Զեղբայր Ասլան փառաւք իլի
Եւ զայլ եղբարսդ Թավրիժի:

Ֆռանգների եւ նրանց պատճառով յառաջ եկած հերձուածը Թաւրիզում յառաջ է եկել ՉՀ (= 1321) *թուականին, երբ Բարդուղիմէոս եպիսկոպոսը հաստատուեցաւ Մարաղայում: Այդ թուղթը, Յովհաննէս Տարբերունու ոտանաւորը եւ Գրիգոր երէցի յիշատակարանը ժամանակով եւ տեղով կապուած են իրար հետ, որ Մատթէոս եպիսկոպոսը հարկաւոր է համարել արտագրել տալ իւր ձեռագրի վերջում: Այսպիսով որոշում է, որ Մատթէոսը Թաւրիզի եպիսկոպոսն էր եւ Նչեցին իւր շրջաբերականն ուղարկել այնտեղի հայերին եւ նրանց առաջնորդին ՉՀ թուականին, մօտաւորապէս այն ժամանակները, երբ Օշին Պայլին եւ նորա որդի Հեթումին ուղարկեց իւր միւս թուղթը:*

Ոչ միայն Եսային, այլ եւ նորա աշակերտները աշխատել են այս վտանգաւոր շարժման առաջն առնել: Մխիթար Սասնեցին իւր մի աշխատութեան մէջ նկարագրում է այն վիճակը, որ յառաջ է եկել կաթոլիկ միսիոնարների եւ հայ միարարների գործունէութեամբ, շատ նման Նչեցու թղթի նկարագրած դրութեան: Մխիթար անպայման ծանօթ է շրջաբերականի կարգադրութեան· նա յայտնում է, որ սկզբում Փրանգներին «ընկալաք պատուով իբրեւ զեղբայրս եւ ծառայակիցս ի Քրիստոս»..., *իսկ այդպէս պատուիրել էր, ինչպէս տեսանք Նչեցին,* «այլ դոխա իբրեւ զօձտողս եկեղեցւոյ եւ հակառակորդ ճշմարտութեան եւ իբրեւ զգայլս ծածկեալ ստեւով գառանց, ճեղքեցին զմանս ի մէնջ, դառնալով յառաջնորդէ եւ յեկեղեցւոյ իւրեանց, եւ անդուստ բերանով հայհոյեն զկրօնս Հայաստանեայց»[1]: *Մէջբերուած խօսքերը, դրեթէ, բառացի նոյնանում են Նչեցու շրջաբերական հրահանգների հետ: Իսկ Մխիթարը իւր այս աշխատանքը գրել է ՉՀ թուականին, որով եւ կողմնակի կերպով, բայց հաստատուն մի ցուցում ունինք Նչեցու շրջաբերականի ժամանակի մասին:*

Միարարական շարժումն ունէր եւ իւր դրական կողմերը: Ինչպէս վերեւ յիշուեցաւ, Բարդուղիմէոս եպիսկոպոսին օգնութեան էին եկել եւ մի խումբ լատին կրօնաւորներ, որոնք հաւատափոխութեան քարոզութեան հետ սկսեցին թարգմանութիւններով եւս զբաղուել եւ լատինական միջնադարեան աստուածաբանական գիտութիւնը, թէպէտ եւ յոռի ու անպիտան լեզուով, պատուաստել Հայոց մէջ: Իրաւացի է Բարդուղիմէոս եպիսկոպոսի նկատողութիւնը, որ միարարութեան հակառակորդ հայ վարդապետները կաթոլիկներից ձեռք բերած զէնքերով, պատերազմում էին նրանց դէմ· ուստի եւ բանադրում է այն մարդուն, «որ տայ զքարոզագիրս այս ի ձեռն հակառակաց եւ կամ ի ձեռն սուտ միաբանաց (միաբանողաց?)· *զի փորձեցաք բազում անգամ, որ հակառակ մարդիկ զմեր բանս իւրեանց զէն արարին եւ սրով մեր պատերազմեցան ընդ մեզ եւ ընդ ճշմարտութեանն»: Այս քարոզգիրքը պարսկերէնից թարգմանել է Յոհան Քռնեցին (Յաւել· Բ·* 90, *Ձեռ· էջմ·* № 2203/2185):

Տեսանք, որ այս շարժման հետ կապուած ամենահին թարգմանութիւնը 1321 *թուից՝* «Գիրք մոլուեց· եւ ժ·բանեան հրամնց·» *աշխատութիւնն էր,* «ձեռամբ Ֆրա Պետրոսի, ազգաւ լատին, աշխարհաւ Դարագոնացի, ի կրգէ· սրբոյն Դոմէնիկոսի» (s!), *օգնութեամբ* «ազգաւ հայ» *Յակոբոս վարդապետի*[2]: *Յոհան Երզնկացին* 1322/3 *թուին Ծործորի վանքում թարգմանում է Թովմա Ակուինացու Եօթն Խորհրդոց գիրքը*[3]: *Բարդուղիմէոս եպիսկոպոսի Քարոզգրքի թարգմանութեան մասին յիշատակութիւն եղաւ արդէն: Նորա մի ուրիշ գիրքը՝* «Վեցօրեա գծոց· արարչութեան» *թարգմանութեամբ դարձեալ Յակոբոս վարդապետի* «ի լատին բարբառոյ ի հայ լեզու», *պէտք է նշանակել* 1331 *թուից յետոյ, որովհետեւ* «թարգմանեցաւ սա ի գեղն Քռնայ» *եւ* 1333 *թուից առաջ, երբ մեռաւ Բարդուղիմէոսը*[4]: *Նորա երրորդ գործն է հայերէն թարգմանուած* «Հաւաքումն համառօտ եւ յոյժ օգտակար ի դիալէդէկէն, որ է տրամաբանութիւն· կարգեալ եւ թարգմանել· ձեռամբ Բարդուղիմէոսի Ֆռանկ եպիսկոպոսի եւ տիեզերալոյս վարդապետի»· *սկս·* «Եւ զի խօսելոց եմք ի դիալէքիկայէն[1]) : «Գիրք յաղագս դժոխոց» *եւս թարգմանուած է Քռնեցու եւ Բարդուղիմէոս եպիսկոպոսի ձեռքով*[2]) : *Ֆրա Ջուանի անգլիացին* «ի գեղջէն Սուինճէփորդ, ի կարգէ քրզց․ սրբոյն Դոմինիկոսի» 1337 *թուին վերոյիշեալ Յակոբ վարդապետի օգնութեամբ* «ի վրին․ վանքս Քռնոյ» *թարգմանել է* «Յաղագս հոգոյն, զօրութեանց նորին եւ առաքինութեանց, նաեւ հրշտկց․» : *Յիշատակարանի մէջ, նման բովանդակութեամբ կցուած եւ ուրիշ թարգմանութիւնների, նկարագրուած են Յովհաննէս Քռնեցու մատուցած ծառայութիւնները․* «արդ վերոյասցլ․ վրդպն․ Յոհան եղեւ պնռ․ բզմ․ օգտեն․ եւ ժղվց․ սստ վրդպք․ ի լատինացւոց եւ ի հայոց, տածելով զամենեսեան ըս․ հոգւոյ եւ ըստ մրմնոյ․ եւ թրգմնց․ եւ թրգմնէ․ գիրս բզւմ․ ոգեշահս եւ լւորիչս․ ․ ․ ․ եւ առջնր․դեաց արժնւրցն․ ի հնզնդւի․ գրտրկն․ աթոռոյն Հռոմայ»[3]) : *Նա է վանքի առաջնորդն ու հողաբարձուն* : (Ֆ)*րապօնցի Ֆրա Մնուրի ձեռքով «թվ․ ՉՁԸ»* (= 1339) *թարգմանուել է կարդինալ* «Բօնա Վենդուրէ վասն վարուց սրբոյն Ֆրանցիսկոսի» *գիրքը*[4]) : *Նոյն Յակոբ վարդապետի օգնութեամբ եւ նոյն վանքում* 1341 *թուին*, «ձեռամբ փր․ Պետրոսի ազգաւ լատին եւ աշխարհաւ Արակոնացի» *թարգմանուել է* «գիրքս որ կոչի Ալպերտ, ի լատին բրբոյն․ ի հայս» : *Ինչպէս նախընթացի, նոյնպէս եւ այս գրքի գրիչն է Ֆր․ Դոմինիկոս Սալիթաղեցի, հօր անունը Առաքել եւ մօրը Փոքրմէր : Նոյն գիրքը նրանք թարգմանել են «վերստին»* 1344 *թուին*[5]) : *Մի տարի յետոյ* 1345 *թուին սրանք թարգմանում են* «Գիրք տնօրէնութեն․ Քի․, որ է առաջին հատոր երդ․ մասին երանելոյն Թօմայի ի լատին բարբառոյն ի հայս»[6]) : *Սրանց հետ թարգմանւում են կամ գրւում մի շարք աշխատութիւններ եւս*[7]) :

---

[1] Ձեռ· էջմ· № 732: Տես մեր Մխիթար Սասնեցի· վաղարշ· 1889· 19—24: Նաեւ Արարատ· 1899· 158:

[2] Պետրոս Արագոնացու եւ Յակոբոս Քռնեցու աշխատութիւնների եւ թարգմանութիւնների մի մեծ ցանկ տես Ալիշան· Սիսական· 385:

[3] Թարգմանութիւնից երկու տարի յետոյ՝ Գլաձորցիք ունին արդէն սորա ընդօրինակութիւնը (Ձեռ· № 505/560 (կար· 493)· Յաւել· Բ· 84):

[4] Ձեռ· էջմ· № 4064· № 280 Գ·Յ·: Այս գործն էլ անմիջապէս ընդօրինակել են Գլաձորցիք Եփրեմի գրչութեամբ, որից արտագրել է ապա Գրիգոր Տաթեւացին իւր ուսուցիչ Յոհան Որոտնեցու համար (տես Ձեռ· էջմ· 1972/1659):

Գրական եւ քարոզչական այս գործունէութիւնը լատինների կողմից շարունակւում է եւ Նչեցու մահուանից յետոյ, բայց մեր ներկայ աշխատութեան շըրջանակից դուրս է կանգ առնել դորա վերայ : Մեր նպատակն էր միայն պարզել, թէ ինչպէս բազմաշխատ վաստակաւորի կեանքի վերջին տասնամեակը կլանուած էր այս պրոպագանդայի դէմ մաքառելով եւ նորա աշխատութիւններն էլ կապուած այս երեւոյթի հետ : Զլինէր Նչեցին իւր դպրոցով, շատ աւելի մեծ չափով վտանգուած կը լինէր Հայոց Եկեղեցու անկախութեան խնդիրը : Նչեցու գործը շարունակեց նորա աշակերտը՝ Յոհան Որոտնեցին, Տաթեւի դպրոցի մեծ հիմնադիրը Օրբէլեանների իշխանութեան մէջ, Գրիգոր Տաթեւացու հետ :

Նչեցու գործունէութեան երրորդ կողմը նորա գիտական–գրական աշխատութիւնն էր, հիմնուած ամբողջապէս նախնեաց ինքնուրոյն եւ թարգմանական մատենագրութեան վերայ : Օտար աղբիւրներ չի գործածում, թէեւ ծանօթ պիտի լինէր յունաց լեզուին : Նա հաւաքող էր եւ ժրաջան հաւաքող : Ինքնուրոյն ստեղծագործութեան եւ մտածողութեան մեծ կարողութիւն չի նկատւում նորա երկերի մէջ, բայց զարմանալի է աղբիւրներից օգտուելու ընդունակութիւնը : Այլ եւ այլ աղբիւրներից առնուած կտորները այնպէս է կապում, միացնում իրար հետ, որ ամբողջական պատկեր է ստացւում : Երեւի նորա հմտութիւնն էլ այդ էր, որ ժամանակակիցների աչքում հեղինակաւոր գիտնականի հռչակ էր վայելում : Նչեցու ամենամեծ գործը Եզեկիէլի մեկնութիւնն է, գրուած 1302 *թուին, Ստեփանոս Օրբէլեանի խնդիրքով, ինչպէս պարզւում է գրքի սկզբում եւ վերջում եղած Ընծայականից*[8]) : *Նախաբան Ընծայականի մէջ հեղինակն ակնարկում է նախ Օրբէլեանի մատենագրական աշխատութիւնների մասին․* «Ի վերջին ժամանակիս այնքան գերազանցեալ ցուցար յիմաստս գիտութե․, մինչ զի առաջնովքն ոչ շատացար ճոխանալ հանճարով, այլ եւ վերջնովքս հանդիսանաս պայծառանալ երկովք, որով եւ զմեզ գրաւեցեր հաւատով եւ սիրով» : *Առաջին երկերը Օրբէլեանի պատմութիւնն է եւ Ողբը ի Կաթուղիկէն, իսկ վերջինը Հակաճառութիւնը : Հեղինակն անճողոպրելի է համարում իրեն եղած առաջարկութիւնից․* «Վ,ս․ զի դու կրկին բարգաւաճիս ճոխութբ․, ընդ հոգեւորին զմարմնականն ունիս լծակցեալ, որով եւ զմեզ ոչ միայն սիրով գրաւեցեր, զոր ունիս առ մեզ անբաղդատելի, այլ եւ իշխանական հրամանաւդ հնազանդեցուցեր»: Հեղինակը մոռանալով իւր տկարութիւնը սկսում է աստուածաբան Եզեկիէլ մարգարէի մեկնութիւնը, ոչ թէ նուրբ «եւ ընդ անկոխ ճանապարհս գնալով» կամ նոր ջրհորներ փորելով, այլ սուրբ հայրերի հետեւողութեամբ նրանց խցուած եւ ծածկուած գանձերը բանալով, «է զի եւ զտարածեալ եւ զայլուր գտեալս բանս նոցա հաւաքեալ ի մի»: Նա լրացնում է միայն «ի մերոց ներածուեց·», ինչ որ նրանց կողմից անուշադիր է թողնուած: Վերջաբանի մէջ յայտնում է, որ նա գրել է «ի թուիս հայկազեան տոհմիս տովմարի ըս· հոլովման ամաց եօթն հարիւր յիսուն եւ երկուց, ի դառն եւ անբարի ժմկիս·, որ տատանեալ ծփիմք ամենաներհակ արկածիւք ի ներքուստ եւ արտաքուստ»: Այստեղ Նչեցին յիշատակել է խնդրում «նաեւ զաշխատասէր եւ զառատամիտ վարդապետն Յովհաննէս, զծնեալ որդեակն ի Քս·, ի ձեռն որոյ սրբագրութի· տառիս եդեւ»: Յետին գրիչների կողմից այս յիշատակութիւնը վերագրուել է Որոտնեցուն, ինչպէս № 797, 354բ· (այս մասը նորոգուած)· բայց այդ սխալ է· 1303 թ·, երբ գրուեց այս վերջաբանութիւնը, Որոտնեցին առ առաւելն նորածին մանուկ կարող էր լինել: Այս Յովհաննէս վարդապետը կամ Արճիշեցին է, որ այդ ժամանակ Գլաձորումն էր, ինչպէս տեսանք, կամ մի ուրիշ նոյնանուն գիտական[1]), զուգէ եւ Հերմոնի վանքինը, որ ըստ Ալիշանի ընդօրինակել է «զգիրս ինչ Նիւսացւոյն առ ոտս մեծ վարդապետին Եսայեայ, առաջնորդի հռչակաւորն Գայլեձորոյ»[2]):

---

[1] Նոյն Եփրեմի գրչութեամբ պատրաստուած «*Վերլուծական Արիստոտէլի վս․ հաւաքման*» օրինակից արտագրել է Տաթեւացին Որոտնեցու համար (մեր սեպհական ձեռագիր, որ այժմ յանձնուած է մատենադարանին, առանց համարի դեռ եւս) :

[2] Ձեռ․ էջմ․ № 370 Նժ․ :

[3] Ձեռ․ էջմ․ № 94/3276, 88բ․ : Տես եւ № 370 Նժ․ :

[4] Ձեռ․ էջմ․ № 1766/1736, 3ա․, 142ա․, 142բ․ :

[5] Ձեռ․ էջմ․ № 115․ Յիշատակարանների վերջում աւելացրած է «*Զպատուական եւ զմենամարտիկ բարունին Մգրէ․, որ բզմ․ աշխատեցաւ ի վր․ մեր, յաղօթս յիշեցէք*» : Այս Մարգարէ վարդապետը Օձոպեցին է, Քռնեցու հետ միաբարութեան յարողներից մէկը, որ կազմել էր նաեւ Ներսէս Տարօնեցու Աստուածաշունչը՝ «յաւուրս խ․» : Նոյնը պիտի լինի մի տուփի մէջ կազմած Բարդուղիմէոսի Քարոզգիրքն ու «*Գիրք դժոխոց*»ը № 370 Նժ․ ստացողն եւ ուղղողը, որ իրեն «սպասաւոր բանի» է անուանում :

[6] Ձեռ․ էջմ․ № 122 :

[7] Ալիշան․ Սիսական․ 385 : Կոնիբիր, Ցուցակ, 158 :

[8] Ձեռ․ էջմ․ № 1265/1275–ի մէջ հետեւեալ վերնագիրն ունի․ «*Ի խնդրոյ տն․ Ստեփանոսի Սիւնեաց նահանգին վերադիտողի արարեալ հաւաքումն մեկնուե․ ած․արան մարգարէութեն․ Եզեկիէլի երջանիկ վարդապետին Եսայեա Հայկազան տոհմի*» : Տարբեր է վերնագիրը № 1266/1276–ի մէջ․ «*Գիրք մեկնուեն․ Եզեկիէլի մարգարէին արարեալ մեծի վրդ․պին Եսայեայ, որ էր ի Նիճ գաւառէն եւ էր վրժպտ․ մեծի Յօհաննու Որոտնեցւոյն ի թուին ՉԾ եւ Բ*» : Հասկանալի է, որ այս երկրորդ վերնագիրը նոյնութեամբ հեղինակինը չէ, այլ ուշ ժամանակի :

Գրքի վերջում Եսային գրել է իւր երկրորդ Ընծայականը, ուղղուած դարձեալ Ստեփանոս Օրբէլեանին, ուր յայտնում է, թէ իւր գործը վերջացրել է եւ նուիրում է «զդա փոխարէն անվճար քո երախտեացն, որ առ իս»: Նա յոյս ունի, թէ «ի ձեռն նուազ կայծականցս զմեծագոյ հրդեհն ի ձեզ վառեցից եւ կատարել· իմաստս ի կտրելոցդ· առ մեզ փայլեսցէ»: Օրբէլեանը պատասխանում է այս Ընծայականին մի ճոռոմ եւ ուռուցիկ շնորհակալութեամբ: Նա Նչեցուն անուանում է «յսական· համալսարանացն պետ եւ ձիր իմաստից, պուէտ պարուպօղիմոն (կարդալ՝ պարուպօղեմոն, աղաւաղած περι πατητικος = պերի պատ(եա)իկոն· Ն· Ա·) ճեմարանին ճեմեալ, ճոխապետ առ բոցեղէն ասպարիզաւն, ուր յաճախեն ի գիտութի· եւ հեղմունք իմաստուե·, ո՛վ դպրապետ անճառ դպրոցացն եւ համակ դիւան անհասական խորոցն»: Ողջունի հետ յայտնում է, թէ հասել է իրեն «թուղթ ձեր բերկրալից ցնծութ·, հանդերձ երկնառաք պարգեւօք», որով կատարուած է իւր շատ տարիներից ի վեր ունեցած իղձը, որի փոխարէնը երկրաւոր դոյքով վճարել կարող չէ: Ապա յայտնում է, որ այդ գործով գրաւել է իրեն «անեզրական սիրով ի կեանս եւ ի մահ», որի համար եւ շնորհակալութիւն է յայտնում Աստծուն եւ հեղինակին, եւ խոստանում է ընծայ մատուցանել այն «մաւրն քո լուսոյ սբյ· կթղկէի·» եւ դնել «յարկեղս նորին», այսինքն մատենադարանում:

Նչեցու այս գործը նշանաւոր է ոչ այնչափ իւր նորութիւններով, որչափ աշխատութեան եղանակով եւ առատ աղբիւրների օգտագործմամբ: Նաեւ ի նկատի է ունեցել եւ օգտուել է յոյն եւ ասորի այնպիսի աղբիւրների թարգմանութիւններից, որոնց բնագիրները մինչեւ այժմ կորած են եւ նորերս միայն գտնուած նրանց հայերէն թարգմանութիւնները մեր ձեռքով[3]), այն է Յոհան Ոսկեբերանի, Եփրեմ Ասորու եւ Կիւրեղ Աղեքսանդրացու Եզեկիէլի մեկնութիւնները, Որոգինէսի «Ի տեսութիւն Եզեկիէլի»· Նաեւ մի հայ հեղինակից, որի ով լինելը ստուգել չենք կարողացել: Օգտւում է երբեմն եւ Աստուածաբանի, Դիոնեսիոս Արիսպագացու, Արիստոտէլի, Փիլոն Եբրայեցու, Սուտ Կալիսթենէսի հայերէն թարգմանութիւններից եւ հայ հեղինակների՝ Դաւիթ փիլիսոփայի Սահմանաց գրքից, Վանականի մի հատուածից՝ Եզեկիէլի կառքի կամ աթոռի հետ կապուած, Գոշ Մխիթարի Երեմիայի մեկնութիւնից, բայց յատկապէս Ստեփանոս Սիւնեցու Եզեկիէլի մեկնութիւնից[4]):

Նչեցու մեկնութեան ուսումնասիրութիւնը եւ համեմատութիւնը աղբիւրների հետ ցոյց է տալիս, թէ արդարե՛ւ, իւր գործը կատարել է նախաբանի մէջ յայտնած ցուցումների համեմատ: Այսինքն իւրաքանչիւր տան կամ հատուածի համապատասխան մասում օգտուելով վերոյիշեալ աղբիւրներից, գլխաւորապէս Ոսկեբերանից, Եփրեմ Ասորուց, Կիւրեղ Աղեքսանդրացուց, Ստեփանոս Սիւնեցուց եւ յիշուած անյայտ հեղինակից, մօզայիկի նման իրար կցելով բառացի հատուածներ, կամ քաղուածօրէն, նրանց իմաստը, երբեմն էլ նրանց բառամթերքը գործադրելով: Նչեցու համար աւելի մեծ հեղինակութիւն է Կիւրեղ Աղեքսանդրացին, որի կողմն է հակւում միւս աղբիւրներին տարակարծիք եղած ժամանակ, քիչ անգամ եւ Ստեփանոս Սիւնեցու: Կան տեղեր, ուր նա օգտւում է միանգամայն իւր չորս գլխաւոր աղբիւրներից, երբեմն՝ երեքից կամ երկուսից (Կիւրեղից եւ Ստեփանոսից, Ոսկեբերանից

---

[1]) Ձեռ· էջմ· № 1265/1275 վերջաբանութիւնը համառօտ է եւ տարբեր թուականով· «Ի թվ· հայոց ՉՀԱ (= 1322) Յունիսի ի մէկն»· մեզ թւում է, թէ այդ փոփոխութիւնը կատարուած է Ասիլ դպիր գրչի ձեռքով, որ վերոյիշեալ Յովհաննէսին «վարդապետ մեր» է անուանում:

[2]) Սիսական· 125:

[3]) Արարատ, 1917, 193: Ոսկեբերանի եւ Կիւրեղ Աղեքսանդրացու այս երկերի ոչ միայն բնագրերն են կորած, այլ եւ յայտնի չեն որեւէ թարգմանութեամբ: Մեր մէջ էլ միակ ձեռագիրն է, unicum, էջմ· № 1298 Նժ·, ուր գտնւում են այդ թարգմանութիւնները:

[4]) Վերջին երեք գործերն էլ տպագրութեամբ դեռ եւս յայտնի չեն բանասիրութեան:

եւ Կիւրեղից կամ Ոսկեբերանից եւ Ստեփանոսից) նայելով, թէ համապատասխան մասերում իւր աղբիւրները մեկնութիւններ ունի՞ն, թէ ոչ: Օգտուելու այս եղանակը շարունակում է գործի ամբողջ ընթացքում, բնականաբար համառօտաբան դառնալով աշխատութեան վերջերում, մասամբ աղբիւրների պակասութեան եւ մասամբ մտքերի կրկնութեան պատճառով: Նչեցու մեկնութիւնը ծայրէ ծայր համեմատել ենք իւր աղբիւրների հետ, խղճով գաղափար կազմելու համար նրա աշխատութեան մասին, եւ կարող ենք ասել, որ շատ չնչին մասի աղբիւրներ մեզ անյայտ են մնացել: Ոչ միայն երես առ երես, այլ եւ փոքր հատուածներով կարող էինք ցոյց տալ աղբիւրների տեղերը եւ միանգամ ընդ միշտ պարզել նորա դրական առնչութեան հարցը, բայց ներկայ պայմաններում այդ կատարել անկարելի է, աղբիւրների եւ Նչեցու մեկնութեան անտիպ լինելու պատճառով[1]*): Մենք աւելորդ ենք համարում նոյնիսկ օրինակներով տեսանելի անել այդ ամէնը, խուսափելով ստուարացնելուց՝ առանց այդ էլ շատ ընդարձակուած եւ մանրամասնուած գործը, յուսալով, թէ կը յաջողուի հրատարակել վերոյիշեալ հայրերի նորագիւտ աշխատութիւնները, ուր առիթ կ'ունենանք համեմատութեան առնել Նչեցու աշխատութիւնը:*

Գործին անտեղեակ ընթերցողը կարող է զարմանալ Նչեցու Ս. Գրքի զանազան թարգմանութիւնների յիշատակութեամբ: Նա յաճախ վկայութիւններ է բերում Ակիւղասի, Սիմաքոսի, Թէոդիտոնի, Եօթանասնից թարգմանութիւններից, ասորական Պեշիտոյից, նոյնիսկ եբրայական բնագրից, հայերէն թարգմանութեամբ, ճշդելու եւ պարզելու համար մեկնաբանելիք հատուածը, բայց աղբիւրների համեմատութիւնը ցոյց է տալիս, որ օգտուել է ոչ Որոգինէսի "Εκαπλα*-ից, որ մի զգայացունց նորութիւն կը լինէր գիտութեան համար, այլ իւր անմիջական աղբիւրներից, մեծ մասով Ոսկեբերանից, մասամբ եւ Կիւրեղ Աղեքսանդրացուց, Պեշիտոյի համար Եփրեմից, իսկ եբրայականի համար Ստեփանոս Սիւնեցուց, որ իւր հերթին մի ուրիշ աղբիւր է ունեցել հաւանօրէն*[2]*): Յիշում է երբեմն եւ թանկագին աղբիւրներ, որոնք կորած են մինչեւ այժմ գիտութեան համար, ինչպէս Որոգինէսի, Հիպոլիտի եւ Պոլիխրոնիոսի մեկնութիւնները Եզեկիէլի, համաձայնում է կամ հակաճառում, բայց այստեղ եւս համեմատութիւնը պարզում է, որ այդ հատուածներն իրենց հեղինակների անուններով առել է Ստեփանոս Սիւնեցուց*[3]*): Ընդհակառակն, երբեմն լռում է այնպիսի աղբիւրների մասին, որ անպայման ձեռքի տակ է ունեցել, որոնց մտքերն ու բառամթերքը, նաեւ բառացի խօսքերը գործածել է իւր մեկնութեան մէջ, օրինակ Որոգինէսի «Ի տեսութիւն Եզեկիէլի» հատուածը*[4]*), միանգամայն տարբեր նոյն հեղինակի քիչ վերեւ յիշուած մեկնութիւնից կամ թանկագին քարերի խորհր-*

---

1) Աղբիւրներից օգտուելու այս եղանակը յատուկ էր միջնադարեան հայ դպրոցների ղեկավարներին, որոնց աշակերտն էր եւ Նչեցին: Այսպէս, վանականը նոյն ձեւով օգտւում է նախնի հեղինակներից եւ թարգմանութիւններից իւր Յովբի մեկնութեան մէջ. Վարդան իւր Հնգամատեանի, Երգ Երգոցի եւ Դանիէլի մեկնութիւնների մէջ: Նչեցուց յետոյ եկող հեղինակները՝ Որոտնեցին եւ Տաթեւացին՝ հաւաքող են հանդիսանում շատ աւելի խեղն մտքով: Նման երեւոյթ նկատւում է եւ բիւզանդական մեկնիչների մէջ. օր. Փոտի մեկնաբանական գրուածքների. Gesch. der Byzant. Litt. Krumbacher. 1897, 75:

2) Այս ձեւով Հին Կտակարանի թարգմանութիւնից օգտւում են մեր եկեղեցու հայրերից եւ ուրիշները: Օրինակ Վարդան իւր Արարածոց, Սաղմոսների մեկնութիւնների մէջ: Այդպիսի վկայութիւնների հաւաքումն ու համեմատութիւնը հայ թարգմանութեան բնագրի հետ, կարող էր գիտութեան համար արժէք ունենալ, որ Հիպոլիտի համար մասամբ կատարել է Մառը:

3) Օրիգինէս կամ Որոգինէս հին հայերէնի տառադարձութեամբ, ծնուած է 185 թուին Ք. Յ. եւ վախճանուած 254 թուին: Աշակերտել է Աղեքսանդրիայի քրիստոնէական դպրոցի նշանաւոր ուսուցիչներին՝ Պանտէնուսին եւ Կղեմէս Աղեքսանդրացուն. ապա փիլիսոփայութեան մէջ Ամոնիուս Սակկասին: Եղել է Կղեմէսից յետոյ Աղեքսանդրիայի դպրոցի տեսուչը եւ իւր բազմաթիւ գրուածքներով ժամանակի մեծագոյն գիտնականի հռչակը վայելել: Նորա աշխատութիւններից շատերը թարգմանուած էին եւ հայերէն (տե՛ս Արարատ, 1917, 196), որոնց մէջ նաեւ Եզեկիէլի մեկնութիւնը, որից վկայութիւն է բերում Սիւնեցին հեղինակի անուան յիշատակութեամբ: Եզեկիէլի մեկնութիւնը բաղկացած էր 25 գրքից, որից միայն մի փոքրիկ հատուած է հասել յունարէն (Harnack. Gesch. der altchrist. Litt. 1893, 364):

Հիպոլիտ Հռոմայեցին երէց եւ հակաթոռ Կալիստոսի (218—222), նշանաւոր մատենագիր Բ. դարի վերջում եւ Գ.-ի առաջին քառորդին, բազմաթիւ կարեւոր գրուածքներ ունի, շատերը կորած կամ հատուածներով միայն հասած: Նորա Εἰσμεση τοῦ Ἰεζεκιηλ ամբողջական աշխատութիւն չէր Եզեկիէլին նուիրուած. (Bardenhever Gesch. der eltchrist. Litt. Bd. 2. եր. 532). մատնանիշ է անում նորա մի ուրիշ աշխատութիւնը (Wrigth Բրիտ. Թանգ. Ցուց. եր. 102. Cod. Brit. Mus. Syr. 862), տանարի մասին Harnack. Gesch. der altchrist. Litt. 605, 639. Die Chronologie 2. Bd. 1904, 248: Ստեփանոս Սիւնեցին այս երկուսից մէկն ու մէկը, հաւանօրէն, ի նկատի է ունեցել:

Պոլիխրոնիոս Ապամէացին Թէոդոր Մոպսուեստացու եղբայրն էր, որի մասին շատ համառօտ, բայց գովասանքով է խօսում Թէոդորէտը իւր պատմութեան մէջ (Hist. eccl. 5, 39): Նա մեռած պիտի լինի 428—431 թ. թ.: Գրել է Հին Կտակարանի շատ գրքերի մեկնութիւններ, որոնցից միայն հատուածներ են հասել. յիշւում են յատկապէս Դանիէլի եւ Եզեկիէլի մեկնութիւնները. սրանց վրայ պէտք է աւելացնել եւ Յովբի մեկնութիւնը. (Bardenhever. Bd. III. 1912, 323):

4) Ձեռ. էջմ. N° 1650/1879, 136բ., Արարատ, 1895:

զաւոր նշանակութեան մեկնութիւնը (Եզ· ԻԸ· 13), որ առել է Վարդանի արարածոց մեկնութիւնից, իսկ Վարդանը համառօտել է Եպիփանից[1]): Բայց նա ձեռքի տակ է ունեցել քարերի մասին եւ ուրիշ աղբիւրներ Եպիփանից տարբեր բացատրութիւններով· օրինակ շափիղայի մասին Նչեցին ունի էլի երեք բացատրութիւն, որոնցից մէկը նոյնանում է Անդրէաս Կապադովկացու Յովհաննու Յայտնութեան (Յայտ· ԻԱ· 19—20) մեկնութեան հետ, Լամբրոնացու թարգմանութեամբ[2]):

Նչեցի Ձեռ· էջմ· № 797 Նժ· 199բ· «Այս քար նման է երկնային աւդոյն, զոր ասեն գոլ կապուտակ գունով, որպէս զլազուարդ» = Անդր· Յովհ· Մեկն· Ձեռ· էջմ· № 569· 239բ·— 240ա·:

Բայց Անդրէասի մեկնութեան թարգմանութեան մէջ եւս, ընդհանուր առմամբ, քարերի բացատրութեան աղբիւրը Եպիփանն է ցոյց տուած[3]), եւ համեմատութիւնն էլ հաստատում է այդ իրողութիւնը: Բայց մէջ բերուած կտորը չկարողացանք գտնել Եպիփանի աշխատութեան հայերէն թարգմանութեան մէջ, եթէ մեր ձեռքի տակ եղած միակ ձեռագիրը աղճատուած չէ կամ յունարէն քաղուածքի թարգմանութիւնը չէ: Յամենայն դէպս, հաւանական է Նչեցու տարբեր աղբիւրներից օգտուելու խնդիրը[4]), քանի որ իրօք կային թանկագին քարերի մասին եւ այլ աշխատութիւններ: Դաւթի «Սահմանք իմաստասիրութեան» երկից կամ Արիստոտէլի թարգմանութիւններից օգտւում է մի քանի տեղ, մի անգամ միայն յիշելով նրանց անունը: Օգտւում է քիչ չափով նաեւ Գոշ Մխիթարի Երեմիայի մեկնութիւնից, ինչպէս եւ Վարդանի փոքրիկ հատուածից Եզեկիէլի չորեքկերպեանների մեկնութեան նուիրուած[5]): Նչեցու այս աշխատութեան մէջ, բացի գիտական–մատենագրական կէտերից, ցրուած են եւ մշակոյթի զանազան խնդիրների վերաբերեալ նկատողութիւններ եւ տեղեկութիւններ, որոնք օգտակար կարող են լինել համապատասխան ճիւղի համար, օրինակ ճարտարապետական տերմինների, զէնքի եւ ամրոցների, զգեստի, ժողովրդի հաւատալիքի եւայլն:

Նորա երկրորդ մեծ աշխատութիւնը Քերականութիւնն է, նոյնպէս քաղուածք նախնեաց նման գործերից: Նա ինքը յաճախ յիշում է Դաւթի անունը եւ վկայութիւններ բերում: Այսպէս, ներածութեան մէջ, ուր բացատրում է քերականութեան գիտն ու նշանակութիւնը· «այլ զայս ուսանիմք ի նախերգանէ եռամեծին Դաւթի փիլիսոփայի, որ ասէ այսպ· «Յերկու իմն պատճառաց...» եւայլն[6]): Ուրիշ տեղերում էլ ընթերցողին մատնացոյց է անում իրենից առաջ աւելի ընդարձակ մեկնիչների վերայ· օր· «Յաղագս բայի» գլխի վերջում· «արդ ի մեկնիչն այլ յերկար ունի բանս, բայց մեք ի կարճելն ջան եդաք»: «Յաղագս յաւդի» գլխի վերջում 120բ· «իսկ դու, ո՛վ ուսումնասէր, թէ կամիս ի լիսն վայելել, ընդարձակեալ է ի կատարեալ մեկնութիւն սրբոցն»· աւելի պարզ· «Յաղագս մակբայի» վերջում 129բ· «Ա՛րդ, որ ինչ յղգս· մակբայիս կարճ եւ համառօտ տեսութիւք· էին, գրեցաւ, լծեալ ընդ բնաբանին (Թրակացու քերականութիւնն է), իսկ դու այլ ընդարձակ ունիս տենչումն, ընդարձակեալ է առաջի քո ոմանց մեկնողաց առատ եւ լայն քննութբ·, միայն զմեզ անպարսաւ թողցես»· կամ 142ա· «Այսոքիկ են խրատք վերծանութե· զոր յղգս· տասն առոգանութենց· փոքր ի շատէ գրեցաք· թերեւս զարթուցից զուսումնասէրսն ի տենչումն բաղձանաց արուեստիս, զոր կարի նուազեալ տեսանեմք յոքունս: Վս· որոյ զերրորդ մասն զոր յոլորակին ասացաւ, դձլ· աստ երկրորդեցաք, զի հաւատարիմն հաստատեսցի ի ձեզ վերստին յիշմամբս, իսկ մեզ մասն բարեաց ընդ աշխատաւէրսդ լիցի»: Այսպիսի նկատողութիւններ կան եւ ուրիշ մասերի նկատմամբ:

---

[1] Եպիփան Սալամինացին կամ Կիպրացին ծնուած է Դ· դարի առաջին քառորդին եւ վախճանուած 403 թուին: Եգիպտոսում իւր ուսումը աւարտելուց յետոյ՝ աբեղայ է ձեռնադրւում Հրէաստանի Էլէյթերոպոլիս քաղաքում, իսկ 367 թ· Սալամինայի եպիսկոպոս ընտրւում: Նուիրապետական եռանդուն գործունէութեան հետ, ընդարձակ է նաեւ գրականը, որպէս բազմահմուտ եւ շատ լեզուների տիրապետող: Նա ներկայացուցիչն է ժամանակի աւանդական վարդապետութեան: Նորա երկերից շատերն են հայերէն թարգմանուած, բայց ձեռագրական վիճակի մէջ դեռ եւս, բացառութեամբ «Ընդդէմ հերձուածողաց» տետրակի, որ նորա նշանաւոր Πανάριον երկի ցանկն է· հրատարակել է Գալուստ Տէր Մկրտչեան, Արարատ:

Չի տպագրուած նաեւ նորա Περὶ των ιβ΄ λιθον, որպէս բացատրութիւն Ել· ԻԸ· 17—20 եւ ԼԹ· 10—14 համարների, որի յունարէնը քաղուածօրէն է միայն հասել, համեմատաբար լրիւ լատինական թարգմանութիւնը, բայց այն էլ վերջում եղծուած· Bardenhever. Gesch. der altchrist. Litt. III. 1912, 293: Վերջին աշխատութեան մասին նաեւ K. P. Patkanov, Drogotsenyi Kamni, 1879, S. P.:

[2] Լամբրոնացին այս աշխատութիւնը թարգմանել է 1179 թուին· Ձեռ· էջմ· Գց· № 187, 344ա·: Տպագրուած է թարգմանութեան յիշատակարանը Արարատ, 1900, եր· 211, Տաշեան, Մայր ցուց· 283: Ալիշան· Հայապատում· 427:

[3] Ձեռ· էջմ· № 569 Նժ· 240բ· «Այս ի սրբոյն Եպիփանէ վա· քարանցս ասացեալ էր, զոր վն· նահապետացն իլի· յարմարեալ»:

[4] Վանականը իւր Յովբի մեկնութեան մէջ, № 778 Նժ·, 157ա· օգտուել է նոյնպէս Եպիփանից, «Վանի ակն, որ գտանի ի Հնդիկս, ի միջին այլ ունի չարժուն· զայն բերեալ ի բոյնն (անգղ), դնէ ընդ իւր· եւ ի չարժել ականն ի մէջ Վանակին (Ձեռագիրը՝ վանականին), ծնանի անգղ, անդուստ յղացեալ»· բայց նա ունի այնպիսի բացատրութիւն, որ պակասում է Եպիփանի մէջ, 79բ·: Տե՛ս եւ N. Marr, Sbornik Pritcht Vardana, 1889, 425: Դաւրիժեցի, Վաղարշապատ, 1896, 586 եւ շար·:

[5] Գոշ Մխիթարի մեկնութիւնը № 373 Նժ· համեմատել ենք Նչեցու մեկնութեան № 797-ի հետ: Նչեցին օգտւում է աւելի իմաստից, քան բառացի, բայց ակներեւ է կախումը որոշ տեղերում: Վարդանի հատուածը Կար· ցուց· № 1404:

[6] N. Adonz, Dionisy Trakyisky i Armyanskié Tolkovateli. Petrograd. 1915. 79:

Նչեցին ծանօթ է յունարէնին 41ա· յոյները հայերից փոխ են առել մաղուն-մածուն եւ կոլա-կապայ, իսկ «մեք ի նոցանէ զփակեղն (φάχελλος) և զկաղամար, զոր կոչեն կալամառ՝ որ է աման գրչի» (καλαμάριον), որ առել է Գրիգոր Մագիստրոսից[1]: Բայց այստեղ եւ Արիսպագացու մեկնութեան մէջ յունական տառերով է նշանակում ստորաբաժանումները, իսկ քերականութեան մէջ խօսում H տառի գծերի մասին եւ գրում տառը· բայց չենք կարծում, թէ նորա հմտութիւնը մեծ էր բնագիրներից օգտուելու չափ, թէեւ նորա ուսուցիչ Ներսէս Մշեցին լաւ ծանօթ էր յունարէնին եւ նրանց ժամերգութեան:

Նչեցին իւր քերականութեան համար օգտւում է նախընթաց մեկնիչներից ոչ անմիջապէս, այլ Յովհաննէս Երզնկացուց· բայց մինչդեռ սա լուսանքներում ցոյց է տալիս իւր աղբիւրները, Նչեցին հետեւում է նոյն կարգին, հատուածներ կապում իրար կրճատումներով կամ փոքրիկ, բացատրական յաւելումներով, մեկնիչների մտքի համեմատ, բայց առանց նրանց անունը յիշելու: Մեկնիչներից, դուցէ, ի նկատի է ունեցել միայն Դաւթին, որի անունը յիշուած տեսանք նորա կողմից, բայց այդ էլ օգտւում է ոչ անկախաբար, այլ նոյն խօսքերով եւ չարայարութեամբ, ինչ որ նկատում ենք Երզնկացու մէջ: Երկու հեղինակներից անկասկած առաջինը Երզնկացին է, որ թէեւ կապ է պահել Գլաձորի դպրոցի եւ Նչեցու հետ, բայց Վարդանի աշակերտն էր: Բացի դորանից, Երզնկացին իւր յիշատակարանի մէջ պարզում է իւր աշխատութեան ծագման պատմութիւնը, Գրիգոր Մագիստրոսի եւ զանազան մեկնիչների գիւտը, նրանցից օգտուելու հանգամանքները· մինչդեռ Եսային հետեւում է նոյն դասաւորութեան եւ մտքերի ընթացքին, առանց յիշելու աղբիւրները: Երզնկացին իւր քերականութիւնը դասախօսել է ՉԼ (= 1281) թուին Կիլիկիայում Յակոբ կաթուղիկոսի խնդիրքով, իսկ այդ թուականին Եսային դեռ եւս անկախ ղեկավար չէր Գլաձորի դպրոցի, այլ Ներսէսի աշակերտ եւ նորա ձեռքի տակ աշխատող: Առաքել Սիւնեցին էլ, ինչպէս կը տեսնէ ընթերցողը ներքեւի ծանօթութեան մէջ, վկայում է Յովհաննէս Երզնկացու առաջնութեան մասին[2]: Աւելորդ ենք համարում երկու հեղինակների կապը պարզելու համար համեմատութեան օրինակներ բերել· այդ աղերսը նկատելի է գործի սկզբից մինչեւ վերջ:

Ինչպէս նախընթացները, այնպէս եւ Նչեցու երրորդ գործը Դիոնեսիոս Արիսպագացու Յաղագս քահանայութեան Լուծմունքը գրուած էր դպրոցական նպատակների համար: Մենք յիշատակել ենք արդէն այս երկի սկզբնագրի մասին Գլաձորի գրչութեան արգիւնքները թուարկելիս: Լուծմունքը շատ համառօտ է, բառերի եւ որոշ մտքերի լուսաբանութեան հետ կապուած, իւր իսկ խօսքերով «ի տեղիս տեղիս դժուարալոյծ բանիցն գրեցի լուծմունս»[3]:

Նչեցու աշխատութիւնների մի տեսակն է նորա քարոզները, ոչ բառի սովորական իմաստով, այլ մեկնաբանական-փիլիսոփայական ոճով գրութիւններ այս կամ այն խնդրի լուսաբանութեան համար: Դոցանից մէկն է, «Մեծ հռետորին Հայոց Եսայեայ ի բանն որ ասէ· «Զոր եդ Ած յկղցոջ· այս են· նախ զառաքեալս եւ որ ի կարգի»· սկս· «Զածախնսն ճառել զբան եւ զգծս· յԱծ վստահանալ պարտ է»[4]: Իւր ճառի նիւթը համառօտ որոշելուց յետոյ՝ հին յոյների նման դիմում է Աստծուն· «տուր ինձ բան ի քոին իմաստութենէդ, բպ· (որպէս)զի իմանալ կարացից պտշճպ· եւ ասել գիտուք· զասացուածս»: Տեսական-փիլիսոփայական մասերի համար նա բառացի օգտւում է Արիստոտէլի եւ Արիսպագացու հայ թարգմանութիւններից, մասամբ Դաւթի Սահմանաց գրքից եւ նրանց համեմատ բացատրում խնդիրները: Նախ սահմանում է Աստուծոյ գործը իւր ստորաբաժանումներով՝ արարչական, նախախնամական, օրէնսդրական եւ դիտողական, անփոփոխ եւ անկարօտ նիւթի· դորա հակառակ մարդկային եւ հրեշտակային կամքն ու ներգործութիւնը փոփոխական, բայց ոչ ճակատագրական, այլ անձնիշխան, ուստի եւ գովելի կամ պարսաւելի: Տիեզերքը եռաշրջան կամ եռայարկ է՝ վերինը երկինք, միջինը բնութիւն եւ ստորինը երկիր[5]· մարդու մեղանչականութեան հանդէպ «բանն Այ·» «մրմին զգենու», որպէսզի «նոր երկինք» եւ «նոր մարդ» ստեղծէ, որ եկեղեցին է· ըստ Դիոնեսիոս Արիսպագացու՝ «երկինք ի յերկր է տնր· սբ·»: Երկնքի, Աստուծոյ աթոռի եւ հրեշտակների նմանութեամբ բացատրում է եկեղեցու ճարտարապետական շէնքի բաժանումներն ու պաշտօնէութեան աստիճանաւորութիւնները: Երկրաւոր եկեղեցին կարգաւորուած է երկնային եկեղեցու հետեւողութեամբ: Կարեւոր մի տեսութիւն՝ մեր եկեղեցական ճարտարապետութեան մասերն ու ամբողջացումը հասկանալու համար:

---

[1] Ն· Ադոնց· Անդ· 228:

[2] Ձեռ· էջմ· № 2379/2373, 25ա· «Մեկնութի· քերականի արարեալ Եսայեա վարդապետի»· սկս· «Ի ձեռնտուութենէ հոգւոյն հանդերձեալ եմք բուռն հարկանել»: Երզնկացու քերականութիւն· Ձեռ· էջմ· № 2359 (կար· 1316): Այս ձեռագիրը քերականութիւնների մի ժողովածու է, ուր ի միջի այլոց կայ եւ Առաքել Սիւնեցու քերականութիւնը, որ այսպիսի մի հատուած ունի· 389ա· «Թէ յո՞ւմմէ թարգմանեցաւ եւ ո՞վ էր, որ մեկնութի· արար սր·: Պ· (պատասխան) Զի Դաւիթ փլսփյն· թարգմանեաց եւ մեկնեաց զսայ, իսկ յետ սր· Գրիգոր Մագիստրոսն այլ ը· արձակ մեկնեաց զԴաւթի մեկնելն· իսկ յետոյ Յոհաննէս վրդն· մականուն Պլուզ համառօտեաց, վս· դիւրալուր լինելոյ: Եւ յետ նր· Եսայի վդպտն· Գայլխձորոյ այլ համառօտեաց զնոյն, որ այժմս կայ ի միջի, սս· (այսպէս) եւ Ծործորեցին է համառօտել: Արդ Բ· մեկնիչ կայ ի գիրքս յայս, առաջինն Դաւթի մեկնածն է եւ երկդն· Ստեփաննոսին· Սիւնեաց՝ որ ի Վայոց ձորն նհակցւ»:

[3] Ձեռ· էջմ· № 161/167:

[4] Ձեռ· էջմ· № 2193/2178:

[5] Արիստոտէլի՝ Թուղթ առ Աղեքսանդր թագաւոր· Դաւիթ Անյաղթ, Վենետիկ, 1833, 604:

Նչեցու «փիլիսոփայական» մեթոտի մասին գաղափար կազմելու համար տեսնենք, ի՞նչպէս է բացատրում «Զոր եդ Ած յեկեղեցոջ» նախադասութեան մէջ դնել բառը· «Եւ պրտ· է գիտել, զի դնելդ եռակի ասի, կմ· իբր ի տեղոջ բպ· (որպէս) ի մդ·ումն, կմ· ներաստումն, կմ· իբր անուանակոչել, քզի· դրուի· ասի եւ անուանկոչութի·, կմ· սհմնել·, զոր հնագոյնքն դնել սովորեցան ասել· բպ· մեծն Արիստոտէլէս ասէ ի սկիզբն որ յղգս· մեկնւե· գրոցն, բպ· ասէ· Նախ դնել արժան է, բպ· թէ սհմնել·, զի՛նչ անուն, զի՛նչ բայ, եւ ապա զի՛նչ բացասուի· եւ ստորասութի· եւ բացերեւի· եւ բան»[1]): Այսպիսի տեսութեան հիման վերայ պարզում է, որ Աստուած է դրել եկեղեցու հիմքը առաքեալների կոչումով եւ սահմանել ամենայն կատարելութեամբ, ինչպէս «սահման»ն ինքը կատարեալ է, որ «ոչ յաւելուած ը· ունի եւ ոչ պկսուի·»· իսկ «ի տեղւոջ կամ ի մդոջ·» եկեղեցին ընտրուած տեղն է եւ մարդկանց ժողովը: Պաշտօնէութեան աստիճանաւորութեան մէջ առաջին երեք դասերն են առաքեալները, մարգարէները եւ վարդապետները, թէպէտ շնորհները շատ են: Առաքեալների պատիւը բարձր է, որովհետեւ նրանք ընտրուած են, իսկ մարգարէի (Նոր Կտակարանի մտքով) եւ վարդապետի տարբերութիւնն այն է, որ մէկը «զամ· ի հնգյն· բրքոէր·», իսկ միւսը մարդկային աշխատութեամբ առաքելական եւ մարգարէական գրքերը մեկնում է եւ մատչելի կերակուր դարձնում «լուսաւոր հանճարով»: Հետաքրքրական է նորա բացատրութիւնը վարդապետի կոչման մասին, որ տիրապետող էր ամբողջ միջին դարում. «վրդքն· ի լրումն ամենեցուն գոլով զռքլցն· եւ զմգէիցն· ոչ պակաս պատուական է», այլ եւ առաւել· «բպ· կառավար ի կռս·, եւ ի նաւի, որ զղեկն ունիցի: եւ գծկնին· քղքկնն· եւ ի տեսկնն· ածարանկն·, բպ· գրէ Պղատոն· Աներկրաչափն մի ներքսամտեսցէ»[2]): Յորենի, գարու եւ այլն բոյսերը անասունների կերակուր են, քանի չեն մաքրուած, աղացուած եւ հաց պատրաստուած, այդպէս եւ առաքելական եւ մարգարէական գրքերը «չեւ եւս ի ձեռն վդպց· քննեալ եւ մեկնեալ, անասնաբարոյ մրդկն· է կերակուր, որ ոչ զմիտս գրոց իմանան եւ ոչ զառակաւոր իմաստ նց·», բայց «ի ձեռն վդպց· քննեալ եւ նմլեալ զիմաստս բնից·, յառաջ բերեն զհանճարս եւ զիմաստուի·»: Վարդապետը պէտք է իւր քարոզածը եւ գործով ցոյց տայ, «զի այսպի· վդպքս· ըս· բնւե· անուան իմաստասէր եւ փիլիսոփոս կոչին», Պղատոնի խօսքերով· «Վդպ· կոչեմ ոչ զայն, որ բզմ· բանս ի բերան առնու, այլ որ մաքուր վարս ստացեալ ունի»[3]): Յունաց իմաստասէրները «նման Այ·» ասացին, որոնք վարդապետական չորս «յեղնկաւն կտրլ· լինին», «զի որով կերպարանի Ածային, նովիմբ կերպրնի· եւ կտրլ· իմստրն·», «բարեաւն եւ գիտութբն· եւ կարողութբն», նոյնը եւ վարդապետը· ուստի եւ «Ըս· Պղատոնի իմաստասիրւի· է նմանութի· Այ· ըս· կրդւե· մարդկան»[4]): Այս միեւնոյն մեթոտին հետեւում են եւ Նչեցու աշակերտներից ոմանք, ինչպէս Յակոբ Թաղորցին է իւր վերեւ յիշուած աշխատութեան մէջ, բայց, մանաւանդ, Որոտնեցին իւր աշակերտ Տաթեւացու հետ:

Նչեցու նման մի գործն է եւ «Քարոզ մեծին Եսայեայ Նչեցւոյ արարել· վս· փոխման սբյ· կուսին· Ահաւասիկ տր· նստել· ի վր· թեթեւ ամպոյ եկեսցէ յԵգիպտոս»· սկս· «Պարտ է գիտել»[5]): Քսան եւ ինն հատուածի մէջ բացատրում է Մարիամին յատկացուած ածականները, իւրաքանչիւր հատուածն էլ բազմաթիւ աւելի մանր մասերի բաժանելով:

Նչեցու մի աշխատութիւնն է «Թուղթ վասն կարգաց եկեղեցւոյ եւ ժամուց, զոր ասացեալ է Եսայի վարդապետի ի խնդրոյ վարդապետաց Սիւնեաց եւ առաջնորդաց վանորէիցն, ածասէր կրաւնաւորացն»· սկս· «Զիմաստայեղձ եւ գովելի նամակս խնդրոյ ընկալայ ես թարմատար եւ տկար ոգի Եսայի»: Արտաքոյ կարգի նորութիւնն չէ տալիս այս գրութիւնը, բայց որովհետեւ տպագրուած չէ եւ շատ քիչ է ծանօթ բանասիրութեան, տալիս ենք նորա համառօտ բովանդակութիւնը:

Անկարողութիւնները մտել են մեր Եկեղեցու մէջ անիշխանութեան ժամանակ, մարդկանց փառասէր, անապարծ եւ հակառակող բարքերի պատճառով· «դիւրին էր մեզ ուղղել, եթէ գոյր մեր թագաւոր ածաւէր, իրաւադատ կմ· քհապետ· վրէժխնդիր աւրինաց եւ կարգաց»: Եկեղեցին վերին Սիոնի օրինակն է իւր խորանով (άψίς), տաճարով եւ գաւթով· Նա եռամասնեայ է իւր անցեալով, ներկայով եւ ապագայի կատարելութեամբ: Խորանը, տաճարը եւ գաւիթը սրբութեան աստիճանաւորութիւն են ցոյց տալիս, տեղով եւ պաշտօնեաների ու հաւատացեալների կանգնելու կարգով: Գաւթի նշանակութիւն ունի եւ սրահը, ուր մեղաւորները, դիւական ախտերով բռնուածները, եկեղեցուց արտաքսուածները «կան անդ դեգերեալք եւ կերակրեն զանձինս ապաշխարութեամբ եւ խրատով գրոց»[1]) :

---

[1]) Արիստոտէլի, Պերիարմէնիաս, նոյն հրատ· 461:

[2]) Դաւթի փիլիսոփայի՝ Սահմանք, նոյն հրատ· 128:

[3]) Անդ, 128: Մեր միջնադարեան դպրոցների մէջ վարդապետական աստիճան ստացող ընծայացուն եւս պէտք է նախնի վարդապետներից մէկի գրուածքը անգիր անէր եւ արտասանէր: Այսպէս էր Գրիգոր Տաթեւացին (Թովմա Մեծոփեցի, Փարիզ, 56)· աւելի ուշ, 1609 թուին, ոմն Ներսէս եպիսկոպոս (Ձեռ· էջմ· 2193/2178, 49բ·) «ի ՌԾԸ թվին, ես Ներսէս· եպսկպ· գրոց աշկերտ· ողրմւթբ· տն· սերտեցի զայս մեծախրհդ· ասցւածս· ի պտճռ· գւղնի· առնելոյ աւուրն»: Նիւթն է «Յոհան Որոտնեցոյ քաջ հռետորի եւ արդիւնական բարունապետի արարեալ ի բան մգէին·, որ ասէ· Արդարութի· տն· ուղիղ է եւ ուրախ առնէ զսիրտս· պատուիրանք տն· լոյս են եւ լոյս տան աչաց, երկիւղ տն· սր· է եւ մնայ յաւտն»· սկս· «Բեր յետ ելանելոյ ի դաղաթս լերանցս Ածաբնակ Սինէի··»:

Բայց եւ գրում էին մեկնաբանական կամ տօների հետ կապուած ճառեր, որ օրհնութիւններով էին վերջանում եկեղեցու եւ հաւատացեալների, թագաւորի եւ հայրապետի, տեղական իշխանի եւ իրենց վարդապետ ուսուցչի անուան յիշատակութեամբ, մի տեսակ երախտագիտական արտայայտութիւն: Այդպիսի հատուածներ տես Բ· 91 եւ Գ· 13, նաեւ 11 եւ 12:

[4]) Դաւթի փիլիսոփայի, Սահմանք, նոյն հրատ· 144:

[5]) Ձեռ· էջմ· № 1948/1134, 457, նաեւ № 3318:

Առաքեալների, մարգարէների եւ վարդապետների կողմից կարգաւորուած են նոյնպէս աղօթելու ժամերը նախաստեղծների մեղանչելու եւ Տիրոջ չարչարանքի, խաչելութեան, մահուան եւ թաղման ժամերի համեմատ: Կէս գիշերուայ եւ արեւագալի ժամերգութիւններն ու աղօթքները Քրիստոսի գալստեան եւ արթուն հսկողութեան նշաններն են Սաղմոսերգուի եւ Քրիստոսի պատուէրների համաձայն:

«Զայս սահման կանոնին աղաւթից ունի ամ· եկեղեցի· պահեաց եւ մերս յոլով ժամանակս յաւուրս ինքնակալ թագաւորաց մերոց»: Բայց հալածողների եւ հարկապահանջութեան զօրանալով, բոլոր կարգերն էլ չփոթուեցին, «փակեալ դրամք (s!) եւ արտաքոյ ժամին զհոչակելի սբ· պատարագն մատուցանէին, առանց զգեստի եւ առանց արարողուե·»: Աղքատութեան եւ ժամանակ չահելու պատճառով երկու երեք ժամերի աղօթքները միասին էին կատարում· «զի փութով ի մարմնական պէտսն դառնային»: «Ի ժամանակս իշխանութե· մերոյ եւ խաղաղութե· զէ ժամն յեկեղեցին կատարէին», բայց արժանաւորները միայն, իսկ գաւթում՝ ապաշխարողները: Այժմ անկարող ենք այն սովորութիւնը պահել «վասն աղքատութե· եւ խստասիրտ տերանց մերոց»:

Այս թուղթը որոշ հարցերի պատասխան էր եւ ոչ անարժէք իւր պատմական ակնարկներով· գրութեան ժամանակը ԺԴ· դարի երեսնական թուականներին պէտք է նշանակել, Նչեցու կեանքի վերջին տարիներին, երբ մոնղոլական իշխանութիւնն ի սպառ մահմետականացած, իւր մոլեռանդութեան պտուղներն էր ցոյց տալիս քրիստոնեաների նկատմամբ:

Նոյն ժամանակներին է վերաբերում Նչեցու մի վերջին գրուածք եւս· «Եռամեծի եւ անյաղթ սոփեստոսի Եսայեայ բազմաջան եւ բանիբուն վրդպի· սուղ ինչ պատճառ յղգս· ձեռնադրուե· ի խնդրոյ տն· Սարգսի»[2]) : Սարգիս եպիսկոպոսը Ստեփանոս–Տարսայիճի յաջորդն էր, որ յիշատակուած տեսանք 1333 եւ 1337 թուականներին: Այս միեւնոյն գրուածքն ունինք առանց «ի խնդրոյ տն· Սարգսի» վերտառութեան ուրիշ ձեռագիրների մէջ, ապացոյց, թէ շրջաբերական բնոյթ է ունեցել:

Քահանայութիւնը գերազանց բարիք է, երեք դասակարգով, երկնային զօրութիւնների կարգաւորութեան համաձայն: Երկնային քահանայութեան շնորհը երկիր իջաւ ստեղծագործութեան միջոցով: Առաջին յարացոյցը՝ թագաւորական, մարգարէական եւ քահանայական եռակի իշխանութեամբ Ադամն էր: Նիւթը չորս մասի է բաժանում· առաջին· «զի՞նչ է քհյուի·» երկրորդ՝ «զի՞նչ նորին խհդ· եւ կտրումն·»· երրորդ՝ «թէ քանի՞ս բաժանի» եւ չորրորդ՝ «զի՞նչ զգեստին նշանակի· ունի եւ որո՞ գծք· իշխանե· եւ ապացոյց ունի»: Այստեղ կրկնում է, գրեթէ, նոյն մտքերը, ինչ որ տեսանք եկեղեցու հաստատութեան ճառի մէջ[3]) :

Նչեցու մահը մի անյայտ ժամանակագիր նշանակում է ՉՁԷ (= 1338) թուին· «վախճանեցաւ ս· վարդապետն Եսայի»[4]) : Նորա մահուամբ մեռնում է եւ դպրոցը Գլաձորում: Դպրոցի անկումն այստեղ կապուած էր, կարծում ենք, քաղաքական պայմանների այն մեծ փոփոխութեան հետ, որ Աբու–Սայիդի մահուանից յետոյ տեղի ունեցաւՀայաստանում՝ մոնղոլական պետութեան վերջին տարիներում: Մենք առիթ ենք ունեցել նկարագրելու այդ շրջանում ծագած խռովու–

---

[1]) Ձեռ· էջմ· № 1523/1548, 337ա·: Այս մտքերը արծարծում է եւ Եզեկիէլի մեկնութեան մէջ: Ձեռագիրը գրուած է 1357 թուին, հեղինակի մահուանից միայն քսան տարի յետոյ· 383բ· «Բայց գրեցաւ սա ի թուականութես· հայոց :ՊԶ: ամին ի յանապատս, որ կոչի տր· Յովհաննիսի աթոռակալի, զոր պահեսցէ տր· յա· երկար եւ խաղաղական կենաւք մինչեւ ի խորին ծերութի·, ի թագաւորութեն· հայոց կոստանդինոսի եւ ի հայրապետութե· տն· Մխիթարա, զոր յայժմ ամի փոխեցաւ առ Քս»·: Ստացողն է «հեգահոգի կր· քհն· Խաչատուր»· գրողն ու կազմողը Յովսէփ եւ Գրիգոր քահանաները:

[2]) Ձեռ· էջմ· № 94/3276, 99ա· միայն վերնագիրն է նշանակուած, առանց բնագրի:

[3]) Մենք օգտւում ենք Ձեռ· էջմ· № 2193/2178, 388ա· (տես եւ № 3937, 143ա)· սկս· «Սկիզբն ա· բարեաց է անժմկն· Ած··»: Ձեռագիրը ժողովածու է Նչեցու, Որոտնեցու, Վարդանի, Տիրատուր վարդապետի, Պլուզ Յովհաննէսի, Կիրակոս Երզնկացու, Յովհաննէս Սիւնեաց եպիսկոպոսի (Աւրպէլ ?) մեկնաբանական քարոզների կամ ճառերի· առանձնապէս շատ են Տիրատուր վարդապետի աշխատութիւնները: Գրիչն է Յակոբ սպասաւոր բանի «յերկրէն Ըռշտօնի», «եւ աշակերտ այս սոփերի, առ ոտըս սբ· վարժապետի, որ մականուն Կախիկ կոչի», այսինքն Յոհան Որոտնեցու: Կարծում ենք Որոտնեցու աշակերտ Յակոբ վարդապետ Ովսաննացն է, որի խնդիրքով Որոտնեցու եւ Տաթեւացու աշակերտ Մատթէոսը գրել է քաղուածօրէն Գործք Առաքելոցի մեկնութիւնը (Ձեռ· էջմ· № 1247 Նժ) :

[4]) Սամուէլ Անեցի, 168: Ըստ Ալիշանի (Սիսական· 131) Մինաս Ամդեցին Նչեցու մահը նշանակում է 1342 թուին:

Թիւններն ու արշաւանքները իրենց ծանր, կործանարար հետեւանքով նիւթապէս եւ կուլտուրապէս[1]*։ Միւս իշխանական տոհմերի հետ Պռոշեաններն էլ, երեւի, հալածուեցան եւ աղքատացան, դպրոցն անապահովութեան եւ անուշադրութեան մատնուելով, որի հետեւանքով եւ մեռաւ ինքն իրեն։*

Բայց Գլաձորի անկմամբ չվերջացաւ Պռոշեանների հովանաւորութեամբ կազմակերպուած եւ ուռճացած գործը։ Նախ մենք տեսանք Սպիտակաւոր Աստուածածնի ծաղկումը, թէեւ փոքր չափով եւ կարճ ժամանակով նոյն իշխանութեան մէջ, դրեթէ, կից Գլաձորին եւ Սրկղոնիքին, որ Պռոշեանների «դարբասն» էր[2]*։*

Բայց որ աւելի նշանաւոր է, Գլաձորից ճիւղաւորուեցան եւ զարկ ստացան Հերմոնի, Մեծոփի, Երզնկայի դպրոցները, բայց յատկապէս Տաթեւի դպրոցը, որ Գլաձորի անմիջական յաջորդը դարձաւ յանձին Որոտնեցու եւ սորա աշակերտ Գրիգոր Տաթեւացու։ Դպրոցական–գիտական այն մեթոդը, որ սկիզբն էր առել Գլաձորում, մասամբ միաբաններից փոխանցուած, իւր ծաղկման շրջանն է ապրում սրանց օրով։ Որբէլեաններին նուիրուած հատորի մէջ առիթ կ’ունենանք աւելի սերտ ծանօթանալու միջնադարեան հայոց դպրոցական մտածողութեան, մեթոդների, ծրագրի եւ յառաջ բերած արդիւնքների հետ։

---

[1] Աստ. 121։

[2] Աստ. 123—126։

ԽԱՂԲԱԿԵԱՆՔ ԿԱՄ ՊՌՈՇԵԱՆՔ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ՅԱՒԵԼՈՒԱԾՔ

Ա. ՅԱՒԵԼՈՒԱԾ. ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ
Բ. ՅԱՒԵԼՈՒԱԾ. ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ
Գ. ՅԱՒԵԼՈՒԱԾ. ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒԱԾՆԵՐ

ՅԱՒԵԼՈՒԱԾ Ա.

ՅԱՒԵԼՈՒԱԾ Ա. 1.

ԳԵՂԱՐԴ

1. *[Կամաւն Այ այս գիր] է Թագաղնոյն եւ աշխարհակալ աԹաբակ Իւանէի եւ արեան հարազատի իւրոյ ոՒեզերակալին Զա/*
2. *[քարիայի որդոցն] Աւագ Սարգսի ամիր սպասալարին եւ որդոյ նորին Աւագին եւ Շահընշահի որ առ ի Կայենով եւ Կայծոնով մինչ/*
3. *[ի Բարկուշատ եւ մինչ] ի Ցականա եւ մինչ ի Նախճաւան եւ* անգի *մինչ ի Կարս առի Այ աւգնուԹըն եւ ապա եկի ի սբ ուխտս յԱյ/*
4. *[րի վանս եւ տեսի զ] եկեղեցիքս. եւ զորբքս եւ ինձ անոշ Թուեցաւ յիմ անուն արարի զիմ յիշատակս ի վերա գրեցի եւ ետ/*
5. *[ու յիշատակ ինձ զ...] ս Բերդաղն սբ կաԹուղիկէիս լուսացուի եւ ոք որ հակառակիցի սեւերես գայ եւ էրից սբ ժողովոյն նզովեալ* եղիցի եւ որ *ոչեալ յԱյ ՀՆ (ամէն):*

ԾԱՆՕԹ.— Առաջին քարը արձանագրութեան իւր տեղում չէ, նորոգութեան ժամանակ ուրիշ տեղ է յարմարեցրած, ուղղանկիւն փակագծերի մէջ եղած մասերով, որ իւրաքանչիւրը մի մի տողի սկիզբն է: Հինգերորդ տողի շեղագիր բառերը հազիւ նկատելի:

Մխիթարեան. «Ստորագրութիւն Գեղարդայ վանից». եր. 16. սխալաշատ եւ պակասաւոր: Ալիշան. Այր. 340. սխալներով: Ouw. XIII. 5. պակասաւոր եւ սխալաշատ:

ՅԱՒԵԼՈՒԱԾ Ա. 2.

ԳԵՂԱՐԴ

Ի ժամանակս Թագաւորաղնոյն Զաքարէի եւ Իւանէի նորին հարազատի եւ որդոց նո/ցին Շահանշահի եւ Աւագին եւ յառաջնորդուԹե Բարսղի միայնաւորի եւ աշխատուԹբ եղբար/ցս շինեցաւ կաԹողիկէս մեծափառ: ՈԿԳ:

ԾԱՆՕԹ.— Շահխ. Բ. 284. «Զաքարիայի, որդւոց»:

Մխիթարեան. «Զաքարիայի եւ Իւանէին, որդւոց, Շահնշահի, առաջնորդութեամբ» ընթերցուածներով:

Ալիշան. Այր. 337. նման Շահխ.–ին:

Ouw. XIII. 7. նման Շահխ.–ին:

Կոստանեան. Վիմական Տարեգիր. 59. «Զաքարի, որդւոց», Շահխ.–ից առած:

ՅԱՒԵԼՈՒԱԾ Ա. 3.

ԱՐԱՏԵՍԻ ՎԱՆՔ (ԱՅՍԱՍԻ)

Ի ՈԿԹ

1. *Ի Թագաւ* որ ու *Թեն* Վր *աց Լաշ* աի *ն եւ յաշխ* ար *հակալ*
2. ու *Թե Իւանէի ԱԹ* աք *ակի:* Ե սՎ. *աս* ակ որ *գի Խա* դք *ա կո*(s!)
3. *զմ* նա *պահ ի Գառնոյ* մի *նչեւ ի Բարգուշատ եւ*
4. *առի զ* ամ *րոցանիս Եղեգեաց ձ* որ *ոյս* աւ *զն* ու *Թեր*
5. *ն Այ ի հայրա* պե *ս* ու *Թե ար Ս* ար *գ* սի *եւ առաջն*
6. *որդ վանացս եւ Ն* որ *ավանացն հաստատեցաք*
7. *...մ զհամբ* ար *ձմանն զերեք* աւ *րն զամեն*
8. *այն եկեղեցիքս ձորոյս*
9. *որ Վասակա կատ* ար *ե*
10. *ն եւ կատարիչքն աւր*
11. *հնին յԱյ* ամէն

ԾԱՆՕԹ.— Շեղագիր տառերը կցուած են իրար:

Տես. Ջալ. Բ. 157: Առանց թուականի. Աստուածային փոխ. Լաշահին, Իվանի, Բարկուշատ, Եղեգաձորոյս փոխ. Եղեգեաց ձորոյս, յառաջնորդութեան, օրն, օրհնեալ եղիցին, փոխ. աւրհնին:

Քաջբերունի. Արար. 1888. 769. Լաշային, Իւանի Աթաբէգի, Բարկուշատ, օրն:

Ալիշ. Սիսական. 143. առնում է Քաջբերունուց: Ouw. Mat. XIII. 87. կողմնապահի, աւգնութեամբ, առաջնորդfս, չունի «կատարեն»:

ՅԱՒԵԼՈՒԱԾ Ա. 4.

ԿԵՉԱՌՈՅՔ

(Կաթուղիկէի հարաւային պատին)

1. *Ի Թու ՈԿԳ ի Թագաւորուեանն...*
2. աւ որ *ուԹե երկուց հարազ...*
3. *այի սպասալարի եւ Ի...*
4. *ւր նորա պատրոն Խոշաք...*
5. *քի* որ *գի. Խաղրակա* որ *դո...*
6. *Ի Խաչէն ի յազկ ե*
7. *չառուս շինեցի յ* ար *զար ընչից և յար...ք*

8· *եւ զարդ* ար *եցի պէսպէս սպասիւք խաչեր*
. . . նոցա

9· *եկեղեցոյ Այ եւ տուր եւ զգանձացին գեղն*
. . . վաճելել

10· *այգի մի յԵրեւան եւ այգի մի ի Ն* որ *ա–*
չէնքն եւ . . . (*Գրիգ*) որ *իսի*

11· *արհիեպիսկոպոսի առաջնորդի սբ ուխտին*
հ . . . նայր

12· *միանձնութբ վս սիրոյն Քի էր եւ սպա–*
սաւոր եղբարցս Գրիգ որ *վարդապ . . . .*
(*եւ մա*) *կանուն մունունիկ*

13· *սահմանեցին միաբան եղբայրութբս* (*ա–*
ռանց պատուի) *զ* աւ *ագ խ* որ *անն հանա–*
պազ աւ *բ պատարագի* ի *լ* (s!) *ինձ եւ չա–*

14· *բաթն աւրն* ամ *էն եկեղեցիքս* որ *չափ ես*
կենդանի եմ իմ ծնողացն առնեն եւ յետ
ելից իմոց

15· *յաշխարհէ ինձ առնեն անխափան եւ եթէ*
որ խափանեսցէ յայսցանէ դատեսցի ի ոէ
եւ ոու

16· *ժեսցի ուղղանեալ տանջմամբ յաւիտե–*
նական հրոյն իսկ կատարիչքն աւրհնեալ
լիցին յԱյ

17· *եւ յամենայն սրբոց յիշեսցին եւ ածա–*
տուրք եղբ ար *քն իմ եւ զինակիցք Ջա–*
ջուռն եւ Գրիգ որ *եւ սիրելի*

18· որ *դիք իմ հարազատք Պապաքն Մքդէմ*
եւ Հասան երկանուն Պռաւշ տբ պահպան–
եալ եղից

19· *ին այժմ եւ յ* աւ *իտեանս* ամ *էն: Ես Մա–*
մայս աղախին Քի դուս . . . Վասակայ զայ

20· *գին իմ* որ *յԵրեւան գնեցի ի հալալ ընչից*
իմոց եւ ետո . . . ղեցիս որ չաբաթն

21· *աւրն : բ : խորանն ինձ լինին յուԹիցն*
պատարագ կամակցութբ տն իմոյ Վա–
սակա

22· *եւ մի ոք խափանեսցէ զի մի անէծս առցէ*
յԱյ եւ յամենայն սրբոց իւրոց:

ԾԱՆՕԹ.— Բազմակէտներով նշանակուած մասերը թափած են, ինչպէս պատկերից էլ ընթերցողը նկատել կարող է: Փակագծի մէջ առնուածը լրացնում ենք:

ՅԱՒԵԼՈՒԱԾ Ա· 5·

ՅԱԽԱՑ ՔԱՐՈՒՄ

Կամաւն Այ ես Խաչի որդի Հասանա Թոռն Պռո
շայ միաբանեցա սբ ուխտիս Ցախաքարո
եւ ետու յիմ հայրենեաց ի Սրկղունիս զմեր
ձեռատունկ այգին նորակերտ իւր ջրովն
մեր եղբայրն տր Աւրպէլ Ովանն եւ միաբանքն
ի տարին սահմանեցին Դ պատարագ մեզ եւ
ծնողաց մերոց եւ ամուսնոյն իմոյ
Մամախաթունին ի տաւնի Դաւթի եւ Յակոբայ
կատարիչքն աւրհնին յայ Թվ· ՋԿԶ·

ԾԱՆՕԹ․— Ջալ· Բ· 163· Հասանայ, Պռօշայ միաբանեցայ, Ցախաքարոյ, Օրբէլի Օվանէի, չունի «եւ», Մամայ խաթունին ի տօնի, Յակոբայ, օրհնին· թուականը չունի:

Ալիշան· Սիսական· 156· Հասանայ, միաբանեցայ, Ցախաքարոյ, «եղբայրն տէր Աւրբէլի Ովանէի», սխալ ընթերցուած, «Գ» փոխ· «Դ»· Մամայ խաթունին:

Օսվ. եր· 111· Եաչի, միաբանեցայ, Ցախաքարու, ի Արկղունս փոխ· ի Սրկղունս, նորակերտ*ի*, տէր Աւրպէլի Ովանէն:

Մեր ընթերցուածները ճշդուած եւ տողատուած են տեղում եւ լուսանկարի վերայ, որ տարաբաղդաբար կորցրել ենք եւ նմանահանութիւնը տալ չենք կարող:

ՅԱՒԵԼՈՒԱԾ Ա· 6·

ԿՈՐԱԴԻՍ

Եկեղեցու արձանագրութիւնը·

Թվ· ռճժե շինեցօ եկեղեցիս անուն Նիկո–
ղաոսի որ գեղով աշխատեցանք:

Գերեզմանատանը՝

ռճծա Թուականով խաչքարեր:

ԱՂԽԱՁ·

Գերեզմանատանը·

1· Մի քար՝ *Թվ· Ջկդ* (1515) *կանկնեցա*
խաչս բրխս Միրզին (Մի *րզին ? փակա–*
գրով է):

2· Մի ուրիշ քար· *Ես Նիկլիղոս կանգնեցի*
խաչս·· տրոսին (*Պետրոսին ?*) *եւ հոգոյ*
իմոյ Թվ· ռե (1556):

3· *Ես Թում* (*ի*)*/կս կանկն/եցի խաչս/ Միրի–*
ճանին Թվ· ռիդ (1575)

4· Մի գերեզմանաքար քանդակներով·
Թվ· ռկե· (1616) ***Աւաքին Շահրազ***»· միւս
երեսին «*Ալահդատ*»:

5· Մի խաչքար սպիտակ քարից· «*Սբ խաչս բարէխօս հոգոյն Թաթոսն Թվ· ռձբ* (1635):

6· *Ես Ծատուրս կանկնեցի խաչս Դաւութին ... (Թվ· ?) ռճ* (1651):

7· *Ես Խաթունձանս կանգ/նեցի որդոյ իմոյ Թվ· ռճիթ* (1680): Սորա կողքին՝ «*Ես Խաթունձանս կանկնեցի խաչս որդոյ իմոյ Նիօճայոս*», վերան ձիաւոր եւ թռւնգի:

8· Մի խաչքարի տակ գաւազանով գերեզմանաքար (*քահանայի ?*) *Թվ· ռճլէ* (1688)

9· *Սբ· Խաչս յիշատակ է Դավութի Հոռումի որդի Մուրաթին· Թվ· ռճծդ* (1705):

10· *Ես Ծատուրս կանկնեցի/ խաչս իմ կին կուհարին, Թվ· ռճկդ* (1715):

11· *Ես Մէլիքս կանկնեցի/ սբ խաչս մայր իմոյ Սառի Թվ· ռճկա* (1712):

12· *Ես Սրգիս մալիքս Սան* ռ (?) *Շահնազարս կանգնեցաք խաչս Աղաջ* (?) *ս եղբօր մերոյ Պօղոսին*:

13· *Ես Ճնի*(?) *կանկնեցի զխաչս իշատ* (*յիշատակ ?*) *հոգ/ իմո իմ որդի Մուրատպաշին իմ առ/ջեւս մեռօ եւ մեր Թվ· սորայ*

14· Եկեղեցու մէջ, պատին հագցրած·
Ես Փիրհամզէս կանկնեցի խչս ծնողաց իմ Կոլխանին Ծատուրին:

15· *Կանկնեցաւ խաչս Համզին մելիք Խաթունին Թվ· ռիդ* (1575):

16· *Ես Փիրիպէկս կնկնեցի խաչս եղբաւրն իմ Խաչատուր գահանաին եւ ծնողաց իմ Թվ· ռիդ* (1575):

ԾԱՆՕԹ·— Ա· 6–ով նշանակուած բոլոր այս արձանագրութիւնները առաջին անգամն են մատչելի դառնում բանասիրութեան:

ՑԱՒԵԼՈՒԱԾ Ա· 7·

ՎԵՐԻՆ ԱԽՏԱ

1· *†Յանուն ամենակալին Այ ես Մխիթ*
2· *ար որդի Դեղկա հրամանաւ իշխանաց իշխանին*
3· *մեծին Պռ* աւ *չո եւ որդոյ իւրո Պր Հասանայ*
4· *շինեցի զգե* աւ *ղս զՄ* ար *տիրոս: եւ կ* ան *կ* նե *ց*
5· *ի զխաչս ի դուռն սբ վկայար* ան *իս ի բարեխ* աւ *սութի ինձ*
6· *եւ* ամ *ուսնո իմո Մամերին*
7· *եւ* որ *դո իմո Խարփիշահին: եւ դստեր իմո* Ռո *ւզուքանին*
8· *Քս Յս*
9· *Կազմեց* աւ *ձեռամբ Շնհ*
10· *աւորիս: ի Թվ· ՉԼԲ: որք*
11· *ընթեռնուք յիշեց*
12· *ի տր*

ԾԱՆՕԹ·— Առաջին չորս տողը խաչքարի ճակատին, հինգերորդը ձախից նայողի, վերից վար· վեցերորդը ներքեւից հորիզոնական, եօթերորդը աջից՝ վարից վեր, ութերորդը ճակատի տակ՝ կամարի վերայ, իննից տասներկու խաչի տակ հորիզոնական: Տեղագիրները կցուած են:

Ջալ· 200· չունի «յանուն ամենակալին Այ» բառերը: Դեղկայ, Պռոշոյ եւ որդւոյ, չունի «պր» — պարոն, Հասանայ, զգիւղս, կանգնեցի, ամուսնոյն, Մամերին, որդւոյ իմոյ Խարփրշահին, դստերն իմոյ Դուզուքանին, Շնորհաւորին, չունի «ի տր»:

Ալիշան· Սիսակ· 176· առել է Ջալ·–ից, միայն ուղղել է «Ռուզուքանին»:

Լալ· Ազգ· Հանդ· ԺԲ· 288· արտագրել է նոյնութեամբ Ալիշանից:

ՑԱՒԵԼՈՒԱԾ Ա· 8·

ՎԵՐԻՆ ԱԽՏԱ

1· *Ի Թվ· Հ· ՉԺԲ*

2· *Բարեպաշտ իշխանութե Պռոշո † Մխիթար Արեւիկ որդի Խոյդանայ*

3· *Կանգնեցաք խաչս եւ մատուռն ի դուղս եկեղեցիս չկար շինած զեկեղեցին այլ մեք շինեցաք մեր հալա(լ) արդեամբք բազում աշխատութբ մեզ եւ ամուսնաց մերոց որք կարդ/*

4· *այք յաղ·*

5· *Մխիթար Շնորհօր ա/ղբար քարգ/ործ յչ·*

6· Կամարի տակ· *որդի Մխիթարա·*

7· Բուն խաչի գլխին՝ կամարակալ քարի վերայ· «*Կազմեցաւ խաչս ի բարէխաւսութի Աւտարշաին Թոռն Խոյդանայ*»:

Խաչի տակը, հորիզոնական չորս տողով կրկնւում է վերեւի արձանագրութիւնը·

8· *Ի բարէպաշտ իշխանութենն Պռոշա ի Թվ· Հ· ՉԺԲ·*

9· *Ես Մխիթար ու Արեւիկ որդի Խոյդանայ հմնարկեցաք* (s!)

10· *զեկեղեցիս եւ զժամատունս շինեցաք եւ կանգնեցաք*

11· .... *եւ ամուսնաց*

ԾԱՆՕԹ.— Առաջին տողը եռանկիւնի ճակատի տակ· երկրորդ տողը նորա տակը բոլորաձեւ· երրորդ տողն սկսւում է ձախ կողմից (նայողի) վարից վեր եւ ապա կամարի վերայով իջնում է դէպի աջ· չորրորդ տողը գրուած է աջ կողքից ներքեւը, իսկ հինգերորդը կեղծ խոյակի մօտ: Տասնեւմէկերորդ տողը, պակաս մասը փչացած, բայց պիտի լինէր հաւանօրէն «զմատուռս եւ զխաչս ի բարէխաւսութի մեզ»: Մատուռի հիւսիսային կողմի եւ միջի արձանագրական մնացորդների համար· տես Աստ, եր· 69:

Տես· Ջալ· Բ· 204/5· Քաջբերունի Արար· 1889· 447: Ալիշան Սիսակ· 174: Ouw. XIII. 155: Կոստ· Վիմական Տարեգիր· 105/6: Լալ· Ազգ· Հանդ· XII. 287:

Այս մատուռ խաչքարի մօտ կայ մի ուրիշ կոտրած խաչքար այսպիսի արձանագրութեամբ·

Ես Մխա եւ Սաան/այս կա(նգ)նեցաք զսբ
նշանս ի բարէխ/աւս Հաւր մեր/ոյ Սարգսի որ/
կարդայք աղ/աւթս յիշեց·

Գետակով բաժանուած ձորի միւս կողմը Ներքին Ախտա կամ Գեարքդ կոչուած գիւղում եղած խաչարձանների գրութիւնները·

ա) *Ի Թվին Հայոց ՋԺ(Ե?)· Ես Ղուկաս*
եւ Եղիա կ(ա)նգնեցաք ըզխաչս ի բարէխաւսութի Հաւր իմոյ Տիրատէր քահանի ի
շխանութբ Պռոշոյ:

Մեծութիւնն է 2,60×1,22 *մ·*

բ) Մօտը՝ *ի Թվ· Հ· ՋՃԻ* (s!) (=720) *իշխան*
ութբ Պռոշոյ
Կամաւն այ Ես Սարգիս Գրգոր կանկնեց
աք զխաչս ի բար(է)խաւս մեզ եւ զա ?
կդկք ?

Խաչի մեծութիւնն է 2,60×1,22 *մ·*

գ) *Ի Թվ· ՉԼԹ իշխանու*
Թբ Ամիր Հասան ես Դեղ ու այլ եղբարք
կանգնեցաք զխաչս եղբաւ

դ) կոտրած խաչքար· *ի Թվ· ՋԺԱ·*
ի յիշխանութեանս Պռո
շոյ Ես Մխիթար ու Դեղս կա
նգնեցաք զխաչս եղբաւր մերոյ
Շաչին ի բարէ խաւս:

ԾԱՆՕԹ.— Ջալ· Բ· 205 միայն անունները յիշուած: Ալիշ· Սիսակ· 17: Կոստ· Վիմ· Տար· 105:

ՅԱՒԵԼՈՒԱԾ Ա· 9·

Այստեղ բերուած են միայն այն արձանագրութիւնները, որոնք չեն մտել բնագրի մէջ:

ա) Լիանոսի վանքի աւերակների մօտ բացուած է մի գերեզմանաքար·

Այս է հանկիս/տ Ըս· այ հա(ն?)գ/իս յհ·
ք· Թվ· ՉԼԸ:

Երկրորդ տողի մէջ անուան երրորդ տառը փչացած, իսկ հարցականով նշանակուածը կասկածելի:

բ) Գիւղի արեւելեան կողմն է Պուպուքար կոչուած մեծ եւ գեղեցիկ խաչարձանը, սպիտակ մարմարի նման քարից· հաստատուած ժայռի պատուանդանի վերայ:

†Ի Թուիս ՉԼԵ· ես... (անունը չի կարդացւում) *կան/գնեցի զխաչս բարէխաւս Սիմեւոն քահան/աի եւ այլ ազգի մերում:*

Նոյն խաչքարի առաջ, տափակ, բազալտի մոխրագոյն մի քարի վերայ գրուած է·

Այս է /հանգիս/տ Մխիթար ք/ահանէի:

գ) Նորա մօտ կայ մի աւելի փոքր եւ հասարակ խաչքար, որ միայն Թուականն ունի·

«ի Թվ· ՋԽԳ»:

Տես· Ալիշան· Սիսակ· 485:

ՅԱՒԵԼՈՒԱԾ Ա· 10·

ԿԵՉԱՌՈՅՔ

(Կաթուղիկէի արեւմտեան դրան կամարների եւ կամարակալ քարի վերայ)

1· *Ես Վասակ որդի Խաղբակա շինեցի զսբ կաթողիկէս յաւգնականութիւն եւ*

2· *յերկարութիւն կենաց իմ պատրոնացն Իւանէ Աթաբակի եւ արեան*

3· *հարազատի*

4· *իւրոյ Շահանշահի*

5 *եւ Աւագին եւ իւր մաւրն*

6· *պատրոն Խոշաքին եւ իմ եղ*

7· *բայրացն եւ որդեացն յարեւ*

8· *շատութիւն ինձ եւ ամուսնոյ իմո*

9· *Մամային մեղաց Թողութիւն որք*

10· *երկրպագէք յիշեսջիք ի քս աղաչեմ·*

11· *Գրիս ընծա: Ա: Լ* աւ *շինակնատուն ի Ն* որ *աշէնքն*

12· *Երետ եւ: Ա: ի Կարենիսն*

ԾԱՆՕԹ.— Առաջին երկու տողը գրուած է դրան կամարների վերայ, իսկ մնացածը կամարակալ քարի վերայ: Գիրը գեղեցիկ է եւ պարզ· գրիչը խուսափել է *լիգատուրաներից*, բացառութեամբ տասնումէկերորդ տողի «լաւ» եւ «նորաշէնքն» բառերից:

Տես· Լալայեան· Ազգ· XXIII. 130· յաւգնութիւն, խոլաքին, ընծայ, շինական փոխ· շինականատուն:

ՅԱՒԵԼՈՒԱԾ Ա· 11·

Վեդիի վերին ակունքների Աղքիլիսա գիւղում ուրիշ արձանագրութիւնների հետ կայ նաեւ Պապաքի անունով մի արձանագրութիւն երկու քարի վերայ, թերի·

Պապա··տվլի չին/եւ մին մարդն եւ գՑր-
դուտ եւ ··· արին/ Դ: ժամ իմ հաւրն
Վասակա յետ մահու(ա)ն ով ոք··մերոց·

Նոյն Պապաքը եկեղեցու հիւսիսային պատին նոյն իմաստով մի ուրիշ արձանագրութիւն ունի, բայց դարձեալ փճացած·

Ես Պապաքս տվլի մին էգ/(մ)ին չինական
չահով ու զեն··· / զԽոցադեղ ա:·· / գո-
մին մարգ·· / ուտն եւ ··· / Դ: աւր
ժամ···

ԾԱՆՕԹ.— Այս Պապաքը Վասակ Խաղբակեանի որդին է, մասնակից Գանձակի պատերազմին, 1222 թուին· տ· Գանձ· 194· 368: Արձանագրութիւնները բանասիրութեան մատչելի են դառնում առաջին անգամ:

ՅԱՒԵԼՈՒԱԾ Ա· 12·

ԱՂՋՈՑ ՎԱՆՔ

1· *Յաշխարհակալութիւն Արղուն ղա*
նին եւ ի Թագաւորութե Դաւթի եւ հարա
պետութե (s!) *տր Յովանիսի եւ ի տէրու*
թե//

2· *տեղոյս պարոն Աշոտոյ ես*
Ղազար Ածատուր տէր Աւագ
ս բէրաք գՋուրս եւ կանկն//

3· *էցաք զխաչս եւ տնկէցաք զայգին Յովայն*
զոր ամիր սպասալար եւ աթա
պակ Սադուն նուվէր (s!) *ետ էկեղեցոյ//*
գՋուրս անխափան ի բանի պահէ կատա
րողք գրէլո
ցս աւրհնին յԱյ եւ ով որ զ
այգին յէկեղեցոյս եւ ի Ջ//

4· *րէս հանէ յէրից ժողովոյն նզով*
էլ եղիցի եւ զրկի կենաց Ջրոյն
Առանձին՝ զարնէզի քարի վերայ·
ի Թվ· ՉԼՋ

ԾԱՆՕԹ.— Արձանագրութիւնը գտնւում է տաճարի արեւելեան կողմն ընկած խաչքարի (պատկ· 184·) պատուանդանի չորս կողմը· տողատուած է բնագրի համաձայն· // գծերը պատուանդանի կողերն են ցոյց տալիս· վերջին երկու տողերը կողերի համաչափութիւնից դուրս են իբրեւ առանձին տողեր խաչքարի կողերի վերայ: Հրատարակել ենք առաջին անգամ (Ծողակաթ· Հայագիտական ժողովածու· 1913· եր· 26): Ouw. Mat. XIII· *չունի: Զունին եւ միւսները:*

ՅԱՒԵԼՈՒԱԾ Ա· 13·

(Դսեղի Բարձրաքաշ Ս· Գրիգորի արեւմտեան պատին, դռնից աջ (նայողի))

ՈՂՋ (1247)

1· *Ի Թվականութեանս հայոց եւ յիշխանու*
թե տիէզերակալ իշխանաց իշխանի Աւա
··· Թապակ

2· *Իւանէի ես Պռ* աւ *շ որդի Վասակա* եւ
Թռոն Խաղբակա միաբանեցա սբ ուխտիս
Բարձրաքաշիս եւ *էտու ի չին*

3· *ուԹի տանս: Ճ: դէկ* ան *եւ սպասաւորք*
սբ ուխտիս սահմանեցին: Ա: քառսնա-
ւուրքն (պէտք է կարդալ «քառասունք»)*ի*
տարոջն արդ ով խափանէ զգր

4· *եալս* եւ *կամ չարնէ զիմ ժամն դատի յԱյ*
եւ *իմ մեղացն պարտական է առաջի Այ:*

ԾԱՆՕԹ.— Արձանագրութեան գլխին՝ մէջ տեղը՝ քանդակուած է մի ելնդաւոր խաչ: Գրերը խոշոր են եւ բաւական գեղեցիկ, բայց նկարել կարելի չէր, մի մեծ ծառ առաջը կտրած լինելու պատճառով: Առաջին տողի կէտերով նշանակած մասը կոտրուած է, բայց կարելի է լրացնել· պէտք է լինէր «զին որդոյ ա»:

Տես· Ջալ· Ա· 112· սխալաշատ: Կոստ· Վիմ· Տար· 91· թերի:

ՅԱՒԵԼՈՒԱԾ Ա· 14·

(Յոհաննայ վանքի հարաւային պատին, այժմ փլուած)

ՈՂՋ Թ· Հ·

1· *Ողորմութբ այ ես Պռաւշ* որ *դի մեծի ի*
շխ ան *ին* (շ–ի շրջանի մէջ «խ»)

2· *Վասակա* մի աք ան *եցա սբ ուխտխս եւ էտու ինչս եւ սոք*

3· *ա խոստացան ի տ* ար *ին: Ժ: ւր պատ*ար *ագ ի տ* աւ *նի: Ք*

4· *գալստե* ան *յանուն մաւր իմո Մամաքին կատ* ար *իչք դր*

5· *ոյս աւրհնին յԱյ*  Ամէն:

ԾԱՆՕԹ·— Այս արձանագրութիւնն առաջին անգամն է մատչելի դառնում բանասիրութեան: Երրորդ տողի վերջին «ք» աւելորդ է, գրչի սխալ, գուցէ «Քառասնից» գրելու համար:

ՅԱՒԵԼՈՒԱԾ Ա· 15·

1· *ի թվին ՉԺԷ*
2· *Այս ար փխափայլ նը*
3· *չան ահ* աւ որ *եւ ածային*
4· *զէն անպ* ար *տելի* նէ *ըկեալ ար*
5· *եա* մք որ *դոյն սա է ածամ* ու *խ* սու սե
6· *ր սբ* մե *ծ եւ հզօր սպանիչս վիշա*
7· պի *ն* որ *գցօղ անապակն* ար *եանն է*
8· *հեղ ի փրկ* ու *թի աշխարհ–ի* (նշանագրով) *այս դեղ*
9· ար *դ ածաշ* ու *ք* եւ *հիազօր արձան լ* ու *ս*
10· (*ա*)*տ* ու *կանգնեալ ի փառս Հայաստան աշխարհ–ի* (նշանագրով) *հրափայլ* եւ
11· *ծաղկանկ* ար ար *եամբն քի վա* ռե *ալ* եւ *վայելչացեալ պ* սա *կ պ* ար
12· *ծանաց կաթ* ու *ղիկէ ե* կե *ղեցւոյ* եւ *թագ* ար *ք* ու *նական*
13· *ի դլ* ու *խ քրիստոնէից*· ու *ստի ի կ* ամ *ս ր* ար *ձրելոյն*
14· *զօրհնեալ* (s!)· *ես Պռոշ իշխան* որ *դի Վասակա ար*
15· *ժանաւ* որ *եալ ածազէն սբ նիզակխս զ* ար*դ* ար *եցի*
16· *զսա պատ* ու *ական պահարան* աւ *բարեխօս ինձ* ու
17· *նելով յահ* աւ *որ ստենին Քի* եւ *մեծ* աւ *յու սով ըն*
18· *ծայեցի յիմ գանձագին գերեզմանատ* ու *նս*
19· *ի սբ ուխտս Այրիվանից յիշատակ յ* աւ *իտենական*
20· *ինձ* եւ *զ* աւ *ակաց իմոց Պապաքին Ամիր Հասանին*
21· եւ *Վասակա* եւ *կենակցի իմոյ Խ* ու *թլ* ու *խաթ* ու *նին ի Քս*
22· *փոխեցելոյ* եւ *Մկդեմին* եւ *Գօհար խաթ* ու *նին*
23· *որ կխօրեայ ելին յ–աշխարհ–է* (նշանագրով) *յորոց վերա ամենեցուն*
24· *սոցա կենդանեաց* եւ *մեռելոց ծագէ շնորհ ո*
25· *զորմ* ու *թեն Քի միշտ* եւ *հանապազ* եւ *փոխանակ այ*
26· *սմ նիզակի շնրհեսցէ* (s!) *Քս բարեպաշտ իշխա*
27· *նին Պռոշա խորան արեգակ* նա *փայլ* եւ *անճա*
28· *ռելի* և *լ* ու *սափառ պսակ կազմեալ ի ձեռն Այ*
29· *Իսկ ի թվին Ռ· Ճ· Լ· եւ Ջ·ին ես Դաւիթ վարդապետ*
30· *առաջնորդ սբ ուխտիս Այրիվանից յազգ*
31· *էն Խաղբակա եւ Պռոշա* որ *դի Ինանիկին ե*
32· *տու նորոգել զպահարան սբ Գեղարդա ռա*
33· *ւել պայծառ քան զառաջինն սակս յուսոյն*
34· *զոր առ Քս յիշատակ ինձ եւ ծնօղաց իմոց եւ*
35· *հ* օր *եղբարցն իմոց Դ* աւ *իթ եպսին* եւ *Ստեփան*
36· *նոս վարդապետին հանգուցելոց ի Քս եւ*
37· *եղբ* ար *ցն իմոց Բէկ Ասրին ? Կիրակոսին* եւ *քեռն ի*
38· *մոյ Մ* ար *խամ* ու *յ* որ *ոց առ հասարակ կենդանեաց* եւ *մեռ*
39· *ելոց ամենեց* ու *ն ողորմեսցի* եւ *կազմօղի սորի*
40· *ն Գրիգորի եւ Սարգսի:*

ԾԱՆՕԹ·— Նոյնատիպ հրատարակուած է նաեւ մեր Գրչութեան Արուեստ· Գ· § 30· տախտ· ԺԸ: Հինգերորդ տողի մէջ յաջողուել է մեզ այս անգամ ճշդիւ կարդալ· «*սա է* ածամուխ *սուսե*» ընդգծուածները· վեցերորդ տողում «սք մեծ»· քսանիններորդ տողում ուղղուած է տպագրական սխալը, պէտք է լինի «Ռ· Ճ· Լ· եւ Ջ·ին», երեսունեօթերորդ տողում Դաւիթ վարդապետի առաջին եղբօր անունը ուղղում ենք «*Բէկ Ասրին*» փոխանակ «Բէկս(աւ?)սին», ինչպէս առաջ, եւ ոչ երբեք «Բէկու–

մին», ինչպէս կարդացել է Շահխաթունեան եւ նորանից արտագրելով Մխիթարեան: Լրացրել ենք եւ կցուածների վերաբերեալ տպագրութեան ժամանակ բաց թողնուած ընդգծումները:

Տես Շահխ· Ա· 51· Մխիթարեան 77/8· Ալիշ· Այր· 339· միայն Պռոշի մասը:

ՅԱՒԵԼՈՒԱԾ Ա· 16·

Եւ ես անարժան Դօիթ գրիչս որ հող եմ եւ մոխիր ոտից ձերոց կրկին անգամ աղաչեմ, զի յիշեսջիք ի մաքրափայլ եւ ի մեղսաքաւիչ յաղօթս ձեր, զստացաւղ գրոյս զտր Սարգիսն, եւ զիս զանպիտան գրչակս զԴթ էրեց, եւ զհայրն իմ զՏր. տր. եւ զմայրն իմ զԳոնցայ փոխեցեալն առ Քս, եւ զեղբայրքն իմ զվերոյգրեալքն եւ զՄարգարայ եւ զորդիքս (վերան կարմիր «եակս») մեր զԱլէքսանոս եւ զՅոհանէս եւ զայլ ամ. արեան մերձաւորսն իմ. եւ զկենակիցն իմ զՓաշա խաթունն, որ բազում աշխատութբ ծառայել է մեզ սպասաւորութբ. եւ զայլ աշխատաւորսն որ ի վր մեզ երախտիք եւ աշխատանք ունին ամէն: Եւ դուք ով պատուական յիշատակող եղբայրք, եթէ կարդօրք եւ թէ յաշխարհական, որք հանդիպիք այժմ սբ գրոյս կարդալով կամ աւրինակելով եւ կամ զհրամանք սրյ լսելով, ասասջիք ի խորոց սրտէ, թէ տր. Ած. ողորմի նց. Եւ Ած. որ առատն է ի տուրս բարեաց ձեզ յիշողացդ եւ մեզ յիշեցելոցս առ հասարակ ողորմեսցի եւ նմա փառք անզրաւ յաւիտեանս յաւիտենից ամէն: Եւ սղալանաց եւ խոշորութե գրոյս անմեղադիր լերուք, զի կար մեր այս էր:

217ա. Ներքեւի լուսանցքում.

«Տր եւ Ած, դու լեր իմ յոյս,
ի յաւագի Հինգշաբթոյս
որ էր թվկն ՋԻԷ ոյս,
որ է զատիկ հայոց ազգոյս,
ոխտս խիստ ցուրտ եւ չոր տարոյս,
ի ղանութե. նոր փաթշահոյս,
Խալիլ սուլտանն նստեալ այժմուս,
ահաբեկեալ ի Վրացոյս»:

316ա. Ներքեւի լուս.

«Քս. Ած. ողորմի պրն. Գուլգունին, որ մեզ նոր կարասէ զինի էր աղարկել մի զաւ»[1]:

ՅԱՒԵԼՈՒԱԾ Բ. 32.

(Ձեռ. էջմ. № 479/2781. Ն. Ժ.)

278ա. Յիշատակարան սբ. գրոցս (ճաշոց).

Փառք անբաժանելի եւ միասնական սբ երրորդութեն. հաւր եւ որդոյ եւ հոգւոյն սրբոյ այժմ եւ անզրաւ յաւիտենից ամէն:

Արդ եղեւ կրկին նորոգումն սորա ի թվականիս Հայոց մեծաց ՋԻԵ. ի Ղանութե. Պայանդուր Հասան բէկին, որդոյ Աւթման բէկին, ի կաթողիկոսութե. տն. Սարգսի եւ յահրի եպսութե. մերոյ նահանգիս տր. Յոհանիսի, ի յիշխանութե. պրն. Ջումին եւ որդոց նորին Ղալայ բէկին, Ուլուս բէկին, Թուման բէկին, պրն Հայկազին եւ եղբարց նորին՝ պրն Ամիր Վասակին, Հաղբակին, Ամիր Հասանին. աւարտեցաւ ձեռամբ Զաքարիայ կուսակրաւն աբեղայի եւ եղբաւր սորին շնորհալի Աբրահամ աբեղայի, զպակասն գրել եւ ի վալայելն, ի ծաղկելն եւ ի կազմելն. ի սբ. մենաստանս, որ անուամբ յորջորջի Բոլորաձորոյ անապատ, առ դրան սբ. Ածածնիս. եւ շնորհաբաշխ սբ. Կարապետիս եւ սրբոց ճգնաւորաց հանգստարանիս, ի յառաջնորդութե. սբ. ուխտիս նուաստ ի բանաւորաց Աւագտէր

---

[1] Ճառընտիր կաշեկազմ. 26×19. թուղթ. 26×17·8, բոլորգիր, երկիջեան 19·7×5½ սմ., թերթ 491. Ոսկեբերանի, Եփրեմի, Յոհան Մանդակունու, Սարգիս Շնորհալու, Զաքարիա կաթ·ի ճառեր եւ մի քանի վկայաբանութիւններ:

անուն կոչեցեալ, եւ այլ միեղէն եղբայրութեցս, որ աստ են ժողովեալ:

287բ. *Ի խնդրոյ մաքրամիտ եւ սրբասէր Մովսէս քահանայի եւ կնոջն իւր (բաց անուան տեղը) եւ որդոցն (բաց երկու անուան տեղ) եւ դստերացն (բաց, երկու անուան տեղ). լսելով զայն, թէ երանի որ ունիցի զաւակ ՚ի սիոն եւ ընտանեակ յԵմ: Արդ որք հանդիպիք սմայ տեսանելով կամ օրինակելով, յիշեսջիք ի մաքրափայլ յաղութս ձեր զՄովսէս քահանայն ամ. ընտանաւք* (s!) *հանդերձ: Եւ զիս զանարժանս Զաքարա հաբեղա, որ միայն զանունս ունիմ եւ ոչ զգործս, զի յոյժ հնացեալ էր եւ փտեալ, բազում աշխանք. եւ չարչարանաւք նորոգեցի սբ. գիրս, որ կոչի Ճաշոց: Կըկին* (s!) *անդ* (s!) *աղաչեմ զհանդիպողք սմա, զի յիշեսջիք ի սրբայհաճոյ յաղաւս* (s!) *ձեր զհայրն իմ Տր տր եւ զմայրն իմ Գոնցա հանկուցեալ ՚ի Քս. եւ զուք յիշեալ լիջ* (s!) *ի միուսանդամ* (s!) *գալուստն Քի ամէն:*

1բ. Կարմրադեղով.

Զոր Խաչատուր հոգով բարի
յիշեա յաղօթս ով երիցանի,
եւ զԱբրահամ մեղօք լիլի,
յիշեա ի տր ով սիրելի.
զի զխորանս ծաղկելի[1],
Մեղ մի ընէք թուղթ էր Թավրէժի:

ՅԱՒԵԼՈՒԱԾ Բ. 33.

(Ձեռ. էջմ. № 1091)

Աւետարան, թուղթ, բոլորգիր Աբրահամ գրիչ եւ նկարիչ Սպիտակ. Ածածնի: Նկարազարդ, չորս աւետարանիչներն իրենց սկզբնազարդերով, եւ լուսանցքի զարդերով, միջակ արուեստ: Նոյնն է № 2674. Յաւել. Բ. 28:

Ղուկասի վերջում.

«Զանարժան Աբրահամ յիշեա. սբ. վիրապի տաւնին աւարտեցաւ յաւուր շբ. քաղոց, Գ, մարտի ԻԳ. թվ. ՋԼԱ.

Մատթ.ի տակ նկարած, գրով.

«Զանարժան Աբրահամս յիշեցէք ՚ի Քր. Յս. Փրկիչ»:

Յովհ. վերջում. Փառք եւն.

Արդ գրեցաւ այս ձոյլ ոսկի որ փոխանորդէ Յի, ձեռամբ ՚իմոյս անարժանի, որ Աբրահամ կոչի, ստունդանող պատուիրանի, եւ անցաւոր տն. աւրինի, սուտ անուն քահանի. եւ հեք փանաք չիք աբեղի. յաբեթականս տաւմարի եւ հայկազեան թվականի: Չ: եւ երսունի, նայ եւ մի ամ այժմ աւելի: Յերկիրս այս Վայի ձորի, որ Եղեգեաց զաւառ կոչի: Բոլորբերդոյ յանապի! ի յահագին բարձր սարի, ի դրան սբ. մաւրս Ածածնի. եւ այլ սրբոցս՝ որ այս տեղի: Քանզի ձեռամբ իմ գրեցի. նաեւ ծաղկօք զարդարեցի, եւ աւարտեալ եւս կազմեցի, ոչ իմ կարեաւք այլ Յի:

ի վայելումն բարեաւք բարի, Յակոբ ընտրեալ քհյի, եւ զաւակացն իւր ցանկալի, տխաւք տղայք ոյք են մանկտի. Զաքէոսի, Մաթէոսի, Մարտիրոսի, Ստեփանոսի:

Ի դառնութե. ժամանակի, որք եմ նեղեալք ի ձեռս տաճկի, ի խանութե. Յաղուպ բեակի, որ է այժմ ի Թավրէժ թախտի: Համբաւ եղեւ ի յայսմ ամի, թէ հաճ նոցա հրով կայրի: Եւ էր հայրապետ հայոց զաւմի, տր. հոգեւոր Սարգիս կոչի, հեզ եւ խոնարհ ըստ Մովսեսի, համանման տր. Գրիգորի: Եւ երջանիկ եւ տր. ահրի եպս. յայսմ զաւառի, տն. Յոհաննէս սբ. եւ բարի եւ Ստեփաննոս եպսի. եւ բարունեացս ցանկալի, մեծն Սարգիս յոյժ գովելի եւ ի սորին աշակերտի Աւագտիրի եւ Յակոբի եւ Եսայի նորաբուսի, որք են շնորհօք հոգոյն լիի[2]:

Արդ աղաչեմ զձեզ, ով սբ. ընթերցողք եւ հանդիպողք եւ գաղափարողք սբ. աւետարանիս, յիշեսջիք ի մաքրափայլ յաղութս ձեր, զի միաբանք սբ. ուխտիս, զհոգեւոր հայրն իմ եւ զուսուցիչն եւ զառաջնորդ սբ. տեղեացս զԱւագտր. վարդան, զտր. Ստեփանոս սբ. աբեղայս եւ զասավար. զտր. Զաքարա հէրպտ. եւ մարմնաւոր եղբայր իմ. զտր. Դաւիթ աւագ եղբայրն իմ յոյժ շնորհալի եւ աւագ էրէց զեղէից, զտր. Նահապետ աշակերտս մեր կուսակրաւն, որ զթուխթս կոկեաց, զտր. Կոստանդն, զտր. Ալէքսանոս փակակալն սբ. եկեղեցոյս, զտր. Աթանէսն, զԱղաչան զպիրս: զԲուրթէլ զպիրն եւ զՈհան:

Արդ դարձեալ յերեսս անկեալ աղաչեմ զձեզ յիշել ի տր. Յս. Քս. զստացաւղ սորա զտր. Յակոբ քահյն. եւ զկենակիցն իւր զԹանկուղն եւ զորդիքն իւր: Զի ստացաւ զսա ի հալալ ընչից իւրոց, անջինջ յիշատակ իւր եւ ծնաւղացն: Լսելով զայն թէ երանի որ ունիցի զաւակ ի սիոն եւ ընդանի յԵմ: Եւ ես գրել իմոյս տկարի ի վայելումն անձին իւրո եւ որդոցն եւ եղբարցն իւրոց: Յիշեցէք զտր. Յակոբն, զհայրն նորա զԻսահակն, զմայր նորա զԹամիկն եւ զեղբարքն զՄարգարէն, զՓիրիկն, զՄարկոսն, զՋանիբարն, զԿոստանդիանոսն եւ զքորքն նր. զՀայոցն եւ զՆուշն, եւ զհաւրեղբայրն նր. զՅովանէսն եւ զորդիքն նր. զՍիմէոնն, զՈսկին, զԳաւզն, զՊատամն եւ զմայր սոցա զԹութիկն ամէն: Եւ զիս զանարժան զրիչս եւ զծնօղսն իմ զՏէրտէրն եւ զԳոնցայն եւ զեղբարքն իմ զՄարգարէն, եւ զԱկոբ միայնակեացն. եւ եթէ մի բերան Ած. ողորմի ասէք, միոյն հազարապատիկ առցէք ողորմութի. ի Քէ. Այ. մերոյ ամէն եւ եղիցի:

Եւ սղալանաց եւ խոշորութե. գրոյս անմեղադիր լերուք, զի կար մեր այս էր:

---

[1] Բաց է թողած երեսը եւ չէ ծաղկած:

[2] Մինչ այստեղ ոտանաւորով է:

ՅԱՒԵԼՈՒԱԾ Բ· 34·

(N°· 577· Նժ·)

Աւետարան, փոքրադիր, մագաղաթ, գեղեցիկ նկարազարդուած, լաւ բոլորգիր, տների սկիզբը ոսկի գըլխատառերով, ինչպէս եւ նշանակալից բառերը, «տր· Ած, հայր, Յս», մանրանկարչական տառերով սկսուած, առաջին տողը ոսկեգիր·

Նկարները· ա) Ղազարու յարութիւնը, բ) Մուտն յԵմ· գ) Խորհրդաւոր ընթրիք· դ) «Վերնատուն–Յովսեփայ» Ոտնալուայ· ե) Խաչելութիւն· զ) Աւերումն դժոխոց· է) Խաչից իջեցնելը, պատանելը· ը) Աւետումն (աղբիւրի մօտ)· թ) Քառասնօրեայ գալուստն ի տաճարն· ժ) Յարութիւն· ժա) Համբարձումն· ժբ) Միւսանգամ գալուստը, ստացողի եւ Զաքարիա եղբօր պատկերներով· պատկերի տակ «թվ· Ջխէ»:

Չի նկարած դիմացի երեսը, բայց ներքեւի լուսանցքում հազիւ ընթեռնլի կարմրադեղով գրուած է·

«Զքարեմիտ կինն եւ զերկիւղածն Այ·/զԱզիզն, որ շատ կու ծառայէ մեզ եւ/ետ ընծա սբ· աւետարանիս· Յիշ· ի Քս· ՋԾԱ:

ժգ) տաս խորանները:

ժդ) Մատթէոս եւ սկզբնազարդը· Մատթէոսի նկարի տակ·

«Զանարժան Աբրահամ· ստացիչ եւ նկարիչ սբ· աւետարանիս· Հանդերձ ծնողօք եւ վղտաւք· յիշեսջիք ի սբ· եւ Ածամերձ· յաղօթս ձեր· եւ Ած· զձեզ յիշէ ամէն:

ժե) Քի ծնունդը· ժզ) Մկրտութիւնը· ժէ) Լերան քարոզը:

Լուսանցքի զարդեր, մանրանկարչական տառեր, լուսանցքում բովանդակութեան պատկերներ· դիւահարի բժշկութիւնը, տաճարի՝ այսինքն երկու սիւների վրայ գմբէթ, անօթից ջուրը թափւում է սկաւառակի մէջ, բաղարջակերաց տօնը· տառերը թռչնագիր, մարդագիր, բուսագիր· արուեստը Պիծակեանը յիշեցնող·— Մարկոս եւ սկզբնազարդը, լուսանցքում ողկոյզը ճաշակող կենդանի կամ եղջիւրաւոր կենդանի, լուսանցքում պայծառակերպութիւն՝ առանց Եղիայի եւ Մովսէսի:

Մարկոսի վերջում·

«Թվ, ՋԽԵ· Սսաթէլի վանքս ծաղկեցաւ»:

Յոհաննու վերջում, գլխաւոր յիշատակարանը, 380բ·

Փառք եղակի տրութեն· եւ եռահիւսակ անձնաւորութեն· Հաւր եւ որդոյ եւ Հոգոյն սրբոյ· այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից ամէն:

Որք ըղմտաց աչս անաղաւտ եւ վճիտ ունիցին երկնանկատ դիտմամբ առ էականն լոյս եւ իմանալեացն տեսարան, նոցին ոչինչ է փոյթ բովանդակ բնաւին ինչ որ յաշխարհի եւ որ ընդ հոսանուտ եւ եղծանելի բնութեա· բերին, այլ միանգամայն զհուր սիրոյն, զոր հուրն կենդանի արկ ի բանական բնութիս· աւրըստաւրէ արծարծեն յոգի աննշիջանելի բորբոքմամբ հոգեւորացն տուր եւ առութբ·, որով եւ լուսաւորին ըստ բանի ածահայր· մարգարէին որ ասէ· պատուիրանք տն· լոյս են եւ լոյս տան աչաց: Արդ՝ ըստ նոյն ապացուցի ածայնոց· իրաց հետեւեալ, ածաբան· եւ քաջ բարունապետն Աբրահամ: Եւ իմանալի աչաց տեսութբ· պայծառապէս եւ զերաբնաբար արտափայլեալ, եւ փափագմամբ ածային· սիրոյն միշտ հոգով պարապեալ, խոկայր զերկնայինսն եւ ազգի ազգի ճգամբ եւ չարչարանաւք ճըշգէր զմարմինն ի յայսմ կենցաղոյս եւ ոչինչ համարեալ, որ ինչ յաշխարհի է· այլ միայն ստացուած կենդանի ստացեալ եւ զհոգէշունչ մատեանս զաւետարանական ածախաւս· քարոզութիս· փրկչին մերոյ եւ Այ·: Յոյժ փափագանաւք եւ մեծատենչ ըղձմամբ ստացաւ զածախաւս· մատեանս, որ յորջորջի աւետաւոր երկնից արքայութեն·: Ի յիշատակ հոգւոյ իւրոյ եւ ի ժառանգութի· ընտանեաց իւրոց կենդանեաց եւ ի փըրկութի· հոգոց ննջեցելոց իւրոց: հօրն իւրոյ... (ջնջած է) եւ հարեղբաւրն ածաբան· վրդտն· Աւագտիրի· եւ մաւրն իւր Գոնձին: Եւ աւագ եղբաւրն Դաւիթ քհին, եւ միւս եղբաւրն բարէմիտ եւ կուսակրաւն աբեղային Զաքարիայի· եւ կրտսեր եղբաւրն իւր միայնակեաց եւ սպասաւոր միաբանիցն (այս բառի գլխին տարբեր գրով, բայց կարծես նոյն թանաքով «Յկբին»): Եւ այլ միւս եղբաւրն աշխարհի Մարգարին· եւ եղբաւրորդոյն իւր դեռաբոյս եւ կուսակրաւն աբեղայի Վրդանիսի·:

Արդ գրեցաւ սայ ի յերկիրս Վայոյ ձորոյ, ի գաւառս Եղեգիս, ի սբ· ուխտս որ կոչի վերին Նորավանս, ընդ հովանեաւ սբ· Սիովնիս· եւ սբ· Ածածնիս· եւ այլ ամենայն սրբոցս, որ աստ կան հաւաքեալ բարեխաւսել առ տր· վասն մեր: Ձեռամբ յոգնամեղ, վտիտ Փանաքի, եղկելի եւ թշուառական Գրիգոր անարժան եւ ծուլ աբեղայի: Ի խանութե· Ըռուստամին յազգէ տաճկաց: Ի քաղաքն շահաստան որ է Թաւրէզ: Եւ ի հայրապետութե· հայոց տն· Սարգսի յաթոռ սբ· Էջմիածնին: Վասն որոյ աղաչեմք զամենեսեան, որ լուսաւորիք սովաւ կարդալով կամ աւրինակելով եւ հոգեւոր խրախութբ·, յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զքաջ բաբունին զԱբրահամ, զըստացող սորա եւ զծընաւղսն: իւր: Եւ զիս զանարժանս եւ զպարտականս բիւր քանքարոյ զԳրիգոր եւ զծնաւղս իմ յիշման արժանի առնել, եւ դուք յիշեալ լիջիք ի Քսէ· Այ· մերոյ ամէն:

Այլ եւ խոշորութե· եւ սղալանաց գրիս անմեղադիր լերուք, զի կար մեր այս էր:

Գրեցաւ սա ի թվականիս հայոց: ՋԽԴ:

ՅԱՒԵԼՈՒԱԾ Բ· 35·

(N°· 131 Նժ· — Ցայսմաւուրք)

Գիրը լաւ բոլորգիր է, նկարչութիւնը, որ սկզբնազարդեր են միայն եւ լուսանցքի զարդեր, միջակ, ոչ բարձր արուեստ:

Գլխաւոր յիշատակարանը վերջում·

Յիշատակարան գրոցս

Փառք ամենասբ· ամենազօր եւ կենդանարար սբ· երրորդութեն· եւն·

Արդ այժմ հոգեւոր եւ ածային· եւ մեծափառ զանձուցս ցանկացողք եղեալ երկոս երանեալք երկու հարազատ կրօնաւորք Տրտր եւ Յովս, եւ բարեմխտ եւ ածասէր· Զաքարէն եւ որդին իւր Մրգր· քհ, եկեալք ի յանդաստանս եկեղե/ցոյ եւ տեսեալք զկրուխս· սպասուցն եւ կարգացն եւ զանազանութի· ամ· կահիցն, զոր եղեալ ի փառս Այ· եւ ի յաւգուտ մեր եւ ի լուսաւորութի· հոգւոց մերոց· եւ ցանկացեալք տրփմամբ հոգւոյն այսմ բազմաշխատ մատենիս· եւ ետուն գրել զսա ՝ի յարդար վաստակոց իւրեանց հետեւելով այնմ երանութեն·, զոր մարգարէն ասէ· Երանի որ ունիցի զաւակ ի Սիոն, եւ ընտանեակ ի վերինն Եմ: Զոր եւ ես տառապեալ յոգի տր· Յոհանէս եպս· ըստ կարի եւ կարողութեն· Այ· եւ գծագրեցի մի ըստ միոջէ զմարգարտաշար բանս ի սփոփանս մտաց բանասիրաց եւ տաւնասիրաց անձանց: Մանաւանդ ի սէր սիրելեացն Այ· եւ ի պայծառութի· սբ· եկեղեցւոյ, զլուսատուս հայոց եւ զմխիթարիչս մտաց, զփոփանս (s!) սրտից եւ զսուսկացուցիչս մարմնոց, զյիշատակս արեամբ ներկեալ մարտիրոսացն, նահապետաց, նախահարց, սրբոց մարգարէիցն· մինչեւ ի խոնարհելն որդւոյն Այ·, եւ իջանել յերկնի կամաւ հօր եւ սբ· հոգւոյն, գալ բնակիլ յամէնահեալ· սբ· կոյսն Մարիամ աւետաւքն Գաբրիէլի, եւ զսբ· ծնունդն Քի, զառաքելոց, զհայրապետաց, զվարդապետաց, զճգնաւորաց, զկուսանաց, եւ զամուսնացելոց սրբոց վարս եւ զյիշատակս եւ զվկայութիս· զի եւ նք հետեւեցան վս սիրոյն Քի ազգի ազգի տանջանաւք յանհօատից բռնաւորաց: Ըստ այսմ յուսոյ եւ պայմանի ցանկացան եւ այս բարէսէր եւ բարէմխտ արքս, երկու հարազատ կրաւնաւորքս Տրտր եւ Յովս· եւ զկէս գրոցս ետուն գրել, վս զի ոչ ժամանեաց սրբանեալ աբեղայն Յովանէս ի կատարումն գրոցս, այլ փոխեցօ մահւամբ յաշխրհէս· յանանց կեանս· Նոյնպէս եւ եղբայրն Տրտր փոխեցաւ առ Քս· եւ ոչ կարացին զբոլորն գրել տալ: Վս· որոյ տեսեալ զսայ ածասէր· եւ բարէմխտ այրն Զաքարէն եւ որդիքն իւր Մրգր· քհայն· եւ մայրն իւր Խէրխաթուն եւ ամուսինն իւր Խումարխաթուն, եւ զկէս գրոցս այլ նք· ետուն գրել ի հալալ վաստակոց իւրեանց:

Արդ եղեւ զրաւ գրչութե· սբ·, այս մեծահանդէս, ծաղկազարդ եւ հոգելից տառի ի չրջագայութե· հայկազեան տումարի, ՋԼԵ, ի ղառն// եւ ի չար ժամանակի, որով նեղիմք ի բռնութենէ անաւրինաց եւ յանիրօ պահանջողաց: Ի հայրապետութե· տն· Սարգսի ի յառաքելական աթոռն ի սբ· Էջմիածինն եւ յաշխարհակալութե· Ցաղուպ բէկին որ ի սորա ժամանակս եղեւ թասպութի·, զի ղաւին թաթար էր եւ հալածէին զքրիստոնեայսն ի Թավրէզ քաղաքի· զի տաճիկ ոմն անուն Մեհդի սպան զմեծ ախոյեանն հայոց զխաւճայ Միրաքն վս· ի Քս· հօատոյն, որ եւ յիշատակն ահութր· եղիցի ամէն: ի սբ· եւ ՝ի գերահռչակ ուխտս, որ կոչի Այրի վանս, որ եւ հիմնարկեալ է ՝ի սբ· Լուսաւորչէն Գրիգորի, ընդ հովանեաւ սբ· Ածածնիս եւ արեամբ ներկեալ Քի· սբ· գեղարդեանս, եւ սբ· աջոյս Յովաննու, եւ Խոտակերաց սբ· նշանիս եւ տապանակի սբ· Յակոբին եւ այլ բզմահաւաք սրբութեցս·, յառաջնորդութես· Յոհս· եպսի· եւ հարազատիս իմոյ գեղեցկատիպ մանկանս տր· Ստեփանոս եպսի·, եւ ձեռնասնունդ հոգեւոր որդս (s!) մերոց միաբանիցս, յԵսայոյ եւ Կարապետի (տողի գլխին այլ գրով «եւ տր Մաղաքիայի»), Խաչատրոյ եւ Ստեփանոսի, Մելքսեթի, Աթանասի փակակալի, Հերապետի եւ Ազարիայի:

Արդ յերեսս անկեալ աղաչեմ, որք հանդիպիք սմա տեսութբ·, յաւրինակելով, կարդալով եւ կամ լսելով, յիշեսջիք ջերմեռանդ սրտիւք եւ քաղցրագութ մտաւք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զստացող սբ· գրոցս զՏրտր քհ· եւ զՅովս· քհ· եւ զՄախթումշայ, նաեւ զբարէմխտ եւ մեծազգի այրն Զաքարայ, եւ զկենակիցն իւր զԽէրխաթունն, եւ զպատուելի եւ զփառաւոր եւ զճգնազգեաց քաջ, բարունապետն Ստեփանոս, եւ զՄրգր· քհայն· եւ զկենակիցն իւր զԽումարխաթունն, եւ զքոյրն իւր զԵղիսաբեդ, եւ զորդիքն իւր զՍիմէոն զպրն, Ազիզբէկ, Գալուստ եւ Զաքարայ, եւ Սահակ եւ զհաւրեղբայրսն զպր· Ջանազին եւ զԱմիրազին, զՄուշեղ եւ զԴօլթ, զփոխեցեալքն առ Քս· եւ զորդիք նոցին զպրն· Դիլտարն եւ զՄաթէոս քհայն·, զպր· Շանչէն եւ զՇերանչէն եւ զԳրիգորն եւ զփեսայն իւր զՋանիկ աղէն եւ զդստերսն Թամթայխաթուն եւ զՍիրմիկ եւ զԴավլաթն:/

Արդ ստացաւղս Ածաչունչ· բուրաստանիս զհաւստրակն· (s!) Տրտր· եւ Ովս· կրօնաւորք վս· այն պատճառին, որ զբոլորն գրել տան, որ ի վանքս իւրեանցն յիշատակ լինի, երբ որ Ովանէս աբէն (s!) վախճանեցաւ, Տրտրն չկարաց թամամել· մեք Այրիվանուց եպս· եւ միաբանք աղաչեցաք զՏրտրն, թէ դու զքո բաժինն այլ այն գեղին տուր, վս· այն պատճառին, որ այն Բարձաղի գեղն սբ· գեղարդեանս սեփական ժողովուրդ է եւ գիրք չունին· զջուրն ծարաւուն պիտի արբուցանել, եւ Տրտրն այլ կամաւորեցաւ եւ միաբան չնորհեցաք զկէսն էլ հետ այն կիսուն, որ Մրգր· էրէցն եւ ՝իւր հայրն Զաքարէն գրել տվին եւ ծաղկով զարդարեցին եւ կազմեցին եւ իւրեանցն անջինջ յիշատակ լինի յայժմհետէ Բարձաղոյ եկեղեցւոյն է այսմաւուրքս, որ հա-

նապաղ կարդան ի մէջ ժողովրդեանն, եւ զյիշատակութի. ստացողաց սբ. գրոցս կատարեն անխափան: Արդ վայելողք սբ. գրոցս եւ կարդացողք եւ լսողք յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զՏրտր քհ. եւ զՅովս. քհ. եւ զհայրն իւրց. զԱծատուր. եւ զմայրն Սաւլթան եւ զքոյրն իւրց. զԹանկուղն եւ զՄաղթումշէն եւ զքւեր դուստրն Խաթունջանն եւ զայլ ամ. արեանառու մերձաւորսն, ասելով ի խորոց սրտէ, թէ տր. Ած. ողորմեա նց. եւ գրեա զնս. զիրն կենաց ամէն. (բաց $7^{1}/_{2}$ տող).

Այլեւ կրկին անգամ աղաչեմ յիշել յաղաւթս ձեր զխս զբազմամեղ զրիչս զտր. Յոհանէս եպս. եւ զեղբայրն իմ զտր. Ստեփանոս այժմ նահանգիս Կոտայից երկրիս, որ աշխատեցայ բզմ. եւ հոգաբարձութբ. գրեցի ըստ կարեաց մերոց, զի ժամանակս դառն էր, որ այլազգեաց չատ նեղութի. քաշեցաք, որ յասմ ամի, Խ, ապատորդի կալան, թէ տաճկացէք. այլ ողորմածն Ած. ձեռնտու եւ աղնական եղեւ նց., յորոց մի էր եղբայրն իմ պր. Հայկազն եւ պր. Աւազն, որ .Է. ամիս կալուլական կացին եւ բզմ. տուգանք տվին եւ ի հօատոցս Քրի. ոչ դարձան, ար//արիչն. Ած. վարձս բարեաց պարգեւեսցէ նց. յիւր միւսանգամ գալստեանն ամէն:

Այլ եւ զհոգեւոր ծնաւղն մեր զքաջ քարտուղար վարպետն զտր. Մաթէոս, որ զաւրինակն շնորհեաց. տր. Ած. զհոգի նր. ընդ սբ. քհայից դասակից առնէ, ամէն:

Այլ եւ զսիրասնունդ հոգեւոր եղբարքս մեր, զտր. Ստեփանոս եպս, պայազատ, եւ զտր. Մաթէոս եպս, որք աւգտակար եղեն կամակցութբ. եւ զծաղկող եւ զկազմող, զարդարող գրոցս զտր. Աղէքսանոսն, զՄիքայէլն եւ զՍիմէոն սրբասնեալ կրաւնաւորքն, այլ եւ զմարմնաւոր ծնաւղսն մեր յիշման արժանի առնէք աղաչեմ միով տր. ողորմայիւ եւ Ած. զյիշողքդ յիշէ յիւր միւսանգամ գալստեանն, եւ մեզ յիշեցելոցս, եւ զստացողաց գրոցս հասարակ մեղաց թողութի. շնորհեսցէ եւ արժանի արասցէ անմահ կենացն եւ երկնից արքայութեն. ընդ ամ. սրս. իւր ամէն: Այլ եւ խոչորութե. գրոյս եւ սղալանացն անմեղադիր լերուք, զի վս. դառնութե. ժամանակիս եւ վս. մեղաց իմոց միտք իմ շմորեալ է:

ՅԱՒԵԼՈՒԱԾ Բ. 36.

(N°. 1610/1613. Շարական)

128ա. Ոհ զՋաքարիա մեղապարտ եպս. զծող եւ ծաղկող այժմ տառիս աղաչեմ յիշել ի տէր:

128բ. Յարութեան պատկերի տակ.

Զնկրչ. չրկնոցիս. զՁքրիա. եպս. յՀԼ. ի տր. աղչմք.

176բ. Հոգեգալստեան պատկերի տակ.

Զստացող չարկնցիս. զտր. Մելքսթ. քհ. յՀՑԼ. (s!) ի տր. Ած.

318բ. Զաքարիա մեղապարտ զծողիս եւ նըկաղիս (s!) Ած. ողորմի ասացէք, զարձեալ աղաչեմ յիշել ի տր. զզուսուցիչքն (s!) իմ զշնորհազարդ եւ զպատուական հայրապետն զԳրիգորիս Աղթամարցին եւ զՅովսէփ վարդապետն, որ շատ աշխատեցան ի յուսուցանելն իմ:

354բ. Փառք սբ. Երրորդութեն. եւ մի ածութե. ամէն:

Գրեցաւ եղանակաւոր տառս ի թուականութես. հայոց Ռ. ԻԵ. ի բռնակալութե. Աւսման ազգին եւ ի հայրապետութե. տն. տր. Առաքել. կթուղիկոսին. սբ. աթոռոյն էջմիածնայ, ի յանապատիս Լիմն կոչեցեալ, ընդ հովանեաւ տաճարիս սրբոյն Գէորգայ, որ կառուցեալ կայ նման վերին խորանին: Ձեռամբ անարհեստ գրչի Զաքրիյ. եպս. նկարողի. զաւրութբ. պարգեւողին յանձն առի եւ զխնդիրս զբարեսէր քահանային կատարեցի տր. Մելքսեթին. նախ զգիրն, երկրորդ զարհեստն զրճգիրն (?) եւ զհիպիլն (?) իմխկոս (?): Երրդ. զերկաթագիրն: Չրրդ. զերեք խորանսն եւ զորնաւրինականքն տախտակ ոսկով եւ ազնիւ լաժվարդով, եւ նուրբ թփերով. եւ ծաղկայգրով ի փառս փրկչին եւ ի վայելումն Մելքսէթ քհին. որ ստացաւ զանառիկ զանձս զայս շարակնոցս ի հալալ արդեանց եւ յարդար վաստակոց յիշատակ իւր եւ կնոջն Ուրախին եւ որդոցն Յովսփին. եւ Կարապետին եւ ծնաւղացն Աւետին եւ Ջահանին. եղբաւրն Մրտին (Մարտիրոսին ?) եւ որդոցն Յովանիսին եւ Աւեդին, եղբաւրն Աղաջին !, Միրիջանին: Միւս եղբաւրն Փիրիջանին եւ Սիմամոնին (s!): Միւս եղբաւրն Ամիրջանին եւ եղբաւրն Նադարին եւ որդոյն Թումաջանին: Միւս եղբաւրն Մէհերին եւ որդոյն Զիրաքին. եւ քուերցն Շահումին եւ Քիշմիշին եւ իւր ամ. արեանառու մերձաւորաց թողու տր. Ած. զամ. մեղս նց. զկամայ եւ զակամայ, խաչի լուսոյն, Գաբրիէլի փողոյն, երանաւէտ ձայնին եւ անթառամ պսակին եւ լուսեղէն առագաստին արժան առնէ զտէր Մելքսէթի հոգին. եւ զինչ անուանք որ աստ յիշւին արժան լինին փառաց փրկչին, յաջակողմեան դասն կարգին, եւ ահեալ. ձայնին արժան լինին. եկեայք (s!) ահեալ. էք հօր իմոյ, ժառանգեցէք զանճառ բարին, զոր պատրաստեալ է միածին իւր սիրելեաց յաւրն վերջին, զտէր Մելքսէթի հոգին դասակից առնէ նոցին, եւ զիւր ննջեցեալքն զամսին. առնէ հաղորդ փառաց նոցին եւ անթառամ սբ. պսակին. ամէն[1]:

---

[1] Կաշէպատ $12^{1}/_{2} \times 9 \times 6$ սմ. տպած զարդարանքներով, թուղթ, օսլայած, լաւ եւ տեղ տեղ մի կամ մի քանի թերթ մագաղաթ: Բոլորգիր: Նկարազարդ:

Նկարներ. ա) Յովակիմ եւ Աննա, եւ սկզբնազարդ:
բ) Յարութիւն եւ սկզբնազարդ:

Լուսանցքի եւ սկզբնազարդեր. լուսանցքում նաեւ պատկերներ:

Տնօրինականները ու սկզբնազարդերը, նաեւ լուսանցքի պատկերները ու ոսկեզօծ թփերը ազնիւ են եւ կիլիկեան արուեստին մօտ: Լուսանցքի եւ մանրանկարչական տառերի մի մասը առանց ոսկու, բայց նոյնպէս ազնիւ:

ՅԱՒԵԼՈՒԱԾ Բ· 37·

(N°, 362· Լիմից բերուած Լալ· ցուց· 653)

Գրեցաւ սբ· աւետարանս այս ձեռամբ Զաքարա եպս·ի գաւառս որ կոչի Ամուկ ի կղզինս (s!), *որ կոչի Լիմ, ընդ հովանեաւ սբ· Գէորգա զաւրավարին ի հայրապետութե· տն· Գրիգրիսի եւ ի թագրթե· Խոնթքար անուն փադշահի· որ է տաատապանք ազգս* (s!) *հայոց յամսու* (s!) *ժամանակիս վասն ծովացեալ մեղաց մերոց· ի թուաբերութե· հայոց ՋՂԸ* (1549)[1]:

Մատթէոսի պատկերի տակ·

«Զաքրա· եպս· Նկարողս յիշեցէք ի տր·»:

ՅԱՒԵԼՈՒԱԾ Բ· 38·

(N°· 1075/1088 Մաշտոց, թուղթ)

93ա· *Փառք ամենասբ· երրորդութե· հաւր եւ որդւոյ եւ հոգոյն սբոյ· յամ· գոյեղէն յարարածոց եւ ի գերապայծառ սբոց· յամ· ժամ եւ յամ· յաւիտեանս ամէն:*

Որ ետ կարողութի· տկարիս հասանել աւարտ գծիս: Արդ գրեցաւ սայ ի թուականութես· հայոց· ՌԹ· ի երկիրս Արարատեան, ի ձորս Քեղոյ/

93բ· *ի վանքս որ կոչի Վանըստան ի դուռս սբ· Ածածնիս· եւ այլ բազմահաւաք սրբս· որ աստ կան հանգուցեալ: Արդ ես Հայրապետ եպս· ետու գրել զսբ· գրքս* (s!) *որ կոչի ձեռնադրութի· ի նոր, ի լաւ եւ ի ընտիր յաւրինակէ Սիմէոն րաբունապետին: Արդ ես Հայրապետ եպս· ետու գրել գիրքս յիշատակ ինձ եւ ծնաւղ//*

94ա· *աց իմոց, հաւրն իմ Խէսարին եւ մաւրն իմ Գուլիդին եւ եղբարցն իմ պրն· Միրաքին, պրն· Պոռչին· եւ ամ· արեան մերձաւորաց· ամէն:*

Արդ ես Հայրապետ եպս· ետու զսբ· գիրքս ի դուռն սբ· Ստեփանոսիս, յիշատակ ինձ եւ ծնողաց իմոց· հաստատուն պահող գրոցս ահնին· Այ· եւ ի մէնջ ամէն· գրեցաւ թվկնիս: ՌԹ· ի հայրապետութե· տն· Գրիգրի (s!)· *ի թգւրութե· Վրաց Սիմոնի·/*

94բ· *ի ղանութե· Թահման շահին· Եւ զմխարանքս սբ· ուխտիս զտր· Հայրապետ եպս· առաջնորդ, զտր· Եղիայ հայրաքիրն պրն· ապաշխարող Արայիչն, որ բազում ժամանակ ծառայեց վանիցս· Ած· զիւր գործեցեալ մեղք թողու· ամէն:*

Սակաւ ծրաւղս Խաղս, թափուրս ի բարեաց, փարթամս ի չարաց, աւախ, որ զրկել· եմ այսպիսի շնրհաց· դուք պատրաստ կացէք:

ՅԱՒԵԼՈՒԱԾ Բ· 39·

(N°· 1501/1512· Յայսմաւուրք· նկարազարդ)

558բ· *Յիշատակարան սբ· գրոցս·*

Փառք ամենասբ· ամենազօր եւ կենդանարար սբ· երրորդութեն...

559ա· *Արդ՝ այժմ հոգեւոր եւ ածային· եւ մեծափառ զանձուցս ցանկացայ զմի յորդւոց եկեղեցւոյ· եւ տեսի զշլութիս· սպասուցն եւ կարգացն, եւ զդանազանութիս· ամ· զահիցն, զոր եդեալ է ի փառս Այ· եւ ի յօգուտ մեր· եւ ի լուսաւորութի· հոգւոց մերոց· եւ ցանկացայ արփմամբ հոգւոյն այսմ բազմաշխատ մատենիս եւ գրել ետու զսա ի յարգար վաստակոց իմոց· հետեւելով այնմ երանութե·, զոր մրգրէն· ասէ· Երանի որ ունի զաւակ ի Սիոն եւ ընտանեակ ի վերին Եէմ: Եւ սկսայ տալ գծագրել մի ըստ միոջէ զմարգարտաշար բանս ի սփոփանս մտաց բանասիրաց անձանց: Մանաւանդ ի սէր սիրելեացն Այ· եւ ի պայծառութի· սբ· եկղցւոյ: Զլուսատուս հոգւոց եւ զմխիթարիչս մտաց: Զսփոփանս սըրտից եւ զոսկացուցիչս մարմնոց: Զյիշատակ արեամբ ներկեալ մարտիրոսացն· նահապետացն, նախահարցն, սրբոց մարգարէիցն մինչեւ ի խոնարհիլն որդւոյն Այ· եւ յիջանել յերկնից կամաւ հօր եւ սբ· հոգւոյն, զալ բնակիլ յամէնօրհեալ սբ· կոյսն Մարիամն աւետօքն Գաբրիէլի: Եւ զսբ· ծնունդն Քի· Զառաքելոց· Զհայրապետաց· Զվրդպաց· Զճգնաւորաց: Զկուսանաց եւ Զամուսնացելոց սրբոց· զվարս եւ զյիշատակս՝ եւ զվկայութիս: Զի եւ նք· հետեւեցան վս· սիրոյն Քի·՝ ազգի ազգի տանջանօք յանհաւատից բռնաւորաց: Ոմանք հրոյ· ոմանք սըրոյ մատնեցին զանձինս իւրեանց ըստ բանին տն·, որ ասէ· Որ ուրացի զանձն իւր վս· իմ, գտցէ զնա: Եւ առաքեալն հրամայէ· եթէ չարչարանացն կցորդ լինիմք, եւ հաղորդ փառացն լինելոց եմք: Ոպ· եւ քաջ նահատակքն կրեցին, թէպէտ եւ ոչ կարեմք հանդիսանալ քաջ արանցն հետեւողացն Քի· տանջանօք կամ մահուամբ զլխովին: Այլ եռափափագ տենչմամբ բաղձանօք սրտիւ զտօն սրբոցն կատարեն, եւ զյիշատակարանս նց· կարդալ բարեխօս կալցուք զնս· առ հանդիսադիրն ամենեցուն Յս· Քս· ըստ առաքելոյ բանին որ ասէ, թէ մար/*

559բ· *մին եմք ի մարմնոյ նր· եւ անդամք յանդամոց նր: Թէպէտ եւ չարչարանօք ոչ կարեմք յօդիլ ի գլուխն մեր՝ ոպ· եւ արի վկայքն: Այլ ի գիշերի հսկելով, աղաղակելով, արտասուելով առ տր· զի եւ զմեզ նոցին պսակացն մասնակից արասցէ: Մանաւանդ զստացող գրոցս զՆրեմխա քհնյս·, որ ստացայ զվարդափթիթ բուրաստանս, յիշատակ ինձ եւ ծնողաց իմոց:*

Դարձեալ յիշեցէք ի Քս· զբարեմիտ եւ զհեզահոգի, զմաքրասնունդ եւ զհոգելի, զողորմածարարք եւ զգըթածասիրտ, զաղքատասէր եւ զաղօթասէր զՆրեմխա քհնյն·, եւ զծնօղսն իւր՝ զհայրն Զաքարիայն, եւ

---

[1] Յիշատակարանը բուն գրչի ձեռքով չէ գրուած, բայց ամբողջ ձեռագիրը մի գրչի գործ է· Նկարները ու հատուածների թռչնագիր սկզբնատառերը, աւետարանիչների սկսուածները ու զարդագրերը նոյն նկարչի՝ Զաքարիայի ձեռքով:

զմայրն զՇաղոսկին, եւ զամուսինն իւր զԹանաղէն. եւ զեղբարսն իւր զՄկրտիչն. ըզտէր Ազարիայն, զԱնդրէասն եւ զԱնանիայն, եւ զքորքն իւր՝ զԳօհարն, զՍանդուխտն, և զԳօզալն եւ զամ. արեան մերձաւորսն: Վս. զի այս նեղ եւ դժուար ժամանակիս, որ կարի պակասեալ եւ չքաւորեալ էր երկիրս ամ. ընչից եւ արծաթոյ համայն. եւ սա այս կասեալ ժմկիս. սրտապնդեալ. եւ ոչինչ եւ իբրեւ զաղբ անպիտան համարեաց զփառս՝ զփափկասիրուիս., զինչ եւ արծաթսիրութիս.: Ըստ որում ասէ. զարծաթ ձեր ժանկահար եւ ժանկ լիցի ձեզ ի վկայութի: Եւ զայս ասութես. առեալ ունէր ի մտի միշտ զտիւ եւ զգիշեր. այրէր տոչորէր հեծեծանօք փղձկեալ եւ հառաչմամբ աղաչէր ի դէմս Այ. վս. զի զխիղճ մտին սոփպէր եւ խղճ սրտին ցանկայր բարի խոկումն եւ այսու բանիւս աղաչէր եւ ասէր. Տր. դու բաց զդուռն ողորմութե. ի վր. իմ. զի կարող լինիցիմ կալ ի տուն գանձուց քո: Վս. զի ոչ ունէր զաւակ մարմնաւոր՝ եթէ այնու զովանայր. այլ զհոգեւորս առնել կամէր զաւակ, որում ասէ. երանի որ ունիցի զաւակ ի սիոն: Այսու բանիւս խոկայր եւ մտածէր՝ թէ զի՞նչ արարից, որ գանձել կարենամ յերկինս, զի ոչ ունէր ինչս բզմս.՝ եթէ ի յաւելորդաց մթերից զոր ինչ կամի առնէր, եւ ոչ զխիղճ մըտացն թուլացուցանել տայր, այլ զօրութբն. Այ. ի բաց ընկեցեալ յինքենէ զնոտի կասկածանս, բարի համարեցաւ գանձել յերկինս, քան թէ ժանկոյ բաժին տալ՝ ասելով, զոր ինչ ունիմ ինչս եւ ստացուածս, առաքեմ ի գանձատունն Այ., եւ սա կարող է տրն. ամենից կերակրել զմեզ. զայսու միայն ունէր բաւական, եւ ոչ աւելի. եւ ինքն միայն ետ գրել, ծաղկել եւ կազմել զյայսմաւուրքս զայս ի հալալ եւ ի քաղցր վաստակոցն, եւ ի քրտանց երեսացն, որ ի հողագործութբ. էր վաստակեալ ինքնին ձեռօքն եւ ողամբ եւ թիկամբն, եւ աւարտեալ յօրինեաց եւ ետ ի սբ. եւ ի հռչակաւոր վանքն ածամուխ. Գեղարդայ, եւ ի ձեռն Դաւիթ սրբանուէր վրդպի: Վս. զի էր Դւթ. վրդպտս. առաջնորդ եւ վերատեսուչ սբ. ուխտիս, որ եւ պայծառ եւ փառաւորեալ պահէր զսբ. մենաստանն, զեկեղեցիս լի ամենայն զահօք եւ պաշտօնատարօք, եւ բզմ. քհնյիւք. եւ միաբանօք, կրօնաւորօք եւ աղքատօք, սաղմոսերգութբ., եւ հաստատ ժամատեղօք, աղօթասէր ծերօք եւ ուսումնասէր//

560ա. *մանկամբ, որ եւ շաբաթ եւ ի կիրակի միշտ անդադար պատարագ Այ. մատուցանելով, որ ոչ օր մի շաբաթ կամ կիրակի խափանել կարէին ի տարին բոլոր:*

Դրձլ. յիշեցէք ի Քս. զբարեմիտ քհնյն. Երեմիա, եւ նախ զհոգեւոր ծնօղն եւ զուսուցիչն իւր զտէր Զաքարիայն, որ բզմ. աշխատանս կրեց. ի վր. իմ. զի ես մանուկ գոլով, որբ մնացի ի հօրէ, եւ այս տէր Զաքարիայս եղեւ ինձ հայր, տարաւ զիս ի սբ. վանքն Գեղարդի, եւ անտի եմ սնեալ եւ ուսել. ի տէր Զաքարիայէն, որ եւ տրն. Քս. վարձատրեսցէ զնա անվախճան փառօքն. ամէն:

Դարձեալ յիշեցէք ի Քս. զԵրեմիա քհնյն., եւ զկողակիցն իւր զԹանաղէն եւ զհայրն իւր Զաքարիայն եւ զմայրն իւր զՇաղոսկին, եւ զեղբայրքն իւր զՄկրտիչն, զտէր Ազարիայն, զԱնդրէասն, եւ զԱնանիայն, եւ զքորքն իւր զԳօհարն, զՍանդուխտն եւ զԳօզալն:

Դրձլ. յիշեցէք ի Քս. զԵրեմիա քհյն. եւ զմեծ պապն իւր զտէր Զաքարիայն եւ զկողակիցն զՄարիամն, եւ զորդին Անդրէասն:

Դրձլ. յիշեցէք ի Քս. զԵրեմիա քհյն. եւ զփոքր պապն իւր զԱնդրիասն եւ զորդիքն իւր զՅովանէսն եւ զԹորամջանն, եւ Զաքարէն եւ զդուստրն ըզՄարիամն՝ զԳոհարն, եւ զՀռոոմսիմէն:

Դրձլ. յիշեցէք ի Քս. զԵրեմիա քհյն, եւ զկողակիցն զԹանաղէն եւ զհօրեղբայրն իւր զՅովանէսն եւ զորդիքն իւր Օլքարէկն եւ զՆազարն, եւ զհանգուցեալ որդիքն զՅովանիսերն (s!), *եւ զդըստերքն զԹամարն եւ զԹաթունն: Եւ զկողակից Օլքարէկուն Նուրխատին եւ զԱսլումն:*

Դրձլ. յիշեցէք ի Քս. զԵրեմիա քհնյն. եւ զեղհօրեղբայրն զԹորամջանն եւ զկողակիցն զԲէկխաթունն եւ զորդին իւր զԵսային եւ զհանգուցեալ որդիքն զՅակոբն եւ զԱնանիայն եւ զդուստրն զՀռիփսիմէն եւ զհանգուցեալ զստերքն իւր զԱննէն եւ զՆազլուխանն:

Դրձլ. յիշեցէք ի Քս. զԵրեմիա քհյն., եւ զեղբայրն իւր զՄկրտիչն եւ զկողակիցն զՆաներն եւ զՍառախաթունն:

Դրձլ. յիշեցէք ի Քս. զԵրեմիա զքհնյն. եւ զեղբարսն իւր զԱնդրէասն, որ ի տիս տղայութե. հանգեաւ ի Քս. եւ զտէր Ազարիայն, որ նա եւս հանգուցեալ է առԱծ., եւ զԱնանիէն եւ զկողակիցն զՍոլթանզատէն, որ եւ նք. հանգուցեալք են ի Քս. Յս.:

... (բաց կէս սիւնակ)..

560բ. *Դրձլ. յիշեցէք ի Քս. զԵրեմիա քհնյն. եւ զքոյրն իւր զԳօհարն եւ զկողակիցն զՄուրատն եւ զորդիքն իւր զԿարապետն. եւ զՍահակն եւ զդստերսն իւր զԱնթառանն եւ զՄարիամն եւ զմիւս քորքն զՍանդուխտն եւ զԳօզալն, որ ի տիս մանկութե. առԱծ. են փոխեցեալ:*

Դրձլ. յիշեցէք ի տր. զԵրեմիա քհնյն. եւ զհօրեղբօրորդին իւր զԵսային. եւ զկողակիցն զՄարիամն եւ զնորաբողբոջ որդին իւր զԹորամջանն, որ առԱծ. է փոխեցեալ. եւ զդստերսն իւր զԱննէն.....

Դրձլ. յիշեցէք ի Քս. տր. զԵրեմիա քհնյն. եւ զհօրեղբայրն իւր զՅովաննէսն եւ զդուստր նորին զԵղիսաբէթն եւ զորդիսն Եղիսաբեթին զՅոհանն որ առԱծ. է փոխեալ. եւ զմիւս որդիսն զՄաթէոսն եւ զՄարկոսն եւ զդստերսն զԱննէն եւ զՌսկին:

Դրձլ. յիշեցէք ի Քս. զԵրեմիա քհնյն. եւ զպապն զԱնդրէասն եւ զդուստր նորին զՄարիամն և զՄարիամորդիքն զՎիրապետուրն, զՅակոբն, զԳրիգորն, եւ զՍօղոմոնն եւ զդստերսն Եղիսաբեթն՝ զԱզիզն եւ զՓիանդէն: Եւ զմիւս դուստրն Անդրիասին զԳօհարն եւ զոր-

դին զԳրիգորն: Այլ եւ զմիս զուստրն զՀոխիմէն, եւ զորդիսն զԱւետիսն եւ զԲարազամն, եւ զդստերսն Հոխիմէին զՄանդատէն եւ զՍառախաթունն:

Դրձլ· յիշեցէք ի Քս· զԵրեմիա քհնյ· եւ զքեռին՝ զԹադէոսն եւ զկողակիցն զՀեղինէն, եւ զորդիսն զԵրեմիայն եւ զԱմիրճանն: Եւ զորդիսն Երեմիային Զաքարիայն՝ զՍիմէոնն եւ զԱւագն:

Դրձլ· յիշեցէք ի Քս· զԵրեմիա քհյն· եւ զմիւս քեռին զՈսկանն եւ զկողակիցն զԵղիսաբեթն եւ զորդիսն իւր զՄաչատուրն եւ զԱսլանն եւ զդուստրն իւր զԱնթառանն:

Դրձլ· յիշեցէք ի Քս· զքեռի Թաթոսն եւ զդստերսն իւր զՆազլուխանն, զՇահումն եւ զՓարիխանն:

Դրձլ· յիշեցէք ի Քս· զմիւս քեռին զՄօջիկն եւ զորդին զԳօզալ բէկն եւ զդուստրն զՄարգարիտն:

Դրձլ· յիշեցէք ի Քս· զԵրեմիա քհյն· եւ զմօրաքոյրն իւր զԵղիսաբեթն եւ զորդիսն զՄարտիրոսն եւ զՂազարն եւ զդստերսն իւր զՓարիխանն եւ ըզՆազումն:

… (բաց մի քանի տող)..

Դրձլ· յիշեցէք ի Քս· ի յոյսն բնաւից զԵրեմիա քհյն· եւ զկողակիցն զՄանազէն եւ զաներն իւր զտէր Ածատուր· քհնյն, որ է հայր Մանազին, եւ զկողակիցն զՀեղինէն, եւ զորդիսն զԴաւիթն, զԱլէքսանն եւ զՄելքիսեդ սրկւղն· եւ զդստերսն զՄանազէն, զՄանդատէն, զԱնթառանն եւ ըզԳուլխատոնն://

561ա· Դրձլ· յիշեցէք առ տր· զԵրեմիա քհյն· եւ զկողակիցն զՄանազէն· եւ ըզծնօղսն իւր զԶաքարիայն եւ զՇաղոսկին, որ ետ զմատեանս ծաղկաւէտ ի սբ· վանքն ածամուխ· Գեղարդին· յիշատակ յաւիտենական եւ անջնջելի, կալ մնալ անդ մինչեւ ի կործ· եւ մի ոք իշխեսցէ հանել ի նմանէ, թէ այր, թէ ագինք լիցի· մի ձեռնամուխ լիցի եւ մի՛ խարդախութբ· յիշատակարանէս հատանել կամ եղծանել կամիցին, զայնպիսին զպտիժն· Կայենի եւ Յուդային առցէ եւ նզովեալ լիցի· ՅԺԸ· հայրապետացն սրբոց եւ ի սրբոյն Գեղարդայ: Այլ աղաչեմ ի սբ· եղբարցդ սբ· ուխտի միաբանիցդ, որ թէ կարդայք կամ օրինակէք զսբ· մատեանս, խնամով պահէք ի հրոյ եւ ի ջրոյ· զի եւ տրն· ամենից պահեսցէ զձեզ յամ· փորձութէ· երեւելեաց եւ աներեւութից· ամէն: Այլ եւ հայցեմք եւ աղերսեմք զսբ· հարսդ եւ զեղբարսդ, զի ի տարւոջն երիցս անգամ կարդայք զյիշատակարանս· մին ի Ջրօրհնեաց եւ յայտնութե· տն· եւ մինն ի սբ· զատկին՝ որ է յարութին· Քի· եւ զմինն ՛ի փոխման սբ· Ածածնին, որ եղեւ յաւարտ գրոյս:

Իսկ այս հոգեւոր եւ ածային· մեծափառ գանձուցս եւ փրթթազարդ ծաղկաւէտ բուրաստանս, արեամբ հեղեալ սրբոց մարտիրոսաց՝ նահատակաց· եւ ամ· երամոց սրբոց հնոց եւ նորոց, հաւաքեալ ի մի վայր, վս· մեղսաքաւիչ եկեղեցւոյ ընթերցման, եւ ի լուր տհաս մանկանց եւ խառնիճաղանչ ըռամկաց· յղձալ սրտիւ զվարս նոցին հետեւիլ: Իսկ իմաստնոց կատաբելոց եւ հանճարեղաց ցանկալ կատարման նոցին կատարել զընթացս իւրեանց· որ եւ արժանի արասցէ պսակաւ եւ վարձատրաւ· (s!) տրն· ամենից բնաւից բոլորից ի միւս անգամ գալստեանն իւրոյ ունկնդրօղք եւ լսօղք այսմ մատենիս, մանաւանդ զստացօղ տառիս զԵրեմիա քհյն· եւ զկողակիցն զՄանազէն եւ զծնօղսն իւր զԶաքարիայն եւ զՇաղոսկին, եւ զամ· արեան մերձաւորսն: Որ եւ օրհնեալ գովեալ եւ բարեբանեալ զանուն ամենասբ· երրորդութեն· ամէն:

Եւ արդ՝ զօրութբ· եւ կարողութբ· ամենազօրին Այ· եղեւ սկիզբն եւ վաղճան յայսմ մատենիս ի Վաղարշապատ եւ ի հայրապետանիստ աթոռն սբ· Էջմիածին: Բայց զմեծ մասն եւ զլխաւորն գրոցս գրեալ եղեւ ի գիւղաքաղաքն ի Նորագաւիթ· ընդ հովանեաւ սրբոց եկեղեցեացս անուամբ սրբոյն Գէորգայ եւ սրբոյն Գրիգորի եւ սրբոյն Սարգսի եւ սբ· Ածածնին· եւ սբ· Կարապետին եւ սբ· Միրանաւորին եւ սբ· Նահատակին, եւ զօրութբ· եւ յաջողութբ· հովանաւորութբ· եւ պահպանութբ· ածամուխ· սբ· Նշանին Գեղարդայ, եւ սրբոյն Յակոբայ, հատեալ ձեռամբ ի հրշտկէ· Այ· ի տապանէն Նոյի եւ Ծ· խորանացն: Սատարութբ· եւ սպասաւորութբ· բարեպաշտօն կնօջն Սառախաթունին, եւ որդւոյն Յոհանիսին, որ զբազում աշխատանս արարին ի վր· գրոյս·/

561բ· Եւ ի հայրապետութե· երիցս երանեալ, եւ երջանկացեալ մեծի եւ փառաւորի տեառն Եղիազարու կթղկոսի, խոհեմի եւ ահարկուի ի վր· այլազգեաց, եւ ոպ· առէ մրգրէն, եթէ ոչ տր· զօրութեց· թողեալ էր մեր զաւակ, իբրեւ զՍոդոմ լինէաք: Նոյն գունակ եթէ ի տէ· ոչ էր հաստատեալ զսրբազան հրպս· այս ի գահոյս, կոխան ոտից լինէաք տոհմս արեղական, վս· անիրաւ եւ աներկիւղ բռնակալութե· Պարսից· քանզի ոչինչ՝ եւ իբրեւ զփոշի ոտաց համարէին ազգս քրիստոնէից· միթէ ինքն տրն· ազատեսցէ ի ձեռաց ամբարտաւան ազգէս յայսմանէ:

Նաեւ ի թգրութե· Պարսից շահ Սուլէմանին, որդւոյ փոքր Շահապասին· Եւ իշխանութե· Արարատեան նահանգի Զալ խանի: Եւ զայսու ժմկւ· չարժեալ են զօրքն Պարսից՝ խառնիճաղանճ բազմութբ· եւ եկեալ նստեալ կան յերկիրն Աղուանից· եւ կամին գնալ ի վր· ազգին Վրաց: Իսկ ազգն Վրաց միաբանեալ են ընդ հիւսիսային թգրին· Մօսկովու· եւ նք· եւս զօրս գումարեալ նստեալ կան ի ստորոտ լերանցն Եալպուզ կոչեցեալ, որոց են գլխաւորք որդիք իշխանին Վրաց Շահնազար խան եւ Գօրգի խան կոչեցեալք· ապստամբեալք ի թգրէն· Պարսից· եւ անդէն զետեղեալք կան· այլ զկատարածն Այ· է գիտելի թէ զինչ լինիցի:

Այլ եւ Օսմանեաց թգրութեն· սուլթան Սուլէմանի· որ եւ Սուլէմանս այս կայր ՛ի մէջ ղաֆասի յոլով ժամանակաւ բանիւ եղբօրն իւրոյ սուլթան Մահմետի· զի եւ Մահմետս այս գազանաբարոյ եւ արիւնահեղ բզմ· աւերութիւ· գործեաց առ արեւմտեան քրիստոնեայս·

էառ քաղաքս, զաւառս եւ կղզիս ոչ սակաւ, եւ իբրեւ զվիշապ կլանէր զբզմս, եւ ի յորովայնս ոչինչ գտան իւր· եւ իբրեւ զբելիար բացեալ ունէր զբերանն, զոչէր, հաւաքէր համայն աշխարհս, ոչ յագենայր եւ ոչ լնոյր զչար ցանկութիւն· իւր· ոպ· ասէ, որդի հարազատ նման հօրն գործէ, նոյնպս· եւ չար Մահմետս որդի հարազատ երեւեցաւ հօրն իւրոյ բելիարայ, որ ոչ պ(ակ)ասցուցանէր զչարութիւն· ինչ· բայց առաւելուլ կամէր ի վր· հայրենեացն, անխիղճ եւ անողորմ բարուքն· զայս գուն գործէր, առնէր, քակէր, կոտորէր, ոտաց կոխանս տայր, եւ զայլս զերեցուցանէր· զգահ սրբոց եկեղեցեց· աւար առնէր, եւ զեկղցիս· քրիստոնէից՝ տաճկաց ջամի առնէր, որ ոչ ոք կարէ թուով արկանել զաւերութի· նր· եւ զանչափ նեղութիւս· եւ վիշտս հասուցանէր ի վր· ողորմելի ազգին Ֆռանգաց հաւատացեալ քրիստոնէից· մինչ կամէր զլուսաբուխ աթոռն առաքելոց, որ է մեծն Հռոմ, զայն եւս առնուլ, եւ ի սրոց· առքլց· Պետրոսի եւ Պօղոսի եկեղեցւոյ մէջն ազան տալ: Բայց նախախնամութի· ամենազօրին Այ, որ ոչ իսպառ բարկանայ, զի թէպէտ հարկանէ, սակայն եւ բժշկէ· եւ ոչ անտես արար զհաւատացեալքս անուան իւրոյ·//

562ա· եւ զթացեալ զարեամբն իւրով փրկեալ զնորս Իէլ· եւ ետ միաբանութի· զօրութի· եւ յաղթութի· թզրցն· քրիստոնէից, որք միաբանեալք ի միասին հանդերձ թզրաւն· հիւսիսոյ եւ զօրութբ· սբ· խաչին Քի· ամենեքեն· ի դիմի հարան երկրորդին Գողիադու, եւ հալածական արարին զնա զօրօք իւրովք· եւ ազատեալ ի նոցանէ զերկիրն ամ· հանդերձ երկրաւն Իլովացւոց· առին եւ զմայրաքղքն· Ընկռուզայ զՊուտում եւ զայլ քղքս· եւ Ըզկզլիս յոլովս, եւ տիրեցին մինչեւ ցՄակեդոնիա եւ մինչեւ զԱդրիանուպօլիս: Եւ այժմ խնդրեն ի յՕսմանցւոցն զմայրն ամ· քաղաքաց՝ զմեծն Կոստանդնուպօլիս: Իսկ թզրքն· Օսմանցւոց կամին խաղաղութի· արկանել, ուխտ եւ դաշին ի միջի հաստատել: Բայց թզրքն· Ֆռանկացն քրիստոնէից ոչ կամին: Այլ եւ զկատարածն սոցա Այ· է գիտելի, եթէ ուր հասանիցի: Զոր եւ խնդրեմք եւ մեք յամենազօր արարչէն, զի քաղցր ակամբ հայեսցի ի ստեղծուածս իւր եւ բարձրացուսցէ զեղջիւր թզրութե· քրիստոնէից, եւ զոր ինչ իւր է կամք· օրհնեալ եղիցի յամ· ժամ ամէն:

Եւ արդ՝ զի ես Երեմիա քհնյս· զհոգեւոր սիրոյ ծնունդս բղձմամբ սրտիւ հաստատեալ եղի յիշատակ ի սբ· մենաստանն Այրէվանից, ի ձորակն Գառնւոյ, զնուէրս աղերսից ածմուխ· Գեղարդեան նշանի, նաեւ հատեալ ձեռամբ հրշտակի· Այ· ի տապանէ նախահօրն Նոյի, ըստ խնդրոյ հայրապետին Յակոբայ· որոյ անուամբ վանիցն վերակոչումն լլի· լիցի եւ եղիցի անդ եւ մնայ մատենս ածագիծ· պատճառ յիշատակի Երեմիա քհնյի· եւ կողակցի Խանազի, հօրն Զաքարիայի եւ մօրն Շաղոսկւոյ, ձեռնամուծութբ· հոգեւոր հօր մերոյ սրբասնունդ Դաւիթ վրդպտի: Որ էր յայժմ ժմկի· վերադիտօղ եւ առաջնորդ սբ· ուխտիս· զքաջ բարունին զտէր Դւթ· փոքրն եւ յետոյն· քանզի Դաւիթս այս էր ի մեծ եւ յազատ իշխանաց տոհմէ, ի զաւակէ եւ ի թոռանց մեծին Պռոշի· եւ Դաւիթս եղբօրորդի մեծ Դաւիթ եպսին, որ յառաջ քան զայս առաջնորդ էր սբ· վանիցս, բայց էր կարի հեզ, խոնարհ, բարեմիտ եւ բարուքն ողորմած· մինչ ի սա Խ· ամ առաջնորդ լեալ էր եւ ոչ մի ոք ի սմանէ նեղասրտեալ· եւ էր այր երեւելի եւ քաջահնար ի դրունս արքունեաց արդիւնարար եւ չէն ի տուն· որ եւ բզմ· աշխատանս կրեց· եւ յոլով շինուածս արար ամ· կողմանց՝ զեկղցքս· հնացեալս· եւ զխախտեալս· եւս յօրինուածովք նորոգեց: Սա փոխեալ եղեւ առ Ած, ՌՃԻԳ· թուին, յաւուր վերափոխման Ածածնին: Եւ յետ նր· նստաւ աթոռ առաջնորդութե· եղբայր նր· Ստեփաննոս վրդպ· Դ· ամ· եւ էր Ստեփաննոս վրդպս· քաջ փիլիսոփայ եւ ածաբան·, բայց ոչ էր իբրեւ զԴաւիթ շինարար:

Եւ ի յաւուր եպսութե· սորա եղաւ ածասաստ· բարկութի· ի զաւառս Արարատեն, ի թուաբերութե· հայոց՝ ՌՃԻԸ· յունիս ամսոյ Դ· յաւուր չորեքշաբթի·/

562բ· մինչ ոչ էր հասարակել· օրն, հնչեաց երկիր եւ դղրդեցաւ արարածք դողմանի (!) լեալ երկիր բոլոր, շարժեաց յօղախառն սաստկագոյն, մինչ զի տեսողաց անյոյս մնացել· ի կենաց կենցաղոյս, զվերջին աւուրս մտածելով, եթէ լրումն երկրի իցէ աւուրս այս· որ եւ թուէր թէ ոչ ինչ գոյր պակաս յայնմանէ: Բայց ի խնամս Այ· դձլ· հաստատեց· ի կայանս իւր ամ· շրջակայ արարածք· վս· զի երկիր մեծարձակ պատառեցաւ, վէմք հատեալ· ծլւէնս ծլւէնս լեալ թաւալեալ ի ձորակս եւ ի հովիտս լցուեցան· զլուսին եւ զարեգակն մթացեալ զխշերացան ի փոշոյ հողոց· Ջուրք համօրէն արիւնագունեալ խառնակեցան, աղբերակունք ի սահմանեալ ընթացիցն մոլորեցան, տունք Այ· հաստատաչէնք եւ արքայակազմ եկղցիք· ի հիմնէ տապալեալ քակտեցան, պողոտայք յոլովազնոցք՝ քարակուտս լեալ խափանեցան ի յընթացից մարդկանց· չէնք եւ շինուածք հնոց եւ նորոց ի սպառ կործանեցան ի հիմանց եւ մարդք անթիւք եւ անհամարք ի ներքոյ տան մեռան, եւ ոմանք որք ունէին զտեարս՝ յետ երկուց եւ երից աւուրց հանէին ի տակէ հողից հանդերձիւք իւրեց· առանց քհնյի· եւ կարգի կատարման ամփոփէին ի հողս, եւ որք ոչ ունէին ոք սրտացաւ եթէ հանէր, դեռ կայ յայնմ տեղւոջ, ուր հանգուցեալ է: Միթէ միւսանգամ նորոգօղն Քս· նորոգեսցէ յաւուր գալստեան իւրոյ: Ով կարէ պատմել զաղէտ եւ զկսկիծն, զոր տեսաք աչօք մերովք, զբժիշկն ամենից բժշկեսցէ զվիրաւորեալսն· ամ· ի յատակ լեառն Մասիսէ մինչեւ ի բլուրն Շամիրամայ իսպառ քակեաց եւ մեծ աւերումն եղեւ, բայց ի գլուխ կաթուղիկեաց հանուրց եկեղեցեաց լուսաւորչաշէն բարձրագումբէթն էջմիածին միայն մնաց հանդերձ Գայիանաւ եւ Հռիփսիմէիւն ի պարծանս ազ–

գլս մերոյ: Իսկ զձորակն Այրէվանից առաւել եղեւ աւերումն եւ քակտումն· վս· զի ամ· շինուածք ի մէջ խոր ձորի եւ շուրջ բոլորան վէմք ահագին, եւ յորժամ շարժեաց շուրջանակի, թաւալեցան ամ· գլմաց եւ լցան վանքն ամ· մինչ զի ոչ երեւիւր նշմարանք շինութե·, բայց միայն կուտոցս քարի երեւէր, որք տեսողացն զարհուրեալ դողային· Ըռահք եւ ճանապարհք ամ· խափանեցան եւ թէ կամէին կերակուրս հողեպահս տանիլ, յուսով եւ թիկամբ բարձեալ արսխթերս գնային· վս· զի կարի դժուարացեալ էր եւ ամ· կահիւք պակասեալ, ոչ գոյր տեղի աղօթից եւ ոչ տեղի բնակութեց· մարդկան, բայց քարակառկառ միայն· եւ ոչ մնաց քար ի վր· քարի, ոչ ի յեկեղեցիսն եւ ոչ ի յայլ շինուածս, ոպ· ասէ տրն, Մի մնասցէ քար ի վր· քարի, որ ոչ քաքտեսցի· եւ զայս կատարեցաւ լիապէս յայսմ ժմնկի·, եւ մնաց անապատ եւ ամայի, զի ոչ գոյր հնար եւ եթէ ոք ըղձայր գնալ յերկրպագութի·, ոչ կարէր, եւ հաւատաւոր երկիրպագօղքն եւս արգելել·, մնային տռչորեալ սրտիւ: Եւ յաւուրս շրժման· Ստեփաննոս բարունին էր ի մայրաքա//

563ա· ղաքն Երեւան ի յանապատն սբ· եւ ի հասարակաց ճաշու աղօթս կատարէին հանդերձ միաբան ուխտիւն· յայնմ ժամու շարժեց· եւ քակտեցաւ եկեղեցին, էառ զտակ զեպիսկոպոսն զՍտեփաննոս եւ զքաջ հռետորն, եւ անտի փոխեցաւ առ Քս, որ եւ արդարադատն մի յիշեսցէ զանցս նր· ի միւսանգամ գալստեանն իւրոյ:

Եւ յետ· նր· փոքր Դաւիթ՝ եղբօր որդի մեծ Դաւթի եւ Ստեփաննոսի· չեւ եւս էր առել· աստիճան եւ կարգ քհնյութե·, այլ տիօքն էր մատաղ եւ հասակաւն տհաս, սակայն հոգւովն արի եւ մտօքն զուարթ, սրտովն քաջ եւ գործովն արդիւնարար, զի ոչ երկեց· ի տհասութե· հասակին, եւ ոչ երկմտեաց ի խոպանացել· եւ յանապատացեալ տանէն, եւ ոչ կասկածեց· ի բռնակալութէ· իշխանաց այլազգեաց եւ ոչ երկիւղ իմն քաշեաց ի սեւաթուր պսակաց (!) գնդից կամ պարտուց պարտապետաց, այլ հոգւովն էր իբրեւ զմրդրէն· Դաւիթ, որ ինքն անհմուտ զըլով պատերազմի, զքաջայաղթոյն Գողիադէ ոչ երկեաւ, այլ իբրեւ զորս երէոց պարսաքարիւ եհար: սոպէս բզմ· հնարադէտք եւ խոհեմագոյնք եւ իշխանական պատուով պատուեալք, որք էին երեւելիք եւ անուանիք, մինչ զանունս նոցին ի սեղանս արքունույ խօսէին յարակայ, հակակեցան· (հակառակեցան ?) ի մանուկ Դաւթիս պատրողական բանիւ, պատեալ ունէին յինքեանս· մորթովն ոչխարի եւ ներքուստ պատառել կամէին իբրեւ զգայլ գէշաքձիձ (!), կոչէին քաղցր լեզուաւ, եւ սիրտք նց· ոչ էին ուղիղք եւ զի կամէին մի եւս լիցի ի սեռէ եւ ի տոհմէ նոցին վերադիտօղ եւ առաջնորդ ածաղէն· նիզակին, այլ Դաւիթս այս ոչ ի խոստմանց պարգեւացն պատրեցաւ, այլ բանիւ քաղցրութբ· ի յինքն ստացաւ զսիրտ սրբակրօն եւ ածաբան· վրդպին· Միքայէլի, որ էր յայնմ տարւոջ տեղապահ եւ աթոռակալ Յակոբ կթղկոսին· եւ կթղկսն· էր ի տանն Յունաց, եւ Միքայէլս այս առել· զԴաւիթս, տարաւ ի գիւղն յԵնկիձայ, յաւուր այլակերպութեն· Քի· եւ ձեռնադրեաց քհնյական· պատուով ի սոյն ամի շարժի, եւ առաքեաց ի վանքն ամայացեալ· վս· զի կարի էր քայքայեալ եւ դժուարահարթ լեալ· մինչ տեսողացն ոչ էր հաւատացել· եթէ դձլ· մարդարնակ լիցի տեղին· քանզի հանճար մարդոյ ոչ ընդունէր զայսպիսի բան, զի արքունուստ միայն վայել է անհնարինս հնարացուցանել, մանաւանդ ի մեռանիլն զՍտեփաննոսին՝ Ծ· թումն· պարտք եւս եթող վանից վր, եւ պարտատեարքն էին ամքն· բռնաւորք եւ այլազգիք՝ յաւէտ տոկոսախնդիրք եւ չահակերք, ով ոք հաւատայր թէ պարտուցն ազատիլ կարիցի, թող թէ առնել շինութի· տանն· այլ հայրն Աժ· զհայրական գթովն, եւ որդին Աժ· զանբաւ մարդասիրութբն· եւ հոգին Աժ· փչմամբ շնորհիւն եառն յաջողումն եւ յաջորդումն ըստ գործս սորա, որ իբր զհեղեղ հեղեղեալ զդարս, զփուլս, զբլուրս,/

563բ· զդաշտս եւ զառապարս ողողեալ հաւաքէ զծովս լնու, նոյնգունակ եղեւ յաջողումն սորա ի խնդրոյ եւ ի յըղձից սրտից, որում ասէ, խնդրեցէք, զի գտջիք, հայցեցէք եւ տացի· արդ եւ բախեաց զդուռն փղձկեալ սրտիւ եւ դիւրալուր տրն· բացաւ զդուռն ողորմութե· ի դէմս իւր, որ եւ ամ· հաւատացելոց իւրոց բացցէ զողորմութե· դուռն ոպ· բացաւ ի Դաւթիս այս եւ քաջիմաստ վրդպիս:

Եւ յառաջնումն ամի քհնյութե· իւրոյ ետ զամ· պարտս եւ ազատել· ի պարտուցն· Նա եւս պողոտայք ճանապարհք հորդել· շինեաց, որ ամ· դրաստք կարէին գնալ: Եւ յերկրորդ ամին ձեռնարկեց· շինուածոց շնորհիւն Քի: Եւ մինչ էր սկսել· շինութե· տան եւ այգեստանեցն, փոխեցաւ առ տր· Յս· սրբազան կթղկսն· Յակոբ ի մայրաքաղաքն Կոստանդնուպօլիս, եւ Միքայէլն ի ձորն Շամպոյ՝ ի վանքն սբ· Նախավկայի, եւ մնաց աթոռ հայրապետութեն· անտերունչ տարի մի: Եւ զայս տեսել· արեւելեան վրդպացն·, որ ոչ գտան ոք եթէ նստցի աթոռ կթղկոսութե·, ժողովեցան ի մի վայր ամ· սեւաթուրք· ընտրեցին զՊետրոս քաջ բարունին, զեպսն· ի տան Գողթեան՝ եւ առաջնորդ առաքելոյն Թումայի· առաքեցին հրովարտակաւ եւ աղաչանօք առ լուսանկատ եւ արդիւնարար սրբազան կթղկոսն· Եղիազար հրաւիրակս, բերել եւ նստուցանել առաքելաշնորհ աթոռն Լուսաւորչի· որ եւ եկն իսկ· եւ ի գալն նր· դդրդումն եղեւ համայն արեւելեանս, որ եւ ահարկու եղեն ազգն մահմետականի, եւ ի թուոջ հայոց՝ ՌՃԼԱ, յաւուր վերափոխման սբ· Ածածնի· կիրակին նստաւ զահոյն Լուսաւորչի· եւ վարէր բուռն իշխանութբ· եւ հոգեւոր առաքինութբ· զի եւ զսա տրն· բնաւից արժանի արասցէ սրբոց հյրպցն· դասուց:

Եւ յերկրդ· տարւոջն, որ թիւն էր փոխարկել·, ՌՃԼԲ· մտել· զառաջաւորի բրեկենդն· կրկի· օրն կոչեց· ինքնին սրբղն· կթղկոսն· Եղիազար զտէր Դաւիթ տէրն Գեղարդայ, եւ զաւագան իշխանութի· վրդպե· եւ ի միւսում կիրկի· օրն ձեռնադրեաց եպս· ի վր· իւր սեպհական տանն Գեղարդի, կոնդակաւ եւ իշխանութբ· լինել ի.վր· թեմի եւ վիճակին: Եւ զկնի զօրացաւ, ճոխացաւ, օր ըստ աւուր երեւելի եւ անուանի եղեւ ի մէջ բազմաց· մինչ զի ՛ի մահմեդականաց միջի պտիւ· մեծս եւս ունէր· եւ ինքն էր լայնանդամ, տեսօքն գեղեցիկ, կերպրնօքն· վայելուչ, մտօքն ճարտար, խոհեմ եւ խորհրդական, հանճարեղ եւ գիտնական, ճոռոմախօս եւ ատենաբան եւ շէնարար իսկ: Յայնժամ մտել· եղեւ ի մէջ շինութե· աներկիւղ եւ անկասկած, իբրեւ զքաջ պատերազմօղ թգր· որ ոչ երկնչի ի պատերազմէ, եւ ինքն վարէ զխումբս պտրզմի· Նոյն զունակ ընդվզեալ եմուտ ի խախտել· եւ ի փլել· տանս նորոգման· արար եւ սկսել· շրջապատ բարձրաբերձ պարիսպ· տաշել· քարով հաստատուն եւ ամուր պինդ· նաեւ շինու//

564ա· ածք բոլորակի, թանապայք, քօշք, ապարանք, սենեկք·, խահարանոցք եւ այլ ամ· շտեմրնք·, տաշել· քարով, կրով եւ թաղով, մինչ տեսողացն հիացելք: Շինեց· զտուփ զութի արծաթէ, պահարանս ածմուխ· Գեղարդի նշանի, եւ ակամբք պատուականօք յօրինել ետ, եւ ոսկւով ջրեց· բզմ· ծախս զնաց, մինչ ի ԻԵ թուման, աւելի եւ ոչ պակաս· եւ այլ շինուածս շատ արար, որ ոչ գրեցւ·, քանզի կրկին նորոգումս աւելի եղեւ քան զառաջինն: Որ եւ տրն· բոլորից բնաւից դասեցէ զինքն ի դասս սրբոց վրդպց, եւ առքնաւէր· եպսց·: Օրհնեալ եւ փառւել· է տրութին· Քի· յամ· ժամ ամէն:

Դրձլ· յիշցք· ի Քս· զԵրեմիա քհն· որ ստացւ· զյայսմաւուրս·, եւ ի սբ· ուխտս· եւ միբնք· սբ· ուխտիս, որ իւրքնչիւր· չափուն ունին աշխատանս ի սբ· տանս՝ քհյք· միահղւն· յաւէտ զտէր Յովանէսն, որ է ազգ Դաւիթ վրդպխ· զԱռաքել վրդպն·, զտէր Վարդանն, որ է փակակալ եւ լուսարար ածմուխ· սբ· Գեղարդեանս, զտէր Թօրոսն, զտէր Նիկողոսն եւ Դւթ· վրդպի· եղբօրորդիքն զԱնանիա եւ զԴանիէլ սրկգւնքն·:

Դրձլ· յիշցք· ի Քս· զգիւղաքղքի, Նորադաւթայ զհին եւ զնոր ննջեցելքն, մանւնդ· զհանգուցել· քհյքն· զտէր Սարգիսն, զտէր Հայրապետն·, զտր· Գրիգորն, զտէր Մրգրէն·, զտէր Առքլն· եւ զտէր Կիրակոսն: Եւ այժմոյս զկենդանի եղելք· քհնյքն· զամենեսեան, զտէր Ածատուրն·, զտէր Պօղոսն, զտէր Գրիգորն, զտէր Մանուէլն, զտէր Մրգրէն·, զտէր Միքայէլն եւ զտէր Սրգիսն· Եւ զսրկւգւնքն· զՂազարն, զՊօղոսն, զՄելքիսեդն, զԱդամն եւ զՍարգիսն:

Դրձլ· յիշցք· ի Քս· զտէր Սուքիաս քհնյն·, որ է ի գիւղաքղքէն· Գառնւոյ, զյարմարօղ եւ զշինօղ յիշտակարանիս:

Եւ արդ օրհնեալ է եւ գովեալ, բարեբանեալ է եւ փառաւորեալ համագոյ եւ միասնական սբ· երրորդութին· յաւիտեանս յաւիտենից ամէն:

Որոյ կարողութբն· եւ զօրութբն· գծագրեալ աւարտեցաւ հոգենորոգ բուրաստանս՝ ի թուականութես· հայոց հզրերորդի· հրիւրորդի· երից տասանց եւ ութերորդի, եւ յամսեանն օգոստոսի հնդետասաներդի·, ի տօնի վերափոխման ամէնօրհնեալ տիրամայր սբ· Ածածնի, որ եւ սկիզբն եղեւ գրոցս: Ձեռամբ յողնամեղ Գրիգորի Երեւանցոյ, ի դառն եւ ի վշտաշատ ժմկիս·, որ յոյժ նեղիմք եւ տառապիմք ի ձեռաց այլազգեաց· միթէ ինքն արարիչն ամի· որ եհարն վս· մեղց· մերոց եւ դարձեալ վերստին բժշկեսցէ:

Այլ արդ՝ ես ամենաթափուրս ի բարեաց, եւ լրացեալս ամ· մեղօք՝ յերես անկել· աղաչեմ զամէն·, զի եւ զիս յիշման արժանի առնիցէք, զգծագրօղս զբազմամեղս զԳրիգոր, եւ զծնօղսն իմ զՄուրատն եւ զԽանբէկին եւ զհօրէպապն իմ զԳրիգորն, եւ զհանիկն իմ զԲանաւշէն եւ զմօրէպապն իմ զԱծապօվն, եւ զեղբայրն նորին զՀայրապետն, որ է հայր տր· Ածատուրին· եւ պապ Խանազին: Այլ եւ զեղբարսն իմ/

564բ· զԳրիգորն, զԿարապետն եւ զՄարգրէն զհանգուցեալսն ի Քս· եւ զքոյրքն իմ զՀռիփսիմէն, զՄարինուն եւ զԵղիսաբեթն եւ զՎառվառն, զհանգուցելսն· ի տր·: Եւ զկենակիցն իմ զԱնթառամն եւ զդստերսն իմ զնորաբողբոջ զԽանբէկին եւ զՀռիփսիմէն, որ ի սկսանել գրոցս զմին ծնաւ եւ յաւարտելն զմիւսն, քանզի սակս ձեռնտուութե· ժմկիս· ամօք բազմօք էառ աւարտ գիրքս: Զի եւ աղօթիւք ձերովք եւ յիշեցել· սբ· բերանօք, հանդերձ ձեօք յիշատակի արժանի արասցէ զմեզ Քս· Ած· մեր ի հանդերձեալ օրն վերջին, որ առէ· եկայք օրհնեալք հօր իմոյ· ժառանգեցէք ձեզ զարքայութին· երկնից: Որ է օրհնել· տրն· ի բնաւից գոյից եւ հանուրց էից յամ· ժամ եւ յտնս· յտնց· ամէն:

Դրձլ· յիշցք ի Քս· զբարեմիտ այրն (այրն — կրկնած) զհեզահոգի, զխնդալին եւ զզուարճամիտ զարդարն զՅակոբ, եւ զամուսինն իւր զՀեղինէն եւ զծնօղսն իւր զԿարապետն եւ զԱննէն եւ զորդին իւր զԿարապետն եւ զդստերսն իւր զՂզլարն, զՇուշանն եւ զԹամարն, որ է յօրհնել· տան նորին Յակոբայ նստեալ գրեցաք զսբ· գիրքս, մխիթարեալք· ի նոցանէ, որոց յիշատակն օրհնութբ· եղիցի ամէն:

Դրձլ· յիշցք· ի Քս· զժամակոչ զգիւղաքղքին· Նորադաւթեայ զԵղիայն, որ ամս· Ի· սպասաւորիւր սբ· եկեղեցւոյն Նորադւթյ·:

Դրձլ· յիշցք· ի Քս· զՎէլիճան մղտսին, որ փոքրիկ դեղահարիչ քար մի շնորհեց· մեզ ի գրել գրոցս:

Դրձլ· յիշցք· ի Քս· զՆահապտ· քհյն· ...(կիսատ է մնում, մէկ սիւնը բաց)[1]:

---

[1] Տպ· Արարատ· 1888· 526: Արուեստի գնահատութիւնը տ· Աստ 136:

ՅԱԻԵԼՈՒԱԾ Բ· 40·

(Ձեռ· 1797/1796)

447բ· *Յիշատակարան գրոյս·*

Փառք ամենակարող ամենազօր անբաժանելի եւ համագոյ երրորդութեն· եւ մի ածուեն· Հօր եւ որդւոյ եւ հոգւոյն սբյ· այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից ամէն:

Որ ետ կարողութի· անարժան պիտկարիս եւ տկար բնութենս· իմոյ Այլաբերեցի տր· Ածատուրի· որդոյ Սուքիաս երէցոյ, եւ ի յետնեալս գրչաց, որ եւ գթերակտր· տառս գթերին («ին» *միասին գրած*) *ի աւարտ հասուցի, շնորհօք սբ· հոգւոյն եւ ի թուականիս հայկայինս տոհմի ՌՃԾԶ·ին, ի խնդրոյ Սիմէոն կրօնաւորի, որ է երկրէն Գանձոյ, եւ սնեալ եւ վարժեալ ի մանկութենէ մինչեւ ի հասարակ կրօնաւորուէ·, ի դրան սբ· Գեղարդին, որ է ներկեալ արեամբ կենարարին փրկչին մերոյ: Եւ ՛ի հայրապետուէ· սբյ· յէջմիծին·* (s!) *սրազան· կթղկսն· տն· Աղէքսանդրին, յառաջի ամի սորին եւ ի առաջնորդուէ· սբ· ուխտին Գեղարդու ահրի եւ քաջ րաբունապետին Դանիէլ վրդապետին, որ է ցեղէն իշխանաց իշխան Պռօշ իշխանի, որ վերադիտողուր· վարէ առաջնուի· սբ· ուխտիս:*

Եւ դարձլ· յիշեցէք զտացող սբ· գրոյ զտր· Սիմէոն կուսակըրօն աբեղայն, որ եւ եռափափաք սիրով եւ ջերմեռանդ սրտիւ ստացաւ ըզ: գիրՍքս Պարապմանց, որ է արարեալ սբյն· Կորղի հյպին· (*ին միասին*) *վասն յիշատակի հոգոյ իւրյ· եւ հոգւոյ ծնողաց իւրոց ի վերլում·* (s!) *տս//*

448ա· *ռապել· անձին իւրոյ· եւ սրբակրօն տր· Սիմոնին, որյ· յիշատակն օրհնութ· եղիցի:*

Արդ երես անկեալ աղաչեմ զձեզ հայրք եւ եղբարք, զմիով հյր· մեր որ երկինքեաւ յիշեցէք ստացող սբ· գրոյս ծնօղօքն հանդերձ, եւ որք յիշէք, յիշեալ լինիջիք բստ ընդաբոյս ողորմութե· իւրում ամէն: Հայր որ երկինս:

224բ· Շեղագրով·

Յիշտկ· է սբ· գիրքս այս Գանձուց եւ Պարապմանցս մղսի· Յարութին· եւ կողակցուն մղսի· Հուսնիխանին եւ որդւոյն մղսի· Յակոբին եւ ծնօղացն իւր, որ ետ ի ձեռն Կեղեցի Իսահակ վրդպետին· որ ի ժամ կարդալոյն ողորմիս տացցէ միշտ· այս եղեւ Թվին ՌՃՁէ ամին եւ հանդիպօղքդ տուք զողորմին:

Կնիք փակագրով:

Մհտսի

Յ ար ու *Թն*

Յիշատակ արդրոց· օրհնութ· եղիցի· եւ վերջի կողակից սորին Զարմանազանն եւս յիշել· լիցի ի Քս· ամէն:

5ա–224բ· Գրուած է Մարգարէ գրչի ձեռքով Ստեփանոս րաբունու համար:

423բ· *Զերջանիկ րաբունիս զՍտփննոս· վրդպս· իմ եւ զանարժան գծողակս զՄարգարէս, աղչմ· յիշել ի տր· մտօք եւ Ած· զձեզ յիւր ահեղ ատենին*[1]):

ՅԱԻԵԼՈՒԱԾ Բ· 41·

(N°· 753 Ն· Յ·)

. . . .

338ա· *«զոր եւ իմ լուսաւորիչն եւ ամենիմաստն, անաւթն ընդրութե· եւ գերապայծառն, մաքուրն եւ անարատն, սրբասէրն եւ հոգիանորոգն, աշխատասէրն եւ ամենաշնորհն, կենդանին եւ մշտնջենաւորն առ տր·, բանաւորն եւ առատաբուխն, լցեալն հոգւով եւ արդաբախոհն?), վսեմագոյն եւ իմաստնաեղծն* (*իմաստնաստեղծն?*), *ցանկալին եւ խոնարհն, բարեսէրն եւ Քս· ունակն, աղաւթականն եւ ընթերցասէրն, ուսումնասէրն եւ ածասէրն·: Քնարն հոգոյն, չառաւիղն ընդրութե·, աւթաղնաց թռչունն, բարի արմատն, որթն պտղաբեր, տաճարն բանին, տեղին Այ· աւթեւանն սբ· երրորդութեանն, հոգւոյն ընդունարանն, բանին բաւականն, բարձող խաչին· հետեւողն տն·, սիրելին Քի· եւ սիրեցեալն ի նմանէ· տրն· իմ եւ յոյս, ծնողն հոգեւոր եւ երջանիկ վարդապետն, Խաչատուր գիտնականն, ցանկացեալ ածագիծ· տառիցս, բազում ջանիւ եւ աշխատութբ· ի մի հաւաքեաց զբանս բազումս վարդապետաց· զոր եւ ես թակարդապատեալս մեղաւք, տղէտս յարդարութենէ· գիտողս բազում չարեաց, ներդեւեալս անաւրէնութբ·, նուաստս տեսակաւ, ծերացեալս մեղաւք, անկեալս յորոգայթ որսողին, դաշնաւորեալս չարեաց, հեռացեալս յարդարութենէ, վիրաւորեալս յանցանաւք, ցաւանկեալս ծուլութբ·, եւ այլ բազում վնասիւք, զոր ոչ է ժամանակ ասել:*

Ստեփաննոս քահանայ անուամբ եւ ոչ վարիւք, ցանկացեալ ածեղէն· իմաստից այսոցիկ, մեծաւ ցանկութբ· գրեցի զպատճառ ծննդեան փրկչին մերոյ Յի· Քի· որպ· ոք ի համատարած ծովուն սակաւ ինչ ջուր առեալ՝ այսպ· եւ ես ցանկացեալ ապերահօս վարդապետութեանս, եւ մեկնութեանց տրունական· տօնից, ոչ կարացի զբնաւն ամբարել, այլ յուսացեալ ի սբ· յաղաւթս ձեր յողորմութի· Քի·, ձեռն արկի, անարժան անձամբ գրեցի փոքր ի շատէ իմաստութենէ ածուսոյց· վարդապետացն մերոց· զի եթէ (*ոք?*) *աշխատասիրութբ· եւ մտադիւրութբ· ընթեռնու, ուրախանա եւ բերկրի հոգով:*

---

1) Թուղթ· 448 թերթից·

Բացի 224բ· յիշուած գրքերից նաեւ Թէոդոտիսի՝ եպիսկոպոս Անկիւրիոյ·

ա) ի ծնունդն

բ) Նորին Երրորդութեանն

գ) Կիպրիանոսի Եպիսկոպոսի Աֆրիկեցւոյ նառ Ողորմածութեան:

ՅԱՒԵԼՈՒԱԾ Բ· 42·

(N°· 3603)

Աւետարան, մագաղաթ, բոլորգիր, նկարազարդ, բայց վատ պահուած:

322ա· *Փառք ամենասբ· ամենազաւր եւ կենդանարար սբ· երրորդութե· հաւր եւ որդւոյ եւ հոգւոյն սբոյ· այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յամեն:*

Սովորութի· է ածային· արանց միշտ եւ հանապազ խոկեալ (s!) *ածային· պատուիրանս ի տուէ եւ ի գիշերի միշտ զվերինն խորհել, ուր Քս· նստի ընդ աջմէ յԱյ·: Եւ վսն· բազում պատճառի բազումք փափագին ջերմեռանդ սիրով եւ ըղձալի ցանկութբ·:/*

322բ· *արդիւնս եւ գործս կատարել: Նախ վս· յաւիտենական եւ անմահ կենացն զանցաւորս արհամարհեն եւ զայն ստանան կեանս, որ մնացական է ոպս· ասէ տրն· երթայք, գործեցէք մի զկորստական կերակուրն, այլ զկերակուրն որ մնայ ի կեանսն յաւիտենական:*

Երկրորդ, զի հրամաէ (s!) *տրն· զանձեցէք ձեզ զանձս ի յերկինս, որ ոչ ցեց եւ ուտիչ ապականեն եւ ոչ գողք ական հատանեն· գրեմք ըզգիրս որ զամ· զանձ եւ զամ· աւետիք ի յինքն պարունակեալ ունի· Նախ զվերին իմաստութիւն եւ ապայ զամ· սքանչելագործութիւնս որ ի սմա:*

323ա· *Երրորդ//վասն անջինջ յիշատակութե· առաջի Այ·: որպս· ասէ մարգարէն· Երանի որ ունիցի (զաւակ) ի սիոն եւ ընդանեակք յԵմ·:*

Չորրորդն վսն· քաւութե եւ թողութե· մեղաց մերոց բարեխաւս· որպս· ասէ մարգարէն· զմեղս քո ողորմութբ· քաւեսցես, եւ զանաւրէնութիս· տրաւք տնանկաց:

Ըստ այսմ աւրինակի փափաքեալ եղեւ ածային· սբ· աւետարանիս ածասէր· բարէմիտ եւ հեզահոգի պր· տր· Մաթէոս արքեպսն, որ զնեց զսբ· աւետարանս ի հալալ ինչից եւ արդար վաստակ (s!) *իւրոց, յիշատակ իւր եւ ծնողաց իւրոց՝ հաւրն իմոյ Խտիլ պեկին, եւ մաւրն իմոյ Մարիանին: Մինաս քհին·, Վարդանշին,/*

323բ· *Միրանշին, Յենիպեկին, Սիմօնին, Մարտիրոսին, տր· Մըկտչին, Հեղին, տր· Ոհանէսին, Գրգր· սրկօքին, Ոհան սրկքին, Մրկս· եպսին·: Շիմաւոն եպսին·, Զաքարին, Զարման տատին, Հեղինին, Եղիսաբեդին, Եղիա սրկքին, Շահզանին, Երիմին, Մխիթարին, Խաչատուր եպսին·, Դանիէլ քհին·, Իգնատիոս արեղին: Եւ յամ· յարեան մերձաւորացն, կենդանաց* (s!) *եւ ննջեցելոցն ամէն: Ի թվկս· հայոց ի ռ· ժ· նկարեցաւ սբ· աւետարանս ձեռամբ սուտանուն Փլպսի·, ի սբ եւ ի հռչակաւոր ուխտս Կեչառաց, սբ· Լուսաւորչիս եւ ԺԱ· անուան յեկեղեցայս* (s!) *եւ Քի· փառք յաւիտեանս ամէն:*

ՅԱՒԵԼՈՒԱԾ Բ· 43·

Չկայ ամբողջը:

ՅԱՒԵԼՈՒԱԾ Բ· 44·

(Տե՛ս աստ, եր· 184, քաղուածօրէն)

ՅԱՒԵԼՈՒԱԾ Բ· 45·

(Տե՛ս աստ, եր· 199)

ՅԱՒԵԼՈՒԱԾ Բ· 46·

(Տե՛ս աստ, եր· 204—205, քաղուածօրէն)

ՅԱՒԵԼՈՒԱԾ Բ· 47·

(Ձեռ· էջմ· N°· 1717· Մաշտոց)

Զմեռեալ ոգի եւ զբազմամեղ անձն սերեալ մեղաւք եւ անաւրէնութբ·, զՍիմէոն պծող սուրին, աղաչեմ յիշել ի տէր Յս· ի յոյսն ամ· արարածոց սրտի մտաւք եւ Ած· զձեզ յիշէ ի բարին· ամէն:

*Փառք պատիւ եւ զոհութի· աւրհնութբ· հանդերձ, յամ· եղական արարածոցս, անեղին եւ միայնոյ ածաթեն· եւ յերիս անձնաւորութեն· բաժանեալ եւ մի բնւի· հաւր եւ որդւոյ եւ հոգւոյն սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւ·, որ ետ կարողութի· ինձ տկրիս· եւ ընկղմելոյս ի մեղս եւ յանաւրէնութիս·, հասանել ի վերջին գիր տառիս ածայնոյ· եւ հոգեշունչ: Արդ ցանկացաւղ եղեալ ածային· եւ հոգեկեցոյց մատենիս ոմն անուն Երեմիա· եւ ստացաւ ըստ բանի մարգարէին որ ասէ· երանի որ ունիցի զաւակ ի Սիովն: Փափագեցաւ տենչմամբ սրտին եւ ստացաւ իւր յիշատակ յաւիտենից եւ առիթ փրկութե· հոգւոյ: Արդ գրեցաւ՝ ածային· զանձարանս*1) *որ կոչի մաշթոց եւ քահանայաթաղ ամ· որպխութբ·, ի սբ· ուխտս եւ յաթոռս Եւստաթէի սբ· առաքելոյս, ընդ հովանեաւ սբ· Ածածնիս· եւ սբ· Լուսաւորչիս· եւ այլ միահամուռ սրբութեցս· զումարեալ· աստ: իշխանութե· տեղոյս ի բարի չառաւիղէ մնացեալ պարոն Սմպատի եւ Բուրդելի, զոր Ած· ընդ երկայն աւուրս պահեսցէ զոսա: ի յառաջնորդութե· ուխտիս քաջ եւ արի հսկողի բարունաց պետի եւ ընդդիմի հարկանողի ուղղափառութբ· եւ ամ· ճարտասանութբ· հերձուածողացն գնդի: ի դառն եւ յանձուկ ժամանակիս եւ անիշխանութե· աշխարհիս Հայոց· որում ի մեծ վտանգի կային քրիստոնեայք ի ձեռն այլազգաց, որ կոչին Ջղաղայք: ձեռամբ մեղսամակարթ, եւ զառածել· անաւրէնութբ· եւ փցուն եւ անարժան գրչի Սիմէոնի եւ պիտակ աշակերտի որ զանունս միայն ունիմ, եւ ամ· բարեգործոց թերի: արդ յերես անկեալ*

---

1) Տես պատկ· 164· Աստ, 213· գրչի իսկական ձեռագիրը:

աղաչեմք զամենեսեան ըղձմամբ սրտիւ որք (աւգտիք?) յաւրինակելով, կամ կարդալով կամ տեսութբ·, յիշեցէք զստացաւղ սորին զվերաստացեալ մանուկն զԵրեմիա եւ զամ· արեան մերձաւորսն իւր ի Քս· Ած· յոյսն մեր նախ զպապն Ստեփաննոս եւ զհայր նորին Սարգիս եւ զմայրն Ճհանխաթուն եւ զեղբարսն· Յովանէս, եւ զՄկրտիչ· եւ զԹովմա· եւ Ած· զձեզ յիշէ։ Նաեւ զիս զանարժանս արժանի առնել միոյ տր·ողորմի, թերեւս թողութի· գտից բազմ· յանցանաց իմոց։ Եւ խոշորութե· գրոյս անմեղադիր լերուք· այսչափ էր կար մեր։ զոր եւ Ած· վայելել տացէ մինչ ի խորին ծերութին·, զի ստացաւ զսա, ի հալալ արդեանց իւրոց բազում աշխատութբ· եւ սիրով։ գրեցաւ ի թիւաբերութես· հայոց։ ՊԽԹ։ այլ եւ զաւրինակի շնորհաւղն եւ զայլ աշխատաւորք, որք տաժանեցան ցաւակցաբար միոյն բիւրապատիկ շնորհեսցէ նոցա պարգեւ եւ թողութի· յանցանաց Քս· Ած· յոյսն ամ· արարածոց ի հանդերձեալ դատաստանին, ամէն· որում փառք յաւիտեանս ամէն։

ՅԱՒԵԼՈՒԱԾ Բ· 48·

(Զեռ· N°· 1016/1027)

173բ· ***Փառք** անբաժանելի եւ միասնական սբ· երրորդութեն· եւ մի ածութեն· հաւր եւ որդւոյ եւ հոգւոյն սբբո· այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտե·։ Որ ետ կարողութի· անարհեստ եւ փցուն գրչի հասանել ի վերջին գիծդ ածաբողբոջ· տառիս, որ կոչի յանուն սբ· հայրապետին Մաշտոցի։ ի թուաբերութես· հայկազեան տումարիս։ Ջէ· ձեռամբ յոգնամեղ եւ փցուն գրչի Յոհանէս սուտանուն աբեղայի,//*

174ա· *որ զանունս միայն ունիմ եւ ոչ զգործս։ Ի վանքս որ կոչի Յայրիվանս, ընդ հովանեաւ ամէնահեալ· ս· լուսոյ մաւր սբ· Ածածնիս եւ սբ· տիգիս ածամուխ սբ· Գեղարդեանս եւ այլ բազմադումար սբբոցս, որ աստ կան հաւաքեալ, ի վայելումն անձին Յակոբ քհի· եւ զաւակաց իւրոց, եւ յիշատակ ծնողաց իւրոց։*

Արդ՝ յերեսս անկեալ աղաչեմ զձեզ, ես անարժան գծողս Յհնս· որ հողս եմ եւ փոշի ոտից ձերոց, որք հանդիպիք սմայ տեսանելով կամ կարդալով կամ աւրինակելով, յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զիս զանպիտանս Յոհհնէս (s!) *եւ զծնողս իմ ըստ մարմնոյ եւ զհոգեւոր մայրս իմ զԱնպար, որ բազում երախտիք ունի ի վր· իմ· Ած ողորմի նմայ ասացէք ամէն։ Ընդ նմին եւ զայլ եղբարքս յիշեցէք։*

ՅԱՒԵԼՈՒԱԾ Բ· 49·

(Լազարեան ճեմարանի N°· 9=1159 էջմ·)

349բ· *Զստացող սբ· գրոցս զԱծատուր· քհնյն· եւ զծնողսն իւր՝ եւ զանպիտան գրիչս զՄաթս· յիշեցէք ի սբ· յաղաւթս ձեր, ով սբ· եղբարք աղ։*

Ներքեւի լուսանցքում սրա տակն աւելացրած է·

Նաեւ զեղկելիս զՍտեփաննոս՝ ծաղկաւղ սր· գրոցս, կազմաւղ՝ եւ զծնաւղսն մեր յիշեսջիք աղչ»։

357բ· Շնորհալու Հոգեգալստեան նուիրած ներբողից յետոյ՝ կցուած է·

Ով պատճառ կենդանութե· եղելոցս եւ խաղաղաբար աշխարհի՝ Ած· սբ· հոգի, որ այսաւր ի հրեղէն լեզուս բաժանեալ՝ հանդեար ի դասս երանելի առաքելոցն գնդի։ Խոստովանողացս եւ դաւանողացս զքեզ Այ· հոգի, անեղութի·, անսկզբնաբար բղխումն ի հաւրէ, համագոյ եւ համապատիւ, էութբ· եւ արարչութբ·, ընդ հաւր ընդ որդւոյ միաւորեալ բնութբ·՝ երկրպագելով հայցեմք։ Ողորմեայ ստացաւղի այսմ· ածաշունչ· բուրաստանիս, Ածատուր· քհի· եւ ծնաւղաց նորա՝ եւ ամ· արեան մերձաւորացն· Ամէն։

Նաեւ տառապեալ ոգւոյ եւ անարհեստի եւ փծուն գրչի Մաթսի· եւ ծնաւղացն իմոց եւ երնխաւորացն եւ մեր վարժապետացն ամէն։ Վս· զի ի քո բազմադեղ ներողութիդ· ապաւինելով մեծաւ յուսով զսա ստացաւ նաւակ լաստի հանելով ի յայս բազմաբղխեա (եալ?), կոհակուտեալ այլեայ ծովուս մեղանաց՝ ի նաւահանգիստ հաւրն Քի· զոր խոստացաւ էակիցն քո միածինն որդի, թէ երթամ եւ պատրաստեմ ձեզ տեղի՝ եւ եթէ եկայք առ իս ամենայն աշխատեալք՝ եւ ես հանգուցից։

Նա եւ որ բարեմիտ զամէնն ասասցէ սիրով, եղիցի եւ նոցա յիշատակ բարի ի յայսմ առենի։

551ա· *Զի որպէս ուրախութի· մեծ է նաւելոցն ի նաւահանգիստն ժամանել։ Սոյնպէս եւ գրչին՝ ի վերջին կէտն։ Վասն որոյ գոհացողական ձայնիւ քեզ փառք, պատիւ եւ երկրպագութի· վերառաքեմ ամենասր· երրորդութիդ՝ հայր եւ որդի եւ սր· հոգի։ Այժմու ժամանակի եւ անզրաւ յաւիտենիւ որ եւ զանարժանութիս· իմ արժանի արարեր հասանել ի վերջին գիծս տառիս եւ ի կատար հոգելից բուրաստանիս ամէն· որ զամէն ասէ ամեն։*

551բ· Վերջին մեծ յիշատակարանն է·

Վասն յիշատակարանի գրոցս·

***Փառք** ամենասր· ամենազաւր եւ կենդանարար սր· երրորդութեն հաւր· եւ որդւոյ եւ հոգւոյն սրբոյ եւն·*

(Բացատրում է, թէ ինչ պատճառներով մարդիկ բարի գործ են կատարում, պատմական ոչինչ չկայ· շարունակութիւնն է «Երկոտասաններորդ» եւն·)

Երկոտասաներրդ վասն ի նախանձ եւ ի փափագ չարժելոյ զայլս ճշմարիտ արդեանց եւ բարի գործոց, որպէս ասէ Պաւղոս, Նախանձաւոր լերուք շնորհացն, որ լաւն են· ի խնդրոյ եւ յարդեանց երից երանեալ երջանիկ այրս այս Ածատուր· աբեղայ վերաձայնելոյ։ Առ որ մեծաւ փափագմամբ ցանկացող եղեւ այս ածաշունչ· մատենի եւ անգին մարգարտի, որ կոչի տարէգիրք։ Յուսալով ի բան մարգարէին, որ ասէ, Երանի, *որ ունիցի զաւակ ի Սիովն եւ ընտանի վերինն Եմ· եւ ի բանն որ ասէ, Գանձեցէք զձեզ զգանձ յերկինս, որ ոչ գող մերձենայ եւ ոչ ցեց ապականէ:*

Եւ պատուականս այս Ածատուր· մահղասի քհնյս· ըստ այժմ յուսոյ եւ պայմանի ի հալալ ընչից իւրոց ստացաւ զսա եւ ետ գրել խմոյս ակարութե· յիշատակ հոգւոյ ի մխիթարութի· եւ ի սփոփանս ցաւալից կենաց· եւ ի բժշկութի· ախտալից մտաց եւ խորհրդոց, հոգւոց եւ մարմնոց, ի կեանս եւ ի մահ, եւ պաշար անդառնալի ճանապարհին, եւ յետ մահու մասնակից լինելով համաւրէն ամ· սրբոցն որ ի սմա: Արդ եղեւ գրաւ գրչութե· այսմ· ածաչունչ· մատենի ի թվականութե· հայկազեան տումարի ի ՋԸ: Թվլի, եւ ի վշտաշատ ժամանակի, յորում նեղիմք յանաւրինաց եւ յանիրաւ պահանջողաց· ի թագաւորութեն· Վրաց Ալէքսանդրէ· եւ ի հայրապետութե· հայոց· տն· Գրիգորի յաթոռ սբ· Էջմիածնին· ի ղանութե· Ջահան չահի որդւոյ Ղարաուսուֆին:

Արդ գրեցաւ սա ի յերկնահանդէտ եւ ի գերահռչակ սբ· ուխտս Այրիվանս վերաձայնելոյ, ընդ հովանեաւ մաւրս լուսոյ սբ· Ածածնիս· եւ հրաշափառ եւ երկնանման սբ· կաթուղիկէիս եւ ածընկալ· սբ· նշանացս եւ արեամբ ներկեալ անմահին Յի· սբ· գեղարդեանս եւ սբ· աջերոյս, Յովհաննու մկրտչին ձեռնադրողին Քի·, եւ սբ· աջոյ Բարդողիմէոսի առաքելոյն եւ համաւրէն ամ· սրբոցս որ աստ կան հաւաքեալ աւժակութբ· (s!) *հոգւոյն սրբոյ եւ կամակցութբ· սբ· եղբարցս եւ բազմերախտ հոգւոյ հաւր մեր եւ վարժապետացն տր· Ներսեսի եւ ամ· սրբութեց· վարպետի տր· Յոհս· ծաղկողի, որ բազում երախտիք ունի ի վերայ մեր, եւ մխաբան ամ· հաւատացելոց քրիստոնէից:*

Ձեռամբ ամենամեղ փցուն եւ անարհեստ գրչի Մաթս· անարժան աբեղայի, որ զանունս միայն ունիմ կրաւնաւորի եւ ոչ զգործս բարութե·: Վս· որոյ աղաչեմք զամենեսեան, որք լուսաւորիք սովաւ կարդալով կամ աւրինակելով եւ կամ հոգեւոր խրախճանութբ· զտաւն սրբոցս կատարելով, յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր ի տաւնս տրունականս եւ յամ· սրբոցն, զոր սովաւ կատարէք, զԱծատուր· քհանայն·, խնդրելով զթողութի· մեղաց· եւ անջինջ յիշատակաւ գրելով զնա ի գիրն կենաց· ամէն: Նաեւ բարեպաշտ եւ ածասէր· ծնաւղաց նորին, հաւրն իւրոյ Խոցադեղին եւ մաւրն Հռիփսիմէին եւ հաւրեղբաւրն Յովանիսին եւ եղբաւրն Պռօշին եւ ամ· արեան մերձաւորացն կենդանեաց եւ ննջեցելոցն եղիցի յիշատակ նոցա մասին ահութե· ընդ սբս· ամ· եւ ի թողութի· մեղաց, ասելով ի խորոց սրտէ· թէ տր· Ած· ողորմեա նց· եւ հանդոյ զնոսա ի քում յարքայութեդ·, ամէն եղիցի եղիցի:

Այլ եւ վայելողք սբ· գրոցս եւ հանդիպողք սորա տեսանելով կամ աւրինակելով, որք աւգտիք ի սմանէ յիշեսջիք զմեզ եւ զվերոյ գրեալսդ՝ զԱծատուր· քահանայ եւ զծնաւղսն իւր եւ զամ· արեան մերձաւորսն:

Նաեւ զիս զմեղապարտս, նկարաւղս Ստեփաննոս, ըստ հոգւոյ հարազատ եղբայր սորայ, որ վասն ջերմեռանդ սիրոյ նորա ծաղկեցի եւ նկարեցի եւ կազմեցի, որ է մեր հոգւոյս անջինջ յիշատակ եւ դուռն կենաց եւ բանալի սբ· արքայութեն· եւ Քս· Ած· ձեզ յիշողացդ եւ մեզ յիշեցելոցս առհասարակ ողորմեսցի եւ նմա փառք յաւիտեան:

*Այ· սիրուն համար ի մոմէ եւ ի ձիթէ պատրաստ պահէք եւ սպիտակ լաթով բռնէք, աղաչեմք*1) :

ՅԱՒԵԼՈՒԱԾ Բ· 50·

(Էջմ· N°· 690/769· Կար· 677)

Խազգիրք երաժշտական, կաշեպատ կազմով $8^1/_2 \times 6^1/_2$ սմ·, մագաղաթ, մանր բոլորգրով·

84բ· *Փառք ամենասբ· երրորդութեն· եւ մի ածութեն· հաւր եւ որդոյ եւ հոգւոյն սրբոյ, այժմ եւ միշտ և յաւիտեանս յաւիտեն·*

Արդ յանկ ելեալ կատարեցաւ տառս որ կոչի տետր, ձեռամբ յոգնամեղի եւ յոյժ մեղապարտի Գալստի անուամբ միայն աբեղայի սուտանուն կրաւնաւորի· ի դառն եւ յանբարի ժամանակի ի թվին (!) *ՊՂԱ ի վանքս Աղջոց ընդ հովանեաւ սբ· Ածածնիս· եւ սբ· Ստեփանոս նահատակիս եւ Թրի սբ· նշանիս եւ այլ բազմահաւաք սրբոցս· յիշատակ մեզ Մխիթարի եւ Գալստի եւ ծնաւղացն հանգուցելոցն եւ կենդանեացն· Եւ որք հանդիպիք տեսանելով, յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր եւ Ած· զձեզ յիշէ իւր արքայութին· ամէն եղիցի եղիցի:*

ՅԱՒԵԼՈՒԱԾ Բ· 51·

(Ձեռ· էջմ· N°· 903/939)

Ճաշոց, թուղթ, երկսիւն, բոլորգիր Գալուստ գրչի ձեռքով Աղջոց վանքում: Ունի լուսանցքի եւ սկզբնազարդեր, միջակ, 339բ· եզրերու լուսանցքում, սրբոց պատկերներ, երբեմն, լուսանցքում:

550բ· *Յիշատակարան սբ· գրոցս*

Փառք անբաժանելի եւ միասնական սբ· երրորդութեն· եւ մի ածութեն· հաւր եւ որդւոյ եւ հոգւոյն սրբոյ յամենայն արարածոց յիմանալեաց եւ ի զգալեաց, այժմ եւ միշտ եւ յաւիտեան:

---

1) Ապա տարբեր գրով ստացող Աստուածատուրի յիշատակարանն է, այժմ եպս·, որ նուիրում է Հոռոմոսի վանքին եւ հուսկ յետոյ տարբեր գրով «ի թվ· ՉԼԴ» Սարգիս կաթուղիկոսի եւ Գրիգոր վարդապետի յիշատակարանը, որոնք կրկին հաստատում են, որ տարեգիրքը Հոռոմոսի վանքին մնայ: Կազմը հին է, կաշեպատ եւ օրնամենտներով, թուում է հէնց սկզբնականը:

Ձեռագրի բովանդակութիւնն է Ճաշոց, Սաղմոսները կրճատ· Տօնացոյց՝ երգերով: Լաւ բոլորգիր, սկզբնազարդերով եւ լուսանցքի զարդերով, լուսանցքում սուրբերի պատկերներ, կենդանիներ· ոչ շքեղ, բայց լաւ:

Աւարտեցաւ ածախաւս· մարգարէական եւ առաքելական հոլխարուխս այս տառ ի Թուաբերութեան հայկազեանս տումարի ՊՂԱ: Ի հայրապ· հայոց տն· կիրակոսի: Եւ յաշխարհակալութե· ըստ ներելոյն Այ· արիւնարբու գազանին Ջհանշահին: Զոր իբրեւ էառ զիշխանութին· եւ նստաւ յաթոռ առաջին աշխարհաշէն եւ բարէմիտ ղանորէիցն սկսաւ սայ աւերել եւ տապալել զբազում քաղաքս եւ զգաւառս եւ ամայի եւ անմարդաբնակ առնել, եւ ոչ ոք կարէ զչարութի· սորա ընդ գրով արկանել· առաւել եւս զոր արար ընդ աշխարհն Վրաց, ընդ քաղաքին Շամշուլտայ, զի խաբէութբ· առ զնա եւ զամենեսեան ի սուր սուսերի մաշեաց, զի ըստ մարգարէին որ ասէ· ոչ ոք էր որ թաղէր զնոսա· այսպէս եւ սոքա անթիւք եւ անհամարք, քահանայք եւ աշխարհականք եւ զկանայս նոցա եւ զմանկունս ցրուեցին ընդ ամենայն աշխարհ: Եւ ով կարէ զաղէտ տարակուսանացս լեզուաւ պատմել, զոր եղեւ ի սոյն ամի ընդ ազգիս հայոց: Եւ ի սմին դառն եւ նեղ ժամանակի գրեցաւ գիրքս այս ի գաւառիս Արարադեան ի ձորս Քեղոյ ի վանքս Աղջոց ընդ հովանեաւ սբ· Ածանիս· եւ սբ· Կաթուղիկէս եւ սբ· Ստեփաննոս նահատակիս եւ Թրի սբ· նշանիս եւ Արամոնից սբ· խաչիս եւ Թեւատ սբ· Գրիգորիս եւ այլ բազմահաւաք սրբոցս որ աստ կան հաւաքեալ: Եւ է գրեալ սա ձեռամբ յոգնամեղի եւ անարհեստ եւ փցուն գրչի սուտանուն կրաւնաւորի անուամբ... (թուղթ ընկած)·

Բայց 219ա· գրչի անունը կայ·

Զբազմամեղ եւ զփծուն գրիչս զԳալուստ աղաչեմ յիշել ի տր· եւ դուք յիշեալ·

ՅԱՒԵԼՈՒԱԾ Բ· 52·

(Փիրղալէմեանի)

1879 Մայիս 14–ի Բաբերդու եկեղեցեաց գրեանց: 1460 ՋԹ· թիւ 197 մի աւետարանէ:

Փառք անճառելի եւ անսկիզբն բանին Աստուծոյ... որում ցանկացող եղեւ աստուածասէր եւ հոգեւոր այրն Ստեփաննոս, որ ստացաւ ի հալալ գանձուց եւ յարդար վաստակոց իւրոց զսուրբ եւ զաստուածաշունչ Աւետարանս: Եւ ետ զսա ի դեղաքաղաքն Գառնի ի դուռն սուրբ Կաթուղիկէ եկեղեցւոյ անջինջ յիշատակ իւրն ամենայն արեան առու մերձաւորացն: Արդ գրեցաւ սուրբ Աւետարանս ի թուականութեանս Հայոց ՋԹ (1460) *ի հայրապետութեան տեառն տէր Գրիգորի ի յաթոռ սուրբ Էջմիածնի: Եւ ի ղանութեան Ջահանշահի որդոյ Ուսուփի, որ գնաց ի Հրէ* (1453 ՋԲ *ամի*) *երկու հարիւր հազար հեծելով եւ եօթն տարի անդ կացեալ· եւ ի դուրս եկեալ բազում աւարաւ, գրեալ ձեռամբ յոգնամեղ եւ անարհեստ գրչի Վարդան աբեղայի· այլ խաբեղայ եւ ոչ աբեղայ, ի դառն եւ ի նեղութեան ժամանակի, որ երերուն եւ տատանեալ ազգս Հայոց* (կայ) *ի ձեռն այլազգեաց անօրինաց եւ յանիրաւ պահանջողաց: Ի վանքս Աղջոց ընդ հովանեաւ սուրբ Ստեփաննոս նահատակիս եւ հրաշափառ սուրբ Կաթուղիկէ եկեղեցւոյս եւ սուրբ Աստուածածնիս եւ ամենայն սրբոցս, որ աստ հաւաքեալ կան:*

ՅԱՒԵԼՈՒԱԾ Բ· 53·

(Երեւանի թանգ· Nº· 134/129)

Աւետարան, փոքրադիր, արծաթապատ կազմով, մագաղաթ, նկարազարդ խորաններով, աւետարանիչների սկզբնազարդերով եւ լուսանցքի զարդերով: Գլուխների սկզբնագրերը թռչնագրերով· տների սկըսուածքը ոսկի, լաւ բոլորգիր· եղել է ժամանակին շքեղ, բայց վատ է պահուած: Նկարչութիւնը կիլիկեան ոճով, միջակից բարձր:

Յովհաննու վերջում·

Փառք ամենասբ· երրորդութեն· եռակի անձնաւորութեն· եւ եզակի տրութեն· հաւր եւ որդւոյ եւ հոգւոյն սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից ամէն:

Որք ըղմտաց աչս անաղաւտ եւ վիճա (s!) *ունիցին յանկաւոր զխամամբ առ նախանն լոյս եւ իմանալեացն տեսարան· նոցին ոչինչ է փոյթ բովանդակ բնաւին ինչ որ յաշխարհի եւ որ ընդ հոսանուտ եւ եղծանելի բնութեա· բերին, այլ միանդամայն ըղհուր սիրոյ, զոր հուրն կենդանի արկ ի բանական բնութիս· աւր ըստ աւրէ արծարծեն հոգիս անշիջանելի բորբոքմամբ հոգեւորացն տուր եւ առութբ·, որով եւ լուսաւորին ըստ բանի ածահայր· մարգարէին, որ ասէ, Պատուիրանք տն· լոյս են եւ լոյս տան աչաց:*

Արդ սէրն որ առ Ած· է, անզննելի է մտաց մարդոյ, զի ինչ եւ իցէ իր որ յԱծ· հայի, ոչ կարէ զատել զնա ոք, զի ոչ անկանի ընդ քանակութբ·: Երկս սէր է, զոր ստանան մարդիկք, զի է սէր, որ հոգեւոր է, զատ ի մարմնական սրաղմանց, եւ է սէր, որ հոգեւոր է եւ մարմնաւոր, եւ է սէր, որ ամենեւին մարմնաւոր, որ եւ մի լիցի ստանալ ումեք զնա· իսկ որք հոգեւորքն են, թէպէտ եւ մարմնաւոր լիցի սէրն, ոչ լիցի առանց մասանց հոգւոյ: Այլ եւ ստանաւր յիշեսցուք զերկս երանեալ զքաջ հռետոր եւ բանիբուն զԴանիէլ վարդապն· Սեվանեցի, զոր ի վաղուց հետէ շարժեալ ի հոգւոյն սրբոյ, եդ ի մտի իւրում ստանալ աւետարան փոքր տառի գեղեցկագիր եւ ըստուգարան, լինել անջինջ յիշատակ իւր եւ ծնողաց եւ ազգականաց իւրոց: Զոր եւ ես Վարդան եղս· մեղապարտ ոգի անուամբ միայն եւ ոչ գործով, վասն խնդրոյ ճգնազգեաց եւ սրբասնեալ քաջ բարունոյն Դանիէլի ըզմեր տկարութի· մարմնոյ եւ ըզսուտ ըզբաղումն եւ խաբող աշխարհիս ստէր կենացս ի բաց դնելով, ապաւինեցաք յԱծ· եւ ի միածին Յս· Քս· յորդին Այ· եւ առաջնորդութբ· սբ·

հոգւոյն եւ ձեռնտըւութը· նորին ըստ իմում կարի գրեցի զսր· աւետարանս ի Թվաբերութես· հայկազեան տումարի ՋԻ, ի հայրապետութեն· տր· Արիստակէսի ի յաթոռ սբ· Էջմիածնի: Եւ ի թագաւորութեն· Վրաց Բագրատին· եւ ի ղանութեն· Հասան բէկին, ի դառն եւ յանբարի եւ վըշտաշատ ժամանակի, որ երերուն եւ տատանեալ կա ազգ քրիստոնէից ի ձեռն այլազգեաց եւ յանիրաւ պահանջողաց:

Արդ գրեցաւ սբ· աւետարանս ի գաւառս Արարադեան ի ձորս Քեղոյ ի վանքս Աղջոց ընդ հովանեաւ սբ· Ստեփաննոսի եւ հրաշափառ Կաթուղիկէիս եւ մաւրս լուսոյ սբ· Ածածնիս· եւ այլ բազմահաւաք սրբոցս որ աստ կան: Ով սբ· ընթերցողք, յիշեցէք առ Քս· զԴանիէլ վարդպն·, որ ըստացաւ զսա ի հալալ ընչից եւ յարդար վաստակոց իւրոց յիշատակ իւր եւ ծնաւղաց իւրոց, հայրն իւր Կարապետ քահանային եւ մաւրն իւր Համաւորին եւ եղբարցն իւրոց Վրթանիսին, Առըստակիսին եւ Գրիգորէս քահանաին, եւ տր· Ներսէս էպըսկպսին· եւ ծնողաց եւ եղբարց նորին, եւ Եսաի քահանաին, եւ որդո նր· Գրիգորէս կուսակրաւն աբեղաին, եւ այլ ամ· արեան մերձաւորաց նց· ամէն: Եւ որք պատահիք ամ· տեսութբ· կարդալով կամ աւրինակելով եւ լսելով իշեսջիք աղօթս ձեր եւ ինքն ողորմածն Ած· առ հասարակ ողորմեսցի ձեզ յիշողացդ եւ մեզ յիշեցելոցս ամէն:

Եւ սակաւ գծողս զՈվաննէս սուտ անուն աբեղայ յիշել ի տր·[1]:

ՅԱՒԵԼՈՒԱԾ Բ· 54·

(Ձեռ· էջմ· N°· 1500/1511)

601բ· *Փառք անսկիզ(«բն» եղծուած, մաշուած), անժամանակ, աներբ եւ անուրեք, անորակ եւ անքանակ, գերագոյ եւ համագոյ միասնական սբ· երրորդութեն·, հաւր եւ որդւոյ եւ հոգւոյն սրբոյ:*

Արդ այս տաւնացոյց կարգեալ բովանդակ տարոյ աշխատութբ· տէր Իսրայէլի Խաչենեցոյ եպսի· հրամանաւ Վանական վրդպտի·, ի խնդրոյ Ջալալ Դօլին տեառն Խաչենոյ եւ տէր Գրիգորի եպսի·: Որք աղաչեցին զտր· Իսրայէլ եպսն·, հայեցեալ ի կորովութի· մտաց նր· եւ ի ժուժկալութի· բարուցն: Եւ նա յանձին կալաւ եւ ջանս եդ գտանել զաւր նահատակութե· սրբոցն, որ գրեալ կայ ի լիակատար պատմութին·, համառօտելով նմ· զսքանչելի կատարումն սրբոցն· եւ եդ ընդ այլ կարգեալ յայսմաւուրսն, զոր կարդ ամսոցն հայիւ եւ հռոմիւ միաչունչ եղեալ... (մի բառ) զտարին կատարեն: Բայց ոմանք յանդէտս եղեալ հակառա*կեն (ընդգծուածը կարկատած, լրացնում ենք) այսպիսի գեղեց... (կարկատած «իկ ընթերցուս») ծոց, որ աւր ըստ աւրէ զլսելիս մեր զարհուրեցուցանէ եւ զողումն ցաւագին տայ անձանց մերոց: Եւ արդ՝ եթէ այնպիսեացն է արքայութիւն երկնից, ապա մեզ զի՞նչ լինի ծուլիցս եւ հեղգացելոցս: Այլ միայն յայս ապաւինեալ յառաջ ընթանալ յաւժար սրտիւ եւ առնել զյիշատակ սրբոցն եւ բարեխօս ունել առ Ած·, զի հաշտեսցի ընդ մեզ եւ բարձցէ յաշխարհէ զպատուհաս մեղաց մերոց, եւ արժանի արասցէ սրբոցն փառաց հասանել ի Քս· Յս· ի տր· մեր, որում փառք յաւիտեանս ամէն:*

Ի Թվաբերութես· հայոց ի ՋԻ· թուականին գրեցաւ գիրքս սոսկացուցիչ ձորս Ճհապոնեաց ի գեւղս որ կոչի Կուքի, ընդ հովանեաւ սբ· Հազարաբիւրացս եւ Կաթուղիկէիցս սբ· Ածածնի· եւ սբ· Ստեփաննոսի եւ գեղամիջի սբ· Գրգրիս· եւ սբ· Նշանիս եւ այլ միահամուռ Վարդանանց սբ· նահատակցս· Ի հայրապետութե· տեառն Ոստակիսի եւ յաշխարհակալութե· Հասան բակին, որ յաղթեաց Ջհանշային եւ եկեալ ի դաշտն Խօեայ եւ փախըստական արար զՀասանալի եւ երթեալ ի Ղարապաղն եւ անդ եւս զՊարսկաց բռնաւորն զուլտան... (թերի, թուղթ ընկած լինելու պատճառով):

8բ· *Ողորմի Յովսէփ կրաւնաւորին եւ ծնողաց նորին· եւ հայր մուղդսոյն: Յորդանին եւ որդոյն իւրոյ Մկրտիչ կրաւնաւորին եւ Յակոբ գրչին ամ·»:*

14ա· *Որ ողորմի ստացողի գրոցս պատուական կրաւնաւորացն Յովսէփ աբեղային եւ Յորդանան մուղդսոյն եւ ծնողաց նորին եւ Յակոբ գրչին*[2]:

176բ· Ներքին լուսանցքում·

Ո՛վ ընթրցղք· եւ կառավար ժմատեղց· յիշեցէք ի սբ· յաղաւթս ձեր եւ Ած· ողրմի· ասացէք մօրն իմոյ Ալամշատին, որ զայս դէմս գրելիս էի մայրն իմ փոխեցաւ ի Քս· եւ զիս յոյժ տրտմեցոյց· ով որ լի բերանով Ած· ողորմի ասէ մօրն իմ, Ած· զիւր զամ· մեղսն ջնջէ, ամէն:

185ա· *Որ ողորմի ստացողի գրոցս տր· Յովսէփ կրաւնաւորին եւ Յորդանան մղսին· եւ որդոյ նոր· Մկըրտչին* — եւ ապա աւելացրած է «*եւ Գրդըրին· եւ Խաչատրին եւ տր· Յոհանին քհից· գեղջս*»:

235բ· Ներքին լուսանցքում·

Զտր· տր· քհյն· յիշեցք· ի բրի·, որ մեզ մին ձագի ըլլիթ երեր Թրուանդայ:

315ա· *Որոց աղաւթիւքն ողրմի· Քս· պատուական կրաւնաւորին տր· Յովսէփին եւ Յորդանան մղդասին· եւ որդոյ նոր· Մկըրտչին եւ սակաւ աշխատողիս Դաթէոս աբէղիս:* Եւ Գրգրին· վերջին ստացողին (*ընդգծուածը յետոյ աւելացրած*):

---

[1] Ովաննէս աբեղան, հաւանօրէն, յիշատակարանի շարադրողն է:

[2] Յակոբ գրիչը յիշուած է եւ 30ա·, բայց գրել է նա մինչեւ 70բ, ապա շարունակել է Մանուէլ գրիչը:

Ընդ սոցին եւ ինձ անպիտան գրչիս Մանուէլիս եւ իմ ծնողացն Ած· ողրմի· ասացէք եւ Քի· փառք յաւիտեանս ամէն:

432ա· *Ով սբ· կոյս տիրամայր Ածածին·, առ ծնեալն ի քէն բարեխաւսեա վս· տնողաց զօր աւետեաց քոյ· Մանաւանդ ստացողի գրոցս Յորդանան մղդասին եւ տր· Յովսէփին* եւ Գրգրին· եւ տր· խաչատրին եւ տր· Յոհանին (*ընդգծուածը յետոյ աւելացրած*):

Ընդ նոսին եւ ինձ Մանուէլ անպիտան գծողի եւ իմ ծնողացն Պետրոս քհյի· եւ Ալամշատի եւ կարդացողացս եւ լսողացդ· եւ նմ· փառք յաւիտեանս, ամէն:

436բ· *Որ ողորմի ստացողի գրոցս տր· Յովսեփին և Յորդանան մղդասին եւ Խոնդշայ ապաշխարողին, որ ԺԲ· Թկյ· աւղնութի· երեա մեզ՝ Քս· Ած· զխւրց· մեղցն· ջնջէ, ամէն:*

601ա· *Ողորմի Քս· ստացողի գրոցս տէր Յովսէփ ճգնաւորին եւ Յորդանան մղդասին եւ որդւոյ իւրոյ Մկրտիչ կրաւնաւորին* (92—105բ· *արեղային*) *եւ ամ· մերձաւորաց իւրեանց:* (*բաց չորս տող*): *Ընդ նոսին եւ ինձ մեղապարտ Մանուէլ գրչի եւ իմ ծնողացն եւ կարդացողաց:*

ՅԱՒԵԼՈՒԱԾ Բ· 55·

(Ձեռ· էջմ· N°· 598/701)

Նոտրագիր, հասարակ·

11բ· *Գիրք որ կոչի Ծաղկաքաղք եւ ժողովածու, գրեցեալ ումեմն Առաքել վարդպետէ· Նախճուանցւոյ ի փառս մեծին Այ· ի պարգեւատուողէն ամ·, ի բազում բանիւք եւ աշխատուբ· ժողովեաց բզմ· գրեանցէ բազմ· իրս, որ են այսոքիկ· Եփրեմ Խուրին եւ քրդ· եկեղեցյ·, եւ մեկնուի· ի սբ· աւետրնէն· եւ տօմրական· արհեստից եւ վս· ծռազատկին· եւ այլ բազում իրաց որ կա՛ ի մէջ գրքուս ժողվել· եւ գրել· եղեւ ի հայրապետութե· ամենից հայոց կաթուղիկսի· տռն· Աբրահամու կթուղկսի: Այլ եւ ի պատրիարգութե· սբյ· Երղէմյ· եւ Կոստանդինուպօլսոյ տռն· Գրգրի· եւ տն· Յոհաննէսի ածարանութե· վրդպտց·//*

12ա· *յամին փրկչին* 1730 *եւ ի թվին մերոյ ՌՃՀԹ եւ ի մայիսի ամսոյ· ԻԹ· գրեցաւ ի մյրքղքն· Կոստանդնուպօլիս:*

335բ· *Շնորհօք ամենազօրին հօր Այ· եւ փրկչին մերյ· Յսի· Քի· եւ սբյ· հգւյն· կենարրի· աւարտեցւ· գիրքս պտմւթեց· եւ Եփրեմ Խուրյ· եւ տօմարց եւ ընտիր պս· պէս ժողովածոց թվին ՌՃՀԹ ին ի ամսեանն ապրլի· Լ· օրն· իսկ ի հայց· արեգի ԺԲ· ի մայրաքղքն· Ըստամպօլ, ի ձեռնամբն* (s!) *Կուքեցի Սարգսի որդի Առաքել տրուպ վրդապտէ· ով ոք հանդիպէ սմա, ներէ զաղալանուս իմյ·//*

336ա· *եւ յիշէ միյ· հայր մերիւ զեղկելիս· եւ զհօգեւոր· ծնողն իմյ· կոյս Վառվառն եւ ի մայրն իմ Հռիփսիմէն հանդերձ վերյգրեալ· հօրն իմյ· եւ ինքն յիշել· լինի ի Քսէ· Այ· մերմէ: ամէն:*

ՅԱՒԵԼՈՒԱԾ Բ· 56·

Վաւերագիր N° 14, նոտրագրին մօտ կէս թերթանոց թղթի վրայ, սպիտակ, $33^{1}/_{2}\times21^{1}/_{2}$ սմ·

(Կաթողիկոսական դիւան էջմիածնի մատենադարանի)

Պաճառ գրուս այս է թվ· ՌՃՂԹ ին
որ Ես Օծոպեցի Մկրտիչի որդի Եղումս ծախ
եցի մեր Ծատուրէնց այգին Օծոպա եւ Օհանըս վանից առաջ
նորդ Մարկոս վրդին·ղիմաթ ի·գ·ռ· *դն· դ·*
հատօվն կէս օրայվար այգի ա· չարէք հող որ իմ
զամով ծախեցի դ հատօվն մաղարն· ի·գ·ռ· *դն·*
ա· հատն Աբրհամէցն (s!) *հողն, ա· հատն Ասկանդարէնց*
Պետրոսի այգին,ա·հատն Սիմայմոնէնց տր· Կիրակոսի
հողն, ա· հատն վանանց հողն որ էս մաղարս
կէս զանի ժ· գ· ռ· *դն· թէ որ գավի զարապի*
անիլոյ լինի ես Եղումս օհտէն գամ պատալն
ա· այգի տամ Եղումի մրհն (կնիք)
(կնիք)

Պարսկերէն ստորագրութիւն
*ես տր· ըՍտէփան վկ· եմ*2)
Պարսկերէն ստորագրութիւն
ես Խութոյ որդի Խաչիկս վկ· եմ
ես Ավաքի որդի Թէվլիս,վկ· եմ
Պարսկերէն ստորագրութիւն
ես տր· Պողոս վկ·
(կնիք) (կնիք) (կնիք)
ես Գալուստի որդի Փիրղալէմս վկ· եմ
ես տր· Կարապետի որդի Սուղմոնս վկ· եմ
ես Ղէվոնդս վկ· եմ ● (թանաքի բիծ մատով խփած)
ես Խաչիկի որդի Յոհանս վկ· եմ
ես տր·սփրհմանի! որդի Ուհանս վկ·
ես Կիրակոսի որդի Ղազարս վկ· եմ
ինձ զապուլ ● (թանաքի բիծ մատով խփած)
ես Խաչիկի որդի Մուսէվս (s!) *վկ· եմ*
ես Գոմէրեցի տր· Սուղմոնի որդի տր· Ըստէփանս
*գիրեցի Եղումի իզրօվն վկ· եմ*2)

ես ոնայղատեցի էրեցփոխան Ֆուգլոս· վկ· եմ
ես տր· Թումի որդի Գիրիգորս վկ· եմ
ես էրէցփոխան Յունանս վկ· եմ
*ես Վարդանի որդի Ըստէփանս վկ· եմ*1)

ի ղուռն խոտղերեւն սբ· Նշանի
ի ժամակն (s!) *Մարկոս վրդտին·*
եւ գոմէրեցի Բաղիս վկ· եմ այս
բանիս

---

1) վերջին երկու ստորագրութիւնները մի ձեռքով:

2) Բոլորը սորա ձեռքով:

ՅԱՒԵԼՈՒԱԾ Բ. 57.

վաւերագիր N°. 10. մեծ. 33×21½ սմ. շեղագրով կէս թերթանոց թղթի վրայ, սպիտակ:

է

Պատճառ գրոյս Թվ. ՌՃՂԵ յունիս ամսի Ի. օրն
Որ ես Տիկնեցի Պօղոսի դուստր Հէրիք նազս որ իմ հայր
Պօղոս կամ իմ հօր եղբայր. Մուրատն առելին Ասկանդարէնց
(ջնջուած) *Յակոբ էն Ծատուրի այքին դ. հատօվն, ա. հատն վանքի*
հողն, ա. հատն Ապրհամէնց հողն, ա. հատն Ասկանդարէնց Պետրոսի
այքին, ա. հատն Սիայմօնէնց տր. Կիրակոսի հողն ժ. ե. ռ. *ղկնի.*
պէշարդ էր ես Պօղոսի աղչիկ Հէրիքնազս պէշարթ լամէս ժ. ե. ռ. *ղեն.*
տայ այքին տվի Մկտրիչի (s!) *տղի Եղումն Թէ որ իմ Պօղոսի*
կողմէն կամ Մուրատի կողմէն դավի ջի դուս դալոյ
լինի ես Պօղոսի աղչիկ Հերիք նազս էհօտէն դամ
եւ իմ մասս ինձ դապուլ է ● (թանաքի մի սեւ բիծ, մատով խփած)

Էս բանիս մէք ոնակատավու ջմբես?/
վկ.

Ես Ածօպեցի Ամիրխանս վկ.
ես Սօղումս վկ.
ես Խուտոյ Խաչիկս վկ.
ես Ալաքի որդի Թէվլիս վկ.
ես Փիրղալամս վկ.

ես Խլէտիկի որդի Փրանկ գուլս վկ.
ես տր. Թումի որդի Գիրիգորս վկ
ես Շահնազարի որդի Էվազս վկ.
ես Մաթէոսի որդի Ոսկանս վկ.

Ես Մարկոս վարդապետս գրեցի Հէրիքնազի իրդարօվն վկ. եմ[1])

ՅԱՒԵԼՈՒԱԾ Բ. 58.

վաւերագիր էջմ. N° 12. մեծ 16×14½ սպիտակ, չարեքից էլ պակաս թերթի վրայ, վատ ճօտրագիր:

է

Պտճռ. գրոյս այս է. Թվ. ՌՃՂԷ մրտի գ. օրին եղեւ
որ ես Խաչիկի որդի Ովսէփս. իմ կամաւն եւ իմ
յօժարութբ. ծախեցի. մէկ Թուխդ քահրէզ որ
Մհամատ Թաիրէն էինք առել որ մին նուկլի էր. գ. Թուխդըն վանքին էր մի Թուխդն իմ Ովսէփիս էր. ես էլ
կրգին ծախեցի. մեր առաջնորդ Մարկոս վարդպտին
մտղարն բ. ռ. *ղկն փող առի պէղսուր ինձ հասաւ*
Թէ որ եսու առաջ տալի տարապայ անող լինի
ես Ուսէփըս ջուղապն տամ հուգուր չի բերեմ

Այս բանի տանուտէր Փիրղալամս վկ. (կնիք)
Քուլթս (?) *Խաչիկս վկ.*

Թեվլիս վկ.
(կնիք) *Ամիրխանս վկ.*

Ոհանս վկ. *Եղումըս վկ.* *Մուսէլս վկ.*

Սողմանս վկ. *Կիրակոս վկ*

Ես Գրիգորն վդպս. գիրեցի վկ.

ՅԱՒԵԼՈՒԱԾ Բ. 59.

Յաւսմաւուրք. Արաց ԻԶ. եւ Փետրուարի Զ.

Յայսմ աւուր հանգեաւ ի Քս. մեծ եւ անուանի վրդն. Ներսէս ի վանսն Գլաձորոյ. Չ. եւ ԼԳ. Թըւականիս մերոյ: Սա էր ի գաւառէն Տարօնոյ, ի քաղաքէն Մըշոյ. սնեալ եւ վարժեալ ի հռչակաւոր վանսն Ղազարու, որ է սբ. Առաքեալք. էր նա կարի քաջ վարժեալ ի գիր եւ յուսումն յունաց. եւ սերտ գիտէր զլեզուն Հռոմոց եւ զերիցութի. նոցա: Եւ ապա հանդիպեալ մեծ եւ հռչելի վրդին. Վարդանայ. եւ աշակերտեցաւ նմա: Եւ յետ փոխման նր. յաստեացս, նստաւ յաթոռ նորին. եւ լուսաւորեաց գիտութբ. զազգս հայոց ուսմամբ գրոց: Եւ հասեալ ի բարւոք ծերութեան, հանգեաւ ի Քս. ի նոյն վանսն Գլաձորոյ:

---

[1]) Բոլորը Մարկոս վարդապետի ձեռքով գրուած:

ՅԱՒԵԼՈՒԱԾ Բ. 60.

(Ձեռ. էջմ. №. 3932, 329բ.)[1]

Գիրքս սրբոյն Գրիգորի Նիւսացոյ, որ բաժանեալ է յերիս հատածս, ի բնութե. ի կազմութե., եւ ի կուսութե., իմաստնոյ եւ շնորհալից եղբաւր մերոյ եւ սպասաւորի բանին Գրիգորի մականուն Բժնեցոյն է, չարագծեալ ի կրտսերէ նորին ի Ստէ. եւ շնորհեալ նմայ. Ած. վայելել տացէ նմայ երկար ամաւք, ոչ ոք յիմոց եւ ոչ յաւտարաց ունի իշխանութի. ջալունջա առնել. եւ որ յանդգնի, յԱյ. եւ ի սբ. Գրիգորէ, եւ ի մէնջ ընդ կապանաւք է. ի թվ. հայ. Ջի գրեցաւ յետին գիրս առ դրան սրբոյ Վիրապիս:

ՅԱՒԵԼՈՒԱԾ Բ. 61.

(Տե՛ս աստ, եր. 253—254, քաղուածօրէն)

ՅԱՒԵԼՈՒԱԾ Բ. 62.

(Տե՛ս աստ, եր. 254, քաղուածօրէն)

ՅԱՒԵԼՈՒԱԾ Բ. 63.

Ի ՉԻԸ գրեցաւ կանոնական սահմանադրութի. ուղղութցս. յուսումն խրատոյ կարգաւորութե. վանականաց, յարմարեալ եւ չարակարգեալ ի հոգխայպայծառ (s!) *եւ ի տիեզերալոյս վարդապետէ, եւ ի մեծէ եպիսկոպոսապետէն Կեսարու Կապադոկացոյ սրբոյն Բարսղի, ի հռչակաւոր եւ յականաւոր սբ. ուխտս Եղխազարու, ընդ հովանեաւ սրբոց առաքելոցն Պաւղոսի եւ Պետրոսի եւ Անդրէի կամաւք եւ յօժարութբ. եւ մեծաւ հոգաբարձութբ. իմոյ անպիտանութեա. Ներսխի ոսկանուն վարդապետի: Զոր ետու գրել ի խրատ ուղղութե. վարուց իմոյ անուղղա կենացս, եւ ամենեցուն որ պատահեն սմա եւ չահեսցին ի հոգեշահ բանից սատի եւ վարժել. կրթեսցեն զանձանս* (s!) *գիտելով թէ ո՞րպէս արժան է կեալ ի միաբանական եղբայրանոցս ըստ այսմ եղելոյ սահմանիս, որ ի հոգոյն սրբոյ ազդեցաւ հոգխացելոցն Բարսղի, զի մի ոք սխալեալ անպիտութբ. վնասեսցէ զանձն փոխանակ աւգտելոյ: Եւ իմոյ մեղաւշատ եւ յոգնասխալ եւ ծոյլ անձին, սրտի մտաւք թողութի. խնդրեսցին ի Քէ. որ քաւութի. է յոլովապատիկ յանցմանն մերոյ, զի վս. այսպիսի յուսոյն ձեռնամուխ եղաք ի սա: Եւ անկն* (s!) *ունիմք ի ձեռն սորա թողութի. մեղաց գտանել հանդերձ եղբարբք եւ քերբք եւ ամենայն մերձաւորաւք հաւատոյ եւ արեան ասելով զերանի որում թողութին. բարի յիշատակաւն քհ.* (s!)*: Եւ կատարողքդ այսմ հայցուածի բարոյ մասին արժանաւջիք ի Քս. յմր (Յս.ի ?) Տր. որ է աւրհնել. յաւիտեանս:*

Տարբեր գրով.

Նա, եւս զՅովաննէս յիշ. եւ զաղաչեմ (s!)*:*

ՅԱՒԵԼՈՒԱԾ Բ. 64.

(Ձեռ. №. 906 Նժ., 288բ.)

(Տե՛ս աստ, եր. 254, քաղուածօրէն)

ՅԱՒԵԼՈՒԱԾ Բ. 65.

(Ձեռ. էջմ. №. 1111/1097)

6բ. Զպատահեալսդ այսմ մատենի աղաչեմ յիշել յաղաւթս զտացաւղ սորին զմեծ հռետորն Ներսէս, նոյնպս. եւ զնուաստ ոգիս Եսայի հետեւող եւ աշակերտ սբ. առնն Այ. Ներս. վդի.:

Նչեցու ձեռքով. ունի մի երկու տող իր ձեռքով սրբագրութիւն եւ թերին լրացրած. օր. 159ա. 166բ. 145ա. Բուն գրիչը.

Շնորհաւք եւ ողորմութբն. Այ. կատարեցի զատս Ածաշունչ., ես փցուն եւ ապիկար գրող Լուսեր: Ի վայելումն սբ. եւ ամենագով վդն. Ներսեսի, աղաչեմ զդասս լուսերամից յիշել զբազմամեղ գրողիկս եւ զծառանկորդ գրիս զհռետոր զվդն. եւ Ած. յիշողացդ ողորմեսցի.

Ի թուիս հայոց. ՉԻԹ գրեցաւ:

(Տես. պատկ. 198).

Տարբեր գրչով.

Ած. ողոմի Ներսէս վրժապետին. եւ ինձ Թվմա. վդպիս., որ զնարուեստ գիրս յաւարտ ածի. Քս. Ած. այն աշխտին. ողմեսցի, որ սկւ. ինքն ը. մեզ տանջի, ամէն:

Վերջին 321 երեսում կան երկու յիշատակարան, մեզ համար անկարեւոր: Առաջին գրիչ 1ա–314բ. Եզնիկի վերջը, մնացածը 315ա–320բ. տարբեր գրիչ[2]:

Բովանդակութիւնը.

Յաճախապատում ԻԲ արարչագործութեց. եւ ԻԲ նահապետացն եւ ԻԲ ալփափետացն եւ ԻԲ կտակարանացն հնոց տն. Եպիփան ասացել: Յառաջնումն (բայց ջնջած Յաճախպումն. չինած) աւուր արար Ած. զվերին երկինս եւ զերկիր. 1ա–2բ.

---

[1] Վարդան վարդապետի ինքնաձեռագիրը:

[2] ԾԱՆՕԹ.— Կաշեկազմ $16{,}3\times12$ սմ. $\times5^1/_2$ սմ., թուղթ $16{,}8\times13{,}1$ սմ., բոլորգիր, միջեան $13^1/_2\times8{,}8$ սմ.:

Առաջաբան Թագաւորութեանց 3ա–4բ.

4բ. Սրբոյն Եփրեմի խորին ասորոյ. Մեկնութի. Սամուէլի ասացեալ. ցանկը. ապա բնագիրը. 6բ–60բ. *«Եւ ի սկիզբն բանից իւրոց այսպէս ասաց. Սկ. Այր մի էր յԱրեմաթեայն Սիփա յԵփրիմ լեռնէ.*

Մեկնիչ Թագաւորութեանն. 60—108*բ.*

Մեկնութի. դպրութե. իբրամենու 108բ—145*ա.*

Մեկնութի. դատաւորաց որ արար տն. Եփրեմի. 14*ա*—153*բ.*

Մեկնութի. Յեսուա եւ դատաւորացն, զոր արարեալ է.

ՅԱՒԵԼՈՒԱԾ Բ. 66.

Բայց գրեցաւ հրամանաւ գիտնական եւ արդիւնական հռետորի Ներսի. ի ծնունդ եւ ի սնունդ մաքրափայլ որդոց մաւր մերո Սիոնի. որ եւ զյաւժարամիտն ծնանի երկաւք բանին ճշմարտութե., այլ եւ յիշատակ իւր եւ իւրոցն ամենայնի:

Արդ աղաչեմ զամենեսեան, որք հանդիպիք այսմ կենսապարգեւ կտակիս, յիշեսջիք զառաջասացեալ երջանիկ վարդապետն Ներս. եւ զծնաւղսն իւր, ընդ նմին եւ զՄովսէս բեմբական որ ամ. մարմնաւոր հանգստեամբ սպասաւորեաց մեզ, որ եւ փոխարէն տացէ նմա Տր. զիւր հանդիստն: Իսկ հուսկ յետոյ քան զամենեսեան յիշեցէք զաղաղուն եւ փցուն գրիչս Ստեփաննոս, սոսկ անուամբ կրաւնաւոր: Եւ զեղբայրն իմ Պետրոս զհանգուցեալն ի Քս. եւ այլ աշխատեալքս ի սմա, եւ տացէ Տր. յիշողացդ եւ յիշելոցս զիւր անճառ հանգիստն յաւիտեանս յաւիտենից ամէն:

ՅԱՒԵԼՈՒԱԾ Բ. 67.

(Ձեռ. էջմիածնայ Nº. 60/145)

Զնուաստ եւ մեղապարտ ոգի Եսայի, մի մոռանայք յիշել ի բարի որ ուղղեցի ի սա զտառ, զկէտ, եւ զբան, եւ զտուն. եւ ի տեղիս տեղիս զժուարալոյծ բանիցն գրեցի լուծմունս իմով ձեռաւք ող. տեսանէք. զի ի ձեռն սակաւուս չահեցայց ի ձենջ յիշել միշտ ծնողաւք եւ վարդապետաւք[1]) :

ՅԱՒԵԼՈՒԱԾ Բ. 68.

(Ձեռ. էջմ. Nº. 60/167)

Այս տառ սրբազան մեծին Դիոնոսիոսի Աթենացւոց եպիսկոպոսի գրեցաւ ի սոյդ եւ յընտիր աւրինակէ ի հռչակաւոր ուխտէն Հաղբատայ. Հրամանաւ եւ արդեամբք եռամեծի եւ անյաղթ վարժապետի եւ ժրաջան հռետորի Եսայեայ:

Արդ որք աւգտիք ինչ յԱծապարդ տառէս եւ կամ աւրինակ առնոյք յիշեսջիք զսրբազան բաբունապետն իմ զԵսայի հանդերձ ծնողաւք եւ վարդապետաւք:

Ընդ նմին եւ զիս զամենաթշուառ գրիչս Յովանէս Հոռոմայրեցի աղաչեմ յիշել ի Տր. եւ յիշողք յիշեալ լիցին ամէն:

ՅԱՒԵԼՈՒԱԾ Բ. 69.

(Ձեռ. էջմ. Nº. 94 Գց./3276)

(Տե՛ս աստ, եր. 258—259, քաղուածօրէն)

ՅԱՒԵԼՈՒԱԾ Բ. 70.

(Ձեռ. էջմ. Nº. 659/437)

Կաշեպատ կազմով.

Մինչեւ 67բ. Նարեկի լուծմունք եւ Որոտնեցու Յովհ. աւետարանի լուծմունք, իսկ 68ա–386բ, զանազան մեկնութիւններ եւ լուծմունք, գրուած ըստ մեծի մասին Եսայի Նչեցու ձեռքով.

ա) Գրիգոր ածաբանի այլ եւ այլ գրուածների լուծմունք.

բ) Փիլոնի՝ Յաղագս նախախնամութեան.

գ) 166*բ. Պատճառ վեցաւրէին, որ ի Բարսղէ եւ Վզն. վդ.* (Շնորհալու ժամանակակից) *տեղեկացեալ ի Ներս. կաթողէն. եւ յաւրինակի գտ. գրեալ զայս եւ է այսպ.*

դ) 166*բ. Պատճառ վեցաւրէին, որ ի Բարսղէ եւ նորա հարցողաց. Քս. ծնեալ ի եւն. Առ որս գրոցն, Փիլոնի.*

ե) Եւագրի, լուծմունք.

զ) Պատճառք Սահմանց գրոց եւ լուծմունք.

է) Ներսիսի կաթ.–ի Մեկնութիւն Դաւթի.

ը) Լուծմունք նախախնամութեան Փիլոնի. Նահապետաց.

թ) Դիոնեսիոս Արիսպագացու անունով հասած գրքերի.

ժ) Տն. Յակոբա հայոց կաթողիկոսի լուծմունք գործոյն Բարսղի, զոր տեղեկացեալ է ի Դաւիթ վարդապետէ մականուն Խմշաժ կոչեցեալ. «Զգուշական կենցաղս» (լուծմունք է).

Գրուած է իւր համար, դպրոցական նպատակներով:

88*ա. Աստանաւր հանդիպեալք այսմ խրթնայ... սուղիչ լուսարանիս, յիշեսջիք զերից երանել. այրն Այ. զմեծ հռետորն Ներս. վս. ...վրդովս անձին: Ընդ նմին եւ զեղկելիս Եսայի եւ դուք յշել. լիջիք:*

98*բ. Զմեղապարտ գրիչս եւ վպտն. իմ յիշել աղաչեմ յաղաւթս:*

---

[1]) Տես. Մեր Գրչութեան Արուեստը. Գ. Տախտ. ՁԲ. §130:

107ա· *Զհամշիրակ եղբ· իմ Սփ· որ զօրինակս քարտիս հանդերձ շնորհեց·, յիշեսջիք ընդ նմին եւ զամենամեղ գրիչս Եսաի աղաչեմ:*

110բ–126բ· Տարբեր գրչով· 126բ· Ներքեւի լուսանցքում·

Ով պատուական եղբայր Եսի·, դու արժանի ես թէ· Խ· տեար այսցեղ քեզ օգնութի· է արրել·, ապա դու գիտես զտկարութիս· իմ եւ զհարկս որ ի վր· կա, անմեղադիր լեր եւ յաղօթից մի մոռանար, թէ այլ կարեմ օգնել, յօժար եմ:

Եւ յիրաւի ուրիշ տեղերում էլ քիչ ու միչ օգնել է:

135ա· *Զմեղապարտ գրչ· Եսաի յշ·:*

144ա· *Զվպտն· իմ զՆերսէս եւ զամենամեղ գրողս աշակերտ նորին Եսաի յիշել աղաչեմ ի տր·: ամէն եւ եղիցի:*

153բ· *Աղաչեմ յիշել զպետս իմս վարժից եւ իմոց համասեռից Ներսէս· ընդ նմին եւ զամենամեղս Եսաի գրիչ:*

293ա· *Ահեալ· տր· Ած·, որ զաւրացոյց զտկարութիս· իմ յանկ· հանել զակաւ աշխատութիս·: Զստացող գրոց զԵսաի վղ· յիշել առ Քս·:*

314ա· *Զամեներջան· վղ· իմ Ներ·: Եւ զմեղ· գրիչս Եսաի յիշել աղ·*

340բ· *Զմեղապարտ գրչ· յիշ· աղ· Եւ զհռետր Վղապետն· իմ Ներս· հանճարեղ դպիր այս իմաս·*

Գրած է Բարսղի վեցօրէից ճառերի լուծմանց տակ·

365բ· Մի այլ օգնող գրչի·

Գիրս հնանա, ձեռս հողանա, Ած· միայն է միշտ եւ կա եւ որ զայս տեղ գիր կարդա, Յս· ողորմի ինձ եւ նմա:

268բ· Ներքեւի լուսանցքում·

Դժուար է խիստ, այսչափ կարացի բղում· աշխատութբ·, մի մեղ դնէք, ձեզ տացէ Ած· զստոյգն իմանալ·

Դիոնեսիոսի· Յեռեթէոսի բացատրութեան տակ[1])·

ՅԱՒԵԼՈՒԱԾ Բ· 71·

(Ձեռ· էջմ· № 1432/1422)·

(Տե՛ս աստ, եր· 260, քաղուածօրէն)

ՅԱՒԵԼՈՒԱԾ Բ· 72· չկայ

ՅԱՒԵԼՈՒԱԾ Բ· 73·

(Ձեռ· էջմ· №· 1369/1363)

Փառք անեղին եւ անծնին Հաւր, եւ էածին եւ կուսածին Յի· եւ համափառ պարգեւաբաշխ սբ· Հոգւոյն ելողին ի նոցունց էութենէ, յաւիտեան եւ յաւիտեանս յաւիտենից ամէն: Ի թուիս Հայոց ՋԽԱ· ծրեցաւ մեկնութիս· Գործոց ձեռամբ փցուն եւ անպիտան ախմար (s!) *եւ գրասէր, բազմաբիծ եւ յոքնամեղ Յովասաբի· հրամանաւ եւ արդեամբք, նացել եւ սրբազան զերափառ եւ հրաշազեղ ողս մեծ բաբունապետին յԵսաեա, յաղագս վաելման անձին իւր եւ յիշատ· ծնողաց իւրոց եւ հոգեւոր ծնողին եւ Ածապարգ· մեծ վղ·ին Ներսիսի, փոխեցելոյն առ Քս·:*

Զի սբ· Երրորդութի· Ած· նոր նորոգէ եւ արփահրաշ լուսով պսակէ եւ զատակից եւ փառակից արասցէ սբ· եւ ուղղաղաւան վղ·ացն զսոսա ի յարկս լուսոյ խնամելով ամ· հաճոյցելոյն (s!) *բարէխաւսութբ· ամէն եւ եղիցի:*

ՅԱՒԵԼՈՒԱԾ Բ· 74·

(Ձեռ· №· 1395/1409)[2])

261բ· *Ընդ նմին եւ զեղկելիս զվերադծող այսմ տառիս· ի մենաստանս Գլաձորիս եւ դերանուն կրաւնաւորիս, որ սպասաւոր եմ լեալ բանիս, միայն անուամբ եւ ոչ ըստ գործիս: ընդ խնամաւք վարժապետիս կայծակնամաքուր մեծ հռետորիս անունակիր* (s!) *մղէխս·,*

Բով· 1ա·—138բ· ա) Հաւաքումն մեկնութե· եւթանեցունց թղթոցն կաթուղկց·

«Արդարն Յակովբոս, որ է ըստ մարմնոյ եղբայր տն· մերոյ·»

Հեղինակն անյայտ· բայց հետաքրքրական, որ վկայութիւններ է բերում Որոգինէսից, ի միջի այլոց եւ Որոգինէսի Երգերգոցի մեկնութիւնից, Դիդիմոսից, Սեւերոս Անտիոքացուց, Հիւսիքոսից շատ յաճախ եւ այլ եկեղեցական հայրերից:

բ) 139–261բ· Մեկն· Յովհաննու Յայտնութեան Անդրէ եւ Արեթաս եպիսկոպաց· Կեսարու Կապադովկիոյ, Ներսէս Լամբրոնացու՝ թարգմանչի յիշատակարանով:

261բ· Գրչի յիշատակարանը:

262ա—289բ· *գ) Տեսութի· քննութե· աղաւթից· սբ· աւետարանչին Յովհաննու ի խնդրո վղտի· Յակոբեցո ի տր· Ներսիսէ հոգեւոր որդեկէ յեղբաւրէ պարոն Հեթմո··*

«Գիր քոյոյ պատուականութեդ·»

դ) 289բ·—330բ· Ներսէս Շնորհալու·

«Մեկնութիւն Բարձրացուցէք»–ի·

Յիշատակարան գրչի 330բ·—331բ· (գրուած 311)·

334 (314)—345· *Նախերգանք քերողից զոր արարեալ է տր· Բարտ (ուղիմէոս?) եւ թարգմանեալ ի հայս·*

---

[1]) Սկզբից եւ վերջից կիսատ է հին մասը, թուղթ սոսնձած: Ձեռագիրը շատ գործածուած:

[2]) ԾԱՆՕԹ·— կաշեկազմ· $10\times11^{1}/_{2}$ սմ·, հաստ· $7^{1}/_{2}$ սմ·, թուղթ $16{,}2\times12{,}2$, բոլորգիր, երկիջեան 13×4 սմ·, թերթ· 325· (=345 պիտի լինի):

որ յորջորի (s!) իսկ Եախս : Յիշել հայցեմ միշտ զեղկելիս եւ զծնաւղսն իմ ի բարիս եւ զրաբունին իմ զղձալի, որո անուն զուարթուն կոչիս եւ զպատանիս իմ զՍարգիս, որ ընդ իս եւ սա իսկ պանդխտիս· ընդ նմին եւ զղձալիքս սիրով կապեալ առ իմ ոգիս, որք են եղբարք, ոչ ըստ մարմնիս, այլ հոգեւորս եւ ցանկալիս, խնամակալուք ստահակիս, սրտիւ սիրաւղք զիս զանբարիս, զի եւ յիշաւղքդ եւ յիշելիս ի քեզ անճառ բարիս, ընկալցուք յաւուրն անբեկի: ամեն եւ եղիցի:

262ա· Սիրելիք Քի· եւ աշակերտք, որք հանդիպիք· այսմ մատենի, յիշեսջիք զանպիտան գծողս աղաւթիւք, եւ զվղպն· իմ զԳրիգոր Բրջնեցի (s!) եւ զքեռորդի նորին արհեպոս· զտր· Յովէս· զերախտաւորսն իմ եւ զուսուցիչք, եւ զծնողսն իմ եւ զեղբարսն եւ զքորսն բոլորով սրտիւ եւ աստաջիք, Քս· Ած· քաղցրականբ (s!) հայեաց ի նոսա յանբեկ աւուրն, զի առ հասարակ արժանի լիցուք ողորմութեն· Այ· եւ նմա փառք յաւիտենս· ամէն:

310բ· Ի հայկազեանս տումարի/ յեաւթն հարիւր մերոյս թուի,/ քառասներորդ է· երորդի,/ որ եւ ամաւք շրջագայի:/ զմեր հայկազեան տունս հայրենի/ որբուացեալ (s!) զսայ ունի,/է բարբարոս եւ այլազգի,/ որոյ անուն Ղազան կոչի:/ յարքայութեն· Հեթմոյ որդի/ Լեւոն բարեպաշտի,/ բարեբարոյ եւ հեզհոգի/ որ եւ տիրէ Կիլիկոյի:/ զլուսաւորիչն իմ Գրիգորի/ ի զրոյ մեղաց վերածողի/ զաղտըս մեղաց իմ լուացողի,/ զաթոռն ունի տր· Գրիգորի:/ Մկրտիչ անուն եւ եղկելի,/ սուտ քահանա տարտամ ոգի,/ ժահահոտեալ մեղաւք իլի,/ զոր կամաւորն գործեց//

311ա· ի:1) ի նահանգէ Այրարատի/ Լուսաւորչին մերոյ տեղի/ յԱրարատէ հռչակելի,/ որ յորջորջին Աթելենի:/ է ի ստորոտն Արագածի/ լերին մեծի եւ անուանի·/ մերձ ի գեղակն է ի Բրջնի/ առ սահմանաւքն Կոտայի:/ որոյ եկեալ յայս գաւառի,/ որոյ անուն Վայ ձոր կոչի/ հուպ ի շիրիմն Սիւնեցի,/ ի յԱղբերց վանս մենաստանի:/ յերկրորդ Աթեն պանծալի՝/ առ ոտս հաւր մեր Եսայի/ եւ րաբունեաց վարժապետի,/ հասեալ ի ծայրս իմաստ բանի:/ բարձեալ զխաչն Քի·/ եւ հետեւեալ նորին շաւղի,/ ի գիշերի եւ տուընջենի/ ածային· բանիւ բերրի:/ ըստ տրունեանն· հրամանի քննէր զգիրս մատենի, զի առանց այսմ հանճարի/ կեանս անհնարին ոք ընդունի: Սկիզբն արարի այսմ տառի, կաթողիկեայցս մեկնչի, եւ Յովհաննու յայտնութենի, ու էր ընդ եղբարցս նորին բանի, եւ Բարձրացուցէ ճառիս խաչի եւ գեղեցիկ ներբողինի, որ ասաց Ած· է ատ Դաւիթ անյաղթելի փիլիսոփայի, որ է պարծանք մերոյս սեռի, զորս զրոշմել ի քարտիսի :մանկանց որդոցն, որ (նոր ?) սխնի որ յուսումն փափագի Ածային· իմաստ բանի, զի յիշատակ անջնջելի իմն եւ ծնողաց իմ եղիցի: Նաեւ եւ զսբ· րաբունապետն իմ զԳրիգոր, մակ յորջորջեալ Բրջնեցի, զուսուցիչն իմ եւ զերախտաւոր, որ էր այր բարեսէր եւ կատարեալ յիմաստ առաքինութե·, ի տեսականն եւ ի գործնականն, բայց առաւելեալ բանականաւն, որպէս թէ սեռ իսկ ասել զնա բանի, եւ կամ մխտ· վս· որոյ պատուեալ յԱծուստ· եւ ի մզկանէ·, ի մեծամեծաց եւ ի փոքունց: եւ էր տարփաւղ Ածային· եւ հոգեւոր զանձուն, որ ըստ մարգարէին ձայնի ելս եդ ի մտի ի հովտէս տրտմութե·, եւ ի տաժանալից կենցաղոյս որ յայսմ ամի փոխ·2)

311բ· առ անձկալին հաւր Քս· զորս նոյն ինքն բանն Ած· երկնաւին խորանացն արժանի արասցէ եւ ընդ սիրելիս անուանն իւրոյ դասեսցէ պայծառ եւ զուարթ երեսաւք, եւ ի դասս սրբոց վարդապետացն ընկալցի հանդերձ ծնողաւք եւ հարազատաւք իւրովք եւ ամենայն արեան մերձաւորաւք: ամեն եւ եղիցի: Այլ եւ զքվերորդի սորին զտր· Յովես· զարհեպիսկոպոսն Բրջնոյ եւ զվերատեսուչն Այրարատեան նահանգին· զոնեալն սրբութբ· եւ զվարժեալն առաքինութբ·, որ է այր հեզ եւ երկայնամիտ եւ զուարթ դիմաւք, որպէս վկայի վս· Բառնաբայ, զորս պահեսցէ Քս· Ած· անսասան եւ խաղաղական կենաւք անարատ եւ անբասիր ի կենցաղ մինչ ի խորին ծերութի· ամէն եւ յետ յաստեացս վճարման սրբոց հայրապետացն եւ ընտրելոցն մասնակից եւ դասակից արասցէ: Եղիցի եղիցի: Որ է արեան մերձաւոր իմ եւ խնամածու ըստ հոգոյ եւ մարմնոյ· նա եւ զեղկելին զսուտ անուն աբեղա եւ սպասաւոր բանի, մեղսամակարդ եւ ժահահոտեալ մեղաւք: Եւ զհարազատ եղբայրն իմ Յովէս· քահանա, խաչակրաւն եւ սրբասէր անձն, հանդերձ եղբարբք եւ ծնողաւք եւ ամ· երախտաւորաւք յիշել ի տր·: Արդ յերես անկեալ արտաւսրաթոր դիմաւք աղաչեմ զմերձակայդ ..? զպատահեալքդ այսմ Ածաշունչ· մատենի, եթէ ընթեռնլով եւ եթէ յաւրինակելով, վերադրեալքս ի սմա յիշել ի մեղաց թողութի· առաջին բարի մտաւք· եւ սխալին եւ խոշ(որ)ութեն· մի լիցի մեղադրթի·, այլ սղալն սիրով ուղղեսցի: զի եւ ձերոյն պատառեսցի կտակ պարտեացն յառատ տնէն· յաւուրն անբեկի·

ՅԱՒԵԼՈՒԱԾ Բ· 75·

(Ձեռ· էջմ· №· 1844· Նժ)

Փառք ամենասբ· երրորդութեն·: ամէն:

617ա· Փառք եռանձնական ածութեն· եւ եզաբուն բնութե· միասնական տրութեն· եւ ինքնիշխան թագաւորութեն· հաւր եւ որդւոյ եւ հոգւոյն սրբոյ ի բնաւից վերառաքեսցի զոյից այժմ եւ յանեզրըն հանդերձեալ յատենի: ամեն: ուստի յերեք երեւեան լուսոյն զերահրաշ փողփիցն արտածորմանէ անթերի

---

1) Սրանից յետոյ տես պատկ· 203:

2) Մինչ այստեղ պատկերի մէջ:

լլութբ· յաւէտ առլցեալ երկյս երանեալ սրբազան· եւ հոգէհանճար հռետորն մեծն Ներսէս արհեպոսն· Տարսոնի ածուսոյց· իմաստիւքն փարթամացեալ գրեաց զմեկնութի· հոգենուագ երգոց սաղմոսացն ածահարն· Դաւթի, բացայայտելով անծածուկ տեսութբ· զամբարեալ ի սմա զգանձս Ածային· ի լուսաւորութի· մանկանց եկեղեցոյ որդոց վերին սիոնի· որով յաւէտ փարթամանան անձինք իմաստնոց, որ եթող զայս ածային· արձանագրութբ· անմահ յիշատակ անձին իւրոյ: Որում յոգնատենչ ըղձիւք բաղձացեալ քաջահանճար փիլիսոփայն եւ բանիբուն ճարտարն միջամուխ մակացուն Ածայնոց· տառից, Ածիմաս(տ)· եւ տիեզերալոյս բարունապետն Եսայի· որ ի նուազեալ ժամանակիս առաքինասէր վարուք պայծառացեալ եւ Ածունչ· կտակարանացն իմաստիւք գերալրացեալ իբրեւ զարեգակն փայլէր յաշխարհի· որ եւ ի վերայ ամ· մասանցն բարեաց, որով բոլորն կատարի առաքինութի· եւ զուսուցչապետութեն·1) եւս զգործ ի կիր արկեալ ընդառանելն լծակցելով: եւ զամ· եկեալսն առ ինքն յԱծայինն· ուղղէր ճանապարհ· աղբիւրաբար բխելով զհոգւոյն սրբոյ վտպտութիս· ի լսելիս աշակերտելոցն: զոր տր· Յս· շնորհեսցէ զսա եկեղեցոյ սրբոյ ընդ երկայն ժամանակս խաղաղական կենաւք: Որոյ կցորդեալ կամացն բարեսէր յաւժարութբ· եւ ձեռնտու օժանդակութբ· հոգւոյն շնորհաւք ծաղկեալ սրբազան եւ ածապատուեալ· արհիեպոսն· տր· Յովաննէս, որ ունէր զվերատեսութի· այցելականն զխնման քահանայականն դասու կատարողապետութե· Այրարատեան նահանկիս· նիստ կայանի ունելով զամուրն Բջնի, որ էր ամ· առաքինութբ· զարդարեալ: զորս խնամքն Այ· պահեսցէ զնա խաղաղական կենօք, շնորհելով եկեղեցոյ սրբոյ ընդ երկայն աւուրս: բայց առաջին սկիզբն գրութե· սորա եղեւ ի գաւառին Վայոյ ձոր կոչեցեալ· ի սբ· եւ ի գերահռչակ ուխտն Գլաձոր անուանեալ, որ է երկրորդ Աթէնս: ձեռամբ ուրումն սրբազան քահանայի առն իմաստնոյ եւ ճարտարի որ է ամ· ածաշունչ· կտակարանաւքն վարժեալ· սպասաւոր գոլով բանի մերձ ի կատարելութի·, Յովհաննէս անուն· որ էր ի հռչակաւոր քաղաքէն Եզնկայ կոչեցեալ· արդ զկէս մեկնչի սաղմոսիս գրեաց սոյն այր: եւ ապա սակաւ ինչ այլ ումն Վարդան անուն ի նահանկէն Կիլիկիոյ· զորոց զվարձս հատուսցէ տր·: եւ ապա ըստ պատահման ինչ դիպեցաւ վեր յիշեցեալ բարունապետին ելանել յիւրոյն կայանէ եւ երթեալ շրջէր յԱյրարատեան գաւառն ի վանորայսն, որ յայնմ նահանկի աղաւթից պատճառաւ: եւ զամ մի ողջոյն այսր անդր շրջեալ դառնա վերստին ի Վայոյ ձոր յիւրն մենաստան: եւ հրամայեաց2) իմում անարժանութես· զպակասն ի յերկուցն գրչաց, որք նախ քան զմեզ գրեցին, զթերին մնացեալ ի նոցանէ լնուլ, զոր եւ յանձն առեալ գրեցի փցուն մտամբ եւ անարհեստ գրչաւ· որպէս եւ ի տարակայէս յայտ երեւակ ցուցանի: արդ ոչ եթէ իբրու ճարտար գոլով յարհեստ գրչութե· յանձնապաստան համարձակութբ· ձեռնամուխ եղէ ի գործ որ ի վեր էր քան զկարն իմ· այլ ի յոլով խնամս վայելեալ նախայիշեցեալ սբ· բարունապետին, եւ անխճահ վարկուցեալ զանց առնել զպատկառեցուցիչ հրամանաւ նորին· զխարխախ յուսոյն յԱծ· ընկենլով ձեռն ի գործ արկի: Եւ եղեւ աւարտ գրչութե· սորա յԱյրարատեան նահանկիս յԱծբնակ· եւ ի գերահռչակ սբ· ուխտս Թեղենեաց ընդ հովանեաւ մաւրս լուսոյ եւ սրբոյ կաթողիկէիս եւ այլ Ածակիր· նշանացս: ձեռամբ թարմատար եւ անարհեստ գրչի Մկրտիչ կոչեցեալ, անուամբ միայն բարբի, ի սոյն անապատէ, եւ հրեշտակակրաւն եղբարքս սիրով սպասաւորէին մեզ· եւս առաւել հոգեւոր հայ(ր)ս3) Դաւիթ, որ էր առաջնորդ սբ· ուխտիս, որք լցին զամ· պէտս կարեաց մեր (որոց տրիտուր հատուցմանն ի տէ· պարգեւեսցի)4), զորս խնամքն Այ· հաստատուն եւ անշարժ պահեսցէ զմխարանութիս· զայս մինչ ի մխսանդամ գալուստն իւր սբ·:

Եւ էր շրջագայութի· ամանակաց ի թուաբերութե· հայկազեանս տոմարի յարաբարդեալ ամաց հինկեւտասան յինեկաց ընդ միակի չարամանելոյ: Յորում ժամանակ ունէր զաթոռ հայրապետութե· հայոց տր· Գրիգորիոս· մակ յորջորջեալ Անաւարզեցի, որ էր համանուն սրբոյ Լուսաւորիչին մերոյ· այր մեծիմաստ եւ յոքնահանճար: ի բռնակալութե· կողմանցս արեւելից բաժնին Ասիոյ, ի վերա յոլովից տիրեալ ազգաց խուժադուժ եւ բարբարոս ազգին նետողաց, որոց գլխաւորին անուն Ղազան կոչի: ընդ սոցա գրաւեալ ծառայութբ· ծանրագոյն լծոյ հարկապահանջութե· յուքունց ազանց· եւս առաւել տունս հայոց, որպէս երբեմն իեղ· ի ժամանակս անիշխանութեն·: ի սոյն ամանակի վարէր զառաջնորդութի· թագաւորութեն· Կիլիկիոյ Հեթում որդի Լեւոնի, այր Ածասէր· եւ հեզհոգի, կատարեալ ամ· բարեացն արդասիւք, զոր խնամքն Այ· պահեսցէ խաղաղական կենաւք հանդերձ հարազատովքն իւրովք: որ էր եւ նա մտեալ ընդ վերաոացելս հարկաւ: Արդ աղաչեմ զամենայն պատահեալսդ սրբոյ մատենիս, որ աւգտիւք ի սմանէ ընթեռնլով կամ աւրինակելով, յիշեսջիք ի մաքրամատոյց աղաւթս ձեր զվերագրեալս ի սմա զհոգէհանճար եւ զգերիմաստ բար(ուն)ապետն իմ եւ զհայրն հոգեւոր զԵսախաս (զտայցող սբ· կտակիս)5), զոր տր· Յս· խաղաղական կենաւք պահեսցէ զնա յաստիս· եւ զկնի ելիցն

---

1) Այստեղից սկսած մինչեւ հետեւեալ ծանօթագրութիւնը տես պատկ· 204·

2) Մինչեւ այստեղ տ· պատկ· 204:

3) Ձեռագրում «հայս»:

4) Ձեռագրի լուսանցքում աւելացրած, նոյն գրչով (փակագծի միջինը):

5) Լուսանցքում գրուած փակագծինը:

յաշխարհէ ի դասս սրբոց վարդապետացն ընկալցի ի խորանսն լուսեղէնս եւ անթառամ պսակաւքն պսակեսցէ հանդերձ ծնողօք իւրովք եւ ամ· արեան մերձաւորաւք յարագուարճ բերկրել յանտրտում ուրախութիւն·։ Եւս առաւել զհոգեւոր հայր սորին եւ զվարժապետն Ածային· իմաստուք, զայրն Ածազգեաց· եւ երանաշնորհ զշտեմարանն Ածային· գանձուցն զհոգեկիր րաբապետն· Ներսէս զհանգուցեալն առ Քս·, զի կայանս իմանալեացն ընկալցի զնա ընդ որդիս անդրանկաց վերին սիովնի, ընդ նոյին պարել զիմանալի գեղապարութիւն·։ զոր աղաչեմ յիշման բարւոյ արժանի առնել ի մաքուր աղաւթս ձեր։ Աստանաւր յերեսս անկեալ կրկնապատիկ մաղթեմ զխումբս ընտրելոցդ սրբոց, որք միանգամ պատահէք հոգեւորական բերկրանաց տեսութբ· ինչ կամ մտաւորական վերծանութբ· սրբոյ մատենիս· սխալանաց գրչիս ներեցէք իբրու տկար բնութե· վս· զի որպէս յառաջն ասացի ոչ ներհուն գոլով մեր յարհեստ գրչութե·, որպէս պահանջէ մեծագոյն այսր իրողութես· վարկ· սակայն եւ ոչ ըստ կամաց եղեւ մեզ դիպիլ տեղոյ, քանզի յարկն յորում կայաք, բացակայ գոլով, մծնոյր· հանապազ մելանն ի յաւդոյն· ընդ որ յոյժ վշտանայի, եւս եւ աղմուկ զրուցաց յոլով լինէր մերձ իմ, յորմէ սխալէի· վս· որոյ եւ ոչ կարողանայաք ճահողակի հանդիպիլ ի գործ արհեստի· վս· որոյ թախանձեմ աղերսիւ, զի բարի մտաւք յիշեսջիք յաղաւթս ձեր զոքնամեղ գրիչս եւ զծնողսն իմ եւ զեղբարսն, զի թերեւս արժանի լիցուք աղաւթիւք եւ ա· սրբոց մասն ողորմութե· գտանել յաւրն վերջին· եւ զսխալն սիրով ուղղեսջիք, զի եւ զձեր սխալանսն ջնջեսցէ ամենագութ տրն·։ Յիշեսջիք աղաչեմ եւ զՅովէս· եւ զՎրթանէս սրբասէր քահանայք, որք են հարազատք իմ եւ սպասաւորք։ եւս եւ զպտանիս· զՍարգիս դպիր, որ յոլով սպասաւորեաց մեզ, յիշեսջիք աղաւթիւք, զի յիշեցեալքս եւ յիշողքդ առ հասարակ արժանի լիցուք ողորմութեն· Քի· աւրհնեալոյն յաւիտեանս ամեն։

244բ· Վարդան Կիլիկեցու ձեռքով·

Զստացաւղ զածային· գանձիս զԵսայի վարժապետ, յիշեսջիք յաղաւթս եւ Ած· զձեզ·

408ա· Վարդան Կիլիկեցու ձեռքով·

N°. 75 նց. 124ա. Գանձ գալստեան ի տր. Մխիթարայ Այրիվանեցի. «Համագոյական հաւր սահման եւ բան». նոյն N° 222. 199ա. բայց տարբեր 49բ.–ից նոյն խօսքերով սկսուած գանձից. Acr. «Հայցէս»:

N°. 75 նց. 142ա. Գանձ Ոտնալուային ի տր. Մխիթայ Երեւանեցոյ. Զահեղ զանքննին զխորհուրդս խորին. Acr. Զպակասորդս. նաեւ N°. 3540. 283ա. բայց կիսատ, թերթ ընկած:

N°. 75 նց. 167ա. Գանձ յարութե. ի տր. Մխիթարայ Երեվանեցոյ. «Տր. տրունական». Acr. «Տերուն»: N°. 3540. 160բ. Acr. «Ծերուն», իսկ 164ա. տր. տէրունականի հատորն է ի տէր Մխիթար. «Արդ լուսաւորեա». Acr. «Ական»:

N° 75 նց. 171ա. Գանձ երրորդ աւուր յարութե. Տր. տրունական. հատորն է: Ի Տր. Մխիթրա. Երեւանեց: Արդ լուսաւորեա. Acr. «Ական»:

N°. 75 նց. 214բ. Գանձ Հռիփսիմեանց ի տր. Մխթրյ. Այրիվանեցի. Վայելչականաց վայելման փառաց. Acr. Վկայականաց: Նոյն N°. 222 նց. 301բ. առանց հեղինակի ցուցման: N°. 3540. 205ա. առանց հեղինակի անուան:

N°. 75 նց. 219բ. Գանձ. սր. կուսանաց եւ մրտրց. ի տր. Մխիթարա ասաց. Ի սկզբանէ էիր ի լուսոյ լուսիդ. Acr. Ի փառս:

N°. 75 նց. 230բ. Գանձ Թոռանցն սրբոյն Գրիգորի ի տր. Մխիթարայ Այրիվանեցւոյ. Տաճար երկնային Acr. Տանից ասել:

N°. 75 նց. 240ա. Գանձ ահութե. ձիթոյ յաւծումն հիւանդաց. Այրիվանեցոյ ասացեալ. Տր. զաւրութեց. սարաւօթ բարձրեալ. Acr. «Տր. Մխիթար Վ.»

N°. 75. Փոխման երրորդ օրուայ տաղ. «Ի տր. Մխիթարայ Այրիվանեցոյ». Սբ. ածածնի. կուսին: Նոյնը N°. 222 նց. 354ա. Ի տր. Մխիթարայ. Սուրբ ածածնի. կուսին. N°. 3540. 226բ. Տաղ ազնիւ ի տր. Մխիթարայ. Սբ. ածածնի. կուսին:

N°. 75 նց. 345ա. Տր. Մխիթարայ ասացեալ նոբաղրոց. Մեծապայծառ ցնծութբ.: Acr. Մխիթար: Նաեւ N°. 3540. 294բ. «Տեառն Մխիթարայ բանիբուն վարդապետի ասացեալ վս. ահութեան նորակերտ գրոց»:

N°. 75 նց. 346բ. Նորին տր. Մխթրյ. ասացեալ ի պատիւ պատկերաց. Մին Միածին հաւր որդի. Acr. Մխիթար: Նաեւ N°. 3540. 295բ. Նորին տր. Մխիթարայ վս. պատկերաց սրբոց:

N° 3540. 296բ. Նորին տն. Մխիթարայ տաղ.«Ի յախտաժետ բառեանց»: Վերջին բառերը թուականի հետ 297ա. սրան կցուած է Ձեռագրի յիշատակարանը:

N°. 222 նց. 149ա. Կանոն Հայրապետաց. Ած. կենդանի. Acr. Այրիվանե.

N°. 3540. 243ա. Գանձ ա. մարտիրոսաց ի տր. Մխիթ. «Տինա տաւել»:

N°. 3540. 265ա. Ի տէր Մխիթարայ Երեւանեցւոյ. Երգս յաւերժական. (կիսատ, թերթ ընկած):

ՅԱՒԵԼՈՒԱԾ Գ. 7.

(N°. 944/1500)

Ճառընտիր Մխիթար Այրիվանեցւոյ

7բ. Յովհաննու աւետարանի վերջում.

Աւգնեա Յս. եւ ողորմեա տր. Մխիթար վգխ. գրչողիս եւ ստացողիս, ածաչունչ. սր. կտակիս, յառաջին ստաճանիս:

15ա. Մատթէոսի վերջում.

Ողորմեա Քս. տր. Մխ. վգին.:

20ա. Մարկոսի վերջում.

Ողորմեա Քս. տր. Մխ. վգխ.:

40ա. Գործքի վերջում:

Որոց աղաւթաւքն (s!) *ողորմեսցի Քս. Ած. տր. Մխ. վգխ. գծողի եւ ստացչի:*

44բ. Յիշեա Քս. զտր. Մխ. Վգն. ամէն:

67բ. Գթա Քս. Ած. քո սր. առաքելոցն բարեխաւսութբ. ի տր. Մխ. վգն.:

74բ. Գթա Յս. ի տր. Մխ. վգ.:

76ա· Ասացուք–ի մէջ·

«Վս· հայրապետին մերո տն· Յակոբա կենաց եւ փրկութե· զտր·»:

79· Գոհութիւն եւ փառաք· քարոզի մէջ·

Եկեղեցս խրում սրբո եւ ա· ուղղափառ եպ· հայրապետին հաոց տն· Յակ· եւ մերո արհի եպիսկոպ· տր· Մխ· որ զպատ· եւ վս· զաւրութե· եւ յաղթութե· թագաւորաց քրիստոնէից եւ իշխանաց բարեպաշտից· քաղաքս· արքային Լեւոնին եւ Դեմետրէի· եւ ա· զօրացլոց եւ զաւրաց նոցին· ազատութի· եղբարց·

80բ· Եկեսցէի վերջում· լուսանցքում·

Տր· Մխ· վդ· աղ ահեալ· սկս· Աւրհնեմք եւ փառաւորեմք:

80բ· *Նորին խունկ ահնելոյ· Ամենակալ տր·*

80բ· *Նորին անդրանիկ եկեղեցոյ· Գոհանամք զքէն տր· Ած· մեր, որ հողովդ քով սրբով:*

230բ· Ներքեւի լուսանցքում·

«Զդ·դ (զչորրորդդ) Մակարէացիսն ոչ գտի: Եւ ոչ զՅովսէպոսն որ գրել էի ի գիրսն որ է Կախիա»:

230բ· Լուսանցքի զարդի բոլորակի մէջ՝ զարդի կարմիր գոյնով գրուած· «զՍարգիս յիշէ»· տարբեր Մխիթարի գրից, հաւանօրէն նկարիչն է:

230բ· *Գթա տր· իմ Յս· ի քո մեղուցել· տր· Մխ· վդս· եւ ողորմեա:*

247ա· *Յիշեա տր· զտր· Մխ· վդ·*

262ա· *Գթա տր· ի տր· Մխ· վդ·*

270բ· Լուսանցքի զարդի բոլորակների մէջ·

«զՍարգիս տր· յիշէ», «ո տր· Մխ· վդ· յիշէ կ(?) ի տր·), «զՍտեփանոս սարկաւագ յիշէ ի տր·», իւրաքանչիւրը մի բոլորակի մէջ:

285բ· *Յիշեա Քս· զտր· Մխ· վդն· եւ ողորմեա:*

298բ· *Ողորմեա տր·, տր· Մխ· վդին·:*

312բ· *զտր· Մխ· վդ· յիշեա:*

327ա· Ներքեւի լուսանցքում· Երեմիայի·

«Մինչեւ աստ մեկնել· Յոհ· Ոսկեբ·»

346ա· *Յիշեա զտր· Մխ· վդն·*

359ա· Ներքեւի լուսանցքում·

«Մնացորդք ի մնացորդացն, զոր յայլ գիրս գտի» (տես Դ· Թագ· ԻԳ· 30· Բ· Մնացորդաց Ա· 1· 23):

359բ· *Ի մեկնութենէ· Մնացորդաց· սկս· վս· զի գրել Մուսէս վս· Սողոմոնի ապաշխարութեն·:*

Վերջանում է·

Եւ եկին Բարուք եւ Արդամելիք եւ թաղեցին զնա, եւ առին զքարն եւ եդին վերա գերեզմանին, եւ գրեցին ի վերա· սա է աւրհնակն Երեմիայի· եւ զայլ խաւսքն Երեմիայի եւ զգաւրութի· մնացորդաց բանիս չէ գրել ի թղթի Բարուքա· Քի· Փառք յ:

Սրանից յետոյ մահ ԲԺ մարգարէից:

507բ· *Ահնել· է Ած· Ահնեցէ տր· Ած· զտր· Մխ· վդ·:*

576ա· *Յիշեա Քս· զտր· Մխ· վդ·:*

685ա· *Զտր· Մխ· վդ· յիշէ:*

696ա· *Զտր· Մխ· վդ· յիշեա ի տր·:*

711բ· *Զտր· Մխ· վդ· բազմաբիծ յիշեա վասն սիրոյն Քի· աղաչեմ:*

723բ· *Զմեղապարտ տր· Մխ· վդ· յիշէ:*

763ա· *Ահել· է Ած·, որ ահնէ· զտր· Մխ· վդ· ծապտիչ գրոցս:*

879ա· *Ած· բան· ողորմեա բազմամեղ տր· Մխ· վդի·, գրչի:*

976ա· *Երանելոյն Բարսղի եպիսկոպոսապետի Կեսարու Կապադովկացոց յղս· Զ·օրեայ աւուրց զոր ասաց ի զատկի տօնին· Լուաք ի գրոց զի ասէ:*

Ներքեւի լուսանցքում·

Զ· օրեայ գիրքս Բ· Թարգմանչաց է յաւրինած, վս· որո ուրոյն ուրոյն են:

Քս· Ած· քաւիա զմիղս տր· Մխ· վդին·:

1011· Բարսեղի վեցօրեայ ճառերի վերջում·

«Աստ վաղջանեցօ սրն· Բարսեղ յունուարի ԻԱ·նն, որո աղօթօք ողորմութի· եղիցի ի տր· Մխ· վդ·:

1041ա· *Քս· Ած· ողորմեա տր· Մխ· վդին· գրչի եւ ստացչի:*

Ներքեւի լուսանցքներում·

«Եւագր· նոր թարքմն·»:

Յետագայի Յիշատակարաններ

29բ· Յովհ· աւետարանից յետոյ·

Ածաբան· սբ· աւետարանիչդ Ղուկաս, քոին սբ· եւ արժանաւոր աղաւթիւքդ բարեխաւս լեր առ Քս· վս· բազմամեղ Վարդեցի Յովանէս բանի խնդրողի, կապողի եւ կազմողի այս սբ· մատենիս: Թվ· ՌԾԳ: Ի սբ· ուխտս Այրիվանք, ընդ հովանեաւ գեղեցկաշէն սբ· Ածածնի· տաճարիս, եւ այլ բազմահաւաք սրբոցս· եւ զի յայսմ ամի եկն կարմիր գլուխն Շահաբաղն ի վր· Երեւանայ բերդին, եւ էառ զնա բազում ջանիւ:

29բ· Տարբեր եւ անվարժ բոլորգրով·

Թվին ՌՃԼԹ ես աղբայեղ (=աբեղայ) որ է անուն իմ Սիմոն:

Թվին ՌՃԽ որ եղեւ Դաւիթ վարդպետ· հոգեւոր տրին· (${}^{1}/_{2}$ *տող գրածը ջնջած*)· *յետ այնորիկ այն ամին մեռաւ Եղեեազար* (s!) *կաթուղիկոսն եւ դարձեալ աշակերտ նոր· եղեւ կաթուղիկոս Նահապետ անուն:*

Նոյն գրով·

Թվ· ՌՃԽ· ամին այլ եւ եղեւ յաշտոմն (s!) *բարուք ի մէջ կաթուղիկոսի եւ սբ· Գեղարդա Դավիթ վարդապետին: Ես· տր· Սիմոնս գրեցի:*

Թ· ՌՃԽԱ· որժամ եկն մորեխն Երեւանա երկիրն, փառք Այ· վնաս չեղեւ:

328բ· Վերեւի լուսանցքում նոյն գրով·

«Թվին ՌՃԼԵ· Ե· օր կարդացաք:

392—393ա· Ներքեւի լուսանցքում·

Եւ եղեւ այս ինչ իր ոմն Նահապետ անուն եղեւ կաթուղիկոս սրոյն· էջմիածնայ· ահա պատմեմ ասեմ կսկիծ որ եղեւ· այլ ասեմ· Դաւիթ վարդապետ մի կայր առաջնորդ սբ· Գեղարդայ· ահա սբասնունդ (s!) *եւ մաքուր զրպարտեալ խիստ Թ· ՌՃԽ նսեմբերի ա·ի մէջ գիշերի· ոչ կարեմ... (մի բառ),*

394ա· *ի կաթուղիկոսէ, ոչ ի բռնէ·, այլ ասեմ խակալէս մուրուս սորա վեր արարել· չարն սատան այսպէս արար ամենի* (?):

499ա· Նոտր գրով·

Ես տր· Սիմոնս կրդցի· այս Փիլոն գիրքս· Թվ· ՌՃԽՋ:

ՅԱՒԵԼՈՒԱԳ Գ· 8·

Մխիթար Այրիվանեցու Ճառընտիր

369բ· *Գիրք զոր ունին հրեայքն ի ծածուկ· այսոքիկ են·*

Ադամա·: Ենովքա·: Սիբէլա·: Բժ· նահապետացն:· Աղաւթքն Յովսէփա:· Վերացումն Մովսիսի:· Ելդադ եւ Մովդադն:· Սողոմոնի սաղմոսքն:· Եղիաի ծածուկքն:· Դանիէլի Է· տեսիլն:

Իսկ ըստ նորոյս:· Գիրք մանկութե· տն·: Թոմաի աւետարանն:· Յայտնութին· Պետրոսի:· Գ:· Շրջագոյ Պաւղոսի:· Կաթուղիկէ թուղթքն· Բառնաբա եւ Յովդաի եւ Թումաի:

Սրբոյն Կղեմա· եթէ ո՞ր գիրք ընդունելի է:

Գործքն եւ կանոնք առաքելոցն:· Յայտնութին· Յովհաննու, որ կոչի Պիլալիմսիս: Խրատ Ածածնին առաքելոցն:· Գիրքն Կրիսպոսի:· Բանքն Յուստոսի:· Քարոզ ուղղափառացն:· Թուղթն Բառնաբա:· Զայս ես եւ Անանէ գրեցաք ի Վիմի քաղաքի, որ եկեղեցի աւրհնեցաք:

Սրբոյն Եւագրեա, կարգադրութի· Ածաունչ· տառից:

Արարածքն:· Ե·: Յեսուն:· Գ·: Թագաւորութիքն· Դ·: Սաղմոսքն·: Սգաւնութին·:· Սիրաքն:· Յոբն:· Երկոտասանքն:· Եսաին: Երեմիայն:· Դանիէլն:· Եզեկիէլն:

Աւետարանքն· Դ:· Պը(ր)ակքն:· Առաքեալն· ԺԵ:· Կաթուղիկէքն· Է:

Սրոյն· Կիւրղի Եմի· հայ (s!) *հայրա: Կարգադրութի· Ածաշունչ· (գրոց?):*

Ալիփ:· Ա· Ծնունդքն:· Բեթ· Բ· Ելքն:· Գամեղ· Գ· Ղեւտիկոնն:· Դաղէթ· Դ· Թիւքն:· Հէ· Ե· Երկրորդ աւրէնքն:· Վաւ· Զ· Յեսու, որդի Նաւ:· Զէ· Է· Դատաւորքն եւ Հռութն:· Խէթ· Ը· Ա· եւ Բ· Թագաւորութիքն:· Տէթ· Թ· Գ· եւ Դ· Թագօրութիքն:· Յաւտ (գլխին՝ «որդ»)· Ժ· Ա· եւ Բ· Մնացորդքն:· Քափ· ԺԱ· Ա· եւ Բ· Եզրն:· Ղամեթ· ԺԲ· Եսթերն:· (Ստիքերոն գիրք, Ե·:) — փակագծի մէջ առնուածի գլխին ջնջման նշան կայ, հինգ գրերը առանձին առանձին է նշանակել: *Մեմ· ԺԳ· Յոբ·: Նուն· ԺԴ· Սաղմոսքն:· Սամքաթ:· ԺԵ· Սգաւնն: Է· ԺԶ· Եկլեսիաստէսն:· Փէ· ԺԷ· Աճնութիք· աճնութցն·:· Ծադէ· ԺԸ· Երկոտասանքն:· Կոփ· ԺԹ· Եսաին:· Րէշ· Ի· Երեմիայն:· Շին· ԻԱ· Եզեկիէլն:· Թաւ· ԻԲ· Դանիէլն:·*

Դ· աւետարանքն:· Գործքն:· Է· կաթողիկէքն:· ԺԴ· Թուղթն (Պա)ւղոսի:— Յիշեա ի բարի, բարերար (Յս·) զ(տ)ր· Մխ· վդն·: Լէ[1]):

ՅԱՒԵԼՈՒԱԾ Գ· 9·

№ 2776

(Նոյնը կայ № 2622, 156ա· նոր շեղագրով)

Նամակ

264ա· *Ածպետականին· ա· գլխոյ շնորհօք լցեալ եւ հոգոյ նոր· ներընդունակ եղեալ· գլուխ պատուական եւ տիեզերական կթղկս· եւ եպսապետ· հայոց մեծաց տէր Կոստանդին:*

Զգիր պատըւական հրամանաց քոց ընկալաք մեք նըւաստ եպեսքս· Սինեց· տէր ի *Յովաննէ եւ տր· Ստփննս· եւ վդպետքս Դաւիթ եւ Եսայի, այլ ա· մեր վդապօքս·* եւ *վանօրէօքս եւ ազատօք, եւ յորժամ զառանձին գրեալս· տեսաք, որ ձեր սովորական քաղցր հրամանօքդ էիք առ մեզ առաքել· մեծաւ ուրախութբ· լցաք եւ ձեզ յերկարութի· կենաց աղօթեցաք: Իսկ յորժամ զկրկին մատենագրուխս· հասարակաբար առաքել· տեսաք եւ այն լի յանդիմանական բանիւ եւ սաստիւ կանոնագրել·, որ եւ ը· նմին եւ անգիր հրամանաւ զմեզ պատուհասել իբրեւ զոչ արժանիս ձեր ահութե· եւ սրբալոյս մեռոնիս, զոր բնաւ չունէաք ակն ամէնեւին ի ձեր հայրական գթոյդ եւ քաղցր կամացդ, զայսպիսի բանս լսել եւ տեսանել: Այլ ահուե· աղօթից սիրոյ եւ խաղաղութե· ակն ունէաք ի ձէնջ· նոյ եւ մեր յոլով տառապանացս եւ թըչւառութեցս· զոր կրիմք սակաւ մխիթարութիս· եւ յոլով խնամոյ* (?): *Զի այլ ուստէք ոչ ունիմք սփոփանս եւ ուրախուխս·, բայց միայն զԱծ· եւ զքաղցր ձեր կամքդ: Իսկ դուք այժմ փոխանակ մեր յուսոյն որ առ ձեզ, ցաուցել·* (s!) *էք վսն· մեր մեղաց կշտամբանք եւ յանդիմանուի· էք հատումն* (s!), *գրով եւ անգիր սպառնացել մեզ առաքեցիք եւ զհայոց սսկալի խորհրդածուի· սբ· պատարագին թերի եւ անընդունելի Այ· ցուցիք: Եւ այս ի սբ· Լուսաւորչին* մեր մինչ առ քեզ ածաւին· եւ անթերի խորհուրդ պատրուեցաւ, այժմ խոտան և հեռի ի ճշմարտութենէն դրեցիք, զորս սոյն եւ ա· եկեղեցիք Քրիստոնէից որ ը· տիեզերս յամ· յառաքելոցն սկսեալ այսպէս ունէին յառաջ· մանաւանդ եկեղեցին Հռոմայ ի սրբոյն Պետրոսէ մինչեւ յերկրդ· Աղէկսանդր եւ Յուլիոս պապն, որք անջուր մատուցանէին զսբ· խորհուրդն, զոր ուսանիմք ի բազում պատմագրաց, նաեւ ի նամակաց նոցին, որ կան ի միջի մերում: Այսպէս եւ եկեղեցին յունաց յետոյ առան ի կիր զջուրն ի սբ· խորհուրդն որպս· եւ զտօն ծննդեանն ի ժամանակս Ոնորիա եւ Արկադեայ, ի դեկտեմբերի իե· առին հրաման կատարել: Զի՞նչ ասես այն ա· եկեղեցիքն ցայնքան ժամանակս խոտորեալք էին ի ճշմարտութենէն եւ կամ հակռկ· զտան Այ· եւ ոչ հաճոյք: Կամ մերն Լուսաւորիչ որ առել· ի նոցանէ զայս մեր աւանդեց· անտեղեակ էր ճշմարտութեն· կամ վայրապար ոք էր եւ անփոյթ արար: Եւ մեր անապուր (?) որդիքս վերահասու եղաք ճշմարտուեն·: Կամ յետոյ Ներսիսեանքն որ յերկրդ· Լուսաւորիչ զտան ազգիս, տգիտացան ի ճշմարտութէնէն, որ ոչ զազգիս Հայոց զանջուրն պակաս եւ թերի խոտեցին եւ ոչ զայլոց ազգացն ջրովն աւելորդ կամ խոտան ցուցին: Թէպէտ եւ յայժմ ի յաչս ձեր տգէտ եւ անպիտան երեւեցան: Ապայ մեք նոց· բանիցն եմք աշակերտք եւ նոց· ուղղափառութենն· եմք հաղորդ եւ մասն/

---

[1]) Հրատարակուած է Արարատ 1895, 408· բայց ուղղագրական եւ վերջին տողի սխալ ընթերցումներով: «Յս·» բառի Յ-ի ներքեւի կէս մասը եւ ս-ի ներքեւի միացնող գիծը երեւում է: «տր·»-ի առաջին տառի երեք գծերի ներքեւի մասերը եւ ր պարզ, նոյնպէս երեւում են: «Մխ·»-ի առաջին տառի ներքեւի մասը եւ խ-ի բնորոշող ձեւի մի մասը նոյնպէս նկատւում է: Այնպէս որ այստեղ «զտր· Վարդան» Արարատի ընթերցուածը հաստատապէս սխալ է եւ սխալ եզրակացութիւնների հիմք կարող է դառնալ:

264բ· ակից, ուստի եւ զնշոյլ գիտութե·, զոր այժմ մեք եւ զուք ունիմք եւ պարծիմք ի նոցանէ առաք: Եւ այլ թէ զմեզ վսն· անհնազանդուե· առ ձեզ դատէք, զինչ այլ ինչ նշանակ եւ ցոյց հնազանդուե·, քան զայս, զի մեք որպս· գ·է· կինն զառնէդ միոջէ բուռն հարեալ· հաց եւ հանդերձ զմեր ուտելով, միայն վսն· անըւանդքո ի վեր· մեր կոչելոյ: Ընդէր եւ յայդմ անըւանդքո ի վեր· մեր կոչմանէ զրկել ջանաս եւ այս սուտակասպաս, տգէտ եւ քու արանց ունկնդրութբ·, զորս ոչ արժանիս զատեցաք զանուանս նոց· ի գրի աստ յիշատակել, որք ըս· հին սկզբնաչարին զուղեղն թիւր ծանուցանեն յաչաղանօք: Եւ եթէ այս ոչ է քու եւ բանսարկու արանց գործ, զայսքան ժամանակս որ ի սբ· յաթոռդ զուք մեզ կթղկս· եւ հոգեւոր առաջնորդ կարգեցայք, զինչ թիւրուի· տեսար ՝ի մեզ կամ անհնազանդուին·, բայց զայս եւ եթէ գիտեմք զանձին մեր խիղճ, որ վս· ձեր բազում նախատինս եւ անարգանս ընկալաք ի ներքնոց եւ յարտաքնոց: Այլ որ զկանոնական աւանդութի· եկեղեցոյն համարեալ էիք եւ առ մեզ առաքեալ վկյւի· հին եւ նոր գրոց եւ այլոց վդպաց· այս ոչ էր նոր հասումն, այլ երկիցս եւ երիցս անգամ բերաւ եւ մեք որպս· ըս· ժամանակին դէպ էր, գրեցաք եւ յղարկեցաք: Բայց գիտացիր ճշմարտապէս, զի գրելք· վկայուի· կանոնիս յոլովն այն է, զի չէ վսն· ջրի խորհրդոյ, այլ վասն· այլ իմանցմանց եւ յակամայ յայս բռնադրօսած, եւ որք գրեցին զայս սիզրայից ծառայեցին եւ ոչ ի ճշմարտուի· իրին հայեցան· եւ զայս ուսցիս նախ ի խառնարանի խորհուրդ, զոր առաջին կարգեցաւ ի ձէնջ· որ մեծ եւ առաջին վրդպ· Դիոնէսիոս աշակերտն Պաւղոսի եւ հարցմանն Տիտոսի Կրէտացոյ ի վեր· Այ· արարչագործ իմաստութեն· եւ նախախնամութեն· առնու, թողից զայլսն զՆերսեսի մեկնուի· յառակացն տես· նոյնպս· եւ զոլովսն ի յայլ վկայութեցն· տեսցես, թէ ճշմարիտ քննուբ· կամիս ի վեր· ճշմարտութե· հասու լինել: Այլ եւ զայս ասեմք յառաջին սբ· հարցն, որք չունէին զեռ եւս զջրոյն աւանդուին· եկեղեցիք, անջուրն եւ անապակն յարգեցաւ ի նոցանէ եւ մեզ ամենեցուն աւանդեցաւ· որ թէ կամիս ի բազմաց ուսցիս, որպս· գրեցաք յառաջ: Ըստ այնմ գրէ Կէղեստինոս պապ Հռոմայ, ի հարցմանն Պարսումայի Անտիոքացոյ պատասխանի: Նոյնպէս եւ Յոհաննէս Ոսկեբերանն ի տեսուի· աւետարանին, ի բանն, որ ասէ, թէ ոչ արբից յայսմ հետէ ի բերոյ յորթոյ, թէպէտ եւ ոմանք թիւր մտօք՝ վսն· Արիանոսաց ջրամատուցանողացն աղանդոյն ասեն Յոհաննու գրել զայս, որ հեռի է եւ աւտար ի ճշմարտութէնէ ի վեր· այնմիկ մտաց իմանալ զայս· զի հերձուածն/

265ա· այն վաղ բարձաւ նախ քան զնիկիայ ժողովն: Իսկ յորժամ ընկալան եկեղեցիք եւ զջրոյն խառնմանն աւանդութին· քարոզեցաւ, ընկալաւ այն յոմանց առաջնորդաց եկեղեցոյ· բայց առաջնոցն անջուր մատուցումն խորհրդոյն ոչ խոտեցաւ ի նոցանէ, որպս· զթիւրել· եւ մոլորելոց ի ճշմարտութէնէ, որպս· եւ այժմ ի ձէնջ խոտի եւ անարգի: Եւ զայս ոչ զովեմք յորժամ զուք ձերովք իմաստուն խորհրդակցաւքդ զմիոյ կողմանն վկայուին· ջատագով եղեալ, ժողովեալ դրէք առ մեզ աստի անտի քաղել· եւ զմիւս կողմանն ամէնեւին ոչ յիշէք: Ոչ գիտեմք թէ վսն· տգիտուե· գրոցացն եւ թէ զմեզ իբրեւ զտղայս արհամարհէք եւ խաբել ջանայք· թէ ոչ վսն· հակառակուե· եւ բաժանման կամօք խորհիք: Ընդէ՞ր ոչ զերկուց կողմանց վկյութեց· իմացուածն ի միտ առնոյք եւ ի մեր յախմարուիս· զընդրուին· թողոյք· յայնժամ ի մէնջ բառնայր ա· հակառակութե· եւ աւտար կարծիք:

Այլ զի տեսանեմք զոմանս հեթանոսաբար եւ առանց կրօնից անխտրաբար յամ· կերակուրս եւ ի բանս եւ ի գործս հեշտուե· վարին եւ ինքեանք յաչս ձեր մտերիմք եւ ուղղափառք երեւին եւ մեծարեալ պատուին ՝ի ձէնջ, զոր մեք զայնպիսեացն վարս եւ զբանս, անուանքս եւ կրօնից եկեղեցոյ պատճառ հայհոյութե· տեսանեմք եւ լսեմք ի բազմաց եւ ոչ չինուե· եկեղեցոյ եւ սիրոյ միջնորդ: Եւ այժմ կարծեմ թէ բաժան եղեն եւ լինին, որ եւ եկել· Նըւիրակտ ի ձէնջ Գրիգոր, կարճ եւ համառօտ բանիւ զպատասխանն մեզ ետ, այսպիսի օրինակաւ· թէ հոգեւոր տնն· հրամանք է, թէ որ ոք յանձն առնու զջրով պատարագելն եւ ի դեկտեմբերի իե· զծնընդեան տօնն կատարել, այնոցիկ մեռոն տուր եւ աճէ· եւ որ ոչ կամիցին ի սբ· խորհուրդն զջուրն խառնել եւ ի դեկտեմբերի· իե· զծնունդն առնել, այն պխեցն· մեռոն մի տալ եւ մի՛ ահել զայնոսիկ։ Վսն· որոյ մեք մերովք ա· վիճակել հաւտխւքս, իշխանօք եւ ազատօք, վրդպօք· եւ քհնյօք· եւ ա· սրբազան ժողովրդովք ի միասին խորհեցաք, եւ ոչ կարացաք զառ ի մեր սբ· առաջնորդացն զհաստատել· կրօնսն քակել։ Ոչ առաք յանձն զջուրն ի սբ· խորհուրդն խառնել եւ ոչ զԾնունդն ի դեկտեմբերի· իե·ն առնել, յաղագս որոյ եւ ոչ զսբ· մեռոնն առաք, զի մի դատապարտուի· լիցի մեզ, առանց քո կամաց մեռոնին սրբոյ առումն։ Մեր ջանն եւ կամքն այս էր, որ չլինէր մեզ ի մէնջ բաժանիլ· եւ ով ոք եղեւ պատճառ եւ լինի, ինքեանք տայցեն պատասխանի Այ·։

ՅԱՒԵԼՈՒԱԾ Գ· 10·

(Ձեռ· էջմ· N°· 2776)

(Նոյնը կայ եւ N°· 2622, 163ա· նոր շեղագրով)

Զգերապատիւ գլխոյդ սրբազան քաջ հովուապետիդ աթոռակալի վերակացուիդ՝ առաքելական աթոռիդ էքսարխոսիդ Հայոց, ամէնիմաստ եւ քաջ հովուիդ պաշտօնակցիդ մեր ի Քս· տէր Զաքարիայ·

Զնամակ ողջունիս եւ զհրաման ընկալայ, նըւաստ եպս· Սիւնեց· Աւրպէլի Յովաննէ եւ ուրախացաք ը· ձեր չարժումն որ առ մեզ։ Եւ երկրդ· այժմ վսն· ձեր փառաւոր եւ խաղաղական կենացդ, եւս առաւել վայրկ· (!), որ ի հակառակացն յարուցելոց, զօրութն· Այ· ապրեցայք եւ յաղթող գտայք, եւ մեր սուղն եւ տրտմուի· որ վսն· Այ· եկեղեցոյն եւ ձեր էր, յուրախութի· դարձաւ, եւ մեծ գոհութի· պատճառ փրկութե· եղաւ։ Այլ որ զմեզ յորդորել· էիք ի ճշմարտուե· խոկումն եւ ի ձեր հրամանաց կատարումն· բայց որ դուք զուղորդն գիտէք, ապայ այս անգիտելի մնաց ի մէնջ առաջին սկզբան տարոյն, որ հետեւեցար զըհետ (s!) ճշմարտուեն· զմեզ ոչ արարիք խորհրդակից։ Քո ՚ի ճշմարտուիդ· դառնալոյն եւ ոչ արժանի դատեցար զմեզ քում ճշմարտուեն· խորհրդակից առնելով զմեզ· եւ յայս ամի յորժամ եկիր մերձ ի մեր բնակութին· ընթանալով ի դրունս աշխարհակալացն եւ ոչ երբէք հարցման կամ տեսութե· արժանի արարեր· յայս տարեկուսել· եմ, թէ զայժմու հրամանս իշխանաբար կարծեմք, թէ ի սիրոյ առքել·։

Այլ որ յանձնել· էիք զնվիրկերս սիրով եւ պատուով ընդունել, գիտէ տէրն հոգեւոր, եւ դուք այլ չէք անծանօթ, որ մեք սբ· Լուսաւորչին աթոռին հնազանդ եղել· ենք եւ լինինք առանց յորդորման եւ խրատու կամ հարկի· զի որչափ է կարողուի· լեալ զտէրն եւ զհարկից նվիրակացն եկելոց եւ զհասկն կթղկսի· անթերի եւ յօժարութբ· ենք հասուցել·։ Իսկ թէ վսն· կրօնից եւ սահմանաց պատուիրես առնել, զայժմու երեւելդ· ի մէջ ձեր, ոչ ես այս միայն, այլ ա· հայք սկսել· ի սբ· Լուսաւորչէն մինչ ի հղր· տէրն, եւ ի ծովէն Պոնտոսի մինչ ի Կասբից, ամենեքին միաբան զնոյն խորհին եւ յառնեն եւ յայն կրօնս են, զոր առնէին ի սկզբանէ մինչեւ ցայժմ։ Եւ դու եթէ ի մէնջ էիր առ մեզ էիր մնացել· ըս· աւետարանչին, եւ թէ մնացել· էիր առ մեզ զօրութբն· Այ· եւ սիրոյ աւրինօք՝ մեք եւ դուք զաշխարհեալսն ի միասին կատարեալ էաք· որպս· եւ ասէ գիրք, թէ եղբայր յեղբօրէ օգնել։ Ապայ այս որ ի հակառակաց կողմն դարձուցեր զքեզ եւ երդմամբ չափ քակես զեկեղեցի Այ· եւ զհնազանդեալքս ի հոգեւոր գլխոյն օձտես, երբեմն, իշխանաբար սաստելով, երբեմն գիրս եւ խօսս չարախօսուե· զմէնջ առ հոգեւոր տէրն առաքելով եւ ի նմանէ մեզ սաստ եւ սպառնալիս տաս բերել, յաղագս այսորիկ ի տարակուսի եմք, զգրելս· սէր համարիմք ի մէնջ առ մեզ ներգործել, թէ թշնամութ· արհամարհուի· մեզ եւ խռովուե· եւ պատառման ջանաս առնել պատճառ։ Թ·է ձեր կամքդ ու յօժարուիդ· այն էր եւ սէր առ սբ· Գրիգորի աթոռն, որ զաշխարհս Հայոց ի գլխոյն բաժանէիր, պատուել զանդամքս առ ի նմանէ, այդ եղեւ՝ եւ բաժանեցաւ, որպս· եւ կամէիր։ Այժմ առ մեզ այլ ինչ կու գրես կամ հարցանես, զքո/

266ա· սրտիդ ախորժն արարաք, թող զմեզ ի մեր ամայուիս·։ Դուք մի սրտմնաց լինիք· զմեղադրանս ես լաւ ճշմարիտ գիտեմ· դու գիտես, որ մեր հարքն ամենեքին ի մի էին լեալ ըս· մարմնոյ բարեկամուե· եւ հոգեւորն· բայց որ մէկ ենք, չգիտացաք թէ ինչ պատճառաւ դու ի մէնջ բաժանեցար։ Թ·է զհոգեւոր տիրոջն հրամանքն պատճառես, նայ ի քեզնէ ջուր միայն խնդրեց ի խորհուրդն առնուլ եւ դեկտեմբերի· զին· Ծնունդ առնել, դու զպահոց լուծումն յուստ ուսար եւ զառաքելական կանոնաց[1]) ջրումն՝ կամ հեթանոսաբար զանխտիր չաղդակերուիդ·, մինչ ի ձի եւ յանմաքուր այլ կենդանիսն եւ զեռունս։ Եւ այս այն որ քահանայիցն ի սբ· կենդանեց· պարտ է զգուշութբ· եւ պարկեշտ յա· մսակերութենէ պարկեշտանալ ըս· սբ· հարցն աւանդուե·, որք եդին հաստատուր· թէ ծաղրածու եւ կատակարար եւ կատակերգակ լինել, զի մի ժառանգեսցես զյաւիտենից մահն եւ անէծս ի Քէ· որ լալ ասաց, եւ դու այլոց կորստեան պատճառ զՅուդային ժողովես զարծաթ։ Քս· հրամայէ ամենեւին մի երդնուլ, դու զհարկ երդուեցնելդ եւ ՚ի հաւատոյն հանելն (ջնջուած եւ գլխին «ուսուցանելն») յո՞ր Քէ· ուսար։ Կամ եւ զեկեղեցիս Հայաստանեց· ուրանալ եւ յոլով նախատանօք նախատել կամ զտարոյն բոլոր պահքն· ի ·ժ· օր բերել, որպս· քո գրել· կանոնս էր· կամ զամուսնութի· [աշխարհ]ի (նշանագրով) քահյի· բառնալ եւ զոչ արժանիսն քահանայագործուե· ի քհնյուի· եւ ի գործ սբ· խորհրդոյն ածել։ Դու քով խորհելովդ զքեզ ի միջի քո եղբարցս եւ ի քո գլխոյն եւ յա· եկեղցոյ· որոշեցեր, որիչ առանձին կանոնադրութը·: Այլ զի գրել· էիր ի գրի սատ, թէ վսն· ընդունայնութե· կենցաղոյս ոչ է պարտ զճշմարտուին· վաճառել· վսն· այն համարձակեցաք զայս գրել եւ զու ինչ մի իսկ մեղադրել: Եղբայր յեղբօրէ զրկեալ պարտ է տանել ա· զայրացման: Թէ դու այնպէս գիտուն եղար, որպս· կարծես զքեզ կամ քոյքդ որպս· պարծիս հանապազ, եւ խրոխտացել· ես առջի· իշխանաց· պարտ է քեզ գալ եւ խորհրդաբար ը· մեզ խօսել, ի խորթ գիտուեցս· զմեզ զգուշացուցանել եւ հարազատին խելամուտ առնել, ապայ թէ ոչ ես այնպէս, այլ մի բան կամ երկու գիտացել· եւ զինքն ի լրոյ եւ ոչ յընթերցմանէ, յայնժամ հայեց· եւ քննէ, թէ ի ճշմարտութե· ես թէ ոչ: Այլ ինչ յերկար գրեցից· ամէնն ըստ ձեր կամացդ եղաւ· մեք քանի կարեմք բռնել զձեզ, երբ դուք ի մէնջ զփախչելն կու սիրէք, զոր խորամանկութ· հնարեցաւ եւ սիրոյ աղաղաւ բաժանեցեր սր· աթոռոյն եւ զգլխոյն մերոյ[1]):

---

[1] Ձեռագիրը՝ կանկանոնաց։

ՅԱՒԵԼՈՒԱԾ Գ· 11·

(Ձեռ· Nº· 1265/1275)

1ա· Ի խնդրոյ տն· Ստեփանոսի Սիւնեաց նահանկին վերայ գիտողի, արարեալ հաւաքումն մեկնութե· ածաբան· մարգարէութեն· Եզեկիէլի երջանիկ վարդապետին Եսայեա Հայկազեան տոհմի[2]):

(Յ)անձն առեալ ընկալա զայս հրաման քո ածային· ըղձից, ով ամենասրբազան եւ քահանայապետական գլուխերդ (s!) Ստեփաննոս, այցելու եւ վերատեսուչ գերահռչակ եւ առաքելական աթոռոյ տանդ Սիւնեաց, որ ի վերջին ժամանակիս այնքան գերազանցեալ ցուցար իմաստս գիտութե·, մինչ զի առաջնովքն ոչ շատացար ճոխանալ հանճարով, այլ եւ վերջնովքս հանգիտանաս պայծառանալ երկովք· որով եւ զմեզ գրաւեցեր հաւատով եւ սիրով· ըստ որում խոնարհին վէհքն ի նուաստքն, որպէս, տէր, Ած· ի մեզ· զի յաղթող գտանի բանականացն սէր եւ շաղկապ անլուծանելի, որպէս զի մոռացումն գործէ տկարութեն·/

1բ· եւ չարժէ զմեզ ՛ի խնդիր միմեանց եւ ի տուրս· վս· զի դու կրկին բարգաւաճիս ճոխութը·, ընդ հոգեւորին զմարմնականն ունիս լծակցեալ, որով եւ զմեզ ոչ միայն սիրով գրաւեցեր, զոր ունիս առ մեզ անբաղդատելի· այլ եւ իշխանական հրամանաւդ հնազանդեցուցեր· ուստի ամենայնիւ գտանիմ անճողոպրելի, տիրական (լուս· բնական) սիրով գրաւեալ եւ իշխանական հրամանաւ բռնադատեալ, որով մոռացեալ զիմս տկարութի· բուռն հարից զխնդրո· մխել ի մեկնութի· ածաբան· մարգարէին Եզեկիէլի· եւ այս ոչ ընդ նուրբ եւ ընդ անկոխ ճանապարհս գնալով եւ կամ ջրհորս նորս բացեալ (լուս· փորելով), այլ սրբոց հարցն հետեւելով զխցեալ եւ զծածկեալ զանձս նոցա բանալով, է զի եւ զտարածեալ եւ զայլուր գտեալս բանս նոցա հաւաքեալ ի մի: Իսկ անփոյթ եղելումն ի նոցունց լնումք ի մերոց ներածուեց· եւ այսպէս կարճ եւ համառաւտ բանիւք անցցուք ընդ մեկնութի· մարգարէիս բան առ բան զճառսն յայտնելով եւ ոչ ընդարձակութի· ճառիցն տարածանել զմիտսն· զի թէպէտ ի սոյդ յայտնութենէ սորին նուազիմք, սակայն ըստ ՛իմ տկարութես· կատարեալ որպէս վարկանիմ: Իսկ ի ձերոց տեսողացն մտացդ ոչ միայն այսոքիկ լինիցին տեսեալք, այլ բազում ինչ յայտնագոյնք եւ ածայինք· (այլ մերս այսքան եւ եթ զի — լուսանցքի մէջ) ի ձեռն ասացելոցս որպէս վարկանիմ իբր աշտիճանաւք հպել ձեզ առ գերագոյնն ճառագայթ, ընդ որս եւ զմեզ հաղորդ ունել մաղթեմ եւ ձերոց բացափայլ իմաստիցդ՝ լրմամբ թերոյն եւ զխալն ուղելով (s!), ՛ի ձեռն հարազատ սիրոյն: Քանզի հաւատացեալ գիտեմ, զի սակաւ ասացելովքս զմթերեալս ի ձեզ կայծակունս ածային· հրոյն խուզեալ յայտնեցից, որպէս զի ի ձեռն ամենեցուն փառաւորեսցի յայտնեալն եւ զովեալն ի բնաւիցն Ած· այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից ամէն:

ՅԱՒԵԼՈՒԱԾ Գ· 12·

(Nº· 1272/1311)

320բ· Վերջաբանութի· Եսայեայ վարդապետի, որ էր ի Նիճ գաւառէ:

Արդ ըս· հայցման հաճուե· բարեսէր կամաց երջանիկ եւ գերիմաստ նախասացեալ արհիականին, յօրինեալ շարադրեցի զտեսուի· ածաբան· մրգրէիս· Եզեկիէլի, կարճ եւ համառօտ տեսութ·: Ի թուիս հայկազեան տոհմիս տովմարի ըս· հոլովման ամաց եօթն հարիւր յիսուն եւ երկուց, ի դառն եւ անբարի ժմնկիս·, որ տատանեալ ծփիմք ամենաներհակ արկածիւք ի ներքուստ եւ արտաքուստ, որ ափշութի· գործէր տեսականին եւ ը· միջոյն գործյս· քննուե·: Սակայն ըս· կարի իմոյս անարգութ· հարկեցուցիչ հրամանաւ ի ձեռն տուութե· հոգւոյն գրեցի զսա, աղքատ եւ չքաւոր սեղանով զծոյկցսն· կերակրելով եւ հայցեմ յամէ· նե//

321ա· բումն գտանել սխլից·, որ ասա գտանի: Իսկ եթէ օգուտ ումեք լինիցի, չնհակալուի· հոգւոյն շնորհաց եղիցի· եւ կաթ աղօթից ձերոց ցօղեսցի ինձ ի տապանն իմ գերեզմանի: Եւ եղկելի մատանցս այս վաստակ մտերիմ եւ խոհեմ քննողացդ ի վայելս մեծ եւ յօգտութի· եղիցի:

---

[1]) Այս երկու թղթերը, ինչպէս եւ մի ընդարձակ յիշատակարանաձեւ ժամանակագրութիւն, հեղինակ Յովհաննէս Ծարեցու ձեռքով, շեղագրով գրուած, թղթի վրայ $22^{1}/_{2}\times 15$ սմ·, միջեան $15,7\times 11,8$ սմ·, եւ կցուած է բոլորովին տարբեր ձեռքով բոլորգիր ձեռագրին: Ձեռագրի վերջում, այս ժամանակագրութեան կցուած է Դոփեանց տան իշխանների պատկանող մի քանի արձանագրութիւնների պատճէններ, գրուած նոտրգրով:

[2]) Nº· 1266/1276 1ա· Գիրք մեկնուեն· Եզեկիէլի մարգարէին· Արարեալ մեծի վրդտին· Եսայեայ, որ էր ի Նիճ գաւառէն եւ էր վրդպտ· մեծի Յօհաննու Որոտնեցւոյն, ի թուին հայոց ՉԾ եւ Բ:

Նաեւ զաշխատասէր եւ զառատամիտ վրդտն· Յոհաննէս զծնել· որդեակն իմ ի Քս·, ի ձեռն որոյ սրբագրուի· տառիս եղեւ, յիշեցէք բարի կամօք, զի ըս· աշխատանցն· եւ զհատուցումն· ընկալցի ի տնէ·:

Եւ դուք որք պատահէք ով աշկերտք· բանի յայսմ ածային· ի հանդիսի օրինակելով զսա զրեսջիք եւ զսակաւ զայս արձան յիշակի· մերս տաժանմանց, զի մի լիցիք բզմիցս· առօղք եւ տակւին· (s!) ոչ տուօղք· այլ ընկալել· ի ձեռց· ձերոց յղկել· վէմս այս կենդանի յամայիս Նոր Սիովնի· որով օրհնել· փառաւորեսցի ամենասր· երրորդութին· անբաժանելի Հօր եւ Որդւոյ եւ սր· Հոգւոյ ի ներկայս եւ յապառնւոյն եւ յանսպառ յաւիտենին· ամէն:

Յետ աւարտման գրոցս: Թուղթ ընծական· Յեսայեայ վրդպտի· առ տր· Ստեփաննոս Սիւնեաց արհիեպսկպսն·:

Արհիական եւ սրբն· քաւչապետ տր· իմ Պսակ անուն, զմեծարգի հրմնցդ· քոց կորուսմն· ընկալ ի Նուաստ· որդւոյ եւ Թարմատար Յեսայեայ եւ ախմարութե· սխալանաց լեր (յետոյ աւելացրած) անմեղադիր· եւ ուղղեա ըստ գերազանցել· անարգամեծար սրբոյն քո,որ առ իս, զի այրիմ ապաշան, վիրաւորել· մտօք եւ ցաւալից մարմնով, զոր ի մեղցն· իմ հաւաքեմ սերմանց պտուղս, որով ծփիմ միշտ հողմով յիմարութեա· եւ ոչ ունիմ զկայ հանդստեան մարմնյս·, զի (յետոյ աւելացրած) յերկարեց· ժմնկս· եւ յոլով թողաւ վայրս ի վճռէն քո ի լրումս: Վս· որոյ աղաչեմ մնալ անպարսաւս ի ներող եւ ի կատարել· քոց մտացդ· եւ ընկալցիս զդա փոխարէնս անվճար քո երախտեացն որ առ իս, յոր գերազանց գտանի բանի եւ գրոյ· ըստ որում տրխուր յեբեւելեաց լուծակնցս· ոչ ոք էր բաւական կշռել· բայց միայն հրմնցս· քոց կորուսմն·: Իսկ զաղքատանաց բանից ընծայս որ ձեզ նուիրել· ակն ունիմ եւ աղօթեմ, եթէ ի ձեռն նուաղ կայծականցս զմեծագոյ հրդեհն ի ձեզ վառեցից· եւ կատարել· իմաստս ի կորելոյդ· առ մեզ փայլեսցէ: Այլ եւ դուք արժանի լին («ից» յետոյ աւելացրած)իք շնորհօք տն· զդա ը·ամ· ածախօս· մատեանս հոգեբուղխ բանիւ ամբարեալ ի գանձս եկղցւյ եւ թարգմանել յունկն եւ յոգիս բանականաց մինչեւ յամայր ամս ժամանակաց· ամէն:

Պտսխնի· շնորհկլե· տն· Ստեփաննոսի առ վրդպտն· Յեսյե·

Յսակն· համալսարանացն պետ եւ ձիր իմաստից պուէտ պարու, պօղիմօն ճեմարանին ճեմել· ճոխապետ առ բոցեղէն ասպարիզաւն· ուր յաճախքն ի գիտուի· եւ հեզմունք իմաստուե·, ով դպրապետ անճառ դպրոցացն, եւ համակ դիւան անհասական խորոցն վրդպտ· Եսայի:

Ի Նուաստ Ստեփաննոսէ ծնրահնդոյց· զաղաթամբ ողջոյն եւ գիտութի·, զի հասաւ մեզ թուղթ ձեր բերկրալից ցնծութ·, հանդերձ երկնառաք պարգեւօքս, զոր ուռկանաւ մտացդ հանել· ի խորոց անտի մարգարիտ մի լուսաւոր, որոյ ճաճանչ սպիտակաթոր փայլմամբ զարմանալեղ մեծասքնչ· հրաշիւք խողտեն զտեսողացն զզայարանս, եւ կառուցեր ի հիւսուած պսակի տէրունեան զագաթն եւ զայս հոգալով լցեր զփափագ եւ զիղձ իմ ի բղում· ամաց: Բայց չքաւոր աղքատութես· իմոյ անհնարին բարդեցեր տարակուսանս, զի ոչ ունիմ զկշիռ սակի տրխուր փոխարինին, զոր հաւատամ չբաւել բոլոր գոյք եղծականիս: Բայց անեղծին եւ զանծիւրելին պարտիմ փոխադրձ· եւ բանին զրանեղէն զահամուսն թէպէտ ոչ կշռի, եւ զայս յորժամ տեսոյ հանդիպեցայ:

Այլ ծանիր ով պայազատ, ճետ արփիազան սեռին, զի թակարթեալ յամենուստ բոլորիւ զրաւեցեր զիս անեզրական սիրով ի կեանս եւ ի մահ, զոր ոչ խորուի· եւ ոչ բրձրուի· եւ ոչ որ կան, եւ ոչ հանդերձեալն, ոչ հուր եւ ոչ սուր, ոչ կարեն մեկնել զմեզ ի սիրոյ այտի Այ·, որ ի Քս· Յս· ի տր· մեր: Եւ արդ մածուցել· զերեսս ի մայրն հասարկց·, նախ հոգւոյն Այ· երկիրպագեմ մեծաւ գոհութբ·, եւ ապա հարուստ մեծանձնուի· ձեր, եւ համբուրեմ զզարշապարդ, որ զէմ եղեալ ուղղեցւ· առ վերին ճանապարհորդուին·, ընդ հետս տիրահորդ ոտհին: Եւ զայս պարգեւ տարել· ընծյեցուցանեմք մօրըն քո լուսոյ սրյ· կթւղկէի եւ ի դիմաց ձեր շնորհաւորելով դնեմ յարկեղ նորին գանձելով զսա գանձ անկշիռ ի գնձրն· ածուեն·, զոր եւ բրձրագոյն· պատիւն եւ զհզրպտկ· տրխուրն ընկալցիս առ կենօք, եւ յետ մահու զայն, զոր ակն ոչ ետես եւ ունկն ոչ լուաւ, եւ ի սիրտ մրդյ· ոչ անկաւ, զոր պատրաստեաց Ած· սիրելեց· իւրոց· ամէն եւ եղիցի, ողջ իր տրմբ· յիւ· քիւ· ի փռս· Այ· եւ ի պարծանս մեզ, ամէն:

ՅԱԻԵԼՈՒԱԾ Գ· 13·

N°· 636/734·

42բ· Ո՛վ հայր հոգեւոր, յերկրայս զոմ, թէ զինչ առասցից զքեզ· արեգա՛կն, եւ ահա զտին միայն լուսաւորէ եւ թէ աղբեւր, երբեմն յարտաքին հեղեղաց եւ ի զազանաց կոխելով պղտոր իմն զծի· եւ թէ դրախտ յոգնապտուղ, ի ձմերան յեղանակի խամրի: Այլ սեղան առասցից զքեզ հոգեւոր հացին, որ միշտ առատաբար բաշխես կերողաց եկեղեցականաց եւ աշխարհականաց եւ առհասարակ ա· ուխտի մանկանց եկեղեցւոյ: Եւ իմ յետ Այ· կարեկից եւ ցաւակից յանձանձիչ եւ մխիթարիչ: Տացէ տր· Ած· զվարձս աշխատութե· քո ընդ յառաջին վդտցն· եւ լուսաւորչացն, ընդ Յոհաննու Ոսկեբերի·, ընդ Բարսղի եւ Գրիգորի ածաբանի·, ընդ Կիւրզի եւ Աթանասի եւ այլոց հետեւողաց նոցին, զի զնոցայն լցեր սպասաւորթի·:

139ա· Բայց առ քեզ են բանք իմ ո՛վ այրդ Այ· եւ այր ցանկութեց· հոգոյն սկիզբն եւ կատարած իմոց բանից· մեծ ճշմարտութե· փող, հաւատարիմ ծառայ եւ հաղարայպետ ածային· խորհրդոյ, որ զհաւատացեալ արծաթ բանին արկեալ քո աննախանձարար ի սեղանաւորս, այսինք հոգի եւ ի միտս հաւատացելոց, կոչեմք զքեզ Ած· Փարաւոնի սատանայի եւ ամ· ընդիմակաց զաւրութեց·, սիւն եւ հաստատութի· եկեղեցոյ· կամք ան· եւ հոգոյն աւթեւան, լուսաւոր յաշխարհի զբան կենաց ունելով, ով անհամեմատ յամենեսեան, արդ զամենայն ասել եւ սքանչանալ՝ ընդ քո առաքինութիդ· երկայնագոյն լինի թերեւս եւ ըստ յարձակման բանիս· բայց զմինն միայն կարացից ասել, զգութ հայրական խնամոցդ առ որդիացելքս քո//

139բ· ըստ բանին ծնընդեան, զոր առաւելքն յամենեսեան առ իս ցուցեր խնամս վերակացութե· ազգի ազգի խրատաւք եւ մխիթարական բանիւ վարժել եւ սփոփ(ել) զմերս տկարութի· զմինն եւ եթ ոչ արկեր ի գործ, զսաստն ասեմ եւ զյանդիմանութի· զխտելով զմերս թեթեւութի· այլ հեզաւրէն խոնարհութբ· տանելով մերում անկատարութի·: Արդ ես վերջացեալս յամի· այսքան բարեացս եւ մեծամեծ պարգեւացս զինչ տաց փոխարէնս, մանաւանդ թէ եւ բանից իմաստութե· զինչ հատուցից· ոսկի արդեաւք կամ արծաթ կամ ականս պատուականս, հիւթ յերկրէ, որ երկրաւորացս է սիրելի· ոչ զայս վս· զի անհամեմատ է իմաստութն զայս բանին· իսկ եթէ զբանս, սակայն եւ զայս ի քէն ընկալայ: Արդ ոչ գոյ իմ անձէ, զի կշռեցից զգին այս զանձիցս, զոր ստացա· բայց զայս եւ եթ զԱյ· իմոյ զմեծայպարգեւ ողորմութին·: Արդ նայ որ//

140ա· կարողն է յամի· եւ առատ առ ամենեսեան, հատուցէ վարձս փոխանակ վաստակոց քոց զհ· ապատեկն յայսմ կենցաղս զփառս եւ զգովեստ ի մարդկանէ, մեծայպատիւ փառաւք բարկաւաճել թագաւորաց եւ յիշխանաց, ահարկու ի մէջ ազգաց եւ ժողովրդոց իբրեւ զարեգակ պայծառացեալ ընդ ոլորտս ամ· եւ յայնմ աշխարհի զկեանս անվախճան եւ զպսակն անթառամելի ընդունիցիս...

ՆՈՐ ՅԱՒԵԼՈՒԱԾ

Ա. ԱՉԻԲԷԿԵՆՔ ԵՒ ՆՐԱՆՑ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԸ

Բ. ՏԱՐՍԱՅԻՃ ՕՐԲԷԼԵԱՆԻ ԵՒ ՄԻՆԱ ԽԱԹՈՒՆԻ ՍԵՐՈՒՆԴԸ

ԱԶԻԲԷԿԵՆՔ ԵՒ ՆՐԱՆՑ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԸ

(ՊԱՏՄԱ-ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ)

Ա.

Այս տոհմի ծագման մասին չունինք որեւէ հին, գրական տեղեկութիւն. մեր միակ աղբիւրը Զաքարիա սարկաւագն է, որ նրանց վիրական ծագում է տալիս: Նորա պատմելով Շիրակի եւ Արագածոտն գաւառների վրայ տիրապետութեան տակ եղած ժամանակ՝ Դաթօ անունով Թագաւորի Բէժօ որդին հիւանդացաւ գօթութեամբ. լսելով, որ Յոհաննայ վանքում գտնուած Ս. Գէորգի նշխարները այդ հիւանդութիւնը բուժելու զօրութիւն ունին, բերել է տալիս Տփխիս, դորա փոխարէն վրայ ազնուական տոհմերից պատանդներ ուղարկելով վանքը: Բայց Բէժօն մեռնում է, Թագաւորը նշխարներն ուղարկում է Կածարէթ, իսկ պատանդներից եօթը մնում են Հայաստանում եւ ցրւում զանազան գիւղեր. այդ պատանդներից են սերւում մի քանի տոհմեր, ինչպէս Թէինենք Յոհաննայ վանքում, Ազիբէկենք Եղվարդում, Մոծակենք, Ղապոնք Քանաքեռում եւ այլն[1]): Այս վերջին տոհմին է պատկանում եւ ինքը Զաքարիան: Նորա աղբիւրը եղել է մասամբ Առաքել պատմագիրը, որ բերանացի տեղեկութիւններ է տուել այդ մասին, բայց գլխաւորապէս մի ձեռագրի յիշատակարան, որ գրուել եւ պահուել է որդւոց որդի իրենց տան մէջ, որը սակայն անյայտացել է մեծ չարժի ժամանակ: Զաքարիան կարդացած լինելով այդ յիշատակարանը, վերարտադրում է յիշողութեամբ իւր պատմութեան մէջ:

Ինքնին հասկանալի է, որ երկու աղբիւրներն էլ զուրկ են պատմական արժէքից: Մէկն իբրեւ աւանդութիւն միայն, իսկ երկրորդը յիշողութեան վերայ հիմնուած մի յայտնութիւն, որ դժուար է ստուգութեան ենթարկել ծագման եւ ո՞րչափով իրական լինելու տեսակէտից. այդ աղբիւրները միայն ցոյց են տալիս, որ վիրական ծագման աւանդութիւնը գոյութիւն ունէր ԺԷ. դարում[2]): Որովհետեւ իրօք անկարելի բան չէր ԺԳ. դարում կամ ԺԴ.ի առաջին կիսում Հայերի եւ Վրացիների աւելի սերտ յարաբերութեան շրջանում, ազգափոխութեան դէպքեր պատահէին նաեւ իշխանական տոհմերի մէջ, ինչպէս տեսնում ենք Զաքարեանների եւ Օրբէլեանների մէջ. ԺԴ. դարու առաջին քառորդում Զաջուռ իշխանը «ազգաւ վիրացի գոլով, այլ կամաւք բարեկամ ամենայն եկեղեցեաց», ամուսնանում է հայ իշխանուհի Մամախաթունի հետ[3]): Սակայն, մեր յիշատակարանների մէջ, ուր խօսւում է ԺԳ. եւ ԺԴ. դարու առաջին կիսի Ազիբէկենց իշխանների մասին, չկայ եւ ոչ մի ակնարկ նրանց վիրական ծագում ունենալու համար:

Տոհմի ամենահին գրաւոր յիշատակարանը ծագում է 1318 թուից, որի գրիչը նկարագրելով Ազիզ բէկ Ա.ի եւ նորա կնոջ շինարարական եւ բարեպաշտական կեանքը, յիշում է եւ նրանց ծնողների անունները՝ Ազիզբէկինը Աւագ եւ Թամար, իսկ Վախախինը Խարասլան եւ Ռուզուքան[4]): Մինչդեռ Զաքարիայի տուած տեղեկութեան համեմատ, տոհմի նախահայրն էր պատանդ Ազիպէ, որ Յոհաննայ վանքից Եղվարդ գնաց, «եւ այժմ ասին Ազիպէկենք»: Ըստ իս այդ անունը ծագում է Ազիզբէկ անունից, որ տոհմի մէջ ընդհանրացած անուններից մէկն է, «Ազիպէ» անունից կարող էր «Ազիպենց» կամ շատ շատ «Ազիպէենց» կոչումը ծագել, եւ ոչ երբեք «Ազիպէկենց», եւ հաւանօրէն Ազիզ բէկ Ա.ից, որ տոհմի ամենից նշանաւոր ներկայացուցիչն է, թէեւ ոչ նախահայրը[5]):

---

[1]) Զաքարեայ սարկաւագի պատմագրութիւն. 1870. Վաղարշ. հատոր Գ. 43:

[2]) Ազիբէկենց տոհմի յիշատակութիւն նաեւ Զամբռ. Սիմէօն կաթուղիկոսի, 287. Մոծակենց յիշատակութիւն Արձ. Գետարգելի, Շահխ. Բ. 164. Ալիշ. Այր. 292. Առաքել, Պատմ. (Վաղարշ. 1896) 385:

[3]) Ձեռ. էջմ. № 240/380, 310բ: Մեր յիշատակարանների ժողովածուն, անտիպ:

[4]) Անհաւանական չէ, որ այս Խարասլանը նոյն լինի Աղջոց Ս. Ստեփանոսի մի արձանագրութեան մէջ յիշուած Ղարասլանի հետ. «Յառաջնորդութե Գր վդին ես Ղարասլան քարտուղար աթապա/կ Սադունին միաբանեցայ սբ ու/խտիս եւ էտու :Ի: դհկ: եւ սպասա/ւորք խոստացան ի տարին :Ա: աւր պա/տա րագ ի տանի սբ Սարգսին»: Սադունի մասին Շողակաթ. 1913, մեր յօդուածը՝ Զագավանից ժողովը:

[5]) Այդպիսի օրինակներ ունինք եւ միւս իշխանական տոհմերի պատմութեան մէջ. Խաղբակեանց տոհմը կոչւում է նաեւ Պռոշեանց կամ թոռունք Պռոշայ, այս իշխանի անունով, որ նշանաւոր հանդիսացաւ ԺԳ. դարում: Օրբէլեանք կոչւում են յետագայում եւ Բուրթէլեանք, սոյն անուն երկարակեաց մեծ իշխանի անունով, որ ապրում էր ԺԴ. դարու առաջին կիսում:

Կարող է Աղիբէկենց անունը եւ Աղիզբէկ Բ.ի անունից ծագած լինել, որովհետեւ մի արձանագրութեան մէջ սորա անունը գրուած է աղագրութեամբ այն ձեւով, որ «Աղիբէկ» կարելի է կարդալ: Յամենայն դէպս տոհմի ծագումը շատ աւելի հին է, քան սրանցից մէկն ու մէկը: Կարծում ենք, թէ տոհմը նոյնիսկ ճիւղաւորուած էր ԺԴ. դարում, ինչպէս երեւում է Բջնոյ Մանուէլ Ա. եպիսկոպոսի մի կարեւոր յիշատակարանից, 1367 թուին գրուած: Մանուէլը աւագ ժամանակակից է Աղիզբէկ Բ.ին, առաջնի թոռանը, որին եւ անուանում է «մերձաւորն իմոյ արեան զմեծն Աղիզբէկ Եղիվարդեան[1]): Այս Մանուէլի «բնական» պապերն են Թային եւ Արջուկ Զաքարիա, հայրը Շապուհ եւ մայրը Ջանխաթուն. ասել չենք կարող, Թայինն ու Զաքարիան մի մի ճիւղի նախահայրերն են, թէ միայն Մանուէլի, եւ թէ առհասարակ ի՞նչպէս պէտք է հասկանալ Մանուէլի եւ Աղիզբէկ Բ.ի ազգակցութիւնը: Սակայն տոհմի ճիւղաւորուած լինելու իրողութիւնը ակնարկուած է Աղիզբէկ Ա.ի յիշատակարանի մէջ եւս. մենք կը տեսնենք, որ ընտանեկան գժտութեան պատճառով, նա վտարւում է իւր կնոջ հետ առժամանակ հայրենի Եղվարդից, եւ յետոյ միայն տէր դառնում իւր կալուածքին: Հաւանօրէն Աղիբէկենք եւս մէկն են Զաքարեանց շրջանում նոր կազմակերպուած տոհմերից, ինչպէս Խաղբակեանք, Օրբէլեանք, Վաչուտեանք, Դոփեանք եւ այլն: Ապագայ բանասիրութեան թողնելով նորագիւտ աղբիւրներով տոհմի ծագման պատմութեան պարզելը, ամփոփենք այն ամէնը, ինչ որ առ այժմ յաջողուել է մեզ գտնել յիշատակարանների եւ արձանագրութիւնների մէջ:

Բ.

Ինչպէս վերեւ յիշուեցաւ, տոհմի ամենից նշանաւոր ներկայացուցիչը Աղիզբէկ Ա.ն է. Ներսէս դպիրը Աղիզբէկի եւ նրա կնոջ Վախախի համար գրել է մի աւետարան, վերջում զետեղելով ընդարձակ եւ կարեւոր յիշատակարան այս իշխանական զոյգի գործունէութեան մասին: Կարինեանցի վկայութեամբ (№ 231), «ի վերջ մատենի գոյ ոտանաւոր արձակ շարադրութեամբ», արդեօ՞ք այս ակնարկը մեր յիշատակարանին է վերաբերում, թէ մի այլ գրութեան, այժմ ստուգել չենք կարող, թէեւ յիշատակարանի մի մասն էլ ոտանաւոր է: Աւետարանը մեծադիր է, 8°, գրուած խոշոր բոլորագրով, թղթի վերայ առանց մանրանկարների, «ի թվայբերութեանս հայկազեան տոմարիս եւթն հարիւր եւ վաթսուն եւթն: Ի խնդրոյ հրաշափառ եւ հաւատարիմ ծառային քի պարոն Աղիզպէկին եւ ամուսնոյ իւրոյ պարոն Վախախին»[2]): Հեղինակը ընդհանուր խօսքերով նրանց ազնուական ծագումն ու վարքը նկարագրելուց յետոյ՝ ակնարկում է եւ այն ընտանեկան գժտութիւնը, որի հետեւանքով ստիպուած եղան նրանք առ ժամանակ հեռանալ Եղվարդից: Բայց նոքա չյուսահատուեցան եւ յաղթեցին իրենց թշնամիներին. «եկեալ տեսին զբնակութիւն նոցա յաւերեալ եւ կործանեալ եւ զաւանս իւրեանց զԵղիվարդ բնակութիւն աւազակաց»: Նոքա վճարում են իրենց պարտքերը, նորոգում աւանը, ցրուածներին հաւաքում, եւ «յոլով աշխատութբ ծառայութիւն կատարելով մեծափառ տերանց իւրեանց մեծին Շահնշահի եւ Խոյանդզային, հեզաբար եւ հնազանդաբար շրջէին ընդ նոսայ (s!), մինչեւ ամենայն դիմաւք հաստատեցին զմեծ մենաստանն զԵղիվարդ, շինել զամ քանդեալս»: Նա իւր ցոյց տուած մեծամեծ արդիւնքների, ողորմածութեան «աստուածատիպ» շնորհի հետ, ստանում է եւ «կամք շինութեան զտունս հոգւոյ եւ մարմնոյ». վերջին խօսքով հասկանում ենք աշխարհիկ շէնքեր՝ բնակարաններ կամ ապարանքներ եւայլն:

Աղիզբէկի յիշատակարանի Շահնշահը Շահնշահ մեծի թոռն էր, Իւանէի որդին, «ամիր սպասալար» եւ «աթաբակ» տիտղոսներով, որ յատուկ էր Աւագ Զաքարեաններին Գէորգի Գ.ի եւ Թամարի օրերից սկսած: Այս Շահնշահի անունը յաճախ յիշատակուած ենք տեսնում արձանագրութիւնների մէջ, որ բաւական երկար ժամանակ իշխանութիւն է վարել. գոնէ նորա անուան յիշատակութիւնն ունինք, որպէս Զաքարեան տոհմի աւագ իշխան 1268—1320 թիւը, որ նորա մահուան տարին է[3]): Բայց նորա իշխանութիւնը պէտք է նշանակել 1261/2 թուից, երբ սպանուեց հայրը Զաքարիան Հուլաղուի կողմից եւ մեռաւ պապը Շահնշահ մեծ սրտի կսկծից[4]): Մենք տեսանք, որ Աղիզբէկի եւ Վախախի համար Շահնշահը իւր կնոջ Խոյանդզայի հետ «մեծափառ տեարք» են. ի՞նչ կապ ունէին նրանք միմեանց հետ: Պռոշեանց տոհմին նուիրած մեր անտիպ աշխատութեան մէջ փորձել ենք պարզել Զաքարեանների եւ մոնղոլական շրջանի հայ պետական կազմակերպութիւնը. Զաքարեանների գերագոյն իշխանութեան տակ, Սելջուկեան կայսրութեան հետեւողութեամբ, հաստատւում են նոր իշխանութիւններ կամ հները կապւում են նրանց հետ «կողմնակալ» տիտղոսով, որոնք յաջորդաբար իրենց իշխանութեան տէրերն էին, միեւնոյն ժամանակ սպարապետներ կամ զօրավարներ, Զաքարեանների երկու աւագ ճիւղերից մէկն ու մէկի իշխանապետի հրամանատարութեան տակ, նայելով թէ իրենց երկիրը ո՞ր ճիւղի պետութեան մասն էր. այսպէս օրինակ Օրբէլեանք, Պռոշեանք, Դոփեանք Իւանէի կամ Աւագի տան ստորադրեալներն էին և սպարապետները, իսկ Վաչուտեանք եւ մի շարք ուրիշ իշխաններ Զաքարիայի կամ Շահնշահի: Այս «կողմնակալ» կոչուած իշխաններն էլ իրենց հերթին ունէին ստորադաս սպարապետներ կամ զօրավարներ: Այս համառօտ բացատրութիւնից յետոյ պարզ է, թէ ինչու «ամիր սպասալար» եւ «աթաբակ» Շահնշահը Ազիզբէկի մեծափառ տէրն է. յիշատակարանի մէջ Ազիզբէկը կոչուած է նաեւ «քաջ զաւրավար ընդդէմ թշնամեաց խաչին քի» ճիշդ այն իմաստով, ինչպէս բացատրուեցաւ. այսինքն Շահնշահի զօրավարներից մէկն էր:

---

[1]) Ցանկուած № 1:

[2]) Անդ:

[3]) Կոստ. վիմ. Տար. 110, 158, 140, 156, 160: Х. В. Томъ II. вып. II 1913, 236:

[4]) Գանձ. 577:

Ազիզբէկը հաստատուելով իւր իշխանութեան մէջ, սկսում է զբաղուել այնպիսի ընդարձակ շինարարութեամբ, որ պատիւ կարող էր բերել աւելի մեծ իշխանութեան պետի. ինձ թւում է, թէ Ազիզբէկի իշխանութիւնը չպէտք է աւելի ընդարձակ լինէր, քան Արայի լերան փէշերը, սահման ունենալով արեւմտեան կողմից Քասախ գետը եւ արեւմուտքից Թեղենեաց սարից բխող վտակը. Թեղենեաց վանքը, Պահլաւունեաց եւ Վաչուտեանց ժամանակի հոգեւոր կեդրոններից մէկը, չէր պատկանում սրանց. Ազիզբէկենց տոհմի ոչ մի յիշատակութիւն չկայ այնտեղ, արձանագրութիւնների մէջ, մինչդեռ պակաս չեն ուրիշ տոհմերինը: Ազիզբէկի գործունէութիւնը երկուսի կարելի է բաժանել. բուն շինարարական-գեղարուեստական եւ կուլտուրական: Հէնց ինքը Ազիզբէկը մի համառօտ յիշատակարանի մէջ, Յովհաննու վերջում (238բ.) ամփոփում է իւր գործունէութիւնը. այս յիշատակարանը տարբեր է գրչի ձեռքից եւ գրուած է Ազիզբէկի բերանից, բայց ուղղագրական այնպիսի առանձնայատկութիւններով, որ նկատում ենք Ներսէս գրչի յիշատակարանի մէջ. գուցէ գրուած է հէնց Ազիզբէկի ձեռքով, բայց Ներսէս գրչի թելադրութեամբ կամ չարադրութեամբ:

«Փառք յաւիտեանս ամէն:

Ես պրն Ազիզ բէկս վերըստին նորոգեցի զմեծ մենաստանս եւ լիցի ծայրէ ծայր շինուածովք, այգաւք եւ բուրաստանաւք եւ գայր իջանէր չորից վտակեաց աղբիւրեաց, ի լեռնէն Թեղենոյ (Ալիբէկ գագաթը) աղբիւրն Վանից, աղբիւրն Սպիտակ, աղբիւրն Գոմայ ձորոյ, աղբիւրն Գանձակայ եւ զջուրն ձորոյն որ ասի Քարաշամ. եւ ոչ եղեւ բաւական, եւ ապա յետոյ բազում ջանիւ եւ աշխատութք եւ ծախիւք ընչից բերաք զջուրն ի Քասաղ գետոյ եւ հասուցաք ի մենաստանս Եղիվարդ վասն հոգոյ իմոյ եւ ամուսուն (s!) իմոյ պրն Վախախին վասն շինութ(ե) տեղոյս եւ արեւշատութե որդոց իմոց»:

Նոյն իմաստով, բայց աւելի թանկագին մանրամասնութիւններով հաղորդում է Ներսէս գրիչը. Ազիզբէկը եւ նորա կինը Վախախ ոչ միայն նորոգել են մեծ մենաստանը, այլ եւ շինել են «Վանս ի կորդոյ, զուխտն սրբոյն Յակոբայ յանուն սբ առաքելոցն եւ զարդարեցին զնա, մեծամեծ վայելչութբ. ստացան բազում այգիս շուրջ զբնակութբն ուխտին: Եւ զներքս եկեղեցոյն զարդարեցին քանդակով. ճաղաշութբ ձեւացուցին զպատկեր Ամէնափրկչին եւ զմաւրն իւրոյ ածածնին, եւ զառաքելոց եւ ըզմարգարէից, միջնորդ արարել (s!) զնոսա առ բարէգութն ած: Եւ մեծագին գրեանս ազգի ազգի եւ մեծագին սգեստիւք զարդարեցին զնա, եւ արարին զնա, բնակութիւնս կուսանաց եւ ետուն զամենայն պէտս սգեստից եւ կերակրոց, եւ ոչինչ կարաւտք եղ (s!) յամէ, զոր ինչ պիտո (s!) էր հոգեւոր եւ մարմնաւոր»[1]):

Հարց է, թէ ո՞րն է այն եկեղեցին, որ շինել է Ազիզբէկը: Եղվարդի մէջ եւ քիչ հեռու կան մի քանի եկեղեցիներ. դոցանից հնագոյնը մի մատուռ է, գիւղի արեւմտեան կողմը գտնուած հին գերեզմանատան մօտ, որի կիսասեան (Pilaster) խոյակները Քասաղի, Տիկորի եւ նման հնագոյն բազիլիկաների խոյակների ձեւով, ուրեմն հնութեամբ մինչեւ Դ—Ե. դարերը հասնող:

Երկրորդը մի նաւանի բազիլիկ եկեղեցի է, որ բացել է Խաչիկ Ծ. Վարդապետը եւ դարձեալ մեր հնագոյն Դ—Ե. դարու եկեղեցիների կարգին է պատկանում մի քանի նշաններից դատելով: Սորա մօտ գտնուած դժուար ընթեռնլի արձանագրութիւնը հնագրական տեսակէտով երբեք չէ կարող եկեղեցու ծագման հետ կապուել[2]):

Երրորդը մի բազիլիկա է երեք նաւով, որոնց կամարները հանգչում էին երկկարգ չորս-չորս մոյթերի (Pfeiler) վերայ, թէեւ եկեղեցին բոլորովին քանդուած է, եւ ծածկուած է եղել մասամբ հողով, որ բացել է Խաչիկ Ծ. Վարդապետը, բայց մնացած պատերը եւ յատակագիծն ու մոյթերը ունին հնութեան այնպիսի ակներեւ նշաններ, որ Զ. դարու վերջերից այս կողմն անցնել երբեք չեն կարող. օրինակ հարաւային երեք դռներից, յատկապէս միջին դրան զարդարանքները, եւ սորանից դէպի արեւելք եղած դրան ճակատի հաւասարակող խաչերը[3]), մի ուրիշ հաւասարակող խաչ պակի

---

1) Յաւելուած № 1:

2) Այդ մեծ արձանագրութիւնն այժմ անյայտացել է. գիւղացիներից մէկը աւերակի մօտ շինել է յարդանոց, հաւանօրէն քարը կոտրել է եւ գործադրել:

3) Մենք խուսափում ենք մանրամասնութիւնների մէջ մտնել մեր նիւթից չշեղուելու համար, բայց հարկ ենք համարում այստեղ շեշտել, որ հարաւային պատի գօտեձեւ արձանագրութիւնը երբեք եկեղեցու ծագման շրջանին չի պատկանում գրերի այնպիսի կցումներով (լիգատուրաներ), որ յատուկ են ԺԳ. դարին, յամենայն դէպս ոչ վաղ քան ԺԲ. դարը: Այդ արձանագրութեան մէջ չկարողացանք գտնել եւ Մովսէս անունը, որ նոյնացրել է Ստրշիգովսկին կամ նորան այդպէս յայտնող աղբիւրը Եղուարդեցու հետ, կապելով եւ եկեղեցու շինութիւնը: Josef Strzygowski. Die Baukunst der Armenier u. Europa. Band I. 145. Արձանագրութեան սկիզբը եւ վերջը պակաս է, իսկ մէջտեղումն էլ տեղ-տեղ փնացած. հնարաւորութիւն չունենալով առ այժմ ոչ կլիշէ եւ ոչ նկարագրութեամբ գաղափար տալու գրերի ձեւի եւ կցուածքների մասին, թողնում ենք արձանագրութիւնը: Արձանագրութեան տառերը շատ խոշոր են, բարձրութիւնը 22 սմ. եւ գտնւում է հարաւային պատի ամբողջ երկարութեամբ: Գօտեձեւ

մէջ Երերոյքի նման, տանիքի չուրջը եղած ատամնաձեւ օրնամենտը (նոյնն ունի եւ Քասաղի եկեղեցին), պիլոնների կազմութիւնը, եւ այլն:

Մի չորրորդ ութ կողանի եկեղեցի գտնւում է Եղիվարդից մի քանի վերստ դէպի հիւսիս-արեւելք· Յովհաննէս կաթուղիկոս յայտնում է, որ Գրիգոր Մամիկոնեան, Արուճի Ս· Գրիգորից զատ, շինել է «յարեւելից կուսէ դաստակերտին մեծի Եղիվարդայ» մի այլ եկեղեցի[1]· Թէպէտ ուղիղ արեւելք չէ ընկնում այս օկտոգոնը, բայց անշուշտ սա պիտի լինի Գրիգոր Մամիկոնեանի շինածը, որովհետեւ եկեղեցու զարդաքանդակները, գարնէզները, շինուածքը Է· դարու դրոշմ են կրում ըստ ամենայնի, ինչպէս Զուարթնոցի, Աշտարակի Կարմրաւորի, Արուճի եւ այլն տաճարները: Տարաբաղդաբար շինութեան շրջանի արձանագրութիւն չկայ եկեղեցու վրայ, կամ չէ մնացել, բայց յետին դարերի, ոչ վաղ քան ԺԳ·, երկու արձանագրութեան մէջ կոչւում է «Ս· Զաւրավար»[2], իսկ երկու յիշատակարանից էլ պարզւում է, որ Թէոդորոսն է այդ զօրավարը[3]:

Մնում է գիւղամիջի ներկայ եկեղեցին, որ պէտք է Ազիզբէկի շինածը լինի, ըստ արձանագրութեան ՉԾ= 1301 թուին· Ծ-ն գրուած է փոքր ինչ Հ-ի ձեւով, այդ պատճառով էլ Շահխաթունեան վերջինն է ընդունել[4]:

արձանագրութիւնները յատուկ մեր հին եկեղեցիներին (Նախճաւան, Բագարան), բայց ունինք եւ ուշ դարերում, ինչպէս Արամուս գիւղի բլրի եկեղեցուն ՅԾԶ (=907) թուականից:

Բացի վերոյիշեալ արձանագրութիւնից՝ մէջտեղի մեծ դռնից դէպի աջ երեւում են երկրորդ հին արձանագրութեան մնացորդներ, տարբեր բնոյթով, աւելի երես փորագրուած· այդ մնացորդները նոյն տողաշարով չեն, թէեւ նոյն քարաշարքի վրայ: Երկու դռների մէջ քարերի վերին մասում կարդացւում է «*Անանողի է*»· նոյն քարաշարքի ներքեւի մասում փոքր դռնից դէպի աջ միմիայն տառեր են, որոնցից միտք չի դուրս գալիս՝ «*լ կ յ մ հ*», նոյն քարաշարքի վրայ փոքր ինչ վերեւ այս անիմաստ տառերի ուղղութիւնից, «*լ ղ հ ա*», նշաններ, որոնք ապացոյց են, թէ այս մասում քարերը փոփոխութեան են ենթարկուած: Անկախ մեզանից Թորամանեանն էլ նկատել է, որ այդ աւանդատան հարաւային պատի քարերը նախնական չեն, որով եւ մի ուրիշ գիտնականի տուած ցուցում, թէ այս Բազիլիկայի արձանագրութիւնները յետին դարերից են, ոչ ուշ ԺԳ· դարից, բայց ոչ եկեղեցու շինութեան ժամանակից: Ի հաստատութիւն մեր մտքի կարող է ծառայել եւ մի արձանագրութեան մնացորդ, հնագրական տեսակէտով ոչ վաղ քան ԺԲ·—ԺԳ· դարերը, որ կապ ունի խորանների կամ աւանդատների հետ եւ ընկած է այժմ եկեղեցու արեւելեան կողմը· «*Ես Գրիգոր···* (մի բառի տեղ) / ···(մի բառի տեղ) *ալ եաու շինել գխոր/անսս սուրբ·* (մի բառի տեղ) *ի փրկ/ութիւն հոգւոյ···*»: Այստեղ խօսքը կողքի աւանդատներին միայն կարող է վերաբերել, ափսիդի մնացորդի քարերը դրսից հին են, ափսիդը հինգ կողանի է:

[1] Ղուկասեան հրատ· 1912· 90:

[2] Արձանագրութիւնները գտնւում են արեւմտեան դռնից դէպի հիւսիս եղած կողի վրայ· ընդգծուածները իրար կցուած.

«+ *Կամաւ անմահ եւ* (ե-ի ծայրը կոտրած) *կուսած/ին* ար*քային եւ Ինոք քահ,* միա*բան/եցա սբ ուխտիս եւ տվի գիմ հ* (փոքր գրած) *այրեն/ի այգին որ յԵղիվարդ է սբ զաւր/ավ*ար *ս* եւ *սպասա*ւոր*ք սո*ր*ա հաստա/*տ*եցին ի* տար*ոջն: Զ: աւ*ր *պա*տար*/ագ ի տաւնի յայտնութե: Բ: ինձ:* (Զ կոտրած) *Ա: Մ*արգա*րէին: Ա: Ի* սբ*ունին* (կարդացել եմ այսպէս, երբ *սթ* վատ գրուած Տ չէ) եւ· (կոտրած, մի տառ, հաւանօրէն *ի* պիտի լինէր, որ գրելու ժամանակ է կոտրուել եւ գրիչը կրկնել է հետեւեալ տողի սկզբին) *ի տաւնի տն ընդառաջին: Ա:* Մի նի-*հայրին: Ա:* Նոր *չահին կատ* (տ-ը կոտրած) ար*իչ գրոյս աւրհնին յայ*»:

Սորա տակը·

«*Ես Սիոն* միա*բանեցա սբ զաւրավա*ր*/իս եւ տվի գիմ հաւրն այգին ի սբ ուխ/տս եւ եղբարքս խոստացան ի տարոջն: Բ:* աւ*ր ժ*ամ *ի տաւնի վա*րդ*ավառին: Ա: ինձ* (Զ անկիւնում, մաշուած)*: Ա: իմ հ*աւ*րն*»:

Եկեղեցին ներսից ծեփուած է եւ պատկերագրուած հաւանօրէն ԺԳ· դարում, արձանագրութեան ներսը թափուած բեկորներից եւ ծեփի վրայ դրուած մնացորդներից դատելով: Նկատելի են պատկերների հետքեր, մանաւանդ ափսիդի վրայ, ուր եւ արձանագրութիւնից (ծեփի վրայ դեղով գրուած) կարդացւում է· «*յվանէս եւ զվ*արդ*ան տրուպ ծառաք որ զաշխատեց սբ զե*կեղց*ի*ս *նորոգեց···*»:

[3] Ս· Թէոդորոսի հնարագոյն յիշատակութիւնն ունինք 893 թուին՝ Մաշտոց կաթուղիկոսի կենսագրական յիշատակարանի մէջ, որ գրել է նորա աշակերտ Ստեփանոս կրօնաւորը· «*Սա* (Մաշտոց կաթ·) *էր ի տոհմէ քահանայական ի գեղջէ Եղիվարդայ, ժառանգակցայ մենաստանին, որ անուամբ սրբոյն Թէոդորոսի*»· Յակոբ Թոփճեան· Ցուց· Ձեռագրաց խաչիկ վարդապետի, Ա· Վաղարշ· 1898· 43: Երկրորդ յիշատակարանը (Ձեռ· Երուս· № 149)· գրուած է 1825 թուին Զմիւռնիայի Ս· Ստեփանոս եկեղեցու Յոհան քահանայի ձեռքով, նոտրագիր, թղթի վրայ, Թովմա Մեծոփեցու օրինակից· Թովման էլ իւր կողմից հետեւեալ տեղեկութիւնն է տալիս նախկին օրինակի մասին· «*Եւ օրինակն առաջին գրեալ էր ի սբ ուխտն Եղիվարդու,* ի դուռն սբյ եկեղեցւոյն Թէոդորոսի, *որ էր գրեալ յառաջին օրինակէն ձեռամբ աշակերտաց սբ վարդապետին Սարգսի Գաւթի եւ Ներսէսի յոյժ սխալ: Քս ած ողորմի հոգւոց նոցին ամէն*»:

[4] Հատոր Բ· 126· տես եւ Ալիշան Այրարատ· 197· Շինութեան արձանագրութիւնը գտնւում է դրան մեծ ճակատաքարի վրայ· «*Ի Թվ· ՉԾ· շինեցաւ եկե* դե *ցիս*»· ընդգծուած երկու տառերը փճացած եւ հազիւ մասեր նկատելի: Ներսը, հիւսիսային պատի վրայ, ներքեւի յարկում կայ այսպիսի արձանագրութեան մնացորդ «*սաէ: Նորէց /Թվ· ՌՀէ*»: Ընդգծուածը ոչ Ո է, եւ ոչ որեւէ տառի նման· Ո-ի երկրորդ ձողի վերջաւորութեան կպած է մի հորիզոնական գիծ: Յամենայն դէպս շինութեան թուական լինել կարող չէ, գուցէ հէնց սա է եղել Շահխաթունեանին շփոթեցնողը թուականի վերաբերմամբ:

Ուրիշ արձանագրութիւններ բացի Մանուէլ Գ·ի եւ նորա ծնողների պարոն Աւագի եւ խոնծի արձանագրութիւններից, որոնց մասին խօսք կը լինի յետոյ, եկեղեցու դուրսը եւ ներսը կան հետեւեալ փոքրիկ արձանագրութիւնները:

Դուրսը արեւմտեան պատին, դրան աջ կողմը, մանր տառերով·

ա) «*Թվ·* ՋԽԲ· *Սուքիաս աղթս յշ· քս···* (երկու տառ կոտրած)*վ*»·

բ) Սորա կողքին՝ «*Ղորղաւրէն* եւ *րե* (?) *մահեա Թվ· ՋԽԲ·*

գ) Արեւմտահարաւային անկիւնում երեք փոքր խաչերի տակ·» *Խա···* (*չս բարէ*)· *խաւս Դաւթ*ին եւ *Մամախա*թին»:

դ) Երկրորդ յարկում ներսից՝ արեւելեան պատին՝ մի փորագրած խաչի մօտ· «*Սբ խչս բա*ր*է/խաւս Բաղաղին*»:

ե) Լուսամուտի կողքին· «*սբ խաչս բարէխաւս Իգնատ/իոսին·/ եւ կողակց*ին *Խէլոք խաթուն*ին»:

Նա տալիս է եւ մի ուրիշ թուական, որ գտնւում էր սիւնազարդ կաթողիկէի վերայ, սպիտակ դեղով գըրուած. «ի թուին ՉՀԷ. շինեցաւ»: Այժմ այլ եւս այդ գրուածքը չկայ. գոնէ մենք չգտանք, թէեւ անձամբ փնտռեցինք. կարծում ենք այստեղ եւս տասնաւորի ընթերցանութեան մէջ սխալուած պիտի լինի Շահխաթունեանը, քանի որ ըստ Եղվարդի աւետարանի յիշատակարանի 1318 թուին եկեղեցին կար եւ պատրաստ էր, կոյսերով բնակեցրած, թուականներից որն էլ ընդունելու լինենք, խնդիրը չի փոխւում, եկեղեցին շինուած է Ազիզբէկի ժամանակ: Մենք կ'աւելացնենք նաեւ, որ ԺԴ. դարում կանգուն չէին նոյնիսկ միւս երկու բազիլիկ եկեղեցիները, որովհետեւ յիշատակարանների մէջ խօսք է լինում գիւղամիջի եկեղեցիներից միայն Ս. Յակոբի, Աստուածածնի կամ Զանգակատան մասին, որ ըստ Ներսէս գրչի Ազիզբէկի շինածն է:

Գ.

Եկեղեցին քառակուսի է, եռայարկ, այսինքն բաղկացած է կրկնայարկ եկեղեցիներից եւ գմբէթից: Արեւելեան պատի երկարութիւնն է 7,6 մ. եւ հիւսիսայինը 5,4 մ. +նոր 1,19=6,51 մ.: Երկրորդ յարկը նոյն հիմքերի վերայ փոքր ինչ սեղմուած խաչաձեւ թեւերի համար օր. արեւմտեան թեւի լայնքը դրան բացուածքի (լայնքը 96 սմ. բարձր. 1 մ. 31 սմ.) հետ 5,5 մետր է: Առաջին յարկի դրան ճակատի քարը զարդարուն է քանդակներով, մէջտեղը մի մեծ բոլորակ վարդեակ, զոյգ գծերի հիւսուածքով եւ մարգարտաշարի շրջանակով. կողակալ քարերի երեսը նոյնպէս հարթաքանդակ խաչերից բաղկացած մի զարդ է այն ձեւով, որ մէկի թեւը միւսի թեւն է կազմում, սեղմած քառանկիւնուց կազմուած մի մոտիւ, որ հայ մանրանկարչութեան մէջ եւս սիրուած էր: Դրան աջից (նայողի ձախ) փորագրուած է մի խաչ եւ մօտը գրած «Կանանչին է», ձախ կողմը նման մի ուրիշ խաչ «Հուսամին է» գրութեամբ, իսկ խաչի մէջը «խչս ի քս ած»: Սորա տակը կողակալ քարին կից. «Յիշեցէք զմիաբ/ան սբ Առաքելոցն», որով հաստատում է Ներսէս գրչի տեղեկութիւնը, թէ շէնքը առաքելոց անուան էր նուիրուած:

Երկրորդ յարկը բարձրանում էին երկու կողմից պատի մէջ հաստատուած սանդուղներով, որ դրան առաջ մի փոքրիկ հրապարակ (Площадка) էր կազմում. սանդուխներից մնացել են միայն վերեւի մասերը:

Դրան գլխին ճակատաքարի վերայ՝ կեդրոնում, կազմուած է սրաձեւ մի խորշ, ստալակտիտների քանդակներով, նման մահմեդական-սելջուկեան արուեստի մէջ ընդհանրացած ձեւին. կողաքարերի երեսը զարդարուն է արմաւենիների ցօղունների ոլորապտոյտով եւ տերեւներով, որ վեր բարձրանալով խորշի գլխին՝ բեկուած աղեղ է կազմում. սրա եւ դրան շրջանակ կազմող զարդաքանդակի անկիւններում մի-մի ելնդաւոր վարդեակ, երեսը երկրաչափական եւ արմաւենիկի մոտիւներով քանդակուած: Դրան շրջանակը քառանկիւնի է եւ բաղկացած է հետեւեալ զարդերից. նախ կեղծ կամարով վերջաւորուող կողաքարերին կից ութ անկիւնանի աստղաձեւերի մի շարք, երեսները երկրաչափական զանազանակերպ եւ բուսական զարդերով. ապա մի խորափիտով բաժանուած երկու զուգահեռական ուռուցիկներ (երիզկաձեւ), որոնք վերեւում՝ հորիզոնական կողը կազմելիս՝ տափականում են. սրանց համընթաց է մի նեղ ժապաւէն պալմիետի չքանդակուած թերթերի շարքով եւ վերջապէս ուռուցիկ եւ աւելի ռելիեֆ բեկբեկ գաւազանով մի շղթայակերպ, օղակները երկարաւուն եւ գծերն իրար խաչող եղանակով: Այս շրջանակը երկու կողերից (ուղղահայեաց) եզերում է եւ ամբողջական միութիւն կազմում կողքերի կեղծ աղեղների երիզկաձեւ կամ ուռուցիկ կիսասիւներով, որոնց խոյակները շղթայազարդի հորիզոնականի ուղիղ բարձրութեամբ: Բեկբեկ գաւազանով շղթայակերպ զարդն ապա հորիզոնական կողի ուղիղ մէջտեղից ուղղահայեաց վեր է բարձրանում մինչեւ ճակատի (Giebel) անկիւնը, որպէս մի խաչի միջնազարդ, նախ ութ կողանի մի ֆիգուրի մէջ արմաւենիկի ցօղունների եւ տերեւների ելնդաւոր վարդեակ կազմելով եւ ապա կեդրոնում եւ թեւերի վերջաւորութիւններում խաչաձեւեր, կեդրոնինը աւելի երկար, իր ուղղահայեաց թեւերով յատկապէս ներքեւի մասը: Շղթայակերպից կազմուած այս խաչը եզերուած է մի գեղեցիկ ելնդաւոր քանդակով, որ սկսւում է դրան շրջանակազարդի վերին անկիւններից, քիչ ուղղահայեաց բարձրանալով, հորիզոնական ուղղութիւն ստանում դէպի խաչի միջնազարդը եւ այնուհետեւ նորա շրջագիծը կազմում համապատասխան ձեւեր ստանալով միջնազարդին:

Խաչի խարսխի երկու կողմից, վերջին զարդով կազմուած քառանկիւնու մէջ կռուի են պատրաստուած աջից (նայողի) մի առիւծ եւ ձախից մի ցուլ. վերջինս առաջի ոտներով ծունկի է եկել, գլուխը դէպի ցած խոնարհել եւ եղջիւրներն ուղղել հակառակորդի վերայ յարձակուելու: Առիւծը նոյնպէս առաջ է շարժւում, բայց առանց րոպէի համապատասխան կենդանի արտայայտութեան:

գ) Լուսամուտի միւս կողմից, խաչի գլխին. «Խաչս Վախախին»:

է) Բեմից աջ, արեւելեան պատին խաչի մօտ. «Խչս Ղանբարին»:

ը) Հարաւային պատին. «Սր խաչ բարէխաւս», այլեւս ոչինչ. խաչը կոտրուած:

թ) Արեւմտեան պատին, ձախ. «Խաչս գս գր ուղէին» (ընդգծուածը կասկածելի):

ժ) Ակոբ ՀԲ (Հաբեղայ?).

ժա) «Խաչս (չ-ի գլխիկի մէջ ուն) Դւ ԹՆ (Դաւթին) է Բահար մինիք (?):

Նոյն խաչի հորիզոնական թեւերի վրայ ձախից Աստուածածնի բարձրաքանդակն է Յիսուս մանուկը ձախ ձեռքով գրկած, իսկ աջով նրա փորը բռնած։ Մայրը բոլորակ լուսոյ պսակ ունի, գլխին լաչակ եւ ծալքերով վերնազգեստ· ներքնազգեստը նոյնպէս ծալքերով է, ոտները չեն երեւում։ Յիսուս մանկան պսակի բոլորակը խաչաձեւ ունի վերան, աջով խաչակնքում է, իսկ ձախով աւետարան է բռնել, հագուստը մինչեւ ոտները հասնող եւ ծալքերով։ Աստուածածնի, մասամբ եւս մանկան հասակի համաչափութիւն չէ պահուած։ Իսկ Աստուածածնի գրկող ձեռքը այնքան ցած է ընկած, որ կարծես մօր յետեւը չոքած մի ուրիշ մարդու ձեռք է· մանկան ձեռքը նոյնքան մեծ է, գրեթէ, որքան մօրը, ոտները համեմատաբար աւելի փոքր ձեռքերից· աջ կողմից՝ կանգնածի տպաւորութիւն է անում, ձախից՝ նստածի։ Այս բոլորը քանդակագործի գեղարուեստական անկարողութիւնն են ցոյց տալիս պատկերաւորող արուեստի մէջ։

Խաչի հորիզոնական միւս թեւի վերայ բոլորակ լուսոյ պսակով, բայց բաց գլխով, զգեստաւորուած եւ ձեռքերը աղօթողի դիրքով առաջ մեկնած մի մարդկային պատկեր է, ուսերին ձգուած եմիփորոնից երեւում է, որ եպիսկոպոս է կամ Յակոբոս առաքեալը, որի անունով կոչւում էր շէնքը։ Առաջին դէպքում պէտք է նոյնացնել Բջնոյ անյայտ անունով եպիսկոպոսի հետ, որի թեմն էր կազմում եւ Եղվարդը, բայց աւելի հաւանական է առաջինը· քանի որ սովորութիւն էր քրիստոնէական եկեղեցիների մէջ արտաքին պատի վերայ՝ աչքի ընկնող տեղում՝ ցուցանելի դարձնել եկեղեցու անուանակոչութիւնը նոյն սուրբի բարձրաքանդակով կամ պատկերով։ Առաքեալներին նկարել եպիսկոպոսական զգեստով բոլորովին հազուագիւտ չէր հայ մանրանկարչութեան եւ պատկերագրութեան մէջ, որից ապացոյցներ ունինք ԺԴ· դարու սկզբից եւ յետոյ։

Երկրորդ յարկի դրան շրջանակազարդին կից երկու կողմից կեղծ սիւների եւ նրանց խոյակների վերայ բարձրանում է մի մի սուր բեկուած կեղծ աղեղ, երեսները արմաւենիկի տերեւների եւ ցօղունների հիւսկէն քանդակով· խոյակի երեսը հարթ, բայց պատից դուրս ընկած երկու անկիւնները ստալակտիտի մի մի պարզ թեւով, վերեւի կամարակալ մասը տափակ, ուրիշ խօսքով ԺԳ· դարու ժամատների սիւների եւ կիսասիւների պարզ խոյակների ձեւով։

Այն բեկբեկ գաւազանից կազմուած շղթայաձեւը, որ տեսանք իբրեւ երկրորդ յարկի դրան շրջանակազարդ եւ ապա խաչի միջնազարդ, կազմում է առաջին եւ երկրորդ յարկերի արտաքին բաժանման գարնէզ կամ գօտի, բոլորելով հիւսիսային արեւելեան եւ հարաւային պատերը եւ նրանց երկրորդ յարկի լուսամուտների շրջանակը կազմում։ Նման կեղծ, երեսը քանդակուած աղեղներ կիսասիւների եւ նրանց խոյակների վերայ կրկնւում են հիւսիսային եւ արեւելեան պատերին, կողքերինը նեղ եւ աւելի ցած, միջինը բարձր եւ լայն։ Հարաւային պատի ձեւակերպութիւնը աւելի նման է արեւմտեանին, միայն դրան փոխարէն այստեղ լուսամուտն է բռնում· միջին կեղծ սիւների վերայ բարձրանում է պատի մակերեւոյթից քիչ դուրս ընկած, ուղղանկիւն կազմող զիկզակներով երկու կողմից վեր բարձրացող եւ հորիզոնական ուղղութեամբ վերջաւորուող մի զարդ, որի ուղղահայեաց անկիւնները մէկը միւսից կրկնակի բարձրութիւն ունին ներքեւից դէպի վեր նկատելով, երեսի քանդակը կրկնաշար գնդակներից չորս կէտերի մէջ։ Լուսամուտի շրջանակազարդը շէնքի յարկերը բաժանող շղթայաձեւն է, որ պատի կեդրոնից նախ վեր է բարձրանում՝ հիւսուածք կազմելով, ապա քառանկիւնու ձեւով շրջափակում լուսամուտի կողքերը, միայն վերին հորիզոնական կողը անկիւններ կազմելուց յետոյ՝ առանց միանալու բարձրանում եւ լուսամուտաձեւ մի աղեղ կազմում· սրա միջին տարածութեան վերայ քանդակուած է ելնդաւոր մի արծիւ, մագիլներում խոյ բռնած· մակերեւոյթը քանդակուած· աղեղի տակ եղած կիսաշրջանը նոյնպէս զարդարուն է։ Լուսամուտի անմիջական շրջանակը չքանդակուած ականթի թերթերի շարք է, կցուած երկու խորափիտներից դուրս ընկած երիշկաձեւ եւ ապա եզերուած խոր ընկած կիսաստղաձեւերի շարքով։ Շատ հետաքրքրական է լուսամուտի կազմութիւնը, մի սիւնով երկուսի բաժանուած՝ ռոմանական արուեստին նմանութիւն բերող ձեւով, խարիսխը, բուն սիւնը, խոյակը իր մասերով եւ նոյնիսկ ճակատը քանդակազարդուած։ Խոյակի ճակատի վերայ գրուած է «վդ Տահիկ», որ ճարտարապետի անունն է։ Լուսամուտի այս ամբողջական զարդի երկու կողմից նոյն կեղծ սիւների վերայ կապուած են երեսը քանդակազարդ բեկուած աղեղներ, նրանց տակը ելնդաւոր զարդարուն եւ կիսագնդով, ինչպէս արեւմտեան ճակատին տեսանք։

Հիւսիսային պատին նոյն շղթայաձեւը, որ երկու յարկերը բաժանող գարնէզը կամ գօտին էր կազմում, բարձրանում է մէջտեղից դէպի վեր նախ վեցանկիւնու մէջ ելնդաւոր վարդեակ եւ ապա լուսամուտի քառանկիւնի շրջանակի արտաքին մասը կազմում։ Լուսամուտի անմիջական շրջանակը ութ թեւանի երկրաչափական մի ձեւ է, չորսը համեմատաբար մեծ եւ ձուաձեւ, իսկ դրանց միջինները փոքր և անկիւնաւոր, սրանք էլ շրջանակուած տափակ մի քառանկիւնի ելնդաւորով, ներսի անկիւններում մի մի վարդեակ։ Լուսամուտի գլխին թեւաւոր, մեծ եղջիւրներով մի վայրի այծ կայ, իսկ նրանից էլ բարձր մի մեծ, զարդարուն վարդեակ։ Լուսամուտը իւր շրջանակազարդով, միջին, մեծ կեղծ աղեղի կեդրոնն է բռնում։

Արեւելեան պատի զարդարանքները համեմատաբար պարզ են· այստեղ եւս նոյն շղթայաձեւը յարկերը բաժանող գօտուց վեր է բարձրանում, եւ լուսամուտի նոյնպիսի շրջանակ կազմում, ինչպէս հիւսիսային պատին էր, միայն առանց ներսի կրկնազարդին. լուսամուտի գլխին թեւաւոր քօչի փոխարէն բծաւոր վագրը յարձակուել է եղջերուի վերայ, կեղծ աղեղների դասաւորութիւնն ու զարդարանքը յար եւ նման հիւսիսային պատին:

Լուսամուտներ ունին եւ ներքեւի յարկի պատերը, հիւսիսայինն ու հարաւայինը իրենց զարդարանքի արտաքին ձեւակերպութեամբ հաւասարակող խաչեր, ներքեւի թեւի վերայ նեղ ու փոքրիկ լուսամուտը. խաչերը եզերուած են բոլորաձեւ ուռուցիկներով կամ երիչկաձեւերով, հիւսիսայինը միայն կրկնակի, մէկը միւսի մէջ, երկուսի միջի տարածութիւնն էլ քանդակազարդուած, երկրաչափական արտաքուստ ութ թեւանի ձեւով, իսկ կեդրոնում, հինգ կողանի պրիզմայով, դասաւորուած այն ձեւով, որ մէկի թեւը միւսի մասն է կազմում, որ արեւելեան լուսամուտի վանդակաձեւեր են: Հարաւային լուսամուտի խաչաձեւ շրջանակի միջին տարածութիւնը ծածկուած է ամբողջապէս հորիզոնական եւ ուղղահայեաց շարքերով իրար կպած, եւ զոյգ, ոլորապտոյտ գծերից կազմուած խաչերով. անկիւններում մի մի ուռուցիկ ելնդաւոր վարդեակ: Տարբեր ձեւակերպութիւն ունին արեւելեան պատի լուսամուտները, որ երեք են, նեղ եւ փոքրիկ. երկուսը կողքերից, որոնց պսակները վերեւում աղեղնաձեւ եւ ներքեւում հորիզոնական թեւերով, վերաները մի մի փոքրիկ կիսագնդով: Միջին լուսամուտը իւր մեծութեամբ նման հարաւային և հիւսիսային լուսամուտներին, բայց շրջանակը արկղազարդ (kassettenmuster) է, չորս շերտերից եւ համապատասխան խորագծերից բաղկացած, ներքեւից մինչեւ յատակը իջնող զոյգ երիչկաձեւերով, որոնք եւ անպայման պատուանդան կամ խարիսխ ունէին, իսկ վերեւից բարձրանում են, գրեթէ, մինչեւ յարկերը բաժանող գօտին եւ նման վերջաւորութիւն կազմում, միջին մասում մի մի բոլորակ կանթով, կեդրոններում զարդարուն ելնդաւոր վարդեակով:

Տանիքը խաչաձեւ է, երկրորդ յարկի թեւերի համեմատ, վերին մասում եռանկիւնաձեւ վերջաւորութեամբ կամ ճակատով (Giebel). տանիքին կից մի հարթ պալմիետի զարդաշարք բոլորում է եկեղեցու բոլոր ճակատները եւ անկիւնները. նորա տակը մի երկրորդ ժապաւէն, բաղկացած ութանկիւն աստղաձեւերի շարքից, երեսները մանր ու գեղեցիկ երկրաչափական հիւսկէն բազմատեսակ ձեւերով, զուգահեռաբար ընթանում է ամէն կողմից. ճակատների ներքեւի անկիւններում դուրս են ընկած մի մի եռանկիւններ, երեսները զարդարուած պալմիետի եւ նրա ցօղունների սիրուն քանդակներով. բուն անկիւնաքարերի երեսները նոյնպէս զարդարուն պալմիետի կամ երկրաչափական հիւսկէն ձեւերով, իսկ նրանց ազատ անկիւններից պալմիետի թերթեր կպած, ճակատների պատերի անկիւնները անմիջապէս տանիքի շրթունքների տակ, եզերուած են մի մի երիչկաձեւով եւ պալմիետի տերեւների զուգահեռաբար ընթացող շարքով:

Տանիքի թեւերի մէջ, չորս անկիւններում, դրսից կպած են գմբեթի հիմքի եռանկիւնաձեւ ծածկոյթները:

Խաչաձեւ տանիքի կեդրոնում բարձրանում է բոլորաձեւ գմբէթի ներքեւի մասը, վերան շարուած 12 ազատ սիւներով. (կիսով չափ շարուած պատը սիւների մէջ յետին ժամանակի գործ է՝ պաշտպանուելու համար). խոյակները կապուած են իրար կամարներով, որոնց վերայ շարունակւում է թմբուկի վերին մասը մինչեւ վեղարը: Գմբէթի ներքեւի մասը գօտեւորած է եռագիծ զուգահեռաբար բոլորող երիչկաձեւերով եւ շղթայակերպի զարդով, վերեւից եզերուած բարակ եղեգնիկով, սիւների խարիսխների տակը: Սիւների խարիսխներն ու խոյակները ձեւակերպուած են ԺԳ. դարու գաւիթների սիւների նմանութեամբ. խարիսխները չորս կողանի, հիմքում լայն, որ հետզհետէ նեղանում է եւ խորափիտներով եզերուած օղակով կամ մանեակով վերջանում. բունը բոլորակ է եւ ամբողջական մի քարից, իսկ խոյակի ներքեւի մասը բոլորակ եւ անկիւնաւոր օղակաւորուած, եռակի իրար վերայ, հետզհետէ լայնանալով, բուն թակաղակը չորս երեսանի, տափակ, լայնանանալով վարից վեր, իսկ անկիւնները ստալակտիտով ձեւակերպուած: Սիւներն իրար կապող կամարների արտաքին ճակատները զարդարուած են երկատիճան հարթ, կեղծ աղեղներով, որոնց հիմքերն իջնում են խոյակների վրայ. վեղարի եւ այս աղեղների միջին տարածութիւնը զարդարուած է երկարաւուն օղակներով շղթայի երկու շարքով: Բուն վեղարի տակ, թմբուկի վերին ծայրը եզերուած է եռագիծ, երիչկաձեւ զարնէզով կամ պսակով, իսկ սրա եւ շղթայակերպ գօտու միջին տարածութիւնը բոլորակի ծածկուած է գունազարդ աղիւսներով: Բուն վեղարը բոլորաձեւ է եւ սրածայր. խաչի խնձորի տակից ուռուցիկ ճիպոտիկներով մակերեւոյթը ճեղքաւորուած վերից վար, ականահաճոյ դարձնելով այն եւ դիւրացնելով ջրի հոսանքը:

Ներսից ներքեւի յարկը միանգամայն զուրկ է զարդարանքից. արեւելեան պատը ծածկուած է բոլորովին եւ սեղան չինուած եւ ոչ ոք տեղեկութիւն չտուաւ, թէ այնտեղ որեւէ քանդակ եղե՞լ է, թէ ոչ: Ներսէս դպիրը իւր յիշատակարանի մէջ յայտնում է, թէ «Նաղաշուք ձեւացուցին զպատկեր Ամենափրկչին եւ զմաւրն իւրոյ ածածնին եւ զառաքելոց եւ զմարգարէից», որից պէտք է եզրակացնել իսկապէս, թէ պատերը ծածկուած էին գեղագործ նկարներով: Սակայն որմանկարչութեան ոչ մի հետք չի նկատւում ոչ ներքեւի եւ ոչ վերեւի յարկում: «Նաղաշութիւն» բառը այստեղ չենք կարող շփոթել բարձրաքանդակ պատկերագրութեան հետ, որովհետեւ չէնքի վերայ մնացած բարձրաքանդակները, որոնց նկարագրութիւնը տեսանք վերեւ, համապատասխան չեն Ներսէսի յիշած նկարներին, եթէ նոյն իսկ «զպատկեր Ամենափրկչին եւ զմաւրն իւրոյ ածածնին» *խօսքերը համարենք Աստուածածնի Յիսուս մանուկը գրկին բարձրաքանդակի համար ասուած․ այստեղ չկան ուրիշ առաքեալների եւ մարգարէների պատկերներ․ ուստի եւ հաւանական է, որ Ներսէսի խօսքերը ուրիշ նիւթի վերայ նկարուած պատկերների մասին պիտի լինի:*

Երկրորդ յարկը ներսից չունի որեւէ պատկերաքանդակ, բայց շատ ճոխ զարդարուած է գմբեթի հիմք կամ հանդիստ կազմող քառանկիւնու մակերեւոյթը, որ հաստատուած է չորս պատերի կեղծ աղեղների եւ նրանց պանդանտիւների վերայ, որ հետզհետէ բոլորաձեւ է դառնում, թմբուկի ձագարը կազմելով:

Դ.

Եկեղեցին, ինչպէս տեսանք, մեծ չէ, բայց հաստատուն եւ գեղեցիկ իւր արտաքին զարդարանքներով, որ ծածկում են հաւասարապէս չորս արտաքին պատերը: Այս կողմից, կարելի է ասել, մի բացառիկ երեւոյթ է մեր ճարտարապետութեան պատմութեան մէջ, եթէ նկատի չունենանք Էջմիածնի զանգակատունը, որ իւր զարդարանքներով մասամբ հետեւողութիւն է Եղվարդի եկեղեցուն: Ճարտարապետ «վդ Շահիկ»*-ը իւր ուշադրութիւնը կեդրոնացրել է արտաքին զարդարանքների ճոխութեան վերայ եւ դորանով կամեցել գեղարուեստական պահանջին լրումն տալ:*

Արտաքին զարդարանքներից զուրկ չեն հին եկեղեցիները, բայց այնտեղ գեղեցկութիւնն արտայայտուած է ամբողջութեան մէջ, որ տաք է, կենդանի, հոգուդ հետ խօսող հէնց շէնքը եզերող ընդհանուր ազնիւ գծերով. այնտեղ պատերն անգամ շունչ ունին, ինչպէս Արուճի ս. Գրիգորը, Թալինի մայր եկեղեցին, կամ Հռիփսիմէն, նոյնիսկ աւելի ուշ ժամանակի Անիի մայր եկեղեցին կամ փոքրիկ Ապուղամրենցը: ԺԳ. դարու վերածնութիւնը, որքան եւ հոյակապ շէնքեր է ստեղծել, քանդակներով, բարձրաքանդակներով զարդարուն, գեղարուեստական հոգին չէ ճախրում այնպէս ազատ, համարձակ եւ անպատասխանատու հաշիւների առաջ, որ յատուկ է մեր դասական շրջանի ճարտարապետութեանը: Անշուշտ այդ հոգին չէ մեռել եւ ԺԳ. դարում, որ Յոհաննայ վանքի նման մի գլուխ-գործոց է ստեղծել, բայց այստեղ եւս նկատելի է արտաքինի վրայ բեւեռուած այդ ուշադրութիւնը, որ արդէն գեղարուեստական կենդանութեան բարձունքներից խոնարհելու նշաններն են: Այս կողմից Շահիկի ստեղծագործութիւնը բնորոշ է. նա տաղանդաւոր արուեստագէտ է, բայց իւր դարու որդին[1]:

Մենք խուսափում ենք զարդարանքների մօտիւների մանրամասնութիւնների մէջ մտնել եւ առհասարակ կանգ առնել ճարտարապետական վերլուծութիւնների վրայ, դժուար համարելով եւ մեծ չափով անհասկանալի առանց պատկերների, սակայն ընդհանուր կերպով հարկ ենք համարում շեշտել, որ եկեղեցու չորս երեսը ծածկող դեկորատիւ աղեղները, միջինը բարձր եւ կողքերին մի զոյգ աւելի նեղ եւ ցած, բոլորակ կեղծ սիւների վրայ հաստատուած, ծագում են Ժ. դարից, ինչպէս Անիի մայր եկեղեցու, Մարմաշէնի վրայ ենք տեսնում, բայց ընդհանրանում են եւ աղեղներն իսկ երբեմն իրենց աղեղնամէջերով (անտրվոլյաներով), զարդարուն դառնում ԺԳ. դարում, որի բնորոշ օրինակ կարող է լինել Անիի Լուսաւորիչը, իսկ այստեղ շատ աւելի մեծ չափերով: Արեւմտեան եւ հարաւային պատերը զանազանւում են միւսներից նրանով, որ բոլորակ աղեղները միայն երկու կողմից են, իսկ միջինը ուղղանկիւն վերեւի մասում, բայց սրա պարզ նախատիպ կարող է համարուել Անիի մայր եկեղեցու արեւմտեան պատը, իսկ աւելի մօտ ժամանակով Կեչառիսի Վասակաշէն կաթուղիկէն 1214 թուից: Ուշադրութեան արժանի է այստեղ նաեւ զոյգ լուսամուտների գոյութիւնը հարաւային պատին, իրարից բաժանուած մի սիւնով, որի խոյակի վերայ հանգչում են նրանց կամարները, ռոմանական արուեստի աչքի ընկնող երեւոյթներից մէկը: Թէեւ «ռոմանական» կոչուած լուսամուտների ծագումը Հայաստանում հին է, Ե. Զ. դարու բազիլիկ եկեղեցիների վերայ նկատելի (Տիկորի, Աշտարակի Ծիրանաւորի), բայց այս ձեւի եղանակաւորութիւններով ԺԳ. դարում, Հանաւանքի գաւթում:

Օրնամենտներից ոչ մէկը չկայ, որի օրինակը չունենանք նախընթաց դարերի հայ ճարտարապետութեան մէջ, բայց ամբողջ շարադրութիւնն ու դասաւորութիւնը, քանդակը իւրատեսակ եւ վարժ աչքի համար մի նոր սկզբնաւորութեան կամ հնի փոփոխութեան նշան: Սրածայր կամարների գործածութիւնը, ստալակտիտները նոյնպէս ունենք նախընթաց դարում, յատկապէս վերջինը շատ է տարածուած ԺԳ. դարու գաւիթների շէնքերում. իսկ մանրանկարչութեան մէջ եռամասնեայ կամարի մի օրինակ ունենք նոյնիսկ 1066 թուից, նոյնպէս եւ դրան որպէս շրջանակ ծառայող աստղաձեւին մօտեցող քանդակազարդը և նորա շարադրութիւնը, բայց այստեղ արդէն այսպէս կոչուած Սելջուկեան ազդեցութեամբ յառաջ եկած պարսկական միջնադարեան արուեստն է յիշեցնում: Դորա ծագումն ու փոխազդեցութիւնը լուսաբանելի խնդիր է, մեզ համար ներկայումս կարեւորն այն է, որ Շահիկի այս զանգակատունը իւր որոշ զարդերով այդ նոր գծերի խտացումն է մեր արուեստի պատմութեան մէջ, որ նկատելի է դառնում ապա բանաստեղծութեան եւ մանրանկարչութեան մէջ: Պռոշի վիմափոր տաճարի գմբէթի զարդարանքները ներսից, կամ գաւթի արտաքին դրան ճակատազարդը իրենց ոճով անսովոր են ժամանակի համար, ինչպէս մեր զանգակատան երկրորդ յարկի արեւմտեան դրան զարդաքանդակը իւր սրածայր, սելջուկեան արուեստին շատ մօտեցող ձեւակերպութեամբ, որի փոփոխակները նկատւում են ԺԳ. դարու ճարտարապետութեան մէջ, ինչպէս Արարանի Եղիպատրուշ (Տամջլու) գիւղի, Վաչուտեանց ժամանակի գաւթի արեւմտեան դուռը: Առաստաղների զարդարանքները ստալակտիտներով կամ երկրաչափական գծերով յատուկ են ԺԳ. դարու գաւիթներին, բայց որ տաճարի ներսը, գմբէթի եւ կամարների մէջ եղած տարածութիւնը քանդակազարդուի, նորութիւն է այստեղ, թէեւ իւր ձեւակերպութեամբ նման է Սաղմոսավանքի գաւթի գմբէթի հիմք կազմող մասերին, ստալակտիտի քանդակ է նաեւ երկրորդ յարկի ափսիդի խորշը, այն էլ իսլամական արուեստը յիշեցնող ձեւով: Հարաւային պատի վերայ լուսամուտի գլխին թեւատարած արծիւը մագիլներում բռնած խոյով նորութիւն չէ. ԺԳ. դարում շատ յաճախ կրկնուած մի մոտիւ է այն, բայց նորութիւն է իւր քանդակման եղանակով. զարդարուած է արծուի ամբողջ մարմինը. արեւելեան պատին բծաւոր վագրի յարձակումը իւր որսի վերայ դարձեալ պարսկական միջնադարեան արուեստին է մօտենում: Իւրատեսակ է բոլորովին հիւսիսային պատին թեւաւոր քօշը, որի փոփոխակն առանց թեւերի ունենք դարձեալ Գեղարդի վիմափորում:

---

[1] Զարգացման նոյն ընթացքը տեսնում ենք խաչքարերի արուեստի մէջ. մինչդեռ Ժ—ԺԲ. դարերի խաչքարերը տպաւորիչ են իրենց համեմատական պարզութեամբ, քանդակների ազնիւ եւ խոշոր գծերով, ԺԳ. դարի սկզբներից նոքա նրբանում են եւ խաչքարի երեսն ամբողջապէս ծածկւում քանդակներով: Այսպիսի խաչքարերի ծաղկման ամենալաւ շրջանը ԺԳ. դարու երկրորդ կէսն է, ԺԴ.-ի սկիզբը: Ամաղուի վանքում ունենք այդ տեսակի հրաշալիքներ, կարծես գրչով մագաղաթի վրայ գծագրած են քանդակները եւ ոչ քարի վրայ **փորագրած**:

Կ'աւելացնեմ մի շատ կարեւոր հանգամանք եւս. այդ նկարէն աղիւսների գործածութիւնն է սոյն վանքի գմբեթի թմբուկի շուրջը, ինչպէս տեսանք վերեւ, որոնց զարդարանքները յիշեցնում են պարսկական նման արուեստը: Այս արուեստը անծանօթ չէ եղել նախկին հայերին. Անիի պատկերաւոր խեցեղէնների մէջ կային ընտիր մնացորդներ տեղական բնոյթով, թէեւ, կարծում ենք ոչ տեղական ծագումով. Անիի պարիսպների վերայ եւս կան հետքեր: Նոյնիսկ Փոքր-Ասիայի քաղաքների հայերի մէջ, իմ ունեցած տեղեկութեամբ, այդ արուեստը կենդանի էր մինչեւ վերջերը. Երուսաղէմի Ս. Յակոբեանց տաճարին կից էջմիածնի անունով մատուռի պատերի մօտ մի սաժէն բարձրութեամբ ծածկուած են այդպիսի նկարէն աղիւսներով, որոնք զարդարանքներից զատ ունին պատկերներ, հայերէն արձանագրութիւններ «ռճկը» (1719) կամ դորան մօտ թուականներով: Պատկերները կրում են պարսկական, մասամբ չինական դրոշմ[1]), բայց պատրաստուած են եւ նուիրուած Փոքր-Ասիայի հայերի ձեռքով (Կուտինա, Քէօթահիա), բայց Արեւելեան Հայաստանում եւ առհասարակ հին ժամանակներից մնացած միակ երեւոյթն է Եղվարդինը, ուստի եւ շատ թանկարժէք մեր արուեստի պատմութեան համար:

Ինչ որ ասացինք օրնամենտացիայի, արտաքին զարդարանքների համար, աւելին կ'ասենք ճարտարապետական ամբողջութեան մասին. որքան եւ նրա բաղկացուցիչ մասերը գտնենք աւելի հին ժամանակներում, շէնքի ամբողջութիւնն ու նպատակը նորութիւն էր ժամանակի ճարտարապետութեան մէջ: Շէնքը եռայարկ է, յամենայն դէպս կրկնայարկ, եթէ գմբէթը չհաշուենք. չյիշելով Թորամանեանցի վերակազմած Զուարթնոցը, Հովուի եկեղեցին կամ սրանից էլ առաջ բազիլիկ եկեղեցիների արեւմտեան անկիւնների սենեակների վերնայարկերը (Երերոյք), որոնք այլ բնոյթ եւ այլ նպատակ են ունեցել, եկեղեցական կրկնայարկ շէնքերի ամենավաղ յիշատակութիւն ունինք Ժ. դարու առաջին քառորդից. Արծրունի Գագիկ իշխանը Վանտոսպում շինում է Սիոնի եկեղեցին, «եւ յաջմէ սեղանոյն շինեալ ընդ նովին հիմամբ ի տեղի յիշատակարանի խաչելութիւն տեառն Գողգոթայ տեղւոջ, եւ ի վերայ նորա շինեաց եկեղեցի զվերնատունն խորհրդական խորհրդածութեան աւանդութեան նորոյ ուխտի: Իսկ ի յահեակ կոյս սեղանոյն շինեաց եկեղեցի ի յիշատակ յարութեանն Քրիստոսի. եւ ի վերայ նորա շինեաց եկեղեցի զհամբարձմանն...»[2]): Սեղանի երկու կողմից եկեղեցիների շինութեան ուրիշ տեղեկութիւններ եւս ունինք այդ ժամանակից[3]), տարաբաղդաբար առանց բաւարար ցուցմունքների շինուածքի եւ նորա կազմութեան մասին: Արդեօ՞ք դրանք աւանդատների երկրորդ յարկերն են, շատ ընդհանրացած Զաքարեանց շրջանի եկեղեցիներում, թէ գմբեթաւոր շէնքեր, ինչպէս Հոռոմոսի մօտ եղած «ղուշանները» կամ բուն վանքին հիւսիսից կից կրկնայարկ շէնքերը, ինչպէս եւ Տամջլուի եւ Տեղերի վանքերին կից գմբեթաւոր կրկնայարկները: Հոռոմոսի ղուշանները հաւանօրէն ԺԱ. դարու գործեր են, իսկ վերջին երկուսը Վաչուտեանների շինած՝ ԺԳ. դարու առաջին կիսում: Եթէ սրանց մարմինը միտք կարող էր տալ կրկնայարկ եկեղեցի շինել, բոլորովին տարբեր են նրանց գմբէթները եւ երկրորդ յարկը բարձրանալու սանդուղների ձեւն ու կազմութիւնը, զարդարանքների ոճը: Աւելի մօտ է Ազիզբէկի շէնքին Հաղբատի Համազասպեան զանգակատունը, որի մարմինը չորս անկիւնանի է եւ գմբէթը սիւների վերայ հաստատուած, բայց որը չունի արեւմտեան պատին երկու կողմից հաղցրած սանդուղները եւ երկրորդ յարկի մուտքի առաջ փոքրիկ հրապարակը (Площадка) եւ դրան եւ նորա շրջանակ զարդի այն ձեւակերպութիւնը, որ յատուկ է միայն այս եւ սրա նման շէնքերին:

---

[1]) Նման երեւոյթ նկատւում է Պարսից ԺԶ. եւ ԺԷ. դարերի յախճապակեայ անօթների վերայ, չինացի վարպետների ազդեցութեան հետեւանքով, որ գործում էին Իսպահանում. Старые годы. Окт. 1913. Յօդուած А. А. Половцовъ-ի Замѣтки о мусульманскомъ Искусствѣ եր. 10:

[2]) Թովմա Արծրունի, Թիֆլիս, 1916, 405:

[3]) Անդ. 409 եւ 412:

Եւ յիրաւի, այս շէնքերի ծագումն ու զարգացումը կապուած էր հայ եկեղեցու զանգակների գործածութեան սովորութեան հետ: Քրիստոնէական եկեղեցու մէջ զանգերի գործածութիւնն սկսւում է Է. դարու սկզբներից, այն էլ Արեւմուտքում Գրիգոր մեծի օրով: Ը. դարում է միայն ընդհանրանում Արեւմուտքում: Արեւելքում զանգակների գործածութիւնն սկսում է շատ աւելի ուշ, Թ. դարու կէսերին՝ Միքայէլ կամ Բարսեղ Ա. կայսրների ժամանակ, երբ Վենետիկի դուքս Ուրսուսը նուէր է ուղարկում 12 զանգ, որոնց համար եւ յատուկ շէնք է շինւում Ս. Սոֆիայի կից[1]): Բնականաբար Հայաստանում պէտք է սկսուէր շատ աւելի ուշ, քանի զօրեղ էր արաբների ազդեցութիւնը: Նարեկացու ժամանակ գործածւում է փայտի կոչնակը զանգահարութեան փոխարէն, եւ նա ունի յայտնի բացատրական աղօթք այդ մասին[2]), թէպէտ յայտնի էր նրան պղնձի զանգակը, բայց ոչ ժամապաշտութեան համար գործադրուած: Բիւզանդական ազդեցութիւնը Բագրատունեաց ժամանակ սկսում է իւր նշանները ցոյց տալ միայն ԺԱ. դարում, իսկ այնուհետեւ Սելջուկեան տիրապետութեան ժամանակ անկարելի էր այդ նորամուծութիւնը, որի հետեւանքով ճարտարապետական նոր շէնքի կարիք յառաջ գար: Ապա ուրեմն զանգակների գործածութիւնը հաւանօրէն կապուած էր ԺԲ.ի վերջում Հայաստանի քաղաքական վերածնութեան հետ, երբ Զաքարեան երկու եղբայրների շնորհիւ Սելջուկները վտարուեցան Հայաստանից: Առաջին զանգակատունը, որի մասին տեղեկութիւն ունինք, այդ Հաղբատի զանգակատունն է 1245 թուին շինուած, սորա նման է Սանահնինը, բայց առանց թուականի, սակայն նա առաջինը չէ, որովհետեւ 1211 թուից ունինք մի մանրանկար՝ որ մեր զանգակատուն կոչուած շէնքերի նախատիպ կարող է լինել, իւր կրկնայարկ մարմնով եւ ազատ սիւների վրայ հանգչող գմբէթով[3]):

Զանգակատների ծագումն այսպէս պարզելով հանդերձ՝ հայ ճարտարապետութեան մէջ չունինք այս տիպի եկեղեցիների ճիշտ օրինակը ԺԳ. դարում. սա մի ստեղծագործութիւն է ԺԴ. դարու առաջին տարիների եւ առաջնութեան պատիւը, ժամանակի եւ ոչ պակաս նաեւ գեղարուեստական հետաքրքրութեան տեսակէտով պատկանում է սրան: Մենք տեսանք, որ նա հիմնուած է 1301 թուին. մի եկեղեցի է շինել Տարսայիճ Օրբէլեանի թոռը Ջալալ իշխան իւր Գոնցա իշխանուհու հետ, որի զանգակատունն էլ նոյն տիպի է[4]), բայց աւելի հասարակ, եւ որ կարեւորն է, հաւանօրէն աւելի ուշ 1301–1346 թ. թ. մէջ, որովհետեւ շինուած է ոչ կից 1301 թ. տաճարին, այլ մի ուրիշ շէնքի, որի վերայ արձանագրութիւն ունի նրանց որդին Էլիկում 1346 թ., առանց սանդուղների եւ արեւմտեան դրան ու դրանց հետ կապուած ճակատազարդերի. մուտքը հաւանօրէն եղել է ներսից: Կարբու զանգակատունը շինուել է 1338 թուին, շատ աւելի մի հասարակ գործ, ամենահին արձանագրութիւնը Քուրդ Անբերդեցունն է, որդի Տայիրին, որ կիսատ է մնացած եւ հաւանօրէն հէնց նա ինքն էր շինողը: 1339 թ. առաջ Ամաղու Բուրթէլաշէն եկեղեցին աւելի մեծ, նոյնպէս զարդարուն, գեղեցիկ, յատկապէս իւր արեւմտեան ճակատով. 1325 թուին պիտի շինուած լինի Գետարգելը եւ 1346 թուին Գէոյքիլիսէն. բոլորն էլ կրկնայարկ, ունեցել են եւ գմբէթ, բայց թափուած: Հանավանքի դաւթի (1258 թ.) տանիքին եւս կայ ազատ սիւների վրայ բարձրացող մի գմբէթ, որ հաւանօրէն զանգակների համար էր, եւ միայն այս մասով համեմատելի վերոյիշեալ շէնքերի հետ: Ծահիկի գործը մեզ համար թանկագին է եւ այն տեսակէտով, որ նա միակն է ամբողջութեամբ մեզ հասած այս տեսակի շէնքերի մէջ:

Ե.

Ազիզբէկի երկրորդ կարեւոր գործը Եղվարդի եւ նրա շրջակայքի ոռոգման գործն է. մեր մատենագրութեան մէջ հազուագիւտ են ոռոգման վերաբերեալ տեղեկութիւնները, մինչդեռ ջրանցքների հետքերը ցոյց են տալիս, թէ ամենավաղ ժամանակներից նոքա երկրի իշխանաւորների հոգածութեան առարկան են եղել: Կարելի է ասել, թէ մեր երկրի, յատկապէս Արարատեան լայնածաւալ դաշտերի եւ լեռնալանջերի ոռոգման հետ էր կապուած քաղաքակրթական կեանքի ծաղկումն ու անկումը: Դեռ եւս ուրարտական շրջանի բեւեռաձեւ արձանագրութիւնները խօսում են ջրանցքների մասին[5]): Արագածի վրայ եղած արուեստական լճերի եւ ջրանցքների հետքերը ապացոյց են այդ իրողութեան. Զուարթնոցի շրջապատի ամայութիւնը, հաւանօրէն, հետեւանք էր Ներսէս Գ.ի շինած ջրանցքի խափանման:

---

[1]) R. E. 3, հատոր 6, եր. 705:

[2]) Նարեկ. Բան ՂԲ.:

[3]) Ձեռագիրը գրուած է Յակոբ գրչի ձեռքով, որ Հաղբատի միաբան էր, նկարազարդուած Մարգարէի եւ կազմուած Աբրահամի ձեռքով Հոռոմոսի Մխիթար վանահօր հրամանով: Ստացողն է Սահակ կրօնաւոր եւ յետին քահանայ, «աշակերտ սուրբ ուխտին Հաղբատայ, ազգաւ եւ տոհմիւ ի մեծ մայրաքաղաքէն յԱնւոյ»: Աւետարանն էլ Սահակի կողմից նուիրուած է Արջոյ Առճի ուխտին, որ իրենք են շինել եւ գտնւում է Անիի հանդէպ՝ Ալաճայ լերան փէշերին. «զբովանդակ գոյք ծնողաց մերոց եւ եղբարց ծախեցաք եւ շինեցաք զածարնակ սբ եկեղեցիքս եւ աւանդեցաք զսբ աւետարանս յայ սբ եկեղեցիս, որ շինեցաւ ի մէնջ ի Վանս Արջուառճի»:

[4]) Х. В. Томъ II, выпускъ II, 1913. մեր յօդուածը Потомство Тарсаича и Мина хатуны. Табл. XXVI եւ XXVII.

[5]) Բանասէր. 1901. 37: Բեւեռագիր Արձանագրութիւններ Ռուսաց Հայաստանում. Քաղուածոյ թարգմ. Նիկոլսկու «Անդրկովկասի բեւեռագիր արձանագրութիւններ» գրքից. Վենետիկ. 1897, 30. Մեսրոպ եպիսկոպոս. Էջմիածնի դաշտի ոռոգումը. Արարատ, 1912. № 3 եւ 4:

Մրենը իր շրջակայքով այժմ անապատ է, մինչդեռ Բագրատունեաց եւ Զաքարեանց շրջանում մի ծաղկեալ քաղաք էր․ Երեւանի ջրանցքը յիշատակւում է ԺԱ․ դարու առաջին կիսում1):

Մենք տեսանք, թէ Ազիզբէկը ինչպիսի համեստութեամբ յայտնում է, թէ Քասախ գետից ջուր է բերել եւ Եղվարդ հասցրել․ մինչդեռ Ներսէս դպիրը յափշտակութեամբ է պատմում այդ իրողութիւնը, «ցընծութիւն եւ ուրախութիւն» համարելով ոչ միայն Եղվարդի մենաստանի, այլ եւ շատ գաւառների համար, այսինքն Եղվարդի կալուածքներից դուրս եւս: Արդարեւ, Ազիզբէկի ջրանցքը օրհնութիւն էր Արայի լերան արեւմտահարաւային լայնածաւալ դաշտերի համար, որ ձգւում են մինչեւ Կարբա, Աշտարակի եւ Օշականի դիմաց եղած տափարակները2), այժմ էլ հացաւէտ, բայց անջրդի եւ պատահականութեան ենթակայ․ «եւ զդըժուարութիւն սահմանացն եւ զոլով աշխատութիւնս եւ զտուրս արուեստաւորացն եւ զամենայն ծախսն ո՞վ կարէ ընդ գրով արկանել, եւ զանհասանելի երկրաչափ զհեռաւորութիւն տեղոյ, որ ի քաղաքէն Բջնոյ մինչեւ Կարբի ոչ գտանէին ջուր յարբումն մարդկան եւ պապակէին անցորդք ճանապարհաց ի տապոյ յաւուրս ամարայնոյ․ եւ ի գալ եւ ի մտանել ջրոյն յանդաստանս մեր, վերստին նորոգեցան ամենայն արմատք եւ նորափետուր զարդարեցան եւ զուարճացան ամէնայն կենդանիք, մարդ եւ անասուն, թռչունք երկնից եւ գազանք»3):

Ջրանցքն սկսւում էր Արայի լերան հիւսիսային կողմից, Աստուածընկալ գիւղի մօտից․ նորա հետքերը նկատելի են եւ այժմ․ արդարեւ, մեծածախս մի գործ, որովհետեւ տեղ տեղ անցնում է փորուած ժայռերի կամ արհեստական թմբերի վերայ շինած առուի միջով: Ջրանցքի ծագումը Ազիզբէկից էլ հին է․ նա միայն նորոգել է եւ ջուրը Եղվարդի դաշտերը հասցրել:

Ազիզբէկի շինարար գործունէութեան, ըստ Ներսէս դպրի, մասնակից էր եւ նորա կինը՝ Վախախ, որ վանքի շինութիւնից յետոյ, թանկարժէք զգեստների հետ, նուիրել են եւ «մեծագին գրեանս ազգի ազգի»: Տարաբաղդաբար մեր ձեռքը չեն հասել այդ մատեանները, բացի այս միակ աւետարանից, որ գրել է տուել Վախախը, եւ որի յիշատակարանից քաղում ենք այս բոլոր տեղեկութիւնները: Յիշատակարանի համեմատ աւետարանը պատուած էր ոսկով եւ արծաթով․ ներկայ կազմը կաշեպատ է եւ հասարակ:

Զ․

Առաջին պրակի մէջ առիթ ունեցանք յիշելու, թէ Ազիբէկենց տոհմն արդէն ԺԳ․ դարու վերջերին երկու ճիւղի էր բաժանուած․ երկրորդ ճիւղի յայտնի ներկայացուցիչն է Բջնիի Մանուէլ արքեպիսկոպոսը: Նորանից մեր ձեռքն են հասել երկու ձեռագիր, որոնց յիշատակարանները բաւարար տեղեկութիւններ են տալիս ստացողի անձի եւ ազգատոհմի մասին․ տարաբաղդաբար երկուսն էլ անմիջապէս չենք տեսել եւ ուսումնասիրել: Դոցանից մէկը փոքրադիր, նկարազարդ մի շարական է, գնուած եւ ուղարկուած արդէն Գերմանիա: Մեր բարեկամ նկարիչ Եղիշէ Թադէոսեանը արտագրել է ձեռագրի նմանութեամբ երկու կարեւոր յիշատակարան Մանուէլ եպիսկոպոսի զգեստաւորուած մանրանկարի եւ մի երկու զարդերի հետ եւ մեզ նուիրել․ այդ սիրալիրութեանն եմ պարտական մասամբ Մանուէլի մասին ունեցած տեղեկութիւններով:

Յիշատակարանի հեղինակն իրեն անուանում է Մանուէլ եպիսկոպոս Բջնոյ եւ Արարատեան, սուրբ Վիրապի տեղապան, իսկ Շարականի դպիր Յովհաննէս քահանան «սրբազան վեհ», «երջանիկ եւ առաքելաշնորհ արհիական գլուխ, մեծ մետրապօլիտ եւ վերադիտող երկնաքատակ տանն արարատեան եւ տեղապահ երկնահանգէտ աթոռոյն սբ տեղեացն», այսինքն, «անդնդական վիրապին»՝ «իշխան եւ իշխեցող երկոտասան վիճակաց»: Բջնոյ եպիսկոպոսութիւնն սկսուած էր Պետրոս Գետադարձի եւ նորա բարեկամ Գրիգոր Մագիստրոսի օրով, եւ կարեւոր դեր է կատարել Արեւելեան Հայաստանի հոգեւոր կեանքի մէջ, նորա մի շարք եպիսկոպոսներն ու վարդապետները յիշատակւում են որպէս եկեղեցական եւ գրական կեանքի ղեկավարներ, յատկապէս ԺԳ․ դարում եւ ԺԴ․ի սկզբում: Բջնոյ եպիսկոպոսը մէկն էր Արեւելեան Հայաստանի չորս մեծ եպիսկոպոսներից, որոնց ձայնն ու կարծիքը նշանակութիւն ունէր Կիլիկիայում նստած կաթուղիկոսների համար: Նոքա հասարակ եպիսկոպոսներ չէին, այլ իշխանազուններ, որ ընտրւում էին իշխող տոհմի շառաւիղներից, ինչպէս Գանձասարի եւ Աղթամարի կաթուղիկոսները մեծ մասով տեղական իշխաններից էին․ Սիւնեաց մետրոպօլիտները Ստեփանոս Օրբէլեանից սկսուած, գրեթէ երեք դար, ամփոփուած էին Օրբէլեանների ձեռքին․ Գեղարդի եպիսկոպոսների մեծ մասը ԺԵ․ ԺԶ․ և ԺԷ․ դարերում Պռոշեաններից էին: Նման երեւոյթ մենք նկատում ենք եւ Բջնոյ եպիսկոպոսութեան մէջ, որոնցից մէկն է այս Մանուէլը՝ Ազիբէկենց տոհմից: Սորա նախորդների մէջ եւս երեւում է տոհմակցութիւն, բայց ասել չենք կարող, թէ նոյն տոհմից ե՞ն, թէ ոչ:

---

1) Մխիթար Այրիվանեցի, Մոսկուա, 1860․ 38:

2) վերջին ժամանակներս Աշտարակեցիք խնդիր էին տուել նորոգելու այդ առուն եւ ջրելու Քասախի արեւելեան կողմի իրենց անջրդի դաշտերը:

3) Յաւելուած № 1:

Մանուէլ եպիսկոպոսի հայրն էր «Շապուհ յազատ տոհմեան» *եւ մայրը Ջանխաթունն*[1]). *պապերն էին Թային եւ Արջուկ Զաքարիա, որոնց մասին չէ յաջողուել մեզ գտնել որեւէ տեղեկութիւն արձանագրութիւնների կամ յիշատակարանների մէջ: Մանուէլն ունէր եւ մի եղբայր, որի անունն անյայտ է, բայց սրա որդիքն էին Զաքարիա եւ Սարգիս: Մանուէլ եպիսկոպոսը ոչ միայն իւր մերձաւոր ազգականներին՝ Ազիզ բէկ Բ.ին, նրա որդւոց, Աւագի եւ Զաքարիայի անուններն է յիշում, այլ եւ իւր հոգեւոր ծնողներին* «յաւագան», *այսինքն կնքահայրերին՝ պարոն Սատրիկ Վահապեանին եւ նորա կնոջ Վախախին: Սոքա եւս Զաքարեաններին ստորադրեալ իշխաններ են, ցուցէ եւ հարկերի վերակացու, ինչպէս մակաբերել կարելի է Գետարգելի զանգակատան արեւմտեան պատի մի արձանագրութիւնից*[2]): 1325 *թուին Աւագի թոռ Զաքարիայի պարոնութեան ժամանակ երեք եղբայրներ Դաւիթ,* Վահապ *եւ Փաթա եւ իրենց որդիքը Ալազանի,* Սատրիկ *եւ Բահադին, եւ Աւդ·· լա (երկու կամ մի տառ կորած) թողնում են վանքի կողը՝ մարդու, եզան, իշոյ եւ ամէն տեսակ կոռ ու համրանք: Զաքարիան ծագումով մոնղոլ էր, բայց քրիստոնէութիւնը ընդունած և հայացած. նա Իւանէ աթաբակի որդի Աւագ մեծ իշխանի Խոշաք դստեր որդին էր Ապաղայի* «սահիպ դիւանու» *ամուսնութիւնից*[3]):

Զաքարիան ինքն էլ ունի արձանագրութիւններ եւ նորա իշխանութիւնը տարածւում էր Բջնիի Կոտայքի սահմաններում: Այս երեք եղբայրները նրա ստորադրեալ պաշտօնեաներ են: Ուրեմն Մանուէլի կնքահայր Սատրիկն էլ երկրորդական իշխանների մի տոհմին էր պատկանում, տոհմի անունն անյայտ է մեզ: Նա յիշում է «զհոգցող Էսանբուղայն, զիւր կողակիցն աղաւթական, զորդիքն ամէն, որ են մեր սան»: *Այս Էսանբուղայն, հաւանօրէն, Վահապեաններից մէկն ու մէկի, ցուցէ, Սատրիկի եղբօր Բահադնի որդին էր, որի թոռներին իւր սան կարող էր անուանել: Յիշում է* «զԳըմիրն մըրցական, զպրն Շեխն իմ ազգական եւ զկողակիցն իւր Ռուսուտան» *իրենց որդիների հետ. ապա Մանկասարենց Խուտլու Բուղային իւր որդու եւ թոռան հետ,* «որ են խնամիք եւ բարեկամ»: *Յիշում է Տիրացու աբեղային* «որդի մեր ազգական», *Քահանայապետին* «նորաքողբոջ ձեռացըս սան», *Գրիգոր փիլիսոփային և* «փոքր Յոհաննէսն ազգանման, որ են որդիք մեր սնընդական». *Օշականի Ներսէս երէցին* «սրտաց մեր բարեկամ», *փարպեցի գրիչ աբեղային (արդեօք* «գրիչ» *յատուկ անո՞ւն է), Երեւանում աւագերէց եւ իւր ազգական Յովհաննէսին, Յոհանավանքի Հիւսանց երէցին, Մողնու Դաւթին: Սիրալիր եպիսկոպոսը չի մոռանում Աստուծոյ օրհնութիւնը խնդրել իւր թեմի գլխաւոր վայրերի համար, Բջնի, Գառնի, Երեւան,* «Աշտարակըն գեղավան, որ են աթոռք մեր եւ կայան», *նաեւ Կարբի* «քաղաքաւան հանդերձ երկրովն իւր միաբան», *ինչպէս եւ* «քոլոր գաւառն Արարատեան»: *Ի վերջոյ յիշում է եւ իւր չարականի գրչին.* «յիշեմ զաչացս իմ լոյս փայլման, զիմ Յովհաննէս··· *(բաց է թողած մի բառ)*, զծրող եւ զծաղկող գրոցս այս լման: Նա որ ծրեաց զծիրս վերնական, եւ ծաղկեցոյց աստղանման»[4]):

Չարականիս գրիչ Յովհաննէս քահանան էլ ունի իւր առանձին յիշատակարանը, որից իմանում ենք, թէ գրուած է «ութ հարիւր եւ վեշտասան», *այսինքն* 1367 *թուին,* «ի սբ եւ յերկնահանգէտ եւ ի գերահռչակ ուխտըս որ կոչի Սանահին, առ ոտս Ղզր վդտիս եւ երջանիկ հարազատի իւրոյ Յովս նգնազգեաց փիլիսոփայի»: *Այս վերջինը գրչի ուսուցիչն է, ինչպէս երեւում է մի ուրիշ փոքրիկ յիշատակարանից.* «Զարժանաժառանգ զստ (s!) հոգւոյ հայրն իմ եւ զուսուցիչն, զՅովս փիլիսոփայ, աղաչեմ յիշել ի քս եւ ած զձեզ»[5]): *Եղիշէ Թադէոսեանի նկարած յիշատակարաններից եւ մանրանկարներից երեւում է, որ այդ չարականը եղել է մի շքեղ եւ նուրբ գործ, բոլորգրով, տների սկզբնատառերը գոյնզգոյն եւ ոսկւով, սկզբնազարդերով եւ նկարներով: Յիշատակարանի մէջ գրիչը տալիս է տեղեկութիւններ նաեւ ստացող Մանուէլ եպիսկոպոսի մասին, որից վերեւ քաղուածք արինք մասամբ: Յիշում է նորա* իշխանական ծագումը. «ոչ ի յռամիկ ժողովրդոց ընտըրեալ, այլ ի յազատատանէ եւ ի սեփական ազգէ», որ իր անուան ճոխութեամբ եւ վարքի մաքրութեամբ «փայլէ ի տանս արեւելեան, որպէս զարեգակն ի մէջ աստեղաց, շնորհազարդեալ փիլիսոփայական հմտութբ ածաշունչ մատենից, եւ երաժշտական եղանակաց»: Մանուէլի գրած ոտանաւոր յիշատակարանից էլ երեւում է, որ յիրաւի շնորհք եւ պատրաստութիւն ունեցող մարդ էր: Գանձարանների մէջ Մանուէլ անունով մի գանձասաց եպիսկոպոս կայ, որ նոյն է մեր եպիսկոպոսի հետ[1]): Նա միեւնոյն ժամանակ գրասէր էր. «եւ զայս փոքրիկ տուփ գիրք շարակնոցս ստացաւ», գրում է Յովհաննէս գրիչը, ոչ կարօտութեամբ, որովհետեւ ունէր աւելի պատուական եւ մեծարգոյ գրքեր, ոմանք ստացած «ընչիւք, եւ զայլսն ի նախնեաց ժառանգեալ», բայց այս գիրքն առաւել է, «վս զի իւրոյն տիրական մատամբն է քանդակեալ, եւ բազում արդեամբք երկնեալ եւ առատաձիր պարգեւաւք (s!) դարմանեալ եւ ոսկէճաճանչ վարսանոցաւ զարդարեալ, եւ բեհեզեան նափորտամբ պարուրեալ»: Վերջին խօսքերը վերաբերում են կազմին եւ նորա շապկին:

---

[1]) Սոյնանուն մի իշխանուհի «*Ջանխաթուն դուստր Աւագ պարոնին եւ Թարքան խաթունին*» ունի անթուական մի արձանագրութիւն Յովհաննայ վանքում, Համազասպ Մամիկոնեանի վանահայրութեան օրով. Համազասպի անունը յաճախ յիշուած է յիշատակարանների եւ արձանագրութիւնների մէջ 1274, 1279, 1285, 1288, 1293, 1294 եւ 1295 թ. թ., որով եւ կարելի է Ջանխաթունի մօտաւոր ժամանակը որոշել. ժամանակի կողմից չկայ որեւէ դժուարութիւն նոյնացնելու երկու Ջանխաթուններին: Համազասպի մասին. Արձանագր. Յոհաննայ վանքի. Շահխաթ. Բ. 99: Ալիշան. Այր. 170—171. վերստուգուած եւ լուսանկարուած մեր կողմից: Արձանագր. Օշականի Շահխ. Բ. 78: Ալիշան. Այր. 490: Ձեռ. էջմ. 1188. տ. մեր Գրչ. Արուեստը, Գ. § 110, Շահխաթունեան Բ. 112. նաեւ այլ յիշատակութիւններ մեր Յիշատակարանների ժողովածուի մէջ:

[2]) Թվ. ՉՀԴ.
Ի Պ արոնութե Զաք ար ին
Թուին Աւագին: Մեք Դաւիթ
Եւ Վահապ եւ Փաթա: Եւ որդիք մեր
Ահաղա նին եւ որդիք մեր Սատրիկ եւ Բահազնի
եւ Աւդ·· (երկու տառ կորած) լա վս յու
սոյն որ առ Ած եւ մեր ար եւուս համար
Թողաք զվանաց կոռս զմարդո եզ
ին, իշո եւ կամ ցեղ կոռ եւ զհա ար,
···(բառը կորած) քս միացուցաք թէ ոք ի մեր
···(բառը կորած) աւտարաց կամ աւ ազաց խափանել ջան
···(բառը կորած) մեր ազգի մեղացն պարտական է եւ յեր
Ից սբ ժողովոցն նզոված զկա են ին
Եւ զուդա ին ժառանկ է եւ ամ ազգա
Աց (s!) նալաթ լենի կատարիչքն ահնի յայ

Ընդգծուածները միացած են (լիգատուրա). հնագրական մանրամասնութիւնների մէջ չենք մտնում այստեղ:

[3]) Օրբ. 418:

[4]) Յաւելուած № 2:

[5]) Տես Յաւելուած № 2:

Տարաբաղդաբար Յովհաննէս գրչի յիշատակած Ազիբէկենց ընտանեկան ձեռագրերը մեր ձեռքը չեն հասել, ունինք միայն Մանուէլ եպիսկոպոսի գրել տուած երկրորդ ձեռագիրը, մի Աստուածաշունչ, Վիեննայի Մխիթարեանց մատենադարում, ըստ Տաշեանի ցուցակի № 55, որ թէեւ թուղթ է, բայց մանր, մաքուր, կանոնաւոր եւ գեղեցիկ բոլորգրով, բազմաթիւ զարդագրերով եւ լուսանցքի զարդերով, երեք գունեան, Տաշեանի վկայութեամբ «շատ յաջող»: Զարդագրերը կազմուած են մարդու, թռչունների կամ գազանների պատկերներից, յատկապէս ուշադրութեան արժանի «ի» տառը ուլթ մանրանկարով: Երկու կիսախորանի մէջ մեծ, գոթաձեւ զարդագրեր կան, խորանների հետ առաջին տողերը չքեղ թռչնագրեր, երկրորդ եւ երրորդ տողերը գլխագիր, կարմիր եւ մանուշակ: Խորանները բազմագոյն՝ «մեծ եւ չքեղ». 472ա. տպուած է Էջմ. աւետարանը գրքի մէջ, նկար № 1 մանրանկարը, Աստուածածնի պատկերով: Բազմաթիւ են կիսախորանները եւ բոլորն էլ յաջող, «բաւական յաջող են» ըստ Տաշեանի նոյնիսկ նկարները, որ առ հասարակ թոյլ են մեր մանրանկարչութեան մէջ: Յատկապէս բազմաթիւ են աւետարանների լուսանցքներում եղած մանր պատկերները համեմատ բովանդակութեան: Գրիչն է Յովհաննէս եպիսկոպոս Անւոյ 1368—1375 թ. թ. մէջ[2]), իսկ նկարիչը Մելքիսեդեկ քահանայ, որ Յոհաննու եւ Պրոխորոնի պատկերի տակ ունի այսպիսի մակագրութիւն. «Շինեալ ձեռամբ Մելքիսեթեկ քահանայի, ի խնդրոյ… (ջնջուած անունը) զոր տէր Աստուած վայելել տացէ բազում», ճերմակ մակերեւոյթի վերայ, կապոյտով:

Բազմաթիւ են այն յիշատակարանները, որոնք ցոյց են տալիս, թէ ստացողը մեր Մանուէլ եպիսկոպոսն է. այսպէս 51բ. «Զստացաւղ սուրբ գրոցս զարիի եւ զերջանիկ դիտապետն Բջնոյ մեծ նահանգին զտէր Մանուէլ աղաչեմ յիշել ի տէր: Ընդ նմին եւ զանպէտ գրիչս զՅոհաննէս եպիսկոպոս Անոյ վիճակիս»: Մի տեղ, 35ա., յիշուած են Մանուէլի եղբօրորդիքը՝ Զաքարիա եւ Սարգիս, որ այլեւս ոչ մի կասկածի տեղիք չեն թողնում ստացողի անձի մասին: Գրչի ընդարձակ յիշատակարանից երեւում է, որ «ի կատարել գրոցս գրելով, ինքն փոխեցաւ առ Քրիստոս եւ մնաց աստուածաշունչս ծաղկելի»… (այստեղ փճացած է յիշատակարանը), բայց մտքից երեւում է, որ նորան յաջորդել է «տէր Յոհաննէս, մանուկ գոլով հասակաւ», պատել է գիրքը եւ ծաղկել տուել Մելքիսեթ քահանային:

Համառօտ տեղեկութիւն ունինք նաեւ Անիի եպիսկոպոս Յովհաննէս գրչի մասին ուրիշ աղբիւրներից. դա «ոսկեփոր» կոչուածն է: Քարամեանցի ցուցակի № 37 ձեռագրի յիշատակարանի համեմատ՝ Մատթէոս գրիչը 1447 թուին Այրիվանքում գրել է մի շարական, որի օրինակը գրուած էր «ի լաւ եւ յընդիր աւրինակէ առաջին իմաստնոց եւ վարժապետացն Սիսոյ, զոր էր գրեալ ձեռամբ Յովհաննէս եպիսկոպոսի Անոյ՝ մականուն Ոսկեփոր վերաձայնելոյ»: Ալիշան «Յովհաննէս Ոսկեփոր»ի ժամանակը նշանակում է ԺԴ. դար, 1307-ից յետոյ, աղբիւր յիշելով «յիշատակարանք գրոց»: Ճշմարիտ է, 1308 թուին Շիրակի եպիսկոպոսն էր «տր Յոհաննէս որդի Ապուղամրի»[3]). 1313 թուին եւս մի աւետարանի յիշատակարան թուագրուած է «ի հայրապետութեան մայրաքաղաքիս Անոյ տեառն Յոհաննիսի մեծի, որ է ջահ վառեալ ի մէջ եկեղեցոյ եւ ի յազգէ Լուսաւորչին Հայաստանեայց»[4]), այսինքն Պահլաւունի, բայց սա չէ կարող 1368-ին ապրող գրիչը լինել, «Ոսկեփոր» մականունով Յովհաննէս եպիսկոպոսը:

Է.

Մանուէլ եպիսկոպոսի ոտանաւոր յիշատակարանից տեսանք, որ 1367 թուին ապրում էր մի «Ազիզբէկ Եղիվարդեան», որ երբեք Ազիզբէկ Ա. լինել կարող չէ:

---

[1] № 831, 411բ. «Մեռելթաղի գանձն է». սկս. «Մինդ ի յէէն բանդ. Acrostic «Մանվէլս». Ձեռագիրը բերուած է Աղթամարից: Նոյն գանձը № 642-ի մէջ «ի տէր Մանուէլ եպսէ ասացեալ ի թաղումն մեռելոց» վերնագրով. այս վերջին վերնագիրը նաեւ № 222-ի մէջ: Առաջին ձեռագիրը գրուած է 1445 թ., երկրորդը Թովմա Մեծոփեցու կենդանութեան ժամանակ, այսինքն 1447-ից առաջ. իսկ երրորդը 1483 թուին: Ուրիշ ձեռագրերից օգտուելով Տէվկանցը անուանում է. «Մանուէլ վարդապետ Պըճնեցի», Հայերգ. Թիֆլիս. 1882. Յառաջաբանը. Ժ.

[2] Տաշեան. Ցուցակ. 259:

[3] Ձեռ. Էջմ.ի № 1519, 297ա. նոյնատիպը մեր Գրչութեան Արուեստը Գ. տախտ. Հէ:

[4] Փիրղալէմեան. Նշխարք Հայոց Պատմութեան. անտիպ. յիշատակարանների ժողովածու (թ. 63 մի աւետարանէ):

Անհաւանական է միանգամայն, որ 1318 թուին բազմաթիւ զաւակների տէր Ազիզբէկը ապրէր մինչեւ այդ թիւը: Բայց մենք ունինք աւելի հաստատուն փաստեր նրանց տարբերութեան մասին· Ազիզբէկ Ա·ի զաւակներն էին Թուղթխանէ, անդրանիկ որդին Աւագ, ապա Յոհաննէս, Սարանդինոս, Սասթանէ· իսկ Ազիզբէկ Եղիվարդեանի զաւակները՝ Աւագ եւ Զաքարիա, որոնք իրենց հօր հետ ԺԴ· դարու վերջերին օժանդակ են հանդիսանում Սիմէոն Այրիվանեցուն Եղիվարդում դպրոց բանալու: Խնդիրը պարզ է· Ազիզբէկ Ա·ի որդին էր Աւագ Բ·, սորա որդին է Ազիզբէկ Բ·, եւ որդիքը Աւագ Գ· եւ Զաքարիա· թոռները կոչուած են պապերի անունով:

Սիմէոն Այրիվանեցին, որի գործունէութեան հետ են կապուած Ազիզբէկ Բ·ի եւ նորա որդւոց անունները, մէկն է իւր ժամանակի նշանաւոր վարդապետներից· Այրիվանքում 1444/5 թ· գրուած Յայսմաւուրքի մի ընդարձակ յիշատակարան նորա գործունէութեան մասին բերում է Ալիշանը[1]) · գրիչը յայտնում է, որ ինքն արտագրել է Սիմէոն վարդապետի ձեռագրից, որ լինելով տօնասէր, Տաթեւից բերել է տալիս Արարատեան երկիրը այն օրինակը, «զոր տէր Ստեփանոս որդի մեծափառ իշխանին Իւանէի Որոտնեցոյ եբեր ի Սըսոյ յածաբնակ ուխտն Եւստաթէի······եւ բազում ծախիւք գրել ետ»· ուրիշ Յայսմաւուրքների յիշատակարաններ աւելացնում են՝ «և հրաման ետ ամենեցուն նոյնպէս գրել[2]): Ամենից առաջ հէնց ինքն է տարածել այդ օրինակը՝ մի մի ձեռագիր նուիրելով Այրիվանքին եւ Յոհաննայ վանքին, որոնց համար եւ ունի արձանագրութիւններ[3]):

Ալիշանի բերած յիշատակարանը տալիս է մեզ տեղեկութիւն ի միջի այլոց եւ Սիմէոնի գործունէութեան մասին Եղիվարդում· «Նախ բնակեցաւ յաստուածաշէն եւ ի տիրախնամ գեղն Եղիվարդ, ի փոքր վանսն, որ ի մէջ գեղին, եւ բազում արդիւնս արարեալ անդ ի խնդրոյ աստուածասէր եւ բարեպաշտ մեծազգի եւ փառաւոր, աղքատասէր, ազատածին առն Ազիզպէկին եւ որդւոց նորին Աւագին եւ Զաքարիային, բազում կրաւնաւորս եւ աշակերտեալ մանկունս եկեղեցւոյ ժողովեալ յուսուցանել զհինն եւ զնոր մատեան աստուածաշունչ գրոց, զնուրբ եւ զարտաքին փիլիսոփայութիւն ամս տասն»: Այստեղ յիշուած «փոքր վանքը» գիւղի մէջ հէնց Ազիզբէկ Ա·ի շինած զանգակատունն է կամ Ս· Յակոբը, ինչպէս աւելի պարզ կոչւում է յետագայ յիշատակարանների մէջ: Ազիզբէկ Ա·ի կուսաստանն այժմ փոխարկուել էր կրօնաւորների վանքի, որտեղ հաւաքուած են ուսանելու «աշակերտեալ մանկունք եկեղեցւոյ», ուրիշ խօսքով դպրոց է հաստատուել այնտեղ: Յիշատակարանի մէջ ակնարկուած գիտութիւնների ցանկը համեմատ է միջնադարեան վանական բարձր դպրոցների ծրագրին, ինչպէս աւանդւում էին Սիմէոնի աւագ ժամանակակից Յոհան Որոտնեցու եւ Գրիգոր Տաթեւացու օրով, որին եւ աշակերտել է ինքը:

Սիմէոն Այրիվանեցու աշխատութեամբ եւ Ազիզբէկ Բ·ի ու նրա որդւոց հովանաւորութեամբ Եղիվարդը ԺԵ· դարում դառնում է մի հոգեւոր կեդրոն, ուր հաւանօրէն շատ ձեռագիրներ են գրուել, գոնէ նոցանից մի քանիսը հասել են մեր ձեռքը: Այսպէս Գրիգոր կրօնաւորը ՊԿ (=1411) թուին գրել է Տաթեւացու Հարցմանց գիրքը «ի գիւղաքաղաքն Եղիվարդ ի վանս սրբոյն Յակովբայ»[4]): Նոյն Գրիգորը, հաւանօրէն, 1314 թ· գրել է դարձեալ մի Հարցմանց գիրք, սկսելով Վայոց ձորի Հերմոնի վանքում, «առ ոտս մեծ րաբունոյն Յովհաննէս հռետորի (սա եւս Տաթեւացու աշակերտներից է և ժամանակից 1441 թուի աթոռի էջմիածին փոխադրութեան ժողովին, «Կոլոտիկ» կոչուած), միջայմուխ եղեալ ի ճգնողական յարկին Նորայ վանս (Ամաղու, Վայոց ձորում) եւ աւարտ գրչութե սոր· ի գաւառս Արարադեան ի գեղաքաղաքս յԵղիվարդ, ի վանքս սբ Յակոբ, առ ոտս երջանիկ պետին Սիմէոն րաբունի եւ յիշատակս ի հայրենի քաղաքս Կարբի[5]): Յովհաննէս (Երզնկացի, բայց ոչ յայտնի հեղինակը) գրիչը 1413 թուին, Գէորգ Երզնկացու եւ Գրիգոր Տաթեւացու աշակերտ, գրել է մի ձեռագիր «մասն ինչ ի վանս Եւստաթէի առաքելոյն քի, եւ մասն ինչ ի վանս Հերմոնի առ ոտս րաբունոյն Յովհաննիսի (Կոլոտիկ) աշկտի Գրգրին եւ մասն ինչ ի վանս Եղեւարդու ի գաւառս Այրարատեան առ ոտս Սիմէոնի, որ եւ սա աշկրտ նոյն Գրգրի»: Սիմէոն վարդապետը աւետարանի օրինակն է տուել, իսկ Մատթէոս գրող աշակերտը Սաղմոսին եւ առհասարակ շնորհակալութիւն է յայտնում շատ ու քիչ օգնողներին, «զի յամենեցունց բզմ մրդասիրուի տեսաք աստ· զ թ· ամ, զոր աստ կացաք»[6]): Եթէ Յովհաննէս գրիչը ինն տարի է կացել այստեղ, իսկ Սիմէոնը տաս, ասել է, թէ նորա վարժապետութիւնը Եղվարդում ընկնում է 1394—1414 թ· թ·: Մենք կը տեսնենք որ այստեղ յիշուած Մատթէոս գրող աշակերտը շատ ճարտար գրիչ է դառնում յետոյ: Այս Գրիգոր գրիչն է անշուշտ, որ 1415 թուին արդէն Հերմոնի վանքումն է եւ կարեւոր տեղեկութիւններ է տալիս Սիմէոնի գործունէութեան մասին: Սիմէոնը Տաթեւացի է, ինչպէս երեւում է նաեւ Ալիշանի բերած յիշատակարանից, որ եկել է Արարատեան երկիրը, «եւ դաս հրամել բզմ ժկ, ր (որպէս) ի քսէ շնորհեալ մեզ: Եւ ապա ի խնդիր ամ ածաշունչ գրոց եւ մկնչաց· եւ ստացել բզմ, զոմանս գրելով եւ զոմանս գրել տալով հալալ ընչուք, որ եւ զայս բժնից մեկնիչս (*Հաւանօրէն Լամբրոնացու*) ստցւ ի վայելումն անձին իւրյ եւ աշկրտց իւրոց»[1]): *Սիմէոն վարդապետը պատրաստել է յատկապէս Յայսմաւուրքներ Սսոյ օրինակից եւ տարածել Արարատեան երկրում. երկու այդպիսի ընծայաբերութիւնների համար Սիմէոնը թողել է արձանագրութիւններ Գեղարդում, որից արտագրուել է Ալիշանի յիշատակարանի ձեռագիրը, եւ Յոհաննայ վանքում, ինչպէս տեսանք վերեւ:*

---

[1]) Հայապատում· 369:

[2]) Արարատ, Մեսրոպ, վրդ· Մագուղեան, Ազուլիսի եւ շրջակայքի ձեռագրերը, 1911, 853· 1010:

[3]) Գրի ենք առել եւ լուսանկարել երկու տեղերումն էլ· համ· Ստ· վարդ· Մխիթարեան· Ստորագրութիւն Այրիվանից, Վաղարշ· 1875· 42· Ալիշան, Այր· 542· 172· Շահխաթունեան, Բ· 104:

[4]) Կարինեան № 841:

[5]) Ձեռ· էջմ· № 857:

[6]) Ձեռ· էջմ· № 1215· 453ա:

Սիմէոն Այրիվանեցու ժամանակակիցն էր Բջնոյ Մանուէլ Բ. եպիսկոպոսը ՊԾԵ (1406) թուին[2]), *բայց որի մասին առայժմ չունինք որեւէ տեղեկութիւն:*

Բ.

Սիմէոնի սկսած գործը Եղվարդում նորա հեռանալով չոչնչացաւ, այլ շարունակեց իւր գոյութիւնը Աւագի եւ Զաքարիայի եւ ապա Մանուէլ Գ.ի հովանաւորութեամբ, որ Ազիզբէկ Բ.ի թոռն էր, Աւագ Գ.ի որդին: Ե՞րբ մեռաւ Աւագը եւ, բացի վերեւ եղած յիշատակութիւնից ինչո՞վ նշանաւոր հանդիսացաւ. չգիտենք. եկեղեցու արեւմտեան պատի վերայ, երկրորդ յարկի դռնից դէպի հիւսիս, նորա եւ կնոջ համար փորագրուած խաչերի արձանագրութիւնը՝ «խաչս բարեխաւս, պարոն Աւագին եւ խո/նծին», *թուական չունի. կարող է պատահել նոյնիսկ, որ նրանք փորագրուած են Մանուէլ եպիսկոպոսի պատուէրով, երբ իւր արձանագրութիւնն էր գրում 1471 թուին եւ խաչեր փորագրել տալիս իւր անունով: Յամենայն դէպս այն թուականից, երբ յիշատակութիւն ունինք Մանուէլի մասին, հօր կենդանութեան որեւէ ցուցում չկայ, եւ չէր կարող լինել ԺԵ. դարու կէսերին մի մարդու համար, որ 1367 թուին, գոնէ մի քանի տարեկան պիտի լինէր: Իսկ Զաքարիայի մասին ամենեւին բան չգիտենք. թէպէտ մի Զաքարա որդի Ազիզբէկին յիշւում է Յովհաննայ վանքի արձանագրութիւնների մէջ, բայց նա թոռն է Գամրիկէլին, ուստի եւ դժուար է հաստատել, թէ Ազիզբէկ Բ.ի որդին է. վերջին դէպքում պէտք է ընդունել, թէ այստեղ յիշատակուած Գամրիկէլը Վաչուտեաններից էր եւ մօր կողմից Զաքարիայի պապը, որ յիշատակուել է իբրեւ տեղական իշխան*[3]):

Մանուէլ Գ.ը առաջին անգամ յիշւում է 1452 թուին, Պերլինի արքայական մատենադարանի Ms. or. oct. 279 *կամ Քարամեանցի ցուցակի* № 33 «*Երգարան եւ տետրակ*» *Ձեռագիրը, ուրիշ խօսքով կոչւում է խազգիրք, գրուած ՉՁԶ* (=1337) *թուին Սինեաց մետրոպոլիտ Սարգիս եպիսկոպոսի համար, որ Օրբէլեան ցեղից էր եւ Ստեփանոս–Տարսայիճի յաջորդը*[4]): *Մի դար յետոյ այդ ձեռագիրն անցնում է Մանուէլ եպիսկոպոսի ձեռքը հետեւեալ յիշատակարանի համաձայն, որ Քարամեանը չունի. 2ա.* «Զվերջին ստացող սբ երգարանիս՝ զտր Մանուէլ եպս, որդի պրն Աւաքին, թոռն պրն Ազիզբէկին, որ գնեց զտետրակս ի հալալ յրնչից իւրոց ի բվականիս. ՋԱ, յիշեցէք ի տր»: *Ձեռագիրը գրուած է նուրբ եւ ազնիւ մագաղաթի վերայ, ընտիր բոլորագրով. գլխագրերն ու սկսուածքները ոսկեզիր են, նոր սկսուածքները փակագրելով,* երբեմն *ոսկով են նաեւ խազերը: Ունի եւ երկու մանրանկար, մէկը Ներսէս Շնորհալին է վեղարով, միւսի Փանի վերայ գրուած է* «Զագ. նկ. յիշ=Զաւագ նկարիչ յիշեցէք»: *Սարգիս մետրապօլտի, առաջին ստացողի անունով, կան փոքր յիշատակարաններ ոսկի գրերով: Այս Աւագը իւր ժամանակի նշանաւոր գրիչ–նկարիչներից մէկն էր. նա գրել է 1340 թուին մի ճոխ նկարազարդ աւետարան Բուրթէլ Օրբէլեանի որդու Պեչգենի համար* «ի վարժումն եւ ի վայելս ներհուն եւ սրբազան մտաց իւրոց, եւ նորաքոյս ոսկէքողքոջ ածատուր հաքազատ ծիրանծին (s!) եւ բարենշան զաւակին իւրոյ Ելիկումին». *Թուագրուած է* «ի վերատեսչութե եպիսկոպոսութե տն Սարգսի մետրապոլտի»[5]): *Այս համառօտ տեղեկութիւնները հաղորդում ենք ցոյց տալու համար, թէ Մանուէլ եպիսկոպոսը իւր ճաշակի համապատասխան մի գեղեցիկ գործ էր ձեռք բերել իւր համար:*

Եւ յիրաւի, հաստատուն տեղեկութիւն ունինք, որ Մանուէլը խրախուսել է կամ անձամբ ձեռագիրներ ստացել: Նորա տեսչութեան տակ ծաղկում էր Մատթէոս գրիչ, որ առաջնակարգ կարելի է համարել իւր գեղեցիկ, կանոնաւոր բոլորագրով (տ. Այր. 198). Սամուէլ մահդասու համար 1464 թուին նա գրել է մի մաշտոց, որ նուիրել է Յոհաննայ վանքին. «ի զաւառին Արարադեան ի գեղաքաղաքիս Եղիվարդ՝ ընդ հովանեաւ սբ ածածնիս եւ սբ Յակոբիս եւ նշխարաց սբ կուսանաց եւ կենսունակ լուսատու սբ ՙՆշանիս՝ յառաջնորդութե տեղւոյս տր Մանուէլի արհ եպսի որդի պրն Աւագի եւ թոռն պրն Ազիզբէկին, որ կամակից եւ ձեռնտու եղեւ եւ զաւրինակս շնորհեաց»: *Քիչ յետոյ կը տեսնենք, որ այս Մաշտոցի մէջ Մանուէլ եպիսկոպոսն ինքն էլ ունի յիշատակագրութիւն:*

---

[1]) Ձեռ. էջմ. № 94. Ձեռագիրը մի տեսակ մատենագրական տեղեկութիւնների ժողովածու է, հաւանօրէն դպրոցական նպատակների համար պատրաստուած եւ ունի յիշատակարաններ այլ եւ այլ վարդապետների եւ հեղինակների մասին:

[2]) **Н. Я. Марръ, Сборники Притчъ Вардана, 1899** III. 17.

[3]) Գրի եմ առել եւ լուսանկարել անձամբ. տ. Շահխաթ. Բ. 104. Ալիշ. Այր. 172:

[4]) Х. В. Томъ. II Выпускъ II 1913 *Մեր յօդուածը* Потомство Тарсаича и Мина—хатуны С. П. 1913.

[5]) Ձեռ. էջմ. № 136/368 (կար. 361) 308բ:

Նոյն Մատթէոս դրիչը 1465 Թուին գրել է մի աւետարան Ազիզ անունով մի կնոջ համար, որ «ետ ի դուռն Նորագեղ եկեղեցւոյն, որ յանուն սուրբ Գրիգորի»: *Յիշատակուած են Նորագեղի տանուտէրները՝* «Ամիր, Ջանիբէկ, Գալիկ, Սօլթանբէկ, Աւագ, Սարգիս, Մխիթար, Պօղոս, Սիրատեղ, Մանիկ եւ Ազիզբէկ»[1]: *Տանուտէր կոչումը այս դարում եւ աւելի յետոյ դեռ եւս պահել է իշխան, ազնուական նշանակութիւնը· սրանց յիշատակութիւնը Հաւուց Թառի Յովհաննէս եպիսկոպոսի, երկրի պարոն Վիչէլի եւ վանքի վանահօր եւ միաբանութեան հետ՝ մի ցուցում է, թէ նոքա հասարակ գիւղացիներ չեն: Ունէի՞ն նոքա որեւէ տոհմական կապ Ազիզբէկենց հետ, թէ հասարակ ազնուականներ էին, գիւղի կալուածատէրերը, ասել չենք կարող: Նորագեղը գտնւում էր Եղվարդից ոչ հեռու, դէպի Երեւան տանող ճանապարհի վերայ: Նա յաճախ յիշատակւում է Զաքարիա Սարկաւագի եւ Սիմէոն կաթուղիկոսի կողմից իբրեւ էջմիածնի կալուած, որ 1660 Թուին գնում է Յակոբ Ջուղայեցին ոմն Երեւանցի խօճա Սէթից, որ կալուածներ ունէր եւ Եղվարդում: Խօճա Սէթի ընտանիքը, ինչպէս երեւում է, յայտնի էր, եւ Սիմէոն կաթուղիկոսը յիշում է նորա որդւոց եւ թոռների անունը մինչեւ* «քեալանթար Սահակը», *որոնցից էջմիածինը գնել է հետզհետէ Նորագեղն ու Եղվարդի* $4^{1}/_{2}$ *դանգ մուլքը*[2]: *Այս ցուցումներն աւելի եւս զօրացնում են այն ենթադրութեան հիմքը, թէ Նորագեղի վերոյիշեալ տանուտէրները որեւէ ազգակցական կապ ունէին Ազիզբէկենց հետ կամ նրանց սորադաս ազնուականներ են: Ձեռագիրը գրուել է* «ի փառաւոր վանքն Եղիվարդ, ձեռամբ յոգնամեղ եւ փծուն գրչի Մատթէոսի», *որ յիշում է նաեւ իւր հոգեւոր հօրը՝* «զարի եւ քաջ Սարգիս վարդապետն եւ զիւր միաբանքն՝ զՄխիթար աբեղայն, որ է հայր վանացս սուրբ Գեղարդեայ եւ զայլ միեղէն եղբարցս, զորբասէր եւ զհեզահոգի Ալէքսանն եւ զՄատթէոսն եւ զՅովհաննէսն»: *Սարգիս վարդապետը հաւանօրէն Սիմէոնի յաջորդն էր Եղվարդում· նորա երկու աշակերտները՝ Դաւիթ եւ Ներսէս՝ արտագրել էին Սարգիս Շնորհալու Ղուկասի մեկնութիւնը, Ս· Թէոդորոսի վանքում, որ օրինակ է ծառայել Մեծոփեցու համար*[3]:

Նոյն Մատթէոս դրիչը 1469 Թուին մի Սարգիս Շնորհալի է գրել Մանուէլ եպիսկոպոսի համար մի չփոթ ժամանակ, երբ Հասան բէկը (Սպիտակ խոյի Ուզուն Հասանը) սպանեց Ջհան շահին եւ փախցրեց նորա որդի Հասան Ալիին, ուրեմն 1467 Թուին· «եւ մեր առեալ զգիրքս փախեաք տեղէ ի տեղ··· զի մէկ տարի եւ վեց ամիս նոյնպէս կայեաք ի վարանի, ի գաւառիս Արարատեան ի գեղաքաղաքիս Եղիվարդայ, որ կայ առ ոտս յԱրայոյ, ընդ հովանեաւ սուրբ եւ զմբեթաձեւ եւ խարսխա,տակ եւ հաստակառոյց վիմօք շինեալ սուրբ զանգակատանս, որ յանուն սուրբ Յակոբիս ՛ եւ սուրբ կուսանաց եւ աստուածընկալ լուսատու սուրբ նշանիս, ի յառաջնորդութեան վանիցս նմին տէր Մանուէլի»: *Ստացողն է Մանուէլ եպիսկոպոսը*[4]: *Այս միեւնոյն յիշատակարանը, նոյն թուականով ունի եւ Ալիշան*[5]*, որ իւր սովորութեան համաձայն տեղեկութիւն չէ տալիս, թէ որտեղից է առել: Մենք կարծում ենք, թէ տարբեր Ձեռագրից են երկու յիշատակարանները, որովհետեւ տարբեր վերջաւորութիւններ ունին: Ալիշանի յիշատակարանը Մանուէլի անուան յիշատակութեան հետ կցում է* «Եւ եղբօրն Բեշքենի», *որ չունի Փիրղալէմեանը: Հանավանքում ափսիդի պատի վերայ, խորհրդանոցի աջ կողմը, ուր գտնւում է Սիմէոն Վարդապետի արձանագրութիւնը Յայսմաւուրքի ընծայման առթիւ, ոմն Բեշգենի անունով գրուած է հետեւեալը·* «ՍԲ պատարագողք քի զԲեշգեն եւ զծնողսն իւր յիշեցէք ի քս *ամէն*» *(փակագրով)*: *Դժուար է ասել՝ Մանուէլի եղբա՞յրն է այս Բեշգենը, թէ Օրբէլեաններից է, որոնց մէջ ամենից աւելի ընդունուած էր այս անունը:*

Ս· Յակոբի երկրորդ յարկի արեւմտեան դրան աջ կողմը, Մանուէլ եպիսկոպոսն ունի 1471 Թուից հետեւեալ արձանագրութիւնը:

1· Ես *Մանվէլ* էպ*ի*սկոպոս որդի

2· պ*ա*րոնաւ*ա*գին թոռն *պարոնա*զի (*ի*–ն Զ–ի *բոլորակի մէջ*) բէ

3· *կի նե* տու զի *մա* յ*դի նա* շտ*ա*րակ·· որ է

4· Զիզ *ամին* եւ ջաղացս (*ս*–ն *ց*–ի մէջ) իմ որ է տեղն

5· բ· *նական* վ*ան*իցս ես էլ հաստատ

6· եցի սք ածածն*ի*ս ով որ հակառ

7· ակ իմոց *կամ ու* տ*ա*րաց: ԳԺ:

8· կ ԺԸ (s!): *Հայր* (*յ*–ի մէջ *ր*) *ապե*տացն*ա*ի (անի)ծ

9· ած եղ*ի*ցի: *Թվ իս*: Ջ :ի[6]:

Այս միեւնոյն արձանագրութիւնը գրուած է 1464 Թուի Մաշտոցի մէջ· Ալիշանը տալով վերոյիշեալ նոյնատիպ յիշատակարանը, աւելացնում է· «յետ նմանագրեալ բանիցս՝ յաւելու *ստացողն*» *եւ բերում է այս արձանագրութեան պատճէնը չնչին տարբերութեամբ· սորանից երեւում է, որ Յոհաննայ վանքի համար գրուած այն գեղեցկագիր Մաշտոցը յետոյ ընկել էր Մանուէլի ձեռքը, եթէ որեւէ թիւրիմացութիւն չկայ Ալիշանի հա–*

---

[1] Փիրղալէմեան—Նոտարք Հայոց 221:

[2] Զաքարիայ սարկաւագի պատմութիւն· 1870· Վաղարշապատ· 62· 79· 129· Զամբռ· ի Սիմէօնէ կաթողիկոսէ· Վաղարշապատ, 1873· 121· 122· 180· 188· 264· 268, եւայլն:

[3] Ձեռ· Երուս· № 149· Մեր Յիշատակարանների ժողովածու· տե՛ս Աստ, եր· 406:

[4] Յաւելուած № 3, Փիրղալէմեանի Նշխարք պատմ· Հայոց· անտիպ:

[5] Այրարատ· 198:

[6] Ընդգծուածները գրուած են կցումներով (լիգատուրաներով)· ա· տողը փորագրուած է աւելի խորը, իսկ երկրորդ տողի կէսը, մինչեւ «*Թո*» համեմատաբար երես, բայց խոր, քան մնացած մասերը:

ղորդագրութեան մէջ[1]): Մանուէլը նոյն արձանագրութեան տակ փորագրել է տուել եւ մի զոյգ խաչ, կողքին հետեւեալ արձանագրութեամբ. «Սբ նշան տէրունական (ո–ն ա–ի գլխին) / տր Մանվլին / լեր բաւար/ան»: Իսկ սրանց տակն են Աւագի եւ Խոնծայի խաչերն իրենց արձանագրութեամբ, որոնց մասին յիշատակութիւն եղաւ վերեւ:

Վեդիի հովիտը, ակունքներից սկսած, ուր գտնւում են Ազքիլխայ, Մանկիւք (Մանկուս), Զղին գեոլ, Քիւսիւզ, Զիմ, Խոսրով, Գարաբաղլար, Քէշիշ ղաղ, Զիմանքենդ, Վեդի գիւղերը մինչեւ Խորվիրապ Բջնոյ եպիսկոպոսների վիճակն էր. Խորվիրապի մասին վկայութիւններ տեսանք վերեւ. Մանկուսում, մի խաչքարի արձանագրութեան տակ գրուած է. «Ես տր Գրիգոր Բջնո եպիսկոպոս վկայ ե...»[2]). իսկ Ուրծում, որ Քէշիշքենդն է[3]), գրուած են ԺԵ. դարում ձեռագիրներ, երբեմն նոյն թեմի եպիսկոպոսների, ինչպէս եւ մեր Մանուէլի յիշատակութեամբ: Այսպէս, 1473 թուին Խաչատուր գրիչը գրել է մի մաշտոց, «ի հռչակաւոր գաւառս Արարատեան ի գիւղս, որ կոչի Ուրծ, ընդ հովանեաւ սբ ածածնիս եւ սբ Ստեփանոսիս. եւ ի հայրապետութե տր Մանուէլ արհեպսի[4])»: Այս Խաչատուրի աշակերտն էր Վրթանէս կրօնաւոր, որ 1491 թուին գրել է մի Յայսմաւուրք, «ի գաւառիս Արարատեան ի յանապատիս յՈւրծայ, որ կոչի Արջառերեկ, ընդ հովանեաւ սբ Սարգսի եւ սբ Յակոբի, ի հրպութեն տն Սարգսի եւ մերոյ հրպի տր Մանուէլի[5])»:

Թ.

Այսուհետեւ մեր տեղեկութիւնները Ազիբէկենց մասին դառնում են կցկտուր եւ անորոշ. մի յիշատակարանի մէջ 1555 թուին յիշւում է «մեծազգի եւ իմաստուն» «պրն տր Մանուէլ եպիսկոպոսը», որի խնդիրքով ոմն Մկրտիչ գրել է էջմ. № 1076/1087 ձեռագիրը. Տէր Մանուէլի հայրն է պարոն Միրզան, մօր եւ եղբայրների անունները չեն յիշատակուած: Եթէ այս Մանուէլը Ազիբէկենց ցեղից է, որ շատ հաւանական ենք համարում, իսկ Ս. Սարգիս զօրավարը Ուշուայ նոյնանուն վանքը, պէտք է ենթադրել, որ պարոն Միրզան Բեշքենի որդին էր, որովհետեւ Մանուէլ Գ.ի ուրիշ եղբայր մեզ յայտնի չէ[6]):

Մի պարոն Միրզա յիշւում է որպէս մեծ պապ մի Յակոբ վարդապետի, որ գործել է Խոր Վիրապում եւ Ուրծատափի Ս. Աստուածածին եւ Ս. Յակոբ վանքերում. Յակոբ վարդապետի հայրն է Տէր Շմաւոն, մայրը Ազիզ փաշայ. հօրեղբայրներն էին պարոն Տէր Յակոբ եւ Մելիք աղա, պապն էր պարոն Վէլիճանն, եղբայրները Գրիգոր կաթողիկոս եւ Աղաճան, իսկ մեծ պապը պարոն Միրզէն: Նոյն տոհմին են պատկանում, եւ գուցէ Յակոբ վարդապետի եղբայրներն են, արդէն մեռած Վէլիճանն ու Յակոբջանը, երրորդ եղբայրն է Ղուլիճան, նորա որդին Արիճան սարկաւագ, միւս որդին Զալապին, իսկ դուստրները Ազիզ փաշէն, Խանում աղէն եւ Դաստագուլը[7]): Երկու պարոն Միրզաները նոյն լինել չեն կարող, որովհետեւ այս երկրորդ Միրզայի որդիների շարքում չկայ 1555 թուին յիշատակուած պարոն Տէր Մանուէլ եպիսկոպոսը: Յակոբ վարդապետի համար ասուած է, որ նա Լուսաւորչի ցեղից է, ուրիշ խօսքով Պահլաւունի: Ըստ վկայութեան Սիմէոն կաթողիկոսի՝ Գրիգոր Մագիստրոսի սերունդը որդւոց որդի իշխում էր Հաւուց Թառի Ամենափրկիչ վանքին գրեթէ մինչեւ իւր ժամանակները: ԺԶ. ԺԷ. դարում նստում էին այստեղ մինչեւ իսկ եպիսկոպոսներ նոյն տոհմից. Հաւուց Թառի Պահլաւունիներից է այս Յակոբ վարդապետը, յիշատակարանի մէջ յիշուած կաթողիկոսը, որ Գրիգոր ԺԲ.ն է, եւ սրանց մեծ պապ պարոն Միրզէն:

Այս նոյն յիշատակարանի մէջ յիշուած է եւ պարոն Տէր Մանուէլ արքեպիսկոպոսը, անկասկած Ազիբէկենց տանից, «որ է առաջնորդ ի սուրբ Վիրապին եւ հայրն իւր Միրիմանն եւ մայրն իւր խանփարուարն եւ եղբայրն իւր... պարոն Էլպէկն, որ է հանգուցեալ ի Քրիստոս»: Յիշւում են անմիջապէս «պարոն Թանէրն եւ իւր հարսն Սօլթանզատէն», որ ամենայն հաւանականութեամբ եպիսկոպոսի ազգականներն են, գուցէ Էլպէկի կինն ու հարսը: Պարոն Միրիմանի հօր անունը մեզ յայտնի չէ, բայց եթէ ընդունենք, որ նա պարոն Միրզայի որդին էր եւ ԺԶ. դարու կէսերին ապրող պարոն Տէր Մանուէլի եղբայրը, Ազիբէկենց անընդհատ յաջորդութիւնը հաստատուած կը լինենք ԺԷ. դարու վերջերը:

Պարոն Միրիմանի որդի եւ Խոր Վիրապի առաջնորդ պարոն Տէր Մանուէլը յայտնի անձն է մեր պատմութեան մէջ եւ տարաբաղդաբար Ազիբէկենց փոքրիկ եւ ազնիւ տոհմի փառքին անհամապատասխան հռչակով: Հաւուց Թառի նոյնանուն եւ Գեղարդայ Աստուածատուր եպիսկոպոսների հետ նա Մելքիսեդ կաթողիկոսի կուսակիցն էր, որոնք երկու կաթողիկոսների հետ Սրապիոնին նախ կաթողիկոսութեան հրաւիրեցին, ապա Ջուղայում գժտուելով՝ բաժանուեցան նրանից 1602/3 թուին: Այս մարդկանց միացնում էր իշխանական միատեսակ ծագման հետ եւ հայրենակցութեան

---

1) Այրարատ. 198:

2) Շողակաթ. մեր յօդուածը՝ Զագավանից ժողովը. 31:

3) X. B. 1913. մեր յօդուածը Потомство Тарсаича եւլն. եր. 231:

4) Ձեռ. էջմ. № 964 (կար. 944):

5) Նմանահանութիւնը տ. Ալիշ. Այրարատ. 443:

6) Յաւելուած № 4, Ձեռ. էջմ. 1076/1087. 112ա: Մի ուրիշ «պարոն» կամ «բէկ» Միրզա անունով, յիշւում է 1502 թ., բայց նա Գեղամայ իշխաններից է, որոնք կապ չունէին Խոր Վիրապի հետ. Ջալ. Բ. 121. կոստանեան. Վիմական Տարեգիր. 175:

7) Ս. կանայեան, Յուց. Ձեռ. Ներ. դպր. 1893. եր. 40:

*ղպայմունքը. Մելքիսեդը Աղջոց Ս. Ստեփանոսից էր, որ ընդամէնը մի քանի վերստով հեռու է Հաւուց Թառից եւ Գեղարդից: Այս դժուարութիւնից յետոյ էր, որ Մելիքսեդը Հաւուց Թառի Մանուէլ եւ Գեղարդի Աստուածատուր եպիսկոպոսի հետ նախ Տաթեւ եւ ապա Սպահան գնացին եւ Շահ Աբասին Հայաստան հրաւիրեցին՝ կամակից հանդիսանալով նորա նախապէս արած որոշման: Յայտնի է, թէ ինչ հետեւանք ունեցաւ այս չար յղացումը, որ ոչնչացրեց նաեւ երկու եպիսկոպոսներին*1)*: Մասնակի՞ց էր այս մտքին եւ մեր Մանուէլը, ասել չենք կարող. նա Դաւիթ կաթողիկոսի հետ մնաց երկրում, բայց մինչեւ վերջ կուսակից Մելքիսեդին եւ ապա նորա եղբօրորդի Սահակին, նաեւ ընդդէմ Մովսէս Սիւնեցու կաթողիկոսութեան*2)*: Այնուհետեւ ինչքան ապրեց, յայտնի չէ*3)*:

*Ազիբէկենց վերջին շառաւիղների յիշատակութիւնն ունինք 1667 թուին Բջնեցի Եսայի Ջահընկալի մի յիշատակարանի մէջ, որ գրել է Ազիզբէկ Ա.ի եւ Վախախի աւետարանի վերջում, նորոգելով նորա սկզբնական յիշատակարանի վերջին մասը*4) *եւ կազմելով ձեռագիրը Բջնոյ վանքում: Եսային իւր գրած յիշատակարանի մէջ յայտնում է, թէ* «տեարք կենդանագիր եւ ճշմարտագիծ սրբոյ տառիս են Եղեվարդայ գեղջէ, յազնուական ազգէ, որպէս նախագրեալ յիշատակարանի աստ յայտնի է, յորոյ զարմէ եւ յարմատոյ սերունդքս այսոքիկ. Քրիստոստուր, Պետրոս, Ատիբէկ, Աղաբէկ, Ուլուխան, Ուլուբէկ, Առաքել, Հախում, Սարգիս, Վիրապ, Ազիբէկ, որդիք եւ թոռունք Շմաւոն քահանայի»5):

Սորա տակն էլ, ներքեւի լուսանցքում, Եսայի Ջահընկալի գրից տարբեր, նոտր գրով յետոյ աւելացրած է. «եւ թոռունք սոցին զԱկոբ սարկաւագն եւ զեղբայր սորայ զՅարութիւն յիշեցէք ի քս եւ դուք յիշել լիջիք առաջի քսի», *որից պարզ է, թէ նրանց սերունդները հասել են մինչեւ ԺԸ. դարը: Մենք տեսանք, որ Զաքարիա Սարկաւագի ժամանակ նրանք գոյութիւն ունին Եղվարդում. իսկ Սիմէոն կաթողիկոսը 1716 թուի համար յիշում է, որ Բջնոյ Յովհաննէս եւ Դաւիթ վարդապետները գնել են մի ջրաղաց,* «որոյ կէսն Ազիբէկենցն է լեալ»6):

---

1) Առաքել Դաւրիժեցի. 6. 12:

2) Անդ. 235:

3) Կոտայքի Առինջ գիւղում, որ գտնւում է Քանաքեռից քիչ հարաւ արեւելք, հիւսիսային բլրի գլխին, Ս. Աստուածածին կոչուած աւերակի մօտ, ընկած է եւ կտոր կտոր եղած մի խաչքար, որ կանգնած է եղել եռաստիճան բարձր պատուանդանի վրայ. խաչքարի առաջ երկու գերեզմանաքար օրօրոցաձեւի այն տեսակով, որ յատուկ է վերջին դարերին եւ այժմ էլ գործադրւում է վաղարշապատում: Խաչքարի ճակատին գրուած է ելնդաւոր, իրար կըցուած գեղեցիկ տառերով. «Սբ խա չս *բարէխաւս է Մանուէլ եպիսկպ*», իսկ ճակատի մէջտեղը եռաթեւ կամարի տակ (ստալակտիտ) «*ի թվ.* ռղէ» (=1648): Ապա «*Յակոբ վրդ. գ...*» (մի տառ կոտրած եւ մի քանի տառեր, որից բան չի դուրս գալիս): Ամենայն հաւանականութեամբ այս Մանուէլը նոյն է 1596 թուի գրիչ Յակոբ եպիսկոպոսի (վարդապետի) եղբօր «*պրն տէր Մանուէլի*» հետ, որ գրել է «*ի վանքս Առընջեաց ի դուռն սբ Մարիամ Աստուածածնին*» (Ալիշ. Այր. 295): Նոյն «*Յակոբ վրդպտիս յառընջեցոյ*» ձեռքով գրուած է ռխզ (=1597) թուին Ալէքսանդրապօլի Ս. Աստուածածին եկեղեցու մագաղաթ, միջին երկաթագրով աւետարանի երկրորդ ստացողի եւ նորոգել տուողի յիշատակարանը, «*ի առաջնորդութե սբ Էջմիածնա գպատուական* (Տ!) *եւ փառաւոր Հայրապետին մեր զտր* (Տ!) *Մելքսեթ կթղկսին ամ Հայոց*» (Մեր Յիշատակարանների ժողովածուն): Առնջեցի այս Յակոբ վարդապետը 1608 թուին Երզնկացու մի քերականութիւն է նուիրել ոմն Պօղոս վարդապետի (Այրարատ. 294): Այս նոյնանուն անձնաւորութիւնները չպէտք է շփոթել, կարծում ենք, վերոյիշեալների հետ:

4) Եսայի Ջահընկալը 1676 թուին եւս կազմել եւ նորոգել է մի աւետարան ոմն Բարաղամ երիտասարդի համար, որ նուիրել է Ծաղկունեաց Ձորի գիւղերից մէկի եկեղեցուն. գիւղի անունը գըրուած չէ, մի տողի չափ յիշատակարանում բաց է մնացած: Ձեռ. Սեւանի N° 14, այժմ բերուած էջմիածին:

5) Եղիվարդի երկու տանուտէրները՝ Աւագ իւր Սարուբէկ որդու հետ, եւ Սահակ, որ մասնակից եղաւ 1690 թուին Թամամ անունով կնոջ նահատակութեան, գուցէ, Ազիբէկենց տոհմից լինին (Զաքարիա պատմ. 116 եւ 128): Մի «Աւագ իշխանի» գերեզման գտնւում է եկեղեցու մօտ, որ յետոյ միայն Եղվարդեցիներից տեղեկացայ եւ անձամբ չեմ քննել գերեզմանը:

6) Զամբռ, 287:

ՅԱՒԵԼՈՒԱԾ

N 1

(Ձեռ· էջմ· № 238/356, կար· 231)

108բ· *Մարկոսի վերջում·*

Տր ած ողորմեա ստացողի սորա պարոն Վախախին եւ մեղաւոր գրչիս Ներսիսի պարտականի բազում քանքարաց· տն իմում:

Տր ած ողորմի Ազիզ պէկին եւ ամուսնոյ իւրոյ Վախախին ստացողաց սբ աւետարանիս ամէն:

258բ· *Տես վերեւ եր·* 407:

259ա· *Բուն գրչի ձեռքով·*

Փառք ամենասբ երրորդութեանն երիս անձնաւորութեանն եւ մի կատարեալ խսկութեան հաւր եւ որդոյ եւ սբ հոգւոյն:

Շնորհիւ տն սկսայ եւ ողորմութբ նորին կատարեցի ըզքառա/վ/տակ աղբիւրս ի լուսաւորութիւն մանգանց եկեղեցւոյ:

Քանզի սիրոյն արարչական որ սերմանեալ ի քեզ բնական· տայ զարթուցիչ ներքաւսական հասող յանումն արդիւնական: Զհոգին մթին նսեմական զանկելս ի հողս այս նիւթական: Սայ փոփոխէ լոյս պարզական, խառնէ ի գունդն անմարմնական: Զմիտս անմաքուր աշխարհական, որ ըստ ծովու ալեաց ծըփան: Սայ վերբերէ իբրոյ նըման, որպէս բընութիւնն է վերնական: Զանձն սգածեալ եւ հոգեկան ի պատճառէ ինչ տրտմական· սայ ներգործէ ուրախ(239բ·)ական ի թաղծութեանցն հիւծական: Եւ որ արբեալն է թըմրական ըմբող գինոյն յիմարական· սովաւ զարթնուն մըտառակ (sic): Որք այ սիրոյն բաղձան· գերազունոյ լուսոյն ցանկան· սորին թեւաւք վերասլանան մերձին ի տիպն անտեսական: Եւ զփոքրագոյն անձն մարդկան, որ է բնութիւն ծառայական·անտանելոյն եւ տիրական բնութեանն առնէ սա աւդարան: Ըղձայրագոյնն բարձրութեան, որ ի յերկնից երկին բընական, սայ վերբերէ խոնարհական, որք յիւր անուն ժողովեցան: (Ե)ւ զարարիչն հանրական որով բոլոր էակք ստեղծան· սովաւ կոչել որդիք մարդկան հայր ըստ շնորհի արժանացան1) :

Արդ գըրեցաւ սայ ի թվաբերութեանս հայկազեան տոմարիս եաւթն հարիւր եւ վաթսուն եւ եաւթն: Ի խընդրոյ հրաշափառ եւ հաւատարիմ ծառայիցն քի· պարո/ 240ա· /ն Ազիզ պէկին եւ ամուսնոյ իւրոյ պարոն Վախախին: Սոքայ էին բարէպաշտ ծնողաց զաւակ եւ յազնուական ազգաց եւ տոհմից· կամարարք եւ հանոյարարք արարչին ամենայն եղականաց: Եւ սոքա բարեպաշտ տեարքս մեր քաջ զաւրավարն ընդդէմ թըշնամեաց խաչին քի պարոն Ազիզ պէկն եւ բարէմ(իտ?) տիկինն մեր բարձրավիզն ի ցանկութիւն Վաղխախ· ի մանգութէնէ իւրեանց սնեալ և վարժեալք ամենայն բարէպաշտութբ· բըխէին ի բերանոյ իւրեանց զբանս քաղցրաճաշակս ի լըսիս (sic) մարդկան: Եւ զողորմութիւնս առ ամենայն աղքատս եւ զարդիւնս մեծագինս եւ գեղեցկատեսիլս առ ամենայն եկեղեցիս եւ աջովն ամբածածուկ եւ սիրովն հայրախնամ վարէին զկեանս իւրեայնց (sic), որպէսզի հանոյ թվեր (sic) ի յաշս (sic) էպիսկոպոսաց եւ վարդապետաց· քահանայից եւ ածասէր իշխանաց· աւրհնութիւն գովութիւն եւ փառս մատուցանէին / 240բ· / տվողին այնպիսի մաստութեան (sic) մարդկան: Եւ Վ.իշապն ահագին բարձրացուցեալ զգլուխս իւր եւ պշուցեալ հայէր ընդ յանհաս բարեպաշտութիւնն նոցա· նմլեցաւ սիրտ նորա եւ դէմս արարել գայր սառ··· (*երեք տառ*)մամբ ի վերայ նոցայ կլանել զնոսայ: Եւ հայեցեալ ի հեռաստանէ զհինք ախսէտէս (?) եւ փակաղակս ի վերա հինգ դրանցն որ ի վերա մարմնո նոցա եւ զհինգ սգաարանս նոցայ բեւեռեալս ի սէրն քի· ոչ կարաց մերձենալ առ նոսայ:

Էտես զաչս նոցա որ միշտ հոսէին զվըտակս արտասուաց ի ժամանակս աղաւթից եւ պատարագաց եւ միշտ ի վեր հայել ի գլուխն իւրեանց ի տր յս· եւ ոչ կարաց մըտանել ընդ նայ: Էտես զբերանս նոցա պարկեշտս յաւելորդ ուտելոյ եւ ի խմելո եւ որոշեալ յամ խեղկատակաց, յիշոցաց եւ ի բամբասանաց: Եւ զձեռս նոցա արգիլեալս ի զրկելոյ եւ ի ծեծելոյ· այլ միշտ եւ անխափան առատ յողորմութիս աղքատաց: Եւ զոտս նոցայ յերթեւեկս աղաւթից եւ / 241ա· / զաւակաց նոցա ի լսել զպատուիրանսն այ: Եւ դարձուցեալ զդէմս իւր ի նոց պեղծն խենեշ եւ ասէ· վայ ինձ բազմադիմի սպառնալեաւք եկեալ յաղթեցա ամաւթալից (sic): Եւ ասէ պեղծ թշուառական· արդ գիտեմ զինչ արարից· արկից զաւգահութիւն ի սիրս (sic) ընդանեաց սոցայ· զի որոշեսցեն զսոսայ յարկաց իւրեանց· եւ աբար այնպէս· տնկէ յառ նոսայ նախանձ եւ պատերազմ յարոյց ի մէջ եղբարց նոցայ եւ հողմով դիւական տարաբերէր զնոսայ իբրեւ զնաւս ի հողմահար ալեաց: Եւ նոցայ նախանձ արկել բանիւք բազմադիմ (sic) խոխոդէին զնոսայ: Եւ նոքայ զմտաւ ածեալս զայն որ առաքեալն հրամայէ, թէ ով մեկնեսցէ զմեզ ի սիրոյն քի· նեղութի· թէ անձկութի· թէ սով, թէ հալածանք, թէ մերկութի· զի սովորութիւն է այ փորձել զմարդիկ· թէ հարստութբն կու սիրէ զած թէ աղքատութբն այլ կու սիրէ որպէս զՈբ·

Եւ սոքայ ածահանոյ տեարքս մեր, որոշել /241բ·/ եալ (sic) յամենայն ընչից եւ ոչ հասան յուսոյն որ առ քս եւ համբերել ամէնայն հնարիցն սատանայի եւ ունամբ հոգւոյն ջախեցին զգլուխն բելիարայ: Եւ հայեցեալ ողորմածին այ զի գտան յաղթողք ընդդէմ թշնա-

---

1) *Յիշատակարանի այս մասը ստանաւոր է:*

մոյն· ապա ողորմագին աղէտիւք ժողովեաց զնոս (sic) ի խնամքն արարչական· եւ եդ զթշնամիս նոցա պատուանդան ոտից նոցայ: Եկեալ տեսին զբնակութիւն նոցա յաւերեալ եւ կործանեալ· եւ զաւանս իւրեանց զԵղիվարդ բնակութիւն աւազակաց եւ կամակցութբ ամենակալին այ զամէնայն ըզպարտսն հատուցին եւ վերըստին նորոգեցին ըսզայ (sic) բազում տգնութբ եւ չաբաչար վտանկաւք· մի մի ժողովել զգրուեալսն բազում եւ յոլով աշխատութբ ծառայութիւն կատարելով մեծափառ տերանց իւրեանց մեծին Շահինշահի եւ խոյանդ զային· եւ հեզաբար եւ հնազանդաբար շրջէին ընդ նոսայ մինչեւ ամ դիմաւք հաստատեցին զմեծ մենաստանն զԵղիվարդ· շինել զամ քանդեալս: / 242ա· / Եւ յետ այսր ամենայնի հոգին սբ շարժեաց ըզնոսայ եւ սկսան արդիւնս մեծամեծս մի մի յաւելոյր ածատիպ շնորհի ողորմածութեանն եւ կամք շինութեան զտուեն հոգւոյ եւ մարմնոյ:

Քաղցրատես եւ ողորմագութ պարոն (եքն?) մեր Ազիզպէկն եւ Վախախն սկսան շինել վանս ի կորդոյ· զուխտն սրբոյն Յակոբայ յանուն սբ առաքելոցն եւ զարդարեցին զնայ մեծամեծ վայելչութբ· ստացան բազում այգիս շուրջ զբնակութբն ուխտին: Եւ զներքս եկեղեցոյն զարդարեցին քանդակով նաղաշութբ ձեւացուցին զպատկեր ամէնափրկչին եւ զմաւրն իւրոյ ածածնին·եւ զառաքելոց եւ ըզմարգարէից միջնորդ արարել զնոսա առ բարէգութն ած: Եւ մեծագին գրեանս ազգի ազգի եւ մէծագին սգեստիւք զարդարեցին զնայ եւ արարին զնայ բնակութիւնս կուսանաց եւ ետուն զամենայն պէտս սգեստից եւ կերակրոց· եւ ոչինչ կարաւտք եղ (sic) յամէ զոր ինչ պիտո էր հոգեւոր եւ մարմնաւոր:

Եւ բարէպաշտ պար Ազիզպ եւ ածասէր տիկինն մեր Վախախն ուրախութիւ եւ ցնծութի մեծ արարին բազում զաւառաց եւ մեծ մենաստանիս Եղիվարդայ: Գնացեալ ի սբ ուխտն ածընկալ եւ տեսեալ զգնացս ջրոյն Եղիվարդա աւարեալս եւ խոպանացեալ որպէս զի թերեւս երեւէին հետք նորայ· եւ ածային նախախնամութբն վառեալ սիրտ նոցա եւ աջովն ապէնիազ թագաւորին քի զաւրացան եւ պն·· ետ·· իբր այր զմէջ ի··· արհացան· ոչ հաշվելով զծախսն· որպէս զուարդուն հրեղէն տագնապէին ոչ ունելով զհանգիստ եւ զքուն ի տվէ եւ ի գիշերի· եւ շուրջապատել զլեառն Արարատեան հասուցին զջուրն յորդառատ վըտակաւք փոյթընթաց յԵղիվարդ· եւ զդժվարութիւն սահմանացն եւ զոլով աշխատութիւնս եւ զտուրս արվեստաւորացն եւ զամենայն ծախսն ով կարէ ընդ գրով արկանել· եւ զանհասանելի երկրաչափ զհեռաւորութիւն տեղոյ: Որ ի քաղաքէն Բջնոյ մինչեւ Կարբի ոչ զը/243ա·/տանէին ջուր յարբումն մարդկան եւ պապակէին անցորդք ճանապարհաց ի տապոյ յաւուրս ամարայնոյ: Եւ ի զալ եւ ի մըտանել ջրոյն յանտաստանս մեր, վերստին նորոգեցան ամենայն արմատք եւ նորափետուր զարդարեցան եւ զըւարճացան ամէնայն կենդանիք· մարգ եւ անասուն· թոչունք երկնից եւ զազանք զովանաին· զուարճանային եւ ուրախ լինէին: Աւրհնէին զովէին եւ փառաւոր առնէին զած եւ բազկատարած ձեռաւք եւ մատնաղերս պաղատանաւք խնդրէին ի տուողէն բարեաց ի քէ շնորհել զերկայն աւուրս հանդերձ ամենայն ուրախութբ բարէպաշտ պարոնացն մերոց Ազիզ պէկին եւ Վախախին· կրկին կենաւք եւ երկու աշխարհաւք պահել զնոսա ամբողջ եւ անխռով ի կամս ողորմութեանն նորայ որ է ահել յաւիտեանս ամէն: Եւ յետ այսորիկ զաւրութի բարձրելոյն շրջապատել պահէր զնոսա / 343բ· / յամենայն հնարից սատանայի:

Արդ վս այսորիկ գրեցաք զգնացս վարուց նոցայ· զի բարի աւրինակ էին բազմաց· նոյնպէս եւ ոյք յառնեն ի սոցանէ ծաղիկ դեռաբոյսք արասցեն զվարս նոցայ եւ դարձեալ պատմեսցեն որդոց իւրեանց զի մի կորիցէ բարէպաշտութեան վարք նոցայ յաշխարհէ:

Արդ գրեցաւ սբ աւետարանս ձեռամբ մեղսասէր քահային (sic) Ներսէսի· ի յարարատեան զաւառիս ի մեծ մէնաստանիս յԵղիվարդ, ընդ հովանեաւ սբ Ածածնիս եւ սբ Գրիգորիս եւ սբ Յակոբիս եւ այլ միահամուռ սրբոց առաքել· հրամանաւ եւ արդեամք պարոն Ազիզպէկին եւ Վախախին յիշատակ ինքեանց եւ ծնողաց իւրեանց Աւագ պարոնին եւ Թամարին, Խարասլանին, եւ Ըզուքանայ եւ զաւակաց իւրեանց ի ժառանգութիւն եւ բարեխաւս առ քս· Թուխթանէ եւ անդրանիկ որդոյ իւրեանց Աւագին, Յովանիսին, (244ա·) Սարանդինոսին, եւս Սասանթանէ եւ ամենայն արեան մերձակայից, կենդանեաց եւ մեռելոց: Որ ետուն գրել ըսզայ (sic) մեծաւ փափաքանաւք ի հալալ արդեանց իւրեանց եւ պատուեցին զսայ ոսկով եւ արծաթով եւ ընծայեցին ըզսայ սբ առաքելոցն: Զի լիցի բարէխաւս եւ յոյս պարծանաց առ քս յաւուր մեծի հրապարակին· զի ընկալցին զսբ աւետարանս ի գիրկս իւրեանց բարէպաշտ իշխեցողքն մեր եւ տարել ընձայեսցեն քի այ մերոյ· եւ նա տարել ընձաէսցէ զնոսայ երկնաւոր հաւրն ասելով· եթէ ունին զբանս իմ ընդ յիւրեանս եւ նա դասեցուսցէ զնոսայ յանսպառ ուրախութիւնսն· զի գրեալ է· եթէ ուր ես եմ, անդ եւ պաշտաւնեան իմ եղիցի: Արդ աւարտումն արարից զի ոչ ներէ բանս բազմի:

Արդ ունկնդիր լերուք սակաւ բանից տն իմոյ Վախախին, լուսոյ որդիք սիովնի, զի ունի ինչ ասել ձեզ: (244բ·) Արդ ես Վախախս ծառա ծառիցդ քի պարտական բիւր քանքարաց տն իմոյ յսի, զմտաւ ածի զսէր արքայութեանն եւ զըսպառնիսն (sic) դըժոխոց եւ հայեց (sic) ընդ յիս ոչ ունէի թոշակ պատրաստել այն երկայն ճանապարհին եւ եմ թափուր յամենայ՟ն բարէգործութեց· զմտաւ ածի զանաչառ դատաստան քի և զի միայն եմ ան՟ առանց զաւրաց, զոր այժմ ունիմ, զի անդ աղքատք թագաւորին եւ մեծատունք հեռացեալ լինին ի տեսոյն քի եւ կապին ձեռք այնոցիկ, որք ի աղքատս ոչ արձակին· զի թէ մայրն իմ Եւայ զմի պատուիրանաւ անց եւ դատապարտեցաւ, իսկ ինձ որ բազումս քարոզին եւ ես անցայ զամէնեքումք, քանի՞ քանքարս պարտիմ տն իմում· արդ ո՞վ հանցէ զիս ի ծովէս մեղաց, որ տարաբերել ծփիմ իբրեւ զնաւս հողմակոծեալ յալեաց մեղաց· զի ամենեքեան ընձայէն այ զիւրեանց անձին գործեալ բարին, եւ ես գրկեալ (245ա.) բոլորովին յառաձիր (sic) պարգեւացն քի:

Արդ յոյս եւ ապաւէն զածածինն ունիմ եւ զիւր միածինն, որ զանառակ որդին ընկալաւ, որ աւազակին զդրախտն էբաց,որ զմաքսաւորին զաղաչանսն ընկալաւ, զնա յարարի ինձ յոյս եւ տեղի ապաւինի, զի գրեալ է թէ, որ ընդունի զբանս իմ եւ խոստովանեսցի զիս առաջի մարդկան, խոստովանեցայց եւ ես զնայ առաջի հաւր իմոյ, որ յերկինս է· եւ ես վս յուսոյն որ առ քս խոստովանեցայ զնա հաւատով յամ սրտէ եւ յամ մտաց եւ յամ զաւրութէ իմէ (sic)· եւ ետու գըրել զաւետարանս ի հալալ արդեանց իմոց բազում յուսով եւ փափաքանաւք յիշատակ ինձ եւ առն իմում եւ, բարի լըծակցին իմո պարոն Ազիզ պէկին եւ ծնողաց իմոց եւ զաւակաց:

Արդ աղաչեմ զամէնեսին բոլորով սրտիւ, զի ասասջիք այսպէս· տր· յս զերծոյ զծառայքն քո զԱզիզ պեկն եւ զՎախախն յանեռելի տանջանացն, եւ քս որ առատն է տուրս (!) բարեաց մեզ եւ ձեզ ողորմեսցի եւ քսի փառք յաւիտեանս ամէն: (245բ.)

Ըստ նմին եւ ես անարժան ծառայս քի Ներսէս գրիչս արժանի եղայց մտանել ի պատիւս տերանց իմոց, որ ելեալ ի գաւառաց իմոց մոլորական շրջէի տարաշխարհիկ ի վերա ամ երկրի որոշել ի ծանաւթից եւ յազգականաց իմոց, վայրապար եւ թափառնակի վարիւք, որպէս զի ոչ էի հանոյ յա(յ)ս իմաստնոց: Եւ բարեպաշտ իշխեցողքս իմ մէծափառ պարոնս Ազիզ պէկն եւ ծնողագութ տիկինն իմ Վախախն, տեսել զվայրապար կացս իմ ածին զիս առ իւրեանս գթացեալ ի վերայ իմ եւ արարին զիս խելամուտ, ուսուցին ինձ զամենայն հանճարս իմաստութե եւ բարի մասն ցուցին ինձ եւ անարգիս պատիւ եդին եւ ընկալան զիս յարկս (sic) իւրեանց· որպէս հաւ, որ ժողովեսցէ զձագ իւր ընդ թեւաւք իւրովք, այնպէս ծնողագութ աղետիւք սիրէին զիս սրտի մտաւք: Որպէս զի մարդասէրն ած ընկալցէ զնոսայ յարկսն յաւետենից: Եւ ես ուխտ արարի միջնորդութբ աւետարանիս ծառաել զնոսա (246ա.) մինչեւ[1] հասցէ առ իս կոչումն ի վերին կոչողէն, զի յետ այ եղեն ինձ խնամածոյք եւ բազմադիմի պատուով ընկալան զիս:

Եւ ես աղաչեմ զերկնաւոր քահանայապետըն քս տալ ինձ արիութիւն եւ իմաստութիւն ծառայել անվրէպ եւ անփորձ երկուց տերանց հոգեւորի եւ մարմնաւորի: Հոգեւոր ծառայութեբն ծառայել զքս, զի կոչեաց զիս ի կարգ քահանայագործութե եւ պաղատանօք խնդրեմ յինքեան անամօթ գործով հասուցանել զկարգս իմ ամ գործովք *առ*առաքինութեամբ ի տր իմ յս քս, զի մի խոտան գտայց առաջի ահեղ ատենին: Եւ մարմնաւոր ծառայութեամբն ծառայել զերկու քսապըսակ իշխեցողքս զպարոն Ազիզբէկն եւ ըզքաղցրագութ տիկինն իմ զՎախախն, անխարդախ եւ աներկմիտ սրտիւք:

Եւ ես երես անկեալ աղաչեմ զձեզ զսրբասէր որդիք սիոնի, յիշեցէք զիս զանարժան քահանայս զՆերսէս գրիչ, եւ զծնողսն իմ, եւ զայնոսիկ, ոյք յոյս եւ ակընկալութի ունին ի մեզ եւ դուք յիշեալ լիջիք ի քէ այ մերոյ, որ ես օրհնեալ յաւիտեանս ամէն:

Շնորհօք եւ առատ գըթութեամբ գերապատճառ էին հօր եւ որդւոյ եւ հոգւոյն սրբոյ, վերստին նորոգեալ կազմեցաւ կենսունակ աւետրնս, ձեռամբ ապիկար Զահընկալիս Եսայեայ գոլով տեղեաւ եւ կայիւ Բջնեցի, որդի տէր Ստեփաննոսի: Բայց տեարք կենդանագիր եւ ճշմարտագիծ սըրբոյ տառիս են Եղեվարդայ գեղջէ, յազնուական ազգէ, որպէս ի նա(246բ.)խագրեալ յիշատակարանի աստ յայտնի է, յորոյ զարմէ եւ յարմատոյ սերունդքս այսոքիկ· Քրիստոստուր, Պետրոս, Ատիբէկ, Աղաբէկ, Ուլուխան, Ուլուպէկ, Առաքել, Հախում, Սարգիս, Վիրապ, Ազիպէկ, որդիք եւ թոռունք Շմաւոն քահանայի, իւրեանց սեպհական եւ հայրենական հոգեւորական գանձ ունելով զմատեանըս սուրբ: Վասն որոյ եւ նորոգել եւ կազմել ետուն գոյիւք իւրեանց բազմատենչ փափագանօք, առ ի յիշատակ հոգւոց իւրեանց, զի միջնորդութեամբ ածախօս կտակիս յանցանք նոցին քաւեսցին եւ սրբեսցին: Եւ արդ որք պատահիցիք ընթերցմամբ եւ ոյք ժառանգիցէք զսուրբ աւետարանս վայելմամբ յիշել յօժարեսջիք բարի մտօք առ ած, զի կենդանեաց եւ ծնընդոց նոցին յերկարակեցութիւն կենաց տացի· եւ ննջեցելոց իւրեանց արքայութիւն պարգեւեսցի յամէնառատ գթութեց քի այ մերոյ, ամէն:

Այլ նորոգումն ընկալաւ կենսակիր տառս այս յամի հազար երորդի հարիւրերորդի քսան եւ վեցերորդի թուականութեան հայկական տօմարի, ի թագաւորութեան Պարսից Շահ Սուլէմանի եւ ի հայրապետութեան տեառն Յակոբայ ընդ հովանեաւ ամենասրբուհւոյ ածածնի նախապատիւ վանիցն որ ի Բջնի հաստատեալ է: Առաջնորդութեան սմին աթոռոյ քաջ հռետորի եւ անյաղթ փիլիսոփայի տեառն Մովսէսի րաբունապետի եւ արհեպիսկոպոսի, որ փայլէ իբրեւ զարեգակն ի մերում միջի, տանըս Արարատեան նահանգի, յորում գոյ այցելու եւ հոգէբարձու այժմուս, քաջաջան վարդապետն Վարդան կոչմամբ: Վերջ:

Ներքեւի լուսանցքում, նոտրգրով յետոյ է գրուած·

«Եւ թոռունք սոցին զակոբ սարգաւագն եւ զեղբայր սորայ զՑարութիւն յիշեցէք ի քս եւ դուք յիշել լիջիք առաջի քսի:

---

[1] *Այստեղից նորոգուած է յիշատակարանը Եսայի Բջնեցու ձեռքով:*

№ 2

փառք համագոյ անբաժա
նելի սբ երրորդութեանն
հաւր եւ որդւոյ եւ հոգւոյ սրբոյ :

ՏՐ ԵՒ ԱԾ ԸՆԴՀԱՆ
բական քեզ գոհութի եւ փա
ռս տամ, որ հասուցեր զմեզ 'ի
վախճան, յաւարտ բանիս այս
փափագման :

Երաժըշտացս այս որ ի ձայն,
շարեալ ականցըս զանազան :
որ յամենայն տաւնըս լըրման,
երգի ի փառս աստուածութեն :

Բաբունաբանիցս ուսումնական,
որում երգէք զայս շարական,
զիս զըստացող այսըմ տաւղեն·
յիշէք ի յերգս այս ընթերցման :

Մանուէլ զիամբակս այս անարժան,
եպիսկոպոս տրուպւանպիտան,
զաջորդ բըջնոյ ուարարադեան,
եւ վիրապին սբ զտեղապան :

Այլ եւ զմին ածանման,
զտր վանականն արհիական,
որ կայ տըքնեալ այժմ ի տապան,
յիշէք յաղաւթըս մաքրական :

Նաեւ առնէք յիշման արժան,
զմեր մարմնական զծընօղքն արեան,
զհայրն իմ շապուհ յազատ տոհմեան,
զմայր ջանխաթուն բարի անուան :

Ու որք քան զսոքա յառաջելկան :
զպապ անուանեալքըն մեր բնական :
զթայինւարջուկ զաքարիայն
քս հանգչի հոգիս նոցայն :

Իւսմամբ եղբարց մեր միաբան,
սոցին անուամբս որ յիշեցան :
որք կան եղեալ հող ւի տապան,
յիշէք ու ասէք զտր ողորմայն :

Իսկ մերձաւորն իմոյ արեան,
զմեծն ազիզբէկ եղիվարդեան :
ու աւաքն որդի եւ զաքարայն :
եւ ըզթոռնունքն իւր միաբան :

էնն ի յէէն հաւր յէութեան,
աւրհնէ զնոսա զամենեսեան :
պահէ ի խնամս ածութեան,
նախնեացն ցաւղ տայ ի տապան :

Լուր զի ասեմ լիաքերան·
զմեր հոգեւոր զծնաւղքն յաւազան,
զպարոն սատրիկն վահապեան,
զպրն վախախն բարի անուան :

էիցս տրն ամենախնամ,
աւրհնէ զնոսա միշտ յարաժամ :
խնամէ զորդիքն իւր սասան,
ւաւրհնէ զնախնիքն ի գերեզման :

Բոտեալ ընդ այս սբ օրհնութե,
յիշեմք զհոգցող էսանբուղայն,
զիւր կողակիցն աղաւթական,
զորդիքն ամէն որ են մեր սան :

Գովեալ զգըմիրն մրցական,
ըզպրն շեխն իմ ազգական :
եւ զկողակիցն իւր ռուսուտան,
յիշէք յաղաւթըս մաքրական :

Եւ զիւր որդիքն պատուական,
պահէ քս միշտ անսասան :
ննջեցելոցն իւր ամենայն,
տացէ պսակ սբ անթառամ :

Զմանկասարենց խութլու բուղայն,
զորդի եւ զթոռն իւր զամենայն :
որ են խնամիք եւ բարեկամ,
զնոսա աւրհնէ ածըն բան :

Այլեւ յիշեմ ըզմանկական,
զեղբաւր որդիքն իմ ծիածան :
զփոքրն սարգիս զմեծ զաքրյն,
որ կու փայլեն ըստ հարցն անուան :

ՅՍ հըզաւր աստուածն բան,
պահէ խնամաւքն իւր էական :
աստ յերկարեալ կեանս աջողման,
ւի հոգեւորն զզատ մնան :

Սոյնպէս զորդի մեր ւազգական,
ըզտիրացու ըզպաքեղայն :
եւ զքահյապետ անուան,
զնրաքողըոչ ձեռացս ածման :

Բանն եւ ժառանգըն հայրական,
խնամէ ի կամս իւր անսասան :

մինչեւ ի կէտ յիւրեանց կոչման,
մեզ յիշատակ անփորձ մնան:

Այլեւ զգրիգոր ըզփիլիսոփայն,
զփոքր յոհաննէսն ազգանման:
որ են որդիք մեր սնընդական,
պահին խնամաւքն ածական:

Նաեւ սրտաց մեր զքարեկամ,
զՆերսէս երեցն ի յաւշական:
եւ զփարպեցի գրիչ աքեղայն,
գրեսցէ քս ի գիր կենդան:

Նոյն զյովաննէսն իմ ազգական,
աւագերէցն ի յերեւան:
զհիւսանց երէցն յոհանավան,
զդաւիթ մողնոյն եւ զայլք որ կան:

Նոյն եւ աւրհնէ ածըն բան,
զքջնի զգառնի եւ զերեւան:
եւ զաշտարակըն գեղավան,
որ են աթոռք մեր եւ կայան:

Նաեւ զկարբի քաղաքավան,
հանդերձ երկրովն իւր միաբան:
զքահանայք ւաշխարհական,
աւրհնէ քս միշտ յարաժամ:

Նաեւ զամէն ընթերցական,
զբոլոր զաւառն արարադեան:
զգեղական եւ զվանական,
զպատուողք անձինս այս անարժան:

Նոյն եւ որք մեզ յանձին եղան
կամ երախտիք առ մեզ մնան:
ընդ անցաւորիս ընչից փոխան,
առցեն զանանցն անեղծական:

Նաեւ որք մեզ ծառայական,
սպասաւոր են հնազանդութք,
առցեն զվարձըս շահեկան,
ի քէ յաւրն անվախճան:

Նոյնպէս ամէն ուղղադաւան,
որ զիմ քսըն հաւատան, ողորմութեան
արժանանան, ատ ներկայիս
ու յաւրն ապագայն:

Նաեւ ի վերջ բանիս դառնամ,
յիշեմ զաչացս իմ լոյս փայլման·
զիմ յովհաննէսն
զծրող եւ զծաղկող գրոցս այս լման:

Նա որ ծրեաց զծիրս վերնական,
եւ ծաղկեցոյց աստղանման:
ծըրէ զսա ի գիր կենդան,
ծաղկէ ի փառս ածութեան:

Այլ աշխատանքն յանձնառական,
զոր գործեաց նա սիրոյ փոխան:
վարձահատոյց տրն ամենայն,
լիցի նմա ատ ու յապագայն:

Եւ ըզփափագն իւր ըղձական,
լընու որպէս նա զմեր հրաման:
եւ զիւր ծնօղաց հոգին բնական,
արքայութեն առնէ արժան:

Որով աւրհնի ածըն բան·
երգեցողաց զայս ի բերան:
եւ որք յիշեն զմեզ լիակամ·
յիշուին ի փառս ածութեան[1]):

Զարժանաժառանգ զտ հոգւոյ
հայրն իմ եւ զուսուցիչն· զյովս փիլիս
ոփայ աղաչեմ յիշել ի քս եւ ած զձեզ:

Ո՛վ կուսից պարծանք եւ մայր բանին այ, բարեխօսեա սակս տր մանուէլի սորին ստացողի, եւ զքեզ մայր տն դաւանողի: Նաեւ վասն մեղաւք մեռեալ ոգւոյս յոհսի, գրչի եւ նկարողի:

Թվիս ութ հարիւր եւ վեշտասան,
ծրեալ եւ ծաղկեալ այս բուրաստան:
յոհաննիսի գրչի ձեռամբ,
ի փառս սբ երրորդութեանն:
Արդ եղեւ զրաւ գրչութե սորա·
եւ ոսկիազարդ նկարակերտութե·
ի յայս եւ ի սոյն ժամանակի զոր ի վերոյ
գրեցաւ: Ի սբ եւ յերկնահանգէտ եւ ի
գերահռչակ ուխտս որ կոչի Սանա
հին: Ընդ հովանեաւ մօրս լուսոյ սբ
ածածնիս· եւ ածընկալ սբ նշանացս:
Առ ոտս դզր վդտի· եւ երջանիկ հարազատի
իւրոյ յովս ճգնազգեաց փիլիսոփայի:
Հրամանաւ սրբազան վե
հին իմոյ· երջանիկ եւ առաքելաշնորհ
արհիական գլխոյն մեծի: Մետրա
պօլտի եւ վերադիտողի՝ երկնաքա

---

[1] *Մինչեւ այստեղ ոտանաւոր է եւ պահուած է Ձեռագրի տողատումը: Հետեւեալ յիշատակարանները գրչին են: Բոլոր յիշատակարանների մէջ պահուած է Ձեռագրերի ուղղագրութիւնը:*

տակ տանն արարադեան: Եւ տե
ղապահի երկնահանգէտ աթոռ
ոյն սբ տեղեացն· այսինքն, անդնդլական
վիրապին· հնգետասանամեա չար
չարանաց արփիաւորչին մերոյ սրբոյն
գրիգորի: Որ եւ ածային ընտրութքն
շնորհեալ ի տէ հովիւ եւ առաջնորդ
բանաւոր հաւտի: իշխան եւ իշխեցող
ի վերայ երկոտասան վիճակաց:
Որոյ անուն իր· եւ պատկեր զտիրա
կանին ունելով՝ զտղայացելոյ բան
ին այ, ըստ ամովսածնին ձայնի· է
մանուել՝ որ թարգմանի ընդ մեզ ած:
իսկ սա ըստ մեզ ածակոյս կողմանէ
տր մանուէլ գերահռչակեալ: Նաեւ
ոչ ի յռամիկ ժողովրդոց ընտրեալ,
այլ ի յազատատնէ եւ ի սեփական
ազգէ: Որ եւ ըստ անուանն նոխու
թե եւ ըստ վարուցն մաքրութե, ի
վերջին ամանակիս՝ փայլէ ի տանս
արեւելեան, որպէս զարեգակն ի
մէջ աստեղաց: շնորհազարդեալ
փիլիսոփայական հմտութք ածա
շունչ մատենից, եւ երաժշտական եղանա–
կաց: սիրող սրբոց· զարդարիչ տաւնից,
բարեկամ քի, եւ ախոյեան հաւատոյ:
Որ եւ ըստ իւրոյն բարերոյս բարուցն
յամ ժամ ստանայր զանձ անկողոպտե
լի, զաւակ ի սիովն, ընդանի եւ բարե–
կամ ի վերինն եմ: Որով ընդ բազմաց
եւ զայս փոքրատուփ գիրք շրկնոցիս
ստացաւ: այլ ոչ եթէ կարօտի իւիք՝
բազմաց բաշխողին, զի ունէր քան զայս
այլ իմն պատուականք եւ մեծարգոյք
ամ կատարելութք ստացեալ· զոմանս
ընչիւք, եւ զայլսն ի նախնեաց ժառան
գեալ: իսկ ես զկրտսերս սիրելի
վարկանիմ քան զամն՝ վեհին իմոյ,
վս զի իւրոյն տիրական մատամբն է
քանդակեալ· եւ բազում արդեամբք երկ
նեալ, եւ առատաձիր պարգեւաք դար
մանեալ եւ ոսկենանանչ վարսանո
ցաւ զարդարեալ· եւ բեհեզեա նափոր
տամբ պարուրեալ: Եւ իբր նորածին
թագաւորի որդւոյ· զոմն ապաշնորհ·
յոհաննես անուն, թագադիր եւ դաստի
արակ հրաւիրեալ: Զոր եւ իմ ընկալեալ
զհրամանք վեհին մեծի· եւ վասն զի ան
հրմուտ էի յոյժ, տգէտ եւ փանաքի այսմ
արհեստի ի գիր եւ ի ծաղիկ· ոչ սակաւ
աշխատութ աւարտեցի զսա բազում
միջոցաւ ի փառս քի այ: Բայց դու ո՞վ
ածարեալ եւ ուղղափառ հաւա
տոյ գլուխ, ահա ընծայեմ իբր զլու
մայս այրոյն՝ զքոյս ի քոյոց՝ քումդ
գանձարանի, եւ յերեսս անկեալ մոխ
րաթաւալ դիմօք· տատանմամբ
մատանցս աղերսիւ, հայցեմ սիրով
ընդունել· եւ սխալանաց եւ խոշորու
թեն ներել թողութք· զի այսչափ էր
կար մեր: եւ յիշել բարի մտաւք զիս
եւ զիմսն ամ· Նաեւ վերոյգրեալ
վարժողացն իմոց՝ եղիցի մասն յիշա
տակի: Ո՞վ մեծի պարգեւացն զոր յու
սով հայցեմ ի տէ՝ ի ձեռն ձեր սբ աղաւ
թիցդ· զի արժանի արասցէ զկիսակեն
դան եղկելիս ՛ եւ զանուղազնացեալ
գերիս· տեսանել զերջանիկ դիտապե
տդ մեծ· յառանձնացեալն եւ ի հասա
րակ ժամին· ի համաշխարհական եւ ի
յահաւոր ատենին ընդ երջանիկ հայ
րապետացն դասին, ի տեսութին ածայ
ին: Ունելով զսա՝ կրկին պսակ ի գլուխ
քո· եւ մանեակ ոսկի ի պարանոցի քում,
եւ ակն պատուական ի վերայ սբ լանջացդ
տպաւորեալ առ ինքն զտիպ ցուցակի
տիրական պատկերին եւ զսբ տնօրինա
կանացն որք աստ ի ձէնջ պատուեցան:
ամէն եւ եղիցի:

№ 3

(Փիրղալէմեանցի յիշատակարանների ժողովածուից «Նշխարք պատմ· Հայոց»)

1469· *Ջժը· 222 ի մի Սարգիս գրչէ·*

Փառք ամենասուրբ Երրորդութեան...:

Արդ գրեցաւ գիրքս այս ձեռամբ անարհեստ գրչի Մատթէոսի սուտանուն աբեղայի... ի թուաբերութեանս հայկազեան տումարի ջժը (1469) ի հայրապետութեան տեառն տէր (անուն մոռացեալ եմ գրել թերեւս, բայց ի սմին միջոցի Արիստակէսն էր կաթուղիկոս յէջմիածին, տես ի վերոյ 212 եւ 216 թիւ յիշատակարանս) ի յաթոռն սուրբ էջմիածնի: Եւ ի ղանութեան Ջհանշի սկսեալ եղեւ գիրքս եւ սպանաւ նա ի ձեռաց Հասան բէկի, եւ եկեալ տիրեաց երկրիս մեր (Հասան բէկն) եւ փախոյց զորդի Ջհանշին զՀասան Ալի· եւ մեր առեալ գիրքս փախեաք տեղէ ի տեղ եւ յամենայն ժամ փախուստ եւ սասանումն զայր եւ հասանէր ի վերայ· եւ մեր զամենայն արհամարհելով ի բաց ընկեցաք զայս ամենայն· զի մէկ տարի եւ վեց ամիս նոյնպէս կայեաք ի վարանի, ի գաւառիս Արարատեան ի գեղաքաղաքիս Եղիվարդայ, որ կայ առ ոտս յԱրայոյ (լերինն), ընդ հովանեաւ սուրբ եւ գմբէթաձեւ եւ խարսխայտակ եւ հաստակառոյց վիմօք շինեալ սուրբ զանկազատանս, որ յանուն սուրբ Յակոբիս եւ սուրբ կուսանաց եւ Աստուածընկալ լուսատու սուրբ նշանիս, ի յառաջնորդութեան վանիցս (Եղիվարդայ) նմին տէր Մանուէլի (Եպիսկոպոսի)․ ստացող տառիս զՄանուէլ եպիսկոպոսն․․․։ (212 թիւ Աւետարանի գրիչ Մատթէոսն է)։

1881 յուլ․ 2 յԱմրդօլու վանք․

№ 4

(*Ձեռ․ էջմ․* № 1076/1087)

(112ա․) Գրեցաւ ձեռամբ ոգնամեղ եւ անպիտան Մկրտիչ անարժանի, ի խնդրոյ մեծազգի եւ իմաստուն տր Մանուէլ արհեպսին, ի դուռն սբ Սարգսի զաւրավարին, ի կթղկութեն տն Միքայէլին, առաջնորդ տեղոյս տր Փիլիպոս արհեպսին, բռնակալութե Թահմանշահին, ի թվկնիս․ ոդ․ Ով սրբազան հայրապետք, յորժամ կարդայք զսբ գիրքս, յիշեցէք ի մաքրափա(112բ․)յլ յաղաւթս ձեր զպրն տր Մանուէլ եպսն, որ ետ գրել զգիրքս ի հալալ ընչից իւրոց, յիշատակ իւրն եւ ծնաւղացն պրն Միրզին եւ մաւրն եւ եղբարցն եւ ամ յարեան մերձաւորացն կենդանեացն եւ ննջեցելոց։

Յիշեցէք զՄամախաթուն ապաշխարողն, որ շատ աշխատանք ունի վր վանացս․ ած վարձս բարեաց պարգեւեսցէ իւր հոգոյն ամէն։

Ծանօթ․— *Աչքիցս վրիպել է իր տեղում նշանակել հետեւեալ փոքրիկ արձանագրութիւնը Եղիվարդի զանգակատան հարաւային պատի վրայ․*

«Ես Մոսէ*սի* *որ*դի Գրիգորն սրկ / թվ ոնղ վերըստին նորոգեցի»։

ՏԱՐՍԱՅԻՃ ՕՐԲԷԼԵԱՆԻ
ԵՒ
ՄԻՆԱ ԽԱԹՈՒՆԻ ՍԵՐՈՒՆԴԸ

Ա·

Տարսայիճը Օրբէլեանց տոհմի նշանաւորագոյն ներկայացուցիչներից մէկն է, Լիպարիտ Օրբէլեանի որդին: Սմբատ «արքայ»ի մահուանից յետոյ, 1273 թուին, նա իշխանապետութեան գլուխն է անցնում եւ ամենայն փառաւորութեամբ կառավարում մինչեւ իր մահը՝ 1290 թիւը: Տարսայիճի առաջին ամուսինը Արուզ Խաթունն էր, ազգով Իսմայէլացի, «դուստր տեառն Սիւնեաց», «որ եղեւ քրիստոնեայ եւ երեւելի հաւատով եւ երկիւղած յԱստուծոյ»[1]: Բայց սորա կենդանութեան ժամանակ, որից երեք որդի ունէր արդէն, նա երկրորդ կին բերեց Խաչենոյ մեծ իշխան Ջալալի դուստրը՝ Մինա Խաթունին: Ներկայ յօդուածի նպատակն է այդ ամուսնութեան եւ նրանից յառաջ եկած սերնդի մասին մի քանի խօսք ասել, որ Օրբէլեանց տոհմի պատմութեան մութ հատուածներից մէկն է, որքան հնարաւոր է եղել մեզ մինչեւ այժմ չհրատարակուած արձանագրութիւնների եւ յիշատակարանների հիման վերայ լուսաբանել:

Ե՞րբ է կատարուել այդ ամուսնութիւնը: Ստեփաննոս Օրբէլեան յիշելով այդ իրողութիւնը, ժամանակի մասին որոշ ոչինչ չէ յայտնում: Բայց նրա խօսքերից հնարաւոր է այդ ամուսնութեան մօտաւոր ժամանակը որոշել: «Սա (Տարսայիճ) առեալ զթագաւորն Վրաց Դաւիթ՝ գնայր ի տունն Խաչենոյ, առ որդի մեծ իշխանին Ջալալին Աթաբէկն· եւ առնոյր զքոյր նորա ի կնութիւն, զՄինա խաթունն առ կենօք առաջի ամուսնոյն»[2]: Այս խօսքերից պարզ է, որ Մինա Խաթունի հայրը, Ջալալ մեծ իշխանը, մեռած էր արդէն, երբ Տարսայիճ հարսնախօսութեան գնաց: Գանձակեցուց յայտնի է մեզ, որ Ջալալ նահատակուել է Թաթարների ձեռքով 1261 (ՉԺ·)[3] թ· որով եւ այդ ամուսնութեան terminus post quem-ը գտած կը լինինք: Օրբէլեան իր ժամանակագրութեան մէջ համապատասխան փրկչական թիւը նշանակում է 1263, որ աւելի ճիշդ է: Երկու տարուայ տարբերութիւնը հետեւանք է հայ թուականի սկզբնաւորութեան տարբեր նշանակումի: Իսկ terminus post quem կարող է լինել Վրաց վերոյիշեալ Դաւիթ թագաւորի մահուան տարին, որ Օրբէլեան 719 է նշանակում, ըստ իր հաշուի հաւասար 1271–ին[4]: Այսպիսով, ուրեմն, Տարսայիճի եւ Մինա Խաթունի ամուսնութիւնը 1263—1271 թուերի մէջ է կատարուել:

Տարսայիճ արդէն բաւական մեծ հասակ ունէր, երբ ամուսնացաւ Մինա Խաթունի հետ: Տարսայիճի ծննդեան տարին յայտնի չէ· բայց հայրը՝ Լիպարիտ Օրբէլեան՝ յիշատակում է նորա անունը իր միւս որդիների հետ Նորավանքի շինութեան մեծ արձանագրութեան մէջ ՈՀԱ = 1222 թուին[5]: Արդ, 1222 թուին նոյն իսկ մի տարեկան համարենք եւ Մինայի հետ ամուսնութիւնը 1265 թուին, նա կը լինէր 43 տարեկան, բայց հաւանօրէն 1222 թուին նա մի տարեկան չէր, այլ աւելի մեծ:

Օրբէլեան յիշելով հօր երկրորդ ամուսնութիւնը, աւելացնում է, «ընդ որ ոչ հաճեցան օրէնք եւ վարդապետք եկեղեցւոյ»[6]: Այս խօսքերից չպէտք է այն եզրակացութիւնը հանել, թէ Տարսայիճի կենակցութիւնը Մինա Խաթունի հետ եկեղեցական ամուսնութեամբ չէր: Արձանագրութիւնների մէջ շատ յաճախ յիշում է Տարսայիճ Մինա Խաթունի անունը, որպէս իր օրինաւոր ամուսնու: Տարսայիճի սէրը դէպի Մինա Խաթունը եղել է շատ ջերմ· մինչդեռ Արուզ Խաթունի յիշատակը ոչնչով չէ յաւերժացրել, յաճախ նուիրատուութիւններ է անում կամ շէնքեր շինում Մինա Խաթունի անուան յիշատակութեամբ:

Մինա Խաթունի անուան ամենահին յիշատակութիւնը արձանագրութիւնների մէջ ՉԻԱ = 1272 թուից է, Ըղուերձու Ս. Աստուածածնի պատի վերայ[1]: Ուշադրութեան արժանի է այստեղ այն հանգամանքը, որ Տարսայիճ իրան «իշխանաց իշխան» է անուանում, եւ «կողմնակալ յայսմ նահանգի, զոր ետ մեզ Ած· ի Բարկուշատայ մինչ ի դաշտն Դվնայ»: Նա այդպիսի տիտղոսներ գործածել չէր կարող Սմբատ արքայի կենդանութեան ժամանակ: Բայց դորանից, յայտնի է, որ նա եղբօր կենդանութեան ժամանակ միայն Որոտան կողմերի իշխանն էր[2] եւ չէր կարող նորա իշխանութիւնը տարածուիլ Բարկուշատից մինչեւ Դվնայ դաշտը: Բայց Օրբէլեանի պատմութեան եւ Սմբատ արքայի դամբարանի արձանագրութեան համեմատ, վերջինս վախճանուել է ՉԻԲ = 1273 թուին[3]: Այս հակասութիւնը, կարծում ենք, այսպէս պէտք է բացատրել: Ըղուերձու եկեղեցին շինել են Տարսայիճ եւ Մինա Խաթուն ՉԻԱ = 1272 թուականին, բայց արձանագրութիւնը գրուած է քիչ յետոյ, երբ արդէն մեռած էր Սմբատ, եւ Տարսայիճ յաջորդել էր եղբօրը իբրեւ իշխանաց իշխան եւ կողմնակալ Օրբէլեանց իշխանապետութեան: Արձանագրութիւնից տեղեկանում ենք, որ երկու ամուսինները եկեղեցին շինում են «ի փրկութիւն հոգւոյ եւ յերկարութիւն կենաց», հողեր նուիրելով «ի պէտս սպասաւորաց»: Իսկ «ներքի ծաղկոցն» Տաթեւի վանքին լուսագին են տալիս: Սրանց փոխարէն տարին տասը պատարագ պիտի մատուցուէր Տարսայիճի եւ Մինա Խաթունի համար:

---

[1] Օրբ· Շահն· հրատ· Բ 162: (Ղուկ· հրատ·) 416:

[2] Անդ· 170: (Ղուկ· հրատ·) 424:

[3] (Թիֆլիս, 1909) 375: Օրբ· Ժամ· 26:

[4] Օրբ· Բ· 171, (Ղուկ·) 424:

[5] Անդ· 104 մի մասը միայն· Ջալ· Բ· 174: Ալիշան· Սիսական· 187: Զարմանալի է, Ջալալեանը կարդում է «ՈՀ», Ալիշան՝ «ՈՀԱ», եւ Օրբէլեան «ՈՀԲ»:

[6] Օրբ· 170: (Ղուկ· հրատ·) 424:



ՊԱՏԿԵՐ 1· Տարսայիճի եւ Մինա խաթունի պատկերաքանդակը

Եղբօր մահուանից յետոյ, Տարսայիճ փոխադրւում է Եղեգիս աւանը, որ Սիւնեաց իշխանների նստոցն էր մի ժամանակ: Նա այստեղ իւր բնակութեան համար յատուկ «դարաբաս» է շինում: Տարաբաղդաբար շէնքի մասին ոչինչ գաղափար չունինք, պեղումները գուցէ կը պարզէին շատ խնդիրներ եւ մեզ գաղափար կը տային ԺԳ. դարու իշխանական տների կազմութեան մասին: Անչափ հետաքրքրական կը լինէր այդ, մանաւանդ Հայոց աշխարհիկ ճարտարապետութեան մասին շատ քիչ բան գիտենք: Դարաբասից մեզ մատչելի է միայն դրան մեծ կամարակալ քարը՝ Տարսայիճի եւ Մինա Խաթունի հարթաքանդակներով եւ արձանագրութեամբ: Տարսայիճ ունեցել է եւ երկրորդ դարաբաս Արփայում, ուր եւ վախճանուել է: Եղեգիսի դարաբասը արձանագրութեան համեմատ շինուած է Տարսայիճի իշխանապետութեան առաջին տարին՝ ՉԻԳ = 1274 թուին:

Այս հարթաքանդակը տեսել եւ նկարագրել են Ջալալեան[4] եւ Քաջբերունի[5], որոնցից եւ առել է Ալիչանը1): Բայց վերջերս կորած էր համարւում այն: Երկու անգամ հետամուտ ենք եղել գտնել այդ քարը, բայց ի զուր: Վերջապէս յաջողուեցաւ գտնել Երզափինցի ծերունի Յովհաննէս Գէորգեանի ցուցմամբ: Գիւղի թուրքերից մէկը քարը կոտրել, երեք կտոր է արել եւ շարել իր պարտէզի ցանկապատի քարերի մէջ: Բարեբաղդաբար կարելի է ամբողջութեան մասին գաղափար կազմել, կտորներն իրար մօտ բերելով: Մոռացել ենք նշանակել քարի մեծութիւնը: Լուսանկարչական պատկերը ցոյց է տալիս, որ Ջալալեան չափազանցութիւններ է արել իր նկարագրութեան մէջ: Քաջբերունին եւս սխալւում է խոյր տեսնելով Մինա Խաթունի գլխին: Կողք կողքի առանձին առանձին աթոռների վրայ նստած են Տարսայիճ եւ Մինա Խաթուն: Տարսայիճ թագ ունի գլխին, որի յետեւից կախուած զոյգ արտախուրակները, ոլորուն եւ փունջաւոր: Կախուած են եւ ուրիշ ժապաւէնաձեւ զարդարանքներ, որ պարզ չեն: Քարն այնքան մաշուած է, որ տարաբաղդաբար հագուստի մանրամասնութիւնները նկատելի չեն, բայց երկար է, լայն եւ ծածկում է մինչեւ ոտները: Ուրիշ առթիւ մենք կը պարզենք ԺԳ. դարի հայ իշխանների զգեստաւորութիւնը, բայց այստեղ եւս կարող ենք անցողակի շեշտել, թէ թաթարական ազդեցութիւնից ազատ չէր այն: Հենց Տարսայիճ ինքը Ապաղա Խանից շատ անգամ նուէր է ստացել նորա զգեստը «յոտից մինչեւ ցգլուխն, եւ զկամարն ի համակ ոսկւոյ բազմագին ակամբք եւ մարգարտօք լցեալ»2): ԺԳ. դարու ուրիշ հարթաքանդակների մէջ երեւում է կամարի (գօտի) գործածութիւնը3): Թեւերը նեղ չեն: Աթոռը բարձրաթիկունք չէ. երեւում են միայն վերին երկու ծայրերը: Տարսայիճ ունի ոլորուն ընչացք եւ երկար միրուք: Աջ ձեռքը դրել է կրծքին, իսկ ձախը ծնկան վերայ: Այս քանդակը լուսանկարել եւ հրատարակել է յետոյ նաեւ Ե. Լալայեան, Ազգ. Հանդ.ի մէջ, 1913-ից յետոյ:

---

[1] Շահխ· Բ· 364· Ջալ· Ա· 207 սխալ ընթերցուածներով: Ջալալեան այս արձանագրութիւնը դրել է խաթրայ վանքի արձանագրութիւնների շարքում, որ բացարձակ շփոթութիւն է:

[2] Օրբ· Բ· 162: (Դուկ·) 416:

[3] Օրբէլ· Բ· 167, (Դուկ·) 420: Քաջբերունի, Ճանապարհորդական նկատողութիւնք· Արարատ· 1890· 35, Ալիշան, Սիս· 192:

[4] Ջալ· Բ· 154:

[5] Արարատ· 1888· 438:

Նոյն ձեւով եւ նման աթոռի վերայ բազմած է Մինա Խաթուն: Ներքնազգեստը ծածկում է մինչեւ ոտները, որոնց ծայրերը երեւում են քղանցքի տակից: Վերան ձգել է զարդարուն վերնազգեստը նոյնպէս ամբողջ հասակի երկարութեամբ: Պարանոցին կրկնակի մանեակ է կախած: Գլխի զարդարանքը չի որոշւում, բայց քառանկիւնի խոյր չէ, ինչպէս Քաջբերունին է կարծել: Հաւանօրէն արաղչինաձեւ գլխարկ էր ճակատը զարդարուն եւ շղարշով ծածկուած: Մինա Խաթունը աջ ձեռքը դրել է ծնկան վերայ, իսկ ձախը նկատելի չէ, քարի կոտրուած լինելու պատճառով: Երկուսն էլ բոլորակ լուսոյ պսակ ունին գլխներին: Հարթաքանդակն առնուած է շրջանակի մէջ, վերից մի աղեղ ներքեւից կտրուած հորիզոնական, զարդարուն գարնէզով՝ մանր, իրար հիւսուած կիսաբոլորակներից կազմուած: Կիսաբոլորակ շրջանակն առանց զարդարանքի՝ վերան գըրուած է.

Ած. շնհաւոր անէ դարաբաս պարոն Տարսայիճին Մինայ խաթին իւրեան ամ: Ընդաւոր խոշոր տառերով գրուած է. Թվ. ՉԻԳ: «Իւրեան» բառի վերջին տառը գրուած է Չ-ի բոլորակի մէջ, դուրս է մնացած միայն բնորոշիչ գլխիկը: Ջալալեան, եւ նորանից Ալիշան առնելով, կարդում է. «Աստուած շնորհաւոր առնէ դարբաս (Ալիշան իր կողմից էլ մի «ղ» է աւելացնում) Պարոն Տարսայիճի եւ ամուսնոյն իւրոյ Մինայ Խաթունին ի թվին ՉԻԳ4) (Դարաբաս բառի մէջ բաց է թողուած ընդգծուած ա-ն): Մենք ընդգծել ենք այս ընթերցուածի աւելորդ կարդացուած բառերն ու տառերը: Հնագրական տեսակէտով առանձին ուշագրութեան արժանի է պ, որի բնորոշ եռագիծը ի հակառակէն է գըրուած, արձանագրութիւնների մէջ երբեմն պատահում են այսպիսի զարտուղութիւններ:

Քարի ներքեւի մասն ամբողջապէս զարդարուած է երկրաչափական վեցանկիւնանի աստղաձեւերից, կեդրոններում մի երկրորդ վեցանկիւնուց դէպի անկիւններն արձակուած եռատերեւներով: Աստղաձեւերի միջին տարածութիւնը զարդարուած է զոյգ գծերի հիւսուածքից, եւ իրար դէմ արձակուած եռատերեւներով: Զարդարանքները տգեղ չեն, բայց մարդաքանդակները որքան եւ հետաքրքրական, բարձր արուեստի արտադրութիւններ չեն: ԺԳ. դարից Վայոց ձորի այլ եւ այլ վանքերում շատ աւելի ազնիւ քանդակներ ունինք, սըրբոց կամ իշխանական պատկերներով, յատկապէս Տարսայիճի Թոռ եւ Էլիկումի որդի Բուրթելի շինած Ս. Աստուածածնի պատերի վերայ, Նորավանքում:

Եղեգիսից ոչ հեռու Ցախացքարի Ս. Կարապետի հարաւային պատի վերայ, ներսից, դրան գլխին Տարսայիճ ունի մի մեծ արձանագրութիւն Մինա Խաթունի անուան յիշատակութեամբ: Արձանագրութիւնը տեղ տեղ, ինչպէս թուականը, եղծուած է: Կարդացուած է միայն հարիւրաւորի «Չ» գիրը, իսկ փոքր թուերը ոչ: Յամենայն դէպս, այդ արձանագրութիւնը գրուած է 1273—1286 թուերի մէջ: Ըստ արձանագրութեան, Տարսայիճ իշխանապետ է արդէն եւ ըստ Օրբէլեանի «յաւուրս յայնոսիկ» մեռնում է Արուզ Խաթունը5): Նա վանքին նուէր է տալիս «զՑախաքարի հողն», «ի Գեղարքունի զգեղն Գառնի եւ ի Մեռակածոր զմեր ձեռատունկ այգին»: Բարեբաղդաբար Ստեփաննոս Օրբէլեան տալիս է այս արձանագրութեան բովանդակութիւնը,

---

1) Սիսական. 151:

2) Օրբ. Բ. 170: (Դուկ.) 423:

3) Տե՛ս մեր «Խոտակերաց Ս. Նշան»ը, Թիֆլիս, 1912: Բուրթելի եւ Ամիր Հասանի հարթաքանդակները՝ նկ. 2 եւ 3: Ամիր Հասանինը կրկին անգամ, Աստ, եր. 113, պատկ. 96:

4) Սիսական. 151. Ջալալեան թուականը սխալմամբ կարդացել է ՉԽԴ. որ ուղղել է իրաւամբ Ալիշանը:

5) Օրբ. Բ. 171: (Դուկ. 425): Արձ.ը տես Ջալ. Բ. 161: Արուզ խաթուն մեռած ՉԼԵ. թ.: Ալիշ. Սիսակ. 255:

ապա թէ ոչ, թիւրիմացութիւնների մէջ կարող էինք ընկնել: Խնդիրն այն է, որ Գառնի մեծ աւանը, որ դարձել Գեղարքունիքի մասն է, երբեք Օրբէլեանց սեփականութիւն չէ եղել եւ ուրեմն Տարսայիճ Ցախացքարին նուիրել չէր կարող: Պրոֆ· Մառի կատարած պեղումներից դուրս եկած արձանագրութեամբ հաստատւում է, որ Զաքարեանների սեփականութիւն էր: Օրբէլեանի խօսքերից երեւում է, որ Տարսայիճ նուէր է տուել Ցախացքարին «ի Գեղարքունի զԳառնակերն· եւ այգի մի ի Մաճռակայ ձորի»: *Ո՞րտեղ էր ընկնում Գառնակեր գիւղը, որոշել չենք կարող, բայց ուրիշ աղբիւրներից գիտենք, թէ Օրբէլեանց կալուածներն ընկնում էին Գեղարքունիքում՝ Սեւանայ լճի հարաւ-արեւմտեան ափերին, Նորատուսց գիւղում: Մաճռակաձորը արձանագրութիւնների մէջ կրկնուող անուններից մէկն է. բայց ճիշտ տեղը որոշել չենք կարող: Տարսայիճ այս նուէրները տալով, միաբանները պարտաւորւում են զատկին եւ Պետրոս եւ Պօղոս առաքեալների տօնին բոլոր եկեղեցիներում պատարագ մատուցանել·* «Ա· աւուր ինձ Տարսայինիս, Ա· աւրն ամուսնոյ իմոյ Մինայ խաթունին»[1]: *Ցախացքարում մի քանի եկեղեցիներ կային:*

Տարսայիճի եւ Մինա Խաթունի հրամանով է շինուած եւ Նորավանքի հիւրատունը: Նշանակուած կալուածների արդիւնքը, ինչպէս գրում է տեղի Սարգիս եպիսկոպոսը, պէտք է գործադրուէր «ի հիւրերին պէտքն, անց(ւ)որ աւտարքն եւ կամ ուտելիքն ուտեն, պարոնացն աղաւթք, երախտաւորացն աղաւթք եւ Աստուած ողորմեայ ասեն»[2]: *Այս արձանագրութիւնը թուական չունի, բայց պէտք է* 1287 *թուականից առաջ գրուած լինի, քանի եպիսկոպոս չէր ձեռնադրուած Ստեփանոս Օրբէլեան:*

Նոյն Ամաղուի Նորավանքին ոմն, հաւանօրէն Զուրջեաններից, արձանագրութիւնը թերի է, նուէրներ է տալիս «յիշխանութեան Տարսայինի մեծ իշխանի, եղբաւրն Սմբատայ արքայի, եւ, ամուսնոյ իւրոյ Մինայ խաթունին, որ դուստր էր Ջալալին Աղուանից արքայի»[3]:

Մինա Խաթունը մի արձանագրութիւն էլ ունի Խաթրայ վանքի աջակողմեան խորանի վերայ. «զՄինա խաթուն դուստր մեծ իշխանին Ջալալին եւ ամուսին Տարսայինին յաղաւթս յիշեցէք»[4]: *Խաթրայ վանքը Դոփեանների գերեզմանատունն էր, իսկ Դոփեան Գրիգոր իշխանը՝ Մինայի եւ Տարսայիճի դստեր Ասփայի ամուսինը:*

Տարսայիճ մեռնում է Արփայի դարաբասում 1290 *թուին եւ թաղւում է Սմբատ արքայի մօտ իւր շինած դամբարանում*[5]: *Զարմանալի է, որ տապանաքարի թուականը մի տարով առաջ է պատմիչ որդու հաղորդածից*[6]:


ՊԱՏԿԵՐ 2· Ջինջիրլուի Ս· Կարապետի ընդհանուր տեսարան

---

[1] Ջալ· Բ· 161: Ալիշան, Սիսակ· 154:

[2] Սիսակ· 203:

[3] Ջալ· Բ· 176· Ալիշան· Սիս· 198:

[4] Ջալ· Ա· 106· Շահխ· Բ· 363· Մակար եպս· Բարխուդարեան· Արցախ 195:

[5] Օրբ· Բ· 177: (Ղուկ· հրատ·) 430:

[6] Ջալ· Բ· 173: Բաջբերունի· Արարատ 1890, 35, Ալիշան· Սիսակ· 192:

Ամուսնու մահուանից յետոյ, Մինա Խաթունը ապրում է դարձեալ մի քանի տարի: «Ի թվիս ՉԽԱ» (1292) նա մի ընդարձակ արձանագրութիւն է թողնում Սըմբատի եւ Տարսայիճի դամբարանի հիւսիսային պատի վերայ, ներսից, իւր որդու Ջալալի անուան յիշատակութեամբ: Վեդիում գնում է մի մեծ այգի, մի մասն էլ ինքը տնկել տալիս, բոլորում է չորս կողմը եւ նուիրում է Նորավանքի Աւագ Ս. Նշանին եւ Ս. Ստեփանոսին՝ «վասն հարկից արքայաշուք տեառն իմոյ Տարսայիճին»: Ստեփանոս Օրբէլեան եւ միաբան եղբայրները պարտաւորում են Համբարձման տօնին հանդիսիւ օրհնել հանգուցեալ իշխանի շիրիմը եւ տասն օր պատարագ մատուցանել1):

Մինա Խաթունը մեռնում է ըստ Քաջբերունու 1298 թուին, հիմնուելով նորա տապանաքարի արձանագրութեան վերայ, սակայն առանց մէջ բերելու թուականի բնագիրը, իսկ Ջալալեան «ՉԽԵ» նշանակում: Այստեղ կամ Ե և Է տառերի շփոթութիւն է կամ Ջալալեանի մէջ տպագրական սխալ, որ շատ յաճախ է պատահում: Մենք աւելի հաւատ ենք ընծայում Քաջբերունուն: Ահա այդ արձանագրութիւնը. «Ջխէ. թագազարմ արքայուհին է Մինախաթունն դուստր մեծ կողմնակալին Աղուանից»2):

Բ.

Տարսայիճ իւր մահուանից յետոյ թողնում է չորս որդի եւ երկու աղջիկ. Արուզ Խաթունից՝ Ելիկում, Ստեփանոս (պատմիչը) եւ Փախրադուլայն, իսկ Մինախաթունից՝ Ջալալ, Ասփա եւ Մամքան3): Տարսայիճ՝ դեռ եւս իւր կենդանութեան ժամանակ Ասփային կնութեան է տալիս Դոփեանց Գրիգոր իշխանին, իսկ Մամքանին՝ հօր մահուանից յետոյ՝ եղբայրները կնութեան են տալիս Վրաց Դեմետրէ թագաւորի կրտսեր որդուն՝ Մանուէլին, որ սնուած եւ դաստիարակուած էր Տարսայիճի ձեռքի տակ իւր աւագ եղբօր Դաւթի հետ4): Սորանով վերջանում է մեր տեղեկութիւնը Մամքանի մասին, բայց աւելի մանրամասնութիւններ գիտենք Ասփայի մասին յիշատակարաններից եւ արձանագրութիւններից: Հնագոյն արձանագրութիւնը Ասփայի անուան յիշատակութեամբ գտնւում է Գեղարքունեաց՝ հնում Բրդի այրք եւ այժմ Տաշքենդ կոչուած գիւղում5): Թէպէտ արձանագրութիւնը թուական չունի, բայց կարող ենք ասել, որ գրուած է 1298 թուից առաջ: Այդ թուականին մեռաւ Ասփայի սկեսուրը՝ Մամքան6), մինչդեռ ըստ արձանագրութեան կենդանի են Մամքան եւ նորա ամուսինը Հասան: Մամքանը, Դոփեան այս Հասանի կինն էր «դուստր Վաչուտեան Քուրդ իշխանին»: Սոցա որդին էր Ասփայի ամուսին Գրիգոր Դոփեան7): Երկրորդ արձանագրութիւնը Ասփայի մասին գտնւում է Ծարի Ս. Աստուածածին վանքի պատի վերայ, ՉԾ: 1301 թուականից, որ գրել է Ասփայի ամուսին Գրիգոր իշխան Դոփեանի հօրեղբայր Յովհաննէս եպիսկոպոսը: Այստեղ Ասփան կոչւում է «բարեհամբաւ», դուստր մեծի կոմսի Տարսայիճի իշխեցողի կողմանցն Սիւնեաց»8): Բայց Ասփան ինքն ունի երկու արձանագրութիւն առանց թուականի Խաթրայ վանքում: Դոցանից մէկի մէջ իրեն անուանում է «դուստր արքայաշուք իշխանին Տարսայիճի, թագազարմ մայրն իմոյ Մինա խաթունին»: Ուշադրութեան արժանի է, որ «արքայաշուք» եւ «թագազարմ» բառերը կան նաեւ Տարսայիճի եւ Մինա Խաթունի տապանաքարերի արձանագրութիւնների մէջ: Եթէ այս առնչութիւնը գրական է, այն ժամանակ կարող ենք ասել, որ արձանագրութիւնը գրուած է 1298 թուից յետոյ, երբ մեռաւ Մինա Խաթունը: Արձանագրութիւնից տեղեկանում ենք, որ նա նպաստել է իւր ամուսնուն եկեղեցւոյ շինութեան մէջ եւ ապա Յովհաննէս եպիսկոպոսի ձեռքով կանգնել բեմի սեղանը, նուիրելով «խաս հողը... եւ մէկ բահի ջուր»9): Արձանագրութիւնը գրուած է բեմի ճակատին: Նոյն վանքի մօտ Ասփան Թարթառ գետի վերայ մի կամուրջ է շինել առանց թուականի արձանագրութեամբ. «շինեցի զկամուրջս յիշատակ հոգւոց անցելոց, ներկայից եւ ապագայից»10): Ի՛նչ հրաշալի լայնախոհ բարեպաշտութիւն, հոգալ եւ անծանօթ հոգիների փրկութեան մասին: Բարեպաշտական նման բովանդակութեամբ արձանագրութիւններ ունինք եւ ուրիշ տեղերում: Բայց Ասփայի բարեգործութեան ամենամեծ յուշարձանը Թարգմանչաց աւետարանն է: Ձեռագիրն այդ անունն ստացել է Գանձակի մօտ գտնուած Թարգմանչաց վանքում պահուելու պատճառով, որ 1900 թուականից փոխադրուած է Մ. Աթոռի մատենադարանը Գանձակի Թարգմանչաց վանքից մեր ձեռքով եւ կրում 1058 (այժմ 2743) համարը Գ. Յ.ի շարունակութեան: Հայ մանրանկարչական արուեստի կարեւոր արդիւնքներից մէկն է այս աւետարանը, որի մասին մի քանի խօսք ասել եւ պատկերներից օրինակներ ենք տուել Արշակ Չօպանեանի «Անահիտ» հանդէսի մէջ11):

---

1) Ալիշան, Սիսական 191:

2) Ջալ. Բ. 174. Քաջբերունի. Ար. 1889, 658, Ալիշան, Սիսակ. 192:

3) Օրբ. Բ. 162, 171: (Դուկ. 416, 424). Յ. Թօփճեան, Ցուցակ Ձեռագրաց Դադեան խաչիկ վարդապետի, Ա. Վաղարշապատ. 1898. 89. նոյն. Բ. 30:

4) Օրբ. Բ. 173: (Դուկ. հրատ.) 425:

5) Ջալ. Բ. 115. Լալայեան, Ազգագրական Հանդ. XIX 18:

6) Մակար եպիսկոպոս, Արցախ, 206:

7) Յակոբ Թօփճեան, Ցուցակ Ձեռագրաց Դադեան խաչիկ վարդապետի, մասն Ա. Վաղարշապատ, 1898, 89:

8) Ջալ. Ա. 208 «բարի» փոխ. «բարեհամբաւ». Մակար եպս. Բարխուդարեանի Արցախ. 408:

9) Ջալ. Ա. 205. Մակար եպս. Արցախ. 194:

10) Բարխուդարեան, Արցախ. 196:

11) 1911 թ. 5—6, Փարիզ:

Աւետարանը գրուած է ՈՃԱ = 1202 *թ· երկաթագրով Տիրացու գրչի ձեռքով· ծաղկողն է Գրիգոր երէց եւ առաջին ստացողը Յովհաննէս աւագերէց: Ասփան երկրորդ ստացողն է: Ընդարձակ յիշատակարաններ այդ աւետարանի մէջ մեզ տեղեկութիւններ են տալիս Ասփայի, Գրիգոր իշխանի եւ ընդհանրապէս Դոփեանց մասին, գրուած Ասփայի մահուանից մի տարի յետոյ ՉԿԱ* = 1312 *թուին: Բայց դոցանից մէկը՝ Ղուկասի վերջում գրուած է Ասփայի կենդանութեան ժամանակ·* «Զմեծ եւ զամենաւրհնեալ պարոնաց պարոն զԳրիգոր որդի Դոփին եւ զամենագովելի զբարեպաշտ ամուսին իւր զպարոն Ասփայն, զստացողս եւ զարդարիչս սուրբ աւետարանիս յիշեցէք ի Քրիստոս»: *Մատթէոսի վերջում եղած յիշատակարանը յայտնում է, որ Ասփան զարդարել է* «զանազան սպասիւք եւ շինուածիւք զեկեղեցիս Հայաստանեայց, ստացաւ եւ սուրբ աւետարանս յարդար ընչից իւրոց եւ ընծայեաց ի սուրբ ուխտն խադարի», *որ Դոփեանց գերեզմանատունն էր: Մի այլ յիշատակարան յայտնում է, թէ ՉԿ* = 1311 *թուականին* «փոխեցաւ յաշխարհէս Ասփայն առ Քրիստոս եւ եդաւ ի շիրմի ի սուրբ ուխտն խադարի»: *Նորա ամուսին Գրիգոր իշխանը բազմաթիւ նուէրներ է տալիս վանքին այդ առթիւ·* «գեղորայս, այգիս, անդաստանս եւ զարդարէ զսուրբ ուխտն զանազան սպասուք եւ հանդերձիւք, ընդ որս պննեալ շքեղացոյց եւ զսուրբ աւետարանս ոսկենկար կազմածով եւ շնորհեաց գերեզմանի



ՊԱՏԿԵՐ 3· Ս· կարապետի տաճարը

նորա եւ իւր նախնեացն յիշատակ»1) : Տարաբաղդաբար այժմ մնացած չէ այդ «ոսկենկար կազմած»ը:

Նոյն ՉԿԱ = 1312 թուականից մի արձանագրութիւն եւս ունինք Օրբէլեանց գերեզմանատանը՝ Ամաղուի Նորավանքում: Գրիգոր Դոփեանը 1500 սպիտակով գնում է երկու այգի, որպէս զի տարին երեք օր պատարագ մատուցուի իւր կնոջ Ասփայի յիշատակին, «դստեր արքայաշուք իշխանին Տարսայիճին»2) : Ասփայի յիշատակին նուիրուած վերջին արձանագրութիւնը գտնւում է Հերհերի Ս· Սիոն եկեղեցու վերայ ՉԿԶ = 1317 թուականից: Այստեղ եւս նուիրատուն նոյն Գրիգոր իշխանն է, որ մի այգի ընծայելով «վասն ամուսնին» «Ասփին», սահմանել է տալիս երկու պատարագ նորա յիշատակին3) :

Գրիգոր եւ Ասփան ունեցել են մի քանի զաւակ, մանչ եւ աղջիկ, բայց նոցանից երկուսի անունն է միայն յայտնի: Դոցանից մէկն էր Խաչենոյ, Դադի վանքի առաջնորդը, Սարգիս եպիսկոպոսը, որ «ի ստնդեայ հասակին» նուիրւում է Քրիստոսին ծնողների կողմից: ՉԿԱ = 1312 թուականին նա արդէն եպիսկոպոս էր: Նա մեռնում է ՉՁԲ = 1333 թուին: Միւսն է Վահրամ, որից եւ սերւում է Դոփեանց յետագայ սերունդը4) :

Գ.

Նախընթաց գլխի մէջ տեսանք, որ Տարսայիճ Մինա Խաթունից ունէր եւ մի որդի՝ Ջալալ անունով: Հօր մահուանից յետոյ «որդիք նորա վիճէին ի վերայ տէրութեան եւ իշխանութեան հօրն»5) : Տարաբաղդաբար պատմիչը մեզ մանրամասնութիւններ չէ տալիս այդ մասին :Օրբէլեանների մէջ ժառանգութեան կարգը պէտք է անդրանկութեան համաձայն լինէր, ինչպէս եւ միւս հայ իշխանների մէջ: Ելիկումին պիտի պատկանէր իշխանապետութեան իրաւունքը ըստ երեւոյթին առանց առարկութեան: Բայց եթէ առարկութիւն կար, այդ բուն եղբայրների կողմից լինել չէր կարող: Ստեփանոս 1287 թուականից եպիսկոպոս էր ձեռնադրուած Նորավանքի եւ Տաթեւի աթոռների համար: Ոչ Փախրադուլան եւ ոչ Ջալալ հիմք չունէին այդ մասին վէճ բանալու: Սոցա վէճը կարող էր միայն բաժնի խնդիր լինել: Մեզ թւում է, թէ իշխանապետական իրաւունքների համար վէճ յարուցանողը Լիպարիտ Օրբէլեանն էր, Իւանէի որդին, իսկ Ջալալի վէճը մի՛ միայն կալուածական ժառանգութեան խնդիր կարող էր լինել:

Հայ Օրբէլեանց «տէրութեան» իսկական հիմնադիրն էր Լիպարիտ Օրբէլեան, Ելիկումի որդին: Նորա որդիքն էին Ելիկում, Սմբատ, Իւանէ, Փախրադուլայն եւ Տարսայիճ: Հօրն յաջորդեց անդրանիկ որդին Ելիկում, որ, ըստ աւանդութեան Ստ· Օրբէլեանի, դեղակուր եղաւ Նփրկերտի պաշարման ժամանակ Աւագի հրամանով6) : Ելիկումին յաջորդեց նորա եղբայր Սմբատ, իսկ սորան Տարսայիճ 1273 թուին: Այս էր Օրբէլեանց իշխանապետների յաջորդութեան կարգը ըստ երեւութեան: Եթէ ճշդութեամբ պահուած լինէր անդրանկութեան եւ ուղիղ գծով յաջորդութեան կարգը, Ելիկումից յետոյ պէտք է իշխէր ոչ Սմբատ, այլ Բուրթէլ, Ելիկումի որդին: Բայց հօր մահուան ժամանակ նա շատ փոքր էր եւ Օրբէլեանց վիճակը աստանդական, հալածուած Աւագեանների կողմից: Սմբատն էր, որ պաշտպանեց որբերին, երկիցս դիմեց Մանկու Խանին եւ գրաւեց Թաթարների պաշտպանութիւնն ու բարեկամութիւնը: Կարելի է ասել նա իւր անձնական յատկութիւնների, խոհեմ քաղաքականութեան շնորհիւ ապահովեց հայ Օրբէլեանների իշխանապետութիւնը եւ նորա փառաւոր շրջանի պատճառը դարձաւ: Բուրթէլ՝ հազիւ երիտասարդական հասակը թեւակոխած, ընկաւ պատերազմի դաշտում Թերեկ գետի ափին 1261 թուին, Հուլաղուի եւ Բերքայի զօրքերի ընդհարման ժամանակ: Նորանից առաջ մեռած էին Սմբատի եղբայրները՝ Իւանէն եւ Փախրադուլայն7) : Իրերի բերման հետեւանքով Տարսայիճ 1261 թուականից Սմբատի օգնականն էր, իսկ 1273 թուին յաջորդը դարձաւ: Իւանէի որդին Լիպարիտ այդ ժամանակ փոքրահասակ պատանի էր եւ հօր եղբօր դէմ ոչինչ առարկութիւն անել չէր կարող: Ուրիշ էր նորա մահուանից յետոյ՝ 1290 թուին· Տարսայիճի անդրանիկ որդին Ելիկում եւ Լիպարիտ համարեա հասակակից էին, գուցէ եւ վերջինս աւելի աւագ· հարց էր, թէ որի՞ն պէտք է անցնէր իշխանապետութեան իրաւունք: Ահա այսպէս ենք հասկանում մենք Օրբէլեանի վերոյիշեալ խօսքերը:

Վիճողները դիմում են Արղուն Խանին, որ «կացուցանէ իշխան ի վերայ ամենայնին» Ելիկումին8) : Տարսայիճի երկարամեայ իշխանապետութիւնը, Արղունի հետ ունեցած անձնական ծանօթութիւնն ու ծառայու-

---

1) Յիշատակարանները տես Ջալ· Ա· 167, Մակար եպս· Արցախ· 289:

2) Ջալ· Բ· 173, Ալիշան, Սիսակ· 198:

3) Ջալ· Բ· 142· Ալիշան· Սիսակ· 116:

4) Ձեռ· Մատ· Ս· էջմ· թ· 1058: Շահխ· Բ· 358· Ջալ· Ա· 168, 201, Մակար եպս· Արցախ· 291, 205, 207, Թօփճեան Ցուցակ· 89:

5) Օրբ· Բ· 177: (Ղուկ· հրատ·) 430:

6) Նփրկերտի առումն, ըստ Գանձակեցու, եղել է ՉԹ=1260 թուին, իսկ Աւագի վախճանը 1250 թուին (Գանձ· 305), որին համաձայն է եւ Օրբէլեան (Բ· 144–158, (Ղուկ·) 412): Ապա ուրեմն Ելիկում Նփրկերտի պաշարման ժամանակ Աւագից դեղակուր լինել չէր կարող: Բացի դորանից, Օրբէլեանի խօսքերի համեմատ (Անդ· 161, (Ղուկ· 405) Սմբատ 1251 թուին արդէն յաջորդել էր եղբօրը եւ ստիպուած Մանկու խանին գնալ իւր իրաւունքները պաշտպանելու համար: Եթէ Ելիկումի Աւագից դեղակուր լինելու պատմութիւնը ճիշդ է, այդ պէտք է եղած լինի 1249—50 թուից առաջ կամ մօտաւորապէս այդ ժամանակները: Ալիշան նորա մահը նշանակում է 1256 թուին (Սիսակ· 93):

7) Օրբ· Բ· 162, 106: (Ղուկ· հրատ· 405—415):

8) Անդ· 177—8: (Ղուկ· հրատ· 430):

*թիւնները պատերազմի դաշտում նորա հօր ժամանակ, առանց նշանակութեան չէին այս վճռի վերաբերութեամբ*1) : *Բայց Ելիկում տիրելով* «բոլոր հայրենեաց եւ իշխանութեանց հօրն ,ոչ կամեցաւ զրկութիւն առնել եղբարցն· այլ եպիսկոպոսօք եւ վարդապետօք եւ ազատօք բաժանեաց զամենայն ժառանգութիւնն եւ ետ ըստ պատշաճին զբաժին եղբօրն Ջալալին ի նա, եւ զբաժին հօրեղբօր որդւոյն ի նա»2) :

Ո՞րն էր Ջալալի բաժինը· մեզ տեղեկութիւն չէ տալիս պատմիչը: Միակ տեղեկութիւնն այն է, որ Ստեփանոս գնել է 21 հազար դրամով Ջալալի սեփականութիւն եղած Զուա գիւղը «իւր ամեն սահմանօքն, հողով եւ ջրով եւ այգեստանեօք եւ բոլոր բնակչօք» *եւ նուիրում է Նորավանքին*3) : *Աւելի հին յիշատակութիւն Զուայի մասին ունինք Սմբատ արքայի մի արձանագրութեան մէջ 1261 թուականից*4) : *Զուա գիւղը մինչեւ այժմ էլ պահել է իւր անունը եւ գտնւում է Էլփի գետակի վերայ՝ համանուն գիւղի եւ Արփայի մէջ: Հանգուցեալ Ալիշանը կարծում է, որ Եղեգիսը Ջալալի ժառանգութեան բաժինն էր*5) : *Բայց նորան անծանօթ եւ ծանօթ աղբիւրների վերայ ասել կարող ենք, որ նա սխալ էր եւ մօտաւորապէս որոշել կարող ենք Ջալալի ժառանգութեան սահմանները:*

Խնդրի պարզաբանութեան համար անհրաժեշտ է համառօտ կերպով ուրուագծել Օրբէլեանց իշխանապետութեան սահմանները: Երկու անգամ Տարսայիճ ինքն է յայտնում, թէ իշխում էր «ի Բարկուշատայ մինչ ի դաշտն Դվնայ»6), *կամ* «ի դրանէն Բարկուշատայ մինչեւ ցսահմանն Բջնւոյ»7) : *Աւելի մանրամասնութիւններ է հաղորդում Օրբէլեանց իշխանապետութեան սահմանների մասին Սիւնեաց պատմիչը Սմբատ արքայի ժամանակի մասին, որ նոյնութեամբ ժառանգեց Տարսայիճ*8) · «Թափեաց (*Սմբատ*) զերկիրն Որոտան բովանդակ մինչ ի սահմանն Բորոտնայ եւ Բղենոյ, յորում եւ կայր բնդաւեր աթոռն Սիւնեաց Տաթեւ: Էառ եւ զԵղեգիս եւ զամենայն գաւառն Վայոց ձորոյ, զՓողահանսն, զՈւրծ եւ զՎէդի իւր ձորովն մինչեւ յԵրերուեսս, եւ ի Կոտայսն եւ ի Գեղաքունի բազում շէնս աւանս»9) :

Երերունք կամ Երերոն գիւղը, «որ է հանդէպ Գառնւոյ» *սահմանագլուխ էր նաեւ Սմբատի Աւագ եղբօր՝ Ելիկումի ժամանակ*10) : *Մեր ունեցած տեղեկութիւնները ամբողջացնելու համար պէտք է յիշենք եւ Լիպարիտ Օրբէլեանի ժառանգութեան սահմանները, որ ստացաւ Իւանէ Աթաբէգից կողմնակալութեան ժառանգական իրաւունքի հետ:* «Հրաշկաբերդ իւր կերովն, եւ այլ բազում գիւղս ի Վայոց ձոր, ի Գեղաքունի, ի Կոտայսն եւ ի Կայէն»11) : *Օրբէլեան իւր պատմութեան ընթացքում եւս կրկնում է նոյնը փոքրիկ մանրամասնութիւններով· Լիպարիտը Կոտայքում ստացել է* «զԷլառն եւ այլ գիւղս յոլովս· ի Գեղաքունի զՀամասրի եւ այլ գեղօրէս բազում, ի Կայեն զԱղստեւ իւր կերովն: Եւ զի նա (*Լիպարիտ*) եղեւ առաջնորդ առման Սիւնեաց եւ այլ բերդերոյն, տայ (*Իւանէ*) եւ ի ձեռս նորա զՍիւնիս, զՈրոտն, զԲարկուշատ եւ զայլ բերդորէսն12) : *Այս բոլոր երկիրները Տարսայիճ իր մահուանից յետոյ որդիներին թողեց, բացառութեամբ, կարծում ենք, Աղստեւ բերդի՝ «իւր կերովն»: Օրբէլեան պատմում է Սմբատ արքայի մասին, թէ 1256 թուին Մանկու Խանին արած երկրորդ այցելութիւնից յետոյ՝* «տիրեաց ամենայն գաւառաց եւ գիւղից իւրոց (*որոնց մասին խօսք եղաւ վերեւ*), բայց յետոյ իւր կամաւ վասն սիրոյ եւ միաբանութեան, ոմանց դարձոյց եւ եթող յետս աստ եւ անդ ի գիւղից եւ յագարակաց· եւ զայլն հաստատեաց սեփական հայրենիք իւրոյ ազգին եւ զաւակաց»: *Յետ դարձրած կալուածների մէջ կարեւորը, կարծում ենք, Աղստեւն էր իւր կերով, Կայեն գաւառում, որ շատ հեռու էր Օրբէլեանների կեդրոնից, եւ չէ յիշատակւում այնուհետեւ նրանց կալուածների շարքում:*

Դ.

Արդ, այս գաւառների մէջ ո՞րտեղ էր ընկած Ջալալի բաժինը: Նախընթաց գլխի մէջ տեսանք, որ Ստեփանոս Օրբէլեան Ջալալից գնել էր Զուա գիւղը Էլփի գետակի հովտում: Էլփի գետակի հովիտը, յատկապէս ձախակողմն ընկած երկրները Մեհեւանեանց իշխանական տոհմի սեփականութիւնն էր, եւ ուրեմն Ջալալ ժառանգութիւն ստանալ կարող չէր: Արփայի հիւսիսի մեծ ճիւղից արեւմուտք ընկած երկիրները, ներկայ Քէշիշքենդ, Օրթաքենդ, Բաշքենդ, Արկազ եւլն· գիւղերով, այսինքն Թեաքաղոլղուրան լեռների հարաւային փէշերը մինչեւ Արփայի բուն հովիտը Պռոշեանց սեփականութիւնն էր: Աւելի արեւելք, Դալիկ Թափայի հարաւ-արեւմտեան փէշերը մինչեւ գետափը Հերհեր գիւղերով Շահուռնեցոց տոհմի կալուածներն էին: Այս երկրամասերից աւելի հիւսիս, Թեաքաղոլղուրանի միւս երեսին ընկած էր Եղեգեաց ձորը նոյնանուն մեծ ատա-

---

1) Օրբ· Բ· 170—172: (Ղուկ· հրատ· 423):

2) Անդ· 177/8: (Ղուկ· 431):

3) Անդ· 241: (Ղուկ· 493): Նոյնը կրկնում է եւ Նորավանքի մի արձանագրութեան մէջ: Ալիշան, Սիսական· 196:

4) Անդ· Բ· 109, (Ղուկ· 360):

5) Սիսակ· 146:

6) Շահխ· Բ· 364: — Ջալ· Ա· 207 «ի դաշտ Լփնաց», որ բացարձակ սխալ է:

7) Օրբ· Բ· 163/4: (Ղուկ· 417): Շահխ· Բ· 354: Ջալ· Բ· 284: Ալիշան, Սիսակ· 232: Վերջին երկուսը արտագրել են Օրբէլեանից:

8) Օրբ· Բ· 169: (Ղուկ· հրատ· 423):

9) Օրբ· Բ· 157/8: (Ղուկ· 411):

10) Անդ· Բ· 150: (Ղուկ· 404):

11) Օրբ· Բ· 105: (Ղուկ· 360): Ջալ· Բ· 174: Ալիշան, Սիսակ· 187:

12) Օրբ· Բ· 143: Անդ· 161: (Ղուկ· 397):

նով: Մենք տեսանք, որ Ալիշանի կարծիքով այս աւանը Ջալալի ժառանգութեան մաս պիտի լինէր: Բազմաշխատ գիտնականը թիւրիմացութեան մէջ է ընկել, Գայլեձորում ոտանաւորով գրուած մի յիշատակարանի խօսքերից: Աթոռակալ Տարսայիճն արդարեւ Մինա Խաթունի թոռն է, Ջալալի որդին, բայց ոչ աշխարհիկ իշխան, այլ Սիւնեաց արքեպիսկոպոս, որ ինչպէս կը տեսնենք «յորովայնէ մաւր» նուիրուած էր Աստուծոյ, եւ ուրեմն Խոսրովիկ անունով որդի ունենալ կարող չէր եւ ոչ Տարսայիճեանց տոհմի նահապետ լինել[1]: Եղեգիսում եւ նոյնանուն ձորում Ջալալի որդւոց (արքեպիսկոպոսը չհաշուած) ոչ մի յիշատակ չունինք: Ընդհակառակն թէ՛ յիշատակարաններից եւ թէ արձանագրութիւններից միանգամայն պարզ է, որ Եղեգիսը Ելիկումի եւ նորա որդւոց ժառանգութիւն մնաց: Ագուլիսի Ս· Յովհաննէս եկեղեցու ձեռագրերից մէկը, գրուած «ի մայրաքաղաքիս Եղեգիս», ՉԾԵ=1306 թուին, «յիշխանութեան այսմ նահանգի իշխանաց իշխանի բարեպաշտ եւ ամենաւրհնեալն Բուրթէլին եւ Բուղդաին որդոց Քս·ասէր եւ փառազարդ իշխանաց իշխանի Էլիկումին որդո մեծին Տարսայիճին»[2]: Նուխուայ գաւառի Վարդաշէն գիւղի եկեղեցւոյ աւետարաններից մէկը, որի յիշատակարանը արտագրել էր մեզ համար պ· Պատուական Քուշմանեան, գրուած է դարձեալ նոյն տեղ Եղեգիսում «ի թվաբերութեանս աբեթական տումարին ՉԿԴ· ի քաղաքիս յԵղեգիս ի տէրութեան արեաց վեհագունի եւ իշխանաց իշխեցողի, մեծ կոմսի եւ կողմնակալի Բուրթէլին եւ նորին հարազատի Բուղտային»: Եղեգիս աւանի եկեղեցիներից մէկի արեւելեան պատին գտնւում է սոյն Բուրթէլի եւ որդւոց արձանագրութիւնը· «Տ[է]ր Յ[իսու]ս Ք[րիստո]ս Ա[ստուա]ծ աւգնէ Բիրթէլին, Բէշքէնին եւ Իվանէի»[3]:



ՊԱՏԿԵՐ 4· Զգեստատուն եւ Զանգակատուն

Արփայում, Նորավանքում եւս Ջալալի եւ որդւոց մասին ոչ մի յիշատակութիւն չկայ, բացառութեամբ Մինա Խաթունի վերոյիշեալ արձանագրութեան եւ Ստեփ· Օրբէլեանի, որ յայտնում է Զուա գիւղի գնման մասին: Այն ինչ Ելիկումի եւ որդւոց անունը շատ յաճախ: Նորավանքում են Ելիկումի, նորա որդի Բուղդայի գերեզմանները, այնտեղ է կառուցել Ելիկումի որդի Բուրթէլը երկյարկանի, իւրատեսակ գեղեցկութեամբ եկեղեցին[4]: Այսպիսով, ուրեմն, մեզ մնում է միայն Զուայի արեւմտեան կողմերը որոնել Ջալալի իշխանապետութեան սահմանները: Եւ յիրաւի, հէնց այդ կողմերումն էլ Զանախչայի ակունքների մօտ, Սարայ-Բուլախ կամ Զինձիրլի լեռների հիւսիսային կողմերին համանուն գիւղից մօտ մի վերստ հեռաւորութեան վերայ գտնւում է Ս· Կարապետի վանքը, հնում Սպիտակաւոր Աստուածածին կոչուած[5], Ջալալի տոհմի չինախարական մեծաւոյն գործն ու տոհմական գերեզմանատունը: Այդ վանքի մինչեւ այժմ չհրատարակուած եւ չուսումնասիրուած արձանագրութիւններն այլեւս կասկածի տեղիք չեն թողնում, որ Ջալալի ժառանգութեան սահմանները նոյնանում էին մօտաւորապէս հին Ուրծ եւ Արած գաւառակների սահմանների հետ, Վեդի գետակի միջին հոսանքներում, ըստ աշխարհագրին «ընդ մէջ կալով Վայոյ ձորոյ եւ Շաւրուր դաշտի»1): Վեդի գետի ակունքներում ընկած երկիրները Ջղնդեոլի եւ Ճերմանիսի ձորակներով Մամիկոնեանց տոհմի կալուածներն էին: Մենք տեսանք որ Սմբատ արքայ թափեց ի միջի այլոց եւ «զՈւրծ եւ զՎէդի իւր ձորովն մինչեւ յԵրերուն», հէնց այս երկիրներն էլ, որ մի փոքրիկ ամբողջութիւն են կազմում, Ջալալին բաժին ընկան: Մինչեւ այժմ էլ Ջինճիրլուի հանդիպակաց լեռների հիւսիսային փէշերին ընկած է Թուրքաբնակ Երանոս գիւղը: Այդ լերան դէպի հարաւ նայող կողի վերայ, Ղատըլու թուրքաբնակ գիւղի մօտ, գտնւում է Աղքիլիսան՝ Ջալալի անուան յիշատակութեամբ արձանագրութեան մնացորդով: Նոյն լերան հիւսիս–արեւմտեան անկիւնում, ուր Վեդի գետակը հոսում է Քէշիշդաղ լերան ստորոտով, զօրացած Մանղլինքի եւ Ճերմանիսի ջրերով, խառնւում է Խոսրովի վտակի հետ, գտնւում է պատմական Ուրծ աւանը: Այդտեղ են այժմ Քէշիշքենդ կամ Քէշիշդաղ քրդաբնակ եւ Գարաբաղլար թաթարաբնակ գիւղերը: Քէշիշքենդի աւերակ եկեղեցիների մի արձանագրութեան համեմատ, 1348 թուականին, ոմն Ծերոնական եւ իւր կենակից Բահրամ տալիս են «ողորմութեն (կամ ողորմութերն) պարոն Էլակումին» իրենց այգին սբ ածածնի միաբաններին: Մենք համոզուած ենք, որ այս Էլիկումը ոչ այլ ոք է, բայց եթէ Ջալալի որդին: Տարսայիճի որդի Էլիկումը մեռած էր արդէն «թվին ՉԽԹ» = 1300, իւր դամբարանի արձանագրութեան համեմատ2): Զեսարի եղբայր Էլիկումը, որ յիշւում է ՉՁԱ=1332 թուին Սէլիմի Կարաւանատան արձանագրութեան մէջ3), դժուար թէ նոյն լինի այս Էլիկումի հետ: Զեսարի եւ իւր եղբայրների կալուածներն ընկնում էին Ճանղուրթարան եւ նոյն Կարաւանատան շուրջը եղած լեռների վերայ եւ այնտեղից բխած վտակի հովտում, որ Եղեգեաց ձորի արեւմտեան բերանում, Հասանի գեղի մօտ խառնւում է Եղեգեաց գետի կամ Արփայի հիւսիսային ճիւղին: Ալիշան այդ ջուրը Սուլեմայի գետակ է անուանում եւ հովիտը Սուլեմայի ձոր համանուն բերդի պատճառով: Այդ լեռները անջրպետ էին կազմում Վայոց ձոր եւ Գեղարքունիք գաւառների մէջ. այդտեղ են ընկած այժմ Հորս, Քարագլուխ, Աղքենդ եւն. գիւղերը: Լիպարիտ եւ նորա սերնդի բաժինը այս կողմերն էր ընկած. այդ հաստատւում է ոչ միայն Զեսարի եւ նորա եղբայրների անուան հետ կապուած արձանագրութիւններով, այլ եւ մի յիշատակարանով, որ գրուած է «ի գեղս որ կոչի Հորս, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին, յիշխանութեան բարեպաշտ պարոնին Լիպարտի, յառաջնորդութեան արիի եպիսկոպոսի տէր Սարգսի»4): Այս յիշատակարանից պարզ է, որ դեռ եւս Տարսայիճի կենդանութեան ժամանակ Լիպարիտ այս կողմերի կառավարիչ էր նշանակուած, իսկ նորա մահուանից յետոյ՝ Էլիկում, մշտական ժառանգութիւն է տալիս նորան եւ նորա որդւոց: Ապա ուրեմն, Ուրծում յիշուած պարոն Էլիկումը Ջալալի որդին էր եւ Ուրծը նորա ժառանգութեան մասը:

---

[1] Ալիշ· Սիսակ· 148 եւ 94:

[2] Ազգ· Հանդ· 1904, 171: Այժմ Հարփըրտի համալսարանի սեփականութիւն: Այս յիշատակարանի համեմատ, Յոհաննէս Աւրբելն արդէն 1306 թուին Սիւնեաց արքեպիսկոպոս էր: Ալիշանն, ուրեմն, սխալւում է Ստեփանոս Օրբէլեանի մահը 1309 թուին նշանակելով եւ նորա գերեզմանի թուականը ՉԾԸ սրբագրելով: Քաջբերունին կարդում է ՉԾԲ (Արար· 1890, 396/7): Նորա մահը կարծում ենք պէտք է նշանակել ՉԾԵ-ի սկզբում (տե՛ս «Նայիրի»· թ· 3, 1947, մեր յօդուածը):

[3] Տ· Ալիշան, Սիսակ· 148:

[4] Ալիշ· Սիսակ· 192—3, 195, 199, 202:

[5] Չպէտք է շփոթել նոյնանուն վանքի հետ, որ գտնւում է վայոց ձորի ներկայ Բաշքենդ գիւղի սահմաններում, այլազգիներից «Գիւլվանք» կոչուած, եւ Պռոշեանց տոհմի սեփականութիւն էր:

Ե.

Ջալալի մասին մեր ունեցած տեղեկութիւնները շատ չեն: Ստեփանոս Օրբէլեանի ասելով Բայտուն Ջալալ իշխանին ուղարկում է Ամարաս եւ «ետ տանել առ ինքն զգաւազան սրբոյն Գրիգորի»: «Ընդ նմին տարան եւ զքանչելի խաչն աստուածահրաշ, որ ի հին ժամանակաց կայր անդ, կազմեալ ի համակ ոսկւոյ եւ զարդարեան 36 ակամբք պատուականօք. եւ այս ի մատնելոյ լիրբ եւ անզգամ իրիցու մի ի նոյն վիճակէ»5): Այս դէպքը պէտք է 1295 թուին պատահած լինի, երբ Բայտուն արքայական գահը բարձրացաւ եւ ընկաւ6): Իբրեւ զինուորական ինչո՛վ է նշանաւոր հանդիսացել Ջալալ, չգիտենք. միայն նորա աւագ որդին Տարսայիճ–Ստեփանոս եպիսկոպոսը իւր մի յիշատակարանի մէջ հօրն անուանում է «իշխանաց իշխան, քաջ սպառազէն, մենամարտիկ զինաւոր»7): Ջալալ կենդանի էր 1301 թուին, երբ նորա կինը Գոնցան շինեց Ջինճիրլուի Սպիտակաւոր Աստուածածինը: Նորա անունը յիշուած է նաեւ Ջինճիրլու գիւղի հանդէպ, Ղադըլու եւ Շահարլու գիւղերի մէջ ընկած Աղքիլիսայի մի արձանագրութեան մէջ, որ թերի է քարերն ընկած լինելու պատճառով եւ պահուած է միայն այսքան. «Յանուն այ··· / շահի տամ սահն··· / որ պարոն Ջալալ··· /

Եկեղեցին շինուած է 1306 թուին եւ ուրեմն, դորանից առաջ լինել չէ կարող Ջալալի անուան յիշատակութիւնն այստեղ8): Նա մեռած է արդէն 1314

---

1) Ալիշան, Այրարատ, 441:

2) Ալիշան. Սիսակ. 192:

3) Անդ. 164:

4) Սիսակ. 161:

5) Բ. 218 (Ղուկ. 470):

6) Ստէնլի Լէն Պոյլ. Մուսուլմանական տոհմերը, թարգ. Վ. Բաֆքոյլտի. ՍՊ. 1899, 182:

7) Բարխուդարեան, Արցախ, 273:

8) Եկեղեցու մեծութիւնն է 5·42, 3·25 մետր: Հարաւային պատն ընկած է եւ թաղը կիսով չափ միայն մնացած:

Ա.— Հիւսիսային պատի վերայ ներսից հետեւեալ արձանագրութիւնը կայ.—

Ի թվ ՉԾԵ Յուսովն այ մեք հարազա/տ եղբարք Ըռուբեն Խաչատուրս և Եղիա / շինեցաք զեկեղեցիս (եւ ?) հաստ(ա)/տեցաք Բ·

թուականին, երբ նորա որդին Տարսայիճ–Ստեփանոս գրել է տալիս իւր աւետարանը Գլաձորում Պաւղոս վարդապետ Ակներցու ձեռքով[1]), ինչպէս կը տեսնենք: Ջալալի կինն էր Գոնցա, որ իւր շինած Սպիտակաւոր Աստուածածնի հարաւային պատի վերայ թողած արձանագրութեան մէջ իրեն անուանում է «ամուսին հզաւր իշխանին Ջալալին որդոյ Տարսայիճին եւ [ես][2]) դուստր Իվանէին, թոռին մեծին Զաքարէի հաոց սպարապետի, քուր ամիր սպասալար Շայանշահի»: Իւանէի մասին մենք տեղեկութիւն ունինք բազմաթիւ արձանագրութիւններից եւ Գանձակեցուց[3])․ նա Զաքարիա Սպասալարի թոռն էր, Շահնշահի կրտսեր որդին, Զաքարիա Գ․ի, Աւագի, Սարգսի եւ Արտաշրի եղբայրը: Նա Անբերդ եւ Արագածոտն գաւառների տէրն էր[4]), նորա որդիքն էին ամիր սպասալար Շահնշահ եւ Աղբուղա[5]): Վերջինիս անունը շատ յաճախ յիշւում է արձանագրութիւնների մէջ առանձին կամ իւր կնոջ Սիթի Խաթունի հետ[6]):

Ջալալի եւ Գոնցայի ամուսնութիւնից ծնւում են չորս որդի: Դոցանից երեքը՝ Տարսայիճ, Շահնշահ, եւ Ելիկում յիշուած են Գոնցայի արձանագրութեան մէջ 1301 թուին: Իսկ չորրորդ որդին՝ Աղբուղէն դեռ ծնուած չէր: Տարսայիճի երկու յիշատակարան ոչ միայն լրացնում են այդ պակասը, այլ եւ մանրամասնութիւններ տալիս եղբայրների եւ ծնողների մասին: Դոցանից մէկը Խաչիկ վարդապետ Դադեանի սեփականութիւնն էր, որ հանել էր Գանձասարի մանրանկարներով զարդարած «ցեցակեր» մի աւետարանից: Յիշատակարանին կպցրած է Ձօնը, գրուած եւ նկարազարդուած Թորոս Ռոսլինի աւետարաններին յատուկ բառերով եւ ոճով, $5 \times 4\,^{3}/_{4}$ դ․ մեծութեամբ: Ձօնը գրուած է երկու երեսում, կարմիր տողերի մէջ, ոսկի մակերեւոյթի վրայ, միջին, բոլորաձեւ երկաթագրով․ գրերը կապոյտ են, սպիտակով եզերուած: Ահա ձօնի խօսքերը․

ա․ Ով յանսկիզբն ծ/ոցո բան, նոյնդ ծա/գկեալ յազգ մարդ/կան, որ զայ(ս) մատեն / աւետարան մեզ հնչ/եցեր ձայն ցնծու/թե, ահա զքոյս առ/եւ քեզ տամ բարձել / ի ձեռս առաջի զամ
բ․ առ զայս նուէրս / բարեխնամ եւ յիս / հայեա տր հաշտա/կամ․ դու զպննող/ըս քո բանի եւ զս/տացող այսմ տա/ռի զտր Ստեփանոս / հովիւ բարի… / փառս ի հայրենի[7]):

Եւ յիրաւի գրիչն ու նկարիչն է ոմն Պօղոս վարդապետ Կիլիկեցի, «ի սբ ուխտէն Ակներ կոչեցեալ, ըստ տատանման մտաց արդարեւ հողմով մանկութե խմոյ, գրում է նա, նաեւ յաղագս փափագման իմաստասիրական արհեստից» եկած եւ բնակուած Գլաձորի վանքում, ժամանակի հռչակաւոր Եսայի Նչեցու մօտ: Այստեղ նա գրում է «հրամանաւ եւ ծախիւք մեծազարմ իշխանաշուք լուսաբողբոջ մանկանն Տարսայիճ կոչեցեալ, իսկ ի շնորհս հոգոյն սրբոյ Ստեփաննոս»: Յիշատակարանի մի ա՛յլ տեղում Ստեփանոս կոչւում է «պատանի»: «Յորովայնէ մաւր» նուիրուած լինելով Աստուծոյ, կրթւում է Ս․ Գրքի եւ իմաստասիրական գիտութիւններով «տիեզերալոյս» Եսայի վարդապետի մօտ: Յիշատակարանի գրութեան ժամանակ ՉԿԳ=1314 թուին նա քահանայ էր արդէն եւ պատրաստւում էր վարդապետական եւ եպիսկոպոսական պատիւ եւ աստիճան ստանալու[8]):

Հօրեղբօր (Ելիկումի) որդւոց՝ Բուրթելի եւ Պաւղտայի հետ՝ յիշուած են եւ Տարսայիճ–Ստեփանոսի հարազատ եղբայրները՝ Շահնշահ, Ելիկում եւ Աղբուղա: Յիշուած է նաեւ սրանց «քսասէր եւ գերամեծար ծնաւղ» «պր Գոնցա»: Իսկ հայրը Ջալալ եւ հօրաքոյրերը «ամենաւրհնեալն ի կանայս պր Ասփայն եւ Մամքան» մեռած են արդէն:

Յիշատակարանը տալիս է մեզ եւ մի ուրիշ թանկագին տեղեկութիւն: Սարգիս բարունին է եղել Ստեփանոսի դաստիարակն ու սնուցիչը: Իսկ այդ Սարգիսը մի արձանագրութիւն ունի Սպիտակաւոր Աստուածածնի դրան ճակատին իւր ձեռքով քանդակած Աստուածածնի եւ Ամենակալի (Պանտոկրատոր) մասին: Նա յիշուած է նաեւ Ելիկումի արձանագրութեան մէջ (պատկ․ 7): Այս յիշատակարանին կցուած է տարբեր գրով մի ստանաւոր, որ կը տեսնենք հետեւեալ գլխի մէջ, որով Տարսայիճ (Ստեփանոս) աւետարանը նուէր է ուղարկում իւր ուսուցչին․ տողերի սկզբնագրերը կազմում են «Տէր Սարգսի է աւետարանս»: Ոտանաւորի հեղինակն է

պատարագ ? (եղծուած է ընդգծուածը)… մարգարէի / վն ժողովրդեանն որ զգեղին ը: Բաժինն վա / …… / ովաք… (մի բառ) խափանէ դատի ի տնէ․

Բ․ Ափսիսի գարնէզի վերայ․

Ով սուրբ պատարագողք մեղուցել Տիրատուր եւ ծնողս իմ յիշ… (կոտրած):

Գ․ Սորա տակը․

Շնորհիւն այ ես ձա…. ջաղացն եկեղեցուս… (քարերն ընկած):

Դ․ Սորա տակը․

Կամաւ այ ես Վասակ տւի զիմ ջաղացն եկեղեցոյս իմ հոգւոյ յիշատակ / մ… քառասուն տարին ը: պա… / ··խփ դատին ի տնէ:

Ե․ Սորանից քիչ դէպի ձախ՝ Ջալալի անուան յիշատակութեամբ թերի արձանագրութիւնն է, որ տեսանք:

Զ․ Աւելի ներքեւ փնացած, երկու արձանագրութիւն:

Է․ Ափսիսի թաղի վերայ, արեւմտեան ճակատին, մի կիսատ արձանագրութիւն:

[1] Տես Յ․ Թօփճեանի Ցուցակ Ձեռագրաց խաչիկ վարդապետի, Բ․ 29/30:

[2] Տողի գլխին գրուած փակագծի մէջ առնուածը: Այս Տարսայիճը Աթաբէգն է, որ մեռաւ 1290 թուին:

[3] Թիֆլիս, 1909․ 377:

[4] Այր․ 162, 142, Շահխ․ Բ․ 123:

[5] Այր․ 141, 159: Շահխ․ Բ․ 53, 76:

[6] Այր․ 141, 145, 159, 186, 187: Շահխ․ Բ․ 53, 61, 86, 88:

[7] Համեմատել մեր «Նիւթեր և ուսումնասիրութիւններ», Գրակ Բ․ եր․ 28—29:

[8] Տե՛ս Աստ․ եր․ 268․ Յիշատակարանի նմանահանութիւնը պատկ․ 208: Յ․ Թօփճեան, Ցուցակ Ձեռագրաց Խաչիկ վարդապետի, Բ․ 28/30:

Յակոբ Թաղորեցի: Իսկ Յակոբ Թաղորցին Գլաձորի գրիչ էր, վարդապետ եւ հեղինակ:

Ե՞րբ եպիսկոպոս ձեռնադրուեցաւ Տարսայիճ, հաստատ ասել չենք կարող: Յիշատակարանի խօսքերից այնպէս է երեւում, որ նա պէտք է ձեռնադրուած լինի աւելի վաղ, քան 1324 թուականը, երբ մեռաւ նորա նախորդ Յովհաննէս Օրբէլեանը[1]: Յամենայն դէպս 1326 թուից նա իբրեւ արքեպիսկոպոս մի մեծ արձանագրութիւն ունի թողած Վաղադնու վանքի հիւսիսային պատի վերայ: «Ես Տէր Ստեփանոս Օրբէլեան որդի Ջալալին, արքեպիսկոպոս ի տանն Սիսական, եկի մեր հայրենի տունս՝ ի վանս Վաղադնու, եւ տեսի զհիւրանոցն զոր կ(եր)տեալ էր հայր Սարգիսն վասն արեւշատութեան Բուրթէլին եւ զաւակացն իւր Բէշքէնին եւ Իվանեա»...: Ինքն էլ մասնակից է դառնում նուէրներ տալով «ի պէտս պանդուկին»[2]:

Երկրորդ յիշատակարանում գրուած ՉՁ=1331 թուին, Տարսայիճ (Ստեփանոս) յիշուած է որպէս «տէր եւ վերատեսուչ, զահերէց եւ արհի երից աթոռոցս Սիւնեաց Տաթեւոյ եւ Նորավանից եւ Ցախացքարոյ, պետ երկոտասան գաւառաց», «հզաւր եւ իմաստուն գիտնական», «վարժեալ ի վարժարանի վարժապետին Եսայոյ տիեզերաքարոզ լուսաւորչին»: Մեռած է արդէն Գոնցան, մեռած է եւ Շահնշահ եղբայրը, որի յիշատակին էլ ստացել է այս աւետարանը իւր հոգեւոր հօր Կիրակոս վարդապետի հետ եւ «ընդելուզել ոսկով եւ արծաթով եւ ակամբք պատուականաւք»: Շահնշահը վախճանուել է «ի տաւնի զատկին ի ՉՁ· թուականի հայոց ի տրէ Գ.»: Խնդրում է յիշել իւր ծնողներին՝ Ջալալին եւ «զմայր իմ զամենաւրհնեալ Գոնցա եւ յերկար կենդանութիւն խնդրել երկուց եղբարց իմոց պարոն Ելիկումի եւ Աղբուղային»[3]:

Յիշատակարանիս մէջ յիշուած Կիրակոս վարդապետը Ջալալի տան սրտակից անձնաւորութիւններից մէկն է, Սպիտակաւոր Աստուածածնի շինութեան վաստակաւորը: Նա մի մեծ արձանագրութիւն ունի խորանի (apsis) հիւսիսային պատի վերայ, ուր Գոնցային «մեռնաշնորհ մայր» է անուանում, իսկ վերջինս նորան իւր արձանագրութեան մէջ «ըստ հոգոյ որդի մեր»: Ի զուր չէ իշխան արքեպիսկոպոսը նորան հոգեւոր հայր կոչում: Կիրակոս վարդապետը «Գետկեցի» է, Վայոց ձորի գիւղերից մէկը[4]: Նորա հայրը «Ասլան աղին» է, իսկ մայրը «Թամթէ», որոնց եւ խաչի տօնին մի մի պատարագ է յատկացուած: Ասլան աղին նուիրատուութեան արձանագրութիւն ունի Թանատի վանքում Հարիւր դեկանի ՉՀԵ (=1326) թուին[5]:

Ելիկումի մասին մեզ տեղեկութիւն է տալիս նաեւ վերջինիս մի արձանագրութիւնը ՉՂԵ=1346 թուականից, գրուած տաճարին կից «զգեստատան» արեւելեան պատին, ուր իրեն անուանում է «որդի Ջալալին, թոռն մեծի Տարսաիճին», եւ թւում է իւր «գերեզմանատան» արած նուիրաբերութիւնները: Գերեզմանատուն է կոչւում վանքը նաեւ Գոնցայի արձանագրութեան մէջ: Ելիկումի անուան վերջին յիշատակութիւնը կը լինի Ուրծի վերոյիշեալ արձանագրութիւնը նախընթաց գլխի մէջ:

Զ.

Օրբէլեանց տոհմի Ջալալեան ճիւղի շինարարական գործունէութեան կարեւոր յիշատակարանը Ջինճիրլուի Ս. Կարապետն է ներկայ կոչումով: Վանքը բաղկացած է երեք շէնքից· բուն տաճարը, ըստ արձանագրութեան Սպիտակաւոր Աստուածածին անունով, «Զգեստատուն» եւ «Զանգակատուն»: Գուցէ վերջիններից մէկն ու մէկը Ս. Կարապետի անունով շինուած լինի եւ արձանագրութիւնը փլատակների տակ թաղուած: Ընդհանուր տեսարանը, նկարուած հարաւային կողմից (պատկեր 2), գաղափար է տալիս շէնքերի դասաւորութեան մասին: Բուն տաճարն ընկած է արեւելեան կողմը, նորան կցուած է հարաւ–արեւմտեան անկիւնից Զգեստատունը, իսկ սորա արեւմտեան պատին՝ կրկնայարկ Զանգակատունը: Երրորդ եւ չորրորդ պատկերները, նկարուած արեւելա–հարաւային անկիւնից, մօտիկից, աւելի պարզում են շէնքերի դասաւորութիւնն ու կազմութիւնը (պատկեր 3 եւ 4): Դոցանից հնագոյնը բուն տաճարն է եւ նորագոյնը Զանգակատուն կոչուածը· Զգեստատան արեւմտեան պատը թէ՛ դրսից եւ թէ ներսից սրբատաշ քարով է· մինչդեռ Զանգակատան արեւելեան պատը նրան կպած մասում ո՛չ: Նոյն պատը ներսից, ինչպէս եւ միւս երեքը դրսից եւ ներսից սրբատաշ են: Բուն տաճարի մեծութիւնն է 10,80×7,72 մետր· չափուած են հիւսիսային եւ արեւմտեան պատերը, ներսից՝ 9,89×6,75· (արեւմտեան պատից մինչեւ բեմը 5,99 մետր ×3,90 մ· մինչեւ խորանի (apsis) խորքը—բեմի լայնքը 55 սմ· հետը հաշուած):

Երկու մեծ արձանագրութիւն մեզ բաւարար չափով տեղեկութիւն են տալիս բուն տաճարի շինողների եւ շինութեան ժամանակի մասին: Դոցանից մէկը Ջալալի ամուսին Գոնցայինն է (պատկ· 5) հարաւային պատի վերայ՝ ներսից 3,60×1,40 մետր տարածութեամբ, չհաշուած թուականի տողը: Երկրորդը Կիրակոս վարդապետինը՝ խորանի (apsis) հիւսիսային պատի վերայ, որ տարաբաղդաբար լուսանկարելու յարմարութիւն չունէր:

---

[1] Քաջբերունի, Արարատ, 1890·39: Ալիշան Յովհան Աւրպելու յաջորդ է համարում Սարգիս եպիսկոպոսին, որ սխալ է, տե՛ս Սիսակ· 237:

[2] Ալիշան, Սիսակ· 526:

[3] Բարխուդարեան, Արցախ· 273:

[4] Օրբ· Բ· 261: (Ղուկ· հրատ· 511):

[5] Տես Աստ, եր· 238 եւ 388:

Ահա Գոնցայի արձանագրութիւնը·

:ի թվ: ՉԾ:

1· *† Այ ամենակալլին կամաւն ես Գոնցա ամուսին հզաւր իշխանի Ջալալին որդոյ Տարսաիճին: [եւ ես][1]) դուստր Իվանէին Թոռին մեծին Զաքարէի:*
2· *հաւոց սպարապետի քուր ամիր սպասալար Շայանշահի: յիմ հայրենի զարդուց զՄոշաղբիր գնեցի: վս երկար կենաց գլխո իմ Ջալալին*
3· *եւ որդոց մերոց Տարսաիճին, Շայանշահի եւ Էլուկումին: զեկեղեցիս շինեցի անուամբ Սպիտակաւոր ածածնին:*
4· *ի ձեռն ըստ հոգոյ որդոյ մեր Կիրակոս վդին: եւ ետու հայրենիք իմ գերեզմանատանս զիմ շինած գեղն*
5· *զՔալասն: ա: ճիթահանք: բ: այգի յՈւրծ եւ ի Վէգի: բ: ջրաղաց: զՇեղջիկ ի: Ու· դէկան գնեցի զկես*
6· *հողին էլ իմ եկեղեցոյս հանդ ավլի: Մոշաղբիր յետ իմ մահուանն: իմ վանացս հայրենիք եւ առնեն*
7· *մեզ պատարագ: զծնունդն: ծառզարդարն: զատիկն: անխափան: եւ զտաւն ածածնին Մինաին: եթէ ոք ի մեր ծն*
8· *ընդոց կամ յայլազգաց զավել հայրենիք եկեղեցոյս խափանէ կամ հարկ դնէ: յայ եւ: գ: սբ ժողովոցն*
9· *նզոված: Յուդաի եւ խաչահանուացն մասնակից: եւ կատարիչքն ահին ի տնէ ամէն:*
Տիրացու գէ յհ·

Կիրակոս վարդապետի արձանագրութիւնը·

1· *† Ավ եւ յոյսու* (sic!) *սբ ածածնիս (մոռացուած պատիւը): ողորմութե եւ իմ պարոնացն Ջալալին եւ Գոնցաին ես Կիրակոս*
2· *վդ: Գետկեցի: անձամբ եւ ընչիւք աշխատեցա ի շինութի վանացս եւ եկեղեցոյս ու բճ սպ· դն*
3· *եցի զՍալքին հողն ի գետառէն մինչ ի ծայր: բ: բլրին: յիմ մեռոնաշնորհ մաւրէն Գոնցաէն հայր*
4· *ենիք եկեղեցոյս: սպասաւորք սորա պարտին ինձ պատարագ զեկեղեցիս գնոր կիրակէն եւ զգալուստ սբ·*
5· *հոգոյն անխափան զՄարտիրոս եւ զՎարդիոս ընծա[2]) եկեղեցոյս յիշեցէք կատարիչքն ահնին ի տնէ·*
6· 

(կարդում ենք «Տիրացու Գրչի»): † ի տաւնի խաչին: ա: պտդ Ասլան ափին: ա: Թամթէ վդի մաւրն:



ՊԱՏԿԵՐ 5· Գոնցայի արձանագրութիւնը

---

[1]) Տողի գլխին եւ անյարիր իւր տեղին:

[2]) Ճորտատիրութեան հազուագիւտ փաստ:

Արձանագրութիւնների հնագրական եւ լեզուական առանձնայատկութիւնների վերայ երկար կանգ չենք առնի, մեր յօդուածն աւելի եւս չընդարձակելու համար: Մանաւանդ, որ Կիրակոս վարդապետի արձանագրութեան լուսանկարը չունինք: Յիշելի են, սակայն, որպէս ոչ սովորական ձեւեր Ն-ի վեր բարձրացող գծերի կիսաբոլորակները Գոնցայի արձանագրութեան մէջ (պատկ· 5) 1, 2 տողերի մէջ· Ե եւ Ի գլխին նման զարդեր 1, (տողի գլխին) եւ 4 տողերի մէջ, Ւ-ի տարօրինակ միացումը Ե-ի հետ Եւ կազմելու համար, 1, 3, 4, 5, 6, 7, 8, 9 տողերի մէջ: Գրերն իրար կցելու (ligature) սովորութիւնը ընդարձակ ծաւալ է ստանում ԺԳ· դարից սկսած, շատ անգամ այնպիսի ձեւերով, որ բոլորովին դժուարացնում են վերծանութիւնը: Այստեղ, թէեւ չափազանցութիւններ չկան, բայց քիչ են այդպիսի կցումներ, որով գրերի ձեւը փոխւում է: Ընթերցողը ամեն տողի մէջ կը գտնէ այդպիսի ձեւեր: Ոչ սովորական ուղղագրութեամբ են՝ Տարսաիճ, հաոց, Մինաին, գլխո, Շայանշաիի, տվի, զտվել բառերը Գոնցայի արձանագրութեան մէջ· յոյսու, աշխատեցա, ընծա Կիրակոս վարդապետի արձանագրութեան մէջ: Ժողովրդական են քուր, զիմ շինած գեղն, էղ, հանդ, ծառզարդար, Գոնցայի եւ ափի՝ Կիրակոս վարդապետի արձանագրութեան մէջ:

Գոնցայի արձանագրութիւնից տեսնում ենք, որ տաճարը շինուած է 1301 թուին նորա ծախքով եւ Կիրակոս վարդապետի ձեռքով· վերջինս էլ իւր արձանագրութեան համեմատ «անձամբ եւ ընչիւք» աշխատած է «ի շինութի վանացս»: Գոնցան իւր հայրենի զարդերի գնով առել է Մոշաղբիւրը, որ իւր մահուանից յետոյ «հայրենիք» պիտի մնար վանքին: Ուրեմն ոչ հեռու այդ շրջանից[1]): Իւր «գերեզմանատանն» է նուիրել նաեւ իւր շինած Քալաս գիւղը: Այս անուան շատ մօտ է հնչում Քլիս գիւղը, բայց նա գտնւում է Շահապունեաց գաւառում: Քալասը պիտի լինէր Ջալալի իշխանապետութեան մէջ: Անյայտ է նաեւ Շեղջիկի տեղը, որ Գոնցան գնել էր 1000 դէկանով: Նոյն անունը կրկնուած է նաեւ Ելիկումի արձանագրութեան մէջ (պատկ· 6): Գոնցան վանքին նուիրել էր միայն Շեղջիկի հողի կէսը, իսկ Ելիկումը 1346 թուին երկու այգի նուիրում է Ուրծում եւ երկու ջրաղաց Վեդիում: Ուրծի տեղը տեսանք մենք Դ· գլխի վերջում: Նորա եկեղեցիների արձանագրութիւնների մէջ յիշատակութիւններ կան ոչ միայն գինու, այգիների, այլ եւ բամպակի մասին: Վեդին մինչեւ այժմ էլ պահել է իւր անունը նոյնանուն գետակի հովտում, Դուինայ դաշտի բերանում: Այժմ Թուրքաբնակ մի մեծ գիւղ է, բայց քրիստոնէական շրջանի յիշատակների չուսումնասիրուած մնացորդներով: Գոնցան նուիրում է եւ մի ձիթահանք· Ծննդեան, Ծաղկազարդի, Զատկի պատարագները պիտի կատարուէին Գոնցայի համար, իսկ Աստուածածինը՝ Մինային, այսինքն՝ Մինախաթունին: Կիրակոս վարդապետն էլ իւր կողմից Գոնցայից 1200 սպիտակով գնել է «զՍալքին հողն ի գետառէն մինչ ի ծայր: Բ: Բլրին» եւ «հայրենիք» այսինքն ժառանգութիւն տուել եկեղեցուն: Գրութեան ձեւը ցոյց է տալիս, որ Սալքի հողը վանքից հեռու չէ եւ ծանօթ է վանականների կամ տեղացիների համար նշանակած տեղը: Յիշուած գետը կարող է մի միայն Զանախչայը լինել, որ Ղարաղաչ, Ղաբլլու գիւղերի մօտից սկիզբն է առնում եւ Շահարլու գիւղի միջով անցնելով՝ խառնւում Վեդիի հետ Զիմանքեանդի հողերում: Շահարլուն հէնց վանքի տակն է, ձորում, եւ այդ գիւղի մօտերքում պէտք է որոնել այն բլուրները, որ մատնացոյց է անում Կիրակոս: Եկեղեցւոյ սպասաւորներին պարտաւորեցնում է Նոր Կիւրակէի եւ Հոգեգալստեան պատարագները իրեն նուիրել: Այս արձանագրութեան կցուած է մի տող եւս, որ խաչի տօնին մի պատարագ «Ասլան ափին» եւ մի պատարագ վարդապետի մօրը՝ Թամթէին նուիրուի: Անշուշտ Ասլան ափին ոչ այլ ոք է, բայց եթէ վարդապետի հայրը: Ապա թէ ոչ անհասկանալի կը լինէր երկու անունների այդպիսի միացումը: Կիրակոս վարդապետի անձնուէր աշխատութիւնը վանքի շինութեան մէջ, որդիական եւ մայրական սրտառուչ յարաբերութիւնը նորա եւ Գոնցայի մէջ, Տարսայիճ-Ստեփանոս արքեպիսկոպոսի որդիական ակնածութիւնը դէպի Կիրակոս վարդապետը եկեղեցւոյ շինութիւնից 30 տարի յետոյ եւ միասին կատարած նուիրաբերութիւնը Շահնշահի յիշատակին, վարդապետի ծնողներին նուիրուած պատարագները, «Ասլան ափին» փաղաքշական կոչումով, ապացոյցներ կարող են լինել, թէ Կիրակոս վարդապետ իւր ամբողջ կեանքով կապուած էր իւր շինած վանքի հետ, այսինքն նորա առաջնորդն էր: Նորա յաջորդն էր վերոյիշեալ Սարգիս վարդապետը, որ կը տեսնենք Ելիկումի արձանագրութիւնից (պատկ· 7):

Հետաքրքրական են այս արձանագրութիւնների մէջ յիշուած դրամները՝ «դէկան» եւ «սպիտակ», բայց այդ եւ ուրիշ յիշատակութիւններ դրամների տեսակների եւ արժէքների մասին ոչ միայն պատմիչների, արձանագրութիւնների, այլ եւ յիշատակարանների մէջ, արժանի են յատուկ ուսումնասիրութեան, եւ ամենամեծ նշանակութիւն ունին տնտեսական կեանքի հասկացողութեան համար, որ պատմական կեանքի մի մասն է: Նրանց արժէքը փոփոխական է ժամանակի համեմատ[2]):

---

[1]) Մոշաղբիւր յիշում է եւ Զաքարիա պատմիչ· Բ· 24:

[2]) ԺԳ· դարի սկզբում, ըստ Մխիթար Գոշի (Դատաստանագիրք, Բաստամեանցի հրատարակութիւն) ոսկի դահեկանը հաւասար էր արծաթի տասներեք դրամի (եր· 309), իսկ նոյն դարի վերջում ըստ Ստ· Օրբէլեանի տաս դրամի (բ· 236, 98): Ըստ Գոշի ոսկի դահեկանը արժէր վեց դանգ, չորս թասու եւ երեք գարի (եր· 372, 287): Արձանագրութեան մէջ Գոնցայի հազար դեկանը պէտք է հասկանալ ոսկու մտքով, ապա թէ ոչ հազար ար-

Յիշեցինք, թէ վանքի վանահայրը Սարգիս վարդապետն էր: Նորա հոգեւոր հաղորդակցութիւնը Տարսայիճ–Ստեփանոս եպիսկոպոսի հետ, տեսանք մենք: Բայց երկու արձանագրութիւն որոշում են նորա կապը վանքի հետ: Արեւմտեան դրան կամարակալ քարի վրայ քանդակուած է Տիրամօր պատկերը Յիսուս մանուկ գրկին (պատկ. 7): Մարիամ նստել է ծալապատիկ երկարաւուն, «մութաքայ» կոչուած, բարձի վրայ եւ որդուն նստեցրել ձախ ծնկանը: Մի մի թեւաւոր եւ ամբողջ հասակով հրեշտակ կանգնած են երկու կողմից, ձեռքերը հաւատամք բռնած եւ մեկնած դէպի Տէրը: Բոլորն էլ լուսոյ պսակ ունին: Յիսուսինը խաչաձեւ զարդով, ինչպէս ընդունուած էր քրիստոնէական արուեստի, յատկապէս բիւզանդականի մէջ: Յիսուս խաչակնքում է հայ–յունական ձեւով: Յիսուսի կրծքին խաչաձեւ ձգուած է մի ժապաւէն: Դէմքերը կոտրած են: Պատկերաքանդակի մեծութիւնն է կիսաբոլորակի ներքեւի մասում 1,25 մետր, իսկ բարձրութիւնը մէջտեղից, ուղղահայեաց, 75 սմ.: Պատկերաքանդակի մակերեւոյթը (ֆոնը) զարդարուած է արմաւենիկներով (palmiette), *իսկ պատկերաքանդակի շրջանակ կազմող կիսաբոլորակի վերայ գրուած է.*

«Ես Սարգիս վարդապետս վս յոյսոյ (s!) *իմոյ նկարեցի զպատկերս»:*

Դրան կամարի գլխին՝ կատարելապէս նոյն ոճով, ուրեմն եւ նոյն վարդապետի ձեռքով քանդակուած է մի Ամենակալ, որ բարձրութեան պատճառով չափել չկարողացանք: Վերին աստիճանի հետաքրքրական է Ամենակալի հագուստն ու նստուածքը: Աթոռը բարձրաթիկունք չէ, այլ մինչեւ մէջքը հասած եւ հորիզոնական կտրուածքով վերջացած: Հաստատուած է չորս կենդանակերպների վերայ, որոնց գլուխները աթոռի առաջին ոտքերի եւ թիկունքի կողերի ճակատն են կազմում: Աթոռի պատուանդանի կողքերից երկու մորուքաւոր գլուխներ, որ Պօղոս եւ Պետրոս առաքեալներն են



ՊԱՏԿԵՐ 6· Ելիկումի արձանագրութիւնը

ծաթի դրամով անկարելի էր մի գիւղ գնել: Գրիգոր Դոփեանը, Ասփայի ամուսինը, հազար հինգ հարիւր դահեկանով գնել էր մի այգի (Ալիշան. Սիսական. 198): Նոյն ժամանակներում Քանաքեռի մի մատրաձեւ խաչքարի արձանագրութեան համեմատ, երեք հազար երկու հարիւր դահեկանով ծախւում է մի այգի (Ալիշան, Այր. 298): Պարոն Ումեկ եշանաւոր վաճառականը ԺԳ. դարի կէսերին գնել էր Գետիկը, «ի խռ կարմիր տուգանի», կարմիր դուկատը նշանակում է ոսկի դրամ, ինչպէս սպիտակը արծաթ դրամ (Ջալ. Ա. 138: Շահխ. 367: Բարխուդարեան, Արցախ. 350: Խաչիկ Դադեան... Ազգ. Հանդէս X, 1903, տես եւ մեր Նիւթեր եւ Ուսումնասիրութիւններ, պրակ. Ա. եր. 9): Գոնցայի աւագ ժամանակակից Սահմադինը 40,000 դուկատով շինել է տալիս իշխանական պալատ Մրենում (Մառ. Նոր նիւթեր արձանագրութիւնների, ռուսաց լեզուով): Ստեփանոս Օրբէլեան, տեսանք, իւր Ջալալ եղբօրից գնել էր Զուա գիւղը 21,000 դրամով, որ հաւասար է 2100 ոսկի դահեկանի (Օրբէլեան Բ. 241 (Ղուկ. 493): Մեր յիշատակարաններ մէջ առատ նիւթ կայ այդ ուղղութեամբ, որ դեռ եւս յատուկ ուսումնասիրութեան չի ենթարկուած:

ներկայացնում։ Այստեղ եւս մակերեւոյթը զարդարուած է արմաւենիկների զարդով։ Ամբողջն առնուած է կամարի տակ, ուղղաձիգ կողքերով, եւ թեթեւ սլաքաձեւով վերջացած (պատկ· 7)։

Ամենակալը լուսապսակ ունի, վերան զիգզագ գծերով եռանկյունաձեւ զարդեր կազմած։ Այս օրնամենտը հայ ճարտարապետութեան մէջ գործածուած է Թալինու կաթուղիկէի հիւսիսային լուսամուտներից մէկի գլխին, որպէս պսակ։ Ուրեմն Է· դարուց արդէն յայտնի հայ զարդաքանդակութեան։ Այս երկու մոտիւն էլ ԺԳ· դարու հայ քանդակագործութեան ամենից սովորական նիւթերն են։ Չորս կենդանակերպների մասին խօսել ենք ուրիշ տեղ, իսկ Տիրամօր հարթաքանդակների մասին խօսել ենք մեր Խաղբակեանք վերնագրով աշխատութեան մէջ, ուստի այստեղ մանրամասնութիւնների մէջ չենք մտնում[1])։ Սակայն հարկ ենք համարում չեշտել, որ այստեղ երկուսն էլ զուտ արեւելեան արուեստի բնոյթ են կրում, ինչպէս Աստուածածնի նստուածքը մութաքայի վրայ, Յիսուսի մինչեւ ոտները հասնող պարեգօտը, քանդակի հարթ ձեւը։

Մեզ համար հետաքրքրական է նաեւ այն երեւոյթը, որ արուեստագէտը վարդապետ է, վանքի առաջնորդը։ Սա հազուագիւտ չէ հայ արուեստի պատմութեան մէջ, բայց դեռ եւս ուշադրութեան արժանացած չէ։ Մենք կարող ենք մի շարք ճարտարապետ եւ քանդակագործ հայ վանականների, վարդապետների եւ եպիսկոպոսների անուններ տալ, բայց այդ կը շեղէր մեզ մեր նիւթից· բաւականանանք միայն մի քանի անուններով երեւոյթը հաստատելու համար։ Սմբատ Բ· Շահնշահի ժամանակ 985 թ· «ի ձեռն Սամէհանի ճարտարապետի աբեղայի» շինուած է Ղզըլքիլիսա կամ Ղոշավանք գիւղի եկեղեցին Ախուրեանի ձախ ափին։ ԺԳ· դարում Վեցիկ «վարդպետ»-ը շինել է Կեչառուաց նորագոյն կաթուղիկէն։ «Վարդպետ» նշանակում է ճարտարապետ, վարպետ։ Նոյն դարում Նորավանքի Սարգիս եպիսկոպոսը գրել է Քարկոփի կամ Խոտակերաց վանքի նորոգութեան մեծ արձանագրութիւնը խոշոր երկաթագրերով եւ փակագրերով՝ Սմբատ արքայի եւ Տարսայիճի ժամանակ։ Ամաղուի Նորավանքի Մոմիկ վարդպետը «հանճարեղ յարուեստ գրչի եւ նկարագրութե» լինելով հանդերձ, լաւ արձանագրող էր եւ քանդակագործ կամ «վարդպետ»[2])։



ՊԱՏԿԵՐ 7· Աստուածածնի եւ Ամենակալի քանդակները

---

[1]) Տես Աստ· 101 եւ շար·։

[2]) Սիսակ· 182, 195։ Մեր յօդուածը Մոմիկի մասին, «Նայիրի» թ· 3, 1947։

Գեղարդի վանքի վիմափորի ճարտարապետն էր Գալձագ, Տեղերու վանքինը Արագածի վերայ՝ Աղբայրիկ:

Պէտք է յիշել եւ այս եկեղեցու վարպետին, որ յատուկ արձանագրութիւն ունի ձախ կողմի յետին դասի կիսասեան վերայ, արեւմտեան ճակատին·

Ի տանի սբ Գրիգորի/: ա: պատարագ Բուտ / վարպետին ժրաջան աշխատողին կատարիչքն աՀնին այ (s!):

Բուտ անուան գործածութիւնը Հայոց մէջ յայտնի է Է· դարու առաջին կիսից: Բագարանի Ս· Թէոդորոս եկեղեցւոյ պատերի վերին շարքի քարերի վրայ գոտեձեւ մի արձանագրութիւն է բոլորում, տեղ տեղ երկու եւ տեղ տեղ մի տողով· տեղ տեղ էլ ընկած են քարերը, որով եւ հայ հնագրութեան այդ կարեւոր մնացորդը պակասաւոր է: Առաջին անգամ արձանագրութիւնը կարդացել եւ հաղորդել է գիտնական աշխարհին ուսուցչապետ Մառը՝ յատուկ ուշադրութեան առնելով Բուտ անունը[1]): Խնդիրն այս է, որ նոյն բառը գործ է ածում Գոշ Մխիթարը իւր Դատաստանագրքի մէջ[2]), նոյնացնելով պերիտուտ (Պերիոդեոյտէս) յունարէն բառի հետ, «եւ պերետուտն է, որ այժմ է բուտ», կամ «որ այժմ բուտ կոչի», մի պաշտօնեայ, տեսուչ բառացի, որ եպիսկոպոսի հրամանով կարող էր ծրագրել եկեղեցւոյ հիմունքը, ուրիշ խօսքով ճարտարապետը: Յարգելի գիտնականը հակուած է Բագարանի արձանագրութեան «բուտ»ը յատուկ անուն ընդունել եւ ոչ պաշտօնի, իսկ նորա ստուգաբանական ծագումն անյայտ: Նոյն բառի գործածութիւնը մի երկրորդ արձանագրութեան մէջ ԺԴ· դարի վերջում կամ ԺԴ·ի սկզբում, այստեղ իբրեւ յատուկ անուն, անկասկած, առանձին նշանակութիւն ունի: Մեզ չպէտք է չփոթէ այն հանգամանքը, որ Կիրակոսի եւ Բուտի անունները սղագրութեամբ «կս· բտ·» գրուած են գմբէթի արեւելեան լուսամուտի երկու կողքին: Իբրեւ անձնաւորութիւն դոքա նոյնանալ կարող չեն, քանի որ յատուկ արձանագրութիւններ ունին, ինչպէս տեսանք:

Աջ կողմի յետին դասի կիսասեան արեւմտեան ճակատին հետեւեալ արձանագրութիւնը կայ·

Ի տանի Հռիփսիմենց/:ա: պատարագ մնունայ գ/այիանեանց: ա: պտ խաթու/նի տանի խ: իցն: ա: պտգ/ մարին... (մնացած $2^{1}/_{2}$ տողը չի կարդացւում)[3]):

Մի արձանագրութիւն էլ աջ դասի աւանդատան դրան գլխին կայ·

Ած գթա / յաւ ? Համ ?
ի տանի սբ Ստեփաննոսի/: գ: պատարագ Վարդանա / կատարիչքն աՀնին ի տնէ·

Սորա տակը·

Յայսմ խորանի պտդ / յորո անուն Հասարակա/ց առնեն Հանապազ·

Դրսից՝ կաթուղիկէի թմբուկի չորս լուսամուտի կողքերից հետեւեալ սղագրութիւնները կան·

Հարաւային կողմից· «տր· ջալ· գց»
Արեւելեան կողմից· «կս· բտ·»
Հիւսիսային կողմից· «տէ յշ»
Արեւմտեան կողմից· «փո յշ»

Առաջինը կարդում ենք «տէր Ջալալ, Գոնցա», երկրորդը «Կիրակոս, Բուտ», երրորդից եւ չորրորդից միտք հանել չենք կարողանում, թէպէտ յիշեցէք բառի կրճատումն են երկրորդ տեղը բռնող բառերը:

Վերջին նորագոյն արձանագրութիւնը գտնւում է հիւսիսային պատի վերայ, դրսից·

վիրաւորեալ շատ ման եկի փուճ աշխարհն գէ
Ոչ մի տեղ չգտուաւ հոգոյս դեղւոյ ճարն· վ
Թէ բիւր բժիշկ լինի (կոյս) քեզ մօտ է հնարն· տ
Հայցեմ տն ի մօրէդ դու տուր հոգւոյս դեղ· յ

Սորա հեղինակն ու գրողն է Գէորգ վարդապետ Տէր Յովհաննիսեան, ինչպէս տողավերջերին գրուած անուան եւ ազգանուան սկզբնատառերն էլ ցոյց են տալիս, որ շատ բարի անուն է թողել վերջին վանահայրերի շարքում: Նորա մի ա՛յլ արձանագրութիւնը գրուած է վանահայրական հասարակ բնակարանի դրան ճակատին· «Շինեցան ի հիմանց զերկու սենեակս ջանիւք գէրգ վրդին տր Յովհաննիսեան դրաչիչակցւոյ 1894:

Է·

Զգեստատուն կոչուած շինութեան եւ նորան կից Զանգակատան մասին խօսք եղաւ արդէն (պատկ· 4): Դոցանից առաջինը փլուած է: Մնում են արեւելեան եւ հիւսիսային պատերը, վերջինս էլ այսօր վաղը կը փլուի: Զգեստատունը հիւսիսային կողմից դռնով հաղորդակցութիւն ունէր տաճարի բակի հետ: Նա կրկնայարկ էր եւ գմբէթաւոր լինելու նշանները երեւում են հիւսիսային պատի վերայ: Արեւելեան պատին, ներսից, գրուած է Ջալալի որդի Ելիկումի մեծ արձանագրութիւնը (պատկ· 6) 4,23×1,70 մետր մեծութեամբ: Մակերեւոյթը ներկուած է կարմիր գունով:

1· **Յուսով [ամեն]ակալին այ· ես Էլիկումս որդի Ջալին Թոռն մեծի Տարսայիճին ավաք զմեր հալալ հայրեն... անդի տակն եւ զ**
2· **Ծեղջիկ մեր գերեզմանատանս իւր: գ· կապարովն ստին եւ ջրբին հողով ու գինչ յՈւրծ այգի կա: Տաիրեն հոգոյն Գոնցին**

---

[1]) Imia But ili Bud. Zapiski Vost. Otdel. imp. Russk. Archeolog. Ob. -- a. Tom. VII. Մենք օգտուել ենք արտատպութիւնից: Այս արձանագրութիւնը տես Օրբէլի, Խրիստիանսկիյ Վոստոկ, 1913, 126—130:

[2]) Մխիթար Գոշ· 141:

[3]) Խաթունի ի-ն չի կրկնել, «ի» տանի պիտի լինէր:

3· մեծ արտ Զարուան ? Ուրունպուղին նորքն: ա: այգի յառին ? որ մեր գերեզմանատանս հայրենիք լինի: մինչ ի կատարած աշխարհ
4· ի: Սգ վղ եւ միաբանքս խոստացան ի տարին ա: խ: մեզ ով ի մերոց կամ յաւտարաց զտվել հայրենիքս հանել ջանա կամ հար
5· կ ղնէ: յ: ժը: հայրապետացն նզոված է կատարիչքն ահնին ի տէ: Թվ ՉՂԵ

Արձանագրութիւնը թէեւ ընդհանրապէս լաւ է պահուած, բայց եղծուած են առաջին տողի վերջից երրորդ եւ չորրորդ բառերը մի քանի տառերով:

Երկրորդ տողի մէջ «եւ» բառի միայն ե–ի հետ միացած ւ է երեւում: Նոյն տողի մէջ «Տաիրին» բառը յատուկ անուն է, կարծում ենք, թէ ճիշդ ենք կարդացել:

ՊԱՏԿԵՐ 8· Արծիւի մագիլների մէջ խոյ:

Երրորդ տողի «յառին» բառի մէջ ընդգծուած տառը «ս»ի նման է, որով եւ միտքը մութ է:

Ուղղագրութեան կողմից այստեղ եւս նկատելու է, տարսաիճ, տվաf, կա, զտվել, ջաճա բառերը:

Զգեստատունը մի պարզ շէնք է առանց զարդարանքների· բայց եկեղեցու ներսը դրուած է մի մեծ բարձրաքանդակ արծիւ, մագիլների մէջ խոյ բռնած (պատկ· 8) 79×79 սմ· մեծութեամբ, որ պէտք է նոյն շինութեան հարաւային պատին հագցրած լինէր: Գիւղացիք վերան մոմ են կպցնում եւ շատ կեղտոտել են, որից եւ լուսանկարը ոչ բոլորովին պարզ: Այս եւս հայ քանդակագործութեան սիրելի նիւթերից մէկն էր[1]:

Զգեստատանը կից շէնքը, Զանգակատունը, երկյարկանի է (պատկ· 4), ընկել է միայն գմբէթը, որի վեղարը ազատ սիւների վերայ էր հաստատուած՝ առանց թմբուկի: Գմբէթի ներքին բոլորակը եւ սիւներից մի քանիսի խարիսխները նկատելի են դեռ եւս: Այդ տեսակի կաթուղիկէները կամ գմբէթները հայ ճարտարապետութեան մէջ համեմատաբար աւելի նոր են: Նրանք ծագում են ԺԱ· դարում, բայց վերջնական զարգացումն ու ձեւակերպութիւնը ստանում ԺԳ·—ԺԴ· դարում: Օրբէլեանների նուիրուած մի այլ աշխատութեան մէջ պիտի անդրադառնանք եւ այս խնդրին: Ներքին յարկի մուտքը եղել է Զգեստատան կողմից, վերինը յայտնի չէ, յամենայն դէպս ոչ դրսից, ինչպէս Ամաղուի բուրթելաշէն եկեղեցունը, թէեւ նման շէնքերի հետեւողութեամբ պիտի լինէր այս զանգակատունը: Արեւմտեան կողմից պատշգամբի կամ մեծ լուսամուտի բացուածք կայ: Այս երկու շէնքն է եղել, կարծում ենք, բուն գերեզմանատունը: Եթէ փլուածքները մաքրուէին, զուցէ պարզուէր այդ խնդիրը: Անյայտ են նաեւ շինողները· յամենայն դէպս Զգեստատուն կոչուածը 1346 թուին շինուած էր, որի արեւելեան պատին դրուեցաւ Ելիկումի արձանագրութիւնը: Անհաւանական չէ, որ նա շինուած լինի աւելի վաղ, բայց բուն տաճարից յետոյ՝ իբրեւ գերեզմանատուն:

Ը·

Այստեղ իսկապէս պէտք է վերջանար մեր խօսքը· որովհետեւ այլեւս գրական աղբիւր կամ ցուցում չունինք Ելիկումի կամ Աղբուղայի որդւոց մասին: Բայց

---

[1] Տե՛ս մեր յօդուածը· «Նախնեաց յիշատակներ», Արարատ 1910, 255:



ՊԱՏԿԵՐ 9. Պարոն Ճանղուլիի խաչքարը։

եթէ ճշմարիտ է մեր կարծիքը, թէ Ուրծը այս տոհմի ժառանգութիւն դարձաւ եւ այդտեղի արձանագրութիւնների մէջ յիշուած պարոն Ելիկումը Ջալալի որդին է, պէտք է ընդունել նաեւ, որ այնտեղ յիշուած յետագայ իշխանները այս ցեղի ժառանգներն են։ Ինչպէս էլ լինի, անօգուտ չէ նշանակել այն անունները, որոնք իշխանական ծագումն ունին եւ գուցէ մի օր բանասիրութիւնը միջոց կ'ունենայ վերջնական խօսք ասելու այդ մասին։

Քէշիշքեանդ (Երիցադիւղ) գիւղի արեւելահարաւային կողմը մի սաղաշէն եկեղեցի կայ շուրջը գերեզմանատուն. գերեզմաններից մի քանիսը օրօրոցաձեւ են, ոմանք խաչազարդ քարերով։ Խաչքարերից աչքի է ընկնում մէկը, սպիտակ, մարմարիոնանման քարից, 2,50×1,04 մետր մեծութեամբ (պատկ. 9)։ Խաչի ճակատի մէջտեղը քանդակուած է մի Ամենակալ, նստած չորեքկերպեան աթոռի վերայ։ Տիրոջ հագուստի ծալքերը, նստուածքը, չորեքկերպեանները (աջից՝ արծիւ եւ առիւծ, ձախից հրեշտակ եւ եզ, ամենքն էլ թեւաւոր) այնքան նուրբ չեն, ինչպէս Ամենակալի եւ խաչի շրջանակ կազմող գծերի հիւսուածքն ու երկրաչափական հիւսկէն ձեւերը։ Բուն խաչը՝ կողքի փոքր, մարդկային ձեռքով բռնած խաչիկներով, նոյնպէս գեղեցիկ է։ Այս խաչերի տակ բոլորակ շրջանակի մէջ քանդակուած է մի գեղեցիկ վարդեակ (rosette), կեդրոնը մարդկային դէմքով։ Խաչի ճակատին ելնդաւոր տառերով գրուած է. «Սբ խաչս բարէխաւս պարոն Ճանղուլին»։ Իսկ խաչի հիւսիսային կողքին (երեսը դէպի արեւմուտք է դարձրած) փորագրուած է.

«Ես պարոն Միրղուլիս որ Ած/ատուրս կամա/ւն այ / կակնե/ցի զխ/աչս / փրկութի հոգոյ / պարոն Ջանղ/ուլին որ ի քս / փոխեց/աւ իշե/ցէք խչ գծս»։

Վերջին երկու բառերը պէտի կարդալ «խաչատուր գծող» որ քանդակողն է խաչի։

Խաչի առաջ ձգուած է մի տափակ գերեզմանաքար մարդու պատկերով, ձեռքերը կրծքին, հետեւեալ արձանագրութեամբ.

«Այս է հանգիստ պար Ջանղուլին»։

Պակասում է թուականը, բայց խաչի արուեստին նայելով, հաւանօրէն ԺԳ.—ԺԵ. դարի գործ է։

Այստեղից դէպի արեւելք ընկած զատ զատ բլուրների վերայ երեւում են նոյն տեսակ սպիտակ քարերի փոքրիկ մնացորդներ։ Դոքա, ականատեսների պատմելով, երկու մեծ եւ աւելի գեղեցիկ ու նուրբ քանդակներով զարդարուած խաչքարեր են եղել։ Բայց մերձակայ Գարաբաղլար թաթարաբնակ գիւղի բնակիչները հետզհետէ կոտրել են եւ իրենց ննջեցեալների գերեզմանների համար գլխաքարեր պատրաստել։ Ամենայն հաւանականութեամբ դոքա իշխանական յուշարձաններ են եղել, որոնց արձանագրութիւնները գուցէ մեր հարցերին պատասխան կը տային, բայց մարդկային բարբարոսութիւնը զրկել է մեզ այդ հնարաւորութիւնից։

ՅԱՒԵԼՈՒԱԾ

(Յիշատակարաններ, տե՛ս եր· 440 եւ 441)

Ա·

Փառք փառաւորեալ տրութեն միասնական ածութեն Հաւր եւ որդւոյ եւ ամենախնամ սբ Հոգւոյն այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից ամէն:

Շնորհիւ եւ ողորմութբ Հաւրն երկնաւորի եւ գթութբ եւ ողորմութբ որդւոյ Նորին տն մերոյ Յի Քի· եւ ամենախնամ եւ կենդանարար սբ Հոգւոյն: Յամս թուաբերութե ժամանակաց հոլովման շրջագայութե ամաց Հայկազեանս տումարի· ՉԿԳ (=1314) ես Պաւղոս ըստ շնորհատուր անուանն սուկ վդ կոչեցեալ· աշխարհաւ Կիլիկեցի, ի սբ ուխտէն Ակներ կոչեցեալ, ըստ տատանման մտաց արդարեւ հողմով մանդութե իմոյ: Նաեւ յաղագս փափագման իմաստա//սիրական արհեստից տարաշխարհիկ եղեալ ՚ի կայս եւ ի կոյս արեւու, եկեալ բնակեցայ ի կողմն նահանգիս Սիւնեաց ի գաւառս Վայոց ձոր կոչեցեալ ի վանս Գլաձոր առ ոտս սբ երից երանեալ բարունապետին Եսայեայ, որ իբրեւ զարեգակն լուսաւորեալ պայծառացուցանէ զբոլոր ազգս եւ զեկեղեցիս Հայաստան աշխարհի: զոր շնորհեսցէ զսա Քս Ած եկեղեցւոյ իւրում սրբոյ ընդ երկայն աւուրս: եւ ընդ հովանեաւ ամենազաւր աջոյն Յի գրեցի զսբ աւետարանս իմով ձեռամբ, վատեալ ի լուսոյ եւ պակասեալ ի զաւրութենէ, դողդողեալ ձեռաւք եւ մտաւք հրամանաւ եւ ծախիւք մեծազարմ իշխանաշուք լուսաբողբոջ մանգանն // Տարսայիճ կոչեցեալ, իսկ ի շնորհս Հոգւոյն սրբոյ Ստեփաննոս անուանեալ: որ է ըստ հայրենի նախնեաց յազգէ եւ ի շառաւիղէ Օրպելեանց· իսկ ըստ մայրենեացն սերեալ յազգէ մեծ ամիր սպասալարին Զաքարէի, իսկ յորովայնէ մաւր նուիրեալ Այ, տուեալ զանձն ի կրթութի գրոց եւ ածային աւրինացն եւ պատուիրանացն հլու եւ հպատակ· Նաեւ յիմաստասիրական արհեստն յոլով ժամանակս դեգերեալ ընդ թեւաւք խնամոց սբ եւ երանաշնորհ բարունապետին եւ տիեզերալոյս վդին Եսայեայ· Նաեւ աստիճանի սարկաւագութե եւ քահանայութե արժանացեալ եւ հանդերձեալ է կոչմամբ եւ ընտրութբ սբ Հոգւոյն // ելանել ի պատիւ եւ յաստիճան վարդապետութե եւ եպիսկոպոսութե տանս Սիւնեաց· զոր ընդալցի տր եւ յաջողեսցէ ի հաճոյս կամաց իւրոց, ի զարդ եւ ի փառս կաթուղիկէ սբ եկեղեցւոյ:

Արդ հրամանաւ վերապատուեալ տնս իմոյ տր Ստեփաննոսի մականուն Տարսայիճ գրեցաւ սբ աւետարանս յընտիր ընտիր երանգոց եւ ի յոսկւոյ սրբոյ ի փրկութի հոգւոյ իւրոյ եւ ի վայելումն անձին իւրոյ եւ իւրոց զարմիցն քաջաւր իշխանացն մեծ ամիր Պուրթելին եւ Պաւղտային եւ լուսազարդ հարազատացն իւր Տահի(ն)շահին, Ելիկումին եւ Ազբուղին· եւ քաջաէր եւ գերամեծար ծնաւղին իւրոյ պր Գոնցային / որք են իշխանք եւ տր նահանգիս Սիսական: զոր տր Յս յաջողեսցէ նոցա յամենայն բարիս, ահարկու եւ յաղթող արասցէ ի վերայ թշնամեաց խաչին Քի, աջն հայրական եւ բազուկն տիրական, որ տարածեցաւ ի խաչին, հովանի եւ պահապան եղիցի նոցա ի տուէ եւ ի գիշերի, գնալով զաւրութենէ ի զաւրութի եւ փառաց ՚ի փառս, ի փառս փառաւորեցելոյն Յի:

Արդ աղաչեմ զամենեսեան միջնորդութբ աւետարանիս, որք պատահիք այժմ լուսանըկար ածաբան կտակիս, յիշեցէք զդեռաբողբոջ եւ զլուսազարդ պատանին զտր Ստեփաննոս հանդերձ բոլոր զարմիւք իւրովք ի մաքրափայլ սբ աղաւթս ձեր առաջի մեծի զենմանն Քի // որ խորհրդաբար մեռանի եւ է միշտ կենդանի: յիշեսջիք աղաչեմ եւ զհայր սորին զմեծ իշխանաց իշխանն զհանգուցեալն առ Քս զպր Ջալալն եւ զհաւրաքորք սորա զամենաւրհնեալն ի կանայս զպր Աափայն եւ զՄամֆանն1) եւ զմայր սոցին զպր Մինախաթունն:

---

1) Տողի գլխին գրած:

այլ եւ զհաւրեղբայր սորա զտր Ստեփաննոս նետրապալիտ (sic!) *Սիւնեաց նահանգին։ եւ զպր Ելիկումն, որ վաղ մահուամբ ի տիս մանկութե փոխեցան յաշխարհէս առ ստեղծաւղն եւ յոյսն ամենեցուն Քս, զոր դասեսցէ զնոսա ԱԾ ընդ սր եւ երջանիկ իշխանացն. եւ ի դասս սր հայրապետացն։*

Եւս առաւել աղաչեմ յիշել աղաւթիւք զտր եւ զերանաշնորհ րաբունին զՄարգիս, զզատի(արակ) // եւ զնուցիչ տն Ստեփաննոսի, որ ի մանկութենէն մինչ ի յարբունս հասակի մեծաւ ջանիւ եւ աշխատութբ վաստակեալ ի սնունդ տիրապէս եւ յուսումն եւ ի հրահանգս հոգեւոր եւ մարմնաւոր, հատուսցէ նմա տր վարձս բարեաց ընդ միոյն բիւրապատիկ աստ եւ ի հանդերձելումն։

Եւ արդ ես մեղաւք խաւարեալս եւ ի տառունս մեղաց կապեալս կրկին չղթայիւք Պաւղոս սոսկ անուն վդ ըստ կարի իմում մեծաւ աշխատութբ վաստեալ ի լուսոյ եւ պակասեալ ի զաւրութենէ. դողդողեալ ձեռաւք գրեցի զսա եւ ընծայեցի, իբր զակն անգին եւ պատուական ի ձեռս Պսակին[1]) *եկեղեցոյ ի տիս մանկութե, զոր տացէ Քս ԱԾ վայելեալ յամերամս ժամանակաց։ Այլ եւ մեծաւ բաղձանաւք եւ արտ//սաւրաթոր ըղձիւ անկեալ առ ոտս պատահելոցդ սմա, եղբայրական ցաւակցութբ. յիշել զիս աղաւթիւք եւ ծովացեալ եւ անհուն մեղաց իմոց ի Քէ թողութի խնդրել եւ ծնողացն իմոց եւ ազգականաց. եւ ինքն բարեգութն եւ ողորմածն ԱԾ ձեզ շնորհեսցէ թողութի մեղաց. եւ աղաւթիւք սր Ածածնին եւ ամենայն սրբոց զյիշեցեալքս եւ զյիշողքդ ամենայն հաւատացելովք Քի. միութբ միապէս միացուսցէ ի լոյսն անշիջանելի ի հայր եւ յորդի եւ ի սբ հոգին այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից ամէն։*

---

1) Ստեփանոս անուան թարգմանութիւնը։

Բ·

(Տե՛ս Աստ, Եր· 441)

Տրըն բարի անեղրական
ըգհուր սիրոյն անեղրական։

Էարկ յերկիր մեր բանական,
սիրով զմիմեամբք գոլ միաբան։

Թորել սիրով յարմարական
յաւգիլ ի գլուխն Յական։

Սիրոյն շաղկապն է զանազան,
որով պնդէ անխըզական։

Այլ եւ լնու զնոր պատուիրան
աշակերտել բանին իջման։

Բամել զայս բանքս աւետարան,
զգանձ լուսափայլ տն իսկական։

Գրել եառւ ես անարժան,
Տարայրճ նուաստ եւ անպիտան։

Սիրով հոգւոյս անհատական,
ընծայեցի անզրաւական։

Իմ տր Սարգսիդ որ ճոխական,
մաքուր հոգւոյդ սրբազնական։

Էին լուսոյ հեղոյն նման,
յանձինդ բերես զտիպն անվախճան։

Արդ սիրաշարժ սիրոյն բանի,
անձուկ գթով յոյժ պանծալի։

Իւմամբ սիրոյ ընծայեցի,
զի սերտ կամաւք նուիրեցի։

Տարակացեալք մարմնոյս հեռի,
հոգիս միշտ հուպ առ ձեզ լիցի։

Առնուլ ի ձեռս զայս գանձ բանի,
ըզմեզ ցանդ յիշես ի յաղաւթի//

()?ա լուսոյն հաւր միածնի,
մաղթես բանիւ տր ողորմի։

Այլ եւ յիշես միշտ ի բարի,
զմեզ մերայինդ հեզ հոգի։

Նա, որ առատն ի տուրս շնորհի,
տրիտուր շնորհէ զանճառ բարի։

Սրբոց սրբոցն տն ամէնի·
Փառք եւ պատիւ անլռելի։

Զյարմարող այսմ չափի
ԶՅակոբ նուաստ Թագորեցի,
Աղաչեմ յիշել սիրով իլի,
Միով բանիւ տր ողորմի,

Որով նոյնն ձեզ եղիցի,

Ամէն, ամէն· այսպէս լիցի։

ՅԱՌԱՋԱԲԱՆՔ,

ՏԵՂԵԿԱԳԻՐՔ

ԵՒ

ՑԱՆԿԵՐ

ՅԱՌԱՋԱԲԱՆ

(Ա· Հատորի)

Զաքարեանց շրջանով սկսած արեւելեան Հայաստանի քաղաքական եւ մտաւոր վերածնութիւնը մի խոշոր երեւոյթ էր մեր պատմութեան մէջ, որ իւր դրոշմն է դրել նաեւ հետագայ դարերի արուեստի եւ քաղաքակրթութեան, մասամբ եւ քաղաքական կեանքի վրայ այն չափով, որ չափով որ այդ շրջանում ծագած իշխանական տոհմերը շարունակում են ղեկավար հանդիսանալ եւ ապագայում: Յետ-մոնղոլական Հայաստանի վիճակը, որքան եւ քաղաքականապէս յեղյեղուկ եւ կուլտուրապէս ենթակայ իրար յաջորդող փոխազդեցութիւնների, մի ամբողջութիւն է կազմում Զաքարեան եւ մոնղոլական շրջանների հետ, եւ հետզհետէ միայն մեռնում, մինչեւ ԺԷ· ԺԸ· դարու մտաւոր եւ քաղաքական վերածնութեան նոր փորձերը:

Ժամանակով համեմատաբար մեզ աւելի մօտ լինելով այդ մեծ շրջանը, բնականաբար եւ աւելի հարուստ է իւր ստեղծագործական բազմատեսակ մնացորդներով՝ բանաստեղծութեան եւ իւրատեսակ գրականութեան հետ՝ նաեւ ճարտարապետական պէսպիսութիւններով եւ մանաւանդ հազարաւոր ձեռագիրներով, մանրանկարչական եւ մշակոյթի բազմատեսակ արժէքների բովանդակութեամբ, մանր արուեստի մնացորդներով: Բայց տարաբաղդաբար հէնց այդ շրջանն էլ իբրեւ ամբողջութիւն քիչ է ենթարկուած գիտական ուսումնասիրութեան այն հասկանալի պատճառով, որ աղբիւրները ցրուած են եւ ոչ բաւարար չափով մատչելի բանասիրութեան, հաւաքուածներն էլ ոչ բաւարար չափով օգտագործուած: Բայց այդ ոչ միայն հնարաւոր է երկարատեւ եւ կարգաւորեալ աշխատանքով, այլ եւ կարելի կը լինի անցեալի մի կենդանի ե՛ւ գեղեցիկ խճապատկեր ստանալ, եթէ բաղկացուցիչ մասերի գոյնզգոյն քարերը խնամով հաւաքուին եւ յաջողութեամբ դասաւորուին իրենց տեղերում: Հէնց միայն յիշատակարանների եւ արձանագրութիւնների ժողովածուները որչափ գնահատելի նիւթ են մատակարարում այդ շրջանի բազմակողմանի եւ փաստացի լուսաբանութեան համար, որի շատ կէտերը մութ կը մնային առանց դրանց:

Տասնեակ տարիներ հետամուտ հայ գրչութեան եւ մանրանկարչական արուեստների ուսումնասիրութեան, ինչպէս եւ ճարտարապետական-շինարարական յուշարձանների, որչափ նրանք օժանդակ կարող են հանդիսանալ ընդհանուր գեղարուեստական հոսանքներն ու երեւոյթները հասկանալու եւ լուսաբանելու, յաջողուել է մեզ անրաւ նիւթ հաւաքել այդ ուղղութեամբ, ճշգութեամբ արտագրելով կամ լուսանկարելով հազարաւոր ձեռագիրներից յիշատակարաններ կամ պատմական հատուածներ, արձանագրութիւններ, շէնքեր, քանդակներ, ոսկերչութեան, ասեղնագործութեան եւ ժողովրդական արուեստի արտադրութիւններ երբեմն եւ գունազարդ արտանկարութիւններով (aquarelle), որոնք հնարաւորութիւն են տալիս, մեզնից առաջ կատարուած աշխատութիւնների հետ, աւելի մանրակրկիտ, իրական կամ փաստական տուեալների վրայ հիմնել մեր ուսումնասիրութիւնը:

Զաքարեանց շրջանում ծագած հայ իշխանական տոհմերի պատմութիւնն իբրեւ ուղեգիծ եւ առանցք ընդունելով, մենագրական աշխատանքներով (monographie), կամենում ենք պարզել եւ Արեւելեան Հայաստանի աւելի քան հինգ հարիւր տարուայ պատմութիւնը, քաղաքական եւ արտաքին կողմերից աւելի, շինարարական-կուլտուրական-գեղարուեստական ստեղծագործութիւնների պատկերը տալ իւր ելեւէջներով, որ ի վերջոյ պատմութեան էութիւնն է, անցաւոր երեւոյթների մէջ աւելի մնայունը:

«Խաղբակեանք կամ Պռոշեանք Հայոց պատմութեան մէջ» աշխատութիւնը այդ կարգի գործերից մէկն է միայն· դրան պիտի յաջորդեն Օրբէլեան, Վաչուտեան, Խաչենոյ, Դոփեանց, Շահունեցոց, Մամիկոնեանց եւ Արծրունի (Մահկանաբերդի) տոհմերին նուիրուած մեծ ու փոքր աշխատութիւններ, իւրաքանչիւրը մի ամբողջութիւն, բայց փոխադարձաբար իրար լրացնող եւ բոլորը միասին մի նպաստ Արեւելեան բովանդակ Հայաստանի պատմութեան լուսաբանութեան՝ վերեւ գծուած սահմանի մէջ: Եթէ յաջողուի մեզ այս ծրագիրն իրագործել, որի մի մասը պատրաստ է, միւսի նիւթերը հաւաքուած, կարծում ենք, ԺԳ· եւ հետագայ դարերի գիտական պատմութեան տուած մեր լումայի հետ, նպաստած կը լինենք եւ ուրիշներին նոր ուսումնասիրութիւններ կատարելու այն նիւթերի հիման վրայ, որ ըստ մեծի մասին մեր հնագիտական ճանապարհորդութիւնների հետեւանք են, տեղն ու տեղը ստուգած, լուսանկարած կամ նկարագրած, հնարաւորութիւն տալով նաեւ վերստուգելու մեր մտքերն ու եզրակացութիւնները:

Ներկայիս լոյս է տեսնում «Խաղբակեանք կամ Պռոշեանք Հայոց պատմութեան մէջ» աշխատութեան միայն առաջին՝ պատմական մասը· երկրորդը, որ պատրաստ է դարձեալ իւր բնագրով եւ քլիշաներով, յապաղում է միայն տեխնիքական պատճառներով, որ յոյս ունինք շուտով վերացնել եւ շարունակել տպագրութիւնը· դրա վերնագիրն է «Խաղբակեանց կամ

Պռոշեանց հոգեւոր կեդրոններն ու վանքերը», որի մէջ է մտնում եւ միջնադարեան Հայոց «Համալսարանի»՝ Գլաձորի դպրոցի պատմութիւնը ընդարձակ գլխով: Երկրորդ մասի հետ կը հրատարակուի երրորդ մասը՝ Յաւելուածները, այսինքն յիշատակարաններն ու արձանագրութիւնները իրենց գիտական ապարատով, որով կը լրանայ եւ ամբողջ հատորը:

Մենք շատ կը ցանկանայինք, որ հնարաւորութիւն ունենայինք ամբողջ հատորը միանգամից դնել բանասէր հասարակութեան առաջ, որպէսզի պարզ գաղափար կազմուէր մեր որդեգրած գիտական մեթոդի եւ ընդհանրապէս այս շարքի նպատակի մասին, բայց կարծում ենք, ուշադիր ընթերցողը հէնց այս առաջին մասով էլ, ինչպէս եւ մեր գրած «Ապիրէկենք եւ նրանց շինարարական գործը»[1]) կամ Потомство Тарсаича и Минахатуны [2]) Օրբէլեանց պատմութեան հատուածով, գաղափար կարող է կազմել, թէ ի՞նչ է մեր ձգտումն ու ցանկութիւնը այս շարքի նկատմամբ:

Թող ենք տալիս մեզ աւելացնելու, եւ խնդրում ենք անհամեստութիւն չնկատել այդ, թէ մեզ չի պակասում ոչ ուժ, ոչ եռանդ, ոչ ջանասիրութիւն եւ ոչ նիւթական զոհողութեան պատրաստակամութիւն, որքան հնարաւոր է այդ մեր կողմից, դէպի այս եւ գիտական մեր միւս աշխատանքները, կ'աւելացնենք նաեւ իբրեւ վանական չունինք որեւէ նիւթական շահի կամ վարձատրութեան ակնկալութիւն, բայց եւ այնպէս այսպիսի աշխատանքներ կատարելու եւ տպագրելու համար անհրաժեշտ են նիւթական միջոցներ, որ չունինք մենք, եւ մնում է գիտութեան եւ արուեստի հովանաւոր հաստատութիւններին եւ անձանց հոգալ այդ: Կը յաջողուի՞ մեզ մեր իղձն ու փափաքը իրագործել եւ մատչելի դարձնել բանասէր հասարակութեան, չգիտենք· բայց կ'անենք ինչ որ անել կարող ենք, այսինքն աշխատել, որպէսզի խղճի հանգստութեամբ ասել կարողանանք· աւելին ներող եղէք, «զի այսչափ էր կար մեր»:

Պարտք ենք համարում շնորհակալութիւն յայտնել Խորհրդային Հայաստանի կառավարութեան եւ յատկապէս Լուսժողկոմատին, որ հնարաւորութիւն ստեղծեց այս հատորի հրատարակութեան համար:

Շնորհակալութիւն նաեւ Էջմիածնի եւ Երեւանի մատենադարանի եւ թանգարանի վարիչներին, որոնք ամենայն դիւրութիւն ընծայեցին ձեռագիրների ուսումնասիրութեան ժամանակ եւ հարկաւոր լուսանկարելու համար:

Բարոյական պարտք ունիմ յիշելու եւ լուսանկարիչ, հանգուցեալ Հայկ Դաղեանին, որ օգնել է այս աշխատութեան սկզբնական ժամանակում լուսանկարներ պատրաստելու գործում:

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
ՅՈՎՍԷՓԵԱՆ

Ս· Էջմիածին·

---

[1]) Բանբեր Հայաստանի Գիտական Ինստիտուտի, գիրք Ա· եւ Բ· 1921—1922:

[2]) Христ. Восток. том II. вып. II. 216:

ՅԱՌԱՋԱԲԱՆ

(Գ· Հատորի)

Այս աշխատութեան առաջին հատորի սկզբում արդէն գրուած է ամբողջ գրքի յառաջաբանը· գրուած է այն, գրեթէ, 15 տարի առաջ, երբ մեծագոյն դժուարութիւններով յաջողեցաւ տպագրութեան յանձնել այդ մասը: Յապաղումը երկրորդ եւ երրորդ մասերի տպագրութեան, հետեւանք չէր աշխատութեան անպատրաստ լինելուն, այլ այն պայմանների, որին ենթարկուած է եղել հեղինակը: Նախ նիւթական միջոցների պակասութիւն, այսպիսի մի մեծածախս գործ տպագրելու համար, եւ ապա ժամանակի եւ դէպքերի բերմամբ աստանդական մեր կեանքը վերջին տասնեակ տարիների ընթացքում:

Բայց «չիք չարիք առանց բարեաց» խօսքը արդարանում է եւ այստեղ: Այդ յապաղումն էր պատճառ, որ 1934 *թուին երկրորդ եւ երրորդ հատորներն ուղարկեցինք Երուսաղէմի «Թարգմանչաց–Դուրեան» մրցանակաբաշխութեան, որ եւ գնահատուեցաւ այնպիսի բանգէտ անձնաւորութիւնների կողմից, որպիսիք Տ· Թորգոմ Պատրիարքն էր, եւ մեծ գիտնական Նիկողայոս Ադոնց, եւ արժանացաւ մրցանակաբաշխութեան, որ հեղինակի համար մխիթարութիւն եւ բարոյական վարձատրութիւն էր: Նրանց գնահատականները կցւում են այս հատորին այս Յառաջաբանից յետոյ, ուր բացատրուած են այս աշխատութեան ուսումնասիրութեան մեթոդները, բովանդակութիւնն ու նպատակը:*

Ակնարկուած յապաղումը աւելի կ'երկարէր, եթէ ազնուափայլ Տիկին Արմենուհի Միքայէլ Միսիրեան *Պրիւսէլում, մեր այնտեղ այցելութեան ժամանակ, իբրեւ նուիրակ հանգուցեալ կաթուղիկոսի*[1]), *ինքնաբերաբար եւ բոլորովին անակնկալ մեզ համար, չտրամադրէր մի կարեւոր գումար մեր գիտական աշխատանքների համար, որ մենք գործադրել ենք Խաղբակեանց Բ· եւ Գ· հատորների տպագրութեան համար: Այս նուիրաբերութեան արժէքը հասկնալի է ինքնըստինքեան, ուստի եւ աւելորդ ներբող հիւսել այդ մասին:*

Ամբողջ աշխատութիւնը բաղկացած է երեք հատորից, ինչպէս յայտնուած է առաջին հատորին կից Յառաջաբանի մէջ, մէկը միւսի հետ սերտ կապուած եւ իրար լրացնող: Առաջին հատորի մէջ Պռոշեանց տոհմի քաղաքական եւ շինարարական դերն է լուսաբանուած, որ տպուած է Էջմիածնում մեր անձնական ծախսով, երկրորդի մէջ նրանց իշխանութեան եւ հովանաւորութեան տակ ծաղկած հոգեւոր եւ մշակոյթի կեդրոնները, որ տպագրուած է Երուսաղէմ, եւ երրորդը այն կարեւոր նիւթերն ու աղբիւրները, որոնց հիման վրայ կատարուած է առաջին երկու հատորների ուսումնասիրութիւնը: Այս Գ· հատորը բաժանւում է երեք մասի· Յաւելուած Ա· արձանագրութիւնները, Յաւելուած Բ· ձեռագրական յիշատակարանները, եւ Յաւելուած Գ· մատենագրական պատառիկներ կամ ցուցումներ հեղինակների աշխատութեանց՝ ձեռագիրների մէջ:

Առաջին եւ երկրորդ հատորների համար ասելիք չունինք· ընթերցողներին կը մնայ դատել, ուղիղ կամ սխալ համարել, իրական կամ ենթադրական մեր համադրութիւններն ու եզրակացութիւնները: Բայց երրորդի համար ունինք մի քանի ցուցումներ եւ նկատողութիւններ: Ըստ հնարաւորութեան աշխատել ենք մէջ բերուած արձանագրութիւնները, ձեռագրական յիշատակարաններն ու մատենագրական հատուածները տալ բնագիրներին հարազատ կերպով, բայց, տարաբաղդաբար, տեխնիքական պատճառներով, անհնարին է եղել լիովին հասնել այդ ցանկութեան: Մեր խօսքը վերաբերում է, յատկապէս, արձանագրութիւնների կցումներին (ligature), *որ միայն նշանակել ենք եւ մանրացոյց արել տպագրութեան մէջ շեղագրով, առանց կարող լինելու նրանց նոյնատիպ ձեւերը տալ: Պէտք էր, գոնէ, միատեսակ կցումների համար կաղապարներ պատրաստել, որ մեր կարողութիւնից վեր էր: Ցաւը դարմանել կարելի է մասամբ այն արձանագրութիւնների նկատմամբ, որոնց նոյնատիպ պատկերն ունինք, հետաքրքրուող ընթերցողին թողնելով այնտեղ տեսնել հնագրական առանձնայատկութիւնները: Բայց մեզ հնարաւոր չէ եղել բոլոր արձանագրութիւնները լուսանկարել· անհատական, այն էլ սուղ միջոցների տէր վանականի կարողութիւնից վեր լինելով այդ: Պետական կամ հարուստ մեկենասների առատ օժանդակութեամբ միայն կարելի էր ըստ կարելւոյն անթերի այդպիսի գործ կատարել իբրեւ մաս արձանագրութիւնների* Corpus–*ի: Կը յուսանք, թէ այդ գործը պիտի կատարուի մի օր պետական յանձնարարութեամբ եւ արձանագրական գործին հմուտ մասնագէտների ձեռքով, որովհետեւ առանց արձանագրութիւնների ճիշդ վերարտադրութեան, անկարելի է ճշգրիտ* (exact) *եւ իրական ուսումնասիրութիւն կատարել հայ ճարտարապետական շէնքերի, քանդակագործութեան, հնագրութեան եւ մշակութային այլ խնդիրների մասին: Արձանագրութիւնները առաջնակարգ աղբիւրներ են եւ գիտութեան մատչելի պիտի դառնան նոյնատիպ ձեւերով:*

Միայն Պռոշեանց նուիրուած այս հատորները ցոյց են տալիս, թէ ինչքա՛ն միակողմանի եւ աղքատ է մեր հաւկացողութիւնը Բագրատունեաց անկումից յետոյ Արեւելեան Հայաստանի պատմութեան մասին. կեանքը միայն քաղաքականը չէ, քաղաքականն էլ կապուած չէ միայն իշխողների, զօրավարների եւ նրանց վարած պատերազմների եւ գործերի հետ, այդ պատմութեան արտաքին կողմն է միայն: Կան ժողովրդական, կրօնական-հոգեւոր, տնտեսական, դասակարգային խաւեր եւ նրանց գործերը, որոնք իրենց դերն են կատարում կեանքի մէջ եւ նորա ներքին էութիւնը կազմում: Այս բոլորի մասին որոշ չափով նոր լոյս ենք ստանում արձանագրութիւններով, ձեռագրական յիշատակարաններով, շինարարական եւ այլ ստեղծագործական մնացորդներով: ԺԳ. դարից յետոյ եկած ժամանակը համեմատաբար աւելի աղքատ է պատմական մատենագրութեամբ. եղածներն էլ չոր, ժամանակագրական բնոյթ են կրում. այդ պակասը մեծագոյն չափով լրանալ կարող է վերեւ յիշուած աղբիւրների հաւաքմամբ եւ քննութեամբ, վերահայեցողութեան ենթարկելով այդ շրջանի մեր անցեալը իր բովանդակ ծաւալով, որից բոլորովին այլ արդիւնք եւ պատկեր կը ստանանք, քան ունինք այժմ:

---

[1] Տ· Տ· Խորէն Ա· Մուրատբէկեան· Ծ· Խ·:

Ահա մեր որդեգրած ճանապարհը հայ պատմութեան ուսումնասիրութեան, աւելի ճիշդ նորա մշակոյթի եւ արուեստի լուսաբանութեան, փաստացի եւ իրական հիմունքներով: Շտապողական պիտի համարել այս ուղղութեամբ կատարուած աշխատանքները, մանաւանդ անհրաժեշտ ատաղձի հաւաքումն ու դասաւորութիւնը, որովհետեւ կործանարար ժամանակը եւ մարդկային բարբարոսութիւնն ու անհասկացողութիւնը կանգ չեն առնում իրենց ոչնչացման գործողութեան մէջ: Ինչքա՛ն բան ենք կորցրել հէնց վերջին տասնեակ տարիներում: Ինչպիսի՛ ահաւոր կորուստներ ունեցանք համաշխարհային նախընթաց պատերազմի ընթացքում, մնացածներն էլ մի կարեւորագոյն մասով անմատչելի դառնալով հայ մարդու ուսումնասիրութեան, ստեղծուած կացութեան հետեւանքով: Բայց գոհանանք, ինչ որ փրկուած է, եւ աշխատենք մատչելի դարձնել, ինչ որ դեռ մնացած է աւերակ վանքերի պատերի վերայ, եւ առաւելութեամբ փոշիների տակ ծածկուած ձեռագիրների մէջ:

Այդ ուղղութեամբ որոշ աշխատանք կատարուած է արդէն Էջմիածնի միաբանների ձեռքով, Ջալալեանի, Շահխաթունեանի, Ստ. Մխիթարեանի, Բարխուդարեանի, Մեսրոպ Արքեպիսկոպոս Սմբատեանի հատորներով, Ալիշանի համադրութեամբ Այրարատի եւ Սիւնիքի մէջ, Լալայեանի՝ իւր Ազգագրական Հանդէսի մէջ, Կոստանեանի (Վիմական Տարեգիր), Ուվարովայի, Մեսրոպ Մագիստրոսի, որոնք իրենց աւելի կամ պակաս գնահատելի կողմերի հետ, ունին աչքի ընկնող պակասութիւններ եւս: Մեր համեմատութիւնները, արձանագրութիւնների նկատմամբ, ակներեւ են կացուցանում այդ հանգամանքը: Բայց ասել չենք կարող, թէ մեր աշխատանքներն էլ առանց պակասութեան են այդ կողմից, որի մասին ակնարկեցինք վերեւ: Միայն լուսանկարչական մեքենան է, որ իրականի անսխալ վերարտադրութիւնը կամ պատկերը կը տայ:

Արձանագրութիւնների հետ կարեւոր աղբիւրներ են յիշատակարանները. այստեղ եւս որոշ աշխատանք կատարուած է, ինչպէս Գարեգին Սրուանձտեանի, Փիրղալէմեանի, Ալիշանի, Լալայեանցի ժողովածուներն են, Տաշեանի, Ֆինկի եւ Լեւոն Գեանջեցեանի, Տիւբինգենի, Կոնիբէրի Բրիտանական Թանգարանի ցուցակները, Քարամեանի Պերլինի արքայական մատենադարանի հայ Ձեռագիրների ցուցակը, Բարսեղ Սարգսեանի Վենետիկի Մխիթարեանց Ձեռագիրների ցուցակի առաջին հատորը, Մեսրոպ Մագիստրոսի անտիպ մնացած վիթխարի ցուցակը Էջմիածնի եւ այլ վայրերի Ձեռագիրների, Արտաւազդ արքեպիսկոպոսի Հալէպի եւ այլ վայրերի Ձեռագիրների ցուցակները, Ակինեանի եւ մեր անտիպ Յիշատակարանների ժողովածուները. բայց այս ուղղութեամբ դեռ եւս շատ մեծ գործ կայ կատարելու: Այդ յիշատակարանների մէջ անսահման եւ բազմապիսի նիւթեր կան մեր պատմութեան, մտաւոր եւ հոգեւոր կեանքի, մշակոյթի այլ եւ այլ կողմերի մասին, յատկապէս ներքին պատմութեան:

Այս Գ. հատորը այդ տեսակէտով ունի առանձին նշանակութիւն, նա ոչ միայն հիմքն է եւ աղբիւրը առաջին երկու հատորների համար, այլ ինքը իւր համար մի գործ է իբրեւ ատաղձ ուրիշ բանասէրների համար այս կամ այն նպատակով օգտագործելու: Մէջ են բերուած եւ օգտագործուած նախընթաց հատորների մէջ աւելի քան 280 մեծ ու փոքր արձանագրութիւններ, շատերը առաջին անգամ բանասիրութեան մատչելի դարձած, եւ մօտաւորապէս 100 ձեռագրական յիշատակարաններ եւ մատենագրական հատուածներ, որ հաւաքել ենք երկար տարիների աշխատանքով, ձեռագիրների մէջ մէկ մէկ փնտռելով, քանի որ նրանց մեծ ժողովածուների տպագրուած ցուցակները դեռ պակասում են:

Ընթերցողը ինքնին նկատել կարող է, որ Յաւելուածները թուագրուած են եւ նշանակուած նրանց օգտագործման երեսները նախընթաց հատորների մէջ, նաեւ պատկերի թիւը, եթէ ունի տուեալ Յաւելուածը: Այսպիսով ընթերցողը հնարաւորութիւն ունի վերստուգելու նրանց օգտագործման չափն ու կերպը, ինչպէս որ ուսումնասիրական հատորների մէջ նշանակուած համարներով (օր. Յաւելուած Ա. 1, Ա. Գիրք եր. 10, կամ օր. Յաւել. Բ. Ա. Գիրք. եր. 10) աւելի ընդարձակ տեղեկութիւն ստանալ նշանակուած աղբիւրի մասին1):

Գ. գրքի սկզբում պատկերների ցանկով մատնանշուած են Ուսումնասիրութիւնների մէջ նրանց օգտա-

---

1) Այս նոր հրատարակութեան մէջ առանձին ցանկով մատնանշուած են օգտագործման էջերը: ԽՄԲ.

գործման երեսները, որով եւ դիւրութիւն ընծայուած մասնագիտաբար հետաքրքրուողներին, աւելի տեղեկութիւններ եւ բացատրութիւններ ստանալ նրանց մասին: Պռոշեանց իշխանութեան հետ կապուած հնագիտական վայրերի քարտէզը, տարաբաղդաբար, տալ չկարողացանք, որ նոյնպէս որոշ չափով կը նպաստէր տեղագրութեան աւելի դիւրին հասկացողութեան:

Յիշատակարաններից մի քանիսը, Յաւել. Բ. նշանակուած, թիւ 1, 13, 15–21, 43–46, 61, 62, 64, 69, 71, 72 չկան բոլորովին իրենց տեղերում կամ միայն քաղուածօրէն կան նշանակուած նախընթաց հատորների մէջ: Որովհետեւ արտասահման գալիս մենք մտադիր չէինք Բ. եւ Գ. հատորները տպել երկրից դուրս, ուստի եւ այդ յիշատակարանները մնացել են մեր ժողովածուի մէջ, որի առաջին հատորը՝ մինչեւ ԺԳ. դարի վերջերը կարգաւորուած եւ ծանօթութիւններով, յանձնուած էր Մելքոնեան Հիմնադրամի Վարչութեան, որ պիտի տպագրուէր մեր բացակայութեանն իսկ, բայց անկատար մնաց մեզ անյայտ պատճառով: Մէջ չեն բերուած նաեւ պատկերներ, որ պիտի մտնէին երկրորդ հատորի մէջ, բայց ձեռքի տակ չունէինք տպագրութեան յանձնելիս:

Ի վերջոյ ընթերցողի ուշադրութիւնը պիտի հրաւիրենք մի քանի կարեւոր սխալների վերայ, որ սպրդել է տպագրութեան ժամանակ, որ դնում ենք հատորի վերջում:

Մեր վանական գրիչներն ու հեղինակները սովորութիւն ունէին իրենց գործը աւարտելուց յետոյ, գոհութիւն մատուցանել Աստուծոյ այդ առթիւ. կը կամենայինք պահպանած լինել այդ աւանդութիւնը այս աշխատութեան նկատմամբ, որ հեղինակի լոյս տեսած գործերի մէջ ընդարձակագոյնն է, ինքն էլ ենթակայ նոյն աստանդական կեանքին եւ դժուարութիւններին, ինչպէս իր հեղինակը: Բայց օրհնեալ է Աստուած, որ ի վերջոյ մատչելի է դառնում բանասիրական գիտութեան եւ այս բանի համար երախտապարտ ենք մեկենաս տիկնոջը:

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Օգոստոս, 1942
Նիւ–Եորք

ՏԵՂԵԿԱԳԻՐ Տ. ԹՈՐԳՈՄ ՊԱՏՐԻԱՐՔԻ

Սրբոց Թարգմանչաց — Դուրեան Գրական Մրցանակի
1935—1936 Շրջանի[1])

Գարեգին Սրբազանի երկը, «Հոգեւոր Կեդրոններ եւ Գլաձորի Բարձր Դպրոցը Պռոշեանց Իշխանութեան Մէջ», թէեւ կարծես երկրորդ մասն է իր «Խաղբակեանք կամ Պռոշեանք Հայոց Պատմութեան մէջ» պատմա–հնագիտական ուսումնասիրութեան, որուն առաջին մասը ութ տարիներ առաջ, 1928–ին, հրատարակուեցաւ Վաղարշապատ Պետհրատի տպագրութեամբ²), բայց ինքն ըստ ինքեան եւս կրնայ նկատուիլ առանձինն կամ ամբողջական գործ մը: Տպագրուածը քաղաքական պատմութիւնն էր Խաղբակեանց կամ Պռոշեանց Տան, որ ԺԳ. դարու առաջին կիսուն մէջերը, երբ, Բագրատունեաց շիջումէն յետոյ, Սելճուքեան արշաւանքներու սաստկութեան երեսէն բոլորովին անյայտացած էին հայ իշխանական տոհմերու վերջին մնացորդներն ալ, Զաքարեանց օրով, այսինքն վրաց անուանական գերիշխանութեան տակ աւատապետական կազմակերպութեամբ ծաղկիլ սկսած Հայաստանի քաղաքական եւ զինուորական կեանքին մէջ երեւան եկաւ Սիւնեաց աշխարհի Վայոց–Ձոր Գաւառին մէջ, Օրբէլեանց կշտին, բայց անոնցմէ աւելի երկարակեաց լինելով³):

Իշխանական այս Տունն էր որ տեւեց հինգ դարեր, ԺԳ.էն մինչեւ ԺԸ.ին սկիզբը, ծնունդ տալով քաղաքական գործիչներու կամ իշխաններու, որոնց մէջ ամենէն ականաւորներէն եղան Վասակ Խաչենցի, իր եղբարքը Զաջուռ եւ Գրիգոր Խաղբակեան, եւ յաջորդաբար Վասակ, Աշոտ, Պռոշ մեծ իշխան, Ամիր–Հասան, Պապաք, Էյաչ, Ամիր–Հասան Բ., «Պարոն» Ջումէ, Միրզապէկ, Բիրթէլ, Ղալապէկ՝ որդի Քարամին, Դաւիթ մեծ, Դաւիթ փոքր եւ վերջապէս իրենց վերջին շառաւիղը՝ Հայկական ազատագրութեան յետնագոյն ռահվիրաներէն Իսրայէլ Օրին, որ 1711–ին փակեց իր ոդիսականը Աստրախանի մէջ:

Սոյն այս Խաղբակեան կամ Պռոշեան Տան իշխանութեան քաղաքակրթական եւ հոգեւոր կեանքն է որ կը նկարագրէ Յովսէփեան Արքեպիսկոպոս՝ մրցանակի առաջարկած այս աշխատութեան մէջ, որ իր այդ պարունակութեամբ նոյն իսկ կը ներկայացնէ մեծագոյն շահեկանութիւն:

Կարելի չէ անշուշտ ըսել թէ իբրեւ հայրենագիտական երկ բոլորովին նորութիւն է ան, քանի որ իրմէ առաջ Շահխաթունեան եպիսկոպոս իր «Ստորագրութիւն Հայաստանի» գործին, Բարխուդարեան եւ Սմբատեան եպիսկոպոսներ՝ իրենց տեղագրական հատորներուն, Լալայեան Ազգագրական Հանդէսին, եւ մանաւանդ Հ. Ալիշան իր համադրութիւններէն «Սիսական»ի մէջ, աւելի կամ նուազ մանրամասնութեամբ գրած են այս մասին: Բայց այդ ամէնը, հեռու՝ նուազեցնելէ արժէքը հմուտ հոգեւորականին այս գործին՝ ընդհակառակն աւելի կը շեշտեն զայն, քանի որ կարելի չէ անտեսել անոր ոչ միայն առաւելագոյն եւ բազմարովանդակ ընդարձակութիւնը, այլ նաեւ այն հանգամանքը թէ անոր հեղինակը բոլոր վայրերն անձամբ այցելելով ինքնին պտտուած, քննած, արձանագրութիւնները ճշգրտած, թերիները լրացուցած եւ ըստ այնմ իբրեւ լիակատար ամբողջութիւն հրապարակ հանած է զայն: Բայց ոչ այսչափ միայն. Տ. Գարեգին Սրբազանի գործը սոսկ տեղագրական եւ վիճակագրական աշխատանք չէ. այդ բանը ի յայտ կուգայ բուն գործին կրկնապատիկ թանձրութեամբ ստուար յաւելուածական բաժինի մը մէջ, ուր դասաւորուած են արձանագրութեանց պատճէնները եւ յաճախ անոնց եւս տեսարաններուն լուսատիպ պատկերները: Ատաղձներու հնագիտական չոր հաւաքում մը չէ ան, ուրեմն, այլ ուսումնասիրութիւն մը, այս բառին լաւագոյն հասկացողութեամբ, ուր իրատես քննադատութեան մը լոյսով կը պարզուին եւ կը համադրուին հայ անցեալին իրականութեան զանազան կողմերն ու երեւոյթները՝ այն խաւարին մէջ, որ Միջին Դարը եղաւ:

Գրել վանքերու վրայ՝ այդ շրջանին առթիւ մասնաւորապէս, առանց չափազանցութեան՝ կը նշանակէ բացատրել Հայութեան հոգին. վասնզի անոնց մէջ է, ազգին կեանքին համար մերթ իբր մտաւորական ամրոց եւ յաճախ իբր մարտկոց ծառայած այդ հաստատութեանց մէջ է, որ դարբնուեցան անոր ինքնապահպանութեան եւ ինքնապաշտպանութեան բուն զէնքերը, հայ հաւատքը, հայ լեզուն, հայ գրականութիւնը, կրթութիւնն ու արուեստը: Ու Գարեգին Սրբազան զմայլելի կերպով կը կատարէ բացատրութեան այդ աշխատանքը՝ զգայուն մարդու, հաւատաւոր հայ հոգեւորականի եւ գիտուն մտաւորականի անվիճելի ձեռնհասութեամբ:

Գործը բաժնուած է վեց գլուխներու, հետեւեալ դասաւորութեամբ. Ա. Կեչառոյք, (34 *էջք). Պռոշեանց հնագոյն հոգեւոր կեդրոնը, երբեմն Պահլաւունեաց սեպհականութիւն եւ Բջնիի եպիսկոպոսութեան երկրորդ գլխաւոր կեդրոն: Բ.* Այրից կամ Գեղարդայ Վանք, (35–84 *էջք). երկրորդ նշանաւոր հոգեւոր կեդ–*

---

[1]) Տես Սիոն ամսագիր, 1936, Նոյեմբեր, էջ 338—340:

[2]) Մեր ծախսով:

ՀԵՂԻՆԱԿ

[3]) Օրբէլեանց տոհմը շարունակւում է եւ այժմ, բայց բոլորովին կորցրած իր իշխանական հանգամանքը:

ՀԵՂԻՆԱԿ

րանը Պռօշեանց, նշանաւոր իր վիմափոր եկեղեցիներով, մասնաւորաբար Գեղարդայ տաճարով, որ հայ ճարտարապետութեան ամենէն հրաշակերտ նմոյշներէն մին է: Գ. Աղջոց Ս. Ստեփանոս: Դ. Թանատի վանքը: Ե. Կուքի եւ Ոծոպայ վանքերը: Այս բոլորին շուրջ ընդ երկար կը յամենայ Սրբազանը, մի առ մի յառաջ բերելով իւրաքանչիւրին ոչ միայն սկզբնական շինութեան, այլ նաեւ ժամանակի ընթացքին անոնց կրած նորոգութեանց պատմական հանգամանքները, կը ներկայացնէ շինողները, շինութեան սատարողները, ի՛նչ առթիւ անոնց շինուած ըլլալը, ճարտարապետական կառուցուածքը, այլուր գտնուած ուրիշ շէնքերու հետ անոնց ցոյց տուած ոճի հանգիտութիւնները, կը բացատրէ անոնց մէջ տիրող գեղարուեստական ձգտումները. մանրամասնօրէն կը թուէ եւ կը ներկայացնէ անոնց որմերուն մէջ ագուցուած վիմաքանդակ արձանագրութիւնները, կը խօսեցնէ այդ քարերը՝ ժամանակագրական եւ պատմագրական ճշգումներ ընելով թուականներուն, եւ անոնց մէջ անուանուած անձերուն եւ ակնարկուած իրողութիւններուն մասին, եւ հնագրական հետեւութիւններ հանելով անոնց մէջ գործածուած տառերու ձեւերէն. կը նկարագրէ այդ սրբավայրերուն մէջ ծաղկած հոգեւոր եւ մտաւորական կեանքն ու մշակութային բարգաւաճանքը, իրենց դիմայեղութեան բոլոր ելեւէջներով. կը խօսի անոնց մէջ գործադրուած գրչութեան եւ մանրանկարչական արուեստի մասին, համաձայն անոնց մէջ գրուած եւ այժմ Էջմիածնի եւ Երեւանի Մատենադարանները գտնուած գրչագիրներուն, որոնք ծանօթ են իրեն. կը խօսի այդ վանքերուն մէջ ապրած, կրթուած եւ ուսուցած կամ գործած մատենագիրներուն եւ մտաւորական դէմքերուն եւ արուեստագէտներուն վրայ, մանրամասն տեղեկութիւններով իրենց գործերուն եւ արտադրութեան նկատմամբ: Այդ էջերուն մէջ են Խաչատուր Կեչառեցի, Մխիթար Այրիվանեցի եւ շատ ուրիշներ, որոնք անուն մը ունին հայ մշակոյթի պատմութեան մէջ, եւ կամ որոնց անունները անծանօթ էին մնացած մոռացութեան մշուշին մէջ:

Բոլոր այս տեսակէտներով, սակայն, աւելի նշանաւոր է վերջին գլուխը, որ վերնագրուած է «Գլաձորի Բարձր Դպրոցը կամ Համալսարանը», ինչպէս մասնաւորած է արդէն նաեւ իր գործին ընդհանուր տիտղոսը եւս: Այդ հաստատութիւնը, իր իսկ բառերով «Պռօշեանց տոհմի պարծանքը հոգեւոր-քաղաքակրթական կեանքի զարգացման» տեսակէտով, որ բուն անուամբ կը կոչուէր «Աղբերց Վանք» եւ աւելի հասարակօրէն՝ «Գլաձոր» կամ «Գայլուձոր», հակառակ պակաս նոյն իսկ քան դար մը տեւած ըլլալուն, որուն համար իր տեղն իսկ անծանօթ մնաց յետոյ, ԺԳ.րդ դարու վերջին քառորդէն մինչեւ ԺԴ.րդին կէսը՝ հայ եկեղեցական գիտութեան եւ կրթութեան ամենէն կենդանի վառարանը եղաւ. վանք մը ըլլալէ աւելի վարժարան մը եղած է ան, «Վարդապետարան», «Աթոռ Սր. Վարդապետացն Հայոց», ինչպէս կը գտնուի յիշատակարանի մը մէջ, կամ «Վանք բանասիրաց», «Երկրորդ Աթէնք պանծալի», «Մեծ դպրատուն», «Մայրաքաղաք ամենայն իմաստից», «Հռչակաւոր Ս. Մենաստան համալսարան», ինչպէս աւելի հիացիկ բառերով կը գովաբանեն զայն ուրիշ գրիչներ: Գարեգին Սրբազան ինքզինքը կը գերազանցէ ցոյց տալու համար թէ այս նուիրական ուսումնավայրին մէջ ի՛նչպէս գոյացաւ այն մեծ շարժումը որ ընդ լայն եւ ընդ երկայն պիտի յեղաշրջէր մեր եկեղեցական ազգային ներքին կեանքը, ուժ պատրաստելու եւ կազմակերպեալ դիմադրութիւն ծրագրելու համար այն մեծ վտանգին դէմ որ ԺԴ. դարու վերջերը պիտի պայթէր մեր կրօնական կեանքին վրայ: Կը ներկայացնէ այդ շարժումին սկզբը՝ Ներսէս Վարդ., «կարի քաջ վարժեալ ի գիր եւ յուսումն Յունաց», կրթուած Տարօնոյ Ս. Առաքելոց վանքին մէջ, աշակերտ Վարդան Վրդ.ի, որ աշակերտակիցն էր Կիրակոս Գանձակեցիի եւ Մաղաքիա աբեղայի եւ աշակերտ Մխիթար Գօշի աշակերտ Վանական Վրդ.ի, եւ ապա Ներսէսի աշակերտը Եսայի Վրդ. Նչեցի. իր դարուն հսկան, իբրեւ կրթական գործիչ եւ եկեղեցական կազմակերպող, ուսուցիչ Յովհ. Որոտնեցւոյ՝ վարժապետին Գրիգոր Տաթեւացւոյ. եւ որուն աշակերտողներուն թիւն, ըստ Ջամչեանի 363-ի կը հասնէր, իսկ իրմէ վարդապետական աստիճան ստացողներունը՝ ըստ Ալիշանի 360: Բացատրելէ վերջ թէ Գլաձորի դպրոցին կազմութիւնը ինչպէս հետեւանքն էր այն ահազանգին՝ զոր հնչեցուցած էին Գր. Անաւարզեցի կաթողիկոս եւ Հեթում Բ. թագաւոր, 1294-ի ծառզատիկին պատշաճօրէն չպաշտպանելով ազգ. եկեղեցւոյ տեսակէտը, պատմական մանրամասնութիւններով կը ցուցնէ թէ սպառնացող այդ վտանգը իրականանալէն ետքն ալ ի՛նչպէս պայքարը այնքան իմաստութեամբ եւ քաջութեամբ մղուեցաւ Ունիթորներու խուժումին դէմ նոյն ինքն Գլաձորի առաջնորդութեամբ, մինչեւ որ շարժումին ղեկավարութիւնը ի վերջոյ անցաւ Որոտնի եւ Տաթեւի դպրոցներուն, որոնց պիտի վիճակէր վերջնական յաղթանակի պատիւը: Ապա կը ներկայացնէ Գլաձորի դպրոցին արդիւնքները՝ Հայերէնի վերամշակման, աստուածաբանական եւ մեկնաբանական գրականութեան յառաջացման եւ առ հասարակ եկեղեցական եւ ազգային ուսմանց տեսակէտով:

Տեղեկագրի մը անձուկ սահմանը թոյլատու չէ աւելի երկարաբանելու այս կարեւոր գործին մասին: Կը վերջացնենք, ըսելով թէ անոր միայն այս վերջին գլուխը, առանց այլապէս արդէն կարեւոր միւսներուն, ինքնին կ'արժէ գործն ամբողջ. թանկագին նպաստ մըն է մեր բանասիրական գրականութեան եւ միջնադարեան հնախօսութեան, եւ լուսաբանութիւն մը Հայ Եկեղեցւոյ պատմութեան ամենէն կարեւոր մէկ շրջանին, ձեռնհասութեամբ եւ հոգւով գրուած:

ՔՆՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ՊՐՈՖ. Ն. ԱԴՈՆՑԻ

Ի Մասին Տ· Գարեգին Արքեպիսկ· Յովսէփեանի «Հոգեւոր Կեդրոններ եւ Գլաձորի Բարձր Դպրոցը» Ուսումնասիրութեան1) :

Գերապատի՛ւ եւ Սրբազան Հա՛յր,

Գարեգին Արքեպիսկոպոսի աշխատութիւնը, որ հաճել էիք ղրկել ինձ, ստացած եմ իր ժամանակին եւ մեղապարտ եմ որ անմիջապէս Ձեզ ոչինչ չգրեցի այս մասին, չգրեցի, որովհետեւ յոյս ունէի թէ շուտով եւ հաճոյքով պիտի կարողանայի կատարել Սրբազնութեանդ պարտաւորիչ պատուէրը, մանաւանդ որ Հ. Գարեգինի գործերը իրենց ինքնայատուկ դրոշմով ինձ մօտէն ծանօթ լինելով՝ դժուար չէր ընաւ առաջին ակնարկից եւեթ գաղափար կազմել իր այս նոր աշխատութեան մասին եւ արդիւնքը Ձեզ հաղորդել: Սակայն ընթացիկ հոգսերը արգիլեցին եւ միայն այժմ հնարաւորութիւն տուին աչքէ անցնել· եւ ահա՛ ստորեւ յայտնում եմ Ձեզ տպաւորութիւններս, որոնք Ձեզ համար նորութիւն չպիտի լինին, քանի որ Հօրդ հմուտ աչքը արդէն դատած եւ կշռած է անշուշտ գործի ակնյայտնի արժանիքները:

Հայ մշակոյթի պատմութեան համար մի խոշոր նպաստ է Գարեգին Սրբազանի «Թարգմանչաց–Դուրեան» մրցանակին ներկայացուած գործը՝ «Հոգեւոր Կեդրոններ եւ Գլաձորի Բարձր Դպրոցը»: *«Խաղբակեանք կամ Պռօշեանք Հայոց Պատմութեան մէջ» աշխատութեան շարունակութիւն լինելով հանդերձ այս գործը ինքն իրեն մի ամբողջութիւն է: Սովորական կարծիք է, որ Բագրատունեաց անկումից յետոյ հայ կեանքը գահավիժում է եւ մտնում մի խաւար շրջան, գրեթէ կանգ է առնում դարեր շարունակ կաշկանդուած իր գործունէութեան մէջ շնորհիւ իր շուրջը բնակող օտարոտի կարգերին: Սակայն, հակառակ այն ծանր կացութեան որ ստեղծուել էր Հայաստանում եւ ամբողջ Առաջաւոր Ասիայում հեռուէն խուժած նոր եւ բարբարոս ժողովուրդների հեղեղումով, անուրանալի է որ հայ կեանքը չէ մահացել: Հայ հեզ աշխատասիրութիւնը, շինարար ոգին եւ արթուն միտքը շարունակել են փայփայել զանազան կենտրոններում, ինչպէս մըշտավառ ճրագներ, եւ յաւէտ կենսունակութեան ապացոյցներ տուել քաղաքակրթական նորանոր ճիգերով եւ ստեղծագործութեամբ:*

Արդ Գարեգին Սրբազանը նպատակ է դրել ժողովել եւ ներկայացնել այն գանձերը որ սփռուած են անլոյս համարուած դարերում, հայ արուեստի եւ գիտութեան գանձերը՝ թաղուած փլատակների տակ եւ ձեռագիրների խորքերում: Զաքարեանների շրջանում եւ նրանց շնորհիւ երեւան են գալիս մի քանի իշխանական գերդաստաններ, որոնք յաջողում են խոհուն քաղաքականութեամբ մեղմել ահարկու բռնակալութեան թափերը եւ ստեղծել տանելի պայմաններ խաղաղ աշխատանքի համար: Պռօշեան, Օրբէլեան, Դոփեան, Ջալալեան, Վաչուտեան եւ այլն տոհմերը լուսաշող աստղեր են հայ մթին երկնակամարում, որ առաջնորդում են աշխարհաշէն եւ մտացի ոյժերը: Հայր Գարեգինը ծրագրել է պանծացնել նրանց յիշատակը յատկացնելով իւրաքանչիւրին առանձին հատոր, սկսելով Պռօշեաններից: Արցախի Խաղբակեան տոհմի մի շառաւիղն են Պռօշեանք որ տիրացան ԺԲ· դարու սկզբին Վայոց Ձորին եւ այն տեղ իշխեցին սերունդէ սերունդ մինչեւ ԺԴ· դարը, ի դէմս Վասակի (+1224), *Պռօշի* (+1284), *Պապաքի* (+1298), *Էաչի* (+1317), *Ամիր Հասանի* (+1351), *Արղութի* (+1385): *Այնուհետեւ յաջորդական գիծը բեկւում է, բայց տունը չէ մարում, այլ առկայծելով հասնում է մինչեւ Իսրայէլ Օրին* (+1711), *Պռօշեան քաջարի տան վերջին զաւակը, եւ մեր նոր հայրենասիրութեան վերջին երազուն դէմքը: Ժամանակակիցները գնահատել են արժանապէս Պռօշեան տան նշանակութիւնը, անուանելով Պռօշին «զարդ հեծելի, որ զերկաթի զուռն առնէր փոշի, աջ ու բազուկ նոր Սիոնի, հիմն հաստատ հայոց հաւատի»:*

Պռօշեանց գործունէութիւնը քաղաքական եւ հասարակական ասպարէզում, նրանց շինարարութիւնը, կառուցած վանքերն ու բերդերը լուսաբանուած են ամէն կողմէ այն հատորում որ Գարեգին Սրբազանը լոյս է ընծայել Երեւանում 1928 *թուին: Ներկայ հատորը նուիրուած է բացառապէս նոյն տոհմի հովանաւորութեան ներքոյ ծաղկած հոգեւոր կեանքի, մտաւոր հոսանքների, որոնց կենտրոններ հանդիսացան Կեչառիսի, Այրիվանքի եւ Գլաձորի գիտնական մենաստանները:*

Այս հատորի եւ թէ արդէն լոյս տեսածի ատաղձը, հիմը կազմող փաստացի նիւթերը գումարուած են առանձին հատորում, կցած աշխատութեան որպէս երրորդ մաս կամ հատոր: Սա բաղկացած է երեք բաժնից· առաջինը պարունակում է մերձաւորապէս երկու հարիւր արձանագրութիւն2)· երկրորդը մօտ հարիւր ձեռագրական յիշատակարան, եւ երրորդը՝ մի տասնեակ

---

1) Տես Սիոն ամսագիր, 1936 Դեկտեմբեր, էջ 366—372:

2) Ի նկատի չեն առնուած ուսումնասիրութիւնների ժամանակ մէջ բերուած ամբողջական արձանագրութիւնները:

ՀԵՂԻՆԱԿ

եւ աւելի մատենագրական նշխարներ: Յատուկ ուշադրութեան եւ գնահատանքի արժանի է մանաւանդ այս ժողովածուն, որ հեղինակը յաւելածական է համարում, բայց գործի ամենէն կարեւոր եւ մնայուն մասն է: Ճշմարիտ է որ արձանագրութիւնների եւ յիշատակարանական քաղուածների մեծագոյն մասը նախապէս յայտնի էր հայ բանասիրութեան, շնորհիւ Շահխաթունեանի եւ Ջալալեանի եւ Մխիթարեանի գործերին, որոնց լիակատար ամփոփումը տուել է Հ. Ալիշան «Սիսական» եւ «Այրարատ» երկերում, բայց եւ այնպէս Հ. Գարեգինի ժողովածուն ունի նորութեան բոլոր առաւելութիւնները: Անձամբ եւ տեղի վրայ ստուգել է գրեթէ բոլոր արձանագրութիւնները, որ իր նախորդները արտագրել են եւ աւելացրել նորերը: Շրջել է բազմաթիւ վայրեր եւ վանքեր շէն թէ աւերակ, Բջնիից սկսած մինչեւ Վայոց Ձոր եւ Ջահուկ, գտել եւ նկարագրել եւ երբեմն լուսանկարել այցելած վայրերը, շէնքերի դիրքը, ներկայ վիճակը, նշանակել է հաւատարմօրէն արձանագրութիւնների տեղը պատերի վերայ եւ ո՞ր մասում, թէ փլատակների մէջ, մի խօսքով նախատեսել է բոլոր պարագաները որոնք կարող են որեւէ նկատումով պիտանի լինել հետազօտութեան ժամանակ: Համեմատել է տեղն ու տեղը առաջուց ծանօթ արձանագրութիւնների պատճէնները եւ սրբագրել ամենայն բարեխղճութեամբ եւ մասնագէտի սուր եւ գիտակ աչքով: Չկայ համարեայ մի արձանագրութիւն, ուրիշներից արտագրուած, ուր որեւէ ուղղում կատարած չլինի, բառ թէ տառ, թէ ամբողջ նախադասութիւն եւ մանաւանդ տեղի եւ անձանց անուններ:

Նոյն վերաբերումը նկատելի է եւ ձեռագրական քաղուածների վերաբերեալ: Նշանակել է ձեռագիրները, նրանց թուականները, եթէ յայտնի են, գրութեան տեղը, գրիչը եւ մանր հանգամանքներ, որ կարող են նպաստել յիշատակութեան պատմական, թէ գրական արժէքը որոշելու:

Ահա այս եղանակով հաւաքել է մի կողմից ձեռագրական յիշատակարանների մէջ թաքնուած տեղեկութիւնները, զուգել, դասաւորել եւ կազմել ամբողջական պատկեր այնպիսի խնամքով, այնպիսի սիրով որ հազուագիւտ է մեր ամեն ինչ ուրացող դարում: «Հոգեւոր կեդրոնները» յառնում են իրենց տխուր աւերակներից, քարերը՝ ծանրաբեռնուած գրութեամբ եւ պէսպէս յիշատակներով սկսում են խօսել: Ձեր առջեւն են շէն մենաստաններ, որ ծաղկում են վանահայրերի հսկողութեան տակ, լի վանականներով, որոնք միայն աղօթողներ չեն, այլ վարդապետներ, ուսուցիչներ են, որ «դաս են ասում», ճարտար գրիչներ են, որ արտագրում են հնացած ձեռագիրները կորստից ազատելու համար նախնեաց ժառանգութիւնը, շնորհալի ծաղկողներ են, որ նկարազարդում են ձեռագիրները, եւ հմուտ ճարտարապետներ, որ վերականգնում են աւեր շէնքերը եւ կառուցանում նորերը: Բարեպաշտ մարդիկ այր թէ կին, իշխանաւոր թէ համեստ աշխատաւոր, չեն գլանում իրենց նուէրները մեծ հաստատութեանց, գիտնալով որ այն տեղ են կռւում հայ ժողովրդի գոյութեան հիմ՝ բարոյական հիմքերը:

Շնորհիւ Պռօշեան տան հովանաւորութեան սկսում է մի մտաւոր շարժում, մի իրական վերածնունդ, որ շուտով տալիս է պանծալի դէմքեր — Խաչատուր Կեչառեցի, Յովհաննէս Գառնեցի, Մխիթար Այրիվանեցի եւ վերջապէս Գլաձորի Գիտուն Կաճառը բոլորուած մեծ վարդապետի՝ Եսայի Նչեցու շուրջը:

Հ. Գարեգինը նկարագրել է խանդավառ ոգով այս նոր հոսանքը եւ նորա բարերար ազդեցութիւնը հայ արուեստի, գիտութեան եւ եկեղեցական քաղաքականութեան վերայ: Առանց խախտելու հին գրականութեան եւ լեզուի իրաւունքները, այլ ընդհակառակն մշակելով հին հեղինակների վերայ իրենց միտքն ու աշխարհայեացքը, նրանք սկիզբն դրին նոր եւ աշխարհիկ բանաստեղծութեան: Խաչատուր Կեչառեցին, Ֆրիկ, Յովհաննէս Երզնկացին միջնադարեան հայ քնարերգութեան կարապետներն են:

«Հանցգուն զինչ աշնան քամին որ թափէ տերեւ
ի ծառէն,
Հողմով մեղանաց իմոց զրկեցայ յանանց պսակէն»:

Ահա մի նմոյշ, որ նոր է ե՛ւ լեզուով ե՛ւ տրամադրութեամբ եւ մինչեւ իսկ չափով, որ հետեւողութիւն է բիւզանդական πολιτικὸς στίχος կոչուած չափածոյ գրութեան: Ուշագրաւ երեւոյթ է:

Գառնեցու խրատներն եւս նորութիւն են իրենց աշխարհային բնաւորութեամբ. «մի՛ լինիր կոշտ եւ կոպիտ, անհանճար եւ անիմաստ». «մի՛ մնասցեն առ քեզ վարձք վարձկանաց եւ աշխատութիւնք մշակաց». «մի՛ քակեսցես զցանգ հայրենի եւ կամ արհամարհեսցես զեդեալ կարգս եւ զկանոնս նախահարցն»: Այս վերջին հրահանգը բնորոշում է լիովին նոր հոսանքի ոգին: Գարեգին Սրբազանը չէ մոռացել յիշել այն խոշոր դերը, որ կատարեցին Գլաձորի մթնոլորտում սնած գիտուն վանականները առնաբար ճակատ դնելով Կիլիկիայի եկեղեցականութեան թուլամորթ քաղաքականութեան հանդէպ օտար դաւանութիւնների յաւակնալից պահանջների: Պէտք էր աւելի շեշտել, քանի որ ամբողջ հոսանքն ինքնին այլ բան չէր քան հակազդեցութիւն «արեւմտեան վարդապետների» տարտամ եւ սայթաքուն քաղաքականութեան: Ներսէս Լամբրոնացին որ կոչուած էր նոր Շնորհալի լինելու հայոց եկեղեցու համար, գերադասեց «մետաքսազգեստ» լինել օտարի նման քան «խարազանազգեստ» իր նախնիքների հետեւութեամբ, եւ հիմք դրեց օտարամոլութեան. մի ախտաւոր երեւոյթ, որ աւելի թեթեւամտութիւն էր քան ազատամտութիւն, եւ պիտի քայքայէր հայ եկեղեցու դարաւոր կանգուն շէնքը, եթէ չլինէր արեւելեան ախոյեանների ընդդիմութիւնը: Գլաձորի դպրոցականների գիտական թէ ազգայնական ոգին մի թանկագին ժառանգութիւն է աւանդած սերունդէ սերունդ, ուսուցչից աշակերտ՝ Լամբրոնացու հակառակորդ Զորագեցիներից — Գրիգոր Տուտէորդի եւ Մխիթար Գոշ — Վանական — Վարդան Պատմիչ — Ներսէս Տարօնցի — Եսայի Նչեցի: Գանեցու խրատը՝ «մի՛ քակեսցես գցանկ հայրենի» ուղղուած է տկարամիտ օտարամոլների դէմ: Պէտք է ունենալ Ստեփանոս Օրբէլեանի գաղափարական քաջութիւնը յայտարարելու՝ թէ «հաւանիմք մեք ընդ հարսն ի դժոխս իջանել եւ ո՛չ ընդ հոռոմոց յերկինս ելանել». ասել է թէ անտեղի եւ աննպատակ համարել վիճաբանութիւնները: Գլաձորի դպրոցի շարունակութիւնն է Տաթեւի դպրոցը, Յոհան Որոտնեցի եւ Գրիգոր Տաթեւացի մեծ հայրերով: Առանց այս դպրոցի՝ Միաբանողների քարոզչութիւնը շատ աւելի աղետաբեր հետեւանքներ պիտի ունենար: Պռօշեանների օրով ստեղծուած հաստատութիւնները պահեցին իրենց բարոյական ազդեցութիւնը մինչեւ հայրապետական աթոռի փոխադրութիւնը Էջմիածին 1441 թուին: Ահա՛ որպիսի նոր եւ ծաւալուն լոյս է սփռում Գարեգին Սրբազանի գործը մեր անցեալի մի խոշոր շրջանի վերայ: Որպիսի ջանքով հաւաքել է գրուած նիւթերը. նոյնպիսի սիրով մշակել է եւ սպառել հիմնովին իր հաւաքածուն: Արձանագրութիւնների ժողովածուն, կրկնում ենք, մեծ գանձ է հայ բանասիրութեան համար եւ անհրաժեշտ է որ հրատարակուի խնամքով. թերեւս հիմ ծառայի ապագայ **Corpus**–ի[1]): Արձանագրութիւնները եղծւում եւ կորչում են եւ պէտք է շտապել փրկել ինչ որ դեռ հնարաւոր է անել: Հ. Գարեգինը նշանակել է սոսկ իր կատարած սրբագրութիւնները. ցանկալի էր կցել նաեւ քննական դիտողութիւններ կամ մեկնութիւններ, լուսաբանելու համար մութ եւ շատ անգամ անհասկանալի կէտեր: Պէտք չէ կարծել որ ինչ որ քարի վերայ գրած է անպատճառ հարազատ է. քարը եւս թղթի նման անճարակ է կեղծիքի դէմ: Օրինակ Կեչառիս վանքի հիմնարկութեան վերաբերեալ արձանագրական վկայութիւնները հակասական են եւ կասկածելի: Սիմէոն Կաթողիկոսին ծանօթ է եղել մի արձանագրութիւն ՆԽԴ=995 թուից, որի համաձայն վանքի հիմնադիրը Ապիրատ իշխանն է: Մի այլ արձանագրութիւն ՆՁԲ=1033 թ. այդպիսին համարում է «Գրիգոր Մագիստրոս որդի Հասանայ», Գագիկ Թագաւորի եւ Սարգիս Կաթողիկոսի օրով: Մի երրորդ արձանագրական վկայութեամբ եկեղեցին շինել է Գրիգոր Մագիստրոսը Կոստանդին Մոնոմաք Կայսրի հրամանով Շ=1051 թուին: Վերջապէս սոյն թուից մի վերջին երկար արձանագրութիւն յայտնում է որ Գրիգոր Մագիստրոսը Կոստանդին Կայսրից ոսկի մատանի է բերել, ուրեմն մի քրիսոբուլ, եւ ազատել եկեղեցին եւ խնդրել որ «ամենայն շաբաթ աւր զժամն Հասանա արացեն» եւ նորա մահից յետոյ «մագիստրոսին արացեն»:

